


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ 

ՄՈՎԿԱԿԱՆՔ



ՍԱՄԿԵԼ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ Դ

ՄՌԱԿԱԿԱՆՔ

ՀՏԴ 94(479.25):72(479.25)
ԳՄԴ 63.3.(53)+85.11(53)
Կ294

Կ294 **Կարապետյան Սամվել**
Մռավականք / Ս. Կարապետյան: ՀճՈՒ հիմնադրամ / Ս. Կարապետյան.- Եր.:
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2019, 480 էջ:

Աշխատությունը «Հայաստանի պատմություն» 36-հատորյա գրքաշարի Դ հատորն է՝ նվիրված Պատմական Հայաստանի Արցախ նահանգի Ծար և Հերզ գավառների պատմությանը և նյութական մշակույթի հուշարձանների:

Հասցեագրվում է Հայաստանի պատմությանը հետաքրքրվողներին:

ՀՏԴ 94(479.25):72(479.25)
ԳՄԴ 63.3.(53)+85.11(53)

ISBN 978-9939-843-39-1

© ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ - 2019
© ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ - 2019



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ծ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ռ Ի Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ղ Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ
www.armenianarchitecture.am, www.armenianarchitecture.us, www.raa.am ✉ info@raa.am, raayer@sci.am

Նվիրվում է

Հազարամյակների ընթացքում
սրբազան Հայրենիքի ազատության համար մաքառած
հայորդիների հիշատակին

Սույն հատորի ստեղծման նախահրատարակչական աշխատանքներն ամբողջացվել են
ՀՀ Մշակույթի նախարարության աջակցությամբ,
իսկ տպագրությունը՝ հայրենաշեն բազում գործերով կյանքն իմաստավորած
մեծարգո պ. Ռալֆ Յիրիկյանի նվիրատվությամբ

Բովանդակություն

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ	5	ԱՊԱՀԵՆ ԵՎ ԵՋՆԱՐԱԾԱՆՑ	240
Շահումյանի շրջան. ընդհանուր տեղեկություններ	6	ԼԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԸ	241
Բնական միջավայրը	6	ԵՂԵԳՆՈՒՏ	242
Պատմություն	6	<i>Ծմակա (Ծմակեց) անապատ</i>	248
Բնակչություն	22	<i>Սբ. Գևորգ մատուռ (ղիտակետ-աշտարակ)</i>	250
Տնտեսություն	23	ԲԱՐՍՂԻՇԵՆ	251
Կրթություն	24	ԽՈՆԹԱԿԱՆ (ՅԱՆՇԱՂ)	251
Պատմական հուշարձաններ	25	ՉԱՓՆԻ	252
Վիճակագրական ժառանգություն	26	<i>Չափնու Սբ. Կարապետ վանք</i>	254
Մաս Ա		ՔՆԱՐԱՎԱՆ	263
ԲՈՆԱԶԱՎԹՎԱԾ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ	27	<i>Հանդարերդ</i>	264
ԲՈՒԶԼՈՒԽ	28	<i>Հանդարերդի վանք</i>	268
ԲԱՇՂՇԼԱՂ	40	ՓՈՔՐ ԼԵՎ	277
ԳԱՂԹՈՒՏ	40	ԼԵՎ	282
ԳՅՈՒԼԻԻՍՏԱՆ	43	ՆՈՐ ԿԱՐԱՉԻՆԱՐ	285
<i>Սբ. Ամենափրկիչ (Նապատ) վանք</i>	67	ՏՐՏՈՒ (ԹԱՐԹԱՌ) ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԸ	289
<i>Գյուլիստանի (Հերգա, Հերքա) բերդ</i>	75	ՆՈՐ ԷՐՔԵՉ	290
ԳՅՈՒՐՉԱԼԱՐ	80	ԴԱԴԻՎԱՆՔ	291
ՉԵՅՎԱ	80	ՄՐՉՍԱՆՑ	356
ԷՐՔԵՉ	80	<i>Կուսանաց Սբ. Աստվածածին անապատ</i>	358
ԹԱՓ	94	<i>Անանուն անապատ</i>	366
ԹՈԴԱՆ	95	ԻԳԱՉՈՐ	367
ԽՐԽԱՓՈՐ	98	ԵՐԻՑՈՒՇԵՆ	369
<i>Արքայեկ անապատ</i>	105	ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ	373
<i>Հին Խրխափոր գյուղատեղի</i>	106	ՆՈՐ ԲՐԱԶՈՒՐ	374
<i>Մանդուռ</i>	112	ՆՈՐ ՎԵՐԻՇԵՆ	378
<i>Կողեր վանք գյուղատեղի</i>	115	ԵՂՑԻ	380
<i>Փիրին գյուղատեղի</i>	117	ՆՈՐ ՄԱՆԱՇԻԴ	385
<i>Վերհաղած գյուղատեղի</i>	118	ՔԱՐՎԱՃԱՌ	385
ՀԱՅ (ՆՈՐ) ՊԱՐԻՍ	120	ՀԱՃԱՎ	391
ՀԻՆ (ՌՈՒՄ) ՊԱՐԻՍ	128	ԴԱՇՏԱԿ	393
ՂԱՐԱՉԻՆԱՐ	135	ԽՈԼՈԶԱՆՑ	394
ՄԱՆԱՇԻԴ	153	ՑՐՏՆՈՏ	394
ՆԵՐՔԻՇԵՆ	162	ԾԱՐ	395
<i>Երից մանկանց վանք</i>	178	<i>Մայր (Կաթողիկե) եկեղեցի</i>	397
ՆՈՐՇԵՆ	180	<i>Սբ. Գրիգոր եկեղեցի</i>	397
ՇԵՖԵԿ	187	<i>Սբ. Սարգիս եկեղեցիներ</i>	399, 401
ՎԵՐԻՇԵՆ	187	<i>Գետամիջո Սբ. Աստվածածին վանք</i>	410
<i>Քարահունչ գյուղատեղի</i>	203	<i>Անանուն վանք</i>	417
<i>Շենատեղ, Եղիցի սեռ, Լիար գյուղատեղիներ</i>	205	<i>Չորո վանք</i>	417
Մաս Բ		<i>Յրագետ անապատ</i>	417
ՆՈՐ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ (ՔԱՐՎԱՃԱՌԻ) ՇՐՋԱՆ	207	Հուշեր Շահումյանի բռնազավթված և ազատագրված	
Նոր Շահումյանի (Քարվաճառի) շրջան. ընդհանուր		շրջաններից (1980-1994 թթ.)	419
տեղեկություններ	208	Բռնազավթված Շահումյանի շրջանի պատմական	
ԴՈՒՏԻՈՒ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԸ	225	հուշարձանների ցանկ	426
ՃՈՒՄԵՆ	226	Ազատագրված Նոր Շահումյանի (Քարվաճառի)	
ՀԱՎՍԱԹԱՂ (ԽՆՉՈՐԵԿ)	227	շրջանի պատմական հուշարձանների ցանկ	431
ԶՎԱՐ	229	Օգտագործված գրականության ցանկ	437
ՄՈՍ	235	Անձնանունների ցանկ	443
ԹՐՔԻՇԵՎԵՆԴ	235	Տեղանունների ցանկ	470
ԿՈՂՐԻ	238	Առարկայական ցանկ	478

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ի շարս «Հայաստանի պատմություն» խորագիրը կրող սույն գրքաշարի՝ արդեն լույս ընծայված Ա, Բ և Գ հատորների, որոնք նվիրված էին Հայոց ձոր, Սալմաստ և Արծկե գավառներին, «Մռավականք» վերնագրված Դ հատորը ներկայացնում է Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանը: Վարչական առումով ներկայումս այն բաղկացած է պատմականորեն միմյանցից անկախ երկու առանձին միավորներից:

Առաջինը, որը տարածվում է Մռավի լեռնաշղթայի հյուսիսահայաց փեշերին՝ Փոքր Կյուրակ և Ինջա գետերի միջնահատվածում, դեռևս վաղ միջնադարում տարրալուծված էր Մեծ Հայքի Մեծ Կուսանք (Արցախ նահանգ) և Ուտի-Առանձնակ (Ուտիք նահանգ) գավառների միջնասահմանում: Արդեն զարգացած միջնադարում գավառն ավելի հայտնի էր Հերզ, իսկ ուշ միջնադարում՝ առավելապես Գյուլիստան անվամբ: Իհարկե, պարսկական գերիշխանության շրջանում Գյուլիստանին զուգահեռ շրջանառվում էր նաև Իգիրմիդորդ անվանումը (բառացի թարգմանությամբ նշանակում էր 24, և այդպես էր կոչվել այդքան թվով գյուղեր ունենալու պատճառով), բայց 1805 թ. ռուսական նվաճումից և 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով անրագրելուց հետո Իգիրմիդորդ գավառանունը ժամանակի ընթացքում մոռացվում է: Դրա փոխարեն, որպես ոստիկանական շրջան, սկսում է ավելի հայտնի դառնալ ամառային նոր նստավայրի՝ Ղարաչինար գյուղի անունով (ձմեռայինը Գյորանն էր):

Խորհրդային սկզբնական տարիներին շրջանի ներկայիս տարածքը միավորված էր հարևան Գյորանի հետ, սակայն 1930 թ. վերակազմավորվում է որպես վարչական առանձին միավոր՝ Շահումյանի շրջան անվամբ: Վերջինս զբաղեցնում էր 558 քկմ մակերես: 1987 թ. դրությամբ ուներ շուրջ 21.000 բնակիչ, 2 քաղաքատիպ և 16 գյուղական բնակավայր:

Շահումյանի անունը կրող երկրորդ շրջանը տարածվում է Մռավի լեռնաշղթայի հարավահայաց փեշերին և ներառում է Տրտու գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանը: Միջնադարում առավելապես Ծար կամ Վերին Խաչեն անվամբ հայտնի արցախյան այս գավառը զուտ հայաբնակ էր մինչև 1720-ական թթ. կեսերը, որից հետո կամաց-կամաց այստեղ են ներթափանցում առավելապես քրդական ծագմամբ մահմեդական խաշնարած ցեղեր: Հակառակ այս իրողության՝ մինչև խորհրդային կարգերի հաստատումը շրջանի տարածքի գրեթե կեսը վանքապատկան կալվածք էր, և այնտեղ հաստատված խաշնարածները յուրաքանչյուր տարի պետականորեն սահմանված տուրքը փոխանցում էին կալվածքների իրավատեր Դադի վանքին:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո մոսկովյան կառավարիչներն այս շրջանը, առանց նույնիսկ ԼՂԻՄ-ի մեջ ներառելու, ևս միացնում են Ադրբեջանին:

1993 թ. շրջանի ազատագրումը հնարավոր դարձրեց 1992 թ. բռնազավթված Շահումյանի շրջանից արտաքսված բնակիչների՝ այստեղ վերաբնակվելը: Ընդ որում, ի պատիվ և ի հիշատակ բռնազավթված շրջանի՝ ոչ միայն ազատագրված Քարվաճառի շրջանը վերանվանվեց Նոր Շահումյան, այլև վերստեղծված գյուղական համայնքների մի նշանակալի մասը նույնպես վերաբնակիչների կամքով ստացավ բռնազավթված հայրենի գյուղերի անունները:

Գրքաշարի սույն՝ «Մռավականք» հատորը գալիս է լույս սփռելու բռնազավթված և ազատագրված նույնանուն գույգ շրջանների բնակավայրերի պատմությանը և նյութական մշակույթի հուշարձաններին:

Գիրքը հասցեագրվում է ինչպես ազգային պատմությանն ու հայրենյաց հիշատակների ճանաչողությանը հետամուտ հայ ընթերցողին, այնպես էլ Հայաստանի պատմությամբ հետաքրքրվող օտար հանրությանը:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ

Ընդհանուր տեղեկություններ

Բնական միջավայրը. վարչական շրջանը զբաղեցնում է Մոսկվա լեռնաշղթայի արևելյան հատվածի հյուսիսասիայաց լանջերից սկիզբ առնող Ինջա, Սևջուր և Փոքր Կյուրակ (Մեծ Կյուրակի աջ վտակը) գետերի վերին և մասամբ նաև միջին ավազանները:

Շրջանի բարձրագույն կետը հարավարևմտյան սահմանին գտնվող Գյամիշ լեռն է՝ 3725 մ, իսկ ցածրագույնը՝ շուրջ 530 մ:

Սահմանային են նաև Մոսկվա լեռը (3340,3 մ) և նույն շրջանի այլ գագաթներ¹: Ինչ վերաբերում է ներքին բարձրություններին, ապա աչքի է ընկնում Վերիշեն, Բուզլուխ, Մանաշիդ, Էրբեջ և Ռուս Պարիս գյուղերի միջակայքում վեր հանած Շամփրապատկ լեռը (1741 մ):

Տարածքով հոսող գլխավոր գետը Սևջուրն է: Թուրքերն այն թարգմանաբար կոչում էին Ղարաչայ: Արևմուտքով հոսող Փոքր Կյուրակ և հարավային սահմանով հոսող Ինջա գետերի հետ համեմատած՝ Սևջուրը թե՛ ավելի ջրառատ է և թե՛ շնորհիվ իրենից ճյուղավորված մի քանի ջրանցքների ու նաև մի ջրամբարի՝ ավելի կենսական (հատկապես շրջանի արևելյան հատվածի ընդարձակ հողատարածքների ոռոգման համար):

Շրջանում կան չափերով շատ փոքր մի քանի լճակներ: Դրանցից ամենից բարձրն Անտակ ծովն է (ծ. մ. 3116,5 մ): Գտնվում է Գյամիշ լեռնագագաթից ընդամենը 1,9 կմ հյուսիսարևելք և ունի 260 մ երկարություն և 171 մ առավելագույն լայնություն:

Հիշատակելի են նաև Գյուլիստանի մոտ Ավան գյուղ, Բուզլուխի մոտ՝ Մուլուքնաժովը և ևս մի քանի ավելի աննշան լճակներ:

Պատմություն. համաձայն պատմագիտական նորագույն ուսումնասիրությունների՝ շրջանի ներկայիս տարածքը (558 քառ. կմ) համապատասխանում է Պատմական Մեծ Հայքի Ուտիք նահանգի Ուտի-Առանձնակ և Արցախ նահանգի Մեծ Կուանք գավառների հարակից հատվածին²:

¹ «Մոսկվա լեռն ալպտեղից [Գյուլիստանից] ընդամենը մի երկու վերստ ճանապարհ է, բայց ես նրա գագաթը բարձրանալու բախտ չունեցա: Չնայելով իմ բոլոր բախանձանքին, ինձ առաջնորդող քահանան չկամեցավ ինձ հետ գալ, անդադար կրկնելով, թե մեզ կսպանեն: Եվ ոչ մի գյուլիստանցի չցանկացավ ինձ հետ ուղեկցել, միևնույնը կրկնելով: Բանից դուրս եկավ, որ այդ բոլոր երկյուղը խաշնարած թուրքերիցն է, որ այդ լեռան ստորոտներում ցրված են: Չարմանալի բան է, Աֆրիկայում ճանապարհորդող ավելի ապահով է իրան զգում, քան թե այստեղ: Բայց որքան ես տեղեկացա ակնատեսներից, թեև Մոսկվա հեռվից խիստ սրածայր է երևում, բայց նրա գագաթը բոլորովին տափարակ է, և բավական տարածություն ունի» (Բաֆֆի, Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1963, էջ 589):

² Հարությունյան Բ., Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, «Հայոց Արևելից կողմերի և Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր», հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 70: Ի դեպ, տասնամյակներ առաջ հրապարակի վրա եղած պատմագիտական, անշուշտ, ավելի սահմանափակ տվյալների հիման վրա կատարած ուսումնասիրությունների հեղինակ ակադ. Ս. Երեմյանը շրջանի ներկայիս տարածքի վրա միանգամայն սխալ տեղորոշել էր Սակասենե-Շակաշեն-Գարդմանայիք աշխարհի առաջին գավառ Աղվան (Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 34):



Անտակ ծովը տիեզերքից (ուս.՝ Google Earth, 2010 թ.)

Արդեն զարգացած միջնադարում (ըստ գրավոր առաջին հիշատակության՝ առնվազն 1195 թ.-ից) գավառը վկայվում է Հերզ անվամբ: Այդ հույժ կարևոր և, ըստ էության, եզակի հիշատակության հեղինակը Կիրակոս Գանձակեցին է, որը, նկարագրելով Աղվանից Ստեփանոս Գ կաթողիկոսի գահակալության անապահով և աստանդական կյանքը, նրա վախճանի վայր է մատնանշում Հերզ գավառը. «...այսր անդր կացեալ մինչեւ մեռալ ի Հերզ գաւառի»³:

Անշուշտ, այս հիշատակությունն ինքնին գավառը տեղորոշելու առումով որևէ կովան չի պարունակում, սակայն արդեն 1417 թ.-ից մեզ հասած հերթական հիշատակությունը, որը կապված է Պարիս գյուղի տեղադրության մատնանշման հետ, փաստորեն լիովին պարզում է խնդիրը. «...ի Հերզ գաւառէ, ի նահանգէ Առանա, ի քաղաքէ Բարտաւա, ի գետաղէ, որ կոչի Պարիս...»⁴: Այսինքն՝ Հերզը համեմատաբար փոքր մակերեսով մի գավառ էր, որը գտնվում էր Պարտավ քաղաքի մերձակայքում, և հենց նվազ հայտնիության պատճառով էլ հիշատակարանում շեշտվել է քաղաքամերձ լինելու մասին⁵:

մական աշխարհագրության հարցեր», հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 70: Ի դեպ, տասնամյակներ առաջ հրապարակի վրա եղած պատմագիտական, անշուշտ, ավելի սահմանափակ տվյալների հիման վրա կատարած ուսումնասիրությունների հեղինակ ակադ. Ս. Երեմյանը շրջանի ներկայիս տարածքի վրա միանգամայն սխալ տեղորոշել էր Սակասենե-Շակաշեն-Գարդմանայիք աշխարհի առաջին գավառ Աղվան (Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 34):

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 181:

⁴ Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1955, էջ 205: ⁵ Երևույթն իր գուգահեռներն ունի գրեթե մեր օրերում. օրինակ՝ դեռ խորհրդային



Մռավ լեռը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ.)

Պատմական ողջ գոյընթացով Հերզ գավառն ամբողջությամբ միահիյուսված էր Արցախ-ուտիքյան հայաշխարհին, նրա անքակտելի մասնիկն էր և կիսել է երկրամասի հայությանը վերապահված ճակատագիրը:

ԺԲ դարի 40-ական թվականներին Հերքան բերդին (անշուշտ, համանուն գավառով հանդերձ) տիրապետում էին Գանձակի ամիրաները, որոնք իրենց նվաճած տիրույթները պահելու համար հաճախ պատերազմում էին թուրքմեն ցեղապետների դեմ: Ի վերջո, Ռովադ ամիրայի և թուրքմեն Ազադի միջև խնամիական կապի հաստատմամբ միառժամանակ խաղաղություն է տիրում. «Ապա սեր եւ բարեկամութիւն եղեալ ընդ նոսա՝ առնու իւր կին ի նոցանէ, եւ զքոյր իւր տա ի կնութիւն Ազադին կոչեցելոյ՝ տեառն Հերքան բերդոյ»⁶:

Մխիթար Գոշը Հերքան բերդը երկրորդ անգամ հիշատակում է պատերազմական նոր բռնկման առնչությամբ. «Եւ երթեալ Տաղան նոքաք բանակեցաւ ի լեռն, որ կոչի Կայծոյ ծառ՝ մերձ ի Հերքան բերդ»⁷:

1211 թ. Ջաքարյան իշխաններն ազատագրում են Հերքը (պետք է հասկանալ նույնանուն բերդն ու գավառը միատեղ). «...որք բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից և առին յԱռանայ մինչև ցներքի Բասեն և ի Բարգուշատայ մինչ ի Մժնկերտ. առին զԿարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի և զԳառնի, զԴուին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զՉարեք, զՀերք, զՇամքոր, զՇաքի, զՊարտաւ, զՉարաբերդ. առին ի 660 թուին զՍիւնիս, զՌոտն, զԲորոդան, զԲղեն, զԲարկուշատ: Եւ թէպէտ յայլ և յայլ թուականս առան, սակայն զհասարակն սոքա առին և որդիքն

տարիներին Դաշկեսանի, Խանլարի, Շամխորի, նույնիսկ հենց Շահումյանի շրջանի շատ գյուղերի հայ բնակիչներ ներկայանում էին երկրամասի առավել հայտնի բնակավայրի անունով, տվյալ դեպքում՝ որպես գանձակեցի (կիրովաբադցի)՝ համոզված, որ այդպես ավելի հեշտ ընկալելի կլինեն, կամ Իսմախլիյի, Ադսուի և Շամախու հայ գյուղերի բնակիչներն էլ առիթի դեպքում ներկայանում էին որպես շամախեցի և այլն:

6 Մատենագիրք Հայոց, Ի հատոր, Մխիթար Գոշ, գիրք Բ, Երևան, 2014, էջ 609: 7 Նույն տեղում:

իւրեանց՝ և ազատեցին զաշխարհս ի դառն ծառայութենէ Տաճկաց»⁸, սակայն թերևս միայն կարճ ժամանակով, քանի որ արդեն 1227-1228 թթ. համանուն բերդով գավառին տիրապետում էր Գանձակում նստող Ջալալ-սդ-դինի կողմից նշանակված կառավարիչը⁹:

Հետագայում գավառին տիրապետում են (անշուշտ, համանուն բերդով հանդերձ) թերևս Վահրամյանների իշխանական տան մի ճյուղը ներկայացնող Իվան և Վարհամշահ ամիրաները: Այդ մասին մեզ հասած վկայությունը 1252 թ.-ից է¹⁰: Չի բացառվում, որ վերոհիշյալ հայ ամիրաները կարող էին լինել նաև Խաչենի իշխանական տան ներկայացուցիչներից, քանի որ Հերզ գավառը գտնվում էր Վահրամյան և Խաչենի հայկական ուժեղ ու լայնատարած իշխանությունների սահմանագլխին, ուստի և բնական է, որ գավառը պիտի կառավարեր նրանցից մեկնունեկը:

ԺԴ-ԺԶ դարերում Հերզը (ինչպես և Հայաստանի մեծագույն մասը) ենթարկվում է միմյանց հաջորդող օտարամուտ ցեղերի տիրապետությանը: Մոնղոլները, թուրքմեններն ու թյուրքական և իրանական զանազան ցեղերը ոչ միայն պայքարում էին երկրամասի բնիկների դեմ (նրանց հպատակեցնելու նպատակով), այլև շատ հաճախ պատերազմում էին նաև միմյանց դեմ: Ար-

8 Ստեփաննոս Սիմեոս եպիսկոպոսի Պատմութիւն տան Սիսական, Մոսկվա, 1861, էջ 287:

9 Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкпурны. Перевод с арабского, предисловие, комментарии, примечания и указатели З. М. Буниатова, Баку, 1973, с. 204.

10 Ըստ Խրիստոփոր գյուղի մոտ գտնվող Մանդուռ հնավայրի եկեղեցու շինարարական արձանագրության (վիճագիրը տե՛ս սույն աշխատություն, էջ 114): Ի դեպ, նույն՝ 1252 թ. Խորանաշատի վանքում ստեղծված ձեռագրի հիշատակարանում նշվել է, որ Վահրամյանների իշխանությունը ղեկավարում էր Ադրուղան՝ ժառանգելով հոր՝ Վահրամ Գագեցու մայխորթ-ուխուցեսության պաշտոնը, և նրա որդիներն էին Վահրամը, Ջաքարեն և Իվանեն. «...ի գլուխ իշխանութեան երկրիս այսմ պարոն Ադրուղային և որոց իւրոյ Վահրամ և Ջաքարե և Իվանե» (Շահնագարյան Ա., Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 127-128):



Քերզ գավառի մոտավոր սահմանները՝ փոխարդված Բ. Հարությունյանի «Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության քարտեզի՝ խնդրո առարկա հատվածի վրա

դյունքում մեծապես տուժել-քայքայվել էր տնտեսությունը: Ամայացել էին բազմաթիվ բնակավայրեր, վանքեր և եկեղեցիներ:

Իհարկե, նույնիսկ այդ դժնդակ պայմաններում էլ գավառի բնակչությունն իր մեջ ուժ էր գտնում հնարավորինս ծաղկեցնելու սեփական մշակույթը, գիրն ու գրականությունը, իսկ Պարիս և Գյուլիստան գյուղերը ԺԵ դարի ընթացքում նշանավորվում են որպես գրչօջախներ (1417 և 1466 թթ.):

ԺՋ դարն ավելի շատ հիշվում է տարածաշրջանում քաղաքական գերիշխանություն հաստատելու համար երկու հզոր պետությունների՝ միմյանց դեմ պարբերաբար բռնկվող պատերազմների առնչությամբ:

Հին իշխանական տներից սերող և երկընտրանքի առջև կանգնած տեղի հայ կառավարիչները թուրքերի դեմ առավել հաջող պայքարելու նպատակով ի վերջո, ելնելով իրավիճակից, բնական ընտրությամբ գերադասում են դաշնակցել պարսիկների հետ, որոնք էլ իրենց հերթին շահական հրովարտակներով մեկը մյուսի հետևից հայրենական իրավունքների մեջ հաստատում են հայ մելիքներին, որով և ԺԷ դարի սկզբից պատմության թատերաբեմ են ելնում հայկական բազմաթիվ մեծ ու փոքր կիսաանկախ իշխանություններ՝ մելիքություններ: Նրանցից 5 առավել նշանակալիները կազմում են մի ընդհանուր դաշնություն՝ Խամսայի մելիքություն («Մահալլ-ե Խամսա») անվամբ:

Հինգ մելիքություններից Գյուլիստանը տարածվում էր դաշնության հյուսիսային սահմանին. «...սկսվում է Բյուրակ-Չայ գետից, այսինքն՝ Գանձակի սահմաններից և տարածվում է մինչև Թարթար գետը»¹¹: Կամ՝ «...ձգվում է Մռավ լեռից ու այգեշատ Գյուլիստանից մինչև Կուրը երկայնությամբ, և Թարթար գետից մինչև Գերան (Գուրան)՝ լայնությամբ»¹²: Մելիքության կենտրոնն էր Գյուլիստանի բերդը, հիմնադիրը՝ 1601 թ. Բեգլարյան տոհմից Սև Աբովը (վախճ. 1632 թ.):

Սեփական մելիքների հովանու ներքո գավառաբնակ հայությանն աննախադեպ հնարավորություն է ընձեռվում վերստին լծվելու ստեղծագործ և շինարար աշխատանքի: Այդ մասին են վկայում նշյալ դարաշրջանից ավանդված նյութական մշակույթի մեծաքանակ հուշարձանները:

11 Բախի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 162: Խամսա արաբերեն բառ է, որը թարգմանաբար նշանակում է հինգ:

12 Միրզա Յուսուֆ Ներսեսյուլ, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները՝ Բ. Կոտսիկյանի, Երևան, 2000, էջ 43:

Մելիքությունը կառավարվում էր ժառանգաբար. «Հայտնի են որպես Մելիք-Բեգլարյաններ (Բեգլարովներ): Նրանց տոհմից մի քանիսը վարում են [այնտեղի] մելիքությունը, որից հետո Մելիք Հովսեփ (Ուսուր) Մեծը գրավում է Գյուլիստանի բերդը և այնտեղ ամրանում»¹³:

1710-ական թթ.-ից հաճախակի են դառնում մերթ Դաղստանից, մերթ Վրաստանից լեզգիների և վրացիների՝ թալանի նպատակով դեպի տարածաշրջան ձեռնարկվող արշավանքները:

Հայտնի է, որ 1722 թ. թալանով զբաղվող վրացական զորքերը հասել էին «...մինչև ի Գիլստան գեղն...»¹⁴:

Առանց այն էլ երերուն խաղաղությունն իսպառ չքանում է 1724 թ. օսմանյան բանակների՝ երկրամաս ներխուժելու պատճառով: Սրանով սկսվում է երկար և հյուժիչ պատերազմական մի ժամանակաշրջան, երբ հայ մելիքները ստիպված էին տևաբար կենաց-մահու պայքար մղել Արցախ-ուտիքյան հայաշխարհի սողոսկած և երկրի հեռավոր խորքերում հաստատվել ձգտող թյուրքական ցեղերի դեմ:

1729-1731 թթ. Աբրահամ սպարապետի գլխավորությամբ Գյուլիստանի սղնախը վերածվում է թուրքերի դեմ մղվող հայ ազգային-ազատագրական շարժման առաջնային հենակետերից մեկի¹⁵:

1734 թ. հոկտեմբերին Առաջածոր գյուղի ավագերեց Դավթին Խաչենի մելիք կարգելու առնչությամբ կազմված և Նադիր շահին ուղղված համախոսական մի գրության ներքո, որպես վկա, ի թիվս Մուրթուզա Ղուլի բեկի, Ալի Ռեզա աղայի և քյաղխուղա մոլլա Մուհամմադի, Իզիրմիդորդից առկա է նաև Աբրահամ յուզբաշու ստորագրությունը¹⁶:

Հայերի համար կազմությունն ավելի է բարդանում Պարսկաստանում տիրող քաղաքական անկայուն իրավիճակի հետևանքով, որից օգտվելով՝ տեղի մահմեդականները մեկը մյուսի հետևից ազդարարում են գրեթե անկախ խանությունների ծնունդը (Գանձակի խանություն. հիմն.՝ 1747 թ., Ղարաբաղի խանություն. հիմն.՝ 1748 թ.): Սրանցից վերջինն առավել ատելի էր հայկական մելիքություններին, քանի որ այն պարզապես եկել և խցկվել էր հայոց տան մեջ և հաստատվել հենց երկրի սրտում՝ Շուշիում:

1754 թ. Շուշիին տիրացած Փանահ խանը հարձակվում է մելիքանիստ Գյուլիստան գյուղի բերդի վրա, որը սակայն, ավարտվում է թշնամու՝ շուրջ 300 զինվորների ոչնչացումով. «Հայերը գտնվում էին Սղնախում՝ Գյուլստանի (Կուլիստանի) բերդում: Նրանց գլխավորները մելիք Յուսուֆ (Ուսուր) և մելիք Աթամ են կոչվում: Սրանք մինչև 1500 [զինված] մարդ ունին: Այս հայերի վրա հարձակվել է Փանահ-խանը, հայերը հաղթել են, Փանահ-խանի մարդկանցից 300-ի չափ սպանել են: Այս պատերազմը եղավ 1754 [թվի] օգոստոսի 26-ին»¹⁷:

Ի դեպ, Գյուլիստանի մելիքությունը հաճախ անվանվել է նաև երկրորդ նստավայր-կենտրոնի՝ Թալիշի անվամբ: Այսպես, օրինակ, 1783 թ. մարտի 4-ին Պ. Ս. Պոռտյուկինին ուղղված գրության ներքո ստորագրել է նաև «Ապալ մելիք Յովսեփեան ի յերկրին Թալիշու»¹⁸:

13 Նշվ. աշխ., էջ 43-44:

14 Պատմություն համառոտ Աղուանից երկրի յօրինեալ ի Ս. Տաայ Աղուանից կարողիկոս Հասան Ջալալեանց, յերուսաղեն, 1868, էջ 42:

15 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 160-161:

16 Կոտսիկյան Բ., Ղարաբաղի հայ մելիքները Նադիր շահի իշխանության տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, 2007, էջ 262:

17 Մելիքներ-բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 107:

18 ՀԱԳ (Հայաստանի ազգային դիվան), ֆ. 56, ց. 1, գ. 616, ք. 40:



Մռավ լեռը և Գյուլիստան գյուղը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ.)

Երևում է, որ Խամսայի սրտում մահմեդական իշխանություն՝ խանություն հիմնած անհարազատ տարրի դեմ երկրի բնիկների՝ շուրջ երեսնամյա հյուժիչ պատերազմների հետևանքով (հիարկե, հարկ է խոստովանել, որ թշնամու հաջողությունների մի կարևոր մասը ձեռք էր բերվում հայ մելիքների անմիաբան գործողությունների պատճառով) հայկական ուժերը մեծապես ջլատվել էին, և արդեն 1785 թ. մայիսի 15-ին Գյուլիստան գավառի իշխան Մելիք Աբովն Ամենայն հայոց Ղուկաս կաթողիկոսին գրում է երկրի խղճալի դրության և կովկասցիների (հիմնականում նկատի ունենալով լեզգիներին) աշխարհավեր արարածությունների մասին¹⁹:

Հայերի պայքարը, ըստ էության, ավարտվում է հենց 1785 թ., երբ Ղարաբաղի Իբրահիմ խանը Շուշի է հրավիրում հայ մելիքներին ու կաթողիկոսին և ուխտադրժորեն բոլորին ձերբակալում: Կաթողիկոսը սպանվում է բանտում, իսկ մելիքներին հաջողվում է փախչել այնտեղից միայն 1787 թ., սակայն նրանք ոչ թե փորձում են վերստին դիմակայել, այլ հետին հուսահատության մեջ իրենց հպատակ ժողովրդի հետ (շուրջ 500 տուն) գաղթում են նախ Գանձակ²⁰, ապա այնտեղից էլ՝ Վրաստանի այլևայլ մարզեր՝ առավելապես դեպի Տիֆլիս, Սոմխիթ և Կախեթ²¹:

19 Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800), Ереван, 1990, т. 4, с. 224 (այսուհետ՝ Армяно-русские отношения в XVIII веке, համապատասխան հատորով և էջով):

20 Բախի, նշվ. աշխ., հ. 10, էջ 243:

21 Օրինակ՝ Կախեթում գյուլիստանցիները հաստատվել էին Թելավ քաղաքի Չվեղալավան բաղամասում և փաստորեն չէին միացել դեպի հայրենի գավառ 1817 թ. տեղի ունեցած ընդհանուր վերադարձի շարժմանը: Նրանց ներկայու-



Տարածաշրջանի վարչական քարտեզը ԺԹ դարի սկզբին

Ուշագրավ է, որ նույնիսկ երկրից հեռացած կեցության պայմաններում, օրինակ, 1798 թ. Մելիք Հովսեփի որդին՝ Մելիք Աբովը, հիշվում է որպես Իգիթմիտորդ գավառի և Գյուլիստանի բերդի տեր²²:

թյունը Թելավում վկայող 1899 թ. վավերագրից պարզվում է, որ Չվեղալավան բաղամասի Սբ. Գևորգ եկեղեցուն պատկանող մի հողակտորի պատճառով ծագած վեճի առնչությամբ հանդես եկած մի քանի վկաների նախնիները գյուլիստանցիներ էին: Այսպես, օրինակ, 63-ամյա Հովհաննես և 58-ամյա Ստեփան Պողոսյան Աչաբաշյանցները նշել են, որ իրենց պապը՝ Հովհաննեսը, զաղթել է Գանձակի գավառի Գյուլիստան գյուղից և բնակություն հաստատել Սբ. Գևորգ եկեղեցու բակում (Կարապետյան Ս., Հայերը Կախեթում, Երևան, 2004, էջ 63):

22 Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800), т. 4, с. 496.



Տարածաշրջանի վարչական քարտեզը ժՈՒ դարի վերջին



Տարածաշրջանի վարչական քարտեզը ժՈՒ դարի վերջին (ըստ Ե. Լալայանի)

1790-ական թթ. Գյուլիստանի մելիքներ են հիշվում աստանդական դարձած Արով Մելիք-Հովսեփյանը և Մելիք Ֆրիդուն Մելիք-Բեգլարյանը²³:

1804-1805 թթ.-ից հետո և մասնավորապես 1813 թ. հոկտեմբերի 1-ին Գյուլիստանում կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագրով (մի կողմից՝ գեներալ Նիկոլայ Ռտիշչև, մյուս կողմից՝ Միրզա-Աբուլ-Հասան խան) ի վերջո ռուսական հպատակության ներքո են հայտնվում Գանձակի և Ղարաբաղի խանությունները:

Նոր իրողությունը վրաստանաբնակ դարձած և արդեն տեղի կալվածատերերի հետ լարված հարաբերությունների մեջ գտնվող գյուլիստանցիներին կամ ավելի ճիշտ գոնե նրանց մի մասին Հայրենիք վերադառնալու հնարավորություն է ընձեռում:

1817 թ. տեղի ունեցած դարձի մասին ուշագրավ վկայություններ են պահպանվել ոչ միայն աղբյուրագիտական երկերում, այլև նույնիսկ վիճակագրական հուշարձաններում: Մասնավորապես հայտնի են Գյուլիստանի եկեղեցու որմի («...ՌՄԿԶ (1817) թվին Թիփլիզում էլիկն էկյա...»)²⁴ և Էրբեջ գյուղի եկեղեցու մոտ գտնվող տապանաքարի («Թվ(ին) ՌՄԿԶ (1817), որ է Պօլնոսու գալն, մայիսի Ի (20)...»)²⁵ արձանագրությունները:

Իհարկե, առկա զանազան նյութերը հաստատում են, որ 1787-1817 թթ. ընթացքում, երբ մելիքները լքել էին հայրենի եզերքը, այնուամենայնիվ, ոչ բոլոր հպատակներն էին հետևել նրանց, և, ըստ էության, հայ կյանքը Գյուլիստան գավառում նվաղել, բայց չէր մարել: Իսկ 1817 թ.-ից հետո, ի հաշիվ վերադարձողների, գավառաբնակ հայությունը սկսում է կամաց-կամաց ոտքի կանգնել և միայն որոշ բացառություններով (ինչպես, օրինակ, Թողան գյուղը, որն արդեն զբաղեցվել էր մահմեդականներով) հիմնականում կարողանում է վերաբնակվել հայրենի գյուղերում և վերատիրանալ նախկինում իրենց պատկանած հողատարածքներին:

Նոր-նոր վերականգնվող տնտեսությունները մի ծանր հարված էլ ստանում են 1826 թ., քանի որ խախտելով Գյուլիստանի հաշտության պայմանագիրը՝ պարսիկները պատերազմի են ելնում Ռուսաստանի դեմ. «Օղորդու խան Ջիադոլին շարժվում է դեպի Գանձակ... 10-15000-անոց զորքով»²⁶, բայց կրկին հաղթվում և դուրս են մղվում: Միայն դրանից հետո երկրամասում և

մասնավորապես Գյուլիստանում կյանքը գրեթե ամբողջովին մտնում է խաղաղ հունի մեջ:

Հաշված տարիներ անց գավառաբնակները, որպես հարկ, զգալի մուծումներ էին կատարում. «1825 թուին Թալիշի կամ Իգիրմիդորդ մահալը, իր Ղարաչինար, Թալիշ, Էրբեջ, Ղարաբուլաղ, Բուզլուխ, Վերին և Ներքին Աղճաքենդ գիւղերով, ուր կային 143 հարկատու և 102 հարկից ազատ տներ՝ վճարում էր խանին թե՛ հացահատիկներով և թե՛ դրամով՝ 1472 ռ. 98 կ. և 114 չերվոնեց (ռուսական ոսկի), շահուած 300 ռուբլի (խան ռուբլիով հաշուածը), որ գնում էր որպես չափար փուլի»²⁷: Ի դեպ, հարկերից ազատ էին հոգևորականները, տանուտերերը, քեղխուղաները, զգիրները և սափրիչները:

Ռուսական տիրապետության շրջանում կամաց-կամաց պաշտոնական գործածությունից դուրս են մղվում գավառի՝ ինչպես պարսիկներից տրված Իգիրմիդորդ կամ Թալիշի մահալ, այնպես էլ հայկական շրջանակներում վաղուց հարազատացած Գյուլիստան անվանումները, և փոխարենը գավառամասը սկսում է կոչվել Ղարաչինար գյուղի անվան տարբերակներից մեկով՝ Ղարաչայ. «Ղարաչայը մի ընդարձակ գիւղական աշխարհ է, ընկած Ղարաչայ գետի երկու ափերում, Գանձակ քաղաքի արևելեան կողմում, մօտաւորապես 50 վերստ հեռավորութեան վրա և գտնվում է ոչ հեռու Մուս անուանեալ լեռնային շրթայից: Ղարաչայի գլխաւոր ու մեծ գիւղօրայքը սրանք են. Ղարաչինար կամ Աղջաղալա, Վերին-Շէն և Ներքին-Շէն, իսկ փոքրերը հետևեալներն են՝ Մանասին-Շէն կամ Ենգիքենդ (Նորշէն), Խարխափուք և Ղարիքենդ: Կան և թուրքաբնակ գիւղեր, որոնք են՝ Մօլլա-Վալաղ, Ձէյվա, Շափի-Բեգլու, Հաջալլու, Ղասըմբեգլու և այլն: Ղարաչայը յայտնի է իր պտղաբեր այգիներով և անդաստանով, սակայն դժբախդաբար նա յետադէմ անկլիններից մէկն է...: Կուլտուրան այդ անկլինում չէ ընթանում, որովհետև ինիցիատօրներ չը կան»²⁸:

Գեռևա 1881 թ. նկատվել է, որ «...Գյուլիստանի մահալի այժմյան տիրապետողները միակ են Ղարաբաղի բոլոր մելիքներից, որ կարողացել են ամբողջապես պահպանել իրանց հայրա-

23 Кавказская старина, Тифлис, 1872, № 2, с. 35.

24 Վիճագիրն ամբողջությամբ տե՛ս սույն աշխ., էջ 62:

25 Վիճագիրն ամբողջությամբ տե՛ս սույն աշխ., էջ 90:

26 Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 111:

27 Լալայան Ե., Գանձակի գաւառ, «Ազգագրական հանդես», 1899, գիրք Ե, էջ 251: Տե՛ս նաև Լալայան Ե., Գանձակի գավառ, Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 243: Չափար փուլին՝ խանի ձիավոր ծառաների վարձն է: Հարկերի մասին մանրամասն տե՛ս Լալայան Ե., նշվ. աշխ., գիրք Ե, էջ 251-252: Նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 242-244:

28 Զարադեան Բ., Ղարաչայի իրականությունից, «Մշակ», 1910, № 261, 23 նոյեմբերի, էջ 3:



Պատված ելիզավետպոլի նահանգի՝ Գյուլիստանի տարածաշրջանին վերաբերող վարչական քարտեզից (1902 թ.)

կան ժառանգությունը»²⁹, և որոնց տիրույթները սահմանագծում էին «...իյուսիսից Քյուրակ գետը, հարավից Թարթար գետը, արևելքից այժմյան փոստի ճանապարհը, իսկ արևմուտքից Մռավ սարը»³⁰: Նշվել է նաև. «Հին Գյուլիստանը իր սահմաններով այժմ որպես կալվածք և սեփականություն գտնվում է այդ երկրի նախկին տիրապետողների ժառանգների ձեռքում, որ բաժանված են երկու ճյուղերի, մեկը՝ Մելիք Բեգլարովները, մյուսը՝ Մելիք Յուսուփովները:

Մելիք Բեգլարովների տոհմի ձեռքում կա մինչև 70 հազար դեսյատին հող, իր դաշտերով, լեռներով, անտառներով և արտամարզերով: Այդ տարածության վրա կա 15 գյուղ, չհաշվելով ձմեռոցները:

Մելիք Յուսուփովների ձեռքում կա 20 հազար դեսյատին հող, երեք գյուղերով»³¹:

Այլ էր կացությունը 1890 թ., երբ արդեն «Հողերի մեծ մասը պատկանում է Միրզա Աղիգեօզալով թուրք բեկերին, մնացածը Մելիք-Բեգլարեան Սերգեյ-բեկին: Առաջիններին է պատկանում և Վերի-շենի մոտ, Ղարաչայ գետի վրա գտնվող Ներքի-շեն հայ գիղը:

Թե՛ ինչպես թուրք բեկերը Գյուլիստան հայ գաւառներում երկու մեծ գիղերի տէր դարձան, դրա մասին պատմում են հե-

տևեալ աւանդութիւնը: «Խամսայի մելիքութիւններից» յայտնի է, որ Վարանդայի իր չարագործութիւններով յայտնի Մելիք Շահնագար II իր դուստր Նիւր-գաղիին տուեց Ղարաբաղի Փանահ խանի որդի Իբրահիմ խանին կնութեան: Մի և նոյն ժամանակ Մելիք-Շահնագար II-ի դուստրներից մէկը – Ամարնանին (Մարիամը) Գյուլիստանի Մելիք-Բեգլար II-ի կինն էր: Մէկ օր Իբրահիմ խանի կին Նիւր-գաղին գալիս է Գյուլիստան՝ իր փեսայ Մելիք-Բեգլար II-ի և իր քրոջ մոտ հիւր: Ըստ հին սովորութեան Մելիք Բեգլարը պարտաւոր էր իր քեմուն մի թանկագին բան ընծայել: Վերցնում ընծայում է Վերի-շեն և Ներքի-շեն գիղերը: Այդպիսով այդ երկու գիղերը դառնում են Նիւր-գաղիի, ուրեմն և Իբրահիմ խանի սեպհականութիւն: Վերջինից անցնում են նրա որդուն՝ Մէյսի Ղուլի խանին: Մէյսի-Ղուլի խանը այդ գիղերը յանձնում է Միրզա Աղիգեօզալին կառավարելու: Երբ ռուսները տիրապետում են Կովկասին, Միրզա Աղիգեօզալը ինչ ինչ ճանապարհներով իրան է սեպհականացնում»³²:

Հայտնի է, որ 1898 թ. «Մելիք Բեկլարեանները տիրապետել են ամբողջ Գյուլիստանին, ուր 24 գիղ է եղել: Մելիքութիւնը կորցնելուց յետոյ էլ այս կալուածների մեծ մասը դարձեալ մնացել է նրանց ժառանգների ձեռքը: Այսօր էլ այդ ընդարձակ կալուածներից նրանց ձեռքին են մնացել հետևեալները.

Մելիք Բեկլարեաններին. Գյուլիստան գիղը (մօտ 2000 դ.), Չարիչի կալուածքը (1500 դ.), Խարիսափուտ գ. (1500 դ.), Ղարաչինար գ. (700 դ.), Ղազիքենդ կալ. (400 դ.), Ղոթրութ գ. (200 դ.), Հայոց Պարիս (4000 դ.), Թողան գ. (1200 դ.), Մանաշէտ (1200

29 Բաճճի, նշվ. աշխ., հ. 8, էջ 582:

30 Նոյն տեղում: Նաև՝ «Ասոր նախնի սահմաններն են՝ հիսախեն Կուրակ գետը, հարավն Թարթար գետը, արևելքն այժմեան սուրհանդակաց (poste) ճանապարհը և արևմուտքն Մռավ սարը» (Էփրիկեան Մ., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-905, էջ 530):

31 Բաճճի, նշվ. աշխ., նույն տեղում:

32 Շ., Գիղական տպավորութիւններ, «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 2:



Ինչա գետի հովիտը Գյուլիստանի բերդից (ուս.՝ Գ. Բաղալյանի, 1980-ական թթ.)

դ.), Բուզլուխ գ. (2000 դ.), Ղարաբուլախ գ. (1500 դ.), Գիշախի կալ. (1000 դ.), Սիլ կալ. (1600 դ.), Ղազիան կալ. (400 դ.), Խանազե կալ. (5000 դ.), Թալիշ գ. (3500 դ.), Թուրքուլախ գ. (1333 դ.), Քիչուկ Սիդնախ կալ. (1250 դ.), Բարամբադ կալուածքը (3210 դեսեստին): Ընդամենը՝ առելի քան 33000 դեսեստին:

Մելիք Յովսէփեաններին. Էրքեճ գ. (5000 դ.), Ղազան-բուլախ կալ. (2000 դ.), Ենկի-քենդ գ. (500 դ.), Ղրզըլ-իլուն (1000 դ.), Աղարամ (1000 դ.), Մուլուկ գ. (300 դ.): Ընդամենը՝ մօտ 10,000 դ. ի միասին՝ առելի քան 40,000 դ.»³³:

Ուսական տիրապետության՝ ընդհանուր առմամբ խաղաղ տարիներին, այնուամենայնիվ, հայ-թաթարական (իմա՝ աղբբեջանական) լարվածությունները ժամանակ առ ժամանակ իրենց զգացնել էին տալիս: Այսպես, օրինակ, 1901 թ. «Գաւառիս Իգիր-մի-դորդ մըրհալի ներքիշենացի և Մանիշէթ գիւղացի երկու հայեր Էրքէջ գիւղի հողերում հերկելու ժամանակ երկու թուրքերի կողմից յարձակման են ենթարկուում: Թուրքերը մտադիր են եղել սպանել հայերին: Հայերից մին մտնում է սայլի տակ և հրացանն ուղղում է թուրքերի վրայ, սպառնալով որ կը կրակի, եթէ չհեռանան չարագործները: Թուրքերը հեռանում են և մի քանի րոպէից էլի են յարձակում նոյն հայերի վրայ, այս անգամ չորս հոգով: Չարագործները շրջապատում են հայերին և չարաչար սպանում նրանց»³⁴:

33 **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 250-251: Տե՛ս նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 242:

34 «Նոր-Դար», 1901, № 144, 19 սեպտեմբերի, էջ 1:

Ինչ վերաբերում է 1905-1907 թթ. ցարական կառավարության անսքող միջամտությանը խրախուսվող հայ-թաթարական ընդհարումներին, ապա այդ տարիների նրանց կեցվածքը պարզապես երանելի պայմաններ էր ստեղծում ուրիշի աշխատանքի հաշվին նյութական կարողություններ ձեռք գցելու թաթարների՝ բնական նկրտումներն առավելագույնս դրսևորելու համար, ուստի և գավառաբնակ հայոց նկատմամբ ծայր առած ոտնձգությունները պարզապես հաջորդում էին մեկը մյուսին³⁵:

Նմանօրինակ դեպքերը լուսաբանող ահազանգերը ժամանակի լրատվամիջոցներում բազմաթիվ են, ուստի միայն ընդհանուր պատկերացում կազմելու համար ստորև առաջ ենք բերում դրանցից մի քանիսը: Այսպես, համաձայն 1905 թ. սեպտեմբերի 28-ի թղթակցության, «Ղարաչինարը պաշարված է: Ահագին քուլ թուրք հրոսակախմբեր արշաւում են գիւղի վրա, սակայն միշտ յետ են մղվում: Գաւառապետը եկաւ գիւղս մի խումբ կօզակներով: Մօտ գտնվող Մանասի-թաղ գիւղը ամբողջովին տեղափոխվել է Ղարաչինար: Այդ գիւղի նախիրը ամբողջովին թուրքերը քշեցին, բայց մի խումբ քաջ երիտասարդներ կօզակների հետ միասին այնպիսի սոսկալի կրակ բացին, որ թուրքերը ստիպված եղան թողնել ու փախչել...: Այս դեպքից յետոյ գաւառապետը, որ հայերին կասկածով էր վերաբերվում, վստահօրէն ասաց գիւղացիներին. «Այժմ ես հաւատում եմ, որ դուք, հայեր, մեղաւոր չէք, որ տեղիք տուողը թուրքերն են և նրանց պէտք է պատժել...» և այլն...: Սպասում են Գանձակից կօզակներին: Չուհեր կան՝ հայերի կողմից տանուտէր Սերգէյ Մելիք-Ստեփանեանցը և մի քաջ երիտասարդ՝ Ալէքսան անունով: Երիտասարդը յայտնի էր իր անվեհեր քաջութեամբ: Թուրքերի կողմից յայտնի չէ զոհերի թիւը: Հարևան հայ գիւղերը, որոնք են՝ Խարխափուտ, Պարիս, Ներքին-Շէն, Վերին-Շէն, Գիւլիստան, Թալիշ, իրանցից ներկայացնում են մի-մի պատերազմական բանակ... Դրութիւնը սոսկալի է: Գիւղացիները ամեն ինչ մոռացած՝ ինքնապաշտպանութեան են դիմում...: Գիւլիստանի հանդից տարել են մօտ երեք հարիւր ոչխար, երկու հովիւներով: Ոչխարները թուրքի են, որ բերած այդտեղ պահում էր ամեն տարվայ նման...»³⁶:

Միջադեպի մասին ուշագրավ և հանգամանալից տեղեկություններ է պարունակում հատկապես Բ. Չաքարյանցի՝ 1906 թ. ապրիլի 5-ի թղթակցությունը. «"Ղարաչայ" անուանեալ գաւառամասը, որը գտնուում է Գանձակու գաւառում և նոյն նահանգում, "Ղարաչայ" կոչուած գետի երկու ափերում գոյութիւն ունեցող գիւղօրայքն են, ծածկուած խաղողի ու մրգեղէնի գեղեցիկ այգիներով: Այդ՝ մեկը միւսից մօտի գտնուող գիւղօրայքից՝ սոքա են հայաբնակները. Վերին-Շէնը, Ներքին-Շէնը, Խարխափուտը, Պարիսը, Ղարաչինարը կան Աղջակալան և Ենգիքենդը (Նորաշէնը) կան Մանասի-Շէնը: Վերջին գիւղի ներքում հայաբնակ գիւղ չկա, այլ եղածները թուրքաբնակ են. օրինակ՝ Մօլլա-Վալա-

35 Մանավորապես 1905 թ. տիրող կացութեան մասին նշվել է. «...մի շարք պողատու, այգիներով հարուստ Վերին-Շէն, Ներքին-Շէն, Պարիս, Խարխափուտ, Մանասի, Աղջաղալ և Ղարաչինար գիւղերը: Աղջաղալից սկսում է Ղարաչայի ստորին հովիտը՝ ձգուած դէպի ընդարձակ դաշտավայրը, ուր ընկած են Մօլլա-Վալաղլու, Չէյվա, Ղարակուջաղ, Մաֆի-Բիւրդ, Ղրզըլ-Հաջըլու, Ղասումբէկլու, Բօյ-Միմեղլի և այլ բազմաթիւ թուրք գիւղեր իրենց անհանգիստ տարրերով, որոնք նոյնիսկ խաղաղ ժամանակ առիթը բաց չեն թողնում դիպչել տեղացի և անցողի հայերին ու նրանց կայքին ու կենդանիներին» (**Ա.Ռօ.** Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.), Երևան, 1907, էջ 327):

36 **Յովսէփեան Ա.**, Տեղեկութիւններ գաւառից, «Մշակ», 1905, № 200, 2 հոկտեմբերի, էջ 1-2: Նաև՝ «Մեր գիւղն են ժողովուել շրջակայ հայ գիւղերի շինականները: Ներկայումս շրջապատուած ենք Արփաուտ, Բարդա և այլ թղթաբնակ գիւղերի ձիւտներով: Սպանուել է մեր տանուտերը, և մի քանի հոգի էլ վիրատուել են: Չօրքի օգնութեանն ենք սպասում» («Նոր-Դար», 1905, № 23, 4 հոկտ., էջ 1):

ըը (որը Ղարաչինարից շատ մօտիկ է), Ջէյվան, Շափի-Բէգլուն, Նաջալուն, Ղասըմ-Բէգլուն, Ղարբանդը, Սափի-Քիւրդը, Բալա-Քիւրդը և այլն...:

Վերոյիշեալ “Ղարաչայի” հայաբնակ գիւղօրայքը, գտնուելով տեղոյն Մէլիք-Բէգլարեանցների և Մէլիք-Յովսէփեանցների կալուածքներում, պտղաբեր տափարակներից մէկն է: Այդ գաւառամասի դաշտավայրերում կարելի է տեսնել բազմատեսակ մրգեղէնների ծառեր: Շատերին է յայտնի “Ղարաչայի” կարմիր խնձորը, տանձերի ու խաղողի տեսակները, գինին ու այլն: Մրգեղէններով հարուստ լինելու պատճառով “Ղարաչային” կարելի է անուանել “Բաղդադ”: “Ղարաչայի” կենտրոնը համարեայ Ղարաչինար կամ Աղջաղալայ մեծ գիւղն է, որտեղ կան վարչական, երկրասեան ուսումնարան, որի հոյակապ շինութիւնը շուտ կաւարտուի, կառուցած մեծ և գեղեցիկ եկեղեցի, նոր բացուած դեղատուն իւր ֆելտշերով, բաւականի մանուփակտուրն-ի և գալանտերեյն-ի խանութներ, գեղեցիկ երկու յարկանի տներ, Մաշա-բեգ Մէլիք-Բէգլարեանցի այգիները շրջապատուած են քարե պատի պատնէշով, այդտեղ (Ղարաչինարում) բնակուած է և տեղոյն հաշտարար միջնորդը իւր հայ թարգմանի հետ. մի խօսքով Ղարաչինարը կարելի է անուանել և գիւղաքաղաք:

Մինչև թուրք-հայկական երկպառակութիւնները սկսուելը “Ղարաչայի” թուրք հարևանները իրանց «դոստ» և «աշնա» հայերին քիչ վնասներ չէին հասցնում իրանց գողութիւններով, աւագակութիւններով, մարդասպանութիւններով...: Նրանք (թուրքերը) էին, որ անցեալ 1905 թ. ամառը Էրբէջի դաշտավայրում անագնուաբար կոտորեցին անմեղ ճանապարհորդ դարաչինարցի երեք քաջարիներին, որոնցից յայտնի էին Սարգիս Ղազարեանցը և Դուխանը... և որոնք բաւականին արիւնարբուների կոտորելուց յետոյ ընկան թշնամիների գնդակից ու դաշոյնի հարուածներից այն ժամանակը, երբ այդ քաջերի փամփուշտները բոլորովին հատել էր...: Նրանք՝ այդ “Ղարաչայի” հայերի «դոստ» ու «քիւրվայ» թուրքերը վաղուց էին սպասում այսպիսի մոմենտների, նրանք սրտով ցանկանում էին, որ բռնկւի երկու տարրերի սերտ հարաբերութիւնները, նրանք միշտ ուզում էին յուզմունք առաջ բերելու, որպէսզի իրանք օգտուելով հանգամանքներից, կարողանան հայի քրտինքով ձեռք բերած սեպհականութիւններով միանգամայն հարստանալ: Նրանք կարծում էին, թէ շատ հեշտութեամբ կարելի է հայերին միանգամից կոլ տալ: Սակայն այդ թուրքերը կենտրոնանալով վերոյիշեալ Մուլա-Վալադ գիւղում, 1905 թ. աշնանը մի քանի անգամ յարձակուեցին Ղարաչինարի վրայ՝ շատ մեծ ոյժով, որոնց ժամանակ՝ կազակներով ու զինորներով եկաւ Ղարաչինարը՝ Գանձակի նախկին գաւառապետ Բէուտը, բայց չնայած դրան, թուրքերը ուշք չդարձնելով այդ պաշտօնեայի գալու վրա, ուզում էին նրաներկայութեամբ հեշտութեամբ բնաջինջ անել հայերին: Վերջապէս թուրքերը, տեսնելով, որ շատ հեշտ չէր հայերի հետ մենամարտուելը, ցրուեցին ու անհետացան, իսկ հայերի շատ մօտի հարևան մուլավալադցիները, մտածելով, որ հայերը գոգոռած են իրենց դէմ, թէ ինչո՞ւ իրանք թոյլ են տալիս ուրիշ թուրքերին ժողովուելու իրանց գիւղը (Մուլա-Վալադը) ու իրանց առաջնորդութեամբ ու օգնութեամբ յարձակուած դարաւոր հայ հարևանների վրայ, թողնում են իրենց ծննդավայրերը ու փախչում ուրիշ թուրքաբնակ գիւղեր ու գլխաւորապէս Ջէյվան: Գեղեցիկ ու նոր կառուցած տներ ունեցող մուլավալադցի բեգերից շատերը, հեռանալով իրենց բնակավայրերից, կայցնում են իրենց գեղեցիկ ու սիրելի տների ճակատից ռուսերէն լեզուով գրուած թղթեր այսինչ բովանդակութեամբ. «Ճնդդում ենք մեր սիրելի հարևան հայերին, ինչ ուզում են անեն, միայն մեր մեծ շարչարանքով կառուցած տները չքանդեն, մեզ բաշխեն»...: Ծշմարիտն ասած հայերը

չէին դիպչելու Մուլա-Վալադին, հայերը նրանց (թուրքերի) նման անագնուաբար չէին վարուելու, եթէ մուլավալադցիք քոչելուց յետոյ, այդ անմարդաբնակ գիւղը՝ գիշերները չհաւաքուէին թուրք սրիկաները, հրոսակախմբերը ու դիրք ունենալով Մուլա-Վալադի տները, չանհանգստացնէին հայերին: Եւ պատճառն այդ է լինում, որ հայերը ստիպուած են լինում աւերել ու հողին հաւասարեցնել Մուլա-Վալադի տները և նրանց հնադարեան շէնքերը, ինչպէս թուրքերը վարուեցին մեր անմոռանալի Մեծ Սարովի հետ:

Մուլա-Վալադը աւերուելուց յետոյ թուրքերի հաւաքուելի, ժողովուելի ու “կոնգրեսա”-տեղի կենտրոնը դառնում է մէկ էլ Ջէյվան: Այստեղ թուրքերը իրենց գլխաւոր խանգաղանների դեկավարութեամբ, առաջնորդութեամբ մեծ ոյժեր հաւաքելով, սոյն տարուայ յունուարի սկիզբներում՝ գիշեր ժամանակը՝ գաղտնաբար գալով աւերուած Մուլա-Վալադը ու դիրք ունենալով այդ գիւղի այգիները և Մանասին-Շէնի շրջակայքում գտնող մերկ սարերը, պատում են Ղարաչինարի ու Մանասին-Շէնի ներքը՝ անթիւ հրոսակախմբեր և սկսելով սաստիկ հրացանածգութիւնը, գնդակները կարկուտի նման թափում են յիշեալ գիւղօրայքի վրայ: Հայերը իրենց կողմից շտապով մտնում են իրենց վաղօրոք աչքի առաջ ունեցած դիրքերը և սկսելով արձակել դէպի թշնամիները՝ օրինաւոր գալւերը, շնորհիւ կանոնաւոր դիսցիպլինային՝ կարողանում են շուտ հալածել թշնամիներուն ու չթողնել նրանց իրենց դիրքերից առաջ գնալու: Այդ սարսափելի կռիւր տևում է առաւոտեանից համարեայ կեսօրուայ ժամի մէկը: Թուրքերը, տեսնելով, որ ոչինչ չեն կարողանում անել հայերին, թողնելով կռիւ դաշտում իրանցից մինչև 20 գոհեր, շատ վիրաւորներով փախչում, անհետանում են...: Այդ կռում աչքի էին ընկնում յաճախակի իրենց քաջութեամբ Մանասին-Շէնացի երիտասարդները, իսկ Ղարաչինարի երիտասարդներից ինչ սպասում է՝ չէ տեսնում: ...այդ կռում տեղոյն հայ կալուածատէրերից աննկարագրելի յուսահատուած ու շփոթուած հայերին օգնող ու խելացի կարգադրութիւններ անողը եղել է համարեայ միայն Դ. Մէլիք-Բէգլարեանցը, որի այդպիսի արիւթիւնը և իւր ցեղակիցների թշնամուց պաշտպանելը՝ հայ լսողները չեն մոռանալ յալիտեան...: ...թուրքերը, տեսնելով հայերի արիւթիւնը... փախչում անհետանում են ...ու վճռում են ուրիշ եղանակով վնասել ու վրէժ առնել հայերից: ...այն ինչ է՝ գաղտնաբար քշել հայի ապրանքը (տաւարը) անցեալների նման, սպանել պատահած հայերին կամ կարելոյն չափ գերի բռնել պատահած հայերին ու չարչարելուց ու նրանց հետ դրամաներ սարքելուց յետոյ կոտորել նրանց: Եւ իրաւապէս զէյլեցի և այլ թուրքերից բաղկացած մի աւագակախումբ, աջողեցրեց գերել սրանից մի քանի շաբաթ առաջ Մանասին-Շէնացի Աբրահամ Օհանջանեանցին ու Մաղաբէլ Յակոբեանցին, երբ վերջինները բանում էին յիշեալ գիւղի (Մանասին-Շէնի) դաշտում ու բացի այդ քշեցին բաւականին հայի տաւար: Յիշեալ հայերին գերելուց յետոյ, մի քանի զինուած թուրքեր, գալիս հեռու կանգնում են Ղարաչինարից և Մանասին-Շէնից և կանչելով իրենց մօտ մի քանի հայերի, յայտնում են նրանց, որ կորած հայերին իրանք են գողացել և որ այդ հայերը գտնուած են կենդանի իրենց մօտ և իրանք կխօստանան նրանց արձակել այն ժամանակը, երբ հայերը (Ղարաչինարի կամ Մանասին-Շէնացի հասարակութիւնը) կտան իրանց յայտնի գումար...:

Շատ դժուար է ներկայումս Մանասին-Շէնացոց համար, որոնց արտերը գտնուած են Ջէյվայ թուրքաբնակ գիւղի մօտերին, այն Ջէյվի մօտերին, որի թուրքերը... գերեցին դաշտից բան անելու ժամանակ երկու մանասինչէնացի անմեղ հայերին: Այժմս յիշեալ գիւղի հայերը, որ վախենում են իրենց գիւղից (Մա-

նասին-Շէնհից) մօտի այգիներում բանելու, ապա ինչպէ՞ս պէտք է ջրեն, հնձեն, նորից վարեն իրենց այն բոլոր արտերը, որոնք գտնուում են թուրքաբնակ Ջէյլի մօտերքին...»³⁷:

Օրեր անց հերթական հրապարակումն ավելի է պարզում իրավիճակի շիկացման պատճառները. «Գանձակ գաւառի հարաւ-արևմտեան մասը, Աղջաղալա, Վերին-շէն ու Ներքին-շէն գիւղերի շրջանը, այժմ գտնվում է մեծ իրարանցման մէջ. յիշեալ հայաբնակ գիւղերի դրութիւնը օրհասական է համարեա: Հարևան թուրք գիւղերից անհետացել է ոչխարների մի փոքրիկ հօտ իր հովիւներով, թուղ երկու հոգի: Թուրքերը, որոնք այս խառնակ ժամանակ արև-թալանի վրա միշտ աչք ունեն տնկած ու իրարից էլ գողանում, յափշտակում են մեծ ջանասիրութեամբ, հօտի ու հովիւների անհետանալը վերագրում են Աղջաղալայի հայերին ու պահանջում են անյապաղ վերադարձնել իրանց կորուստը, սպառնալով մերժման դէպքում հիմնովին քարուքանդ անել թէ՛ Աղջաղալան և թէ՛ նրա շրջակայ միւս հայաբնակ գիւղերը: Աղջաղալեցիները, լաւ իմանալով, որ թուրքերի հօտը քշել, անհետացրել են Ջիւանշիրի գաւառից եկած յայտնի արիւնարբու «քօլանի» թուրքերը, վճռաբար մերժում են կատարել իրանց դրացիների անարդար պահանջը, բնաւ չը վախենալով նրանց սպառնալիքներից: Աղջաղալեցիների մերժման թուրքերը պատասխանում են գիւղի պաշարմամբ, որը չորրորդ օրն է ինչ տևում է. հարևանական է, որ պաշարումը կը շարունակվի երկար, եթէ իշխանութեան եռանդուն ու կտրուկ միջամտութիւն չը լինի...: Աղջաղալայի վիճակակից են նրա շրջանի միւս հայաբնակ գիւղերը՝ Վերին-շէնը, Ներքին-շէնը, Պարիսը. ընդհանուր յուզումը նկատվում է նաև միւս, աւելի հեռաւոր գիւղերում...: Թուրքերի այժմեան տակտիկան, հայ գիւղերի պաշարումը նպատակ ունի դաշտային աշխատանքների կատարելը ընդհատումը, որի հետևանքը կը լինի անխուսափելի սովը մօտաւոր ապագայում: Աղջաղալան ու նրա շրջակայ գիւղերի պաշտպանողների թիւը հասնում է այժմ մի քանի հարիւր հոգու. այդ թիւը գնալով ստուարանում է: Դէպքերի վայրն է գնացել Գանձակի գաւառապետ պ. Բէուտը, որն իր տրամադրութեան տակ չունի, սակայն, բարականաչափ զօրք: Հայ գիւղացիներն իրանց յոյսը դրել են իրանց վրա գլխատրապէս, բայց տարաբախտաբար սակաւ են ինքնապաշտպանութեան միջոցները, շատ սակաւ. եղածն էլ ձեռք է բերվում շատ քանակ գնով ու ոչ լաւ տեսակի: Չայրանալի, քստմնելի է անչափ այն, որ մեզանում բուսել են նոր տիպի վաշխառուներ, որոնք արդի դաժան պայմաններից օգտուելով՝ ինքնապաշտպանութեան հնացած, փչացած գործիքները վաճառում են կրկնակի, եռակի գնով...»³⁸:

1905 թ. հոկտեմբերի 22-ին հերթական գույժն է սփռվում. «...Դօզլիար կոչված թրքական գիւղի մօտ անհոգ ճաշելիս են լինում դարաչինարցի Սարգիս Ղազարեանը, իր փեսայ Ջաւաղը, տանուտէր Դուխանը (старшина), Ֆրիդունը, Յովհաննէսը և Արշակը: Յանկարծ յիշեալ թուրք գիւղացիները, թուղ 30-40 հոգի, յարձակվում են չորս կողմերից: Բոլորովին շփոթված տղաները այս ու այն կողմն են թռչում կռուելով, բայց շրջապատված լինելով տմարդի թուրքերով, ընկնում են բոլորը, թուղ 5 հոգի, միմիայն Արշակին աջողվում է հրաշքով ազատվել ու հասնել Երքեջ, գիշեր ժամանակը: III գաւառամասի պրիստաւ Բահրամ-բէկ Ջվանշիրը, այդ դիմակաւորված գազանը, այդ վայրկեան Երքեջ լինելով, առանց ժողովրդին յայտնելու, գնում է աղէտաբեմը և դիակները թաքցնում: Հետևեալ օրը հայ երիտասարդները 30 կօզակների հետ մի կերպ հարկադրում են դիակները տալ: «Նա-

մարդ» թուրքերը ամենագագանաբար էին վարվել անշունչ դիակների հետ, մէկին այրելով, միւսի երեսը մաշկելով, երրորդին կտոր-կտոր անելով և այլն և այլն»³⁹:

Լարված և դժնդակ տարում իրենց սև գործն էին անում նաև ազգային ցեցերը. «Հայ գիւղացիների գլխից անպակաս էին բիրոկրատների բռնութիւնները. այժմ կարծես դրանք բարական չեն. և ահա ուղարկել են մեր շրջանը մի ոմն Գէորգ Տէր-Յարութիւնեան, որ կառավարութեանը անվարձ ծառայում է և դարձել է նրա մի շատ եռանդուն ազենադ: Վերցնում է կօզակներին, գիւղից-գիւղ շրջում, ծեծում գիւղացիներին և պահանջում, որ իրեն հիւրասիրեն, պատիւ տան, «աղա» ասեն...»⁴⁰:

Ակնհայտորեն կողմնակալ կեցվածք որդեգրած ռուսական իշխանություններն ահա թե ինչպէս են միջամտում հայկական գյուղերի նկատմամբ բազմաթիվ ոտնձգություններին նրանց տված մեկ պատասխանի առիթով. «Բալա-բէգ Քերդրզկիի 12 գլուխ տաւարը սրանից երկու ամիս առաջ գողանում են. գենեբալ Ալֆաանը համարելով Վերաշէնի հայ գիւղացիներին մեղաւոր՝ ենթարկում է 450 ռուբլի տուգանքի:

Վերջերս պրիստաւը տուգանքը պահանջելու համար այդ գիւղն է գնում. գիւղացիները կամենալով տուգանքը վճարելուց ազատել. ասել են՝ տաւարներ տանողը իրենք չեն եղել, այլ Խարափորի հայ գիւղացիք: Պրիստաւը պարապ վերադառնում է Աշագեգալ գիւղը, այնտեղից վերցնում կօզակներ ու գնում Խարափոր գիւղը: Կօզակները մտնելով գիւղը, դուրս են թափում գարի, իող, պանիր, գինի ու արաղ, ապա բարձրանում են խոտի դէզերի գլուխ, ու սկսում են ցրիւ տալ. մի մասը ոչնչանում, ու մնացեալն էլ տալիս իրենց ձիերին. հայերին այսքան նիւթական վնաս հասցնելուց յետոյ, 20 գլուխ տաւար ջոկում ու տանում են Վերան-շէն գիւղը: Դանապարհին իրենց պատահող երեք հայերին, երբ պրիստաւը հարց ու փորձ անելով իմանում է, որ նրանք խարափորցի են, կօզակներին հրամայում է սաստիկ ծեծել»⁴¹:

Ազգամիջյան հարաբերությունների այդ լարված ժամանակաշրջանում իրեն զգացնել էր տալիս վարչական բնույթի մեկ այլ արհեստական անհարմարություն: Այդ կապակցությամբ 1906 թ. սեպտեմբերի 3-ին Գանձակ գավառի Իգիրմիդորդ գավառակի Ղարաբուլաղ, Էրքեջ, Մանաշիղ, Վերիշէն, Ներքիշէն, Կարաչինար, Խարխափութ, Մանասաշէն, Բորիս, Բուզլուխ և Գյուլիստան հայաբնակ գյուղերի բնակիչները մի նամակ էին հղել Մկրտիչ Ա կաթողիկոսին՝ պատմելով Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիայի իրավասության տակ գտնվելու անհարմարությունների և Գանձակի հոգևոր կառավարության իրավասությանը ենթարկվելու իրենց ցանկության մասին. «...թողած մօտակայ Գանձակի հոգևոր կառավարութիւնը, որ մեր ամենահեռաւոր գիւղից հազիւ թէ քառասուն վերստ կլինի, իսկ մօտիկը քսան և հինգ, իսկ մենք ստիպում ենք այս արեան և կրակի ժամանակ 180-200 վերստ լեռնային դժուար ճանապարհները կտրել, երկու գաւառ անց կենալ (Ջւանշիր և Շուշի գաւառներ) և Շուշի կոնսիստորիայի դուռը հասնել, որ գրեթէ անկարելի է և անտանելի է: Բացի այդ, տարիներով վեղարաւորի չենք հանդիպում, տարիներով թեմակալների երես չենք տեսնում, Շուշին հեռու է, իսկ Գանձակը, որ մօտ է, որտեղ ամէն օր, ամէն գիւղից տասնով, քսանով, յիսունով, հարիւրով լինում ենք մեր դատաւարութեան համար, առևտուրի, պետութեան զանձարանի հետ հաշիւներ ունենալու համար, գաւառական վարչութիւնը գնալ-գալու

37 ՀԱԳ, ֆ. 227, ց. 1, գ. 404, ք. 2-5 շրջ.:

38 Տէր-Աւետիքեան Ստ., Նամակ Գանձակից, «Մշակ», 1905, № 203, 6 հոկտեմբերի, էջ 3-4:

39 Յովասափեանց Ա., Տեղեկութիւններ գաւառից, «Մշակ», 1905, № 221, 8 նոյեմբերի, էջ 1:

40 «Չանգ», 1906, № 10, 23 օգոստոսի, էջ 2:

41 «Չանգ», 1906, № 6, 18 օգոստոսի, էջ 2:

և գիմնագիան և քաղաքային ուսումնարաններ աշակերտ ունենալու համար...»⁴²:

Արձագանքը չի ուշանում, և հենց նույն ամսին խնդրո առթիվ Սկրտիչ Ա կաթողիկոսը մասնավոր կոնդակում նշում է. «...յանուն Վրաստանի և Իմերեթիայի առաջնորդի կարգադրել է, որ Վարաբաղի թեմի Իգիմիդորդի գործակալության 11 գիտերը, սոցա բնակիչների խնդրագրերի համաձայն, ենթարկուին Գանձակի փոխանորդության և իրաստության Վրաստանի Հայոց թեմին»⁴³:

Սակայն հազիվ ամիսներ անց կաթողիկոսը ստիպված է լինում հերթական գրությամբ չեղյալ համարել նախանշված փոփոխությունը: Այդ առթիվ Արցախի թեմակալին հղված գրության մեջ նշվել է. «...պատուիրեցալ թողուլ գործակալութիւնն Իգիմիդորդի ընդ իշխանութեանը թեմին Վարաբաղում»⁴⁴:

1906-1907 թթ. տեղի ունեցած այդ տարօրինակ կացության մասին, երբ կաթողիկոսական մի գրություն ընդառաջում, իսկ մյուսը մերժում էր մի անբողջ զավառի բնակիչների ցանկությունը, 1914 թ. այսպես է պարզաբանվել. «Վարաբաղի թեմին են պատկանում և Գանձակի գաւառից 12 գիտեր՝ Վարաչինարը, Ղահթութը, Նոր-շենը, Խրիսափորը, Գիլիստանը, Ներքին և Վերին-շեները, Բուզլուխը, Մանուշեցիքը, Էրքեջը, Պարիսը և Վարաբուլաղը...: Խրիմեանի կաթողիկոսութեան օրով այս 12 գիտերը իրանց յարմարութեան համար կցվեցին Գանձակի փոխանորդութեանը, որոնց հեռաւորութիւնը այդ քաղաքից միայն 18 վերստ է, իսկ Շուշուց մօտ 100-120 վ., սակայն վեհափառ հայրապետի այդ կարգադրութիւնը յետ վերցնել տուին՝ պատճառաբանելով թեմական դպրոցի հասոյթների պակասելը: Այժմ թեմական դպրոցը ապահովված է և ժամանակ է, որ այդ գիտերը, յարմարութեան համար, կցվեն Գանձակի փոխանորդական վիճակին...»⁴⁵:

Խնդրո առթիվ 1914 թ. խնձրիստանցի Պետրոս քահանան նշել է. «Գանձակի ապագայ թեմը իր 3980 ղ. արդիւնքով, Վարաչինարի 12 գիտերի նպաստներով և իւրաքանչիւր պսակին 1 կամ 2 ղ. աթոռահասերի աւելացումով հեշտութեամբ կը պահպանի իր գոյութիւնը»⁴⁶:

Նշյալ հարցը մեկ անգամ ևս բարձրացվում է 1916 թ. և հղվում Վարաբաղի թեմի կառավարիչ Վահան ծայրագույն վարդապետ Տեր-Գրիգորյանին: Հերթական գրության հեղինակներն այս անգամ նշում են, որ գործակալության գյուղերի քաղաքացիական, ոստիկանական, զինվորական, դատական և նույնիսկ առօրյա գործերը կատարվում էին Գանձակում, միայն «հոգևորի համար նորա գնում են Շուշի...: Իգիմիդորդի գործակալութիւնը Գան-

ձակի գաւառի մէջ է մտնում, և այստեղ կենտրոնացած են այն բոլոր հաստատութիւնները, որոնց հետ բնակիչները կապուած են որպէս քաղաքացիներ»⁴⁷:

Խնդրին հետամուտ՝ նույն թվականի սեպտեմբերին Գանձակի փոխանորդ Լևոն վարդապետը Գևորգ Ե կաթողիկոսին մի բացատրագիր է ուղարկում և նկարագրում այցելած 11 գյուղերի կացությունը:

Ըստ էության՝ ոչ թե ազգի հոգսերին ու խնդիրներին ընդառաջ, այլ սուկ թեմի եկամուտների նվազման հեռանկարից դժգոհ Վարաբաղի թեմի ժամանակավոր վարդապետ Վահան Տեր-Գրիգորյանը Լևոն վարդապետի այդ շրջագայությունը համարում է անխոհեմություն և ուրիշների իրավունքների մեջ խառնվել, քանի որ այն կատարվել է առանց իր միջնորդության և կարգադրության, և իբր թե դեռևս ոչ մի միջնորդություն և կարգադրություն չկա Իգիմիդորդի 11 հայկական գյուղերը Գանձակի փոխանորդությանը միացնելու համար: Այդ առթիվ Լևոն վարդապետը նշում է. «...ուղիղ տասը տարի առաջ այս 11 հայ գիտերի բնակիչները ուրոյն ուրոյն համախօսականներով յարուցել են այդ միջնորդութիւնը և ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Տ. Սկրտիչ Ա. Հոգելոյս Կաթողիկոսը Սրբատառ կոնդակով կարգադրել է, ի յարգանս այդ միջնորդութեան, 11 գիտերը ենթարկել Վրաստանի և Իմերեթիայի Հայոց թեմական իշխանութեան՝ միացնելով Գանձակի փոխանորդութեան, թէև յետոյ այդ կարգադրութիւնը թողել է առանց հետևանքի, շնորհիւ Վարաբաղի ժամանակի թեմական իշխանութեան բողոքի: ...յնթացս տասը տարույ եղել են մի շարք միջնորդութիւններ այս միացման մասին...»⁴⁸:

Հարցը լուծում է ստանում 1917 թ., քանի որ Իգիմիդորդի գործակալությունը Գանձակի հոգևոր կառավարության ենթակայության ներքո է դրվում միայն այդ ժամանակ⁴⁹. «Ռուսաստանի հայ թեմերի բաժանումը եղել է 1836 թ., երբ հաստատուցան «պօլօժեմիեն...: Այդ ժամանակից անցել է 81 տարի..., Իգիմիդորդ, որ նշանակում է 24, այդ անունը այլևս գործածական չէ, հին ժամանակներից է մնացած և այժմ դորա փոխարէն գործադրում է Վարաչինար անունը, կենտրոնի գլխատր գիլի անունով: Այդ գիլը Սէլիք-Բէգլարեանների տոհմի գիլըն է: Վարաչինարի կենտրոնը 12 գիտ է. Վարաչինար, Ղահթութ, Նորշեն, Խրիսափոր, Գիլստան, Ներքին-շեն, Վերին-շեն, Բուզլուխ, Մա-

47 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 627:

48 Նշվ. աշխ., գիրք Թ, էջ 621: Ի դեպ, 1916 թ. օգոստոսի 10-15-ին Լևոն վարդապետի շրջագայության մասին մանրամասն նշվել է. «...վիճակիս Գետաշեն գիլի Ղևոնդ քահանայ Տեր-Բարայէլեանցի ուղեկցութեամբ...: Եւ օգոստոսի 10-ին, Աստուածածնի Պահոց չորեքշաբթի օր, ժամը 12-ի մօտերը դուրս են եկել վիճակիս Նոր-Արմաիր գիլից դէպի Էրքեջ, իջել քահանայի մօտ և սպասել, ... 11/2-2 ժամից յետոյ դուրս եկել դէպի Մանաւաշեն և երեկոյեան 7-ի մօտերը հասել ու իջել գործակալի տունը...: 12-ին իջել են Վարաչինար ուտով, 1 վերստ, հաշտարար միջնորդ Շալաղգէի հետ խօսելու համար՝ յիշեալ Նոր-Արմաիր գիլը հանելու Էրքեջի հասարակութեան տանուտրութեան իրաստութիւնից և ենթարկելու Գետաշենի տանուտրութեան, ինչպէս այդ խնդրել էր ինձանից Նոր-Արմաիրի հասարակութիւնը, իւր քաղաքացիական յարմարութիւնները ի նկատի ունենալով: ...նոյն օրը նոյն գործակալի, Վերին Շենի տ. Խորէն քահանայի և հետիս քահանայի հետ եկել Խարիսափոս գիլը, որը ճանապարհի վրայ է, ...կէս ժամից յետոյ ճանապարհ ընկել Ներքին Շեն գիլը: Ծաշել քահանայի տանը՝ մասնակցութեամբ գիլի երեք քահանաների և անցել Վերին Շեն գիլը, որտեղ հասել երեկոյեան ժամը 5-ին, երեկոյեան ժամերգութիւն կատարել, ...քարոզ տուել ... լուստորութեան և գիլի անշուք եկեղեցին պայծառացնելու մասին: 13-ին, առաւօտեան 11-ի մօտերը ճանապարհուել Գիլիստան ուխտավար գիլը՝ ճանապարհին նախապէս այց եկնելով նոյնանուն յայտնի և գեղեցկանիստ բերդը...: Միւս օրը, 14-ին, ճաշից յետոյ, վերադարձել Վերին Շեն և հասել ժամը 6-ին, գիշերել. հետևեալ օրը, 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, դուրս եկել Մանաւաշի իջել քահանայի տունը. ճաշելուց և ձին փոխելուց յետոյ իջել Նոր Արմաիր և սպա Գետաշեն» (էջ 621-622):

49 ՀԱԳ, ֆ. 56, ց. 4, գ. 713, ք. 9:

42 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Է, Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.), Երեւան, 2000, էջ 593-594:

43 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երեւան, 2001, էջ 627:

44 «Արարատ», 1907, Թ, էջ 748:

45 Պետ (Պետրոս Տեր-Հովհաննիսյան քահանա), Ռուսաստանի հայ թեմերի աւելացնելու խնդրի շուրջը, «Մշակ», 1914, № 98, 8 մայիսի, էջ 2: Ի դեպ, 1912 թ. գավառը վարչականորեն մտնում էր Ելիզավետպոլի նահանգի 3-րդ ոստիկանական շրջանի մեջ. Աղջաբենդի գյուղախմբի մեջ մտնում էին Վերին և Ներքին Աղջաբենդ, Վարաչինար, Ենգիբենդ, Գաղթութ, Հայ Բորիս, Գյուլիստան, Խարիսափոս և Բալլուղայա, Բորիսի գյուղախմբում՝ Ռուս Բորիս, Թափ և Լևոն Արիս, Էրքեջի գյուղախմբում՝ Էրքեջ, Մանաւաշի, Վարաբուլախ, Բուզլուխ, Սարիսու, Արմավիր-Ղուշչի, Թողան և Գյուրգալիար գյուղերը (Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год: Приложение к памятной книге, Тифлис, 1914, с. 52, 54): Գրեթե նույնպիսի վարչական կացություն է արձանագրվել 1915 թ., ըստ որի՝ Աղջաբենդի գյուղախմբի մեջ էին մտնում՝ Վերին և Ներքին Աղջաբենդ, Բալլուղայա, Հայ Պարիս, Գաղթութ, Գյուլիստան, Ենգիբենդ, Վարաչինար և Խրիսափոր, իսկ Պարիսի գյուղախմբի մեջ՝ Ռուս Պարիս և Թափ գյուղերը (Кавказский календарь на 1917 г., Тифлис, 1916, отдел статистический, с. 51):

46 Պետ, Ռուսաստանի հայ թեմերի թիւն աւելացնելու խնդրի շուրջ, «Մշակ», 1914, № 168, 2 օգոստոսի, էջ 3:

նուշեցիք, Վարաբուլախ, Էրքեջ և Հայ Պարիս: Այս 12 գիւղերը միացնելով Գանձակի 23 գիւղերի հետ, այդ փոխանորդութիւնը կազմում է 35 գիւղ...»⁵⁰:

1917 թ. սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում տեղի ունեցած Հայ ազգային խորհրդակցության ժամանակ Ա. Շահխաթունյանը նահանգների, գավառների, զենսավորների սահմանների վերաբերյալ զեկույցում անդրադառնում է նաև Գանձակի նահանգին: Ըստ նրա՝ այն պետք է բաժանվեր 2 մասի՝ լեռնային և դաշտային: Առաջինը, որտեղ գերակշռում էր հայ ազգաբնակչությունը, պետք է կոչվեր Գանձակի նահանգ, իսկ երկրորդը, որտեղ մեծամասնություն էին կազմում մահմեդականները, ստանալու էր Ելիզավետպոլի նահանգ անունը: Ի դեպ, Գանձակի նահանգի կազմի մեջ մտնելու էին նաև Աղջաքենդի, Պարիսի և Էրքեջի գյուղական համայնքները⁵¹:

Գավառաբնակ հայության համար դրությունը գրեթե օրհասական է դառնում 1918 թ., երբ դեպի Բաքու առաջացող թուրքական բանակները գրավում են Գանձակն ու շրջակաները:

Ողջ տարածաշրջանում անմիջապես աշխուժանում է մեկուկես տասնամյակ առաջ հայկական գյուղերի վրա հարձակվելիս անոթահար հետ շարտված թուրք-թաթարական կիսավայրենի տարրը, որը ոչ միայն ամբողջովին ազատ էր իր զազանաբարո գործողությունների մեջ, այլև դրանում ուներ նորելուկ Ադրբեջանի իշխանությունների գործունե հովանավորությունը:

Հայերի համար սկսվում է անօրինակ մղձավանջային մի ժամանակաշրջան, որի ընթացքում գավառաբնակ հայությունը ոչ միայն մեծաթիվ անմեղ զոհեր է տալիս, այլև ի վերջո թշնամի գրավում և անխտիր ավերում է հայկական բոլոր գյուղերը:

1918 թ. հուլիսին Կոմիսարների խորհուրդը ձախափնյա Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի գավառապետ է նշանակում Մարկոս Տեր-Աստվածատրյանցին, օգնական՝ Արշակ Շահիջանյանին⁵², իսկ սեպտեմբերի 7-11-ը գումարված Վարաբաղի երկրորդ համագումարում արլահիցի Բագրատ Ղազարյանին՝ Ջրաբերդի և Գյուլիստանի հրամանատար⁵³:

Նույն թվականի հոկտեմբերի 26-ին շրջան այցելած Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության պորուչիկ Մուսայելյանն իր զեկույցագրում նշում է. «26-ին անցա Մանաշեն, Բուզլուխ, Էրիշեն գյուղերով և գիշերը հասա Գուլուստան (իմա՝ Գյուլիստան): Թվարկված բոլոր գյուղերից, նույնպես տրված թուրքերին, գալիս էին գյուղացիները, կանգնեցնում ինձ և խնդրում իրենց հաղորդել՝ «Արդյոք շուտ կգա Կովկաս այնպիսի իշխանություն, որը կկարողանա ազատել իրենց թուրքերից...» և անմիջապես զարմացած ասում՝ «Մի՞թե մենք մնալու ենք թուրքերի ճնշման ներքո»: Իմ հարցին, թե ինչու են այդպես սպասում անգլիացիներին և ռուսներին, պատասխանեցին՝ «Թուրքերի գալով մենք վերջնականապես սնանկացանք, նրանք պահանջում են ամբողջի, ինչ-որ մենք ունենք (տավար, հավ, հաց և այլն) 1/10-րդը, ամեն օր հավաքում են մի քանի տասնյակ ռուբլի նոր հարկեր, անգամ կան գյուղեր, որոնցից վերցրել են հարյուր հազար (օրինակ՝ Ներքիշեն, Երիշեն): Ներքիշենը վերջնականապես քայքայեցին, քանի որ այն թուրքական զորքի մշտական կայանն է: Լրտեսությունը չափազանց տարածված է, ամեն օր գյուղացիներին խուզարկում են և ձերբակալում: Բավական բարձր հարկեր չվճարողներին և ձիերին կեր տալու հեծյալի առաջին իսկ պահանջի մերժողներին ծեծում են: Հայերի բո-

ղոքներին ուշադրություն չեն դարձնում, իսկ թաթարների բողոքների դեպքում, որ իր ոչխարը 10-15 տարի առաջ կորել է հայկական գյուղի մերձակայքում, ունենում է այն հետևանքը, որ թուրքերը ակնթարթորեն ձերբակալում են գյուղացիներին և վերցնում եռակի վճար»⁵⁴:

1919 թ. փետրվարի 20-ին՝ դեռևս նույն ամսվա 10-ից Շուշիի թեմական դպրոցի սրահում տեղի ունեցող արցախահայության 4-րդ համագումարի ժամանակ, ընդունվում է Արցախի ժամանակավոր կառավարման 11 կետից բաղկացած նախագիծը, որը ներառում էր նաև Գյուլիստան գավառն ու նրա ներկայացուցչին.

«Հայկական Վարաբաղի ժամանակավոր կառավարման

Առաջիկայում, մինչև խաղաղության կոնֆերանսի որոշումը, Հայկական Վարաբաղը ղեկավարվելու ներքոյիշեալ կանոնների հիման վրա.

Հայկական Վարաբաղ է կոչվում Շուշու, Կարյազիմոյի, Ջիվանշիրի (Ջրաբերդ) և Ելիզավետպոլի (Գյուլիստան) գավառների լեռնային գոտին, որն ունի հայության հոծ մեծամասնություն...:

Կառավարումը կենտրոնանում է մարզային խորհրդի ձեռքում, որի նստավայրը Շուշին է:

Խորհուրդը կազմված է 7 հայից (1-ը՝ քաղաքից, 1-ը՝ Խաչենից, 2-ը՝ Վարանդայից, 1-ը՝ Դիզակից, 1-ը՝ Ջրաբերդից, 1-ը՝ Ելիզավետպոլի գավառից (Գյուլիստանից) և երեք մուսուլմանից (1-ը՝ քաղաքից և 2-ը՝ գավառից)...»⁵⁵:

Ի մասնավորի՝ հայտնի է, որ 1919 թ. փետրվարի 22-ին թուրքերը սպանում են Էրքեջից 1, Մուլամետից [Մանաշի՞ղ]՝ 1, Ենգիթենդից՝ 1, Վերին Աղջաքենդից՝ 2 և Վարաչինարից 2 հոգու: Ի դեպ, մինչ այդ Աղջաքենդի տանուտերը հաղորդել էր թուրքերի կողմից սպանված ևս 9 հոգու մասին⁵⁶:

1919 թ. մայիսի 25-ին Դռնավար գյուղում գումարված զինվորական համագումարում Արցախի 5 ինքնապաշտպանական շրջաններից Ջրաբերդ-Գյուլիստանի գլխապետ է նշանակվում Արշակ Չախարբեկյանը⁵⁷:

Արդեն «1919 թ. սեպտեմբերի կեսերին Գանձակի գավառապետը ժամանում է Գետաշեն և պահանջում, որ Գյուլիստանի շրջանի գյուղերը հպատակվեն իրեն և խնդիր է դնում զինաթա-

50 Պետ, Թեմի սահմանի փոփոխություն, ՀԱԳ, ֆ. 227, ց. 1, գ. 13, թ. 4 :

51 Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 128-129.

52 Իշխանեան Ե., Լեռնային Վարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 163:

53 Նշվ. աշխ., էջ 204:

54 Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Սոնյա Միրզոյան, Ավարդ Գազիյան, Երևան, 2003, էջ 130 (բնագրում՝ «26-го проезжал через селения Манашен, Бузлух, Эришен и прибыл ночью в село Гулустам. Со всех перечисленных селений, тоже сдавшихся туркам, выходили крестьяне и крестьянки, останавливали меня и умоляли им сообщить: «Скоро ли придет на Кавказ такая власть, которая смогла бы освободить от турецкого ига? Где англичане и русские? Даже удивленно говорили: «Неужели мы останемся под гнетом турок». На мой вопрос, почему они так ждут англичан и русских, отвечали: «С приходом турок мы окончательно разорились, они требуют от нас 1/10 всего, что мы имеем (скотины, кур, хлеба и т. д.), ежедневно собирают новые налоги по несколько десятков тысяч руб., даже есть села, с которых ввели сотни тысяч (пример, Неркишен, Еришен). Неркишен окончательно разорили, потому что там постоянное пребывание турецких войск. Шпионаж слишком развит, ежедневно у крестьян обыски и аресты. Не повинующихся к уплате сверх сил налогов и не давших по первому требованию всадника корма лошадьям - здорово бьют. На жалобы армян не обращают внимания, а жалоба татарина на армянина, что у него 10-15 лет тому назад пропал баран недалеко от армянского селения, имеет то последствие, что турки моментально арестовывают сельчан и взимают тройную плату»).

55 Կարապետյան Հ., Փաստերն ու փաստաթղթերը Հայաստան-Արցախ պետական միավորման մասին, «Խորհրդային Վարաբաղ», 1989, № 228, 6 հոկտեմբերի, էջ 3:

56 «Արցախ», 1919, № 7, 23 մարտի, էջ 3:

57 Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 417:

փելու բնակչությանը: Այդ մասին տեղյակ է պահվում Շուշիի հայ ազգային խորհրդին, իշխանության տարբեր օղակներով պահանջում են, որ Գանձակի գավառապետը վերջ տա իր ապօրինի քայլերին»⁵⁸:

1919 թ. նոյեմբերի 25-ին պատգամավոր Լևոն Տեր-Մինասյանը դիմում է ՀՀ նախարարների խորհրդի նախագահին և խնդրում նրա աջակցությունը Գյուլիստանի շրջանի հայաբնակ 13 գյուղերը (Գյուլիստան, Վերիշեն, Ներքիշեն, Ղարաչինար, Խրախափոր, Ենիքենդ, Ղարբիքենդ (Գաղթոթ), Պարիս, Էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ, Արմավիր և Գրբուլախ) Ղարաբաղին միացնելու հարցում⁵⁹:

58 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք. հոդը կանչում է, հ. Բ, Երևան, 2005, էջ 166:

59 Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, Ереван, 1992, с. 356-358 (ներկայացնում են փափրագի բնագիրը. «Гюлустанский район, состоящий из 13 армянских селений, а именно: Гюлустан, Верхний Агджакенд, Нижний Агджакенд, Карачинар, Хархапут, Енгикенд, Габркенд, Парис, Эркеч, Бузлук, Манашид, Армавир и Карабулаг, расположенный у подошвы горы Мров-Даг и имеющий естественные живые границы – с востока река Инджи (Инча-чай) и запада – река Кюрюкчай (Чайкенд), испокон веков входит в состав Карабаха по Джеванширскому уезду, Чрабертскому участку.

В старину, в самые страшные дни турецкого ига, Карабах отстаивал свою самостоятельность и сохранял свою свободу, как, например, во времена Хамсаи Мелика. Когда же колесо истории повернулось и Карабах подпал под власть русских, то с укреплением последних в крае была введена в 1868 г. Елизаветпольская губерния, с образованием новых уездов, по каковому нововведению Гюлустанский район оторван от Карабаха и присоединен к Елизаветпольскому уезду, для удобства администрации. В отношении же духовном Гюлустанский район в составе Чраберта оставался в ведении Карабахской армянской епархиальной консистории до последних трех-четырёх лет.

После великой революции России, одним из главных лозунгов которой является самоопределение населяющих Россию народов, каждая нация стала развиваться и возвращаться к национальным культурным занятиям, – словом, самоопределяться. Карабах тоже признал за собой это право и избрал своим центральным пунктом гор. Шушу, а не Гянджу. На V же Карабахском армянском съезде, в котором участвовали и представители Гюлустанского района, Карабах получил санкцию представителя английского командования – генерала Шательворта, который нанес на карту Карабаха и Гюлустанский район, фактически управляемой с марта 1919 года армянской администрацией Карабаха.

Летом 1919 года произошли кровавые столкновения между азербайджанским правительством и карабахскими армянами из-за владения Карабахом, которые были закончены заключением мирного договора в августе, впрямь до разрешения во вопроса о Карабахе на Парижской мирной конференции. В договоре по части определения границ Карабаха употреблены русские термины: «Нагорные части Шушинского, Джебраильского и Джеванширского уездов, населенные армянами», и армянские термины: «Варанда, Хачен, Тизак и Чраберт». Под названием Чраберта подразумевается и Гюлустанский район, так как он исторически и этнографически имеет тесную связь с Чрабертом, который без того района теряет свое значение. Об этом представители VII Карабахского армянского съезда заявили при заключении мирного договора генерал-губернатору г. Султанову, который тогда же дал категорическое обещание снести с Ганджинским губернатором на счет присоединения этого района к Карабаху. Одновременно, по заключении мирного договора, сообщали были составлены штаты для администраций Варанды, Хачена, Тизака и Чраберта, в штате которого учреждена должность одного помощника Джеванширского уездного начальника и двух приставов, один из коих – специально для Гюлустанского района. Должности эти были замещены лицами, избранными на Джеванширском армянском съезде 28 сентября 1919 года, и лица эти и в данное время занимают свои должности. В середине сентября ганджинский уездный начальник – Баграм-бек, прибыв в селение Чайкенд, призвал к себе некоторых сельских должностных лиц Гюлустанского района и потребовал подчинить район ему и разоружить население

Գեկտեմբերի կեսերին արդեն Գյուլիստանում «...գոյութիւն ունէր շրջանի բնակչութեան համակրանքը վայելող Հինգի խորհուրդ մը, որուն մէջ կը մասնակցէին թէ՛ չէզոքներ, թէ՛ դաշնակցականներ եւ թէ՛ սօց. յեղափոխականներ. վերջիններս հակառակ Շուշուայ իրենց ընկերներու որդեգրած քաղաքականութեան: Գյուլիստանն իր առանձին պահանջներն ունէր: Անոր բացառապէս հայ բնակչութիւնը չէր կամենար Գանձակի նահանգին միանալ, որովհետև վերջինս Ադրբեջանի իշխանութեան տակ էր: Անոնց ներկայացուցիչները բազմիցս դիմումներ կատարած էին դաշնակից պետութիւններու Անդրկովկասեան ներ-

района. Об этом своевременно было сообщено этими должностными лицами Шушинскому национальному совету и другим властям, которые телеграфно, через надлежащие власти, подстрекали прекращения самовольных действий названного уездного начальника на том основании, что район подчиняется карабахской власти и по мирному договору население Карабаха разоружению не подлежит. Требование это имело свое воздействие и уездный начальник, кажется, даже пострадал за свои неправильные действия. Так как формальное присоединение Гюлустанского района к Карабаху тянулось, то район 10 сентября распорядился составить мирские приговоры 13 селений, отдельно по каждому селению, о непоколебимом решении присоединиться к Карабаху, и приговоры эти, через своих делегатов, представил 1 октября Карабахскому армянскому национальному совету и помощнику генерал-губернатора Калантарову, с просьбой поддержать ходатайство района и содействовать скорейшему присоединению района к Карабаху. С такой же просьбой район обратился через своих представителей и к приехавшим на соединенный съезд населения Джеванширского уезда 29 октября 1919 года членам Особого совета при генерал-губернаторе в составе 6 лиц. Кроме того, район через своих делегатов письменно обратился и к Ганджинскому армянскому национальному совету, с просьбой также поддержать ходатайство района и исходатайствовать согласие ганджинского губернатора на присоединение района к Карабаху. Все эти учреждения и должностные лица, к коим обращались делегаты и представители района, торжественно обещали содействовать удовлетворению желанной мечты района. На просьбу же Ганджинского армянского национального совета глава азербайджанского правительства Усуббеков, в бытность свою в г. Гандже, заявил, что вопрос о присоединении района к Карабаху получит свое разрешение в парламенте; при этом он обещал содействовать в благоприятном для района смысле. После всего этого явился в район командированный ганджинским уездным начальником старшина Михайловского общества и на районном собрании 12 ноября предъявил 2 переписки: 1. Отношение карабахского генерал-губернатора от 21 октября на имя ганджинского губернатора о том, что вместе с тем предложено джеванширскому уездному начальнику не касаться дел Гюлустанского района, и 2. Предложение ганджинского губернатора от 1 ноября на имя ганджинского уездного начальника о принятии в свое ведение дел Гюлустанского района. Такое распоряжение администрации азербайджанского правительства было неожиданностью для Гюлустанского района, который, по всестороннем обсуждении данного вопроса, письменно изложил все обстоятельства дела и просил г. ганджинского губернатора не отказать в предоставлении краткого срока на окончательное выяснение положения дел.

В ответ на эту просьбу ганджинский уездный начальник, по поручению губернатора, явился с большой командой в соседнее с районом татарское селение Моллавалатлу и 18-го числа подстрековал к себе по шесть представителей от каждого селения района со старшинами их для подчинения района власти администрации Ганджинского уезда.

Ввиду такого положения дела, принятые ганджинской администрацией мероприятия к присоединению района к Ганджинскому уезду неизбежно вызовут недоразумения, могущие иметь печальные последствия.

Поэтому я имею честь покорнейше просить Вас, не отказать в принятии участия в законном решении справедливой претензии Гюлустанского района о формальном присоединении его к Карабаху и тем предотвратить неминуемые несчастья в виде человеческих жертв»). Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 167:

կայացուցիչներուն եւ Հայաստանի կառավարութեան եւ խնդրած, որ իրենց շրջանը միացուի Լեռնային Ղարաբաղին՝ իբրեւ անոր անբաժան մէկ մասը եւ կցուի Հայաստանին: Իրենց այդ դիմումներով չբաւականանալով, անոնք առաջ էին բերած Ինքնապաշտպանողական եւ Զինուորական մարմիններ, նշանակած էին իրենց ճակատներու հրամանատարները եւ պատրաստ էին, հոգ չէ թէ թոյլ էին, զենքով դիմադրելու Ադրբեջանի իւրաքանչիւր ոտնձգութեան»⁶⁰:

1920 թ. փետրվարի 26-ին Գանձակ է ժամանում Ադրբեջանի նախարարապետ Յուսուֆբեգովը և հայ-ադրբեջանական մի շարք հարցերի մասին խոսելուց հետո նշում է. «Կայ ևս մի խնդիր: Դա Գիլիստանի-Իզիրմիտորդի 12 հայ շէներն են, որոնք չեն հնազանդում Ադրբեջանին: Նոքա սկզբում խնդիր դրին Շուշուայ նահանգապետութեան կցուելու, երբ կառավարութիւնը վերջապէս յօժարեց դորան, նոքա յայտարարում են, որ միանում են Հայաստանին: Մի բան, որ ըստ աշխարհագրական հանգամանքի հնարատր չէ»⁶¹:

Հագիվ մեկ ամիս անց Ադրբեջանը որոշում է շրջանի հայության կամքը կոտրել զենքի ուժով և սկսում ընդհանուր հարձակումը:

Օրհասական այդ օրերի մասին Ա. Վերոյանն իր հուշերում նշում է. 1920 թ. մարտի 25-ին «Յարձակում են Ղարաչինարի և Էրքէջի վրա», մարտի 26-ին «Կռիւր տեղի է ունենում Ղարաչինարի վրայ: Մերոնք գիշերը նահանջում են դէպի Խարխափուտ», մարտի 27-ին «Կռիւր՝ Ղարաչինար, Խարխափուտ, Պարիս, Էրքէջ գիւղերի վրայ», մարտի 28-ին «Կռիւր՝ Ներքին-Շէն, Պարիս, Էրքէջ և Մանաշէն»⁶²:

Արդեն մարտի վերջին նշվել է. «Ադրբեջանի կողմից Գանձակի գաւառում հրի ու սրի մատնուած գիւղերից առայժմ յայտնի են...» Ղարաչինարը, Պարիսը, Մանասքելը, Վերին և Ներքին Աղջաղալաները և Էրքէջը⁶³:

Մեկ այլ տեղեկությամբ «...Ադրբեջանի կառավարութեան հրամանով Քեազիմ բէյի ղեկավարութեամբ (Խան Խոյսկու փեսան)՝ «Գանձակի գունդը» սկսել է իր բարբարոսութիւնները: Կառավարական այդ կանոնատուր գորագունդը մէկը միւսի ետևից թնդանօթի բերան է տալիս Գանձակի գաւառի խաղաղ ու լոյեալ գիւղերը և սրի քաշում հայ գիւղացիութեանը՝ առանց հասակի ու սեռի խտրութեան: Առանձնապէս դաժան կոտորածներ են տեղի ունեցել Ղարաչինարում և իր շրջակայ գիւղերում»⁶⁴:

Ըստ 1920 թ. մարտի 31-ի թուրքական տեղեկատվության՝ «Ապստամբ հայերի դէմ լեռնային մասերում կռիւները յաջողութեամբ շարունակուում են, թուրք պարտիզանական խմբերը վերցրել են հայկական հետևեալ չորս մեծ գիւղերը՝ Ղարաչինար, Էնգիբենդ, Վերին և Ներքին Աղջաղալաները, որոնք դիմադրութիւն են ցոյց տել: Մարտի 23-ին գրոհով գրաւել են Էրքէջը, որտեղից պարտիզանական խմբերը ճանապարհել են Գիլիստան, առաջանալով դէպի Ղարաբաղ...: Այսօր քաղաք է եկել Էրքէջ և Գետաշէն գիւղերի հայերի պատվիրակութիւնը՝ հնազանդութիւն յայտնելու»⁶⁵:

Նույն օրվա թուրքական մեկ այլ հաղորդագրությունից երևում է, որ հայերը, այնուամենայնիվ, ուժերի ներածին չափով դիմադրում էին, և յուրաքանչյուր հայ գյուղ թշնամուն շատ թանկ գնով էր տրվում. «Ղարաչինար, Էրքէջ գիւղերի տակ մեր կամատրոնների ու հայերի միջև տեղի ունեցած ընդհարումների ժամանակ մահնեղականներից վիրատուել և սպանել են մօտ 600 հոգի. հայերը բազմաթիւ դիակներ են թողել: Յիշեալ գիւղերն այրեցին և թալանեցին: Երեկ մեր կամատրոնները գրաւեցին Մանաս, Բարխատա (թերևս խոսքը Ղահթուտի մասին է) և հայկական Բօրիս գիւղերը: Հայերը դէն են շարտում իրենց զենքերն ու փախչում: Միս հայկական գիւղերը պախարակում են պրովոկատորներին ու դաշնակցականներին: Հազարատր կամատրոններ են գնում դէպի լեռները, դէպի սահմանագիծը: Այդտեղ տեղական հայերն ու հայ կանօնատր զօրքը բուռն դիմադրութիւն են ցոյց տալիս»⁶⁶:

Աննկարագրելի ծանր էր վաղ զարնանային այդ օրերին փախստական դարձած հայ գյուղացիության վիճակը. «Մարտի 23-ից մինչև ապրիլի 3-ը Ղարաչինարի շրջանում 10 հայ գիւղեր աներած են ու գետնին հաւասարեցած: Այդ գիւղերն են 1) Ղարաչինար, 2) Խարխափուտ, 3) Ենգի-Բենդ, 4) Խաղթուտ, 5) Ներքին-Շէն, 6) Էրքէջ, 7) Մանաշէն, 8) Բուզլուխ, 9) Պարիս և 10) Երի-Շէն: Այս 10 գիւղերի ժողովուրդի կենդանի մնացած մասը, զուրկ ապրուստի բոլոր միջոցներից՝ ապաւինել են լեռներին ու անտառներին, աննկարագրելի սոսկալի դրութեան մէջ»⁶⁷:

1920 թ. ապրիլի 14-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ իշխան Մ. Թումանյանը գրել է. «Ելիզավետպոլի նահանգում ոչնչացված են Ղարաչինար, Պարիս, Մանասքել, Վերին Աղջաղալ, Ներքին Աղջաղալ, Էրքէջ, Արլահ, Ղարաղալու, Սուլուխ գյուղերը և մասամբ Գետաշէն (Չայքենդ) մեծ գյուղը: Դրանց բնակիչները, որոնք չեզոք էին, զենքերը հանձնելուց հետո մորթվել են, բացառությամբ ոչ մեծ խմբերի, որոնք փրկվել են՝ թաքնվելով անտառներում, իսկ գյուղերն ամբողջությամբ այնպես են ոչնչացվել, որ նրանցից մի քանիսից ոչ մի հետք էլ չի մնացել»⁶⁸:

Արդեն ապրիլի 21-ին Գանձակի փոխանորդ Լևոն վարդապետը հայր Արսենին հղած նամակում նշում է. «Այսօր ստացայ Ղարաչինարի շրջանի գործակալից մի նամակ, որի մեջ նկարագրուած է նոր տասը գիւղերի աներածութիւնը, 10-12 հազար ժողովուրդի սովի և հիւանդութիւնների մասին»⁶⁹:

Տեղի ունեցածի մասին Բաքվի հայ ազգային խորհուրդն Ադրբեջանի կառավարությանը հղած գրության մեջ շեշտում էր. «Գանձակի գավառում կառավարությունը ձեռք առավ անսովոր

60 Միքայելեան Ա., Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, № 8, յունիս, էջ 111:

61 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Երևան, 1999, էջ 353-354:

62 Վարդանեան Յ., «Ադրբեջան կոչեցեալ» հանրապետութեան մէջ, «Մշակ», 1920, № 39, 16 յունիսի, էջ 4:

63 «Նոր աշխատատր», 1920, № 1, 2 ապրիլի, էջ 2: Տե՛ս նաև «Ժողովուրդ», 1920, № 55, 6 ապրիլի, էջ 2:

64 «Նոր աշխատատր», 1920, № 1, 2 ապրիլի, էջ 2:

65 «Յառաջ», Երևան, 1920, № 73, 7 ապրիլի, էջ 2:

66 Գանձակում (թուրքական ինֆօրմացիա), «Նոր աշխատատր», 1920, № 3, 4 ապրիլի, էջ 2:

67 Գանձակի եւ իր շրջանի օրհասական վիճակը, թղթակցություն, «Նոր աշխատատր», 1920, № 4, 6 ապրիլի, էջ 2: Ի դէպ, ժամանակ անց այս ողբերգության պատճառների անդրադարձում նշվել է. «Գիլիստանի շրջանի մի քանի հայ գիւղեր, շնորհիւ այդ ճակատի ռազմական գործողութիւնները վարող քանի մը բոլշեիկ եւ սոց. յեղափոխական սպաներու դասալքութեան, դատարկուել էին եւ ազգաբնակութիւնը գաղթել էր դէպի Զվանջիր» (Միքայելեան Ա., Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, № 12, հոկտեմբեր, էջ 123): Տե՛ս նաև Օրհասական վիճակը Գանձակում և շրջանում, թղթակցություն, «Յառաջ», Երևան, 1920, № 75, 11 ապրիլի, էջ 3:

68 Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 457 (բնագրում՝ «В Елизаветпольском уезде уничтожены селения Карачинар, Парис, Манасбек, Верхний Агджгала, Нижний Агджгала, Эркедж, Аблах, Карадаглу, Сулук и отчасти большое село Геташен (Чайкенд). Жители этих селений, оставшиеся лояльными и сдавшие оружие, после сдачи оружия были вырезаны, за исключением небольших групп, спасшихся в лесах, а сами селения уничтожены до того основательно, что от некоторых из них не осталось никаких следов»):

69 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, էջ 401: Տե՛ս նաև նշվ. աշխ.. գիրք Թ, էջ 744-745:

դաժան միջոցներ, մինչև մի շարք գյուղերի փաստական լիակատար ոչնչացումը: Ոչնչացված են՝ Ղարա-չինար, Գաղթոթ, Ներքին ու Վերին Հաջիքենդ, Գյուլիստան, Բարիս, Էրքեջ, Բուգլուխ, Մանաշեն, Ղարա-բուլախ, Արմավիր, Սուլուք (Ազատ) գյուղերը...: Այդ գյուղերի ազատված բնակիչները, կանայք ու երեխաներ, խոր ձյունի մեջ քշված են դեպի անտառներն ու դատապարտված անպայման մահվան, քանի որ նրանց բնակությունները հողի հետ են հավասարեցված, իսկ գույքը թալանված է կամավոր զորամասերի կողմից»⁷⁰:

1920 թ. հունիսի 23-ին կազմված «Հայաստանի չորս նահանգների սահմանները» խորագիրը կրող հաղորդագրության համաձայն՝ Գյուլիստանը մտնում էր Սյունյաց նահանգի մեջ. «Սյունյաց նահանգը, որի մեջ մտնում են Չանգեզուրը և Ղարաբաղը, Վարանդան, Դիզակը, Ջրաբերդի և Գանձակի գավառի հայկական մասերը»⁷¹:

Խորհրդայնացումից հետո գավառաբնակ հայերը շարունակում են արդեն եթե ոչ Խորհրդային Հայաստանին, ապա գոնե ԼՂԻՄ-ի հետ միավորվելու պայքարը:

1925 թ. զարնանը Շահումյանի շրջանի հայությունը գրություն է հղում ԽՍՀՄ Կենտրոնական նախագահ Մ. Կալինինին, Անդրկենտրոնական քարտուղար Ա. Ենուկիձեին, Ն. Նարիմանովին, Ս. Տեր-Գաբրիելյանին և Անդրկենտրոնական նախագահ Մ. Յիսկայային. «Մեր ծանր դրության մասին հայտնելով կենտրոնական իշխանություններին, խնդրում ենք մեր շրջանը, որը տնտեսական, աշխարհագրական և պատմական առումով հանդիսանում է Ղարաբաղի բաղկացուցիչ մասը, միացնել Ինքնավար Ղարաբաղին...»⁷²:

Նույն թվականի նոյեմբերի 23-ին Ադրբ(Բ)Կ կենտրոնի նախագահությունը մերժում է ԼՂԻՄ-ին միանալու Շահումյանի հայության խնդրանքը. «Շրջանի միացումը կամ առանձնացումը կհանգեցնի նման միտումների ողջ Անդրկովկասում, ինչը կսրի ազգամիջյան հարաբերությունները»⁷³:

Հայտնի է, որ 1923 թ. հուլիսին կազմավորված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանների մեջ Գյուլիստանն ընդգրկելուն վերաբերող խնդրագրերը մշտապես լռության են մատնվել, իսկ 1926 թ. մանաշիդցի Հակոբ Առստամյանի և 15 պատվիրակների՝ միավորման խնդրով այցը Ստեփանակերտ «լուծվում է» վերջիններիս բանտարկությամբ⁷⁴:

Վարչական սույն անարդարության մասին հենց 1926 թ. նշվել է. «Եթե այդ ձեռով կը խոստովանին որ Ղարաբաղը հայկական է, ուրեմն ի՞նչ է մեղքը լեռնային Գանձակի, որու Գյուլիստանի մասը պարզ Ձիվանշիրի շարունակությունն է մինչև Գանձակ գաւառի թաղերը, իսկ մնացած մասը բնական շարունակությունը Դիլիջան գաւառին: Ինչու՞ 50-60,000 հայություն, որ միապաղաղ կը տարածուի Փոքր Կովկասի վրայ, Ձիվանշիրի և Ղարաբաղի միջև, կը կտրուի և Ադրբեյջանի իշխանությունը գամի մը պէս կը մտնէ մեր երկիրը»⁷⁵:

Ադրբեյջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հին Ղարաչինարի մահալից 1930 թ. օգոստոսի 3-ին⁷⁶ կազմվում է

ներկա վարչական շրջանը: Շուտով, ի պատիվ Ստ. Շահումյանի, վերանվանվում է Շահումյանի շրջան, իսկ շրջկենտրոնի վերածված Ներքիշենն էլ 1938 թ.՝ Շահումյան (Շահումյանովսկ):

Հայության միատարր բնութագիրն աղճատելու նպատակով 1940 թ. Շահումյանի շրջանին են միացվում ադրբեյջանաբնակ մի քանի գյուղեր: Դրանք էին Թողանը (հարևան Խանլարի շրջանից), Չեյվան, Շեֆեկը և Գյուրգալարը (Կասում-Իսմայիլովի շրջանից)⁷⁷:

1962 թ. Լեռնային Ղարաբաղից 2500 հայերի ստորագրությամբ կազմվում է Խորհրդային Հայաստանին վերամիավորվելու կամ ՌՍՖՍՀ-ի կազմի մեջ մտնելու համար մի փաստաթուղթ՝ ուղղված Խորհրդային Միության Նախարարների խորհրդի նախագահ, Կոմկուսի կենտրոնի քարտուղար Ն. Խրուշչովին. «Մենք՝ Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի կոլտնտեսականներս, բանվորներս ու ծառայողներս և Ադրբեյջանական ՍՍՌ Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Շահումյանի շրջանների հայ ազգաբնակչությունս, մեր կյանքի ծանր պայմանների պատճառով հուսահատության հասնելով, որոշեցինք դիմել Ձեզ՝ արդարության ու պաշտպանության համար:

Անհիշելի ժամանակներից Քուռի, Արաքսի, Սևանա լճի միջև ընկած մեր հողը, որ պատմականորեն հայտնի է «Արցախ» անունով, միշտ էլ Հայաստանի անբաժանելի մասն է կազմել: Թուրք-մոնղոլների արշավանքները հայերին դուրս են մղել հարթավայրերից, գյուղերն ու քաղաքները ոչնչացվել են և քոչվորների համար վերածվել արտավայրերի: Հայերին հաջողվել է ամրանալ ու պաշտպանություն գտնել Ղարաբաղի նախալեռնային ու լեռնային շրջաններում միայն: Ռուսաստանին միանալուց հետո վերացվեց Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյության ոչնչացման վտանգը, չնայած դեռ մնում էր ցարական իշխանության ծանր լուծը: Ցարական իշխանությունը 1903-1905 թթ. աճող հեղափոխական շարժումից պաշտպանվելու նպատակով արհեստական թշնամանք ու կոտորած հրահրեց հայերի ու ադրբեյջանցիների միջև: Ադրբեյջանի մուսավաթական կառավարությունը Ղարաբաղի հայկական շրջանները մեկուսացրեց արտաքին աշխարհից և ոչնչացնում էր հայերին ամեն տեղ, ուր այդ հնարավոր էր: Ղարաբաղի հայությունը, ուժերի գերագույն լարմամբ, չինազանդվեց Ադրբեյջանի մուսավաթական կառավարությամբ, հերոսական ջանքերով պաշտպանելով իր անկախությունն ու ինքնուրույնությունը...: Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո Ադրբեյջանի սովետական կառավարությունն ընդունեց Ղարաբաղն ու Նախիջևանը Հայաստանին վերադարձնելու մասին դեկլարացիա, որը ստորագրել և 1920 թ. դեկտեմբերի 1-ին Բաքվի Սովետի հանդիսավոր նիստում հրապարակել է Ն. Նարիմանովը: Սակայն այդ արդարացի որոշումը չիրականացվեց: 1921 թ. մարտին, Թուրքիայի հետ կնքված դաշնագրով, Նախիջևանը մտցվեց Ադրբեյջանական ՍՍՌ-ի կազմի մեջ: 1923 թ. Ղարաբաղի լեռնային մասին տրվեց ինքնավարություն՝ Ադրբեյջանական ՍՍՌ-ի սահմաններում, իսկ գերակշռող հայկական ազգաբնակչությամբ Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Շահումյանի շրջանները (շուրջ 90 %) ուղղակի մտցվեցին Ադրբեյջանական ՍՍՌ-ի մեջ: Այսպիսով Ղարաբաղի հայությունը կտրեցին Հայկական ՍՍՌ-ից, և ինքնավարությունը չընդգրկեց բոլոր շրջանները: ...Ղարաբաղը միաժամանակ բնակեցվում է ադրբեյջանցիներով: Ուղղակի տարվում է ազգային-շովինիստական, պանթուրքիստական քաղաքականությունը, որը միանգամայն աներևակայելի է ու

70 ՀԱԳ, ֆ. 223, ց. 1, գ. 124, ք. 2:

71 Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ. փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, № 1-2, էջ 217:

72 **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղդասարյան Գ.**, Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, 2015, էջ 139-140:

73 **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղդասարյան Գ.**, նշվ. աշխ., էջ 141:

74 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք. նշխարներ, հ. Ա, Երևան, 2002, էջ 21:

75 **Ռուբեն**, Գանձակ-Ղարաբաղի վեճը, «Իրօշակ», 1926, № 2, էջ 49:

76 Азербайджанская ССР, Административно-территориальное деление. Баку, 1979, с. 7.

77 **Շահումյանյան Ս.**, Ծակատագրի շրջան. գրառումներ Շահումյանի շրջանից, «Գրական քերթ», 1989, № 35, էջ 1:



Տարածաշրջանի վարչական քարտեզը 1920-ական թթ. կեսերին

անհարիր Սովետական իշխանության պայմաններում, բայց, ըստ երևույթին, ընդունելի է Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության համար: Այդ քաղաքականությունը ավելի նողկալի ձևեր է ընդունել մարզից դուրս գտնվող հայկական շրջաններում (Շամխորի, Շահումյանի, Խանլարի շրջաններ).... Մենք խնդրում ենք անհապաղ վճռել Լեռնային Ղարաբաղը և հարակից հայկական բոլոր շրջանները Հայկական ՍՍՌ-ի մեջ վերամիավորելու կամ ՌՍՖՍՌ-ի կազմի մեջ մտցնելու հարցը: Մենք խնդրում ենք Ղարաբաղի հայության նկատմամբ գործադրել միայն լեռնային ազգային քաղաքականություն»⁷⁸:

1960-ական թվականներին «Ամբողջ ԽՍՀՄ-ում իրականացվող տնտեսությունների ու շրջանների խոշորացման պատրվակի տակ Ադրբեջանը որոշեց Շահումյանի փոքր հայկական շրջանը միացնել Կասում-Իսմայիլովի (Գերանբոյ) խոշոր ադրբեջանական շրջանին, որը կդառնար ներքին ինքնուրույնության կորուստ և հայերի արտահոսքի պատճառ: Շրջանի ժողովուրդը ըմբոստացավ, պահանջեց զոհե միացնել հարևան հայկական Խանլարի շրջանին, բայց Ադրբեջանը, բնականաբար, այդ քայլին չէր գնա, որովհետև հայերը դրա շնորհիվ ավելի համախմբված ու մեծ ուժ կդառնային: Համառ պայքարի շնորհիվ շրջանը պահպանվեց: Ցավոք, Խանլարի հայկական շրջանը չկարողացավ պահպանել իր ինքնուրույնությունը. հայ ղեկավարներին որոշ խոստումներով հնազանդեցին, որի պատճառով ադրբեջանցիներն այնտեղ գերակշռող դարձան: ...շրջանը պահպանվեց՝ որպես բացառիկ երևույթ ամբողջ ԽՍՀՄ-ում. «արդարացնելու» համար այն կոչեցին Շահումյանի լեռնային շրջան, բայց այդ հավելումն էլ շուտով մոռացվեց»⁷⁹:

78 Յուլզադիր Սովետական Միության Մինիստրների սովետի նախագահ, Սովետական Միության կոմունիստական պարտիայի Կենտկոմի քարտուղար Ն. Ս. Խրուշչովին, «Սփիւռք», 1963, բացառիկ համար, դեկտեմբերի 31, էջ 2-3: Տե՛ս նաև Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ.՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան, Երևան, 2011, էջ 39-40, 44-45:

79 **Գանձարամյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 24-25:

1989 թ. «...մեկ տարի տևած Ղարաբաղյան արդար շարժմանը միաձույլ էին և հարևան շահումյանցիները: Սակայն ԼՂԻՄ-ում հատուկ կառավարման ձև մտցնելուց հետո Շահումյանի շրջանը մնաց միայնակ: Բացի մեր շրջանից, գրեթե մյուս բոլոր հայաբնակ քաղաքների ու գյուղերի բնակիչները դարձան փախստականներ: Այժմ, երբ կուսակցության և կառավարության կողմից ընդունված են փախստականներին հարազատ վայրերը վերադարձնելու որոշումներ, ցավալի է, որ Շահումյանի շրջանում սկսվել է բնակչության արտահոսքը դեպի երկրի տարբեր ռեզիդենտներ: Դատարկվում են հայաբնակ գյուղերը, և հիմնականում գնում են երիտասարդ ընտանիքները: Բուզուխ և Մանաշիղ գյուղերում մնացել են ընդամենը մի քանի ընտանիքներ: Այդ ցավը արդեն պատել է էրթեջցիներին...: Վերջերս էրթեջ գյուղից մարդիկ էին գնացել Հայաստանի շրջաններում տներ գնելու, իրենց ասելով՝ հետագայի ապահովության համար»⁸⁰:

Պատմությունը մեկ անգամ ևս կրկնվում է, և շրջանի հայությունը, վտանգելով նույնիսկ ֆիզիկական գոյությունը, ոտքի է ելնում՝ Ադրբեջանի՝ արդեն շուրջ 70-ամյա ապօրինի տիրապետությունից ձերբագատվելու համար. «Փոքր է մեր շրջանը, ընդամենը ունի 20,5 հազար բնակիչ: Նրանցից 16 հազարը հայ է, 3,8 հազարը՝ ադրբեջանցի...: Ամենացավալին այն է, որ մեր շրջանի երկու ադրբեջանական գյուղերի՝ Շեֆեկի ու Ջելվանի ազգայնական ուժերը տմարդի գտնվեցին նույն շրջանում ապրող, դարավոր հարևան և եղբայրացած, միասին աղ ու հաց կերած, իրար հյուրընկալած հայերի նկատմամբ: Նրանք փակեցին դեպի երկաթուղային կայարան, Կիրովաբադ, Երևան տանող ճանապարհը...: Այժմյան շահումյանցիներ մի փափագ, երազանք ունի՝ միանալ վաղուց կորցրած ու նոր գտած եղբոր՝ Արցախի հետ»⁸¹:

Արդեն 1988 թ. փետրվարին Սումգայիթի, իսկ նոյեմբերին Գանձակի հայության ջարդերից հետո Շահումյանի շրջանը հայտնվում է երեք կողմից մեկուսացված և պաշարված դրության մեջ:

1989 թ. հուլիսի 25-ին Շահումյանի շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջանը Լեռնային Ղարաբաղին միավորվելու հարցով (55 կողմ, 8 ձեռնպահ) դիմում է Ադրբեջանի Գերագույն խորհրդին, որն էլ նույն թվականի օգոստոսի 1-ին տալիս է բացասական պատասխան և 1990 թ. հունվարի 15-ին շրջանում հայտարարում արտակարգ դրություն⁸²:

1990 թ. հունվարին կացությունն ավելի է լարվում Բաքվի հայերի զանգվածային ջարդերի և արտաքսման (13-19-ը) հետևանքով:

1991 թ. սկզբին Ադրբեջանի ղեկավարությունը որոշում է Շահումյանի շրջանը ներառել Գերանբոյի շրջանի մեջ: Այդ որոշման դեմ Շահումյանի շրջագործկոմի նախագահ Վ. Աղաջանյանը ԼՂԻՄ-ի գործկոմի նախագահ Ս. Բաբայանի և Ստեփանակերտի, Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի և Մարտունու շրջագործկոմի նախագահների հետ միասին նշյալ թվականի հունվարի 15-ին զեկուցագիր է հղում ԽՍՀՄ փոխնախագահ Գ. Յանակին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Ա. Լուկյանովին և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին՝ պահպանելու Շահումյանի շրջանը՝ որպես առանձին

80 **Լալայան Մ.**, Օգնենք հարևանին, «Մոտրիդային Ղարաբաղ», 1989, № 103, 3 մայիսի, էջ 3:

81 **Խաչատրյան Բ.**, Մեր իղձը, մեր նպատակը, «Մոտրիդային Ղարաբաղ», 1989, № 266, 22 նոյեմբերի, էջ 3:

82 **Շահումյանյան Ս.**, նշվ. հոդվ., «Գրական թերթ», 1989, № 35, էջ 1: Տե՛ս նաև **Шевелев М.**, Шамяновский район: война по просьбам трудящихся?, «Московские новости», 1990, № 5, с. 5.



Հատված Շահումյանի շրջանի տարածաշրջանին վերաբերող խորհրդային ռազմական քարտեզից (1975 թ.)

վարչատարածքային միավոր: Մասնավորապես նշվում է, որ «Հակառակ Շահումյանի (գյուղական) շրջանի 80 տոկոս կազմող հայ բնակչության կամքի՝ որոշում է ընդունվել նրա լուծարման և հարևան ադրբեջանական շրջանի կազմի մեջ մտցնելու մասին: Շահումյանի շրջանը՝ Գյուլիստանը, Արցախի պատմական հինգ մելիքություններից մեկն է, որը մյուս մելիքությունների հետ միասին Գյուլիստանի 1813 թ. պայմանագրով մտավ Ռուսաստանի, իսկ երկրամասի խորհրդայնացումից հետո նրանից բռնի կերպով անջատվել է և մտցվել Ադրբեջանի կազմի մեջ: Շրջանը 100 տոկոսանոց հայ բնակչությամբ կազմվեց 1930 թ.: 1940 թ. ընդգրկվեցին 4 գյուղխորհուրդներ հարևան ադրբեջանական շրջաններից, ինչպես տեսնում եք, հեռու գնացող նպատակներով...: Այդ որոշման ընդունմանը նախորդեց թուրքիկների միջոցով այն պահանջի տարածումը, ըստ որի՝ շրջանի հայ բնակչությունը կարճատև ժամանակամիջոցում տարածքից պետք է հեռանար: Հակառակ դեպքում սպառնում էր հայկական գյուղերի հրկիզմամբ: Մենք վճռակա՞նորեն բողոքում ենք Շահումյանի շրջանի հայ բնակչության իրավունքների ոտնահարման դեմ և պահանջում գործնական քայլեր ձեռնարկել նրա կարգավիճակը, որպես վարչատարածքային միավոր, պահպանելու համար»⁸³:

Գրությունը, սակայն, շարունակվում է լարվել, և արդեն 1991 թ. հուլիսի 16-ին ադրբեջանցի հրոսակները գրավում են Էրքեջ, Մանաշիղ և Բուզուխ գյուղերը: Դիշտ է, նույն թվականի սեպտեմբերի 13-ին հայկական ինքնապաշտպանական ուժերին հաջողվում է ազատագրել վերոնշյալ երեք գյուղերը, բայց 1992 թ. հունիսի 13-14-ին ադրբեջանական ուժերը ռուսական զորքերի աջակցությամբ լայնածավալ հարձակումով վերագրավում են ոչ միայն այդ գյուղերը, այլև ամբողջ Շահումյանի շրջանը: Հայ ազգաբնակչությունը՝ շուրջ 16.000 շունչ, ինչպես 1920 թ., ամեն ինչ թողնելով, ընդամենը ֆիզիկապես փրկվելու հույսով փախուստի է դիմում: Այս բռնագաղթի ընթացքում հայերը տալիս են մի քանի հարյուր գոռի և անհետ կորած:

Բռնագաղթի ենթարկված շահումյանցիները ցրվում և հաստատվում են Երևանում, Նուբարաշենում, Կոտայքի մարզի Աբովյան, Արզնի և Հրազդան քաղաքներում, Լոռու մարզում՝ Վանաձորում, Ռ-Ռ-ում՝ մայրաքաղաք Մոսկվայում, Ալթայի երկրամասում, Բառնաուլում, Բիյսկում, Ամուրի մարզի Սվրբոդինի քաղաքում, Աստրախանում, Խարաբալայում, Արխանգելսկի մարզի Նյանդում և Կոնիշ քաղաքներում, Բելգորոդի մարզի Յուրևսկայա շրջանում և Ստարի Օսկոլ քաղաքում, Իրկուտսկում, Կարարդայի Տրնաուզ քաղաքում, Կալինինգրադի մարզի համանուն քաղաքում, Օզյորսկի շրջանի համանուն քաղաքում և Բոգդանովո գյուղում, Նովոստրոկ, Տրոյուկիև, Չիս-

տոպոլիե, Ռյազանսկոյե, Լվովսկոյե, Մալցևո, Ռեզնիկովո, Բագրատիոնովո, Գավրիլովո, Կարամիշևո, Պլավնի, Նիլովո, Յուդինո, Լուժկի, Լուժկի-Մադովոյե, Ժուչկովո, Օտարադնոյե, Օլենովո, Օլխովո, Չառզերնոյե, Կրասնոյարսկոյե ավաններում, Կրասնոգրամենսկի շրջանի համանուն քաղաքում, Դոբրովոլսկ ավանում, Ալեքսեևկա և Ֆեվրալսկ գյուղերում, Ղազախստանի Պետրոպավլովսկ և Պավլոդար քաղաքներում, Բելոռուսում՝ Մինսկում, Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում, Լիտվայում, ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Սակրամենտո քաղաքում, Կանադայում, Բելգիայում, Գերմանիայում, Հոլանդիայում, Նորվեգիայում, Դանիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Սլովենիայում և այլուր⁸⁴:

2012 թ. հունիսի 13-ին Մոսկվայի հայկական նորակառույց եկեղեցու բակում կանգնեցվում է խաչքար՝ ի հիշատակ Շահումյանի շրջանի հայաթափման 20-րդ տարելիցի⁸⁵, իսկ 2014 թ. հունիսի 13-ին Կալինինգրադի Սբ. Ստեփանոս եկեղեցու բակում՝ Շահումյանի շրջանի հայաթափված գյուղերի գոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձան:

Խաչքարի պատվանդանին փորագրված է.

Ի յիշատակ | հնոց եւ նորոց | նահատակաց հայոց | ի շրջանէ Շահումեան, | 2014 թ.:

Կորողին կից առկա է երկլեզվյան հիշատակագրություն.

13 июня 1992-2014. | Сей хачкар поставлен в память | трагической депортации | коренного армянского населения | из 11 сел Шаумянского района.

13 հունիսի 1992-2014: | Այս խաչքարը կանգնեցվել է Շահումյանի | շրջանի 11 գյուղերից հայ բնակչության | ողբերգական բռնագաղթի կապակցությամբ, | աջակցությամբ՝ Մարիբեկյան Գեորգի: | 1992 -2014⁸⁶:

Կորստյան հիշատակի հուշարձաններ են կառուցվել նաև առանձին գյուղերի համար: Ի հիշատակ գոհված գյուլիստանցիների՝ հուշակոթողներ են կանգնեցվել Աբովյան քաղաքի գերեզմանոցում և Գյուլիստանի Ամենափրկիչ (Նապատ) վանքի եկեղեցու մոտ: Այն ներկայումս փաստորեն Շահումյանի բռնագաղթված ողջ շրջանից հայկական կողմի վերահսկողության ներքո գտնվող միակ պատմական հուշարձանախումբն է:

Բնակչություն. հնուց անտի Շահումյանի ներկայիս վարչական շրջանի տարածքն Արցախ-ուտիքյան հայաշխարհի միջնահատվածում էր և դատելով մատենագրական տեղեկություններից և պահպանված նյութական մշակույթի մեծաքանակ հուշարձաններից՝ զուտ հայաբնակ է եղել մինչև 1787 թ. տեղի ունեցած գաղթը դեպի Վրաստան: Երևում է, որ օտար տարրը հենց միայն դրանից հետո է սողոսկել զավառամաս: Համենայն դեպս, հայերի մի մասի՝ 1817 թ. վերադարձից հետո նախկին հայաբնակ որոշ գյուղեր արդեն զբաղեցվել էին մահմեդականներով:

1831 թ. հունվարի 6-ի մարդահամարի տվյալների համաձայն՝ զավառի 12 հայաբնակ գյուղերում բնակվում էր ընդամենը 275 տուն հայ (ունեին 12 քահանա և 9 գործող եկեղեցի)⁸⁷: Արդեն 1871 թ. ծխերի թիվը շուրջ 1000 էր⁸⁸, իսկ 1914 թ.՝ 958 (մոտ 8000 շունչ)⁸⁹:

⁸⁴ **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք. կարոտի հասցեներ, Կ. Գ, Երևան, 2011, էջ 129-339:

⁸⁵ «Մոսկվի դոդանցներ», 2012, № 5, մայիս, էջ 1; № 6, հունիս, էջ 2:

⁸⁶ Խաչքար-հուշարձան՝ նահատակ շահումյանցիներին, «Մոսկվի դոդանցներ», 2018, № 1, փետրվար, էջ 4:

⁸⁷ ՀԱԴ, ֆ. 57, ց. 1, գ. 63, ք. 3:

⁸⁸ **Խ. Մ. Տ. Յարոսլինանց,** Ղարաչինար եւ Իկիրմիստօրք, «Արարատ», 1871, ԺԱ, էջ 373:

⁸⁹ **Պետ.** նշվ. հոդվ., «Մշակ», 1914, № 98, 8 մայիսի, էջ 2:

Վիճակագրական սույն տվյալները նկատելի են դարձնում այն հանգամանքը, որ Ռուսաստանի կազմում ընդգրկվելուց հետո տարածքի հայաբնակ բոլոր գյուղերը մինչև Ի դարի սկզբներն առանց բացառության շարունակաբար աճել են: Անգամ 1902-1905 թթ.՝ քաղաքականապես լարված տարիներին, 11 հայաբնակ գյուղերի բնակչությունն ընդհանուր առմամբ ավելացել էր 410 շնչով կամ 6,98 %-ով, իսկ հաջորդ երեք տարիներին (1905-1908) 707 շնչով կամ 11,25 %-ով:

1912 թ. գավառն ուներ 12 գյուղ՝ 846 տուն՝ 8000 (4245 ար. և 3755 իգ.) բնակիչ⁹⁰:

1916 թ. մայիսի 1-ին ԿՀԲ ընկերության հանձնարարականով Կովկասյան ռազմաճակատի պարենավորման հանձնաժողովի կողմից լիազորված Շմավոն Դիլանյանցը մեկնում է Ելիզավետպոլ՝ տեղի գաղթականների հարցերը լուծելու և մթերքների պահեստներ հիմնելու նպատակով (գաղթականները տեղավորված էին գավառի 41 գյուղերում). հաղորդակցության ուղիները և գյուղերի տեղաբաշխվածությունը նկատի ունենալով՝ նա գավառը բաժանում է 4 շրջանի: Առաջին շրջանի մեջ էին մտնում Խարխափուրը, Հայ Պարիսը, Վերին և Ներքին Աղջաքենդները, Ղարաչինարը, Ենգիքենդը, Գաղթուտը, Գյուլիստանը և Էրքեջը (կենտրոնը Ղարաչինարն էր), երկրորդ շրջանի մեջ՝ Գետաշենը, Մանաշիդը, Արլահը, Ազատը, Ղարաբուլղը, Բուզուխը և Արմավիրը (կենտրոնը Գետաշենն էր), երրորդ շրջանի մեջ՝ Աննենֆելդը (Աննեն, Աննենո), Գիորգևսկը, Չարդախլուն, Բաղաքենդը, Գետաբեկը, Ջագիրը, Բարունը, Բարսունը և Նուզգարը (կենտրոնն էր Աննենֆելդը), չորրորդ շրջանի մեջ՝ Կորյունապատը (Կովալյովկա), Ելենդորֆը, Մուռուտը, Ոսկանապատը, Բրաջուրը, Միրգիկը, Բանանցը, Չովդառը, Խաչակապը, Կիրանցը, Փիրը, Վերին և Ներքին Քարհատները⁹¹:

1916 թ. հոկտեմբերի 15-ի գրությամբ Արմենակ Բորյանը ԿՀԲԸ կից Կովկասյան ճակատի պարենավորման մասնաճյուղին ուղղված գրությամբ խնդրում է մեկական վագոն ալյուր ուղարկել Ղարաչինարի և Աննենի շրջանների գաղթականների համար⁹²:

1916 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Ղարաչինարի շրջանում ապաստանել էր 1014 գաղթական⁹³:

1917 թ. հոկտեմբերի 25-ի գրությամբ Գաղթականական պարենավորման բաժանմունքին Արմենակ Բորյանն իրագրելու է, որ «Մեր շրջանի երեք պահեստից ամենաապահովն է ներկայումս Ղարաչինարի շրջանը, ուր 2 1/2 վագոն ալյուր կայ, որը կբառականաճայ առնազը 4 ամիս այս շրջանի մեջ»⁹⁴:

Նույն թվականի նոյեմբերի 2-ի գրությամբ, սակայն, Գաղթականական պարենավորման բաժանմունքից Ա. Բորյանին հանձնարարում են փակել Ղարաչինարի պահեստը՝ դատարկ լինելու և ավելորդ ծախսեր չանելու պատճառով⁹⁵: Ըստ ամենայնի՝ պահեստը չէր փակվել, քանի որ 1918 թ. ապրիլի 17-ին ևս նման հանձնարարական է տրվում⁹⁶:

Հետագայում ևս գավառի հայ բնակչությունը շարունակաբար աճել է, սակայն մեծապես տուժել 1918-1920 թթ. երկրամաս ներխուժած բուրք ջարդարարների և տեղի մուսավաթականների կազմակերպած կոտորածներից:

90 Պետ. Ղարաբաղի դպրոցների շուրջը, «Մշակ», 1912, № 187, 25 օգոստոսի, էջ 3:

91 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 929, ք. 12-13 շրջ.:

92 Նշվ. գործը, ք. 64:

93 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 581, ք. 2: Ի դեպ, նրանք տեղավորվել էին Մանաշիդ, Բուզուխ, Վերին և Ներքին Աղջաքենդ, Գյուլիստան, Խարխափուտ, Ենգիքենդ, Գաղթուտ, Ղարաչինար, Պարիս և Էրքեջ գյուղերում (ք. 22 շրջ., 24, 25 շրջ.):

94 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 932, ք. 24:

95 Նշվ. գործը, ք. 27:

96 Նշվ. գործը, ք. 39:



Ազգաբաշխական քարտեզ (1914 թ.)

1989 թ. Շահումյանի շրջանի ընդհանուր բնակչության թվաքանակը կազմում էր 20.625 մարդ (15.973-ը՝ հայ, 3.889-ը՝ ադրբեջանցի և 763-ը՝ ռուս)⁹⁷:

Ըստ Բորիս Գլեչյանի՝ բռնագաղթի նախօրեին բնակչության թիվը հասնում էր մոտ 20.100-ի⁹⁸:

1992 թ.՝ հայության բռնագաղթի նախօրեին, վարչական շրջանն ուներ 18 բնակավայր՝ 16 գյուղ, 2 ավան: Խորհրդային տարիներին, բայց ավելի ստույգ՝ 1950-ական թթ., Վերիշեն ավանի մոտ՝ հին Քարահունջ գյուղատեղիում, հիմնվում է և աճում շրջանի հայաբնակ 12-րդ գյուղը (պաշտոնապես կոչվում էր Բալլուդայա):

Հայաբնակ գյուղերից և ավաններից գատ՝ շրջանն ուներ նաև ադրբեջանաբնակ 5 գյուղ (Բաշդշաղ, Գյուրգալար, Ջեյվա, Շեֆեկ և Թողան): Դրանք բոլորն էլ տեղաբաշխված էին շրջանի ծայրամասերում: Կար նաև ռուսաբնակ 1 գյուղ, որի բնակիչները ԺԺ դարի կեսերին հիմնվել էին հայկական Հին Պարիս գյուղի ավերակներին կից՝ ընդարձակ անտառներով շրջապատված գեղատեսիլ վայրում:

Շրջանի բնակավայրերը դարերի ընթացքում անվանափոխվել են: Բնիկ տեղանունների փոխակերպումն օտարաշունչ անվանումներով ինչպես Պատմական Հայաստանի որևէ այլ անկյունում, այստեղ ևս ունի հին պատմություն: Երևույթը նկատելի է օտար տիրապետությունների հաստատման իրականությանը զուգահեռ՝ սկսած Հերզ գավառանունից և բերդանունից, որոնք դարձել են Գյուլիստան, մինչև Բուզուխն ու Ղարաչինարը, որոնց բնիկ հայկական անուններն իսկ մոռացության են մատնվել: Որոշ գյուղեր էլ թեկուզ պահել էին իրենց հայկական անվանումները, այնուամենայնիվ, արդեն ԺԺ դարում ունեին նաև օտարներից ստացած անուններ, որոնց մեծ մասը ռուսական իշխանությունների կողմից պաշտոնականացվելու պատճառով լայն տարածում է գտնում և ճանաչվում: Այդպես Վերիշենը դառնում է Յուխարի Աղջաքենդ, Նորշենը՝ Ենգիքենդ, Քարահունջը՝ Բալլուդայա, Պարիսը՝ Բորիսի, Խարխափուրը՝ Խարխափուր, իսկ Ներքինը, որն արդեն իսկ շրջանառվում էր որպես Աշաղի Աղջաքենդ, ինչպես վերը նշեցինք, Շահումյան:

Տնտեսություն. հնուց ի վեր շրջանի ներկայիս տարածքը հայտնի է եղել որպես հողագործության, այգեգործության և անասնապահության համար բնական հարմարություններով

97 Շահումյանյան Ս., նշվ. հոդվ., «Գրական բերք», 1989, № 35, էջ 1:

98 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

օժտված տարածաշրջան. «Այնտեղ մշակվում են ամեն տեսակի բարձրորակ հացահատիկային և այլ բույսեր»⁹⁹:

Գավառը հայտնի էր նաև որպես արցախյան ձիերի բուծման կարևոր տարածաշրջան. «Մեկը Բեգլարովները բացի երկրագործությունից պահում են ձիաների գավոդ: Ղարաբաղի հռչակված ձիաների ցեղը վերջին ժամանակներում բոլորովին այլատեսակ էր: Հայտնի է, որ Ղարաբաղի ձիաների ցեղը մի խառնուրդ էր տեղական և պարսկական (արաբական) ձիաների:

Նախքան ռուսաց տիրապետությունը Ղարաբաղի խաները, Պարսկաստանի հետ հարաբերություններ ունենալով, այստեղից կամ բերել էին տալիս, կամ ընծա էին ստանում ազնիվ նժույզներ և իրանց ձիաների ցեղը միշտ նորոգում էին: Բայց ռուսների տիրելուց հետո նրանց հարաբերությունները Պարսկաստանի հետ կտրվեցավ, և ձիաների սերմը չնորոգվելով, այլատեսակացան: Այժմ Մեկը Բեգլարովները կազմելով մի թաբուն երկրի ընտիր մատակներից, Թեհրանից ստացել են երկու պարսկական նժույզներ, մեկը ուղարկել է Մադրասում, մյուսը՝ Շահի փեսա մի խան: Տարակույս չկա, որ այդ հոգածություններով Մեկը Բեգլարովները կարող են վերանորոգել Ղարաբաղի ձիաների ցեղը, որ հռչակված էր մեր կողմերում»¹⁰⁰:

Հողագործության բնագավառում երբեմն խնդիրներ էին ծագում հենց հողատեր կալվածատիրոջ պատճառով: Այդպիսի մի իրավիճակի մասին ուշադրություն է հրավիրել 1910 թ. օգոստոսյան թղթակցություններից մեկը. «Գանձակի գաւառի երրորդ մասը (Վերին-Շէն, Ներքին-Շէն, Էրքիջ, Գիւլլուստան իրանց հարևան գիւղերով և ամբողջ դաշտերով) բռնել է դաշտային անթիւ մկներով, որոնք գիւղացոց յուսահատ դրութեան մէջ են դրել: Չը նայած որ արտերը հնձվել են, բայց հանդից տուն փոխադրելու դեռ իրատունք չէ ստացել, որովհետև յիշեալ գիւղորայքը պատկանում են բէկերի, որոնք ստանում են ստացված բերքից տասանորդ. այդպիսով հնձված խորձերը պէտք է մնան դաշտում, մինչև որ բէկերի կողմից ընտրված մարդիկ գնան ցուցակագրեն ու այնուհետև իրատունք տան հանդից տուն բերելու: Այդ պատճառով էլ այդ գիւղացիք ատելի են տուժում դաշտային մկներից»¹⁰¹:

Ճիշտ է, հազվադեպ, սակայն պատահում էր, որ գավառի գյուղատնտեսությունը տուժում էր նաև բնական տարերքների պատճառով: Օրինակ՝ 1912 թ. ապրիլի 11-ին տեղի ունեցածի մասին նշվել է. «...երեկոյեան ժամը 5^{1/2}-ին Ներքին-Շէնում ու մօտակայ գիւղերում տեղի ունեցաւ սաստիկ, անձրևախառն փոթորիկ, որը տևեց մինչև միս երեկոյեան ժամը 6-ը: Այդպիսի բան դեռ մեր շրջանում չէ տեսնված: Ամբողջ այդ գիշերը գիւղացիք ահ ու դողի մէջ էին, կարող են ասել, որ բոլորովին քնոջ չէ եղել. ամեն մի կողմից լացի ու աղաչանքի ձայներ էին լսվում: Կատարի քամին շատ տների կտուրներ է վերցրել, շատ անասուններ՝ ձի, ոչխար, գոմէշ, կով են կոտորվել: Այգիների վնասը չափից դուրս մեծ է. պտղատու ծառերի վրա բոլորովին ծաղիկ չէ մնացել. մինչև անգամ բողբոջների մեծամասնությունը թափվել է և այդ ծառերը, որոնք մեր Ներքին-Շէնի ու Ղարաչինարի գիւղացիութեան ապրուստի մեծ օժանդակ էին, դատարկվել են բոլորովին: Այս վնասներին խեղճ ու աղքատ գիւղացիք դժուար թէ դիմանան. նրանց ամբողջ մի տարվայ ապրուստը այսօր միանգամից զոհ գնաց կատարի քամուն»¹⁰²:

99 Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 43:

100 Բաֆֆի, նշվ. աշխ., հ. 8, էջ 585:

101 Միւնեցի, Տեղեկություններ գաւառից, «Մշակ», 1910, № 185, 24 օգոստ., էջ 2:

102 Եղ. Յով., Եղանակները Կովկասում, «Մշակ», 1912, № 89, 28 ապրիլի, էջ 3:

Շրջանի տարածքում տնտեսական որոշակի նշանակություն ունեին նաև գիպսի հանքերը, որոնցով հարուստ էին հատկապես Վերիշեն և Գյուլիստան գյուղերը:

Նախկին գավառի սահմաններում (ներկայիս շրջանի սահմանները դուրս)՝ թրքաբնակ Ղարմբեգլու գյուղի մոտ, 1910 թ. հայտնաբերվել էին նավթահանքեր, «որտեղ այժմ եռում է գործն ու աշխատանքը և եթե աջողութեամբ դուրս գայ նաւթը, այն ժամանակ այդ “Նօվթալան” անուանեալ տեղը կը հանդիսանայ մեզանում արդիւնագործական մի տեղ»¹⁰³:

Հայտնի է, որ շրջանի տարածքում պատրաստվում էր նաև վառոդ. «Հրացանը շինում էին Գիլիստանի բերդում, իսկ վառօդը՝ Երիշենում, ուր կայ շորա (селитра), վառօդ պատրաստելը մեկը արտօնութիւնն էր կազմում»¹⁰⁴:

Հայտնի է նաև, որ Մեկը Աբովի հրացանը Մեկը-Բեգլարյանների ժառանգները 1000 ռուբլով վաճառում են գեներալ Ալեքսեյ Երմոլովին (1777-1861), և նա այն նվիրում է Սանկտ Պետերբուրգի Չինապալատին¹⁰⁵:

Կրթություն. իհարկե, միջնադարյան մատենագիրներից և գրիչներից մեզ հասած կցկտուր տեղեկություններում վանական կամ եկեղեցական-ժխական դպրոցների գործունեության մասին ոչինչ չպարունակող տվյալներն իսկ ապացույց չեն, թե գավառի տարածքում երբևէ նմանօրինակ հաստատություններ գոյություն չեն ունեցել: Սակայն փաստ է, որ շրջանի հայկական բնակավայրերը կրթօջախների բացման խնդրում իրապես որոշ թերացումներ են արձանագրել. «...ի 1855 թուականէն մինչ ցայս 1871 թիւ Իկիրմիտօրտ (24) գիւղօրէից ժողովեալ յօգուտ ուսումնարանի կը դրամքը երբէք չպիտոյացան մանկանց մերոց...»¹⁰⁶:

1870-ական թթ., ի վերջո, գավառի առավել մարդաշատ գյուղերում մի քանի դպրոցներ են բացվում (1873 թ.՝ Վերիշենում, 1874 թ.՝ Ղարաչինարում, 1870-ական թթ.՝ Ներքիշենում և Նորշենում)¹⁰⁷:

Թվում է, սակայն, որ այս դպրոցներից ոչ մեկն իր գոյությունը չէր կարողացել կայուն պահպանել, ուստի արդեն 1892 թ. նշվել է, որ Իգիրմիտօրտի 24 գյուղերից և ոչ մեկը եկեղեցական-ժխական դպրոց չունեն¹⁰⁸:

Կրթական նոր զարթոնքը գավառի բնակավայրերում նկատելի է դառնում ազգային դպրոցների գործունեության արգելքի վերացումից (1905 թ.) հետո: Այս շրջանում վերաբացվում են նախկինները, հիմնվում՝ նորերը (1908 թ.՝ Մանաշիդում և Էրքեջում):

Բացի եկեղեցական դպրոցներից՝ արդեն 1910 թ. գործում էին նաև պետական (ռուսական) դպրոցներ Ղարաչինարում և Վերիշենում՝ երկդասյա, իսկ Ներքիշենում՝ միդասյա¹⁰⁹:

103 **Չարաբեան Բ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1910, № 261, 23 նոյեմբերի, էջ 3:

104 **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 253: Տե՛ս նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 245:

105 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 10, էջ 169, ծմբ. 1: Ի դեպ, մեկը Աբովի հրացանի մասին Հարություն Թումանյանը գրել է մի պոեմ, որտեղ ասվում է, թե մահվանից առաջ՝

«...իր պատանի միակ ժառանգին Աբովն համբուրեց օրհասի ժամին, Եւ տալով նորան սաղափով նախշած, Արծաթ օղերով հրացանըն, ասաց. «Ահա, սա այն է, որով Կադ-Աբով Պահեց Գիլիստան ազատ, ապահով. Սա այն գեղքըն է ահեղ, մահաբեր, Որից սոսկացին մեր բշնամիներ, որը պաշտպանեց մեր եկեղեցին Եւ փառք ու պարծանք վաստակեց հային» (**Թումանյանց Յ.**, Մեկը Իսուփ (1728-1750), «Լուսնայ», 1900, գիրք Բ, էջ 303-304):

106 **Խ. Մ. Տ. Յարթիւնեանց**, նշվ. հոդվ., «Արարատ», 1871, ԺԱ, էջ 373:

107 Մանրամասները տե՛ս աշխատության համապատասխան բաժիններում:

108 «Նոր-Դար», 1893, № 9, 20 յունուարի, էջ 1:

109 **Չարաբեան Բ.**, նշվ. հոդվ., 1910, № 261, 23 նոյեմբերի, էջ 3:



Դպրոցների հիմնադրման տարեթվերն ու տեղաբաշխումը շրջանի տարածքում

1912 թ. նշվել է, որ գործող դպրոցների «...ուսուցչությունը դպրոցի շորս պատերից դուրս ոչինչ բան չէ անում, համայնական այս կամ այն գործը ղեկավարելու և առաջնորդելու մեջ բնաւ երես չունի»¹¹⁰:

Նույն թվականի օգոստոսին պետական դպրոցներ էին գործում Ղարաչինար, Վերիշեն և Ներքիշեն գյուղերում¹¹¹:

Ազգային կրթության ոլորտում կացությունը մտահոգիչ էր հատկապես 1916 թ. «...Ջրաբերդի և Իզիրմիդորդի հայերը, որոնց համար դպրոցը երազ է: Ամբողջ այդ լայնարձակ շրջանում, որի մի ծայրը Գանձասարն է, միւսը Գանձակը, մի հատիկ ծխական դպրոց չէք գտնի. եղածները բոլորը կառավարչական են: Եւ հակառակի պէս էլ այդտեղ հայ լեզուն ու հայ սովորութիւնները մեռնում են, որովհետև գիւղերը ցան ու ցրիւ են և շրջապատւած թուրք, քիւրդ ու քուրանի ցեղերով, որոնք կազմում են երկրի ճնշող մեծամասնութիւնը և ...խեղդում փոքրամասնութիւն կրող հայերի հայկական ամեն ինչ»¹¹²:

1917 թ. նոյեմբերի 22-ին Արմենակ Բորյանի՝ ԿՀԲԸ կից Հայկական կենտրոնական կոմիտեին հղած գրության մեջ նշվել է. «Անցեալ... ն. տարւայ սկզբից (հոկտեմբերից) կոմիտեիս յանձնարարութեամբ Գանձակ և նրա շրջանում բացւեցին 14 դպրոց 600 աշակերտութեամբ: 5 դպրոցում պաշտօնավարել են տեղական ծխական դպրոցի ուսուցիչներ, իսկ մնացեալ դպրոցներում՝ գաղթական ուսուցիչներ են եղել: Այս տարի սպասուում էր, որ 14 դպրոցին պիտի աւելանային մի քանի դպրոցներ ևս. մինչդեռ կատարուեց հակառակը, այսինքն՝ Ներքի-Շէն, Վերին-Շէն, Փիք, Բանանց, Միրզիկ, Ոսկանապատ, Գառնակեր գիւղերի գաղթական աշակերտ-աշակերտուհիներ մնացին առանց ուսման»¹¹³:

1936 թ. շրջանում գործում էր միայն մեկ միջնակարգ դպրոց՝ 13 ուսուցչով, իսկ 1976/1977 ուստարում՝ արդեն 13 միջնակարգ դպրոց՝ 405 ուսուցչով¹¹⁴:

Խորհրդային տարիներին և մինչև 1992 թ. բռնագաղթը շրջանի գրեթե բոլոր գյուղերում գործում էին միջնակարգ, ութամյա կամ տարրական դպրոցներ:

Պատմական հուշարձաններ. շրջանի ներկայիս տարածքն ունի բազմադարյան և տարաբնույթ հուշարձանների այնպիսի ներկայանակ, ինչպիսին հատուկ է ողջ Պատմական Հայաստանին և մասնավորապես նրա Արցախ-ուտիքյան հայաշխարհին:

Մինչև 1992 թ. շրջանի տարածքում կանգուն, կիսավեր կամ ավերակ վիճակում առկա էին պաշտպանական, ճարտարագիտական, արտադրական, գերեզմանական, պաշտամունքային, տնտեսական, բնակելի և այլևայլ նշանակության մեծաքանակ հուշարձաններ:

Բերդեր. այս կարգի հուշարձաններից եզակիորեն առանձնանում է միջնադարյան աղբյուրներում բազմիցս վկայված Հերզ (Հերք, Հերքան), հետագայի՝ Գյուլիստան բերդը, որը գավառի ոչ թե միայն գլխավոր, այլ, ըստ էության, միակ բերդն էր, ուստի և պատահական չէ, որ հայտնի էր հենց գավառանվամբ¹¹⁵:

Կամուրջներ. շրջանի տարածքով հոսող երեք գլխավոր գետերի վրա դարերի ընթացքում բազմաթիվ կամուրջներ են կառուցվել, սակայն կանգուն վիճակում մեզ են հասել միայն Փոքր Կյուրակ գետի Քարե, Սևջրի՝ Խռոված և Գյուրգյուր կամուրջները:

Վանքեր. հայտնի են Երեք մանկուք, Արքայեկ և Ամենափրկիչ վանքերը, որոնցից առաջինը կիսավեր է, երկրորդը՝ ավերակ, իսկ երրորդը, որը նաև երջանիկ ղիպվածով գտնվում է հայկական զինված ուժերի վերահսկողության ներքո, կանգուն է և հնարավորինս նաև նորոգված:

Եկեղեցիներ. գյուղական եկեղեցիների հիմնական մասը (բացի Հայ Պարիս գյուղի եկեղեցուց) կառուցվել է ավելի հին և քայքայված եկեղեցիների տեղում և դրանց փոխարեն:

Հորինվածքային առումով բոլորն էլ բազիլիկներ են (միանավ և եռանավ):

Սրբատեղիներ. մի քանի պարզ խաչքարի, երբեմն ճարտարապետական արժանիքներով առանձնապես աչքի չընկնող մատուռների կամ հատուկ հատկությունների վերագրմամբ քարերի (օրինակ՝ իբր բժշկող, անձրևաբեր և այլն) կարելի է հանդիպել գրեթե բոլոր գյուղերում կամ նրանց մերձակայքում, սակայն սրանց մեջ մի առանձին համբավ է ունեցել Մռավ լեռան գագաթի սուրբը. «Նրա գագաթի վրա կան երկու գերեզմաններ, որ հայոց ուխտատեղի է: Այդ գերեզմանները պատկանում են ճգնափորների, որոնք բնակվում էին այդ լեռան գագաթի վրա: Մինչև այսօր ցույց են տալիս նրանց ճգնարանները, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ երեք ահագին քարեր միմյանց մոտ դրած և մի քար ևս դրած նրանց վրա որպես ծածկոց: Միշում մի մարդ միայն կարող է բնակվիլ: Այդ ահագին քարերի այսպես միմյանց վրա դրվիլը միայն հսկաների գործ կարող է համարվել»¹¹⁶:

Գերեզմանական հուշարձաններ. ինչպես մինչև 1992 թ. հայաբնակ գյուղերում, այնպես էլ ավելի վաղ ժամանակներում լքված հին գյուղատեղիների գերեզմանոցներում պահպանվել էին մեծ թվով տապանաքարեր և խաչքարեր (թվակիրների մեջ առավել հները վերաբերում են ԺԲ դարին):

Բնակելի հուշարձաններ. պահպանված մնուշները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինը մինչև ԺԺ դարի վերջերը բոլոր գյուղերում գերակշռող երդիկավոր գլխատունն էր, որ ժամանակի ընթացքում կամաց-կամաց փոխարինվել էր կղմիդրածածկ երկթեք տանիքներով առավելապես կրկնահարկ (գեղեցիկ բազրիքներով հարդարված պատշգամբներով) «եվրոպական» տիպի տներով, իսկ երկրորդը՝ մեղիքական կամ ավելի ուշ պարզապես բեկական կոշվող բնակելի շենքերը:

110 Անդրո, Փոխատու խնայող. դրամարկը, «Հորիզոն», 1912, № 194, 5 սեպտեմբերի, էջ 3:

111 Անա, նշվ. հոդվ., «Մշակ», 1912, № 187, 25 օգոստոսի, էջ 3:

112 Միսասը, Գյուրգյուրյան խոհեր, «Հորիզոն», 1916, № 106, 14 մայիսի, էջ 3:


113 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 170, ք. 5:

114 Առտատյան Ռ., Նոր հորիզոններ, «Նոր ուղի», 1977, № 92, 2 օգոստոսի, էջ 2:

115 Չենք կիսում վաստակաշատ պատմաբան Գ. Բաղայանի այն տեսակետը, թե իբր «...բերդանունը որոշակի կապ ունի հայկական Էրբաջ (Էրբեջ) գյուղանվան հետ» (Բաղայան Գ., Հայոց Արևելից կողմերի տեղանուններն ըստ հայկական սկզբնաղբյուրների, «Աշխատանքային տեսերթ», 2014, № 3-4, էջ 55), քանի որ Էրբեջի մոտերքում ոչ միայն նշանավոր, այլև աննշան մի բերդ գոյություն չունի, ուստի Հերզ-Հերքանը հենց Գյուլիստան բերդն է:

116 Բաֆֆի, նշվ. աշխ., հ. 8, էջ 589:

ԲՈՒՆԱԶԱԿԹՎԱԾ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



Մահմեդական հուշարձաններ. ըստ էության՝ այդպիսիք շրջանի տարածքում գոյություն չունեն: Թերևս բացառություն է կազմում Մանաշիդ, Էրբեջ և Թողան գյուղերի միջնահատվածում գտնվող մահմեդական գերեզմանոցը՝ 1880-ական թթ. վերաբերող արձանագիր զույգ տապանաքարերով հանդերձ:

Վիմագրական ժառանգություն. շրջանի տարածքում ԺԲ դարից սկիզբ առնող ցարդ հայտնաբերված վիմագիր արձանագրությունները գրեթե բացառապես հայերեն են (եզակի բացառություն են կազմում 1880-ական թթ. վերաբերող արաբերեն երկու տապանագրերը):

Բնագավառում առաջին հետազոտությունները կատարած հեղինակը Մարգիս Ջալալյանցն է, որը գրի է առել և հրատարակել միայն մեկ արձանագրություն¹¹⁷: Այնուհետև այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել Մակար Բարխուդարյանը, որը, այցելելով շրջանի հնավայրերի մեծագույն մասը, հավաքել և հրատարակել է 18 վիմագիր (14-ը վերաբերում են ԺԸ դարի վերջերին, 4-ը՝ ԺԹ դ. սկզբին)¹¹⁸:

Նախախորհրդային տարիներին բնագավառին անդրադարձած վերջին հետազոտողը Երվանդ Լալայանն է, որը, սակայն, որոշ ուղղումներով սույն վերահրատարակել է նախկինում հրատարակված արձանագրություններից 9-ը¹¹⁹:

117 **Ջալալյանց Մ.**, Գանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփլիս, 1842, էջ 210:
118 **Բարխուդարյանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 241-252:
119 **Լալայանց Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 122-127:

Երկար ընդմիջումից հետո՝ 1978 թ. մի քանի նոր արձանագրություններ է հրատարակել Կիմ Ղահրամանյանը, որը նաև հետագա տարիներին շարունակաբար զանազան հրատարակություններով ներկայացրել է 87 արձանագրություն¹²⁰:

1982 թ. լույս ընծայված «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի «Արցախ» պրակում տեղ է գտել 14 արձանագրություն (13-ը՝ ԺԸ, իսկ 1-ը՝ ԺԹ դարից): Պրակն անհարկի անտեսել է Կ. Ղահրամանյանի՝ արդեն հրապարակած վիմագրերը¹²¹:

Եվս 21 միավոր արձանագրություն էլ (որոնցից 18-ն առաջին անգամ) հրատարակվել է 1984 թ.¹²²:

Բնագավառում կարևոր ներդրում ունի նաև ճարտ. Արտակ Ղուլյանը: Նրա անտիպ հավաքածուն (29 միավոր) ներկայացվում է այս աշխատության մեջ¹²³:

Ընդհանուր առմամբ սույն հատորը պարունակում է 177 միավոր արձանագրություն:

120 **Ղահրամանյան Կ.**, Միջնադարյան մի նորահայտ հուշարձան, «ԼՀԳ», 1978, № 5, էջ 110-111: Նույնի՝ Նյութեր Գյուլիստանի մեկիքույան պատմության վերաբերյալ, «ԼՀԳ», 1979, № 12, էջ 112-116: Հյուսիսային Արցախ, գիրք Ա, Երևան, 1993: Օջախի գիրք, հ. Ա և Բ:
121 Դիվան հայ վիմագրության, Արցախ, պրակ V, կազմ. Մ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 243-244, 248-249 (այսուհետ՝ Դիվան, համապատասխան պրակով և էջերով):
122 **Կարապետյան Մ.**, Խրիստոսի ձորահովտում գտնվող պատմաճարտարապետական հուշարձանները և դրանց նորահայտ հուշարձանները, «ՊԲՀ», 1984, № 2, էջ 232-238:
123 **Ղուլյան Ա.**, Արցախի և Սյունիքի մեկիքական սպարանքները, Երևան, 2001, էջ 43:



ԿԱՍ Ա
ԲՈՆԱԶԱԿԹՎԱԾ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ՇՐՋԱՆ

ԲՈՒԶԼՈՒՒՄ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին) ավանից 16 կմ արևմուտք՝ Փոքր Կյուրակ գետի ձախ ասիին՝ ծովի մակերևույթից 1280-1360 մ բարձրության վրա:

Անվանում. գյուղի նախնական՝ հայկական անունը մոռացվել է, սակայն հնարավոր է, որ այն եղել է Սառնատուն, որի իմաստային թարգմանությունից էլ ծագել է ներկայիս անվանումը. «Բարձրադիր այդ գյուղի անվանման մեջ դեր է կատարել մոտակա լեռնախորշում կյուր տարին սառույց լինելը. տեղանքն այդպես էլ կոչվում է՝ Սառնատուն (թարգմանված դարձել է Բուզլուխ՝ սառույցների տեղ, սառույց ունեցող)»¹:

Հաղորդակցության ուղիները. Բուզլուխը հարևան բնակավայրերի հետ կապված է միայն երկու ճանապարհով: Դրանցից հյուսիսայինը ձգվում է դեպի Մանաշիղ, իսկ արևելյանը՝ Վերին շեն: Իհարկե, ևս մեկ ճանապարհ էլ դուրս է գալիս գյուղի հարավային ծայրից և Փոքր Կյուրակ գետակի հոսանքն ի վեր բարձրանում դեպի գյուղապատկան ամառային արտավայրերը:

Բուզլուխ տանող ճանապարհները երբևէ չեն բարեկարգվել, ընդ որում, հենց խորհրդային տասնամյակներին էլ դրանք այն նույն վիճակում էին, ինչ նախախորհրդային տարիներին: Այս առթիվ, օրինակ, 1910 թ. նշվել է. «Ճանապարհների վատության պատճառով այստեղ ամառանոց եկողներ չեն լինում: Եկած մի երկու տունն էլ տեղի դրութեանը և հանգամանքներին ծանօթանալով միս տարին չեն գալիս...»²:

Պատմություն. Բուզլուխի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ հայտնի չեն: Սակայն, ըստ գյուղում և գյուղամերձ հնավայրերում պահպանված նյութական մշակույթի բազմազան հուշարձանների մնացորդների, կարելի է նշել, որ զուտ հայաբնակ այս գյուղը գոյություն է ունեցել առնվազն զարգացած միջնադարից:

Ուշ միջնադարում և մինչև ԺԹ դարի վերջը, մերձակա հողատարածքներով հանդերձ, գյուղը պատկանում էր երբեմնի գավառատեր, իսկ մինչև խորհրդային կարգերի հաստատումը՝ արդեն սոսկ կալվածատեր Մելիք-Բեգլարյան իշխանական հայտնի տոհմի շառավիղներին³:

ԺԹ դարի վերջին Բուզլուխի կալվածատերերն էին Սիմոն բեկ Մելքոնյանցը, Ավետիս, Հակոբ, Հովսեփ և Պետրոս Հովհաննիսյանները, Տփրեմ և Սողոմոն Առաքելյանները⁴, ինչպես նաև Լուարսաբ և Պավել Մելիք-Բեգլարյանցները⁵:

Ի դարի սկզբներին գյուղը թռուցիկ հիշվում է զանազան թղթակցություններում և տեղեկագրերում: Այսպես՝ 1917 թ. «Բուզլուխ գիւղացի մի քաջ երիտասարդ գալիս է Գանձակ առևտուրի, հետը բերելով 1,500 ռ.: Սրան երեկոյեան, մի երկու օր առաջ, 8-9 ժամին հրաւիրում են՝ տանում գերեզմանատուն, այնտեղ այդ անմեղ մարդուն սպանում ու ունեցածը կողոպտում, թալանում: Կասկած չի կարող լինել այստեղ, որ նրան տնից հանող-հրաւիրողը նախ պիտի լիներ իրան մօտիկ հայ ծանօթ ընկերներից մեկը, որին հաւատալով միամտաբար խեղճը հետը գնար և այդպիսի վտանգի ենթարկվեր, և երկրորդ՝ սպանողը քաջ իմանալիս է եղել, որ նրա մօտ կայ 1,500 ռ.»⁶:



ԲՈՒԶԼՈՒՒՄ. գյուղն արևելքից՝ դեպի Վերին տանող ճանապարհից (լուս.՝ Գ. Բաղայանի, 1980-ական թթ. կեսեր). առջևի պլանում՝ ճամփեզրին, երևում է Սուլուքնաձով կոչվող ճահճոտ լճակը

1918-1920 թթ. կռիվների ժամանակ աչքի են ընկել Մնացական, Ավետիս Հովհաննիսյանները, Բալարեկ Գևորգյանը, Բեգլար, Ալեքսանդր և Մելիսակ Ղազարյանները, իսկ Բալարեկ Մարունցը (Գևորգյան) եղել է զորավար Անդրանիկի թիկնապահներից մեկը⁷:

1920 թ. մարտի 23-ից ապրիլի 3-ն ընկած ժամանակահատվածում կովկասյան թաթարների (1936 թ.-ից կոչվեցին ադրբեջանցի) ավերած և «գետնին հաւասարեցւած» հայաբնակ 10 գյուղերի թվում էր նաև Բուզլուխը⁸:

1989 թ. բնակչության և հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթի հետևանքով գյուղը սկսում է քայքայվել⁹:

1991 թ. հուլիսի 16-ին Էրքեջ և Մանաշիղ գյուղերի հետ մեկտեղ ադրբեջանցիները զավթում են նաև Բուզլուխը, սակայն սեպտեմբերի 13-ին հայկական ուժերը կարողանում են դրանք ազատագրել:

1992 թ. հունիսի 13-ին ադրբեջանցիները երկրորդ անգամ են զավթում Բուզլուխը, որն էլ առ այսօր գտնվում է նրանց վերահսկողության ներքո:

Բնակչություն. դարերից ի վեր գյուղի հայաբնակ և այն էլ զուտ հայաբնակ լինելու մասին լավագույնս վկայում են գյուղամիջում և մերձակայքում պահպանված հայոց բազմադարյան գերեզմանոցները: Վերջիններս հնարավորություն են տալիս հանգելու այն եզրակացության, որ Բուզլուխը գավառի առավել աշխույժ և մարդաշատ բնակավայրերից էր: Այնուամենայնիվ, գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա ստույգ տվյալները երևան են գալիս միայն ռուսական տիրապետության հաստատումից հետո, որից էլ երևում է՝ արդեն ԺԹ դարում Բուզլուխը բնակչության թվաքանակով գտնվում էր գավառի միջինից էլ փոքր գյուղերի շարքում:

Ըստ 1831-1832 թթ. դիվանական վավերագրերի՝ գյուղի բնակիչներն էին Ավանես Գրիգորյան Ղահրամանյանցը, կինը՝ Մարիամը, որդիները՝ 15-ամյա Գրիգորը և 8-ամյա Վարդանը, դուստրերը՝ 4-ամյա Եղիսաբեթը և 2-ամյա Խանումը; 25-ամյա Սարգիս Խաչատուրյան Նարինյանցը, կինը՝ 19-ամյա Նանագյուլը, 1-ամյա որդին՝ Խաչատուրը; 40-ամյա Հակոբ Մելքունյան Ավանեսյանցը, կինը՝ 38-ամյա Նազլուն, որդիները՝ 22-ամ-

1 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. հողը կանչում է, հ. Բ, Երևան, 2005, էջ 325:

2 Պ. Տ. Պ., Թղթակցություն, «Հորիզոն», 1910, № 193, 2 սեպտեմբերի, էջ 3:

3 Շ., Գիւղական տալվորութիւններ, «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 1-2 («Բուզլուխի վարելահողերի և անտառների մեծ մասը պատկանում է Մելիք Բեգլարեաններին: Այս հողերի մի մասը գիւղացիք նորերունս գնել են»): Տես նաև ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 397:

4 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 388, ք. 51-52:

5 Նշվ. գործը, ք. 61-62:

6 Գանձակեցի, Կողոպտումները մեզանում, «Մշակ», 1917, № 155, 27 յուլիսի, էջ 4:

7 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 328:

8 Գանձակի եւ իր շրջանի օրհասական վիճակը, թղթակցություն, «Նոր աշխատուոր», 1920, № 4, 6 ապրիլի, էջ 2:

9 Լալայան Մ., Օգնենք հարևանին, «Մոլորակային Ղարաբաղ», 1989, № 103, 3 մայիսի, էջ 3:

յա Ավանետը, 8-ամյա Միրզան, 6-ամյա Մելքունը, 1-ամյա դուստրը՝ Հերիքնազը, որդու՝ Ավանեսի կինը՝ 15-ամյա Հերիքնազը; 28-ամյա Քոչար Գևորգյան Հարությունյանը, կինը՝ 25-ամյա Մարիամը, 7-ամյա որդին՝ Հակոբը, 3-ամյա դուստրը՝ Հերիքնազը; 26-ամյա Մնացական Հարությունյան Հակոբյանը, կինը՝ 23-ամյա Ռեհանը, 5-ամյա դուստրը՝ Մարիամը, և Մնացականի եղբայրը՝ Կարապետը¹⁰:

Ուշագրավ է նաև 1872 թ. մայիսի 15-ին կազմված վավերագրերից մեկը, որը պարունակում է գյուղի 14 տնատերերի անունները՝ Ղազար Օհանյան, Խաչատուր Հովհաննիսյան, Հակոբ Քոչարյան, Գրիգոր Հակոբյան, Ներսես Ստեփանյան, Մովսես Առաքելյան, Եղիազար Մարտիրոսյան, Օսեփ Առաքելյան, Սկրտիչ Առաքելյան, Գրիգոր Հովհաննիսյան, Վարդան Հովհաննիսյան, Կարապետ Գրիգորյան, Հարություն Առաքելյան և Աղաբեկ Բաբայան¹¹:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին Հյուսիսային Արցախի Ազատ (Սուլուկ) գյուղում բնակվում էին նաև Բուզլուխից փոխադրված 7 տուն հայեր¹²:

Ինչ վերաբերում է բնակչության թվաքանակին, ապա վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1832 ¹³		13	11	24
1841 ¹⁴	12	24	25	49
1851 ¹⁵	6	24	26	50
1872 ¹⁶	14			
1876 ¹⁷				140
1886 ¹⁸	23	97	91	188
1889 ¹⁹	15	80	70	150
1893 ²⁰	21	98	86	184
1901 ²¹		121	100	221
1902 ²²		124	98	222
1905 ²³		132	106	238
1908 ²⁴		144	121	265
1909 ²⁵	30	148	128	276

10 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 396 շրջ.-398:

11 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6128, ք. 1:

12 **Քարխատարեանց Մ.**, Արցախ, Բազու, 1895, էջ 269: Տե՛ս նաև **Կարապետյան Մ.**, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 310:

13 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 396-398:

14 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47:

15 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 92:

16 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6128, ք. 1:

17 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6775, ք. 115-116:

18 Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа. Елисаветопольская губерния (այսուհետ՝ Свод...), Тифлис, 1888, с. 88-89.

19 **Քարխատարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 251: Ի դեպ, ըստ մի վավերագրի (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, ք. 46-47)՝ գյուղն ուներ 242 (142-ը՝ ար., 100-ը՝ իգ.) բնակիչ:

20 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը, Ի. Բ, Երևան, 2017 (այսուհետ՝ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, Ի. Բ), էջ 335: Այլ վավերագրի համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 23 տուն բնակիչ (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 196):

21 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 241-242: Տե՛ս նաև Վաերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, 2001 (այսուհետ՝ Վաերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, համապատասխան էջերով), էջ 409:

22 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, ք. 118-119:

23 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, ք. 140-141:

24 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, ք. 223-224: Այլ տեղեկությունների համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 24 տուն՝ 296 (160-ը՝ ար., 136-ը՝ իգ.) բնակիչ (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, Елисаветполь, 1910, отд. IV, с. 26 (այսուհետ՝ Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, համապատասխան էջերով), նաև՝ 396 բնակիչ (Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, с. 208):

25 ՀԱԴ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 764, ք. 243-244: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 306, ք. 17:



ՔՈՒՋԼՈՒՄ. գյուղական տեսարաններ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

1910 ²⁶		145	127	272
1912 ²⁷	24	161	118	279
1914 ²⁸				295
1915 ²⁹		120	149	269
1918 ³⁰	31	170	124	294
1925 ³¹				540
1970 ³²	133	294	318	612
1976 ³³				571
1992 ³⁴				480

Հայտնի է, որ Մեծ եղեռնը վերապրած հայերի մի քանի հաստատվում է Բուզլուխ գյուղում՝ ջուլիակագործներ Գալուստ Ավետիսյանը, Սեդրակ Մուրադյանը և Դավիթը³⁵:

1991-1992 թթ. գյուղացիներից զոհվել են Վաչագան Խաչատրյանը (1992 թ. գարնանը՝ գյուղում), Պողոս Կարապետյանը (Շահումյանում, իսկ գյուղի ազատագրումից հետո՝ 1991 թ. սեպ-

26 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 189:

27 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год: Приложение к памятной книге, Тифлис, 1914, с. 54. Այլ տեղեկության (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 330) համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 294 (154-ը՝ ար., 140-ը՝ իգ.) բնակիչ:

28 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 102.

29 ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 18 շրջ.:

30 ՀԱԴ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4 շրջ.:


31 **Խաչատրյան Վ., Մուքիսյան Հ., Բաղդասարյան Գ.**, նշվ. աշխ., էջ 139:

32 **Ղահրամանյան Վ.**, Օջախի գիրք. նշխարներ, Ի. Ա, Երևան, 2002, էջ 29:

33 Աղբյուրագրական ամսագրի հանրագիտարան (այսուհետ՝ ԱՄՀ, համապատասխան հատորներով), Ի. 2, Բաքու, 1978 (աղբյուրագրեր), էջ 344:

34 ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

35 **Ղահրամանյան Վ.**, Օջախի գիրք, Ի. Բ, էջ 325: Ըստ Մարտ Բաղդասարյանի՝ Բուզլուխի կրթական կյանքում մեծ դեր է խաղացել Մեծ եղեռնը վերապրած մանկավարժ Ավետիսը (նշվ. աշխ., էջ 369):



ԲՈՒՋԼՈՒՄ. գյուղի գլխավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի՝ 2009 թ. արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Հակոբյանի, 2018 թ.)

Բուզլուխի տնատերերի և կարևոր շինությունների ցանկը
(կազմող՝ Նիկոլայ Հովսեփյան)

- | | | |
|--------------------------|-----------------------|----------------------|
| 1 Սբ. Մինաս մատուռ | 7 Ռուրիկ Մուրադյան | 13 Հրանտիկ Խաչատրյան |
| 2 Փոքր խաչ | 8 Արմենակ Մուրադյան | 14 Բորիկ Խաչատրյան |
| 3 Նիկոլայ Մկրտումյան | 9 Ավետիս Ավետիսյան | 15 Ժորիկ Խաչատրյան |
| 4 Հայկո Ստեփանյան | 10 Ջիան Մանուկյան | 16 Հրաչիկ Գևորգյան |
| 5 Հովհաննես Ղազարյան | 11 Մկրտում Մկրտումյան | 17 Թևոս Գևորգյան |
| 6 Հովհաննես Հովհաննեսյան | 12 Մելակ Մկրտումյան | 18 Հրաչիկ Ղազարյան |

19 Ռազմիկ Ղազարյան
 20 Մովսես Ղազարյան
 21 Մանվել Ղազարյան
 22 Սարգիս Ստեփանյան
 23 Վանո Ստեփանյան
 24 Բերո Ստեփանյան
 25 Անդրանիկ Գևորգյան
 26 Հայկո Մելքունյան
 27 Ռուբեն Ստեփանյան
 28 Աղվան Սահակյան
 29 Մովսես Ստեփանյան
 30 Էդիկ Մելքունյան
 31 Անուշ Մելքունյան
 32 *Էլեկտրակայան*
 33 *Սղոցարան*
 34 Սաշա Ստեփանյան
 35 Ցական Մինասյան
 36 Հովիկ Ստեփանյան
 37 Արսեն Գևորգյան
 38 *Բուժկետ*
 39 Սիմոն Հովսեփյան
 40 Սուրբան Հովսեփյան
 41 Վալոդ Հովսեփյան
 42 Հակոբ Հովսեփյան
 43 Սաշա Հովսեփյան
 44 Բեգլար Հարությունյան
 45 Առատամ Հարությունյան
 46 Թևոս Հովսեփյան
 47 Հակոբ Եղյան
 48 Ֆրունզե Եղյան
 49 Ռուբիկ Խաչատրյան
 50 Սլավիկ Եղյան
 51 Աբել Եղյան
 52 *Սբ. Մինաս եկեղեցի*
 53 Մուխի Գևորգյան
 54 Գրիգոր Սաֆարյան
 55 Մերգի Ղազարյան
 56 Վանո Հովհաննիսյան
 57 Պողոս Կարապետյան
 58 Միշա Հովհաննիսյան
 59 Լևան Սկրտունյան
 60 Վարսենիկ Ղազարյան
 61 Արաքսի Մովսիսյան
 62 Մովսես Մովսիսյան
 63 Վաչագան Խաչատրյան
 64 Խաչի Խաչատրյան
 65 Մարգար Բաբայան
 66 Թևոս Վարդանյան

67 Հրանտիկ Խաչատրյան
 68 Ռուբեն Հովհաննիսյան
 69 Ռուբեն Վարդանյան
 70 Հրանտիկ Պռազյան
 71 Հրաչիկ Գևորգյան
 72 Հմայակ Մովսիսյան
 73 Բենիկ Մովսիսյան
 74 Եդիշ Հարությունյան
 75 Խաչիկ Ստեփանյան
 76 Ռուբեն Սկրտունյան
 77 Վալոդ Սկրտունյան
 78 Ալեքսան Սկրտունյան
 79 Գրիգոր Հովհաննեսյան
 80 Մեխակ Սկրտունյան
 81 Գերասիմ Հովհաննիսյան
 82 Վանիկ Վարդանյան
 83 Մովսես Հովհաննիսյան
 84 Սաչիկ Վարդանյան
 85 *Ջրաղաց*
 86 Հրաչիկ Հարությունյան
 87 Խաչիկ Մովսիսյան
 88 Վալերիկ Հարությունյան
 89 Մայիս Ղազարյան
 90 Էդիկ Սկրտունյան
 91 Իշխան Սկրտունյան
 92 Ֆրիդոն Սկրտունյան
 93 Յուրիկ Մովսիսյան
 94 Խաչիկ Վարդանյան
 95 Մերգի Վարդանյան
 96 Ներսես Ստեփանյան
 97 Շուշի Սկրտունյան
 98 Մինաս Սկրտունյան
 99 Ջարմիկ (Ջարո) Գևորգյան
 100 Շահեն Մինասյան
 101 Սիմոն Հովսեփյան
 102 Թևան Հովսեփյան
 103 Հրանտիկ Հովսեփյան
 104 Ռուբիկ Հարությունյան
 105 Բախշի Գևորգյան
 106 Հակոբ Հարությունյան
 107 Ռուբիկ Գևորգյան
 108 Ժորիկ Կարապետյան
 109 Նիկոլ Գևորգյան
 110 Նիկոլայ Կարապետյան
 111 Ազատ Եղյան
 112 Արարատ Հարությունյան
 113 Կոլի Հարությունյան
 114 Հարաբեդ Հարությունյան

115 Հարություն Հարությունյան
 116 Զինավեր Գևորգյան
 117 Ալեքսան Կարապետյան
 118 Մերգի Գևորգյան
 119 Բալաբեկ Գևորգյան
 120 Բախշի Բաբայան
 121 Վադո Բաբայան
 122 Միշա Բաբայան
 123 Վոլոդյա Եղյան
 124 Բագրատ Սկրտունյան
 125 Գուրգեն Սկրտունյան
 126 Ալբերտ Եղյան
 127 Մուխան Ղազարյան
 128 Մինաս Կարապետյան
 129 *Գյուղապետարան*
 130 Անդրանիկ Ստեփանյան
 131 Ջարմիկ Գևորգյան
 132 Մինաս Հարությունյան
 133 Բորիկ Մուրադյան
 134 Սամանդար Տոնյան
 135 Ցական Ղազարյան
 136 Հանես Կարապետյան
 137 Ջարմիկ Հովսեփյան
 138 Բալադա Հովսեփյան
 139 Ռոբերտ Հովսեփյան
 140 Միշա Հովսեփյան
 141 Մինաս Հովհաննիսյան
 142 Ազատ Հովհաննիսյան
 143 Եդիշ Եղյան
 144 *Ավտոկայանատեղի*
 145 *Պահեստ*
 146 *Ֆերմա*
 147 Ռուբիկ Գևորգյան
 148 Մինաս Գևորգյան
 149 Խաչի Հովսեփյան
 150 Հրաչիկ Վարդանյան
 151 Հայկ Հովհաննիսյան
 152 Էդիկ Հարությունյան
 153 Ռազմիկ Գևորգյան
 154 Մայիս Մովսիսյան
 155 Երվանդ Պռազյան
 156 Վաղարշակ Վարդանյան
 157 Մայիս Վարդանյան
 158 Ջումի Մովսիսյան
 159 Մայիս Հովհաննիսյան
 160 Մյասնիկ Սկրտունյան¹

¹ **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք. կարոտի հասցեներ, հ. Գ, Երևան, 2011, էջ 93-97:

տեմբերի 14-ին, դին բերվել է Բուզլուխ և ամփոփվել գերեզմանոցում), Հրանտիկ Թևանի Հովսեփյանը և Մնացական Մինասյանը (1992 թ. գարնանը՝ Շահումյանում), Անինկա Մուղիի Հովսեփյանը, Վարսենիկ Ղազարյանը և Արուսյակ Տարայանը (Վերիշենում), Ալեքսանդր Տարայանը (1991 թ.՝ գյուղում)³⁶:

1991-1993 թթ. ընթացքում զոհվել են նաև բուզլուխցի ազատամարտիկներ Էդիկ Եդիշի Հարությունյանը (1991 թ. հուլիսի 6-ին), Մաքո Մանվելի Հարությունյանը (Ղազարյան)՝ Տոնաշենի

ազատագրման ժամանակ՝ 1993 թ. ապրիլին, կազմաբնակ Արտյոմ Մուրադյանը (1992 թ. մայիսին՝ Թալիշում, ամփոփվել է Շահումյանի գերեզմանոցում)³⁷:

Անվանի բուզլուխցիներ. *Մնացական Ավետիսյան Հովհաննիսյան* (ծնվ. 1894 թ.). հայրը սպանվել է 1920 թ. մուսավաթականների ձեռքով: Նախնական կրթությունը ստացել է Ելիզավետպոլի պետական ուսումնարանում:

36 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 664:

37 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 664-665:

1912-1917 թթ. ուսումը շարունակել է Թիֆլիսի հողաչափական ուսումնարանում, որն ավարտելուց հետո ընդունվել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտ, սակայն նյութական միջոցների սղության պատճառով կիսատ է թողել և 1918 թ. վերադարձել հայրենի գյուղ:

1920 թ. Բուզլուխում հիմնադրել է դպրոց, որտեղ էլ դասավանդել է մինչև 1925 թ.: Ի դեպ, որպես ուսուցիչ աշխատել է նաև հարևան գյուղերում:

1920 թ. մայիսին Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի կազմում մասնակցել է Գանձակի մուսավաթիստների հակահեղափոխական ապստամբության ճնշմանը:

1922 թ. ընտրվել է Բուզլուխի գյուղատնտեսի նախագահ:

1925 թ. Գանձակի ՕՆՕ-ից ուղարկել են Երևան՝ սովորելու ֆիզիկամաթեմատիկայի ֆակուլտետում: Մինչև 1941 թ. աշխատել է Հայաստանի շրջաններում:

1941-45 թթ. Հայաստանի Ներքին գործերի նախարարության կողմից ուղարկվել է Ղազախստան՝ աշխատելու, իսկ 1949 թ. հունիսից՝ այս անգամ Ալթայի երկրամասի Մարոկինի շրջան³⁸:

Մնացական Հովհաննիսյանը 1920 թ. սեպտեմբերի 15-ից մինչև 1923 թ. հոկտեմբերի 15-ը եղել է Բուզլուխ գյուղի 1-ին աստիճանի դպրոցի վարիչը: Մինչև 1924 թ. հոկտեմբերի 1-ը դասավանդել է Վերին Աղջաքենդի 1-ին աստիճանի դպրոցում, իսկ նույն թվականի հոկտ. 1-ից առ 1925 թ. հոկտ. 1-ը Ելլենդորֆի 1-ին աստիճանի ռուս-հայկական դպրոցի վարիչն էր³⁹:

Բուզլուխցիներն այլուր. 1879 թ. Գանձակի հին գերեզմանոցում է ամփոփվում բուզլուխցի Կյուրեղ քահանա Մելքոնյանի որդին՝ Հակոբ բեկը, 1899 թ.՝ մյուս որդին՝ Արամը, 1920 թ.՝ կինը՝ Ծաղիկը, իսկ 1884 թ.՝ Բուզլուխ գյուղի Մելքոնյանց տոհմից «քաջ Բեկաջնեի» կինը՝ Սոնան⁴⁰:

Կառուցապատում. գյուղը տարածված է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք ձգված լեռնաճյուղի հարավարևելահայաց լանջերին: Ընդհանուր հատկանիշներով հար և նման է երկրամասի հայաբնակ այն բազմաթիվ գյուղերին, որոնք աչքի չեն ընկնում խիտ կառուցապատմամբ, ավելին՝ շատ տներ ունեն տնամերձ այգիներ և բանջարանոցներ:

Ինչպես երևում է 1890 թ. նկարագրությունից, նշյալ ժամանակաշրջանում գյուղի բնակարանների հիմնական մասը դեռևս գլխատուն (հազարաշեն) էր, և միայն փոքր մասն էր (այն էլ՝ հավանաբար ոչ վաղ անցյալում կառուցված) այսպես կոչված «եվրոպական» տիպի (խոսքը քարաշեն, հիմնականում կրկնահարկ, լայն և բազմաթիվ լուսամուտներով, թեք, կղմինդրածածկ տանիքներով տների մասին է). «Բուզլուխը, ինչպես և առհասարակ շատ հայ գիւղեր գտնվում է սարի լանջին: Հետևաբար տների տեղը հարթ չէ լինում: Տներն այսպես են շինված: Գետնի այն մասը, որտեղ պիտի տուն շինեն, փորում, հարթացնում են, տան հիմքը դնում: Պատերը շինում են քարից, մասամբ և հում աղիսից: Խրճիթի քամակի պատի տեղ ծառայում է ուղղաձիգ փորած գետնի մի մասը, կամ թե քամակի պատը շինում են այդ վերջինին բոլորովին կից: Պատերը բարձրացնում են 3-5 արշին, այսինքն մինչև խրճիթի քամակի պատի տեղ ծառայող գետնի մակերևույթը: Պատերի մոտ, խրճիթի չորս անկյուններում ցցում են փայտեայ հաստ սիւներ գերանների համար: Այս սիւների և պատերի վրա մեկը միսի վրա դարսում են հաստ գերաններ: Այդ գերանները այնպես են դարսվում, որ նրանցից կազմվում է քառանկյունի հատած պիրամիդ, որի մեջը դատարկ է լինում: Այդ պիրամի-

դի վերևի փոքրիկ հիմքն է խրճի երդիկը: Հորիզոնաբար զցած գերանների ծայրերը ամրացնում են հատած պիրամիդի չորս կողմերում: Այդ կերպով գերաններից շինած հատած պիրամիդը դրսից ծածկվում է հողով. նրա դրսի կողմն է տանիքը, իսկ նրա պատերի ներսի կողմը – խրճի առաստաղը: ... մեր այժմեան խրճիթների երդիկը, որ իրոք շատ նման է ջրհորի բերանին, հին հայերին և մուսքի տեղ էլ է ծառայելու եղել:

Երդիկաւոր խրճիթներում պատուհան չէ լինում. երդիկն է լուսամտի դերը կատարում: Յատակը ոչնչով (այրած աղիսով կամ տախտակով) չեն ծածկում: Կրակը վառում են ուղղակի յատակի վրա, երդիկի դիմացը: Ծուխը երդիկով և մասամբ էլ դռնովն է դուրս գալիս, բայց այնուամենայնիւ խրճիթից ծուխը միշտ անպակաս է լինում, մանաւանդ փոքրիկ և քամի եղած ժամանակը: Կերակուրը պատրաստում են խրճիթում, երդիկի տակին շինած օջախում: Ընտանիքի բոլոր անդամները այս միակ խրճիթումն են ուտում, նստում, քնում: Ունեւոր տները այս խրճիթի մօտ շինում են և մի առանց երդիկի փոքրիկ սենեակ, գլխատրապետ ուրիշ գիւղից կամ քաղաքից եկող հիւրերի համար: Գիւղում կան տներ և առանց երդիկի, բաղկացած մի քանի սենեակներից: Այդպիսի տների մեծ մասը քարից է շինած: Իւրաքանչիւր սենեակում լինում են 1-3 պատուհան, մէկ բուխարի: Տան երկարութեամբ շինած է լինում և մի սրահ»⁴¹:

Հայտնի է, որ 1912 թ. գյուղն ուներ 1 եկեղեցի, 24 բնակելի տուն, տնտեսական նշանակության 30 կառույց և 6 ջրաղաց⁴²:

Տնտեսություն. բուզլուխցիների ավանդական զբաղմունքը դարեդար եղել է հողագործությունը, սակայն, ինչպես 1890 թ. է նշվել, այդ աշխատանքները դեռևս կատարվում էին հնացած եղանակով. «Գիւղի բնակիչները բոլորն էլ հայ են, պարսպում են երկրագործութեամբ: Երկիրը մշակում են հին, նահապետական ձևով. էլի միևնույն ծանր ու կոպիտ գութանովն են վար անում, հին գերանդիով ցորեն, գարին... հնձում, հին կանոնով կալը կալում, հին հասարակ թիով քամի եղած ժամանակ թեղը քամում, իսկ քամի չեղած ժամանակը՝ ձեռքերը ծալում, վիզը ծռում, նրան սպասում: Երկրագործական կատարելագործված մեքենայ մեր գիւղացուն դեռ յայտնի չէ: Դժմարիտ է, պատահում է տեսնել սրա, նրա մոտ երօպական գութաններ, բայց այդ տեսակ գիւղացիների թիւը շատ սահմանափակ է»⁴³:

Ավելի խտացնելով գույները՝ թղթակիցը Ի դարի սկզբին շեշտել է. «Գիւղացիք վերին աստիճանի տգէտ և ծոյլ մարդիկ են, ոչ մի նորութիւն սրանց համար գոյութիւն չունի. վարում, ցանում, կալում են հին նահապետական ձևերով: Ամբողջ տարին աշխատում են, տքնում են, չարչարում են և միայն հագիւ-հագ տարւայ հացը տանից են անում, այն էլ ոչ բոլորը: Չունին կանոնաւոր բանջարանոցներ, որտեղից կարելի լինէր ստանալ կարտօֆէլ, լոբի և այլն. այդ բոլորը պիտի վերագրել գիւղացուն յատուկ ծուլութեամբ: Եթէ հնար ունենային մի կերպ ապրելու, նրանք գուցէ և ձեռք վերցնէին դաշտային աշխատանքներից: Բայց գիտեն, որ առանց հացի ապրել անկարելի է: ...գիւղից մօտ գտնւած անտառից գիւղացիք օգտւում են շատ անկանոն կերպով, և եթէ այսպէս շարունակւի, կը ոչնչանան անտառները»⁴⁴:

1870 թ. Սբ. Էջմիածնում իրականացվող շինարարական աշխատանքներին օժանդակելու նպատակով գյուղի հասարակությունը հատկացրել է 5 ռուբլի⁴⁵:

38 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 51, ք. 12-14:

39 Նշվ. գործը, ք. 4 և 16 շրջ.:

40 **Еремянц-Гандзакеци С.**, Гандзак: армянские кладбища и церкви, Ереван, 2009, с. 48.

41 **Շ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 1:

42 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 55.

43 **Շ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 1-2:

44 **Պ. Տ. Պ.**, նշվ. թղթակց., «Հորիզոն», 1910, № 193, 2 սեպտեմբերի, էջ 3:

45 «Արարատ», 1870, Դ, էջ 138:



ԲՈՒՋԼՈՒՄ. «Եվրոպական» տիպի բնակելի կիսավեր տուն (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԲՈՒՋԼՈՒՄ. Սբ. Մինաս եկեղեցին հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Հայտնի է, որ 1912 թ. գյուղացիներն ունեին 50 ձի, 150 խոշոր և 400 մանր եղջերավոր անասուն և 150 խոզ⁴⁶:

Պարոն. հակառակ գործադրված ջանքերի՝ երևում է, որ նախախորհրդային տարիներին Բուզլուխում այդպես էլ երբևէ դպրոց չի բացվել⁴⁷:

1909 թ. հունիսի 18-ին Բուզլուխի հայ հասարակությունը Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության խորհրդին է դիմում դպրոց բացելու խնդրանքով, որում մասնավորապես նշվում է. «Բուզլուխ գիւղը (30 տուն) գտնուում է Գանձակի գաւառում: Բուզլուխ գիւղին հարևան է Մանիշ հայկական գիւղը...: Բուզլուխ գիւղի հասարակութիւնը զգալով դպրոցի անհրաժեշտութիւնը և միաժամանակ ի նկատի առնելով, որ շրջակայ դպրոց ունեցող գիւղերը հեռու են Բուզլուխ և Մանիշ գիւղերից 10-15 վերստ, որով հնարատրութիւն չունենք այնտեղ աշակերտ ուղարկել, ամսոյս 14-ին գիւղական ժողով գումարելով միաձայն որոշեց առաջիկայ ուսումնական տարուան Բուզլուխ գիւղումը բանալ միդասեան երկսեռ դպրոց, ուր կարող են յաճախել և հարևան Մանիշ գիւղից աշակերտներ: Հասարակութիւնը պարտաւորուում է հոգալ դպրոցի շինութեան և այլ պէտքերը, բայց անկարող լինելով կանոնատր ուսուցիչ հրաւիրելու դէպքում տարեկան լրիւ ռոճիկ վճարել (400 ռ.), մեզ՝ գիւղի ներկայացուցիչներին յանձնարարեց դիմել

խոնարհաբար խնդրով Կ.Հ. բարեգործական ընկերութեան խորհրդին, որպէսզի տարեկան 250 ռուբլի նպաստ յատկացուի, որը միանգամայն ապահոված կլինի մեր դպրոցի գոյութիւնը»⁴⁸:

Երևում է, որ Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունն այս խնդրանքին չի արձագանքել, քանի որ 1910 թ. ակտուսանքով նշվել է. «...երեխաները մեծանում են առանց տարրական գիտելիքների»⁴⁹:

1920 թ. սեպտեմբերի 15-ից մինչև 1923 թ. հոկտեմբերի 15-ը գյուղում մի մասնավոր տան մեջ գործել է առաջին աստիճանի դպրոց (վարիչ՝ Մնացական Հովհաննիսյան)⁵⁰:

1930 թ. կառուցվում է դպրոցական շենք՝ 4 դասասենյակով և 1 ուսուցչանոցով⁵¹: Ի դեպ, Բուզլուխի՝ 7-ամյա կրթություն ստացած աշակերտներն ուսումը շարունակում էին հարևան Մանաշի գյուղի՝ 1938 թ.-ից միջնակարգի վերածված դպրոցում⁵²:

1970 թ. Բուզլուխի միջնակարգ դպրոցն ուներ 188 աշակերտ⁵³:

Կրթօջախը գործել է մինչև 1991 թ.:

46 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, նույն տեղում:

47 Իհարկե դա չէր նշանակում, քե գյուղում գրագետ անձեր չկային: Օրինակ՝ 1903 թ. մարտի 2-ին Բուզլուխում վախճանվել էր Ներսիսյան դպրոցի 1901/02 ուստարվա շրջանավարտ Հովհաննես Մելքոնյանը («Մշակ», 1903, № 82, 19 ապրիլի, էջ 1):

48 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 306, թ. 17 և շրջ.: Վավերագրի ներքո ստորագրել են Սողոմոն Վարդանյանը, Մարտիրոս Աղաբեկյանը, Միսոն Օսիփյանը, Ներսես Ստեփանյանը, Ջումշուտ Մելքոնյանը, Պետրոս Կարապետյանը և գյուղի հասարակության օգնական Ցական Հարությունյանը:

49 Պ. Տ. Պ., նշվ. թղթակց., նույն տեղում:

50 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 51, թ. 4 և 16 շրջ.:



51 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 326:

52 **Առատանյան Ժ.**, Մանաշիի դպրոցի մասին, «Մշակի դղանջներ», 2005, № 10, հոկտեմբեր, էջ 3:

53 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 29:



ԲՈՒՋԼՈՒԽ. Սր. Միմաս եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԲՈՒՋԼՈՒԽ. Սր. Միմաս եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.) և կտրվածքը դեպի արևելք (չափ.՝ Կ. Ղահրամանյանի, 1987 թ.)

Սր. Միմաս եկեղեցի. գտնվում է գյուղամիջում (N 40°24'53.92", E 046°26'05.61", ծ. մ. 1350 մ):

Եկեղեցու նախնական շենքի հիմնադրման վերաբերյալ պատմական տեղեկություններ հայտնի չեն:

Այն հանգամանքը, որ 1840-1850-ական թվականներին և մինչև 1893 թ. մի քանի վավերագրերում եկեղեցին հիշվում է Սր. Հովհաննես⁵⁴, իսկ 1880-ական թթ.՝ արդեն Սր. Միմաս անվամբ⁵⁵, թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ ընթացքում եկեղեցին հիմնովին վերակառուցվել է, ուստի և օժվել նոր՝ Սր. Միմաս անվամբ:

Ըստ ականատեսի վկայության՝ 1880-ական թվականների վերջերին շինությունը դեռևս փայտածածկ էր⁵⁶:

Ինչ վերաբերում է վերածովածի տեղում կառուցված ներկայիս քարաշեն եկեղեցուն, ապա այն 1910-ական թթ. սկզբների շինություն է. «Ունեին մի հին և խարխուլ եկեղեցի, քանդել են և տեղը նորն են շինում»⁵⁷:

1928 թ. եկեղեցին փակվել է⁵⁸: Խորհրդային տարիներին ծառայել է որպես հացահատիկի մթերանոց և ենթարկվել որոշ ձևափոխությունների: Մասնավորապես քանդել են բարձր բեմը և այն հավասարեցրել աղոթասրահի հատակի մակարդակին:

Հորինվածքով եռանավ բազիլիկ է՝ կառուցված համակ սրբաբառաշ, սպիտակադեղնավուն քարերով (արտաքին չափերն են՝ 16,85 x 9,20 մ):

Քահանա. Բուզլուխ գյուղում պաշտոնավարած ծխատեր քահանաներից հայտնի են ներքոնշյալները.

Հովհաննես Հակոբբեկյան Մելքոնյանց (ծնվ. 1806 թ.). քահանա է ձեռնադրվել 1827 թ. դեկտեմբերի 2-ին Գանձասարի վանքում: Ուսանել է քահ. Միմոն Տեր-Բարաղամյանի մոտ⁵⁹: Քահանայագործել է 1827 թ.-ից մինչև մահը՝ 1871 թ.⁶⁰: Հովվում էր նաև հարևան Մանաշիդ գյուղին: 1857 թ. ուներ 8 զավակ՝ Ահարոն, Մկրտիչ, Կարապետ, Սարգիս, Գևորգ, Գալուստ, Մարիա և Սոնա⁶¹:

54 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47 և գ. 18, գ. 33; ֆ. 56, ց. 12, գ. 531-533, 538, 542; ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 196:

55 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 251:

56 Նույն տեղում:


57 Պ. Տ. Պ., նշվ. թղթակց., «Հորիզոն», 1910, № 193, 2 սեպտեմբերի, էջ 3:

58 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, ք. 12:

59 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 538:

60 Նույն տեղում, գ. 531-533, 538, 542: Տե՛ս նաև Վառերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 210:

61 Նույն տեղում, գ. 542:



ԲՈՒՋԼՈՒԽ. Սբ. Վարդանանց մատուռը և նրա որմունք ազուցված բեկորված խաչքարերից մեկը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Հայտնի է, որ 1872 թ. բնակիչները ցանկանում էին գյուղի համար քահանա ձեռնադրել հանգուցյալ տեր Հովհաննեսի որդուն՝ դպիր *Ահարոնին* (ծնվ. 1840 թ.)⁶²:

Մինաս Հակոբբեկյան Մելքոնյանց (ծնվ. 1825 թ.) քահանան հովվում էր 1871-1874 թթ.⁶³:

1893 թ. Հովհաննես քին. Մելքոնյանցը, Մինաս Հակոբբեկյան Մելքոնյանցը և Կյուրեղ Մելքոնյանցն արդեն հանգուցյալ էին⁶⁴:

62 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6128, ք. 1 և ց. 12, գ. 542:

63 «Արարատ», 1871, Ը, էջ 484: 1873, ԺԲ, էջ 486: Տես նաև ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 129: Ուներ 3 որդի՝ Մովսես, Ջաքար և Արշակ: **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 88:

64 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 196-197:



ԲՈՒՋԼՈՒԽ. խաչքարի բեկոր Սբ. Վարդանանց մատուռից ոչ հեռու (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Նույն քվականին գյուղն ուներ մեկ քահանա⁶⁵:

ԺԹ դարի 90-ական թթ. բնակիչների հոգևոր պետքերը հոգում էր Նոր Պարիսի քահանան⁶⁶:

1910⁶⁷ և 1912⁶⁸ թթ. քահանա չուներ:

1893 թ. դպիրներն էին 53-ամյա Ահարոն Տեր-Հովհաննիսյան Մելքոնյանցը և 65-ամյա Մելիքսեդեկ Հակոբբեկյան Մելքոնյանցը⁶⁹:

Սբ. Օջախ մատուռ-ուխտատեղի. գտնվում էր եկեղեցուց մոտ 50 մ հարավ-արևելք: Թաղակապ շինություն էր:

Սբ. Վարդանանց մատուռ. նույնպիսի համբավ ուներ նաև գյուղամիջի՝ հնավանդ սրբավայրի տեղում նոր ժամանակներում կառուցված Սբ. Վարդանանց մատուռը, որի որմներում առկա էին ԺԷ-ԺԸ դդ. բնորոշ խաչքարերի բեկորներ (նրանցից մեկը՝ 43 x 40 սմ՝ մատուռի մուտքի և նույն ճակատից բացված լուսամուտի միջև):

Ուղղահայաց կտրվածքով մեկ այլ խաչքար էլ պահպանվում էր մատուռից ոչ հեռու՝ մեկ այլ շինության մուտքի մոտ (85 x 24 x 20 սմ):

Խաչքար. ազուցված էր 1882 թ. կառուցված մի տան պատին. «...ոչ մեծ, բայց գեղեցիկ խաչքար է, որը մի տեսակ ճյուղավորված ծառ է հիշեցնում»⁷⁰:

Աղաբեկանց խաչ սրբատեղի. գտնվում էր գյուղամիջում. «Դա մոտավորապես 4 x 6 մետր չափերով կանգուն կառույց է՝ կամարածև քարե տանիքով: Մուտքի մոտ շիրմաքար հիշեցնող մի խոշոր քար կա՝ խաչի պատկերով»⁷¹:

Գտածոներ. 1980-ական քվականներին գյուղում հայտնաբերվել են պղնձե ամաններ: Դրանցից մեկին գրված էր. «Վարթանի որդի Սարգիս»⁷²:

65 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, հ. Բ, էջ 335:

66 **Բարխուսարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 251:

67 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 227 շրջ.:



68 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 361 շրջ.:

69 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 196: Տես նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 97-98:

70 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 79:

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում:




ԲՈՒՋԼՈՒԽ. Սբ. Մինաս մատուռն արևմուտքից, հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից, հատվածներ հարակից գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԲՈՒՋԼՈՒՄ. 1551 թ. խաչքար Սբ. Մինաս մատուռի մուտքի մոտ: Տապանաքար և խաչքարեր մատռանը հարակից գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Սբ. Մինաս մատուռ և գերեզմանոց. գտնվում են գյուղի հարավային եզրին (N 40°24'24.27", E 046°25'45.73", ծ. մ. 1400 մ):

Տակավին ԺԹ դարի վերջերին մատուռի շրջակայքում եղել են ավելի քան երկու տասնյակ դարավոր հացենիներ, սակայն մեր այցելության ժամանակ դրանց հետքն իսկ չկար. «Բուզլուղ գիւղում, Ս. Մինաս անուանուած մատուռի մօտ կան քսանից ատելի վիթխարի հացէնիներ, որոնք նոյնպէս պաշտում են, և որոնց մի տերևն անգամ մեծ մեղք են համարում կտրել: Պատմում են, թէ մի անգամ մի թուրք ձեռնափայտ է կտրել այս ծառի ճիւղերից, բայց մինչև տուն հասնելը լեզուն բռնուել է և մի կողմը թուլացել: Հասկանալով, որ այդ պատիժը սուրբ ծառից է, նա խոստանում է մի արջառ մատղել, եթէ առողջանայ, և երբ առողջանում է՝ կատարում է իւր խոստումը»⁷³:




ԲՈՒՋԼՈՒՄ. Սբ. Մինաս մատուռի հատակագիծը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Մատուռը միանավ, թաղածածկ հորինվածքով, արևմուտքից բացված միակ մուտքով, առանց ավանդատների մի պարզ եկեղեցի է՝ կառուցված անմշակ քարով և ցածրորակ կրաշաղախով: Մուտքի մոտ կանգնեցված էր 1551 թ. գեղաքանդակ խաչքար.

Ստորին մասում՝ վարդյակի երկու կողմում՝ ելնդագիր 1 տող.

ԹՎ(ին) Ռ. (1551):

Հրատ. առաջին անգամ:



Տեղահան, տապալված կամ էլ հողի մեջ խրված վիճակում 1987 թ. դրությամբ խաչքարեր էին պահպանվում նաև եկեղեցու շուրջը (հատկապես հարավային և արևմտյան կողմերում) տարածված միջնադարյան գերեզմանոցում: Նույն վայրում առկա էին նաև տապանաքարեր: Գերակշռում էին անմշակ տապանասալերը, իսկ մնացածներն ուղղանկյունաձև մշակված գերեզմանաքարեր էին:

Գերեզմանոցներ. առաջինը գտնվում էր գյուղի հյուսիսային եզրին (N 40°24'57.51", E 046°26'04.92", ծ. մ. 1355 մ):

73 Լալայան Ե., Գանձակի գաւառ, «Ազգագրական հանդէս», 1900, գիրք 2, էջ 337:



ԲՈՒՋԼՈՒԽ. հատված գյուղի հյուսիսային եզրի գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Ըստ առկա գերեզմանաքարերի ոճական առանձնահատկությունների՝ թվագրվում է ԺԵ-Ի դարերով: Շիրմաքարերի զգալի մասն անմշակ սալատապան է: Միայն ԺԹ-Ի դարերին վերաբերող ավելի քան 250 տապանաքարերն են, որ սրբատաշ են, ուղղանկյունաձև, հիմնականում՝ նաև արձանագիր:

Երկրորդ գերեզմանոցը գտնվում էր Բուզլուխի հարավային կողմում՝ գետի աջափնյա բարձր բլրի գագաթին: Պահպանված մի քանի խաչքարեր անարձանագիր են, զարդաձևերով բնորոշ Ժ-ԺԲ դարերին: 1980-ական թթ. հնավայրում կատարված մասնակի ավերումների հետևանքով զգալի թվով խաչքարեր տեղահան են արվել կամ կտրատվել:

Գերեզմանոց Գյունե վայրում. տարածվում էր գյուղից հյուսիս՝ Բուզլուխ-Մանաշիղ խճուղու աջ կողմում՝ ձորակի ձախ սարավանդին (N 40°25'53.85", E 046°27'08.04", ծ. մ. 1269 մ):



ԲՈՒՋԼՈՒԽ. հատված Գյունե վայրում գտնվող գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Առկա էին մեծաթիվ անտաշ սալաքարեր՝ առանց արձանագրությունների կամ քանդակների: Հնավայրը կարելի է թվագրել ԺԵ-ԺԸ դարերով:

Քարե կամուրջ. գտնվում է գյուղի հյուսիսային կողմում՝ Գյունե վայրում տարածվող գերեզմանոցից շուրջ 300 մ հյուսիս՝ Փոքր Կյուրակ գետի խոր և խիստ նեղ մասում՝ խարսխված երկու ավերի ցցված ժայռերին (N 40°26'09.50", E 046°27'44.78", ծ. մ. 1145 մ)⁷⁴:

Միաթռիչք է և շրջակա բնակիչներին հայտնի էր Քարե կամուրջ անվամբ: Թռիչքի երկարությունը 3,4 մ է, անցուղու լայնությունը՝ 3,7 մ, իսկ բարձրությունը ջրի մակարդակից՝ 8,7 մ: Կամրջի կամարի ճակատային երկու շարք անկյունաքարերը սրբատաշ են, մնացածն իրականացված է անմշակ կամ կիսամշակ քարով: Թաղը կիսաշրջանաձև է: Ըստ կառուցողական առանձնահատկությունների՝ բնորոշ է ԺԶ-ԺԷ դարերին:

Աղբյուր. 1910 թ. նշվել է. «Գիւղում կան մի քանի սառնորակ աղբիւրներ, բայց մատուած են անուշաղբութեան, քանդած են»⁷⁵:

Առավել հայտնի էր Սոնատնից սկիզբ առնող Տզգանի տանձի տակի աղբյուրը⁷⁶:

Գյուղից 2 կմ հյուսիս-արևելք գտնվում էր Ղչաղին, 2 կմ հարավ-արևելք՝ Պղնձբեղանց, իսկ 1,5 կմ արևմուտք՝ Վարար աղբյուրները:

Փառքի (ՀՄՊՁ) հուշարձան. գյուղի հյուսիսարևելյան եզրին 1970-ական թթ. կառուցվել է Մեծ հայրենականում զոհված կամ անհետ կորած բուզլուխցիների հիշատակը հավերժացնող հուշարձան⁷⁷, որի ճակատին արձանագրված են 44 համազյուղացիների անունները (Բաբայան Գ. Բ., Գասպարյան Վ. Գ., Գևորգյան Պ. Հ., Գևորգյան Ս. Հ., Գևորգյան Հ. Հ., Գևորգյան Ս. Հ., Եղյան Բ. Ս., Եղյան Վ. Լ., Խաչատրյան Հ. Պ., Խաչատրյան Ս. Օ., Ղազարյան Վ. Յ., Սկրտումյան Գ. Ս., Սկրտումյան Ս. Ս., Սկրտումյան Ռ. Ս., Մելքոնյան Ռ. Ջ., Մելքոնյան Հ. Ջ., Մելքոնյան Բ. Պ., Մելքոնյան Ե. Հ., Մելքոնյան Տ. Ի., Մինասյան Ս. Յ., Մովսեսյան Շ. Ս., Մովսեսյան Ռ. Ս., Կարապետյան Ա. Պ., Կարապետյան Լ. Ս., Համբարձումյան Բ. Բ., Հարությունյան Ս. Բ., Հարությունյան Ս. Բ., Հարությունյան Հ. Խ., Հովսեփյան Հ. Ս., Հովսեփյան Հ. Ս., Հովհաննիսյան Հ. Ս., Ղազարյան Կ. Ա., Ղազարյան Գ. Մ., Ստեփանյան Ս. Տ., Ստեփանյան Ա. Ս., Ստեփանյան Գ. Հ., Ստեփանյան Ս. Ս., Ստեփանյան Հ. Հ., Մաֆարյան Ա. Մ., Վարդանյան Ս. Ս., Վարդանյան Գ. Ս., Վարդանյան Ա. Ս.):

Ղլատեղ (բերդատեղ). գտնվում է գյուղից մոտ 4 կմ հյուսիս-արևելք. «...հին բերդատեղ է, ինչպես որ հուշում են անունը և ձորը լցված քարերը: Ի դեպ, հողն այստեղ սողքային է, հավանաբար սողքի հետևանքով ավերվել է շինությունը, քարերը լցվել են ձորը. այդպիսի քարերի կուտակումն այստեղ նման ենթադրության հիմք է տալիս»⁷⁸:

Դամբարաններ. Ղլատեղի մոտ սողանքի հետևանքով Գյաղուկ բարձունքի «...գագաթը կիսվել է, բացվել են հին գերեզմաններ, քարե դագաղներ»⁷⁹:

Սոնատուն. գտնվում է գյուղից հարավ-արևելք. «Այդտեղ խոշոր ժայռաքեկորներ են կուտակված, որոնց արանքում, ճեղքերի

74 Կամրջի մասին տես նաև **Կարապետյան Ս.**, Արցախի կամուրջները, Երևան, 2009, էջ 96:

75 **Պ. Տ. Պ.**, նշվ. քղբակց., «Հորիզոն», 1910, № 193, 2 սեպտեմբերի, էջ 3:

76 **Նաբաքյան Բ.**, Շահումյանի ջրային պաշարները, «Մոսավի դոկանցներ», 2015, № 10, դեկտեմբեր, էջ 4:



77 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 420-421:

78 Նշվ. աշխ., հ. Ա, էջ 43:

79 Նույն տեղում («Պատմում են, որ հետաքրքրասերները սալաքարերի արանքով մտնում էին ձեռքները, հանում մարդկային ոսկորներ»):



ԲՈՒՋԼՈՒԽ. դրվագներ Քարե կամրջից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)



ԲՈՒՋԼՈՒԽ. Քարե կամրջի հոսքընդդեմ ճակատը և կտրվածքը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

ԲՈՒՋԼՈՒԽ. Սեծ հայրենակամում զոհված կամ անհետ կորած 44 համազյուղացիների հիշատակին կանգնեցված հուշարձանը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԲՈՒՋԼՈՒԽ. ԺԹ դարից ավանդված թողակապ կիսավեր շինություններ (թերևս ջրաղացներ) գյուղի արևելյան եզրին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

խորքում կլոր տարին սառույց է լինում, որտեղից հնում տարվա տաք եղանակներին նույնիսկ հեռավոր գյուղերից գալիս, սառույց էին տանում (խորջինով) հիվանդի համար կամ այլ նպատակով (փաթաթելով բրդե շորերի մեջ: Այդտեղ, ժայռաբեկորների արանքից հորդում է Ցորցոտ (սառը) անունով աղբյուրը»⁸⁰:

Ջրաղաց. գյուղի կենտրոնական թաղի հարավային եզրին՝ գետի ձախ ափին՝ կամրջի մոտ, գտնվում էր Պիծի Հանեսանց ճաղացը, որը գործել է մինչև գյուղի հայաթափումը⁸¹:

Մանրատեղանուններ. գյուղում և գյուղամերձ-գյուղապատկան հանդամասերում հայտնի էին հետևյալ մանրատեղանունները՝ Գյուլին դաշ, Գյուլատեղ, Դմորմասար (Դող սար)՝ գագաթին խաչքար-սրբատեղի, Կալեր, Ղալի տեղ, Ղաչաղի աղբյուր, Ղշլաղ, Մեծ Հարթ, Միջին խաչ, Ջանբազ, Սուլուքնաձով, Տանձուտ, Ուղտաբար, Փոքր խաչ, Փունփուլխ տանձի տափ⁸²: Նաև՝ Առվին հարթ թաղ, Առվին ձոր գետակ, Բաբայանների խաչ՝ խաչքար-սրբատեղի, Բրուսին քերձի ջուր, Ժանգին թաղ, Գլլկոտ, Մեծ Կապ, Մնջեցոնց բաղեր, Երեշին քերձ, Շուղունց բաղեր, Չափար դայա (գյուղատեղի՝ 1,8 կմ հյուսիս-արևմուտք), Պիշնատեղ թաղամաս (հարավարևմտյան կողմում), Սրանոց, Վրթանանց Ցականի (Մնացական Վարդանյան) ջրաղաց, Տաք ջուր⁸³:

ԲԱՇՂՇԼԱՂ

Բուզլուխից շուրջ 5 կմ հարավ՝ Դող սարի ստորոտում՝ Փոքր Կյուրակ գետակի ափին՝ վաղուց ամայացած հին հայկական գյուղատեղիի տարածքում, 1930 թ. բնակություն է հաստատում Քարվաճառից եկած 3 թուրք ընտանիք: Տարիների ընթացքում բազմանալով՝ նրանք գոյացնում են Բաշղշլաղ կոչված գյուղը, որը 1990 թ. ուներ 327 բնակիչ¹:

Գյուղեզրին՝ Փոքր Կյուրակ գետի վրա, պահպանվում էին միջնադարյան կամրջի ավերակները:

ԳԱՂԹՈՒՏ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահունյան (Ներքին-շեն) ավանից 6,2 կմ հյուսիս-արևելք՝ Սևջուր գետի ձախ ափին՝ կից Ղարաչինար գյուղին հյուսիս-արևմուտքից: Ծովի մակերևույթից բարձր է 710-740 մ:

Անվանում. ըստ բառակազմության՝ գյուղանունը նշանակում է փոքրիկ գաղթավայր:

80 Նույն տեղում:

81 Նշվ. աշխ., հ. Ա, էջ 42:

82 Նշվ. աշխ., հ. Ա, էջ 42-45, 48:

83 Ըստ բռնագաղթված բուզլուխցիների վկայությունների:

1 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 328: Ըստ Բորիս Ղլեշյանի՝ նախքան բռնագաղթը գյուղն ուներ մոտ 90 բնակիչ (ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, թ. 2):

Վկայվել է նաև Գաղթուք, Գաղտուտ, Հայոց Ջեյվա, Ղահթուտ, Ղահտուք, ինչպես նաև Ղաբրիքենդ, Ղարիքբյանդ (տեղացիների արտասանությամբ՝ նաև Ղաբրիքյանդ)¹ անվանաձևերով:

Համաձայն Կ. Ղահրամանյանի՝ Գաղթուտի անունն «Իրականում Հաղթթուք է եղել. թթենիներով հայտնի այդ գյուղի անունը, Ռուսաստանի կազմի մեջ մտցվելուց հետո ռուսական տառադարձությամբ գրվել է Գաղտուտ: Թուրքերն էլ դա «կապել» են գաղթել բառի հետ, անվանել Ղարիքբյանդ, դա էլ իր հերթին հնչյունափոխվել, դարձել էր «Ղաբրիքյանդ»: Կարող է առաջին հայացքից մեկ տառի տարբերությունն էական չհամարվել, սակայն Արցախի հետ կապված մի տառն անգամ քաղաքական էական երանգ է պարունակում: Դրանով հին հայկական գյուղը կարող է ներգաղթյալների բնակավայր համարվել»²:

Պատմություն. գյուղի պատմության մասին գրավոր հիշատակությունները կցկտուր են:

Հայտնի է, որ ԺԹ դարի վերջին Գաղթուտը Թողան և Հայի Պարիս գյուղերի հետ մեկտեղ կալվածատեր Ալեքսանդր Մելիք-Բեգլարյանցի սեփականությունն էր³:

Բնակչություն. նրա բնակիչները գավառի բոլոր մյուս հայաբնակ գյուղերի նման բնիկներ են⁴:

Կալվածատեր մելիքներից 1874 թ. հիշվում են պաշտոնաթող փոխգնդապետ 75-ամյա Թեյմուրազ բեկ Փրիդոնյան Մելիք-Բեգլարյանցը (որդիներն էին Սարգիսը և Ալեքսանդրը) և 44-ամյա Աղաբեկ Առուստամ-Բեկյան Մելիք-Շահնազար Շաֆերյանցը (որդիներն էին Միքայելը, Թեմուրը և Ալեքսանդրը)⁵:

Գյուղին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումից երևում է, որ ԺԹ դարի վերջերից մինչև Ի դարի սկիզբը Գաղթուտի բնակչության թվաքանակը շարունակաբար աճել է.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1886 ⁶	13	47	40	87
1889 ⁷	11	45	42	87
1893 ⁸	14	46	31	77
1898 ⁹	14	48	40	88
1901 ¹⁰		63	52	115
1902 ¹¹		64	53	117
1905 ¹²	19	70	58	128
1908 ¹³		78	66	144

1 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 27:

2 **Ղահրամանյան Կ.**, Արցախ. խեղաթյուրված և անտեսված հարցեր, Երևան, 2013, էջ 26-27:

3 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 21-22:

4 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 245:

5 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 108: Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 85:

6 Свод..., с. 82-83. Բացի հայերից՝ նույն թվականին գյուղում բնակվում էր նաև 1 տուն քաթար (1 անձ):

7 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., նույն տեղում: Ի դեպ, ըստ արխիվային մի վավերագրի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 45-46)՝ նույն թվականին գյուղն ուներ 84 (44-ը՝ ար., 40-ը՝ իգ.) բնակիչ:

8 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, հ. Բ, էջ 335:


9 **Լալայեան Է.**, Գանձակի գառառ, «Ազգագրական հանդես», 1899, գիրք Ե, էջ 331:

10 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, թ. 241-242: Տե՛ս նաև Վալերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 409:

11 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, թ. 118-119:

12 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, թ. 140-141: Տե՛ս նաև **Ա.Ռ.**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.), Երևան, 1907, էջ 325, սակայն ըստ մատուցողների՝ 25 տուն հայ:

13 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, թ. 224-225: Այլ տեղեկությունների համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 182 բնակիչ (Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, с. 219), նաև՝ 22 տուն՝ 113 (62-ը՝ ար., 51-ը՝ իգ.) բնակիչ (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22):



ԳԱՂՈՒՏ. գյուղի գլխավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի՝ 2009 թ. արբանյակային լուսանկարի (զրաֆիկական մշակումը՝ Ա. Դակոբյանի, 2018 թ.)

Գաղթուտի տնատերերի ցանկը (կազմող՝ Գերասիմ Վարդանյան)

- | | | |
|---|-----------------------|-----------------------|
| <i>Գետի մոտից սկսած (գյուղի սկիզբը)</i> | | |
| 1 Ալյոշ Մարյանյան | 11 Համլետ Եղյան | 22 Ժորա Հակոբյան |
| 2 Հանո Կառավարիչյան | 12 Մամիկոն Եղյան | 23 Մելքում Մելքումյան |
| 3 Մուխի Հովսեփյան (գումնաչի) | 13 Շուրա Եղյան | 24 Արարատ Մարյանյան |
| 4 Մեղրակ Եղյան | 14 Կոլի Դավթյան | 25 Ջարմիկ Նալբանդյան |
| 5 Բագրատ Սարգսյան | 15 Իշխան Դավթյան | 26 Սաշա Մակարյան |
| 6 Ռուբեն Եղյան | 16 Գուրի Դավթյան | 27 Թարխան Վանյան |
| 7 Միմիկ Եղյան | 17 Ռաֆիկ Հակոբյան | 28 Ժորա Վանյան |
| 8 Խուրշուդ Եղյան | 18 Կանո Հակոբյան | 29 Բենիկ Սարգսյան |
| 9 Հրանտ (Քյորիա) Եղյան | 19 Սերոժ Կարաքեշիշյան | 30 Հարություն Դլեշյան |
| 10 Արկաղյա Եղյան | 20 Ջավադ Հակոբյան | 31 Վովա Դլեշյան |
| | 21 Ռուդիկ Ավագյան | 32 Չատի Դլեշյան |

33 Ռոմիկ Ղլեչյան
 34 Եղիշ Վանյան
 35 Սուրեն Վանյան
 36 Մադաթ Հակոբյան
 37 Տիգրան Հովսեփյան, քե՞ Կարապետ-
 յան+որդին՝ Արմենակը
 38 Սահակ Ասրյան
 39 Ռոմիկ Խուրյան
 40 Աշոտ Հակոբյան
 41 Ժորիկ Նալբանդյան
 42 Նորիկ Նալբանդյան
 43 Ալբերտ Հակոբյան
 44 Անդրանիկ Նալբանդյան
 45 Արմո Նալբանդյան
 46 Հրաչիկ Խուրյան
 47 Լյուվա Եղյան
 48 Ամո Նալբանդյան
 49 Միշա Շահնազարյան

Դեպի վեր՝ գյուղի կենտրոնը

50 Բալարեկ Խուրյան
 51 Բալարեկ Ասրյան
 52 Գրիշա Ասրյան
 53 Վարդանուշ Նալբանդյան+որդին՝ Մակիչ
 Նալբանդյանը
 54 Մարտո Մարյանյան
 55 Վանիկ Մարյանյան
 56 Փառանձեմ Հակոբյան
 57 Միշա Խուրյան
 58 Հայկազ Հակոբյան
 59 Փրոնձիկ Ղլեչյան
 60 Մանվել Ավագյան (Այա Մանուչարյան)
 61 Ռոբերտ Մանվելի Ավագյան
 62 Վլադիմիր (Վալոդիկ) Մանվելի Ավագյան
 63 Մալխաս Սահակյան
 64 Իսակ Շահնազարյան
 65 Դավիթ Դավթյան

66 Գալեն Ասրյան
 67 Ռուբեն Ղլեչյան
 68 Բորիկ Լ. Ղլեչյան
 69 Միշիկ Ղլեչյան
 70 Մարոս Ասրյան
 71 Բենիկ Ասրյան
 72 Բահատուր Խուրյան
 73 Վարսենիկ Ղուկասյան+որդին՝ Ռոբերտ
 Ղուկասյանը
 74 Դարիք Մարգարյան
 75 Լիտվա Սահակյան
 76 Մարտիկ Դավթյան
 77 Բենիկ Ղլեչյան
 78 Աշոտ Եղյան
 79 Դերո Հակոբյան
 80 Բենիկ Ղլեչյան¹

¹ **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Գ, էջ 74-76:

1909 ¹⁴		82	70	152
1912 ¹⁵	22	51	55	106
1915 ¹⁶				123
1917 ¹⁷	25			263
1918 ¹⁸	52	143	132	275
1925 ¹⁹	30			240
1970 ²⁰	77	137	162	299
1992 ²¹				380

Հայտնի է, որ Մեծ եղեռնը վերապրած արդահանցի Անտոն Տեր-Հովհաննիսյան-Անտոնյանը որդու՝ Մինասի հետ նախ հաստատվում է Գաղթուտում, ապա Ներքիշենում²²:

1920 թ. դրությամբ այստեղ էր բնակվում Շատախի Բաղդ գյուղից սերող Մեծ եղեռնը վերապրած 8 տուն (21 շունչ) հայ գաղթական²³:

Մեծ հայրենականում զոհվել կամ անհետ կորել է 21 գաղթուցի²⁴:

Գյուղի անկման օրը՝ 1992 թ. հունիսի 13-ին, և պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում գաղթուցիներից զոհվել են կամ անհետ կորել Դարիք Մակիչի Հակոբյանը, Ժորիկ Ջավադի Նալբանդյանը (գյուղի անկման օրը), Սերգեյ Կարաքեչիյանը (1992 թ. հունիսի սկզբներին՝ գրադից), Անդրո Ջավադի Նալբանդյանը (1992 թ. գարնանը՝ գրադից), 17-ամյա աշխարհագրային Գագիկ Արմենակի Նալբանդյանը (1992 թ. գարնանը), Բալարեկ Սահակի Ասրյանը, Դոմիկ Հայկազի Ասրյանը, Ծաղիկ Ասրյանը, Գեղեցիկ Մարգարյանը, աշխարհագրային Վալերիկ Խուրյանի Եղյանը (մնացել են գյուղում), Մարոսյա Ասրյանը (նահանջի ճա-

նապարհին), Ռազմիկ և Մալեն Հակոբյան ամուսինները (մնացել են Գյուլիստանում) և Արթուր Հակոբյանի երեք ամսական գավակը (շնչահեղձ է եղել նահանջի ճանապարհին)²⁵:

1992 թ. ապրիլի 10-ին զոհվել է նաև ազատամարտիկ Զինիկ Անդրանիկի Նալբանդյանը²⁶:

Ազգատոհմեր. գյուղաբնակ ազգատոհմերն են՝ Ջուլիականը (Հակոբյաններ), Եղունք (Եղյաններ), Ղլեչունք (Ղլեչյաններ), Խուրունք (Խուրյաններ), Հյուրունք (Դավթյաններ), Ասրունք (Ասրյաններ), Մարյանանք (Մարյանյաններ), Դարաբաղունք (Վանյաններ), Նալբանդանք (Նալբանդյաններ), Աղաբեկունք (Շահնազարյաններ), Մելքունյան, Հովսեփյան, Ավագյան, Մարգարյան, Խաչատրյան, գետաշենցի Կառավարիչյան, Արևմտյան Հայաստանից գաղթական Կարաքեչիյան (ըստ ամենայնի՝ ազգանունը վերցրել է ծննդավայր Արծկե գավառի Կարաքեչիչ գյուղից)²⁷:

Կառուցապատում. գյուղի հատակագծի առանցքն էին կազմում մոտ 0,5 կմ երկարությամբ միակ գլխավոր փողոցի երկու կողմերում գտնվող բնակելի և տնտեսական նշանակության շինությունները: 1912 թ. բնակավայրն ուներ 22 բնակելի և տնտեսական բնույթի 24 կառույց և 2 ջրաղաց²⁸:

Տնտեսություն. գյուղատնտեսության գլխավոր ճյուղերն էին հողագործությունն ու այգեգործությունը:

1912 թ. գյուղացիներն ունեին 3 ձի և 38 խոշոր եղջերավոր անասուն²⁹:

1915 թ. գյուղապատկան էին 20 դեսյատին այգի և 72 դեսյատին վարելահող³⁰:

Ջրաղաց. արդահանցի Անտոն Տեր-Հովհաննիսյան Անտոնյանը Գաղթուտում կառուցում է Լրգյոզանց ջրաղացը³¹:

Դպրոց. 1970 թ. գյուղում գործում էր տարրական դպրոց³²:

Եկեղեցի. սակավաբնակ գյուղում երբևէ եկեղեցի չի կառուցվել: Գաղթուցիներն օգտվել են հարևան Ղարաչինար գյուղի եկեղեցուց:

¹⁴ ՀԱԴ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 764, ք. 242-243:

¹⁵ Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52. Համաձայն նույն թվականի մեկ այլ տվյալի (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 330)՝ գյուղն ուներ 176 (94-ը՝ ար., 82-ը՝ իգ.) բնակիչ:

¹⁶ ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 15 շրջ.:

¹⁷ ՀԱԴ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4 շրջ. (Արամայիս Մ. Տեր-Դանիելյանի ֆոնդ):

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, ք. 93: Տե՛ս նաև **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղայան Գ.**, նշվ. աշխ., էջ 139:

²⁰ **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 27:

²¹ ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

²² **Տեր-Հովհաննիսյաններ Բենիկ և Լենա**, Հայկազ ապան, «Մոսվի դոկամենտեր», 2003, № 12, էջ 3:

²³ **Թերլեմեզեան Ե.**, Վիճակագրյց Գանձակի շրջանի տանկախայ գաղթականութեան, «Հայաստանի ձայն», 1920, № 9, 1 փետրուարի, էջ 2; № 11, 6 փետրուարի, էջ 2:

²⁴ **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 421-422:

²⁵ Նշվ. աշխ., էջ 665:

²⁶ Նույն տեղում:

²⁷ **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 344-345:

²⁸ Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

²⁹ Նույն տեղում:

³⁰ ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 15 շրջ.:

³¹ **Տեր-Հովհաննիսյաններ Բենիկ և Լենա**, նշվ. հոդվ., «Մոսվի դոկամենտեր», 2003, № 12, էջ 3:

³² **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 27:



ԳՅՈՒԼԻՍՍԱՆ. գյուղական տեսարաններ (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ.)

Հանդի չինարի ուխտատեղի. Գաղթուտի հյուսիսարևմտյան մասում գտնվող տարածքը հայտնի էր Չինարին տակ, իսկ այդտեղ տնկված 15 մետրից ավելի բարձրությամբ և 2 մետրից ավելի լայնությամբ ծառը՝ Հանդի չինարի անվամբ: Բնի մի մասն այրվելու պատճառով առաջացել էր խոռոչ, որտեղ տեղավորվում էր 4-5 մարդ: Գյուղացիների համար ծառայում էր որպես ուխտատեղի (մոմ էին վառում)³³:

Գերեզմանոց. Գաղթուտի փոքրածավալ գերեզմանոցում 1987 թ. դրությամբ պահպանվում էին ԺԹ-Ի դարերին վերաբերող արձանագիր տապանաքարեր:

Մանրատեղանուններ. հիշվում են հետևյալները՝ Քրատակ, Քրատակի կամուրջ, Քրատակի աղբյուր, Ղուրուղ, Գյուրգյուռ, Ճամբոյան, Տակի թորոն (Չլլան), Ասրունց ձոր, Հանդի չինարի, Պատած, Խնձորուտ, Սիջավար, Աղվեսի յալ, Մոխրատանձի տակ, Երբորդ ձոր, Երկրորդ ձոր, Բաղդին լոքածը, Քիչիկ-Ըկուփանց աղբյուր, Գյանջու հղեց, Տակի հղեց, Ճաքած քերծ, Արաբօղլի, Գյաջխանա, Շոր ջուր, Շոն քար, Ղաջղալ, Կոլին-թոլիլած, Մուխին յալ, Հիդրոստանցի և Աջին ձոր³⁴:

ԳՅՈՒԼԻՍՍԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահունյան (Ներքի-շեն) ավանից ուղիղ գծով 7, իսկ ճանապարհով՝ 20 կմ հարավ՝ Մռավ լեռան հյուսիսարևելյան կողմում՝ Ինջա գետի ձախ ձորալանջերին: «Խաչի գատուկից անցնելով, ճանապարհը հետզհե-

տե ցածանում է դեպի մի խոր ձոր, որի մեջ գտնվում է Գյուլիստան գյուղը»¹:

Անվանում. հնարավոր է, որ գյուղը նախապես կոչված լիներ Վարդուտ, սակայն ներկայիս Գյուլիստան անունն էլ բավականաչափ հին է: Համենայն դեպս, գրավոր աղբյուրներում այն առաջին անգամ հիշվում է 1466 թ.-ից և միաժամանակ շեշտվում, որ գյուղանվան հայերեն թարգմանությունն է Վարդուտ. «...ի գեղս որ կոչի Գյուլիստան, որ է Վարդուտ»²:

Պատմություն. երկրամասի պատմական հարուստ անցյալ ունեցող գյուղերից է: Վաղագույն հիշատակություններից մեկը վերաբերում է 1466 թ., երբ գրիչ Հակոբը «...ի հայրապետութեան տեսան թոմայի Աղուանից կաթուղիկոսի, ի խնդրոյ Բարիոզ կրանատրի»³, տեղում հեղինակում է ձեռագիր Մաշտոց:

Գյուլիստանը գավառի արդյունավետ գրչօջախներից էր մաս ժԷ դարում: Հայտնի են, օրինակ, 1681 և 1686 թթ. ստեղծված Ավետարանն ու Մաշտոցը (գրիչ՝ Եսայի երեց)⁴, Դավիթ գրչի՝ 1689

1 Բաֆֆի, Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1963, էջ 586: Նաև՝ «Գյուլիստան գյուղը, որի անունով կոչվում է Գյուլիստանի մահալը, գտնվում է կարծես մի խոր կաթսայի մեջ, որի չորս կողմից բարձրանում են անտառապատ լեռներ, որպիսի են Գոգքափա, Կարմիր-խաչ լեռը, Ղազուն տուրմաշ և Մռավի շարունակությունը կազմող սարերը» (Բաֆֆի, նույն տեղում):

2 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Գ, Երևան, 1967, էջ 446 (այսուհետ՝ ԺԵԳ, համապատասխան էջերով): Տե՛ս նաև Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1958, էջ 246 (այսուհետ՝ ԺԵԲ, համապատասխան էջերով):

3 ԺԵԳ, էջ 446: Տե՛ս նաև ԺԵԲ, էջ 246:

4 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 1174-1175, ձեռ. № 4228: Մինասյան Թ., Արցախի Ջրաբերդ գավառի ձեռագրական ժառանգությունը, «Բանբեր Մատենադարանի», 2015, № 22, էջ 205-206: Նույնի՝ Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 56-57:

33 Ղլեչյան Բ., Հանդի չինարին, «Մռավի դղանցներ», 2007, № 3, մարտ, էջ 4:
34 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 345:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. գյուղական տեսարաններ (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ. և Ս Կարապետյանի, 1984 թ.)

թ. («...ի երկիրս Բարտայ՝ ի գեօղս, որ կոչի Գուլըստեան՝ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնին ու Սբ. Մինասայ՝ ի հայրապետութեանց տեառն Սիմոնի եւ Երեմիայի, ի եպիսկոպոսութեան Ուռեկայ Մօսիսի, ի իշխանութեան պարսից Բարտոյ Ապագ դուլի խանն»)՝ և 1692 թ. (Մելիքսեթ քահանայի խնդրանքով) ստեղծած Մաշտոցները⁶:

Գյուղում է պահվել նաև Գրիգոր գրչի ընդօրինակած Ծեր ավետարանը. «Գրիգոր մեղապարտ գրիչ յիշեալ ի Քրիստոս»⁷:

1723 թ. Արցախի չորս մելիքների թվում էր նաև Գյուլիստանի ներկայացուցիչ Եսային, որը միացել էր լեզգիների արշավանքների պատճառով տուժած և օգնության ակնկալիքով Պետրոս Մեծ կայսրին հղված գրությանը. «Արզ իլի ի հողոյն գարշայալարի ծառայեակցացն ծառայ Եսայե, որ եմ ի երկրէն Պարտայու, ի գեուղէն, որ և կոչի Գուլստան համակատարած տանս Աղուանից...»⁸:

1724 թ. մարտի 10-ին պատվիրակ Իվան Կարապետի գրած զեկուցագիրը պարզում է Գյուլիստանի մելիքների ռուսական կողմնորոշումը. «Ի փոքր ծառայիցդ արզ լինի...», որ ես եկիյ էս երկիրս, քանի մարդից լսեցի՝ թէ Գուլըստանայ դալին գլխայտրն՝ Սարգիս [և] Աբրայամըն օսմանվին թաբէ ան, քեզ քէ սպանէն:

Ես թաղաֆուլ տվի, գնացի, էս հայոց երկիրն ման եկի, էստոնց հինգ Մղնաղն տեսի և յետոյ գնացի Սարգսին և Աբրայամին բերթըն, աղիս տված գիրն նշանց տվի: [Դրին գլխներին վերէն], կարդացին, շատ ուրախութիւն արարին մեծով և փոքրով, ասացին, թէ՛ մեք մեր աղին ծառայ անք: Եւ ես հարցուցի, թէ չում դոք օսմանվին էք ուզում, և նրայ թաբէ էք ելել և ձեր մարթն գնացել այ օսմանվին դօշունըն: Սարգիսն և Աբրայամն ասացին, թէ՛ մեք անք մեր աղին արզ արարել, որ ի սերն Քրիստոսի, գայ մեզ անօրինի ձեռնիցն ազատի, մեք մոնց դէ գնանք, անհաւատի դուլտղ անենք...»⁹:

1725 թ. Աբրահամ հարյուրապետի եղբայր Եսային մի ձեռագիր՝ «Պատարագի մեկնիչ» է ազատում անօրենների ձեռքից և նվիրում այդ ժամանակ հակաթոռ կաթողիկոսանիստ Երից մանկանց վանքին. «Շնորհ չօր և ողորմութեամբ ամենագօրին... Եսայիս, որ եմ Գուլստանցի որդի Կետրքին, վերջին ստացայ այս խորհրդի մեկնիչս ազատելով ի ձեռաց անօրինաց և յետոյ... յիշատակ փառաւոր ուխտին Ս. երից մանկանց վանից ձեռամբ քեռին իմոյ Ներսէս կաթողիկոսին Աղուանից անջինջ յիշատակ նա իմ հոգույս... և եղբայր իմ Աբրահամ Ուզբաշին..., ի ՌՃՀԴ թուին մարտի Ժ...»¹⁰:

1726 թ. մայիսի 24-ին Գյուլիստանում հրավիրվում է խորհրդակցություն, որտեղ աշխարհիկ և հոգևոր հայ առաջնորդները քննում են թուրքական իշխանության լուծը թոթափելու

5 Ցուցակ ձեռագրաց, հ. Բ, Երևան, 1970, էջ 859, ձեռ. № 9043: Տե՛ս նաև **Մինասյան Թ.**, նշվ. հոդվ., էջ 206:

6 Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, էջ 462, ձեռ. № 1032: Տե՛ս նաև **Մինասյան Թ.**, նշվ. հոդվ., «Բանբեր Մատենադարանի», 2015, № 22, էջ 206: Նույնի՝ նշվ. աշխ., էջ 57:

7 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 586-587: Տե՛ս նաև **Բարխուդարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 241: **Մինասյան Թ.**, նշվ. հոդվ., «Բանբեր Մատենադարանի», 2015, № 22, էջ 206:

8 **Эзов Г.**, Сношение Петра Великого с армянским народом, Документы, СПб, 1898, док. 218, с. 340. Տե՛ս նաև Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. II, часть II, Ереван, 1964, с. 29.

9 **Աբրահամյան Ա.**, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 186: Տե՛ս նաև **Бутков П.**, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, часть II, Санкт Петербург, 1869, с. 29.

10 **Հայկունի Մ.**, Բագրեվանդ. Ջրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894, էջ 374:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. գյուղական տեսարաններ (լուս.՝ Ա. Ղուկյանի, 1980-ական թթ.)

և Ռուսաստանին հպատակվելու հնարավոր ուղիները: Արդյունքում կազմվում է մի գրություն և հանձնվում ռուսաց Եկատերինա Ա թագուհու պատվիրակ Իվան Կարապետին. «...մեր մեծ և փոքր թապուն թալոտօվս, այս գիրս տուինք վերոյգրեալ էլչի պէկին, [որ] հրամանէն, խոսկէն, թէ և մասլա[հա]թէն դուս գանք, թագաւորին խային լինէնք և մեր ապրանքն և տուն, ինչ թանալէ ջեգայդ անի. մեզ դապուլ և արժանի է...: Մեք Գլու[ս]ղանայ մեծ և փոքրօվըս վկայ ենք և հնազանդ այս վերոյգրեալ պանիս»¹¹:

Գյուղանվան հաջորդ հիշատակությունն առնչվում է մի հայ ընտանիքի՝ Տարոնից այստեղ վերաբնակվելու փաստին. «Տասնութերորդ դարու առաջին կեսում՝ մտաւորապէս 1720-1730 թուականների միջոցին Տարոն գաւառի Մուշ քաղաքի մօտ եղած Յրօնք անուանեալ գիւղից Գանձակ գաւառի «Իգիրմիդորդ» կոչուած գիւղերից մէկը՝ Գիւլիստան, գաղթում է իր փոքր ընտանիքով դպիր թէ սարկաւագ Յարոյ կամ Յարութիւն անունով մէկը և այնտեղ էլ հաստատում: Այս Յարոյ կամ Յարութիւն՝ հոգևորական կոչման նուիրուած անձը մի գաւակ է ունենում Արգուման անունով, որ իր ժամանակ յայտնուում է որպէս բաւականին հմուտ թարգման-բանագնաց և պաշտօնեայ: Արգումանը նոյնպէս մի գաւակ է ունենում, որին իր հօր անուան յիշատակի համար Յարութիւն անունն է տալիս»¹²:

11 Արքահանյան Ա., նշվ. աշխ., էջ 247: Տե՛ս նաև Армяно-русские отношение в первой трети XVIII в., т. II, часть II, Ереван, 1964, с. 282.
12 Ն. Յարոյ (Նիկողայոս Տեր-Հարությունյան), Թուրքիկ յիշողութիւններ մեր թաղի անցեալ կեանքէն, «Հովիտ», 1915, № 12, 5 ապրիլի, էջ 187: Ի դեպ, 1798 թ. Հարությունը գաղթում է Թիֆլիս և կարճ ժամանակ անց քահանայագործում Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում:

1734 թ. հոկտեմբերին Առաջածոր գյուղի ավագերեց Դավթին Խաչենի մելիքության առաջնորդ և մելիք կարգելու առնչությամբ կազմված և Նաղիր շահին ուղղված համախոսական մի գրության ներքո, որպէս վկաներ, ստորագրել են նաև գյուլիստանցիներ Աբրահամ հարյուրապետը (յուզբաշի), Ղազարը, Միրզախանը, Եղիան, Հակոբը և Նավասարդը¹³:

1785 թ. Գյուլիստանը հիշվում է մելիք Բեգլարի որդիներին՝ Գրիգորին և Օհանին ուղղված Ամենայն Հայոց Ղուկաս կաթողիկոսի օրհնության և բարեմաղթանքի խոսքում. «Առ մելիք Բեկլարի որդի Փրիդոնն և նորին մայր Ամարնան և եղբարսն, որ ի Կիւլիստան»¹⁴: Նույն թվականի մայիսի 15-ին Մելիք Բեգլարի եղբայր Մելիք Աբովը, որն էր «...ի Գիւլստան...», կաթողիկոսին հղած գրության մեջ նկարագրում է երկրի խղճալի դրությունը և խոսում կովկասցիների աշխարհավեր արարմունքների մասին¹⁵:

Երևում է, որ այլևս չդիմանալով ծայրահեղ դժնդակ պայմաններին, շատ չանցած՝ մելիքները կայացնում են ամենից տխուր որոշումը. իրենց հպատակ ժողովրդի մի նշանակալի մասի հետ նրանք լքում են հայրենի գավառը և գաղթում Վրաստան: Այստեղ բաժանվում են երկու մասի և հաստատվում Տիֆլիսում (Քարափի թաղում) և Թելավում (Չվելգալավան թաղամասում):

13 Կոտսիկյան Զ., Ղարաբաղի հայ մելիքները Նաղիր շահի իշխանության տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, 2007, էջ 262: Նույնի՝ Մատենադարանի պարսկերեն շարիաթական նոտարական փաստաթղթերը (ԺԷ-ԺԸ դարեր), Երևան, 2018, էջ 106-107:
14 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 616, ք. 36:
15 Նշվ. գործը, ք. 40:

Համեմայն դեպս, արդեն 1788 թ. նոյեմբերին մելիքներին հղված նամակների հասցեն «Թուրքք ի Թիֆլիզ»-ն էր. «...առ մելիք Բեկլարի կին Մարիամն եւ առ որդին իւր Փիրիտունն...: Վասն տարագրութեանցն ի հայրենեացն իւրեանց մխիթարութիւն...»¹⁶:

1791 թ. նոյեմբերին կաթողիկոսի նամակը դարձյալ հասցեագրված էր «...ի Թիֆլիզ առ մելիք Բեկլարի կին Մարիամն...»¹⁷:

Գյուլիստանի անունը, նշանակությունն ու ճանաչումը կտրուկ աճում են, երբ 1813 թ. հոկտեմբերի 24-ին այստեղ ռուս-պարսկական հաշտության պայմանագիր է կնքվում. «Հանդիպում ունեցան Գ(յ)ուլիստանում՝ Ջեբայում, ուր պարսիկներն ու ռուսները հաշտվեցին, տալով իրար փոխադարձ տրակտատ հաշտության և որոշելով սահմաններն...»¹⁸:

Դժվար է ասել, թե 1780-ական թթ. երկրորդ կեսի սկզբներին դեպի Վրաստան կատարված գաղթից հետո գյուղում որքան հայ էր մնացել, կամ մնացել էին նրանք ընդհանրապես, սակայն հայտնի է, որ 1817 թ. վրաստանաբնակ գյուլիստանցիների մի փոքր մասը վերադարձել էր հայրենի գյուղ¹⁹:

Ռուսական տիրապետության հաստատման սկզբնական տարիները դեռևս անկայուն էին: Մասնավորապես 1826 թ. ողջ երկրամասն ավերվում էր պարսկական հերթական, բայց և վերջին արշավանքի հետևանքով: Միայն դրանից հետո և հատկապես սկսած 1830-ական թթ. սկզբներից՝ գավառաբնակ հայերին և առավելապես գյուլիստանցիներին հնարավորություն է ընձեռվում անցնելու խաղաղ և ստեղծագործ աշխատանքի:

Գյուղի կառավարման իրենց ավանդական դիրքերում վերստին ամրապնդվում են Մելիք-Բեգլարյան տոհմի շառավիղները, որոնք, նախընթաց տասնամյակներում սփռված լինելով հեռու-մոտիկ երկրներում՝ Վրաստանում (Տիֆլիս, Թելավ), Ռուսաստանում (Մոսկվա), Հնդկաստանում (Չինաստան), այնուամենայնիվ, իրենց մեջ ուժ են գտնում և վերահաստատվում նախնայաց օրրանում:

Արդեն 1870 թ. տնտեսապես ոտքի կանգնած Գյուլիստանի հասարակությունն ի գործ է լինում մասնակցելու նաև համագալսի խնդիրներին: Սբ. Էջմիածնում իրականացվող շինարարական աշխատանքներին օժանդակելու նպատակով գյուղացիները հատկացնում են 12 ռուբլի²⁰:

Ժառանգական իրավունքներով գյուղին տիրող Մելիք-Բեգլարյաններին էին պատկանում նաև գավառի այլ բնակավայրեր (օրինակ՝ Խրիստափոր և Ղարաշինար գյուղերը) և մանավանդ բազմաթիվ ընդարձակ կարվածքներ: Այսպես՝ 1874 թ. մելիք Բեգլարի թոռան՝ Բեգլարբեկի մահվանից հետո բնակավայրն անցել էր նրա կնոջ իրավասության ներքո²¹, իսկ, օրինակ, Հ. բեկ Մելիք-Բեգլարյանին էր պատկանում Ամենափրկիչ վանքը շրջապատող եկամտաբեր Գյուլիստանի անտառը²²:

ԺԹ դարավերջին գյուղը Խրիստափորի հետ մեկտեղ պատկանում էր Գրիգոր, Հովսեփ, Գերասիմ և Թալիշ Մելիք-Բեգլարյանցիներին²³:

Հայտնի է, որ ԺԹ դարի վերջին Ինջա գետի հովտում գտնվող և Ս. բեկ Մելիք-Բեգլարյանին պատկանող Թափի դաշտ տեղամասը մոլոկանները գնել էին վերջինիցս 40.000 ռուբլով և հիմնել գյուղ²⁴:

Արդեն 1912 թ. թղթակցությունը վկայում է. Գյուլիստանից 2 կմ հյուսիս գտնվող Մալականներ կոչվող տեղամասը, որը համարվում էր Գ. Մելիք-Բեգլարյանի սեփականությունը, զավթել էին թուրքերը. «...Գյուլիստանի հողերին կից Գ. Մելիք Բեկլարյանի «Մալականներ» կոչող հողը եկան այդ քոչուրներից շատ թուրքեր տափարակի Բօրսունյու և միս գիւղերից: Անթիս ապրանք են բերել և չբուսականանալով իրանց գնած հողով, «ուժի իրաւունքով» սկսել են արածացնել գիւլիստանցիների սեփական «Անտակ ծով» կոչւած խոտհարքը»²⁵:

Գավառի հայաբնակ մյուս գյուղերի համեմատ ավելի ամուր դիրք ունեցող Գյուլիստանը 1905-1907 թթ.՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, պաշտպանության տեսանկյունից առավել հուսալի բնակավայրերից մեկն էր, սակայն նույնիսկ այստեղ բնակիչները չեն կարողանում նյութական կորուստներից խուսափել. «Գիւլստան հայ գիւղից եկողները յայտնեցին, որ իրենց գիւղից թուրքերը տարել են 12 գլուխ տաւար»²⁶:

Հայտնի է, որ 1905 թ. Գյուլիստանում՝ Թմրազանց տանը իջևանած Համազասպ Սրվանձոյանցը, տեղեկանալով, որ չնայած իր արգելքին, Կոստանց Կարապետն իր տանն է պահում թաթար ծառայի՝ Թեմիշին, գայրանում է և հրամայում Կարապետին սպանել: Միջադեպը հարթվում է միայն Կոստանց Կարապետի որդիների և Կորյուն քահանայի խնդրանքի շնորհիվ²⁷:

1917 թ. նշվել է. «Տեղս կազմակերպել են մի քանի աւազակախմբեր, որոնք ապրում են անտառներում, վնասում են գիւղացոց: Դրանք գլխաւորապէս թուրքեր են: Օգտւելով հանգամանքից, որ երիդասարտութիւնը կռի դաշտումն է, վրայ են տալիս գիւղերի վրայ և ապրանքը տասնեակներով քշում տանում են: Սրանից երկու շաբաթ առաջ մեր գիւղից գողացել են 12 գոմէշ ու կով. մի շաբաթ չանցած էլի են գողացել 8 հատ գոմէշ: Գիւղացիք հետքը տարել են այնտեղ, որտեղ աւազակներն են գտնում: Բայց ի՞նչ կարող են անել խեղճ գիւղացիք մի փէտով՝ զինւած աւազակների դէմ»²⁸:

Գյուլիստանցիներն անհամեմատ ավելի ծանր կացության առջև են կանգնում 1918-1920 թվականներին: Օրհասական ավարտ են ունենում հատկապես 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին ծավալված իրադարձությունները. գավառի մյուս գյուղերի նման թաթարները գրավում են նաև Գյուլիստանը և ամբողջովին ավերում, իսկ բնակիչները միայն փախուստի շնորհիվ են կարողանում փրկվել արդեն անխուսափելի թվացող ոչնչացումից²⁹:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո գյուլիստանցիներին հաջողվում է վերստին համախմբվել հայրենի գյուղում, վերականգնել քայքայված տնտեսությունն ու շենացնել այն:

Հակառակ Մեծ հայրենականում Գյուլիստանի մեծաթիվ գոհերի (գոհվել կամ անհետ կորել է 92 անձ), այնուամենայնիվ, մինչև 1970-ական թթ. ընդհանուր առմամբ գյուղն ապրում է նկատելի աշխույժ կյանքով: Հենց այս շրջանում է նրա բնակչության թվաքանակն առաջին անգամ գերազանցում 1000 շունչը:

Նոր փորձությանը Գյուլիստանը ենթարկվում է Արցախյան շարժման տարիներին: 1988 թ.-ից խորացող լարվածությունն ավարտվում է գյուղի անկմամբ 1992 թ. հունիսի 14-ին (մինչ այդ՝

16 Գիվան Հայոց պատմության, գիրք Ա, հատոր Բ, Երևան, 2003, էջ 409:

17 Նշվ. աշխ., էջ 661:

18 **Մելիքսեթ-բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 275: Տե՛ս նաև **Թադևոսյան Մ.**, Դանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 303 («Երևելին յամենայնի է Գուլստան. իբրև ինն մոօմօք ի վերուստ Դիզայ, ուրանօր յամի Տեանն 1815 փակեցաւ դաշն խաղաղութեան ի մէջ Ռուսաց և Պարսից»):

19 «Նոր-Դար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 1:

20 «Արարատ», 1870, Գ, էջ 138:

21 «Նոր-Դար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 2:

22 **Գ. Սև-Երեց** (Գ. Սև-Երեցյան), Թղթակցություն, «Նոր-Դար», 1890, № 132, 6 սեպտեմբերի, էջ 3:

23 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 388, ք. 30-31:

24 **Գ. Սև-Երեց**, նույն տեղում:

25 **Անդրո**, Լուրեր Գիւլիստանի շրջանից, «Հորիզոն», 1912, № 150, 14 յուլիսի, էջ 4:

26 «Ալիք», Թիֆլիս, 1906, № 6, 4 մայիսի, էջ 3:

27 **Դուլյան Բ.**, Գյուլիստան: Պատմական մոտիկ անցյալից, Երևան, 2004, էջ 56:

28 **Թ. Կեանց**, Գիւլիստան, «Աշխատանքի դրօշակ», 1917, № 4, 25 յունիսի, էջ 4:

29 Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материала (այստե՛ն՝ Нагорный Карабах в 1918-1923 гг., համապատասխան էջերով), Ереван, 1992, с. 436.

նույն թվականի մարտի 3-ին, աղբրեջանցիները հռիթմակոծել էին Գյուլիստանից կանանց ու երեխաներին փոխադրող ուղղաթիռը, որը վայր էր ընկել Քարվաճառի Սեդյոյար գյուղի մոտ):

Բնակչություն. նյութական մշակույթի տարաբնույթ և բազմադարյան հուշարձանների պահպանված հիշատակները վկայում են, որ Գյուլիստանը հայաբնակ է եղել առնվազն վաղ միջնադարից, սակայն նրա բնակչության թվաքանակի վերաբերյալ առաջին քիչ թե շատ ստույգ վկայություններն ի հայտ են գալիս ԺԸ դարից: Մասնավորապես 1726 թ. մայիսի 24-ին կազմված մի վավերագրում տրված է գյուղաբնակ 31 տնատերերի ցանկը.

- 1 Գևորգի որդի Աբրահամ յուզբաշի
- 2 Դուկասի որդի Գրիգոր
- 3 Տեր Մելիքսեթի որդի Թամրազ
- 4 Սարգսի որդի Նավասարդ
- 5 Մովսեսի որդի Միրզախան
- 6 Հախնազարի որդի Ալլահվերդի
- 7 Ադասի որդի Դազար
- 8 Հակոբի որդի Մկրտիչ
- 9 Պաղի որդի Մռավդուլ
- 10 Կոկջի որդի Մելքում
- 11 Մանուչարի որդի Գրիգոր
- 12 Ավագի որդի Պասյ
- 13 Ավագի որդի Հաթան
- 14 Սարգսի որդի Ներսես
- 15 Վանեսի որդի Եղիա
- 16 Արիստակեսի որդի Ներսես
- 17 Տեր Դազարի որդի Հակոբ
- 18 Վանեսի որդի Մխիթար
- 19 Վանեսի որդի Պասյ
- 20 Մեհրաբի որդի Չալ
- 21 Վանեսի որդի Սարգիս
- 22 Բայանդուրի որդի Ներսես
- 23 Աղաբեկի որդի Դարիբ
- 24 Դազարի որդի Խաչատուր
- 25 Ալեքսանի որդի Նավասարդ
- 26 Սարգիսի որդի Բաղդասար
- 27 Բարդամի որդի Այտին
- 28 Վանեսի որդի Մարտիրոս
- 29 Աղաբեկի որդի Պետրոս
- 30 Աթաբեկի որդի տեր Հովհաննես
- 31 Տեր Մելիքսեթի որդի Մարկոս³⁰:

Ըստ Ջինավոր Մեղրյանի՝ ԺԸ դարի կեսերին Գյուլիստանում էին բնակվում Ասկարյան, Բեգլարյան, Մեղրյան, Հրթամանք (Մեփյաններ), Կոսունց, Հովասափյան (Մաղաթեյաններ), Իրիցանց (Ավանց) և Դփանանց (Մակյան, Ստեփանյան) ազգատոհմերը³¹:

Հայտնի է, որ 1780-ական թթ. երկրորդ կեսին դեպի Թիֆլիսի մահանգ ուղղված գաղթի նախօրեին գյուլիստանցիները 700 տուն էին (1817 թ. հայրենի գյուղ էին վերադարձել միայն 25-ը)³²: Իհարկե, ծագումով գյուլիստանցի էր նաև Նորշեն գյուղի բնակիչների մի մասը³³:

30 **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 247: Стену нас Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 282.

31 **Պետրոսեան Ա.**, Մեծն Շահեճը, Երևան, 2011, էջ 66:

32 «Նոր-Դար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 1: Ի դեպ, գյուղի բնակչության մասին 1894 թ. նշվել է նաև. «Այժմեան գիւղը 40 տուն է, բայց հնումը 800 տուն է եղել. այդ վկայում են գիւղի հսկայ եկեղեցին և իւր ատերակների հետքերը» («Նոր-Դար», 1894, № 187, 5 նոյեմբերի, էջ 2):


33 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 616, ք. 36:

1831-1832 թթ. գյուղի բնակիչներն էին 50-ամյա Եսայի Սեյրանյան Ավանեսյանը, կինը՝ 43-ամյա Վառին, որդիները՝ 25-ամյա Ասկերը, 8-ամյա Աբելը, դուստրերը՝ 11-ամյա Մալեքը, 5-ամյա Հերիքնազը, 3-ամյա Ռեհանը; 42-ամյա Պետրոս Հարությունյան Նաբաթյանը, կինը՝ 39-ամյա Վառին, որդին՝ 20-ամյա Ավանեսը, կինը՝ 16-ամյա Սառան; 51-ամյա Հարություն Յավրյան Ալլահվերդյանը, կինը՝ 44-ամյա Հուրիփաշան, որդիները՝ 25-ամյա Գևորգը և 18-ամյա Ալլահվերդին, Գևորգի կինը՝ 18-ամյա Եղիսաբեթը; 49-ամյա Մկրտիչ Հարությունյան Քաննանյանը, կինը՝ 43-ամյա Եղսամանը, որդիները՝ 14-ամյա Ավանեսը, 6-ամյա Բալան, 11-ամյա դուստրը՝ Մարիամը; 60-ամյա Կոստանդ Հարությունյան Յավրյանը, կինը՝ 52-ամյա Հուրիփաշան, որդիները՝ 25-ամյա Ավանեսը, 16-ամյա Յավրին, Ավանեսի կինը՝ 18-ամյա Հուրիփաշան; 59-ամյա Գաբրիել Մաղաթեյան Ավագյանը, կինը՝ 46-ամյա Հուրիփաշան, որդիները՝ 15-ամյա Եսային, 13-ամյա Եզագյուլը, 11-ամյա Հարությունը, 9-ամյա Սիմեոնը, 15-ամյա դուստրը՝ Ռեհանը; 58-ամյա Աբրահամ Հերթիյան Բալասյանը, կինը՝ 47-ամյա Շուրին, 15-ամյա որդին՝ Հարությունը, և 9-ամյա դուստրը՝ Հուրիփաշան; 41-ամյա Սևի Կոստանդյան Ավանեսյանը, կինը՝ 34-ամյա Ջադան, եղբայրը՝ Հարությունը, կինը՝ 26-ամյա Մեղրին, և նրանց որդիները՝ 8-ամյա Մահակը, 6-ամյա Համբարձումը, 4-ամյա Հարությունը, 9-ամյա դուստրը՝ Թագուհին; 24-ամյա Կարապետ Ասրյան Ավագյանը, կինը՝ 17-ամյա Մարիամը, Կարապետի եղբայրները՝ 18-ամյա Ստեփանը և 6-ամյա Ավագը; 35-ամյա Մնացական Օհանյան Մալիյանը, կինը՝ 25-ամյա Մանդուխտը, 5-ամյա դուստրը՝ Անան, եղբայրները՝ 20-ամյա Աղաբեկը, 15-ամյա Ջաքարը; 38-ամյա Օհան Գալուստյան Գյուլ..., կինը՝ 30-ամյա Հերիքնազը, 12-ամյա որդին՝ Ավանեսը, դուստրերը՝ 8-ամյա Թագուհին, 5-ամյա Հուրիփաշան, 3-ամյա Եղիսաբեթը; 28-ամյա Ավանես Ապրեսյան Շուշաբազյանը, կինը՝ 19-ամյա Անան, 4-ամյա դուստրը՝ Հուրիփաշան, Ավանեսի եղբայրները՝ 20-ամյա Ստեփանը և 16-ամյա Եսային; 40-ամյա Հարություն Դադայան Դազարյանը, կինը՝ 32-ամյա Գյուլին, 13-ամյա որդին՝ Թուման, և 8-ամյա դուստրը՝ Հերիքնազը; 45-ամյա Ավանես Հովսեփյան Ստեփանյանը, կինը՝ 37-ամյա Մարիամը, 10-ամյա որդին՝ Եփրեմը, 8-ամյա դուստրը՝ Փառին, Ավանեսի եղբայրները՝ 38-ամյա Եղիան, 30-ամյա Մալիքբեկը, Եղիայի կինը՝ 27-ամյա Գյուլին, որդիները՝ 5-ամյա Բադին, 3-ամյա Սողոմոնը, և 8-ամյա դուստրը՝ Մագթաղը, Մալիքբեկի կինը՝ 20-ամյա Հերիքնազը; 30-ամյա Ավանես Ասրյան Բադյանը, կինը՝ 24-ամյա Սոնան, դուստրը՝ 5-ամյա Հերիքնազը; 50-ամյա Հովսեփ Օհանյան Բադյանը, կինը՝ 35-ամյա Հերիքնազը, որդիները՝ 22-ամյա Աղաբեկը, 18-ամյա Հաթանը, 12-ամյա Աղաջանը, Աղաբեկի կինը՝ 16-ամյա Մարիամը; 42-ամյա Հովակիմ Աստվածատուրյան Բախտիարյանը, կինը՝ 35-ամյա Ռեհանը, 14-ամյա որդին՝ Խաչատուրը, դուստրերը՝ 10-ամյա Սահարը և 6-ամյա Անան; 14-ամյա Աղաջան Պողոսյան Դադայանը; 40-ամյա Ալեքսանդր Չարակյան Չարակյանը, կինը՝ 33-ամյա Վարթին; 10-ամյա Ավանես Ասրյան Մովսեսյանը; Եղիշեն Թումասյանի այրին՝ 46-ամյա Մեղրին (1832 թ. գտնվում էր Տիֆլիս քաղաքում), որդին՝ 15-ամյա Հարությունը³⁴:

Գյուլիստանից էր սերում նաև Գետաշենը մելիքանիստ կենտրոնի վերածած և այնտեղ հիմնավորված Մելիք-Մնացականյանների տոհմը³⁵:

34 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 401 շրջ.-405:

35 **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 334:



ԳՅՈՒԼԻՍԱՆ. գյուղի գլխավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի 2009 թ. արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Բակոբյանի, 2018 թ.)

**Գյուլիստանի տնատերերի և կարևոր շինությունների ցանկը
(կազմողներ՝ Բորիս Նաբաթյան, Աշոտ և Արևիկ Եսայաններ, Համլետ Սաղաթեյան)**

- | | | | |
|--|----------------------------------|-----------------------------------|--|
| 1 Իսակ Արզումանյան (Ասատուր, Էդգար) | 58 Միրզա Աղամալյան (Յուրիկ) | 124 Կառլեն Բալայան | 189 Յաշա Սեյրանյան |
| 2 Անտոն (Ռ-աֆիկ) Անտոնյան | 59 Մուխի Աղամալյան | 125 Սերոժ Բալայան | 190 Խորեն Սեյրանյան |
| 3 Մերյոժա Արզումանյան | 60 Սահակ Աղամալյան | 126 Սուկրատ Բալայան | 191 Էնգելս Մնացականյան |
| 4 Վարդգես (Շավարշ, Շահեն) Հովասափյան | 61 Ասատուր Ջահանյան | 127 Բահատուր Մնացականյան | 192 Բորիկ Մակյան |
| 5 Հայկազ Հովասափյան | 62 Անդրո Հարությունյան | 128 Չարքազ Մնացականյան | 193 Մինաս Հարությունյան |
| 6 Սբ. Աստվածածին եկեղեցի | 63 Ներսես Սաղաթեյան | 129 Սաշա Բալայան | 194 Գառնիկ Սեփյան |
| 7 Ռ-ազմիկ Սարգսյան (Անաստաս, Աբո) | 64 Իսահակ Եսայան | 130 Բախշի Բալայան | 195 Վաչագան Մովսիսյան |
| 8 Ջալալ Հարությունյան | 65 Համբարձում Եսայան | 131 Մադաթ Բալայան | 196 Արտեմ Սարգսյան |
| 9 Մամուշ Սաղաթեյան | 66 Անդրո Եսայան | 132 Յուրիկ Բալայան | 197 Բեգլար Դուլյան |
| 10 Ավագիմ Հարությունյան | 67 Կույա Եսայան | 133 Բորիկ Դուլյան | 198 Սահակ Ասկարյան |
| 11 Մայկո Հարությունյան | 68 Սաշա Հարությունյան | 134 Բենիկ Դուլյան | 199 Ռուբեն Ստեփանյան (Նազլի-ֆա, Գագիկ) |
| 12 Ջավեն Սարգսյան | 69 Մուխան Հարությունյան | 135 Ասատուր Դուլյան | 200 Ավագ Խաչատրյան |
| 13 Բեգի Մեղրյան (Խաչի, Գուրգեն) | 70 Ջալի Հարությունյան | 136 Յուրա Բեգլարյան | 201 Սանթրի Բեգլարյան |
| 14 Անիշկա Մեղրյան (Իշխան) | 71 Հանես Հարությունյան | 137 Մալխաս Հանեսի Սարգսյան | 202 Գարաս Բեգլարյան |
| 15 Ջինավոր Մեղրյան | 72 Բեգի Բալայան | 138 Մալխաս Սողոմոնի Սարգսյան | 203 Գիշի Բեգլարյան |
| 16 Հակոբ Մեղրյան | 73 Ռ-անտիկ Արզումանյան | 139 Գուրգեն Ջումշուդի Մնացականյան | 204 Միրզա Մակյան |
| 17 Պավլիկ Հովհաննիսյան | 74 Խոսրով Սեփյան | 140 Ռ-աֆիկ Բալայան | 205 Արշակ Դուլյան |
| 18 Ալեքսան Մեղրյան | 75 Արշակ Սեփյան | 141 Գրիշա Դուլյան | 206 Մինաս Քոսյան |
| 19 Եգոր Գլեչյան | 76 Բաղամ Սեփյան | 142 Գերասիմ Դուլյան | 207 Ջարմիկ Եսայան |
| 20 Ռ-անտիկ Գլեչյան | 77 Ավագ Հովասափյան | 143 Քնարիկ Հարությունյան | 208 Բաղիշ Սարգսյան (Ասյա) |
| 21 Բախչալի Նաբաթյան (Մարգո) | 78 Գրիգոր Հովասափյան | 144 Ջինավոր Միքայելյան | 209 Տոլիկ Ստեփանյան |
| 22 Լևոն Նաբաթյան (Բորիկ) | 79 Պատվական Գլեչյան | 145 Վանիկ Դուլյան | 210 Համլետ Սաղաթեյան |
| 23 Բաղալ Նաբաթյան | 80 Ալեքսան Գլեչյան | 146 Կոլի Դուլյան (Աշխեն) | 212 Մարտիրոս Բեգլարյան |
| 24 Մինաս Նաբաթյան (Մելսիկ) | 81 Գահրաման Միքայելյան | 147 Նուբար Դուլյան | 213 Չարքազ Բեգլարյան |
| 25 Ջավադ Ստեփանյան (Խաչի, Շագոր) | 82 Ռ-աֆիկ Միքայելյան | 148 Ասատուր Մնացականյան | 214 Թևոս Սաղաթեյան |
| 26 Գալուստ Ստեփանյան (Մովսես, Շամիր) | 83 Գրիշա Սարգսյան | 149 Թյունի Բեգլարյան | 215 Ռ-աշիկ Սարգսյան |
| 27 Աղաջան Մակյան | 84 Արշակ Սաղաթեյան | 150 Հենրիխ Դուլյան | 216 Պատվական Սարգսյան |
| 28 Ամիջան Մակյան | 85 Ռ-աֆիկ Հակոբյան | 151 Իսրայել Հակոբյան | 217 Հանես Սարգսյան |
| 29 Բարբու Մակյան | 86 Արսեն Խաչատրյան | 152 Կամո Սարգսյան | 218ա Յաշա Սարգսյան |
| 30 Սաշա Մակյան | 87 Ռ-աֆիկ Քոսյան | 153 Փեդր Սեյրանյան | 219 Ռ-անտիկ Եսայան |
| 31 Բեգի Մակյան | 88 Ջիալո Քոսյան | 154 Շուրա Դուլյան | 220 Սարգարիտ Եսայան |
| 32 Տիգրան Ասկարյան (Համլետ) | 89 Շեգի Քոսյան | 155 Էդիկ Մնացականյան | 221 Վալդ Գարեգինի Եսայան |
| 33 Եդիշ Բեգլարյան | 90 Սաշա Քոսյան | 156 Փաշա Դուլյան | 222 Շամիր Ստեփանյան |
| 34 Ջավադ Բեգլարյան (Մամուշ, Կույա) | 91 Աստղիկ Խաչատրյան | 157 Վահան Հովասափյան | 223 Մինաս Սարգսյան |
| 35 Մերգի Բեգլարյան (Գարաս) | 92 Յուրիկ Մնացականյան | 158 Ջալալ Քոսյան | 224 Ազատ Մովսիսյան |
| 36 Սաշա Բեգլարյան | 93 Մայիկ Մնացականյան | 159 Աշոտ Ասրիի Սարգսյան | 225 Մայիկ Սեյրանյան |
| 37 Շամիր Բեգլարյան | 94 Հակոբջան Մնացականյան | 160 Ջահան Ջաբարի Սարգսյան | 226 Բախշի Մակյան (Ստեփանյան) |
| 38 Ջարմիկ Աղամալյան | 95 Գարաս Քոսյան | 161 Մուդի Դուլյան | 227 Մուդի Սերբի Մովսիսյան |
| 39 Բենիկ Ստեփանյան | 96 Հովսեփ Բալայան | 162 Ռսկան Մակյան | 227ա Ջինավոր Ռուսրի Սեյրանյան |
| 40 Խաչի Մեղրյան | 97 Գարեգին Բալայան | 163 Մարգարիտ Մակյան | 228 Աշոտ Արշակի Սեյրանյան |
| 41 Նորել Սեյրանյան (Ջալի) | 98 Իշխան Քոսյան | 164 Ռ-աֆիկ Դուլյան | 229 Բական Սեյրանյան |
| 42 Շամիր Սեյրանյան (Վերդի) | 99 Դուկաս Մնացականյան | 165 Բաբկեն Մակյան | 230 Ռ-անտիկ Սեյրանյան |
| 43 Մոսի Ասկարյան | 100 Մինաս Խաչատրյան | 166 Ռ-անտիկ Մնացականյան | 231 Փեդր Սեյրանյան (Վարդան) |
| 44 Խորեն Խաչատրյան | 101 Ծատուր Հարությունյան | 167 Ալբերտ Մնացականյան | 232 Ջարմիկ Լևոնի Սաղաթեյան |
| 45 Մերոբ Մովսիսյան (Սերոժ, Մուդի, Թալիշ) | 102 Ջորի Հարությունյան | 168 Աստղիկ Խաչատրյան | 233 Գայրոց |
| 46 Ասատուր Մովսիսյան | 103 Շմիտ Մնացականյան | 169 Գարաս Դուլյան | 234 ՀՄՊՁ հուշարձան |
| 47 Հայրապետ Մովսիսյան | 104 Մեծլուս Մնացականյան | 170 Ռ-ազմիկ Դուլյան | 235 Անասնապահական համալիր |
| 48 Ջավադ Խաչատրյան | 105 Մեծլուս Բալայան | 171 Գրիշա Դուլյան | 236 Նախկին էլեկտրակայան, հետագայում՝ ջրատղաց |
| 49 Չատուր Խաչատրյան | 106 Մայիկ Մակյան | 172 Վալդ Դուլյան | 237-238 Հին ջրատղաց |
| 49ա Մովսես Մովսիսյան | 107 Վաչագան Գլեչյան | 173 Նարինան Մակյան | 239 Սարդարին աղբյուր |
| 50 Աշոտ Եսայան (Գարիկ) | 108 Թալիշ Մովսիսյան | 174 Ալխաս Մակյան | 240 Գետի ափին ժայռազանգված |
| 51 Աշոտ Սարգսյան | 109 Ապրես Հարությունյան | 175 Մայիկ Մնացականյան | 241 Չիթհան (սրանոց) |
| 52 Անահիտ Պետրոսյան | 110 Շուշի Հովասափյան | 176 Սերժիկ Բեգլարյան | 242 Նոր գերեզմանոց |
| 53 Կոլի Պետրոսյան | 111 Շուրա Հովասափյան | 177 Շագոր Ստեփանյան | 243 Հին գերեզմանոց |
| 54 Ալեքսան Սարգսյան (Վալդ, Գուրգեն) | 112 Շուրա Մակյան | 178 Արտուշ Մեղրյան | 244 Կոլխոզի գրասենյակ |
| 55 Իսակ Սարգսյան (Ռ-ազմիկ, Վանո) | 113 Կույա Մակյան | 179 Շահեն Գլեչյան | 245 Չալին Ասատուրի հայրենական տունը |
| 56 Արմիկ Աղամալյան | 114 Գարո Մակյան | 180 Ռ-ազմիկ Դուլյան | 246 Գյուղամիջի ապարանը ¹ |
| 57 Լավարսաթ Հովասափյան | 115 Բահատուր Մակյան | 181 Ռուզան Դուլյան | |
| | 116 Գարաս Հովհաննիսյան | 182 Բորիկ Սարգսյան | |
| | 117 Բենիկ Սեյրանյան | 183 Մայիս Աշոտի Ջահանյան | |
| | 118 Մեդր Մնացականյան (Անդրա-նիկ) | 184 Անտոն Արզումանյան | |
| | 119 Արմենակ Մնացականյան | 185 Ասքանազ Հարությունյան | |
| | 120 Թալիշ Մնացականյան | 186 Շուրա Սարգսյան | |
| | 121 Վալդ Սարգսյան | 187 Աբո Քոսյան | |
| | 122 Բորիկ Բալայան | 188 Հովսեփ Պետրոսյան | |
| | 123 Մովսես Քոսյան | | |

¹ Каграманян К., Книга очага: адреса тоски, т. 3, Ереван, 2014, с. 85-91.

Թերևս հենց ԺԹ դարի 80-ական թվականների վերջերին գյուլիստանցիների մի խումբ էլ բնակություն էր հաստատել Նուխի քաղաքում, որի հայոց գերեզմանոցի մի հատվածում ամփոփվել էին Սեդրյան տոհմի շառավիղները (այդ մասը հայտնի էր Սեդրունց անվամբ)³⁶:

Ինչ վերաբերում է առավել ստույգ վիճակագրական տվյալներին, ապա դրանք սկիզբ են առնում միայն 1830-ական թթ.-ից: Վերջիններին ժամանակագրական համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1832 ³⁷		56	44	100
1841 ³⁸	16	38	38	76
1851 ³⁹	25	70	51	121
1876 ⁴⁰				272
1886 ⁴¹	40	179	167	346
1889 ⁴²	56	200	175	375
1890 ⁴³	40			
1893 ⁴⁴	42	184	179	363
1894 ⁴⁵	40			
1898 ⁴⁶	42	181	168	349
1901 ⁴⁷		276	252	528
1902 ⁴⁸		287	257	544
1905 ⁴⁹	63	313	284	597
1908 ⁵⁰	46	335	308	643
1909 ⁵¹		344	321	665
1910 ⁵²		351	328	679
1912 ⁵³	50	180	185	365
1914 ⁵⁴				384
1915 ⁵⁵				662
1918 ⁵⁶	67	399	371	770
1925 ⁵⁷				665

36 Պետրոսեան Ա., նշվ. աշխ., էջ 83:

37 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 400-404:

38 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47:

39 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 92: Տե՛ս նաև Վաերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 209:

40 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6775, ք. 115-116:

41 Свод..., с. 82-83. Հայերից զատ՝ գյուղում բնակվում էր նաև 2 տուն բարբար (2-ը՝ ար., 1-ը՝ իգ.):

42 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 241: Ի դեպ, ըստ արխիվային մի վավերագրի (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, ք. 45-46)՝ նույն թվականին գյուղն ուներ 307 (150-ը՝ ար., 157-ը՝ իգ.) բնակիչ:

43 «Նոր-Դար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 1:

44 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, հ. Բ, էջ 335: Այլ վավերագրի (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 194) համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 40 տուն բնակիչ:

45 «Նոր-Դար», 1894, № 187, 5 նոյեմբերի, էջ 2:

46 Լալայեան Ե., նշվ. աշխ., գիրք Ե, էջ 331:

47 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 241-242: Տե՛ս նաև Վաերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 409:

48 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, ք. 118-119:

49 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, ք. 140-141: Տե՛ս նաև Ա.Պօ, նշվ. աշխ., էջ 326:

50 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, ք. 223-224: Այլ տեղեկությունների համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 478 բնակիչ (Кавказский календарь на 1910 г., с. 232), նաև՝ 46 տուն՝ նույնրան շնչով (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22).

51 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 764, ք. 243-244:

52 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 189:

53 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52. Այլ վկայագրի (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 330) համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 721 (378-ը՝ ար., 343-ը՝ իգ.) բնակիչ:

54 Кавказский календарь на 1915 г., с. 114.

55 ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 12 շրջ.:

56 ՀԱԴ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4 շրջ.:

57 Խաչատրյան Կ., Սուրիսայան Հ., Բաղայան Գ., նշվ. աշխ., էջ 139:

1970 ⁵⁸	204	447	565	1012
1981 ⁵⁹				803
1988 ⁶⁰	212			705
1992 ⁶¹				850

Գյուլիստանն ամբողջությամբ հայաթափվում է 1992 թ. հունիսի 13-14-ին, և հակառակ նրա ազատագրության համար 1993-1994 թթ. գործադրված ջանքերի՝ գյուղը ցարդ մնում է բռնազավթված:

Ազատամարտի տարիներին ընդհանուր առմամբ Գյուլիստանի խաղաղ բնակիչներից զոհվել կամ անհետ կորել է 23 հոգի՝ Զինավոր Սողոմոնի Սարգսյան (1991 թ.՝ Գյուլիստանում), Ռիմա Զինավորի Աղամալյան, Զարիկ Հարությունի Մակյան, Մարալ Աղաջանի Սեյրանյան (զոհվել են 1992 թ. մարտին խփված ուղղաթիռի մեջ), աշխարհագրային Գերասիմ Նիկողայի Մակյան (1992 թ. ապրիլի 22-ին), Մարգարիտ Ղուլիի Սեյրանյան (1992 թ. հունիսի սկզբներին՝ գյուղում), Փառանձեմ Հարությունի Ղլեչյան (Հաբերքում), Մամուշ Զավադի Բեգլարյան, Լուսիկ Ավագի Բեգլարյան, Անդրանիկ Միմոնի Հարությունյան, Գուրգեն Սլրոշի Ղլեչյան, Նիկողայ Օհանի Մակյան, 98-ամյա թալիշցի Անուշ Առուստամի Մակյան, Մազադաթ Գևորգի Սեդրյան, Անահիտ Վարդանի Պետրոսյան, Մալխաս Առուստամի Սարգսյան, Ղալամ Միմոնի Սարգսյան (մնացել են գյուղում), Նատո Բեգլարյան, Հոռոմսիմ Ղևոնդի Բալայան, մայր և որդի՝ Մարգարիտ Պողոսի և Վոլոդյա Գարեգինի Եսայաններ (չի լքել հիվանդ սնորը), Մալխաս Օզանեսի Սարգսյան (մահացել են նահանջի ճանապարհին) և գյուլիստանցի մինգեչաուրաբնակ Շամո Միխայելի Աղամալյան (մնացել է Շահումյանում)⁶²:

Ազատամարտիկներից Գյուլիստանը տվել է 17 զոհ՝ Շահեն Զինավորի Սեդրյան, 16-ամյա Հայկ Լեոնիդի Սեդրյան (զոհվել են 1993 թ. ապրիլի 17-ին խփված ուղղաթիռի մեջ), Ռաշիդ Գարեգինի Մնացականյան, Ժորա Մինասի Սարգսյան, գյուլիստանցի արվյանաբնակներ Վլադիկ Արմիկի Աղամալյան, Ռոմա Մինասի Կոսյան, Սարո Բահատուրի Մակյան, Օլեգ Վազգենի Մակյան (դիակը չի հայտնաբերվել), գյուլիստանցի երևանաբնակ Արկադյա Խորենի Սեյրանյան, գյուլիստանցի արվյանաբնակ Անատոլի Մալիլի Մակյան (զոհվել են 1992 թ. մարտի 3-ին խփված ուղղաթիռի մեջ), Ռուսլան Շուրայի Հովհաննիսյան (1992 թ. սեպտեմբերի 29-ին խփված ուղղաթիռի մեջ), Հովհաննես Ալեքսանի Հովհաննիսյան՝ ծնունդով Արվյանից (Գյուլիստանի ազատագրման ժամանակ՝ 1993 թ. ապրիլի 20-ին), Շահեն Զինավորի Սեյրանյան (1993 թ. մայիսի 30-ին), Սերգեյ Մակիչի Գալստյան, Սերգեյ Բեգլարի Սարգսյան, Ռոման Սերգեյի Ստեփանյան, Արտակ Անուշավանի Ներսեսյան (զոհվել են Գյուլիստանի ազատագրման ժամանակ՝ 1994 թ. ապրիլի 13-ին)⁶³:

Տարագ. 1890 թ. գյուլիստանցիների հագուկապի վերաբերյալ նշվել է. «Թե տղամարդկանց և թե կանանց հագուստը պարզ է: Կանայք հագնում են այնպես, ինչպես հագնում են Ղարաբաղի հայ կանայք, բայց բացառությամբ է կազմում սրանց արխալուղն, որ կարճ է լինում թուրք կանանց հագուստի պես»⁶⁴:

Առողջապահություն. 1905 թ.՝ հայ-թաթարական ընդհարումների օրերին, շուշեցի Քրիստափոր Օհանյանը (ծածկանուններն

58 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 30:

59 ԱՍՀ (աղբրեջաներեն), հ. 6, Բաբու, 1982, էջ 118:

60 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

61 ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

62 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 668-669:

63 Նշվ. աշխ., էջ 669-670:

64 «Նոր-Դար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 2:

են՝ Մխիթար, Սյունի, Բժիշկ) կնոջ՝ Գյուլիստանի Դավիթ Մելիք-Բեգլարյանի դստեր՝ Մարգարիտի հետ հաստատվում է Գյուլիստանում և հիմնում բարեգործական հիվանդանոց⁶⁵:

Ըստ այլ աղբյուրի՝ բժշկուհի Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանը Գյուլիստանի կալվածատեր Դավիթ Մելիք-Բեգլարյանի քույրն էր (այլ ոչ դուստրը), որը 1905 թ. հայրենի գյուղում հիմնում է հիվանդանոց. «Ան հոգատար ու գուրգուրող մօր մը պէս կը խնամէր իր հիւանդներ եւ նոյնիսկ ամենէն ծանր պարագաներում՝ ապրելու կամք ու կորով կը ներշնչէր»⁶⁶:

1910 թ. գարնանը գյուղում տարածված ծաղիկ հիվանդության համաճարակից բազմաթիվ երեխաներ են մահանում⁶⁷:

Կառուցապատում. դեռևս ԺԹ դարավերջին նշվել է. «Գիւղի տներն ընդհանրապէս շատ հասարակ են, մի քանիսը նոյնիսկ գետնափոր»⁶⁸:

Սույն տողերի հեղինակը, անդրադառնալով գյուղի ընդհանուր համայնապատկերին, իհարկե, պարտավոր էր նշել, որ, այնուամենայնիվ, կար ԺԸ դարում կառուցված մելիքականգեղեցիկ մի ապարանք, որի կենտրոնական կառույցն անսյուն, ընդարձակ գլխատունն էր:

1912 թ. գյուղում հաշվառված քարաշեն կառույցները բաշխվում էին հետևյալ կերպ՝ 1 եկեղեցի, 60 բնակելի տուն, 75 տնտեսական կառույց, 2 խանութ և 2 ջրաղաց⁶⁹:

Տնտեսություն. հայտնի է, որ ԺԹ դարի վերջին գյուլիստանցիները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ. «Մարային տեղ լինելու պատճառով գիւղի հողն այնքան էլ պտղաբեր չէ. այգիներում բացի տխից, վարունգից, խնձորից, տանձից և մոշից ոչինչ չէ բուսում: Իսկ հացաբոյսերից գլխատրապէս ցանում են՝ ցորեն, գարի և սակաւ հաճար, վերջիններիցս գոյանում է այնքան, որ բաւականութիւն է տալիս տեղացիներին: Մեծ քանակութեամբ խոզեր են պահում այստեղ: Կան այնպիսի մարդիկ, որ մօտաւորապէս 350-400 խոզ ունին: Պահում են նոյնպէս, բայց որ այդքան շատ, ձի, կով, գոմէշ, այծ և ոչխար»⁷⁰:

Գյուղից «5 վերստ» հեռու գտնվում էր Մելիք-Բեգլարյաններին պատկանող գիպսի հանքը, որի շահագործումը դադարեցվում է Ի դարի սկզբին նյութական միջոցների բացակայության և շերտերի խոր գտնվելու պատճառով⁷¹:

Գյուղացիների տնտեսական դրությունն ավելի է սրվում 1905-1907 թթ.՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, սակայն, դժբախտաբար, նույնիսկ այդ դժվար իրավիճակում, երբ առաջնային էին համախմբումն ու միմյանց սատարումը, տեղի հայ կալվածատերերը շարունակում էին գործել՝ ելնելով սոսկ իրենց անձնական նեղ շահերից. «Յարգելի բեկերը հին ուղղութիւնից մի քիչ էլ ճիշտ «բեկական» քայլով են ընթանում: Անցեալ տարի, երբ գիւղացիները (Գիւլիստանի) դրականապէս զրկւեցին տափարակից, նրանք ստիպւած էին իրենց «նաղել» հողով բաւականանալ, որը այնքան քիչ է, որ նոյնիսկ խոտի բուսականութիւն տալ չի կարողանում և շատ անգամ, համարեա ամենայն տարի, գիւլիստանցիք ստիպւած են լինում խոտ գնել հարևան գիւղերից, գլխատրապէս Վերին-Շէն գիւղից:

65 **Ղազիյան Ա.**, Արևմտահայոց պայքարի Արցախի գավակները, Երևան, 2015, էջ 209:

66 **Մինայան Է., Մինայան Տ.**, Հայ կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտի տարիներին, Երևան, 2016, էջ 241-242 (Մարգարիտ Մելիք-Բեգլարյանը վախճանվել է Բաքվում 1909 թ.):

67 «Հորիզոն», 1910, № 95, 5 մայիսի, էջ 3:

68 **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 331:

69 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

70 «Նոր-Դար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 2:

71 «Հորիզոն», 1912, № 121, 8 յունիսի, էջ 3:

Որպեսզի սոված չմնան... գիւղացիները մի առանձին «բեկական փեշքեաշով» գնում են յիշեալ բեկից Անտակ-ծով կոչւած հողը, գնում մի տարի ժամանակով: Վճռում է փողը վճարել, իսկ եկամտուից ոչ մի մաս: Եւ այդպէս գիւղացիները ցանում են: Բերքը սկզբից այնքան առատ է լինում, որ գիւղացիները, պէտք է ասած, իրենց ապահով են զգում հացի կողմից: Բեկը այդչափ առատութիւնը տեսնելով, պահանջում է, որ եկամտի 1/6-1/7-ական մասը տան, իսկ խօսացած փողը չի ցանկանում այլևս վերցնել: Գիւղացիները որքան բողոքում են այդ բանի դէմ, չի լինում: Ինչ արած, «բեկը» վճռել է ցորենն ստանալ և ոչ թէ փողը... Գիւղացիները իրար մէջ վիճելուց յետոյ վճռում են համաձայնել «բեկի» հետ և խոստանում են փողը չը տալ, այլ ցորենի «բահրան» տալ... Անցնում է մի քանի ժամանակ. բնութիւնը իր սոսկալի պատիժն ուղարկում է խեղճ գիւլիստանցիներին: Այն հրաշալի արտերը, գիւղացիների միակ յոյսը, դառնում են մկների կերակուր...: Յարգելի բեկը այդ անսպասելի պատուհասն էլ է տեսնում... Անփոյթ կերպով մտնում է գիւղը և պահանջում, որ փողը տան և ոչ ցորենի «բահրան»... Խեղճ, հալածւած, տանջւած գիւղացիները խնդրում են առաջի վճռի համաձայն ցորենն ստանալ, իսկ «բեկը» ինչո՞վ է մեղաւոր...: Մինչև այսօր այդ հարցը դեռ մնում է այս դրութեան մէջ...»⁷²:

Խնդրին հետամուտ՝ մեկ այլ թղթակցություն (հոկտ. 16) հայտնում է. «Սկսած այն օրից, երբ հողերը օրէնքով նաղել է դարձել, բեգերը չեն խնայել ոչ մի միջոց գիւղական նաղելի սահմանները փոքրացնել: Օր. Գիւլիստանում, բեգերը ունեցել են հեռատեսութիւն և գիւղական լիազօր «աղսախկալներին» տւել են սահմանների մի ընդգծում, իսկ լիազօր «աղսախկալներ» լինելով բեգերի անմիջական «հպատակներ», նրանց խաթրը չեն կտրել: Եւ միանգամից մոռանալով գիւղական շահերը, արել են այնպէս, ինչպէս բեգերի քեփն է...: Աշնան սկզբներին, Գիւլիստանում, Իսահակ Ադամեան անունով մի գիւղացի, նաղելի կից բեգական հողում (հողը որոշ յայտնի չէ, թէ բեգինն է, կասկածում են, որ նաղել է), որտեղ մի քանի տարի նոյն գիւղացին վարել է ու ցանել, 6 օր շարունակ գութան է քշել ու վարել: Իսկ բեգը տեսնելով այդ, սպառնում է: Երբ յիշեալ գիւղացին կամենում է ցանել, բեգը արգելում է, ասելով, որ «իր հողն է»: Բեգը գիւղացու արին-քրտինքով շաղախած վարած ցելը խլո՞ւմ է...: Գիւղացին, լաւ «սաղաթով» և երկու ոչխար «փեշքեաշով» գնում է բեգի ոտներն է ընկնում, որ խնայի և իր զաւակներին սոված չը թողնի...: Սակայն խիղճը կորցրած բեգը խռկո՞ւմ է...: Խօսքս Թ.-բեգի մասին է...»⁷³:

1906 թ. օգոստոսի 28-ի թղթակցությամբ «Ժողովրդի արին-քրտնքի դարաւոր տէրերի մի խումբ է հաւաքւած Ղարաչինար և Խարխափութ գիւղերը: Այդ մեր պատմական Մ.-Բեգլարեաններից մի քանիսն են, որ այսօր երևան են գալիս իբրև ժողովրդի ճիշտ պատուհասներ: «Յայտնի» Գրիգոր Բեգլարովիչը մի քաջութիւն արդէն արաւ: Իր այդ քաջութեամբ նա ուզեց սպառնալ գիւղացիներին, որ ինքը ոյժ ունի, որ ինքը բիրօկրատիայի գաւակն է, որից և հովանաւորւած է... Գիւլիստանցիք այս տարի դժբախտութիւն են ունեցել առանց բեգին իմաց տալու, առանց նրան մի «փեշքեաշ» տանելու, նրա մի կտոր հողից-խոտ հարել, հաստատ իմանալով, որ իրենք պիտի հարեն և խոտի կէսը բեգին տան... Բեգը սպասում է... «Թող հարեն, վերջացնեն, հեզնելով ասում է նա, ես կօզակներին կը տանեն և իրենց, գիւլիստանցոց, բեռնել կը տամ բողոքը և կը բերեն»...: Եւ հասաւ այդ օրը: Պ. Գրիգոր Բեգլարովիչը Ղարաչինարի կօզակներից մի խումբ

72 **Անդրո** (Անդրեաս Հովասափյան), Բեկը, «Երկիր», 1906, № 3, 4 հոկտեմբերի, էջ 1-2:

73 **Անդրո**, Բեկը, «Երկիր», 1906, № 21, 25 հոկտեմբերի, էջ 2:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. գյուղը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ.)

վերցնում է գնում Գիւլիստան գիւղը, իջնում եկեղեցու մօտ և պահանջում իսկոյն 30 արաբայ պատրաստել, որի կէսը Գիւլիստանը հագիւ ունենայ: Գիւղացիներից մի քանիսը դիմում են բէգին և հրաւիրում ճաշի, սակայն ամենակտի կերպով հայիւյում է գիւղացիներին... Բայց այդ րօպէում կօզակներն արդէն իրենց դերի մէջ են մտնում և գործադրում նագայկաները... Գռռում, գռռումը ընկնում է գիւղը. արաբայ են պահանջում՝ խտոր տանելու... Գիւղացու արիւն-քրտինքով շողախած աշխատանքը բէգը խլում է... Անգթութիւնները անցնում են ամեն մի չափ ու սահման: Անգթութիւնները չեն խնայում նոյնիսկ ընկնաւոր Ասլան Ասկարեանցին, որին ուղղակի ուշաթափած, ընկած ժամանակը, այնքան ծեծում են, որ կաշին քերթում է... չի խնայում նոյնիսկ նրա կինը, որ ցանկանում է պաշտպանել իր կիսակենդան մարդուն... Նոյն օրին է հասնում և մի գիւղացի, Սիմոն Բէգլարեանը, երբ կամենում է պաշտպանել իր հարևանին, որի դաշոյնը կտրտում է, նոյն տեղը կօզակների ձեռքով... Մարսափահար գիւղացիները, արաբայ, բան վերցնում են և փախչում, անտառում թաքնում... Այդ բանը սաստիկ կատաղեցնում է թէ բէգին և թէ կօզակներին: Գիւղը թողնելով, վագում են դաշտ, հնձողներին էլ նոյն օրան հասցնում... Ծեծում է սաստիկ Ալէքսան Բալայեանցը, որից խլում են մանգաղը հնձի և արաբի հետ քշում, պլետի հարածներով... Գրիգոր Բէգլարովիչի եղբօր որդին դեռ մի քիչ էլ անցնում է իրենից. գիւղացու ձին, իր սահմաններին մօտենալու համար սպանում է, ոչխարներ խլում և այլն և այլն... Որքան համանման բաներ են կատարել այդ գիւղում այս ամառ... Անթիւ»⁷⁴:

74 Անրո, Բեգը, «Չանգ», 1906, № 17, 1 սեպտեմբերի, էջ 4:

Գյուլիստանի տնտեսությանը վնասներ էին պատճառում նաև յուրաքանչյուր տարվա ամռանը գյուղապատկան արտոններ բարձրացող սարվորները. «Գանձակի գաւառի Գիւլիստան գիւղը, որ գտնուում է Մռաւ լեռան ստորին փեշերում, ուր ամեն տարի շարունակ գալիս են թուրք, հայ սարուրներ թէ Գանձակի և թէ Ջիվանշիրի գաւառներից, անասելի մեծ վնասներ է կրում այդ սարուրներից: Հանգիստ գիւլիստանցիներից վերցրած սարերում բնակելով անպատիժ կերպով արածացնում են գիւղացիների արտերը, խտտհարքերը, գողանում են նրանց լծկանները, սպրանքը»⁷⁵:

Գյուղի համար տնտեսական դժվար տարի էր 1912 թ.: Այդ մասին մանրամասնում է նույն թվականի հունիսի 3-ի թղթակցութիւնը. «Գանձակի գաւառի մի յետ ընկած անկիւնում է գտնուում Գիւլիստան գիւղը, Մռաւ լեռան փեշերում, որը այժմ ամենածանր նիւթական դրութեան մէջ է: Անցեալ տարւայ ամբողջ բերքը անասելի ցրտերի բաժին դառնալով, գիւղացիներին թողել է դառն սովածութեան շէմքում: Այս աղէտին աւելացել էր այս ձմրան ընթացքում և տաւարի հիւանդութիւնը ու բաւականին վնասներ հասցրել անասնապահութեան: Կարանտինից վախենալով գիւղացիները չեն յայտնել կառավարութեան, որպէսզի միջոցներ ձեռք առնեն: Սոված գիւղացիները, որ դաշտային մասերից միշտ սայլերով գնալիս են եղել հաց բերելու, կարանտինի ժամանակ պիտի գրկւէին այդ հնարաւորութիւնից...: Գիւլիստան գիւղը 2-3 տարի առաջ Մելիք-Բէկլարեանից գնեց մի բաւակահին խոշոր հողամաս, 25 հազար ռուբլով (ծախսերի հետ), որի մի մասը նոյն ժամանակամիջոցում գանձել է և տրւել, իսկ միւս մա-

75 Անրո, Լուրեր Գիւլիստանի շրջանից, «Հորիզոն», 1912, № 150, 14 յուլիսի, էջ 4:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. գյուղը հարավից (լուս.՝ Վ. Գաբրիելյանի, 2007 թ.)

սը՝ 15 հազար բնակիչներով վերցրել Թիֆլիզի ազնուականների բանկից, հողը գրառվելով 30 տարույ ժամանակով, որ միայն տոկոսը, մոտ 900 ռուբ., ամեն տարի ստիպված է տալ: Աւելացնենք դրա վրայ և հարկերը, գիտական առօրեայ ծախսերը՝ կատանանք մի խոշոր ծանրություն գիլիստանցիների համար: Գիլիստանցիների միակ յոյսը առաջիկայում ստացելիք բերքն է, որը, եթե չվնասեց, նրանց բոլոր յոյսերը կարողարացնի»⁷⁶:

Ինչ վերաբերում է անասնապահության ոլորտին, ապա 1912 թ. գյուղացիներն ունեին ընդամենը 10 ձի, 180 խոշոր և 70 մանր եղջերավոր անասուն և 160 խոզ⁷⁷:

1915 թ. դեկտեմբերի 17-ի դրությամբ գյուղն ուներ 300 դեպյատին վարելահող, 1200 փութ ալյուր և 150 փութ սերմացու⁷⁸:

1917 թ. նշվել է. «Մեր գիտլի բեկը, այ. Գրիգոր Մելիք-Բեգլարեանը, դեռ չի մոռացել հին կարգերը, երբ տգրուկի նման ծծում էր խեղճ գիտացիների արիւնը, հիմի էլ շարունակում է կատարել նոյնը, օգտել գիտացիների մութ լինելուց...: Մեր գիտացիք հող չունին վարելու, այդ պատճառով դիմել են նրան, որ իր ազատ հողերը թոյլ տայ վարելու: Համաձայնել է միայն այն պայմանով, որ ինչքան հողից ստանան, կեսը նրան տան: Գեռ դա բաւական չէ, մի օր էլ ստիպել է բոլոր գիտացոց և առանց վարձի վար անել տուել: Անցեալ օրը մարդ է ուղարկել և թոյլ չի տալիս, որ վարեն, ասում է, թէ բաւական է: Իսկ հողը մնում է առանց վարելու: Եթէ գիտացիները գնան, առանց այլևայութեան վարեն այդ հողերը, մեր բուրժուական թերթերը կը յայտարարեն հողային

անկարգութիւններ: ...հարկատու է շուտով կազմել հողային կոմիտեներ, որպէսզի հողը անցնի նրանց ձեռքը, և գիտացիք նրանցից հող վերցնեն վարելու և ցանելու»⁷⁹:

Ինչ վերաբերում է ջրաղացներին, ապա մինչև 1940-ական թթ. գյուղում գործում էին Ավանց, Քլանանց, Մեղրունց, Իթամանց և Սիրյանանց ջրաղացները: Ի դեպ, Աղաջան Ավանցը եղել է գյուղի վերջին ջրաղացպաններից մեկը⁸⁰:

Աղբյուրներ. Գյուլիստանում և նրա մերձակայքում հայտնի էին Սարդարին, Գլեն (Բերդի), Խանին, Շորին, Սպիտակ թաղի, Պրին, Սրվեցուց, Չախամախաձորի, Դրուղատեղի, Անտակ ծովի, Քլանանց ճիլին և Աղամի աղբյուրները⁸¹: Իհարկէ, կար նաև գյուղի ստորոտով և խոր ձորով հոսող Ինջա գետը (մի քանի վտակներով), սակայն նրա ջրերից գյուղացիները գրեթէ չէին օգտվում:

Դպրոց. հակառակ Գյուլիստանի բարձր համարումին և այնտեղ դպրոց ունենալու՝ վաղուց հասունացած խնդրին՝ մինչև 1910-ական թթ. այդպես էլ այս գյուղում երբևէ դպրոց չէր բացվել: Ընդ որում, չնայած այն իրողությանը, որ 1912 թ. գյուղի համար տնտեսական ամենաձանր տարիներից մեկն էր, ահա հենց այս շրջանում առավել հաճախակի է արժարծվում կրթօջախ հիմնելու հարցը. «Գիլիստան գիտում դպրոց ունենալու կարիքը վաղուց է զգացում, որի համար մի քանի անգամ խօսացել է գիլիստանցիների հետ»⁸²:

76 Անդրո. Թրակցություն, «Հորիզոն», 1912, № 124, 12 յունիսի, էջ 3:

77 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

78 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 12 շրջ.:

79 Թ. Կեանց, նշվ. հոդվ., «Աշխատանքի դրօշակ», 1917, № 4, 25 յունիսի, էջ 4:

80 Պետրոսեան Ա., նշվ. աշխ., էջ 71:

81 Նարայան Բ., նշվ. հոդվ., «Մոսկի դղանջներ», 2015, № 10, դեկտեմբեր, էջ 3-4: Տե՛ս նաև Կառամանյան Կ., Книга очага: адреса тоски, Ереван, 2014, т. 3, с. 84.

դում, որտեղ ցանկութիւն են յայտնել շուտով դպրոց բանալ, բայց մինչև օրս դժբախտաբար մնացել է այս կարևոր գործը անկատար: Վերջապէս օրերս յաջողեց դպրոց բանալու գործը իրականութեան մօտեցնել և յոյս կայ, որ սեպտեմբերից արդէն կիրագործի այս հացի ու ջրի պահանջ դարձած խնդիրը»⁸²:

Նույն թվականի օգոստոսյան հրապարակումներից մեկը հայտնում է. «Գլխիստան գիւղը, որ գտնուում է Գանձակի և Ջիւանշիրի գաւառների սահմանում, առանձնացած Մռա լեռան ստորին փեշերում, մինչև այժմ մեծ կարիք էր զգում դպրոցի, իսկ այդ իր սեփական ուժերով պահելու միջոց չուներ: Սրանից մի քանի տարի առաջ Ղարաբաղի նախկին քեմական տեսուչ պ. Ստ. Տէր-Աւետիքեանի առաջարկութեամբ ծխական դպրոց բանալու առաջարկութեամբ կազմեց մի համախօսական, որը սակայն չիրագործեց նիւթականի ծանրութեան պատճառով: Այժմ այդ գիւղը համախօսականով դիմել է Գանձակի դիրեկցիային և խնդրել բանալու պետական դպրոց, իր վրայ վերցնելով տարեկան միմիայն 150 ռուբլի տուրք: Դպրոցը մօտ ապագայում կը բացուի»⁸³:

Ի վերջո, դպրոցը բացվում է Առաջին աշխարհամարտի ընթացքում. դասավանդում են Անդրեաս և Եղիշե Հովասափյան եղբայրները հորեղբոր՝ Կորյուն քահանա Հովասափյանի հետ միասին⁸⁴:

Խորհրդային սկզբնական տարիներին և մինչև 1934/1935 ուստարին հնգամյա կրթական հաստատություն էր, որից հետո վերածվում է յոթամյա դպրոցի⁸⁵:

1936 թ. Գլուխտանում գործում էր միայն տարրական դպրոց՝ 4 դասարանով և շուրջ 170 աշակերտով⁸⁶:

1970 թ. գործում էր Խորհրդային Միության հերոս Գարեգին Բալայանի անվան միջնակարգ դպրոցը⁸⁷:

1976/77 ուստարում դպրոցն ուներ 12 դասարան, 22 ուսուցիչ և 318 աշակերտ⁸⁸:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. միջնակարգ դպրոցի մուտքին կից ցուցանակները (լուս. հեղ.՝ անհայտ, 1980-ական թթ.)

82 **Անդրո.** Լուրեր Գլուխտանի շրջանից, «Հորիզոն», 1912, № 150, 14 յուլիսի, էջ 4:

83 Լուրեր Գլուխտանի շրջանից, թղթակցություն, «Հորիզոն», 1912, № 196, 7 սեպտեմբերի, էջ 4:

84 **Պետրոսեան Ա.,** նշվ. աշխ., էջ 98:

85 Նշվ. աշխ., էջ 98-99:

86 **Ղուլյան Բ.,** Անսահման հոգատարության նոր դրսևորումը, «Նոր ուղի», 1977, № 90, 28 հուլիսի, էջ 2:


87 **Ղահրամանյան Վ.,** Օջախի գիրք, հ. Ա, էջ 30:

88 **Ղուլյան Բ.,** նշվ. հոդվ., «Նոր ուղի», 1977, № 90, 28 հուլիսի, էջ 2:

Պատմական հուշարձաններ. Գլուխտանը բավականաչափ հարուստ է պատմական տարաբնույթ հուշարձաններով: Նշանավոր էին Մելիք-Բեգլարյանների իշխանական ապարանքը, Սր. Աստվածածին եկեղեցին, երկու հին գերեզմանոցները, Ինջա գետի վրա պահպանված կամրջի մնացորդները, Ամենափրկիչ վանքը (Նապատ), Գլուխտանի հռչակավոր բերդը, Հացուտի և Կտրած եղցու՝ խաչքարերով գերեզմանոցները և այլ հուշարձաններ:

Ապարանք. հայկական մելիքանիստ այլ բնակավայրերի նման Գլուխտանում ևս գավառատեր իշխանական ընտանիքն ուներ գյուղական սովորական կացարաններից թե՛ ընդարձակությամբ, թե՛ հորինվածքով և թե՛ կառուցվածքային լուծումներով էապես տարբերվող բնակարանային համալիր՝ ապարանք՝ հիմնովին վերակառուցված 1782 թ.⁸⁹ Աբրահամ սպարապետի որդու՝ Հակոբի նախածեռնությամբ. «Գիւղում նշանաւոր է մի հին, երեք թաղակապ սենեակներից բաղկացած քարաշէն ապարանք...»⁹⁰ (N 40°21'25.06", E 046°35'05.06", ծ. մ. 1275 մ):

Համալիրը բաղկացած է ընդհանուր առմամբ ուղղանկյուն մակերես զբաղեցրած երդիկավոր մեկ ընդարձակ գլխատնից (ներքին չափերը՝ 7,15 x 7,15 մ)՝ շրջապատված երեք կողմերից թաղածածկ սենյակներով և սյունասրահավոր պատշգամբով:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. գյուղի կենտրոնական մասում գտնվող մելիքական ապարանքի հատակագիծը (չափ.՝ Ա. Ղուլյանի)


Բոլորը միասին առջևում ունեն հարավային կողմի անկյունները կիսաբոլորակ աշտարակներով հզորացված ուղղանկյուն շրջապարսպի ներքո առնված բակ՝ արևելակողմից բացված միակ դարպասով:

Ապարանքում վերջին նորոգություններն իրականացվել են 1919 թ., որտեղ մինչև 1992 թ. բնակվում էին Աբրահամ սպարապետի տոհմի շառավիղները՝ Մեփյանները⁹¹:


89 Արձանագրության մեջ տասնավորի թերի փորագրվածքը տարեթվի ընթերցման տարակարծության պատճառ է դարձել. համեմայն դեպ, շրջանառված են նաև 1752 և 1772 թվականները (ավելի մանրամասն տես **Ղուլյան Ա.,** Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, էջ 43-49):

90 **Ղաղայեան Ծ.,** նշվ. աշխ., գիրք Ե, էջ 331:

91 **Ղուլյան Ա.,** նշվ. աշխ., էջ 43-50:




0 1 2 3 4 5 10ս




0 20 40 60ս




0 20 40 60ս





0 50 100ս




Կտրվածք Բ - Բ



Ճակատ Ա - Ա



0 1 2 3 4 5 10ս



0 10 20 30 40 50ս

ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. մելիքական ապարանքի չափագրություններն ու վերակազմությունները (հեղ.՝ Ա. Դուլյան)

Մելիք-Բեգլարյանների ապարանքի գլխատանն արևմուտքից կից դահլիճի շքամուտքի ճակատակալ քարին՝ 5 տող.



Շնորհիւն ա(ստուծոյ) շին/եցաւ ապարանս ի թվին Ռ- եւ / ՄԼԱ (1782), եւ՝ Յակոբոս, ծառայ ա(ստուծոյ) ի շխտղ գեղոյս, որդի Աբրահամ ըսպարապետին:

Հրատ. **Բարխուդարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 241: **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 331: Գիվան հայ վիճակագրության, Արցախ, պրակ V, կազմ.՝ **Մ. Բարխուդարյան**, Երևան, 1982, էջ 248: **Ղահրամանյան Կ.**, Նյուրթեր Գյուլիստանի մելիքության պատմության վերաբերյալ, «ԼՀԳ», 1979, № 12, էջ 114: Նույնի՝ Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք Ա, 1993, էջ 42, 70: Օջախի գիրք, հ. Ա, էջ 69; հ. Բ, էջ 62: **Դուլյան Ա.**, նշվ. աշխ., էջ 43:

Ճանոթ. ըստ Ա. Դուլյանի՝ տարեթիվը պետք է վերծանվի *ՌՄԻԱ* (1772). «...արձանագրության լուսանկարում և չափագրված գրչագրում պարզորոշ երևում է, որ չնայած կցագրերով ու նեղլիկ տառաձևերով խիտ փորագրված վիճագրին, տասնավոր տառի ուղղածից մասնիկից հետո թողնված է ընդարձակ տառարանք՝ մինչև միավորի «Ա»-ն: Ուստի առավել հավանական է, որ այստեղ փորագրողը բաց է թողել ոչ թե տասնավոր «Լ»-ի, այլ «Ի»-ի հորիզոնական մասնիկը»:

Տարբերեցում. Մ. Բարխուդարյանցի մոտ տարեթիվն է՝ *ՌՄԱ* (1752): Նույնն է ընթերցել նաև Կ. Ղահրամանյանը:



Սբ. Մինաս եկեղեցի. գյուղամիջի գույգ եկեղեցիներից հինն էր. «Գիւղիս հիւսիսային ծայրում կայ մի հնաշէն եկեղեցու աւե-



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. գյուղի կենտրոնական մասում գտնվող մելիքական ապարանքը, շինարարական արձանագրությունը, հատվածներ ապարանքի գլխատան ներքին ծավալներից (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ. և Ս. Կարապետյանի, 1989 թ.) և գլխատան վերակազմությունը (իղղ.՝ Ա. Ղուլյան)



ԳՅՈՒԼԻՍԱՆ. Սբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, հյուսիս-արևմուտքից և հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սբ. Աստվածածին եկեղեցին հյուսիս-արևմուտքից և հարավից, հարավային և արևմտյան ճակատներից բացված մուտքերը, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

րակ, որ շինուած է եղել ամբողջ սրբատաշ քարով և կոշտում է այժմ սուրբ Սինաս»⁹²: Վերջինիս հյուսիսային որմին տակավին ժԹ դարավերջին պահպանված շինարարական արձանագրութունն ավանդել է եկեղեցու կառուցման ժամանակը (1659 թ.) և նախաձեռնողների անունները.

Կաման աստուծոյ շինեցինք խորանս տանուտերն՝ Ուլուխան, աշխատողք երկու՝ տէր Դաւիթն, Սպարապետն, պտղն (պտղաբերողքն), առ հասարակ ժողովուրդքն. թվ(ին) ՌՃԸ (1659):

Հրատ. **Քարխոտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 241: Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 248:


Որպես գրչության վայր՝ հիշվում է 1692 թ.⁹³:

1881 թ. օգոստոսին գյուղ այցելած Բաֆֆին այս եկեղեցու մասին տարակուսանքով նշում է. «Հին եկեղեցին ավերակ է, այժմ նույն գյուղացիները, որ նրա մեջ մկրտվել են, նրա սերունդը հազար անգամ համբուրել են, նրա մեջ պահում են իրանց ոչխարները»⁹⁴:

Եկեղեցին ավերակ վիճակում էր նաև Ե. Լալայանի այցելության ժամանակ. «Գիտում կայ մի հին աւեր...»⁹⁵:

1960-ական թվականներին հազիվ նշմարվում էին հիմնապատերը⁹⁶:

Սր. Աստվածածին եկեղեցի. գտնվում է գյուղի կենտրոնում՝ հրվանդանաձև երկարած բլրածյուղի վերջավորության վրա (N 40°21'25.39", E 046°35'13.12", ծ. մ. 1256 մ):



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սր. Աստվածածին եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի) և կտրվածքը դեպի արևելք (չափ.՝ Կ. Ղահրամանյանի)

Ունի եռանավ բազիլիկ հորինվածք: Երկթեք ծածկի տակ առնված կիսաշրջան թաղերը ներքուստ պահում են քառակուսի կտրվածքով երկու զույգ սյուներին հանգչող թաղակիր կամարները: Կիսաբոլորակ եզրագծով ավագ խորանի երկու կողմերում

⁹² **Քարխոտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 241:

⁹³ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Երևան, 2008, էջ 130:

⁹⁴ **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 586:

⁹⁵ **Լալայան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 331:

⁹⁶ Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 248:

կրկնահարկ ավանդատներն են: Բացառությամբ անկյունաքարերի (նաև թաղակիր կամարների)՝ կառուցված է անտաշ և կուպտատաշ քարով, կրաշաղախով:


Համաձայն եկեղեցու շինարարական արձանագրության՝ կառուցվել է 1688 թ.: Մակայն մեզ է հասել շնորհիվ հետագայում պարբերաբար իրականացված մի շարք նորոգությունների:

Եկեղեցու հարավային մուտքի աջ եզրապատին (ներքուստ)՝ ներքևից 3-րդ շարքի քարին (60,5 x 36,5 սմ)՝ 4 տող.

Շինեցաւ ս(ուր)ք եկեղէ/ցիս (ի) կաթ(ո)ղ(ի)կոս(ու)թե(ա)ն ս(ր)բ/իսզ(ա)ն տ(է)ր Սիմէօնի, թվ(ն) (Ռ)Ճ/ԼԷ (1688). Գ-էօրք քօղվա(°):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի: Վերջին երկու քառերը փակագրեր են, վերծանությունը թեական է:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սր. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը (լուս.՝ Ա. Ղուլյանի, գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Կառուցումից ընդամենը 4 տարի անց եկեղեցում ստեղծվել է մի ձեռագիր Մաշտոց (գրիչ՝ Դավիթ, ստացող՝ Մելիքսեթ քահանա): Վերջինիս հիշատակարանում նշվել է. «Ի երկիրս Բարտայ, ի գեօղս որ գոչի Գուլըստեան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Սինասայ, թվական ՌՃԽԱ (1692), ի հայրապետութեանց տեառն Սիմօնի եւ Երեմիայի, իշխանութիւն Պարտոյ երկիրս Ապագղուլիխանն, ի խնդրոյ բարեմիա եւ աստուածասէր Մելիքսեթ քահանային...»⁹⁷:

1878 թ. գարնանը Գանձակում տարածված ծաղիկ հիվանդության համաճարակի դեմ պայքարելու նպատակով 2-ական քահանա և աշխարհական են ուղարկվում Գյուլիստան՝ Ծեր ավետարանը բերելու: Նշյալ թվականի ապրիլի 15-ին այն փոխա-

⁹⁷ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 130:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու ավերակները 2007 թ. (լուս.՝ Վ. Գաբրիելյանի)

դրվում է Գանձակի Սբ. Հովհաննես, իսկ ամսի 23-ին՝ Սբ. Լուսավորիչ եկեղեցի. «Այդ օրը պատարագիչն էր գեր. յաջորդը: Ինչպես լսում ենք այդ պատարագից գոյացած արդիւնքը, որ մօտաւորապես հասնում է 80 բուբուլու, նուիրել են յօգուտ շինութեան Գիւլստան գիւղի խախտու եկեղեցու: Այդ նպատակով ժողոված է մօտ 350 բուբուլ.»⁹⁸:

Եկեղեցին բազմիցս հիշվում է ԺԹ դարի վավերագրերում (օրինակ՝ 1880 թ.⁹⁹ և 1893 թ.¹⁰⁰):

1881 թ. օգոստոսին, երբ կառույցն արդեն 193 տարեկան էր, այցելու Բաֆֆին նշում է. «Ունի մի եկեղեցի, որ շատ հին չէ»¹⁰¹:

Համաձայն տեր Մովսեսի վկայության՝ 1883 թ. հուլիսի 11-ին «...ի գիշերի գաղտնի բացեալ գողութն եկեղեցոյն Գիւլստան գեղջն իւրեանց գողացեալ տարեալ են յեկեղեցոյն զԱւետարանն Ծեր անուանեալ, հանդերձ իւրովն բազմաթիւ կերպասեայ թաշկինակօք, զմի հատ հին շուրջառ արծաթեայ..., գերկու հատ խաչ արծաթեայ առանց ականց, զմի հատ խաչ արծաթեայ ականակուռ, գերկու հատ փոքրիկ խաչս՝ յորոց մինն արծաթեայ ականակուռ և միսն ոսկի, զմի հատ արծաթեայ խաչ ձեռաց, գերկու արծաթեայ խաչ՝ գործ Մոսկվայի, զմի հատ բուրվառ և զմի կանթել՝ նոյնպէս գործ Մոսկվայի, գերկու շապիկ գրքակալի և զմի ծածկոց սեղանոյ»¹⁰²:

1889 թ. նշվել է. «...Գիւլստանի եկեղեցու տանիքը շինելու համար սրանից 10-11 տարի առաջ ժողովուած է 500-600 ր. գումար: Չարմանալի մարդիկ կան աշխարհիս վրայ: 10-11 տարի առաջ փող հաւաքեցին, որ յիշեալ եկեղեցու կիսով չափ քանդուած տանիքը շինել տան, սակայն մինչև այսօր չեն էլ մտածում գործադրելու իւր նպատակին»¹⁰³:

1890 թ. եկեղեցու ծածկն արդեն բավականաչափ քայքայված էր. «...շատ անախանձեղի դրութեան մէջ է գտնում: Այնքան ծակ ու ծուկ կայ, որ ժամասացութեան ժամանակ ծիծեռնակները թափում են ներս և ճլվոց բարձրացնում: Բացի դրանից, ծիծեռնակները բուն են դրել եկեղեցու մէջ և աղբ են թափում: Յոյս կայ, որ եկեղեցին այդ դրութիւնից կազատուի վերջապէս, որովհետև զիւղացիները ցանկանում են նորոգել»¹⁰⁴: Նորոգություն

իրականացվում է երկու տարի անց՝ 1892 թ.: Թիթեղապատվում է քայքայված երկլանջ տանիքը 1600 ռ. ծախսով¹⁰⁵:

1908 թ. նոյեմբերի 5-ի լուսադեմին սաստիկ քամուց հիմնովին պոկվում են տանիքի հսկա գերանները և թիթեղածածկը. «...եկեղեցոյ տանիքը հիմնովին պոկած՝ դուրս քցած՝ առանց մի վնասի պատերին. տանիքի ժեստերը և ահագին մեծութեան գերանները, որ երկու հաղթ գումէջ հազիւ հազ միայն կարող է քարշել, ցիրուցան քցած եկեղեցուց դուրս մի քանի սաժէն հեռու և այդ եղել է ահագին քամու ոյժից...»¹⁰⁶:

1924 թ. փետրվարի 7-ին Գանձակի հայոց առաջնորդ Լևոն Եպիսկոպոսն Էջմիածնի գերագույն հոգևոր խորհրդին հայտնում է հետևյալը. «Գյուլստան գյուղի գործկոմի նախագահ Խոսրով Կարապետյան Սեյրանյանցը ինքնագլուխ հանել էր եկեղեցուց եկեղեցական գորգը և վաճառել, որպես թե գյուղի համար հողաչափ բերելու նպատակով»¹⁰⁷:

1927 թ. եկեղեցին փակվել է¹⁰⁸:

1989 թ. ապրիլի 24-ին տեղի է ունենում նորոգված եկեղեցու վերածումը Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի գլխավորությամբ: Հիշատակաց մատյանում այդ մասին արձանագրվել է. «1989 թիւ. բացումը եղաւ Գիւլստան (Վարդօտ) գիւղի եկեղեցու, երկրորդ բացումը, որը տեղի ունեցաւ հայ կօտորումքի 1915 թիւն: Այսուհետև մենք՝ գիւլստանցիներս, կը յիշենք Ապրիլի 24-ը՝ եկեղեցոյ օրը: Յիշէ՛ք, հայեր»¹⁰⁹:

1989 թ. հուլիսի 19-ին վերիշենցի Ժորա Մաղաթեյանը եկեղեցուն է նվիրում 2 մոմակալ¹¹⁰, իսկ 1991 թ. փետրվարի 10-ին Մինաս Մարգարյանի ընտանիքը՝ «...սեղանն իր արեղիկներով եւ մոմակալներով»¹¹¹:

1992 թ.-ից հետո աղբբեջանցի ելուզակները եկեղեցին պայթեցրել են:

Հայտնի է, որ ժամանակին սույն եկեղեցին մեծ համբավ ուներ ոչ թե ճարտարապետական կամ ուրիշ արժանիքների, այլ նրանում պահվող մի հին ձեռագրի շնորհիվ. «Գյուլստանի եկեղեցուն գտնվում է մի հռչակավոր գրչագիր ավետարան, որ պաշտվում է ամբողջ գավառի ժողովրդից: Սկսյալ Գանձակից և ամեն կողմերից քաշում է նա յուր մոտ ուխտավորների բազմություն, և նրան վերաբերում են բազմաթիվ հրաշագործությունները:

Գյուլստանում իջևանած լինելով գյուղի քահանայի տանը, ես խնդրեցի, որ ինձ տանե եկեղեցին և ցույց տա հիշյալ ավետարանը: Նա մեծ ուրախությամբ կատարեց իմ խնդիրը, կարծելով, թե ես էլ ուխտավոր եմ:

Ստանք եկեղեցին, նա իսկույն ծածկվեցավ շուրջառով և մի արկղի միջից դուրս հանեց մի ահագին կապոց և դրեց գրքակալի վրա: Այդ կապոցը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ գույնգույն թաշկինակներ մինը մյուսի վրա փաթաթած: Քահանան շարունակելով շարականը, մեկ-մեկ բաց էր անում թաշկինակները, որոնցից շատերը մետաքսից էին: Վերջապես, այդ բոլոր փաթեթների միջից հայտնվեցավ ավետարանը: ...կամեցա բաց անել, որ նայեմ: Քահանան արգելեց, կիսաքաղաքավարի կերպով հասկացնելով, որ ինքը միայն կարող էր նրան բաց անել, իսկ մի աշխարհական մարդու մատները չպիտի շոշափեին այդ սրբությունը...: Քահանան յուր ձեռքով, որ շատ էլ մաքուր չէր, բաց արեց սուրբ

98 Ս., Նանակ Գանձակից, «Աշակ», 1878, № 77, 13 մայիսի, էջ 2:
99 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 33:
100 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 194:
101 Բաֆֆի, նշվ. աշխ., հ. 8, էջ 586:
102 ՀԱԳ, ֆ. 56, ց. 2, գ. 1245, ք. 7:
103 «Նոր-Ղար», 1889, № 189, 11 նոյեմբերի, էջ 2:
104 «Նոր-Ղար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 2:

105 ՀԱԳ, ֆ. 227, ց. 1, գ. 72, ք. 21 շրջ.:
106 Նշվ. գործը, ք. 21:
107 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), Երևան, 1994, էջ 46:
108 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, ք. 12:
109 Պետրոսեան Ա., նշվ. աշխ., էջ 197-198:
110 Նշվ. աշխ., էջ 311:
111 Նշվ. աշխ., էջ 315:

գիրքը: Դա մի հասարակ գրչագիր ավետարան էր, հաստ թղթի վրա գրված, ոչ Գետաշենի ավետարանի գեղեցկությունն ուներ և ոչ նրա գրչության արհեստը: Պատկերները շատ տգեղ էին, այնուամենայնիվ ժողովրդի մեջ ավելի համարում և համբավ ստացած էր, քան թե Գետաշենի ավետարանը: Իմ որոնածը էր նրա հիշատակարանների մեջ մի պատմական տեղեկություն գտնել, այն ևս չգտա, որովհետև վերջին թերթերը քրքրված և պակաս էին»¹¹²:

Ինչպես երևում է, հետագայում ևս այս եկեղեցին, շնորհիվ վերոնշյալ ձեռագրի առկայության, բազմաթիվ այցելուներ է ունեցել, ընդ որում, նրանցից ոմանք որոշ հիշատակություններ են թողել ձեռագրի մասին:

Այսպես՝ 1890 թ. նշվել է. «...շատ ուխտատուներ են գալիս Գիւլիստան՝ այդ գիւղի եկեղեցում գտնվող «ծեր» ավետարանը համբուրելու»¹¹³:

Մ. Բարխուդարյանը ցավով նկատում է, որ «Գողացած են յիշատակարանը մի քանի թերթերով միասին, վասն որոյ անյայտ է ավետարանիս գրութեան թուականն և գրուած տեղն»¹¹⁴:

Իր հերթին Ե. Լալայանը նշում է. «Այս եկեղեցում կայ մի «Ծեր-ավետարան» կոչուած ձեռագիր, որ շատ հրաշագործ է համարում և շատ ուխտատուներ ունի»¹¹⁵:

Հայտնի է, որ մեծաթիվ ուխտավորների նվիրատվություններից յուրաքանչյուր տարի գոյանում էր մի որոշ եկամուտ. «Եկեղեցու մեջ է յայտնի «Ձեռ. Աւետարանը», որին անթիւ ուխտատուներ են այցելում և որը արդիւնքը է բերում տարեկան 70 ր.»¹¹⁶:

Սակայն այդ գումարները հաճախ ոչ թե հատկացվում էին համայնքին (օրինակ՝ ծխական դպրոցի պահպանության համար), այլ պարզապես մսխվում էին: Այդպիսի մի իրավիճակ է նկարագրում 1909 թ. սեպտեմբերի 4-ի թղթակցությունը. «Գիւլիստան գիւղը ունի մի սրբատեղ, որը անչափ շատ ուխտատուներ է ունենում ամեն տարի, գլխատրապետ օգոստոսի 15-16-ին, այսինքն՝ Վերափոխման տօնին: Այդ սրբատեղից ստացւած արդիւնքը մինչև այսօր կապալով տրուած է եղել գիւղի քահանային՝ Կորիւն քահանայ Յովսէփեանին 55 ռուբլով: Վերջերս շատ և շատ արդիւնք է վերցնում, քիչ կապալ տալիս և այլն: Մեղադրողների շարքերին պատկանում է և շրջանի գործակալ (Իկիրմիդօրթի) Մահակ քահ. Տէր-Յարութիւնեանը, Մանասին Թաղ գիւղի քահանան (Նոր Շեն): Սա սովորական «սաւ-կօւտներից» անցնում է գործնականի: Նա Վերափոխման տօնի օրը գալով Գիւլիստան, գիւղի քահանային ներկայացնում է մի պաշտօնաթերթ, ասելով, հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ պէտք է մուտքին հսկէ, որպէսզի որոշէ նրա քանակը: Տէր-Կորիւնը բոլորովին հաւատարմով չի արգելում նրան այդ քանը անել:

Այսպիսով դրութեան տէր դառնալով գործակալ Մահակ քահանան իր կեղծ պաշտօնական թղթով, սկսում է զանձել մուտքը իր գիւղի երեցփոխ Արշակ Անանեանի հետ: ...այս տարի չափազանց շատ էր ժողովուրդը և արդիւնքը սովորականից շատ էր սպասում: Սակայն ի՞նչ: Օրայ հերոս գործակալը իւրացնելով ամբողջ արդիւնքը՝ միմիայն 35 ռուբլու հաշիւ է ներկայացնում: Մոմի վաճառումից ստացւած 11 ռուբլին նոյն ճանապարհով վերցնում է, իբր թէ կոնսիստորիայի կարգադրութեամբ է անում: ...այս երևոյթը անտանելի է, որպէս անօրէն գործ և որպէս կողոպտման մի նոր ձև, ուստի սրանով հրաւիրում ենք Ղարաբաղի

թեմի հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը, թողնելով մնացեալ մանրամասնութիւնները քննութեան օրը տալու»¹¹⁷:

1911 թ.-ից մինչև 1912 թ. սկզբները նույն աղբյուրից գոյացել էր 55 ռ.¹¹⁸:

Մինչև 1992 թ. Ծեր ավետարանը, որին տեղացիներն անվանում էին Պապ, պահվում էր Մամուշ Բեգլարյանի մոտ (1947 թ. Բաքվից եկած պաշտոնյային է հանձնում ձեռագրի միայն արծաթե կազմը): Այն Մատթեոսի ավետարանն էր և աչքի էր ընկնում մանրանկարներով: Գյուղի բռնագաղթի ժամանակ Մամուշի հարսը՝ Սեդան, ձեռագիրը փրկում է՝ տանելով Արմվյան քահանային: «Տնից դուրս գալիս «Ծեր Աւետարանը» դրի խուրջինի մի աչքում, միսում էլ՝ մի քիչ ուտելիք, խուրջինն ուսս առայ ու տնից հեռացայ»¹¹⁹:

2015 թ. նոյեմբերի 21-ին ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանը Գանձասարի վանքում բացված «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնին է նվիրում Գյուլիստանի Ծեր ավետարանը¹²⁰:

Եկեղեցու որմերին, շինարարական արձանագրությունից զատ, առկա են ևս մի քանի հիշատակագրություններ: Ահա դրանք.

Խաչքար. տեղադրված էր եկեղեցու հյուսիսային ավանդատան մուտքի աջ կողմում՝ որպես շարվածքի քար, ստորին մասում՝ 2 տող.

Խ(ա)չս Պային, թվ(ին)ն Ռ-Լ/Դ (1589):

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Արձանագրություն. եկեղեցու հարավային ճակատի հարավարևմտյան անկյան ստորին երրորդ քարաբեկորին՝ 2 տող.

Թվ(ին)ն Ռ-ՃՁԸ (1739). | Գեօրք:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. անձնանունը տրված է փակագրով:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. 1739 թ. հիշատակագրություն (լուս. և գրչ.՝ Ա. Կարապետյանի, 1989, 2018 թթ.)

Տապանքար. ուղղանկյունաձև (184 x 58 սմ), եկեղեցու ներսում՝ հյուսիսարևելյան մույթից հարավ-արևմուտք՝ 3 տող.



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. տապանքար (1813 թ.) եկեղեցու ներսում (լուս.՝ Ա. Կարապետյանի, 1989 թ.)

112 Բաճիկ. նշվ. աշխ., հ. 8, էջ 586-587:

113 Շ., Գիւղական տպավորութիւններ, «Մշակ», 1890, № 78, 14 յուլիսի, էջ 1:

114 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 241: Տե՛ս նաև Մինասյան Թ., նշվ. հոդվ., «Բանբեր Մատենադարանի», 2015, № 22, էջ 206: Նույնի՝ նշվ. աշխ., էջ 57:

115 Լալայեան Ե., նշվ. աշխ., գիրք Ե, էջ 331:

116 «Նոր-Դար», 1894, № 187, 5 նոյեմբերի, էջ 2:

117 Վերդիեան Պ., Նոր ձևի թալան, «Հորիզոն», 1909, № 35, 13 սեպտեմբ., էջ 3:

118 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 548:

119 Պետրոսեան Ա., նշվ. աշխ., էջ 104: Ծեր ավետարանի մասին տե՛ս նաև Ղաւրանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 96-97:

120 Պետրոսեան Ա., նշվ. աշխ., էջ 66:

Այս է տապան Գօգիայ բեգին, որ է որդի Բաղդասար աղին. / ի Թիփլիզու քաղաքացին. ազգականն է Ղաթեանին. / ՌՄԿԲ (1813) թ(վին). յուլիսի ԺԵ (15)ին 1813 առ ա(ստուա)ծ փոխտ-գալ:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիմագրի ընդօրինակությունն ըստ 1989 թ. լուսանկարի:

Արձանագրություն. եկեղեցու հարավային մուտքից ձախ.
Յիշեցեք պանս. / ՌՄԿԶ (1817) թվին Թիփլիզու էլիկն էկ/առ
Էղիաս գրեցի / կարթոզն, ա(ստուա)ծ ողորմի առ:



Հրատ. «Նոր-Գար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 2: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 71: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 70:
Ծանոթ. նախկին ընթերցումներում առկա են անճշտություններ:

Եկեղեցու զանգին.
Յիշատակ է զանգակս այս յազնուական պարոն Յովհաննէս
Կարազեանէ Խորեանց, զորս ընծայեաց նա Հայոց մայր եկե-
ղեցոյ Գիլատան գիղին ի 1848 ամի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. 1970-ական թթ. զանգը փոխադրվել է Ներքիշենի պատմաերկրագի-
տական թանգարան, որտեղ էլ այն տեսել և հիշատակագիրն ընդօրինակել ենք
1984 թ.:

Եկեղեցու հարավային ճակատի հարավարևմտյան անկյան ստորին 3-րդ
քարաքեկորին.
Ղազար:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:

Քահանա. Սբ. Աստվածածին եկեղեցուն ԺԹ-Ի դարերի ըն-
թացքում սպասավորած քահանաներից հայտնի են.

Մովսես Տեր-Հարությունյան Տեր-Աստվածատրյանց (ծնվ.
1810 թ.). քահանա է ձեռնադրվել 1832 թ. փետրվարի 14-ին Գան-
ձասարի վանքում և պաշտոնավարել առնվազն մինչև 1888 թ.¹²¹:
Ուսանել է հոր՝ տեր Հարությունի մոտ: 1857 թ. դրությամբ ուներ
2 որդի (Սամսոն և Սողոմոն). վերջինս վախճանվել է 1864 թ. տես
վիմագիրը) և 2 դուստր:

121 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 531, 532, 533, 538, 542: Տես նաև Վաղարշապատի հայ եկե-
ղեցու պատմության, գիրք Թ, էջ 209: **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 87: ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 127-128: «Արարատ», 1871, Ը, էջ 484: 1873, ԺԲ, էջ 486: 1888, ԺԲ, էջ 807:

Ի դեպ, 1881 թ., առանց անունը տալու, Բաֆֆին հիշում է
գյուղի հյուրընկալ քահանային. «Թեև մոտ յոթանասուն տարե-
կան մարդ էր, յուր ձեռքով ձին թամբելով, մի ձի էլ ինձ համար
պատրաստելով, հրացանը ձգեց ուսին, ծոխ նման թռավ նրա
վրա և իմ առջևը ընկնելով, սկսեց առաջնորդել ինձ»¹²²:

1883 թ. հովվում էր **Մովսես Տեր-Հարությունյանը**¹²³:
Ըստ ամենայնի՝ 1893 թ. տեր Մովսեսն արդեն վախճանված
էր¹²⁴:

Կորյուն Հովասափյանց (ծնվ. 1856 թ.). քահանա է ձեռնա-
դրվել 1882 թ. մայիսի 7-ին: Հիշվում է 1893-1917 թթ.¹²⁵: 1910 թ.
ունեի 2 որդի (Գառնիկ և Վահան): Ի դեպ, 1893 թ. 40-ամյա տեր
Կորյունը հովվում էր նաև 15 տուն ունեցող Եղակեր գյուղին¹²⁶:

1909 թ. երեցփոխն էր **Պ. Վերդիյանը**¹²⁷:
1912 թ. հովվում էր **Կորյուն Հովասափյանցը**¹²⁸:

Մատուռ. գտնվում էր եկեղեցու մոտ: ԺԹ դարի վերջին ար-
դեն ավերակ էր. «Եկեղեցու դեմը կայ մի քանդուած մատուռ, որի
արձանագրութիւնից երևում է, որ 1300 տարուայ է»¹²⁹:

Գերեզմանոց. տարածվում էր եկեղեցու շուրջը և զբաղեցնում
բավական ընդարձակ տարածք: 1992 թ. դրությամբ դեռևս պահ-
պանվում էին բազմաթիվ արձանագիր տապանաքարեր: Տևա-
բար այս գերեզմանոցում են ամփոփվել հատկապես Մելիք-Բեգ-
լարյան տոհմի հանգուցյալները. «Եկեղեցու բակումն է թաղումն
Մելիք-Բեգլարեանների տոհմը»¹³⁰:

Տապանաքար. եկեղեցու հարավային պատի մոտ, արձանագրությունը՝ 3
տող.

Այս է տապան Գրիգոր տանուտեր(ի), / [որ պա]տճառ եղև
շինութեան, / ...ՌՃԿԲ (1713):
Հրատ. **Ղահրամանյան Կ.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1979, № 12, էջ 114: Նույնի՝
Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 70: Օջախի գիրք, հ. Ա, էջ 69:

Տապանաքար. արձանագրությունը՝ 5 տող.
Այս է տապան / Պեկլարանց / ... / ... / ՌՃԿԷ (1718):
Հրատ. **Ղահրամանյան Կ.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1979, № 12, էջ 112: Նույնի՝
Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 70: Օջախի գիրք, հ. Ա, էջ 69:

Տապանաքար. եղծված արձանագրությունից ընթերցվել է միայն տարեթիվը.
ՌՄ (1751):
Հրատ. **Ղահրամանյան Կ.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1979, № 12, էջ 114: Նույնի՝
Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 70: Օջախի գիրք, հ. Ա, էջ 69:

Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.
Այս է տապան / Իսրաել քոխին, / որ է որդի Ավարին. թվ(ին)
ՌՄ (1751):
Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 71: Նույնի՝ Օջա-
խի գիրք, հ. Ա, էջ 70:

Տապանաքար. արձանագրությունը՝ 6 կարճ տող.
Այս է դարսան Բե(կ)լարա(ն)ց Գիլիքորի / որդի Բեկլարին, /
թվին ՌՄԱ (1752):
Հրատ. **Ղահրամանյան Կ.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1979, № 12, էջ 114: Նույնի՝
Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 70: Օջախի գիրք, հ. Ա, էջ 69:

122 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 587:
123 ՀԱԳ, ֆ. 56, ց. 2, գ. 1245, ք. 7:
124 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 195:
125 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 260-261; ց. 4, գ. 713, ք. 1: Տես նաև ֆ. 57, ց. 3, գ.
48, ք. 14-15; ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 227 շրջ.: **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք,
հ. Բ, էջ 97:
126 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 194:
127 **Վերդիյան Պ.**, նշվ. հոդվ., «Հորիզոն», 1909, № 35, 13 սեպտ., էջ 3:
128 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 361 շրջ.:
129 «Նոր-Գար», 1894, № 187, 5 նոյեմբերի, էջ 2:
130 Նույն տեղում:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու շուրջը տարածված գերեզմանոցը (լուս.՝ Ա. Ղուլյանի և Ս. Կարապետյանի, 1989 թ.)

Տապանաքար. արձանագրությունը՝ 5 տող.
Այս է տապան .../.../...աղին / ... ՌՄԻ (1771):
 Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 70: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 69:

Տապանաքար (սպիտակ քար). եկեղեցու հարավային կողմում, հարավային երեսին՝ 3 տող.
Այս է դապան Մօսին՝ որդի / Սարգիսին. ք(վ)ին ՌՄՉԱ (1832) / դէգրէմբէրի Ի (20):
 Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև, հյուսիսային ճակատին՝ 9 տող.
Ես էմ Թիփլիզ քաղաքացի, / ճանապար(հ)ին հիվանդացի, / ե-գեալ առ քուրն իմ ուրախացի, / ութ օր ավել մօտն չմնացի, / քսան եւ մէկ եղև տարիս 1841 ՌՄՂ, / գանք չիտեսս փուչ աշխարյիս:
 Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. հարթ, ուղղանկյունաձև (163 x 57 սմ), արձանագրությունը՝ 5 տող.
Այս է տապան ծերունագարք / խաչակիր ասաք քահանայ տ(է)ր / Յարութունին, որդի էր տ(է)ր / Ա(ստուա)ծաղորին եւ թռն էր տ(է)ր Ղազարին, / յա(յ)ր էր տ(է)ր Մոսէսին. քվին ՌՄՂԴ (1845):

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. հարթ, ուղղանկյունաձև (սպիտակ քար), վերին երեսին՝ 5 տող.
Այս է տապան Մարեանին, / կողակից էր տ(է)ր Յարութունին, / հարսն տ(է)ր Աստ(ուս)ծատորին, / մայր է տ(է)ր Մոսէսին, / Ռ-ՄՂԹ (1850)ին:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (151 x 52 x 21 սմ), վերին երեսին՝ 4 տող.
Այս է տապան Մելիք Բեկին, / որ է որդի Յովսէփ Բեկին, / Մէ- / իք Ստեփանեան. Ղարա/չինար գեղջ. 1850 ամի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (139 x 40 x 32 սմ), հարավային ճակատին՝ 4 տող.
Լուր այս բանից յանշունչ, լռիկ մեռելոյս, / երթե խորհեաց դիր / ի վերին քոյ, զոյս / չափեաց զգործս ... անհոգ լեր զբարեաց, / իսկ ես Յաթամէ՝ ի որդի Մեփիեանց, 1852 ամի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (96 x 43 x 23 սմ), հարավային ճակատին՝ 9 տող.
Առ ազգ իմ ճոխ յոյժ փառաւորք, / թէ Մարիամուս Կարապե- / տեան, / մի սնոսացիք Խուսով ազգեան, Ռ-ՅՁ (1857):

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (123 x 40 x 25 սմ), հյուսիսային ճակատին՝ կամարաշարի մեջ՝ հեծյալ և ծաղկաքանդակ, իսկ հարավային ճակատին՝ 5 տող.
Թուի քեզ ինչ այս իմ վիճակ անը/մտել կամ անքնական այս / հող տապան / խորան է, էլ ոչ անցաւոր սա է վերին / մեր հան- / գիստ. ես՝ Գրիգորի որդի / Ասկարս, դարցա ի հող. ամի 1861:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (110 x 34 x 17 սմ), հյուսիսային ճակատին՝ 3 տող.
Այս է տապան Մինահին... տուս/տր Մակին, կողակից էր / Համ- / փարցումին. 1861:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (112 x 40 x 27,5 սմ), հյուսիսային ճակատին՝ 3 տող.
Այս է տապան տիրացու / Սողոմոնին, որ է որդի / տէր Մոսէ- / սին. 1864 ամի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (134 x 54 x 23 սմ), հարավկողմին՝ 6 տող.
Յառատտու էի որջ խրախ քեզ նման, / ի գիրկս քաղցր իմ ըն- / տանեաց {գ}զովական, / վայելէի ի սեր ի կեանս անխռով, / իսկ / երեկոյն եզայ ի յայս ... դարան. / ես Աբրահամ էի, որդի Յաթա- / մեան, / 1867 ամի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար (124 x 47 x 29 սմ). հարավային և հյուսիսային երեսներին՝ 4- / ական տող.

Այս է տապան / Աննա Ղարաղաշեանի, / որդւոյ Բեգլար Բեգի / Մէլիք Բեգլարեանի. 1871 ամի: || Անցար գնացիր տու մեզանից / յաւէտ, / ննջեցար քնով անոյշ սիրալիք, / աւաղ, ոչ տարար / զուարճութիւն կեանքի. / տէր հայցեմք սմա դրախտ Եղեմի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. եկեղեցու հյուսիսային կողմում՝ 5 տող.

Այս է տապան Բեգլար Բեգին, որ է որդի Մէլիք Փրիդօնին, / թոռն քաջ Մէլիք Բեգլարին, Հայոց իշխան Ղարաբաղին, / տիրա- / պետող Գուլոստանին: Ծնեալ է յամի 1809-ին / սեպտեմբերի ա- / ռաջինին, վախճանեալ է 1874 թիւն / մարտ ամսի 8-ին:

Հրատ. «Նոր-Գար», 1890, № 110, 1 օգոստոսի, էջ 2: **Ղահրամանյան Կ.**, նշվ. հողվ., «ԼՀԳ», 1979, № 12, էջ 114: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 70: Օջախի գիրք, հ. Ա, էջ 70:

Ծանոթ. «Նոր-Գար»-ի թղթակցի հրատարակությունը թերի է («Այս է տապան Բեգլարեգին, թոռն քաջ Մէլիք-Բեգլարին, հայոց Ղարաբաղի իշխան, տիրապե- / տող Գիլոստանին: Ծն. 1809 թ., 1874 թ.»):

Տապանաքար. ուղղանկյունաձև (153 x 45 x 31 սմ), հյուսիսային ճակատին՝ 3 տող.

Այս է տապան Սիմօնին, որ է / որդի տէր Մոսէսին եւ թոռն է / Տ(է)ր Յարութունեանց: Վախ(ճանեալ) 1875-ին:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար (99 x 37 x 27 սմ). հյուսիսային ճակատին՝ 3 տող.

Այս է տապան Սկրդիչին, / որ է որդի Կոստանց Եւարին. / 1875 / ամի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. եկեղեցու հյուսիսային կողմում, հարավային երեսին՝ 6 տող.

Այստեղ հանգչում է / Բեգլար Բեգ Մէլիք Բեգլարեանի որդի / պատանի Փրիդօնին: / Ծ(նեալ) ի 1-ն ապրիլի 1856 ամի, / վախ- / ճ(անեալ) ի 20-ն մարտի 1878 ամի:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, նշվ. հողվ., «ԼՀԳ», 1979, № 12, էջ 114: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 70: Օջախի գիրք, հ. Ա, էջ 70:

Տապանաքար. ուղղանկյունաձև (135 x 44 x 30 սմ), հյուսիսային ճակատը հարդարված է կամարաշարով ներփակված բուսազարդերով, իսկ հարավային ճակատին՝ 4 տող.

Բայց յանկարծ աւաղ սրով անգութ / մահուան հատաւ թել / կեացս, անկայ ի կործան, / անլոյս լռակայ խորեն յայս տապան, / ես՝ / Ռուհան որդի Գրիգորեան, 1880 ամի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. հարավային երեսին՝ 7 տող.

Այս է տապան Ջիւնշո/ղ Բեկին ի տոհմէն քաջ/ազն Մէլիք / Բեգլարանց / եւ անդրանիկ որդի Բեգլարեգի, ծնաւ 1831 ամի / եւ վախ(ճանեցաւ) 1886 սեպտեմբերի / 6-ին:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, նշվ. հողվ., «ԼՀԳ», 1979, № 12, էջ 114: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 70-71: Օջախի գիրք, հ. Ա, էջ 70:

Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:
Տարբերություն. Կ. Ղահրամանյանի մոտ տարբերվել է՝ 1866:

Տապանաքար. ուղղանկյունաձև (137 x 41 x 30-38 սմ), հարավային ճակատը կամարազարդ է, հյուսիսային ճակատին՝ 3 տող.

Այս է տապան Սեփին, որ է որդի / Աբր(ա)համին եւ թոռն էր / Հաթամ / ուզբաշին, վ(ա)խճ(անեալ) 1888 ամի:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, նշվ. հողվ., «ԼՀԳ», 1979, № 12, էջ 116: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 71: Օջախի գիրք, հ. Ա, էջ 70; հ. Բ, էջ 62:

Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան Ակօբին, որ է որդի / Բեկլարանց Օհանին, / վ(ախ)ճ(անեալ) 1894 ամի / նոյ(եմբերի) 28:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան Սարէտին, որ է զին / Բեկլարանց Օհանին, / 1899 ամի / յ(ու)ն(վար) 30ի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:



Տապանաքար. ուղղանկյունաձև (154 x 41 x 21,5 սմ), հարավային ճակատին՝ 3 տող.
Այս է տապան Հաթամին, որ է / որդի Էրհամին Հաթամանց. / վ(ա)խճ(անեցաւ) ...:

Հրատ. առաջին անգամ:
 Ճանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (143 x 40,5), հյուսիսային ճակատին՝ 2 տող.
Անցանքս իմ գրվեցաւ այս քարիս / մէկ-մէկ ողորմի ասացէք այս անցաւ(որ)քս կարդալ:

Հրատ. առաջին անգամ:
 Ճանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (124 x 42 x 26 սմ), արձանագրությունը՝ 3 տող.
Արձանացիք, ով անցաւորք, / քօրք եւ եղբարք իմ բիրատորք / ձեզ առաքեմ պատգամաւորք:

Հրատ. առաջին անգամ:
 Ճանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:



Խաչքար. գտնվում էր գյուղամիջում: Պարզ հորինվածքով խաչքարի դիմային երեսը հարդարված էր գույգ մեծ խաչաքանդակներով, որոնց հորիզոնական թևերից ցած և ստորին մասում փորագրված է երկտող արձանագրություն.

Թվ(ին) ՌԼԱ (1582). / Գր(ի)զ(ո)րն ք(է)կ(ի)ն:

Հրատ. առաջին անգամ:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. ԺԲ-ԺԳ դդ. խաչքարերի բեկորներ ա) գյուղամիջում (լուս.՝ Ա. Դուլյանի, 1980-ական թթ.), բ) փոխադրված շրջկենտրոնի պատմաերկրագիտական թանգարան (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.
Տապան Լիզին, դուստր / Բէկկարանց Սիմոնին, / 1902 թ.:
 Հրատ. առաջին անգամ:
 Ճանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (160 x 51 x 34 սմ), հարավային ճակատին՝ 2 տող.
Այս է տապան Դանելին, որ է որդի / Սիմոնին Տեր Մօստե-ս(ե)անց. 1910 թ.:
 Հրատ. առաջին անգամ:
 Ճանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:

Տապանաքար. ուղղանկյունաձև (143 x 38 x 32 սմ), հարավային ճակատին՝ 5 տող.
Այս է տապան Սաթինկաին, / դուստր է Կարապետ աղաին, / մէկ տարվան կողակից հեքիմ Սիմօնին. / յիվանդացեալ ճանապարհին, / թաղեցին աստ զիս անձարին:
 Հրատ. առաջին անգամ:
 Ճանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:

Տապանաքար. ջարդոտված է, հյուսիսային ճակատին՝ 3 տող.
Այս է տապան գանձակեցի / Աւագ խոճա ...որդի Շա/միր(ին) ... ամի:
 Հրատ. առաջին անգամ:
 Ճանոթ. վիմագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:




ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. խաչքար գյուղամիջում, 1582 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

Գերեզմանոց. գյուղամիջում տեղահան և ցաքուցրիվ պահպանված մի քանի խաչքարերից և դրանց բեկորներից գատ (մեկը 1984 թ. տեսել և լուսանկարել ենք Շահումյան շրջկենտրոնի պատմաերկրագիտական թանգարանում)՝ գերեզմանական բնույթի մեծաթիվ հուշարձաններ էին պահպանվել գյուղի հարավարևմտյան եզրի բարձրության վրա տարածված խիտ թաղումներով աչք զարնող գերեզմանոցում:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. հատվածներ գյուղի հարավարևմտյան եզրին գտնվող միջնադարյան գերեզմանոցից (լուս.՝ Ա. Ղուկյանի, 1980-ական թթ.)

ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. հատվածներ գյուղի հարավարևմտյան եզրին գտնվող միջնադարյան գերեզմանոցից (լուս.՝ Ա. Ղուկյանի, 1980-ական թթ.)



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սբ. Ամենափրկիչ (Նապատ) վանքը (ԺԷ դար) հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980 և 1989 թթ.)

Մինչև 1990-ական թթ. սկզբներն այստեղ առկա էին ԺԵ-ԺԸ դդ. վերաբերող ավելի քան 60 խաչքար և տապանաքար, որոնց զգալի մասը հողմահար էր, մամռապատ, որոշ մասն էլ՝ հողի մեջ կխտվ չափ թաղված կամ տեղահանված: Արձանագիր էր միայն մեկ շիրմաքար:

Տապանաքար. ուղղանկյունաձև (145 x 45 x 25 սմ), արձանագրությունը՝ 3 տող.
Այս է դապան Խս... (յուզ)յաշի, որ է ... Ավաք(ին), | քի(ին)
ՌՃԿԹ (1720):
 Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. վիճագրի ընդօրինակությունը՝ Ա. Դուլյանի:

Ամենափրկիչ վանք (Նապատ). գտնվում է Գյուլիստանից 1,5 կմ հարավ-արևմուտք՝ Ինջա գետի աջ վտակի՝ Սոնավորի ձախ կողմում՝ անտառածածկ սարերի գրկում (N 40°20'28.94", E 046°35'02.16", ծ. մ. 1338 մ)¹³¹:

¹³¹ Վանքի տեղադրության մասին Բաֆֆին նշել է. «...երկու հնություններ, որ Գյուլիստանի գյուղից շատ հեռու չեն: Դրանցից մեկն էր ս. Ամենափրկչի անապատը, իսկ մյուսը՝ Գյուլիստանի բերդը» (Բաֆֆի, նշվ. աշխ., հ. 8, էջ 587): Նաև՝ «...գնում էինք ձորի միջով, որտեղից անցնում է արծաթի նման սպիտակ Ադ-սու կոչված գետակը: Այդ գետակի վրա պետք է գտնեինք Ամենափրկչի անապատը: Նա Գյուլիստանից մի և կես ժամու չափ հեռավորություն ուներ» (նշվ. աշխ., էջ 587-588): Նաև՝ «Ամենափրկչի անապատը ... գտնվում էր Ադսու



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սբ. Ամենափրկիչ (Նապատ) վանքը (ԺԷ դար) հարավից և հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

Վանքի՝ մեզ հայտնի առաջին հիշատակություններից մեկը 1691 թ.-ից է. «Կիլիստան. Ամենափրկիչ անապատ»¹³², իսկ առաջին նկարագրության հեղինակը Բաֆֆին է. «Անապատի տաճարի շինվածքը կանգնած է չորս բուրբակ սյուների վրա, որ շինված են խամկուր քարից: Այդ տաճարը այժմ ամայի է. խաշնարած թուրքերը անասուններ են լցնում նրա մեջ. անասունների աղբը թանձրացած էր հատակի վրա: Տաճարից ոչ այնքան հեռու կա մի այլ շինվածք, ուր ապրում էր մի ժամանակ այնտեղի միաբանությունը: Դա էլ նույնպես անասնանոց է դարձել: Թե տաճարի

և թե միաբանության բնակարանի բոլոր շինությունները դեռ մնացել են ամբողջ. կտուրների վրա բուսել են մացառներ և աճել են ահագին ծառեր»¹³³:

1890 թ. նշվել է նաև հետևյալը. «...գտնվում է գիտից երկու վերստ հեռավորության վրա՝ դեպի հարաւ-արևմուտք, Ինջայ գետակի մոտ: Այդ վանքը բաղկանում է մի մեծ տաճարից և մի մատուռից: Առաջինը մի բաւական մեծ և բարձր շինութիւն է, տանիքը սրբատաշ քարով ծածկված: Եկեղեցու բեմի ձախակողմեան պատի վրա և դրսի դրան ճակատին արձանագրութիւններ կային, բայց նրանց գետնից շատ բարձր լինելու պատճառով, չը

գետակի մոտ, ոչ այնքան հեռու Մռավ լեռից, մի անտառապատ ձորակի մեջ» (նշվ. աշխ., էջ 588):

132 **Uluhogian G.**, Un' antica mappa dell' Armenia. Ravenna, 2000, p. 54.

133 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 588:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սբ. Ամենափրկիչ (Նապատ) վանքի եկեղեցին հարավ-արևելքից, եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքը, արևելյան և հարավային ճակատներից բացված լուսամուտների շրջանակները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980 և 1989 թթ.)

կարողացայ կարդալ...: Վանքն աչքի թողի է արած և գտնվում է շատ անվայել դրութեան մէջ: Մեծ տաճարը գոմ է դարձել...: Վանքի շուրջը կան մի քանի խուցեր և այլ շինութիւններ: Շինութիւնների աւերակներով ծածկված է վանքի բոլոր շրջակայքը»¹³⁴:

Հայտնի է, որ 1888 թ. «Գլխատանցի մի օրիորդ, որը գուրկ է աչքերից, ...նորոգել է տուել եկեղեցիներից մէկը, որտեղ այժմ ուխտատուներն են ուխտ անում»¹³⁵:


134 Շ., նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 78, 14 յուլիսի, էջ 1:

135 Գ. Սև-Երեց, նշվ. փոթակց., «Նոր-Դար», 1890, № 132, 6 սեպտեմբերի, էջ 3:

1890 թ. Գ. Սև-Երիցյանը նշում է. «Ամենափրկիչ ասելով չպիտի հասկանանք, թե մի եկեղեցի է, այլ մի վանք է, որի եկեղեցիները խմբուած են իրար մօտ: Վանքն այժմ ցաւալի դրութեան մէջ է գտնուում. թէ ներքին և թէ արտաքին կողմից քայքայուած է»¹³⁶:

Ի մեծ բարեբախտութիւն համայն հայութեան և ընդհանրապէս ողջ քաղաքակիրթ մարդկութեան՝ 1994 թ. մայիսից ի վեր Սբ. Ամենափրկիչ վանքը գտնվում է հայկական կողմի իրավասութեան ներքո, ուստի և այն ոչ միայն զերծ է մնացել անխուսափե-

136 Նույն տեղում:



ԳԵԹՄԵՆԻԱՍԱՆ. դրվագներ Սբ. Ամենափրկիչ վանքի (Նապատ) եկեղեցու ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցու, մատուռի և օժանդակ կառույցի որմերում ագուցված արձանագիր խաչքարեր և տապանաքարի բեկոր, ԺԷ-ԺԹ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980 և 1989 թթ.)




ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Սբ. Ամենափրկիչ վանքի (Նապատ) մատուռը հարավ-արևմուտքից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

լի ավերումից, այլև որոշ չափով նորոգվել է հայ զինվորականության ջանքերով:

Ճարտարապետություն. վանքը բաղկացած է եռանավ հորինվածքով եկեղեցուց, միանավ մատուռից, թաղակապ երեք սենյակներից կազմված բնակելի շինությունից և գերեզմանոցից:

Հիմնադրման ժամանակի վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել, սակայն ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ համալիրը ձևավորվել է ոչ վաղ, քան ԺԷ դարը:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Ամենափրկիչ վանքի հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

Բոլոր շինությունները կառուցված են անմշակ և կիսամշակ քարով, կրաշաղախով: Սրբատաշ են միայն անկյունաքարերը, սյուները, որմնասյուներն ու թաղակիր կամարները, իսկ սյուների խոյակները ճարտարապետական և գեղարվեստական ուշագրավ նմուշներ են:

Եկեղեցի. երկթեք ծածկի տակ առնված, ներսում երկու գույգ սյուների վրա կանգնած բազիլիկ է: Կիսաշրջան եզրագծով ավագ խորանի երկու կողմերում առկա է ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն: Միակ մուտքը հարա-

վից է: Արտաքուստ նույն ճակատում ագուցված են մի քանի խաչքարեր:

Մատուռ. հազիվ 30 մ հարավ-արևելք՝ կանգուն է եկեղեցուն ժամանակակից թաղածածկ մատուռը, որի մասին 1881 թ. նշվել է. «Անապատից մի քսան քայլ հեռավորության վրա գտնվում է մի փոքրիկ մատուռ, որ ուխտատեղի է. այստեղ դեռ թուրքերի անասունները մուտք չեն գործել, որովհետև դուռ ունի»¹³⁷:

Բաֆֆին ցավով նկատել է հետևյալը. «Չարմանալի անհոգություն, թե ժողովրդի և թե մեր հոգևոր կառավարության կողմից. ահագին ծախքեր անելով, նախնիքը թողել են այդ սրբավայրերը: Այժմ նրանց որդիքը գոնե դռները քարով ամուր կպցնեին, բաց չթողնեին, որ թուրքերի անասնանոց դառնար»¹³⁸:

Կացությունն անփոփոխ էր նաև 1890 թ. «...մի մատուռ, որի դուռը միշտ կողպած են պահում»¹³⁹: Արևմտյան ճակատից բացված միակ մուտքի հյուսիսային կողմում ագուցված է ուն Գասպարի հիշատակին կերտված ԺԷ դարի վերջերին բնորոշ խաչքար:

Օժանդակ շինություն. եկեղեցու հարավարևմտյան կողմում միջնորմներով երեք հատվածի բաժանված ուղղանկյուն հատակագծով թաղակապ կառույց է ստեղծված 1715 թ., որի մասին 1890 թ. նշվել է. «...այստեղ կան արեղանների խուցեր, որոնք իրենց վաղեմի տխուր տիպարն են ներկայացնում: Խուցերը գլխատրապետ շինում են նեղ և առանց լուսամուտների»¹⁴⁰: ԺԹ դարավերջին թաթարները դրանք օգտագործում էին որպես անասնագոմեր¹⁴¹:

Գերեզմանոց. գտնվում էր վանքի միջնամասում՝ եկեղեցուն հարակցող հարավային կողմում: Մույն հնավայրի մասին առաջին գրավոր հիշատակության հեղինակը դարձյալ Բաֆֆին է (1881 թ.). «Այդ անապատի գավթում թաղված կան զանազան անձանց գերեզմաններ, որոնց թվում է Աբրահամ յուզբաշու գերեզմանը (որ գնաց Պետրոս Մեծի մոտ)»¹⁴², իսկ 1890 թ. նշվել է. «Այստեղ կայ և մի գերեզմանատուն: Գերեզմանաքարերի վրա արձանագրութեան հետքեր չէին նշմարվում, բացի վանքին բոլորովին կից գերեզմաններից: Վերջիններիս մեջն է գտնվում և Գիլիստանի նախկին տիրապետող Աբրահամ Իւզբաշու գերեզմանը (1753 թ.)»¹⁴³:

Վիմագրեր. վանքի տարածքում առկա վիմագրական ժառանգությունը մեծ չէ: Հիմնականում հակիրճ հիշատակագրություններ են, որոնք սկիզբ են առնում ԺԷ դարից և հասնում մինչև ԺԹ դ.: Ստորև դրանք ներկայացվում են ըստ ժամանակագրական հաջորդականության:

Խաչքար. ագուցված եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքից արևելք.

Խաչա[տուրին], | թվ(ին) ՌԾԳ (1604):

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. մատուռի մուտքի մոտ.

Այս է հանգիստ Հիրեդ տա-տին, աղաչեցեք. թվին ՌԿԲ (1613):

Հրատ. **Քարխոտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 242: **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 348: Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 248: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 71: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 71:



137 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 588:

138 Նույն տեղում:

139 **Գ. Սև-Երեց**, նշվ. բրդակց., «Նոր-Դար», 1890, № 132, 6 սեպտեմբերի, էջ 3:

140 Նույն տեղում:

141 **Լալայեան Ե.**, Գանձակի գավառ, Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 322:

142 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 588:

143 **Ե.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 78, 14 յուլիսի, էջ 1:

Որմնախաչ. Ամենափրկիչ վանքի եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքից արևմուտք, արձանագրությունը՝ 2 տող.

Խ(ա)չ(ս) | Էդզ(ա)ր(ի)ն, Մ(ա)րե(ա)ն(ին):

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. վանքի եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքից արևելք.

Խաչս ... քվին Ռ...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. եկեղեցու մկրտության ավագանին.

ՌՂ (1641) քվ(ին):

Հրատ. **Քարխտաարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 242: **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 348: Դիվան հայ վիճազրության, պրակ V, էջ 248: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 71: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 70:

Տարընբերում. ըստ Ղահրամանյանի՝ տարեթիվն է՝ ՌԳ (1554):

Արձանագրություն. եկեղեցու «մէջի դռան աջակողմեան պատի վրայ».

Շինուեցաւ ՌՃԼԳ (1685) թուին:

Հրատ. **Գ. Սև-Երեց**, նշվ. թղթակց., «Նոր-Դար», 1890, № 132, 6 սեպտ., էջ 3:

Խաչքար. ագուցված մատուռի արևմտյան ճակատին՝ մուտքից հյուսիս.

Գասարին:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. եղել է օժանդակ կառույցի սենյակներից մեկի մուտքին.

Թվին ՌՃԿԳ (1715). յիշատակ է այս օթաղս Եղիա վարդապետին:

Հրատ. **Քարխտաարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 242: **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 348: Դիվան հայ վիճազրության, պրակ V, էջ 248: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 71: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 70-71:

Քարաբեկորին.

ՌՃՂԳ (1745):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. վիճազրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Ի դեպ, 1930-ական թթ. բեկորները փոխադրել են գյուղ և որպես շինանյութ՝ գործածել Գյուլիստանի գրասենյակի պատի ճակատային մասում:

Տապանաքար. Ամենափրկիչ վանքի գերեզմանոցում.

Այս է հանգիստ Գեորգի որդի Ապրահամ | ուզպաշին, որ փոխեցաւ | առ ա(ստուա)ծ ք(վին) Ռ[ՄԲ] (1753):

Հրատ. **Գ. Սև-Երեց**, նշվ. թղթակց., «Նոր-Դար», 1890, № 132, 6 սեպտեմբերի, էջ 3: **Շ.**, Գիւղական տպատրուբիւններ, «Մշակ», 1890, № 78, 14 յուլիսի, էջ 1: Ծանոթ. վիճազրի ընդօրինակությունը՝ Ա. Ղուլյանի:

Ի դեպ, 1930-ական թթ. տապանաքարը փոխադրվել է գյուղ, բեկորվել և տեղադրվել կողմնատեսության պահեստի պատի մեջ: 1990 թ. բեկորները հանվել և տեղափոխվել են գյուղի եկեղեցու բակ՝ միասնական դարձնելու նպատակով:



Աբրահամ հարյուրապետի տապանաքարը (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1990 թ.)

Խաչքար. մատուռի մեջ՝ խաչին.

Խաչս Հիրիա ապաշխարողին:

Հրատ. **Քարխտաարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 242: **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 348: Դիվան հայ վիճազրության, պրակ V, էջ 248: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 71: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 71:

Ջրաղաց, 1881 թ. Բաֆֆին նշում է. «Անապատի ջրաղացի ավերակները դեռ մնում են»¹⁴⁴:

Կոտրած եղի մատուռ.

գտնվում է Գյուլիստանից 2 կմ արևելք: Տեղում պահպանվում էր մի խաչքար, որի ստորին մասում՝ վարդյակի շուրջը, արձանագրված է.

Թվ(ին) ՌԳ (1155) | էր. յա-նո(ւ)ն ա(ստուծո)յ ես՝ հայր Սարգիս, կանգնեցի զս(ուր)ք նշանս ի բարեխաւտութի(ւն) իւր ծն(ո)ղաց ինոց՝ Մխիթարա եւ մար իմոյ | եւ եղբա(ւր)ս Ա(ստուա)ծա... | յիշես | ... | ազար | ոյք եր...:



Խաչքար Կոտրած եղի հնավայրում (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1990 թ.)

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 69: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 68:

Ծանոթ. հրատարակչի մոտ առկա են որոշ անճշտություններ:

Կարմիր եղի. Գյուլիստանից հարավ-արևմուտք՝ Ինջա գետի ձախ կողմի ձորալանջին էին գտնվում ընդարձակ գյուղատեղիի, միջնադարյան գերեզմանոցի և Կարմիր եղի կոչվող եկեղեցու ավերակները:

Տապանաքար. Կարմիր եղի կիսավեր եկեղեցու մոտ.

Այս է տապան Առուսի որդի Ռա...:

Հրատ. **Քարխտաարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 243: Դիվան հայ վիճազրության, պրակ V, էջ 248-249:

144 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 588:



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. բերդը հյուսիս-արևելքից և հյուսիսից (լուս.՝ Ա. Ղուկանի, 1980-ական թթ.)

Մետաղաձուլարան. գտնվում էր Գոմեր գյուղատեղիից Գյուլիստան տանող ճանապարհին: Տեղում պահպանվել են «...մեծ քանակությամբ թափոն, խոշոր քարերից պատրաստված հարմարանքներ՝ տարբեր ձևի ու չափի փորվածքներով: Կան կաղապար հիշեցնող պատկերազարդ քարեր»¹⁴⁵:



Գերեզմանոց («Հացոտի կիրիզմանոտ»), հին մետաղաձուլարանից մոտ 200-300 մետր

¹⁴⁵ Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 67-68:



Խաչքարեր Կոտրած եղջի և Չացուտ հնավայրերում (լուս.՝ Ա. Ղուկանի, 1990 թ.)

հեռու երբեմնի գերեզմանոցից պահպանվել է միայն մի խաչքարի արձանագիր ստորին բեկորը.

Ես՝ Քուրանչահ, կանգնեցի զխաչս ծնողաց | իմոց, ոյք երկիրպագ/էք յաղաութ յիշեց(էք):

Հրատ. Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 68:

Ծանոթ. Կ. Ղահրամանյանի մոտ անձնանունը՝ Քուրան(դ)ա(տ) ձևով:




ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. բերդը հարավային կողմից (լուս.՝ Վ. Գաբրիելյանի, 2007 թ.), հյուսիսից և հատվածներ բերդամիջից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980 և 1989 թթ.)


Գյուլիստանի (Հերգա, Հերքա) բերդը. գտնվում է Գյուլիստանից 2 կմ հարավ-արևմուտք՝ Ինջա գետի և նրա վտակի միջև շրջապատի նկատմամբ առանձնացած, արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված, իշխող և դժվարամատչելի սարի հարթ գագաթին (N 40°20'50.83", E 046°33'42.05", ծ. մ. 1409 մ). «Այդ բերդի տեղը բնության հրաշալիքներից մեկն է: Մի ահագին սեպացած քարաժայռ բարձրանում է խոր ձորի միջից և այդ քարաժայռի գլխին շինված է բերդը: Որպես խրամատ ծառայում է նրան խոր անդունդը, որի միջով հոսող գետակը պտույտներ է գործում և այդ քարաժայռի երեք կողմից ոլորվելով, նրան թերակղզու ձև է տալիս: Մի կողմից միայն բարձր քարաժայռի ստորոտը միանում է ցամաքի հետ»¹⁴⁶:

Կասկածից վեր է, որ բնությունից պաշտպանական հարմարություններով լիովին օժտված տեղանքն իր հայտնի նշանակությանը ծառայել է առնվազն դեռևս վաղ միջնադարում, սա-

¹⁴⁶ **Բաճճի.** նշվ. աշխ., հ. 8, էջ 589: Նաև՝ «Ինջա գետի վերին ակունքներում գտնում է Գյուլիստանի հռչակաւոր բերդը. բերդը կառուցած է մի ահագին ժայռի հարթացած գագաթի վրայ, որի չորս կողմով պարիսպ է քաշել քմահաճ բնութիւնը... բերդը բարձրանալը դժուար է, միայն հարավային կողմից մի ճանապարհի օժանման պտոյտներ անելով բարձրանում է դէպի բերդը: Այժմ բերդի շինութիւններն ոմանք կանգուն են, ոմանք կիսաաւերակ: ...բերդի հիւսիսային կողմից մի բացուածք սանդուխտներով ցած է իջնում դէպի Ինջա գետը, որտեղից մի ժամանակ գաղտնի կերպով ջուր էին բերում: Գյուլիստանի բերդը գոյութիւն է ունեցել Մելիք-Բէգլար Ա-ի օրոք» (**Գ. Սև-Շրէք,** նշվ. թղթակց., «Նոր-Դար», 1890, № 132, 6 սեպտ., էջ 3):



0 10 20 30 40 50 100 ս



0 10 20 30 ս

ԳՑՈՒԼԻՄԱՆ. բերդի և հարակից կառույցների հատակագիծ-վերակազմությունը (հեղ.՝ Ա. Ղուլյան), ճակատ ու կտրվածքներ (հեղ.՝ Կ. Ղահրամանյան)



ԳՅՈՒԼԻՍԱՆ. դրվագներ բերդամիջի կառույցներից, հարավակողմի կիսաաշտարակներից մեկը և գաղտնուղին (լուս.՝ Վ. Գաբրիելյանի, 2007 թ., Ս. Կարապետյանի, 1989 թ.)

կայն պատմության ելևէջներում նրա ունեցած առավել նշանակալի դերակատարության մասին հայտնի տեղեկությունները վերաբերում են ուշ միջնադարին և մասնավորապես առնչվում Գյուլիստանի հայկական մելիքության գոյընթացին. «Գյուլիստանի բերդը, որի մեջ ամրացած, հայոց մելիքները մինչև վերջին ժամանակները սարսափեցնում էին մահմեդականներին»¹⁴⁷:

Ինքնին հասկանալի է, որ այսչափ նշանակալի բերդը պետք է որ հայ մելիքների տիրապետության ժամանակաշրջանից էլ դեռ շատ առաջ գավառի կյանքում առանցքային դերակատարություն ունեցած լիներ և ըստ այդմ էլ՝ նաև հիշատակված պատմական կարևոր իրադարձություններն արձանագրած մատենագիր հեղինակների կողմից:


Իհարկե, ինչպես արդեն վերևում նշել ենք, Գյուլիստանը՝ որպես գյուղանուն, առաջին անգամ հիշվում է 1466 թ., ընդ որում, ժամանակագրորեն ավելի ուշ շրջանին են վերաբերում նրա՝ որպես բերդի կամ գավառի անվան վկայությունները:

Այստեղ ինքնին ծագում է հետևյալ հարցը. ինչպես էին կոչվում Գյուլիստանի բերդը, համանուն գավառն ու գյուղն ավելի վաղ ժամանակներում: Բարեբախտաբար, այս հարցը, կարելի է ասել, ունի միանգամայն սպառիչ պատասխան, ահա թե ինչպես: Բանն այն է, որ Պարիս գյուղին վերաբերող 1417 թ. մի հիշատակությունից արդեն գիտենք, որ վերջինս (խոսքը, անշուշտ, Հին Պարիսի մասին է) գտնվում էր Պարտավ քաղաքին մերձ՝ Հերզ գավառում (իհարկե, Հերզ գավառանունը պատմագիտությանը հայտնի էր ավելի վաղ ժամանակներից, ինչպես, օրինակ, Գանձակեցու՝ 1195 թ. Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի՝ այդ գավառում վախճանվելու առիթով արված հիշատակության շնորհիվ): Արդեն այսբանից ամենայն վստահությամբ կարելի է եզրակացնել, որ Գյուլիստանի բերդը ևս մեծ հավանականությամբ գտնվում էր միևնույն Հերզ գավառի սահմաններում, քանի որ պարզից էլ պարզ է՝ մի որևէ, նույնիսկ համեմատաբար փոքր մակերեսով գավառ ունեցել է մեկից ավելի (գուցեև մի քանի տասնյակ) բնակավայրեր: Ընդ որում, հիմք ընդունելով Պարիսի՝ Հերզ գավառում գտնվելու իրողությունը, կարելի է որոշ մոտավորությամբ նշել, որ երբեմնի Հերզ գավառը փաստորեն համապատասխանել է հետագայի Գյուլիստան գավառին, ուստի նաև՝ ներկայիս Շահումյանի շրջանին:

Ինչ վերաբերում է բերդի նախկին անվանը, ապա այն, լինելով Հերզ գավառի գլխավոր (եթե ոչ միակ) բերդը, կարող էր կոչվել հենց գավառանվամբ, ինչպես Գյուլիստան էր կոչվում նույնանուն գավառի գլխավոր բերդը: Եվ, իրոք, մատենագիր աղբյուրները (Մխիթար Գոշ, Ստեփանոս Օրբելյան և Ան-Նասավի)¹⁴⁸ հիշատակում են խնդրո առարկա տարածաշրջանում գտնվող, սակայն աշխարհագրական ցարդ անորոշ տեղադրությամբ Հերզա կամ Հերքա բերդի գոյության մասին:

Ավանդության համաձայն՝ բերդի կառուցումը վերագրվել է մի աղջկա, «...որը և իբր արձանագրել է մի քարի վրա, թե ես բանուորներիս համար օրական երկու ջուալ աղ գործածելով, կարողացայ միայն այս բերդը շինել, ինձանից յետոյ ուրիշները ի՞նչ պիտի կարողանան շինել»¹⁴⁹:

Մեծահամբավ բերդը ժամանակի ընթացքում և հատկապես ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբներին մշտապես դեպի իրեն է ձգել հին հիշատակների ճանաչողությանը հետամուտ այցելուների: Նրանցից ոմանք նկարագրական որոշ տեղեկություններ են հա-



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. միջնադարյան կամրջի մնացորդներ Ինջա գետի վրա (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980 թ.)

147 Բաֆֆի, նշվ. աշխ., նույն տեղում:
 148 Մարգարյան Հ., Հերզ գավառի և Հերք (Հերքան) բերդի տեղորոշման մասին, «ԲՀԵ», 1984, № 3, էջ 123-129:
 149 Լալայան Ե., նշվ. աշխ., գիրք Ե, էջ 262, ծմբ.: Տե՛ս նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 253, ծմբ. 43:

դորդել կառուցվածքի, առկա շինությունների, գաղտնուդու և այլնի մասին: Այսպես՝ 1868 թ. տեղն այցելած Ե. Լալայանը նշել է. «Քարաժայռի երեք կողերը սաստիկ ժայռոտ և ուղղահայեաց են, այնպես որ ո՛չ մի ճանապարհ չի կարելի գտնել, իսկ հիւսիսային կողմը փոքր ինչ թեք է և այստեղից է բարձրանում միակ, նեղ ճանապարհը, որի համար տեղ-տեղ հարկ է եղել ժայռերի կրծքերը տաշել: Քարաժայռի տափարակ գագաթին կայ մի հաստ պարիսպ, չորս աշտարակներով ամրապնդում, իսկ հիւսիսային կողմում մի քիչ ներքևից կայ և մի երկրորդ պարիսպ, որ գնալով ընդհարում է միւս կողերի ժայռերին: Եւ որովհետև միակ մատչելի փեշը այս կողմն է եղել, ուստի և սրան կից բլրակի վրայ կայ չորս աշտարակների մի փոքրիկ մարտկոց: Բերդի մեջ դեռ մինչև այժմ էլ մնում են մի և երկյարկանի տների և մի եկեղեցու աւերակներ: Հարաւային կողմում մի բաւական լայն և բարձր ստորերկրեայ անցք իջնում է մինչև գետի ափը, որտեղով պաշարման միջոցներին իշով ջուր են կրել: Բերդի հիւսիսային ստորոտում, մարտկոցի բլրի լանջին կայ մի մեծ մեճետի աւերակ, մօտը խանութների, տների հետքեր: Բերդի շուրջը, բլրակների վրայ կան փոքրիկ դիտանոցներ»¹⁵⁰:

Մեկ այլ այցելու 1890 թ. նշել է. «Միջնաբերդի հարաւային կողմից կայ ծածուկ գետնաճանապարհի դէպի բերդի ստորոտում հոսող գետակը»¹⁵¹:

1916 թ. օգոստոսի 10-15-ը Գանձակի փոխանորդ Լևոն վարդապետն այցելում է գյուղի ուխտատեղին և բերդը. «...ճանապարհին նախապէս այց ելնելով նոյնանուն յայտնի և գեղեցկանիստ բերդը»¹⁵²:

1919 թ. նշվել է. «...գիշերը հասայ Գիւլիստանի հայկական հին բերդի աւերակների մօտ»¹⁵³:

Ըստ տեղանքի ընձեռած առանձնահատկությունների՝ կիսավեր բերդն ունի շուրջ 240 մ երկարություն և 30 մ լայնություն: Արևմտյան կողմում կառուցված է միջնաբերդ-ապարանքը, հարավային լանջի ստորոտում՝ փոքր ապարանքը: Հյուսիսարևմտյան կողմում թաղակապ գաղտնուդին է: Շուրջը նկատելի են եկեղեցու, ջրաղացի, բաղնիքի, կամրջի և այլ շինությունների ավերակներ: Պարիսպները հզորացված են կիսաաշտարակներով: Տեղանքով պայմանավորված՝ փոքրիշատե խոցելի հարավակողմն ամրացված է կրկնապարսպով (պարսպապատերը պահպանվել են մինչև 8-10 մ բարձրությամբ): Հիմնական շինանյութն են տեղական անմշակ քարն ու կրաշաղախը¹⁵⁴:

Գերեզմանոց. գտնվում էր բերդի հյուսիսարևելյան կողմում՝ ձորի հակառակ լանջին: Պահպանվում էին խիտ թաղումներով 50-60 անմշակ տապանասպեր և մի քանի անարձանագիր խաչքարեր:

Կամուրջ. Ինջա գետի վրա՝ գյուղից դեպի Գյուլիստանի բերդ տանող ճանապարհի միջնահատվածում, պահպանվում են ԺԷ-ԺԸ դդ. բնորոշ կառուցողական առանձնահատկություններով (անմշակ քար և միջին որակի կրաշաղախ) միաթռիչք կամրջի ավերակները:

1980 թ. գետի երկու ափերում այս կամրջից մնացել էին միայն կամրջախելերը:

Խաչքար. Թերևս սահմանախաչի նշանակություն ունեցող հուշարձանը գտնվում էր Գյուլիստան-Վերիշեն լեռնանցքի Երկ-

նադրյուր (Գյոզբուլաղ) տեղամասի Խաչգյաղուկ վայրում: Կերտված էր սպիտակ քարից և հարդարված մեծ խաչաքանդակով, որի թևերն ավարտվում էին շրջանակներով¹⁵⁵:

Մալականներ. հայտնի է, որ 1841 թ. Գյուլիստանում բնակություն է հաստատում Բագարշայից փոխադրված (այժմ՝ ՀՀ Մյունիքի մարզ, գ. Գոռայք) 436 (224 ար. և 212 իգ.) ռուս աղանդավոր¹⁵⁶: 1844 թ. նրանց թիվը կազմում էր 475 շունչ (246 ար. և 229 իգ.)¹⁵⁷:

Մոլոկանները Գյուլիստանի կալվածատեր Բեգլարբեկ Բեգլարյանի հետ կնքում են իրենց համար ծանր պայմանագիր, ըստ որի՝ յուրաքանչյուր տուն պարտավոր էր հացամշակության, խոտհարքի և շինափայտի համար ամեն տարի վճարել 2 ռ. արծաթ, 2 չետվերտ ցորեն և կես չետվերտ գարի¹⁵⁸: Ի դեպ, հացամշակության համար հատկացված հողատարածքը մեծ չէր, իսկ Գյուլիստանի դաստակերտը գտնվում էր Բաղչիկ անվամբ արքունի հողի վրա:

Իրենց համար կլիմայական և տնտեսական ծանր պայմանների պատճառով 5 տարի անց՝ 1846 թ., մոլոկանները հեռանում են Գյուլիստանից և հիմնում Ելենովկա, Կոստանտինովկա և Դիլիջան գյուղերը¹⁵⁹:

Մոլոկանների հեռանալուց հետո նրանց բնակատեղին գյուլիստանցիների հիշողության մեջ մնում է Մալականներ անվամբ:

Գոմեր գյուղատեղի. գտնվում է Դատիբեկանց վանքից ոչ հեռու՝ Ինջի գետակի ձախ ափին՝ Գոմեր անվամբ հայտնի վայրում: 1973 թ. հնավայրի ավերակ գերեզմանոցում դեռևս պահպանվում էին սպիտակ քարից կերտված հավասարաթև խաչով հարդարված մի պարզ խաչքար և արձանագիր մի տապանաքար¹⁶⁰:

Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան ..., որ է որդի ...եցի Խաչատուրին, / փոխեցաւ առ աստված հանապա..., / աստված ողորմի ամին աշխա... տ(է)ր Հուհան Հարութ(ի)ունին, / 1841:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 67:

Հնավայր. Հացուտ անտառում՝ Ինջի գետակի երկու ափերին, 1973 թ. տակավին նկատելի էին բեկորված կավե կարաս և ջրանցքի հուն: Ի դեպ, ըստ տեղացիների՝ տարածքում եղել են ոսկորներով և հողով լցված մեծ կարասներ¹⁶¹:

Քրքրե կամուրջ. Գյուլիստանի բերդից ոչ հեռու Ավագ և Գրիգոր Հովասափյաններն Ինջա գետի վրա կառուցում են քարե մի կամուրջ: Այն հայտնի էր ոչ միայն Քրքրե, այլ Բոռանի և Ավագ պապի կամուրջ անուններով¹⁶²:

Թիքի խաչ. գյուղամիջյան սրբավայրերից էր¹⁶³:

Փառքի (ՀՄՊՁ) հուշարձան. գյուղեզրին 1970-ական թթ. կանգնեցվել է Մեծ հայրենականում զոհված կամ անհետ կորած 92 գյուլիստանցիների հիշատակը հավերժացնող հուշարձան: Նրանցից կապիտան Գարեգին Շեկոյի Բալայանին (1912 թ., Գյուլիստան - 25.09.1943, Չարուբենց գղ.) 1943 թ. հոկտեմբերի 23-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամա-

150 **Լալայան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 262, ծմբ.: Տե՛ս նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 253, ծմբ. 43:

151 **Շ.**, Գիւղական տպավորութիւններ, «Մշակ», 1890, № 76, 7 յուլիսի, էջ 1:

152 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 622:

153 **Վերդան Ա.**, Յուշեր, Թեհրան, 1959, էջ 125:

154 Բերդի մասին առավել մանրամասն տե՛ս **Ղույսան Ա.**, Արցախի և Մյունիքի մելիքական ապարանքները, էջ 36-43:

155 **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 75:

156 Акты, собранные Кавказскою археографическою комиссией (այսուհետ՝ АКАК, համապատասխան հատորով), т. X, ч. 1, Тифлис, 1885, док. 293, с. 285.

157 Նույն տեղում:

158 АКАК, т. X, ч. 1, док. 293, с. 287.

159 **Долженко В.**, К истории образования русских поселений Закавказья (1830-1840-е гг.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, Երևան, 2007, էջ 318, 320:

160 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 67:

161 Նշվ. աշխ., հ. Ա, էջ 68:

162 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 472:

163 **Շեկունց Ն.**, Տողեր, մտքեր, «Մոսվի դոկանցներ», 2015, № 1, հունվար, էջ 3:

նագրով շնորհվել է ԽՍՀՄ հերոսի կոչում («Կիեվից հարավ՝ Դնեպրը հաջողությամբ գետանցնելու, Դնեպրի արեւմտյան ափին ամուր հենակետ ստեղծելու գործում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ կապիտան Գարեգին Շեկոյի Բալայանին»)։ Ի դեպ, Ուկրաինայի Չարուբենցի գյուղի մոտ գտնվող գերեզմանաքարին արձանագրվել է. «Այստեղ թաղված է կապիտան Գարեգին Բալայանը (1912-1943 թթ.), որը հերոսաբար զոհվեց Դնեպրի ափին հայրենիքի ազատագրման համար մղված մարտերում»։ Հերոսի անունն էր կրում նաև Չարուբենցի գյուղի դպրոցը¹⁶⁴։

Մանրատեղանուններ. ըստ Բորիս Նաբաբյանի՝ հիշվում են հետևյալները՝ Խոզատափ, Մեծ Պոլսի հող, Փոքր Պոլսի հող, Մալականներ, Դոլոթի թափա, Փիրանին հարթ, Քիմբազի հարթ, Չախմախաձոր, Մյրյանանց թաղ, Դվատակ, Ծիրանի ուրդ, Խանբուլաղ տեղամաս, Կարմիր քարին տակ, Ծիլին կրնատակ, Փիրվիթի ուրդ, Ռուսին ուրդ, Բզլարանց խզովների քոլերը, Գալախոր, Լեռքար, Կոտրած եկեղեցի, Դրբլախ, Ավան գյուղ, Ամբարին քրատակ, Բլուլին տիար, Նպատին ճիլ, Բարին քրատակ, Մեծ ուրդ, Պիծի քարին քրատակ, Գյուլին ձոր, Ծիլին քմակին գյուղեն, Դուկասի շնատեղ, Կրուսուտի շնատեղ, Փոքր ուրդ, Գսպանի դիմաց¹⁶⁵։

Գորգ. 2011 թ. հունվարին Հայաստանի պատմության թանգարանում բացված գորգերի ցուցահանդեսում ներկայացվում է նաև ԺԹ դարում Գյուլիստանում գործված Աստղահավաք գորգը¹⁶⁶։

Խաչքար-կոթող. 2004 թ. շահումյանցիների նախաձեռնությամբ պատրաստվում է խաչքար՝ ի հիշատակ անշիրին մնացածների և հոկտեմբերի 12-ին տեղադրվում Նապատի վանքի բակում։ Ի դեպ, խաչքարի նախագծի հեղինակն է Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, կերտողը՝ Արտուշ Մեղրյանը, իսկ տեղափոխումն իրականացվել է Մամվել Սառաջյանի նյութական աջակցությամբ և զինվորների օգնությամբ¹⁶⁷։

Հուշարձան՝ նվիրված Շահեն Մեղրյանին. 2014 թ. հոկտեմբերի 24-ին Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղում տեղակայված գործնասում բացվել է 1993 թ. ապրիլի 17-ին զոհված Շահեն Մեղրյանի հիշատակը հավերժացնող հուշարձանը¹⁶⁸։

ԳՅՈՒՐՉԱԼԱՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 8,6 կմ հյուսիս՝ տափաստանային գոտում՝ ծովի մակերևույթից 780-870 մ բարձրության վրա։

Անվանում. վկայվել է նաև Գյուրգալիար անվանաձևով։

Բնակչություն. ԺԹ դարի երկրորդ կեսին ծնունդ առած և ձևավորված թաթարաբնակ գյուղերից է, որը, համաձայն 1886 թ. տեղեկագրի, ուներ 37 տուն՝ 279 թաթար բնակիչ (144-ը՝ ար., 135-ը՝ իգ.)¹։ 1992 թ. նախօրեին գյուղն ուներ մոտ 500 բնակիչ²։

164 **Բարսեղյան Ս.**, Արցախ-Ղարաբաղը Մեծ Հայրենականում (1941-1945 թթ.), Ստեփանակերտ, 2015, էջ 204, 207։ Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 422-424։

165 **Каграманян К.**, Книга очага: адреса тоски, т. 3, с. 84.

166 Մեր հողի մասունքները, «Մշակի դողանցներ», 2011, № 1, հունվար, էջ 1։ Տե՛ս նաև Հայկական գորգարվեստ XVII-XX դդ, Երևան, 2012, էջ 32-33։

167 «Մշակի դողանցներ», 2005, № 10, հոկտեմբեր, էջ 1։

168 Արցախում բացվել է Շահեն Մեղրյանի հուշարձանը, «Մշակի դողանցներ», 2014, № 4, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 3։ Հերոս-մահապատիվ Շահեն Մկրտչյանի և նրա զինակից ընկերների կյանքն ու գործը լավագույնս լուսաբանված է **Ա. Պետրոսյանի**՝ «Մեծն Շահենը» գրքում (Երևան, 2011)։

1 Свод..., с. 88-89.

2 ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2։

ԶԵՅՎԱ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 10,8 կմ հյուսիս-արևելք՝ Սևջուր գետի աջ ափին՝ ծովի մակերևույթից 565-605 մ բարձրության վրա։

Անվանում. վկայվել է նաև Ղարաշայ անվանաձևով։

Բնակչություն. գյուղի հայաթափման ժամանակի վերաբերյալ տեղեկություններ չկան, սակայն, ամենայն հավանականությամբ, դա տեղի է ունեցել ավելի վաղ, քան 1780-ական թթ.։ Համենայն դեպս, ժամանակի մեջ ոչնչացված ու անհետացված գերեզմանոցի տարածքում խորհրդային տարիներին կառուցված ջրամբարի շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված խաչքարերից մեկը վերաբերում էր ԺԳ-ԺԴ դարերին։ Այն հետագայում փոխադրվել է Շահումյան շրջկենտրոնի պատմաերկրագիտական թանգարան¹։

1936 թ.-ից աղբբեջանցի վերանվանված թաթար բնակչության թվաքանակի մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1886 ²		179	84	263
1908 ³	45	187	186	373
1914 ⁴				220
1979 ⁵				126
1992 ⁶				1100

ԷՐՔԵՉ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 19 կմ հյուսիս-արևմուտք՝ արևմտահայաց ձորալանջին՝ Փոքր Կյուրակ գետակի աջ կողմում. «...Բալայ-բյուրակ գետի մոտ»¹։

Անվանում. ըստ Կիմ Ղահրամանյանի՝ գյուղանունը ծագում է Այրբաջ բառից, որն անվանափոխվելով՝ դարձել է նախ Էրբաջ, ապա Էրքեջ²։

Վկայվել է նաև Երքեջ, Էրգեն, Էրքան անվանաձևերով։

Պատմություն. գյուղի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ հայտնի չեն, սակայն տարածքում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանները վկայում են Էրքեջի՝ առնվազն Թ-Ժ դարերից գոյություն ունենալու մասին։

1676 թ. հիշվում է Էրքեջի տեր Գրիգոր երեցը, որի մոտ Աղվանից Երեմիա կաթողիկոսը տեսել է Առաջաձոր գյուղի տեր Դավթի կորցրած ձեռագիր Շարականը³։

Հայտնի է, որ գավառի այլ գյուղաբնակների մնացած էրքեջիները ևս ԺԸ դարի վերջին գաղթում են Բուլնիսի կողմերը և 1817 թ. վերադառնում հայրենի գյուղ⁴։

1870 թ. Սբ. Էջմիածնում իրականացվող շինարարական աշխատանքներին օժանդակելու նպատակով, ի թիվս գավառի այլ գյուղերի, էրքեջիները ևս հատկացնում են 20 ռուբլի⁵։

1 Խաչքարի լուսանկարը տե՛ս սույն աշխատություն, էջ 187։

2 Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22.

3 Свод..., с. 80-81.

4 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 126.

5 ԱՄՀ, հ. 4, Բաքու, 1980, էջ 304։

6 ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2։


1 **Բաճճի.** նշվ. աշխ., հ. 8, էջ 580։ Նաև՝ «...խոր և հորիզոնը նեղ ձորի մը մեջ, որում արեւելեան, հարաւային և հիւսիսային կողմերը բարձր լեռներ կան» (**Բարխուստարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 251։ Տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-905, էջ 834)։

2 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 33։

3 **Թօփճեան Զ.**, Յուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 19։

4 **Բարխուստարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 250։ Տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 834։

5 «Արարատ», 1870, Գ, էջ 138։



ԷՐՔԵՋ. հատված գյուղի կենտրոնական թաղամասից. աջ կողմում երևում է Սբ. Սարգիս եկեղեցին (լուս. հեղ.՝ անհայտ)

Ինչպես այլուր, 1905 թ.՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, Էրքեջը նույնպես ենթարկվում է փորձությունների: Մասնավորապես սեպտեմբերի 11-ին «...Էրքեջ հայաբնակ գիւղի մօտ թիրիմացութեան զօհ գնաց մանաշէտցի մի հայ երիտասարդ: Էրքեջի պահապանները գիշերով կտրում են մօտակայ կամուրջը, որով պէտք է անցնէին թալան տանող թուրք աւագակները: Դժբախտաբար այդ պահին կամրջով անցնելիս են լինում մի քանի հայեր, որոնց թուրքերի տեղ են ընդունում, որովհետև գիշեր լինելով երկուստէք էլ՝ շնորհիւ իր մայրենի լեզուն չը յարգող գռեհիկ հայի սովորութեան՝ սկսում են իրար սպառնալ թուրքերէն լեզուով, ուստի Էրքեջցիները հրացաններ են արձակում կարծեցեալ աւագակների վրա և սպանում են մի մարդ և մի ձի»⁶:

Նույն թվականի հոկտեմբերի 19-ին թուրքերին չի հաջողվում Էրքեջից ավարառել անասուններ, քանի որ «...գիւղացիները շուտ իմանալով կրակ են բանում թուրքերի վրա և փախցնում»⁷, իսկ հոկտեմբերի 26-ի թղթակցությունը նշում է. «Մի պատուական մոլլա, զգալով գալիք տարուայ անելի մեծ թշուառութիւնը, ձին հեծած գալիս է Էրքեջ գիւղը, էրքեջցիներին հրաւիրում, որ գնան դաշտ վար ու ցան անեն, և ինքն ազնիւ խօսք է տալիս, որ ոչ մի վնաս չի պատահիլ հայ գիւղացիներին: Գիւղացիք, հաւատալով այդ ամենից յարգուած մոլլին, գնում են վարերն անելու: Միւս օրը մոլլան ձին հեծած սրտատրոփ մտնում է գիւղն ու էրքեջեցոց յայտնում, որ այլևս չգնան վարելու, որովհետև շրջակայ թուրք գիւղացիք վատ մտադրութիւն ունեն դէպի հայերը: Մի ժա-

մից յետոյ լուր է հասնում, որ դաշտում թուրքերը յարձակուել են հայ գութանաւորների վրայ և ուզեցել են կոտորել նրանց, բայց հայերին յաջողում է դիրքեր բռնել խտտի դեզերի յետևում, երկար հրացանաձգութիւնից յետոյ թուրքերը թողնում են ու հեռանում: Հայերի կողմից գոհ չի եղել, թուրքերի կողմից անյայտ է: Գիւղացիք թողնում են վար ու ցանը և վերադառնում գիւղ»⁸:

1906 թ. մայիսի 14-ին անհետ կորչում է Էրքեջցի մի երիտասարդ⁹:

Մշտապես կորուստներ արձանագրողի դերում և միայն հազվադեպ պատասխանող հայկական կողմը, ըստ Գ-անձակի նահանգապետին հղված մի գրության, 1919 թ. ապրիլի 21-ին իրականացնում է բնավ ոչ հակակշիռ, սակայն, ըստ էության, թրքաոճ մի գործողություն. «...Էրքեջ գյուղից 15 զինյալ հայեր հափշտակում են Թողան գյուղական համայնքին պատկանող անասունները՝ վեց գոմէշ, երկու կով և մեկ ձի: Տեղի է ունենում փոխհրաձգություն: Հաջորդ օրը տուժածներն ուղևորվում են Էրքեջ, որտեղ անասուններին հափշտակած Ջումա Հովհաննիսյանցը, Սաշա Մամիկոնովը, Սաշա Խաչատուրյանցը և Կոստյա Սիքայեյանցը, ստանալով 200 ռուբլի, վերադարձնում են նրանց միայն չորս գոմէշը և մեկ կովը»¹⁰:

8 Երկաթաքարեան Ա., Դեպքերը Գ-անձակի գաւառում, «Նոր-Գար», 1905, № 42, 6 նոյեմբերի, էջ 3:

9 «Մշակ», 1906, № 107, 20 մայիսի, էջ 1:

10 История Азербайджана по документам и публикациям, под редакцией академика З. М. Бунятова, Баку, 1990, с. 152 (բնագրում՝ «...15 вооруженных армян села Эркеч угнали из принадлежащего обществу селения Тодан скота: шесть буйволиц, двух коров и одну лошадь, произошла перестрелка. На другой день после угона потерявшие отправились в село Эркеч, где принимавшие в угоне скота

6 Մխիթար, Դրութիւնը Ջիւանշիրի գաւառում, «Մշակ», 1905, № 205, 8 հոկտեմբերի, էջ 2:

7 Յովհաննիսյանց Ա., Տեղեկութիւններ գաւառից, «Մշակ», 1905, № 221, 8 նոյեմբերի, էջ 1:

Եթե ցարական տիրապետության օրոք պարբերաբար բորբոքվող թաթարական ոսնձգություններին էրքեջցիները կարողանում էին ինչ-որ կերպ դիմակայել և երբեմն նաև արժանի պատասխան տալ, ապա ցավալիորեն նույնն անել չի հաջողվում 1918-1920 թթ.: Դիշտ է, էրքեջցի քահանայորդի, ցարական բանակի սպա Սաշա Տեր-Սարգսյանի հերոսական ջանքերով կազմակերպվում է գյուղի ինքնապաշտպանությունը, բայց, ի վերջո, մուսավաթական հորդաներին հաջողվում է գրավել այն: Մասնավորապես 1920 թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում էրքեջը գավառի մյուս գյուղերի նման ամբողջությամբ ավերվում է, իսկ բնակիչները փախչելով ազատվում են վերահաս կոտորածից¹¹:

1920-ական թթ. Սաշա Տեր-Սարգսյանին խորհրդայնացած Ադրբեջանի իշխանությունները փորձում են ձերբակալել: Տարիներ անց, ի վերջո, նա ինքն է որոշում հանձնվել. «1931 թ. յոթ հոգուց բաղկացած նրա խումբը, այլ հեռանկար այլևս չտեսնելով, գնում է Ստեփանակերտ, հանձնվում տեղի հայ իշխանություններին: Ավաղ, նրանց, չգիտես ինչու, տեղափոխում են Գանձակ, հանձնում թուրք իշխանավորների ձեռքը. «դատ» է կազմակերպվում, և բոլորին գնդակահարում են»¹²:



Սաշա (Ալեքսանդր) Տեր-Սարգսյան

Ըստ տարեցների վկայության՝ նախախորհրդային տարիներին մի քանի քոչվոր անասնապահ թուրքեր բնակություն են հաստատում էրքեջին մերձակա վայրում և հիմնում Դեզիլար բնակավայրը: Դիվանյան ազգատոհմի մարդկանցից մեկը սահմանաբաժան է դնում 2 բնակավայրերի միջև և արգելում սահմանագիծը խախտել: Միայն 1959 թվականին է էրքեջի կոլտնտեսությունը թույլատրում թուրքերին տներ կառուցել գետի հակառակ ափին: Ի դեպ, նույն ժամանակ Փանահլուի թուրքերին ցանքերի համար տրվում է 40 հա հողատարածք¹³:

1991 թ. հուլիսի 16-ին Բուզլուխ և Մանաշիղ գյուղերի հետ մեկտեղ բռնազավթվում է նաև էրքեջը, սակայն նույն թվականի սեպտեմբերի 13-ին ազատամարտիկներին հաջողվում է երեք գյուղերն էլ ազատագրել: Ուրախությունը, սակայն, երկար չի տևում. 1992 թ. հունիսի 13-ին ադրբեջանցիները կրկին գրավում են էրքեջը, որն էլ ցարդ մնում է բռնազավթված:

Բնակչություն. գյուղում և նրա սահմաններում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները փաստում են, որ հայ կյանքն այստեղ սկիզբ է առել բազում դարեր առաջ, սակայն գրավոր աղբյուրներն այդ մասին վկայում են միայն ԺԺ դարից ի վեր:

Հայտնի է, որ 1817 թ. էրքեջցիները (կամ գոնե նրանց մի մասը) նույնպես վերադարձել էին Վրաստանից: Սա ինքնին վկայում է, որ 1780-ական թվականների վերջերին նրանք ևս հետևել էին Վրաստան գաղթող իրենց մեղիքներին:

Համաձայն ցարական իշխանությունների կողմից կատարված շնչագրական առաջին տեղեկագրերից մեկի՝ 1831-1832 թթ. գյուղի բնակիչներն էին 60-ամյա Հարություն Մկրտումյան Դիվանյանցը, կինը՝ 24-ամյա Սոլթին, 4-ամյա որդին՝ Հովակիմը, 8-ամյա դուստրը՝ Թագուհին; 40-ամյա Բարա Հարություն-

յան Նայիայանցը, կինը՝ 36-ամյա Գյուլին, 5-ամյա որդին՝ Մարտիրոսը, դուստրերը՝ 6-ամյա Ջավահիրը և 2-ամյա Գյոզալը; 59-ամյա Գրիգոր Հարությունյան Մուր...դեյանցը, կինը՝ 51-ամյա Սանդուխտը; 20-ամյա Գրիգոր Խաչատուրյան Սարգսյանցը, կինը՝ 18-ամյա Ջավահիրը, 2-ամյա դուստրը՝ Բեքին; 19-ամյա Միրզա Մնացականյան Հարությունյանցը, կինը՝ 14-ամյա Ռեհանը, Միրզայի եղբայրը՝ Ավանեսը, քույրը՝ 8-ամյա Հուրիփաշան; 50-ամյա Ղազար Գաբրիելյան Բխտյանցը, կինը՝ 44-ամյա Շուդին, 10-ամյա որդին՝ Գրիգորը; 36-ամյա Հակոբ Հարությունյան Մաթևոսյանցը, 2-ամյա որդին՝ Մեսրոպը, 4-ամյա դուստրը՝ Գյուլին; 8-ամյա Ավանես Հարությունյան Նավասարդյանցը, և քույրը՝ 5-ամյա Թագուհին; 46-ամյա Գրիգոր Գյուրջյան Հարությունյանցը, կինը՝ 44-ամյա Հերիքնազը, 17-ամյա որդին՝ Պետրոսը; 38-ամյա Հարություն Մարտիրոսյան Գրիգորյանցը, կինը՝ 26-ամյա Մարիամը, 3-ամյա դուստրը՝ Ջավահիրը; Հարություն Հակոբյանի 52-ամյա այրին՝ Ազիզը, և 15-ամյա որդին՝ Գալուստը; 40-ամյա Հակոբ Սարգսյան Հարությունյանցը, որդիները՝ 10-ամյա Սարգիսը և 8-ամյա Ապրեսը; 16-ամյա Հարություն Սարգսյան Հարությունյանցը; 35-ամյա Ավանես Սարգսյան Գալուստյանցը, կինը՝ 28-ամյա Մարիամը, որդիները՝ 7-ամյա Սարգիսը և 4-ամյա Մարտիրոսը, Սարգսի եղբայրը՝ 29-ամյա Ստեփանը, կինը՝ 24-ամյա Ջարնիշահը; Ալլահվերդի Սարգսյանի 70-ամյա այրին՝ Հերիքնազը, որդին՝ 36-ամյա Ղուլին, կինը՝ 28-ամյա Թագուհին, 9-ամյա որդին՝ Մարտիրոսը, և 5-ամյա դուստրը՝ Մարիամը; 50-ամյա Հարություն Մելքումյան Թադևոսյանցը, կինը՝ 42-ամյա Սառան, 15-ամյա որդին՝ Գաբրիելը, 1-ամյա դուստրը՝ Մարիամը; 58-ամյա Օհան Բարսեղյան Մարկոսյանցը, կինը՝ 47-ամյա Եղիսաբեթը, որդիները՝ 10-ամյա Հարությունը, 8-ամյա Մովսեսը, և 3-ամյա դուստրը՝ Մարիամը; 53-ամյա Բեգլար Մարկոսյան Մադիխյանցը, կինը՝ 48-ամյա Անան, որդիները՝ 25-ամյա Հովակիմը, 18-ամյա Ավանեսը, 5-ամյա դուստրը՝ Մագթաղը, Հովակիմի կինը՝ 17-ամյա Եղիսաբեթը, դուստրը՝ 2-ամյա Գյոզալը; 51-ամյա Առաքել Խաչումյան Դոփինազիզյանցը, կինը՝ 46-ամյա Մարգարիտը, որդիները՝ 27-ամյա Ռուստամը և 14-ամյա Մկրտիչը, Ռուստամի կինը՝ 25-ամյա Սանդուխտը, որդին՝ 4-ամյա Մովսեսը, 7-ամյա դուստրը՝ Մարիամը¹⁴:

Հայտնի է, որ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ էրքեջից մի քանի ընտանիք փոխադրվել և հաստատվել էր Հյուսիսային Արցախի Բրաջուր գյուղում¹⁵: Ըստ Արամ Ղազարյանի՝ Բրաջուրում հաստատվել էին Ղուլյանները (նախկինում՝ Տեր-Դահիելյաններ) և Գաբրիելյանները (նախկինում՝ Սանթրունք և Դիվանյաններ)¹⁶:

Էրքեջը մշտապես դասվել է գավառի՝ միջինից ավելի մարդաշատ գյուղերի շարքում: Այդ են փաստում 1830-ական թթ.-ից սկսած և գոնե մինչև 1914 թ. ընդհանուր առմամբ բնակչության շարունակական աճն արտացոլած վիճակագրական տվյալները (իհարկե, գյուղաբնակների թվաքանակն աճել է նաև խորհրդային տարիներին), որոնց ժամանակագրական համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1832 ¹⁷		39	33	72

Джума Ованесянц, Саша Мамиконов, Саша Хачатурянц и Костя Микаелянц, получив с потерпевших двести рублей, возвратили им только четырех буйволиц и одну корову”)
 11 Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 436.
 12 **Ղանիրամյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 23:
 13 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 337:

14 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 389 շրջ.-393:
 15 **Քաջիկեան**, Գանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1886, № 20, 25 մայիսի, էջ 295: Տե՛ս նաև **Ղադարյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 318:
 16 **Ղազարյան Ա.**, Կփորձեն գրել մեր գյուղի պատմությունը, «Մնավի դողանցներ», 2010, № 9, սեպտեմբեր, էջ 1:
 17 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 390-392:

1841 ¹⁸	10	29	22	51
1851 ¹⁹	18	102	76	178
1886 ²⁰	91	402	364	766
1889 ²¹	78	384	364	748
1893 ²²	94	319	238	557
1901 ²³		412	306	718
1902 ²⁴		419	314	733
1905 ²⁵	150	459	326	785
1906 ²⁶	130			
1908 ²⁷		478	321	799
1909 ²⁸		503	330	833
1910 ²⁹		508	331	839
1912 ³⁰	136	540	450	990
1914 ³¹				920
1915 ³²		250	505	755
1918 ³³	170	430	343	773
1925 ³⁴				1300
1970 ³⁵	182	343	396	739
1978 ³⁶				748
1992 ³⁷				840

Արցախյան ազատամարտի տարիներին զոհվել կամ անհետ կորել է 30 հոգի (19-ը խաղաղ բնակիչներ էին, 11-ը՝ ազատամարտիկներ): Ահա նրանք՝ Սարգիս Մեսրոպի Եսայան (հանկարծամահ է եղել 1990 թ.՝ որդու գերեվարությունից ազատվելուց 3 օր անց), Բախշի Հովհաննիսյան (1990 թ.՝ պատերազմական գործողությունների ընթացքում), Բորիկ Համբարձումի Դադյան (1990 թ. հունիսի 1-ին՝ դաշտում անասուն պահելու ժամանակ), Յուրիկ Գուրգենի Ստեփանյան (1990 թ. հունիսի 1-ին Բորիկ Դադյանի հետ դաշտում անասուններին արածացնելիս գերեվարվել է, տանջամահ արվել. համազյուղացիներն իրենց հան-

18 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47:
 19 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 93: Տե՛ս նաև Վալերազրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 210:
 20 Свод ..., с. 88-89. Բացի հայերից՝ գյուղում բնակվում էր նաև 3 տուն թաթար (6-ը՝ ար., 9-ը՝ իգ.):
 21 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 251: Ի դեպ, ըստ արխիվային մի վավերագրի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, ք. 46-47)՝ նույն թվականին գյուղն ուներ 458 (295-ը՝ ար., 163-ը՝ իգ.) բնակիչ:
 22 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, հ. Բ, էջ 336: Տե՛ս նաև ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 198:
 23 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 241-242: Տե՛ս նաև Վալերազրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 409:
 24 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, ք. 118-119:
 25 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, ք. 140-141: Տե՛ս նաև **Ա.Գօ.**, նշվ. աշխ., էջ 326, սակայն ըստ մատաղատների՝ 220 տուն հայ:
 26 **Ճանապարհորդ**, Գանձակ-Շուշի ճանապարհը, «Մշակ», 1906, № 12, 20 մայիսի, էջ 3:
 27 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, ք. 224-225: Ի դեպ, ըստ վիճակագրական մի տվյալի՝ բնակչության թիվը հասնում էր 780-ի (Кавказский календарь на 1910 г., с. 427): Այլ տվյալի (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 26.) համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 111 տուն (563-ը՝ ար., 497-ը՝ իգ.) 1060 բնակիչ:
 28 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 764, ք. 243-244:
 29 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 189:
 30 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 54. Այլ տեղեկության (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 330) համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 879 (532-ը՝ ար., 347-ը՝ իգ.) բնակիչ:
 31 Кавказский календарь на 1915 г., с. 213.
 32 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 17 շրջ.:
 33 ՀԱԳ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4 շրջ.:
 34 **Խաչատրյան Ա., Մուցիսյան Հ., Բաղայան Գ.**, նշվ. աշխ., էջ 139:
 35 **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 32:
 36 ԱՄՀ, հ. 4, էջ 81:
 37 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

գանակած 20.000 ռուբլի փրկագնով դիակը կարողացել են վերցնել), 90-ամյա Չատի Ներսեսի Ղազարյան (սպանվել է 1991 թ. հունիսի 12-ին), Մակիչ Սարգսյան (1991 թ. հունիսի 12-ին), Արգար Շամիրի Չախարյան, Ռոզա Հարությունի Չախարյան (զոհվել են 1991 թ. հունիսի 14-ին ռմբակոծությունից Չիքի մոտ), Մռավ Տոնոյան (1991 թ.՝ գյուղի ռմբակոծությունից), Սարգիս Ստեփանի Լալայան (հանկարծամահ է եղել 1991 թ. գյուղում), Մանյա Հովհաննիսյան (նահանջի ժամանակ՝ Գյուլիստանի անտառում), Օլինկա Խաչատուրի Մանուկյան (նահանջի ճանապարհին. ազատամարտիկները դին գտել են և ամփոփել Ստեփանակերտում), Կոլիկ Շալիկոյի Բարայան (մնացել է անտառում՝ նահանջի ժամանակ), Սիմոն և Սարգիս Ստեփանի Դանիելյաններ (1991 թ.՝ գյուղում), Սիմոն Դադյան (1991 թ. Շահումյանում՝ այլուր ստանալիս), Ռուբեն Բեզլարի Ավագյան (1991 թ. ապաստանել էր Վերիշենում, որտեղ էլ մահացել է), վերիշենցի էրքեզաբնակ Սուրեն Հարությունի Մանուկյան (մնացել է գյուղում), աշխարհագրային ռուսաստանաբնակ Աշոտ Սարգսի Դադյան (1992 թ. հուլիսի 10-ին՝ Կարմիրավանի մոտ)³⁸:

Ազատամարտիկներից զոհվել են չարենցավանաբնակ էրքեզցիներ Սլավիկ Շամվոնի Դանիելյանը (1991 թ. փետրվարի 15-ին՝ Բուզլուխում) և Շուրա Մովսեսի Խաչատրյանը (1992 թ. հունվարի 26-ին՝ Հաղորթում), ինքնապաշտպանության առաջին կազմակերպիչներից Վանիկ Մամոնի Լալայանը (1991 թ. հունիսի 14-ին՝ Չիքի մոտ), Կամո Արմենակի Հովհաննիսյանը և ծնունդով Մուսալեռ ավանից Մերուժան Սուրենի Սարգսյանը (երկուսն էլ՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին), ծնունդով Երևանից 26-ամյա Տիգրան Մերյոժայի Հակոբյանը (1992 թ. մայիսի 2-ին՝ Էրքեզի մոտ թշնամու կրակակետը ոչնչացնելիս), ծնունդով Բալահովիտից Իսակ Ժորայի Վիրաբյանը (1992 թ. մայիսի 2-ին), ծնունդով Էրքեզից, Գանձակից փախստական Սիմաս Տիգրանի Հակոբյանը (1992 թ.՝ սեպտեմբերի 6-ին, Վարդենիսի սահմանը պաշտպանելիս), Ալեքսանդր Միմասի Մարտիրոսյանը (1994 թ. մայիսի 12-ին՝ Գյուլիստանն ազատագրելիս), ծնունդով Հաղթանակ գյուղից Նորիկ Գառնիկի Խաչատրյանը (1992 թ. հունիսի 13-ին՝ Էրքեզի մոտ), Վասակ Էդիկի Հովհաննիսյանը (1994 թ. հունիսին՝ Չայլու գյուղի մոտ)³⁹:


Բռնագաղթի նախօրեին էրքեզաբնակ ազգատոհմներից էին Բարայանները, Դանիելյանները, Հովհաննիսյանները, Առըստամյանները, Դիվանյանները, Խաչատրյանները, Արզումանյանները, Լալայանները, Ղազարյանները, Մանուկյանները, Մարտիրոսյանները, Քամալյանները, Եսայանները, Տոնյանները, Ստեփանյանները և Սաֆարյանները⁴⁰: Ի դեպ, արմատներով Էրքեզից էր սերում վաստակաշատ ազգագրագետ-բանահավաք Երվանդ Լալայանը⁴¹:

Էրքեզցիներն այլուր. Արցախի Մեծ Արանց վանքում ԺԹ դարավերջին պահվող ձեռագ խաչի ոտքին կարդացվել է.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խաչս Հուռումին եւ որթի իմ Ապրհամին Էրքեզի սր. Սարգիս յեկդունց, թվ Ռ-ՃԾ (1701)⁴²:

1916 թ. Գանձակի հայոց գերեզմանոցում է ամփոփվում էրքեզցի Արշակ Խաչատուրյան Ստեփանյանցի 14-ամյա որդին՝ Արամը⁴³:

38 **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 670-671:
 39 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 671-672:
 40 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 336:
 41 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 340:
 42 ՀԱԳ, ֆ. 319, ց. 1, գ. 404, ք. 89:
 43 **Երեմյան-Գանձաքեցի Ս.**, Гандзак: армянские кладбища и церкви, Ереван, 2009, с. 76.



ԷՐՔԵՋ. գյուղի գլխավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի՝ 2009 թ. արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Գալոբյանի, 2018 թ.)


Էրբեջի տնատերերի և կարևոր շինությունների ցանկը
(կազմող՝ Սամիկոն Լալայան)

- 1 Բորիկ Համբարձումի Դադյան
- 2 Ստեփան (Ռազմիկ) Ստեփանի Ղազարյան
- 3 Վանես Գրիգորի Արզումանյան
- 4 Ալեքսանդր Հնայակի Դիվանյան
- 5 *1988-1991 թթ. ինքնապաշտպանության 1 պահակակետ, նախկինում՝ ֆերմա*
- 6 Մաշիկ Սիմոնի Ամիրյան
- 7 Ռաֆիկ Հնայակի Դիվանյան
- 8 Ապրանազ Արմենակի Հովհաննիսյան (նախկինում՝ Վաղինակ Առուստամյան)
- 9 Բենիկ Բագրատի Տոնյան
- 10 Յուրիկ Ստեփանյան (նախկինում՝ Ջինա Ավետիսյան)
- 11 *Խորհունտի գրասենյակ*
- 12 *Խորհունտի պահեստներ*
- 13 *Միջնակարգ դպրոց*
- 14 Լեոնիկ Աբրահամի Հովհաննիսյան
- 15 Ռուբիկ Հանեսի Առուստամյան
- 16 Խորեն Աբրահամի Հովհաննիսյան
- 17 Աբգար Շամիրի Ջախարյան
- 18 Մելսիկ Մամոնի Լալայան
- 19 Ազատ Լևոնի Խաչատրյան
- 20 Կոլյա Բեգլարի Խաչատրյան
- 21 Մյոմնա Բեգլարի Խաչատրյան
- 22 Ալեքսանդր Խաչատրյան
- 23 Արարատ (Շուրա) Խաչատրյան
- 24 Վաղարշ Գրիգորի Խաչատրյան
- 25 Սերյոժա Մռավի Հովհաննիսյան
- 26 Գուրգեն Հարությունի Դադյան
- 27 Մարուսյա Ղազարյան
- 28 Բորիկ Դադյան
- 29 *Խանութ*
- 30 Խաչատուր (Չատի դայի) Ղազարյան
- 31 Գրիգոր Լևոնի Լալայան (նախկինում՝ գաղթական Ավետիս)
- 32 Նիկալ Հովհաննիսյան
- 33 Վոլոդյա Բախշիի Ղազարյան
- 34 Էդիկ Կոլիի Դադյան
- 35 Մամվել Մեյրամի Մանուկյան
- 36 Աբուսյակ Այվազյան
- 37 Մամիկոն Մակոյի Մարգարյան
- 38 Երվանդ Հովհաննիսյան
- 39 Սերոժ Սիմոնի Մանուկյան
- 40 Արկադյա Վանիի Մանուկյան
- 41 Կոլի Դարախանի Խաչատրյան
- 42 Բուդոյան Նազարի Դիվանյան
- 43 Սերոժ Հանեսի Առուստամյան
- 44 Բենիկ Նիկալի Ամիրյան
- 45 Խորեն Հանեսի Առուստամյան
- 46 Մարգիս Մեսրոպի Եսայան
- 47 Բորիկ Լևոնի Եսայան
- 48 Լևոն Սողոմոնի Լալայան
- 49 Սանթրի Գրիգորի Առուստամյան
- 50 Կոլի Սահակի Մարգարյան
- 51 Մազբաղ Բադյան
- 52 Լևոն Սիմոնի Տոնյան
- 53 Մարգո Չատիի Մանուկյան
- 54 Սուրիկ Ամիրխանի Ղազարյան
- 55 Մակի Մանուկյան
- 56 Ազատ Իսրայելի Խաչատրյան
- 57 Թագուհի Պետրիի Բաբայան
- 58 Մովսես Սողոմոնի Խաչատրյան
- 59 Հրանտիկ Առուստամյան (Ղազարանց)
- 60 Սանթրի Հարությունի Քամալյան
- 61 Հովսեփ (Ռուսո) Տոնյան
- 62 Ռուստամ Սիմոնի Ամիրյան
- 63 Ժորիկ Սիմոնի Ամիրյան
- 64 Կարապետ Շամիրի Լալայան
- 65 Մարգիս Պետրիի Լալայան
- 66 Խորեն Ալեքսանդրի Մանուկյան

- 67 Սիմոն Դադյան
- 68 Փառո Մաշայի Մանուկյան
- 69 Մռավ Հովհաննիսյան
- 70 Բորիկ Սանթրիի Ղազարյան
- 71 Հրանտ Սիմոնի Դանիելյան
- 72 Շամիկ Հարությունի Դանիելյան
- 73 Հրանտ Հարությունի Տոնյան
- 74 Ենոք (Վոլոդյա) Դանիելյան
- 75 Արամ (Ալբերտ) Դանիելյան
- 76 Գրիշա Մռավի Ղազարյան
- 77 Հրանտ Բախշիի Ղազարյան
- 78 Վազգեն Նազարի Հովհաննիսյան
- 79 Մարգիս Դիվանյան (Չափունց)
- 80 Շմավոն Ջումիի Հովհաննիսյան
- 81 Դրաստամատ Հարությունի Առուստամյան
- 82 Մաշիկ Դավթի Առուստամյան
- 83 Հրանտ Կարապետի Հովակիմյան
- 84 Բերիկ Գրիգորի Խաչատրյան
- 85 Բորիկ (Մանյա) Հովհաննիսյան
- 86 Ալեքսանդր Մռավի Հովհաննիսյան
- 87 Միքայել Նիկալի Դանիելյան
- 88 Գուրգեն Մարգիս Դադյան
- 89 Հովսեփ Թամրազյան
- 90 Մամիկոն Մռավի Հովհաննիսյան
- 91 Ռուբեն Տոնյան
- 92 Վոլոդյա Առուստամի Առուստամյան
- 93 Պավլի Լալայան
- 94 Մարգիս Ստեփանի Լալայան
- 95 Սիմոն Շամիրի Դադյան
- 96 Ռուսո Մովսեսի Դանիելյան
- 97 Մաշիկ Լևոնի Դանիելյան
- 98 Ռաֆայել Կարապետի Ղազարյան
- 99 Շմավոն Հանեսի Մանուկյան
- 100 Մակիչ Դադյան
- 101 Շալիկո Նիկալի Բաբայան
- 102 Սերգի Սողոմոնի Բաբայան
- 103 *Բուժկետ*
- 104 Հարություն Պետրիի Լալայան
- 105 Գրիգոր Պետրիի Լալայան
- 106 Արմենակ Պետրիի Լալայան
- 107 Յաշա Բաբայան
- 108 Ալբերտ Ռուբենի Քամալյան
- 109 Ռուբեն Հարությունի Քամալյան
- 110 Սիմոն Բադյան
- 111 Մամվել Սիրգոյի Դադյան
- 112 Վոլոդյա Արամի Բադյան
- 113 Գրիգոր Քամալի Քամալյան
- 114 Ժորիկ Նավասարդյան
- 115 Ավագ Դանիելյան
- 116 Սիմոն Դանիելյան
- 117 Ռուբեն Դանիելյան
- 118 Հարություն Դանիելյան
- 119 Եդիչ Հարությունի Դանիելյան
- 120 Մովսես Քամալի Քամալյան
- 121 *Խանութ*
- 122 Սիմոն Գրիգորի Ղազարյան
- 123 Ռուբեն Բեգլարի Հովակիմյան
- 124 Մարգիս Մամոնի Լալայան
- 125 Վանիկ Մամոնի Լալայան
- 126 Խորեն Մարգիս Խաչատրյան
- 127 Մաշիկ Ավագի Ղազարյան
- 128 Մարգիս Խաչատուրի Ղազարյան
- 129 Էդիկ Մովսիի Հովհաննիսյան
- 130 Ստեփան Դազարյան
- 131 Արմենակ Մովսիի Հովհաննիսյան
- 132 Ռազմիկ Գրիշայի Քամալյան
- 133 Շամիկո Մովսիի Հովհաննիսյան
- 134 Մամիկոն Մակիչի Եսայան
- 135 *Գյուղի հին ակումբը՝ գրադարանի հետ*
- 136 Սերոժ Կարապետի Լալայան

- 137 Ասպրամ Հարությունյան (գաղթական Ասպրո)
- 138 Հովհաննես Մարտիի Դիվանյան
- 139 Ռազմիկ Սերոժի Տոնյան
- 140 Երվանդ Շամիրի Բաբայան
- 141 Սուրեն Սողոմոնի Լալայան
- 142 Գարեգին Շամիրի Բաբայան
- 143 Միմեշակ Մարտիրոսյան
- 144 Ալեքսանդր Առուստամի Առուստամյան
- 145 Ելենա Սողոմոնի Նավասարդյան
- 146 Նիկալ Շամիրի Ջախարյան
- 147 Արմո Ալեքսանդրի Բաբայան
- 148 Շմավոն Մարտիրոսի Բաբայան
- 149 Ալեքսանդր Ստեփանյան
- 150 Միքայել Հանեսի Մարգարյան
- 151 Պապիկ Սիմոնի Առուստամյան
- 152 Սրավո Առուստամի Առուստամյան
- 153 Մայիս Կոստիի Մարտիրոսյան
- 154 Արշակ Մակիչի Եսայան
- 155 Մայիս Մովսեսի Կարապետյան
- 156 Մակիչ (Մակո) Մարգարյան
- 157 Հրանտ Մարտիրոսի Մարտիրոսյան
- 158 Ռաֆիկ Մարտիրոսի Մարտիրոսյան
- 159 Թելլու Առուստամյան
- 160 Սիրան Մարտիրոսյան
- 161 Վաղինակ Մարտիրոսյան
- 162 Համայակ Պավլիի Արզումանյան
- 163 Մաշիկ Պավլիի Արզումանյան
- 164 Գրիշա Առուստամի Արզումանյան
- 165 Թարխան Մաշայի Մարգարյան
- 166 Ռուբիկ Արամի Դիվանյան
- 167 Կոլիկ Արամի Դիվանյան
- 168 Գուրգեն Բալախանի Արզումանյան
- 169 Նիկալ Բեգլարի Տոնյան
- 170 Բագրատ Բեգլարի Տոնյան
- 171 Ռուբեն Բալախանի Արզումանյան
- 172 Սողոմոն Հարությունի Դադյան
- 173 Սուրեն Հարությունի Մանուկյան
- 174 Արմենակ Մաֆարյան
- 175 Մարգիս Պավլիի Դիվանյան
- 176 Մովսես Պավլիի Դիվանյան
- 177 Գյուլի Առուստամյան
- 178 Ջումշուդ Առուստամյան
- 179 Եդիչ Ալեքսանդրի Մանուկյան
- 180 Ալբերտ Աբրահամի Եսայան
- 181 Եսայի Աբրահամի Եսայան
- 182 Մռավ Բեգլարի Տոնյան
- 183 Ռաֆիկ Վարդազարի Տոնյան
- 184 Սիմոն Բախշիի Արզումանյան
- 185 Արկադյա Ալեքսանդրի Մանուկյան
- 186 Բախշի Արզումանյան
- 187 Հրանտիկ Բախշիի Արզումանյան
- 188 Խորեն Բախշիի Արզումանյան
- 189 Բալախան Արզումանյան
- 190 *Փոստատուն*
- 191 *Էլեկտրատաղաց*
- 192 *Երկհարկ շինություն (1-ին հարկում ա-կումբն էր, 2-րդում՝ գյուղատրոստո)*
- 193 *ՀՄՊՁ հուշարձան*
- 194 *Նոր գերեզմանոց*
- 195 *Կոնկ հին գերեզմանոց*
- 196 *Երի հողեց*
- 197 *Սբ. Մարգիս եկեղեցի*
- 198 *Լոբունց խաչ*
- 199 *Շենի աղբյուր*
- 200 *Գորտի լիճ*
- 201 *Հովուզ աղբյուր*
- 202 *Չատունց աղբյուր*¹

¹ **Վահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Գ, էջ 83-88:



ԷՐՔԵՏ. Սր. Սարգիս եկեղեցին հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից և արևմտյան ճակատից բացված միակ մուտքը (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980 թ.)

Տնտեսություն. Էրքեջցիների գլխավոր զբաղմունքներն էին հողագործությունն ու անասնապահությունը, ինչպես նաև տնամերձ այգիների մշակությունը: 1912 թ. գյուղացիներն ունեին 15 ձի, 400 խոշոր և 500 մանր եղջերավոր անասուն⁴⁴:

1915 թ. գյուղում կար ընդամենը 300 դեսյատին հող (որից 100-ը՝ բնակելի տարածք)⁴⁵:

Կառույցներ. 1912 թ. Էրքեջն ուներ 1 եկեղեցի, 136 բնակելի տուն, 140 տնտեսական կառույց, 3 խանութ և 9 ջրաղաց⁴⁶:

Դպրոց. բացվել է 1908 թ. և գործել որպես միդասյա արական ծխական դպրոց: 1908/09 ուստարում ուներ 2 բաժանմունք, 2 ուսուցիչ և 52 աշակերտ (բոլորն էլ՝ տղաներ)⁴⁷:

1909/10 ուստարում շարունակում էր գործել որպես միդասյա, սակայն արդեն երկսեռ կրթօջախ⁴⁸:

1910 թ. երկսեռ դպրոցն ուներ 28 աշակերտ, որից միայն մեկն էր աղջիկ⁴⁹:

1912 թ. օգոստոսի դրությամբ դպրոցը փակ էր⁵⁰: Թերևս դա տեղի էր ունեցել նույն թվականին՝ գյուղում պետական դպրոցի բացման հետևանքով⁵¹, սակայն թվում է, թե այս հիշատակությունը հիմնված է հիշողության վրա և մոտավոր է, քանի որ 1913 թ. նշվել է. «Այս տարի Էրքեջ գիւղում հայոց դպրոցի տեղ բացելու է մինիստրական դպրոց»⁵²:

1920 թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1922 թ. Մեծ եղեռնը վերապրած Վահան Մկրտչյանի ջանքերով: 1926 թ. Սերգեյ Առստամյանը նորոգում է 1920 թ. թուրքերի այրած «Բողունց դիտատրի» հիվանդանոցը և վերածում դպրոցական շենքի⁵³:

1970 թ. գործում էր որպես միջնակարգ դպրոց՝ 224 աշակերտով⁵⁴:

Սր. Սարգիս եկեղեցի. գտնվում է գյուղի հին թաղամասի կենտրոնում (N 40°27'38.88", E 046°28'29.12", ծ. մ. 1093 մ):

Եկեղեցու կառուցմանը վերաբերող մասնավոր վկայություն հայտնի չէ, սակայն մուտքի և հյուսիսային ավանդատան բարավորներին առկա ժամանակագրորեն իրար շատ մոտ երկու արձանագրությունն ու եկեղեցու հորինվածքային և ճարտարապետական առանձնահատկությունները հուշում են, որ այն կառուցվել է հենց 1710-ական թվականներին: Ահա դրանք.

Արձանագրություն. Սր. Սարգիս եկեղեցու հյուսիսարևելյան ավանդատան բարավորին՝ 1 տող.

Թվ(ին) Ռ-ՃԿԱ (1712) էր:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. Սր. Սարգիս եկեղեցու մուտքի հյուսիսային անկյունին.

...[մէ յիշատակ, թվ(ին) Ռ-ՃԿԵ (1716):

Հրատ. **Քաղխոտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 250: **Լալայեան**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 335: Դիվան հայ վիճագրության, պրակ V, էջ 249: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 80: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 81:

44 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 55.

45 ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 17 շրջ.:

46 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 55.

47 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 242-243: Տե՛ս նաև **Խոսրոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., Երևան, 1987, էջ 477: Դիշտ չէ հիշողությամբ դպրոցի բացումը 1900 թ. վերագրելը (**Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 338), մասնավոր, որ 1896-1905 թթ. կառավարության հրամանով ծխական դպրոցները փակ էին, և եթե այդ ընթացքում նոր դպրոցներ էին բացվում, ապա միայն պետական (ռուսական):

48 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, հ. Բ, էջ 396:

49 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 189:


50 **Պետ.**, Ղարաբաղի դպրոցների շուրջը, «Մշակ», 1912, № 187, 25 օգոստոսի, էջ 3:

51 **Ղահրամանյան Կ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 338:



52 **Պետրոսեան Ա.**, Կրթական գործին մօտիկ անձանց ուշադրութեան, թրակցություն, «Հորիզոն», 1913, № 154, 13 յուլիսի, էջ 3:

53 **Ղահրամանյան Կ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 434-438:


54 Նույնի, նշվ. աշխ., հ. Ա, էջ 81:



ԷՐՔԵՋ. Սբ. Սարգիս եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԷՐՔԵՋ. Սբ. Սարգիս եկեղեցու կտրվածքները դեպի հյուսիս և արևելք (չափ.՝ Կ. Ղահրամանյանի)



ԷՐՔԵՋ. Սբ. Սարգիս եկեղեցու հյուսիսային ավանդատան բարավորը՝ 1712 թ. հիշատակագրությամբ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ., գրչ.՝ 2018 թ.)

Ավանդաբար վկայվել է, որ «Էրքեջ գյուղի եկեղեցին կառուցվել է տեր Դանիելի ջանքերով, 1716 թ. ...: Պատերը հաստ են ու ամուր, դռները՝ կաղնու փայտից: Հետագայում՝ տեր Դանիելի մահից հետո, նրա աճյունը ամփոփել են եկեղեցում, ծածկել մարմարե տապանաքարով»⁵⁵:

Վավերագրերում Սբ. Սարգիս անվան հիշատակությանը հանդիպում ենք 1841 թ.-ից (նաև 1880 թ.)⁵⁶:

1881 թ. եկեղեցի է այցելում մեծն Բաֆֆին. «Չկամենալով Էրքեջում երկար մնալ, շուտով կանչել տվի գյուղի քահանային, որ եկեղեցու դուռը բաց անե»⁵⁷: Հիշվում է նաև 1893 թ.⁵⁸:

1917 թ. նախատեսվում էր կառույցը նորոգել 2,115 ուրբի ծախսով (որը թերևս տեղի չի ունեցել - Ս. Կ.)⁵⁹:

1917 թ. նոյեմբերի 3-ին թույլատրվում է նորոգության համար եկեղեցու դրամագլխից ծախսել 2115 ռ.⁶⁰:

1928 թ. եկեղեցին փակվում է⁶¹:

55 Դանիելյան Ա., Ջանգը նորից կողոպտեցի, «Մշակի դղանցներ», 1994, № 2, 25 փետրվարի, էջ 2:

56 ՀԱԴ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 33:

57 Բաֆֆի, նշվ. աշխ., հ. 8, էջ 581:

58 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 198:

59 ՀԱԴ, ֆ. 56, ց. 7, գ. 743, ք. 1-2:

60 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11797, ք. 99 շրջ.-100:

61 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, ք. 12:


Խորհրդային սկզբնական տարիների նոր գաղափարների կույր հետևորդները Ներքիշենի եկեղեցու նման ցանկանում են այս եկեղեցին ևս քանդել, որը, սակայն, մի դիպվածով փրկվում է. «1930-ական թվականներին բոլշևիկները որոշում են ավերել եկեղեցին: Տարեց էրքեցիները իրենց զավակներին ետ են պահում այդ պիղծ գործից: Միայն երկու կոմերիտականներ բարձրանում են շենքի կտուրը, պոկում են գմբեթը, բայց իրենք էլ ցած են ընկնում, մեկի թեև է ջարդվում, մյուսի՝ ոտքը: Այլես չեն համարձակվում քանդել: Փառահեղ, սյունազարդ եկեղեցին դարձնում են ակումբ, հետագայում՝ կոլտնտեսության պահեստ: 1990 թ. Արցախի թեմի առաջնորդ Պարզեի սրբազանը եկավ Շահումյան, նորից օժեց էրքեցի եկեղեցին: Տեղ Դանիելի թոռան թոռներից մեկը բարձրացավ նորակառույց գմբեթը, քաշեց զանգի լեզվակը: 60 տարվա լուրջունից հետո զիլ դողանջեց զանգը...»⁶²:

Եկեղեցին մինչև 1992 թ. բռնագաղթը կանգուն էր, սակայն խիստ քայքայված էր, պատերը՝ ճաքճքված: Նկատելի էին նախկինում կատարված մի շարք նորոգությունների հետքերը:

Ճարտարապետություն. տակավին ԺԹ դարի վերջին կառույցը նկարագրվել է հետևյալ կերպ. «...եկեղեցին Սուրբ Սարգիս, հոյակապ, բարձրաշէն, կառուցեալ վեց սիւների վերայ (երկուսն միապաղաղ), երկարութիւնն 21 մետր 70 սանթիմ, լայնութիւն 14 մետր 60 սանթիմ»⁶³:

Ս. Էփրիկյանը շեշտել է նաև եկեղեցուն առկա ձեռագրերի մասին. «...վեց սիւներով բարձրաշէն եկեղեցի մը. մէջը կան մի քանի յիշատակարաններ և հնագոյնն ունի 1450 թուականը»⁶⁴:

Եռանավ բազիլիկ է՝ կառուցված անմշակ և կիսամշակ քարով, կրաշաղախով: Սրբատաշ են միայն սյուները, կամարներն ու անկյունաքարերը: Երկթեք ծածկի տակ առնված տանիքը ներքուստ պահում են երեք գույգ սյուները: Միակ մուտքն արևմտյան ճակատից է: Ներքուստ որմերում առկա են ամբողջական կամ մասնատված (գործածված գուտ որպես շինանյութ) գեղաքանդակ, նաև արձանագիր մի քանի խաչքարեր:



ԷՐՔԵՁ. Սր. Սարգիս եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Վիմագրեր. ինչպես եկեղեցու որմերին, այնպես էլ ագուցված խաչքարերին առկա են ԺԳ-ԺԸ դարերին վերաբերող նվիրատվական բնույթի զանազան հակիրճ արձանագրություններ:

62 Դանիելյան Ա., նշվ. հոդվ., նույն տեղում:
63 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 250:
64 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 834:



ԷՐՔԵՁ. Վիմագրեր Սր. Սարգիս եկեղեցու որմերին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԷՐԲԵՋ. Աբ. Սարգիս Եկեղեցու որմնորում ագուցված խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Խաչքար (127 x 75 սմ), ագուցված Սբ. Սարգիս եկեղեցու խորանի հյուսիսային կողմում՝ արևմտահայաց պատին, հորիզոնական քեն-րից վերև հորինվածքի ստորին մասում՝ 5 տող.

ԹՎ(ԻՆ) ՉԹ (1260). / **ԵՍ՝ Ակոբ, կանգ(ն)եցի զխաչս Սարգիսա եւ Կամարին՝ ծնողաց մե-րոց, ա(ստուա)ծ [որոր-մի]:**

Հրատ. **Քարխտաարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 250: Գիվան հայ վիճագրության, պրակ V, էջ 249: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 81:

Տարբերություն. հրատա-րակիչների մոտ **Կամարին** անձնանվան փոխարեն սխալմամբ՝ [կամ] անեն:



Խաչքարի բեկոր (68 x 66 սմ), ագուցված Սբ. Սարգիս եկեղեցու խորանի մոտ: Պահպանվել է վերին կեսը, որի վերին խաչաքևի ձախ կողմում և նրանից վեր՝ 3 տող.


ԹՎ(ԻՆ) ՌԺԷ (1568), | թվ(ին) ՌԺԷ (1568): Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. Սբ. Սարգիս եկեղեցու խորանի հյուսիսային կողմի որմնասյան արևմտահայաց երեսին.

Պարխի որդի տ(է)ր Առաքել, Մօսիսի | որդի:

Չույզ փակագրերին՝ **Ք(րիստո)սի ծառա Աւե-տիս:** / **Ք(րիստո)սի ծառա Մխիթար:**

Հրատ. առաջին անգամ:



Խաչքարի բեկոր (115 x 56 սմ), ագուցված Սբ. Սարգիս եկեղեցու խորանի հարավային կողմի արևմտահայաց պատին, քիվին՝ կիսաեղ 1 տող.


Խա[չս] կա(ն)կ[նե]ց[ի] ...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. Սբ. Սարգիս եկեղեցու հարավային ավանդատան մուտքի հյուսիսա-յին անկյունաքարին՝ 2 տող.

Էվազի որդի | տ(է)ր Օվանէս:

Հրատ. առաջին անգամ:



Արձանագրություն. Սբ. Սարգիս եկեղեցու հարավային ավանդատան որմին.

S(է)ր Յօս/էփին:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. Սբ. Սարգիս եկեղեցու հյուսի-սային որմնասյան վրա՝ 2 տող.

Ք(րիստո)սի ծ(ա)ռ(ա) | Ալիքսան:

Հրատ. առաջին անգամ:



Տապանաքար. ագուցված Սբ. Սարգիս եկեղեցու հյուսի-սային պատին, արձանագրությունը՝ 7 տող.

S(է)ր Մի[խիթ]ար[ի], տ(է)ր | Մինաս[ի] որդի՝ | Միխիթար:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. Սբ. Սարգիս եկեղեցու խորանի մոտ՝ արևմտահայաց պատին՝ 4 կարճ տող.

Մարքիսի | որդի:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 80: Նույնի՝ Օջա-խի գիրք, հ. Ա, էջ 81:

Ծանոթ. ունի փակագիր:

Տարբերություն. հրատարակչի մոտ **որդի** բառի փոխարեն՝ **Ռ-Դ** (1555):

Արձանագրություն. Սբ. Սարգիս եկեղեցու մուտքի հարավային նիստին.

Առ Ք(րիստո)սի ծ(ա)ռ(ա) Ավետ:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 80: Նույնի՝ Օջա-խի գիրք, հ. Ա, էջ 81:

Տապանաքար. Սբ. Սարգիս եկեղեցու արևմտյան կողմում.

ԹՎ(ԻՆ) ՌՄԿԶ (1817), որ է Պօլնուսու գալն, մայիսի Ի (20). Քրիստոսի ծառայ տեր Դանիել:

Հրատ. **Քարխտաարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 250-251: **Լալայան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 335: Գիվան հայ վիճագրության, պրակ V, էջ 249: **Ղահրաման-յան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 81: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 81-82:

Ծանոթ. 1977 թ. տապանաքարն անհետացված էր:

Քահանա. Դանիել Ղուկասյան Հարությունյանց (ծնվ. 1792 թ.). քահանա է ձեռնադրվել 1816 թ. մարտի 20-ին Ներքիշենի Սբ. Հովհաննես եկեղեցում: Ուսանել է Հովհաննես քահանա Տեր-Սարգսյանցի մոտ: Պաշտոնավարել է 1816 թ.-ից մինչև մահը: 1845 թ. ուներ 6 որդի⁶⁵: Վախճանվել է 1848 թ.⁶⁶:

1848 թ. մարտի 15-ին գյուղի հասարակությունը դիմում է Ղարաբաղի վիճակավոր առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոսին քահանա ձեռնադրել հանգուցյալ տեր Դանիելի որդուն՝ Կարապետին⁶⁷, որը ծնվել է 1817 թ. ապրիլի 4-ին, մկրտվել էր-քեջի Սբ. Սարգիս եկեղեցում Ղարաչինարի քահանա Գալուստ քահանայի ձեռքով⁶⁸, 1845-1847 թթ. ուսանել է Շուշիում՝ ար-քունի վարժարանի ուսուցիչ Հարություն քահանա Մելքոնյանի մոտ⁶⁹: Չեռնադրման թույլտվությունը ստրվում է 1848 թ. հունի-սին⁷⁰:

Կարապետ Տեր-Դանիելյան Հարությունյանց (ծնվ. 1816 թ.). 1845-1847 թթ. ուսանել է հոր՝ տեր Դանիելի մոտ: Քահանա է ձեռնադրվել 1848 թ. հուլիսի 18-ին Շուշիի Ղազանչեցոց եկեղե-ցում և գյուղում պաշտոնավարել առնվազն մինչև 1874 թ.⁷¹: 1874 թ. ուներ 4 որդի (Աբրահամ, Սահակ, Մողմոն և Ատոմ) և 2 դուստր (Գուլիզար և Շահիսանում):

Հովհաննես (Ավանես) Տեր-Դանիելյան Հարությունյանց (ծնվ. 1820 թ.). քահանայագործում էր 1874 թ.⁷²:

Առանց անունը նշելու՝ 1881 թ. քերևս այս քահանային է հան-դիպել եկեղեցի այցելած Բաֆֆին «...հոժարությամբ բաց արավ եկեղեցու դռները, կարծելով, թե ես ուխտավոր եմ և շուտով ավե-տարանը և մի կտորած խաչ դրեց սեղանի վրա, որ ես համբուրեմ և նրան փող տամ: Բայց երբ նկատեց, որ ես հիշատետրը դուրս հանեցի ծոցիցս և սկսեցի մատիտով մի քանի նկատություն-ներ անել նրա վրա, քահանան սարսափեց, կարծելով, թե ես մի պաշտոնական անձն եմ և սատանան գիտե, ինչ նպատակով ե-

65 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 531-533:

66 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2298, թ. 1, 3:

67 Նշվ. գործը, թ. 1-2:

68 Նշվ. գործը, թ. 2 և շրջ.:

69 Նշվ. գործը, թ. 4:

70 Նշվ. գործը, թ. 10-11:

71 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 538, 542; ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 128: Տե՛ս նաև Վաներագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 210: «Արարատ», 1871, Ը, էջ 484: 1873, ԺԲ, էջ 486: **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 87:

72 **Ղահրամանյան Կ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 88: 1874 թ. դրությամբ ուներ 7 որդի (Սարգիս, Եփրեմ, Պետրոս, Սերգի, Թամազ, Թամիր և Հարություն):

կել են նրա եկեղեցին «գրելու»: Իմ բոլոր ջանքը, համոզելու նրան, որ նա այսպիսի կասկածներ չունենա, իզուր անցավ: Նա ոչինչ չկամեցավ ինձ ցույց տալ: Մտածելով, որ կարող է մի անախորժություն պատահել, ես թողեցի ու դուրս եկա եկեղեցուց, բայց ամենևին չմեղադրելով ողորմելի քահանային»⁷³:

Սարգիս Տեր-Հովակիմյան Տեր-Սարգսյանց (ծնվ. 1840 թ.). քահանա է ձեռնադրվել 1863 թ. մայիսի 30-ին (Մկրտիչ եպիսկոպոսի ձեռամբ): Որպես ծխատեր քահանա՝ հիշվում է 1863 թ.-ից առնվազն մինչև 1910 թ.⁷⁴: Ուներ 4 որդի՝ Սահակ, Հովհաննես, Առքստան և Ալեքսանդր: ԺԹ դարավերջին նրա մոտ պահվում էր 6 ձեռագիր⁷⁵:



Սարգիս քահանա Տեր-Սարգսյանց (լուս.՝ Ա. Ղազարյանի հավաքածու)

Դանիել Տեր-Կարապետյան Տեր-Դանիելյանց (ծնվ. 1843 թ.). քահանա է ձեռնադրվել 1890 թ. նոյեմբերի 24-ին: Պաշտոնավարել է 1909-1910 թթ.⁷⁶:

Ըստ ամենայնի՝ 1893 թ. *Դանիել քահանա Հարությունյանցը, Հովակիմ Տեր-Սարգսյանցը և Կարապետ Տեր-Դանիելյանցն* արդեն վախճանված էին⁷⁷:

1912 թ. հովվում էր *Սարգիս Տեր-Սարգսյանցը*⁷⁸:

Սր. Սարգիս եկեղեցու գերեզմանոց. գլխավորապես զբաղեցնում էր եկեղեցու արևմտյան ճակատի առջևի սահմանափակ տարածքով հարթակը: Մինչև երկու տասնյակի հասնող առկա



Պատկերազարդ տապանաքար գերեզմանոցում (լուս.՝ Ա. Կարապետյանի, 1987 թ.)

բոլոր տապանաքարերն էլ ուղղանկյունաձև էին, մի մասը՝ մշակված, անգամ պատկերաքանդակներով, մյուսներն էլ՝ նույնաձև, սակայն կիսամշակ:

Կհոկ գերեզմանոց. միջնադարյան մեկ այլ գերեզմանոց էլ Կհոկ անվամբ, գտնվում է գյուղի արևելյան եզրին (N 40°27'44.42", E 046°28'36.08", ծ. մ. 1128 մ): Տեղում պահպանվել են ԺԲ-ԺԷ դարերին բնորոշ գեղաքանդակ խաչքարեր և մի քանի հազար տապանաքարեր (ԺԶ-ԺԹ դդ.): Արձանագիր գերեզ-

73 Բաֆֆի, նշվ. աշխ., հ. 8, էջ 581:

74 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 260-261: Տե՛ս նաև ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 227 շրջ.: ֆ. 57, ց. 3, գ. 48, ք. 16-19: «Արարատ», 1888, ԺԲ, էջ 807:

75 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 251: Տե՛ս նաև ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 198: 76 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 260-261: Տե՛ս նաև ֆ. 57, ց. 3, գ. 48, ք. 16-19; ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 199:

77 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 199-200:

78 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 361 շրջ.:




Սր. Սարգիս եկեղեցու արևմտյան կողմի գերեզմանոցը (լուս.՝ Ա. Կարապետյանի, 1987 թ.)

մանաքարերից հները վերաբերում են ԺԸ դարին: Դրանցից մեկը ներկայացնում ենք ստորև.

Սալատապան. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 5 տող.

Այս է տապան / Մէսրօփի / որդի Խաչալտուրին, / թվ(ին) ՌՄԼԷ (1788):

Հրատ. առաջին անգամ:



Կհոկի գերեզմանոց, տապանաքար, 1788 թ. (լուս.՝ Ա. Կարապետյանի, 1987 թ.)

Ցից քարի գերեզմանոց. գյուղի հյուսիսային եզրին՝ բարձրադիր տեղանքի հարթ տարածության վրա, մինչև 1992 թ. նպատակին ծառայած գերեզմանոցին (N 40°27'54.92", E 046°28'33.7397", ծ. մ. 1178 մ) կից,



Դրվագներ Ցից քարի գերեզմանոցի հին և նոր հատվածներից: ԺԱ-ԺԲ դարերի խաչքարեր նույն գերեզմանոցում (լուս.: Ս. Կարապետյանի, 1987 թ.)

պահպանվում էին Ժ-ԺԲ դդ. բնորոշ գեղարվեստական և ոճական առանձնահատկություններով անարձանագիր 5-6 խաչքարեր: Հնավայրը հայտնի է Ցից քարի գերեզմանոց անվամբ:

Աղբյուր. Էրքեջ գյուղի աղբյուրներն էին՝ Շենի, Հովուզի, Չատունց և Գռզանա ձորի: Դրանցից «Շենի աղբյուրը 3 ծորակ ուներ: Հետո գետնի տակից բխող այդտեղի բոլոր ջրերը հավաքեցին մի ջրամբարի մեջ, որտեղից ջուրը դուրս էր գալիս 9 ծորակով...: Այդ ջուրը գյուղի ծայրամասերը հասցնելու նպատակով 1966 թ. ջրամբարի վրա շենք կառուցեցին, պոմպեր դրեցին, խողովակաշար անցկացրին, բայց այդպես էլ պոմպակայանը չաշխատեց, գյուղի մի մասում խմելու ջրի հարցը չլուծվեց»⁷⁹:

Էրքեջի և Ռուս Պարիսի միջև գտնվում էր Չիքին աղբյուրը⁸⁰:

Փառքի (ՀՄՊՁ) հուշարձան. Մեծ հայրենականում զոհվել կամ անհետ կորել է 127 էրքեջցի⁸¹: Գյուղի հյուսիսային կողմում՝

Ցից քարի գերեզմանոցից ոչ հեռու, 1970-ական թթ. էրքեջցիների նախաձեռնությամբ և ուժերով կառուցվում է նրանց հիշատակը հավերժացնող հուշարձան:

Գալուստանց կամուրջ. 1906 թ. հիշվում է Գալուստանց անունով հին կամուրջը⁸²:

Գյուղատեղի, ամրոց, Մկնատամի խաչ. Սարգիս Քամալյանը նշել է. «Բալա-քուրակ գետի արևելեան ափին հայ Էրքեջ գեղի մոտ կա Գրո-Բուլաղ անունով հայ ավերակք ամրոցատեղ Գանջուց ընդամենը 30 վերստ հեռու հարավային կողմ. դրա բարձր ժայռի ըստորոտում է գտնվում Մկնատամ անունով հայոց հին ուխտատեղին, որին ժողովուրդը սովորաբար Մկնատամի խաչ է անվանում: Բայց այնտեղ ոչ մի խաչքար կամ որևէ հնութեան հետք ու նշխար չկա:

Միայն մութ անտառ է և սպիտակագույն քարայր (ծածք). նրանից բխում է սառ, քաղցրահամ, յորը, մաքուր ջուր:

79 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 337-338:



80 **Նաբաքյան Բ.**, նշվ. հոդվ., «Մոսավի դոդանցներ», 2015, № 10, դեկտ., էջ 4:

81 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 425-428:

82 **Ճանապարհորդ.** նշվ. հոդվ., «Մշակ», 1906, № 12, 20 մայիսի, էջ 3:



Դրվագներ Կհոկ գերեզմանոցից, ժե-ժՁ դդ. խաչքարեր և ժՁ դարի տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



Մահմեդական հանգուցյալների հիշատակին կանգնեցված գերեզմանաքարեր (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980 թ., գրչ.՝ Բ. Քորթչյանի, 2018 թ.)

Ժայռի տակի հողը դարերի ընթացքում բավական զգալի չափով վերցված է, այսօր էլ շարունակում են վերցնել:

Ամենայն տարի Մեծ պասի ավագ չորեքշաբթի օրը անխաբան գալիս են ուխտավորներ գեղերից, քաղաքներից այդտեղ:

Ուխտն այսպես է լինում. ժայռի ներքև քարափի ծածկի տակ կանգնում են ուխտավորները, երեսներին խաչակնքում, ապա հող ժողովում, նույն աղբիւրի ջրով շաղախում և քսում ցավոտ տեղերին, ուր վերք կամ որևիցէ խոց կա: Հետոները վերցնում են հողից ընտանիքի միս անդամների կամ բարեկամների, հարևանների համար, որոնք սրբատեղի համար մոմեր են տված լինում այնտեղ վառելու: Ամենից առաջ մոմերը վառում են քարափի տակ: Հողը շարունակ վերցնելու հետի ժայռի ներքև խոր փոսեր, այրեր են դարձել: Երբեմն հեռավոր տեղերից ուխտիս օրերին ուխտ եկողները մատաղ են անում–ոչխար կամ գառ մորթում: Այդ լինում է Չատկից յետո: Ուխտավորները կարկաչուն ցուրտ և համեղ աղբիւրների, խիտ անտառին, կանաչ ծաղկալից արգավանդ տեղերին նայելով հրճվում են: Ուրախ և զվարթ կերուխումից յետ կրկնում են թարմ օղը ծծելով:

–Ա՛խ, ո՛ր թէ մարդ կարողանա միշտ այստեղ ապրել, հարիւր տարի կեանք կունենա...

Ուխտատեղու մասին այս ավանդույթները կա տեղական բնակիչների բերանում. –Իբր թէ հնում հեթանոս ազգերը հալածելիս

են եղել Պրաքսիա կույսին. հասել է ժայռի զուխը և բարձր կատարից իրան ցած գցել և այնտեղ նահատակվել: Ի պատիվ նահատակ Պրաքսիա կույսի ժողովուրդը ուխտ է գալիս ու երկրպագում:

...Ուխտատեղին –Մկնատամի խաչը գտնվում է մելիք-Ոսումբանց կալվածում...

Ասում էին, թէ մելիք-Արովը ամենայն տարի Պրաքսիա կույսի տունին անխափան պատարագ էր մատուցանել տալիս և հացկերույթ սարքում գեղի ժողովրդի համար»⁸³:

Քիմբազի յալ անվանը մահմեդական գերեզմանոց (Թորքին գյուղ). գտնվում է Էրքեջից 1,2 կմ արևմուտք (N 40°27'54.48", E 046°27'39.73", ծ. մ. 1128 մ): Տեղում պահպանվել են արաբատառ արձանագրությամբ տապանաքարեր:

Տապանաքար. արձանագրությունը՝ 4 տող.

المغفور| سلمان ابن| مشهدي جعفر| من جماعت حبلو| تاريخ ١٣٠٠

كل من عليها | فان ... | هذا مرقد| المرحوم

Թարգ. Ամեն ինչ անցողիկ է: Այս է հանգիստ ներված հանգուցյալ Մաշհադի Ջաֆարի որդի Սալմանին, Հաբլու ազգից: Թվին 1300 (1882-1883 թթ.):

Ծանոթ. վերձանությունը՝ ըստ Բ. Քորթչյանի:

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. ստորին մասում՝ հեծյալի քանդակ, վերնամասը թեքությամբ կտրված, կենտրոնում՝ ռոմբաձև շրջանակների մեջ և եզրերին.

حسن، حسين، | [مرحوم] | [المغفور] | ... | حد كربلاء. | حبلو ١٣٠٥.

الله، محمد، علي، | [فاطمة].

Թարգ. Աստված, Մուհամմեդ, Ալի, Ֆաթիմա, Հասան, Հուսեյն: Ներված հանգուցյալ ...հաղ Քարբալա: Հաբլու, 1305 (1887-1888 թթ.):

Ծանոթ. վերձանությունը՝ ըստ Բ. Քորթչյանի:

Հրատ. առաջին անգամ:

ԹԱՓ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին շեն) ավանից 17,5 կմ արևելք՝ Ինջա գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 470-540 մ բարձրության վրա:

Անվանում. վկայվել է նաև Տափ անվամբ:

Ներկայումս պաշտոնապես կոչվում է Թափ-Կարակոյունլը:

Պատմություն. գյուղը հիմնադրել են մուսուլմանները ԺԹ դարի վերջին՝ կալվածատեր Ս. բեկ Մելիք-Բեգլարյանից 40.000 ռուբլով գնելով նրան պատկանող Թափի դաշտ տեղամասը¹: Արդեն 1890 թ. նշվել է, որ նորաստեղծ գյուղը «...նախանձելի դրութեան մեջ է գտնում. նրան այդ վիճակին է հասցրել Ինջա գետը»²:

Բնակչություն. ինչպես երևում է, գյուղի հիմնադիրներն այդտեղ երկար չեն ապրել, քանի որ արդեն 1908 թ. վիճակագրական տեղեկագրում այն վկայված է որպես թաթարաբնակ գյուղ (107 տուն թաթար՝ 1186 շունչ, որից 600-ը՝ ար., 586-ը՝ իգ.)³:

1914 թ. բնակչության թիվը հասնում էր 390-ի⁴:

1985 թ. գյուղն ուներ 1771 աղբրեջանցի բնակիչ⁵:

83 Մատենադարան, քրթ. 79, վավ. 81, Ա տետր, ք. 135-137: Տե՛ս նաև Մատենադարան, ֆ. 40, քրթ. 72, վավ. 8գ, ք. 135, 136: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, «Ազգագրական հանդէս», 1900, գիրք 2, էջ 330:

1 **Գ. Սև-Երեց**, նշվ. թղթակց., «Նոր-Ղար», 1890, № 132, 6 սեպտեմբերի, էջ 3:

2 Նույն տեղում:

3 Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22.

4 Кавказский календарь на 1915 г., с. 186.

5 ԱՄՀ, հ. 9, Բաբու, 1986, էջ 147:

ԹՈՂԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 11,5 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1090-1180 մ բարձրության վրա:

Անվանում. ԺԷ դարում վկայվել է Թոտան ձևով:

Պատմություն. գյուղի մասին վաղագույն տեղեկությունը վերաբերում է 1691 թ., երբ հիշվում է «Տ(ե)ր Եղիա Թոտան գեղե»¹:

Հայտնի է, որ ԺԹ դարի վերջին Թողանը Գաղթուտ և Պարիս գյուղերի հետ մեկտեղ պատկանում էր կալվածատեր Ալեքսանդր Մելիք-Բեգլարյանին²:

Բնակչություն. 1647 թ. գյուղում կառուցված եկեղեցին և 1691 թ. ծխատեր քահանայի մասին հիշատակությունները, անտարակույս, փաստում են Թողանի՝ առնվազն ԺԷ դարում հայաբնակ լինելու մասին, սակայն պարզ չեն նրա՝ հայաբնակ վելու ժամանակն ու պատճառները: Հնարավոր է, որ բնիկներն այն լքել են 1780-ական թթ. երկրորդ կեսին՝ միանալով գավառաբնակների ընդհանուր գաղթին, ընդ որում, Թողանը 1817 թ. գաղթած բնակիչների մի մասի վերադարձից հետո էլ ամայի էր:

Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ տասնամյակներ անց գյուղում հաստատվում են թաթարներ (1886 թ. դեռևս ուներ միայն 1 տուն շիա թաթար բնակիչ, որից 2-ը՝ ար., 1-ը՝ իգ.)³: Նրանք, ժամանակի ընթացքում բազմանալով (1914 թ. արդեն 250 շունչ էին)⁴, պատմական Թողանը վերածում են թաթարաբնակ գյուղի:

1985 թ. գյուղում բնակվում էր 1025 աղբյուրացի⁵:

Ըստ Բորիս Գլեչյանի՝ մինչև բռնագաղթը գյուղն ուներ մոտ 740 բնակիչ⁶:

Եկեղեցի. առաջին վկայությունը վերաբերում է 1830-ական թթ. վերջերին. «...սագաշէն եկեղեցի կիսակործան...»⁷:

1890-ական թթ. սկզբներին տեղում եղել է նաև Մ. Բարխուդարյանը. «Զարուկիր և սրբատաշ քարով շինուած է եկեղեցին, որի գլուխն խոնարհուած է...»⁸:

Հայտնի չէ, թե այս եկեղեցին, որը, ըստ այնքան ժխտ նկարագրությունների, ավագ խորանի երկու կողմերում զույգ ավանդատներով բազիլիկ կառույց էր, երբ են քանդել:

Արձանագիր քար. 1987 թ. դրությամբ Մանաշիղ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցուց հարավ՝ խանութի պատին, ագուցված էր խաչազարդ ու արձանագիր սրբատաշ մի քարաբեկոր՝ փոխադրված Հին Թողանից:

Կաման յա(ստուծոյ) ես՝ / տ(ե)ր Եղիեա, շի(նե)ց[ի] ս(ուր)ք եկ(ե)ղ(ե)ց(ի)ս (յ)իշա-



ԹՈՂԱՆ. Եկեղեցու շինարարական արձանագրության սկզբնահատվածը՝ ագուցված Մանաշիղ գյուղի խանութի պատի մեջ (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

տ[ակ] | հոգ(տ)յ իմ(ո)յ, կ(ո)ղ(ա)կց(ի)ն՝ | [Բե]կաղին, որդիքն | Ատրեկին, Նկ...: [Ի ժամանակս Շահ Մելիիմ⁹, խանութին Մուրթուզա Դուլի խանին, քահուլը. կաթուղիկու Գանձասարայ տեր Գրիգորին, թվ(ին) Ռ-ՂՁ (1647)-ին]:

Հրատ. **Ջալալեանց Մ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 210: **Բարխուդարյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 252: **Լալայեան**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 334: Գիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 243-244: **Գահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 79: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 80:

Ծանոթ. ԺԹ դարում այս վիմագիրը տեղում տեսել են Ս. Ջալալյանը, Մ. Բարխուդարյանը և Ե. Լալայանը: Չպահպանված երկրորդ հատվածը լրացրել ենք ըստ Լալայանի:

Թե բեկորը ե՞րբ է փոխադրվել Մանաշիղ, չպարզվեց, միայն ակնառու է, որ դա արվել է հուշարձանի առավել կարևոր մասերի՝ արձանագրությունների փրկության նպատակով: Ինչ վերաբերում է այն եկեղեցուն, որտեղից տեղափոխվել է այս բեկորը, ապա 1980-ական թթ. արդեն գոյություն չունեին:

Նահատակ մատուռ. Թողանից 1,6 կմ հարավ՝ ճախակողմյան (արևելահայաց) սարալանջին են գտնվում (N 40°27'27.84", E 046°27'11.91", ծ. մ. 1176 մ) միջնադարյան գյուղատեղին, ընդարձակ գերեզմանոցն ու ակնհայտորեն բազմիցս նորոգված, անգամ վերակառուցված (վերջին անգամ նորոգվել է 1890 թ. մանաշիղցի Ալեքսանյանցների ջանքերով) մատուռը:

Մինչև 1992 թ. այս մատուռի միակ՝ արևմտյան մուտքի առջև պահպանվում էին 1308 թ. կերտված, սակայն տեղահան և մասնատված գեղաքանդակ մի խաչքարի երկու բեկորները, իսկ շուրջը տարածվող գերեզմանոցում՝ ԺԲ-ԺԸ դարերով թվագրվող բազմաթիվ անարձանագիր տապանաքարեր: Վերջիններս, ըստ ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների (մի քանիսն ունեն կենցաղային թեմաներով պատկերաքանդակներ), վերաբերում են ԺՁ-ԺԸ դարերին:

Խաչքարի բեկոր (ըստ վերակազմության՝ ունեցել է 2,1 մ բարձրություն, լայնությունը 103 սմ է). մատուռի արևմտյան մուտքին կից, ստորին մասում՝ 7 տող.

*Ի թ/ու(ին) | Չ/ԾԷ (1308). | ես՝ Գրիգոր, ու Պապաք կանգն/ե-
ցաք զխաչս ի բարեխառու/թիւն ծնողաց մերոց, էղբոր...:*

⁹ Խոսքը Շահ-Արաս Բ-ի մասին է, որը գահակալել է 1642-1666 թթ.:


1 **Խ. ծ. վ. Գ.** (Խաչիկ ծ. վարդապետ Դադյան), Երկու վաերագիր տ. Խաչիկ վարդապետի ձեռագիրների ժողովածուից, «Արարատ», 1900, 2, էջ 320: Տե՛ս նաև **Խաչիկ ծ. վարդապետ Դադյան**, Հոդվածների ժողովածու, «Արարատ»-ի ժամանակագրությունը, Գ, Ս. Էջմիածին, 2007, էջ 195:
2 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 388, ք. 21-22:
3 Свод..., с. 88-89.
4 Кавказский календарь на 1915 г., с. 189.
5 ԱԱՀ, հ. 9, էջ 302:
6 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:
7 **Ջալալեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տիփլիս, 1842, էջ 210:
8 **Բարխուդարյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 252:



ԹՈՂԱՆ. Նահատակ մատուռը հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, արևմուտքից, հարավից և հատվածներ շրջակա գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԹՈՂԱՆ. 1308 թ. կերտված խաչքարի բեկորները՝ կից Նահատակ մատուռի արևմտյան ճակատին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԹՈՂԱՆ. 1308 թ. կերտված խաչքարի վերակազմություն-զրչանկարը (հեղ.՝ Ս. Կարապետյան, 2018 թ.)



ԹՈՂԱՆ. Նահատակ մատուռի բարավորի՝ 1890 թ. կատարված նորոգության մասին պատմող արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 252: **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 334: Գիվան հայ վիճագրության, պրակ V, էջ 243: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 79: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 80:

Մատուռի բարավորին՝ 6 տող.

Սուրբ եկեղեցիս. մանուշեցի շինօրքն են | Ղևոնդ, Աւետիս, Սա/հակ, Գրիգոր, Գանիէլ, | Սարգիս Ալէքսանե(ա)նց. | 1890:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 79-80: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 80:

Եկեղեցու անկյունաքարին՝ 2 տող.

1890 ամի, | սր[բատեղի]:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 80: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 80:

ԽՐԽԱՓՈՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 5 կմ արևելք՝ Սևջուր գետի աջ կողմում՝ ծովի մակերևույթից 780-820 մ բարձրության վրա. «Այդ գյուղը գտնվում է նույն անունով ձորի բերանում...»¹, որի «...միջով վազում է մի վտակ, որ գնալով խառնվում է Գորանի գետակին»²:

Անվան ծագումը. գյուղն իր անունը ստացել է համանուն հին գյուղից, որը գտնվում էր ձորի մեջ (փոքր-ձոր, օրինակ՝ Բողնո-փոր, Ծորովոր, Կողբովոր, Սիափոր և այլն):

Վկայվել է նաև Նոր Խրխափոր, Խարխափուղ և Խարխա-փուտ անվանաձևերով:

Պատմություն. գյուղը ժամանակի ընթացքում մի քանի անգամ անաչացել ու վերաշինվել է: Վերջին անգամ դատարկվել է ԺԸ դարի վերջերին և նորից բնակեցվել գլխավորապես հին խրխափորցիներով ԺԹ դարի 80-ական թվականներին: Զանի դեռ երկու գյուղերն էլ գոյատևում էին միասին, դրանք իրարից զանազանելու համար ակամա ստացել են Հին և Նոր Խրխափոր անունները: Երբ հին գյուղն իսպառ անաչացնում է, նոր Խրխա-փորը, դառնալով այդ անվամբ միակը, պարզապես սկսում է կոչ-վել Խրխափոր կամ Խարխափուտ:

Հայտնի է, որ 1894-1895 թթ. Գյուլիստանի հետ մեկտեղ գյու-ղը պատկանում էր Գրիգոր, Հովսեփ, Գերասիմ, Թալիշ Մելիք-Բեգլարյաններին³:

Հայ-թաթարական ընդհարումների օրերին՝ 1906 թ. օգոստոսի վերջերին, «...էկզեկուցիա դրին Խարխափուր գիւղում և տակնու-վրայ արին այն պատճառով, որ իբր թե սար բարձրանալու ժա-մանակ հայերը գողացել են 12 հատ տուար մեր աղմինխատրա-ցիայի բարեկամ Բալարեգ Սաֆիքիդուսկուց: Երկու օր մնալով 250 ռ. վերցրին...»⁴:

ԺԹ դարավերջից մինչև առնվազն 1907 թ. Խրխափորի կա-վածատեր է հիշվում Թալիշ բեկ Մելիք-Բեգլարյանը⁵: Ի դեպ, 1917 թ. նա ընտրվում է գյուղի երեցփոխ⁶:

Այս բեկի մասին մի վերջին հիշատակություն էլ թողել է Դա-վիթ Տեր-Դանիելյանը (ծնունդով Արցախի Մեծշեն գյուղից էր), որը 1918 թ. վերջին հյուրընկալվել էր կալվածատիրոջ հարկի ներքո. «...ամբողջ երեկոն մենք նուիրեցինք տեղական անցու-դարձերին ու կալուածատերերի և գիւղացիութեան փոխյարաբե-րութիւններին: Հարկաւ, մեր հիւրընկալը գոհ չէր գիւղացիներից: Նախ նրանք չորացրել են կալուածատիրոջ եկամուտների աղ-բիւրը: Միս կողմից նրանք դադարել են ուշադիր լինել դէպի բեկի խորհուրդները, չեն հետևում նրան...: Մեր հիւրընկալը մանա-ւանդ զայրացած էր թալիշեցիների վրա, որոնք «բրել և յատա-կել» էին հանգուցեալ Դաւիթ Մելիք-Բեգլարեանի հսկայական տունը և տնտեսական շինութիւնները...: Նրանք կողոպտել էին իրանց նախկին կալուածատիրոջ տան իրերը, անգամ հարուստ

գրադարանի գրքերը, ապա փլել տունը և քաշել-տարել փայ-տերն ու քարերը»⁷:

1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին գավառի հայաբնակ մյուս գյուղերի նման թաթարներն ամբողջությամբ ավերում են նաև Խրխափորը (բնակիչները սպանոյցից ազատվում են փախուս-տով)⁸:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո աստանդական դարձած խրխափորցիները համախմբվում են հայրենի գյուղում և նվիրումով վերստին շենացնում այն: Նրանց հնարավորինս սատարում են նաև այլուր գտնվող համագյուղացիները: Հայտնի է, օրինակ, որ 1936 թ. բաքվաբնակ խրխափորցի նավթագործ Աբել Ազիզյանը պարզատարություն ստացած բեռնատար մեքե-նան նվիրում է հայրենի գյուղին⁹:

Արդեն սկսած 1970-ական թթ.-ից՝ աղբեջանական իշխանու-թյունների՝ էլ ավելի սաստկացող ազգային խտրական վերաբեր-մունքի պատճառով գյուղը սկսում է դանդաղ քայքայվել, իսկ 1992 թ. հունիսի 13-ին ամբողջությամբ կիսում շրջանի հայկա-կան բնակավայրերին բաժին հասած օրհասը և ցարդ գտնվում է աղբեջանցիների վերահսկողության ներքո:

Բնակչություն. մինչև 1880-ական թթ. կեսերը խրխափորցինե-րը բնակվում էին համանուն հին գյուղում, բայց դրանից հետո գրեթե բոլորը նորահիմն նույնանուն գյուղ են փոխադրվում: Հա-մենայն դեպս, 1895 թ. նշվել է. «...բնակիչը մի քանի տարի առաջ տեղափոխուած են Հին-Խրխափորից»¹⁰, իսկ 1903-ին էլ, որ «10-15 տարի առաջ տեղափոխուած են Հին-Խրխափորեն»¹¹:

1874 թ. համագյուղացիներից հիշվում են նահանգային քար-տուղար 36-ամյա Ջումշուդ բեկ Բեգլար-Բեկյան Մելիք-Բեգլար-յանը (եղբայրներն էին պաշտոնաթող պորուչիկ Գրիգոր, իրա-վունքի թեկնածու Հովսեփ, ուսանող Գերասիմ, Թալիշ (Փրիդոն) բեկերը), հանգուցյալ պատվավոր խորհրդական Մարտին Կա-րակաշյանի որդին՝ 20-ամյա Մարգիսը¹²:

Խրխափորը գավառի սակավաբնակ գյուղերից էր: Առավել ծաղկուն շրջանում՝ 1910-ական թթ. վերջերին, դատելով վիճա-կագրական տվյալների համադրումից, ունեցել է ընդամենը մին-չև 300 բնակիչ:

1915 թ. գյուղում հաստատվում է վանեցի Զարուհին գավակ-ների՝ Մելիքի և Փառանձեմի հետ¹³:

1920 թ. դրությամբ Խրխափորում էր բնակվում Մեծ եղեռնը վերապրած 39 հայ գաղթական (15 տուն)¹⁴, որից 7 տունը Վան քաղաքից էր, 2-ը՝ Շատախ գավառի Խումար գյուղից, 1-ական տուն էլ՝ այլ վայրերից¹⁵:

Ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակն արտացոլած վիճակագրական տվյալների ժամանակագրական աղյուսակը, որտեղ մինչև ներառյալ 1876 թ. մատնանշված տե-ղեկությունները վերաբերում են հին գյուղին, իսկ դրանից հետո՝ նոր գյուղում հաստատված խրխափորցիներին:

1 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 586: Նաև՝ «Գիւղ Արցախի Կիւլիստան գաւառի, Գեօրգին սարի ստորոտը, Մեւ գետակի աջ կողմը, գեղեցիկ դաշտակի մը հա-րաային ծայրը» (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 216):

2 **Բաֆֆի**, նշվ. աշխ., նույն տեղում: Ի դեպ, 1881 թ. օգոստոսի 4-ին Կարաչինա-րից դեպի Խրխափոր ճանապարհված Բաֆֆին նշում է. «Անցնելով Գորանի գետը, մի վերստ առաջ գալով, հասա Խարխափուտ կոչված հայաբնակ գյու-ղը, որ զարդարված էր գեղեցիկ այգիներով... Դանապարհին պատահեց ինձ տեսնել Մելիք Բեգլարի այգու տեղը: Հնձանի տեղը, դարավոր թբեցիները, ըն-կուզեցիները, տանձենիները և այլ պտղատու ծառեր, ծերացած, վայրենա-ցած, դեռ մնում են: Այդ այգին ունի մի ռոմանական նշանակություն, երևելի մելիքի կյանքից, որովհետև այդ այգու մեջ էր պահում նա յուր Բալա անունով խասային» (**Բաֆֆի**, նշվ. աշխ., նույն տեղում):

3 ՀԱԴ, ք. 93, գ. 1, գ. 388, ք. 30-31:

4 **Նոր.**, Թրքակցություն, «Չանգլու», Թիֆլիս, 1906, № 21, 6 սեպտեմբերի, էջ 3:

5 ՀԱԴ, ք. 56, գ. 6, գ. 558, ք. 217:

6 ՀԱԴ, ք. 53, գ. 1, գ. 1354, ք. 2:

7 **Դ. Անանուն** (Դավիթ Տեր-Դանիելյան), Ղարաբաղ, «Մշակ», 1919, № 35, 14 փետրվարի, էջ 1:

8 Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 436.

9 **Պետրոսյան Բ.**, Անմոռանալի օր, «Մոավի դղանցներ», 2004, № 4, էջ 3:

10 **Բարխուդարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 243:

11 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 216:

12 ՀԱԴ, ք. 93, գ. 1, գ. 384, ք. 108: Տե՛ս նաև **Վահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 86:

13 **Լալայան Ս.**, Մենք սպասում ենք, «Մոավի դղանցներ», 2003, № 12, էջ 3:


14 **Թեղևենգեան Ե.**, նշվ. հոդվ., «Հայաստանի ձայն», 1920, № 11, 6 փետրուարի, էջ 2:

15 Նշվ. հոդվ., «Հայաստանի ձայն», 1920, № 9, 1 փետրուարի, էջ 2:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1841 ¹⁶	25	48	40	88
1851 ¹⁷	10	35	26	61
1857 ¹⁸	21			
1876 ¹⁹				213
1886 ²⁰	27	88	90	178
1889 ²¹		114	80	194
1893 ²²	27	101	91	192
1901 ²³		134	105	239
1902 ²⁴		139	107	246
1905 ²⁵	30	148	112	260
1906 ²⁶				243
1908 ²⁷		162	130	292
1909 ²⁸		164	134	298
1910 ²⁹		170	137	307
1912 ³⁰	50	94	103	197
1914 ³¹				204
1915 ³²				272
1918 ³³	52	143	132	275
1925 ³⁴	61			540
1992 ³⁵				550

Արցախյան ազատամարտի ժամանակ զոհվել կամ անհետ կորել է 18 հոգի: Ահա նրանք՝ Վարդի Անդրեասի Հարությունյան (զոհվել է 1991 թ. մայիսին գրադից), Արտեմ Գուդանի Ազիզյան, Արմադան Աղաբեկյան, Ալեքսանդր Հայրյան (փախստական Բաքվից), Սիրուհի Պետրոսի Հայրյան, Փառանձեմ Հարությունի Հարությունյան, Արտավազդ Հարությունյան, Պողոս Հարությունյան, Մովսես Աղաջանի Ջիանյան, Ելիզավետա Ջիանյան (մնացել են գյուղում), Սիրանուշ Գուդանի Նիգարյան (զոհվել է գրադից), Ջինավոր Բեգլարի Նիգարյան, Երվանդ Ներսեսի Պատվականյան, Թանգի Համբարձումի Պատվականյան (մնացել են Հին Խըր-խափոր գյուղատեղիում), Համայակ Գևորգի Սինասյան, Ժենիչկա Սարգսյան (մնացել են Նապատում), Վարսենիկ Մռավի Ազիզյան (մահացել է Նապատի մոտ), Շահնազար Գրիգորյան (սպանվել է Նապատում, դիակը գտել են պարտիզանները և թաղել)³⁶:

16 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47:
17 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 92:
18 **Մաղախյան Ա.**, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 76:
19 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 6775, ք. 115-116:
20 Свод..., с. 82-83.
21 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, ք. 45-46: Ի դեպ, ըստ վիճակագրական մեկ այլ տվյալի (**Քարխատարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 244) նույն թվականին գյուղն ուներ 21 տուն (176 շունչ, որից 88-ը՝ ար., 88-ը՝ իգ.):
22 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, հ. Բ, էջ 335: Տե՛ս նաև ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 191:
23 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 241-242: Տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 409:
24 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, ք. 118-119:
25 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, ք. 140-141: Տե՛ս նաև **Ա.Դ.Յ.**, նշվ. աշխ., էջ 325, սակայն ըստ մատաղատների՝ 50 տուն հայ:
26 Кавказский календарь на 1910 г., с. 394.
27 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, ք. 223-224: Այլ տվյալի (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22) համաձայն՝ գյուղն ուներ 50 տուն՝ 280 (150-ը՝ ար., 130-ը՝ իգ.) բնակիչ:
28 ՀԱԳ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 764, ք. 242-243:
29 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 189:
30 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52. Նույն թվականին վերաբերող այլ տեղեկության (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 330) համաձայն՝ ուներ 335 (184-ը՝ ար., 151-ը՝ իգ.) բնակիչ:
31 Кавказский календарь на 1915 г., с. 196.
32 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 11 շրջ.:
33 ՀԱԳ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4:
34 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, ք. 93: Տե՛ս նաև **Խաչատրյան Կ., Մուքիսյան Հ., Բաղդասյան Գ.**, նշվ. աշխ., էջ 139:
35 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:
36 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 672-673:



ԽՐԻՍԱՓՈՐ. բնակելի հին տուն, ԺԹ դարի վերջ (լուս.՝ Ա. Դուլյանի, 1980-ական թթ. և Ա. Կարապետյանի, 1987 թ.)



ԽՐԽԱՓՈՐ. գյուղի գլխավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի՝ 2009 թ. արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Բակոբյանի, 2018 թ.)

**Խրխափորի տնատերերի և կարևոր շինությունների ցանկը
(կազմող՝ Ժորա Ազիզյան)**

1 Հակոբ Մխովանց (Մխիթարյան)	38 Ժորա Հիվերանց (Պետրոսյան)	75 Ռոմիկ Հիվերանց	112 Բենիկ Դուլունց
2 Բալաբեկ Կուփանց (Հակոբյան)	39 Վարդգես Բեգունց (Աղաբեգյան)	76 Սողոմոն Հիվերանց	113 Կողյա Հարությունյան
3 Օհանես Մխովանց	40 Սերգեյ Մխովանց (Մխիթարյան)	77 Իսա Վառունց	114 Վաղինակ Վառունց (Հարությունյան)
4 Փիլոշ Մխովանց	41 Վալոդ Հիվերանց	78 Էդիկ Պողոսյան	115 Ժորա Արշակ Ազիզյանց (Ազիզյան)
5 Աբրահամ Ազիզյանց (Ազիզյան)	42 Յաշա Ազիզյանց	79 Մաշիկ Դուլյան	116 Գրադարան
6 Ռանտիկ Ազիզյանց	43 Խորեն Ազիզյան	80 Էդիկ Կուփանց	117 Ծիհունությունների պահեստ
7 Եղիշ Կիվերքանց (Գևորգյան)	44 Մովսես Բեգունց	81 Ժորա Պողոսյան	118 Ավտոմեքենաների կանգառ
8 Արսեն Կուփանց (Հակոբյան)	45 Նադյա Սարգսյան	82 Գեմտո Բեգունց	119 Ծաշարան
9 Արշակ Ազիզյանց	46 Յուրիկ Հիվերանց	83 Լենա Կուփանց	120 Պահածոների գործարան
10 Ջալալ Ազիզյանց	47 Յուլյա Սողոմոնյան	84 Կոյա Պուլունց (Սարգսյան)	121 Անտառանտեսության վարչություն
11 Բագրատ Հիվերանց (Պետրոսյան)	48 Արտուշ Կուփանց (Հակոբյան)	85 Արմեն Վառունց (Հարությունյան)	122 Բենգալցակայան
12 Չարբաշ Հիվերանց	49 Ջումի Հիվերանց	86 Վոլոդյա Վառունց (Հարությունյան)	123 Ջրաղաց
13 Մելիկ Կուփանց	50 Շալիկո Կուփանց	87 Սուրեն Կուփանց (Հակոբյան)	124 Լևոն Կուփանց
14 Լյովիկ Կիվերքանց	51 Արեկ Ազիզյանց	88 Խոշոր եղջերավորների ֆերմա	125 Ժորա Աբրահամի Ազիզյանց
15 Մարտին Բեգունց (Աղաբեգյան)	52 Ռոմիկ Ազիզյանց	89 Անաստունների ընդունման կետ	126 Շալիկո Կուփանց
16 Մինաս Հովհաննիսյան	53 Եկեղեցի	90 Գերեզմանոց	127 Գարաս Դուլունց
17 Ժորա Հովհաննիսյան	54 Դպրոց	91 Գերեզմանոց	128 Ջիվան Ջահանյանց
18 Գուրգեն Բեգունց	55 Փոստ	92 Ջինավոր Նիգարյան	129 Վոլոդյա Նիգարյան
19 Թեմուր Անտոնյան	56 Արուս Նիգարյան	93 Մինաս Նիգարյան	130 Թամար Նահապետյան
20 Կառլեն Անտոնյան	57 Արտեմ Ազիզյանց	94 Պետրոս Նիգարյան	131 Երվանդ Հովհաննիսյան
21 Միշա Բեգունց	58 Երվանդ Պատվականյան	95 Համո Մինասյան	132 Բենիկ Ազիզյանց
22 Եմոք Բեգունց	59 Սերգեյ Գոսյան	96 Մինաս Մինասյան	133 Ջուլիետա Բեգարյան
23 Մարալ Բեգունց	60 Սոկրատ Հովհաննիսյան	97 Վոլոդյա Գրիգորյան	134 Էդիտն Կիվերքանց (Գևորգյան)
24 Արմո Ազիզյանց	61 Արտո Կիվերքանց	98 Նուբար Մխովանց	135 Արտուշ Ծատուրյան
25 Արարատ Կիվերքանց	62 Սամվել Մխիթարյան	99 Սուրեն Նիգարյան	136 Շահնազար Գրիգորյան
26 Հերոս Ազիզյանց	63 Մովսես Կիվերքանց	100 Գուրգեն Ազիզյան	137 Էնգես Կիվերքանց
27 Ռաֆիկ Հիվերանց	64 Կառլեն Հովհաննիսյան	101 Սերբեմ Ազիզյան	138 Ջումշուղ Ջահանյան
28 Նորիկ Սաքունց (Մխիթարյան)	65 Մաշիկ Բեգունց	102 Արեստ Ազիզյան	139 Գետակներ
29 Ալբերտ Բեգունց	66 Կիմիկ Բեգունց	103 Սերգեյ Գոսունց	140 Աղբյուրներ
30 Աշխեն Հարությունյան	67 Խորեն Հովհաննիսյան	104 Իվան Գրիգորյան	141 Խանութ
31 Ալբերտ Կիվերքանց	68 Առաքել Բեգունց	105 Յուրիկ Բեգունց	
32 Ջինավոր Բեգունց	69 Գրադարան	106 Նախշուն Բեգունց	
33 Յաշա Կիվերքանց	70 Ռաֆիկ Կուփանց	107 Խորեն Գոսունց	
34 Էլիշկա Ազիզյանց	71 Արփենիկ Հիվերանց	108 Ռազմիկ Կուփանց	
35 Ժորա Սողոմոնյան	72 Վալոդ Հովհաննիսյան	109 Ռաֆիկ Հիվերանց	
36 Ջրի գրասենյակ	73 Հակոբ Հիվերանց	110 Վոլոդյա Դուլունց	
37 Վիկտոր Հարությունյան	74 Բահատուր Հիվերանց	111 Արշակ Դուլունց	

1 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Գ, էջ 79-81:

Կառուցապատում. այգեվետ գյուղում («Տները շրջապատում են պարտեզներով») այժի ընկնող կառույցը կալվածատիրոջ տունն էր. «...գեղեցիկ է նաև Թալիշ-Բեկ Մելիք Բեկլարեանի ընդարձակ տունը»³⁷:

Մի վկայության համաձայն՝ տակավին 1916 թ. օգոստոսին Խրխափորում էին բնակվում Մելիք-Բեգարյանների տոհմի մի ճյուղի ներկայացուցիչները³⁸:

Ըստ 1912 թ. կազմված տեղեկագրի՝ գյուղն ուներ զանազան նշանակության 119 շինություն, այդ թվում՝ 1 եկեղեցի, 50 բնակելի տուն, 65 տնտեսական կառույց, 1 խանութ և 2 ջրաղաց³⁹:

Այգի. 1898 թ. գյուղամերձ մի այգու առթիվ նշվել է. «Մելիք-Բեկլար Բ ամուսնացած էր Մելիք-Շահնազար Բ-ի դուստր Ամարնանի (Մարիամի) հետ, բայց չնայելով դրան՝ նա պահում էր մի սիրուհի Բալա անունով: Սրա համար նա Խրխափուտի ձորում մի գեղեցիկ այգի էր տնկել և ամարանոց կառուցել: Այս շինութեան հետքերը մինչև այժմ էլ կան, և մրգատու ծառերը խառնուելով վայրի ծառերի հետ, բռնել են ամբողջ ձորը, որի միջից կարկաջելով հոսում է մի վտակ»⁴⁰:

Ջրանատակարարում. հայտնի է, որ Խրխափորցիների ջրի խնդիրը լուծվել է 1893 թ.՝ շնորհիվ Թիֆլիսի Կուսանաց Սբ. Ստեփանոս վանքի մայրապետ Փեփրոնե Խուրյանց Մելիք-Բեգարյանցի նյութական օժանդակության. «...կոյս Խուրեանը իր



ԽՐԽԱՓՈՐ. բնակելի հիմ տուն, ժՅ դարի վերջ (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ.)

37 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 216: Տե՛ս նաև «Նոր-Դար», 1894, № 91, 2 յունիսի, էջ 2:
 38 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 622:
 39 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.
 40 Լալայեան Ե., Գանձակի գաւառ, «Ազգագրական հանդէս», 1899, գիրք Ե, էջ 232: Տե՛ս նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 223:

հաշուվ շինել է տուել եկեղեցու մօտ գտնուած աղբիւրը, ժողովրդի ջրի պակասութեան կարիքը լրացնելու համար»⁴¹: Ջուրը գյուղ է բերվել կավե խողովակներով և հասցվել մինչև կալվածատեր Թ. Մելիք-Բեգլարյանցի տան բակ ու եկեղեցի: Վերջինիս մոտ կառուցվել է աղբյուր, որին արձանագրվել է.

Ես՝ կոյս, աւագ սարկաւագուհի Փեփրոնեայ Խուրեանց Մելիք-Բեկլարեանց, Խարխափութ գեղջ աղբիւրն կառուցի իմով արդեանք, ի յիշատակ իմ և հանգուցեալ ծնողացս և քերց և եղբարց իմոց, 1-ն մարտի 1893 թ.:

Հրատ. **Քարխառարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 244:

Տնտեսություն. անասնապահությամբ, մետաքսագործությամբ, բայց առավելապես այգեգործությամբ զբաղվող խրխափորցիները նաև ցանում էին բամբակ. «Հողն ջրարբի է և բարեբեր. սովորական բերքերէ զատ, ունի ընտիր տանձ, խնձոր, մետաքս և բամբակ»⁴²:

Հայտնի է, որ 1870 թ. Սբ. Էջմիածնում ընթացող շինարարական աշխատանքներին օժանդակելու նպատակով գյուղի հասարակությունը հատկացնում է 7, Բեգլար բեկ Բեգլարյանցը կնոջ՝ Եղիսաբեթի հետ՝ 8, Բեուկ բեկ Մելիք-Բեգլարյանցը՝ 6 ռուբլի⁴³:


Ըստ 1912 թ. հաշվառման՝ գյուղացիներն ունեին 6 ձի, 106 խոշոր և 50 մանր եղջերավոր անասուն և 30 խոզ⁴⁴:

1915 թ. նշվել է, որ դեկտեմբերի 20-ի դրությամբ խրխափորցիները «...աղբատ և չբաւոր» էին⁴⁵:

Հանք. հայտնի է, որ գյուղում եղել է պաղլեղի (շիբ) հանք⁴⁶:

Դպրոց. սակավաբնակ Խրխափորում առաջին կրթօջախն իր դռները բացել է միայն խորհրդային կարգերի հաստատումից հետո. «...Խարխափուտի նախկին բեգի տունը դպրոցի շենք էին դարձրել խորհրդային իշխանությունները»⁴⁷:

1970 թ. գյուղում գործում էր ութամյա դպրոց՝ 130 աշակերտով⁴⁸:



ԽՐԽԱՓՈՐ. Սբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

41 «Նոր-Ղար», 1894, № 91, 2 յունիսի, էջ 2:

42 **Էփրիկեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ա, նույն տեղում:

43 «Արարատ», 1870, Գ, էջ 138:

44 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

45 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 11 շրջ.:

46 **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 284: Տես նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 273:




47 **Էլոյան Հ.**, Կարոտը խեղդում է..., «Մոավի դողանցներ», 2005, № 11, նոյեմբեր, էջ 3:

48 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 28:

Սբ. Աստվածածին եկեղեցի. գտնվում է գյուղամիջում (N 40°25'52.30", E 046°36'49.35", ծ. մ. 794 մ):

Քարաշեն, եռանավ բազիլիկ շինություն է՝ կառուցված ԺԹ դ. վերջերին:

Հայտնի է, որ 1880-ական թվականների վերջերին եկեղեցին, որը «նորաշեն, կիսատ, կառուցեալ չորս սիւների վրայ, որ ունի երկու դուռն հարաւային և արևմտեան, վեց լուսամուտ, 16 մետր 56 սանթիմ երկարութիւն և 11 մետր լայնութիւն» ունեցող շինություն էր, կառուցվում էր «Մելիք-Բեկլարեանց Թալիշ-բեկի ծախքով և բնակչաց աշխատութեամբ...»⁴⁹: 1894 թ. դեռևս շարունակ-





ԽՐԽԱՓՈՐ. Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը, կտրվածքը դեպի արևելք և արևմտյան ճակատը (շափ.՝ Կ. Ղահրամանյանի)

վում էին շինարարական աշխատանքները, և նկատի ունենալով կառույցի ճարտարապետական նկարագիրը՝ նշվել է. «Մեր գիւղում շինում է մի նոր եկեղեցի, որ այս ամառ կաւարտուի ազնիւ կոյս Խուրեանի հաշուով: Եկեղեցու շինութեանը նայելով՝ հայկական եկեղեցու մնուչ անգամ չէ նկատուած: Այդպիսի հիմնարկութեան վրայ պետք է հոգս տանուէր, որ բուն հայկական ձևով շինուէր»⁵⁰: Ի դեպ, նույն թվականի լրատվական մեկ այլ հրատարակման մեջ հաղորդվում է, որ եկեղեցին կառուցվում էր ոչ թե Խուրեանի, այլ նրա քրոջ՝ տիկին Եղիսաբեթ Մելիք-Բեգլարյան-Կարապետյանի հովանավորությամբ⁵¹:

49 **Քարխառարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 243: Տես նաև **Էփրիկեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 216:

50 «Նոր-Ղար», 1894, № 84, 20 մայիսի, էջ 1:

51 «Նոր-Ղար», 1894, № 91, 2 յունիսի, էջ 2:



ԽՐԽԱՓՈՐ. Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան և հարավային մուտքերը և արևմտյան մուտքի որմնախոյակները (լուս.՝ Ա. Ղույանի, 1980-ական թթ. և Ս. Կարապետյանի, 1984 թ.)

Ի վերջո, 1899 թ. եկեղեցու շինարարական աշխատանքներն ավարտվում են, և հունիսի 26-ին Գանձակի առաջնորդական փոխանորդ Բագրատ վարդապետ Թավաքալյանն օծում է «...գիւղիս նորակառոյց եկեղեցին. եկեղեցու նիւթը բերել են գիւղացիք, իսկ շինութեան ծախսերը՝ 1000 ռ. տուել է գիւղի կալուածատէր Թալիշ բէգ Մելիք Բեգլարեանը»⁵²: Օծման հանդեսին մասնակցում էին նաև Թիֆլիսի Կուսանաց Սբ. Ստեփանոս

վանքի մայրապետ Փեփրոնե Խուբյան Մելիք-Բեգլարյանցը, կույս Հռիփսիմե Թայիրյանը և այլք:

Այստեղ, սակայն, հարկ է անդրադառնալ մի տարօրինակ արձանագրության. դա սույն եկեղեցու հարավային մուտքից վեր փորագրված 1873 թվականն է: Խնդիրը ոչ միայն այն է, որ եկեղեցու շինարարական աշխատանքները փաստացի ավարտվել են միայն 1899 թ. (ուստի 1873-ը շինարարության ավարտի թվական չի կարող համարվել), այլև այն, որ եկեղեցու կառուցումը սկսվել է 1880-ական թվականների վերջերին (1873-ը նաև հիմ-

52 «Նոր-Ղար», 1899, № 118, 1 յուլիսի, էջ 2:



ԽՐԽԱՓՈՐ. Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի ճակատակալ հատվածը և տարեթիվը (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ. և Ս. Կարապետյանի, 1984 թ.)

նադրման թվական չի կարող լինել): Էլ չենք խոսում այն մասին, որ Նոր Խրխափորը հիմնվել է հենց 1880-ական թթ. կեսերին, և դրանից առնվազն 10 տարի առաջ ամայի վայրում եկեղեցի կառուցված լինել չէր կարող: Կարելի է ենթադրել, որ 1873 թվականը մուտքի ճակատին փորագրողներն ինչ-որ այլ իրադարձություն են նկատի ունեցել, որն էլ ցարդ անհայտ է:

1928 թ. եկեղեցին փակվում է⁵³ և օգտագործվում տնտեսական նշանակությամբ:

1890-ական թթ., երբ եկեղեցին տակավին կիսաշեն էր, այնտեղ պահվում էր մի գրչագիր փոքրիկ Ավետարան (հիշատակարանը գողացված է եղել), որի ստացողներն էին «...Շիրվանայ հինդարցի Մելքումն և եղբարք Ապրիսն, Փիրպուտաղն»⁵⁴:

Քահանա. Հովակիմ Բեգլարյան Տեր-Սարգսյանց (ծնվ. 1805 թ.). քահանա է ձեռնադրվել 1835 թ. և պաշտոնավարել նույն թվից առնվազն մինչև 1857 թ.⁵⁵: Հովվում էր նաև Պարիս գյուղին⁵⁶:

1857 թ. փետրվարի 1-ին Բեգլար բեկ Մելիք-Բեգլարյանը գրություն է հղում Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին՝ խնդրելով Խրխափոր գյուղի համար քահանա նշանակել. «Յառաջագոյն բնակութիւնս իմ էր ի Ղարաշինար կոչեցեալ հայրանիստ գեղջն մերում, ուր բնակելի ի թիւս եղբարց իմոց, իսկ այս երկու ամբ են, յորմէ հետէ տեղափոխեալ անդի գտունն իմ, գնացեալ բնակիմ հանդերձ գերդաստանեօքս ի վիջակ իմ ի մէջ եղբարցս պատկանեցեալք ի գիւղն Խրխափոր, ուր կան բաց յինէն և քսան տուն բնակիչ հայազն ժողովորոքք, և եկեղեցին պայծառ, որոց քահանայն էր անդանօր տէր Յովակիմն Բեկլարեան, այլ չգիտեմ, թէ այս քահանայ առ ի՞նչ աղագաւ ինքնակամ, առանց տնօրէնութեան հոգևոր կառավարչացն ելեալ անդի՝ գնացեալ է և մնայ առանց պաշտօնի ի գիւղն Էրքէջ, ուր գոյ սեփիական քահանայ... Առ ի չկարելոյ տանել զայսպիսի պակասութիւնս, թէ պէտ և խնդրամատոյց եղեալ են կօնսիստօրին Հայոց Ղարաբաղու, և կրկնեալ բազմիցս զնոյն խնդրուած վասն տալոյ մեզ զքահանայ, կամ զյիշեալ տէր Յովակիմն, որ գնացեալ է ի գիւղն Էրքէջ, վերադարձուցանել առ մեզ՝ ի նախկին տեղին իւր, սակայն ի կօնսիստօրէն ի վաղոց հետէ ո՛չ ինչ տնօրէնութիւն չգայ...: ...թէ պէտ գիւղս մեր սակաւաթիւ իցէ ժողովորդեամբն, բայց ես խոս-

տանամ ինքս մեծապէս ձեռնատու լինել նոյնպէսի քահանային ամենայն կերպիւ ի յապահով ապրուստ նորա»⁵⁷:

Եփրեմ Հովհաննես-Բեկյան Մելիք-Ստեփանյանց (ծնվ. 1825 թ.). հիշվում է 1874 թ.⁵⁸: Ըստ ամենայնի՝ 1893 թ. քահանան արդեն հանգուցյալ էր. ուներ 4 որդի՝ Սկրտիչ, Մերգեյ, Ռստակես և Հակոբ⁵⁹:

Հակոբ Խաչատրյան Ղահրամանյանց (ծնվ. 1850 թ.). քահանա է ձեռնադրվել 1883 թ. մարտի 19-ին Գրիգոր եպիսկոպոս Տաթևացու ձեռամբ⁶⁰:

Հակոբ քահանան հիշվում է 1888 («Արարատ» ամսագրի բաժանորդներից էր)⁶¹, 1893 (ուներ 1 որդի՝ Գրիգոր)⁶², 1894⁶³, 1910⁶⁴ և 1912 թթ.⁶⁵:

Միրաբ (Մոսալ) Սարգսյան Աղաբեկյանց (ծնվ. 01.09.1874 թ.). 1900 թ. մարտի 1-ի գրությամբ Մոսալ Աղաբեկյանցը դիմում է Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիային իրեն հարկերից ազատելու և գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու քահանա նշանակելու խնդրանքով⁶⁶: Ի դեպ, 1901 թ. ապրիլի 28-ին կոնսիստորիայից գրությունը հղվում է Սբ. Էջմիածնի սինոդին՝ խնդրատուին հոգևոր կոչման ընդունելու միջնորդությամբ: Սակայն նշանակման գործը ձգձգվում է և, ի վերջո, 1903 թ. հունվարի 20-ի գրությամբ մերժվում⁶⁷: Նրա «...թեկնածությունը 1903 թ. Էջմիածնի սինոդին արգելվում է հաստատել, քանի որ ոստիկանական ստուգումն անհնարին էր համարել այդ նշանակումը»⁶⁸:

Փառքի (ՀՄՊՁ) հուշարձան. Մեծ հայրենականում զոհվել կամ անհետ կորել է 48 խրխափորցի: Նրանցից Արամ Սկրտչյանն արժանացել է ԽՍՀՄ և ՉՍՄՀ պարգևների⁶⁹:

Պատմական հուշարձաններ. Խրխափորը բավականաչափ հարուստ է միջնադարյան պատմական հուշարձաններով, ընդ

53 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:

54 Քարխոտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 243-244:

55 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 531, նաև՝ գ. 532, 533, 538, 542:

56 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 210:

57 Մաղադյան Ա., նշվ. աշխ., էջ 76-77:

58 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 125: Տե՛ս նաև «Արարատ», 1871, Ը, էջ 484: 1873, ԺԲ, էջ 486: Ղահրամանյան Ա., Օջախի գիրք, հ. Բ, էջ 87 (1874 թ. դրությամբ ուներ 1 որդի):

59 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 191:

60 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 262-263: Տե՛ս նաև ֆ. 57, ց. 3, գ. 48, թ. 20-21:

61 «Արարատ», 1888, ԺԲ, էջ 807:

62 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 191:

63 Ղահրամանյան Ա., Օջախի գիրք, հ. Բ, էջ 96:

64 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, թ. 227:

65 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 361 շրջ.:

66 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 9794, թ. 1:

67 Նշվ. գործը, թ. 4-15:

68 Ղահրամանյան Ա., Օջախի գիրք, հ. Բ, էջ 89:

69 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 428-429:



Խրխափորի ձորը և դեպի Գյուլիստան բարձրացող ճանապարհը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

որում, դրանք բոլորն էլ, միմյանցից ոչ շատ հեռու, սփռված են գյուղի հարավային կողմով անընդհատ վեր բարձրացող այն ձորում, «...որի միջով ճանապարհը խարխափելով տանում է դեպի Գյուլիստան գյուղը: Այդ ձորը ձգվում է անտառոտ երկու լեռնային գոտիների միջով, որ բարձրանում են ճանապարհի աջ և ձախ կողմից: Շարունակելով ճանապարհը նույն ձորի միջով և կես ժամի չափ առաջ գնալով, անտառը վերջանում է, և ճանապարհը ընկնում է հարթ բարձրավանդակների վրա, որ գուրկ են անտառից: Այստեղ կան արտատեղիներ և մշակած դաշտեր»⁷⁰:

Հայտնի է, որ դեպի Գյուլիստան ձգվող այս ճանապարհը մշտապես գտնվել է խրխափորցիների հոգածության ներքո և պարբերաբար բարեկարգվել: Առանձնապես հիմնավոր աշխատանքներ են կատարվել 1890 թ. Գրիգոր Մելիք-Բեկլարյանի նախաձեռնությամբ, որի առթիվ կանգնեցվել է արձանագիր մի կորոդ:

Հուշակոթող. «Խրխափորից Գյուլիստան տանող ճանապարհին, երկու տեղում՝ Հին Խրխափորի մոտ և Գյուլիստան գյուղի մատույցներում, քարե ոչ մեծ, միանման հուշարձաններ են կանգնեցված՝ այսպիսի միանման, հայերեն ու ռուսերեն տեքստերով»:


1890 ամի ի 1-ն մայիսի ճանապարհս շինեց Գրիգոր Մելիք-Բեկլարեան իր հոր՝ Բեկլար Ֆրիդոնեան Մելիք-Բեկլարեանցի յիշատակին: Այս յիշատակի յարգողը թող սպազայում նորոգի գիրս:

Հրատ. **Քարխոտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 244: Հիշենք ու շարունակենք, «Մոսվի դոդանջներ», 2000, № 5, օգոստոս, էջ 3 (տրված է միայն վերջին տողը): **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 75: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 75:

ԱՐՔԱՅԵԿ ԱՆԱՊԱՏ

Խրխափորի գյուղամիջյան Սբ. Աստվածածին եկեղեցուց 1,5 կմ հարավ՝ ձորով դեպի Գյուլիստան բարձրացող ճանապարհի ձախակողմում՝ ձորակի աջ մասում (N 40°25'00.94", E 046°36'50.33", ծ. մ. 929 մ)՝ միջնադարյան բավականաչափ ընդարձակ գերեզմանոցով շրջապատված բլրի գագաթին, 1987 թ.՝ մեր այցելության ժամանակ, նշմարվում էին մոտավորապես 8 x

70 **Բաֆֆի**, նշվ. աշխ., հ. 8, էջ 586:



ԽՐԽԱՓՈՐ. Արջայեկ անապատի Սբ. Աստվածածին եկեղեցատեղին, ավերակների մեջ դուրս ցցված արձանագիր քարը հողազերծելուց առաջ և հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)


4,5 մ չափերով հողի տակ անցած հիմնավեր եկեղեցու հետքեր՝ մի քանի կիսահողակուլ հղկված քարեր և կրաշաղախի մնացորդներ:

Տեղացիներն այս ավերակատեղին կոչում էին Ճգնավոր: Տարածքում առկա էին խեցեղենի բազմաթիվ կտորտանքներ:

Փոքր մասով հողից դուրս մնացած և այդ կերպ նկատելի երեսապատի սրբատաշ քարերից մեկին (ինչպես պարզվեց նրա առջևի հողը հեռացնելուց հետո) առկա էր վեց տողով և խոշոր տառերով փորագրված ընդարձակ արձանագրություն: Ընդ որում, վերջինս փաստորեն շինարարական բնույթի մի ընդարձակ արձանագրության միջնաքարն էր, որով պարզվում էր տեղում կառուցված եկեղեցու՝ Սբ. Աստվածածին անունը:

Ըստ ամենայնի՝ ԺԲ դարին վերաբերող փառահեղ գրչությանը սույն արձանագրությունն ինքնին մի պերճ վկայությունն էր այն քանի, որ տեղում գտնված եկեղեցին ճարտարապետական ուշագրավ, ինչու չէ, թերևս նաև բացառիկ մի կառույց է եղել, ընդ որում, շրջանի տարածքում մեր կողմից հաշվառված հուշարձանների թվում՝ իրապես միակը նաև ժամանակագրական առումով:

Ուրախ ենք հայտնել, որ ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին պարզելու սույն հնավայրի բուն անունը՝ Արքայեյկ անապատ, որը բացահայտվեց հետևյալ կերպ. Երեմիա Չելեբի Բյոնուրճյանի՝ 1691 թ. կազմած քարտեզում ընթերցման ուղղահայաց հաջորդականությամբ Արքայեյկ անապատը հաջորդում է «Գ մանկանց ուխտատեղ. մասունքն կան» և նախորդում «Կիլիստան. Ամենափրկիչ անապատ» գրառումներին⁷¹, որով հասկացվում է, որ խնդրո առարկա անապատը գտնվում էր վերոնշյալ երկու հնավայրերի միջակայքում: Իհարկե, այստեղ պաշտամունքային այլ կառույցներ ևս կան (չին Խրիստոսի, Մանդուռի և Կողեր վանքի եկեղեցիները), սակայն դրանցից ոչ մեկը ոչ ժամանակագրորեն և ոչ էլ ճ ա ր տ ա ր ա պ ե տ ա կ ա ն արժեքներով չէր կարող համեմատվել այն ավերակի հետ, որի մասին է խոսքը:




Ե. Չելեբի Բյոնուրճյանի կազմած քարտեզի՝ խնդրո առարկա հատվածը Գ. Ուլուխոջյանի (Ulughogian G., Un' antica mappa dell' Armenia. Ravenna, 2000, p. 50) գրքից

Բացի այս՝ կա ևս մեկ ուշագրավ հանգամանք. դա այն է, որ ցարդ անհայտ էր վախճանից հետո Հերզ գավառում ամփոփված Աղվանից Ստեփանոս Գ (1155-1195 թթ.) կաթողիկոսի գերեզմանատեղին: Կարծում ենք՝ թե՛ ժամանակագրորեն և թե՛ նշանակությամբ ու կարևորությամբ Արքայեյկ անապատը հենց այն վայրն էր, որտեղ կարող էին ամփոփված լինել կաթողիկոսին:

71 Ulughogian G., նշվ. աշխ., էջ 54: Ի դեպ, Գ. Ուլուխոջյանը քարտեզում գրանցված տեղեկություններն ուղղահայաց շարքերի փոխարեն ընթերցել է հորիզոնական հաջորդականությամբ, որով և, ըստ էության, չեզոքացրել է դրանց տեղադրությունը պարզելու համար բնագրային այնքան կարևոր առանձնատվությունը:

Երեսապատի սրբատաշ քար (102 x 81 x 36 սմ). Սբ. Աստվածածին հիմնավեր եկեղեցու փլատակների մեջ, արձանագրության միջնամասն է՝ 6 տող.

...ավարիկ որդի Սահ...
 ... (շին)եցի զս(որ)ք զԱ(ստուա)ծածին ...
 ... որ մեղաւք եւ ոչ կա...
 ... հայրն իմ եւ զՎարդ...
 ... զեկեղեցիս ա(ստուծո)յ, արդ...
 ... (յիշե)ցէք յա(ստուծո)յ եւ ա(ստուա)ծ զձ(եզ) ...:



Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. ժամանակը՝ ԺԲ դար:

Գերեզմանոց. եկեղեցատեղիի շուրջ և դեպի հարավ ու հարավ-արևմուտք տարածվում է հին գերեզմանոցը, որի վերին մասում թաղումները խիտ են, մոտ առ մոտ, իսկ բլրի ստորին մասում՝ ավելի նոսր: Պահպանված ուղղանկյունաձև տապանաքարերից երկուսն արձանագիր են: Ահա դրանք.

Տապանաքար. ուղղանկյունաձև, հարավային երեսին՝ 3 տող.
 Այս է հանգիստ | Յովանէսիս, | [թվ](ին) [Ռ]ճԻԱ (1672):

Հրատ. Կարապետյան Ս., Խրիստոսի ձորահովտում գտնվող պատմաճարտարապետական հուշարձանները և դրանց նորահայտ արձանագրությունները, «ՊԲՀ», 1984, № 2, էջ 238: Գահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 75: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 75: Ծանոթ. մերձ վերոնշյալ հողվածում վերձանությունը թերի է: Նմանապես նաև՝ Գահրամանյանի մոտ:



Տապանաքար. ուղղանկյունաձև, հարավային երեսին՝ 3 տող.
 Այս է դապանս Գազարի որդի Պետրոսին եւ իր այր նորա Անահին, թվ(ին) Ռ-ճՂԷ (1748):

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 238: Գահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 75:



Չին Խրիստոսի գյուղատեղի. գտնվում է Խրիստոսի գյուղից շուրջ 3,2 կմ հարավ՝ Մանդուռա հանգիստ կոչվող գերեզմանոցից 0,4 կմ հեռու՝ ձորակի աջ կողմում (N 40°24'06.68", E 046°36'15.87", ծ. մ. 1063 մ):

Երբեմնի գյուղն ամայացել և գյուղատեղիի է վերածվել ԺԺ դարի վերջերին: Նրա բնակիչները փոխադրվել և հիմնել են Նոր Խրիստոսի:

Տարածքում պահպանվել են տնատեղեր, ինչպես նաև կիսավեր եկեղեցին և գերեզմանոցը:


Եկեղեցի. համաձայն շինարարական արձանագրության՝ կառուցվել է 1659 թ.՝ Պետրոս Խանձկեցի կաթողիկոսի գահակալության ժամանակ, Նավասարդ վերակացուի հսկողությամբ: 1841 և 1842 թթ. վավերագրերում հիշվում է Սբ. Գևորգ անվամբ⁷²:

Միանավ հորինվածքով, թաղածածկ շինություն է՝ կառուցված գլխավորապես անմշակ քարով, կրաշաղախով: Սրբատաշ են կառուցվածքային առավել պատասխանատու հատվածները՝ որմնասյուները, մինչև 1970-ական թթ. վերջերը կանգուն թաղակիր կամարները և անկյունաքարերի մի մասը: Արտաքին չափերն են՝ 15 x 5,2 մ: Միակ մուտքն արևմտյան ճակատից է: Թա-

72 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47; ֆ. 56, ց. 12, գ. 531:



ԽՐԽԱՓՈՐ. հատվածներ Աբ. Աստվածածին եկեղեցատեղիի շուրջ տարածված գերեզմանոցից և 1672, 1748 թթ. տապանաքարեր մույն գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ԽՐԽԱՓՈՐ. Հին Խրխափոր գյուղատեղիի Աբ. Վերդ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)


ղը, որը փլվել է 1970-ական թվականների վերջերին, ներքուստ պահել են երեք գույգ սրբատաշ որմնասյուներից հենված թաղակիր կամարները: Պատերին ագուցված են գեղաքանդակ հին խաչքարեր, տապանաքարեր:

Եկեղեցու որմերին առկա արձանագրություններն ութն են: Ահա դրանք.

Արձանագրություն. եկեղեցու խորանի հյուսիսային կողմում՝ թաղի ոտք ծառայող սրբատաշ քարին՝ 4 տող.

ԹՎ(ին) ՌՃԸ (1659). կամսան ա(ստուծոյ) շինեցինք եկեղեցիս հայր(ա)յ(ե)տուրե(ան) տ(եառ)ն Պետրոս կաթ(ողիկո)ս ք(ա)հ(ա)ն(այա)պ(ե)տուր[ե(ան)] ...ս էպ(իսկոպո)սի, վերակացուն՝ Ն(ա)աս(ա)րդն, | ... էր յիշեցէք:

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 236: Վահրամյան Ա., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 74: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 74: Ծանոթ. Աղվանից Պետրոս կաթողիկոսը գահակալել է 1653-1676 թթ.:






ԽՐԻՍՏԱԾՈՐ. Հին Խրիստոսի գյուղատեղիի Սբ. Վնորգ եկեղեցին հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, արևմուտքից և արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 և 1984 թթ.)

Արձանագրություն. եկեղեցու խորանի հարավակողմի քիվանման սրբատաշ կամարի ոտքին՝ կենտրոնում, մարդու քանդակ է, որի ձեռքին՝ քառակուսու մեջ և երկու կողմում՝ 13 տող.

ԹՎ(ին) ՌՃԸ (1659). | յ(ի)շատակ է | մեզ. | Պ(ա)ղտ(ա)-
ս(ա)րն. մակրն | իւրն՝ Ս(ա)նդու|խտ, | անարժ(ա)ն Սարգիս էրէցս
յիշեցէք ... | հ(ա)յրն իմ՝ Ս(ա)հ(ա)կն, [զՆաւասարդն] ... | եղ-
բ(ա)յրն իմ՝ Ես(ա)յին ...ան եւ որդի|ին իմ Պ(ա)ղտ(ա)ս(ա)րն ...:

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 237: Գահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 74: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 74:



Ծանոթ. մեր՝ վերոնշյալ հոդվածում վերծանությունը թերի է: Նույնն է նաև Գահրամանյանի մոտ:

Խաչքար. ազուցված եկեղեցու հյուսիսային որմնասյանը, արձանագրությունը՝ 5 տող.

Ս(ուր)բ իս(ա)չս բարեխաւս Ակոբին,
կենակցին՝ Մարեանին, (յ)իշատ(ակ)
իւր | Խաչատուրին, Պա|հնդիւր(ի)ն.
թվ(ի)ն Ռ...:

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 236: Գահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 74: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 73:

Ծանոթ. մեր՝ վերոնշյալ հոդվածում վերծանու-
թյունը թերի է: Գտնում ենք, որ տարեթիվը թերի է
փորագրվել:



Խաչքար. ազուցված եկեղեցու հարավային որմ-
նասյանը, արձանագրությունը՝ 9 տող.

Ս(ուր)բ իս(ա)չս բարեխաւս Էդիկարին,
ծնող|ացն՝ Միրզի|ն, Խաթունին, | իմ որ-
դոցն՝ Միրզի|ն, Ղազարին, Ռհանին, կե-
նակ(ց)ին իմ՝ Մարեան(ին), | կանկնեցաւ
թվ(ի)ն ՌՆԺԲ (1663):

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 238: Գահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 74: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 74:

Ծանոթ. մեր՝ վերոնշյալ հոդվածում վերծանու-
թյունը թերի է: Նույնն է նաև Գահրամանյանի մոտ:



ԽՐԽԱՓՈՐ. Յին Խրխափոր գյուղատեղիի Աք. Գևորգ եկեղեցու մերքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ա. Կարապետյանի, 1984 թ.) և հատվածներ (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1980-ական թթ.)



ԽՐԻՍՏՈՓՈՐ. Յին Խրիստոսի գյուղատեղիի Սբ. Գևորգ եկեղեցու մեղքին տեսքը դեպի արևելք և արևմուտք, խորանի միջի խաչքարերից երկուսը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)





ԽՐԽԱՓՈՐ. Հին Խրխափոր գյուղատեղիի Աբ. Չևորգ եկեղեցու վիմագրերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 և 1984 թթ.)

Խաչքար (79 x 39 սմ). ագուցված եկեղեցու խորանի մեջ՝ լուսամուտի մոտ, քիվին և ստորին մասում՝ 3 տող.

[Ս(ուր)բ խ(ա)չս] բ(ա)ր(ե)խ[ա]... | եւ իմ ճնօղ/ացն, բ(վ)ին Ռ-ԿԳ (1614):

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 236: Դահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 74: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 73:

Ծանոթ. մեր՝ վերոնշյալ հոդվածում վերծանությունը թերի է:



Խաչքար (93 x 48 x 13 սմ). ագուցված եկեղեցու խորանի մեջ, քիվին և ստորին մասում՝ 6 տող.

[Ս(ուր)բ խ(ա)չս] ... | .../ին, Եղսարեա/ի/ի/ն. | քվ(ին) Ռ-ԿԳ (1614):

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 236: Դահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 74: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 73:

Ծանոթ. մեր՝ վերոնշյալ հոդվածում վերծանությունը թերի է: Նույնն է նաև Դահրամանյանի մոտ:

Տապանաքար (62,5 x 30 x 9,5 սմ). ագուցված եկեղեցու հյուսիսային պատին, կողին՝ 3 տող.

Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(ե)խ(ա)ս ...:

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 238: Դահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 74: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 74:



Խաչքար (88 x 35.5 x 9 սմ). եկեղեցու ներսում.

Ս(ուր)բ...:

Հրատ. առաջին անգամ:



Գերեզմանոց. տարածվում էր եկեղեցու հարավային կողմում: Թաղումները խիտ էին: Առկա էին ԺՁ-ԺԹ դարերին բնորոշ անմշակ տապանասալեր (մեծաթիվ են անարձանագիրները): Հնավայրում պահպանվել են նաև մի քանի սրբատաշ, ուղղանկյունաձև մշակված արձանագիր տապանաքարեր, որոնք վերաբերում են ԺԹ դարին: Ստորև ներկայացնում ենք ԺԷ դարի երեք տապանագիր:

Տապանաքար.

Այս է տապան Մակբաղին, որ է կողակից Քալաշբեկին. Ռ-ԳՁ (1647):

Հրատ. Դահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 75: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 74:

Տապանաքար.

Այս է տապան Քալաշբեկին, որ է որդի սարեցի Արրամբեկին, քվ Ռ...:

Հրատ. Դահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 75: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 74:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար.

Այս է տապան Պեկի որդի Յոհանեսին:

Հրատ. Դահրամանյան Կ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 75: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 74:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:


Մանդրուա հանգիստ. Նոր Խրիստոսից 2,5 կմ հարավ Գյուլիստան տանող ճանապարհի ձախ եզրին (N 40°24'21.74", E 046°36'11.02", ծ. մ. 1001 մ), տարածվում է ԺԱ-ԺԳ դդ. մի գերեզմանոց, որը շրջակա հայ բնակիչներին հայտնի է Մանդրուա հանգիստ անունով: Պահպանվել են մի քանի խաչքարեր (մեկը՝ արձանագիր) և ուղղանկյունաձև տապանաքարեր:

Հնավայրի տարածքի զգալի մասն ավերվել է կից ջրամբարի և խճուղու կառուցման հետևանքով:

Խաչքար (125 x 69 x 26 սմ). ստորին մասում գույգ կանանց պատկերներին կից փորագրված անավարտ արձանագրությունից ընթերցվում է միայն վերջին տողը.

... | նշանս ի բարեայխ(ա)ստութիւն):

Հրատ. առաջին անգամ:



Հատված Մանդրուա հանգիստ գերեզմանոցում պահպանված արձանագիր խաչքարից (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

Մանդրուա. գտնվում է Խրիստոսից 4 կմ հարավ-արևմուտք՝ Գյուլիստան տանող խճուղու աջ կողմում՝ անտառածածկ ձորալանջին՝ Մանդրուա անվամբ հայտնի տեղամասում՝ Հին Խրիստոսի Սբ. Գևորգ եկեղեցուց ուղիղ գծով 720 մ արևմուտք (N 40°24'10.46", E 046°36'46.16", ծ. մ. 1202 մ):

Եկեղեցի. միանավ շինություն է (արտաքին չափերն են՝ 6,50 x 4,40 մ)՝ կառուցված 1252 թ. անմշակ և կոպտատաշ քարով, կրաշաղախով: Սրբատաշ է միայն միակ՝ արևմտյան մուտքի բարավորը: Վերջինս, ինչպես նաև եկեղեցու շատ այլ




0 1 2 3ս

Մանդրուա հնավայրի եկեղեցու հատակագիծը (չափ.՝ 1982 թ.)



Չատվածներ Յին Խրխափոր գյուղատեղիի գերեզմանոցի և խաչքարեր Մանրուա հանգիստ անվամբ գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ. և Ա. Ղուկասի, 1980-ական թթ.)

հատվածներ բարբարոսաբար ավերվել են 1985-1986 թվականների ընթացքում:



Մանդուռ հնավայրի եկեղեցու արևմտյան ճակատը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1982, հրատարակության պատրաստեց Ա. Գևորգյանը, 2018 թ.)

Վիմագրեր. կիսավեր եկեղեցու որմերին պահպանվել են հետևյալ արձանագրությունները.

Արձանագրություն. արևմտյան մուտքի ճակատակալ քարին՝ 7 տող.
 Թիւն :ՉԱ: (1252) էր. | կամաւն Ա(ստուծոյ) եւ՝ Ելոտ, | եւ եղբեր իմ՝ Աւտար, եւ որդի | իմ՝ Շնոք, շինեցաք զեկեղեցիս | յիշատակ մեզ եւ ն(ն)ջեցեղոց մերոց ի | հայրապետութիւն) տ(ե)ր Նարսիսի, ամիրտօթիւն) Իւանի եւ Վարիամշահի:



Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Միջնադարյան մի նորահայտ հուշարձան, «ԼՀԳ», 1978, № 5, էջ 110: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 73: Օջախի գիրք, հ. Ա, էջ 72: **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 234-235: Ծանոթ. Վիմագրում հիշատակված Նարսիս հայրապետն Աղվանից Ներսես կաթողիկոսն է, որը գահակալել է 1234-1261 թթ.: 1987 թ. բարավորը տեղահանված էր և ջարդոտված: Տարբերեցրու. Ղահրամանյանի մոտ Շնոք-ի փոխարեն՝ Ենոք:

Արձանագրություն. եկեղեցու բարավորի հարավային կողմում՝ կիսաեղծ 5 տող.
 Ես՝ Երեմիայ վարդապետ | եղ(ա)կ(եր)ցիս, յաղալթս յիշեցեք]:

Հրատ. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 235: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 73: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 72: Ծանոթ. Երեմիան եկեղեցու ճարտարապետն է՝ ծնունդով Մուսլի լեռներում՝ Ջրվշտիկ գետի ափումը շրջանում գտնվող Եղակեր (Թոռուտ) գյուղից:

Գերեզմանոց. տարածվում էր կիսավեր եկեղեցու շուրջը: Պահպանվել էին ԺԲ-ԺԷ դարերին բնորոշ խաչքարեր և տապանաքարեր: Դրանց թվում կան մաս արձանագիրներ, որոնք ներկայացնում ենք ստորև.

Խաչքար (80 x 55 x 25 սմ). ստորին մասում՝ 4 տող.



Մանդուռ հնավայրի եկեղեցու արևմտյան ճակատը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 և 1987 թթ.)

Թ(վին) ՈԺԹ (1170) ես՝ | Իշխանիկ, կա[[նգնեցի] զս(ուր)ք նշանս | ... (ծն)ողաց իմ ...
 Հրատ. առաջին անգամ:

Խաչքար (68 x 67 x 13 սմ). հիմնախաչի ստորին խաչաթևի հարավային կողմում՝ 2 տող.

ՈԻԱ (1172):
 Հրատ. առաջին անգամ:



Խաչքար. ընկած Մանդուռի եկեղեցուց արևելք՝ գերեզմանոցում, ստորին մասում՝ 4 տող.

[Թի]լ ՈԻԱ (1172). ես՝ Միսի[[թ]ար, կանգ(ն)եցի զս(ուր)ք | նշանս ի բարեայխասութիւն) | ծնողաց իմոց:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1978, № 5, էջ 111: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 73: Օջախի գիրք, հ. Ա, էջ 72-73: **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 235:

Տարբերեցրու. Ղահրամանյանի մոտ առաջին հրատարակության մեջ տարեթիվն է՝ ՈԻԱ (1572):



Մանդուռ հնավայրի եկեղեցին հյուսիսից և բարավորի շինարարական արձանագրությունները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

Խաչքար (73 x 45 սմ). վերնամասում և հիմնախաչի վերին թևի երկու կողմերում պահպանվել է.

...[[ս]աչս Աղեկի | ...ր մարն Ա...| ողորմեն չմ} | ա(ստուծոյ):

Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 235: Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 73: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 73:


Տապանաքար (150 x 45 x 24 սմ). եկեղեցուց արևելք.

ԹՎին ՌԿԲ (1613). հոգոցն // Գահվրին(°), Մ(հ)սակին, Խ(ո)նդկերին, // տ(է)ր Ոհ(ա)ն(է)ս կ(ա)ն(զն)եցի



գի(ա)չս կենակցիին իմ՝ Հոռմին, | հորն՝ Աղ(ա)զ(ա)ր(ի)ն, մորն՝ | Փերին, երբորն՝ | Վարդանին, ծն(ո)[ղացն] ...




Հրատ. Ղահրամանյան Կ., նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1978, № 5, էջ 111: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 73-74: Օջախի գիրք, հ. Ա, էջ 73: Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 236:



Կողեր վանք գյուղատեղի. գտնվում է Խրիսափոր գյուղից 4,8, իսկ Մանդուռ հնավայրից՝ շուրջ 1,3 կմ հարավ-արևմուտք՝ ձորակի ձախ կողմում՝ Գյուլիստանից 4,1 կմ հյուսիս (N 40°23'37.87", E 046°35'09.01", ծ. մ. 1337 մ):

Պահպանվել են գյուղատեղիի մնացորդները՝ հազիվ նշարվող տնափոսերի տեսքով, կիսավեր եկեղեցին, ավերված գերեզմանոցը:

Եկեղեցի. միանավ բազիլիկ է, որի միակ մուտքը բացվում է արևմտյան ճակատից: Արևելյան հատվածն ամբողջությամբ ավերվել է: Հյուսիսային և հարավային որմերին ներքուստ կից են երեք զույգ որմնասյուները, որոնց վրա հենված են եղել թաղակիր կամարները: Կառուցված է անմշակ տեղական քարով, կրա-



Կողերի եկեղեցու հատակագիծն ու արևմտյան ճակատը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ., հրատարակության պատրաստեց Ա. Գակոբյանը, 2018 թ.)

շաղախով: Սրբատաշ են միայն անկյունաքարերը, որմնասյուները և բարավորը:

Ըստ կառուցողական առանձնահատկությունների՝ կարելի է թվագրել ԺԶ-ԺԷ դարերով, սակայն ակնհայտ է, որ տեղում եղել է ԺԲ-ԺԳ դարերից ավանդված մեկ այլ եկեղեցի, որին առնչվող մվիրատվական արձանագրություններն ազուցվել են, ըստ ամենայնի, նույն տեղում կառուցված ներկայիս եկեղեցու որմերում, ընդ որում, վիմագրերից զատ՝ կառուցման ժամանակ որպես շինանյութ յուրացվել են միջնադարյան գերեզմանոցի խաչքարերից:



Կողերի եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ.), արևմուտքից և արևմտյան ճակատից բացված մուտքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

Խաչաքանդակ. եկեղեցու հյուսիսային պատին՝ ներքուստ, արձանագրությունը՝ 4 տող.

Ա(ստու)ծ ողորմի Բա/նու-մ/ին:

Հրատ. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 233-234: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 72: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 71:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դ.:



Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատին՝ մուտքի ճակատակալ սրբատաշ քարի հարավային կողմում.

Տ(է)ր Ավ/ետիս / ...:

Հրատ. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 234: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 72: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 71:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դդ.:



Գերեզմանոց. տարածվում էր եկեղեցու շուրջը: Պահպանվել էին մի քանի խաչքարեր և շուրջ մեկ տասնյակ տապանաքարեր: Դրանցից մի քանիսն արձանագիր են:

Խաչքար (67 x 48 սմ), ստորին մասում պահպանվել է 5 տող.

Թվ(ին) ՈՀԹ (1230). ես՝ [Մխի]թար, եւ եղբեր իմ Խա/... կանգնեցաք զխաչ/ւս/ ի բարեխա/ստութիւն/ | ... ծնող[աց] ...:

Հրատ. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 235: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 71-72: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 71:

Տապանաքար. ուղղանկյունաձև (86 x 41 x 31 սմ), արձանագրությունը՝ 2 տող. *Այս է հանգիստ | Շահգաղին, քվ(ին) Ռ-ՃԶ (1657):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 234: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 72: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 72:

Տարբերություն. առաջին հրատարակության մեջ տարեթիվը սխալմամբ՝ Ռ-ՃԳ (1741): Նույնությամբ նաև՝ Ղահրամանյանի մոտ:



Տապանաքար (113 x 55 x 25 սմ), արձանագրությունը՝ 3 տող. *Այս է հանգիստ | Յովհաննին, քվ(ին) Ռ-ՃԻԷ (1678):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 234: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 72: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 72:


Տարբերություն. մեր՝ վերոնշյալ հոդվածում տարեթիվն է՝ Ռ-ՃԻԵ (1676): Նույնությամբ նաև՝ Ղահրամանյանի մոտ:



Սալատապան (132 x 57 x 21 սմ), վերին երեսին՝ 3 տող.

Այս է տապան Եղի | որդի տ(է)ր Մարդիրոս(ին), քվ(ին) Ռ-ՃՀ (1721):

Հրատ. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 234: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 72: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 71:





Կողեր հնավայրի եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ.), արևմուտքից և արևմտյան ճակատից բացված մուտքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

Տապանաքար. ուղղանկյունաձև (94 x 42 x 31 սմ), եկեղեցու արևմտյան պատի մոտ, արձանագրությունը՝ 2 տող.

Այս է տապան տ(է)ր Մարդիր[ուսի] | որդի տ(է)ր Եսահն, թվ(ին) ՌՃՂԷ (1748):



Հրատ. Կարապետյան Ս., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1984, № 2, էջ 234: Դահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 72: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 71: Ծանոթ. մերժ վերոնշյալ հոդվածում վերծանությունը թերի է: Նույնությամբ նաև՝ Դահրամանյանի մոտ:

Տապանաքար. «Կողերի եկեղեցու մուտքի դիմաց 1976 թ. մեզ հաջողվեց կիսով չափ բացել հողածածկ մի անշուք գերեզմանաքար, որը կրում էր այսպիսի արձանագրություն».

Ես՝ Մախինես, կ/անգնե(ց)ի զխաչս .գ/եչի... | մայր իմոյ / ...Մանքանին:

Հրատ. Դահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 72: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 72 (վերծանությունը թվում է կասկածելի):

Փիրին գյուղատեղի. մեկ այլ գյուղատեղի էլ գտնվում էր Խրխափոր գյուղից 3,8 կմ հարավ՝ Հին Խրխափոր գյուղատեղիից 0,8 կմ հարավ-արևմուտք: Տեղացիների շրջանում հայտնի էր Փիրին անվամբ:

Տարածքում պահպանվել են տնատեղերի մնացորդները, սրբատեղին և գերեզմանոցը: Գերեզմանաքարերը հիմնականում անարձանագիր սալատապաններ են: Ահա դրանցից մեկը.

Սալատապան. ուղղանկյունաձև, առաջին տողը՝ շրջանակաձև.

Այս է հանգիստ Փիրին, | աստուած ողորմի իր հոգոյն:

Հրատ. Դահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 75: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 75:



Տապանաքար Փիրին գյուղատեղիի գերեզմանոցում և Վերհաղած անվամբ գյուղատեղիի տարածքից հայտնաբերված պղնձյա թաս (լուս.՝ Կ. Դահրամանյանի և Ս. Կարապետյանի, 1984 թ.)




Հատվածներ Կողերի գերեզմանոցից, խաչքար (Ժ-ԺԱ դդ.) գերեզմանոցում, խաչքար (ԺԳ-ԺԴ դդ.)՝ մերթուստ ագուցված եկեղեցու արևմտյան որմունք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982, 1984 թթ.)

Վերհաղած գյուղատեղի. Կողեր հնավայրի դեմ հանդիման՝ Խրիսափոր գյուղից 5 կմ հարավ՝ անտառածածկ ընդարձակ ձորահովտի աջ կողմում, տարածվում է միջնադարյան մի ավերակ գյուղատեղի, որը հայտնի է Վերհաղած (այսինքն՝ ներքև թափված, տեղաշարժված) անվամբ: 1970-ական թվականներին սողանքի հետևանքով հողի երես են դուրս եկել կենցաղային գործածության զանազան պղնձյա իրեր և խեցեղեն:



Գերեզմանական արձանագիր հուշարձաններ Կողեր հնավայրում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982, 1984 թթ.)



Ջինավորի խաչը, 1174 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987, 2018 թթ.)

Ջինավորի խաչ. գտնվում է Խրիսափորից 4 կմ հարավ՝ Կոդերի եկեղեցու դեմ հանդիման՝ բլրալանջին՝ դեպի Գյուլիստան տանող ճանապարհի ձախ կողմում: Խաչքարը մոտակա ձորում գտել և վեր բարձրացնելով մի բացատի կենտրոնում կանգնեցրել է հերոս Շահեն Մեղրյանի հայրը՝ Ջինավոր Մեղրյանը:

Գեղաքանդակ խաչքարի դիմային երեսը հարդարված է հիմնախաչով, որի վերին թևի երկու կողմերում խաղողի ողկույզներ են, ստորին անկյուններում՝ մեկական խաչաքանդակ: Ստորին մասում կիսաեղծ արձանագրությունն է.

Ի թվ(ին) ՈՒԳ (1174), | [ես]... | ...:

Հրատ. **Պահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 72-73: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 72:

ՀԱՅ ՊԱՐԻՍ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 2,9 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 960-1010 մ բարձրության վրա՝ համանուն Հին կամ Ռուս Պարիս գյուղից 4,4 կմ հյուսիս-արևելք:

Անվանում. հին կամ պատմական Պարիսից զանազանելու համար կոչվել է կամ Նոր Պարիս, կամ Հայի Պարիս (քանի որ հինը դարձել էր ռուսաբանակ): Առավելապես ռուսական տեղեկագրերում վկայվել է նաև Նիժնի Բորիս կամ Բարիս անվանաձևով: Ավանդաբար վկայվել է, որ գյուղն իր անունն իբրև թե առել էր Եպրաքսիա կույսից. «...Պարիս գեղի անունը առված է Պրաքսիա կուսի անունից»¹:

Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Բորու:

Պարմություն. հայտնի է, որ 1839 թ. Թեմուրազ բեկ Մելիք-Բեգլարյանը Հին Պարիսի բնակչությանը բռնությամբ փոխադրում է գրեթե 6 կմ դեպի արևելք՝ գյուղի գոմերի տարածքը և հիմնում նույնանուն նոր գյուղ. «... հողատեր իշխան Թեմուրազբեկն Բեկլարով մեր սեպհական գիւղիցն մեզ գոռով դուրս արաւ, մեր գիւղն տուաւ մալականների..., այժմ յիշեալ Բարիս գիւղին գոմերունն շէն քցած մնացինք...» (գրվել է 1864 թ.)²:

Ավելի ուշ խնդրո առթիվ բանահավաք Ս. Քամայանը նշում է. «1840 թվերին սրա տեղը բռնել են մալականները, իսկ հայերը տեղափոխվել են ներքև՝ դաշտավայրը երեք վերստ հեռու...: ...այժմեան՝ հայոց, թե՛ մալականների Պարիս գեղերը գտնվում են Մելիք-Բեգլարանց կալվածում»³:

1870 թ. Սր. Էջմիածնում շինարարական աշխատանքներին օժանդակելու նպատակով գյուղի հասարակությունը հատկացնում է 15, իսկ տեր Մովսեսը՝ 3 ռուբլի⁴:

ԺԹ դարի վերջերին կալվածատերն էր Ալեքսանդր Մելիք-Բեգլարյանցը⁵:

Հայ-թաթարական ընդհարումների դժնդակ օրերին Պարիսը կրում է ոչ միայն նյութական, այլև մարդկային կորուստներ: Մասնավորապես 1905 թ. սեպտեմբերի 29-ին «...մօտ 100 զինուած թուրքեր Բորիսի գիւղի ճանապարհին յարձակում են մի քանի ֆուրգոններով գնացող նոյն գիւղացի մալականների վրա, որոնց հետ եղել են և 4 հայ: Թուրքերը մալականներից պահանջում են, որ յիշեալ հայերին իրենց ձեռքը յանձնեն: Մալականները մերժում են: Այն ժամանակ թուրքերը գնդակահար են անում

1 Մատենադարան, ֆ. 40, թղթ. 72, վավ. 8գ, թ. 136:

2 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4504, թ. 1:

3 Մատենադարան, նշվ. վավ., թ. 136-137:

4 «Արարատ», 1870, Դ, էջ 138:

5 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 21-22: Տե՛ս նաև «Նոր-Դար», 1894, № 109, 28 յունիսի, էջ 1:

հայերին, որոնք թաքնված են լինում ֆուրգունների ետևը, և սպանում են նրանցից երեքին»⁶:

1905 թ. հոկտեմբերի կեսերին թուրքերը գյուղի հանդերից հափշտակում են 72 տավար⁷, իսկ նույն ամսվա 18-ին «...տանում են Պարիս հայկական գիւղից 50 գլուխ տաւար և ձի»⁸: Դեպքի մասին հոկտեմբերի 26-ին նշվել է. «Անցեալներն օրը ցերեկով գիւզարլուեցի Հասան-Ալի-Թաթ-Իբրահիմ-օղլին և Մամեդ-Մուստաֆա-օղլին, իրենց մի քանի համագիւղացիներով, յարձակում են հայ Պարիս գիւղի հասարակաց տաւարի վրայ, քշում տանում են 40 գլուխ տաւար և ձի: Գիւղացիք, փոքրաթիւ լինելով, չեն համարձակում հետամուտ լինելու: Գիւղացիք այս մասին զանգատուել են այդ մասի պրիստալին, վերջինս պատուիրել է գիւղացիներին ուրիշի ոչինչ չասել, ինքն 10 օրից յետոյ զնայու է Պարիս և խօսք է տալիս ապրանքները վերադարձնելու»⁹:

Սակայն ոչ միայն գողոնը չի վերադարձվում, այլև դրան հետևում է հափշտակության նոր դեպք: Վերջինիս մասին պատմում է 1906 թ. հունվարի 31-ի թղթակցությունը. «Թուրքերը Հայ-Բօրիս գիւղի տաւարները քշել են տաւարածների հետ միասին: Գիւղացիները վրայ են հասել և ազատել են գերած հայերից մեկին և տաւարի մի մասը»¹⁰:

Արտաքին ոսնձգություններից զատ՝ գյուղացիներին օր ու արև չէին տալիս նաև ներքին ցեղերը: Այդ մասին 1906 թ. նշվել է. «...Նիժնի-Բօրիս (հայկական) գիւղի բնակիչները խնդրել են գեներալ-նահանգապետին ազատել իրենց «Ժամբերի» քայքայիչ ազդեցությունից: Բողոքում անուանված էր մի քանի անձնատուրքիւնների անուններ, որոնք և ձերբակալեցին յատուկ ուղարկւած պահակախմբի կողմից: Ներկայումս բողոքի հեղինակները թողել են գիւղը և հեռացել, վախենալով իրենց վերաբերմամբ տէրրօրից «խումբի» կողմից...»¹¹:

1918-1920 թթ. գյուղն իսպառ քայքայվում է և ամայանում: Միայն խորհրդային կարգերի հաստատումից հետո աստանդական դարձած պարիսցիները հնարավորություն են ունենում վերադառնալու հայրենի գյուղ և շենացնելու այն:

Հայ Պարիսի նկատմամբ ոսնձգություններն ու լարվածությունն աճում են նաև Արցախյան ազատամարտի հենց սկզբներից, որն ավարտվում է 1992 թ. հունիսի 13-ի գյուղի ողբերգական անկմամբ:

Բնակչություն. 1840-ական թթ. սկզբներին ծնունդ առած Նոր կամ Հայի Պարիս գյուղի բնակչության տվյալների շարքում կամեկը, որը մատնանշում է պարիսցիների թվաքանակն այն ժամանակ, երբ նրանք դեռևս բնակվում էին իրենց բուն՝ հինավուրց գյուղում. դա 1832 թ. վիճակագրությունն է, իսկ ընդհանրապես տվյալների ժամանակագրական համադրումը ցույց է տալիս, որ գյուղի բնակչությունը մինչև 1970-ական թթ. վերջերն անընդհատ աճ է արձանագրել:

Ըստ 1832 թ. կազմած վերոնշյալ վիճակագրության՝ պարիսաբնակներն էին 33-ամյա Ավագ Օհանյան Սահակյանը, կինը՝ 29-ամյա Մարիամը, որդին՝ 8-ամյա Աբրահամը; 50-ամյա Ազարիա Մարգարյան Խաչատուրյանը, կինը՝ 46-ամյա Հռիփսիմեն, դուստրերը՝ 8-ամյա Խաթունը, 6-ամյա Թագուհին, 4-ամյա Սոնան, Ազարիայի եղբայրը՝ 47-ամյա Միմենը, կինը՝ 32-

ամյա Եղիսաբեթը; 49-ամյա Դանիել Գրիգորյան Հակոբյանը, կինը՝ 44-ամյա Թամամը¹²:

Ի դեպ, 1916 թ. գյուղում հանգրվան էր գտել ցեղասպանությունից մազապուրծ 17 հայ¹³:

Հին և Նոր Պարիսների՝ միայն հայ բնակչության թվաքանակն արձանագրած վիճակագրական տվյալների համադրումը, որը պարզում է շուրջ 160 տարիների ընթացքում ընդհանուր առմամբ բնակչության շարունակական աճը, ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1832 ¹⁴		5	7	12
1851 ¹⁵	16	54	47	101
1864 ¹⁶	23			
1886 ¹⁷	36	190	172	362
1889 ¹⁸	38	191	165	356
1893 ¹⁹	37	176	135	311
1894 ²⁰	35			
1898 ²¹	37	191	172	363
1901 ²²		214	158	372
1902 ²³		216	162	378
1905 ²⁴	49	235	170	405
1908 ²⁵		352	277	629
1909 ²⁶		461	283	744
1910 ²⁷		468	289	757
1912 ²⁸	89	233	245	478
1914 ²⁹				502
1915 ³⁰				530
1918 ³¹	120	497	322	819
1925 ³²				1533
1970 ³³	179	419	460	879
1978 ³⁴				941
1992 ³⁵				870

12 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 388-390:

13 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 426, ք. 47-48:

14 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 388-390:

15 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 92:

16 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 4504, ք. 1:

17 Свод..., с. 82-83. Բացի հայերից՝ գյուղում բնակվում էր նաև 1 տուն թաթար (1 անձ):

18 **Բարխուստարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 250: Ի դեպ, ըստ արխիվային մի վավերագրի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, ք. 46-47)՝ նույն թվականին գյուղն ուներ 240 (140-ը՝ ար., 100-ը՝ իգ.) բնակիչ:

19 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, հ. Բ, էջ 336: Այլ վկայությամբ (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 193) նույն թվականին ուներ 36 տուն:

20 **Մելիք-Շահնազարեան Գրիգոր-բեգ**, Թղթակցություն, «Նոր-Ղար», 1894, № 81, 17 մայիսի, էջ 3:

21 **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 331:

22 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 241-242: Տե՛ս նաև Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 409:

23 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, ք. 118-119:

24 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, ք. 140-141: Նաև **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 325, սակայն ըստ մատաղատների՝ 80 տուն հայ:

25 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, ք. 224-225: Ի դեպ, մի տեղեկության համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 390 բնակիչ (Кавказский календарь на 1910 г., с. 207), ըստ այլ տվյալի՝ 89 տուն՝ 526 (268-ը՝ ար., 258-ը՝ իգ.) բնակիչ (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22):

26 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 764, ք. 243-244:

27 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 189:

28 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52. Մեկ այլ տեղեկագրի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 330) համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 787 (478-ը՝ ար., 309-ը՝ իգ.) բնակիչ:

29 Кавказский календарь на 1915 г., с. 101.

30 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 13 շրջ.:

31 ՀԱԳ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4:

32 **Խաչատուրյան Կ., Մուրիսյան Հ., Բաղդյան Գ.**, նշվ. աշխ., էջ 139:

33 **Կահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 33:

34 ԱՍՀ, հ. 4, էջ 81:

35 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

6 Արեան եւ կրակի վայրերից, թղթակցություն, «Նոր-Ղար», 1905, № 31, 13 հոկտեմբերի, էջ 2:

7 **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 328:

8 **Յովասափեանց Ա.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1905, № 221, 8 նոյեմբերի, էջ 1:

9 **Երկաթաբարեան Ա.**, նշվ. հոդվ., «Նոր-Ղար», 1905, № 42, 6 նոյեմբերի, էջ 3:

10 «Յառաջ», Թիֆլիս, 1906, № 15, 2 փետրարի, էջ 3:

11 «Ալիք», Թիֆլիս, 1906, № 6, 4 մայիսի, էջ 4:




ՀԱՅ ՊԱՐԻՍ. գյուղական տեսարաններ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Արցախյան ազատամարտի տարիներին և հատկապես բռնագաղթի ընթացքում ամեն բան թշնամուն թողած պարիսցիները կրում են նաև մարդկային կորուստներ (23 հոգի):

Ահա նրանք՝ Աշոտ Դանիելի Ամիրյան (1992 թ. մարտի 9-ին), Արշակ Թևանի Մարության (1992 թ. մարտի 3-ին՝ գյուղում ունեցած կոծության ժամանակ), Իսկուհի Պողոսի Մարության (1992 թ. մարտի 13-ին՝ գյուղում գրադից), Նիկոլայ Հովսեփի Առուշանյան (1992 թ.՝ գյուղում), Ամալյա Քեսիի Առուշանյան, Աբրահամ Գրիգորի Գրիգորյան (մնացել են գյուղում), Մարալ Գրիգորի Գրիգորյան (մնացել է մահանջի ճանապարհին), Շաքար Մալխասի Առուշանյան (մահանջի ճանապարհին), Ջումի Աղաբաբյան (մնացել է Գյուլիստանում), Հայկանուշ Ջումշուդի Ավագ-

յան, Շամիր Բեզլարի Ավագյան (մնացել են Նապատում), Ջումի Աղաջանի Ասրյան (մնացել է Վերիշենում), Էմմա Շիրինի Գրիգորյան (1988 թ. փետրվարին Սումգայիթում՝ իր տանը), ռուսալարիսաբնակ Փաշա Ավագյան (ճակատագիրն անհայտ է), աշխարհագրաբաններ Սերոժ Սերգեյի Սառաջյան (1992 թ. մարտի 13-ին՝ գյուղում), Սերժիկ Նազարի Մարության (1992 թ. ապրիլի 24-ին՝ գյուղում ինֆարկտից), Միքայել Հայրապետի Հայրապետյան (փախուստի օրը՝ գյուղում գրադից), Յաշա Պատվականի Հովսեփյան (1991 թ. մարտի 29-ին՝ գյուղում), Արտաշ Սարգսի Առուշանյան (1991 թ. մարտի 29-ին՝ գյուղում), Վալեր Ջումշուդի Առուշանյան (մնացել է գյուղում), Բենիկ Հայկազի Հայրապետյան (1992 թ.՝ դիրքերում կաթվածից), Նորիկ Ջամալի



ՔԱՅ ՊԱՐԻՍ. գյուղի գլխավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի՝ 2009 թ. արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Հակոբյանի, 2018 թ.)

Հայ Պարիսի տնատերերի և կարևոր շինությունների ցանկը
(կազմող՝ Սլավիկ Առուշանյան)

- | | | | |
|-------------------------|--------------------------|------------------------------|---------------------------|
| 1 Արտուշ Առուշանյան | 24 Չոփածանների հուշարձան | 47 Սիմոն Սառաջյան | 70 Ռաֆիկ Գրիգորյան |
| 2 Մելակ Սալախյան | 25 Ջարմիկ Հովհաննիսյան | 48 Էդիկ Հայրապետյան | 71 Ղահրաման Առուշանյան |
| 3 Գուրգեն Սալախյան | 26 Դայրոց | 49 Շուրիկ Ազարյան | 72 Բենիկ Սալախյան |
| 4 Ֆրոնա Առուշանյան | 27 Շիրին Հովսեփյան | 50 Առուշան Առուշանյան | 73 Խորեն Հովհաննիսյան |
| 5 Էռնեստ Հովհաննիսյան | 28 Վալերիկ Մարության | 51 Աղասի Առուշանյան | 74 Բենիկ Հովհաննիսյան |
| 6 Միշա Ամիրյան | 29 Բենիկ Հովսեփյան | 52 Հակոբ Առուշանյան | 75 Մեղրակ Ավագյան |
| 7 Գենրիխ Առուշանյան | 30 Շուրիկ Առուշանյան | 53 Կիմա Առուշանյան | 76 Ֆրիդոն Ավագյան |
| 8 Օկտար Առուշանյան | 31 Գրիշա Ասրյան | 54 Իվան Ազարյան | 77 Բենիկ Առուշանյան |
| 9 Սերժիկ Մարության | 32 Յաշա Ամիրյան | 55 Վալոդ Մարության | 78 Վազգեն Հովսեփյան |
| 10 Գուրգեն Հովհաննիսյան | 33 Ջիվան Ամիրյան | 56 Սարգիս (Ամի) Միրաբյան | 79 Արամ Չալյան |
| 11 Մուխի Սալախյան | 34 Աշոտ Ամիրյան | 57 Վանիկ Միրաբյան | 80 Յաշա Գրիգորյան |
| 12 Խորեն Հովսեփյան | 35 Ջավեն Սառաջյան | 58 Փաշա Ավագյան | 81 Վանո Առուշանյան |
| 13 Իսրայել Առուշանյան | 36 Ջուսի Աղաբաբյան | 59 Խորեն Ավագյան | 82 Յուրիկ Սալախյան |
| 14 Լևոն Հովհաննիսյան | 37 Լևոն Աղաբաբյան | 60 Մերոժ Առուշանյան | 83 Սաշիկ Սալախյան |
| 15 Մերոժ Սալախյան | 38 Խորեն Առուշանյան | 61 Յուրիկ Մարության | 84 Սամսոն Բաբաբյան |
| 16 Յաշա Սալախյան | 39 Մաղաբել Առուշանյան | 62 Մամիկոն Մարության | 85 Սարգիս Առուշանյան |
| 17 Բորիկ Հովհաննիսյան | 40 Վուրյա Ավագյան | 63 Աշոտ Հովսեփյան | 86 Անիկ Ներսիսյան |
| 18 Իսա Միրաբյան | 41 Բեգլար Չալյան | 64 Սարգիս Ծատուրյան | 87 Էդիկ Առուշանյան |
| 19 Վալեյ Առուշանյան | 42 Դավիթ Չալյան | 65 Շուրիկ (Շաբան) Առուշանյան | 88 Յաշա Հովսեփյան |
| 20 Լյովիկ Առուշանյան | 43 Կարո Սառաջյան | 66 Կարո Հայրապետյան | 89 Հակոբ Ասրյան |
| 21 Լյովիկ Սալախյան | 44 Վալոդ Սառաջյան | 67 Արժան Ծատուրյան | 90 Ջուսի Ասրյան |
| 22 Դոնարա Ծատուրյան | 45 Նազար Մարության | 68 Դիմո Ծատուրյան | 91 Արկադյա Սալախյան |
| 23 Գյուղխորհրդի շենք | 46 Միշիկ Սառաջյան | 69 Մերոժ Ավագյան | 92 Սերգի Մռավի Առուշանյան |

93 Վանիկ Առուշանյան
94 Ռոմա Առուշանյան
95 Աբգար Միրաբյան
96 Շիրին Միրաբյան
97 Հայկազ Հայրապետյան
98 Ջարմիկ Լալայան
99 Բենիկ Լալայան
100 Աբգար Ծատուրյան
101 Դինո Առուշանյան
102 Իսակ Ավագյան
103 Սմբատ Գրիգորյան
104 Արմիկ Սալախյան
105 Միշա Սալախյան
106 Մաշիկ Ասրյան
107 Բենիկ Ծատուրյան
108 Սանթրի Հովսեփյան
109 Շիրին Հովսեփյան
110 Շամիր Հովսեփյան
111 Վալդր Միրաբյան
112 Մաղաթ Գրիգորյան
113 Եվա Առուշանյան
114 Մաշիկ Միրաբյան
115 Էդիկ Խաչատրյան
116 Ջումի Չալյան

117 Հայկազ Ծատուրյան
118 Լուսիկ Բաբայան
119 Օրիկ Բաբայան
120 Նիկոլ Բաբայան
121 Ժորիկ Բաբայան
122 Բորիկ Բաբայան
123 Բենիկ Ավագյան
124 Ժորիկ Չալյան
125 Շուրիկ Չալյան
126 Ռուբեն Չալյան
127 Շաշոկ Չալյան
128 Ավետիս Սառաջյան
129 Բեգլար Սառաջյան
130 Ասատուր Հովհաննիսյան
131 Վալդր Ասրյան
132 Իվան Ասրյան
133 Արշակ Ամիրյան
134 Մարտիրոս Առուշանյան
135 Նազար Մովսեսյան
136 Օսեփ Առուշանյան
137 Բեգլար Հայրապետյան
138 Մովսես Միրաբյան
139 Շուրիկ Հայրապետյան
140 Մարտիկ Հովհաննիսյան

141 Ջարմիկ Հովհաննիսյան
142 Կոլի Չալյան
143 Մաշիկ Սառաջյան
144 Լորա Աբրահամյան
145 Արտո Աբրահամյան
146 Գուրգեն Աբրահամյան
147 Գուրգեն Հովսեփյան
148 Մաշիկ Չալյան
149 Մայիս Բաբայան
150 Մարգարիտ Բաբայան
151 Ժորիկ Առուշանյան
152 Զինավոր Ասրյան
153 Մաշա Լալայան
154 Մուխի Միրաբյան
155 Իվան Սարգսյան
156 Գարեգին Հովսեփյան
157 Խաչո Միրաբյան
158 Սիմոն (Սիկո) Առուշանյան
159 Սոկրատ Սարգսյան
160 Սուրեն Միրաբյան
161 Բագրատ Միրաբյան
162 Իլյաս Միրաբյան
163 Խորեն Ծատուրյան
164 Գուրգեն Ծատուրյան

165 Ամիրխան Հովհաննիսյան
166 Շահեն Առուշանյան
167 Նիկոլ Առուշանյան
168 Սերգի Առուշանյան
169 Մուխի Հովհաննիսյան
170 Իսակ Վ. Ավագյան
171 Շամիր Ավագյան
172 Ամիրխան Միրաբյան
173 Յուլիա Առուշանյան
174 Մանաս Սալախյան
175 Սուրեն Ավագյան
176 Աշոտ Ավագյան
177 Բագրատ Ավագյան
178 Սերգի Ավագյան
179 Ամիրխան Ավագյան
180 Բորիկ Ասրյան
181 Սր. Մինաս եկեղեցի
182 Գարբնոց
183 Աղբյուր
184 Չինարին տակ աղբյուր¹

¹ **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Գ, էջ 88-92:

Գրիգորյան (դիրքերում), Կին Ֆյոդորի Առուշանյան (մահացել է մահանջի ճանապարհին կաթվածից, 1992 թ. հուլիսի 5-ին դիակը բերվել է Թալին)³⁶:

Գյուղի պաշտպանության համար գոհվածների թվում են նաև հինգ ազատամարտիկներ ՀՀ-ից՝ Ներսես Բերբերյան, Աշոտ Համլետի Խաչատրյան, Մայիս Աշոտի Հովհաննիսյան, Սարգիս Խաչատուրի Մաթևոսյան, Ատոմ (Աշոտ) Մեյրոյան, որոնք գոհվել են 1991 թ. մայիսի 24-ին³⁷:

2005 թ. դրությամբ հայապարհսցիներին մի մեծ խումբ՝ 26 տուն, բնակվում էր Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի Յուցա գյուղում³⁸:

Կառուցապատում. Հայ Պարիսը բաղկացած էր Շենի, Գյունե, Դուգե և Բբանց թաղերից³⁹:

1912 թ. գյուղն ուներ 1 եկեղեցի, 89 բնակելի տուն, 108 տնտեսական կառույց և 1 խանութ⁴⁰:

Տնտեսություն. հայապարհսցիները հիմնականում զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ⁴¹:

1912 թ. գյուղացիներն ունեին 18 ձի, 260 խոշոր և 300 մանր եղջերավոր անասուն, 50 խոզ⁴², իսկ 1915 թ.՝ 150 դեպատին ջրովի և 400 դեպատին անջուր հող⁴³:

Աղբյուրներ, ջրանցք. որպես ամենասակավաջուր գյուղ՝ Հայ Պարիսի կենտրոնական մասում առկա էր միայն Չինարին տակի աղբյուրը. «...գյուղի ջրառատ աղբյուրը, որը հորդում էր մի քանի խողովակներից: Դա պարիսցիների գլխավոր հավաքատեղին էր, որը կոչվում էր “Չինարին տակ” կամ “Սլահանց չփրատակ”»⁴⁴:

Այգիներն ու հողամասերը ջրելու համար էլ օգտագործում էին 1930-ական թվականներին կառուցված 10 կմ երկարություն ունեցող⁴⁵ Պրսա արխի (Պրսառու, Պարիսու արխ)⁴⁶ ջրերը:

36 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 673-674:

37 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 674:

38 **Չալյան Ն.**, Յուցան մի փոքրիկ Հայ Պարիս է, «Մոսավի դոկանցներ», 2005, № 5, մայիս, էջ 3:

39 **Սալախյան Է.**, Մեր գյուղը, «Մոսավի դոկանցներ», 2011, № 1, հունվար, էջ 1:

40 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

41 **Սալախյան Է.**, նշվ. հոդվ., նույն տեղում:

42 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

43 ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 13 շրջ.:

44 **Սալախյան Է.**, նույն տեղում: Տե՛ս նաև **Նարաբյան Բ.**, նշվ. հոդվ., էջ 4:

45 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 33:

46 **Նարաբյան Բ.**, նշվ. հոդվ., «Մոսավի դոկանցներ», 2015, № 10, դեկտեմբեր, էջ 4:

Գյուղի «տարածքում աղբյուրներ քիչ կային, եղածներն էլ հիմնականում հեռու էին գյուղից...: Գյուղի վերևում, անտառի եզրին մի ջրամբար էին կառուցել՝ «Գյուլ» էինք ասում, դա էլ տարվա մեծ մասը դատարկ էր լինում»⁴⁷:

Չինարենի. «Պարիսի գոլքն ու հպարտությունը գյուղամիջի երկու խոշոր չինարիներն էին: Այդ ծառերի բունն այնքան հաստ էր, որ 5-6 հոգով իրար ձեռքից բռնած հագիվ կարող էին “խտտել”»⁴⁸:

Դպրոց. վավերագրերի լուսությունը հուշում է, որ նախքան խորհրդային կարգերի հաստատումը գյուղը դպրոց չի ունեցել:

Խորհրդային տարիներին Շամիր Դայունցի տունը բռնագրավվում է և վերածվում դպրոցի⁴⁹:

1970 թ. գործում էր միջնակարգ դպրոց⁵⁰:

Եկեղեցի. գտնվում է գյուղի արևմտյան բարձրադիր եզրին (N 40°26'49.33", E 046°32'57.52", ծ. մ. 1072 մ):

Հայտնի է, որ նորպարիսցիներն իրենց բուն գյուղից (եկեղեցով հանդերձ) գրկվելուց գրեթե քառորդ դար անց՝ 1864 թ., դիմում են Էջմիածնի սինոդին հասարակության միջոցներով եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալու ակնկալիքով. «...25 տարի է, որ մեզ սրբաշեն եկեղեցի չունենք...: ...այժմ ուզում ենք, որ սրբաշեն եկեղեցի շինել տանք քարով թաղ տուած կամարատր առանց սին, որ լինի միջի երկայնութիւն 15 գազ և լայնութիւնն վեց գազ որ քարերն էլ ամբողջ տաշած ամեն բան պատրաստ է, ուստի խնդրում ենք, ինչպես որ լուսատուչական հայոց սրբազան կանոնն կիրամայե մեզ օժած քարեր տաք հիմնարկութեան համար, որ մեծի պահոց մարտ ամսումն սկսենք շինել... աղաչում ենք, որ կանուխ հրամայեք, որ այս գարնան ժամանակն պարապ չի մնանք, շինենք, որ ձեր սրբազնութեան կամքն կատարենք և մենք էլ նեղութիւնից ազատվենք, որովհետև սրբազան պատարագն, եկեղեցույ խորհուրդն հեռի տեղ արժանատր եկեղեցունն է կատարում»⁵¹:

Չինարական աշխատանքները, սակայն, ձգձգվում են, քանի որ դեռևս ԺԹ դարի վերջերին նշվել է. «...տակալին չունին եկեղեցի»⁵²:

47 **Սալախյան Է.**, նշվ. հոդվ., «Մոսավի դոկանցներ», 2011, № 1, հունվար, էջ 1:

48 Նույն տեղում:

49 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 269:

50 Նշվ. աշխ., հ. Ա, էջ 33:


51 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4504, ք. 1:

52 **Բարխուտարենց Մ.**, նշվ. աշխ., էջ 250: Տե՛ս նաև **Սեյիք-Շահնազարեան Գրիգոր-բեգ.** նշվ. թղթակց., «Նոր-Դար», 1894, № 81, 17 մայիսի, էջ 3:



ՉԱՅ ՊԱՐԻՍ. Սբ. Մինաս եկեղեցին հարավ-արևելքից, հարավ-արևմուտքից և հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

1893 թ. հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ⁵³:
 1894 թ. նշվել է, որ եկեղեցու կառուցումը ձգձգվում էր նյութական միջոցների սղության պատճառով. «Գիւղացիք խոստացան մինչև 600 ռ. տալու այլ և քարն ու միս պարագաները: Իսկ եթէ գտնուին բարեգործ մարդիկ և աջակցեն, եկեղեցու յատակագիծը կը մեծացնուի... գիւղիս կայուածատեր Աղէք. Մելիք-Բէկլարեանցը վաղուց է խոստացել 200 ռ. տալ նոր շինուելիք եկեղեցուն, նոյնպէս Գանձակուն բնակչուղ դարաշինարցի պ. Գր. Մ.-Շահնազարեանցը... խոստանում է օգնելու»⁵⁴:




ՉԱՅ ՊԱՐԻՍ. Սբ. Մինաս եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

53 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 193:

54 «Նոր-Գար», 1894, № 109, 28 յունիսի, էջ 1:



ՀԱՅ ՊԱՐԻՍ. Աբ. Մինաս եկեղեցին հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ՀԱՅ ՊԱՐԻՍ. Աբ. Մինաս եկեղեցու՝ հյուսիսային ճակատից բացված միակ մուտքը և խաչաքանդակ մուտքի արևմտյան անկյունաքարին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ՀԱՅ ՊԱՐԻՍ. դրվագներ գյուղի՝ արևմտյան եզրին տարածված գերեզմանոցից և ՉՄՊՁ հուշարձանը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



Հին (ՌՌԻՍ) ՊԱՐԻՍ. տեսարաններ պատմական գյուղի զերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Բնակչություն. հայերից հետո պարիսարնակ դարձած ռուս ազգաբնակչության թվաքանակի մասին առկա վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1844 ⁵		241	224	465
1885 ⁶	122	311	296	607
1886 ⁷	141	331	316	647
1908 ⁸	160	511	499	1010
1912 ⁹	119			
1914 ¹⁰				1216
1983 ¹¹				1087
1992 ¹²				900

Կառուցապատում. ԺԹ դարավերջին Ռուս Պարիսի վերաբերյալ գրվել է. «Ամբողջ գիւղը բաղկացած է երկու գուզրնթաց, երկար փողոցներից, տները միմեանցից անջատուած են և ունին ընդարձակ բակեր, որոնց մէջ կան ջրհորներ: Գիւղն ունի մի-միայն երկու աղբիւր»¹³:

1912 թ. գյուղն ուներ 1 եկեղեցի, 135 բնակելի տուն, 65 տնտեսական կառույց և 1 խանութ¹⁴:

Տնտեսություն. ինչպես դուրս մղված բնիկների, այնպես էլ վերաբնակիչ ռուսների հիմնական զբաղմունքներն էին հացահատիկի մշակությունն ու անասնապահությունը:

1912 թ. գյուղացիներն ունեին 28 ձի, 500 խոշոր և 1500 մանր եղջերավոր անասուն, 300 խոզ¹⁵:

Գալրոց. 1908 թ. Ռուս Պարիսում գործում էր գրագիտության դպրոց՝ 35 աշակերտով (միայն տղաներ)¹⁶:

Աղոթատուն. 1908 թ. ռուսներն ունեին իրենց աղոթատունը¹⁷:

Սբ. Աստվածածին եկեղեցի. հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Միակ հիշատակությունը վերաբերում է 1839 թ., երբ հինպարիսցի հայերն ավստասնքով մշում էին, որ գյուղից վտարվելուց հետո ակամա գրկվել էին նաև եկեղեցուց. «...մեր սրբաշեն եկեղեցին Աստուածածնայ մնաց էնտեղ...»¹⁸: Անշուշտ, կարելի է նաև ենթադրել, որ 1417 թ. գյուղում ստեղծված ձեռագիրն էլ գրվել էր հենց այդ եկեղեցում, ուստի նրա գոյությունը թևածում է դարերի խորքը:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը կանգուն է եղել, սակայն հետագայում հիմնովին քանդել են:

Գերեզմանոց. ԺԲ-ԺԹ դարերով թվագրվող հնավայրը գրադեցնում է բավական ընդարձակ տարածք (N 40°26'29.72", E 046°31'07.80", ծ. մ. 1250 մ): Պահպանվել են շուրջ մեկ տասնյակ գեղարքանդակ խաչքարեր (հները՝ ԺԲ-ԺԳ դդ.) և մոտ հազար տապանաքարեր (գերակշիռ են անմշակ սալատապանները):

5 АКАК, т. X, док. 293, с. 285.

6 **Абелов Н.**, Экономический бытъ государственныхъ крестьянь Елисаветпольскаго уезда, Елисаветпольской губернии, “Материалы для изучения экономического быта государственныхъ крестьян Закавказского края”, т. VII, Тифлис, 1887, с. 108.

7 Свод..., с. 78-79. Տե՛ս նաև **Լալայան Ե.**, Երկեր, հ. 2, էջ 328:

8 Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22.

9 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52.

10 Кавказский календарь на 1915 г., с. 101.

11 ԱՄՀ, հ. 8, Բաթն, 1984, էջ 202:

12 ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

13 **Լալայան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 358-359: Տե՛ս նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 327:

14 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

15 Նույն տեղում:

16 Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 25.

17 Նույն տեղում:

18 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4504, ք. 1:


ԺԹ դ. երկրորդ կեսին վերաբերող տապանաքարերի առկայությունը հավանաբար պայմանավորված է այն հանգամանքով, որ հինպարիսցիները գյուղը հարկադրաբար լքելուց հետո՝ սկզբնական շրջանում, հանգուցյալներին, սովորության համաձայն, ամփոփել են այն գերեզմանոցում, որտեղ գտնվում էին իրենց նախնիների շիրիմները:

Խաչքար. գեղարքանդակ (213 x 72 x 28 սմ), ստորին մասում՝ 8 տող.

Ի Չ ու Ի/Գ (1275) թվական. | Ես՝ Խաչիթար, կա(ն)գնեցի գտորբ մշանս ի բա/րեյխասութի(ւն) ծնողաց իմոց, որք երկիրպագա/նէք յաղաթս յիշեցեք:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 81: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 82:

Տարբերբոցում. ըստ Ղահրամանյանի ընթերցման՝ տարեթիվն է՝ Ի Չ և Ղ (1341):



Տապանաքար. ուղղանկյունաձև (168 x 82 x 32 սմ), կենցաղային պատկերներով և խաչաքանդակներով հարդարված երեսին՝ 1 տող.

Թվ(ին) Ռ-ՂԳ (1644):

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 81: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 82:



Տարբերբոցում. ըստ Ղահրամանյանի ընթերցման՝ տարեթիվն է՝ ՌՂԳ (1244):

Տապանաքար. օրորացած (181 x 88 x 26 սմ), կենցաղային պատկերներով հարդարված երեսին և նույն երեսը երիզող շրջանակին՝ 6 տող.

Ս(ուր)ք խաչս բարեխասս սարկաւաթ | Միսիթարին, | իւր կոդայկից Եղիէս/պէտին, Զարկանին, Ամիրխ(ա)նին. ա(ստուա)ծ ողորմի ... | (թվին) հայոց ՌճԻԶ (1677) ...:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 81: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 82:

Ծանոթ. Ղահրամանյանի ընթերցումը թերի է:



Տապանաքար. ուղղանկյունաձև (190 x 60 x 35 սմ), արձանագրությունը՝ 4 տող.



ՅԻՆ (ՈՌԻՍ) ՊԱՐԻՍ. Խաչքար (1275 թ.) գյուղի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Այս է հանկ/խառն էդի՝ որդի Արու-
թի(ւ)ն | ք(ո)խ(վ)ին, քվ(ին) ՌՃՂԲ
(1743):

Հրատ. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Ար-
ցախ, գիրք Ա, էջ 82: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ
82:

Տարբերություն. Ղահրամանյանի մոտ Արու-
թի(ւ)ն-ի փոխարեն՝ Մարութին:



Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 7 տող.
Այս է տապան ... | ...դին Մէլիք | Թամրազի | դուստր Պ|աճըին
... կողակիցի | Ազադուր ք|օխին, ք(վ)ին ՌՄԸ (1759):

Հրատ. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 20, 82: Նույնի՝
Օջախի գիրք, հ. Ա, էջ 82:

Տապանաքար. ուղղանկյունաձև (155 x 57 x 30 սմ), արձանագրությունը՝ 5 տող.
Այս է տա/պան Արութին | ք(օ)խ(վ)ի որդի Խաչա/դուր ք(ո)խ-
(վ)ին, քվ(ին) Ռ|ՄԻ (1771):




ԴԻՆ (ՈՐԻՍ) ՊԱՐԻՍ. 1677 և 1743 թթ. տապանաքարեր գյուղի զերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 81: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 82: Ծանոթ. Ղահրամանյանի ընթերցումը թերի է:

Տապանաքար. ուղղանկյունաձև (138 x 25 սմ), կիսով չափ խրված հողի մեջ, հարդարված է կենցաղային պատկերներով և խաչաքանդակներով, արձանագրությունը կիսաեղծ 1 տող.

Այս է հ(ա)նգի(ս)տ ճա...:

Հրատ. առաջին անգամ:



Տապանաքար. ուղղանկյունաձև (94 x 37 x 16 սմ), հարդարված է կանարա-

չարով ներփակված խաչաքանդակներով, հարավային երեսին՝ 3 տող.

Ս(ուր)ք խ(ա)չս Գր(ի)զ(ո)րին, Մարք/արիդի/ն:

Հրատ. առաջին անգամ:



Տապանաքար. ուղղանկյունաձև (112 x 50 x 22 սմ), հարավային երեսին՝ 4 տող.

Սուրք խաչս ... | ... Աղա/ճանին, որ | ...արասն է | ...:

Հրատ. առաջին անգամ:



Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան Արուքի(ւ)ն(ի), | որ է որդի Ծատորին. | թվին ՌՄԴԲ (1843):

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 82: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 82: Նան՝ «Մոսվի դոկտրիններ», 2005, № 3, մարտ, էջ 4: Տարընթերցում. Ղահրամանյանի մոտ *Արուքի(ւ)ն*-ի փոխարեն՝ *Մարուքին*:



Հին (ՌՈՒՄ) ՊԱՐԻՍ. ԺԷ դարի և 1771 թ. տապանաքարեր գյուղի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Հին (ՌՈՒՄ) ՊԱՐԻՍ. 1850, 1852, 1880 թթ. տապանաքարեր գյուղի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



Հին (ՌՈՒՄ) ՊԱՐԻՍ. ԺԳ-ԺԷ դդ. խաչքարեր գյուղի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Հին (ՌՈՒՄ) ՊԱՐԻՍ. ԺԶ-ԺԸ դդ. տապանաքարեր գյուղի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 3 տող.
Այս է տապան Միրապին, / որ է որդի տարզի / Մոսին, 1852:
 Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. հարթ, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 5 տող.
*Այս է տապան / Ա...նարդին, տուստր / [Միր]գախանգ / Ծա-
 տորին. / 1880:*
 Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. հարթ, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 5 տող.
*Այս է տապան / Հռիփ/սին, կողակից էր / Մհակա Ուսեփին /
 1891 ամի:*
 Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.
Այս է տապան տերզիկ ...ի:
 Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 118:
 Ծանոթ. ժամանակը՝ ԺԹ դ.:

Տապանաքար. հարդարված է զարդաքանդակներով և խորանաչափի մեջ
 առնված չորս խաչաքանդակով.
*Սուրբ խաչս բարեխօս Փիրի, կին՝ Ղազարին ...քարին, Թա-
 մարին:*
 Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 82:

Նահատակ ուխտատեղի. գտնվում էր գյուղի մերձակայքում՝
 լեռան լանջին¹⁹:



ՌՈՒՄ ՊԱՐԻՍ. ԺԶ-ԺԸ դդ. տապանաքարեր գյուղի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Տապանաքար. հարթ, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 2 տող.
Այս է տապան ուտղա Մոսին, / որ է որդի Մուաին. 1850:
 Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. ուստա Մոսին հայտնի դերձակ էր: Ըստ Ե. Լալայանի՝ «Մելիքների
 զգեստը ժողովրդի զգեստի տարազից չէր տարբերում, միայն կարում էր աւելի
 ճաշակով և աւելի քանկազին կտորներից: Նրանք ունեին իրանց յատուկ դերձա-
 կը, որ ամբողջ Բգիրմի-դորդում յայտնի էր լինում: Այսպէս օր. մելիք Յովսէփ Բ
 դերձակը Պարիս գիւղից էր, Մոսի անունով» (**Լալայան Ե.**, նշվ. աշխ., գիրք Ե,
 էջ 258: Տե՛ս նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 250): Ի դեպ, Հովսէփ Բ Մելիք-Բեգլար-
 յանը վախճանվել է 1843 թ.:

ՂԱՐԱՉԻՆԱՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքի-
 շեն) ավանից 6,3 կմ հյուսիս-արևելք՝ Սևջուր գետի աջ ափին՝
 ծովի մակերևույթից 695-725 մ բարձրության վրա: Մահմանա-
 գծվում է «...արևմուտքից անտառով, հիսիսից Պրմբատու, Պա-
 ռիսու, և Մրուայ լեռներով, իսկ միւս կողմերից այգիներով, որք
 թուով բաւականին շատ են, մօտ 70: Գիւղի միջով անցանում է մի
 բաւականին մեծ գետ Ղարաչայ անուամբ, կան բացի սորանից
 բազմաթիւ աղբիւրներ...»¹:

Անվանում. գյուղի պատմական անունը հայտնի չէ: Վկայվել
 է Աղջաղալա², Չելվա, Կարաչինար անվանաձևերով:

Ներկայիս Ղարաչինար անունը (բառացի թարգմանությամբ
 նշանակում է սև սոսի) փաստում է, որ այն խանական տիրապե-
 տության ժամանակաշրջանից մնացած հիշատակ է:

19 **Լալայան Ե.**, նշվ. աշխ., ԵԺ, հ. 2, էջ 327:
 1 **Հրահատ Բարձունի,** Չելվայ, «Մեղու Հայաստանի», 1874, № 36, 14 սեպտեմ-
 բերի, էջ 3: 1881 թ. Ղարաչինար այցելած Բաֆֆին գրել է. «Էրբեջից դուրս գա-
 րով, շարունակեցի իմ ճանապարհը դեպի Կարաչինար կամ Աղջաղալա (Սպի-
 տակ բերդ): Դեպի ձախ կողմի լեռները, որ շարունակություն են Մռավ լեռան,
 պատած էին անտառներով. իսկ դեպի ձախ բարձրավանդակները փոքր առ
 փոքր իջնում են լեռները, ավելի տափարակ ձև են ստանում, անտառներ
 չկան, միայն պատած են ճոխ խոտաբույսերով և մշակած արտերով: Երեկո-
 յան ես հասա Ղարաչինար...» (**Բաֆֆի,** նշվ. աշխ., հ. 8, էջ 581): Նաև՝ «Գիւղ
 Արցախի Կիլիստան գաւառի մեջ, Սեւ գետակի աջ կողմը» (**Էփրիկեան Ս.,**
 նշվ. աշխ., հ. Ա, էջ 490):
 2 Այս անունն իրենց հետ բերել են որոշ ժամանակ Բոլնիսի Աղջաղալայում
 բնակված, ապա հայրենի գյուղ վերադարձած բնակիչները. «Այդ գյուղը կոչ-
 վում է Աղջակալա նրա համար, որ երբ Գյուլիստանի մելիքները գաղթեցին
 Բոլնիս, այնտեղ բնակվեցան Աղջակալա գյուղում...» (**Բաֆֆի,** նշվ. աշխ., հ. 8,
 էջ 582): Տե՛ս նաև **Ռհար** (Բալարեկ Չաքարյան), Հիանդանոցը Ղարաչինա-
 րում, «Մշակ», 1910, № 9, 16 յունվարի, էջ 3: Ըստ Սպարտակ Մեփյանի էլ՝
 գյուղի Աղջաղալա անունը ստուգաբանվում է այսպես. «Գյուղը գտնվել է խիտ
 անտառի մեջ, շրջապատված դարավոր ծառերով, որ բերդի տեսք են տվել՝
 Աղաջ-կալա, որ նշանակում է ծառերի բերդ, սա էլ հետագայում տառադարձ-
 վել, դարձել է Աղջակալա, որ նշանակում է Սպիտակ բերդ. մի բան, որ այս
 կողմերում չի եղել և չկա...» (ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, թ. 3):

Ըստ բանասաց Կարինե Հակոբյանի (*ծնվ. 1957 թ. Ղարաչինարում: Ավանդությունը գրի է առնվել 2003 թ. Ստեփանակերտում*) մի երիտասարդ փախցնում է աղջկան՝ հարազատների անհամաձայնության պատճառով և «...շինան հանում: Շինին դրողին մի չինարի յա ինում, էտ ծառին փըչակը էնքան մեծ ա մը՝ ծ ինում, վար էրկուսըն էլ միչին տըղվարում են : Վար խը՛լախ վախտ ա անց կընում, էտ տըղան ք՛նում ա, վար հաց պիրի: ամա դէ ըխճկանը հըրնըմըրը տազ չեն անում. տ՛ուս էն կ՛ալի, էն դ՛ուզէրը մին-մին անում, աման քար ու քօլու տակ էլ յաշում են, ախրը, վերչը կ՛ալիս էն, էտ փըչակումը ըխճըկանը ք՛ըթանում, ծառին ճուղման կախ էն տալի: Տըղան կ՛ալիս ա, տը՛նում տը-հէնց, տ՛անակը հանում ա, ուրան էլ ըսպանում: Էրկու ցահիլըն էլ ծառին տակին էն մընում: Էտ օրան տէնը չինարին անումը մը-նում է Ղարա չինար (սը՛վ չինարի), շէնին անումըն էլ տը՛նում էն Ղարաչինար»³:

Պատմություն. Ղարաչինարի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չեն պահպանվել:

ԺԹ դարասկզբի հեղինակ շուշեցի տեր Բաղդասարը նշել է. «Ելից գալով եզր Քուրաքչային, որ Հայոց բառով Թնագետ կոչին, նաև Ձէյվայ գետն, սոքայ ևս խառնին Քուռ գետն: Ի վերայ Ձէյվայ գետին այժմս շինել ան նոր քաղաք, որ էր Մելիք Ապովին, և Մելիք Յուսուֆին, Մելիք Ֆրիդոնին, իրեանց հայրական քաղաքն այ, և թաքայորի շնորհն է սոցայ վերայ, և այժմս սոցայ որդոցն վերայ, և լսածով կասեն, եթէ աստուած հայոց թագաւոր հաստատի, պիտի յառաջ տեղս նստի: Այս նոր քաղաքս Ձէյվայ է ի ներքոյ Մշաւայ սարին...: Եւ քաղաքն է այս ձևըն, և նոյն գետն յառաջն անցանի, և այս Մշաւա սարս է երանեալեաց, այսինքն՝ ճքնաւորաց// բնակարան, որ մինչև ի այժմս և կան անժամօքի, որպէս երբեմն հանկարծակի պատայեն ի յորսողաց: Եւ սարն է անտառ մայրեաց և բազում գեղրանքս ունի ի ներքոյ իւրում, որ են բնակաց ի ազգէս մերմէ: Որ և գաւառիս անունն է Իգիրմիդօր»⁴:

Ղարաչինարի կալվածատերերը Մելիք-Բեգլարյաններն էին: Դա արձանագրվել է, օրինակ, 1831-1832 թթ.⁵:

Գյուղն առանձնապէս ծաղկուն է եղել ԺԹ դարի երկրորդ կեսին, երբ դարձել է ենթաշրջանի վարչանիստ կենտրոնը: Ամռանն այդտեղ էր նստում տվյալ ոստիկանական շրջանի պետը:

Բնակական իրենց իրավունքներով այնտեղ էին բնակվում Մելիք-Բեգլարյանների ժառանգները, որոնցից, օրինակ, 1873 թ. հիշվում է գյուղի կառավարիչ Թեյմուրազ Մելիք-Բեգլարյանը⁶:

Գյուղի նոր շրջանի պատմության մասին հայտնի են նաև հետևյալ տեղեկությունները:

1870 թ. Սք. Էջմիածնում շինարարական աշխատանքներին օժանդակելու նպատակով գյուղի հասարակությունը հատկացնում է 38, իսկ Թեյմուրազ բեկ Մելիք-Բեգլարյանը՝ 25, Սարգիս Մելիք-Ստեփանյանը՝ 2 ռուբլի⁷:

1905 թ. սեպտեմբերի վերջին թուրքերը Ղարաչինարի մոտ սպանում են 3 հայի և թալանում 3 ֆուրգոն⁸:

Այդ օրերին «...տեղի ունեցաւ մի թեթև յարձակում, որի ժամանակ սպանուեցին երկու հայեր»⁹:

Նույն ամսին հաղորդվում է. «Մեր գիւղն են ժողովուել շրջակայ հայ գիւղերի շինականները: Ներկայումս շրջապատուած ենք Արփատտ, Բարդա և այլ թրքաբնակ գիւղերի ճիւղերով: Սպանուել է մեր տանուտերը և մի քանի հոգի էլ վիրատուել են: Զօրքի օգնութեանն ենք սպասում»¹⁰:

Սպանված տանուտերը Սերգեյ բեկ Մելիք-Ստեփանյանցն էր¹¹:

1905 թ. մեկ այլ տանուտեր էլ սպանվում է ազգաղավ կեցվածքի պատճառով. ժողովրդին զինելու համար Համազասպ Սրվանձտյանցի կազմած տեղական մարմինը գումար է պահանջում Ղարաչինար (Աղջաղալա) գյուղի տանուտերից, վերջինս «...որ գիւղի ունկորներից էր, մերժել էր դրան տալ: Համազասպը դազախեցի Կարօին, որ խմբի լաւագոյն մարտիկներից մէկն էր, Բազի դաշնակցութեան շարքերում թրժած, գրաճանաչ, գիտակից երիտասարդներից, ուղարկում է Աղջաղալա երկու ուրիշ ընկերների հետ, քեօխալից պահանջուած դրամը ստանալու, սակայն դարան մտած քեօխալան հրացանագարկ է անում Կարօին, որի մահը խիստ ծանր է ազդում թէ խմբի և թէ ժողովրդի վրայ, ընդհանուր գայրոյթ առաջացնելով: Կարօին մեծ շուքով հողին են յանձնում, Համազասպը կրակոտ ճառ է ասում և յայտարարում, որ յանցաւորը կը գտնուի և կը պատժուի: Եւ շատ երկար չտեց, յայտնի դարձաւ ոճրագործը և կրեց իւր արժանի պատիժը, օրը ցերեկով գնդակահարուելով ժողովրդի աչքի առաջ»¹²:

Նույն թվականի սեպտեմբերի 28-ի թղթակցության համաձայն՝ «Մի քանի օր սրանից առաջ Մշաւ սարի լանջերին գտնվող արօտատեղիներից անյայտ մարդիկ քշում-տանում են հարիւր ոչխար երկու թուրք հովիւներով: Որովհետև ոչխարները պատկանում էին Ահմադբեգլու գիւղի թուրքերին, ուստի սրանք հաւաքում են շրջակայ թուրք գիւղերից մի քանի հարիւր ձիւտոր և ամսիս 26-ին դիմում են դէպի Ձէյվա թուրք գիւղը և այստեղից սպառնում են մօտակայ հայաբնակ Կարաչինար գիւղին, պատրուակ բռնելով իբր թէ իրանց ոչխարները հայերն են գողացել: Թուրքերն այսօր դեռ Ձէյվայում են՝ սպառնական դիրք բռնած: Տեղիս հաշտարար միջնորդը այդ մասին հաղորդել է կառավարութեան»¹³:

Հերթական թղթակցությունն էլ երկու օր անց նշում է. «Կարաչինար է գալիս Գանձակի գաւառապետ Բեուտը յիսուն կօզակով, սակայն թուրքերի վրա նրա գալը ոչ մի ազդեցութիւն չէ անում: Թուրքերը շարունակում են հաւաքվել Ձէյվայում. նրանց թիւը, ըստ պ. գաւառապետի ասածի, հասնում է մօտ 1500 հոգու: Այս օրդուի մէջ են լինում հետևեալները՝ Ղասմբեգլուի թուրքերը Խանլար, Խաս-Մահմադ և Խամայիլ բեգերի առաջնորդութեամբ, Ուսուֆ և Հախվերդի Ադիգեօզալով աղաները բերում են իրանց մարդկանց Բուհմադլու գիւղից (գտնվում է 7 վերստ Գեօրան կայարանից հեռու), Ղզիհաջիլուի գիւղացիները գալիս են իրանց ստարշինա Մահմուդ-բեկի հետ, Մալահլուի հասարակութեան առաջնորդում է իրանց ստարշինան, գալիս են Կարամուսալուի թուրքերը, իսկ Ջևանչիրի գաւառից Ջևանգիրխան Նուրիբեկովն ուղարկում է հարիւր ձիւտոր: Այդքան մարդիկ գալիս են հարիւր ոչխար և երկու հովիւ յետ տանելու... իրանց հետ բերելով ջրմուղներ և նաւթ, որոնք հայերի ռումբերից աւելի մեծ գործեր են կատարում: Սեպտեմբերի 29-ին, վաղ առաւօտեան, Թափի գիւղի մօտ լօկանները ֆուրգոններով դիմում են դէպի իրանց ամարանոց

3 Մարգարյան Ա., Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015, էջ 197:

4 Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, Ծաղկաբաղ աշխարհացոյց, տպագրության պատրաստեց՝ Հ. Զյուրյան, «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 296-297:

5 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 366:

6 Եսայանց Ա., Ձէյվա (Ղարաչայ), «Մեղու Հայաստանի», 1873, № 11, 24 մարտի, էջ 2:

7 «Արարատ», 1870, Դ, էջ 138:

8 «Նոր-Ղար», 1905, № 25, 6 հոկտեմբերի, էջ 1:

9 Ա.Գօ, նշվ. աշխ., էջ 327:

10 «Նոր-Ղար», 1905, № 23, 4 հոկտեմբերի, էջ 1:

11 Մահակեան Ա., Գանձակի գաւառի նորութիւններից, «Արշալոյս», 1905, № 26, 30 սեպտեմբերի, էջ 2:

12 Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 480:

13 Մխիթար, նշվ. հոդվ., «Մշակ», 1905, № 205, 8 հոկտեմբերի, էջ 2:

Պարիս գիտը, ուր պետք էր ութ օր տօնելին դաշտային աշխատանքից յետոյ՝ ըստ մշտական իրանց սովորութեան: Մօլօկանների հետ նոյն Թափ գիտից դուրս են գալիս և չորս սարաւցի հայեր: Գիտից հազիւ երեք վերստաչափ անցած, հայերի և մօլօկանների վրա յարձակում է գործում դասմբէկլուեցի Իսմայիլ-բէկն իր մարդկանցով: Հայերից մէկին աջողվում է ձին քշելով ազատվել, մօլօկաններն էլ թողնում են իրանց ֆուրգօնները և յետ փախչում, իսկ մնացած երեք հայը, ֆուրգօններն իրանց առջև պատնէշ ունենալով, երկու ժամվայ ընթացքում կռում են թուրք խուժանի դէմ մինչև վերջին փամփուշտը: Իսկոյն իմաց են տալիս այ. գաւառապետ Բէուտին, որը միջադէպի վայրն է ուղարկում թուրք պրիստա Բահրամ-բէկ Ջևանշիրին: Եթէ լրջութեամբ վերաբերվէին վերոյիշեալ ցաւալի դէպքին, յարձակվողների ետևից շուտափոյթ հետևէին, անշուշտ մօտակայ Կարակոյլու և Ջէվա թուրք գիտերում կը գտնէին վիրատրվածներ և սպանվածներ, որոնցով փաստօրէն ապացուցված կը լինէր յարձակող թուրքերի ուլքեր լինելը, որովհետև, ինչպէս մօլօկաններն են վկայում, ընդհարման ժամանակ թուրքերից սպանված են չորս հոգի և շատերը վիրատրված, որոնց, իհարկէ, թուրքերը հեռաւոր վայրեր կուղարկեն բժշկվելու և թաղելու՝ ոստիկանութեան աչքին չընկնելու համար: Պրիստա Բահրամ-բէկ Ջևանշիրը չէր կարող խիստ հետազօտութիւններ կատարել գիտում, որ, ինչպէս տեղիս ամբողջ ազգաբնակութիւնն է վկայում, ինքը շատ է նպաստել այդ 1500 հոգուց բաղկացած օրդուի հաւաքվելուն Ջէվայի մէջ...: Այդտեղ թուրքերը սպանում են երեք հայի, 11 ձի, 2 եգ, փշրում են երեք ֆուրգօն և մօլօկաններից խլում են ութ հատ բերդանի հրացան: Պրիստա Բահրամ-բէկին ուղարկելով յարձակման տեղը (գտնվում է Կարաչինարից 5 վերստաչափ հեռու), ինքը՝ գաւառապետ Բէուտը վերցնում է բոլոր կօզակներին, այդպիսով Կարաչինարն անպաշտպան թողնելով, և դիմում է դէպի Մուսի սարերը, միջադէպի տեղին բոլորովին հակառակ կողմը, – թուրքերի կորած ոչխարները որոնելու»¹⁴:

Համաձայն նույն օրվա՝ Ս. Տեր-Ավետիքյանի թղթակցութեան՝ «...Ղարաչինար (Աղջաղալա) գիտի շրջականերում, վերջինիս պաշարման ժամանակ, սպանվել են երեք սարովեցի հայեր: Նրանք ունեցել են նաև չորրորդ ընկեր, ունեցել են զէնքեր, գնալիս են եղել օգնութեան պաշարված Ղարաչինարին: Շրջապատել են նրանց մօտ չորս հարիւր հոգի սպառազինված թուրքեր. սկսվել է մի անհասար կռիւ, որը տևել է երեք ժամ: Սարովեցի քաջերը կռւել են առիւծի նման, կռւել են մինչև վերջի փամփուշտը ու ընկել ռազմի դաշտում փառաւոր մահով. չորրորդ ընկերը ազատվել է: Հայ քաջերի արիւնը էժան չէ նստել թշնամուն, չորս հարիւրով չորսի դէմ կռուող տմարդի թշնամուն: Ղարաչինարը պաշարող թուրքերը մեծ մասամբ եղել են Գանձակի գաւառի III-րդ գաւառամասից: Պաշարումն այժմս վերացված է: Արել են այդ պաշարողները, համոզվելով, որ Ղարաչինարի ու շրջակայ հայաբնակ գիտերի հայերը հեշտ կուլ գնացողներ չեն, որ ինքնապաշտպանութեան համար վճռաբար պատրաստ են ամեն րօպէ»¹⁵:

1905 թ. հոկտեմբերի 9-ին հաղորդում են. «Թուրքերը յետ քաշվեցին: Ղարաչինարը (Աղջղալալայ) ազատվեց թուրք հրոսակախմբերի յարձակումներից, որ սպասվում էր սրանից ընդամենը մի քանի օր առաջ, վայրկեանից վայրկեան...: Ամեն տեղ այժմ ասում են, որ խաղաղ է Ղարաչինարի շուրջը. թուրքերը յետ են քաշվել, էլ ոչինչ չը կայ և այլն և այլն»¹⁶:

Պարզվում է, սակայն, որ թուրքերը միայն ժամանակավորապես էին հետ քաշվել, և ահա հոկտեմբերի 18-ին նրանք կրկին հարձակվում են. «Յարձակումն այնքան կատաղի էր, որ թուրքերին դիմադրող կազակները յետ նահանջեցին դէպի գիտ: Գիտն օգնութիւն է պահանջում իշխանութիւնից»¹⁷:

Այս անգամ գյուղը նյութական զգալի կորուստ է ունենում. «...թուրքերը կրկին յարձակվեցին և տարան Ղարաչինարից 102 գլուխ տաւար: Յետ խլելն անկարելի է լինում, չը նայած տակալի հրացանաձգութեան, մանաւանդ որ սաստիկ ձիւնախառն անձրևը խանգարում էր»¹⁸:

Վկայվել է, որ 1905 թ. «Հոկտեմբերի 19-ին Աղջաղալայից քշեցին 127 տաւար: Ապա քշեցին 70 տաւար և նորից 84 տաւար»¹⁹:

Նույն թվականի հոկտեմբերի 23-ին թրքաբնակ Դոզլար գյուղի մոտ սպանվում են ղարաչինարցիներ 35-ամյա Սարգիս Ղարալանը, 30-ամյա Դուխան Գզիրյանը, 25-ամյա Հովհաննես Մարինյանը, 20-ամյա Ֆրիդոն Բաղիյանը և 18-ամյա Ջավադ Շիրինյանը, իսկ 3 օր անց գյուղի մոտ՝ այգիներից մեկում, հափշտակում են Ղազար Հարությունյանի ձեռքի հրացանը և նրա 3 գոմէշները²⁰:

1906 թ. հունվարի 1-ին «Ջէվայի թուրքերը գիտից կրակ բացին անցորդ աղջաղալեցի հայերի վրա, որից առաջ եկաւ ընդհարում: Այդ ընդհարման ժամանակ հայերից սպանուեց մի 20 տարեկան երիտասարդ՝ Սիրգա Բաղմանեան անունով, իսկ թուրքերից սպանուեցին մի քանիսը: Այս դէպքը թուրքերը չը կարողանալով տանել, շրջականերից մեծ բազմութիւն հաւաքելով՝ յունվարի 4-ին, առաւօտեան ժամը 5-ին, մեծ ուժով յարձակուեցին Աղջաղալայի վրա, ուր տեղի ունեցաւ ամբողջ օրը տաք կռիւ: Յարձակումը վերջացաւ նրանով, որ թուրքերը բաւական սպանածներ տալով, սակայն միմիայն 4 դիակներ թողնելով, փախան: Այդ կռում հայերից սպանուեց Սարով գիտացի Սիքայէլ Ազիզեանը, 40 տարեկան և երեք հոգի էլ վիրատրուեցին»²¹:

Հունվարի 4-ի թուրքերի հարձակման մասին հայտնի են նաև այլ մանրամասնություններ: Այսպէս՝ Սարով գյուղի թուրք կալվածատեր Շամիլ բէկ Ջամիլինսկին «...ուրիշ բեգերի հետ մի քանի հարիւր զինւած թուրքերի գլուխ անցած, յունւարի 4-ին շրջապատում է Կարաչինար հայ գիտը (Գանձակի գաւառ), սպանում է մի հայի և երկուսին վիրատրում: Մակայն երբ դաշնակցութեան զինուորական խմբերն օգնութեան են գալիս պաշարածներին, թուրքերը յետ են նահանջում և գնում, դրագուններին զանգատում են կարաչինարցիներից: Գալիս են դրագունները իրենց թնդանօթներով և քիչ է մնում, որ Կարաչինարը ռմբակոծեն, սակայն տեղեկանալով թուրքերի նախայարձակ լինելու մասին, յետ են գնում»²²:

1906 թ. փետրվարի 3-ի թղթակցությունն էլ հայտնում է, որ «Ղարաչինարում թուրքերը գերի են վերցրել 2 հովիւ, իսկ տաւարը հայերը յետ են խլել»²³:

14 Մխիթար, Դրոթիւնը Ջևանշիրի գաւառում, «Մշակ», 1905, № 206, 9 հոկտ., էջ 3:
15 «Մշակ», 1905, № 209, 13 հոկտեմբերի, էջ 1:
16 Յովսափեանց Ա., Տեղեկութիւններ գաւառից, «Մշակ», 1905, № 209, 13 հոկտեմբերի, էջ 3:

17 Հայոց ջարդը, թղթակցութիւն, «Նոր-Դար», 1905, № 36, 30 հոկտ., էջ 1:
18 Յովսափեանց Ա., Տեղեկութիւններ գաւառից, «Մշակ», 1905, № 221, 8 նոյեմբերի, էջ 1:
19 Ա.Դ., նշվ. աշխ., էջ 328:
20 Նույն տեղում:
21 Նշվ. աշխ., էջ 328-329:
22 Մխիթար, Չարագործութիւնը չէ պատժում, «Յառաջ», 1906, № 16, 3 փետրարի, էջ 1: 1906 թ. հունվարի 1-ի և 4-ի հարձակումների մասին նաև նշվել է. «...թուրքերը յարձակում գործեցին Կարաչինար գիտի վրա, բայց յետ մղվեցին: Առաջին յարձակման ժամանակ սպանվեց 1 հայ և երկուսը վիրատրվեցին, իսկ 2-րդ յարձակման ժամանակ սպանվեց 1 հայ և վիրատրվեցին 3 հոգի: Ասում են, որ յարձակվողների հետ եղել են երկու կաթով բէկեր, որոնց թում գտնում էին կալուածատէր Ջամիլինսկին և 3-րդ մասի պրիստար» (Ե. Ա., Տեղեկութիւններ գաւառից, «Մշակ», 1906, № 20, 28 յունվարի, էջ 1):
23 «Յառաջ», Թիֆլիս, 1906, № 18, 5 փետրարի, էջ 3:

Նույն թվականի «Փետրուարի 13-ին Աղջադալայի վրա մի նոր յարձակում տեղի ունեցավ Մոլլա-Վալադ գիւղի կողմից, բայց թուրքերը յետ փախսան՝ ուժեղ դիմադրութեան հանդիպելով. հայերը զայրացած այդքան յանդգնութիւնից հետամուտ եղան նրանց մինչև գիւղը. այդ տեսնելով թուրքերը վերցրին իրենց ընտանիքները և փախսան, որից յետոյ նրանց տներն աւերուեցին»²⁴:

1906 թ. հունիսի վերջերին «...մի օֆիցեր 11 կօզակներով Ղարաչինար գիւղի ճանապարհին, երբ հասնում են Դօզուլար թուրքաց գիւղի շրջանը (այս վայրում անցեալ տարի կոտորեցին 5 դարաչինարցի հայերի), նրանց պատահում են մօտ 40 հոգի թուրքեր, զինված մօսինի ու մաուզերի հրացաններով, սկսում են կրակել զօրքի վրա: Վերջինս երկար ժամանակ անկարող լինելով կռուլ անհաւասար ոյժի հետ, դիրքեր մտնելով հալածում է նրանց, թուրքերից մէկին ձիաքափ անելով, իսկ կօզակներից մէկը վերք ստանալով: Օֆիցերը երբ հասնում է Ղարաչինար, իր հետ վերցնում է մի հարիւրեակ կօզակներ, գիւղիս այդ վայրում գտնվող թուրք Չայլիլար, Մոլլա-աւազլու և Դօզլար գիւղացիներին խստիւ պատժում»²⁵:

1911 թ. հիշվում է հոր սպանությունը (ձիու պատճառով) 18-ամյա Մադաթ Ծատուրյանի կողմից: Ջրկվելով բոլոր իրավունքներից՝ նոյեմբերի 9-ին նա դատապարտվում է 7 տարվա ազատազրկման²⁶:

1914 թ. մայիսի սկզբին սպանվում է տանուտեր Շ. Աղաջանյանը²⁷:

1916 թ. սեպտեմբերի 10-ին Ղարաչինարում, իսկ հոկտեմբերի 1-ին Աննենոյում բացվում են Կովկասյան ճակատի գաղթականների պարենավորման բաժնի պահեստներ (Ղարաչինարի պահեստապետն էր Միքայել Հովսեփյան Մելիք-Բեգլարյանը, Աննենոյի՝ Սերգեյ Տեր-Մակարյանը)²⁸:

Նույն թվականի դրությամբ գաղթականների պարենավորման Ղարաչինարի մասնաճյուղը հոգում էր 1014 գաղթականների պարենի հարցը. նրանք տեղավորված էին Մանաշեն, Բուզլուխ, Վերին Աղջաքենդ, Գյուլիստան, Ներքին Աղջաքենդ, Խրիսափոր, Ենգիքենդ, Գաղթուտ, Ղարաչինար, Պարիս և Էրքեջ գյուղերում²⁹:

1916 թ. «Հ. Կենդ. Կոմիտեանը որոշել է պարենատրաման նոր պահեստներ բանալ Գանձակի նահանգի Ղարաչինար և Աննենո գիւղերում»³⁰:

Նոյեմբերի 11-ին պետական միջոցներով պահվող փախստականների պարենավորման բաժանմունքից մի վագոն ցորեն և 63 պ. 30 ֆ. շաքարավազ³¹, 1917 թ. գարնանը՝ մի վագոն ալյուր³² և 25 պ. 10 ֆ. սիսեռ է ուղարկվում Ղարաչինար³³:

1917 թ. հուլիսի 13-ին Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությանը կից Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Արմենակ Բոլյանը գրում է. «Վանի Հայոց ձորի Զերծ գիւղից գաղթած և շրջանիս Ղարաչինար գիւղում տեղատրամած գաղթականներից մօտ 40 տղամարդ, որոնք անցեալ ամառ դարձել էին երկիր և բաւականաչափ ցանքսեր արել, այժմ զրկւած են գնալու և հնձելու իրենց արտերը, որոնք այս տարի անչափ առատ են: Մի քանի նամակ անձամբ են կատարել, նրանց համագիւղացի-

ները շարունակ գրում են, որ շտապեն, հնձի ժամանակն անցնում է, իսկ այս քշառներին արգելում է... որովհետև համաձայն վերջին կարգադրութեան՝ երկաթուղային վարչութիւնը վագոն չի տալիս և ոչ էլ ժամանակ: Միակ ելքը գտնում են յանձնել իրենց արտերի հունձը մի որևէ հիմնարկութեան նոյնիսկ կիսով, միայն թէ դատարկ չնստեն իրենց արիւն-քրտինքի արդիւնքից: Արդ, դիմում են մեծարգոյ կոմիտէիդ և խորհուրդ հարցնում. հնարատր չէ յիրաւի նրանց մտքի իրագործումը»³⁴:

Նոր և առավել սոսկալի փորձության Ղարաչինարը ենթարկվում է 1920 թ. մարտի 25-27-ին³⁵: Գյուղն ամբողջությամբ ավերվում է թաթարների ձեռքով, իսկ բնակիչները ոչնչացումից փրկվում են միայն փախուստի շնորհիվ³⁶:

Շուրջ յոթ տասնամյակների հարաբերական խաղաղ կացութիւնը բեկվում է Արցախյան ազատամարտի օրերին, որը, սակայն, ողջ շրջանի հետ մեկտեղ ողբերգական ավարտ է ունենում նաև Ղարաչինարի համար: Հենց սկզբից օրավոր աճող լարվածությունն է վերջո 1992 թ. հունիսի 13-ին ավարտվում է աղբբեջանցի ելուզակների կողմից գյուղի գրավմամբ:

Բնակչություն. հայտնի է, որ գյուղի բնակիչների նախնիները բնիկներ են³⁷:

Համաձայն 1831-1832 թթ. կազմված շնչագրական տեղեկագրի՝ գյուղի բնակիչներն էին 50-ամյա Ստեփան Հարությունյան Սահակյանը, կինը՝ 27-ամյա Մարիամը, որդիները՝ 7-ամյա Գալուստը, 4-ամյա Հակոբը և 2-ամյա Ռուստամը; 26-ամյա Թովմա Ավագյան Օհանյանը, կինը՝ 21-ամյա Մարիամը, 3-ամյա որդին՝ Չատին, 1-ամյա դուստրը՝ Սոնան, Թովմայի եղբայրը՝ 20-ամյա Ռուստամը; 36-ամյա Մարգիս Խաչատուրյան Սիմեոնյանը, կինը՝ 27-ամյա Մարիին, որդիները՝ 8-ամյա Գաբրիելը, 6-ամյա Սիմեոնը, Սարգսի եղբայր Հարությունի այրին՝ 30-ամյա Մարգարիտը, նրանց որդիները՝ 7-ամյա Ավանեսը, 3-ամյա Մովսեսը, և դուստրերը՝ 10-ամյա Հուրիփաշան և 8-ամյա Հերիքնազը, 33-ամյա Ավագ Հայրապետյան Շահնազարյանը, կինը՝ 21-ամյա Մարիամը, 3-ամյա որդին՝ Հարությունը; 50-ամյա Ավագ Աստվածատուրյան Սկրտչյանը, կինը՝ 39-ամյա Հուրիփաշան, որդիները՝ 21-ամյա Ալլահվերդին, 12-ամյա Մեհրաբը, 7-ամյա Ավանեսը, 1-ամյա Ռուստամը, Ալլահվերդիի կինը՝ 15-ամյա Հուրիփաշան; 40-ամյա Մարտիրոս Հարությունյան Ավանեսյանը, կինը՝ 34-ամյա Ջավահիրը, որդիները՝ 13-ամյա Արզումանը, 4-ամյա Հարությունը և 2-ամյա դուստրը՝ Մագթաղը; 48-ամյա Հովսեփ Օհանյան Բաղյանը, կինը՝ 40-ամյա Եղիսաբեթը, 4-ամյա որդին՝ Պողոսը, 2-ամյա դուստրը՝ Մարիամը; 50-ամյա Ղահրաման Բալասանյան Պողոսյանը, կինը՝ 44-ամյա Սահարը, որդիները՝ 20-ամյա Մարգիսը, 12-ամյա Հարությունը, 8-ամյա Բալան, Սարգսի կինը՝ 16-ամյա Մարիամը, Գրիգորի եղբայր Օհանի այրին՝ 24-ամյա Անան, և 7-ամյա որդին՝ Գրիգորն ու 4-ամյա դուստրը՝ Գյոզալը; Պետրոս Բաղյանի այրին՝ 43-ամյա Անան, որդիները՝ 20-ամյա Հովսեփը, 16-ամյա Հարությունը, Հովսեփի կինը՝ 15-ամյա Եղիսաբեթը; Օհան Բեժանյանի 40-ամյա այրին՝ Հերիքնազը, որդիները՝ 18-ամյա Բաբայը, 12-ամյա Դոթանը, 8-ամյա Ասկերը, 5-ամյա դուստրը՝ Գյոզալը, 32-ամյա Գրիգոր Սարգսյան Փանյանը, կինը՝ 21-ամյա Հուրիփաշան, դուստրը՝ 5-ամյա Մարիամը, Գրիգորի եղբայրները՝ 18-ամյա Բաբան և 12-ամյա Հովսե-

24 Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 328-329:

25 Սահակեան Ա., Թրքակցություն, «Մշակ», 1906, № 146, 7 յուլիսի, էջ 1:

26 «Կարաբաղ», 1911, № 1, 17 նոյեմբերի, էջ 4:

27 «Մշակ», 1914, № 103, 14 մայիսի, էջ 3:

28 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 554, ք. 1:

29 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 581, ք. 22 շրջ., 24, 25 շրջ.:

30 «Գաղափար», Թիֆլիս, 1916, № 85, 16 հոկտեմբերի, էջ 4:

31 «Համբարաբեր», 1916, № 47, 20 նոյեմբերի, էջ 1490-1491:

32 «Համբարաբեր», 1916, № 12, 26 մարտի, էջ 286:

33 «Համբարաբեր», 1917, № 16, 30 ապրիլի, էջ 390:

34 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 170, ք. 36: Արմատներով վանեցի էր Նինա Խաչատուրի Նասիբյանը (ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 62, ք. 19):

35 Վարդանեան Յ., «Աղբբեջան կոչեցեալ» հանրապետութեան մէջ, «Մշակ», 1920, № 39, 16 յունիսի, էջ 4:

36 Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 436.

37 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 244:

փը; 33-ամյա Ռուստամ Գրիգորյան Փանյանցը, կինը՝ Թառան, դուստրերը՝ 5-ամյա Մարիամը, 3-ամյա Հերիքնազը, Ռուստամի եղբայրները՝ 20-ամյա Պողոսը, 14-ամյա Պետրոսը, Պողոսի կինը՝ 15-ամյա Մարիամը; 50-ամյա Ստեփան Գրիգորյան Աղասարյանցը, կինը՝ 44-ամյա Սառան, որդիները՝ 23-ամյա Սահակը, 18-ամյա Հակոբը, 10-ամյա Հովսեփը, դուստրերը՝ 15-ամյա Փարիզադը, 12-ամյա Սոնան, Սահակի կինը՝ 16-ամյա Շամամը; 39-ամյա Ղուլի Վարդանյան Օհանյանցը, կինը՝ 27-ամյա Մարիամը, դուստրերը՝ 9-ամյա Գյուլին և 5-ամյա Սոնան; Պողոս Պաղլուվանյանի 51-ամյա այրին՝ Փարին, 22-ամյա որդին՝ Աբասը, 17-ամյա դուստրը՝ Անան; 45-ամյա Պետրոս Սարգսյան Խաչատուրյանցը, կինը՝ 30-ամյա Զանին, որդիները՝ 7-ամյա Ներսեսը, 4-ամյա Հովսեփը, դուստրերը՝ 3-ամյա Գյոզալը, 1-ամյա Սոնան, Պետրոսի եղբայրները՝ 23-ամյա Խաչատուրը, 15-ամյա Սարգիսը, Խաչատուրի կինը՝ 16-ամյա Վառին; Հարություն Ժամհարյանցի 60-ամյա այրին՝ Մարիամը, որդիները՝ 42-ամյա Սիրզան, 34-ամյա Գաբրիելը, 25-ամյա Սարգիսը, Գաբրիելի կինը՝ 21-ամյա Նազուն, և որդին՝ 1-ամյա Ավանեսը, Սարգսի կինը՝ 15-ամյա Ռեհանը; 33-ամյա Ավանես Գևորգյան Բախշյանցը, կինը՝ 25-ամյա Սառան, որդիները՝ 6-ամյա Օհանը, 4-ամյա Ռուստամը, Ավանեսի եղբայրները՝ 25-ամյա Արզումանը, 12-ամյա Հուսեինը, Արզումանի կինը՝ 17-ամյա Սառան; 30-ամյա Ավանես Հարությունյան Հակոբյանցը, կինը՝ 23-ամյա Խաթունը, 3-ամյա որդին՝ Ռուստամը; 30-ամյա Ավանես Պետրոսյան Նիկողոսյանցը, կինը՝ 23-ամյա Խանփարին, 8-ամյա որդին՝ Ավետիսը, Աբրահամ Գրիգորյանի այրին՝ 50-ամյա Վառին, որդիները՝ 25-ամյա Հարությունը, 23-ամյա Ավանեսը, 12-ամյա Գրիգորը, 8-ամյա Սկրտիչը, Հարությունի կինը՝ 20-ամյա Մարիամը և Ավանեսի կինը՝ 18-ամյա Զավահիրը; Օհան Մխիթարյանի այրին՝ 52-ամյա Զավահիրը, որդիները՝ 30-ամյա Հովսեփը, 26-ամյա Ռուստամը, Հովսեփի կինը՝ 23-ամյա Եղիսաբեթը, 2-ամյա դուստրը՝ Շամամը, Ռուստամի կինը՝ 19-ամյա Անան; Պողոս Ավետյանի այրին՝ 45-ամյա Ռեհանը, որդին՝ 14-ամյա Գրիգորը; 30-ամյա Վարդան Հարությունյան Աղասարյանցը, կինը՝ 24-ամյա Մարթան և 6-ամյա դուստրը՝ Սոնան; 60-ամյա Ապրես Հարությունյան Բեգլարյանցը, կինը՝ 44-ամյա Նախշունը, որդիները՝ 20-ամյա Բեգլարը, 16-ամյա Հովսեփը, Բեգլարի կինը՝ 17-ամյա Հուրիփաշան, 32-ամյա Սարգիս Պետրոսյան Չալյանցը, կինը՝ 25-ամյա Խաթունը, 5-ամյա դուստրը՝ Հերիքնազը; 20-ամյա Մովսես Օհանյան Բա..., կինը՝ 17-ամյա Անան; Ավանես Սկրտունյանի այրին՝ 49-ամյա Մարգարիտը, որդիները՝ 26-ամյա Ավետիքը, 18-ամյա Գրիգորը, 12-ամյա դուստրը՝ Հերիքնազը և Ավետիքի կինը՝ 26-ամյա Մալեքը; Օհան Օդունյանի այրին՝ 65-ամյա Հերիքնազը, որդիները՝ 30-ամյա Խաչատուրը, 17-ամյա Ռուստամը, Խաչատուրի կինը՝ 19-ամյա Մարիամը; Օհան Գաբրիելյանի այրին՝ 35-ամյա Մալբին և 16-ամյա որդին՝ Բաբան; Սահակ Խանլարյանի այրին՝ 40-ամյա Հուրիփաշան, որդիները՝ 18-ամյա Ապրեսը, 14-ամյա Պետրոսը, 8-ամյա Հարությունը, դուստրերը՝ 6-ամյա Մարիամը, 4-ամյա Սոնան; 30-ամյա Գաբրիել Գրիգորյան Հարությունյանցը, կինը՝ 27-ամյա Նանան, որդիները՝ 10-ամյա Յավրին, 6-ամյա Գրիգորը, Գաբրիելի եղբայրը՝ 24-ամյա Հակոբը, կինը՝ 19-ամյա Խանումը, որդին՝ 2-ամյա Ռուստամը; 25-ամյա Գևորգ Պետրոսյան Հովսեփյանցը, կինը՝ 18-ամյա Խաթան, Գևորգի եղբայրները՝ 20-ամյա Ավանեսը, 17-ամյա Հովսեփը, 15-ամյա Բաղին; 27-ամյա Կարապետ Ավանեսյան Խաչատուրյանցը, կինը՝ 20-ամյա Սոնան, և 4-ամյա դուստրը՝ Զավահիրը; 28-ամյա Ավանես Հարությունյան Մխիթարյանցը, կինը՝ 22-ամյա Սառան, որդիները՝ 3-ամյա Հարությունը, 1-

ամյա Ռուստամը, Ավանեսի եղբայրները՝ 15-ամյա Կարապետը և 12-ամյա Օհանը; 35-ամյա Ասրի Եսայան Սարգսյանցը, կինը՝ 31-ամյա Մարիամը, որդիները՝ 7-ամյա Հակոբը և 2-ամյա Հարությունը; 30-ամյա Ավանես Հակոբյան Խաչատուրյանցը, կինը՝ 18-ամյա Եղիսաբեթը; 50-ամյա Մովսես Մուրավյան Ամիրխանյանցը, կինը՝ 44-ամյա Հերիքնազը, 25-ամյա որդին՝ Մեհրաբը, կինը՝ 18-ամյա Մարիամը, և 1-ամյա դուստրը՝ Բեկզադը; 33-ամյա Քոչար Բալասյան Մելքունյանցը, կինը՝ 22-ամյա Սահարնազը, 3-ամյա որդին՝ Գաբրիելը; 40-ամյա Խաչատուր Սարգսյան Բաբայանցը, կինը՝ 34-ամյա Մագթադը, Խաչատուրի եղբայրը՝ 25-ամյա Ամիրը, կինը՝ 19-ամյա Հեղնարը, և 1-ամյա դուստրը՝ Մարիամը; 50-ամյա Հարություն Դավթյան Մխիթարյանցը, կինը՝ 43-ամյա Մարիամը, դուստրերը՝ 10-ամյա Հուրիփաշան և 8-ամյա Հերիքնազը; 35-ամյա Մարութ Ծատուրյան Հակոբյանցը, կինը՝ 27-ամյա Մարիամը, որդիները՝ 8-ամյա Ստեփանը և 4-ամյա Պետրոսը; 20-ամյա Մեհրաբ Աբրահամյան Հակոբյանցը, կինը՝ Եղիսաբեթը, և եղբայրը՝ 15-ամյա Գրիգորը; 34-ամյա Ավանես Հակոբյան Խաչատուրյանցը, կինը՝ 21-ամյա Թագազյուլը, 8-ամյա որդին՝ Դավիթը, 1-ամյա դուստրը՝ Անան, Ավանեսի եղբայրը՝ 26-ամյա Ավանեսը, կինը՝ 20-ամյա Վարթին; 50-ամյա Բաղդասար Ծատուրյան Խաչատուրյանցը, կինը՝ 44-ամյա Մարիամը, 8-ամյա դուստրը՝ Վարթին, Բաղդասարի եղբայրը՝ Ավանեսը, կինը՝ Հերիքնազը, 9-ամյա դուստրը՝ Զավահիրը; 41-ամյա Քամալ Հակոբյան Քամալյանցը, կինը՝ 39-ամյա Անան, 8-ամյա որդին՝ Մեսրոպը, 4-ամյա դուստրը՝ Վարթին; 35-ամյա Սկրտիչ Դանիելյան Չալյանցը, կինը՝ 28-ամյա Եղիսաբեթը, 7-ամյա որդին՝ Սիրզան, 5-ամյա դուստրը՝ Զավահիրը, Սիրտչի եղբայրը՝ Ստեփանը, կինը՝ 21-ամյա Անան, և 3-ամյա դուստրը՝ Մարգարիտը; Առաքել Անտոնյանցի այրին՝ 46-ամյա Մարիամը, 25-ամյա որդին՝ Խաչատուրը, կինը՝ 21-ամյա Հերիքնազը, 1-ամյա որդին՝ Սարգիսը, և 3-ամյա դուստրը՝ Մարիամը; 60-ամյա Հակոբ Ավանեսյան Ջիլավյանցը, կինը՝ 52-ամյա Հուրիփաշան, որդիները՝ 23-ամյա Ավանեսը, 15-ամյա Ստեփանը, և Ավանեսի կինը՝ 18-ամյա Թագուհին; 53-ամյա Սկրտիչ Օհանյան Ջիլավյանցը, կինը՝ 39-ամյա Մարիամը, որդիները՝ 20-ամյա Հարությունը, 9-ամյա Ռուստամը, դուստրերը՝ 11-ամյա Թագուհին, 7-ամյա Հնագանդը, Հարությունի կինը՝ 19-ամյա Սահարբազը; 23-ամյա Վերդի Մարտիրոսյան Հարությունյանցը, կինը՝ 18-ամյա Անթառամը, 1-ամյա դուստրը՝ Ազիզը; 40-ամյա Մարտիրոս Ծատուրյան Հարությունյանցը, կինը՝ 34-ամյա Սառան, 8-ամյա որդին՝ Գալուստը, դուստրերը՝ 11-ամյա Մարիամը, 5-ամյա Հերիքնազը; 44-ամյա Հարություն Ապրեսյան Ալլահվերդյանցը, կինը՝ 37-ամյա Մարիամը, որդիները՝ 8-ամյա Ալլահվերդին և 5-ամյա Ռուստամը; 26-ամյա Ավանես Դանիելյան Ղազարյանցը, կինը՝ 24-ամյա Ռեհանը, 5-ամյա որդին՝ Ռուստամը; 64-ամյա Սաղաթել Եղյան Աղյանցը, կինը՝ 55-ամյա Խաթան, որդիները՝ 26-ամյա Ավանեսը, 23-ամյա Հարությունը, Ավանեսի կինը՝ 16-ամյա Մարիամը, Հարությունի կինը՝ 14-ամյա Փարիզան; 45-ամյա Մեհրաբ Ալլահվերդյան Ոսկանյանցը, կինը՝ 36-ամյա Նանանոզը, որդիները՝ 13-ամյա Մովսեսը, 8-ամյա Սողոմոնը, 5-ամյա դուստրը՝ Գոզալը, Մեհրաբի եղբայրը՝ 30-ամյա Աղաջանը, կինը՝ 23-ամյա Եղիսաբեթը, 5-ամյա որդին՝ Ոսկանը; 34-ամյա Սահակ Ղազարյան Հարությունյանցը, կինը՝ 28-ամյա Սոնան, որդիները՝ 11-ամյա Հակոբը, 4-ամյա Պողոսը, և 6-ամյա դուստրը՝ Մարգարիտը; 30-ամյա Ավանես Ասրյան Ծատուրյանցը, կինը՝ 22-ամյա Մարիամը, որդիները՝ 3-ամյա Սարգիսը, 1-ամյա Սկրտիչը; 29-ամյա Ավանես Հակոբյան Խաչատուրյանցը, կինը՝ 21-ամյա Եղսամանը; 40-ամյա Եսայի Պետ-

րոսյան Խաչատուրյանցը, կինը՝ 31-ամյա Ռեհանը, որդիները՝ 11-ամյա Աբգարը, 8-ամյա Ասկերը, և 3-ամյա դուստրը՝ Մարիամը; 50-ամյա Պետրոս Վարդանյան Ջիլավյանցը, կինը՝ 39-ամյա Եղիսաբեթը, որդիները՝ 23-ամյա Ավագը, 13-ամյա Մեհրաբը, 13-ամյա դուստրը՝ Թագուհին, Ավագի կինը՝ 18-ամյա Հերիքնազը; 50-ամյա Շահդինար Գրիգորյան Ավանեսյանցը, կինը՝ 46-ամյա Թամամը, որդիները՝ 25-ամյա Սարգիսը, 20-ամյա Ավանեսը, Սարգսի կինը՝ 22-ամյա Ռեհանը, 1-ամյա դուստրը՝ Մարիամը, և Ավանեսի կինը՝ 15-ամյա Ռեհանը; 44-ամյա Բակի Գրիգորյան Ավանեսյանցը, կինը՝ 35-ամյա Հերիքնազը, 14-ամյա որդին՝ Բարբան, Բակիի եղբայրը՝ 39-ամյա Գալուստը, կինը՝ 30-ամյա Սառան, որդիները՝ 12-ամյա Գրիգորը, 5-ամյա Սկրտիչը, և 8-ամյա դուստրը՝ Հուրիփաշան; 40-ամյա Հարություն Պետրոսյան Օհանյանցը, կինը՝ 34-ամյա Ռեհանը, 5-ամյա որդին՝ Սարգիսը, և 2-ամյա դուստրը՝ Հերիքնազը; 32-ամյա Վերդի Սարգսյան Նազարյանցը, կինը՝ 25-ամյա Մարիամը, 7-ամյա որդին՝ Հովակիմը, դուստրերը՝ 5-ամյա Եղիսաբեթը, 2-ամյա Հերիքնազը; Պողոս Սարգսյանի այրին՝ 50-ամյա Աննան, 25-ամյա որդին՝ Հարությունը, կինը՝ Մագթադը; Պետրոս Սարգսյանի այրին՝ 54-ամյա Մարիամը, որդիները՝ 35-ամյա Ռուստամը, 20-ամյա Սիմեոնը, Ռուստամի կինը՝ 30-ամյա Ռեհանը, 3-ամյա որդին՝ Գրիգորը; 40-ամյա Մաթոս Աղաջանյան Մարտիրոսյանցը, կինը՝ 37-ամյա Վարին, 9-ամյա որդին՝ Հակոբը, դուստրերը՝ 7-ամյա Մարիամը, 3-ամյա Հուրիփաշան; 41-ամյա Գրիգոր Աբրահամյան Դիվանյանցը, կինը՝ 36-ամյա Մարիամը, որդիները՝ 15-ամյա Հարությունը, 9-ամյա Ավանեսը, 50-ամյա Առաքել ...ամյան Սարգսյանցը, կինը՝ 46-ամյա Եղիսաբեթը, 5-ամյա որդին՝ Սկրտուհը, դուստրերը՝ 10-ամյա Հերիքնազը, 7-ամյա Սառան; 32-ամյա Ստեփան Առաքելյան Մխիթարյանցը, կինը՝ 21-ամյա Վարթին, և 3-ամյա դուստրը՝ Մարիամը; 30-ամյա Հարություն Մնացականյան Հարությունյանցը, կինը՝ 25-ամյա Սոնան, Հարությունի եղբայրը՝ 26-ամյա Ալեքսանդրը, կինը՝ 18-ամյա Սառան; 37-ամյա Սարգիս Հայրապետյան Ապրեսյանցը, կինը՝ 28-ամյա Մարմարը, որդիները՝ 10-ամյա Ղազարը, 6-ամյա Ապրեսը, Սարգսի եղբայրը՝ 23-ամյա Կիրելյանը, կինը՝ Մագթադը; 26-ամյա Բաղդասար Խաչատուրյան Հակոբյանցը, կինը՝ 18-ամյա Շուրին; Հարություն Չարիխյանի այրին՝ 47-ամյա Սոնան, 24-ամյա որդին՝ Էդգարը; 55-ամյա Խաչատուր Հարությունյան Մարկոսյանցը, կինը՝ 49-ամյա Հուրիփաշան, 20-ամյա որդին՝ Հարությունը, կինը՝ 18-ամյա Մարիամը, Խաչատուրի եղբայրները՝ 40-ամյա Աբրահամը, 19-ամյա Դանիելը, Աբրահամի կինը՝ 31-ամյա Աննան, որդին՝ 8-ամյա Սկրտիչը, 6-ամյա դուստրը՝ Աննան; 70-ամյա Հարություն Ղալայան Սարգսյանցը, կինը՝ 58-ամյա Մարիամը, 40-ամյա որդին՝ Գրիգորը, կինը՝ 32-ամյա Հուրիփաշան, դուստրերը՝ 8-ամյա Հեղնարը, 5-ամյա Սառան, 3-ամյա Թագուհին; 53-ամյա Սարգիս Ղալայան Սարգսյանցը, որդիները՝ 18-ամյա Ստեփանը, 1-ամյա Պետրոսը; 48-ամյա Ղազի Սարգսյան Ղազարյանցը, կինը՝ 40-ամյա Հուրիփաշան, 19-ամյա որդին՝ Սարգիսը; 37-ամյա Դանիել Միքայելյան Մարկոսյանցը, կինը՝ 28-ամյա Հեղնարը, որդիները՝ 10-ամյա Հարությունը, 8-ամյա Ավանեսը; 31-ամյա Աբգար Ստեփանյան Սարգսյանցը; կինը՝ 22-ամյա Ջավահիրը, 3-ամյա դուստրը՝ Մարիամը; 50-ամյա Պետրոս Սարգսյան Ֆարիատյանցը, կինը՝ 37-ամյա Սառան, 18-ամյա որդին՝ Հարությունը, դուստրերը՝ 9-ամյա Թամամը, 4-ամյա Սոլթին; 30-ամյա Ռուստամ Վալիխանյան Մարկոսյանցը, կինը՝ 21-ամյա Մարիամը, 2-ամյա որդին՝ Ղահրամանը; 50-ամյա Հարություն Հովսեփյան Բայթանյանցը, կինը՝ 38-ամյա Նազուն, 10-ամյա որդին՝ Նավասարդը; 30-ամյա Կոնստանդ

Ալլահվերդյան Հարությունյանցը, կինը՝ 21-ամյա Աննան, դուստրը՝ 3-ամյա Խանփարը, Կոնստանդի եղբայրը՝ 22-ամյա Մովսեսը³⁸:

Ղարաչինարը մելիքների շառավիղները ներկայացող կալվածատեր Բեգլարյանների և այլ ազնվականների նստավայրերից էր: 1874 թ. նրանցից հիշվում են 55-ամյա պրապորշչիկ Մոդոնոն բեկ Հովսեփյան Մելիք-Բեգլարյանցը (ազգականներն էին հանգուցյալ Փրիդոն բեկի որդին՝ Հովսեփը և հանգուցյալ Ղահրաման բեկի որդիներ Ռոստոմն ու Արշակը), 48-ամյա Բաղիր Եղիա-Բեկյան Մելիք-Ստեփանյանցը (նրա որդին էր Հովսեփ, եղբայրները՝ Մոդոնոն և Ստեփան բեկերը), 46-ամյա Ջհանգիր բեկ Հովհաննես-Բեկյան Մելիք-Ստեփանյանցը (որդին էր Խոսրով բեկը, ազգականները՝ քահանա Եփրեմ բեկն ու նրա որդիները՝ Սկրտիչը, Սարգիսը և Առուստամը), 36-ամյա Գրիգոր բեկ Մելիք-Շահնազարյան Շաֆերյանցը (որդիներն էին Նիկողայն ու Սարգիսը), 60-ամյա Շամիր բեկ Առուստամ-Բեկյան Մելիք-Շահնազար Շաֆերյանցը (որդիներն էին Հովհաննեսը, Մովսեսը, Երեմիան և Դավիթն ու վերջինիս որդին՝ Սիրգան), շտաբս-կապիտան 40-ամյա Բաստամ բեկ Հովսեփյան Չունարյանցը (ուներ 1 եղբայր՝ պորուչիկ Հովսեփը, որի որդիներն էին Ջավադը, Ղազարը, իսկ Իվանը թոռն էր՝ Ջավադի որդին)³⁹:

Հայտնի է, որ 1906 թ. օգոստոսին Սր. Էջմիածնի սինոդը թույլատրել էր 1895 թ.-ից Ղարաչինարում բնակվող և 1900 թ. դարաչինարցի Հերիք Պողոսյան Գրիգորյանցի հետ ամուսնացած Կազանի բնակիչ թաթար Շաքիր Գալիկին ընդունել «...ի ծոց Հայաստանեայց եկեղեցույ»⁴⁰:

1910 թ. գյուղում էին բնակվում Մելիք-Բեգլարյանցներն ու Մելիք-Հովսեփյանցները⁴¹:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ Ղարաչինարը ողջ գավառի գուտ հայաբնակ առավել մարդաշատ գյուղերից էր.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1832 ⁴²		219	187	406
1841 ⁴³	62	117	115	232
1851 ⁴⁴	70	159	115	274
1876 ⁴⁵				468
1886 ⁴⁶	124	397	368	765
1889 ⁴⁷		338	256	594
1893 ⁴⁸	126	308	272	580
1897 ⁴⁹				1114

38 ՀԱԳ, ֆ. 93, գ. 1, գ. 50, ք. 365 շրջ.-381:

39 ՀԱԳ, ֆ. 93, գ. 1, գ. 384, ք. 106-108: Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 85:

40 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 10328, ք. 1, 6 շրջ.: Ի դեպ, Շաքիր Գալիկի մահմեդական լինելու վերաբերյալ 1905 թ. մարտի 11-ին կազմված համախոսակամի ներքո ստորագրել է 101 ղարաչինարցի (նշվ. գործը, ք. 15):

41 **Ռհաթ**, նշվ. հոդվ., «Մշակ», 1910, № 9, 16 յունվարի, էջ 3:

42 ՀԱԳ, ֆ. 93, գ. 1, գ. 50, ք. 366-380:

43 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 305, ք. 47:

44 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 2596, ք. 92: Տե՛ս նաև Վալերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 209:

45 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 6775, ք. 115-116:

46 Свод..., с. 82-83. Բացի հայերից՝ նույն թվականին գյուղում բնակվում էին նաև 1 տուն ռուս (2 անձ, որից 1-ը՝ ար., 1-ը՝ իգ.) և 1 տուն թաթար (1 ար.):

47 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 8583, ք. 45-46: Ի դեպ, ըստ վիճակագրական մի տվյալի (**Քարխատարանց Մ.**, նշվ. աշխ., էջ 245)՝ նույն թվականին գյուղն ուներ 120 տուն՝ 805 (405-ը՝ ար., 400-ը՝ իգ.) բնակիչ:

48 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԺ, էջ 335: Այլ վկայության համաձայն (ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 8889, ք. 190)՝ նույն թվականին գյուղն ուներ 124 տուն բնակիչ:

49 Кавказский календарь на 1905 г., отд. III, Тифлис, 1904, с. 12.

1901 ⁵⁰		437	302	739
1902 ⁵¹		445	310	755
1905 ⁵²	141	465	326	791
1908 ⁵³		480	329	809
1909 ⁵⁴		498	334	832
1910 ⁵⁵		506	512	1018
1912 ⁵⁶	185	450	468	918
1914 ⁵⁷				935
1918 ⁵⁸	196	648	523	1171
1925 ⁵⁹	200			1200
1930-ական ⁶⁰	360			
1940 ⁶¹	497			1988
1970 ⁶²	438	940	1070	2010
1977 ⁶³	847			
1989 ⁶⁴	511			2141

Տեղաբնիկներից զատ՝ 1920 թ. դրությամբ Ղարաչինարում բնակվում էին նաև Մեծ եղեռնը վերապրած 52 տուն (203 շունչ) հայ գաղթականներ⁶⁵, որոնցից 28 տունը՝ Հայոց ձոր գավառի Քերծ, 7 տունը՝ Խոշաբի Հյուրթուկ, 2-ը՝ Քոել, 5-ը՝ Վան-Տոսպ գավառի Ավերակ, 5-ը՝ Լեզք և 5-ը՝ Գյալաշի Նարեկ գյուղերից էին⁶⁶:

Ըստ Հայկանուշ Իվանյանի՝ գյուղում հաստատվել էին Մեծ եղեռնը վերապրածներից Բարսեղ Մկրտչյանի, Մինասի, Մաքենիկ Գալստյանի, Գյոզալ Գալստյանի, Մանուկ Խաչատրյանի, Ահարոն Մելքոնյանի, Բեկգադե Բալասյանի ընտանիքները⁶⁷:

Ազգատոհմներից հայտնի էին՝ Տափրունց կամ Դարբնունց՝ Ավագյաններ (փոխադրվել են Վերիշենից), Հյուրունց, Դոշունց (Հակոբյաններ, Հարությունյաններ և Աբրահամյաններ), Դեպուռունց, Կյուլունց և Օսեփանց (Հովհաննիսյաններ), Դբաջանց, Զյուքյունց (Ներքիշենից) և Բուշունց (Մարտակերտի Առաջածոր գյուղից)՝ Գրիգորյաններ, Քաշ Ավաքանց՝ Ավագյաններ, Միրյուսանց, Չարգար-Եղունց, Տեր Եփրեմանց և Ջհանգիրանց, Բիրոյանք՝ Ստեփանյաններ, Չորան-Եղունք՝ Եղիազարյաններ, Ղավալ-Եղունք՝ Եղյաններ, Չյառունց՝ Նազարյաններ, Ջավունց, Կիզիրանց և Ներքին Կիզիրանց՝ Ավանյաններ (Ավան

Յուզբաշու հետնորդներն են), Սյուրմադուլունց և Դավադուլունց՝ Ղուլյաններ), Սևյաններ (Վերիշենից), Մեփյաններ (Գյուլիստանից), Մռավյաններ, Ղարիբյաններ, Ղևոնդյաններ (Բեգում Սարովից), Թրիլիսիից փոխադրված Բոյախունց (Եսայաններ) և Ուտուխմանք (Վարդանյաններ), Ղրգյոզանք՝ Սայանյաններ (Ներքիշենից)⁶⁸:

Արցախյան ազատամարտի ընթացքում դարաչինարցիներից զոհվել կամ անհետ կորել է 90 հոգի: Այսպես՝ Գարո Հովսեփի Ավանյան (1991 թ. ամռանը տան բակում՝ գրադից), Շուշանիկ Հունանի Իվանյան (1991 թ.՝ պատերազմական գործողությունների ժամանակ), Վոլոդյա Սամսոնի Հակոբյան, Շուշանիկ Սիմոնի Հարությունյան (գյուղում՝ պատերազմական գործողությունների ժամանակ), Յուրիկ Ենոքի Եսայան, Ռոզա Խաչատրյան և Սլավիկ Յուրիկի Խաչատրյան (1991 թ. հոկտեմբերի 3-ին՝ իրենց տների բակերում), Մանյա Միրզոյան (1991 թ. ձմռանը՝ գյուղում), Մերկես Մելիկ Նազարյան և Նորա Վերդիի Նազարյան (1991 թ. դեկտեմբերին՝ բակում աշխատելիս ռմբակոծությունից), Սլավիկ Ջավադի Ղազարյան (1992 թ. մարտին՝ խփված ուղղաթիռի մեջ), դպրոցականներ Հակոբ Արամի Ավագյան, Սվետա Ջավենի Եսայան (1992 թ. մայիսին գրադից՝ դպրոցի բակում), Գենո Լևոնի Թարխանյան, Ժորիկ Լաչինի Մարտիրոսյան (1992 թ. գարնանը՝ պատերազմական գործողությունների ժամանակ), Լենա Խաչատուրի Օգանեսյան (1992 թ. գարնանը գյուղում՝ արևոստանի պայթյունից), Աբրահամ Սահակի Աբրահամյան, Ջարուհի Ալեքսանյան, ծագումով մանաչիղցի Սիմոն Գրիգորի Ալեքսանյան, Մարուսյա Կարապետի Ալեքսանյան, Ռազմիկ Առուստամի Բալասյան, Փառանձեմ Բալասյան, Լուսիկ Գևորգյան, Արմենուհի Գրիգորի Հարությունյան, Հովհաննես Յաշայի Ղազարյան, Բորիկ Մուխանի Ղարիբյան, Արկադյա Հարությունի Նեսունց, Մարալ Առուստամի Վելիխանյան (սպանվել են 1992 թ. հունիսի 13-ին), Սաշոկ Դուխանի Ավանյան, Դավիթ Պավլիկի Ավանյան, Մանիկ Սաշոկի Ավանյան, Էդիկ Սաշոկի Ավանյան, Ժորիկ Լևոնի Բաղմանյան, Ժուլետա Իսակի Բաղմանյան, Յուլյա Եփրեմի Հովսեփյան (սպանվել են 1992 թ. հունիսի 13-ին մեքենայի մեջ), Ժորիկ Ասլանի Հովսեփյան (1992 թ. հունիսի 13-ին՝ ավիառմբակոծությունից), Վլադիմիր (Լենո) Հովսեփյան (1992 թ. հունիսի 13-ին. տան բակում դիմադրություն ցույց տալիս հասցրել է ոչնչացնել մի քանի հոգու), Գարեգին Փեղոյի Աղաջանյան (1992 թ. հունիսի 13-ին՝ գյուղում), Էդիկ Ապրեսյան (1992 թ. հունիսի 13-ին գնացել է դիրքեր և անհետ կորել), Դոնարա Եփրեմի Աբրահամյան, Ժորիկ Արշակի Գրիգորյան (անկման օրը մնացել է Ներքիշենում), Անահիտ Առուստամյան, Հայկանուշ Ղուլյան, Նոյեմբար Ղևոնդյան, Բորիկ Ջավալի Ստեփանյան (մնացել են մահանջի ճանապարհին), Գալյա Տիմոֆեյի Աբրահամյան, Ջինիկ Լևոնի Աբրահամյան (մահացել են գաղթի ճանապարհին), Սոնա Բուշունց (մնացել է Գյուլիստանում), Շամո Հակոբի Հարությունյան (Գյուլիստանում՝ պատերազմական գործողությունների ժամանակ), Մեդրակ Վերիլյան, Վերզուշ (Գյուլիստանում՝ 1992 թ. հունիսի 14-ին), Սոնա Քեսիի Դանիելյան (սպանվել է Գյուլիստանում՝ գաղթի ժամանակ), Մինաս Միքայելի Գևորգյան (ճակատագիրն անհայտ է), Էդիկ Մարգարի Ոսկանյան (մահացել է պատանդության մեջ), Արուսյակ Մաքիի Աղաջանյան, Հայկո Խալափի Ապրեսյան, Մանյա Ավագյան, Աննա Բալասյան, Ժորիկ Յաշայի Բաղյան, Բորիս (Գարեգին) Բուշունց, Մուրադ Իսակի Բուշունց, Ջարմիկ Թալիշի Գրիգորյան, Թամարա Գրիգորյան, Բորիկ Ստեփանի Գրիգորյան, Շուշի Եղիազարյան, Ֆենյա Իսակի Ե-

50 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 241-242: Տե՛ս նաև Վառնապետ հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 409:

51 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, ք. 118-119:

52 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, ք. 140-141: Տե՛ս նաև Ա.Ղօ, Հայ-թուրքական ..., էջ 325, սակայն ըստ մատաղատների՝ 200 տուն հայ:

53 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, ք. 223-224: Ի դեպ, այլ տեղեկությունների համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 185 տուն՝ 1825 (959-ը՝ ար., 866-ը՝ իգ.) բնակիչ (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22):

54 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 242-243:

55 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 189:

56 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52. Համաձայն նույն թվականին վերաբերող մեկ այլ տեղեկության (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 330)՝ գյուղն ուներ 1080 (549-ը՝ ար., 531-ը՝ իգ.) բնակիչ:

57 Кавказский календарь на 1915 г., с. 136.

58 ՀԱԳ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4:

59 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, ք. 93: Տե՛ս նաև Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղդասյան Գ., նշվ. աշխ., էջ 139:

60 Խաչատրյան Վ., Ազատարեր հոկտեմբերի դրոշի ներքո, «Նոր ուղի», 1977, № 103, 27 օգոստոսի, էջ 3:

61 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, ք. 8:

62 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 26:

63 Խաչատրյան Վ., նշվ. հոդվ., նույն տեղում:


64 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, ք. 8:

65 Թերլեմեզեան Ե., նշվ. հոդվ., «Հայաստանի ձայն», 1920, № 11, 6 փետ., էջ 2:

66 Նշվ. հոդվ., «Հայաստանի ձայն», 1920, № 9, 1 փետրուարի, էջ 2:

67 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 376-377:

68 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 356: Տե՛ս նաև նույնի՝ Օջախի գիրք, հ. Գ, էջ 59-60:



ՂԱՐԱԶԻՆԱՐ. գյուղի գլխավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի՝ 2009 թ. արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Բակոբյանի, 2018 թ.)

Ղարաչինարի տնատերերի ցանկը
(կազմողներ՝ Գերասիմ Վարդանյան, Կոլյա Եղիազարյան և Մանյա Աբրահամյան)

- 1 Գերասիմ Կոստիկ Բաղյան
- 2 Մակիչ Ոսկանյան
- 3 Սերգեյ Սամսոնի Ոսկանյան
- 4 Շիմշադ Սամսոնի Ոսկանյան
- 5 Էդիկ Սիմոնի Ալեքսանյան
- 6 Սիմոն Գրիգորի Ալեքսանյան
- 7 Արկադյա Սիմոնի Ալեքսանյան
- 8 Գյուլի Պապեն
- 9 Օհան Աղաջանյան
- 10 Ռաֆիկ Վերդիի Խաչատրյան
- 11 Յուրիկ Ջադիի Խաչատրյան
- 12 Սիմոն Խաչատրյան
- 13 Վոլոդյա Սիմոնի Խաչատրյան
- 14 Վլադիմիր Եղիի (Լեոն) Հովսեփյան
- 15 Բորիկ Եղիշի Հովսեփյան
- 16 Մարտիկ Իվանյան
- 17 Ժորիկ Ասլանի Մովսեսյան
- 18 Փիրո Առուստամի Գրիգորյան
- 19 Ֆենյա Փիրոյի Գրիգորյան
- 20 Գրիշա Դուկասի Ավանյան
- 21 Սլավիկ Ջավենի Հովսեփյան
- 22 Յուրիկ Ենոքի Դուկասյան
- 23 Մուսան Գրիգորյան
- 24 Ջալալ Դուլյան
- 25 Պավլի Դուլյան
- 26 Մանյա Միքայելի Եսայան
- 27 Սաթենիկ Չատուրի Եղիազարյան
- 28 Մանյա Եղիազարյան
- 29 Մարգո Դուլյան
- 30 Մանվել Դուկասի Հովսեփյան
- 31 Դավիթ Պավլիի Ավանյան
- 32 Արմիկ Մակիչի Դազարյան
- 33 Արեստ Շամիրի Եղիազարյան
- 34 Շմավոն Շարատուրի Սևյան
- 35 Վոլոդյա Առուստամի Հարությունյան
- 36 Օնիկ Միքայելի Հարությունյան
- 37 Մարալ Առուստամի Վելիխանյան
- 38 Ռաֆիկ Հակոբի Ավանյան
- 39 Սելիք Սարգսի Մակարյան
- 40 Վովա Սելիքի Մակարյան
- 41 Սևի Մովսեսյան
- 42 Վոլոդյա Ապրեսյան
- 43 Շուշանիկ Հարությունյան
- 44 Սմբուլ Դուկասի Ապրեսյան
- 45 Դաթիկ Բեգլարյան
- 46 Փրիդուս Սաքիի Շատրյան
- 47 Վարսենիկ Գրիգորյան
- 48 Ջիվան Մակարյան
- 49 Ալբերտ Ջիվանի Մակարյան
- 50 Խաչատուր Բողոմեց
- 51 Գեննադիկ Դուլյան
- 52 Միշա Դուլյան
- 53 Բորյա Վեքիլյան
- 54 Բենիկ Միքայելի Հարությունյան
- 55 Նարինգյուլ Դուլյան
- 56 Իսակ Ապրեսյան
- 57 Ալբերտ Իսակի Ապրեսյան
- 58 Ալեքսան Բալայան
- 59 Սվետլանա Մովսեսի Ավետյան
- 60 Մովսես Ավետյան
- 61 Վեդիկ Կլիմենտի Աբրահամյան
- 62 Ալբերտ Մուդիի Ապրեսյան
- 63 Ռազմիկ Պողոսյան
- 64 Բորիկ Ռազմիկի Պողոսյան
- 65 Գոգոլ Ապրեսյան
- 66 Բենիկ Սահակի Հակոբյան
- 67 Արիմուս Յաշայի Դազարյան
- 68 Սերյոժա Բաղմանյան

- 69 Վոլոդյա Սերյոժայի Բաղմանյան
- 70 Արմենուհի Գրիգորի Հարությունյան
- 71 Ռոբերտ Պավլիի Աբրահամյան *Կենտրոնական ճանապարհից դեպի Գաղթուտ*
- 72 Ոսկան Առուստամի Ոսկանյան
- 73 Ռաֆիկ Առուստամի Ոսկանյան
- 74 Նարգիզ Ոսկանյան
- 75 Բորիկ Հովհաննեսի Ոսկանյան
- 76 Հովհաննես Ոսկանյան
- 77 Արմենակ Խաչատուրի Մարյանյան
- 78 Վոլոդյա Ջավադի Սկրտովյան
- 79 Համբարձում Դանիելի Ավանյան
- 80 Լևոն Պետրոսյան
- 81 Շմավոն Լևոնի Պետրոսյան
- 82 Արմենակ Լևոնի Պետրոսյան
- 83 Յուրիկ Շատուրի Մարյանյան
- 84 Սահակ Ավանյան
- 85 Բորիկ Սահակի Ավանյան
- 86 Էդիկ Սահակի Ավանյան
- 87 Հուրիկ Սահակի Ավանյան
- 88 Հրաչիկ Նիկողայի Ավանյան
- 89 Գյարաթ Հովհաննեսի Մարյանյան
- 90 Պետրոս Մարյանյան
- 91 Ռուդիկ Թևոսի Մարյանյան
- 92 Նորա Հանեսի Դուլյան
- 93 Աղասի Սաքոյի Նասիբյան
- 94 Գրիշա Աղասիի Նասիբյան
- 95 Մուրեն Ասլանի Ավանյան
- 96 Ռազմիկ Նիկողայի Ավանյան
- 97 Արուստամ Դարախանի Դուլյան
- 98 Ռանտիկ Սամսոնի Դուլյան
- 99 Աննա Նետունց
- 100 Գերասիմ Մարյանյան
- 101 Բենիկ Գերասիմի Խաչատրյան
- 102 Ռուբեն Յակոբի Դանիելյան
- 103 Յաշա Նետունց
- 104 Մուկրատ Խաչատրյան
- 105 Կատյա Ավանյան
- 106 Նահապետ Ավանյան
- 107 Ռաչիդ Բահապետի Ավանյան
- 108 Սաթենիկ Բալասյան
- 109 Գարեգին Դանիելի Ավանյան
- 110 Խորեն Պետրոսի Մարյանյան
- 111 Իսակ Ավանյան
- 112 Գերասիմ Միքայելի Բալասյան
- 113 Եղիշ Բալասյան
- 114 Գեննա Թևոսի Մարյանյան
- 115 Պավլի Աղաջանյան
- 116 Վոլոդյա Պավլիի Աղաջանյան
- 117 Գարեգին Փետրյի Աղաջանյան
- 118 Յուրիկ Ջավադի Աղաջանյան
- 119 Ջավադ Աղաջանյան
- 120 Գոգո Սարգսի Նասիբյան
- 121 Աբրահամ (Էպրի) Մարյանյան
- 122 Վոլոդյա Աբրահամի Մարյանյան
- 123 Ջարմիկ Դանիելի Ավանյան
- 124 Մանյա Խաչատրյան
- 125 Սիրուհի Ավանյան
- 126 Ռիբիկ Ռաբելի Խաչատրյան
- 127 Բենիկ Գրիգորի Խաչատրյան
- 128 Հակոբ Խաչատրյան
- 129 Սանամ Ապրեսյան
- 130 Վաղարշակ Մայանյան
- 131 Կոլյա Վաղարշակի Մայանյան
- 132 Աշոտ Վաղարշակի Մայանյան
- 133 Բալաբեկ Ստեփանյան
- 134 Ներսես Ավանյան

- 135 Ղարախան Ջոհրաբյան
- 136 Արմենիկ Ջոհրաբյան
- 137 Էդիկ Գալուստի Դանիելյան
- 138 Մարկոս Գրիգորի Աբրահամյան
- 139 Հայկազ Ստեփանյան
- 140 Սիրայել Գրիգորյան
- 141 Թումար Գևորգյան
- 142 Գալեն Լևոնի Ստեփանյան
- 143 Շմավոն Միրզայի Շահնազարյան
- 144 Մարգուշ Հովսեփի Ավանյան
- 145 Ռուբեն Նահապետի Ավանյան
- 146 Թումար Գրիգորյան
- 147 Գյոզալ Տոնյան
- 148 Ալյոշա Սաշայի Ոսկանյան
- 149 Վարդանուշ Մարդիի Տոնյան
- 150 Նախշուն Տոնյան
- 151 Շալիկ Ուդունյան
- 152 Գարեգին Հովսեփի Ավանյան
- 153 Բահատուր Գոսյան
- 154 Էդիկ Ամիրխանի Ջոհրաբյան
- 155 Ալբերտ Եփրեմի Վեքիլյան
- 156 Փետրոշ Կոստիկ Բաղյան
- 157 Արմենակ Եփրեմի Աբրահամյան
- 158 Գարեգին Սիմասի Աբրահամյան
- 159 Բենիկ Սեդրակի Վեքիլյան
- 160 Նիկողայ Կարապետի Բաղմանյան
- 161 Մարտիկ Կարապետի Բաղմանյան
- 162 Մամիկոն Առուստամյան
- 163 Էլիշկա Եղիազարյան
- 164 Էդիկ Սարգսի Ավանյան
- 165 Վերդի Ավանյան
- 166 Դազար Ավանյան
- 167 Ալեքսանդր Դազարի Ավանյան
- 168 Յաշա Դազարյան
- 169 Նադյա Յաշայի Դազարյան
- 170 Վեդիկ Յաշայի Դազարյան
- 171 Մարգարիտ Յոսյան
- 172 Սլավիկ Սեդրակի Գրիգորյան
- 173 Պետրոս Օհանյան
- 174 Արմենակ Շահնազարյան
- 175 Ռուբեն Առուստամի Վելիխանյան
- 176 Մուրեն Եղիազարյան
- 177 Ժորա Արշակի Գրիգորյան
- 178 Ալբերտ Մողոմոնի Վելիխանյան
- 179 Մայկո Ավետյան
- 180 Վերդի Նազարյան
- 181 Գյոզալ Գրիգորյան
- 182 Լյովա Շամիրի Ստեփանյան
- 183 Բորիկ Ջամալի Ստեփանյան
- 184 Ռուբեն Խաչատուրի Հովսեփյան
- 185 Ավո Փաշայի Ստեփանյան
- 186 Փաշա Ստեփանյան
- 187 Արշակ Ստեփանյան
- 188 Վոլոդյա Արշակի Ստեփանյան
- 189 Սաշա Մարտիրոսի Գրիգորյան
- 190 Ջալալ (Կալչակ) Առուստամյան
- 191 Շարմաղ Դազարյան
- 192 Մարգուշ Թարխանյան
- 193 Գենո Լևոնի Թարխանյան
- 194 Վալերիկ Լևոնի Թարխանյան
- 195 Լևոն Թարխանյան
- 196 Պավլի Մողոմոնյան
- 197 Գենիխ Մարտիրոսի Խաչատուրյան
- 198 Մովսես Գրիգորի Աբրահամյան

- 199 Սահակ Գրիգորի Աբրահամյան
- 200 Աբրահամ Սահակի Աբրահամյան
- 201 Ջավադ Բաբայան
- 202 Սեդրակ Բալաբեկյան
- 203 Արկադյա Բալաբեկյան
- 204 Արարատ Մուկրատի Հարությունյան
- 205 Արամայիս (Արտո) Հայկազի Ավետյան
- 206 Էդիկ Համբարձումի Տոնյան
- 207 Թևոս Ավետյան
- 208 Ժորա Յաշայի Բաղյան
- 209 Մարալ Ավետյան
- 210 Նիկողայ Մողոմոնյան
- 211 Մայիս Մողոմոնյան
- 212 Մարկոս Ալիքի Նազարյան
- 213 Արշակ Հարությունյան
- 214 Բերիկ Լևոնի Աբրահամյան
- 215 Փետրոշ Հայկազի Աբրահամյան
- 216 Մարտիկ Մովսեսի Վարդանյան
- 217 Գերասիմ Մովսեսի Վարդանյան
- 218 Փաշա Ավանյան
- 219 Մարտիրոս Խաչատրյան
- 220 Վոլոդյա Միրզայան
- 221 Յուրիկ Միրզայան
- 222 Մարտիկ Ավետյան
- 223 Լևոն Գրիգորյան
- 224 Փրոնոսիկ Գևորգյան
- 225 Բորիկ Մովսեսի Բաղմանյան
- 226 Պավլիկ Դուխանի Ավանյան
- 227 Ալեքսանդր Դուխանի Ավանյան
- 228 Հրաչիկ Պավլիի Ավանյան
- 229 Ռազմիկ Մողոմոնյան
- 230 Մովսես Վարդանյան
- 231 Ժորա Մանասի Ավանյան
- 232 Շուրիկ Վեքիլյան
- 233 Գեդեցիկ Ավետյան
- 234 Վաղիմիկ Վաղարշի Ջոհրաբյան
- 235 Իսակ Իվանյան
- 236 Գերասիմ Իսակի Իվանյան
- 237 Մարտիկ Իսակի Իվանյան
- 238 Ջալալ Իվանյան
- 239 Անիկա Սևյան
- 240 Գարեգին Սևյան
- 241 Սարգիս Մաղաթի Սահակյան
- 242 Բորիկ Պատվականի Մարյանյան
- 243 Վոլոդյա Նալբանդյան
- 244 Խաչատուր Դուլյան
- 245 Լևոն Մովսիսյան
- 246 Բորիկ Ներսեսի Հովսեփյան
- 247 Ռանտիկ Լևոնի Վարդանյան
- 248 Արկադյա Լևոնի Ավանյան
- 249 Արմո Ջամալի Իվանյան
- 250 Բորիկ Շամիրի Հովհաննիսյան
- 251 Հայկանուշ Դուլյան
- 252 Փետրոշ Ջամիլի Իվանյան
- 253 Մանվել Հովսեփյան
- 254 Արմիկ Եղիշի Բալասյան
- 255 Ժորա Ասլանի Հովսեփյան
- 256 Շամիկո Իվանյան
- 257 Յուրիկ Սեդրակի Մողոմոնյան
- 258 Գևորգ Ավանյան
- 259 Ալյոշա Շամիկոյի Իվանյան
- 260 Գարեգին Գոսյան
- 261 Գրիշա Գևորգի Ավանյան
- 262 Վոլոդյա Մամսոնի Հակոբյան
- 263 Յուրա Վոլոդյայի Հակոբյան
- 264 Մամվել Մամսոնի Հակոբյան
- 265 Հրաչիկ Հակոբի Ավանյան
- 266 Վարդանուշ Բալասյան

267 Ռաֆիկ Եփրեմի Հովսեփյան
268 Բենիկ Սողոմոնյան
269 Ռազմիկ Հունանյան
270 Գրիշա Ռազմիկի Հունանյան
271 Լևոն Հունանյան
272 Մովսես Խաչատրյան
273 Արամայիս Մարդիի Խա-
չատրյան
274 Նունիկ Խաչատրյան
275 Լևոն Մամիկոնի Խաչատրյան
276 Գուրգեն Բալայան
277 Նորա Ապրեսյան
278 Ալեքսանդր Ղազարյան
279 Շամիր Ջավադի Եղիազարյան
280 Օհան Շամիրի Եղիազարյան
281 Սիրանուշ Իսակի Մելքունյան
282 Վովա Իսակի Եղիազարյան
283 Հարություն Շամիրի Եղիազար-
յան
284 Ֆենյա Իսակի Եղիազարյան
285 Գերասիմ Գրիգորյան
286 Ժորա Գրիգորի Եսայան
287 Բենիկ Շամիրի Ղուլյան
288 Իսակ Ղուլյան
289 Ժորա Իսակի Ղուլյան
290 Արշալույս Աբրահամի Մարյան-
յան
291 Ռուբեն Առուստամի Բուշունց
292 Էմմա Հարությունի Ավագյան
293 Էդիկ Ղազարի Ավանյան
294 Ալբերտ Սարգսի Բուշունց
295 Սարո Ջավադի Հարությունյան
296 Մերյոժա Ջավադի Հարություն-
յան
297 Ասյա Հարությունյան
298 Մելյան Ռուբենի Բուշունց
299 Ռոբերտ Իսակի Գրիգորյան
300 Իսակ Բուշունց
301 Գարեգին Բուշունց
302 Ֆենյա Մռավյան
303 Շիմշադ Նահապետի Ավագյան
304 Բորիկ Գարեգինի Բուշունց
305 Մուրադ Իսակի Գրիգորյան
306 Վովա Գարեգինի Բուշունց
307 Վլադիմիր Ավագյան
308 Ալյոշ Սարգսի Գրիգորյան
309 Աշոտ Ջաքարի Գևորգյան
310 Մայիս Մռավյան
311 Շմավոն Մռավյան
312 Յուրա Մռավյան
313 Իշխան Սարգսի Մահակյան
314 Անդրանիկ Ղևոնդյան
315 Փրիդոն Ղևոնդյան
316 Օնիկ Մովսանի Ղևոնդյան
317 Էդիկ Խալափյան
318 Վոլոդյա Ղևոնդյան
319 Սաքի Ղևոնդյան
320 Ռաքել Ղարիբյան
321 Բնարիկ Մռավյան
322 Մանվել Իշխանի Մահակյան
323 Ռանտիկ Ղարիբյան
324 Բորիկ Եսայան
325 Թեյման Անդրանիկի Ղևոնդյան
326 Սիքայել Ղարիբյան
327 Բորիկ Սիքայելի Ղարիբյան
328 Ջավադ Ղարիբյան
329 Գալուստ Հովսեփյան
330 Գրիշիկ Ղևոնդյան
331 Սլավիկ Ջավադի Ղարիբյան
332 Ղարիբ Ջավադի Ղարիբյան
333 Մովսես Սարգսի Գևորգյան
334 Բորիկ Ներսեսի Հովսեփյան
335 Բահատուր Իվանյան
336 Բորիկ Դադաշի Ապրեսյան
337 Հրաչիկ Բահատուրի Իվանյան

338 Կիմիկ Իվանյան
339 Սերգի Գևորգյան
340 Բենիկ Սերգիի Գևորգյան
341 Վոլոդյա Գևորգի Գևորգյան
342 Ռուսլան Յաշայի Ավանյան
343 Հայկազ Ղևոնդյան
344 Եփրեմ Մահակյան
345 Կարապետ Ղևոնդյան
346 Յուրիկ Կարապետի Ղևոնդյան
347 Ալբերտ Մովսեսի Նեսունց
348 Իսակ Բալայան
349 Սուրեն Իսակի Բալայան
350 Խորեն Իսակի Բալայան
351 Պարսեդ Պարսեդյան
352 Յուրիկ Պարսեդի Պարսեդյան
353 Թեյման Իսակի Բալայան
354 Սինաս Պետրոսի Գալստյան
355 Կառլեն Ջումշուդի Մահակյան
356 Արկադյա Արմենակի Ավետյան
357 Արմենակ Ավետյան
358 Իսակ Հակոբյան
359 Սիքայել Իսակի Հակոբյան
360 Էնգելս Բաղյան
361 Գալյա Անտոնյան
362 Թալիշ Գրիգորյան
363 Ջարմիկ Թալիշի Գրիգորյան
364 Մաշա Գևորգյան
365 Շմավոն Հարությունյան
366 Էմմա Մաշայի Գևորգյան
367 Արմիկ Ապրեսյան
368 Մոնա Բուշունց
369 Մեջիթ Բուշունց
370 Նախշուն Բաբայան
371 Արկադյա Նեսունց
372 Վարյա Եղիազարյան
373 Արտեմ Կալանդարի Սարգսյան
374 Էդիկ Ռուբենի Բաղյան
375 Փաշա Բաբայան
376 Թևոս Սողոմոնի Եսայան
377 Երվանդ Ղահրամանի Ջաքար-
յան
378 Եդո Գալստյան
379 Իսկուտի Բաղյան
380 Վոլոդյա Նեսունց
381 Գյարաթ Մամուկյան
382 Մուշեղ Սողոմոնի Ավագյան
383 Աբրահամ Եսայան
384 Ռոմիկ Մուշեղի Ավագյան
385 Սաքան Շեգյան
386 Գրիշա Մատուրի Շեգյան
387 Լյովա Գրիշայի Շեգյան
388 Սյոմա Աբրահամի Եսայան
389 Մադաթ Մահակյան
390 Լենա Մովսանի Ղևոնդյան
391 Զինավոր Բաղյան
392 Վալերիկ Զինավորի Բաղյան
393 Կառլեն Խաչատուրի Նեսունց
394 Գրիշա Իսակի Բալայան
395 Գրիշա Նիկոլայի Բալայան
396 Նորա Հակոբի Գրիգորյան
397 Բարմեն Գարեգինի Խալափյան
398 Վարդուհի Խալափյան
399 Ռանտիկ Արշակի Խալափյան
400 Ջարմիկ Թևոսի Ավետյան
401 Վալերիկ Ավետյան
402 Արեգա Ավետյան
403 Կարապետ Ազրյան
404 Արմիկ Հակոբի Ջոհրաբյան
405 Ջարմիկ Արմիկի Ջոհրաբյան
406 Հրաչիկ Կարապետի Ազրյան
407 Արշակ Բալայան
408 Սիշա Կարապետի Ազրյան
409 Յոլակ Խաչատուրի Մահակյան
410 Էնգելս Խաչատուրի Մահակյան
411 Նիժոլոր Ռոբունյան

412 Բենիկ Ալեքսանի Բաբայան
413 Կարո Մովսեսի Ղուլյան
414 Ալյոշա Սուրենի Ավագյան
415 Բենիկ Սերգիի Գևորգյան
416 Իլյիշ Հակոբի Բուշունց
417 Սիրուհի Պետրոսի Գալստյան
418 Վազգեն Պետրոսի Գալստյան
419 Ռաֆիկ Հակոբի Ջոհրաբյան
420 Արեստ Սարգսի Նասիբյան
421 Ժորա Սերգիի Գևորգյան
422 Ռանտիկ Աբրահամի Մարյան-
յան
423 Ժորա Հովսեփյան
424 Նազար Մարդիի Տոնյան
425 Յաշա Ջոհրաբյան
426 Արկադյա Ջամիլի Իվանյան
427 Վովա Իվանյան
428 Յուրա Մարկոսի Նազարյան
429 Գուրգեն Բալայան
430 Բորիկ Վեքիլյան
431 Վաչագան Օզանով
432 Լյովա Գերասիմի Սալախյան
433 Հրաչիկ Անդրանիկի Ավետյան
434 Վանիկ Ջաքարյան
435 Դավիթ Ավագյան
436 Վիլգեն Եփրեմի Մահակյան
437 Փրունգիկ Եփրեմի Մահակյան
438 Արմենակ Կարապետի Ղևոնդ-
յան
439 Սուրեն Հակոբի Խաչատրյան
440 Սերգեյ Վաղարշակի Կարա-
պետյան
441 Ռուզան Վաղարշակի Կարա-
պետյան
442 Մանյա Սիրգոյան
443 Փրիդոն Շամիկոյի Իվանյան
444 Գրիգոր Էդիկի Ալեքսանյան
445 Մամսոն Ալիքի Նազարյան
446 Սարգիս Գևորգյան
447 Կլիմենտ Եփրեմի Աբրահամյան
448 Վահան Շամիրի Եղիազարյան
449 Յոլակ Եփրեմի Հովսեփյան
450 Նիկոլայ Գրիգորի Եսայան
451 Աննա Բալայան
452 Նատալյա Ոսկանյան
453 Սիքայել Ավանյան
454 Ռանտիկ Հայկազի Ստեփան-
յան
455 Խուդան Ջամալի Հարություն-
յան
456 Ռաշիդ Աբրահամյան
457 Գոգա Վաղարշակի Կարա-
պետյան
458 Ռուբեն Ջամիլի Իվանյան
459 Էդիկ Մանվելի Հովսեփյան
460 Վալոդ Իվանյան (կինը՝ Հայ-
կանուշ Մովսանի Ղևոնդյան)
461 Արկադյա Գերասիմի Սալախ-
յան
462 Յաշա Հովսեփի Ավանյան
463 Գերասիմ Ղազարի Ավանյան
464 Ղարաբեզ Մինասի Տոնյան
465 Եփրեմ Մակիլի Աբրահամյան
466 Ժորա Եփրեմի Աբրահամյան
467 Ռոբերտ Սողոմոնի Վելիխան-
յան
468 Գենադիկ Բենիկի Խաչատրյան
469 Մարգուշ Ալիքի Տոնյան
470 Մաշա Սարգսի Ոսկանյան
471 Գարեգին Սարգսի Նասիբյան
472 Մալեն Վերդիի Նազարյան
473 Գուրգեն Հայկազի Ստեփան-
յան
474 Էդիկ Սերգեյի Մարյանյան
475 Վալերիկ Յաշայի Ղազարյան

476 Լյովա Մեդրակի Սողոմոնյան
477 Սյոմա Մաշայի Գրիգորյան
478 Ռուբեն Լևոնի Գրիգորյան
479 Սյոմա Զինավորի Աբրահամյան
480 Շմավոն Հովհաննիսյան
481 Սերգեյ Շմավոնի Հովհաննիս-
յան
482 Կարո Գուրգենի Ղուլյան
483 Ժորա Բաղմանյան
484 Գրիշա Ալեքսանդրի Ավանյան
485 Էդիկ Ղուկասի Ավանյան
486 Յուրիկ Արմենակի Ավագյան
487 Արմենակ Դանիելի Ավագյան
488 Սերգեյ Աղամյան
489 Ռոբերտ Ջամալի Առուստամ-
յան
490 Գրիշա Մահակի Աբրահամյան
491 Սուրիկ Ներսեսի Ավանյան
492 Զինավոր Լևոնի Աբրահամյան
493 Զիրավարդ Լևոնի Բալայան
494 Յուրիկ Մուդիի Ապրեսյան
495 Լյովա Գերասիմի Իվանյան
496 Մադլենա Գարեգինի Ղլեչյան
497 Տոլիկ Գարեգինի Ապրեսյան
498 Սիշա Մաշայի Ոսկանյան
499 Վոլոդյա Աշոտի Ավետյան
500 Հրաչիկ Արամի Գալստյան
501 Յուրիկ Մարտիրոսի Խաչա-
տրյան
502 Մելիք Սերգեյի Մարյանյան
503 Վիլգեն Պետրոսի Մարյանյան
504 Վալերիկ Ջարմիկի Պողոսյան
505 Յաշա Կարապետի Տոնյան
506 Ռուդիկ Ջարմիկի Պողոսյան
507 Սիշա Սարգսի Մակարյան
508 Մովսես Փրունգիկի Մահակյան
509 Գարեգին Ղազարի Ավանյան
510 Սլավիկ Գարեգինի Ավանյան
511 Ռոմա Գուրգենի Ստեփանյան
512 Ժորա Իսակի Բուշունց
513 Նվարդ Ապրեսյան
514 Ռուբեն Ղևոնդյան
515 Հերոս Հայկազի Աբրահամյան
516 Գուրգեն Համբարձումի Ավագ-
յան
517 Հայկազ Հերոսի Աբրահամյան
518 Վովա Իսակի Ղուլյան
519 Շուշանիկ Սալախյան
520 Վովա Մամսոնի Նազարյան
521 Ռոմա Ռաֆիկի Ջոհրաբյան
522 Մանվել Ժորայի Ղուլյան
523 Վովա Իսակի Ապրեսյան
524 Հրաչիկ Վլադիմիրի Սիրգոյան
525 Լյովա Վլադիմիրի Սիրգոյան
526 Ռիկո Ջաքարյան
527 Բենիկ Եղիշի Բալայան
528 Էդիկ Պավլիի Սողոմոնյան
529 Ռաֆիկ Սերոժի Մարյանյան
530 Շուրիմ Եսայան
531 Վոլոդյա Աբրահամի Մարյան-
յան
532 Կառլեն Աղամալյան
533 Շուրիկ Սուդիի Ապրեսյան
534 Վալերիկ Մարտիրոսի Խաչա-
տրյան
535 Ռուբեն Լևոնի Բալայան
536 Վոլոդյա Եղիշի Բալայան
537 Բորիկ Աշոտի Ավետյան
538 Սյոմա Վլադիմիրի Մարյանյան
539 Մալեն Եղիշի Բալայան
540 Ալեքսան Բաբայան¹

¹ Լ. Աբրահամյան Կ., Օջախի գիրք, Խ. Գ, էջ 60-74:

դիագարյան, Շամիկո Ղուլիի Իվանյան, Նունիկ Խաչատրյան, Սամվել Սամսոնի Հակոբյան, Վեդիկ Յաշայի Ղազարյան, Սաթենիկ Զախարի Ղազարյան, Վարինկա Ղարիբյան, Նարինգյուլ Դավթի Ղուլյան, Օնիկ Միքայելի Ղևոնդյան, Գոհար Մարտիրոսի Ղևոնդյան, Միշա Մարգարի Մակարյան, Գանձակից փախստական Արփենիկ Պիլունց, Մարգուշ Պողոսյան, Կառլեն Զուվնուդի Սահակյան, Բենիկ Շամոյի (Շամավոնի) Սողոմոնյան, Աննա Սողոմոնյան, Ղարաբեկ Քեսիի Տոնոյան (մնացել են գյուղում), աշխարհագրաբաններ Վալերիկ Մամիկոնի Խաչատրյան (գոհվել է բնակիչներին փրկելիս. դիակը գտել է գյուղ վերադարձած մայրը և հողին հանձնելիս գերեվարվել: Մոր տանջահար դիակը վերադարձվել է 4 տարի անց), 17-ամյա Ռոմա Սևիի Մովսիսյան (1992 թ. փետրվարին՝ դիրքերում), Էդիկ Մարտիրոսի Խաչատրյան (1992 թ. մարտի 10-ին գրադից՝ տան բակում), 22-ամյա Արամ Ալբերտի (Թելման) Բալայան (1992 թ. գարնանը մեքենայի մեջ՝ զինամթերք բերելիս), Բենիկ Մինասի Ղուլյան (1992 թ. հունիսի 13-ին)⁶⁹:

Խաղաղ բնակիչներից գատ՝ գոհվել է մահ 10 ազատամարտիկ՝ ծնունդով Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Հոռաթաղ գյուղից Արիկ Արզումանյան և Գագիկ Գրիգորյան (1991 թ. օգոստոսի 28-ին), Հայաստանի Հանրապետության Թալինի շրջանի Դավթաշեն (այժմ՝ Արագածոտնի մարզում) գյուղից Աթաբեկ Գևորգի Վարդանյան (1991 թ. հոկտեմբերի 11-ին), նույն շրջանի Կարմրաշեն գյուղից Արշավիր Ասլանյան (1991 թ. հոկտեմբերի 18-ին), Բարխուդար Մինասի Գալստյան (1991 թ. հոկտեմբերին), 19-ամյա Վրեժ Յուլալի Սահակյան (1991 թ. դեկտեմբերին՝ գրադից), Արամայիս Մարտիրոսի Խաչատրյան (1992 թ. մարտի 10-ին՝ Գաղթուտում), Յուրիկ Վլադիմիրի Հակոբյան (1992 թ. մարտի 16-ին՝ Շեֆեկում), ծագումով Չայլուից Վալերիկ Ղամբարյան (1992 թ. գարնանը), Արմեն Բազյան (1993 թ. ապրիլի 17-ին՝ խփված ուղղաթիռի մեջ)⁷⁰:

Կառուցապատում. դժվար է պարզել, թե ինչպես էր կառուցապատված Ղարաչինարը թեկուզ ԺԸ դարի վերջերին, բայց արդեն ԺԹ դարի երկրորդ կեսին այն ունեցել է բավականաչափ կանոնավոր հատակագիծ. «Փողոցները առանց բացառութեան լայն և մաքուր են, այնպես, որ կարող են երկու բաական մեծ սայլեր առանց նեղութեան անցնել միասին»⁷¹:

1874 թ. տրված մի նկարագրությունից երևում է, որ արդեն այդ ժամանակ գյուղի հին գլխատները փոխարինված էին «նոր ձևի» կամ այսպես կոչված «եվրոպական» տիպի տներով. «Գիւղացւոց բնակարանները շինուած են նոր ձևով, այն է՝ մի քանի սաժէն բարձր են հողի մակերևոյթից և լինում են քառանկիւնաձև ու քարաշէն հանդերձ պատուհաններով: Այս տներից շատերը երկյարկ են և ունենում են պատշգամբներ...»⁷²:

Միևնույն ժամանակ գյուղն աչքի էր ընկնում իր մաքրութեամբ. «Չկայ գիւղի մէջ անմաքրութիւն: ...տները, գաւիթներն և փողոցները մաքրում են...»⁷³:


Ինչպես այլուր, Ղարաչինարում էլ պարզ գյուղական շինությունների մեջ աչքի ընկնողը կավածատիրոջ տունն էր: Մրա մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում 1881 թ. տեղս այցելած Բաֆֆին. «Կավածատիրոջ տունը համարյա մի ամբողջ է. նրա մոտով խոր ձորի միջով անցնում է Գորան գետը: Ահագին

դարվագայից ներս մտնելով, ձեր առջև բացվում է մի ընդարձակ բակ: Նրա մի կողմում շինված են ցորենի և այլ բերքերի պահելու համար ամբարներ, մյուս կողմում՝ զինի պահելու մառաններ և զանազան ծածկոցներ երկրագործական անոթներ պահելու համար. մի կողմում ձիաների ախոռատունն է. մի կողմում կավածատիրոջ բնակարանն է զանազան վայելուչ սենյակներով: Սենյակների մի երեսը նայում է դեպի բակը, իսկ մյուս երեսը՝ դեպի գեղեցիկ պարտեզը: Տունը ունի բոլոր հարմարությունները կանոնավոր գյուղատնտեսության համար»⁷⁴:

Կարելի է ենթադրել, որ Բաֆֆու նկարագրած տունը կամ առնվազն նրա դարպասը կառուցվել էր 1868 թ., քանի որ այդ տանը պատկանող գույգ առյուծաքանդակներով հարդարված բարավորը, որը մինչև Շահումյանի շրջանի զավթումը պահվում էր շրջկենտրոնի պատմաերկրագիտական թանգարանում, կրում էր նշյալ թվականը.

Թի Ռ-ՅԺԷ (1868):

Հրատ. առաջին անգամ:



ՂԱՐԱՉԻՆԱՐ. Մելիք-Բեգլարյանների տան կամ դարպասի բարավորը, 1868 թ. (ուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

1912 թ. գյուղում առկա էր զանազան նշանակության 388 շինություն, այդ թվում՝ 1 եկեղեցի, 185 բնակելի տուն, 190 տնտեսական կառույց, 8 խանութ և 4 ջրաղաց⁷⁵:

Ըստ Մպարտակ Մեփյանի՝ գյուղի թաղամասերն էին Թոխմաչարը, Նորաշենը, Շենամեջը, Տորնի, Մարովեցունց, Բուշունց, Մալակունց, Չեպուունց և Գյուրգյուռի թաղերը⁷⁶:

⁷⁴ Բաֆֆի, նշվ. աշխ., հ. 8, էջ 582:

⁷⁵ Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

⁷⁶ ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, ք. 7-8:

⁶⁹ **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 674-678:

⁷⁰ Նշվ. աշխ., հ. Բ, էջ 678:

⁷¹ **Հրահատ Բարձունի.** նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1874, № 36, 14 սեպտեմբերի, էջ 3:

⁷² Նույն տեղում:

⁷³ Նույն տեղում:

Տնտեսություն. գյուղատնտեսության հիմնական զբաղմունքներն էին հողագործությունը, այգեգործությունն ու անասնապահությունը:

Վարաչինարն ունեցել է բավականաչափ աշխույժ տնտեսություն. «Գլխավոր պարապմունքը մեր գիւղացուց են երկրագործություն, այգեգործություն և անասնապահություն: Կանայք գործում են զանազան խալիներ, կապերտներ, պարկեր և այլն, և և այլն բոլորը, որ հարկավոր է իրենանց»⁷⁷: Ընդ որում, հարևան գյուղերի հետ համեմատած, շնորհիվ կալվածատիրոջ, գյուղատնտեսական աշխատանքներն այստեղ կատարվում էին համեմատաբար ավելի արդիական գործիքներով. «Կանոնավոր գյուղատնտեսություն ասելով չպետք է հասկանալ եվրոպական գյուղատնտեսություն, այլ մեր տեսած, մեր ունեցած գյուղական տնտեսություններից ամենակատարյալը: Մելիք Բեգլարովները առաջինը եղան Գանձակի գավառի կալվածատերերի մեջ, որ բերել տվեցին եվրոպական գութան և հնձելու մեքենա»⁷⁸:

1910 թ. Բալաբեկ Չաքարյանը նշել է. «Վարաչինարը... սակավառից է, բայց նա յայտնի է իր պտղաբեր այգիներով, անդ ու անդաստանով: Նա ընկած է Վարաչայ գետի երկու ափերի տափարակներում»⁷⁹:

Հայտնի է, որ 1912 թ. գյուղացիներն ունեին 14 ձի, 254 խոշոր և 200 մանր եղջերավոր անասուն, 40 խոզ⁸⁰:

Գյուղացիները կալվածատիրոջը միայն տասանորդ էին վճարում⁸¹, ուստի և կարողանում էին բարվոք վիճակում պահել սեփական տնտեսությունները: Ըստ էության՝ հենց սա է արձանագրվել 1898 թ. «Մեր գիւղը... բաղկացած է մօտ 200 նիւթապէս համարեա ապահով տներից»⁸²:

Իհարկե, ներազգային կյանքում ամեն ինչ այնքան էլ վարդագույն չէր, և վերոնշյալների կողքին առկա էին նաև ցավալի, անզամ կորստաբեր երևույթներ. «...յետադէմ գիւղերից մէկն է: Կուլտուրան այդ գիւղում և նրա շրջակայքում կրիայի քայլերով է առաջ ընթանում և համարեա չէ ընթանում: Վարաչինարցիք մինչև այսօր յայտնի են եղել իրանց արբեցողութեամբ, ալկոհոլիզմը նրանց մէջ զարգացած է վերին աստիճանի: Քիչ բարկանալն ու չնչին վիրատրանքը՝ ալկոհոլիզմի ազդեցութեան տակ ստիպել է նրանց կրակել, վառել հարևանի խոտի դէզը, հարևանի գոմը՝ տաւարը միջին, այգու չափարը. նրանք կատաղի կերպով կոտորել են հարևանի քրտնաթոր վաստակով տնկած ու արդիւնաւոր խաղողի ու այլ մրգեղէնների ծառերը. նրանց մէջ եղան մի շարք բարբարոսային սպանութիւններ և այլն և այլն...»⁸³:

1920 թ. դրությամբ Վարաչինարը «...դաշտային և ջրառատ դիրքով հայաբնակ մեծ գիւղ է..., ունի ընդարձակ այգիներ և շատ ջրաղացներ»⁸⁴:

Խորհրդային տարիներին գյուղատնտեսության ավանդական ճյուղերից նշանակալի զարգացում են ապրում հատկապէս խաղողագործությունը և ծխախոտագործությունը⁸⁵:

Վարաչինարը նշանավոր էր թթենիներով: Նախախորհրդային տարիներին մինչև 450 թթենիներով տեղանքից՝ թթուից բուրած օդին վաճառվում էր Թիֆլիսում: Ամենամեծ թթուների տերերն էին Բոյախունցը, Սիմունցը, Թփալանցը, Գոսունցը, Եղունցը, Տափրունցը, Ճուլիականցը և Իվանանցը: Խորհրդային

տարիներին, բացի Թփալանց թթուից, մյուսները ոչնչացվում են⁸⁶:

Գյուղը հայտնի էր նաև ջրաղացով, որի հիմնադիրն էր Միլարը Ավագյանը, իսկ գործը շարունակողը՝ Գանիել Ավագյանը⁸⁷:

Աղբյուրներ. Վարաչինարն իր մերձակայքով բավականաչափ հարուստ է աղբյուրներով: Դա նկատել և այդ մասին շեշտել են դեռևս 1874 թ. «...կան բազմաթիւ աղբիւրներ»⁸⁸:

Յուրաքանչյուրն ուներ իր հատուկ անունը՝ Պրմբատի, Անուշ, Չինարի, Մռավանց, Քերծին տակի և Ջալունց: Ի դեպ, 1950-ական թվականներին Պրմբատի աղբյուրի ջուրը խողովակներով հասցվել է գյուղ⁸⁹:

Մորմոքիչ է 1990 թ. Աշոտ Խաչատրյանի նախաձեռնությամբ Վարաչինար և Գաղթուտ գյուղերն իրար միացնող Գյուրգյուր կամրջի մոտ կառուցված հուշաղբյուրի պատմությունը, որի որմին գրված էր.

*Պատմական Վարաչինարում կառուցված այս աղբյուրը թող հավերժացնի վերջին երկու տարում բշնամուց և դաժան երկրաշարժից զոհված հայերի հիշատակը: Վարաչինարցիների անունից՝ Աշոտ Խաչատրյան, 1990 թ.*⁹⁰:

Գաղթոց. Վարաչինարը գավառի առաջին գյուղերից էր, ուր բացվել է եկեղեցական ծխական դպրոց: Տակավին 1871 թ. գյուղաբնակները դիմել էին Գևորգ Գ կաթողիկոսին գյուղում կենտրոնական դպրոց բացելու խնդրանքով. «...բանալոյ ի գեղջն Վարաչինարու ըստ տեղոյն ուսումնարան մի, որոյ մերձ են շրջակայ գիւղօրայքն Իկիրմիտօրտու և հին բնակչաց, որք են աւելի քան գերեք հարիւր տունս...»⁹¹:

1873 թ. Ալեքսանդր Եսայանցը խնդրո առթիվ նշում է. «...մեր Ձէյվայ գիւղը գուրկ է բոլորովին գրագիտութեան միջոցից: Ձէյվայ գիւղը աւելի հարուստ է քան Յիսիմվալը և մեր այդտեղի եղբայրակիցները ոչինչով պակաս չեն միւս ուսումնարան ունեցող գիւղերից: Եթէ Յիսիմվալցի քահանան կարողացել է հիմնել ուսումնարան վրացախօս հայերի մէջ, մի՞թէ մեր քահանան կոժուարանար հասնել նոյն նպատակին մեր հայախօս ժողովրդի մէջ, եթէ ուշադրութիւն դարձնէր այդ հանապազօրեայ պահանջի վերայ: Մեր գիւղացիք առհասարակ սիրող են ուսման, միայն չկան նոցա մէջ ըստ մեծի մասին առաջնորդող մարդիկ, որոնք սկսել տան գործը և մեծ դժուարութիւնը թէ՛ ուսումնարանական և թէ՛ միւս հասարակական գործերում յառաջանում է առաջնորդող անձերի պակասութիւնից: Մենք յոյս ունինք, որ մեծապատիւ պ. Թեմրազ Մելիք-Բեգլարեանցը, որ կառավարիչ է այդ գիւղի և որ լաւ է հասկանում գիւղացուց այդ անհրաժեշտ պահանջը, իւր վերայ առնէ սկզբնաւորութիւնը, որով մեծ բարեբարութիւն արած կլինի Ձէյվայի մանուկներին»⁹²:

Գաղթոցը բացվում է 1874 թ., ընդ որում, ըստ մի տեղեկագրի՝ ուներ 45⁹³, իսկ այլ վկայության համաձայն՝ 60 («...ունին ուսումնարան. ունին մի ուսուցիչ աւարտած մասնաւոր ուսումնարանում և վարսունի չափ երեխայք սովորում են միայն հայերէն»)՝⁹⁴ աշակերտ, ուսուցիչն էր ներքիշենցի տիրացու Հակոբ Խաչատրյանը:

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ **Վահրամանյան Կ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 353:

⁸⁸ **Հրահատ Բարձունի**, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1874, № 36, 14 սեպտեմբերի, էջ 3:

⁸⁹ **Նարայան Բ.**, նշվ. հոդվ., «Մռավի դղանցներ», 2015, № 10, դեկտեմբեր, էջ 3:

⁹⁰ **Մեղունյան Լ.**, Կանգ առ, անցորդ, «Խորհրդային Վարաբաղ», 1990, № 103, 3 յունիսի, էջ 4:

⁹¹ **Խ. Մ. Տ. Յարութիւնեանց**, Վարաչինար եւ Իկիրմիտօրթ, «Արարատ», 1871, ԺԱ, էջ 373:

⁹² **Եսայանց Ա.**, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1873, № 11, 24 մարտի, էջ 2:

⁹³ ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 18:

⁹⁴ **Հրահատ Բարձունի**, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1874, № 36, 14 սեպտեմբերի, էջ 3:

1874/75 ուստարում գործում էր առանձին սենյակում՝ որպես նախակրթարան՝ 1 ուսուցչով և 45 աշակերտով⁹⁵:

1881 թ. դպրոցն ուներ 25 աշակերտ⁹⁶:

1907 թ. հոկտեմբերի 10-ի թղթակցությամբ Ստեփան Տեր-Ավետիքյանը նշում է. «Ցանկալի է, որ գաւառի միւս աչքի ընկնող հայ գիւղերը (Չարդախլու, Բարսում, Ջազիր, Փիր, Խաչակապ, Գետաշէն, Ղարաչինար) հետեւեն նիւթականով, իր քարքարոս հողերի բերքով, չքատր, բայց «նամուտով» հարուստ Բանանցի օրինակին ու գոնէ առաջիկայ (1908-1909) ուսումնարանական տարուց սկիզբ դնեն իգական սեռի կրթութեան»⁹⁷:

1908 թ. գյուղում գործում էր միդասյա արական դպրոց՝ 70 աշակերտով⁹⁸:

1912 թ. հաստատության մասին նշվել է. «Համեմատելով մնացած գյուղերի հետ, Ղարաչինարը համարվում էր ամենալավ գյուղը, քանի որ այստեղ գործում էր երկդասյա դպրոց, որն ուներ միայն 1 ուսուցիչ, նա էլ ոչ լրիվ միջնակարգ կրթությամբ»⁹⁹:

1930 թ. գործում էր 7-ամյա կոլերիա դպրոց¹⁰⁰:

1960 թ. կրթօջախում ուսանում էր 156 աշակերտ¹⁰¹:

1970 թ. միջնակարգ դպրոցն ուներ հայկական և ռուսական բաժիններ¹⁰²:

1976 թ. գյուղում սկսվում է դպրոցական համալիրի կառուցումը¹⁰³:

1977 թ. ուներ 1 միջնակարգ, 1 ութամյա, 1 տարրական դպրոց: Ի դեպ, 1977 թ. շարունակվում էին երկհարկանի նոր դպրոցի (624 աշակերտի համար) շինարարական աշխատանքները¹⁰⁴, որոնք ավարտվում են 1979 թ.¹⁰⁵:

1980 թ. կրթօջախն ուներ 560, իսկ 1989 թ.՝ 545 սան¹⁰⁶:

Գրադարան. 1977 թ. գյուղի գրադարանի մասին նշվել է. «Գեղեցիկ ու հարմարավետ է գրադարանը, այն ունի հարուստ գրքային ֆոնդ, 700 ընթերցող, այստեղ հաճախ են կազմակերպվում հանդիպումներ ընթերցողների հետ, անցկացվում գրույցներ, դասախոսություններ, գրական երեկոներ»¹⁰⁷: Ի դեպ, 1957 թ.-ից գրադարանավարուհին էր Ասյա Հախյանը:

Գաղթականական դպրոց. 1916 թ. դեկտեմբերի 27-ի թղթակցությունից պարզվում է, որ Ղարաչինարում գաղթականների թիվը հասնում էր շուրջ 200 հոգու: Նշյալ թվականի հոկտեմբերին տեղում բացվում է գաղթականական դպրոց, ուր հաճախում էին մասնաճյուղի գյուղերի աշակերտները¹⁰⁸: Ի դեպ, Պարենավորման պահեստի կառավարիչ Միքայել Օսեփյանի ջանքերով դպրոցը «...կարողացած է ստանալ պետական վարժարանէն նոր ու կոկիկ մատարան-գրասեղաններ, որոնցով դպրոցը ստացած է իր անուան արժանի կերպարանք»¹⁰⁹:

Գաղթականական դպրոցը հիշվում է մահ 1920 թ.¹¹⁰:

Արքունի (պետական, ռուսական, կառավարչական) դպրոց. հիմնվել է 1885 թ. և գործել նախ Ղզարանց, ապա Մրյանանց տանը¹¹¹: Նույն թվականին դպրոցի տեսուչ է հիշվում Ղզար Ղզարյանը¹¹²:

Առաջին ուսուցիչն էր հայազգի Լեոնիդ Կովալյովը (Լեոն Գավալյան՝ Չիբո մականվամբ), որը դասավանդել է «...մոտ 17 տարի, 1885 թվից մինչև 1902-1903 թթ.» թողնելով բարի համբավ ժողովրդի հիշողության մեջ»¹¹³:

1888 թ. տեսուչն էր Լեոնիդ Կովալյովը, կրոնուսույցները՝ Հակոբ քահանա Տեր-Խաչատուրյանը և մոլլա Ախունդ Ջաբբար Հասան-օղլին, ուսուցիչը՝ Աղաբաբ Աղաբաբյանը¹¹⁴:

1889 թ. Ն. Շավրովի ղեկավարությամբ դպրոցում մետաքսագործություն էր ուսանում 15 աշակերտ, իսկ շերամապահատունը գետեղված էր վարձակալված տներից մեկում¹¹⁵:

Նույն թվականին տեսուչը և կրոնուսույցները շարունակում էին պաշտոնավարել, իսկ ուսուցիչն էր Ահմեդ աղա Մուստաֆանը¹¹⁶:

1890 թ. դրությամբ կրթօջախը գործում էր¹¹⁷:

1891 թ. պատվավոր խնամակալն էր Սարգիս Ավագյան Մելիք-Ստեփանյանը, իսկ տեսչական ու ուսուցչական անձնակազմը նույնն էր¹¹⁸:

1892-1894 թթ. հիշվում են վերոնշյալ պատվավոր խնամակալը, տեսուչն ու կրոնուսույցները, իսկ ուսուցիչն էր Մահմեդ բեկ Թախիրովը¹¹⁹: Ի դեպ, 1893 թ. ուներ 65 աշակերտ:

1894 թ. Ժողովրդական լուսավորության գյուղական երկդասյա դպրոցն ուներ 64 աշակերտ: Դպրոցի պատվավոր խնամակալն էր Սարգիս Ավագյան Մելիք-Ստեփանյանը, տեսուչը՝ Լեոնիդ Կովալյովը, կրոնուսույցները՝ Հակոբ քահանա Տեր-Խաչատուրյանը և մոլլա Ախունդ Ջաբբար Հասան-օղլին, ուսուցիչը՝ Մանուկ Հովհաննիսյանը¹²⁰:

1895 թ. դպրոցն ուներ 60 աշակերտ: Խնամակալական և ուսուցչական անձնակազմը նույնն էր¹²¹: Երկու տարի անց՝ 1897 թ., աշակերտության թիվը դարձյալ 60 էր¹²²:

1898 թ. գործում էր 70 աշակերտով. պատվավոր խնամակալը, տեսուչն ու կրոնուսույցները շարունակում էին պաշտոնավարել, իսկ ուսուցիչներն էին Գեղամ Աղամյանը և Խաչատրյանը¹²³:

1899-1900 ուստարում ուներ 75 աշակերտ և վերոնշյալ նույն խնամակալական և ուսուցչական անձնակազմը: Հիշվում է մահ ուսուցիչ Սահակ Տեր-Հարությունյանը¹²⁴:

111 Кавказский календарь на 1895 г., Тифлис, 1894, с. 266. Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 349:

112 «Արձագանք», 1886, № 42, 16 նոյեմբերի, էջ 550:

113 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, ք. 9-10: Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 349:

114 Кавказский календарь на 1889 г., Тифлис, 1888, отд. II, с. 79.

115 Занятие шелководством при народных училищах Елисаветпольской губернии в 1889 году, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 11, отд. II, Тифлис, 1891, с. 229.

116 Кавказский календарь на 1890 г., Тифлис, 1889, отд. II, с. 79.

117 **Բարխուսարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 245:

118 Кавказский календарь на 1892 г., Тифлис, 1891, отд. II, с. 235-236.

119 Кавказский календарь на 1893 г., Тифлис, 1892, отд. II, с. 241-242. Տե՛ս նաև Кавказский календарь на 1894 г., Тифлис, 1893, отд. II, с. 264-265. Кавказский календарь на 1895 г., Тифлис, 1894, отд. II, с. 266.

120 Кавказский календарь на 1896 г., Тифлис, 1895, с. 284. Այլ տեղեկության համաձայն (Кавказский календарь на 1895 г., с. 266) 63 սան:

121 Кавказский календарь на 1897 г., Тифлис, 1896, с. 296-297.

122 Кавказский календарь на 1898 г., Тифлис, 1897, с. 312.

123 Кавказский календарь на 1899 г., Тифлис, 1898, отд. II, с. 326.

124 Кавказский календарь на 1900 г., Тифлис, 1899, адрес-календарь, с. 347. Кавказский календарь на 1901 г., Тифлис, 1900, адрес-календарь, с. 354.

95 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, էջ 162, 167:

96 **Խուրդյան Մ.**, նշվ. աշխ., էջ 365:

97 **Հրանտ Իզրաշի.** Հայ դպրոցները Գանձակի գաւառում, «Կովկասեան առաւօտ», 1907, № 25, 19 հոկտեմբերի, էջ 3:

98 Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 25.

99 **Խաչատրյան Վ.**, նշվ. հոդվ., «Նոր ուղի», 1977, № 103, 27 օգոստոսի, էջ 3:

100 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, ք. 10: Տե՛ս նաև **Խաչատրյան Վ.**, նույն տեղում:

101 Նշվ. ֆոնդ, գ. 60, ք. 11:

102 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 26:

103 Աշխատավորների դեպուտատների 16-րդ գումարման Եառուսթանի շրջանային սովետի առաջին սեսիան, «Նոր ուղի», 1977, № 79, 2 հուլիսի, էջ 2:

104 **Խաչատրյան Վ.**, նշվ. հոդվ., նույն տեղում:

105 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, ք. 10:

106 Նշվ. գործը, ք. 11:

107 **Խաչատրյան Վ.**, Գրադարանավարուհին, «Նոր ուղի», 1977, № 106, 3 սեպտեմբերի, էջ 4:

108 **Տերտերեան Մ.**, Գավառ. Ղարաչինար, «Համբաւաբեր», 1917, № 4, 29 յունուարի, էջ 89-90:

109 Նշվ. հոդվ., էջ 90:

110 **Թէրլենզեան Ե.**, նշվ. հոդվ., «Հայաստանի ձայն», 1920, № 9, 1 փետրուարի, էջ 2:

1901-1902 ուստարում սովորում էր 71 աշակերտ, պատվավոր խնամակալն ու տեսուչը շարունակում էին պաշտոնավարել¹²⁵։

1904 թ. Առստան բեկից գնած հողի վրա հասարակության հավաքած 500 ռուբլով¹²⁶ 1905 թ. սկսվում է դպրոցական շենքի կառուցումը, որն ամբողջանում է 1912 թ. և նպատակին ծառայում մինչև 1979 թ. (բաղկացած էր 10 սենյակից)¹²⁷։

1908 թ. դպրոցի տեսուչն էր Հնայակ Մահակյան Կախանյանը, կրոնուսույցը՝ Մահակ Հայրապետյան Տեր-Հարությունյանցը, ուսուցիչը՝ Արշակ Հարությունյան Ղուլյանցը¹²⁸։

1912 թ. օգոստոսի դրությամբ Ղարաչինար, Վերին և Ներքին Շեն գյուղերում գործում էին պետական ժողովրդական դպրոցներ¹²⁹։

Միևնույն տարիներին գյուղի դպրոցում դասավանդում էին տեղացիներ Արշակ Հարությունյան (մինչև 1921 թ. տնօրենն էր) և Պավլի Ղուլյանցները¹³⁰։

Հիվանդանոց. տակավին ԺԹ դարավերջին գյուղում հիվանդանոցի համար շենք էր կառուցվել, որի մասին 1910 թ. փետրվարի 9-ի թղթակցությամբ Խորեն քահանա Տեր-Մարտիրոսյանցը նշում է. «Չափազանց ուրախալի երևոյթ է այսպիսի մի յետ ընկած անկլինում գոյութին ունենալ հիւանդանոց, որի համար ժողովուրդը չի էլ երազել...: Թէև Ղարաչինարում գոյութին է ունեցել մինչև ցայժմ դեղատան բաժանմունք (Фельдшерский пункт) մի ֆելդշերով և դեղատան բաժանմունքում եղել են գանազան ժամանակներում գանազան ֆելդշերներ, իրանց լաւ և յոռի կողմերով: Սակայն վերջին տարին նշանակուած էր այդ բաժանմունքում ֆելդշեր պ. Մինաս Տէր-Մինասեանը: Չենք կարող մոռացութեան տալ նրա անխոնջ անկողնապահ ծառայութիւնը, որի համար էլ կարճ ժամանակամիջոցում վայելեց տեղիս ամբողջ ազգաբնակչութեան յարգանքը...»¹³¹։ Ի դեպ, Ղարաչինարում հիվանդանոց բացվելուց հետո որոշվել էր Մ. Տեր-Մինասյանին փոխադրել Հյուսիսային Արցախի Փիր գյուղ։

Հիվանդանոցը բացվում է 30 մահճակալով։ Այն ունենալու էր մեկական բժիշկ և մանկաբարձուհի, երկու ֆելդշեր, ընդ որում, բուժաշխատողների տների վարձը, վառելանյութի հոգսը հոգալու էին բնակիչները, իսկ մնացյալ ծախսերը՝ կառավարությունը¹³²։ Կար նաև դեղատուն¹³³։

Առողջապահական այս հույժ կարևոր հաստատությունը հիշվում է նաև 1910 թ. սեպտեմբերին. «...հայ Ղարաչինար գիւղի հիւանդանոցը...»¹³⁴։

Սր. Հովհաննես (Սր. Աստվածածին) եկեղեցի. գտնվում է գյուղամիջում (N 40°26'46.61", E 046°38'05.22", ծ. մ. 711 մ)։

1841 և 1842 թթ. վավերագրերում վկայված է Սր. Աստվածածին անվամբ¹³⁵։ Նույն կերպ է հիշվում նաև 1880 թ.¹³⁶։

Տակավին 1871 թ. նշվել է, թե եկեղեցին կարոտ էր նորոգության և հարկ էր «...պայծառացուցանել զեկեղեցիս նորին»¹³⁷։



ՂԱՐԱՉԻՆԱՐ. Սր. Հովհաննես (Սր. Աստվածածին) եկեղեցին հարավ-արևելքից և ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Հայտնի է, որ 1889 թ. նոյեմբերի սկզբին Արցախի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Այվազյանը «...պիտի գնար Ղարաչինար գիւղը՝ այնտեղի վաղուց կառուցուած եկեղեցին օծելու համար: Սակայն ցրտի պատճառով, Կարապետ սրբազանը Ղարաչինարի եկեղեցու օծումը թողեց մի ուրիշ պատեհ միջոցի»¹³⁸։

Սրանից հետևում է, որ հնի տեղում նոր եկեղեցին կառուցվել էր 1880-ական թթ., իսկ անվանափոխությունն էլ կապված էր նորակառույցի օծման հետ։

ԺԹ դարավերջին եկեղեցին հիշվում է որպես «նորաշէն, կառուցեալ չորս սիւների վերայ» շինություն¹³⁹։

138 «Նոր-Դար», 1889, № 189, 11 նոյեմբերի, էջ 2:
139 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 245:

125 Кавказский календарь на 1902 г., Тифлис, 1901, адрес-календарь, с. 404. Кавказский календарь на 1903 г., Тифлис, 1902, адрес-календарь, с. 415.

126 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 349:

127 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, ք. 10:

128 Кавказский календарь на 1910 г., часть II, с. 401.

129 **Պետ.** նշվ. հոդվ., «Մշակ», 1912, № 187, 25 օգոստոսի, էջ 3:

130 **Ղահրամանյան Կ.**, նշվ. աշխ., նույն տեղում:

131 **Տեր-Մարտիրոսեան Խ.**, Հիւանդանոց Ղարաչինարում, ՀԱԳ, ֆ. 227, ց. 1, գ. 639, ք. 34:

132 **Ռհար.** նշվ. հոդվ., «Մշակ», 1910, № 9, 16 յունվարի, էջ 3:

133 **Չարարեանց Բ.**, Կեանքը Ղարաչայում, «Մշակ», 1911, № 42, 1 մարտի, էջ 2:

134 **Չովուշ.** Թղթակցություն, «Հորիզոն», 1910, № 199, 10 սեպտեմբերի, էջ 3:

135 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47: Նաև՝ ՀԱԳ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 531:

136 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 33:

137 **Խ. Մ. Տ. Յարութիւնեանց.** նշվ. հոդվ., նույն տեղում:



ՂԱՐԱԶԻՆԱՐ. Սք. Գովհաննես (Սք. Աստվածածին) եկեղեցին հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)


Եկեղեցին հիշվում է 1903¹⁴⁰ և 1905 թվականներին¹⁴¹:
 1910 թ. փետրվարին նշվել է. «Ներկայումս Ղարաչինարը սեփական քահանայ չունենալու պատճառով, նրա եկեղեցին վատ տպաւորութիւն է թողնում այդ եկեղեցու մօտով անցնողի վրայ, երբ նա տեսնում է այդ շատամարդ գիւղի եկեղեցուն ողորմելի վիճակի մէջ, անկարգ ու դռնափակ»¹⁴²:
 Ըստ Մպարտակ Սեփյանի՝ «Եկեղեցին ունեցել է գմբէթ, գմբէթի ներսից կախված գույգ զանգերով, որի թոկերը կախված էին եկեղեցու արևմտյան սուրբի առաջ, որտեղից ժամհար Սիրմա Ղուլունց Ակոբը համաչափորեն ձգելով թոկերը, զանգի դողանջներով հավատացյալներին հրավիրում էր առավոտյան և երեկո-

յան ժամերգությանը...: Գմբէթը, որ մի առանձին գեղեցկութիւն էր տալիս շինվածքին, քանդեց Մ. Բ.-ն, որը պատահականորեն քահանա էր դառել 1922-1923 թթ.: Ոչ միայն եկեղեցու գմբէթը քանդեց, այլև դարձավ «Անաստվածների միության» նախագահ»¹⁴³:
 1924 թ. փետրվարի 7-ին Գանձակի Հայոց առաջնորդ Լևոն Եպիսկոպոսը բողոքում է Էջմիածնի հոգևոր խորհրդին, քանի որ Գանձակի գավառի իններորդ մասի գործկոմը գյուղի եկեղեցին ցորենի ամբար էր դարձրել¹⁴⁴:
 1928 թ. փակվել է¹⁴⁵:
 Եկեղեցին եռանավ բազիլիկ հորինվածքով շինություն է (արտաքին չափերը՝ 22,87 x 12,76 մ) կառուցված գլխավորապես կի-


140 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 191:
 141 Նշվ. ֆոնդ, գ. 10294, թ. 4:
 142 ՀԱԳ, ֆ. 227, ց. 1, գ. 477, թ. 10:

143 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, թ. 19:
 144 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), էջ 46:
 145 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:

սանձակ և անձակ քարով, կրաշաղախով: Մակավ քանակությամբ սրբատաշ քարն առավելապես գործածվել է որպես անկյունաքար: Նրանով են շեշտվել նաև մուտքն ու լուսամուտները:



0 5m



0 5m

ՂԱՐԱԶԻՆԱՐ. Սբ. Գովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.) և հարավային ճակատը (չափ.՝ Կ. Ղահրամանյանի)

Խալափանց Կարմիր ավետարան. 1930-ական թվականների սկզբին Խալափի փոքր եղբայրը՝ Չքավորական կոմիտեի նախագահ Սահակը, Ավետարանը փրկում է հրո ճարակ դառնալուց՝ այն գաղտնի հանելով եկեղեցում կուտակված և հրկիզման ենթակա կրոնական գրքերի միջից. «Գիրքը փաթաթում են, դնում պղնձե կաթսայի մեջ, կափարիչով ծածկում եւ ...«թաղում» են գիրքը: Պատերազմից էլ 15-20 տարի հետո, երբ Խալափանք քարե նոր տուն են կառուցում, թաղած տեղից հանում են Ավետարանը, դնում փայտե փոքրիկ արկղի մեջ, թաքցնում նորակառույց շենքի պատի մեջ՝ հարմար տեղում»¹⁴⁶: Ավետարանի հետագա ճակատագիրն անհայտ է:

Քահանա. Ղարաչինարում քահանայագործած հոգևորականներից հայտնի են ներքոհիշյալները.

Տեր Սողոմոն. 1847 թ. մարտին արդեն վախճանված էր¹⁴⁷:

Գրիգոր Մարգարյան Եղիազարյանց (ծնվ. 1835 թ., ձեռն. 1865 թ. հունիսի 8-ին). քահանայագործում էր 1865 թ.-ից մինչև թերևս 1904 թ., երբ արդեն հանգուցյալ հոգևորականը հիշվում է որպես «...գիտական մի տգետ» քահանա¹⁴⁸: 1893 թ. ուներ 3 որդի՝ Սողոմոն, Հարություն, Բեգլար¹⁴⁹: Հիշվում է նաև 1895 թ.¹⁵⁰:

146 **Ղույան Ա.**, Խալափանց Կարմիր ավետարանը, «Մոսկի դղումներ», 1994, № 2, 25 փետրվարի, էջ 4:

147 ՀԱԴ, ֆ. 56, ց. 2, գ. 456, ք. 28 շրջ.:

148 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 10294, ք. 1 շրջ.։ Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 124: «Արարատ», 1871, Ը, էջ 484: 1873, ԺԲ, էջ 486: 1888, ԺԲ, էջ 807: **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 87:

149 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 190: Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 96: Ի դեպ, ԺԺ դարի երկրորդ կեսի վերջերին դպիրն էր Մարգիս (Մերգեյ բեկ) Ավագ-Բեկյան Մելիք-Ստեփանյանցը (1893 թ. 42 տարեկան էր):

150 **Ղահրամանյան Կ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 89:

Հարություն Տեր-Աստվածատրյան Տեր-Ղազարյանց (ծնվ. 1772 թ.). քահանա է ձեռնադրվել 1807 թ. մարտի 17-ին Տիփլիսի Սբ. Նշան եկեղեցում: Պաշտոնավարել է 1807 թ.-ից առնվազն մինչև 1845 թ.¹⁵¹:

Հովհաննես Ռուստամյան. հիշվում է 1851 թ.¹⁵²:

Հովհաննես Տեր-Սողոմոնյան. ըստ ամենայնի՝ 1874 թ. հանգուցյալ էր: 1893 թ. ուներ 1 որդի՝ Նիկոլայ¹⁵³:

1898 թ. քահանայական խնդրի առթիվ նշվել է. «Մեր գիտը ահա մի քանի տարի է առանց քահանայի է մնացել, չը նայելով, որ բաղկացած է մօտ 200 նիթապետ համարեա ապահով տնտեսից: Ինչպես լսում ենք, հոգևոր վարչությունը, երևի զիջանելով որոշ նպատակի ձգտող մարդկանց խնդիրքին, հակառակ իր կարգադրության, որոշել է ձեռնադրել մեր գիտի հանգուցեալ քահանայի որդուն, որը անպայման տգետ է և անարժան այդ կոչման համար: Ինչ պիտի սպասել այնպիսի մի քահանայից, որ հազիւ կարդալ միայն գիտե. ինչ հեղինակություն պիտի ունենայ նա այն գիտում, ուր կան բաւական թով հասկացող, փոքր ի շատե ուսում առած երիտասարդներ»¹⁵⁴:

1901 թ. գյուղն ուներ 2 քահանա¹⁵⁵:

Սողոմոն Եղիազարյան. քահանայագործում էր Ի դարասկզբին՝ 1904 թ.¹⁵⁶: Սպանվել է 1907 թ. օգոստոսի 29-ին Նիկոլայ քահանայի ձեռքով¹⁵⁷:

Նիկոլայ Տեր-Հովհաննիսյան Տեր Սողոմոնյանց. 1906 թ.՝ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, Մարով գյուղից փոխադրվում է Ղարաչինար՝ որպես երկրորդ քահանա, սակայն «...տեր Սողոմոն Եղիազարովը դեմ էր դրան: Նիկոլայ Տեր-Սողոմոնովը բողոքներ է ուղարկում Աշոտ եպիսկոպոսին և սպառնում բացահայտորեն: Նա վախեցնում էր կարաչինարցիներին: 1907 թ. օգոստոսի 19-ին սպանում է քահանա տեր Սողոմոն Եղիազարովին և հետո ինքը նշանակվում այդ պաշտոնում: Կարաչինարցիները խիստ զարմացել էին, թե այդ ինչպես է Աշոտ եպիսկոպոսը մարդասպանին նշանակել գյուղի քահանա: Դրանից հետո կարաչինարցիները հրաժարվում են եկեղեցի գնալ, որովհետև «այստեղ քահանա մարդասպան էր» տիրություն անում: Կարաչինարցիները պնդում էին, որ նույն մարդասպանի ձեռքով սպանվել է նաև համագյուղացի Թևոս Խաչանովը: Նրանք պահանջում էին պատժել հանցագործներին և նրանց հեռացնել գյուղից: Կարաչինարցիները բացահայտ բողոքում էին, թե իրենք չեն «ցանկանում մարդասպան քահանա ունենալ»: Նիկոլայ Տեր-Սողոմոնովը Դաշնակցության կուսակցության անդամ էր: Ելիզավետպոլի թեմի քահանա վարդապետ Կորյունը, որը 1905-1907 թթ. Դաշնակցության կուսակցության Ելիզավետպոլի տեղական կենտրոնական կոմիտեի ղեկավարն էր, շահագրգռված էր, որ նա դառնար Կարաչինարի եկեղեցու քահանա: Այդ մասին 1909 թ. մայիսի 27-ին ցուցում էր տվել Ելիզավետպոլի բնակիչ Խուստին Կամկրելիձեն: ...վարդապետ Կորյունը չէր սիրում Կարաչինարի քահանա տեր Սողոմոն Եղիազարովին, որովհետև վերջինս չէր ընդունում դաշնակցությանը ու չէր կատարում Կորյունի պահանջը՝ դրան հատկացնել թուրքերի դեմ պայքարելու և հայերին պաշտպանելու համար: Այդ պատճառով էլ... Նիկոլայ Տեր-Սողոմոնովին հրահանգվել էր վերացնել Եղիազարովին»¹⁵⁸:

151 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531-533:

152 Վաերրագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 209:

153 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 124: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 190:

154 «Մշակ», 1898, № 108, 23 յունիսի, էջ 3:

155 Վաերրագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 416:

156 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 10294, ք. 2:

157 **Աբրահամյան Հ.**, Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը, Ս. Էջմիածին, 2009, էջ 88:



ՂԱՐԱՉԻՆԱՐ. հատվածներ գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



1910 թ. փետրվարի 2-ին Ռհաք ծածկանունով «Մշակ»-ի թղթակից Բալաբեկ Չաքարյանը վերոնշյալ դեպքերի առնչությամբ գրում է. «Սրանից մի քանի տարի առաջ, այսինքն՝ թուրք-հայկական կոնֆլիկտների ժամանակ, Ղարաչինարը կամ Աղջաղական ուներ մի ծխական քահանայ՝ հանգուցեալ տեր Սողոմոն Եղիեանցին: Նոյն գիտացի տեր Նիկողայոս Տեր-Սողոմոնեանը, որը քահանայ էր ձեռնադրուած Ջիւանշիր գաւառի Խորուզլու գիւղի համար, պատճառ բերելով Խորուզլուի՝ թուրք-հայկական ընդհարումների ժամանակ աւերուելը, կամեցաւ ինքն էլ իր հայրենի գիւղում քահանայ լինել, ինչպէս երկրորդ քահանայ, բայց վերոյիշեալ հանգուցեալ Սողոմոն քահանան խանգարեց նրան այդ բանը աջողացնելու, կամենալով միայն ինքը օգտուել Ղարաչինար գիւղի արդիւնքովը: Եւ պատճառն այն էր, որ այդ երկու քահանաների մէջ մեծ խռովութիւններ, տարաձայնութիւններ տեղի ունեցան, որոնց ձայնը հասաւ և Ղարաբաղու կոնսիստորիայն: Դրանից յետոյ, թուրք-հայկական ընդհարումների ժամանակ, Սողոմոն քահանայ Եղիեանցը սպանուեց Ղարաչայ գետի մօտ գտնուող Ներքին-Շէն կոչւած գիւղի վերևում: Սպանուեց, ինչպէս ասում են, կուսակցութեան տերորիստների ձեռքով այն պատճառով, որ նա իբր թէ եղել է հեղինակը Ղարաչինարում տեղի ունեցած մի շարք սպանութիւնների և այլ վատքար արարքների, որոնք վնաս են, ըստ կուսակցութեան «տեմպերամենտի» ժողովրդի շահերին: Կասկածելով, որ տեր Սողոմոնը սպանել է տեր Նիկողայոսի դրդումով, կառավարութիւնը նրան արքայաց Բագուի նահանգը: Ազատելով արքայից, տեր Նիկողայոսը վերադարձաւ Ղարաչինար գիւղը և շարունակեց այդ գիւղում իր քահանայագործութիւնը, սակայն նրան անցեալ 1909 թ. ամառը նորից ձերբակալեց կառավարութիւնը և ուղարկեց... Նովաչերկասկ: Շուտով լինելու է նրա գործի քննութիւնը...»

158 Արքահայր Ջ., նշվ. աշխ., էջ 88-89: Այլ աղբյուրի համաձայն՝ ցարական իշխանությունները Նիկոլայ քահանային առաջադեմ հայացքների համար արքայում են Նովոչերկասկ, որտեղ էլ կնքում է մահկանացուն, իսկ Եղունց քահանային սպանում են գյուղում (Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, Երևան, 1990, էջ 52: Տե՛ս նաև նույնի՝ Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք Բ, Երևան, 1993, էջ 22):

Այժմ, Աղջաղայայ կամ Ղարաչինար մեծ գիւղը քահանայ չունի: Թէկուզ հարևան գիւղի քահանան կատարում է և այդ գիւղի եկեղեցական օրէնքները, բայց մեծ դժուարութիւններով...»¹⁵⁹:

1910 թ. գյուղը քահանա չուներ¹⁶⁰: Կացութիւնը նույնն էր նաև 1912 թ.¹⁶¹:

Սրապիտն Ավետյանց. հիշվում է 1923-1924 թթ.¹⁶²: 1923 թ. մինչև նոյեմբեր ամիսը բանտարկված էր¹⁶³:

Ըստ Սպարտակ Սեփյանի՝ «Գյուղի հինգ գերդաստաններ քահանաներ են տվել. դրանք են՝ Բոստունք (Աբրահամյաններ), Եղունք (Եղիազարյաններ), Տեր-Նիկոլայանք (Սողոմոնյաններ), Վետունք (Ավետյաններ), Մորուսանք (Ստեփանյաններ): Սրանց մեջ ժառանգական, քահանայական գերդաստանը Բոստունք են, որոնք հնագույն շրջանից մինչև այսօր կոչվում են Իրիցանք (Տերտերանք): Այս տոհմի յուրաքանչյուր անդամ մինչև 1920 թվականը գրվում էր Տեր-Աբրահամյան ազգանունով, իսկ 1920 թվից հետո նոր աճող սերունդը ազատվեց «Տեր» մասնիկից...: Եղունց տոհմը տվել է միայն մեկ քահանա, Տեր-Նիկոլայանց տոհմն էլ էր տվել մեկ քահանա՝ տեր Նիկոլայ անունով: Այս վերջինս աշխատում էր Եղունց քահանայի հետ և որոնք իրար հետ չէին հաշտվում: Սրանց մեջ անհաշտությունը ծագում էր ծխերի անհավասար բաշխման, եկամտուտի անհավասար բաժանման և նյութական այլ հարցերի շուրջ: Տեր Նիկոլայը ազատամիտ էր, հարում էր դաշնակցական կուսակցությանը, այս էլ հող ստեղծեց Եղունց քահանայի համար, որ տեր Նիկոլային մատնի ցարական կառավարությանը ու նրան արքայի տա Նովոչերկասկ, որտեղ էլ անհայտության մեջ կորավ տեր Նիկոլայը, իսկ դաշնակցությունն էլ իր կուսակցականի վրեժը լուծելով, օրը ցերեկով սպանեց Եղունց քահանային: ...մինչև այսօր էլ Սողոմոնյանները գյուղում հայտնի են Տեր-Նիկոլայունք կոչումով:

159 ՀԱԴ, ֆ. 227, ց. 1, գ. 477, ք. 9-10:
160 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 227:
161 Նշվ. ֆոնդ, գ. 11608, ք. 361 շրջ.:
162 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), էջ 46:
163 Նշվ. աշխ., նույն տեղում:

Բուն դարաչինարցի քահանաների վերջին մոնիկանը ողորմածիկ Ավետյան Հայկն էր, որը Ներսիսյան դպրոցը ավարտած, բազմակողմանի զարգացած, շատ կիրթ մի անձնավորություն էր...: Նա կամավոր կերպով հրաժարական տվեց Էջմիածնին և կարգալույծ եղավ: Երկար ժամանակ աշխատեց շրջանի գյուղատնտեսական բաժնի մեղվաբուծական սեկտորում ու մահացավ ավտովթարից...» (1980-ականներին)¹⁶⁴:

Ուխտատեղի. 1916 թ. օգոստոսի 10-15-ը Գանձակի փոխանորդ Լևոն վարդապետն այցելում է գյուղի ուխտատեղի (անունը չի նշվում)¹⁶⁵:

Մեփունց թյափա կոչվող հնագիտական բլուր. գտնվում է Գյուրգյուռ գետի զառիթափ ափին: Հայտնաբերվել են կավե տարբեր իրեր, պղնձե գավաթ, զենքեր և այլն: 1988 թ. այդ տարածքը մասամբ կառուցապատվել է¹⁶⁶:


Գերեզմանոց. տարածվում էր գյուղի հյուսիսային կողմում՝ գետի ձախակողմյան փոքրիկ բարձրության վրա: 1987 թ. դրությամբ պարունակում էր ավելի քան 200 տապանաքար, որի մի մասն անմշակ տապանասալ էր, իսկ մյուսները՝ ուղղանկյունաձև մշակված տապանաքարեր: Վերջիններիս մեծ մասն արձանագիր էր, սակայն թվակիրներից ամենից հինն ընդամենը 1816 թ. ից էր.

Տապանաքար գերեզմանոցում.

Այս է տապան տ(ե)ր Կալուտյին, որ է որդի Փանոսին, / ՌՄԿԵ (1816) օկրադոսի Ե (5)ին:

Հրատ. առաջին անգամ:

Գյուրգյուռ կամուրջ. կառուցվել է 1885 թ. գյուղի հյուսիսային եզրին՝ Սևջուր գետի վրա: Միաթիշք է: Շարվածքն իրականացված է անմշակ և կիսամշակ, իսկ թաղակիր կամարը՝ սրբատաշ քարով, կրաշաղախով: Անցուղու լայնությունը 5,20 մ է, իսկ թռիչ-




ՂԱՐԱԶԻՆԱՐ. Գյուրգյուռ կամրջի հոսքընթաց ճակատն ու կտրվածքը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

164 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, թ. 20: Տե՛ս նաև **Ղահրամանյան**, նույն տեղում:

165 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 622:

166 Վարդանյան Գ., Ափսոս, որ դուրս է մնացել, «Մշակի ղողանջներ», 2006, № 12, դեկտեմբեր, էջ 3:



ՂԱՐԱԶԻՆԱՐ. Գյուրգյուռ կամրջի հոսքընթաց ճակատն ու շինարարական արձանագրությունը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

քի երկարությունը՝ 6,18 մ: Հոսքընթաց ճակատին ազուցված շինարարական արձանագրությունը վկայում է.

Ղարա]չ(հ)նար գ[ետ]ջ. / 1885 ամի. / յիշատակ է կանուրջս Միրապիին, Պետրոսին, Աագեանց / Յոհաննէսին և իր / որդայն երից:



Կանուրջ. 1960-ական թթ. Ղարաչինար-Մանասիշեն ճանապարհին՝ ձորանցի վրա, Միքայել Մադաթի Օսիպովի նախաձեռնությամբ կառուցվում է նոր կանուրջ¹⁶⁷:

Սրբատեղի. հայտնի էին Ապրեսանց և Խալափանց սրբատեղիները¹⁶⁸:

Փառքի (ՀՄՊԶ) հուշարձան. գյուղի կենտրոնում կառուցված Մեծ հայրենականում զոհված կամ անհետ կորած դարաչինար-ցիների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողի բացումը տեղի է ունենում 1977 թ. մայիսի 9-ին¹⁶⁹:

«Ոչ որ չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել». Այսպիսի վերտա-նություն ունեն ԼՂՀ Շահումյանի շրջանի սահմանամերձ Ղարաչինարի կենտրոնական հրապարակում 1980 թվականի մայիսի 9-ի Մեծ Հայրենականի 35-ամյա հաղթանակի կապակցությամբ երախտապարտ դարաչինարցիների սեփական միջոցներով կառուցած հուշարձան-կոթողի գլխավոր պատը: Հուշարձան-կոթողը կառուցել էր ենթաշրջանի Ղարաչինարի, Մանասի շենի և Գաղթութի ժողովուրդը՝ հավերժացնելու իրենց ամենա-հայրենասեր ու արժանի 308 զավակների հիշատակը: ...հուշարձան-կոթողի քարե հուշատախտակի վրա փորագրված էր բոլորի անուն, հայրանուն, ազգանունը»¹⁷⁰:

Ղարաչինարից զոհվել կամ անհետ կորել է 167 հոգի¹⁷¹:

Մանրատեղանուն. հայտնի էին Բրի չիմի (Մրջունի) տափը, Գյոդավ արիքը, Գյուրջին ձորը, Շոր ջուրը, Գյազխանան, Յաթաղի ձորը, Չալունց թախտը, Սուրանի ձորը, Միմյանց ձորը, Հովուզի դուզը, Դիք տափերը, Գերեզմանուտի յալը, Շլորուտը, Քավթառի ձորը, Կուճուր դուզը, Մեշ դուզը, Թալիշանց տափերը, Չկոտը, Յեխին տակը, Չաքի նահատակը, Կրակտվածը, Դարբանդը, Յանըրը, Բուրուլ-Պետին, Թուլիածը, Աղվեսի յալը, Դալան, Միջավայրը, Չկոտը, Աղջի յազին, Աջին, Բուշունց առուն, Բադատեղերը, Շունքարը, Տանին գարուտեղը, Չալակաղնուտը, Խնձորի ձորը, Սառնատանի դռը, Մեղրունց դորուղը, Ալին կեծանը, Խազազի ձորը, Շըրշըրը¹⁷²:

ՍԱՆԱՇԻՌ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքի-շեն) ավանից 10,2 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1270-1370 մ բարձրությամբ սարահարթի վրա՝ Բուզլուխ և Էրբեջ գյուղերի միջնահատվածում:

Այլ անվանում. վավերագրերում առավել հաճախակի հիշվում են Մանուշ և Մանուշեցիք անվանաձևերը: Ներկայումս աղավաղված կոչվում է Մանաշլը:

Պատմություն. գյուղի վերաբերյալ պատմական տեղեկություններին հանդիպում ենք՝ սկսած ԺԷ դարից, սակայն տա-

րածքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները վկայում են, որ Մանաշլիղը գոյություն է ունեցել առնվազն ԺԲ-ԺԳ դարերից:

1629 թ. գյուղը հիշվում է այլազգիների ձեռքից ձեռագիր Ժողովածուն գերությունից ազատելու կապակցությամբ. «...ես՝ Թումայ Էրեցս Մանուշեցի, առի գսբ գիրքս ի ձեռաց այլազգեաց և ետու յիշատակ ինձ և կողակցին իմոյ՝ Մարգարտին, ի ձեռն Յոհաննէս վարդապետի եղբար որդաց Աթանէս եպիսկոպոսին և Գրիգոր եպիսկոպոսին...»¹:

Հայտնի է, որ 1870 թ. Սբ. Էջմիածնում շինարարական աշխատանքներին օժանդակելու նպատակով գյուղի հասարակությունը հատկացնում է 12 ռուբլի²:

ԺԹ դարավերջին Մանաշլիղը, Բուզլուխը, Սարիսուն և Ղարաբուլաղը գտնվում էին կալվածատերերի Լուարսար և Պավել Մելիք-Բեգլարյանների տիրապետության ներքո³:

1894 թ. մայիսին «...մի արիւնահեղ կռիւ պատահեց մեր սահմանակից թուրք զիւղացի սարուսուցիների հետ: Թուրքերի անասուններն ընկնում են մեր խոտհարքը: Հայ դորողչիները թուրքերին յայտնում են, որ խոտհարքից դուրս հանեն իրենց անասունները. թուրքերը յամառում են: Հայ պահապանները թակելով դուրս անելու ժամանակ թուրքերը պատրաստում են հրացան արձակելու. պահապանները նկատելով այդ, ընկնում են թուրքերի ձեռքերի վրայ, որ արգելեն. այդ միջոցին հրացանն արձակում է թուրքի ձեռքից և դիպչում մի թուրքի: Երբ վերջինս ընկնում է կիսակենդան, ընկերներն իրենց գիղից հարայ են կանչում: Հայ պահապաններն երբ նկատում են, որ իրենց վրայ մօտ 30 թուրքեր են գալիս, փախուստ են տալիս: Թուրք ամբոխը կատաղած իրենց վիրատրուածի համար, երբ տեսնում են, որ հայերը փախած են լինում, հեռու նկատում են երկու 15 տարեկան երեխաներ..., թուրքերն անխղճաբար յարձակում են այդ երեխաների վրայ և հինգ անգամ ատրճանակ արձակում, որից երկուսն էլ վիրատուրում են: Վայրենի թուրքերը դրանով չբաւականանալով, հայ վիրատու տղաներից մէկին քաշ տալով տանում են իրանց գիղը, որպէսզի եթէ իրենց վիրատուրը մեռնի, արիւնը հայից առնեն՝ սպանեն: Հայ տղային զցում են մէկ տուն և շատ ծեծում: Մինչ այս, մինչ այն՝ մեր գիղի տանուտէրը գնում է ազատում հայ տղային և եղելութիւնն արձանագրելով՝ յանձնում մարմնատուր իշխանութեանը»⁴:

Նույն գյուղի թուրքերի հետ հերթական ընդհարումը տեղի է ունենում 1905 թ. հոկտեմբերի 27-ին. «...յարձակեցին և քշեցին Մանաշեթի տաւարը, որի պատճառով տեղի ունեցաւ տաք կռիւ»⁵:

Արցախյան ազատամարտի ընթացքում՝ 1991 թ. հուլիսի 16-ին, ի թիվս Բուզլուխ և Էրբեջ գյուղերի, ադրբեջանցիներին հաջողվում է գրավել նաև Մանաշլիղը, որը, սակայն, հայկական ուժերն ազատագրում են նույն թվականի սեպտեմբերի 13-ին:

Հազիվ մեկ տարի անց արդեն գրեթե ողջ շրջանի հետ միասին ադրբեջանցիները զավթում են նաև Մանաշլիղը:

Բնակչություն. ըստ սերնդեսերունդ փոխանցված տեղեկությունների՝ Բոլնիսից վերադարձից հետո Մանաշլիղում վերահաստատվել են հետևյալ 10 ազգատոհմերը՝ Գջանանք (Մահակյաններ, Գալստյաններ), Ալեքսանանք (Ալեքսանյաններ), Սիմոնանք (Սիմոնյաններ)՝ Մանաշլիղում և Պետրոսյաններ՝

167 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, թ. 9 շրջ.:
168 Նշվ. ֆոնդ, գ. 60, թ. 15:
169 Աշխատավորների դեպուտատների 16-րդ գումարման Շահումյանի շրջանային սովետի առաջին սեսիան, «Նոր ուղի», 1977, № 79, 2 հուլիսի, էջ 2:
170 **Արքայական Ռ.**, նշվ. հոդվ., «Ազգ», 2010, № 105, 9 յունիսի, էջ 4:
171 **Կահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 434-438:
172 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, թ. 8:

1 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1978, էջ 336 (այսուհետ՝ ԺԷԲ, համապատասխան էջերով):
2 «Արարատ», 1870, Դ, էջ 138:
3 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 61-62:
4 «Նոր-Դար», 1894, № 84, 20 մայիսի, էջ 1:
5 **Ա.Ռ.**, նշվ. աշխ., էջ 333:

Մարտունաշենում), Տարանք (Վերդյաններ, Ավագյաններ), Բյուրյունք (Գրիգորյաններ, Հարությունյաններ, Հովսեփյաններ), Թյունի-հայունք (Հարությունյաններ), Իրիցանք (Առստամյաններ), Բբանք (Բաբայաններ), Պորոսանք (Պետրոսյաններ) և Մնացականանք (Մնացականյաններ)⁶:

Հայտնի է, որ 1831-1832 թթ. գյուղի բնակիչներն էին 39-ամյա Ղազար Հարությունյան Ղազարյանցը, կինը՝ 23-ամյա Մանուշակը, 1-ամյա դուստրը՝ Նախշունը, Ղազարի եղբայրը՝ 25-ամյա Սաֆարը; Պորոս Երևանյանի 58-ամյա այրին՝ Հուրիփաշան, որդիները՝ 26-ամյա Սահակը, 21-ամյա Վարդանը, և Սահակի կինը՝ Հերիքնազը; 33-ամյա Ավանես Ավագյան Ավանեսյանցը, կինը՝ Սահրինազը, 6-ամյա որդին՝ Աղաջանը, 9-ամյա դուստրը՝ Հուրիփաշան⁷:

Գյուղի ազգատոհմերից էին նաև Ղարսունք (Վարդանյաններ, Սահակյաններ՝ Հուպուպանք), Առստամ-հայունք (Ասկարյաններ), Խնջալանք (Հարությունյաններ), Լղարանք (Հովհաննիսյաններ), Հրպետանք (Հայրապետյաններ), դարաշինարցի Օհանջանյանները և Արևմտյան Հայաստանից փրկված ընտանիքները⁸:

Համաձայն Ժորա Առստամյանի վկայության՝ Մանաշիդում էր հաստատվել Մեծ եղեռնը վերապրած 5 ընտանիք՝ Մերոք Հովհաննիսյանը կնոջ՝ Զրփոյի և դստեր (1920-ական թվականներին փոխադրվում են Բուզլուխ), Կարապետ Մուրադյանը կնոջ՝ Ռեհանի, Ջավադ Հովհաննիսյանը կնոջ՝ Բաստիի հետ, Ավետիս Եղյանը և Ծատուր Առաքելյանը⁹: Նրանք բնակվում էին Նահատակի քոլ կոչվող ճղոպրուտում՝ մատուռի շուրջը¹⁰:

Գյուղաբնակները հայտնի էին որպես երկարակյացներ: Այսպես, 1891 թ. նշվել է, որ բնակիչներից մեկը՝ Հայրապետ Հայրապետյանը, վախճանվել է 130 կամ 132 տարեկանում, իսկ միևնույն ժամանակ 100-ից բարձր տարիք ունեցող մի քանի մանաշիդիներ բնակվում էին գյուղում¹¹:

Մանաշիդի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ 1830-ական թվականներից մինչև 1910-ական թվականները գյուղի բնակչությունն անընդմեջ աճել է.

տարեթիվ	տոն	արական	իգական	միասին
1832 ¹²		6	6	12
1841 ¹³	15	39	30	69
1851 ¹⁴	12	60	53	113
1876 ¹⁵				271
1886 ¹⁶	39	213	182	395
1889 ¹⁷	35	218	141	359
1890 ¹⁸	40			400
1891 ¹⁹	30			

6 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 330:

7 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 393 շրջ.-394:

8 **Ղահրամանյան Կ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 330-331:

9 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 372-373:

10 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 332:

11 «Նոր-Դար», 1891, № 42, 15 մարտի, էջ 2-3:

12 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 392:

13 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47:

14 Նշվ. ֆոնդ, գ. 2596, ք. 92:

15 Նշվ. ֆոնդ, գ. 6775, ք. 115-116:

16 Տвод..., с. 88-89. Բացի հայերից՝ նույն թվականին գյուղում բնակվում էր նաև 1 տուն թարսար (4-ը՝ ար., 2-ը՝ իգ.):

17 **Քարխտատարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 252: Ի դեպ, ըստ արխիվային մի վավերագրի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, ք. 46-47)՝ նույն թվականին գյուղում ուներ 297 (195-ը՝ ար., 102-ը՝ իգ.) բնակիչ:

18 **Շ.**, Գիւղական տպավորութիւններ, «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 2:

19 «Նոր-Դար», 1891, № 144, 28 սեպտեմբերի, էջ 2:

1892 ²⁰	34			
1893 ²¹	40	203	154	357
1901 ²²		249	190	439
1902 ²³		259	192	451
1905 ²⁴	46	281	204	485
1908 ²⁵		332	276	608
1909 ²⁶		638	284	922
1910 ²⁷		647	295	942
1912 ²⁸	56	322	255	577
1914 ²⁹				648
1915 ³⁰		310	250	560
1918 ³¹	80	437	357	794
1925 ³²				850
1970 ³³	144	291	324	615
1981 ³⁴				415

Արցախյան ազատամարտի և հատկապես գյուղի անկման օրերին Մանաշիդը տվել է 4 զոհ՝ Մերգի Հարությունյան (մահացել է նահանջի ճանապարհին՝ Նապատում), աշխարհագրային Էդիկ Հարությունի Հարությունյան (զոհվել է 1991 թ. ապրիլի 25-ին դիրքերում), Բենիկ Մեխակի Վարդանյան (1991 թ. օգոստոսի 23-ին՝ Ներքիշենում), Մագրաղ Վերդյան (մահացել է Ներքիշենում)³⁵:

Խաղաղ բնակիչներից գատ՝ գյուղի և ընդհանրապես Արցախի ազատության համար մղված մարտերում զոհվել կամ անհետ կորել են ծնունդով Մանաշիդից արվյանարբնակ Հայկ Նիկողայի Վարդանյանը (1991 թ. օգոստոսի 21-ին Վերիշենում) և երևանարբնակ 25-ամյա Արծվիկ Դերենիկի Պետրոսյանը (1992 թ. օգոստոսի 22-ին՝ Լաչինի միջանցքի պաշտպանության ժամանակ), Լյովա Եվգենի Բարսեղյանը (Գյուլիստանի մոտ մղված 1994 թ.՝ ապրիլի 11-ի կռվի ժամանակ, անհետ կորել է), ծնունդով ապարանցի Ռաֆիկ Երվանդի Եղիազարյանը (1991 թ. սեպտեմբերին՝ Մանաշիդն ազատագրելիս), Մաշիկ Ռոմայի Ավագյանը (1994 թ. ապրիլի 11-ին Գյուլիստանում՝ ընկերոջ դիակը մարտադաշտից հանելիս)³⁶:

Մանաշիդիներն այլուր. հայտնի է, որ ԺԹ դարում մանաշիդից Սիմեոն Սահտեսյանը հիշվում է Հյուսիսային Արցախի Գետաշեն գյուղի Սք. Աստվածածին եկեղեցուն նվիրած մի խոյակաձև քարի արձանագրության մեջ՝ որպես նվիրատու³⁷:

20 Ըստ եկեղեցու շինարարական արձանագրության:

21 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, էջ 336: Տե՛ս նաև ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 198:

22 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 241-242: Տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 409:

23 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, ք. 118-119:

24 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, ք. 140-141: Տե՛ս նաև **Ա-Գ**, նշվ. աշխ., էջ 326, սակայն ըստ մատաղատների՝ 80 տուն հայ:

25 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, ք. 224-225: Այլ տեղեկագրի համաձայն (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 26, Кавказский календарь на 1910 г., с. 314)՝ նույն թվականին գյուղն ուներ 55 տուն՝ 628 (335-ը՝ ար., 293-ը՝ էգ.) բնակիչ:

26 ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 764, ք. 243-244:

27 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 189:

28 Памятная книга..., Тифлис, 1914, с. 54. Համաձայն նույն թվականի մեկ այլ տեղեկագրի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 330) գյուղն ուներ 977 (658-ը՝ ար., 319-ը՝ իգ.) բնակիչ:

29 Кавказский календарь на 1915 г., с. 155.

30 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 16 շրջ.:

31 ՀԱԳ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4:

32 **Խաչատրյան Կ., Մուրիսյան Հ., Բաղայան Գ.**, նշվ. աշխ., էջ 139:

33 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 31:

34 ԱՄՀ, հ. 6, էջ 339:

35 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 679:

36 Նշվ. աշխ., նույն տեղում:

37 **Կարապետյան Մ.**, Հյուսիսային Արցախ, էջ 340:



ՍԱՆԱՇԻՂ. գյուղը հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

Կառուցապատում. 1912 թ. գյուղում եղել է զանազան նշանակության 115 շինություն, այդ թվում՝ 1 եկեղեցի, 56 բնակելի տուն, 56 տնտեսական կառույց և 2 խանութ³⁸:

Տնտեսություն. մանաշիղցիների ավանդական և գլխավոր զբաղմունքը հողագործությունն էր. «Բնակիչները բոլորն էլ երկրագործությամբ են պարապում: Վարելահողերը պ. Մելիք-Բեգլարեաններին են պատկանում»³⁹:

1912 թ. գյուղացիներն ունեին 30 ձի, 400 խոշոր և 300 մանր եղջերավոր անասուն, 50 խոզ⁴⁰:

1915 թ. գյուղում կար 300 դեխատին վարելահող⁴¹:

Որոշ չափով զարգացած էր նաև այգեգործությունը: Հայտնի էին Գալստյան Ջավադ ապոր հիմնած «Ջվաղին բաղ» և Միմոն-հայ Մուղղուսունցի (Մարգարյան) այգիները: Ի դեպ, վերջինս նաև հիշատակագրություններ էր փորագրում շիրմաքարերի վրա⁴²:

Գյուղի տնտեսության մեջ կարևոր նշանակություն ունեին նաև ջրաղացները: Գրանցից մեկի ավերակները, որը բավականին հին էր, գտնվում էին կամարակապ կամրջից «...3-4 հարյուր մետր ցած, սակայն գետի հակառակ կողմում, Էրքեջից եկող ճանապարհի հանդիպակաց մասում...»⁴³:

Մանաշիղցում գործել են նաև Պողոսանց (գտնվում էր անտառում) և Ղջանանց Բոքորի (Ըղրջանանց՝ Գալստյան Գրիգոր) ջրաղացները (տիրոջ այգում)⁴⁴: Ի դեպ, 1930-ական թթ. վերջինս ցանկացել էր կառուցել նաև մի հողմաղաց, սակայն դա անելու թույլտվությունն իշխանությունները չէին տվել⁴⁵:

38 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 55.

39 Շ., նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 2:

40 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 55.

41 ՀԱԳ., ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 16 շրջ.:

42 Թյունիհայունց Վ., Ամենազնիվ գանձը, «Մոսվի դոդանցներ», 2013, № 2, փետրվար, էջ 3:

43 Գահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 47:

44 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 334: Ի դեպ, Ղջանանց Բոքորը 1949 թ. ստալինյան բռնաճնշման զոհերից է:

45 Թյունիհայունց Վ., նշվ. հոդվ., նույն տեղում:

Աղբյուր. մանաշիղցիները ջրային կարիքները հոգում էին գյուղամիջի և գյուղամերձ աղբյուրների հաշվին: Ներքին թաղում հայտնի էր մանաշիղցի Ջինավոր Մնացականանցի կառուցած աղբյուրը, որն էլ կոչվում էր նրա անվամբ՝ Ջինին աղբյուր⁴⁶:

Հայտնի էին նաև Ջորավոր, Շարաբխանի, Քոլին դորողի և Քարի նով աղբյուրները⁴⁷:

1987 թ. Ամատունի Առստամյանը, Միշո Ալեքսանյանը, Արշակ և Էդիկ Հարությունյանները, Մեժում Հայրապետյանը և Հրանտ Վարդանյանը գյուղից մոտ 5 կմ հեռու գտնվող Մեծ Ջանբազ լեռան ստորոտից ջուր էին անցկացրել դեպի գյուղ⁴⁸:

Կամուրջներ, ճանապարհներ. Մանաշիղցի Էրքեջ տանող ճանապարհին՝ մոտ կամրջի մոտ՝ գետափին, նշմարվում էին հին կամրջի ավերակների հետքերը⁴⁹:

1865 թ. մանաշիղցի Սարգիս Հարությունյանը՝ Փուլու Սարգիսը (Փողատեր Սարգիս), Մանաշիղ-Վերիշեն ճանապարհին՝ Փոքր Կյուրակ գետի վրա, կառուցում է կամարակապ մեծ կամուրջ⁵⁰:

Մանաշիղցի Իրցանց (Առստամյան) Հայրապետի նյութական աջակցությամբ կառուցվել էր գյուղից Էրքեջ տանող Կոմոտոս անունը կրող ճանապարհը⁵¹:

Դպրոց. հայտնի է, որ 1891 թ. մանաշիղցիները լծվել էին կենտրոնական դպրոց բացելու գործին, քանի որ այս գյուղը համարվում էր շրջակա մի քանի բնակավայրերի կենտրոնը⁵²: Ինչինչ պատճառներով (թերևս նյութական) ծրագիրը, սակայն, կյանքի չի կոչվում:

1908 թ., ի վերջո, գյուղում դպրոց է հիմնում վերիշենցի ուսուցիչ Գրիգոր Հակոբյանը, որը հենց նույն տարում «...Մանաշիղի

46 Նույն տեղում:

47 Նարաբայան Բ., նշվ. հոդվ., «Մոսվի դոդանցներ», 2015, № 10, դեկտեմբեր, էջ 4: Տե՛ս նաև Գահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 332:


48 Գահրամանյան Կ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 334:

49 Նշվ. աշխ., հ. Ա, էջ 44:

50 Թյունիհայունց Վ., նշվ. հոդվ., նույն տեղում:

51 Նույն տեղում:

52 «Նոր-Գար», 1891, № 144, 28 սեպտեմբերի, էջ 2:



ՄԱՆԱՇԻԴ. գյուղի զվտավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի՝ 2009 թ. արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Հակոբյանի, 2018 թ.)

**Մանաշիդի տնատերերի և կարևոր շինությունների ցանկը
(կազմող՝ Արամ Վերդյան)**

- 1 Ալեքսան Մնացականյան
- 2 Արմո Մնացականյան
- 3 Իշխան Սիմոնի Վերդյան
- 4 Մելիք Սիմոնյան
- 5 Գրիգոր Հարությունյան
- 6 Բարսեղ Սիմոնյան
- 7 Ադամ Վերդյան
- 8 Նիկոլայ Սիմոնյան
- 9 Վաղաշ Գրիգորյան
- 10 Էդիկ Մնացականյան
- 11 Աշոտ Բաբաքոյան
- 12 Վարինգա Ալեքսանյան
- 13 Էդիկ Ալեքսանյան
- 14 Մամիկոն Առուստամյան
- 15 Հարություն (Շարան) Ալեքսանյան
- 16 Հարություն Վերդյան
- 17 Միխայել (Պելիկ) Վերդյան
- 18 Ավետիս Ալեքսանյան
- 19 Պետրոս Վերդյան
- 20 Մերոժ Վարդանյան
- 21 Շամիր Հովհաննիսյան
- 22 Արարատ Առուստամյան
- 23 Արշավիր Հովհաննիսյան
- 24 Մինաս Նազարյան
- 25 Արարատ Հովհաննիսյան
- 26 Մաքր Հարությունյան
- 27 Ժորա Գալստյան
- 28 Մաքր (Մամուշ) Ավետիսյան
- 29 Գրիշա Ավագյան
- 30 Թևան Սարգսյան
- 31 Մամիկ Վերդյան
- 32 Համո Նազարյան
- 33 Վալդ Ավագյան
- 34 Էդիկ Վարդանյան
- 35 Արտո Հայրապետյան
- 36 Սերժիկ Ասկարյան
- 37 Հարություն Հարությունյան
- 38 Մակի Հայրապետյան
- 39 Հարություն Հայրապետյան

- 40 Ռաֆիկ Օհանջանյան
- 41 Դիմա Հարությունյան
- 42 Արարատ (Մարդին) Գրիգորյան
- 43 Էդիկ Ասկարյան
- 44 Ռուբեն Սահակյան
- 45 Բորիկ Ալեքսանյան
- 46 Համբո Վարդանյան
- 47 Պետրի Հովհաննիսյան
- 48 Աշխենիկ (Էդիկ) Վարդանյան
- 49 Հրանտիկ Մուրադյան
- 50 Եփրեմ Վարդանյան
- 51 Սարգիս Վարդանյան
- 52 Ռուբեն Հարությունյան
- 53 Արշակ Հարությունյան
- 54 Մամիկ (Մուդակ) Վերդյան
- 55 Ժորա Վերդյան
- 56 Վարսենիկ Մնացականյան
- 57 Գրիշա (Չալիկ) Սահակյան
- 58 Կոյա Նազարյան
- 59 Միշո Ալեքսանյան
- 60 Էմիլ Նազարյան
- 61 Համո (Բախշի) Նազարյան
- 62 Ամատունի Առուստամյան
- 63 Քնարիկ Ալեքսանյան
- 64 *Հին խանութ*
- 65 Բորիկ Ալեքսանյան
- 66 Ժորիկ Ալեքսանյան
- 67 Մամիկ Առուստամյան
- 68 Ռուբիկ Նազարյան
- 69 Հրաչիկ Առուստամյան
- 70 Մաշա (դոմալ) Մնացականյան
- 71 Մակիշ Սիմոնյան
- 72 Մուխի Սիմոնյան
- 73 Սարգիս Սիմոնյան
- 74 Մաշիկ Ալեքսանյան
- 75 Արկո Ալեքսանյան
- 76 Արշավիր Մնացականյան
- 77 Հարություն Մնացականյան
- 78 Ֆրեդիկ Մնացականյան
- 79 Իշխան Կարապետի Վերդյան

- 80 Հրանտիկ Նազարյան
- 81 Հակոբ Վերդյան
- 82 Ալեքսան Ավագյան
- 83 Մարուս (Սալբի) Գրիգորյան
- 84 Սուրբի Սարգսյան
- 85 Ժորա Նազարյան
- 86 Արկաղյա Ավագյան
- 87 Քյուբան Հարությունյան
- 88 Նիկոլ Հարությունյան
- 89 Անիշկա Հարությունյան
- 90 Սարգիս Հարությունյան
- 91 Մանթրի Գալստյան
- 92 Սարգիս Հարությունյան
- 93 Ռոմա Ավագյան
- 94 Գրիշա Հարությունյան
- 95 Սերգի Հարությունյան
- 96 Յուրիկ Առուստամյան
- 97 Գերասիմ Մնացականյան
- 98 Արշավիր Վերդյան
- 99 Սարգիս Գալստյան
- 100 Ժորա Առուստամյան
- 101 Ալբերտ Գալստյան
- 102 Կարո Գալստյան
- 103 Մեխակ Վարդանյան
- 104 Տիգրան Գալստյան
- 105 Հարություն Պետրոսյան
- 106 Մամիկ Պետրոսյան
- 107 Համփա Գալստյան
- 108 Հրանտիկ Գալստյան
- 109 Գրիշա Սահակյան
- 110 Նիկոլայ (Ճինգոստ) Սահակյան
- 111 Մանվել Գալստյան
- 112 Ժորա Գալստյան
- 113 Աշոտ Սահակյան
- 114 Գուրգեն Սահակյան
- 115 Էդիկ Ասկարյան
- 116 Երվանդ Տոնյան
- 117 Գարեգին Տոնյան
- 118 Դիմա Հարությունյան

- 119 Արտաշ Գրիգորյան
- 120 Բորիկ (Յուրիկ) Գրիգորյան
- 121 Սերժիկ Հարությունյան
- 122 Արամ Հարությունյան
- 123 Մեծյան Հայրապետյան
- 124 Անիշկա Հայրապետյան
- 125 Ռուբեն Տոնյան
- 126 Մուխի Տոնյան
- 127 Ապա (Նիկոլ) Գալստյան
- 128 Միշա Վարդանյան
- 129 Հրանտիկ Վարդանյան
- 130 Մուշեղ Ասկարյան
- 131 Գյուրգի Գալստյան
- 132 Արարատ Գրիգորյան
- 133 Ժորիկ Հայրապետյան
- 134 Վոլոդյա Գալստյան
- 135 Էռնեստ
- 136 Պավլի Հովհաննիսյան
- 137 Ալեքսան Հովհաննիսյան
- 138 Քյուբան Հայրապետյան
- 139 Նավասարդ Հարությունյան
- 140 Աբել Հարությունյան
- 141 Արվան Գալստյան
- 142 Մամիկ Գալստյան¹
- 143 *Դալլոն*
- 144 *Դարբնոն*
- 145 *Սր. Խաչ եկեղեցի*
- 146 *Կալ*
- 147 *«Քարի նով» աղբյուր*
- 148 *Ալյուն*
- 149 *Կոլտնտեսության գրասենյակ*
- 150 *Ջորավոր աղբյուր*
- 151 *Ջինի դալի աղբյուր*
- 152 *Սր. Աստվածածին եկեղեցի*

¹ **Դահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Գ, էջ 97-100:

դպրոցը հիմնելուց հետո վերադարձին սպանվել է ճանապարհին՝ Էշաջրի անտառում»⁵³:

Սույն դպրոցի գործունեության մասին հետագայում հիշողությամբ վկայվել է. «Դեռևս ցարական իշխանության տարիներին Մանաշիդում եղել է դպրոց. 1-ին շարքում նստում էին 1-ին դասարանցիները, 2-րդ շարքում՝ 2-րդ դասարանցիները: Սույն վարժուհին ռուսաց լեզու էր պարսկալու: Գյուղի քահանա տեր Եղիշը կրոնի դասատու էր: Հաճախ նրան փոխարինում էր որդին՝ Համբարձումը:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո բացվել են նաև 3-րդ և 4-րդ դասարաններ: Դասարանները գտնվում էին մասնավոր մարդկանց խրճիթներում: Դասավանդում էին Հակոբ տեր Եղիշի Առուստամյանը (Հակոբ վարժապետը) և նրա կին Շուշան վարժուհին (Գանձակից): Հետագայում նրանք տեղափոխվեցին Գանձակ, երկարամյա մանկավարժական գործունեության համար ԺՄՀՄ 30-ամյակի առթիվ արժանացան... Լենինի շքանշանի:

1930 թ. Մանաշիդում բացվեց 7-ամյա դպրոց, որը 1931 թ. ունեցավ իր շենքը: Շենքը չէր բավարարում, մասնավոր տներում էլ էին պարսկալու: Տնօրենը Առուստամյան Մամիկոնն էր Էրբեջից...: 1938 թ. դպրոցը դարձել է միջնակարգ և ենթաշրջանային: Այն-

53 **Նարսթյան Բ.**, Աշոտ Գրիգոր Հակոբյան, «Մռավի դոդանջներ», 2003, № 6, էջ 2: Տե՛ս նաև «Մշակ», 1908, № 70, 28 մարտի, էջ 2:

տեղ սովորում էին նաև Էրբեջի ու Բուլղովսի 7-ամյակներն ավարտած երեխաները»⁵⁴:

1940-ական թթ. հիշվում է մանկավարժ Ալեքսան Առուստամի Մնացականյանը (1914-1991, Երևան): 1941 թ. ՀԽՍՀ Շամշադինի շրջանի Պառավաքար գյուղի դպրոցի տնօրենն էր: 1942 թ. կամավոր մեկնել է ռազմաճակատ: 1944 թ., որպես 2-րդ կարգի հաշմանդամ, զորացրվել է և վերադարձել հայրենի գյուղ և շուրջ 40 տարի դասավանդել Մանաշիդի դպրոցում⁵⁵:

Որպես դպրոցի զանգ՝ ծառայում էր գյուղի եկեղեցու նախկին զանգը⁵⁶:

1970 թ. գործում էր միջնակարգ դպրոց՝ 157 աշակերտով⁵⁷:
Սր. Աստվածածին (Սր. Հովհաննես) եկեղեցի. գտնվում է գյուղամիջում (N 40°26'32.02", E 046°26'55.01", ծ. մ. 1330 մ):

1841 թ. կազմված վավերագրերից մեկում եկեղեցին հիշվում է Սր. Հովհաննես⁵⁸, իսկ մեկ տարի անց և հետագա փաստաթղթերում՝ Սր. Աստվածածին անվամբ⁵⁹:

54 **Առուստամյան Ժ.**, նշվ. հոդվ., «Մռավի դոդանջներ», 2005, № 10, հոկտեմբեր, էջ 3:

55 Մանաշիդ. խորտակված երազների և ...հույսի աշխարհ, «Մռավի դոդանջներ», 1999, № 4, օգոստոս, էջ 2:

56 **Վերդյան Ա.**, Նորից դպրոցական զանգի մասին, «Մռավի դոդանջներ», 2011, № 11, նոյեմբեր, էջ 3:

57 **Դահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 31:

58 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47:

59 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 33, ք. 20: Նաև՝ ց. 12, գ. 531 և ց. 18, գ. 33:



ՄԱՆԱՇԻՂ. Սբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից, հյուսիս-արևելքից և հարավային ճակատից բացված մուտքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

1890 թ. նշվել է. «Գիւղն ունի մի եկեղեցի, փոքրիկ, խոնար, մի կողմից քանդվում է»⁶⁰:

1892 թ. հին եկեղեցու տեղում կառուցվում է նորը. «...Եղիշէ քահանայի նախաձեռնութեամբ հին եկեղեցու տեղ մի նոր ընդարձակ եկեղեցի է կառուցում բուն հայկական ճաշակով»⁶¹: Այդ մասին փաստող շինարարական արձանագրությունից, որը փորագրվել է եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքի բարավորին, պարզվում է, որ նշված թվականին բոլոր մասնաշիջիները, բացի համագյուղացի Սարգիս Նազարյանցից, իրենց մասնակցությամբ նպաստել են հարազատ գյուղի հոգևոր ժողովարանի կառուցման գործին⁶²:

Արձանագրություն. եկեղեցու մուտքի ճակատակալ քարին՝ 8 տող.

Հայոց ՌՅԾԲ | եւ Փրկչի 1892 ամի | շնորհօք ամենակալին մեք՝ Մանաշէթ գիւղի հասարակութիւնքս, շինեցինք ս(ուր)ք | եկեղեցիս յիշատ(ա)կ հ(ն)գ(ն)յս մերո եւ ամ(ենայն) ննջեցելոց, բացի Սարգիս Նազարեանցէ ի հայ(ր)ապետ(ութ)ե(ա)ն տ(եառ)ն | Սկրտիչ Ա կաթողիկոսի, ի քահանա(յ)ու(թ)ե(ան) Եղիշէի | Սէլիք Առուստամեանցի, որ էր 34 դուն:


Հրատ. **Ղահրամանյան Վ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 78: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 79:

Սբ. Աստվածածնի անվամբ օծված եկեղեցին հիշվում է 1893 թ.⁶³:

1928 թ. եկեղեցին փակվել է⁶⁴, իսկ ավելի ուշ՝ վերածվել պահեստի⁶⁵:

Ինչպես հայտնի է, «Մանաշիղի եկեղեցուն մի քար կար, վրան գրված՝ մեկ մսխալ մեղքը տասնվեց ֆունտ բարի գործ կկշռի...: Այդ քարը դրված է եղել եկեղեցու բեմում...: Խորհրդային կարգերի հաստատումից հետո կոմունիստներն այդ քարը դեն գցեցին 1925 թ., բայց այդ միտքը միշտ պետք է հիշել, որ պետքի մարդ իր կատարած բարի գործերը, իր ստեղծած բարի անունը մի անմտածված քայլով չփչացնի»⁶⁶:

Ճարտարապետություն. եռանավ բազիլիկ է (արտաքին չափերն են 17,30 x 10,93 մ)՝ կառուցված համակ սրբատաշ քարով:



0 5m

ՄԱՆԱՇԻՂ. Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

60 Շ., նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 2:
 61 «Նոր-Գար», 1894, № 136, 18 օգոստոսի, էջ 3:
 62 Այստեղ ուշագրավն այն է, որ պատմությունը փաստորեն մեզ է փոխանցել ոչ թե եկեղեցու կառուցմանը նպաստած անձերի, այլ հակառակը՝ այդ աշխատանքներին չնպաստած անձի անունը:
 63 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 198:
 64 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, ք. 12: Ի դեպ, 1922 թ. Գանձակի թեմի կառավարիչ Լևոն Ծ. վարդապետն առաջարկել էր Եղիշե Մելիք-Առուստամյանցին շնորհել «կամիրավկա» կոչված քահանայական գլխարկ (ՀԱԴ, ֆ. 57Պ, ց. 3, գ. 375, ք. 3):
 65 Մանաշիղ. խորտակված երազների և ...հույսի աշխարհ, «Մնավի դողանջներ», 1999, № 4, օգոստոս, էջ 2:
 66 Վերդյան Ի., Ամեն մեկը պետք է հիշի, «Մնավի դողանջներ», 2006, № 2, փետրվար, էջ 4:



ՄԱՆԱՇԻՂ. Աբ. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Երկթեք ծածկի տակ առնված տանիքը ներքուստ պահում են երկու զույգ սյուները: Կիսաշրջան եզրագծով ավազ խորանի երկու կողմերում առկա է ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն: Որմերին, քայց առանձնապես խորանի մեջ ազուցված են մի քանի խաչքարեր:

Վիմագրեր. ստորև ներկայացվող 6 միավոր վիմագրից 4-ը գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Տապանաքար. հայտնաբերվել է 1893 թ. հին եկեղեցու հիմքն արևելյան կողմից փորելիս վեց արշին խորության վրա:

Այս է տապան Աբրահամի որդի Թումայել վարդապետին, ի բուին հայոց Ռ-Ղ (1641):

Հրատ. «Նոր-Դար», 1894, № 136, 18 օգոստոսի, էջ 3:


Ծանոթ. «Տապանաքարը և տառերն այնպես պահպանուել են, որ նայողը կարծում է, թե բոլորովին նոր են: Արձանագրության բառերի վանկերը ծաղիկներով են բաժանուած»:

Խաչքար (43 x 43 սմ). ազուցված եկեղեցու խորանին, ստորին մասում՝ 4 սող:

[Թ]ի(ն) ՉԸ (1269). յանուն ա(ստուծոյ), ես՝ Սարգիս[ս], [զ]Արեւշատի թռոնս է շինեց[ի] [զ]կարմուճն Գէտկցին անեղ-բայրս ու անորդիս է կանգնեցի...:


Հրատ. **Կարապետյան Ս.**, Արցախի կամուրջները, Երևան, 2009, էջ 35:

Խաչքար (52 x 43 սմ). ազուցված եկեղեցու խորանին, քիվին՝ 1 սող:



Ս(ուր)բ խաչս բարե(խաւս) տ(է)ր Խուկասի(ն)...

Հրատ. առաջին անգամ:



ՄԱՆԱՇԻՂ. Խաչքար (1269 թ.) Աբ. Աստվածածին եկեղեցու խորանում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Խաչքար (110 x 65 սմ). ազուցված եկեղեցու խորանին, քիվին՝ 1 սող:

Ս(ուր)բ խաչս բարե(խաւս) Սի...-րին:

Հրատ. առաջին անգամ:



Խաչքար (84 x 35 սմ). ազուցված եկեղեցու խորանին, եզրագուտուն և խաչաքանդակի շուրջը՝ 2 սող:

Այս խաչս է Սիրիջան[ի]... / թ(վ)ին Ռ...:

Հրատ. առաջին անգամ:



Տապանաքարի բեկոր. գտնվում է եկեղեցու բակի գերեզմանոցում, արձանագրությունը՝ 8 սող:

Հիշատակ որդի | իւրոյ կանգնացրեց և | սրբագրեց արձանագրիչ Սիմօն Սարգիսեանց. օվ որ որ | աստուծու սիրէ | այս հանգիստարանին | ողորմի հասէ:

Հրատ. առաջին անգամ:



ՄԱՆԱՇԻՂ. Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատի հարավային անկյան մոտ, ներսում ազուցված խաչքարերի բեկորներ և տապանաքար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Քահանա. Մանաշիղի ծխատեր քահանաների վերաբերյալ տեղեկություններն ըստ ժամանակագրական հերթականության հետևյալներն են.

Հովհաննես Հարությունյան Մելիք-Առուստամյանց (ծնվ. 1798 թ.). ուսանել է Աբրահամ քահանա Տեր-Գևորգյանցի մոտ: 1818 թ. քահանա է ձեռնադրվել Ղարաչինարի Սբ. Աստվածածին եկեղեցում և պաշտոնավարել առնվազն մինչև 1857 թ.: Ուներ 2 որդի՝ Արիստակես և Գրիգոր⁶⁷:

1851 թ. գյուղին հովվել է նաև Բուզլուխ գյուղի քահանան՝ *Հովհաննես Մելքոնյանցը*⁶⁸:

Գրիգոր Հովհաննիսյան Մելիք-Առուստամյանց (ծնվ. 1818 թ.). տեր Հովհաննեսի որդին էր: Քահանայագործում էր 1874 թ.⁶⁹:

1890 թ. նշվել է, որ «Բուզլուխ, Մանաշեք և գաւառական մի քանի գիւղեր քահանայ չունեն: Գիւղացիք ստիպված 10-15 վերստ ճանապարհ են գնում»⁷⁰:

Գրիգոր և Հովհաննես քահանաները հովվում էին 1871-1873 թթ. («Արարատ» ամսագրի բաժանորդներից էին)⁷¹:

Ըստ ամենայնի՝ 1893 թ. Գրիգոր քահանա Տեր-Հովհաննիսյանն արդեն հանգուցյալ էր⁷²:

Եղիշե Գրիգորյան Մելիք-Առուստամյանց (ծնվ. 1853 թ.). ձեռնադրվել է 1890 թ. սեպտեմբերի 21-ին, ըստ ամենայնի՝ հաջորդել է հորը՝ տեր Գրիգորին: Հիշվում է 1892-1912 թթ.: 1893 թ. 38-ամյա տեր Եղիշեն ուներ 2 որդի՝ Հայրապետ և Հակոբ⁷³:

Հայտնի է, որ «Մանաշիղի հոգևոր արարողությունները սկզբում կատարվում էին գյուղի դիմաց գտնվող Դոդարուտի մատուռում, որը կոչվում էր Նահատակ: Հետո նոր եկեղեցի կառուցվեց նրա նախաձեռնությամբ, իր եղբայր Սուրբի նախագծով: Այն սկսեց գործել 1892 թ.: Տեր Եղիշեն շատ բարեկիրք և ամեն ինչում օրինակելի մարդ է եղել: Լավ այգի էր գցել գյուղի դիմաց,



Եղիշե քահանա Գրիգորյան Մելիք-Առուստամյանց

իր ձեռքով ոռոգման ջրանցք փորել Քարի նով աղբյուրից մինչև Մասրուտ տեղամասը: Խաղողի, թթենու, խնձորենու հրաշալի այգի էր ստեղծել: ...խորհրդային կարգերի հաստատումից հետո դաժան հակակեղեցական գործեր կատարվեցին: Մանաշիղի և մյուս եկեղեցիները կողոպտվեցին. տեր Եղիշեին ու մյուս սպասավորներին դուրս շրպրտեցին եկեղեցուց: Խոր ծերության հասակում նրա մոտքը գոռով խուզեցին, որպեսզի չկարողանա ժողովրդի առջև երևալ: Չդիմանալով անպատվություններին՝ նա վախճանվեց 1935 թ.»⁷⁴:

67 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531: Նաև՝ գ. 532-533, 538, 542:
 68 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք 10, էջ 210:
 69 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 129: 1874 թ. դրությամբ ուներ 6 որդի՝ Եղիշե, Սողոմոն, Եփրեմ, Սիմոն, Մովսես և Մերոք: Տես նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 88:
 70 Շ., նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 2:
 71 «Արարատ», 1871, Ը, էջ 484, նաև՝ 1873, ԺԲ, էջ 486:
 72 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 198:
 73 Նույն տեղում: Տես նաև ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 227; ց. 18, գ. 764, ք. 260-261: ֆ. 57, ց. 3, գ. 48, ք. 1-2: ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 361 շրջ.: «Նոր-Ղար», 1894, № 136, 18 օգոստոսի, էջ 3:
 74 **Առուստամյան Ժ.**, Ամնոռանալի տեր Եղիշեն, «Մալի դողանջներ», 2006, № 2, փետրվար, էջ 3:




ՄԱՆԱՇԻՂ. հատված ճղոպրուտի գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Գերեզմանոցներ. առաջինը տարածվում էր Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսային և արևմտյան կողմերում: Ըստ առկա գերեզմանաքարերի ոճական առանձնահատկությունների և վիճակների՝ թվագրվում է ԺԸ-ԺԹ դարերով: Պահպանված արձանագիր տապանաքարերից հնագույնները վերաբերում են ԺԹ դ. սկզբին. «Եկեղեցին կից է գերեզմանատանը: Այդ գերեզմանատան հին գերեզմանաքարերն ունեն բառական գեղեցիկ և նուրբ ճաշակով քանդակագործված նկարներ»⁷⁵:

Երկրորդ, շատ ավելի ընդարձակ գերեզմանոցը գտնվում էր գյուղի հարավային եզրին՝ «Ճղոպրուտի» գրկում»⁷⁶: Պահպանված արձանագիր տապանաքարերից հները վերաբերում էին ԺԹ դարի երկրորդ կեսին: Սույն գերեզմանոցում թաղումները շարունակվել են մինչև գյուղի հայաթափ լինելը:


Սբ. Խաչ (Նահատակ) եկեղեցի. գտնվում է գյուղի ճղոպրուտ (ճղոպրուտ) կոչվող գերեզմանոցում (N 40°26'20.39", E 046°27'00.73", ծ. մ. 1330 մ): Սիանավ թաղածածկ բազիլիկ է: Կառուցված է կոպտատաշ քարերով, կրաշաղախով (սրբատաշ են միայն մուտքի անկյունաքարերը և թաղակիր կամարը): Արձանագրություններ չունի: Ըստ կառուցողական և ոճական առանձնահատկությունների՝ ԺԸ դարի շինություն է: Ներսում և մուտքի առջև 1987 թ. դրությամբ դեռևս պահպանվում էր մեկական խաչքար:



ՄԱՆԱՇԻՂ. Սբ. Խաչ (Նահատակ) եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

75 Շ., նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 2:


76 Վերդյան Ա., Մանաշիղյան մասունքներ, «Մուսլի դոլանջներ», 2006, № 3, մարտ, էջ 4:



ՄԱՆԱՇԻՂ. Սբ. Խաչ եկեղեցին հարավ-արևմուտքից, հյուսիս-արևմուտքից և արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Փառքի (ՀՄՊՁ) հուշարձան. Մեծ հայրենականում զոհվել կամ անհետ կորել է 84 մանաշիղցի⁷⁷: Նրանց հիշատակը հավերժացնում էր գյուղի կենտրոնում՝ եկեղեցու հյուսիսային կողմում կանգնեցված տուֆաշեն հուշակոթողը:

77 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 439-441:



ՄԱՆԱՇԻՂ. Սբ. Խաչ եկեղեցու արևմտյան ճակատից բացված մուտքը, խաչքարեր՝ եկեղեցու արևմտյան ճակատի առջև և ներսում, ՀՄԳՁ հուշարձանը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

ՆԵՐՔԻՇԵՆ

Տեղադրություն. գտնվում է Սևջուր գետի աջ և ձախ ափերին (առավելապես՝ ձախակողմում)՝ ծովի մակերևույթից 865-980 մ բարձրության վրա: Երբեմնի գավառի («Արցախի Կիլեստան գառառի մեջ Ներքին Շեն գիւղ...»)՝ կամ ներկայիս վարչական շրջանի կենտրոնական բնակավայրն է՝ շրջապատված Վերիշեն, Հայ Պարիս և Խրիսափոր գյուղերով:

Անվանում. անտեսելով զուտ հայաբնակ գյուղի հնավանդ և բնիկ հայկական Ներքիշեն անվանումը՝ դեռևս ԺԹ դարի սկզբներից ռուսական կառավարությունը պաշտոնական բոլոր

փաստաթղթերում (նաև քարտեզագրության մեջ) նախապատվությունը տվել է բնակավայրին օտարների կողմից Աղջաքենդ անվանված տարբերակին: Ցարական այս ստեղծումները հարազատորեն որդեգրել են նաև խորհրդային իշխանությունները:

1938 թվականից պաշտոնապես վերանվանվել է Շահումյան (ադրբեջանա-ռուսական տարբերակով՝ Շահումյանովսկ)՝

Վարչական կացությունը. արդեն ուշ միջնադարում Գյուլիստան գավառի նշանավոր բնակավայրերից էր, բայց գավառանիստ չէր:

1 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 106:

2 Административно-территориальное деление. Азербайджанская ССР, Баку, 1979, с. 211. Տե՛ս նաև **Ղախրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 21:



ՆԵՐՔԻՇԵՆ. տեսարաններ բնակելի թաղամասերից (լուս. հեղ.՝ անհայտ, 1970-ական թթ.)



1924 թ. դարձել է համանուն շրջանի կենտրոնը: 1961 թ. սեպտեմբերի 4-ից ստացել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ³:

Միջավայրը. գյուղի սարերը և բարձունքներն էին Բալասանին գյուղին, Լինջը, Էրգան կաճը, Ճգնավորի յալը, դաշտերը՝ Չարդահողը, Չիբիղարի հողը, Պրսի առվի հողը, Մեծ հողը, Բալունց թեղին հողը, Բյունբազի հողը, Թռածի տավիը, Հայրունց տավիը, Ճոխտակ հողին տավիը, Չափած տավիերը, Խոտհարքը, Կրակ տվածը, Բյախիզին բողազը, Կյուլուծակերը, բացատները՝ Փիշիկանց դորողը, Չատունց դորողը, Մթովանց դորողը, Շեգնոսունց դորողը, Ծոտուրանց դորողը, Բալունց թալան, Նալբանդանց հարթը, ճանապարհները՝ Մախտակ հողին, Սև հողին, Կոմոտը, ձորերն ու ձորակները՝ Բալունց դորին, Լիտրի ձորը, Խաչին ձորը (Վանքի ձոր), Աղաջանանց ձորը, Հյունի ձորը, Նազին ձորը, Նահատակի ձորը, Բխրքերծի (եղնիկի) ձորը, Աբրահամանց ձորը, Ճիբին ձորը, Ներսեսանց դուզին, Մեյրանին դոշը, անտառները՝ Փակի քոլը (անտառ), Թխկոտը, Տանձուտը, Սզնոտը, Մանդի փոսը, շրջադարձը՝ Հեքյալ թոլիլածը, քարանձավը՝ Բշկատունը, այգիներից՝ Բխճենին և այլն⁴:

Ճաղար Իրիցանց թալա անվամբ հայտնի բացատն էլ գտնվում էր Ներքիշենի և Հայ Պարիսի միջև՝ Չիբիղարի աղբյուրից վեր: Տեղամասն իր անունը ստացել էր ԺԹ դարասկզբին Բոլնիսից վերադարձած Հովհաննես Հովհաննիսյանի՝ Ճաղար երեց մականունից⁵:

Պատմություն. գավառի գլխավոր բնակավայրերից էր: Ավանում և շրջակայքում պահպանված պատմական հուշարձանների քննությունը ցույց է տալիս, որ ամբողջ ԺԵ դարում այն եղել է ծաղկուն, բարգավաճ ու խիստ մարդաշատ բնակավայր:

ԺԵ դարի վերջին Ներքիշենը հիշվում է Մելիք Բեգլար Ա-ի տիրույթներին միացված գյուղերի թվում⁶:

Հայ-թաթարական լարվածության և ընդհարումների ժամանակ՝ 1905 թ. սեպտեմբերի 20-ին, «...ներքիշենցի մի երիտասարդ մի չնչին առիթով սպանվում է թուրքարձակ Մոլլավալաթ գիւղում: Այնուհետև մարդասպանը ձի հեծած՝ չափչփում է շրջակայ թուրք գիւղերը «հաարի» կանչելով թուրքերին, իբր թե հայե-

րը յարձակվել են իրանց գիւղի վրա: Երեք ժամ անցած Գեօրանի մօտ գտնվող թուրք գիւղերից հաարվում են մի քանի հարիւր ձիաւոր, սակայն նկատելով, որ իրանք խաբված են, ցրվում են իրանց գիւղերը: Այս դէպքը բացայայտ ցոյց տուեց, թէ որքան շարժուն է թուրքական մասսան և թէ թուրքերի մէջ որայիսի արագութեամբ ու հեշտութեամբ է «մօքիլիզացիա» կատարվում»⁷:

Հայտնի էին նաև մարդասպանի անունն ու սպանության հանգամանքը. Մոլլա-Վալադի գյուղում մզկիթի վրա աշխատելիս նույն գյուղացի Ահմեդ բեկը սպանում է ներքիշենցի որմնադիր 35-ամյա Կարախան Շատվերյանցին⁸:

1906 թ. օգոստոսի 23-ին իշխանությունները «...Էկեկուցիա դրին Ներքիշեն գիւղում 2 օրով և առան 300 ռ., ճանապարհին մէկ թուրք հովի էշը թալանելու համար»⁹:

1918 թ. վերջին Դավիթ Տեր-Դանիելյանը, լինելով Արցախում, նշել է. «Գանձակի հայ գաւառամասը անարիւն հպատակութիւն էր ցոյց տուել թիւրքաց հրամանատարութեանը և Ադրբեյջանին, յանձնելով բոլոր գիւղերից որոշ քանակի զէնքեր և պարտաւորվելով վարչական, դատաստանի և հարկային գործերով ընդունել Ադրբեյջանի կարգած իշխանութիւնները: Հայերը ընդհանուր առմամբ չէին դրժել իրանց հպատակութեան խոստումը: Մի դէպք միայն անցանկալի բարոյութիւններ էր առաջացրել իշխողների և հպատակների միջև: Վերջիններս՝ յանձին Ներքին-Շենի գիւղացիների՝ կողոպտել էին թուրք քոչւորներին: Թիւրքաց հրամանատարութիւնը զօրք է ուղարկում շրջանը Էկեկուցիայի համար, և հայ գիւղացիները ստիպված են լինում մեծ քանակութեամբ պաշար սպառել պատժախմբի սնունդի վրա»¹⁰:

Ըստ ներքիշենցի Մովսես Շատվերյանի՝ 1918 թ. աշնանը գյուղի բնակիչները երեք օր դիմադրելուց հետո փախչում են նախ Վերիշեն, ապա Գյուլիստան, Թալիշ և Մեծ Շեն¹¹: Մեծ Շենում մնում են 2,5 ամիս և վերադառնում հայրենի գյուղ. «Երբ մտանք գյուղը, ի՞նչ տեսանք, ամբողջ գյուղը ծածկվել է տաք մոխիրով, երբեմն էլ այստեղ-այնտեղ բարձրանում են ծուխ առ ծուխ: Գյուղը այդ դրության մատնողները եղել են թշնամի թյուրքերը, գլխավորապես հարուստները»¹²:

3 **Ղահրամանյան Ա.**, նշվ. աշխ., հ. Ա, նույն տեղում:

4 **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 52-56: Տե՛ս նաև նույնի՝ Օջախի գիրք, հ. Գ, էջ 58:

5 **Պետրոսյան Վ.**, Չմոռանանք մեր հարագատ վայրերը, «Մոսվի դոդանջներ», 1998, № 4, էջ 4: Ի դեպ, Ճաղար երեցի որդու՝ Պետրոսի սերունդները կրում են Պետրոսյան ազգանունը:

6 **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., «Ազգագրական հանդես», 1899, գիրք Ե, էջ 329:

7 **Մխիթար**, Դրութիւնը Ջիւանչիւրի գաւառում, «Մշակ», 1905, № 205, 8 հոկտեմբերի, էջ 2:

8 **Սահակեան Ա.**, Գանձակի գաւառի նորութիւններից, «Արշալոյս», 1905, № 26, 30 սեպտեմբերի, էջ 2: Հմմտ. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 327:

9 **Նոր.**, թղթակցություն, «Չանգ», 1906, № 21, 6 սեպտեմբերի, էջ 3:

10 **Դ. Անանուն**, նշվ. հոդվ., «Մշակ», 1919, № 35, 14 փետրվարի, էջ 1:

11 Մանրամասն տե՛ս ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 52, ք. 3-10:

12 Նշվ. գործը, ք. 10 շրջ.:

1920 թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում Ներքիշենը ևս գավառի մյուս գյուղերի նման ամբողջությամբ ավերվում է թաթարների կողմից: Բնակիչներն էլ փրկվում են միայն փախուստի շնորհիվ¹³:

1992 թ. հունիսի 13-ին աղբբեջանցիներին հաջողվում է շրջանի բնակավայրերի մեծագույն մասի հետ մեկտեղ զավթել նաև Ներքիշենը:

Բնակչություն. շնչագրական առաջին տեղեկագրերից մեկի համաձայն՝ 1831-1832 թթ. գյուղի բնակիչներն էին 58-ամյա Խաչատուր Գրիգորյան Չիրքինյանցը, կինը՝ 56-ամյա Անան, 30-ամյա որդին՝ Ռուստամ, կինը՝ 24-ամյա Թագուհին, 6-ամյա որդին՝ Եսային; 50-ամյա Հարություն Գրիգորյան Չիրքինյանցը, կինը՝ 34-ամյա Ջանին, որդին՝ 10-ամյա Հաթանը, դուստրերը՝ 6-ամյա Հուրիփաշան, 4-ամյա Եղիսաբեթը; 36-ամյա Ռուշան Առաքելյան Տերփունյանցը, կինը՝ 25-ամյա Շամամը, որդիները՝ 9-ամյա Ալեքսանդրը, 3-ամյա Ավանեսը, դուստրը՝ 5-ամյա Անան; 43-ամյա Ավագ Պողոսյան Բաբայանցը, կինը՝ 36-ամյա Անան, որդին՝ 6-ամյա Հարությունը, դուստրերը՝ 12-ամյա Մարիամը, 2-ամյա Սոնան, Ավագի եղբայրը՝ 37-ամյա Ամիրը, կինը՝ 28-ամյա Սիրունան, որդին՝ 6-ամյա Ղահրամանը; 59-ամյա Մովսես Մուսայելյան Վելյանցը, կինը՝ 51-ամյա Անան, որդիները՝ 25-ամյա Ռուստամը, 17-ամյա Հաթանը, 6-ամյա դուստրը՝ Հուրիփաշան, Ռուստամի կինը՝ 19-ամյա Նազուն; 38-ամյա Դանիել Գրիգորյան Յուլյանցը, կինը՝ 27-ամյա Անան, որդին՝ 3-ամյա Կարապետը, Դանիելի եղբայրը՝ 29-ամյա Օհանը, կինը՝ 34-ամյա Սիրունան, և որդին՝ 8-ամյա Պետրոսը; 35-ամյա Սաֆար Հակոբյան Սևյանցը, կինը՝ 26-ամյա Ջավահիրը, որդին՝ 6-ամյա Բեհբուդը, դուստրը՝ 4-ամյա Խաթունը; 25-ամյա Հայրապետ Դանիելյան ..., կինը՝ 23-ամյա Հերիքնազը, որդին՝ 4-ամյա Ստեփանը, դուստրը՝ 1-ամյա Եղիսաբեթը; Սարգիս Օհանյանի այրին՝ 52-ամյա Հուրիփաշան, որդիները՝ 29-ամյա Հակոբը, 25-ամյա Սիմեոնը, Հակոբի կինը՝ 23-ամյա Սահարը, դուստրը՝ 2-ամյա Մեղրին, և Սիմեոնի կինը՝ 16-ամյա Սառան; 60-ամյա Ավանես Պետրոսյան Խիդրյանցը, կինը՝ 54-ամյա Անան, որդիները՝ 26-ամյա Առաքելը, 15-ամյա Ղահրամանը, Առաքելի կինը՝ 21-ամյա Սոնան, նրանց որդին՝ 3-ամյա Սկրտիչը; 70-ամյա Հարություն Հովսեփյան Հովսեփյանցը, կինը՝ 59-ամյա Սիրունան, որդին՝ 25-ամյա Սանթրոսը, կինը՝ 23-ամյա Ռեհանը, որդիները՝ 6-ամյա Հարությունը, 1-ամյա Կարապետը; 40-ամյա Մուսայել Խաչատուրյան Ալլահվերդյանցը, կինը՝ 26-ամյա Անան, որդին՝ 8-ամյա Խաչատուրը, Մուսայելի եղբայրը՝ 33-ամյա Ռուստամը, կինը՝ 25-ամյա Սիրունան, և որդիները՝ 7-ամյա Մեհրաբը, 4-ամյա Հակոբը; 35-ամյա Բաղդասար Հովսեփյան Ղազիյանցը, կինը՝ 28-ամյա Խանումը, որդին՝ 7-ամյա Մակարը, դուստրը՝ 4-ամյա Գյուլին; Գրիգոր Ղաբուլյանի այրին՝ 59-ամյա Հերիքնազը, որդիները՝ 30-ամյա Աղաբեկը, 22-ամյա Առաքելը, Աղաբեկի կինը՝ 25-ամյա Շուրին, որդիները՝ 8-ամյա Սինասը, 5-ամյա Կարապետը, դուստրը՝ 2-ամյա Հուրիփաշան, Առաքելի կինը՝ 15-ամյա Նազիյան; 59-ամյա Ավագ Մանուչարյան Ավագյանցը, կինը՝ 47-ամյա Մարիամը, որդիները՝ 23-ամյա Անդրեասը, 12-ամյա Հովակիմը; 50-ամյա Դանիել Օհանյան Փաշիկյանցը, կինը՝ 38-ամյա Մարգարիտը, Դանիելի եղբայրը՝ 45-ամյա Բաբան, կինը՝ 33-ամյա Անան, որդիները՝ 12-ամյա Ռուշանը, 4-ամյա Հարությունը, դուստրը՝ 2-ամյա Եղիսաբեթը; Հարություն Ավանեսյան Ճատուրյանցը, կինը՝ 32-ամյա Եզգյուլը, որդիները՝ 13-ամյա

Հակոբը, 6-ամյա Նազարը, դուստրերը՝ 11-ամյա Մարիամը, 2-ամյա Եղիսաբեթը; Ավետիս Չիրքինյանի այրին՝ 56-ամյա Մարիամը, որդիները՝ 30-ամյա Սարգիսը, 24-ամյա Խաչատուրը, Սարգսի կինը՝ 25-ամյա Անթառամն ու դուստրը՝ 2-ամյա Եղիսաբեթը; 52-ամյա Ղահրաման Ալլահվերդյան Այդինյանցը, կինը՝ 49-ամյա Սահարը, որդիները՝ 15-ամյա Խաչատուրը, 13-ամյա Այդինը, 11-ամյա Հարությունը, դուստրը՝ 7-ամյա Սառան; Հարություն Հովսեփյանի այրին՝ 50-ամյա Հուրիփաշան, որդին՝ 25-ամյա Բաբայը, կինը՝ 19-ամյա Սոնան; 67-ամյա Սարգիս Վերդյան Նալբանդյանցը, կինը՝ 58-ամյա Եղիսաբեթը, որդիները՝ 19-ամյա Բաբան, 8-ամյա Դուրունը; Ավանես Հարությունյանի այրին՝ 49-ամյա Սիրունան, որդին՝ 30-ամյա Ճատուրը, կինը՝ 24-ամյա Ջանին, և որդին՝ 1-ամյա Ավագը; 45-ամյա Սարգիս Սկրտչյան Ղլչյանցը, կինը՝ 34-ամյա Թամամը, որդին՝ 17-ամյա Սկրտիչը; Պետրոս Հայրյանի այրին՝ 36-ամյա Մարիամը, որդին՝ 5-ամյա Խաչատուրը, դուստրը՝ 7-ամյա Եղիսաբեթը; 40-ամյա Օհան Օհանյան Սուվարյանցը, կինը՝ 34-ամյա Քալին, որդիները՝ 12-ամյա Անդրեասը և 8-ամյա Ավետիսը; 51-ամյա Հարություն Ավանեսյան Շահնազարյանցը, կինը՝ 39-ամյա Թամամը, որդիները՝ 18-ամյա Օհանը, 12-ամյա Վահրիզանը, 8-ամյա Մովսեսը; 24-ամյա Հովսեփ Հարությունյան Էրմանի Գովանյանցը; Մովսես Հերիքյանի այրին՝ 50-ամյա Ջանին, որդիները՝ 12-ամյա Ղազարը, 8-ամյա Աթան, դուստրերը՝ 7-ամյա Աչիկը, 5-ամյա Հերիքնազը; Սկրտում Խաչատուրյանի այրին՝ 33-ամյա Խանումը, որդին՝ 3-ամյա Ներսեսը, դուստրերը՝ 8-ամյա Շուրին, 6-ամյա Հուրիփաշան; Գրիգոր Հակոբյանի այրին՝ 35-ամյա Վարին, որդին՝ 9-ամյա Խաչատուրը, դուստրը՝ 6-ամյա Եղիսաբեթը; Ռուստամ Հակոբյանի այրին՝ 44-ամյա Փարունանը, որդին՝ 16-ամյա Հովակիմը; 49-ամյա Մովսես Արզումանյան Հակոբյանցը, կինը՝ 48-ամյա Թավարան, որդիները՝ 15-ամյա Արզումանը, 4-ամյա Խաչատուրը, դուստրը՝ 12-ամյա Հուրիփաշան; 33-ամյա Վերդի Առաքելյան Ալլահվերդյանցը, կինը՝ 26-ամյա Խանումը, որդիները՝ 10-ամյա Ղևոնդը, 6-ամյա Ավանեսը, Վերդիի եղբայրը՝ 24-ամյա Ռուստամը, կինը՝ 21-ամյա Սահարը, և որդին՝ 1-ամյա Կարապետը; 60-ամյա Հարություն Օհանյան Ճաղկյանցը, կինը՝ 55-ամյա Նազուն, որդիները՝ 29-ամյա Աղաջանը, 11-ամյա Եղիան, Աղաջանի կինը՝ 22-ամյա Սոնան, և որդիները՝ 5-ամյա Մեհրաբը, 3-ամյա Ստեփանը, Պետրոս Բաբանյանի այրին՝ 46-ամյա Խանփարը, և որդին՝ 19-ամյա Ալլահվերդին; 50-ամյա Հակոբ Գրիգորյան Դավթյանցը, կինը՝ 38-ամյա Հուրիփաշան, որդիները՝ 12-ամյա Պողոսը, 8-ամյա Սամուելը, դուստրը՝ 3-ամյա Եղիսաբեթը, Հակոբի եղբայրները՝ 34-ամյա Ավանեսը, 25-ամյա Պետրոսը, 22-ամյա Սարգիսը, Ավանեսի կինը՝ 26-ամյա Մարիանան, որդին՝ 5-ամյա Մովսեսը, և 7-ամյա դուստրը՝ Հուրիփաշան, Պետրոսի կինը՝ 20-ամյա Հուրիփաշան, որդին՝ 4-ամյա Ստեփանը, դուստրը՝ 2-ամյա Նախշունը, Սարգսի կինը՝ 20-ամյա Գյուլջահանը¹⁴:

Դարից դար մշտապես և առավելապես բնիկներով բնակեցված Ներքիշենի կավաձատերերից 1874 թ. հայտնի էին 45-ամյա Օհանես Հարություն-Բեկյան Ասիյանցը (որդիներն էին Արսեն, Նիկողայ, Ալեքսանդր, Միքայել և Իսահակ բեկերը), նրա եղբայրները՝ Սարգիսը և Հակոբը (որդին էր Բագրատ բեկը)¹⁵:


Մեծ եղեռնից հետո բնակավայրը որոշ չափով համալրվել էր նաև Արևմտյան Հայաստանի զանազան գավառներից մագա-

14 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, ք. 381 շրջ.-389:

15 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 109: Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, Կ. Բ., էջ 86:

13 Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 436.

ՆԵՐՔԻՆ ՇԵՆ (գծեց Կառլեն Ղահրամանյանը)



- | | |
|---|--|
| <p>Ձրազաններ</p> <p>Ա. Չաչկալի (սկզբ)</p> <p>Բ. Եփրեմի</p> <p>Գ. Ապրեալ (շահմանային)</p> <p>Դ. Չաչկալի</p> <p>Ե. Մոխրիստան</p> | <p>1. Գ. Բալասյանի պարտեզ</p> <p>2. Մոսկոնցի պարտեզի տուն</p> <p>3. Բալասյանի խճ</p> <p>4. Միլիցիան</p> <p>5. Գալոսի</p> <p>6. ԿՄԲ</p> <p>7. Նին Բոսորի շենք</p> <p>8. Նին Բոսորի շենք (բնակարանային)</p> <p>9. Բալասյանի պարտեզ</p> <p>10. Եփրեմի զբոսայգի շենք</p> <p>11. Կոյնուցի զբոսայգի</p> <p>12. Բալասյանի շենք (պարտեզ)</p> <p>13. Նեկիլեմյան</p> <p>14. Անգլիկան զանգարան</p> <p>15. Բալասյանի զանգարան</p> <p>16. Գալոսի զանգարան</p> <p>17. Զաքարյանի զանգարան</p> |
|---|--|

ՆԵՐՔԻՇԵՆ. գյուղի հատակագիծն ըստ Կառլեն Ղահրամանյանի (արտատպված Կ. Ղահրամանյանի՝ Օջախի գիրք. կարոտի հասցեներ, հ. 9, Երևան, 2011 թթթթթ)

Ներքին են ավանի տնատերերի և կարևոր շինությունների ցանկը

- | | | |
|--|--|---|
| 1 Վասիլ Մոսունց (Չատունց) | 30 Ռանտիկ Վեյան | 53 Համլետ Լևոնի Աղաջանյան |
| 2 Թալիշ Խալափյան | 31 Ռաֆիկ (Ռափո) Արշակի Առուշանյան | 54 Արկաղյա Լևոնի Աղաջանյան |
| 3 Ջումշուկ Մեխակի Նալբանդյան | 32 Հայապրիսցի Արշակ Առուշանյան | 55 Մարտին Հաբեդի Բաղմանյան |
| 4 Յուրիկ Մեխակի Նալբանդյան | 33 Վոլոդյա Նալբանդյան | 56 Գուրգեն Արգունանի Մովսեսյան (տղան՝ Հարություն) |
| 5 Մեխակ (Ղաշտար) Նալբանդյան | 34 Նուխի (Տուզի) Աբրահամյան | 57 Մանավազ Բագրատի Մովսեսյան |
| 6 Լյովիկ Արշակի Մեծումյան | 35 Խորիշ | 58 Բախշի Մաֆարյան |
| 7 Արշակ Մեծումյան | 36 Էդիկ Դանիելյան | 59 Գեոն Բախշի Մաֆարյան |
| 8 Կառլեն Մեծումյան | 37 Էրբեջցի Յաշա | 60 Զիվա Մանթրոսյան |
| 9 Ժուլվեր Պետրոսի Շատվերյան | 38 Բորիկ Տոնյան | 61 Լուսիկ Վեյան |
| 10 Բորիկ Պետրոսի Շատվերյան | 39 Խաչի Խիդիրյան (տղան՝ Ռոբերտ) | 62 Վալերիկ Ազատի Բաբայան |
| 11 Թևատրոս Դաբուլյան | 40 Աշոտ Հարությունի Մինասյան | 63 Մուլթան Ներսեսյան |
| 12 Փեղո Դաբուլյան | 41 Մանաչիցի Ռանտիկ Մերգեյի Հարությունյան | 64 Արշավիր Մուլթանի Ներսեսյան |
| 13 Վալոդ Դաբուլյան | 42 Շաքար Մակարյան (տղան՝ Ժորիկ) | 65 Արմավիր Մուլթանի Ներսեսյան |
| 14 Շահեն Մակարյան | 43 Հարություն Հայրյան | 66 Մաշիկ Մուլթանի Ներսեսյան |
| 15 Դարաչինարցի Սաշա Մովսեսյան | 44 Միշա Տոնյան | 67 Էդիկ Տոնյան |
| 16 Մուրեն Բալասի Հայրյան (տղան՝ Բորիկ) | 45 Ռուսլան Ավետիսի Սառաջյան | 68 Դումաշ Բաբայան |
| 17 Ավագ Գրիգորյան | 46 Նարիման Ղահրամանյան (տղան՝ Իսակ) | 69 Լիզա Դումաշի Բաբայան |
| 18 Լյոնիկ Զավենի Մաֆարյան | 47 Սյոմա (Մեյրան) Նարիմանի Ղահրամանյան | 70 Մրապիոն Դումաշի Բաբայան |
| 19 Գլխավոր մայրուղու երկայնքով | 48 Եղիշ (մականունը՝ Տխոր) Նալբանդյան | 71 Կիրովաբաղցի քարգործ Շուրա |
| 20 Ջավեն Ավանեսյան | 49 Յուրիկ Եղիշի Նալբանդյան | 72 Արկաղյա Մաքի Միմյան |
| 21 Հրաչիկ Եղիշի Աղաջանյան | 50 Գարիկ Ալբերտի Ղահրամանյան | 73 Լենտոշ Կիրակոսի Մուրադյան |
| 22 Գրիգոր Աբրահամյան | 51 Ալբերտ Հմայակի Ղահրամանյան | 74 Աշոտ Աղաջանյան |
| 23 Արարատ Բախշիի Աբրահամյան | 52 Վալերիկ Լևոնի Աղաջանյան | 75 Հերիք Խիդիրյան |
| 24 Փեղո Մակարյան | | 76 Վալոդ Գյորգյան |
| 25 Կառլեն Լևոնի Աղաջանյան | | 77 Նիկոլ Գյորգյան |
| 26 Լևոն Աղաջանյան | | 78 Հայկազ Բաղմանյան |
| 27 Վոլոդյա Աղաջանյան | | 79 Հրաչիկ Բաղմանյան |
| 28 Ռուբեն Բալաս | | 80 Թեմո Բաբայան |
| 29 Արմիկ Ներսեսյան | | 81 Ջամո Գյորգյան (Ղառին տղան) |
| | | 82 Գետաշենցի Գուրգեն Բաբայան |

- 83 Ժորիկ Ռուբենի Խիդիրյան
- 84 Մաքի Ամիրյան
- 85 Բորիկ Ավետիսի Առունդյան
- 86 Համբարձում Ներսեսյան (տղան՝ Յուրիկ)
- 87 Ռաֆիկ Բաբայան
- 88 Յուրիկ Բաղմանյան
- 89 Ներսես Մաքիի Ամիրյան
- 90 Պայծառ Խալափյան
- 91 Ալյոշ Խալափյան
- 92 Մարտին Դուկասի Ղահրամանյան (Շուդին Մարտին)
- 93 Փեղո Աղաջանյան
- 94 Ռաֆիկ Դանիելյան
- 95 Բահատուր Վեյան
- 96 Մուխի Դանիելյան
- 97 Հովիկ Մուխիի Դանիելյան
- 98 Մելիկ Մկրտումի Դանիելյան
- 99 Ռոդիկ Համբարձումի Ներսեսյան
- 100 Կոստի Շամիրի Դարազադյան
- 101 Շամիր Դարազադյան
- 102 Կիմիկ Ռուբենի Դանիելյան
- 103 Ջարմիկ Մաքիի Ներսեսյան
- 104 Պետիկ Նահապետի Մեծումյան
- 105 Արարատ Շատուրյան
- 106 Մինարև Շատուրյան
- 107 Ջարմիկ Մովսեսի Մովսեսյան
- 108 Ժորիկ Արշակի Խաչատրյան
- 109 Կնյազ Արմենակի Խաչատրյան
- 110 Արշո Ջումիի Շատուրյան
- 111 Առաքել Աղաջանյան
- 112 Վանո Առաքելի Աղաջանյան
- 113 Բաղիշ Գյորգյան
- 114 Բենիկ Բաղիշի Գյորգյան
- 115 Մահակ Գյորգյան
- 116 Ալյոշ Դանիելյան
- 117 Յուրիկ Դանիելյան
- 118 Գարո Հայրունց
- 119 Գրիշիկ Արդուխանյան
- 120 Արմիկ Դաբուլյան
- 121 Ջարմիկ Դաբուլյան
- 122 Ռազմիկ (Շյապ) Դաբուլյան
- 123 Գրիգոր Դաբուլյան
- 124 Քրիստափոր Դաբուլյան
- 125 Վլադիկ Առունդյան
- 126 Առաքել Աղաջանյան
- 127 Կամո Միմոնի Պետրոսյան
- 128 Սիրանուշ («Միջրի») Աղաջանյան
- 129 Օլյա Աղաջանյան
- 130 Սաշա Գյորգյան
- 131 Ռոմա Դարազադյան
- 132 Արսեն Խոշակի Խիդիրյան
- 133 Ռոդիկ Կարապետյան
- 134 Ռոբերտ Մուրենի Կարապետյան
- 135 Մուրեն Կարապետյան
- 136 Յուրիկ Մուրադյան (Մասկենկով)
- 137 Ալբերտ Անանյան
- 138 Հայկ Ալբերտի Անանյան
- 139 Վանո Բաբուլյան
- 140 Ժենիկ Խիդիրյան
- 141 Բաբիկ Գյորգյան
- 142 Գաղթական Համբարձում (աղջիկը՝ Ռոզա)
- 143 Հեղուշ Ղահրամանյան
- 144 Մովսես Դանիելյան
- 145 Մահակ Դանիելյան
- 146 Կատին Ղահրամանյանի հին տունը
- 147 Վանո Պետրոսի Դաբուլյան

- 148 Ալբերտ Պետրոսի Ղարսույան
- 149 Ավետիս Դևոնյան
- 150 Վիտալիկ Ավետիսի Դևոնյան
- 151 Եղիշ Չիրքինյան
- 152 Կոլի Եղիշի Չիրքինյան
- 153 Հերիք Չիրքինյան (տղան՝ Մարտին)
- 154 Ազատ Ղահրամանյան
- 155 Լյուդվիգ Ղահրամանյան
- 156 Ժորիկ Սարգսի Ղահրամանյան
- 157 Վալէյ Սարգսի Ղահրամանյան
- 158 Հարություն (Թյունի) Ղահրամանյան
- 159 Սերգի Ղահրամանյան. ի դեպ, Թյունի և Սերգի եղբայրների շենքում հետագայում ապրում էին նրանց զավակները, իսկ բակում՝ Նարինան Հարությունի Ղահրամանյանը, որը 1965 թ. տեղափոխվեց Խաչին ձոր, այնուհետև՝ որդին՝ Սայադը
- 160 Ուրիկ Բախշիի Սաֆարյան
- 161 Ադո Ավագի Մովսիսյան
- 162 Ռոդիկ Պավլիի Առստամյան
- 163 Խոշակ Խիղիբյան
- 164 Վուրդյա Խիղիբյան
- 165 Աշոտ Խիղիբյան
- 166 Ջարմիր Դաբույան
- 167 Իզիք Չախմասազյան
- 168 Իլիաս Չախմասազյան
- 169 Չատուր Հայրունց
- 170 Ռաֆիկ Հայրունց
- 171 Բորիկ Արդուխանյան
- 172 Միշիկ Առստամյան
- 173 Ռոմա Առստամյան
- 174 Մարտին Տոնյան
- 175 Գրիշիկ Տոնյան
- 176 Ժորժիկ Բայան
- 177 Յուրիկ Համբարձումի Ներսիսյան
- 178 Բագրատ Ջալալի Վելյան
- 179 Մանավազ Մեժումյան
- 180 Ռոմեն Մեժումյան
- 181 Էդիկ Մեժումյան
- 182 Ռանտիկ Բաղմանյան
- 183 Ամիլի Բաղմանյան
- 184 Արկադյա Դուկասի Հայրյան
- 185 Մարտին Դուկասի Հայրյան (Պետրոսյան)
- 186 Մուխի Սաֆարյան
- 187 Վալդո Արդուխանյան
- 188 Բորիկ Արդուխանյան
- 189 Մուխի Սաֆարյան
- 190 Բենիկ Խաչատրյան
- 191 Եղիշ Արդուխանյան
- 192 Բախշի Արդուխանյան
- 193 Ասատուր Առստամյան
- 194 Կարեն Դանիելյան
- 195 Վալդո Չիրքինյան
- 196 Ռազմիկ Բայան
- 197 Բորիկ Դևոնյան
- 198 Մադես Խաչատրյան
- 199 Վիկտոր Հարությունյան
- 200 Քամուլ Հ.
- 201 Շագր Մո.
- 202 Գրիշիկ Ամ.
- 203 Վեր Հով.
- 204 Վալդո Ես.
- 205 Նարինան Գ.
- 206 Հանն Շել.
- 207 Միլբերտ
- 208 Ռանտիկ Նազարի Չատունց
- 209 Շահեն Մեդրյան
- 210 Արթուր Սառաջյան
- 211 Վովա Անտ.
- 212 Ջիվան Ամ.
- 213 Լուսերես Տրունյան
- 214 Ռաֆո Գ.
- 215 Մուսել Վ.
- 216 Բորիկ Ա.
- 217 Բորիկ Դևոնյան
- 218 Լյուդա Հար.
- 219 Մյունա Տ.
- 220 Շինշադ Բաբայան
- 221 Վալերիկ Գրիգորյան
- 222 Գենո Գրիգորյան
- 223 Ռոբերտ Բաբայան
- 224 Արթուր Հ.
- 225 Մուրիկ Առստամյան
- 226 Վազգեն Շատվերյան
- 227 Միշիկ Ս.
- 228 Նորա Տ.
- 229 Շովիկ Խ.
- 230 Մուրեն Կ.
- 231 Նիկիտա Ջաբարյան
- 232 Գարեգին Ավագյան
- 233 Նորա Դուլյան
- 234 Կիմիկ Աղաբեկյան
- 235 Ժորիկ Վելյան
- 236 Սարգիս (Խալի) Խիղիբյան
- 237 Շամիր Արդուխանյան
- 238 Հրաչիկ Արդուխանյան
- 239 Վալդո Արդուխանյան
- 240 Մուխի Նալբանդյան
- 241 Թևոս Մուխի Նալբանդյան
- 242 Մանյա Ջուլաբեկյանց (հետագայում ապրում է նրա փեսան՝ Յուրիկ Եփրեմի Ղահրամանյանը)
- 243 Միշիկ Ավանեսյան
- 244 Ավագ Մակարյան
- 245 Հովիկ Ավագի Մակարյան
- 246 Ջանիկ Ավագի Մակարյան
- 247 Յուրիկ Ղահրամանյան
- 248 Ջավեն Նալբանդյան
- 249 Նազար Նալբանդյան
- 250 Բորիկ Նազարի Նալբանդյան
- 251 Ժորիկ Հայկազի Անտոնյան
- 252 Ռաֆայել Հայկազի Անտոնյան
- 253 Առամանաբույժ Հեյդար
- 254 Թյունիկ Սաֆարյան
- 255 Բորիկ Հայկազի Անտոնյան
- 256 Ցակամ Առստամյան (Բոյախչունց)
- 257 Վարժապետ Եղիշ Առստամյան
- 258 Արժվիկ Ներսիսյան
- 259 Գյուլիստանցի Գրիշա Հովասափյան
- 260 Անդրանիկ Բայան
- 261 Ռաչիդ Բայան
- 262 Վիկտոր (Հովիկ) Մուրադի Պետրոսյան
- 263 Նազար Առստամյան
- 264 Կոլի Առստամյան
- 265 Ջավեն Ս.
- 266 Արկադյա Ավետիսի Ավանեսյան
- 267 Ռոմեն Ա.
- 268 Բենիկ Վ.
- 269 Կոլյա Վելյան
- 270 Նազար Վելյան
- 271 Ռաֆիկ Խիղիբյան
- 272 Արել Մոսունց
- 273 Վալերիկ Գրիգորյան (Բյուքյունց)
- 274 Մեժում Շատվերյան
- 275 Ռանտիկ Շատվերյան
- 276 Բենիկ Խիղիբյան
- 277 Նորա («Կարմուրին»)
- 278 Բախշի Վելյան
- 279 Նազար Բաբաջանյան
- 280 Բորիկ Բաղմանյան
- 281 Վալերիկ Ղ.
- 282 Մուսել Ղ.
- 283 Արարատ Ղ.
- 284 Ուրո Ղ.
- 285 Դորիկ Գ.
- 286 Յաշա Ս.
- 287 Արթուր Ս.
- 288 Բորիս Գ.գ.
- 289 Գենո Խ.
- 290 Կառլեն Մ.
- 291 Վալերիկ Ն.
- 292 Գրիշիկ Ղ.
- 293 Բորիկ Ս.
- 294 Ռաֆիկ Գրիգորյան (Բյուքյունց)
- 295 Վաղաշ Գրիգորյան
- 296 Սպարտակ Գրիգորյան
- 297 Կամո Գրիգորյան
- 298 Ջիվա Սանթրոսյան
- 299 Էդիկ Մովսեսի Գրիգորյան
- 300 Իսա՝ Մազադաթ բիբի տղան
- 301 Վահան Գրիգորյան
- 302 Վանո Ղահրամանյան
- 303 Գենրիկ Վելյան
- 304 Վալերիկ Վելյան
- 305 Քրիստափոր Վելյան
- 306 Անդր Հայրյան
- 307 Յոնոկ Հայրյան
- 308 Արարատ Արդուխանյան
- 309 Արարատ Առստամյան
- 310 Արել Առստամյան
- 311 Երվանդ Արդուխանյան
- 312 Սողոմոն Չիրքինյան
- 313 Յուրի Չիրքինյան
- 314 Սաքո Վելյան
- 315 Հայկազ Տոնյան
- 316 Իսլամ Մուխի Շատվերյան
- 317 Մակի Բ.
- 318 Միմոն Բ.
- 319 Էդիկ Բ.
- 320 Շուրա Տոնյան
- 321 Ռաֆիկ Տոնյան
- 322 Կոլի Տոնյան
- 323 Էդիկ Մ.
- 324 Գրիշիկ Սերգիի Ղահրամանյան
- 325 Լյուդա Հարությունյան
- 326 Մարտին Հայկազի Տոնյան
- 327 Ռոբերտ Բաբուռյան
- 328 Ղահրաման Չիրքինյան
- 329 Ռուբեն Առստամյան
- 330 Յուրիկ Եղիշի Չիրքինյան
- 331 Վազո Միմասյան
- 332 Օմիկ Ղահրամանի Չիրքինյան
- 333 Հովիկ Ղահրամանի Չիրքինյան
- 334 Վալդո Եղիշի Չիրքինյան
- 335 Հերիք Չիրքինյան
- 336 Սաշիկ Արշակի Մարունց (Մեժումյան)
- 337 Պատվական Արդուխանյան
- 338 Ռաֆիկ Արդուխանյան
- 339 Արկադյա Պատվականի Արդուխանյան
- 340 Սաշիկ Սաֆարյան
- 341 Կամո Սանդրոսյան
- 342 Ֆրունզե Սանդրոսյան
- 343 Ռանտիկ Բաբուռյան
- 344 Ջենո Դանիելյան
- 345 Սահակ Հակոբյան
- 346 Պետիկ Սահակի Հակոբյան
- 347 Անահիտ Տոնյան
- 348 Վալդո Տոնյան
- 349 Թաքան Գրիգորյան
- 350 Արմո Բաբուռյան (Մթովանց)
- 351 Հուդի Բաբուռյան
- 352 Սեդո Խալսիկյան
- 353 Գաղթական Մուշեղ Հակոբյան
- 354 Վալի Դարագադյան
- 355 Գրետա Սաֆարյան
- 356 Էդիկ Մուխի Սանդրոսյան
- 357 Միխայել Բալաբեկի Շատվերյան
- 358 Ջարմիր Բալաբեկի Շատվերյան
- 359 Նիկալ
- 360 Կոլիկ Խաչատրյան
- 361 Ավետիս Բաբուռյան
- 362 Գեդեցիկ Հայրյան
- 363 Հակոբ Իսայի Խիղիբյան
- 364 Ավագ Դարագադյան
- 365 Էդիկ Խիղիբյան
- 366 Գրիշա Խիղիբյան
- 367 Իսա Խիղիբյան
- 368 Գրետա Սաֆարյան
- 369 Ավետիս Ավանեսյան
- 370 Ժորիկ Մուխի Սանդրոսյան
- 371 Ռանտիկ Գրիգորի Մեժումյան (Մարունց)
- 372 Օհանջան Մեժումյան
- 373 Բորիկ Առստամյան (Հաբամանց)
- 374 Կիմիկ Ավետիսի Ավանեսյան (Գուրունց)
- 375 Արկադյա
- 376 Մուխի Սանդրոսյան
- 377 Շախի Մարունց (Մեժումյան)
- 378 Գրիգոր Մարունց
- 379 Օհանջան Մարունց
- 380 Ռաֆիկ Անանյան
- 381 Դորիկ Ռաֆիկի Անանյան
- 382 Քվենտիկ Ռաֆիկի Անանյան
- 383 Արշակ Լաչինի Չիրքինյան
- 384 Կարո Արշակի Չիրքինյան
- 385 Հայրիկ Հարությունի Սինասյան
- 386 Արտաշ Մեժումյան
- 387 Միշիկ Ազատի Բաբաբյուխյան
- 388 Ռուբեն Շամիրի Դարագադյան
- 389 Գարիկ Աղաբեկի Մեժումյան
- 390 Աղաբեգ Ջիվուզարի Մեժումյան
- 391 Սարգիս Սանդրոսյան
- 392 Լյուդվիգ Կոլի Դաբույան
- 393 Կիմիկ Խաչիկի Առստամյան
- 394 Բորիկ Առստամյան
- 395 Յուրիկ Առստամյան
- 396 Սլավիկ Էդիկի Առստամյան
- 397 Էդիկ Առստամյան («Ջհանգիրին Էդիկ»)
- 398 Ասքանազ (Ասկո) Սերոբի Առստամյան
- 399 Սերոբ Սանդրոսյան
- 400 Մարո Առստամյան
- 401 Գարեգին Սանդրոսյան
- 402 Ռուբեն Սանդրոսյան
- 403 Մարգո Պետրոսի Շատվերյան
- 404 Արշակ Շատվերյան
- 405 Նազար Շատվերյան
- 406 Արմենակ Խաչատրյան (Բալադունց)
- 407 Վանո Արմենակի Խաչատրյան
- 408 Արշավիր
- 409 Էրբեջյի Շմավոն Գիվանյան
- 410 Արկադյա Հանեսի Դաբույան
- 411 Հանես Դաբույան («Դովունց»)
- 412 Միսակ Արզումանյան (Գյուրջունց)

691 Հեղուշ Դահրամանյան	713 Յուրիկ Նազարի Նալբանդյան	735 Կուսշրջկոմի առաջին քարտուղարի տունը	761 Արտակ Անանյան
692 Բյալիի Բալունց	714 Ալբերտ Գրիգորյան	736 Ժորիկ Վելյան	762 Անո Անանյան
693 Ուրիկ Իսայի Խիդիրյան	715 Վազգեն Գրիգորյան	737 Սարգիս Խիդիրյան	763 Արեստ Անանյան
694 Ջիրոյի Մարգուշ	716 Կարո Մեծումյան	738 Շամիր Արդուխանյան	764 Ռուրիկ Անանյան
695 Խաչո Բաղմանյան	717 Ռոդիկ Հմայակի Դահրամանյան	739 Հրաչիկ Արդուխանյան	765 Բենիկ
696 Մաշիկ Բաղմանյան	718 Հմայակ Դահրամանյան	740 Մուխի Նալբանդյան	766 Արկաղյա Ավանեսյան
697 Բորիկ Ռուբենի Խիդիրյան	719 Մամսոն Տրունյան	741 Թևոս Մուխիի Նալբանդյան	767 Անուշավան
698 Ռուբեն Խիդիրյան	720 Կիմիկ Ռուբենի Դանիելյան	742 Վվագիմ	768 Ռանտիկ Առստամյան
699 Իվան Աղաջանյան	721 Բորիկ (Բուկո) Գարեգինի Դանիելյան	743 Ռաֆիկ՝ գաղթական Մարիամի որդին	769 Արշակ Դավաթյան և տղաները
700 Երվանդ Պետրոսյան	722 Գարեգին Դանիելյան	744 Սարգիս Մինասյան	770 Սաթենիկ
701 Անիշկա Ավետիսի Պետրոսյան (Ղևոնդյան)	723 Վալոդ Հայկազի Խաչատրյան (Բալադունց)	745 Սողոմոն Վելյան	771 Ռաշիդ Բաղմանյան
702 Էդիկ Ջինավորի Մեծումյան	724 Էդիկ Խաչատրյան	746 Բորիկ Բաբաջանյան	772 Ալբերտ Տ.
703 Հրաչիկ Ջինավորի Մեծումյան	725 Գաղթական Հարություն Հարությունյան	747 Ազատ Խիդիրյան	773 Մոսես Բ.
704 Ռուսլան (Լյովիկ) Գուրգենի Սկրտումյան	726 Կառլեն Հարությունի Հարությունյան	748 Անդրանիկ Միմյան	774 Ռաշիդ Բ.
705 Էրբեջցի Գուրգեն Բաղյան և մայրը՝ Հայկանուշը	727 Ժորիկ Հարությունի Հարությունյան	749 Մուրադ Մուրադյան	775 Գուրգեն Բ.
706 Պողոս Նալբանդյան և մայրը՝ Ժենիշկան	728 Մուխի Աբրահամյան	750 Սիմոն Սիմյան	776 Կոլիկ Ն.
707 Արմաղան Գրիգորյան	729 Վալոդ Աբրահամյան (Սքանանց)	751 Էդիսոն Արգունյան	777 Յուրիկ Ծ.
708 Թյունիկ Սաֆարյան	730 Մելի Դանիելյան	752 Ժորիկ Նազարի Առստամյան	778 Քոբոր Բ.
709 Արտաշ	731 Գագիկ Դանիելյան	753 Միշիկ Բաղմանյան	779 Ջինավոր Վ.
710 Գյուլիստանցի Էդգար Արգունյան	732 Կոլի Բաբոռյան (Մթովանց)	754 Սեյակ Աղաջանյան, տղան՝ Բորիկ	780 Սերգո Գ.
711 Անուշ Սերգիի Դահրամանյան և որդին՝ Լյովան	733 Վանո Կոլիի Բաբոռյան	755 Մարտիրոս Տոնյան	781 Արզիկ Ամիրյան
712 Գյուլիստանցի Ասատուր Սողոմոնի Արգունյան	734 Կիմիկ Յաշայի Բաբաջանյան	756 Կոլյա Խաչատրյան	782 Ռագվիկ Գ.
		757 Հովիկ (Մամուշկա) Պետրոսյան	783 Սերգո Բ.
		758 Մինաս Անանյան	784 Կոլի Բ. և այլք ¹
		759 Սարգիս Անանյան	
		760 Եղիշ Անանյան	

¹ Դահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Գ, էջ 40-58:

գումանի Ամիրյան, Աստղիկ Ամիրյան, Սրբուհի Բաբայան, Գուրգեն Հարությունի Բաբայան, Հովսեփ Գրիգորի Բաբայան, Ժենյա Հայկազի Բաբոռյան, Հարություն Սարգսի և Ռոզա Ավագի Գրիգորյան ամուսիններ, Արսենիկ Մերգեյի Գրիգորյան, Մովսես Մանասի Դանիելյան, Արշարույս Մելիի Դանիելյան, Հուլիս Գրիգորի Դանիելյան, Քնարիկ Այդինի Դանիելյան, Ժենյա Ջախարյան (փախստական Գանձակից), Ռաֆիկ Պետրոսի Խիդիրյան, Ժենյա Մարդիի Խիդիրյան, Բենիկ Վերդիի Խիդիրյան, Բենիկ Գերասիմի Խաչատրյան, Արո Արշակի Ծատուրյան, Սուլթան Արգունյանի Ծատուրյան, Գուրգեն Հակոբի Կարապետյան, Հարություն Եղիազարի Հարությունյան, Համբարձում Հարությունյան (ծագումով՝ Թալիշից), Շաքար Սարգսի Հակոբյան (1992 թ. հունիսի 14-ին վերադարձել է գյուղ՝ հարազատներին փրկելու), Հայկանուշ (փախստական Մինգեչաուրից), Աշխենիկ Բալաբեկի Լարուլյան, Թամարա Շամիրի Լարազադյան, Մուրել Պողոսի Լարազադյան, Շաքար Իսակի Լարազադյան, Գոհարիկ Ալլահվերդիի Լարազադյան, Շուշի Ավագի Մոսյան, Դումաշ Ալեքսանի Մովսիսյան, Սիմոն Արգունյանի Մովսիսյան, Լենդրուշ Կիրակոսի Մուրադյան, Յուրիկ Կիրակոսի Մուրադյան, Սաթենիկ Մուրադյան (Մեծ եղեռնը վերապրած), Եղիշ Գրիգորի Նալբանդյան, Վոլոդյա Հակոբի Նալբանդյան, Մամուշ Ջավադի, Ավագիմ Մռավի, Սրբուհի Ջումիի, Էռնա Ավագիմի Շատվերյաններ, Սահակ Մեսրոպի Պետրոսյան, Մամուշ Բեգրարի Պետրոսյան, Նախշուն Յականի Պետրոսյան, Սիրան Պետրոսյան (փախստական Գանձակից), Նորա Անդրանիկի Սանթրոսյան, Հուլիս Կարապետի Սանթրոսյան, Սարո Արեստի Միմոնյան, Շուշի Ջավադի Միմյան, Սոնա բիբի (փախստական Խանլարից), Արարատ Կարապետի Վելյան, Ռաֆիկ Հարությունի Վելյան, Վարդան Խաչատուրի Վելյան, Մարտիրոս Վարդազարի Տոնյան (ծագումով Էրբեջցի), Միրանուշ Տոնյան, Սաթենիկ Համբարձումի Օհանջանյան, Հայկո Չատիի Օրդուխանյան (Բալունց). մնացել են գյուղում, Կարինե Ժորիկի Դահրամանյան (1992 թ. հունվարի 13-ին տան բակում մեկ տարեկան որդու՝ Դավթի հետ միասին՝ գրադից), Նադյա Հայրյան (Դադյան) և Վեներա Վազգենի Հայրյան

(1992 թ. մարտի 3-ին՝ խփված ուղղաթիռի մեջ), Ֆրիդոն Սարգսի Ծատուրյան (1992 թ. մայիսին՝ ռմբակոծությունից), Ռաֆիկ Մերգեյի Օրդուխանյան (1992 թ. մայիսին՝ պատերազմական գործողությունների ժամանակ), Խաչատուր Համբարձումի Հայրյան (1992 թ. մայիսին՝ հիվանդանոցում), Շմավոն Գրիգորի Դիվանյան և Նունիկ Ավագիմի Մակարյան (1992 թ. գարնանը՝ այգում աշխատելիս՝ գրադից), Հայկանուշ Դուկասի Առուստամյան, Արթուր Մանվելի Դավաթյան, Էդիկ Ջինավորի Մեծումյան և Մուրադ Սաղդիի Վելյան (մնացել են գաղթի ճանապարհին), Մապետ Վելյան (ղիակը գտել են պարտիզանները և թաղել), Արտաշ Մեծումյան, Գուրգեն Արգունյանի Մովսիսյան (մնացել են գաղթի ճանապարհին), Ազիզգյուլ Ավագի Բաբաջանյան, Արշակ Արգունյանի Դավաթյան, Արմաղան Ջիլիի Դավաթյան, Մագադաթ Գևորգի Հովսեփյան, 80-ն անց տատիկ (փախստական Չելաբեթի գյուղից), Մեծ եղեռնը վերապրած Ալմաստ Մինասյան (մնացել են Գյուլիստանում), Մարգուշ Արգունյանի Բաղմանյան (1992 թ. հունիսի 13-ին՝ Գյուլիստանում), Յուլյակ Ավագիմի Գևորգյան (1992 թ. հունիսին՝ ավիատուժից), Մարտին Հաբեդի Բաղմանյան (մնացել է Հայ Պարիսում՝ աղջկան բերելիս), Աղաբեկ Ջիլիի Մեծումյան (մնացել է Նապատում), Գանձակից փախստական Մեյրան Խաչիկի Պետրոսյան (ըստ ամենայնի՝ պատանդ է վերցվել 1992 թ. հունիսի 13-ին), Շուշի Վերդիի Խիդիրյան և Հեղուշ Դահրամանյան (երկուսի ճակատագիրն անհայտ է)⁴⁵:

Խաղաղ բնակիչներից զատ՝ Ներքիշենը կորցրել է նաև 37 ազատամարտիկ՝ 23-ամյա Արսեն Անդրանիկի Հայրյան (գոհվել է 1991 թ. հունվարի 1-ին՝ ծննդյան օրը), Արտուշ Վլադիմիրի Ծատուրյան (1991 թ. սեպտեմբերի 10-ին՝ ականի պայթյունից), Սարգիս Խիտարյան (1991 թ. սեպտեմբերի 28-ին, ծնունդով՝ Երևանից), Ներսես Արարատի Լարազադյան (1991 թ. հոկտեմբերի 1-ին՝ Բուլղարիի դիրքերում), «Տիգրան Մեծ» գորամիավորման շտաբի պետ Տիգրան Սարգսի Սարգսյան (1991 թ. դեկտեմբերի 9-ին՝ Էրբեջի մոտ, ծնունդով՝ Երևանից), Արարատ Համա-

⁴⁵ Դահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 682-685:

գասպի Գոլեցյան (ծնունդով՝ Արտաշատից), կապիտան Համ-լետ Մինասյան (ծնունդով՝ Գորիսից) և Դավիթ Էդուարդի Մարասյան (Դև)՝ արմատներով Էրզրումից և Տոդից (գոհվել են 1991 թ. դեկտեմբերին Թողանում թշնամու կրակակետը ոչնչացնելիս), Աշոտ Յաշայի Մովսիսյան (1992 թ. հունվարի 1-ին՝ Բուզլուխում. հետմահու պարգևատրվել է ՀՀ «Արիության համար» մեդալով)⁴⁶, Կարո Վլադիմիրի Ծատուրյան (1992 թ. փետրվարի 6-ին՝ հետևակի մարտական մեքենայի մեջ), 25-ամյա Գևորգ Կառլենի Հարությունյան և Ստեփան Գրիգոր Ղաթուլյան (1992 թ. ապրիլի 12-ին՝ Բուզլուխում), Անդրանիկ Լավրենտի Հարությունյան (ծագումով Վերիշենից. անհետ կորել է 1992 թ. հունիսի 29-ին Մարտակերտի Հասանդաթ գյուղի մոտ կովից հետո), Գառնիկ Դանիելյան (1992 թ. սեպտեմբերի 22-ին, ծնունդով՝ Ստեփանակերտից), Մայիս Հրանտի Առուստամյան և Ֆուրման Արկադայի Գյորգյան (1992 թ. սեպտեմբերի 28-ին՝ խվիված ուղղաթիռի մեջ), Գևորգ Հրաչիկի Ղարազադյան (1992 թ. սեպտեմբերի 28-ին՝ Չլղրանում՝ 23 տարեկանը դեռ չէր լրացած), Մաքսիմ Բազանյան (ծնունդով՝ Ստեփանակերտից), Էդվարդ Խաչատրյան և Հրայր Կիրակոսյան (1992 թ. սեպտեմբերի 29-ին), Վարդան Վիտալի Վարդանյան (Տոնաշենն ազատագրելիս՝ 1993 թ. մարտի 27-ին, ծնունդով՝ Հոռաթաղից), Ռաֆիկ Աշոտի Բաղայան (ծագումով՝ Չայլուից) և Սիփան Վազգենի Մեդրակյան՝ ծնունդով Արմավիրից (1993 թ. ապրիլի 17-ին), Գրիգոր Ֆելիքսի Գրիգորյան (1993 թ. ապրիլի 17-ին՝ խվիված ուղղաթիռի մեջ, ծնունդով՝ Սիսիանից), Վահագն Հրաչիկի Տոնյան (1993 թ. ապրիլին՝ Մարտակերտի շրջանում), Սամվել (Ռեմբո-2) Հայրապետի Բաղդասարյան (1993 թ. մայիսի 20-ին՝ ակնի պայթյունից), ինժեներ-ծրագրավորող, «Շահումյան-Կենտրոն» կապի կազմակերպիչ Նորար Մարգարյան (1993 թ. հուլիսի 7-ին), Սուքիաս Մերոբի Աբրահամյան (ծնունդով՝ Ֆանտան գյուղից) և Նորիկ Լյուդվիգի Գևորգյան՝ ծնունդով Երևանից (1993 թ. դեկտեմբերի 27-ին), Լեռնեստ Արամայիսի Մարգարյան՝ ծնունդով Գորիսի Քարաշեն գյուղից (պարտիզանական ջոկատում), Միքայել Ալբերտի Հակոբյան (1994 թ. ապրիլի 12-ին՝ Գյուլիստանն ազատագրելիս, ծնունդով՝ Երևանից), Նորայր Մաշիկի Տիգրանյան (1994 թ. հունիսի 7-ին, ծնունդով՝ Գորիսից), Իշխան Բորիկի Բաղայան (1994 թ. հունիսի 16-ին, ծնունդով՝ Մաղավուզից), գանձակեցի Միշա Վարդանյան, Դաշկեսանի Կիրանց գյուղից Գրիգոր (Քոբոր) Օհանյան, բաքվեցի Ջանիկ և շամխորեցի Սուրիկ (անհետ կորել են 1994 թ. ապրիլին Գյուլիստանի կովում)⁴⁷:

Ներքիշենցիներն այլուր. հայտնի է, որ Բաթու քաղաքի Առուշանովկա թաղամասն իր անունը ստացել է ներքիշենցի Շամիր Սկրտչյան Առուշանյանցի անունից: Նրա մասին հայտնի է. «...ծնվել էր Ղարաբաղի մելիքության Ներքին Շեն գյուղում, հայտնի դարբին Տյափրունց Սկրտչի ընտանիքում: 19-րդ դարի վերջին, հոր մահից հետո նա իր եղբոր՝ Մերգիի հետ տեղափոխվում է Բաթու: Աշխատում էր մի հայ առևտրականի խանութում, և կարճ ժամանակում ձեռք բերելով որոշակի գումար՝ բացում է մի փոքր սեփական արհեստանոց: Շամիրը կաղնու փայտից պատրաստում էր տակառներ զինու, օղու և գարեջրի համար: Հետագայում իր արհեստանոցի շրջակայքում սկսում է կառուցել բնակելի շենքեր և մի բազմահարկ հյուրանոց: Շենքերի մի մասը վաճառում է Բաթու քաղաքում աշխատող հայերին, մի մասն էլ՝ տալիս վարձով: Կասպից ծովում Շամիրը գնել էր երկու բեռնատար նավ...: 1918 թ. սեպտեմբերի կեսերին, երբ թուրքական զորքերը հարձակվում են Բաքվի վրա, նա իր նավերով շատ հայրեն-

46 Խաչատրյան Մ., Վառ են պահում զոհված ազատամարտիկի հիշատակը, «Մոսկի դոկանցներ», 2005, № 2, էջ 2:
47 Գանդակյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 686-688:

նակիցների տեղափոխում է Իրանի Էնզելի քաղաքը և դրանով փրկում նրանց կյանքը...: Շամիրը կապեր էր պահպանում Բաքվում բնակվող իր համագյուղացի խոշոր առևտրականներ Գարբիել Հայրյանի, Շամիր Սանդրոսյանի (Մարկոսանց), Մոսունց (Նալբանդյան) Բեգլարի հետ...: Շամիրը հաճախակի այցելել է իր հայրենի գյուղը, սերտ կապեր է ունեցել իր ազգակիցներ Տյափրունց Սիրգայի և Ջարգյար Հովսեփի հետ: Շատ ազդվել էր, երբ քանդել են գյուղի պատմական եկեղեցին...: Շամիր պապն ապրել է 104 տարի և մահացել Բաքվում»⁴⁸:

1906 թ. Գանձակի հին գերեզմանոցում է ամփոփվել ներքիշենցի Սողոմոն Ղազարյանցի կինը՝ Սաբերը⁴⁹:

Կառուցապատում. բնակավայրը փռված է Սևջուր գետի ձախափնյա հարավարևմտահայաց սարափեշերին: Այստեղ 1912 թ. դրությամբ կային զանազան նշանակության 390 շինություններ, այդ թվում՝ 1 եկեղեցի, 180 բնակելի տուն, 195 տնտեսական կառույց, 8 խանութ և 6 ջրաղաց⁵⁰:

1916 թ. մի նկարագրությունից պարզ է դառնում, որ բնակելի կառույցներում գլխատուն հորինվածքով տներն արդեն փոքր թիվ էին կազմում. «Գիւղի շէնքերից մի քանիսը կոնաձև են, մի քանիսը մի յարկանի և երբեմն երկյարկանի, սենեակները փոքր են...»⁵¹:

Ուշագրավ է Կիմ Ղահրամանյանի վկայությունն իրենց պապենական տան մասին. «...պապենական քարե բարձր ու լուսավոր տունն իր ընդարձակ բակով, որը գտնվում էր Ներքին Շենի կենտրոնական մասում, «Միջին արխի» բարձրադիր մասում («Բալունց դիքի» մոտ), ...դարձավ նոր ստեղծված շրջկենտրոնի խորհրդային մարմինների առաջին նստավայրը, հետագայում վերածվեց հրշեջ կազմակերպության շենքի, որից հետո՝ ավտոտեխսպասարկման կենտրոնի»⁵²:

Տնտեսություն. ներքիշենցիները հիմնականում զբաղվում էին զանազան արհեստներով՝ դարբնությամբ (Մելի Դանիելյան, Մարտիրոս Գյորգյան, Ջավեն Նալբանդյան), բրուտագործությամբ (հայտնի էր Չախկալ Թյունի Դանիելյանը), տակառագործությամբ (Խաչատուր և Մակիշ Բաբայաններ), զինագործությամբ (Ջարառ Օսեփ Դանիելյան), ոսկերչությամբ և արծաթագործությամբ, հյուսնությամբ, կոշակակարությամբ և այլն⁵³:

Արհեստավորների թվում հայտնի էին նաև «սայլ կապողները» (Արզուման Մովսիսյան, Սկրտում Դանիելյան, Մարգիս Վելյան). «Հետաքրքիր է նույնիսկ այդ անվանումը՝ սայլ կապել, որովհետև համարյա ոչ մի մեխ չէր օգտագործվում, փայտե մասերն այնպես էին ազուցվում իրար, որ մեխի կարիք չէր լինում: Ամենաբարդ մասը թերևս անիվն էր. կաղնու փայտից առանցքի վրա համաչափ բաշխվում էին ճաղերը, ամրացվում փայտե կլոր շրջանակով, որի վրա հազգնում էին մետաղե շիկացած շրջանակ ու գցում ջրի մեջ, մետաղը պարզապես կպչում էր փայտին, և անիվը պատրաստ էր»⁵⁴:

1912 թ. ներքիշենցիներն ունեին 24 ձի, 400 խոշոր և 500 մանր եղջերավոր անասուն, 50 խոզ⁵⁵, իսկ 1915 թ.՝ 111 եզ, 237 գոմշակով և կով, 20 ձի, 500 ոչխար, 200 էջ, 400 դեսյատին հող (որից 150-ը՝ ջրովի, 250-ը՝ անջրդի)⁵⁶:

48 **Պետրոսյան Վ.**, Մեկ նամակի հետքերով, «Մոսկի դոկանցներ», 2017, № 4, ապրիլ, էջ 4:
49 **Երեմյան-Գանդակեան Ս.**, Гандзак: армянские кладбища и церкви, Ереван, 2009, с. 62.
50 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.
51 **Ջ.** Թրակցություն, «Համբարաբեր», 1916, № 49, 4 դեկտեմբերի, էջ 1551:
52 **Գանդակյան Կ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 269:
53 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 358-361:
54 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 358-359:
55 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.
56 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 25 շրջ.:



ՆԵՐՔԻՇԵՆ. ջրաղացաքարեր Աևջուր գետի ձախ ափի ավերակներում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Տնտեսության կարևոր ոլորտներից էին նաև երկրագործությունն ու այգեգործությունը, սակայն տակավին 1916 թ. նկատվել է, որ «Երկրագործությունը վերին աստիճանի յետ է մնացել, որովհետև դեռ մինչև օրս գործ են ածում նախահայրերից մնացած կոպիտ ձևով շինուած գործիքներ...»⁵⁷:

Ներքիշենի տնտեսության համար կարևոր նշանակություն ունեին նաև ջրաղացները, սակայն սրանց մասին հենց առաջին վկայություններից մեկը տխրալից էր. 1911 թ. գուտ չարակամության գոհ էին դարձել գյուղի երեք ջրաղացները. «...կրակեցին ու մոխիր դարձրին ներքին-շենացիների 3 հատ ջրաղացները՝ բոլոր ջրաղացաքարերը կոտրտելուց յետոյ: Ջրաղացաքարեր մեր կողմերում չեն ճարվում, այլ նրանց ձեռք են բերում Ղարաբաղի Խաչենի հովտից ու հասցնում են այստեղ մեծ նեղութիւններով ու մեծ ծախսերով: Սակայն մի՞թէ այդ ի նկատի են ունենում անբուժելի ու անգութ խաւարամիտները»⁵⁸:

Հայտնի է նաև, որ Մեծ եղեռնը վերապրած արդահանցի Անտոն Տեր-Հովհաննիսյան-Անտոնյանը Ներքիշենում կառուցել էր Ղահրամանանց ջրաղացը⁵⁹:

Գյուղում գործել են Հայկազի, Եփրեմի, Շահրամանանց Ապրեսի, Ղաշտարի և Մոխրխանց ջրաղացները⁶⁰:

Վերը հիշատակվածներից 1987 թ. դրությամբ Ներքիշենի կենտրոնական մասում՝ հին կամրջի մնացորդից ոչ հեռու՝ Աևջուր գետի ձախ կողմում, դեռևս նկատելի էին հիմնավեր ջրաղացի մնացորդները (բաղնիքի շենքից փոքր-ինչ վերև):

57 X, նշվ. թղթակց., նույն տեղում:
58 Ջաքարեանց Բ., Կեանքը Ղարաշայում, «Մշակ», 1911, № 42, 1 մարտի, էջ 3:
59 Տեր-Հովհաննիսյաններ Բենիկ և Լենա, նշվ. հոդվ., «Մոսկվի դոկանցներ», 2003, № 12, էջ 3:
60 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Գ, ներդիր:

Ուշագրավ է, որ, օրինակ, 1870 թ. ներքիշենցիների տնտեսական հնարավորությունները թույլ էին տվել նյութապես աջակցել Սբ. Էջմիածնում ընթացող շինարարական աշխատանքներին (գյուղի հասարակությունը հատկացրել էր 50 ռուբլի, իսկ Շահում Առաքելյանը՝ 70 կոպեկ)⁶¹:

Աղբյուրներ. Ճիշտ է, այս խնդրին 1916 թ. անդրադարձած թղթակիցը հիշատակում է տակ մի առվի առկայությունը («...որքան որ բնական աղբյուրներ չկան՝ բայց և այնպես Մռա կոչուած լեռների աղբյուրների ջրերից կազմուած մի յստակ առու է բղխում, որի ջրից գործածում են խմելու, ռոռզում են նաև գիւղի այգիները, արտերը...»)՝⁶², սակայն իրականում Ներքիշենը, շրջակայքով հանդերձ, հարուստ էր բազմաթիվ աղբյուրներով: Հայտնի էին Վանքի, Բաբալունց, Ղբուլանց, Գյոգբուլաղի, Թանագբուլաղի, Բղե-քերձի, Ստանցին, Բուղին Գիլին աղբյուրները⁶³:

Ըստ Բորիկ Ղևոնդյանի՝ հայտնի էին Վանքի, Կրահորի, Ղաբուլանց, Սիպտակ, «Ստանցին», Կետին դրաղի, Բաբալունց, Աղաջանանց, Նհատակի, Սիփարանց, Բխրքերձի, Ներսեսանց, Նխճենի, Սթովանց, Չիբիղդարի, Թանաքբուլաղի, Շոր և Գյոգբուլաղի 3 աղբյուրները⁶⁴:

1936-1937 թթ. գետից «...դժվարին լեռնային տեղանքով» ջուրը հասցվում է Ներքիշենի վերին մաս և կառուցվում ջրարխ⁶⁵:

Դպրոց. 1860-70-ական թվականներին Ներքիշենում գործում էր նախակրթարան՝ 1 ուսուցչով և 21 աշակերտով⁶⁶:

1873 թ. ուներ 31 աշակերտ⁶⁷:

1874/75 ուստարում դպրոցում ուսանում էր 21 սան, ուսուցիչն էր ներքիշենցի Առուստամ Մախայանը⁶⁸:

Ըստ Մարո Բաղդասարյանի՝ նախախորհրդային տարիներին գործող դպրոցի առաջին աշակերտուհիներից էին նրա մայրը՝ Մամուռը, Սիրաբանաց Սիրանուշը, Ժմհարանց Աշխենիկը և ևս մի աղջիկ. «Աշակերտները նստում էին երեք շարքերով՝ առաջինում՝ առաջին դասարանցիները, երկրորդում՝ երկրորդ, երրորդում՝ երրորդ դասարանցիները: Աշակերտներին “մոնթ” էին ասում: Դասավանդում էին հայոց լեզու, կրոն, մաթեմատիկա և ռուսերեն: Դպրոցը բացվել է 1890-ական թվականներին, բայց հետագայում եղել են ընդհատումներ: Տեղավորված է եղել Ղահրամանց տանը: Գյուղի հին ուսուցիչներից պատկառանքով հիշվում են Եղիշ վարժապետն ու նրա կինը՝ Փառանձենը»⁶⁹:

Դպրոցում դասավանդում էր նաև Արշակ վարժապետ Խաչատրյանը: Ի դեպ, նա Եղիշ վարժապետի հետ միասին շարունակել է մանկավարժական գործունեությունը նաև խորհրդային տարիներին և պարզևատրվել Լենինի շքանշանով⁷⁰:

Պետական (արքունի) դպրոց. հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: 1908 թ. գործում էր որպես միդասյա արական դպրոց՝ 39 աշակերտով⁷¹: Դասավանդում էին Եղիշե Գրիգորյան Հովասափյանցը և Հակոբ քահանա Խաչատրյանը⁷²:

61 «Արարատ», 1870, Գ, էջ 138:
62 X, նշվ. թղթակց., «Համբարաբեր», 1916, № 49, 4 դեկտեմբերի, էջ 1551:
63 Նարաբյան Բ., Շահումյանի ջրային պաշարները, «Մոսկվի դոկանցներ», 2015, № 10, դեկտեմբեր, էջ 4:
64 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Գ, էջ 58:
65 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 5:
66 Հարությունյան Գ., Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1985, էջ 20:
67 Խոտոյան Ս., նշվ. աշխ., էջ 369:
68 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 18: Տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, էջ 163:
69 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 365-366:
70 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 363:
71 Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 25.
72 Նշվ. աշխ., էջ 18:

1912 թ. օգոստոսի դրությամբ հիշվում է պետական ժողովրդական դպրոցը⁷³:

1916 թ. ուներ 70-ից ավելի աշակերտ-աշակերտուհիներ. «Ռուսերենն աւանդում է ռուս մի վարժուհի. իսկ հայերեն կրօնի դասը՝ մի քահանայ...»⁷⁴:

Գաղթականական դպրոց. 1916 թ. Արևմտյան Հայաստանից գաղթած հայ մանուկների համար Ներքիշենում գործում էր դպրոց, որը «...շարունակում է շնորհիւ գաղթ. գլխաւոր լիագօր պ. Ա. Բորեանին, որը պատրաստ է միշտ առանց վայրկեան ուշացնելու հոգալ դպրոցի կարիքները: Աշակերտները ճարպիկ են ու աշխուրջ, սակայն դժբախտաբար ուտաբոքիկ ու մերկ»⁷⁵:

1917 թ. նոյեմբերի 22-ին Արմենակ Բորյանը ԿՀԲԸ կից Հայկական կենտրոնական կոմիտեին գրել է. «Անցեալ... ն. տարւայ սկզբից (հոկտեմբերից) կոմիտէիտ յանձնարարութեամբ Գանձակ և նրա շրջանում բացւեցին 14 դպրոց 600 աշակերտութեամբ: 5 դպրոցում պաշտօնավարել են տեղական ծխական դպրոցի ուսուցիչներ, իսկ մնացեալ դպրոցներում՝ գաղթական ուսուցիչներ են եղել: Այս տարի սպասում էր, որ 14 դպրոցին պիտի աւելանային մի քանի դպրոցներ ևս. մինչդեռ կատարեց հակառակը, այսինքն՝ Ներքի-Շէն, Վերին-Շէն, Փիք, Բանանց, Սիրգիկ, Ոսկանապատ, Գառնակեր գիւղերի գաղթական աշակերտ-աշակերտուհիներ մնացին առանց ուսման»⁷⁶:

Կրթությունը խորհրդային տարիներին. ըստ ներքիշենցի Մովսես Շատվերյանի՝ 1928 թ. Ներքիշենում գործում էր 7-ամյա դպրոց⁷⁷:

1936 թ. գյուղում կար թերի միջնակարգ դպրոց (տնօրեն՝ Հ. Մանվելյան)⁷⁸:

Մեկ տարի անց նշվել է. «Շահումյանում անգրագիտության վերացման խնդրում քիչ են աշխատում: Գյուղը ունի բավականին թվով անգրագետներ, բայց տեղական կազմակերպությունը այդ մասին չի մտածում»⁷⁹:

1970 թ. Ներքիշենում գործում էին հայկական և ռուսական միջնակարգ, ինչպես նաև գիշերօթիկ դպրոցներ (1965 թ.-ից)⁸⁰:

Միջնակարգ երկարօրյա դպրոց. 1977/1978 ուստարվա համար դպրոցը ձեռք էր բերել 65 նոր նստարան, կատարվում էին նաև հին նստարանների, աթոռների, գրատախտակների նորոգման աշխատանքներ. «Այդ գործում մեծ բարեխղճություն է ցուցաբերում դպրոցի արհեստանոցի վարիչ Չավեն Բեգլարյանը»⁸¹:


Խրճիթ-ընթերցարան. 1928 թ. անգրագիտությունը վերացնելու նպատակով Ներքիշենում գործում էր խրճիթ-ընթերցարան⁸²: Այդտեղ հրատարակվում էր նաև «...գյուղի մասսայական ահագին թերթը, որին մասնակցում են գյուղացիների մոտ վաթսույն և հինգ տոկոսը»⁸³:

Սրբ. Աստվածածին (Սրբ. Հովհաննես) եկեղեցի. համաձայն մեզ չհասած շինարարական արձանագրության՝ կառուցվել է 1697 թ. և կոչվել Սրբ. Աստվածածին: Հիշատակվում է 1814 թ.՝ ի թիվս Ղարաբաղի վիճակի եկեղեցիների⁸⁴:

73 Պետ, նշվ. հոդվ., «Մշակ», 1912, № 187, 25 օգոստոսի, էջ 3:
74 X, նշվ. թղթակց., նույն տեղում:
75 Նշվ. թղթակց., էջ 1551-1552:
76 ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 170, ք. 5:
77 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 52, ք. 22 շրջ.:
78 Պապյան Ա., Թղթակցություն, «Լենինյան ուղի», 1936, № 66, 25 նոյեմբերի, էջ 4:
79 Միրումյան Հ., Թղթակցություն, «Լենինյան ուղի», 1937, № 11, 28 փետր., էջ 4:
80 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 26:
81 Դալլաքյան Յու., Նոր ուսումնական կազմ ու պատրաստ սկսելու համար, «Նոր ուղի», 1977, № 88, 23 հուլիսի, էջ 4:
82 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 52, ք. 22:
83 Նույն տեղում:
84 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, ք. 124-125:

Այն հանգամանքը, որ սկսած 1841 թ.-ից՝ եկեղեցու գոյությունը վկայված է նոր անվամբ, թույլ է տալիս ենթադրել, որ 1814-1841 թթ. միջակայքում վերակառուցվել է և օծվել որպես Սրբ. Հովհաննես: Սակայն 1880 թ. եկեղեցին վերստին հիշատակվում է Սրբ. Աստվածածին անվամբ⁸⁵ (նույնպես և 1893 թ.)⁸⁶:

ԺԹ դարի վերջին ականատեսը նշում է, որ եկեղեցին կառուցված էր «...վեց սիւների վերայ, բայց սագաշէն և ցած...: Երկարութիւնն 20 մետր, լայնութիւն 9 մետր 5 սանթիմ, ճաքած է արևելեան պատն»⁸⁷: Նույն ժամանակաշրջանում եկեղեցում



Ներքիշեն. Սրբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Կ. Ղահրամանյանի)

պահվում էր երկու ձեռագիր Ավետարան՝ գրված 1638 և 1678 թթ.⁸⁸:

1927 թ. եկեղեցին փակվել է⁸⁹: Ավելի ուշ հիմնովին քանդել են, որի տեղում կառուցվել է բնակելի տուն⁹⁰:

Ըստ ներքիշենցի Մովսես Շատվերյանի՝ 1928 թ. դրությամբ «Գյուղում կա եկեղեցի, բայց հավատացյալները չբացել են, սրանց հետ և քահանաները»⁹¹:

Ունեցել է եռանավ բազիլիկ հորինվածք: Երկթեք տանիքի տակ առնված թաղակապ ծածկերը հենված են եղել երեք զույգ սյուների վրա: Արևելյան կողմում ունեցել է կիսաշրջան եզրագծով ավագ խորան և ուղղանկյուն հատակագծերով մեկ զույգ ավանդատներ: Միակ մուտքը բացված է եղել հարավային ճակատին կից քառասյուն զանգակատան մեջ: Որմերին եղել են արձանագրություններ:

Վիմագրեր. եկեղեցու քանդման ժամանակ անհետ կորսված շինարարական վիմագրերը, բարեբախտաբար, ժամանակին ընդօրինակել և հրատարակել է Մակար Բարխուդարյանը:

Արձանագրություն. եղել է եկեղեցու խորանի հյուսիսային կամարին.
Եկեղեցիս անուանեցաւ Սուրբ Աստուածածին, թվ(ին) ՌՃԽԶ (1697):

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 245: **Լալայեան**, նշվ. աշխ., գիրք Ե, էջ 330: Գիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 249: **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 77: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 76:

Արձանագրություն. եղել է եկեղեցու մուտքի ճակատակալ քարին.
Աստուած ողորմի գորեցի Գօրգինի որդի Տարին, որ պատճառ եղև: Կաման Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ տեր Եղիային. յիշատակ իւր և ծնողացն, հօրն՝ Աթին, և մօրն՝ Հո-

85 ՀԱԳ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 33:
86 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 192:
87 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 245:
88 Նույն տեղում, էջ 245-246:
89 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, ք. 12:
90 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 76:
91 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 52, ք. 22:

ռոմին, և կողակցին և որդոցն՝ տէր Դարին, Կոստանդին, Ետկարին, ...[վերա]կացութեամբ Շիրմազանի որդի Մելքունին...:

Հրատ. **Քարխոստարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 245: Գիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 249: **Ղահրամանյան Ա.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 77: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 76-77:

Արձանագրություն. եկեղեցու տեղում կառուցված բնակելի տան բակում, դարպասի հիմնաքարին՝ 2 տող.

Այս է տապան Թուրանց Քարի որդի | դարդայ Սարգսին, ՌՆՂ (1741) քվին:*

Հրատ. **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, գիրք Գ, էջ 35: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 77: Օջախի գիրք, հ. Ա, էջ 77:

* Դարդա՝ կառավարիչ:

Քահանա. հիշվում են՝ *Հովհաննես Տեր-Անանյան Տեր-Հովհաննիսյանց*. Ներքիշենի համար քահանա է ձեռնադրվել 1811 թ. Գանձասարի վանքում և պաշտոնավարել առնվազն մինչև 1851 թ.⁹² (նշվել է, որ ծերության պատճառով այլևս անկարող էր քահանայագործել)⁹³:

Կարապետ Աղաբեկյան (ծնվ. 1825 թ.). հիշվում է 1874 թ.⁹⁴: Վախճանվել է 1901 թ. մարտի 16-ին⁹⁵:

Կարապետ, Հարություն և Պետրոս քահանաները հովվում էին 1871-1888 թթ. («Արարատ»-ի բաժանորդներից էին)⁹⁶:

Հարություն Տեր-Հովհաննիսյան Տեր-Անանյանց (ծնվ. 1828 թ., քին. ձեռն. 1858 թ.). գյուղի երկրորդ քահանան էր: Քահանայագործում էր 1874 թ.⁹⁷: 1893 թ. 65-ամյա տեր Հարությունն ուներ 1 որդի՝ Հովհաննես⁹⁸:

Պետրոս Տեր-Հովհաննիսյանց (ծնվ. 1829 թ., ձեռն. 1858 թ. սեպտեմբերի 7-ին). երրորդ քահանան էր: Հիշվում է 1874 և 1909-1910 թթ.⁹⁹: Նրա մասին 1902 թ. նշվել էր, որ 74 տարեկան էր և «...ըստ վկայութեան բժշկին անկարող գտանի Պետրոս քահանայն առնել զքահանայութիւն»¹⁰⁰:

1902 թ. հունիսի 26-ին Սր. Էջմիածնի սինոդը, նկատի ունենալով Պետրոս քահանայի ծերությունը և նշյալ թվականի ապրիլին նրա տված հրաժարականը, հրամայում է Ղարաբաղի վիճակային կոնսիստորիային՝ *Մովսես Տեր-Պետրոսյան Հովհաննիսյանցին և Հակոբ Տեր-Կարապետյան Աղաբեկյանցին* քահանաներ ձեռնադրել Ներքիշենի համար¹⁰¹:

ԺԹ դարի 80-90-ական թվականներին Ներքիշենն ուներ երեք քահանա¹⁰²:

1909-1910 թթ. ծխատեր քահանաներից հիշվում են *Պետրոս Տեր-Հովհաննիսյանցը, Հակոբ Խաչատրյանցը* (ծնվ. 1842 թ., քին. ձեռն. 1883 թ. մարտի 20-ին) և *Հակոբ Տեր-Կարապետյանցը* (ծնվ. 1872 թ., քին. ձեռն. 1902 թ. օգոստոսի 25-ին)¹⁰³:

92 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 531-533, 538:

93 Վատերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 201, 210:

94 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 125: Տես նաև **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 87: 1874 թ. ուներ 5 որդի (Բեզլար, Սողոմոն, Սահակ, Մելխակ և Արշակ):

95 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 9907, ք. 3:

96 «Արարատ», 1871, Ը, էջ 484: Տես նաև «Արարատ», 1871, Ը, էջ 484: 1873, ԺԲ, էջ 486, նաև՝ 1888, ԺԲ, էջ 807:

97 **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 87: Տես նաև ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 125:

98 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 192:

99 Նույն տեղում: 1874 թ. դրությամբ ուներ 2 որդի (Սողոմոն և Մովսես): Տես նաև ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 260-261; ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 126; ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 192:

100 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 9907, ք. 3:

101 Նշվ. գործը, ք. 5:

102 **Քարխոստարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 245:

103 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 260-261: Տես նաև ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 227; ֆ. 57, ց. 3, գ. 48, ք. 3-6: Ի դեպ, 1922 թ. Գանձակի թեմի կառավարիչ Լևոն Ծ. վար-



Ներքե՛են. հատված գերեզմանոցից (ուս. հեղ.՝ անհայտ)

1912 թ. հովվում էին *Պետրոս Տեր-Հովհաննիսյանցը, Հակոբ Խաչատրյանցը* և *Հակոբ Կարապետյանցը*¹⁰⁴:

1916 թ. օգոստոսին գյուղն ուներ երեք քահանա¹⁰⁵:

Ի դեպ, 1893 թ. դպիրներն էին Առստամ Աղաբեկյանը և Խաչատուր Ղահրամանյան Վերդիյանցը¹⁰⁶:


Գերեզմանոց. ավանի կենտրոնում՝ բլրալանջին, տարածվում էր ԺԷ-ԺԹ դդ. վերաբերող ընդարձակ գերեզմանոցը, որտեղ պահպանվում էին 2 գեղաքանդակ խաչքար և ավելի քան 1.000 օրորոցաձև և ուղղանկյունաձև տապանաքարեր (հարդարված խաչքանդակներով ու կենցաղային պատկերաքանդակներով): Արձանագրված հուշարձաններից հենրը վերաբերում են ԺԷ դարին: Գերեզմանոցի վերին ԺԹ դարի թաղումների հատվածում կանգուն է զանգակատան մմանվող մի քառասյուն տապանատուն-դամբարան՝ կառուցված 1865 թ.:

Խաչքար (156 x 61-70 x 30 սմ). տեղահանված-ընկած գետնին, ստորին մասը հարդարված է պատկերաքանդակով, քիվին, նեղ կողին և հիմնախաչի վերին թևից վեր փորագիր և ելնդագիր՝ 3 տող.

Յով(ա)նէս, խ(ա)չս կա(ն)կ(ն)եցի իմ հայր Սարու/խյանին եւ մարն Սէփին, Հիրիխանին, Բէկիճ/անին, | թվ(ին) ՌՂ (1641):

Հրատ. **Ղահրամանյան Ա.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 77: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 77:

Ծանոթ. առաջին հրատարակության մեջ առկա են մանր անճշտություններ:




դպատի կողմից առաջարկվել էր քահանայական լանջախաչ շնորհել Հակոբ Խաչատրյանցին. «...80-ից ստելի ամեայ ծերունագարդ Յակովբ քահանայ դպիր Խաչատրեանցին, որը մօտ քառասանամայ օրինակելի քահանայութեան զուգընթաց եղել է կրօնի և հայոց լեզուի ուսուցիչ պետական դպրոցներում» (ՀԱԳ, ֆ. 57, ց. 3, գ. 375, ք. 3):

104 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 361 շրջ.:

105 Վատերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 622:

106 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 193:




ՆԵՐՔԻՇԵՆ. 1641 թ. խաչքար գերեզմանոցում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987, 2018 թթ.)


Տապանաքար. օրորոցածև (113 x 74 x 22 սմ), կողին, վերին երեսին և կենցաղային տեսարանով հարդարված ճակատին՝ 11 սող.

Սուրբ խաչս բարեխա(ւ)ս Տուխարուլի(°) որդի Թանկին, մայր իւր՝ Մարքարիտին, թուրն իւր՝ Մեարանին, Սանդուխտին, Շահզատին, Եթարին, Գուլարին. թվին) ՌՂԸ (1649):

Հրատ. առաջին անգամ:



ՆԵՐՔԻՇԵՆ. 1649 թ. տապանաքար (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987, 2018 թթ.)




ՆԵՐՔԻՇԵՆ. տապանաքար գերեզմանոցում, 1649 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի)



ՆԵՐՔԻՇԵՆ. խաչքար գերեզմանոցում, ԺԵ դար (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի)

Խաչքար (40 x 43 x 22 սմ). կիսով չափ խրված հողի մեջ, արձանագրությունը՝ 3 տող.

[Ս(ուր)ք] խ(ա)չս փրկութե(ան) | Հուռ(ո)ւմսիմիին:
Հրատ. առաջին անգամ:



ՆԵՐՔԻՇԵՆ. տապանաքար գերեզմանոցում, 1660 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի)


Տապանաքար. օրորոցածև (123 x 70 x 26 սմ), հարդարված է խաչաքանդակներով և կենցաղային տեսարանով, արձանագրությունը՝ ելնդագիր 2 տող.

Այս է հա(ն)գիստն Պասպին, հայրն | ... տ(է)ր Եղին մարն. քվ(ի)ն Ռ-ճԹ (1660):

Հրատ. առաջին անգամ:



ՆԵՐՔԻՇԵՆ. տապանաքար գերեզմանոցում, ԺԵ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



Տապանաքար. օրորոցաձև (121 x 79 x 29 սմ), գերեզմանոցի հարավային մասում, հարդարված է կենցաղային պատկերներով, արևմտյան կողմն՝ 6 ստղ.



Մ(ուր)ք խ(ա)չս տ(է)ր | Գրիգորին, | իւր մայր Մարեանին, իւր կողայգ(ի)ց Ջար/իսին, Գեօրին, | ի} հար Սարքիսին:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. օրորոցաձև (120 x 100 x 37 սմ), հարդարված է կենցաղային տեսարանով, կողմն՝ 5 ստղ.



Մ(ուր)ք խ(ա)չս տ(է)ր Գալթին, իւր կ(ո)ղայկ(ց)ին՝ Մարեանին, իւր որդի՝ Ղ(ա)զ(ա)րին, իւր մայր՝ Ղիսին:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:



ՆԵՐՔԻՇԵՆ. տապանաքար գերեզմանոցում, ժէ դար (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

ՆԵՐՔԻՇԵՆ. տապանաքար գերեզմանոցում, ժէ դար (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան Գրիգոր ըզպաշի | որդի տ(ե)ր Յոհանիսին. թվ ՌՄՁԴ (1835):

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 77: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 77:

Տապանաքար. արձանագրությունը՝ 4 տող.

Ի հողապարտն շ(ի)ր(ի)մի այս ամփոփվում է մարմինն Յարութին Ղահրաման... որդի իրենանց ի Ներքի Շինու կոչ/եցեալ հայոց բնակիչ, | ամի տ(եառ)ն 1844-ին:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Գ, էջ 34: Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 77-78: Օջախի գիրք, հ. Ա, էջ 77:

Տապանաքար.

Այս է տապան դավաք Հարությունի որդի Ղազարին, թվ(ին) ՌՄՂ (1848):

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Ազգանունն էլ պատմությունն է, «Մշակի դղանցներ», 1994, № 5, 17 մայիսի, էջ 4: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 118:

Տապանատուն-դամբարան. արձանագրությունը՝ 4 տող.

Այս է տապան | Ղատի, որ է որդի | Մոսիքին, իր կին | եվ Վուկին, 1865 թ.:

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

Այս է տապան ուստա Մարքիսին, որ է որդի Ներսեսանց Մահակին, վ(ախճ.) 1873 թ.:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Ազգանունն էլ պատմությունն է, «Մշակի դղանցներ», 1994, № 5, 17 մայիսի, էջ 4: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 118:



ՆԵՐՔԻՇԵՆ. տապանատուն, 1865 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Տապանաքար. արձանագրությունը՝ 5 տող.

Այս է տապան Աբրահամին, | որ է որդի Նալպանտ(ան)ց Մոսաելին, | եհար կայծակն այս խղջալիս: | Մա էր չովիցն տուն կալիս, մեռան սիմն(?) | գոմաշն եվ եզն: Վախճանեցաւ 5-11-1873 ամի:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Ազգանունն էլ պատմությունն է, «Մշակի դղանցներ», 1994, № 5, 17 մայիսի, էջ 4 (տրված է միայն առաջին երկու տողը): Նույնի՝ Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 78: Օջախի գիրք, հ. Ա, էջ 77-78:

Տապանաքար.

Աստ անփոփի 89-ամաց հասակի մարմինն վարժապետ Մարտիրոս բեկ Բալլուրեկեանց, վախճ. 18 նոյեմբերի 1904:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Բ, էջ 23:

Տապանաքար.

Այս է տապան Մարնագին, որ է դուստր նալբանդ Պետրոսին:
Հրատ. Ընթերցողը հարցնում է, խմբ., «Մշակի դղանցներ», 2005, № 3, մարտ, էջ 4:

Կամուրջներ. ավանի մեջ՝ Սևջուր գետի վրա՝ Կեփին դրաղ վայրում¹⁰⁷, պահպանվում է անմշակ գետաքարով և կրաշաղախով կառուցված միաթռիչք կամրջի աջափնյա խելի մնացորդը: Շինարվեստը բնորոշ է ԺԷ-ԺԸ դարերին:



ՆԵՐՔԻՇԵՆ. կամրջի մնացորդ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

1960-ական թթ. ավանում կառուցվում է 3 նոր կամուրջ (գործում էր «Վարար գետի») կամուրջը¹⁰⁸:

Նահատակ անվանք սրբատեղի. ավերակ կամրջից հարավ՝ Սևջուր գետի աջ կողմում՝ խճուղու եզրին (փոքր-ինչ վեր), 1987 թ. դրությամբ դեռևս պահպանվում էին պարզ հորինվածքով ու անկանոն եզրագծերով մի քանի խաչքարեր:



ՆԵՐՔԻՇԵՆ. Նահատակ սրբատեղին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

107 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 54:
108 ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 9 շրջ.:



ՆԵՐՔԻՇԵՆ. Երից մանկանց (Իրեք մանկուք) վանքը հարավից և հյուսիսարևմտյան աշտարակածև անկյունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ.)

Սր. Երից մանկանց վանք. ավանից 2 կմ հարավ՝ անտառապատ սարերով շրջապատված ձորակի վերնամասում՝ բլրալանջին (N 40°24'06.73", E 046°33'32.89", ծ. մ. 1223 մ), կիսավեր վիճակով պահպանվում էր Սր. Երից մանկանց (Իրեք մանկուք) վանքը՝ գավառի ԺՁ-ԺԷ դարերի առավել նշանավոր ու արժեքավոր հուշարձաններից մեկը:

Հիշատակված է Երեմիա Չելեբի Բյուրյուքյանի՝ 1691 թ. կազմած քարտեզում. «Գ մանկանց ուխտատեղ. մասունք կան»¹⁰⁹:

Վանքի եկեղեցին եղել է միանավ բազիլիկ շինություն, որից հիմնականում պահպանվում էր հյուսիսային հատվածը (արտաքին չափերն են՝ 16,35 x 11,0 մ): Ի դեպ, ԺԹ դարի վերջին ակամատեսի վկայությամբ դեռևս առկա էին եկեղեցու արևմտյան և




ՆԵՐՔԻՇԵՆ. Երից մանկանց (Իրեք մանկուք) վանքը հարավից և հարավ-արևմուտքից, հյուսիսակողմի ավանդատունը հարավ-արևմուտքից և հյուսիսային որմի մկրտության ավազանին հարող հատվածը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ.)

¹⁰⁹ Uluhogian G., նշվ. աշխ., էջ 54:



ՆԵՐՔԻՇԵՆ. Երից մանկանց (Իրեք մանկուք) վանքի գերեզմանոցը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ.)

հյուսիսային պատերն ամբողջությամբ¹¹⁰: 1980-ական թթ. կանգուն էր միայն հյուսիսարևելյան ավանդատունը, որի պատերին ագուցված էին մի քանի խաչքարեր: Ուշագրավ են եկեղեցու արևմտյան ճակատի արտաքին երկու անկյունները, որոնք իրականացված են կորած (բերդերի աշտարակների նմանությամբ):



ՆԵՐՔԻՇԵՆ. Երից մանկանց (Իրեք մանկուք) վանքի եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ.)

Գերեզմանոց. տարածվում էր վանքի հարավարևմտյան կողմում: Պահպանված շուրջ երկու տասնյակ տապանաքարերի մեջ 1987 թ. առկա էր ԺԷ դարին բնորոշ արձանագիր մեկ տապանաքար.


Տապանաքար.
 Մարե(ա)նին, | Հուռ(ու)մսիմին, Սողարին, | Պետ(րո)սին, | Պողոսին, | Չարին, Մար/եան(ին):
 Հրատ. առաջին անգամ:

¹¹⁰ Բարխուդարեանց Մ., նշվ. աշխ., էջ 246:

Տապանաքար. քանդակագարդ, գորվել է ցած.
 Չափ կողին՝ Խաչս տ(է)ր | Ս(ա)հ(ա)կին, Խեչուտին եւ | Կուտանդ(ին), | Բ(ա)լ(ա)ս(ա)նին, Սարոյինան(ին), Թ(ապա)ռուկին, | ճակատին՝ Թամարին | քիս(°) | քվ Ռ-ՂԳ (1644): | Սատան(°) Հէրիքնագին, ով որ կարդա, աստուած ողորմի ասի Խ(ե)չ(ու)տին, | Խր | ծնո/դացն՝ | Թապ/առո/կին, աջ կողին՝ Հստա.ե/անինե(°):
 Հրատ. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 75: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 76:

Տապանաքար. արձանագրությունը՝ 2 տող.
 Այս է տապան Այրիին, որ է որդի Ն(ալ)բանտին, | ...:
 Հրատ. Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 76:

Փառքի (ՀՄՊՁ) և այլ հուշարձաններ. Մեծ հայրենականում զոհված կամ անհետ կորած 201 ներքիշենցիների հիշատակին



ՆԵՐՔԻՇԵՆ. ԽՍՀՄ հերոս Գ. Բալայանի հուշարձանը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

ավանի եզրին՝ Լինջ կոչվող բարձունքի վրա, կառուցվել էր մի հուշահամալիր¹¹¹:

Ավանի կենտրոնական մասում՝ զբոսայգու տարածքում՝ բարձր պատվանդանի վրա էր նաև Խորհրդային Միության հերոս Գարեգին Բալայանի՝ 1967 թ. կառուցված հուշարձանը:

Անվանի ներքինացի. հայրենի շրջանի բնակավայրերի և պատմական հուշարձանների ուսումնասիրության, իսկ բռնագաղթից հետո ցիրուցան եղած հայրենակիցների ճակատագրերին հետամուտ՝ անգնահատելի աշխատանք է ծավալել Կիմ Ղահրամանյանը (1942-2014 թթ.):

ՆՈՐՇԵՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 9 կմ հյուսիս-արևելք՝ Սևջուր գետի աջ կողմում՝ ծովի մակերևույթից 680-730 մ բարձրության վրա: Արևելքից կից է Ղարաչինար գյուղին:

Անվանում. հայտնի էր նաև Մանաշեն, Մանասբեկ, Մանասին-թաղ, Մանասինշեն, Մանասքյանդ, Մինասիշեն, Նորաշեն և «Նրյգնա-շեն» անուններով¹: Գյուղն ուներ նաև այլազգիներից ստացած անուն: Մասնավորապես թուրք-թաթար-աղյուրեզանցիներն այն կոչում էին Ենգիբենդ (Նորշենի բառացի թարգմանությունն է), որն էլ թե՛ ցարական և թե՛ խորհրդային իշխանություններն ընդունել էին որպես պաշտոնական անվանում:

Պատմություն. Նորշենը նույնպես հարուստ է պատմական հուշարձաններով, բայց դրանցից համեմատաբար հները պահպանվել են ոչ թե գյուղամիջում, այլ մերձակա հանդամասերում: Բուն գյուղին առնչվող տեղեկությունները կցկտուր են և վերաբերում են նոր ժամանակներին:

1906 թ. փետրվարի 1-ին նշվել է. «...ներ գիղի շրջականերում անհետանում են երկու անգլիս հայեր. նրանք գնացած են լինում անտառ փայտ բերելու ու կորչում են «Մոշի աղբիր» անունը կրող տեղից շատ մոտիկ: Շուտով պարզում է, որ նրանց գերում ու տանում են թուրք հրոսակները: Մանասշեն գիղը գտնվում է Աղջաղալա գիղի շրջականերում, Գանձակի գաւառի արևելեան մասում: Աղջաղալայի դէմ ձեռնարկած անաջող արշաւանքներից յետոյ թուրքերն այժմն դիմում են այդպիսի միջոցների հայ ազգաբնակչութիւնը ահաբեկելու համար: Գիղի տանուտէրը այդ դէպքի մասին զեկուցագիր է ուղարկում գաւառապետին: Գիղացիների մի պատգամաւորութիւն տանում է այդ զեկուցագիրը քաղաք, որտեղ գաւառապետի բացակայութեան պատճառով դիմում է անմիջապէս նահանգապետ Կալաչովին: Վերջինս, նկատելով զեկուցագրի ճակատն գաւառապետի հասցէն, առանց կարդալով վերադարձնում է նրան գիղացիներին, առաջարկելով դիմել նրան, ում ուղղած է զեկուցագիրը: Գիղացիները խնդրում են կարդայ, խնդրում են ուշ դարձնել իրենց գանգատին, բայց իզուր... Խեղճ գիղացիները գնում են գաւառապետին փնտրելու, որպէսզի նրա միջոցով եղելութիւնը յայտնի դարձնեն նահանգապետին...»²:

1920 թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում գավառի մյուս գյուղերի նման Նորշենը ևս ամբողջությամբ ավերվում է թաթարների կողմից, իսկ բնակիչները փրկվում են փախուստով³:

Գյուղի երկրորդ զավթումն ու ավերումը տեղի են ունենում 1992 թ. հունիսի 13-ին: Այդ չարաբաստիկ օրվանից Նորշենը շրջանի բոլոր մյուս բնակավայրերի նման ցարդ մնում է աղյուրեզանցի ելուզակների տիրապետության ներքո:

Բնակչություն. հակառակ գյուղի Նորշեն անվան բացատրությանը, որով բնական կլիներ կարծել, թե տեղացիները նորաբնակներ էին, այնուամենայնիվ, ժամանակին նշվել է՝ նորշենցիները բնիկներ էին⁴:

Գյուղաբնակների մեջ կային նաև կալվածատերեր, որոնք ըստ 1874 թ. կազմած տեղեկագրի՝ հետևյալներն էին. 58-ամյա պրայորշիկ Հակոբ բեկ (Աբով-բեկ) Մանաս-Բեկյան Մելիք-Նովսեփյանցը (որդիներն էին Բախշին և Գրիգորը) եղբայրներն էին շտաբ-կապիտան Հաթամ, Սողոմոն բեկերը (որդին էր Նիկոլայը), ազգականներն էին Ռուստամ բեկի որդիներ Ջոնջուր, Բոզդան (Բաղիր-բեկ), Պավել, Լևան, Նիկոլայ և Մամիկոն բեկերը, Բախշի բեկ Բեգլարբեկյան Մելիք-Նովսեփյանցը⁵:

1915 թ.-ից հետո գյուղը համարվում է Մեծ եղեռնը վերապրած մի քանի հայերով: Նրանցից էին Մարիամ բաջին և որդին՝ Ստեփանը, Ջինավոր Բարսեղյանը (4 զավակների հետ) և Լույսիկը (մակառուցող Բուլիկ)⁶:

Գյուղաբնակներից հայտնի էր Բեռլինում ուսանած բժիշկ Բոզունց ղոխտուրը՝ Ստեփան Հարությունյանը⁷:

Նորշենի՝ ստորև ներկայացվող բնակչության թվաքանակն արձանագրած վիճակագրական տվյալների ժամանակագրական համադրումը հուշում է, որ այն մարդաշատությամբ եղել է գավառի միջին գյուղերի շարքում.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1841 ⁸	21	48	38	86
1851 ⁹	19	66	50	116
1876 ¹⁰				236
1886 ¹¹	49	215	197	412
1889 ¹²	38	223	200	423
1893 ¹³	25	224	188	412
1901 ¹⁴	49	244	196	440
1902 ¹⁵		247	199	446
1905 ¹⁶	55	273	210	483
1908 ¹⁷	92	293	229	522
1909 ¹⁸	մոտ 60-70	297	231	528
1910 ¹⁹		304	241	545
1912 ²⁰	92	204	211	415

4 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 245:

5 ՀԱԳ, ֆ. 93, գ. 1, գ. 384, թ. 109-110: Տե՛ս նաև Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 86:

6 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 374:

7 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 348:

8 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 305, թ. 47:

9 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 2596, թ. 91: Տե՛ս նաև Վառերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 209:

10 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 6775, թ. 115-116:

11 Свод..., с. 82-83. Բացի հայերից գյուղում բնակվում էր նաև 3 տուն թաթար (6-ը՝ ար., 2-ը՝ իգ.):

12 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 245: Ի դեպ, ըստ արխիվային մի վավերագրի (ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 8583, թ. 45-46) նույն թվականին գյուղն ուներ 380 (214-ը՝ ար., 166-ը՝ իգ.) բնակիչ:

13 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, էջ 335:

14 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1-2, գ. 205, թ. 241-242: Տե՛ս նաև ֆ. 56, գ. 1, գ. 9786, թ. 1: Վառերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 409:

15 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 10044, թ. 118-119:

16 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 10403, թ. 140-141: Տե՛ս նաև ԱՂԹ, նշվ. աշխ., էջ 325, սակայն ըստ մատաղապանների՝ 80 տուն հայ:

17 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 10837, թ. 223-224: Տե՛ս նաև Кавказский календарь на 1910 г., с. 252: Այլ տվյալի համաձայն (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22) 522 բնակիչներից 269-ը՝ ար., 253-ը՝ իգ.:

18 ՀԱԳ, ֆ. 56, գ. 18, գ. 764, թ. 242-243: Տե՛ս նաև Ոհաթ., նշվ. հոդվ., «Մշակ», 1909, № 100, 14 մայիսի, էջ 3:

19 ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 11139, թ. 189:

20 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52. Նույն թվականին վերաբերող այլ տեղեկագրի (ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 11608, թ. 330) համաձայն՝ գյուղն ուներ 563 (316-ը՝ ար., 247-ը՝ իգ.) բնակիչ:

111 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 443-450: Տե՛ս նաև նշվ. աշխ., հ. Ա, էջ 52:

1 Ոհաթ., Թշուառ գիղ, «Մշակ», 1909, № 100, 14 մայիսի, էջ 3:

2 Մ., Բիրոսկրատիական ձևակառուցում, «Յառաջ», 1906, № 22, 11 փետր., էջ 2: 3 Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 436.

1914 ²¹				428
1917 ²²	80			670
1918 ²³	92	299	281	580
1925 ²⁴	91			650
1970 ²⁵	180	398	444	842
1992 ²⁶				800

Արցախյան ազատամարտի տարիներին ինչպես խաղաղ բնակիչների (28 հոգի), այնպես էլ ազատամարտիկների շրջանում (5 հոգի) գյուղն ունեցել է հետևյալ մարդկային կորուստները.

Միշա Բահրամի Ագրյան, Աշոտ, Մանվել և Մուրիկ Հովիկի Ավետյաններ, Հրաչիկ Ղազարի Ավետյան, Ռայա Լևոնի Ավետյան, Աստղիկ Բաղյան, Գերասիմ և Գրիշիկ Լևոնի Բոգյաններ, Անյա Օհանի Եսայան, ծագումով գյուլիստանցի Վարիմկա Խաչիկի Չաքարյան (մնացել են գյուղում), Լեմա Ալիշի Անտոնյան (ընտանիքը Խրիստիանոս հասցնելուց հետո վերադարձել է գյուղ տարեց մորը փրկելու համար. մնացել է գյուղում), Ասյա Մելիքի Չաքարյան, դպրոցականներ Կարեն և Կարմենի Արկաղիի Չաքարյաններ (գոհվել են 1992 թ. մայիսին ուժեղ ծառայությունից գյուղում), Պետո Չավաղի Հակոբյան (1992 թ. հունիսի սկզբներին), Յաշա Մարդիի Ավետյան, Սարգիս Հակոբի Բաղյան (սպանվել են գյուղում 1992 թ. հունիսի 13-ին), Ռուբեն Բախշիի Չաքարյան, Փառանգեն Վերդիի Չաքարյան (մնացել են հրկիզված ֆերմայի շենքում), Երանուհի Մովսեսի, Հարություն Խաչանի, Վլադիմիր Հարությունի և Նորա Արշակի Բալայաններ (նահանջի ճանապարհին ուժեղ ծառայությունից), Արաքսյա և Շամիր Չաքարյան ամուսիններ (Թալիշում), Հովիկ Մարդիի Ավետյան (փախստական Սինգեչաուրից, մնացել է Վերիշենում), Ժորա Մարգի Անտոնյան (պատանդ է մնացել)²⁷, գյուղի ջոկատի հրամանատարներ Գերիկ Ռուբենի Չաքարյան (գոհվել է 1991 թ. հոկտեմբերի 3-ին) և Կամո Էդիկի Եսայան (1992 թ. փետրվարի 20-ին՝ ալազանի պայթյունից դիրքերում), Գրիգոր Չաքարի Չաքարյան (1992 թ. հունվարի 10-ին՝ գյուղում), Լյովա Հրանտի Անտոնյան (ծանր վիրավորվել է և 1992 թ. ապրիլի 9-ին մահացել Երևանի հիվանդանոցում), Լյովա Եվգենի Բարսեղյան (Գյուլիստանի մոտ մղված 1994 թ. ապրիլի 11-ի կռվի ժամանակ անհետ կորել է)²⁸:

Կառուցապատում. այգեվետ գյուղն արևմտյան կողմից գրեթե կից էր Ղարաչինարին: 1912 թ. ուներ զանազան նշանակության 206 շինություն, այդ թվում՝ 1 եկեղեցի, 92 բնակելի տուն, 110 տնտեսական կառույց, 1 խանութ և 2 ջրաղաց²⁹:

Տնտեսություն. հայտնի է, որ դեռևս 1870 թ. Մր. Էջմիածնում ընթացող շինարարական աշխատանքներին օժանդակելու նպատակով գյուղի հասարակությունը հատկացրել է 13, իսկ Մագթաղ, Չառի և Սոփիա Ռուսիայաները՝ 3 ռուբլի³⁰:

Ի դարի սկզբին՝ 1909 թ., նշվել է, որ այս Նորշենը «...պետք է ամենասաղքատ ու ամենաքշուառ գիւղը համարել, որովհետև նա

չունի ոչ մի աշխատանքի աղբիւր. անասնապահութեամբ նա պարապվել չէ կարող, որովհետև չունի արօտատեղիներ, կանօնատր հողագործութեամբ էլ չէ կարող պարապվել, որովհետև վարելահող էլ շատ քիչ ունի: Մանասին-շէնը չունի անտառ և այրելու փայտը մինչև անգամ փողով է ձեռք բերում Ղարաչինարի կամ Աղջաղալայի՝ Մելիք-Բեգլարեանցների անտառից: Այդ գիւղացիք ունեն սակաւաթիւ այգիներ, որոնք պահվում են մեծ նեղութիւններով՝ անտառ չունենալու պատճառով: Նրանք ճարահատեալ գնում են հեռու թուրքաբնակ գիւղեր՝ Ղարբենդ, Չամիլլի և այլն և այնտեղում պարապում հողագործութեամբ անձեռնտու պայմաններով»³¹:

Նաև նշվել է. «Գիւղում կան քիչ թով ունևոր բնակիչներ, որոնք ոչ թէ միջոցներ են ձեռք առնում իրանց թշուառ համագիւղացիների վիճակը բարոքելու, այլ նրանց՝ իրանց պարտական դարձնելով (10-15 ռուբլի պարտքը մեծ տոկոսներով 100-ներ դարձնելով) իւրացնում են այդ խեղճերի առանց այն էլ միմիմալ նաղելի վարելահողերը...: Եւ այդպիսով գիւղացին հողագութք դառնալով՝ ծառայ, ստորկ ու պրօլետար է դառնում իր անգութ, վաշխառու, կեղեքիչ ու «կուլակ» համագիւղացուն: Պետական և այլ հարկերը հաւաքելու ժամանակ այդ գիւղի «քեաղխտուղաները» կամ ուղիղն ասած «Բարեւոնի ծերերը» ամենկին խտրութիւն չեն դնում աղքատի, ունևորի ու այրի կնոջ մէջ այլ բոլորի վրա մի տեսակ են բաժանում հարկը»³²:

1912 թ. գյուղացիներն ունեին 7 ձի, 190 խոշոր և 104 մանր եղջերավոր անասուն, 30 խոզ³³:

Ղարոց. 1860-70-ական թվականներին գյուղում գործում էր նախակրթարան՝ 1 ուսուցչով և 18 աշակերտով³⁴, սակայն առավել կանոնավոր՝ ծխական դպրոցը հիմնվել է միայն 1913 թ. Վարդանուշ Չիրքինյանի ջանքերով, իսկ որպես դպրոցի շենք է ծառայել քահանայի տունը³⁵:


Վարդանուշ Չիրքինյանը դասավանդել է մինչև 1917 թ., որից հետո փոխադրվել Բաքու³⁶:

1970 թ. գործում էր ութամյա դպրոց՝ 180 աշակերտով³⁷:

Մր. Միմաս եկեղեցի. գտնվում էր գյուղամիջում: Վավերագրերում առանձնապես հաճախակի հիշվում է՝ սկսած 1841 թ.-ից³⁸:

Մր. Միմաս անվամբ վկայվել է նաև 1880 թ.³⁹: Հիշվում է 1893 թ.⁴⁰:

Միանավ, քարաշեն, փայտածածկ շինություն էր (արտաքին չափերն են՝ 15,23 x 6,93 մ): Մուտքը բացված է հյուսիսային ճակատից: Նույն կողմից բացված լուսամտից ցած՝ ներքուստ ազուցված սրբատաշ քարին, փորագրված է 1860 թ. նվիրատվական արձանագրություն, որում հիշվում են Գյուլիստան գավառի Մելիք-Բեգլարյան իշխանական տան վերջին ներկայացուցիչներից Աբով



ՆՈՐՇԵՆ. Մր. Միմաս եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Մ. Կարապետյանի, 1987 թ.)

Աբով բեկն ու որդիները.

21 Кавказский календарь на 1915 г., с. 124.

22 ՀԱԳ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4 շրջ. (Արամայիս Մ. Տեր-Դանիելյանի ֆոնդ): Մտնում էր Գյուլիստանի մեջ:

23 ՀԱԳ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ք. 4:

24 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, ք. 93: Տե՛ս նաև **Խաչատրյան Կ., Մուրիսյան Հ., Բաղայան Գ.**, նշվ. աշխ., էջ 139:

25 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 28:

26 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

27 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 679-681:

28 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 681:

29 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

30 «Արարատ», 1870, Դ, էջ 138:

31 **Ռեաթ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1909, № 100, 14 մայիսի, էջ 3:

32 Նույն տեղում:

33 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

34 **Հարությունյան Գ.**, նշվ. աշխ., էջ 20:

35 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 346:


36 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 347:

37 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 28:

38 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47:

39 ՀԱԳ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 33:

40 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 191:



ՆՈՐՇԵՆ. գյուղի գլխավոր հատակագիծն ըստ GOOGLE EARTH-ի՝ 2009 թ. արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Գակոբյանի, 2018 թ.)



Յայս յիշատակ վեճայ քար հնծայեցաւ | ի ս(ուր)ք Սինաս եկեղեցին թիփլիզու քաղաքեցի Փարդուզաթի | դուստր Բարբառէ՝ կին | Ապօվ բեկն եւ որթիք նորայ Գիզլի | ... Մէլիք Ուսուրօվ. 1860 ամ:

Հրատ. առաջին անգամ:

Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվել էր պահեստի (1987 թ. գյուղական խանութի պահեստն էր). «Մանասին Շենը ոչ մեծ, բայց գեղեցիկ եկեղեցի ուներ: Խորհրդային առաջին իշխանավորները փակեցին այն, բայց գոնե ժողովուրդը չթողեց, որ քանդեն. դարձրին կոլտնտեսության պահեստ: Արցախյան շարժումն սկսվելուց հետո եկեղեցին ազատեցին, մաքրեցին, կարգի բերեցին: Բարեկարգման ժամանակ հատակի փտած տախտակների տակ երևացին գեղեցիկ խաչքարեր. հավանաբար գյուղի քահանան էր դրանք թաքցրել տախտակների տակ 1920-ական թվականներին, որպեսզի բոլշևիկները չչարդեն: Ուշագրավ է, որ 1990-1992 թթ. ռմբակոծությունների ժամանակ շրջակա բոլոր տները վնասվեցին, իսկ եկեղեցուն ոչ մի արկ չկապավ»⁴¹:

Քահանա. հիշվում են՝ *Հակոբ Կոստանդյան Հարությունյանց* (ծնվ. 1810 թ.). քահանա է ձեռնադրվել 1828 թ. մարտի 25-ին Գանձասարի վանքում և գյուղում պաշտոնավարել 1828 թ.-ից առնվազն մինչև 1857 թ.: 1843 թ. դրությամբ ուներ 2 որդի և 2 դուստր⁴²: Հիշվում է նաև 1851 թ.⁴³:

Հայրապետ Հովսեփյան Տեր-Հարությունյանց-Բոզյանց (ծնվ. 1840 թ., քին. ձեռն. 1865 թ. մարտի 14-ին). պաշտոնավարել է 1871-1888 թթ.⁴⁴ և առնվազն մինչև 1893 թ.: 1893 թ. դրությամբ ուներ 3 որդի՝ Ներսես, Ստեփան և Սահակ⁴⁵:


Սահակ Տեր-Հայրապետյան Տեր-Հարությունյանց (ծնվ. 1874 թ.). 1899 թ. ապրիլի 15-ի գրությամբ գյուղի հասարակությունը դիմում է Ղարաբաղի վիճակային կոնսիստորիային և խնդրում տեր Հայրապետի որդուն՝ Սահակ Տեր-Հայրապետյան Տեր-Հարությունյանցին նշանակելու Նորաշենի քահանա⁴⁶: Ի դեպ, 1901 թ. ապրիլի 14-ին կոնսիստորիայից խնդրել էին Սբ. Էջմիածնի սինոդի հաստատումը:

1902 թ. մարտի 11-ին տրվում է թույլտվությունը⁴⁷:

Տեր Սահակը ձեռնադրվում է 1903 թ. ապրիլի 2-ին: Հիշվում է 1903-1910 թթ.⁴⁸: 1909 թ. քահանայագործող Սահակ Տեր-Հարությունյանցի մասին նշվել է, որ նա միաժամանակ նաև Իգիր-միդրդի գործակալն էր⁴⁹: Հիշվում է նաև 1912 թ.⁵⁰:

Կամուրջ. Մաղաթ Օսիպովի որդին՝ ռուսաստանաբնակ Սիշիկը, Մանասինշեն և Ղարաչինար գյուղերի միջև կառուցում է կամուրջ⁵¹:

Գերեզմանոց. տարածվում է գյուղի հարավային եզրին՝ մի թմբի վրա (N 40°26'24.67", E 046°38'46.57", ծ. մ. 744 մ): Պահպանված արձանագիր տապանաքարերից հները վերաբերում



ՆՈՐՇԵՆ. Սբ. Սինաս եկեղեցին հյուսիս-արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևմուտք, նվիրատվական արձանագրությամբ (1860 թ.) քար՝ ազուցված եկեղեցու ներսում՝ հյուսիսային որմի մեջ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

41 **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 346-347:

42 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 531-533, 538, 542:

43 Վաներագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 209:

44 Նշվ. աշխ., էջ 87: Տե՛ս նաև «Արարատ», 1871, Ը, էջ 484: 1888, ԺԲ, էջ 807: ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 126:

45 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 191: Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 89, 96:

46 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 9786, ք. 1: Տեր Սահակն ավարտել էր Գանձակ քաղաքի Սիբայեյան արհեստագիտական ուսումնարանը, իսկ հոգևոր գիտելիքները ստացել Սբ. Եղիշե վանքի վանահայր Թեոդորոս վարդապետ Շիրակունու մոտ:

47 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 9786, ք. 4 շրջ.:

48 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 260-261: Տե՛ս նաև ֆ. 57, ց. 3, գ. 48, ք. 10-11: ֆ. 56, ց. 1, գ. 11139, ք. 227:

49 **Վերդիան Պ.**, նշվ. հոդվ., «Հորիզոն», 1909, № 35, 13 սեպտեմբերի, էջ 3:

50 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 361 շրջ.:

51 Հիշենք ու շարունակենք, «Մեզալի դղանջներ», 2000, № 5, օգոստոս, էջ 3:



ՆՈՐՇԵՆ. հատված գերեզմանոցից և «անձրևաբեր» սրբացված տապանաքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

են ժԹ դարի սկզբներին: Բոլորը կերտված են կարծր ավազաքարից և մշակված ուղղանկյունաձև: Գերեզմանոցի արևելյան եզրին գտնվող մի սալատապանի վրա քանդակված են պարզ խաչ և յոթ փոսիկներ: Ավանդաբար ասում են, որ երաշտի ժամանակ այդ քարի վրա ջուր լցնելուց հետո անձրև է եկել:

Մի գրույցի համաձայն՝ «Մանասին Շենի գերեզմանոցը հիմնադրել է մեր Չաքարյան Ղազար պապը՝ հորս պապը: Մեր տոհմի հանգուցյալի աճյուններն այնտեղ են ամփոփված: Այնտեղ են 25 տարեկանում դժբախտ պատահարից զոհված իմ եղբայր Սարգսի (Իլիաս), նույնպես դժբախտ պատահարից վախճանված՝ իմ հորեղբոր տղա Վանիկ Սիմոնի Չաքարյանի գերեզմանները»⁵²:

Ի դեպ, գյուղի գերեզմանոցում քահանայի հիշատակին կերտված տապանաքարը հայտնի էր Ջնգան քար անվամբ, քանի որ «...խփելու ժամանակ զանգի ձայն էր հանում»⁵³:

Մեկ այլ տապանաքարի մասին էլ նշվել է. «...մի անպաճույճ շիրմաքարի վրա գյուղական անվարժ արհեստավորի ձեռքով փորագրված էր մի փոքրիկ դարոցականի պատկեր՝ պայտասկը ձեռքին ու գրված. “Այս երեխան եթիմ Թյունին թոռն է”»⁵⁴:

Տապանաքար.

Այս է տապան Բեկլար բեկին Մելիք Եսայեան Մելիք Յովսեփեանց, վախճ. 9-րդ ամսի 20-ին 1819 ամի:

Հրատ. **Ղահրամանյան Ա.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 43, 82:

Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.

Աստ ամփոփի դի Նախշունի, ով է դուստր / լիլասազ Շամիրի Միրզայեանց(ի) եւ կինն / Յակոբայ Յարութեանց(ի), ի 1866 ամի ի գիտն Նորշեն:

Հրատ. առաջին անգամ:

52 **Չաքարյան Գ.**, Գրելու շատ բան կա... Երգը են դարձել, «Մուսի դողանցներ», 2004, № 11, էջ 2:

53 **Հարությունյան Ն.**, «Ջնգան քար», «Մուսի դողանցներ», 2004, № 12, դեկտեմբեր, էջ 4:

54 **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Գ, էջ 349:

Պռավին հանգիստ. գյուղի կարևոր հուշարձաններից էր⁵⁵:

Փառքի (ՀՄՊՁ) հուշարձան. Մեծ հայրենականում զոհված կամ անհետ կորած 70 նորշենցիների (մանասինշենցիների) հիշատակին 1970-ական թթ. սկզբներին կառուցվել էր փառքի հուշարձան⁵⁶:

Պարանպատ («Բարանբատ») անվամբ գյուղատեղի. գտնվում է Նորշենից 2 կմ հարավ-արևելք՝ անտառապատ լանջի փեշին. «Այս անուամբ փոքր եկեղեցի մը, հանգստարան և գիւղատեղի կայ Կիլիստանի (Արցախ) Դատի-Բեկանց կիսաւեր վանքի հիւսիսային կողմը, Պարանպատ անուն անտառի մէջ, Ինջայի ձախ կողմը»⁵⁷:

1987 թ., տնափոսերից զատ, գյուղատեղիի տարածքում այլ հուշարձաններ (եկեղեցու և գերեզմանոցի մնացորդներ) նկատելի չէին:

Չաքին նահատակ գյուղատեղի. տարածվում է Պարանպատ գյուղատեղիից 2 կմ հարավ-արևելք: Ունեցել է երկու գերեզմանոց:

Կա վկայություն, թե իբր այստեղ ավերակ վանք է եղել, իսկ տապանաքարերից մեկի վրա էլ իբրև թե ընթերցվել է հետևյալը.

*Յուղի գրվանքան դառավ մի քիստի, վա՛յ մեզանից հետո եկողներին*⁵⁸:

Առաջին գերեզմանոց. գտնվում է գյուղատեղիի հյուսիսարևմտյան կողմի սարավանջին: Տեղում պահպանվել են ԺԲ-ԺԳ դդ. բնորոշ, պարզ հորինվածքով, տեղահանված մի քանի խաչքարեր և շուրջ երկու տասնյակ անմշակ սալատապաններ:

Երկրորդ գերեզմանոց. գտնվում է գյուղատեղիի հարավային կողմի հարթ տարածության վրա և զբաղեցնում մոտ 60 x 40 մ մակերես: Պահպանված սրբատաշ ուղղանկյունաձև բազմաթիվ տապանաքարերի և սակավաթիվ խաչքարերի թվում կային նաև արձանագրվածները⁵⁹.

55 **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 28:

56 Նշվ. աշխ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 441-443:

57 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 767:

58 ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, թ. 14:

59 1987 թ. Պարանպատ և Չաքին նահատակ գյուղատեղիներ առաջնորդելու համար շնորհակալություն են հայտնում նորշենցի Գերասիմ Չաքարյանին:



ՆՈՐՇԵՆ. Պարանպատ և Ջաքին մահատակ գյուղատեղիները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.
Այս է հանգի[ստ ...]իքարին, հորն՝ տ(է)ր Ղազարին, | թվ(ին) Ռ-ՃԾԶ (1707):
 Հրատ. առաջին անգամ:


Տապանաքար. հարթ, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 2 տող.
Այս է տապան բաշինճաղեցի Ջաքարի որդի խօջայ Պետրոսին որդի Առաքելին. ով որ կարթայ | ա(ստուա)ծ ողորմ[ի] ... Ա(ստուա)ծ ողորմի, թվ(ին) Ռ-ՃՂ (1741):
 Ծանոթ. Բաշինճաղ (Պասնջաղ, Բաշնջաղ) գյուղը գտնվում էր Շաքիի գավառում: Ավերվել է 1712 թ. լեզգիների արշավանքից: Հետագայում չի վերաշինվել, իսկ բնակիչները ցրվել ու հաստատվել են այլ վայրերում: Բաշնճաղցիներից բնակվել են նաև Հաղպատ գյուղում, որի գերեզմանատանը ևս մի քանի տապա-



ՆՈՐՇԵՆ. հատվածներ Ջաքին մահատակ գյուղատեղիի առաջին գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

նաքարեր կրում են մույնպիսի հիշատակմամբ արձանագրություններ: Ինչ վերաբերում է Ջաքին մահատակում պահպանված 1741 և 1744 թթ. տապանաքարերին, ապա դրանք վկայում են, որ բաշինճաղցիների մի մասն էլ հարազատ գյուղի ավերումից հետո օրևան է գտել նաև այդ գյուղատեղիում (այն ժամանակ՝ շեն ու մարդաշատ):

Տապանաքար. հարթ, ուղղանկյունաձև (164 x 46 սմ), արձանագրությունը՝ 6 տող.
Այս է տապան բ/աշինճաղեցի | Խաչանուսի որդի | Յովանէսին, | Ռ-ՃՂԳ (1744) | թվին:
 Հրատ. **Ղառաբանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 17, 67:





ՆՈՐՇԵՆ. Զաքին մահատակ գյուղատեղիի առաջին գերեզմանոցի մնացորդներն ու խաչքարերից մեկը (լու.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)


ՆՈՐՇԵՆ. արձանագիր տապանաքարեր և խաչքար Զաքին մահատակ գյուղատեղիի երկրորդ գերեզմանոցում (լու.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Տապանաքար. հարթ, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 2 տող.
 Այս է տապան բաշինճադեցի Չաք(ա)րի | որդի խօջա Պետրոսին. ՌՃՂԳ (1744) քվին:

Տապանաքար. արձանագրությունը՝ 2 տող.
 Այս է տապանը բաշնճադեցի | ...Պետրոսի ՌՃՂԳ (1744) քվին:

Հրատ. **Ղահրամանյան Ա.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 67:

Խաչքար. եզրագոտում և նեղ կողմն՝ 6 տող.
 Այս խաչս է հոգոյ փրկութ(եան) | Խաչ/այտ/ուրի/ն:



ՇԵՖԵԿ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 7,5 կմ հյուսիս-արևելք (նույն կողմից կից է Ղարաչինար գյուղին)՝ Սևջուր գետի աջ ափին: Ծովի մակերևույթից ունի 665-685 մ բարձրություն:

Անվանում. վկայվել է նաև Մոլլա-Վալադլի ձևով:

Պատմություն. գյուղի հայաթափման ժամանակն անհայտ է: Թերևս դա տեղի է ունեցել ԺԸ դարի վերջերին՝ գավառաբնակ հայության ընդհանուր գաղթի ժամանակ:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին գյուղը գտնվում էր ազգությամբ թուրք մի քանի կավածատերերի իրավասության ներքո¹:

Բնակչություն. ԺԹ դարի կեսերից, ենթակա ցարական իշխանությունների պարտադրանքին, կամաց-կամաց նստակեցության անցնող թուրք-թաթարական ցեղերի մի հատված բնակության վայր է ընտրում պատմական անունն արդեն մոռացության մատնված ներկայիս Շեֆեկում: Ամառանոց-ձմեռոց կենցաղավարությանը վարժված քոչվորները, սակայն, ինչպես երևում է, դեռևս հաստատուն բնակիչներ չէին, որի պատճառով էլ հնարավոր չի եղել նրանց շրջանում ճշգրիտ վիճակագրություն անցկացնել (հայտնի է, որ թափառական այս ցեղերից շատերը նույն տարվա մեջ հաշվառվում էին թե՛ ամառանոցում, թե՛ ձմեռոցում և թե՛ նույնիսկ քոչի պահին՝ ճանապարհներին): Ուստի և պատահական չէ, որ դրա հետևանքով 1886 թ. մարդահամարն անիրական մեծ թիվ է մատնանշել, մինչդեռ արդեն 1914 թ., երբ այս ցեղերն ավելի հաստատուն նստակյացներ էին դարձել և ավելի ստույգ հաշվառվել, նրանց թիվն էապես նվազել էր (մոտեցել էր իրականությանը): Ահա այդ վիճակագրությունների մեկտեղումը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1886 ²	57	239	177	416
1908 ³	77	330	300	630
1914 ⁴				205

Ըստ Բորիս Գլեչյանի՝ մինչև բռնագաղթը գյուղն ուներ մոտ 650 բնակիչ⁵:

Խաչքար. գյուղամերձ ջրամբարի կառուցման ժամանակ հայտնաբերվել է ԺԳ-ԺԴ դարերին բնորոշ գեղարվեստական լուծումներով մի խաչքար, որը մինչև 1992 թ. պահվում էր շրջկենտրոնի պատմաերկրագիտական թանգարանում:



Շեֆեկ. խաչքար (ԺԳ-ԺԴ դդ.). հայտնաբերվել է Ջելվա-Շեֆեկ գյուղերի միջակայքում Սևջուր գետի վրա կառուցվող ջրամբարի շինարարական աշխատանքների ժամանակ և փոխադրվել Շահումյան շրջկենտրոնի պատմաերկրագիտական թանգարան, որտեղ էլ այն տեսել ենք 1984 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)

ՎԵՐԻՇԵՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոն Շահումյան (Ներքին-շեն) ավանից 5,4 կմ հարավ-արևմուտք՝ Սևջուր գետի զույգ ափերին՝ ծովի մակերևույթից 1075-1245 մ բարձրության վրա:

Անվանում. այլազգիները (թուրք-թաթարները) գյուղն անվանում էին Աղջաքենդ, որն էլ համանուն ներքին բնակավայրից զանազանելու համար մասնավորեցնում էին Յուխարի (Վերին) տարբերակով՝ Յուխարի Աղջաքենդ: Վերջինս ընդունվել և պաշտոնապես շրջանառվել է սկզբունքորեն բուն հայկական բնակավայրերի օտար անվանումներին նախապատվությունը տված ինչպես ցարական, այնպես էլ խորհրդային իշխանությունների կողմից:

Վարչական կացությունը. 1922-1923 թթ. Վերիշենը Շահումյանի շրջանի վարչական կենտրոնն էր¹: 1973 թ. մարտի 15-ին ստացել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ²:

Պատմություն. գյուղի հարավային եզրին պահպանված գերեզմանոցը, այնտեղ գտնվող ԺԳ դարի խաչքարը, պաշտամունքային ավելի հին կառույցի տեղում ԺԸ դարում վերակառուցված Սր. Աստվածածին եկեղեցին, նրա որմերում ազուցված ԺԷ դարի խաչքարերը, ինչպես նաև գյուղամերձ տարաբնույթ հուշար-

1 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 388, ք. 15-16, 24-25, 62-63:
 2 Свод..., с. 80-81.
 3 Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22.
 4 Кавказский календарь на 1915 г., с. 160.
 5 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, ք. 2:

1 **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Ա, էջ 21:
 2 Азербайджанская ССР, Административно-территориальное деление, Баку, 1979, с. 12.

ձանները փաստում են, որ Վերիշենը եղել է գավառի հին բնակավայրերից մեկը:

ԺԹ դարի վերջին գյուղում բնակվում էր Մելիք Շահնազարյան-Շահվորյանց տոհմի ներկայացուցիչներից Բեզլար բեկը, որի մոտ պահվում էր իրենց տոհմի պատմության վերաբերյալ երեք վավերագիր³:

Ի դարի սկզբին հայ-թաթարական ընդհարումների (1905-1907 թթ.) ալիքը ցավալիորեն ներառում է նաև Վերիշենը: Այստեղ առաջին զոհերից մեկն էր 1905 թ. հոկտեմբերի 7-ին սպանված վերիշենցի Սիմոնը⁴:

Լարվածության և ահազանցող վտանգի այդ պայմաններում 1906 թ. հունիսի 5-ին գյուղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար գումարվում է ժողով, և 88 վերիշենցիների ստորագրություններով կազմվում հետևյալ գրությունը. «Մենք՝ ի ներքոյ ստորագրեալք Վերին Շենու ժողովրդականքս, ժողովեցինք մեր գիւղական ժողովատեղն ներկայութեամբ մեր Աղջաքենու տանուտէրի օգնական Սարգիս Մակարեանի՝ խորհելու ինքնապաշտպանութեան համար: Որովհետեւ ամբողջ Գանձակու գաւառի հարաւային մասի եւ Ջիւանշիրու ամբողջ գաւառի բոլոր թուրք ազգաբնակչութիւնը իրանց քոչերը կենտրոնացրել են «Կեփաս» անուանեալ եայլաղում. սորանք համարեայ շրջապատած են Վերին Շեն գիւղը, այսու համար որոշեցինք՝ ընտրել 2 պատգամաւոր՝ դիմելու Գանձակու Հայոց փոխանորդին ու Այգեստանի Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութիւն, նոյնիսկ տեղոյն բիւրօյին օգնութիւն հայցելու՝ թէ հայ զինուորներ թուլ ամենասակաւ 40 հոգի, թէ զէնքի, թէ ռազմամթերքի ու թէ փոխառութիւն անելու: Վերոյ գրեալ պահանջների համար ընտրեցինք երկու լիազորներ, որոնք են մեր ծխատեր Խորեն քահանայ Տեր-Մարտիրոսեանցին, պ. Գրիգոր Յակովբեանցին, որոնց տրուած է լիակատար իրատունք մեր ժողովուրդի կողմից վերոյ գրեալ պահանջները իրագործել, ինչպէս իրանց ցանկութիւնն է, մենք՝ բոլոր ժողովուրդս, պարտաւոր ենք կատարել»⁵:

Ազգամիջյան կրքերի շիկացած ժամանակներում ռուսական իշխանություններն էլ իրենց բաժին տմարդի վերաբերմունքն են ցույց տալիս: Մասնավորապես 1906 թ. օգոստոսի վերջերին «...մեզ մօտ եկան III մասի պրիստա Բուկօվսկին իր ստրաժնիկներով և մի սպայ 50 կօզակով: Գիւղը մտնելուն պէս պահանջեցին գարի, դարման, խոտ, 1 հատ կով, հեշտաեռներ, անկողիններ բոլոր կօզակների համար, իւղ, բրինձ, կարտօֆիլ, շաքար, թէյ կն կն: Մի կերպ գիւղացիք բաւարարութիւն տւին դրանց այդ «արդարացի» պահանջին: Գիւղացիք 40 ը. մի լաւ կով առան, տւին կօզակներին, մորթեցին, դժբախտաբար միսը մի քիչ պինդ է դուրս գալիս, դրա համար սաստիկ ծեծեցին մեր տանուտէրի օգնական Սարգիս Ասկարեանին, թէ «անպիտան, ինչո՞ւ համար ես պառաւ կով տւել, որ միսը այդպէս պինդ լինի, զնա այս րուպէիս ոչխարներ քեր մեզ համար»: Փառաւոր կերպով ճաշելուց յետոյ պահանջեցին 250 ը. ...Բալաբեզ Սափիքիւրդսկու օգտին, իբր թէ նրա 12 հատ տաւարի կէսը տարել են վերի-շինացիք, իսկ կէսը՝ խարխափութիք, որոնցից արդէն առել են 250 ը.: Երբ որ խնդրեցին պրիստա Բուկօվսկուն ցոյց տալ այն թղթերը, որով պահանջում են այդ փողն, ստացւեց հետևեալ պատասխանը. «Գեներալ նահանգապետ Ալֆտանի կարգադրութիւնն է, որ պէտք է վճարէք. ինչ գործ ունէք թղթի հետ. առանց խօսելու պէտք է ներկայացնէք փողը»: Այդպէս էլ եղաւ. առանց խօսելու վճարեցինք 250 ը.: Մեզ հասած միւս վնասները հասնում են նոյն-

քան գումար: Գիւղացիներին տւած ծեծն էլ մի ձրի հաւելած էր»⁶:

Յավոք, ի տարբերություն 1905-1907 թթ. բավականաչափ հաջող դիմակայության, արդեն 1920 թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում գյուղն ամբողջությամբ ավերվում է: Բացի մի քանի զոհերից (թուրքերը եկեղեցում այրում են վերիշենցի Սուրի Միրաբյանին մի քանի համագյուղացիների հետ միասին)⁷, բնակիչների մեծ մասը փախուստով ազատվում է վերահաս սպանողից⁸:

Խորհրդային մի քանի տասնամյակների խաղաղ գոյրնթացին հաջորդած Արցախյան ազատամարտի տարիներին, ի թիվս Շահումյանի շրջանի մնացյալ բոլոր բնակավայրերի, ծանրագույն փորձության է ենթարկվում նաև Վերիշենը: Բնօրրանում հարատևելու գերլարված ճիգերն այստեղ ևս ի վերջո մնում են անհետևանք և ապարդյուն, քանի որ 1992 թ. հունիսի 13-ին ընդհանուր անկման պայմաններում գուտ հայաբնակ Վերիշեն ավանը ևս հայաթափ է լինում:

Բնակչություն. Վերիշենը հնուց ի վեր գավառի ամենից ընդարձակ ու մարդաշատ բնակավայրն էր: Այն բնակչության թվով, հատկապես սկսած ԺԹ դարից, միշտ գերազանցել է թե՛ Գյուլիստանին, թե՛ մահալոթյան կենտրոն Գարաչինարին և թե՛ նույնիսկ Շահումյանի շրջանի վարչական կենտրոն Շահումյան ավանին (Ներքիշեն):

Համաձայն շնչագրական առաջին տեղեկագրերից մեկի՝ 1831-1832 թթ. Վերիշենի բնակիչներն էին 60-ամյա Հովսեփ Օհանյան Հախյանցը, կինը՝ 51-ամյա Խաթան, որդիները՝ 22-ամյա Խաչատուրը, 17-ամյա Առաքելը, 10-ամյա դուստրը՝ Նազլուն, Խաչատուրի կինը՝ Ջավահիրը, և դուստրը՝ 1-ամյա Մարիամը; Սիմեոն Դաշխայանի այրին՝ 77-ամյա Սոնան, որդին՝ 50-ամյա Մովսեսը, կինը՝ 39-ամյա Ջավահիրը, որդին՝ 1-ամյա Արզումանը, դուստրերը՝ 12-ամյա Հերիքնազը, 10-ամյա Փարուշանը, 8-ամյա Սիրունանը, 6-ամյա Նախշունը, 3-ամյա Հեղնարը; 35-ամյա Ալբես Սարգսյան Խաչատուրյանցը, կինը՝ 29-ամյա Մեղրին, որդիները՝ 8-ամյա Սկրտիչը, 4-ամյա Սարգիսը, Ալբեսի եղբայրը՝ 20-ամյա Ավագը, կինը՝ 17-ամյա Թագուհին; 51-ամյա Հակոբ Սարգսյան Գյուղդանյանցը, կինը՝ 42-ամյա Ջավահիրը, 14-ամյա որդին՝ Պետրոսը, 5-ամյա դուստրը՝ Խանունը; 60-ամյա Մարտիրոս Այրիկյան Գրիգորյանցը, կինը՝ 44-ամյա Խաթունը, 13-ամյա որդին՝ Արզումանը, 8-ամյա դուստրը՝ Եղիսաբեթը; 40-ամյա Գալուստ Առաքելյան Դազարյանցը, կինը՝ Անան, որդիները՝ 15-ամյա Ավանեսը, 10-ամյա Առաքելը, 8-ամյա դուստրը՝ Հերիքնազը; 45-ամյա Ռսկան Գոփանյան Մահալյանցը, կինը՝ 40-ամյա Անան, որդիները՝ 21-ամյա Սոսին, 17-ամյա Գիորգին, Սոսիի կինը՝ 15-ամյա Հուրիփաշան; 68-ամյա Եղիա Հարությունյան Բաղդասարյանցը, որդին՝ 39-ամյա Ավագը, կինը՝ 29-ամյա Ջավահիրը, որդիները՝ 5-ամյա Պետրոսը, 3-ամյա Պողոսը; 52-ամյա Ավետիս Խաչատուրյան Ավանեսյանցը, կինը՝ Նազուխանը, զավակները՝ 10-ամյա Ավանեսը, 8-ամյա Սկրտիչը, 4-ամյա դուստրը՝ Խաթունը; 32-ամյա Ահարոն Բաբայան Ազարյանցը, կինը՝ 25-ամյա Մարիամը, 4-ամյա դուստրը՝ Սուրին, Ահարոնի եղբայրը՝ 20-ամյա Օհանը, կինը՝ 17-ամյա Անթառանը; 35-ամյա Հակոբ Հարությունյան Սաղաթելյանցը, կինը՝ 21-ամյա Մարիամը, 4-ամյա որդին՝ Միրայելը; Հարություն Օհանյանի այրին՝ 80-ամյա Մարիմոսը, որդիները՝ 54-ամյա Ջաքարը, 45-ամյա Ավագը, 40-ամյա Սամուելը, Ավագի կինը՝ 35-ամյա Նազլուն, Սամուելի կինը՝ 30-ամյա

3 Վավերագրերը տես **Բարխուստարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 248-249:

4 «Մշակ», 1905, № 209, 13 հոկտեմբերի, էջ 1: Տես նաև **Ա.Գ.**, նշվ. աշխ., էջ 328:

5 **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Բ, էջ 21: Տես նաև ՀԱԶ, ֆ. 56, ց. 5, գ. 26, ք. 107:

6 **Նոր.**, քրթակցություն, «Զանգ», 1906, № 21, 6 սեպտեմբերի, էջ 3:

7 **Ջարգարյան Կ.**, Իմ հարազատները՝ մի նկարում, «Մնավի դողանցներ», 2017, № 4, ապրիլ, էջ 3:

8 Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 436.

Նանիկը, նրանց որդին՝ 5-ամյա Մովսեսը, և 7-ամյա դուստրը՝ Եղսամանը, Մարինոսի թոռները՝ 28-ամյա Եսայի Օհանյանը, 22-ամյա Հակոբը, Եսայու կինը՝ 26-ամյա Մարիամը, որդին՝ 2-ամյա Դանիելը; 35-ամյա Գևորգ Մովսեսյան Չիչյանցը, կինը՝ 31-ամյա Գյուլին; 44-ամյա Սարգիս Խաչատուրյան Թամրազյանցը, կինը՝ 32-ամյա Մեղրին, 6-ամյա որդին՝ Թամրազը; 15-ամյա Հակոբ Աբրահամյան Հակոբյանցը; 55-ամյա Դանիել Բաբայան Ավագյանցը, կինը՝ 50-ամյա Ջավահիրը, որդիները՝ 27-ամյա Բաբան, 25-ամյա Ռուշանը, Բաբայի կինը՝ 24-ամյա Անան, 5-ամյա որդին՝ Ղուլին, Ռուշանի կինը՝ 22-ամյա Սոնան, 1-ամյա որդին՝ Աբրահամը, 3-ամյա Անան, Դանիելի եղբայրը՝ 40-ամյա Մովսեսը, կինը՝ 34-ամյա Հնազանդը, 6-ամյա դուստրը՝ Խաթան⁹:

Վերիշենցի հայերը բնիկներ էին¹⁰: Գյուղաբնակների թվում 1874 թ. հիշվում են մեկըրական ծագմամբ կալվածատերեր 52-ամյա Բեգլար բեկ Ռուստամ-Բեկյան Մելիք-Շահնազար Շաֆերյանցը (որդիներն էին Բալաս, Սարգիս, Ջավադ և Նազար բեկերը), ազգականներն էին Ասլան բեկի որդիները՝ Միրզան, Բալաբեկը, Պավեն և Ջուռնուրը¹¹:

1880-ական թվականներին գյուղում հայտնվում են նաև թուրքեր, որոնք 1886 թ. կազմում էին 8 տուն՝ 13 (9-ը՝ ար., 4-ը՝ իգ.) շունչ¹²:

Հայտնի է, որ 1915 թ. Վերիշենում էր հաստատվել Մեծ եղեռնից փրկված վանեցի և էրզրումցի մի քանի ընտանիք (Մարտիրոս, Գևորգ, Սրիշո, Մարո, Մաշո, Գարո, քառա Մոսես և այլք)¹³:

1920 թ. դրությամբ Վերիշենում էին բնակվում Մեծ եղեռնը վերապրած 53 տուն (149 շունչ) հայ գաղթականներ¹⁴, որոնցից 11 տունը Կարկառ գավառի Ծկոր, 5-ը՝ Հայոց ձորի Հիրձ, 7-ը՝ Կարճկանի Գոնս, 4-ը՝ Արճեշի Ջիվագյահ, 2-ականը՝ Թիմարի Մարմես, Հայոց ձորի Անզղ և Քերծ, Մոկսի, Բերկրիի Պստիկզեղ և Բուվանդի Լաթար գյուղերից էին, 1-ական էլ՝ այլ վայրերից¹⁵:

Ի դեպ, անդրադառնալով գաղթականների վիճակին, նշվել է, որ «Նիսիական չափազանց ծանր կացություն ունին, հիանդներու թիւը 50-ի կը հասներ, երկու շաբաթուայ մէջ ունեցած էին 8 մահեր: Տեղացիքն ալ առհասարակ շատ խիստ վերաբերմունք ունեցած են դեպի գաղթականներ»¹⁶:

Ըստ Սիրանուշ Մարտիրոսի Գզիրյանի՝ Վերիշենում էին հաստատվել Մեծ եղեռնը վերապրած հայրն ու մայրը (Վանի Գոնս գյուղից), Հովհաննիսյան Ամիրջանն ու կինը՝ Նուբարը, Հովհաննեսը և Եղիշ Գավթյանը¹⁷:

Վերիշենցիների մեջ կային խոյեցիներ (Տեր-Մարտիրոսյանները), սալմաստեցիներ (Դազարյանները՝ Չիրթունք), վանեցիներ (մոտ 10 ընտանիք), հայաստանցիներ, բայանլվեցիներ¹⁸:

Ստորև ներկայացվող վիճակագրական աղյուսակից ակնհայտ է, որ ԺԹ-Ի դարերի ընթացքում գյուղի հայ բնակչությունն ընդհանուր առմամբ գրանցել է անընդմեջ աճ.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1832 ¹⁹		47	41	88
1841 ²⁰	28	89	54	143
1850 ²¹	30			
1851 ²²	33	149	93	242
1874 ²³				702
1876 ²⁴				615
1886 ²⁵	100	554	448	1002
1889 ²⁶	94	524	454	978
1893 ²⁷	108	495	442	937
1901 ²⁸		539	563	1102
1902 ²⁹		567	447	1014
1905 ³⁰	121	607	484	1091
1908 ³¹		669	522	1191
1909 ³²		690	641	1331
1910 ³³	մոտ 250	702	652	1354
1912 ³⁴	175	685	689	1374
1914 ³⁵				1423
1915 ³⁶	240			1500
1918 ³⁷	240	918	660	1578
1924 ³⁸				400
1925 ³⁹				1895
1970 ⁴⁰	826	2043	2098	4141
1977 ⁴¹	900			
1987 ⁴²				7000
1992 ⁴³				4200

19 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 396-400:

20 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 47:

21 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 64, թ. 1; գ. 65, թ. 11:

22 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 92: Տե՛ս նաև Վաերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 210: ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2828, թ. 5 շրջ.:

23 Кавказский календарь на 1886 г., с. 125.

24 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 6775, թ. 115-116:

25 Свод..., с. 76-77.

26 Բարխուսարեանց Մ., նշվ. աշխ., էջ 247: Ի դեպ, ըստ արխիվային մի վավերագրի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 45-46)՝ նույն թվականին գյուղն ուներ 861 (532-ը՝ ար., 329-ը՝ իգ.) բնակիչ:

27 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, էջ 335: Այլ տեղեկության համաձայն (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 195)՝ 100 տուն:

28 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, թ. 241-242: Տե՛ս նաև Վաերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 409:

29 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10044, թ. 118-119:

30 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, թ. 140-141: Տե՛ս նաև Ա-Գ, նշվ. աշխ., էջ 325, սակայն ըստ մատաղատների՝ 240 տուն հայ:

31 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, թ. 223-224: Այլ տվյալի համաձայն՝ նույն թվականին գյուղն ուներ 1531 բնակիչ (Кавказский календарь на 1910 г., с. 173), կամ 174 (858-ը՝ ար., 673-ը՝ իգ.) տուն (Памятная книга Елисаветпольской губернии на 1910 год, с. 22):

32 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 243-244:

33 Միւնեցի, Տեղեկութիւններ գաւառից, «Մշակ», 1910, № 160, 23 յուլիսի, էջ 3: Տե՛ս նաև ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11139, թ. 189:

34 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52. Համաձայն նույն թվականի մեկ այլ տեղեկագրի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 330) ուներ 1442 (752-ը՝ ար., 690-ը՝ իգ.) բնակիչ:

35 Кавказский календарь на 1915 г., с. 84.

36 ՀԱԳ, ֆ. 56, ց. 4, գ. 617, թ. 1: Տե՛ս նաև ՀԱԳ, ֆ. 28, ց. 1, գ. 408, թ. 24 շրջ.:

37 ՀԱԳ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 4:

38 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, թ. 8:

39 Խաչատրյան Կ., Մուրիսյան Հ., Բաղայան Գ., նշվ. աշխ., էջ 139:

40 Դանիանյան Կ., Օջախի գիրք, հ. Ա, էջ 30:

41 Խալափյան Վ., Փոխվել է գյուղի դեմքը, «Նոր ուղի», 1977, № 107, 6 սեպտեմբերի, էջ 3:

42 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

43 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, թ. 2:

9 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 397 շրջ.-401:

10 Բարխուսարեանց Մ., նշվ. աշխ., էջ 246:

11 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 109: Տե՛ս նաև Դանիանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 86:

12 Լալայան Ե., Գանձակի գավառը, Երկեր, հ. 2, էջ 303:

13 Նաբաթյան Բ., Մեկ նամակի հետքերով, «Մոսկի դրոպաներ», 2017, № 4, ապրիլ, էջ 2:

14 Թեղեկանքներ, նշվ. հոդվ., «Հայաստանի ձայն», 1920, № 11, 6 փետր., էջ 2:

15 Նշվ. հոդվ., «Հայաստանի ձայն», 1920, № 9, 1 փետրուարի, էջ 2:

16 Նույն տեղում:

17 Դանիանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 374-375:

18 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 65, թ. 16:



ՎԵՐԻՇԵՆ. հատված բնակավայրի կենտրոնական մասից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Արցախյան ազատամարտի տարիներին շրջանի այլ բնակավայրերի նման Վերիշենը նույնպես կրում է մարդկային կորուստներ ինչպես խաղաղ բնակչության (60 հոգի), այնպես էլ հայրենի օջախների պաշտպանության և ազատության համար զենքի դիմած ազատամարտիկների (23 հոգի) թվում:

Ահա վերիշենցի զոհերի կամ անհետ կորածների անունները՝ Ասյա Համբարձումի Սաքունց (Գյուլումյան). զոհվել է 1990 թ. հունվարի 13-ին սրտի պայթյունից, Կարմեն Ավագի Միմոնյան (1991 թ. օգոստոսին՝ բակում խաղալիս դիպուկահարի կրակոցից), Գրիգոր Գարեգինի Հակոբյան (1991 թ. ամռանը՝ արկի պայթյունից), Միրանուշ Ապրեսի Հակոբյան (1991 թ. ամռանը՝ ռմբակոծությունից), Գասպար Ասրիի Մարտիրոսյան, Ջոյա Արշակի Մարտիրոսյան, Վարդան Արտաշի Մաղաթեյան և Պերճ Արմենակի Սուտյան (1992 թ. մարտի 3-ին՝ խփված ուղղաթիռի մեջ), Մովսես Հովհաննեսի և Էլվիրա Գրիգորի Շախյան ամուսիններ (1992 թ. հունիսի 3-ին՝ տանը գրադի պայթյունից), Վար-

դանուշ Ավագիմյան՝ ծագումով Գետաշենից, Նուշի Բաղալյան, Յուլակ Գերասիմի Բաբաբյոխյան, Ասլան Վերդիի Բաշրաթյան, Վարդան Նապոլեոնի Բաշրաթյան (մնացել է պապի պատճառով), Անուշ (Նուշի) Հայկազի Բաղյան, որսորդ Մինաս Սուդիի Կզրիսաքունց, Մարգուշ Հարությունի Կզրիսաքունց, Աղամիր Գալուստի Հախունց, Իսկուհի Աբգարի Ղազարյան, Ալեքսան Մերոբի Մարյանյան, Ազատ Վարդանի Շախյան, Ծաղիկ Հակոբի Շախյան, Տիգրան Հարությունի Շախյան, 23-ամյա Վարուժան Հրաչիկի Շելունց, Ռաֆայել Սուդիի Ջանունց, Սապետ Վերդիի Ջրավյան, Երվանդ Իսակի Միմոնյան, Բորիկ Մամսունի Մաղաթեյան, Գրիշա Բաղիի Մաղաթեյան, Անիչկա Աբրահամի Մաքունց, Մինաս Մերգիի Մամվելյան, Մաթենիկ Հակոբի Սուտյան, մայր և դուստր Դուխանիկ (հայպարիսցի) և Սոնիկ Վերդյաններ, Բախշի Ապրեսի Քոխյան, Նունիկ Քոխյան, Իսակ Քոխյան (մնացել են գյուղում), Բորիկ Սուդիի Մարյանյան, Բագրատ Մարտիրոսյան, Շահնազար Շահնազարյան, Վալդո



ՎԵՐԻՇԵՆ. հատված բնակավայրի կենտրոնական՝ եկեղեցամերձ թաղամասից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Յականի Բյոխյան (մնացել են նահանջի ճանապարհին), Նուբար Շելունց (նահանջի ճանապարհին՝ տրակտորի կցասայլի մեջ, Նապատում), Ջինավոր Արշակի Ավագիմյան, Գերասիմ Վաղարշի Ավագիմյան, Մարուս Ավագիմյան, գաղթուտցի Մարուսյա Մարտիրոսյան, Իսրայել Սերգեյի Շելունց, Անահիտ Վազիի Շելունց և Մարալ Ավագի Ջանունց (գաղթի ճանապարհին), Շարմաղ Փաշայի Շախյան (նահանջի ճանապարհին՝ Գյուլիստանում), Ջիլփի Գրիգորյան, Սիրուհի Մակիի Սաղաթեյան և Ջիլփի Ասլանի Գզիբյան (գաղթի ճանապարհին՝ Նապատում), Կևի Աղաջանյան (Նապատում, ամփոփվել է Ստեփանակերտում), Ջհանգիր Բադալի Աղաջանյան (մնացել է Գյուլիստանում), Սամսոն Սեփիի Սաքունց (մնացել է նահանջի ճանապարհին՝ Հաթերքի մոտ), Ռոզա Հարությունի Հախունց (մնացել է Երից մանկանց վանքի մոտ)⁴⁴:

44 Ղանիրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 688-690:

Ազատամարտիկներ. Ռուբեն Ավագի Պետունց (գրվել է 1991 թ. հունիսի 6-ին Բուզլուխում. դիակը գյուղ են բերել հորեղբոր տղաները՝ Սլավիկն ու Ապրեսը), Մերյոժա Լևոնի Սաղաթեյան (1991 թ. հունիսի 6-ին՝ Մանաշիդում), ՀՀ-ից կամավորականներ Ջիվան Աբրահամյան, Նիկոլայ Հայրապետյան, Անդրանիկ Պետրոսյան և Վարդան Տերտերյան (1991 թ. հուլիսին), 19-ամյա Միեր Լևոնի Շախյան (1991 թ. սեպտեմբերին՝ Շամփրապատուկը գրավելիս ընկերոջը՝ Մամվելին փրկելու ժամանակ), Արշակ Ասրիի Մարտիրոսյան (1992 թ. փետրվարի 17-ին՝ Մանաշիդում), Հայկ Ջամիլի Շելունց (1992 թ. փետրվարի 18-ին՝ Մանաշիդն ազատագրելիս), 28-ամյա Ժիրայր Ռուբենի Գյուլունյան (1992 թ. մարտի 16-ին՝ Մանաշիդում), 19-ամյա Արտակ Արշակի Հախունց (1992 թ. մայիսի 1-ին՝ Ղունանատակի բարձունքը գրավելիս), Դավիթ Հրանտի Հովհաննիսյան (անհետ կորել է 1992 թ. հունիսի 13-ին), Համազասպ Լևոնի Նահապետյան և 23-ամյա Արեգ Էդիկի Մուղյան (1992 թ. հունիսի 13-ին՝

**Վերիշեն ավանի տնատերերի ցանկը
(կազմող՝ Ջորիկ Վերոյան)**

- | | | | |
|-------------------------------|--|---|---|
| 1 Միխայել Գյուլումյան | 71 Բորիկ Ջանունց | 136 Ասլան Մարտիրոսյան | 201 Մովսես Շախյան |
| 2 Հրաչիկ Գզիբյան | 72 Բախշի Սաքունց | 137 Սանասար Բաբաբքոյան | 202 Ազատ Ալեքսանի |
| 3 Գրիգոր Հախումց | 73 Տոյիկ Սողաթեյան | 138 Ջորիկ Գզիբյան | 203 Ալեքսան (Ջահիդ) |
| 4 Ջվանշիր Սվենյան | 74 Ջամիլ Եելունց | 139 Սամվել Սամվելյան | 204 Մովսես Ազարյան |
| 5 Սուրեն Գյուլումյան | 75 Շալո Եելունց | 140 Գարսս Եսայան | 205 Լևոն Ավագիմյան (Պատվակա-
նանց) |
| 6 Շուրա Գյուլումյան | 76 Սուրեն Եելունց | 141 Ռազմիկ Մարյանյան | 206 Գրիգոր |
| 7 Լյովա Գյուլումյան | 77 Ռազմիկ Գյուլումյան | 142 Բորիկ (Կակլա) Մարյանյան | 207 Արշակ |
| 8 Ջորիկ Շախյան | 78 Սլավիկ («Միբիբյակ») Ջանունց | 143 Յուրիկ Աղամիրյան | 208 Վահաշ (Գասի, Վալոդ, Գառ-
նիկ) |
| 9 Վալոդ Շախյան | 79 Ներսես Ջանունց | 144 Աղամիր Խալիլանց | 209 Ջինավոր |
| 10 Եգոր Շախյան | 80 Հրաչիկ Ջանունց | 145 Գրիշա Խալիլանց | 210 Ջինի |
| 11 Տիգրան Գյուլումյան | 81 Հրանտիկ Ջանունց | 146 Ազատ | 211 Ռաֆիկ (Ափո) |
| 12 Արտավազդ Ազարյան | 82 Սամսոն Բուդունց (Սամվելյան) | 147 Ջավեն | 212 Գերո Սայունց (Եսայան) |
| 13 Մարտուն Ազարյան | 83 Եղիշ Դավաբանց (Ղազարյան) | 148 Տեփի (Ջավիկ) | 213 Մանվել Սայունց |
| 14 Հրանտիկ Ազարյան | 84 Արսեն Դավաբանց | 149 Սայի (Տիգրան) | 214 Հրաչա (Մեդիմ Սարգիս) Մա-
յունց |
| 15 Հրանտիկ Հանեսի Գյուլումյան | 85 Մերոժ Դալունց (Թամրազյան) | 150 Գուրգեն | 215 Արմենակ (Թաքին Ռանտո) Մա-
յունց |
| 16 Վալոդ Գյուլումյան | 86 Հակոբ Դալունց | 151 Սևիկ | 216 Թյունի Ջլավանցի տղաների
տները |
| 17 Ալբերտ Ջանունց | 87 Ռազմիկ Դալունց | 152 Գարս | 217 Մովսես |
| 18 Սայոպա Մարկոսով | 88 Յուրիկ Դալունց | 153 Գարի | 218 Արտուշ |
| 19 Ռաֆիկ Գյուլումյան | 89 Միրզա Ասլանանցի (Բաբա-
բքոյան) և տղաների տները | 154 Արշավիր | 219 Մեծլում |
| 20 Նովիկ (Արմո) Գյուլումյան | 90 Գուրգեն Սիմոնի Սուդյան | 155 Հնայակ (Կիմիկ) | 220 Բորիկ (Բալադեն) Աղաջա-
նանց |
| 21 Վալոդ Ազարյան | 91 Գարո Սիմոնի Սուդյան | 156 Ռազմիկ | 221 Գուրգեն (Ապրես) Բաբաբքոյա-
յան |
| 22 Սանասար Գզիբյան | 92 Երվանդ Ղազարյան | 157 Արմենակ (Պերճիկ) Հնայակ | 222 Ջուրի Գյուլումյան |
| 23 Միխայել Գզիբյան | 93 Արշակ Սաքունց (Քերծի Ար-
շակ) | 158 Վալոդ Քյոխյան | 223 Գրիգոր (Ղարիբ) Ապրեսի
Քյոխյան |
| 24 Ժորա Գզիբյան | 94 Շաշո Չանգլունց | 159 Սերոբ Նահապետի Մարյան-
յան | 224 Բախշի Ապրեսի Քյոխյան |
| 25 Սուրեն Գզիբյան | 95 Խաչի Չանգլունց | 160 Սաքի Սերոբի Մարյանյան | 225 Սարգիս Ապրեսի Քյոխյան |
| 26 Սերգեյ Գզիբյան | 96 Քարամ Չանգլունց | 161 Գրիշա (Սաշիկ) Սերոբի Մար-
յանյան | 226 Արշո (Աղասի) Եսայան |
| 27 Աշոտ Ջանունց | 97 Իսակ Չանգլունց | 162 Արամ Սերոբի Մարյանյան | 227 Սարգիս Եսայան |
| 28 Ազատ Ջանունց | 98 Սիմոն Չանգլունց | 163 Ալեքսան Սերոբի Մարյանյան | 228 Վաղինակ Պետունց |
| 29 Ռուբեն Սաքունց | 99 Մայիս | 164 Թանգի Մարյանյան | 229 Գրիշա |
| 30 Կարմեն Սաքունց | 100 Ջինավոր | 165 Ջուրի Մարյանյան | 230 Ավագ (Գերիկ, Ժոժ) |
| 31 Վալոդ Եելունց | 101 Կոլի | 166 Միմաս Մարյանյան | 231 «Հայաստանցի» Ավագիմ |
| 32 Ամիրխան Եելունց | 102 Ռուբեն Վերոյան | 167 Ազատ Չանգլունց (Սիմոնյան) | 232 Հրանտ |
| 33 Էդիկ Եելունց | 103 Անդրանիկ | 168 Մուշեղ Չանգլունց | 233 Առուշան Աղաջանանց |
| 34 Սուրբո Շելունց | 104 Տեփի | 169 Միմաս Մարյանյան (աղյուսեղ է
եղել նաև Մաքան Բաբաբքոյա-
յանի տունը) | 234 Հրաչիկ Մյուրդունց (Գզիբյան) |
| 35 Մովսես Եելունց | 105 Կավի | 170 Աբրահամ (Տուրք) Մարյանյան | 235 Վարսենիկ Թևանանց (Սամ-
վելյան) |
| 36 Ջարմիկ Ջարգարյան | 106 Վաղաշ | 171 Սուրմոն (Մուխի) | 236 Խորեն Թևանանց |
| 37 Հրաչիկ Եելունց | 107 Բախշի (Յաղալ) Սաքունց | 172 Քյոքբանի տղա Մեծլում | 237 Մուշան Աղաջանանց |
| 38 Հայկազ Եելունց | 108 Քանալ Չանգլունց | 173 Քյոքբան | 238 Կոլի Ճաղիի Գզիբյան |
| 39 Բորիկ Եելունց | 109 Հայկազ Չանգլունց | 174 Չատուրի և տղայի տները | 239 Աբրահամ (Կոլյա) Քյոխյան |
| 40 Արարատ (Մարի) Եելունց | 110 Վալոդ Նահապետյան | 175 Աղաջան (Կաչան) Մարյանյան | 240 Տյավի (Դավիթ) Գյուլումյան |
| 41 Գրիշա Գյուլումյան | 111 Այնա Սիմասյան | 176 Աղվան Աղաջանի Մարյանյան | 241 Սարգիս (Ալի) Եսայան |
| 42 Մարո Շախյան | 112 Սիմոն Սիմասյան | 177 Հրանտիկ (Անտի) Քյոխյան | 242 Սարգիս Ավագի Բաղունց |
| 43 Յուրիկ Հախումց | 113 Հակոբ Քյոխյան | 178 Աշոտ Ամիրի Մարյանյան | 243 Ժորա Ավագի Բաղունց |
| 44 Հրանտիկ Թևոսի Գյուլումյան | 114 Արմենակ Քյոխյան | 179 Սաշա Ամիրի Մարյանյան | 244 Սպարտակ Եսայան |
| 45 Իսլամ Ազարյան | 115 Աղաջան (Ղաջի) Նահապետ-
յան | 180 Ջարմիկ Մարյանյան | 245 Ղևոնդ (Ղևի) Սամվելյան (Բի-
դունց) |
| 46 Էդիկ Ազարյան | 116 Ջավեն Աղաջանի Նահապետ-
յան | 181 Կառլեն Վանունց | 246 Ազատ Ղևոնդի Սամվելյան |
| 47 Արկադյա Հախումց | 117 Յաշա Աղաջանի Նահապետ-
յան | 182 Էռնեստ Վանունց | 247 Ռուբեն Մոավի Պոնձեբեդանց
(Հակոբյան) |
| 48 Գուրգեն Մարտիրոսյան | 118 Սևան Նահապետյան | 183 Սուրիկ Վանունց | 248 Մեծլում Մոավի Պոնձեբեդանց
(Հակոբյան) |
| 49 Միշիկ Հակոբյան | 119 Մուշեղ (Նատո) Քյոխյան | 184 Ջարմիկ Վանունց | 249 Լևոն Սևանի Նահապետյան |
| 50 Սաշիկ Սուդյան | 120 Յակի Քյոխյան | 185 Խաչի Մարտիրոսյան (Քաչալ
Խաչի) | 250 Հարություն Սևանի Նահա-
պետյան |
| 51 Միմաս Քյոխյան | 121 Աթա Քյոխյան | 186 Ազրիշ Մարտիրոսյան | 251 Իսակ Քյոխյան |
| 52 Սողոմոն Քյոխյան | 122 Իշխան Քյոխյան | 187 Հակոբ (Բորիկ) Բաբաբքոյան | 252 Արշակ Վերոյան |
| 53 Ռուբեն Քյոխյան | 123 Յաշա Իշխանի Քյոխյան | 188 Ասկյար Բաբաբքոյան | 253 Գալուստ Բաղունց |
| 54 Եղիշ Քյոխյան | 124 Նիկոլ (Աշաղալ) Գյուլումյան | 189 Ջավիկ Բաբաբքոյան | 254 Ներսես Վերոյան |
| 55 Սյրտուն Սաքունց | 125 Իշխան (Վալոդ) Շախյան | 190 Շուրա Բաբաբքոյան | 255 Ասքանազ Վերոյան |
| 56 Հրանտիկ Գզիբյան | 126 Մակի | 191 Յուրա Բաբաբքոյան | 256 Մովսես Վերոյան |
| 57 Ռազմիկ Եելունց | 127 Սարգիս | 192 Սարգիս Բաբաբքոյան | 257 Ջինավոր Գյուլումյան |
| 58 Հրանտիկ Եելունց | 128 Աշոտ Սաքունց | 193 Սպարտակ Բաբաբքոյան | |
| 59 Իսրայել Եելունց | 129 Մեծլում (Մարո) Աղաջանյան | 194 Կառլեն Բաբաբքոյան | |
| 60 Էդիկ Եելունց | 130 Սահակ Աղաջանյան | 195 Համիկ Մարտիրոսյան | |
| 61 Մանվել Եելունց | 131 Իսակ Ղազարյան | 196 Բագրատ Մարտիրոսյան | |
| 62 Ռուբեն Եելունց | 132 Յական (Քուրդ) Ղազարյան | 197 Ավագիմ Մարտիրոսյան | |
| 63 Մուսա Ջանունց | 133 Արեստ Բաբաբքոյան | 198 Ժորժ Մայրանյան | |
| 64 Գարո Ջանունց | 134 Սլավիկ (Ջորիկ) Սուդյան | 199 Միշա Շախյան | |
| 65 Վալոդ Ջանունց | 135 Ռազմիկ Ազարյան | 200 Լեմզար Ծիպունց (Ջլավյան) | |

- 258 Սլավիկ Վաղինակի Պետունց
 259 Հրանտ Գրիգորի Քյոխյան
 260 Շաշոկ Արմենակի Եսայան
 261 Գաղթական Հովհաննես Հովհաննիսյան
 262 Մելիք Հովհաննեսի Հովհաննիսյան
 263 Վարդապար Խաչիկյան
 264 Սեդրակ
 265 Շամիր
 266 Մեխակ Քյոխյան
 267 Ջարմիկ
 268 Ռուբիկ Գզիրյան
 269 Հովսեփ Ազարյան
 270 Արշակ
 271 Գևորգ (Կևի) Աղաջանյան
 272 Միրզա Աղաջանյան
 273 Մեծրյան Միրզայի Աղաջանյան
 274 Գարեգին Շախյան
 275 Վալոդ (Օժո) Քյոխյան
 276 Ռուբեն (Կափին Ռուբեն) Մարյանյան
 277 Հրաչիկ Վերդյան (Բյացունց)
 278 Հրանտիկ Վերդյան (Բյացունց)
 279 Հայկազ Վերդյան (Բյացունց)
 280 Գրիգոր (Ջորիկ) Վերդյան (Բյացունց)
 281 Միքայել Վերդյան (Բյացունց)
 282 Սուխումեցի Սեդրակ Առաքելյան
 283 Հրանտիկ (Տատիկ) Ազարյան
 284 Ասրի Մարտիրոսյան
 285 Շամիր Ասրիի Մարտիրոսյան
 286 Բորիկ Կաֆիի Մարյանյան
 287 Կոլի Կաֆիի Մարյանյան
 288 Ռազմիկ Պետունց
 289 Ռուբեն Պետունց
 290 Ռանտիկ Մարյանյան (Մաքինի տղա)
 291 Մարտիրոս Աղաջանյան
 292 Հայկազ Մարտիրոսի Աղաջանյան
 293 Զինավոր Մարտիրոսի Աղաջանյան
 294 Հմայակ Մարտիրոսի Աղաջանյան
 295 Նաջի Մարտիրոսի Աղաջանյան
 296 Յուդիկ Մարտիրոսի Աղաջանյան
 297 Լաչին Աղաջանյան
 298 Ռուբեն Աղաջանյան
 299 Ասլան Աղաջանյան
 300 Բաղալ Աղաջանյան
 301 Երվանդ (Մադիր) Բաղալի Աղաջանյան
 302 Ժորիկ Չիլինգարյան (Ճիրինգանց)
 303 Սաբիր
 304 Սերոբ Վերդյան (Լոլունց)
 305 Արտուշ Լոլունց
 306 Հայկազ (Անդր) Կզրիսաբունց
 307 Սաշոկ Սերոբի Վերդյան (Լոլունց)
 308 Ազատ Սերոբի Վերդյան (Լոլունց)
 309 Մեծրյան (Մեծի) Հայկազի Աղաջանյան
 310 Զեհանգիր Բաղալի Աղաջանյան
 311 Գարեգին (Գարի)
 312 Հովսեփ Ազարյան
 313 Պետո Սաքունց
 314 Լավրենտ Ազարյան
 315 Զվանշիր Լոլունց
- 316 Էռնեստ Սաքունց
 317 Արշակ Ազարյան
 318 Ամիրջան Ասլանյան (Բաբաբքյոխյան)
 319 Աշոտ Ամիրջանի Ասլանյան (Բաբաբքյոխյան)
 320 Հրանտիկ (Գոդ) Ամիրջանի Ասլանյան (Բաբաբքյոխյան)
 321 Սայի Սալունց (Սաշոկ, Հրաչիկ)
 322 Միմոն Սոսոյան (Ռաֆիկ, Մուխան)
 323 Զամալ Թյունունց (Հարությունյան)
 324 Երվանդ Թյունունց (Հարությունյան)
 325 Զումի Գզիրյան (Կզրիսաբունց)
 326 Ասատուր
 327 Ասլան
 328 Ներսես Մինասյան
 329 Սերոժ
 330 Աղամիր Ակուփանց (Հակոբյան)
 331 Աղամիր
 332 Սաշա
 333 Բաղալ
 334 Միմոն
 335 Ասատուր (Լոնդին Ասատուր) Սամվելյան
 336 Ներսես (Նեսի)
 337 Շամիր
 338 Վարդի Մոսունց
 339 Հայկազ Բաշաբանց
 340 Զինավոր Բաշաբանց
 341 Ասլան Բաշաբանց (ինչպես նաև Հայկազի, Զինավորի և Ասլանի զավակների տները)
 342 Մակիչ Վերդյան
 343 Ասքանազ Բաղունց
 344 Թեմուր Ջլավյան
 345 Սահակ (Մալակյան)
 346 Շամիր
 347 Շամիրի որդի Հայկազի տունը
 348 Էդիկ Բաբաբքյոխյան
 349 Արտավազդ Նահապետյան
 350 Գարեգին Ջլավյան
 351 Հրանտիկ Գարեգինի Ջլավյան
 352 Ալբերտ Գարեգինի Ջլավյան
 353 Լևոն
 354 Սմբատ
 355 Շամիր Մինասյան (Վանունց)
 356 Շամիր Մոսաջանց (Ստեփանյան)
 357 Հրաչիկ
 358 Գուրգեն Շախյան
 359 Մինաս Շախյան
 360 Ղևոնդ Շախյան
 361 Մամիկոն (Կադր) Շախյան
 362 Երվանդ (Կառլեն) Շախյան
 363 Մուսա Պիպանյան (Ստեփանյան)
 364 Միքայել Պիպանյան (Ստեփանյան)
 365 Կոյա Պիպանյան (Ստեփանյան)
 366 Ռուբեն (Մատին) Պիպանյան (Ստեփանյան)
 367 Սերգեյ Լոլունց (Վերդյան)
 368 Կոյա Լոլունց (Վերդյան)
 369 Ժոժ (Նարինջ) Լոլունց (Վերդյան)
 370 Առստան Ազարյան
 371 Օհան Ազարյան
 372 Սեխակ Գզիրյան
- 373 Օհան Գզիրյան
 374 Եղիշ (Յապոն) Գզիրյան
 375 Հանես Գզիրյան
 376 Յական Լոլունց
 377 Բաղալ Ազրունց
 378 Բադի Ազրունց
 379 Շադի Կզրիսաբունց
 380 Գարեգին Կզրիսաբունց
 381 Հանեսի տղաների տները
 382 Սինաս
 383 Տիգրան
 384 Լևիկ Աղաջանյան
 385 Ներսես
 386 Առստան Վերդյան
 387 Բեգլար Առստանի Վերդյան
 388 Բաղալ Առստանի Վերդյան
 389 Քերոբ
 390 Ասլան Բաղյան
 391 Սաշա Հախունց
 392 Հակոբ Պետունց
 393 Ամիր
 394 Աշոտ
 395 Գարի
 396 Ռաֆիկ Գյուլումյան
 397 Սահակ (Ալի)
 398 Պավլի
 399 Արմենակ Միմոնյան
 400 Խաչատուր (Աշոտ) Գալլաբյան
 401 Գրիշա
 402 Ռաքել Զանունց
 403 Զվանշիր Եսայան
 404 Ասրի Սաքունց
 405 Մուշեղ Մարյանյան
 406 Ասրի Սաղաբեյան
 407 Բարխուդար Հախունց
 408 Օլդա
 409 Գյուլուշ
 410 Բաբիկ Շախյան
 411 Յուրիկ Զարգարյան
 412 Շուրա
 413 Սաշոկ Ամիրյան
 414 Սարգիս Շախյան
 415 Հարուն Ազարյան
 416 Գերասիմ Բաբաբքյոխյան
 417 Բայանվեցի Սուրեն
 418 Կո
 419 Միրիջո
 420 Խաչի Մարյանյան
 421 Գրիշա Մարտիրոսյան
 422 Գրիշա Ազարյան
 423 Արշակ Ջլավանց
 424 Խաչի
 425 Ամիրջան
 426 Միրզա
 427 Գրիգոր
 428 Նիկոլայ Շախյան
 429 Հունի («Կանաչ լոբի»)
 430 Հունի (Օհան) Պղնձեբեղանց (Հակոբյան)
 431 Բարանվեցի Խորեն
 432 Սահակ Գալլաբանց (Ղազարյան)
 433 Բաբիկ Շախյան և այլն
 434 Սաշա ճիրինգանց (Չիլինգարյան)
 435 Հունի
 436 Պերճիկ Սամվելյան (Բուրունց)
 437 Բահատուր Հակոբյան
 438 Յաղաշ
 439 Ալիշ Բաբաբքյոխյան
 440 Ապրես
 441 Մեծրյան
 442 Ամիր Ամիրյան
- 443 Համայակ Մարտիրոսյան
 444 Մանվել
 445 Համայակ Չիլինգարյան
 446 Ալիք Շահնազարյան
 447 Աշոտ (Վիլա) և այլն
 448 Աշոտ Խորենի Մարտիրոսյան
 449 Վաղաշ
 450 Չատի Սալունց (Եսայան)
 451 Գարեգին Չատիի Սալունց
 452 Աշոտ Մ.
 453 Վաղաշ (Վոլի) Սաքունց
 454 Արկադյա Օհանյան
 455 Շուդանանց տները
 456 Լևան Բաբաբքյոխյան
 457 Գրիշա (Նիկալին)
 458 Արմենակ Բաղունց
 459 Ասլան
 460 Ղարա (Հրաչիկ, Նունիկ) Զարգարյան
 461 Զինավոր (Ռազմիկ)
 462 Ապրես Սաքունց
 463 Աշոտ Ապրեսի Սաքունց
 464 Վաղինակ Չոպչյան
 465 Շալիկո
 466 Աբել
 467 Մովսես Սաղաբեյան
 468 Գրիշա և այլն
 469 Բալաբեգ
 470 Վիլա Ազատի (Նիկալ) Բաբաբքյոխյան
 471 Մեխակ Շահունց
 472 Թյունի Սալունց (Եսայան)
 473 Վասիլ Սալունց (Եսայան)
 474 Բարխուդար (Գուրգեն) Բաբաբքյոխյան
 475 Գրիշա (Տուրճի)
 476 Մամիկոն Շահնազարյան
 477 Կափի Մարտիրոսյան
 478 Բորիկ (Գերասիմ) Բաբաբքյոխյան
 479 Գեմիկ Չիլինգարյան (Ճիրինգանց)
 480 Գարաս Շախյան
 481 Զինավոր Ղազարյան
 482 Միխայիլ (Մուխի) Քոչարյան
 483 Ազատ (Նիկալ) Բաբաբքյոխյան
 484 Հովսեփ (Ռուսոփ) Շախյան
 485 Բաշաբ Բաշաբյան
 486 Հայկազ Բաբաբքյոխյան
 487 Ղևոնդ Գալլաբյան
 488 Խաչի Հախունց
 489 Ռուբեն
 490 Մուխի Սաքունց
 491 Արմենակ Առաքելյան (սուխումեցի)
 492 Մեծրյան Եսայան
 493 Խորան Աղաջանյան
 494 Միշա Ազարյան
 495 Մինաս Շելունց
 496 Յունուս Աղաջանյան
 497 Վալոդ (Մուշեղ) Մարյանյան
 498 Միշո Սաքունց
 499 Մանյա Գյոժգյան
 500 Վալոդ Ղարախանյան
 501 Սլավիկ (Կարդանուշ)
 502 Սլավիկ Զանունց
 503 Ռազմիկ Ղարախանյան
 504 Շալոն
 505 Սարգիս Ապրեսյան
 506 Բահատուր
 507 Գավիթ (Դաթո)
 508 Էդո

509 Սամսոն
510 Բագրատ
511 Անիբխան
512 Գուրգեն (Առուշան)
513 Կարապետ
514 Մինաս Չարգարյան
515 Սերոժ Դավաթյան
516 Արտաշ Սաղաթեյան
517 Ռաֆիկ Գյոթգյան
518 Երվանդ Հակոբյան
519 Սերոժ Չարգարյան
520 Վալերիկ
521 Թարփ Շախյան
522 Թորգոմ Չարգարյան
523 Ափիկ
524 Ազատ Հակոբյան
525 Արշակ («Տոկի») Չարգարյան
526 Մանո Հարությունյան
527 Ռազմիկ Հակոբյան (Բյուխանց)
528 Վազգեն Չարգարյան
529 Ալբերտ
530 Վարդանուշ Հովակիմյան
531 Մռավ Չարգարյան
532 Հրանտիկ (Մակի)
533 Սաշիկ Պետունց
534 Վալոդ
535 Արմենակ Ջանունց
536 Համայակ
537 Սաշոկ Աղաջանյան
538 Շուշի Չարգարյան
539 Արշակ Ջանունց
540 Նիկոլ
541 Շամիր
542 Ազատ Շախյան
543 Փեղո
544 Յաշա (Աշոտ)
545 Գուրգեն Հակոբյան
546 Ժորա (Ռուբեն)
547 Վալոդ
548 Աշխենիկ Գյուլումյան
549 Գուրգեն Հախունց
550 Արշակ
551 Ազատ Ազարյան
552 Ասլան (Օտո)
553 Բանտիկ (Գալուստ) Գյուլումյան
554 Մեծյուն Ավետյան
555 Առստամ (Դավո, Հովիկ)
556 Գրիգոր Սվենանց
557 Հրաչիկ Ստեփանյան
558 Հրանտիկ
559 Սիխայել (Մուշեղ) Մարյանյան
560 Օլլա (Օլիմկա)
561 Վաղինակ Չոպչյան
562 Շալիկո
563 Աշոտ Հարությունյան
564 Վանիկ Գզիրյան
565 Աշոտ Ավագյան
566 Ռաֆիկ
567 Ավետիս Գզիրյան
568 Ռիկո
569 Ժորա Չարգարյան
570 Մատ Դիվանյան
571 Սլավիկ Շելունց
572 Շամիր
573 Արմենակ (Շուղան) Գյուլումյան
574 Գարեգին (դոմալ) Գզիրյան
575 Էնգելս (Սարգիս)
576 Նավասարդ Դավաթյան
577 Կոլի
578 Սեյրան Գյուլումյան
579 Ռոդիկ

580 Սուրեն
581 Մեծյուն
582 Մելքոն
583 Ալիք
584 Էդիկ Հախունց
585 Վալոդ Գզիրյան
586 Անիշ Սաքունց
587 Անդրանիկ Գզիրյան
588 Յուրիկ
589 Բագրատ
590 Յուլակ Սվենյան
591 Ջորիկ Սաքունց
592 Կիրոլ
593 Երվանդ
594 Մեխակ (Եղին) Դավաթյան
595 Բորիկ Սաքունց
596 Յուրիկ
597 Մայիս Ջանունց
598 Սամսոն Սաքունց
599 Ամիր Բաբալունց
600 Մինաս Սամվելյան
601 Սահակ Հակոբյան
602 Հրաչիկ
603 Վալոդ
604 Հայկազ Հովակիմյան (Պռավանց)
605 Ռուբեն
606 Սերգեյ Շախյան
607 Գասի (Պոմբի Գաս)
608 Մակիշ Ջանունց
609 Մեխակ
610 Շամո
611 Գարեգին
612 Արտաշ (Քեռի) Մովսիսյան
613 Եղիշ Դավիդով
614 Իսայի Դավաթյան
615 Վալոդ
616 Յուրիկ Սաղաթեյան
617 Գրիշա Մարտիրոսյան
618 Կոլի Բաբաբոխյան
619 Գրիգոր («Միջոց») Հովհաննիսյան
620 Ջիանգիր Մեհրաբյան
621 Վազգեն Սվենյան
622 Հրանտիկ Հովհաննիսյան
623 Ջվանշիր Մեհրաբյան
624 Յուլակ Սվենյան
625 Ժորա Ստեփանյան
626 Ալբերտ Ալեքսանյան
627 Բորիկ Բաբաբոխյան
628 Գյուլգյազ
629 Ռուբեն
630 Արամ Ալոյինյան
631 Սեդրակ Առաքելյան
632 Ռոմա Դավաթյան
633 Բորիկ Սաղաթեյան
634 Ամիրջան Դավաթյան
635 Իշխան Սվենյան
636 Եղիշ Սաքունց
637 Ալբերտ Գզիրյան
638 Յուլակ Սվենյան
639 Սաշո Դարախանյան
640 Գառնիկ Հախունց
641 Յաշա Պետրոսյան
642 Էդիկ Շելունց
643 Արտաշ Գյուլումյան
644 Բորիկ Չարգարյան
645 Յաշա Աղաջանյան
646 Շամիր Գյուլումյան
647 Լևիկ Սաղաթեյան
648 Ազատ (Բբեն) Մեհրաբյան¹

¹ **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 22-32:

Մանաշիրում), ՀՀ-ից վերադարձած Յաշա Ռուբենի Շելունց (1992 թ. հունիսի 29-ին՝ Մարտակերտում), Կամո Սեդրակի Աղաջանյան (1992 թ.՝ անկումից հետո), կիրովոգրադաբնակ Սերգեյ Եզոբի Հակոբյան (1992 թ. նոյեմբերի 20-ին՝ Մարտակերտի շրջանում. հայրը գետաշենցի էր, մայրը՝ էրքեջցի), պարտիզանական ջոկատի բժիշկ, կալինինոյեցի Արտակ Խաչատրյան (3 տարի աշխատել է Վերիշենում), Պողոս Երվանդի Սիմոնյան (1993 թ. ապրիլի 17-ին՝ խափած ուղղաթիռի մեջ), Սևան Նահապետի Նահապետյան (1993 թ. հուլիսի 11-ին՝ Թալիշի մոտ), վերիշենցի, Բաբվից փախստական, հետախույզ Վալերի Ռազմիկի Ջլավյան (1994 թ. փետրվարի 18-ին՝ Տոնաշենն ազատագրելիս), Հայկ Մովսեսի Վերդյան (1993 թ. մարտի 27-ին՝ Տոնաշենն ազատագրելիս), հրագրամաբնակ 20-ամյա վերիշենցի Կարեն Վալերիկի Հակոբյան (1994 թ. ապրիլին՝ Հորադիզի շրջանում)⁴⁵։

Վերիշենցի ազատամարտիկներից Հայկ Ջամիլի Շելունցը (14.01.1958, Վերիշեն-18.02.1992, Մանաշիր) խիզախության համար ստացել էր Վերիշենի արծիվ մականունը։ 1978 թ.-ից աշխատել է Շահումյանի շրջանի ՆԳ բաժնում միլիցիայի ավագ սերժանտի կոչումով։ 1989 թ.-ից մարտնչել է Շահումյանի ինքնապաշտպանական ջոկատում։ Չոկվել է 1992 թ. փետրվարի 18-ին Մանաշիր գյուղի կռիվների ժամանակ։ Արժանացել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի և «Արիության համար» մեդալի⁴⁶։

Կառուցապատում. ինչպես երևում է, 1890 թ. դրությամբ հին գլխատներն արդեն մեծ մասամբ փոխարինված էին. «Գիւղի տները շինած են քարից, բոլորն էլ միյարկանի, իրաքանչիւրի առաջ մի-մի սրահ։ Տեղ-տեղ պատահում են և երդիկաւոր տներ, բայց նրանց թիւը շատ քիչ է... վերի-շինացիք ասելի խոհեն լինելով, պատահմամբ, իրանց գոմերը շինել են գիւղից դուրս, սարի միւս լանջին։ Այդպիսով գիւղն ազատ է լինում աղտեղութիւններից»⁴⁷։

Հակառակ սույն նկարագրության՝ 1910 թ. նշվել է. «Գիւղի փողոցները, գետի ափերը մի այնպիսի աղտոտութեան մեջ են, որ, տէր մի արասցէ, եթէ խօլերան այստեղ մուտք գործելու լինի, հազիւ թէ վերիմշենցիք կարողանան մարդ ազատել նրա ճանկերից...»⁴⁸։


1912 թ. գյուղն ուներ զանազան նշանակության 411 շինություն, այդ թվում՝ 1 եկեղեցի, 190 բնակելի տուն, 210 տնտեսական կառույց, 6 խանութ և 4 ջրաղաց⁴⁹։

1920 թ. դրությամբ հայաբնակ մեծ գյուղի գետեզրյա տները հիմնականում խոնավ էին⁵⁰։

Վերիշենում մեծաթիվ էին ԺԹ դ. վերջին կառուցված բնակելի տները։ Դրանց մեջ գեղեցկությամբ աչքի էր ընկնում ծխական քահանայի տունը։

Վերիշենի գլխավոր թաղամասերն էին՝ Ներքին, Թաճիկ կիլիս, Դալունց, Սուդունց, Սերոբանց (Գյուլին դրաղ), Սալունց (Եսայաններ), Տիերի (Վերին, Բյացունց), Քարահունչ (Աղաջանանց), Մոսունց, Բաշրաթանց (Աղաջանանց), Ջլավանց, Տինգի տհար, Շադունց, Կլապաններ, Միխրաթաղ, Ջանունց, Մանունց, Աղի ջուր, Փստահանանց, Չանգունց (Սիմոնյաններ), Չիրթունց (Դազարյաններ) և Քյուլսանց ենթաթաղամասը։

45 **Ղահրամանյան Ա.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 690-692:
46 **Շելունց Հայկ Ջամիլի.** Թղթակցություն, «Մռավի դոկագներ», 2017, № 7, սեպտեմբեր, էջ 4:
47 **Շ.**, Գիւղական տպաւորութիւններ, «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 2:
48 **Միլենցի,** նշվ. հոդվ., «Մշակ», 1910, № 160, 23 յուլիսի, էջ 3:
49 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.
50 **Թեղեմեզյան Ե.**, նշվ. հոդվ., «Հայաստանի ձայն», 1920, № 9, 1 փետրուարի, էջ 2:



ՎերիՇեն. հատված բնակավայրի կենտրոնական մասից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Գյուղի քաղամասերից էր նաև Քարահունչը. «Դա մի առանձին գյուղ էր, չորս կողմը՝ խոշոր քարերից պատեր, ուներ փոքր փողոցներ»⁵¹:

Տնտեսություն. գյուղը դարեդար ապրել է ավանդական գրադմունքներով. «Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ»⁵², որոնք տնտեսության կարիքները հոգալու տեսանկյունից արդեն 1910 թ. անբավարար են նկատվել. «Ղարաչայի Վերին-Շենը, գտնվելով լեռնային անպտղաբեր լեռնային ստորոտներում ու լանջերում, բացառությամբ է կազմում: Այդ գիւղի այգիների խաղողը համարեա ամենևին չէ հասնում, իսկ մնացած մրգեղեններով առատ է Վերին-Շենը: Կարիքը, պակասությունը ստիպում է գիւղացուն սովորել այն, ինչ-որ նա իմանալիս չէ եղել տարիների ընթացքում. օրինակ՝ վերինշենացիք, որ գնելիս են եղել գետնախնձորը (կարտօֆելը) և նրա վարելու մասին ամենևին գաղափար չեն ունեցել, արդեն մի քանի տարի է ինչ-որ սկսել են գետնախնձոր վարելը, որը բաւականին առատ բերք է բերում...: Այդ գիւղի դաշտավայրը ներկայացնելով իրանից ընդարձակ ու գեղեցիկ արօտատեղիներ, խոտհարքեր, տեղ-տեղ անտառով ծածկված, տեղ-տեղ գետը, առուները ու աղբիւրները քջջալիս, կարելի է վստահ կերպով ասել, որ այդ դրախտավայրում կարելի է աջողութեամբ պարապել անասնապահութեամբ, մեղուաբուծութեամբ, բանջարաբուծութեամբ և մասամբ այգեգործութեամբ: Պէտք է նկատել, որ թէկուզ այժմ էլ են պարապում յիշեալ գիւղի բնակիչները այդ տեսակ գործերով, սակայն շատ

հասարակ կերպով, պարապելու եղանակը չիմանալու համար: Այստեղ աւելորդ չեն համարում շեշտելու և այն, որ նրանց անասունները շատ հասարակ և համարեա անպէտք տեսակից են...»⁵³:

Իրականում տնտեսության ծանր կացությունն ընդամենը հետևանքն էր հասարակության գիտակցական ընդհանուր մակարդակի, և չնայած գյուղն ուներ «...ահագին վարելահողեր, արօտատեղեր, այգիներ՝ պտղատու ծառերով, բայց գիւղացիք թէ առաջինից և թէ վերջիններից չեն օգտվում և միշտ էլ չքատրութեան մէջ են մասամբ իրանց ծուլութեան, մասամբ էլ անձեռնհասութեան պատճառով. մասնաւաւանդ այնպիսի չորային տարին, ինչպէս էր այս տարին՝ վերինշենցիների և նրանց հարևան գիւղերի համար, բերքը կէսից էլ պակաս էր, չը նայած որ ամեն տեղերով առատ ջուր է հոսում, բացի ահագին գետից, որի ձայնից սկանց է խլանում. եթէ ամիսներով անձրև չը կայ և բոլոր ցանքերը չորանան, գիւղացիք ջրելու համար նոյնիսկ չեն էլ մտածի, չը նայած որ բոլոր յարմարութիւններն ունեն դրա համար... եթէ հարցնէք, թէ ինչո՞ւ չեն ջրում, նրանք կը պատասխանեն, որ առաջինը՝ իրանց մօտ սովորութիւն չը կայ, իսկ երկրորդը՝ եթէ աստուած չէ ցանկանում իրանց երեխաների պարէնը տալ, միևնոյն է ջրեն էլ՝ մի ուրիշ և աւելի վատ պատուիաս կը հասնի աստուծու կողմից...»⁵⁴:

Հայտնի է, որ Մելիք-Բեգլար Բ-ի մի նվիրատվության պատճառով Վերիշենը հետագայում անցել էր թուրք բեկերի տիրապե-

51 **Ստեփանյան Թ.**, Սրտաբաց գրույց հայրենակիցներին հետ, «Մշակի դրանջներ», 2017, № 8, հոկտեմբեր, էջ 2:

52 **Շ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1890, № 75, 5 յուլիսի, էջ 2:

53 **Զարարեան Բ.**, Ղարաչայի իրականութիւնից, «Մշակ», 1910, № 261, 23 նոյեմբերի, էջ 3:

54 **Միւնցի.** նշվ. հոդվ., «Մշակ», 1910, № 160, 23 յուլիսի, էջ 3:



ՎերիՇեն. ԺՅ դարավերջին կառուցված բնակելի տներ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

տության ներքո, և 1890 թ. դրությամբ գյուղի տերն էր Միրզա Աղիգյոզալովը⁵⁵: Վերջիններիս ազդեցությամբ գյուղացիների

⁵⁵ Շ., նշվ. հոդվ., նույն տեղում:

բավական վնասներ էին պատճառում ներքին ցեցերը. «Մրանից մի քանի ամիս առաջ վերին-շենացիք իրանց միջից մի քանի հաւատարմատարներ են ընտրում՝ գիւղում տեղի ունեցող անպատարեր սովորութիւններին վերջ տալու համար: Դժբաղդաբար՝ գիւղացիների յոյսերը չարդարացան: Յունիսի 22-ին գիւղի հաւատարմատար Ջաւադ Սարգսեանը իր երկու ընկերներով՝ Հանէս Թամրազեան և Սերգէյ Շահինեան, «գորուղներից» դուրս է բշում գիւղացիների 9 հատ եզը և վաճառում մի աւագակի: Վերջինս խոստանում է ամեն մի եզան համար 10 ր. վճարել «հաւատարմատարին»: Բախտի բերմամբ՝ տողերիս գրողը այդ ժամանակ գիւղումն էր գտնվում: Իմանալով այդ իսկոյն 10 րուբլի եմ տալիս երկու հոգու և շտապ ուղարկում եզները յետ իվելու: Ուղարկածս մարդիկը գնալով՝ ճանապարհից յետ են խլում 9 հատ եզները և բերում նրանց գիւղ»⁵⁶:

Ինչպես երևում է, հակառակ սեփական տնտեսական դժվարությունների, այնուամենայնիվ, վերիշենցիները հնարավորինս մասնակից էին նաև համազգային նշանակության գործերին: Այդպես էր, օրինակ, 1870 թ., հոգուտ Էջմիածնում ընթացող վերականգնողական աշխատանքների՝ գյուղացիները հատկացնում են 30 ռուբլի⁵⁷:

1912 թ. վերիշենցիներն ունեին 28 ձի, 500 խոշոր և 1500 մանր եղջերավոր անասուն, 300 խոզ⁵⁸, իսկ 1915 թ՝ 9000 փութ ցորեն, 500 փութ գարի և 400 փութ ալյուր⁵⁹:

Հանքավայրեր. հայտնի է, որ Վերիշենի մոտ գտնվող բավական հարուստ *գիպսի հանքը* սկսել է շահագործվել Գյուլիստանի նույնպիսի հանքում աշխատանքների դադարեցումից հետո⁶⁰: Ըստ ամենայնի՝ այն ևս պատկանում էր Մելիք-Բեգլարյաններին:

2007 թ. նշվել է. «...Վերին Շենի գիպսի հանքը սեփականաշնորհված է արդեն, իսկ արդյունահանումը կատարվում է հենց գյուղամիջից»⁶¹:

Կոպալի հանքը գտնվում էր գյուղի մոտ՝ Քար աղբյուրի մերձակայքում. «Անցյալ դարի կեսին արհմիտիվ եղանակով շահագործել են այն: Հիմնարկը գտնվում էր Բաքվում, բայց տեղում աշխատանքները կազմակերպում էր Հախունց Սերգեյը...: Կապալը փայլուն նյութ էր: Երբ վառում էին, շատ դուրեկան հոտ էր գալիս»⁶²:

Ջրաղաց. մի քանիսը հիշվում են իրենց տերերի անուններով՝ Սաղաթեյանց, Շելունց, Գյուլումանց, Շահունց, Մրյանանց, Բաբաբյոխանց, Աղաջանանց և Ջանունց⁶³:

Ի դեպ, Ֆրանզի ջրաղացը գտնվում էր Բաշրաքանց (Աղաջանանց) թաղամասում⁶⁴, իսկ Շահունց ջրաղացը՝ կենտրոնում⁶⁵:

Հայտնի է, որ կոլտնտեսության ստեղծումից հետո ջրաղացները հանրայնացվել են:

Գյուղում գործել են նաև Բաղունց, Խլիզազանց (տեղում խորհրդային տարիներին կառուցվել է ակումբի շենքը) և Ասլանանց (գտնվում էր Մոսունց թաղի սկզբնամասում՝ կամրջի մոտ) ջրաղացները⁶⁶:

⁵⁶ Մարտիրոսեանց Լաչին Ա., Թրակցություն, «Մշակ», 1908, № 142, 2 յուլիսի, էջ 3:

⁵⁷ «Արարատ», 1870, Դ, էջ 138:

⁵⁸ Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

⁵⁹ ՀԱԴ., ֆ. 28, ց. 1, գ. 408, ք. 24 շրջ.:

⁶⁰ «Հորիզոն», 1912, № 121, 8 յունիսի, էջ 3:

⁶¹ Նաբաբչյան Բ., Մեր շրջանի օգտակար համաձոները, «Մոսվի դողանցներ», 2008, № 11, նոյեմբեր, էջ 2:

⁶² Նշվ. հոդվ., նույն տեղում:

⁶³ Ղանդամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ, էջ 318:

⁶⁴ Նույնի, նշվ. աշխ., հ. Գ, էջ 28:

⁶⁵ Նշվ. աշխ., հ. Գ, էջ 30:

⁶⁶ Վերին Շենի ջրաղացները, խմբ., «Մոսվի դողանցներ», 2010, № 9, սեպտեմբեր, էջ 1:

նութիւնը կառավարութեան տուած 2000 ր. նպաստով, մնացած ծախքը իր վրա վերցնելով: Դպրոցի շինութիւնը պէտք է կառուցանել դիրեկցիայի պլանով»⁸¹: Ի դեպ, ավագ ուսուցիչ էր նշանակվել Բալաբէկ Զաքարյանը, երկրորդ ուսուցիչ՝ Հ. Մելքոնյանը, կրոնուսույց՝ Խորեն քահանա Տեր-Մարտիրոսյանը:

Սակայն դպրոցում ուսանում էին սակավաթիվ երեխաներ, քանի որ «...գիւղացին անտարբեր է. նա իր երեխային աւելի շուտ ուղարկում է խոզեր արածացնելու, քան թէ ուսումնարան»⁸²:

1910 թ. հունվարին դպրոցն ուներ 75 աշակերտ⁸³:

1912 թ. օգոստոսի դրութեամբ Վերիշենում գործում էր պետական ժողովրդական դպրոց⁸⁴:

Տարիների հեռավորությունից հիշողությամբ գյուղի դպրոցների մասին նշվել է. «Գյուղի դպրոցական հին շէնքը կառուցված էր բնակիչների հաշվին 1912 թ., շինարարը եղել է Էրքեջից Լալա Լալայանը: Այնտեղ է բացվել երկդասյան դպրոցը, որտեղ դասավանդել են գյուղի տերտեր տեր Խորենը և Գրիգոր (Քյուքի) Հովսեփի Հակոբյանը: Գրիգոր Հակոբյանը ձիով գնում է Էրքեջ, որպեսզի այնտեղ էլ դպրոց բացի, ճանապարհին անտառում սպանում են: Գյուղի երկրորդ դպրոցը նույնպէս կառուցվել է բնակչության միջոցներով: Աշխատել են Մեխակ և Խաչան Դալլաքյանները, Արսեն Մաղաթեյանը (որմնադիրներ): Ընդհանուր աշխատանքները ղեկավարել է Աղաջան Նահապետյանը, իսկ նախագծողը եղել է Սաթենիկ Շահնազարյանը: Իսկ երրորդ շէնքը կառուցվել է Հայրենական պատերազմից հետո, պետական միջոցներով, տիպային նախագծով»⁸⁵:

Գաղթականական դպրոց. 1916-1917 թթ. գործում էր գյուղում ապաստանած արևմտահայ գաղթականների զավակներին կրթելու նպատակով բացված մի դպրոց⁸⁶:

Սր. Աստվածածին (Սր. Հովհաննես) եկեղեցի. գտնվում է հին թաղի կենտրոնում (N 40°24'34.11", E 046°30'10.13", ծ. մ. 1151 մ): Հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունները հուշում են, որ Վերիշենի եկեղեցին ԺԸ դարի շինություն էր՝ թերևս ավելի հին կառույցի տեղում հիմնովին վերակառուցված: 1841 թ. հիշվում է Սր. Հովհաննես⁸⁷, իսկ հետագա տարիներին՝ 1842, 1843⁸⁸, 1880⁸⁹ թթ.՝ Սր. Աստվածածին անվամբ:

ԺԹ դարավերջին կառույցի մասին նշվել է հետևյալը. «...քարուկիր, կառուցեալ երեք կամարների վերայ, երկարութիւնն՝ 19 մետր 50 սանթիմ, լայնութիւն՝ 10 մետր 80 սանթիմ: Հիւսիսային խորանի գլխին կայ գաղտնի պահարան»⁹⁰:

1895 թ. Խորեն քահանա Տեր-Մարտիրոսյանցը եկեղեցու նորոգության նպատակով «...գիւղն ընկած ցորեն և դրան է ժողովում, եկեղեցին նորելու և զարդեր գնելու համար»⁹¹:

1916 թ. օգոստոսի դրութեամբ հիշվում է որպէս անշուք եկեղեցի⁹²:

1927 թ. փակվել է⁹³:

81 **Ռհաթ.** Երկդասեան դպրոց Վերին-Շէնում, «Մշակ», 1910, № 60, 19 մարտի, էջ 2:

82 **Միւնեցի.** նշվ. հոդվ., «Մշակ», 1910, № 160, 23 յուլիսի, էջ 3:

83 **Ռհաթ.** Գասառի իրականութիւնից (Երկդասեան դպրոցը Վերին-Շէնում), ՀԱԴ, ֆ. 227, ց. 1, գ. 160, ք. 14:

84 **Պետ.** Գարաբաղի դպրոցների շուրջը, «Մշակ», 1912, № 187, 25 օգոստոսի, էջ 3:

85 **Գահրամանյան Կ.,** Օջախի գիրք, հ. Բ, էջ 315:

86 ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 170, ք. 5:

87 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 47:

88 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531, 532:


89 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 33, ք. 20 և ց. 18, գ. 33:

90 **Քարխտատարեանց Մ.,** նշվ. աշխ., էջ 246:

91 «Նոր-Դար», 1895, № 7, 13 յունուարի, էջ 2: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 260-261, ֆ. 57, ց. 3, գ. 48, ք. 7-8:


92 Վատերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 622:

93 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, ք. 12:




ՎԵՐԻՇԵՆ. Սր. Աստվածածին եկեղեցին հարավ-արևելքից և հարավից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)


Միանավ, թաղածածկ բազիլիկ է՝ կառուցված անմշակ քարերով, կրաշաղախով: Մրբատաշ են միայն մուտքի և լուսամուտների անկյունաքարերը, որմնասյուները: Երկթեք ծածկի տակ առնված տանիքը ներքուստ պահում են երեք զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Արևելյան կողմում՝ կիսաշրջանաձև եզրագծով ավագ խորանի երկու կողմերում, առկա է ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն, իսկ հյուսիսային որմնի մեջ՝ ավանդական տեղում է մկրտության խորշը՝ ավազանով հանդերձ: Ունի դեպի ներս լայնացող 8 լուսամուտ, որից 5-ը բացված են արևելյան, 2-ը՝ հարավային, իսկ 1-ը՝ արևմտյան ճակատներից: Հարավային ճակատին հատկապես մուտքի շուրջ, ագուցված են մի քանի խաչքարեր: Կան նաև խաչքանդակներին կից արձանագրություններ:



ՎԵՐԻՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքը և նրա շուրջն ագուցված խաչքարերը, մուտքից վեր հարդարանքի գլխավոր տարրը՝ խաչը, տգետ և անհարգանք հոգևորականության ձեռքով վերջնամասից ոչնչացված բարավորի արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ՎԵՐԻՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու արևային ժամացույցը և 1774, 1818 թթ. արձանագրություններ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)




ՎԵՐԻՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Ձեռագրեր. ԺԹ դարի վերջին եկեղեցուն է պահվել 1493 թ. Կոշիկ անապատում (Մարտակերտի շրջան, գ. Քոլատակ) ստեղծված մի ձեռագիր Ավետարան, որը գերությունից ազատել էր գյուղի տանուտերը՝ Հարությունը, և հետագա՝ 1749 թ. հիշատակարանում արձանագրել. «Ես՝ Վերին շենի տանուտեր Յարութինս, առի զայս Քրիստոսի սուրբ ավետարանս ի անօրինաց ձեռքէն, իբր թէ գերի անկեալ թափեցի»⁹⁴: Յավոք, խորհրդային տարիներին այս Ավետարանը եկեղեցուց անհետացել է⁹⁵:

Վիմագրեր. եկեղեցու որմերին առկա էր 7 վիմագիր: Վաղագույնը վերաբերում էր 1774 թ.:

94 *Քարխոտարեանց Մ.*, նշվ. աշխ., էջ 247:

95 *Ղահրամանյան Ա.*, Օջախի գիրք, հ. Ա, էջ 95:



ՎԵՐԻՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու ներքին տեսքը դեպի արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Արձանագրություն. եկեղեցու մուտքի ճակատակալ քարին՝ 4 տող.
Ի ս(ր)բազան / դասուն սիրեցերյոյն / աշակերտեալ տ(է)ր Պետրոսս / և մերոյ երկրիս հրամանատու / ...:

Հրատ. **Ղափրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 78: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 78:


Ծանոթ. վիճագրի վերջին հատվածը չի պահպանվել: Սա հավանաբար եղել է շինարարական բնույթի արձանագրություն: Հարկ է նշել, որ առանց արձանագրությունը ներկայացնելու՝ Ե. Լալայանը գրում է՝ կամարակալ և անայուն եկեղեցին կառուցվել է 1756 թ. մելիք Հովսեփի ծախսով (**Լալայան Ե.**, նշվ. աշխ., «Ազգագրական հանդես», 1899, գիրք Ե, էջ 330: Նույնի՝ Գանձակի գավառ, Երկեր, հ. 2, էջ 302): Կարծում ենք, որ այդ կարևոր տեղեկությունները նա քաղել է վիճագրի չպահպանված հատվածից:



Խաչքանդակ. հարավային ճակատին՝ մուտքի ծախ կողմում.
Թվին ՌՄԻԳ (1774). / ս(ուր)բ խաչս օգնական տ(է)ր / Միսեօնի / որդի տ(է)ր / Մինասին:

Հրատ. **Ղափրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 78: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 78:

Ծանոթ. վերջին անձնանունը՝ փակագիր: Առաջին հրատարակության մեջ առկա են մանր անճշտություններ:



Արձանագրություն. եկեղեցու պատին՝ 3 տող.
Յ(ի)շեցեք ի Ք(րիստոս)ս / շինիս տա- նուտ/եր Պապա քոյս(վի)ն:

Հրատ. **Ղափրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 78: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 78:

Արձանագրություն. եկեղեցու անկյունաքարերից մեկին՝ 3 տող.

Ք(րիստոս)ի / ծ(ա)ռ(ա) Ա/կոր:
Հրատ. առաջին անգամ:



Խաչքար. ագուցված եկեղեցու հարավային ճակատին, ստորին մասում՝ 1 տող.

Խ(ա)չս Հ(ա)խ(ու)մին:
Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված եկեղեցու հարավային պատին.

Ի Ք(րիստոս)ս Հիսին:

Հրատ. **Ղափրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 78: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 78:

Ծանոթ. թվում է, թե նախորդ արձանագրության սխալաշատ ընթերցումն է:

Արձանագրություն. եկեղեցու մուտքի անկյունաքարին՝ 6 տող.

Ես՝ սնահտեսի տ(է)ր / Յարութ(ի)ունս, գրեցի. ինձ ողորմի ա- սեք, ա(ստուա)ծ / ձեզ ողորմի, ք(վի)ն / ՌՄԿԷ (1818):

Հրատ. **Ղափրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 78: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 78:

Ծանոթ. առաջին հրատարակության մեջ առկա են մանր անճշտություններ:

Քահանա. Հարություն Խաչատուրյան Տեր-Մարտիրոսյանց (ծնվ. 1801 թ., վախճ. 1892 թ.). քահանա է ձեռնադրվել 1820 թ. Գանձասարի վանքում⁹⁶: 1828 թ. նրան տրվել է ավագ քահանայի կոչում: Պաշտոնավարել է մինչև մահը:

Գրիգոր Հակոբյան. 1851 թ. արդեն վախճանված էր⁹⁷: Նույն թվականին գյուղի երկրորդ քահանան՝ տեր Հարությունը, գառամյալ էր, և նրան օգնական էր անհրաժեշտ: Այդ իսկ պատճառով գյուղի հասարակությունը Ներսես կաթողիկոսին դիմում է դպիր Հարություն Տեր-Եսայան Տեր-Մինասյանցին երկրորդ քահանա ձեռնադրելու խնդրանքով⁹⁸:

Գրիգոր Հակոբբևոյան Տեր-Սահակյանց (ծնվ. 1810 թ.). քահանա է ձեռնադրվել 1837 թ. Գանձասարի վանքում: 1837-1844 թթ. հիշվում է որպես գյուղի երկրորդ քահանա⁹⁹: Ըստ ամենայնի՝ 1874 թ. արդեն հանգուցյալ էր¹⁰⁰:

Հարություն Տեր-Եսայան Տեր-Մինասյանց (ծնվ. 1812 թ.¹⁰¹). քահանա է ձեռնադրվել 1853 թ. մարտի 15-ին Վաղարշապատի Սբ. Գայանե եկեղեցում: 1851 թ. գյուղի եկեղեցու դպիրն էր¹⁰²: Հիշվում է 1857¹⁰³ և 1874 թթ.¹⁰⁴:

Գրիգոր Տեր-Հարությունյան Տեր-Մարտիրոսյանց (ծնվ. 1832 թ.). քահանայագործում էր 1874 թ.¹⁰⁵, մահ 1888 թ. («Արարատ» ամսագրի բաժանորդներից էր)¹⁰⁶:

Ըստ ամենայնի՝ 1893 թ. Գրիգոր Տեր-Մարտիրոսյանցը (ուներ 4 որդի՝ Հարություն, Հովսեփ, Արշակ և Ղևոնդ), Գրիգոր Տեր-Սահակյանցը (1 որդի՝ Կարապետ) և Հարություն Տեր-Մինասյանցը (4 որդի՝ Ավետիս, Սարգիս, Դանիել և Ղևոնդ) արդեն հանգուցյալ էին¹⁰⁷:

Խորեն Տեր-Մարտիրոսյանց (ծնվ. 1869 թ.). ուսանել է Գանձակի հայոց եկեղեցական-ծխական դպրոցում, քահանա է ձեռ-

96 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 531-533, 538:

97 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2828, ք. 3:

98 Նշվ. գործը, ք. 3, 10:

99 Նույն տևում:

100 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 126:

101 Այլ վկայության համաձայն՝ ծնվել է 1819 թ. օգոստոսի 6-ին (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2828, ք. 4 շրջ.):

102 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 542: Տե՛ս նաև ֆ. 56, ց. 1, գ. 2828, ք. 21:

103 Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), էջ 210:

104 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 126: Տե՛ս նաև **Ղափրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 87:

105 ՀԱԳ, ֆ. 93, ց. 1, գ. 384, ք. 126:

106 «Արարատ», 1888, ԺԲ, էջ 807:

107 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 195-196: Տե՛ս նաև «Արարատ», 1871, Ը, էջ 484: 1873, ԺԲ, էջ 486:



ՎերիՇեն. հատվածներ գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ՎերիՇեն. խաչքար գերեզմանոցում, ԺԲ-ԺԳ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

նադրվել հոր՝ տեր Հարությունի մահից երկու տարի անց՝ 1894 թ. հուլիսի 16-ին և պաշտոնավարել մինչև հրաժարականը՝ 1924 թ. դեկտեմբերի 1-ը¹⁰⁸: Մեծ գործունեություն է ծավալել Վերիշենում եկեղեցական-ժխական դպրոց վերաբացելու և եկեղեցին նորոգելու ասպարեզում: Արձատներով խոյեցի էր: 1910 թ. դրությամբ ուներ 7 որդի՝ Գրիգոր, Հայկ, Արմենակ, Սուրեն, Ռաֆայել, Վազգեն և Աշոտ¹⁰⁹: Հիշվում է նաև 1912 թ.¹¹⁰:

108 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, ք. 8: Տե՛ս նաև Վաերազեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 622: «Նոր-Դար», 1894, № 187, 5 նոյեմբերի, էջ 2: **Ռհաք**, նշվ. հոդվ., «Մշակ», 1910, № 60, 19 մարտի, էջ 3:
109 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 65, ք. 16:
110 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 361 շրջ.:

Հայտնի է, որ տեր Խորենը գյուղի վերջին քահանան էր. «Իր ընտանիքը և տղաների կյանքը աքսորավայրերից փրկելու համար ստիպված գրավոր հրաժարական տվեց»¹¹¹:

Նազար Սարգսյան Տեր-Մինասյանց. 1915 թ., նկատի ունենալով գյուղի բազմամարդությունը, վերիշենցիներն առաջարկում են գյուղի միակ քահանա տեր Խորենին օգնական նշանակել հանգուցյալ տեր Հարությունի թոռանը՝ Նազար Սարգսյան Տեր-Մինասյանցին (ծնվ. 1893 թ.): 1905 թ. ընդունվել է Ներսիսյան դպրոց, 1909 թ. գերազանց առաջադիմությամբ փոխադրվել երրորդ դասարան և իր ցանկությամբ ուսումը թերի է թողել¹¹²:

Գերեզմանոց. գտնվում է գյուղի հին հատվածի հարավային եզրին: Առանձնապես մեծաթիվ են ԺԺ դարին վերաբերող տապանաքարերը (առնվազն 1000 գերեզմանաքար): 1987 թ. դրությամբ պահպանվում էր նաև ԺԲ-ԺԳ դդ. ոճական առանձնահատկություններով գեղաքանդակ, տեղահան մի խաչքար՝ հարված զույգ խաչաքանդակներով և խաղողի ողկույզներով:

Հայտնի է, որ 1908 թ. ապրիլի 27-ին այս գերեզմանոցում է անփոփվել Թելլու Տեր-Մարտիրոսյանը¹¹³:

Փառքի (ՀՄՊԶ) հուշարձան. գերեզմանոցի բլրալանջի ստորոտում 1985 թ. (Մեծ հաղթանակի 30-ամյակի կապակցությամբ) վերիշենցիները կառուցում են Մեծ հայրենականում (մասնակցել է 667 հոգի) զոհված կամ անհետ կորած 241 համագյուղացիների հիշատակը հավերժացնող հուշարձան¹¹⁴: Այն

111 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 65, ք. 18:
112 ՀԱԳ, ֆ. 56, ց. 4, գ. 617, ք. 1:
113 **Մարտիրոսյանց Լազին Ա.**, նշվ. թղթակց., «Մշակ», 1908, № 97, 6 մայիսի, էջ 2:
114 **Դադաչյան Կ.**, Փառքի հուշարձաններ, Երևան, 1986, լուս. 546: Տե՛ս նաև **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք, հ. Բ, էջ 450-457:



ՎերիՇեն. Փառքի (ՉՄՊՁ) հուշարձանը, 1985 թ. (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)



ՎերիՇեն. հատվածներ Քարահունջ գյուղատեղիի գերեզմանոցից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

ուներ 18 մետր բարձրություն. «Առաջին հարկը երևանյան բազալտով էր կառուցված, որտեղ 3 ընդարձակ սենյակները թանգարանի էին վերածվել: Փակցված էին գոհվածների ու անհայտ կորածների նկարները: Կոթողի վերին մասը կառուցված էր երևանյան վարդազույն տուֆով: Իսկ ամենաբարձր մասում սև տուֆից խաչի պատկեր էր: Շուրջը ծառեր ու ծաղիկներ աճեցվեցին: Երևանաբնակ Սիմաս Շահնազարյանն իր միջոցներով ջրավազան կառուցեց 241 շատրվաններով»¹¹⁵:

Քարահունջ (Քրահունջ, Քարահունջ, Բալլուդայա) գյուղատեղի. համարվում էր որպես Վերիշենի հարավարևմտյան արվարձան (թաղ), սակայն բավականաչափ (գրեթե 3 կմ) հեռու էր: Արդեն միջնադարում առանձին բնակավայր էր:

1907 թ. ուներ 89 բնակիչ¹¹⁶, իսկ 1912 թ.՝ 30 տուն՝ 140 (74 ար. և 66 իգ.) հայ բնակիչ¹¹⁷:

1912 թ. գյուղացիներն ունեին 7 ձի և 80 մանր եղջերավոր անասուն¹¹⁸:

Հետագայում գյուղն ամայացել է և վերստին բնակեցվել միայն 1950-ական թվականներին:

1977 թ. դրությամբ նորոգության կարոտ էին գյուղի ակունքը, դպրոցը և հասարակական այլ շինություններ¹¹⁹:

Ըստ Բորիս Ղլեշյանի՝ մինչև բռնագաղթը գյուղն ուներ մոտ 30 բնակիչ¹²⁰:

Նշվել է նաև, որ մինչև 1992 թ. մի քանի տասնյակ հայ ընտանիքներով զուտ հայաբնակ գյուղ էր. «Քարահունջում հին տնա-

տեղեր կային, ավերված եկեղեցու հետքեր: 20-րդ դարի սկզբներին թուրքական այրում ցեղին պատկանող մի քանի ընտանիքներ բնակություն էին հաստատել այդտեղ և գյուղն սկսել էին կոչել նոր անունով՝ Բալլուդայա՝ մեղրաշատ ժայռ, որովհետև այդ ժայռերի վրա շատ մեղվաընտանիքներ կան: Մի թուրք նույնիսկ իր տունը կառուցել էր եկեղեցու ավերակների վրա: Հետագայում Մայրանյան Ասլանի ջանքերով թուրքերն այդտեղից հեռացվեցին, Քարահունջում հաստատվեցին Վերին Շենի Աղաջանանց տոհմից Մարտիրոս, Լաչին, Ասլան և Բաղալ եղբայրները: Դրանից հետո էլ Քարահունջը նոր անուն ստացավ՝ Աղաջանանց թաղ, բայց հին անունը միշտ հիշվում էր»¹²¹: Հայտնի է

115 **Ջաղապարյան Ռ.**, Այսպիսի վրեժխնդրություն..., «Մռավի դղանջներ», 2006, № 9, սեպտեմբեր, էջ 2: Ի դեպ, կուսընթացի քարտուղար Հ. Պետրոսյանի պահանջով խաչը պետք է վերացվեր: Վերիշենցիները դրա լուծումը գտան. Երևանում պատրաստվեց պղնձակոփ գարդանախչ, և դրանով երեսապատվեց խաչը:

116 Кавказский календарь на 1910 г., с. 209.

117 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 52. Հայտնի է, որ 1912 թ. գյուղը, բացի բնակելի 30 տներից, ուներ նաև տնտեսական նշանակության 24 կառույց (նշվ. աշխ., էջ 53):

118 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

119 Շրջանվետի սեսիան, «Նոր ուղի», 1977, № 106, 3 սեպտեմբերի, էջ 1:

120 ՀԱԴ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, թ. 2:

121 **Վերդյան Ջ.**, Որպես արձագանք, «Մռավի դղանջներ», 2011, № 2, փետրվար, էջ 3:

նաև, որ «Մինչև 1950-ական թվականներն այդ քաղաքում գյուղի հետ կապված էր նեղ կաժաններով, որոնք կապ էին կոչվում: Հետագայում ճանապարհն ընդլայնվեց, և ավտոմեքենաներով հնարավոր էր Քարահունջ գնալ: Հյուսիսային կողմի ժայռաշղթայի ուղղահայաց կտրվածքն այնպիսին էր, կարծես մեկը դանակով կտրել էր: Թաղամասի ցածրադիր մասում ժայռից պոկված խորանարդի ձև ունեցող հսկա քարաբեկորները փակել



Վերին շեն. ԺԳ-ԺԴ դդ. խաչքարի բեկորներ Քարահունջ գյուղատեղիի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

էին գետի հունը, և այդ մասում գոյացել էր կասկաղածև ջրվեժ...: կարծում են, մեր Քարահունջն իր անունը ստացել է նրանից, որ այդ ջրվեժի ձայնն արձագանքում է ժայռերից այնպես, որ կարծես քարերից ձայներ են հնչում՝ քարահունջ: Չ-ն էլ կարող էր հնչյունափոխվել ջ-ի»¹²²:

Ջրաղաց Քարահունջ գյուղատեղիում. ըստ տեղեկությունների՝ այս ջրաղացը, որն աշխատեցրել է Հուռի տատիկը (Մեծ ազի), չարագործները վնասել են, իսկ ջրաղացաքարերից մեկը՝ ջարդել: Այդ պատճառով էլ տարիներ անց խափանված ջրաղացի շինության քարերով Տանձի հողի կամրջի մոտ կառուցվում է նոր ջրաղաց և անվանակոչվում Բյացունց (Վերդունց)¹²³:

Միևնույն խաչքարի վերակազմությունը ըստ պահպանված բեկորների

Գերեզմանոց. 1987 թ. դրությամբ տարածքում պահպանված ընդարձակ գերեզմանոցում դեռևս կային ԺԳ-ԺԴ դդ. բնորոշ գեղաքանդակ խաչքարի բեկորներ (ազուցված մի նոր գերեզմանի պարսպապատին) և բազմաթիվ տապանաքարեր:

122 Նույն տեղում:
123 Վերին Շենի ջրաղացները, խմբ., «Մոսկի դոկանցներ», 2010, № 9, սեպտ., էջ 1:



Վերին շեն. Քարահունջ գյուղատեղիի Գիր խաչ սրբատեղիի՝ 1876 թ. արձանագրությունը և քերևա խաչքարի բեկոր (պահպանվել է արձանագիր մի հատվածը. լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.)

Եկեղեցի. նրանից արդեն ԺԹ դ. վերջին միայն չորս պատերն ու խորանի թաղն էին մնացել¹²⁴: Թերևս հենց այս հանգամանքը նկատի առնելով էլ 1912 թ. նշվել է, որ գյուղը եկեղեցի չուներ¹²⁵:

Գիր խաչ սրբատեղի. գտնվում էր Քարահունջ գյուղատեղիում՝ «...գետից հազիվ 4-5 մետր հեռավորության վրա: Դա մի հսկա խորանարդած քար է, որի ուղղահայաց նիստերի վրա խաչեր են փորագրված: Այդ քարի մոտ մի հսկա ծառ կա, շրջազիծը մոտ 15 մետր, բարձրությունը մոտ 20 մետր: Խաչերի տեսքը վկայում է, որ այն շատ հին ժամանակներում է փորագրվել: Ըստ ավանդության, այդ ծառը տնկել է Մեսրոպ Մաշտոցը: Այդ ծառատեսակը մեր կողմերում հազվադեպ է լինում: Խորհրդային տարիներին, երբ բոլոր տեղերում փակվել էին եկեղեցիները, այդ թվում նաև Վերին Շենում, հավատացյալները շարունակում էին ուխտի գնալ Գիր խաչ: Շրջանի կոմունիստ ղեկավարներն արգելեցին ուխտի գնալ Գիր խաչ, քանդեցին պարիսպը: Բայց

124 **Քարխտառքանց Մ.**, նշվ. աշխ., էջ 250:
125 Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53.

մարդիկ, միևնույն է, ուխտի էին գնում, դրա համար էլ ղեկավարներն սկսեցին մատների արանքով նայել այդ հարցին: Օգտվելով այդ մեղմացումից, Գյուլումանց Վարդագարը վերականգնեց քանդված պարիսպը (հիարկե, ոչ նախկինի նման կրապատ), բարեկարգեց տարածքը: Պատի մի սրբատաշ քարի վրա գրված է, որ Գիր խաչը պատկանում է Գյուլումյաններին»¹²⁶:

1987 թ. դրությամբ տեղում պահպանվում էին պարզ հորինվածքով ժայռախաչեր, միջնադարյան խաչքարի արձանագիրքեր և 1876 թ. նվիրատվական արձանագրություն:

Արձանագրություն. սրբատեղիի մուտքի բարավորին՝ 4 տող.

Այս Գիրխաչս / պատկանի Առաքել / Կալուստեանց. 1876 ամի. / Ումեանց:

Հրատ. **Ղահրամանյան Կ.**, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 78: Նույնի՝ Օջախի գիրք, հ. Ա, էջ 78:

Տարրերեցում. առաջին հրատարակության մեջ վերջին ազգանունը՝ *Կ(ույ)ու-մեանց*:

Խաչքարի բեկորին պահպանվել է.

[Մուր]ք նշ(ա)ն[ս] ... / ... ի բարե[խաւսութիւն]

.../ ...:

Հրատ. առաջին անգամ:



Շենատեղ գյուղատեղի. գտնվում էր գետի ձախ ափին՝ Խոռված կամրջից ոչ հեռու՝ մոլոկանների հարևանությամբ: Ըստ բանավոր ասության՝ տարածքից, օրինակ, Շելունց Ղուկասը գտել է ոսկեդրամ և այլ իրեր¹²⁷:

Եղիցի սեռ գյուղատեղի. գտնվում էր գետի աջ կողմում՝ Տինգի տհար թաղամասից ոչ հեռու: Տարածքում պահպանվել էին եկեղեցատեղիի, գերեզմանոցի, տնատեղերի հետքեր: Ըստ վերիշենցի Աշոտ Ջանունցի՝ իր պապի ասությամբ՝ գերեզմանաքարերից մեկին գրված է եղել. «Տասը ծուն եղավ մի կուպեկ, վա՛յ մեզնից հետո ասրողներին»¹²⁸:

Լիտր գյուղատեղի. գտնվում էր Վերիշենցից 4 կմ արևելք՝ ձորի մեջ՝ Կապ լեռան և Մպիտակ աղբյուրի «...ուղղությամբ դեպի վերև բարձրացող լեռան բարձունքի վրա գտնվող մի փոքր հարթ տարածքում: Մա մի փոքր բացատ է՝ չորս կողմը շրջափակված խիտ անտառներով...: Այս տարածքի ամենավերին մասում է գտնվում մի հորը աղբյուր, որը կոչվում է “Լիտրի աղբյուր”...: Լիտրը եղել է շատ հին բնակավայր, կան հին խաչքարեր, մատուռներ, գերեզմանաքարեր և այլ հուշարձաններ: Լիտրի վերջին բնակիչները՝ Ջարգարյանները, 20-րդ դարի սկզբին տեղափոխվել են Վերին-Շեն գյուղը...»¹²⁹:

Այլ տեղեկության համաձայն՝ գտնվում էր Երեք մանկունք վանքից ներքև՝ «...ձորի մեջ, կայ Լիտր անուանումած գիւղատեղի, գերեզմանատուն և երեք քարե խաչեր»¹³⁰:

Ի դեպ, Լիտր գյուղանվան հիշատակությանը՝ Լիդեր տառադարձումով, հանդիպում ենք Մեծ Շուլավերի (այժմ՝ Շահումյան ավանը ՎՀ Մառնեուլի շրջանում) գերեզմանոցում՝ մի տապանաքարին, որը կերտվել էր 1801 թ. լիտրցի տեր Անանիայի հիշատակին: Այն ուշագրավ արձանագրությամբ հիմք է տալիս պնդելու, որ Լիտր գյուղը հայաթափ է եղել 1780-ական թթ. երկրորդ կեսին՝ գավառաբնակ հայության՝ դեպի Վրաստան համընդհանուր գաղթի ժամանակ:



Շնունդով լիտրցի («լիդերցե») տեր Անանիայի տապանաքարը Մեծ Շուլավերի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)


Տապանաքար. ուղղանկյունաձև (143 x 70 x 25 սմ), հարավային երեսին՝ 4 տող.

Այս է տապան էկիրմիթոցի լիդերցե վագիլ տ(է)ր Անանեայ, / ես՝ տ(է)ր Ան(ան)եայ(ի) որդի Աբրես, գրեցի, / ՌՄԾ(1801) քվ(ին):

Հրատ. **Աղանյան Ս., Կարապետյան Ս.**, Շուլավեր, Երևան, 2002, էջ 44:

Ծանոթ. վագիլ՝ նշանակում է կառավարիչ:

Կամուրջներ. Վերիշենցից արևելք՝ Սևջուր գետի ափից շուրջ 50 մ հեռավորության վրա՝ հին հունի տեղում, մինչև 1992 թ. կան-



Խոռված կամրջի տեղադրությունը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ., գրաֆիկական մշակումը՝ Ա. Չակոբյանի) և հոսքընթաց ճակատը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982 թ.)


126 **Վերդյան Ջ.**, նշվ. հոդվ., «Մռավի դողանցներ», 2011, № 2, փետրվար, էջ 3:

127 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 65, ք. 60:




128 Նույն տեղում:

129 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 65, ք. 61:

130 **Լալայեան Բ.**, նշվ. աշխ., «Ազգագրական հանդես», գիրք Ե, էջ 330: Տե՛ս նաև նույնի՝ Երկեր, հ. 2, էջ 303:



Խռոված կամրջի հոսքընթաց ճակատը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)



Խռոված կամրջի հատակագիծը, հոսքընթաց ճակատը, կտրվածքը (չափ.՝ Ս. Կարապետյանի, գրաֆիկական մշակումը՝ Ա. Դակոբյանի)

գուն էր միջնադարյան միաթռիչք մի կամուրջ՝ կառուցված տեղական գետաքարով, քերթաքարով և կրաշաղախով: Կամրջի թռիչքը 7 մ է, իսկ անցուղու լայնությունը՝ 3,40 մ: Հուշարձանը գրականության մեջ հայտնի է Անջուր, իսկ ժողովրդի շրջանում՝ Խռոված կամուրջ անուններով: Հարկ է նշել, որ այս կամուրջն արդեն առնվազն ԺԹ դարից սկզբներից գետի հունի փոփոխության պատճառով «խռոված» էր և նպատակին չէր ծառայում¹³¹:

1960-ական թթ. ավանում կառուցվում են 6-ից ավելի կամուրջներ: Դրանցից մեկը Ժորա Ջարգարյանի նախաձեռնությամբ կառուցվում է Յմբաձոր ձորանցի վրա և ստանում Դպրոցի կամուրջ անունը, մեկ ուրիշն էլ՝ գերեզմանոց տանող ճանապարհին: Երրորդն էլ կրում էր Ասլանանց կամուրջ անունը և այլն¹³²:

Խաչտուռ և Մանդրուռ հնավայրեր. առաջինը գտնվում էր Քարահունչից Մռավ լեռան ուղղությամբ 3-4 կմ հարավ: 1987 թ.

դրությամբ տեղում պահպանվել էր միայն մեկ խաչքար: Երկրորդը, որտեղ առկա էին հին շենքի առանձին բեկորներ, Քարահունչից շուրջ 15 կմ հարավ-արևմուտք էր:

131 Կամրջի մասին տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Արցախի կամուրջները, էջ 80-81:

132 ՀԱԳ, ֆ. 1159, ց. 10, գ. 63, թ. 9 շրջ.:



ՄԱՍ Բ

ՆՈՐ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
(ՔԱՐԿԱՃԱՌԻ)

ՇՐՋԱՆ

ՆՈՐ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
(ՔԱՐՎԱՃԱՌԻ)
ՇՐՋԱՆ
Ընդհանուր տեղեկություններ

Դեռևս 1978-1987 թթ., բայց հատկապես Քարվաճառի ազատագրումից անմիջապես հետո՝ 1993-1996 թթ. իրականացված ուսումնասիրական աշխատանքների արդյունքները 1999 թ. «Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» վերնագրով աշխատությանը հրատարակելիս այդ գրքի հակիրճ վերջաբանում նշել էի. «...որևէ տարածքի հուշարձանների առավել ամբողջական պատկերը կազմելու համար անհրաժեշտ է բնակիչ-ուղեցույցի առկայությունը: Այնինչ մեր դաշտային աշխատանքները գերակշիռ մասով կատարվել են մի ժամանակահատվածում, երբ տարածքը համարյա անբնակ էր: Կարծում ենք, որ տարիներ անց այս աշխատանքը կարելի է լրացնել արդեն տեղաբնակների օգնությամբ»:

Կանխորոշված տարիներն անցան, շրջանի տարածքը կանաց-կանաց վերստին բնակեցվեց երկրի բնիկներով (նրանց թվում առանձնապես գերակշռում են 1992 թ. Շահումյանի շրջանից բռնագաղթածները), որոնք, օրըստօրե ավելի ու ավելի լավ ծանոթանալով իրենց նոր բնակավայրերին ու նրանց հանդամասերին, ամենուր բազմաթիվ նոր հուշարձաններ հայտնաբերեցին:

2000-ական թթ. սկզբներից սկսեցինք անընդմեջ հայտնաբերվող հուշարձանների ուսումնասիրությունը և ժամանակ առ ժամանակ այցելելով շրջանի՝ արդեն բնակեցված հատվածները՝ տեղացիների առաջնորդությամբ մեզ հաջողվեց տեսնել մեծաթիվ նորագյուտ հուշարձաններ:

Արդեն 2017-2018 թթ. դրությամբ կուտակված նյութերն այնքան ծավալուն էին, որ հիրավի անհրաժեշտություն էր զգացվում էապես լրացված մի նոր աշխատությանը այդ ամենը վեր հանելու:

Ի դեմս սույն հատորի՝ հայտնի հուշարձանների կողքին ուսումնասիրական նոր լույսի ներքո նախնյաց հիշատակներին հետամուտ ընթերցողին ներկայացվում է ազատագրված շրջանի տարածքում մաս վերջին երկու տասնամյակների ընթացքում բացահայտված նյութական մշակույթի հուշարձանները:

Ելնելով նրանից, որ Քարվաճառի շրջանը, ի պատիվ և ի հիշատակ բռնագավթված Շահումյանի շրջանի, ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Նոր Շահումյան, նպատակահարմար գտանք վերջինս ներառել սույն աշխատության մեջ որպես հատորի Բ մաս:

Ցանկանում են նշել նաև, որ ազատագրված հայոց հինավուրց այս օրրանում նյութական մշակույթի տարաբնույթ հուշարձաններ շարունակաբար հայտնաբերվում են եթե ոչ ամեն օր, ապա զոնե ամեն շաբաթ: Իրողություն, որ ինքնին հուշում է՝ գուցե ևս 10 կամ 20 տարի անց հարկ է լինելու սույն աշխատությունը նույնպես էապես լրացնել հերթական նոր հատորով, ուստի օգտվելով առիթից՝ հենց այս պահից շնորհավորում և հաջողություն են մաղթում այդ աշխատանքը մի օր ստանձնող և իրականացնող դեռևս անհայտ հեղինակին:



Տեսարան Մեծ և Փոքր Ալ լճերին հարակցող տարածքից (լուս.՝ Գ. Բազե-Խաչերյանի, 2008 թ.)

Բնական միջավայրը. Քարվաճառի շրջանը զբաղեցնում է 1936 կմ քառ. մակերես, որից շուրջ 140-ը (Մեծ և Փոքր Ալ լճերի ավազանը), անջատելով Խորհրդային Հայաստանից, շրջանին է կցվել 1923 թ.¹: Մահմանակից է Արցախի Հանրապետության Մարտակերտի (արևելքից) և Քաշաթաղի (հարավից), ՀՀ Վարդենիսի, Վայքի և Միսիանի (արևմտյան և հարավարևմտյան կողմերից) և Ադրբեջանի կազմում բռնագավթմամբ հայտնված հյուսիսարցախյան ներկայիս Դաշկեսանի և Խանլարի շրջաններին:

Լեռներ. շրջանի ողջ տարածքը խիստ լեռնային է և կտրտված: Շատ են բարձրաբերձ լեռնագագաթները (Գյամիշ՝ 3724,6 մ, Մայիտակքար՝ 3300,4 մ, Քոնգուր՝ 3043,2 մ, Իծաքար՝ 3125,8 մ, Ցամաքասար 2845 մ, Պահակ՝ 2018,3 մ, Քոչլեռ՝ 2525 մ, Լաչին՝ 2261 մ, Քերի՝ 3399 մ, Երկաքասար՝ 2900,9 մ և այլն): Հյուսիսում Մռավի, արևմուտքում՝ Ռմբոստյան և հարավում՝ Ծավդեից առավել բարձրադիր լեռնաշղթաները ձգվում են շրջանի սահմանների երկայնքով:

Լեռնանցքներ. ինչպես նշվեց, շրջանը երեք կողմերից (բացառությամբ արևելյանի) մեկուսացած է բարձրաբերձ ու ջրբաժան լեռնաշղթաներով, ուստի և հաղորդակցությունը հարևան

շրջանների հետ պահպանվում է լեռնանցքներով: Առավել բարձրադիր Մռավի լեռնաշղթայում են գտնվում Ջնգրլու (2885 մ), Օմարի (3261 մ) և Գյամիշի (3505 մ), իսկ արևմուտքից շրջանը երիզող Վարդենիսի կամ Ռմբոստյան լեռնաշղթայում՝ Ռմբոստյան կամ Մողքի (2400 մ), Նորաբակի (2600 մ) և Վ. Շորժա-Ծար (2751 մ) լեռնանցքները: Վերջապես հարավում ձգվող Ծավդեից լեռնաշղթան հատում են եկվոր խաշնարածների՝ լեռնանցքի երկու կողմերում գոյացրած մախկին գյուղերի անուններով հայտնի Նադդալի-Թախտաբաշի (2045 մ), Լյալյաբարդլի-Ղազիխանի (2215 մ) և մի քանի այլ ավելի դժվարանցանելի լեռնանցքներ: Ի դեպ, բուն Քարվաճառի շրջանի տարածքում էլ կան բազմաթիվ լեռնանցքներ, որոնցից հիշատակելի են դեպի Խաչեն և Արագջուր գետերի հովիտները տանողները (հայտնի են Քեչիլու-Աղջաքյանդի՝ 2180 մ և Օթախլար-Մրջմանցի՝ 1930 մ):

Գետեր. բարձրլեռնային Նոր Շահումյանի (Քարվաճառի) շրջանը բնականաբար հարուստ է բազմաթիվ գետերով ու վտակներով: Լեռնաշխարհի ջրհավաք ավազանով է սնուցվում Հայաստանի խոշոր գետերից մեկը՝ Տրտուն (Թարթառ): Լեռնային աղբյուրներից գոյացած հարյուրավոր վտակներ միախառնվելով սնուցում են շրջանի երեք հիմնական՝ Դուտխու, Լև և Տրտու գետերը: Այս և մյուս ավելի փոքր գետերն ու վտակները մշտապես են, բայց հատկապես ջրառատ՝ ճնհալի ժամանակ՝ զարնանն ու ամռան սկզբին: Այդ ամիսներին գետերի վարարումները սովորական երևույթ են: Հաճախ դրանք ողողում են լայնածավալ հովիտները, քանդում կամուրջներն ու ավերում ճանապարհները: Դա է նաև պատճառը, որ շատ գետերի ու վտակների վրա կառուցված միջնադարյան բազմաթիվ կա-

¹ Ինչպես հայտնի է, Մեծ և Փոքր Ալ լճերի շրջանը Խորհրդային Հայաստանից խլելն ու Ադրբեջանին կցելու որոշումն իրականացվել է Անդրկենտրոնականի հողային ու անտառային վեճեր լուծող հանձնաժողովի՝ 1923 թ. փետրվարի 2-ի, ապա Անդրկենտրոնականի նախագահության՝ փետրվարի 18-ի նիստի որոշմամբ: Համաձայն դրա՝ «...որոշվեց 2.000 դեյառային զբաղեցնող Ալագյուլյարը և հարակից արտավայրերը վերցնել Հայաստանից ու տալ Քուրդխտանի գավառին, այն է՝ Ադրբեջանին» (**Գրիգորյան Ռ.**, Հայաստանի սահմանամերձ տարածքների գավթունը Խորհրդային Ադրբեջանի կողմից 1920-30-ական թվականներին, «Առերեսում», 1996, № 16, էջ 6):



Տեսարաններ Լոր Շահունյանի (Քարվաճառի) շրջանից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)



Տեսարաններ Գորտագարակ լճից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

մուրջներ չեն պահպանվել, կան նկատելի են միայն դրանց խելերը:

Լճեր. շրջանի տարածքում կան լեռնային մի քանի փոքրիկ լճեր: Դրանցից նշանավոր են Մեծ և Փոքր Ալ (թուրք.՝ Ալագյոլ), Գորտագարակ (թուրք.՝ Ղանլիգյոլ), Սև (թուրք.՝ Ղարագյոլ) և Ջալխա լճերը: Բոլորն էլ ունեն հրաբխային ծագում և որպես կանոն՝ գտնվում են ալպիական գոտում՝ ծովի մակերևույթից ավելի քան 2000 մ բարձրության վրա (Մեծ Ալ՝ 2729 մ, Փոքր Ալ՝ 2739 մ, Գորտագարակ՝ 2056 մ, Ջալխա՝ 3062 մ): Լճերի մեծ մասը սնուցվում է մոտակա աղբյուրներից և ունի ջրհավաք փակ ավազան: Միայն Ջալխա և Գորտագարակ լճակներն են, որ սնուցում են համապատասխանաբար Որոտան և Իրիցաջուր գետերը:

Ջրվեժներ. որպես լեռնային, ջրառատ շրջան՝ Նոր Շահումյանը (Քարվաճառը) գուրկ չէ նաև ջրվեժներից, բայց դրանք նախ՝ շատ բարձր չեն և երկրորդ՝ գտնվում են ոչ թե հիմնական գետերի, այլ դրանց մանր վտակների վրա: Հիշատակելի են, օրինակ, Լյակգուգետի վրա նախկին *Ղարագյունեյ* գյուղի եզրին (բարձր. 5 մ), Լև գետի ձախ (8 մ) և աջ վտակի (5 մ, երկուսն էլ՝ Լև գյուղից 2-2,5 կմ հյուսիս-արևմուտք), Եղցաջրի վրա (3 մ), նախկին *Գյոյլարա* գյուղից 0,5 կմ ներքև գտնվող և այլ ջրվեժներ:

Անտառներ. չնայած տեղանքի խիստ կտրտվածությանը, այնուամենայնիվ, շրջանի տարածքի 28,2 հազ. հա մակերեսն անտառածածկ է: Վերջիններս գլխավորապես տարածված են Տրտու և Դուխտու գետերի հովիտներում և դրանց հարող նախալեռնային գոտիներում: Գերակշռում են կաղնին, ավելի սակավ՝ փշատերև ծառերը: Անտառներն առատ են վայրի մրգատու ծառատեսակներով:

Արոտավայրեր և դաշտեր. զբաղեցնում են շրջանի բարձրլեռնային տարածքների հիմնական հատվածները: Ալպիական գոտիներում դրանք փոփոխված են ծովի մակերևույթից 2000-2800 մ բարձրության վրա: Ավելի ցածրադիր մասերում դաշտավայրեր գրեթե չկան: Ի դեպ, այս գոտում բազմաթիվ են փարախներն ու անասնապահական համալիրները:

Հանքավայրեր. դեռևս 1866 թ. շրջանի տարածքում առկա պղնձի հանքավայրերը շահագործելու ծրագիր էր կազմել տփղիսաբնակ գեներալ-մայոր Երեմիա Արծրունին և այդ խնդրով դիմել կալվածատեր հոգևոր իշխանություններին թույլտվություն ստանալու ակնկալիքով. «Ի հազար ութն հարիսր վաթսուն և վեց ամի յունվարի քսան և մի ատուրն յԷջմիածնեան Սինոդին Հայոց եղաւ տոյն դաշն պայմանի ընդ գեներալ մայեօր Երեմիայ Գեորգայ որդոյ Արծրունոյ վասն տալոյ նմա իրաւունս ի գործ դնելոյ զհանքս պղնձոյ, որոյ նշանքն արդէն գտեալ են, նոյնպէս և զայլ հանքանիւթս եթէ գտանիցին այնպիսիք ի վերա գետնոյ պատկանելոյ եկեղեցոյ Հայոց ընդ իշխանութեամբ Սինոդին Էջմիածնի, որ ի Բաբու նահանգին, ի Շուշի գաւառի, ի Ջանգաձոր գաւառակի, ի տեղոջ, որ կոչի Շրբըղբանուղաղ և ի միասին ընդ այնմ իրաւունս վայելել և զհողսն, որք շրջապատեն զայն տեղի, որոց սահմանքն են յարևելից լիճն Գեօլ, յարևմտից Եայլաղ Խուդուրլու, ի հիւսիսոյ գիւղն Ասրիկ և ի հարաւոյ աղբիւրքն Դուխտունոջայ և Դալիդաղն, այսու յետագայ պայմանօք. 1. գեներալ մայեօր Արծրունին յիւր յառաջագոյն փորձելոյ զգտեալ նշանսն ներկայութեան պղնձահանքի ի վերոյ ցուցեալ տեղոջն և յետ ստուգելոյ, թէ գոյ յոյս և օգուտ ի գործ դնել զայն առաւել սկիզբն ապագայ շինութեանց գործատանց: 2. գեներալ մայեօր Արծրունին շինէ ի վերայ յիշեալ տեղոջն զգործարանական գիւղ, բանայ և առաջ բերէ զհանքային մշակութիւնս յայնքան տեղիս և յայնքան տարածութիւնս, որքան բարեհաճեսցի ինքն կառուցանէ զգործատունս և առ նոսին շինուածս ի գործ

դնէ զանտառն ի պէտս շինութեանց, հանքերաց ճանապարհաց, կամրջից և յայրումն ածխոյ գործէ զգետինս վասն տնտեսութեան գործարանական գեղջն և մարդկանց և գրաստուց եղելոյ ի գործարանս, ի տնկել զանտառս, շինէ զջրարգելս և տայ ճանապարհ ջրոյ որպէս ներգործական զօրութիւն միանգամայն վայելէ զամենայն վերոյիշեալ տարածութիւն եկեղեցական գետնոյ լիւրի տիրական իրաւամբք, առանց յորոց և իցէ կողմանէ վիճաբանութեան, խափանարկութեան և ձեռնախասութեան...»²:

Թվում է, թե գեներալ-մայոր Երեմիա Արծրունու՝ Դուխտու գետի հովտում առկա պղնձահանքերը շահագործելու և այդ նպատակով տեղում նաև բանավան հիմնելու սույն ծրագիրը կյանքի չի կոչվել, քանի որ նույն թվականին՝ տարեվերջին, Երեմիան ընտրվում է Տփղիսի քաղաքագլուխ և տրվելով քաղաքային հոգսերին՝ պարզապես ի վիճակի չի լինում հետևելու հանքարդյունաբերության ոլորտում իր իսկ առաջարկով ընդունված ծրագրին:

Սակայն Դուխտու գետահովտում առկա պղնձահանքերի շահագործման գաղափարը չի մոռացվում, և Ե. Արծրունու՝ անկատար թողած ծրագրից 32 տարի անց՝ 1898 թ., այս անգամ խնդիրն արծարծում է տփղիսեցի Պողոս Հովհաննիսյան Ավագյանը. «Այսու գրութեամբ պատիւ ունեն յայտնելու ս. Սինոդիդ, որ Շուշուայ գաւառի Ջանգեգօր ուշաստկում գտնուած Խօթայ վանքի կալուածքի մէջ գտել են պղնձի հանք, որպիսին տարածուած է Դուխտուչայի և Սէյխտարի տափի մօտերքն՝ Շրբըղբանդաղ կոչուած տեղի վերա, որի միւս կողմը Դաւաչխուր գիւղն է: Յայտնելով այս մասին ս. Սինոդիդ ամենախոնարհաբար խնդրում են տալ ինձ արտօնութիւն այդ հանքը շահագործելու, յարակցելով և այս, թէ՛ 1. քանի՞ տարով ս. Սինոդդ այս մասին կբարեհաճի պայմանաւորուիլ ինձ հետ և 2. կբաւականանայ արդէնօք ստացուած արտադրութեան որոշեալ տոկոսով (պրօցէնտով), թէ պետք է կապալով վերցնել: Վերոյիշեալ հանքատեղից ես կվերցնեմ 3-4 քառակուսի վերստ տարածութիւն, որտեղ արդէն իմ գտնելու նշաններն վաղուց թողել են: Յուսով են, որ ս. Սինոդդ իմ խնդիրս զանցառութեան չի տալ, այլ կշնորհէ ինձ իրաւունք վերոյիշեալ հանքատեղին շահագործելու, որը և օգուտ կբերէ Մայր-Աթոռին սրբոյ Էջմիածնի»³:

Վերոնշյալ հանքավայրերից զատ՝ արդեն 1912 թ. դրությամբ վանքապատկան կալվածքներում բացահայտվել էին մի շարք այլ հանքեր. «Պղնձէ հանքերի հետքերը հողի երեսին պատահում են յաճախ, մանաւանդ Լև չայ գետի աւազանում, Լև դալա (Լոնի բերդ) լեռան վրայ, Մարալ բաշի լեռնաշղթայի վրայ, Տաքեա դարասի-չայ գետի ձախ կողմում և միւս տեղերում: Անկէզ քարի (աճեճԵՐ) շերտեր են նկատուած Կարագիւնէյ կոչուած ձմեռանոցների մօտ: Մարմար քարի շերտեր՝ Ջումարդ գիւղի մօտ, երկանաքարի հանք՝ Լեքանդ գիւղի մօտ, կալիճ՝ Նաղիբխանլու գիւղի մօտ և ծծումբ՝ Դամիրչիլար գիւղի մօտ»⁴:

Հանքային աղբյուրներ. հնուց անտի հայտնի են եղել Ծար գավառի հանքային բուժիչ ջրերը: Միջնադարի շատ պատմիչներ զանազան հիշատակություններ են թողել դրանց մասին: Նոր Շահումյանի շրջանի տարածքում բխում են հանքային ինչպես սառը, այնպես էլ տաք աղբյուրներ: Ուշագրավ օրինաչափությամբ դրանք գտնվում են խոր ձորերի կամ հովիտների մեջ՝ մեծ գետերի ափերից ոչ հեռու: Նշանավորներն են, օրինակ, Խուրզանց գյուղատեղիից 1 կմ հյուսիս-արևմուտք՝ Տրտուի աջ ափին (սառը) և նույն գյուղատեղիից 2 կմ հյուսիս-արևելք, Տրտուի

2 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 523, ք. 2:

3 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 352, ք. 2:

4 **Եսցիմկո-Խմելակի Ա.**, Նկարագրութիւն Չարեքտար վանքի (նոյն և Խօթա վանք) կալուածքի անտառի (ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 841, ք. 42):

հանդիպակաց երկու ակերին (տաք), Քարվաճառի հյուսիսարևելյան եզրին՝ նախկին *Բոյախլը* գյուղի մոտ՝ Տրտուի աջ ակին՝ երկու տեղ (սառը), մույն գյուղատեղիից 2,7 կմ հարավ-արևելք, Դուռխու գետի ձախ ակին (սառը), Չվար գյուղից 3 կմ հարավ, Բաղանիք արքունականք կամ Ջերմաջուր (թուրք.՝ Իստիսու) առողջարանային ավանի հարավային եզրին (տաք և սառը), նախկին *Ղալաֆալղ* գյուղում (սառը), Ապահեն կամ Տպել (թուրք.՝ Բաշլիբել) գյուղատեղիից 2,5 կմ արևելք (սառը) գտնվող հանքային աղբյուրները:

Ճանապարհներ. Քարվաճառի շրջանում գլխավոր ճանապարհները հիմնականում անցնում են գետահովիտներով և առանձին դեպքերում միայն հատում ջրբաժան լեռնաշղթաները: Որպես կանոն՝ գոյություն ունեցող և համեմատաբար բարվոք վիճակում գտնվող ճանապարհները գործել են առնվազն միջնադարից, իսկ խորհրդային տարիներին դրանք միայն լայնացվել են կամ պատվել կոշտ ծածկույթով (Ջերմաջուր-Դուռխու վանք հատվածը): Ուշագրավ է, որ ընդամենը 1-2 տարի չգործածված նորակառույց բազմաթիվ գյուղամիջյան ճանապարհներն արդեն հասցրել էին իսպառ քայքայվել ու անհետանալ, իսկ երբեմն մույնիսկ հարյուրավոր տարիներ առաջ հայերի կառուցած ճանապարհները (օր.՝ Ծար-Քարվաճառ կամ Քիլսյալի-Դուռխու վանք) այսօր էլ պիտանի են ու անցանելի:

Ի դեպ, ներկայիս շրջանի տարածքով էր անցնում միջնադարյան Հայաստանի հնագույն ճանապարհներից մեկը, որը Սևանի ավազանը միացնում էր Պարտավ քաղաքին:

Վարչաքաղաքական կացությունը. կան աղբյուրագիտական տվյալներ, որոնք առիթ են տալիս կարծելու, թե շրջանի տարածքը ընդգրկված էր Վանի թագավորության կազմում:

Կարևոր մի հանգամանք. ողջ Արևելյան Հայաստանում շրջանն առաջիններից էր, ուր սկսում են տարածվել քրիստոնեական գաղափարները (Ե դարից եպիսկոպոսանիստ Դադի վանքը, ըստ ավանդության, հիմնադրվել է մ. թ. Ա դարի 2-րդ կեսին քրիստոնեական քարոզչության համար նահատակված Թադեոս Առաքյալի յոթանասուն աշակերտներից մեկի՝ Դադի գերեզմանի տեղում)⁵:

Ե-Ջ դարերում շրջանի տարածքը մաս էր կազմում Աղվանից մարզպանության, որը կախում ուներ Պարսկաստանից: Ըստ «Աշխարհացոյցի»՝ շրջանն արդեն իսկ է դարձել Արցախ նահանգի 12 գավառներից մեկն էր՝ Վայկունիք անունով⁶: Նույն դարի կեսերից մինչև Ը դարի վերջերը գավառը ողջ Արցախի հետ միասին հայտնվել էր արաբական տիրապետության ներքո:

Թ դարի սկզբներից սկսում է հզորանալ գավառին տիրող հայ Առանշահիկ տոհմը, որի ներկայացուցիչներն ամենայն եռանդով մասնակցում էին հակաարաբական պայքարին՝ միաժամանակ նորոգելով ու կառուցելով պաշտպանական ամրություններ, բերդեր:

Մինչև մոնղոլների տիրապետության շրջանը Վայկունիք-Ծարի իշխանության ներկայացուցիչները խնամիական կապերով բարեկամացել էին Չաքարյան գորապետների հետ (մասնավորապես Չաքարե և Իվանե իշխանների քույրը՝ Դուփը, ամուսնացել էր տեղի իշխան Հասանի հետ)⁷ և վայելում էին վերջիններիս հովանավորությունը:

5 Միխայիլ Ասոքի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871, հավելված, էջ 33:

6 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 295: Տե՛ս նաև Հայրությունյան Բ., Հայոց Արևելից կողմերի և Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր, հողվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 36:

7 Հովսեփյան Գ., Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Վարչապատ, 1928, էջ 19-20:

ԺԲ-ԺԳ դարերի աղբյուրներում Ծար գավառը հիշատակվում է նաև Վերին Խաչեն անվամբ (օրինակ՝ Դադի վանքի արձանագրություններում):

ԺԲ-ԺԳ դարերում Ծարի կամ Վերին Խաչենի իշխանության սահմանները զգալի ընդարձակվել էին: Թերևս դրան նպաստել էին Իվանե արաբակից, որպես օժիտ, իշխանուհի Դուփի ստացած կալվածքները, որոնք ձգվում էին Սևանա լճի հարավային ակի ողջ երկարությամբ՝ Սողքից մինչև Շողվազա հատվածը⁸: Արևելքում իշխանությունը ձգվում էր մինչև Ականաբերդ: Այս սահմանների մեջ Դուփյան իշխանությունը կարողանում է մնալ մինչև ԺԴ դարի սկզբները: Համենայն դեպս, 1312 թ. Խաչակապի Թարգմանչաց վանքում գրված Ավետարանի հիշատակարանում մատնանշված են վերոհիշյալ սահմանները. «...Գրիգոր իշխան Հայոց՝ տեր և պարոն Փոքր Միւնեաց՝ Հանդաբերդոյ և Ականույ և բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչև ի Շաղուագայ և գաւառք մեր յանուանէ այս է՝ Սոթ Գուլիս և Բերդաձոր և Ըոխանց, Հասկաբակս, Ատրենին, Կալեր, Ուռիաձոր և Խորուագետ, Դանոց և այլ իւրեանց միջոց մագրովմ ի մեր նախնեաց մնացեալ հայրենիք է, իւրեանց չորս սահմանով...»⁹:

Դուփյանների իշխանական տունը մեծ կորուստներ է կրում Լենկ-Թեմուրի՝ 1387 թ. արշավանքի ժամանակ: Բացի այն, որ Ծար գավառի բնակչության մի մասը կոտորվում է, նահատակվում է նաև իշխան Հասանը կնոջ՝ Խոնձայի և որդիների՝ «քաջ ու արի պարոններ» Գրիգորի, Սարգսի, Շանշեի, Ջհանշեի, Աղբուրայի և Շրվանի հետ միասին¹⁰: Այսուհանդերձ, Դուփյան իշխանությունը կարողանում է գոյությունը պահպանել մինչև ԺԸ դարի սկզբները: Այդ ընթացքում արդեն Արևելյան Հայաստանի որոշ գավառներ թափանցած թյուրքական տարրերը ոչ միայն չէին կարողացել մուտք գործել իշխանության սահմաններից ներս, այլև Ծարը, որպես ամուր և պաշտպանության տեսակետից հուսալի մի երկրամաս, կայուն ապաստարան էր դարձել թուրք-պարսկական պատերազմների հետևանքով տեղահանված շատ հայերի համար: Այդպես էր, օրինակ, 1552 թ., երբ Շահ-Թամազի՝ դեպի Արևմտահայաստան կատարած ավերիչ արշավանքի ընթացքում տեղահանված հայերի մի մասն ապաստան է գտնում «ի յաստուածապահ յամուրն Ծար»¹¹:

1603 թ. Դուփյան Հասանի որդի Ջհանշեի սերունդները Շահ-Աբասից ստանում են գավառի վրա օրինական մեկիքության վավերացումը¹²: Ծարի մեկիքությունը կարողանում է պահպանել իր գոյությունը մինչև ԺԷ դարի սկզբները: Այդ ընթացքում նորոգվում են մի շարք բնակավայրերի եկեղեցիները, կառուցվում են նորերը: Մեկիքների նախաձեռնությամբ ստեղծվում են նաև հասարակական նշանակության բազմաթիվ կառույցներ՝ կամուրջներ, աղբյուրներ և այլն: Վավերագրերից և վիճագրերից հայտնի են այդ շրջանի մի շարք մեկիքների անունները: Դրանցից էին, օրինակ, մեծ իշխան Միրզաջանը (հիշ. 1549 և 1552 թթ.)¹³, մեկիք

8 Կարապետ եպիսկոպոս, Նիսբեր հայ մեկիքության մասին, պրակ Բ. Դօփեանք և Մեկիք Շահնագարեանք, Էջմիածին, 1914, էջ 34:

9 Հայերեն ձեռագրերի ԺԴ դարի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 84:

10 Գրիգոր Խլաթեցի, Յիշատակարան աղեկոյց, Վաղարշապատ, 1897, էջ 6: Տե՛ս նաև Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 84:

11 Մանր ժամանակագրություններ, հ. Բ, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 275 (այսուհետև՝ ՄԺԲ, համապատասխան էջերով): Նաև՝ «...ընդ բազմացն մոլորական միաբանով գնացաք ի յամրոցն Ծարայ վանքն ամրացաք, և ի նախախնամողն ամենայնի և ի Սբ. կոյսն Մարիամ եւ ի Մարդոդունեաց խաչն ապալինեցաք...» (Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 5, կազմ.՝ Նորայր եպ. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 374):

12 Յովհաննիսեան Ա., Գեղամայ և Ծարայ մեկիքների տոհմը, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921-1922, էջ 105-113: Տե՛ս նաև Ուլուքաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975:

13 Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 406: Տե՛ս նաև ՄԺԲ, էջ 275:

Բալասանը (հիշ. 1630 թ.)¹⁴, Ջհանգիր բեկը (հիշ. 1676 թ.)¹⁵, մեկը Սիրգախանը (հիշ. 1684 թ.¹⁶, 1701 թ.)¹⁷ Մեկը բեկը (հիշ. 1717 թ.)¹⁸ և այլք¹⁹:

Սկսած ԺԸ դարի սկզբներից՝ ավելի ու ավելի հաճախակի կրկնվող թյուրքական ցեղերի հարձակումներն ու պարսկական ծանր հարկահանությունը դժվարին կացության մեջ էին դրել գավառի մելիքներին և բնակչությանը²⁰: ԺԷ դարի վերջին Ծարի մելիքությունը լուծվում է հարևան Սողքի և Ջրաբերդի մելիքությունների մեջ:

ԺԸ դարի 20-ական թթ. երկրորդ կեսը գավառի՝ դեռևս միատարր հայ բնակչության համար առավել ծանր, անգամ օրհասական ժամանակաշրջան է դառնում: Կովկասյան լեռնականների, մասնավորապես լեզգիների թալանչիական արշավանքներն իրար հետևից հաջորդում էին միմյանց²¹: Մյուս կողմից էլ շրջանի հարուստ արտավաճերին աչք էին դրել Կուր-Արաքսյան տափաստաններին արդեն վաղուց տիրացած, ծագումով թուրք և բուրդ, խաչմարած քոչվոր զանազան ցեղեր: Սրանք իրենց անհամար հոտերով սկսել էին յուրաքանչյուր տարվա ամառային ամիսներին սփռվել գավառի՝ ալպիական գոտու արտավաճերում:

Օրհասին դիմակայելու նպատակով Խամսայի մելիքների օրինակով ազատագրական պայքարի են նախապատրաստվում նաև Ծար գավառի²² հայերը, որոնք իրենց տարածքում ևս ստեղծում են հատուկ գորակայաններ՝ սղնախներ²³: 1720-ական թվականներին գավառի շատ գյուղեր կամաց-կամաց սկսում են պարավել բնիկներից: Հայաթափումն աննախադեպ ու մասսայական չափեր է ընդունում հատկապես 1724 թվականից հետո, երբ հակառակ արցախահայությանը մինչև այդ տված բազմաթիվ խոստումներին՝ կայսր Պետրոս Մեծը Պարսկաստանից նվաճած մերձկասպյան խանությունները Ռուսաստանի համար ապահովելու միտումով Թուրքիայի հետ կնքում է պայմանագիր՝

14 Հայտնեան Ա., Նիսբեր ազգային պատմության, «Արարատ», 1914, Ը, էջ 736:

15 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 406:

16 Յովհաննիսեան Ա., Նիսբեր հայ մելիքության մասին, «Արարատ», 1915, ԹԺԺ, էջ 791:

17 Դիվան հայ վիճակագրության, պրակ III, կազմող՝ Ս. Բարխուտարյան, Երևան, 1973, էջ 332:

18 Նույն տեղում:

19 Գավառի տերերի տոհմածառին առնչվող նյութերը տե՛ս նաև Ափշան Գ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 37:

20 Պատմական հիմքից միանգամայն գուրկ են որոշ հետազոտողների այն պնդումները, թե Քարվաճառի շրջանի ներկայիս տարածքը հայաթափ է եղել ԺԷ դարի սկզբին՝ Շահ-Աբասի կազմակերպած բռնագաղթի ժամանակ (օրինակ՝ Մինոնյան Հ., «Նպատակ» 1995, № 1, էջ 1), Գրիկյան Գ. («Հանդիպում», 1995, № 9, էջ Գ-Ե), Թաղևադյան Զ. («Ազատամարտ», 1993, № 49, էջ 13): Իրականում ԺԷ դարի սկզբին Ծար գավառի բնակչությունը բռնագաղթի չէր ենթարկվել (այն հեռու էր թուրք-պարսկական ռազմական գործողությունների թատերաբեմից): Ավելին, այնտեղ հանգրվան էին գտել բռնագաղթից խուսափած բազմաթիվ հայեր. «Յորժամ եղև զարուհ, այս բարեմիտ և իմաստուն իշխան պարոն Մելիք Շահնազարս, իմացաւ զոյս սրտից Օմար ազգին, հրաման արար երկրիս, թէ «Եկայք մտցուք յամուրս, զի մի՛ լիցուք կոխան այլազգաց» և ինքն զնաց ի Ծար և ի Տպէլ: Եւ որք զհետ նորս գնացին, զերծան ի սրոյ և ի գերութենէ այլազգեաց» (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1974, էջ 218): Հարցի առթիվ ավելի մանրամասն տե՛ս մեր «Հայ մտավորականները և Շահ-Աբասի չգործած հանցանքը» հոդվածը («Հայք», 1995, № 105, 13 հունիսի, էջ 7):

21 1722 թ. կատարված հերթական կործանարար արշավանքներից մեկի մասին պատմում է նաև Եսայի կաթողիկոսը (Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի յօրինեալ ի Տ. Եսայի Աղուանից կաթողիկոս Հասան Ջալալեանց, Յերուսաղէմ, 1868, էջ 37-38):

22 Ի դեպ, արդեն այդ ժամանակներից սկսած օտարների կողմից գավառի համար գործածական էին դարձել Ծարլու, Չառուզիվի կամ Քուլանի անվանումները:

23 Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Երևան, 1972, էջ 151:

վերջինիս արտոնելով ողջ Անդրկովկասում (մինչև Շամախի) վարվել ըստ իր հայեցողության²⁴: Նույն թվականից երկրամասով մեկ սփռվում են օսմանյան բանակները՝ առաջին հերթին պատժելով արցախահայությանը, որոնք իրենց մելիքների գլխավորությամբ և ռուսների աջակցության հույսով համարձակվել էին պայքարի ելնել հանուն անկախության:

Սկսված արտագաղթի ընթացքում որքան ավելի քիչ հայաբնակ գյուղեր են մնում Քարվաճառի ներկայիս շրջանի տարածքում, այնքան ավելի է ծանրանում մնացողների վիճակը, և արագանում՝ նաև վերջիններիս արտագաղթի ընթացքը:

Դեռևս 1725 թ.՝ հանգուցյալ Եսայի կաթողիկոսի փոխարեն նրա եղբորը՝ Գրիգոր վարդապետին կաթողիկոս ձեռնադրելուց հետո, թեմերի առաջնորդներին և իշխաններին հղված ուղերձը (որով գավառի գործակալներին, մելիքներին և գյուղավագներին տեղեկացվում էր կաթողիկոսական փոփոխության մասին՝ խնդրելով առաջվա պես հավատարիմ մնալ Սուրբ Աթոռին)²⁵ վկայում է, որ ի թիվս հարևան Գանձակ և Մաղավուզ²⁶ գավառների՝ «Չարուզիբիրի» («Ծարայ») գավառում նույնպես դեռ այդ ժամանակ գոյություն ունեին հայաբնակ գյուղեր, որով հիմնական գաղթը տեղի է ունեցել 1725 թ.-ից հետո: Հետագա 2-3 տասնամյակների ընթացքում Ծար գավառը գրեթե ամբողջովին հայաթափ է լինում: Ի դեպ, այդ տարիներին աննախադեպ չափերով արտագաղթի է դիմում ողջ արցախահայությունը: Անխտիր գաղթում են բնակչության բոլոր խավերը: Օրինակ՝ Գույուխտանի մելիքները հանգրվանում են Կախեթի Թելավ քաղաքում և Վրաստանի կազմում գտնվող Գուգարքի Բողոմիս գավառում (Բոլմիս): Արտագաղթած հայերով համալրվում են նաև բուն Տիֆլիս քաղաքը և ողջ Քարթլի վրացական բազմաթիվ գյուղեր: Միայն Շաքի և Շիրվան գավառներում արտագաղթած արցախահայերը հիմնադրում են շուրջ հարյուր գյուղ: Ինչ վերաբերում է Ծար գավառի հայերին, ապա սրանց մեծ մասը նույնպես հանգրվանում է Վրաստանում: Մասնավորապես հայտնի է, որ Չիրքին գյուղի հայերը վերաբնակվում են Տիֆլիսում, յանշաղիները՝ Տիֆլիսից ոչ հեռու Տարախսնելիք (այժմ՝ Տարախսնելա գյուղը Գարդաբանի շրջանում) գյուղում, խութավանցիների մի մասը՝ Շուլավերում և այլն:

Արդեն 1760-ական թվականներին շրջանի տարածքը գրեթե լիովին հայաթափ էր՝ բացառությամբ Խութավան գյուղի և երբեմնի եպիսկոպոսանիստ ու թեմական կենտրոն Դաղի վանքի:

1911 թ. շրջանի տարածքում ճանմիտորդած Մեսրոպ մագիստրոսը գրում է. «Բնիկ հայ ազգաբնակչությունը մահմեդական ծով ժողովրդով շրջապատուած, չտոկալով երկար անհուսասար կոնիների և հիսիսի ռուսական «քրիստոնեայ» Պետրոս «Մեծ» կոչւած ցարից խաբուելով, գաղթի դիմեց դեպի այդ ցարի մեծ անապատները, Մոզդուկի ու Դզլարի շրջաններն, ամայի և անմարդաբնակ ձգելով իր բնիկ երկիրը: ԺԸ դարում փոքր չափով կատարվեց այն, ինչ որ անեղիօրէն կրկնեց «մեծ պատերազմին» Հայաստանի մեծագոյն երկրամասի մէջ»²⁷:


ԺԸ դարի 2-րդ կեսից ամայի լեռնաշխարհն ազատ էր քոչվոր ցեղերի առջև, բայց այդ ընթացքում վերջիններս անընդհատ տեղաշարժերի մեջ էին. մասնավորապես ձմռան ամիսներին սրանք լքում էին ամառանոցի վերածած երկրամասի լայնածա-

24 Յովհաննիսեան Ա., Պետրոս դի Սարգիս Գիլանենց, Վաղարշապատ, 1916, էջ 16:

25 ՀԱԳ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 1:

26 ԺԷ-ԺԹ դարերում ներկայիս Քաշաթաղի (Լաշինի) շրջանն առավելապես հայտնի էր Մաղավուզ անունով:

27 Տեք-Մովսիսեան Մ., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դաղի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղէմ, 1938, էջ 84:



Տեսարան Տրտուի հովտի Դադի վանքին հարակցող ձորահովտից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

վալ արտոնները և իջնում Ուտիքի և Առանի (Մուղանի) տափաստանները՝ հաջորդ տարի՝ ձյան քաշվելուց հետո, նորից վեր բարձրանալու մտադրությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաշնարած ցեղերի՝ գավառի տարածք ներթանցելու պահին, թեկուզ սակավաթիվ, այնուամենայնիվ, մի շարք բնակավայրերում դեռևս կային հայ բնակիչներ: Համենայն դեպս, մեզ հասած բազմաթիվ թարգմանված կամ աղավաղված գյուղանուններ դրա ապացույցն են: Չէ՞ որ նորահաստատ խաշնարածները միայն տեղաբնակներից կարող էին իմանալ տվյալ գյուղի անունը, որն էլ հարմարեցնելով իրենց լեզվական հնարավորություններին՝ աղավաղել էին և ըստ իմաստի կամ բառացի թարգմանել: Օրի-

նակ՝ Երիցուշենը թարգմանվել է *Քեշիշքյանդ* (քեշիշ=քահանա, քյանդ=շեն/գյուղ), Իգաձորը՝ *Բադրլու* (բադ=պարտեզ, այգի), Խնձորեկը՝ *Ալմալու* (ալմա=խնձոր), Տրտնոտը՝ *Մոյուղբուլաղ* (սոյուղ=սառը/ցուրտ, բուլաղ=աղբյուր), Ապահենը՝ *Բաշլիբել* (բաշ=գլխավոր/հիմնական, բել=մեջք/հեն, ուրեմն՝ ապահով կամ ապառաժ հենարան՝ Ապահեն), Եզնարածանը՝ *Չովդառ* (չովդառ=անասնաշուկա, անասնապահ), Սևաջուրը՝ *Ղարասու* (ղարա=սև, սու=ջուր), Մրջմանը՝ *Մարջումակ*, Ծարը՝ *Չառ*, Մոսը՝ *Մոգրյանդ* և այլն²⁸:

²⁸ Հարցի առթիվ ավելի հանգամանալից տե՛ս մեր «Արդյո՞ք իսպառ հայաթափ էր Ծար գավառը խաշնարած ցեղերի ներթափանցման պահին» հոդվածը, «Ար», 1995, № 9, 12-19 ապրիլի, էջ 5:



Կարապետ Եպիսկոպոս Այվազյանցի՝ 1874-1875 թթ. կազմված Դաղի վանքի կալվածքների հողաչափական քարտեզը (արտատպված՝ Մատենադարան, գանազան հեղինակների ֆոնդ 38, թղթ. 63, վավ. 27)

1813 թ. շրջանի տարածքը վերջնականապես միանում է Ռուսաստանին, իսկ 1868 թ.՝ վարչականորեն մտնում Ջիվանշիրի գավառի (ուեզդ) մեջ, որն էլ իր հերթին մաս էր կազմում նորաստեղծ Ելիզավետպոլի նահանգի:

Տարածքը Ռուսաստանին միացնելուց հետո կառավարության պահանջով քոչվորների որոշ խմբեր սկսում են կանաչ-կանաչ մշտապես հաստատվել մի քանի գյուղատեղիներում, բայց մինչև 1850-ական թվականները դրանք խիստ սակավաթիվ էին:

Ուշագրավ է, որ Արցախի հոգևորականությունը և առաջին հերթին Բաղդասար մետրոպոլիտը հենց այս շրջանում են սկսում ջանասիրաբար աշխատանք ծավալել հին կալվածագրերով վավերացված Դաղի վանքին պատկանած երբեմնի կալվածքներն օրենքի ուժով քոչվորներից վերադարձնելու ուղղությամբ: Տարիների հետևողական ջանքերը տալիս են իրենց երկար սպասված արդյունքը, և վանքապատկան տարածքներից 140000 դեսյատին հողատարածքը վերստին անցնում է վանքի տնօրինությանը: Այդ կալվածքի տարածքը կազմում էր ներկայիս Քարվաճառի շրջանի մոտավորապես կեսը և Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի արևմտյան սահմանամերձ հատվածները: Ի դեպ, մինչև խորհրդային կարգերի հաստատումը Դաղի վանքը տեղ ու տնօրեն էր այդ հսկայական կալ-

վածքի, որի եկամուտներով և գոյատևում էր: Սակայն 1920 թվականից հետո խորհրդային կարգերի հաստատմամբ և Ադրբեջան անունով հանրապետության ստեղծմամբ իրերի ընթացքը կարող էր փոխվում է: Նախ Դաղի վանքն ամայանում է՝ գրկվելով իր բոլոր կալվածքներից, իսկ նորաստեղծ Քարվաճառի շրջանը միացվում է ոչ թե նույնիսկ ԼՂԻՄ-ին, այլ Ադրբեջանին:

1923 թ. շրջանն ընդգրկվում է վարչական մի նոր միավորի՝ Կարմիր Քրդստանի կազմում, բայց 1930 թ.՝ վերջինիս կազմալուծումից հետո, Քարվաճառն Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության կազմում վերածվում է վարչական 60 շրջաններից մեկի²⁹:

Այդպիսով՝ պատմական Ծար կամ Վերին Խաչեն գավառի տարածքի վրա կազմավորվում է Քյարբաջարը (անունն առել է շրջկենտրոնի վերածված Քարվաճառ հայաթափ գյուղանունից):

1988 թվականից Ադրբեջանի իշխանությունները Քյարբաջարի շրջանը վերածում են Արցախին ֆիկունքից հարվածելու հեռակետի, բայց Արցախյան ազատամարտի հզոր ալիքը հասնում է նաև հայոց հինավուրց Քարվաճառ:

1993 թ. մարտի 31-ին Դաղի վանքի ազատագրումով սկսվում են և հաշված օրերի ընթացքում (ապրիլի 3-ին ազատագրվում է շրջկենտրոն Քարվաճառը) ավարտվում ողջ շրջանի ազատագրման գործողությունները:

Պատմական և նախկին անվանումները, դրանց փոփոխություններն ըստ ժամանակագրության. Քարվաճառի շրջան անվանը հայտնի է վարչատարածքային այն միավորը, որը շնորհիվ ջրբաժան բարձրաբերձ լեռնաշղթաներով բնականից առանձնացած կամ մեկուսացած դիրքի՝ առնվազն վաղ միջնադարից շատ որոշակի սահմաններով ընկալվել է որպես մի առանձին գավառ Արցախի նահանգի կազմում: Վաղ միջնադարի մատենագիր աղբյուրները տարածքը հիշում են Վալկունիք անվանը (Անանիա Շիրակացի, Մովսես Կաղանկատվացի), բայց հետագա դարերում գավառը բազմիցս վկայվել է Ծար գավառ կամ Ծարա երկիր անուններով:

ԺԷ դարի սկզբներից Ծարը կամ Վերին Խաչենն ավելի հաճախակի և մանավանդ օտարների կողմից սկսում է կոչվել Ծարլու կամ Չարուզիբիլ (Չարուզիվիլ) գավառ³⁰: Վերջինս ծագել է իշխանանիստ Ծար (թուրք.՝ Չառ կամ Չար) և մոտակա Ջիբիլ կամ Ջիվիլ (թերևս պատմ.՝ Չուար) գյուղերի անունների միացումից³¹: Այն, ըստ պարսից վարչական բաժանման, Երևանի բեկլերբեկության գավառներից մեկն էր³²:

ԺԸ դարի կեսերից ներկայիս Քարվաճառի շրջանն ավելի հայտնի էր Քուլանի գավառ անունով³³: Մրա ծագումն էլ կապված էր տարածք ներթափանցած քրդական ծագմամբ խաշնարած ցեղերից մեկի՝ քուլանիների անվան հետ:

Հարկ է նշել, որ այդ նույն ժամանակներում, երբ գավառը օտարների կողմից պաշտոնապես մերթ կոչվում էր Չարուզիբիլ,

29 Փաստորեն Քարվաճառի շրջանը համանուն շրջկենտրոնով կազմավորվել է 1930 թվականին, հետևաբար ճիշտ չէ այն կարծիքը, թե Ծար գավառը Քարվաճառ անունով իբր հայտնի էր արդեն ԺԷ դարից սկսած (տես, օրինակ, Ա. Մեթրոնյանի «Քերբաջարի և Լաչինի պատմությունից» հոդվածը, «Հայրենիքի ձայն», 1993, № 12, էջ 6 կամ Հ. Միմոնյանի հետ հարցազրույցը՝ Ինչ են պատմում Քերբաջարի հուշարձանները, «Նպատակ», 1995, № 1, 1 փետր., էջ 1):

30 Չեքի տակ ունենք 1630 և 1725 թթ. հիշատակումները (Հախումեան Ա., նշվ. հոդվ., «Արարատ», 1914, Ը, էջ 736 և ՀԱԳ, ֆ. 57, ց. 1, գ. 4, ք. 1):

31 Համանուն գյուղ կար նաև Մոդքում:

32 Լեռ, Հայոց պատմություն, հ. 3, գիրք առաջին, Երևան, 1969, էջ 56:

33 Չամբո համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Միմոնե կաթողիկոս Երեանց-ույ, Վաղարշապատ, 1873, էջ 283 (այսուհետև՝ Չամբո, համապատասխան էջերով):

մերթ Քուլանի կամ Ջվանշիր, հայկական աղբյուրները բոլոր դեպքերում գործածում էին հնավանդ Ծար գավառանունը:

Բնակչություն. Նոր Շահումյանի (Քարվաճառի) շրջանում հայտնաբերված հնագիտական հուշարձանները վկայում են, որ տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից սկսած: Մասնավորապես Տրտուի կիրճում գտնվող մի շարք բնական քարայրերն օգտագործվել են որպես կացարաններ: Բացի այդ՝ Ջալխա լճի մոտ՝ Այիչինգիլ և Փերիչինգիլ լեռների փեշերին, հսկայական ժայռաբեկորների վրա պահպանվել են մ.թ.ա. Դ-Գ հազարամյակներով թվագրվող իծագրեր (ժայռապատկերներ): Դրանց ոճական և գեղարվեստական առանձնահատկությունները, պատկերների բնույթն ու բովանդակությունը, արվեստն ու կատարման կերպը հար և նման են Վարդենիսի, Գեղամա և Սյունիքի լեռներում պահպանված համանման հուշարձաններին:

Տարածքի՝ միջնադարյան շրջանին վերաբերող բազմաթիվ և տարաբնույթ հուշարձանների՝ մասնավորապես գյուղատեղիների ուսումնասիրությունից պարզվում է, որ հարյուրամյակներ շարունակ՝ ընդհուպ մինչև ԺԸ դարի առաջին քառորդի վերջերը, շրջանի տարածքում գոյություն են ունեցել շուրջ 140 մեծ ու փոքր գյուղեր: Տարբեր դարաշրջաններին վերաբերող հուշարձանների առկայությունը վկայում է, որ շրջանի տարածքում հայ կյանքն ընդհանրապես չի ընդհատվել կամ ընդմիջվել: Այնուհաստ է նաև, որ մինչև ԺԸ դարի 30-ական թվականները գավառի բնակչությունը բաղկացած է եղել բացառապես հայերից: Համենայն դեպս, ըստ մեր ձեռքի տակ եղած խնդիրն առնչվող նյութերի, ինչպես պատմական հուշարձանները, այնպես էլ աղբյուրներն ակնարկ անգամ չեն պարունակում այն մասին, որ մինչև 1730-ական թվականները, բացի հայերից, շրջանի տարածքում եղել են այլ ազգություններ:

ԺԸ դարի կեսերից սկսած՝ արդեն զգալի մասով հայաթափ շրջանը խաշնարած ցեղերի համար վեր է անվում, այսպես ասած, ամառանոցավայրի, իսկ բնիկները, չկարողանալով դիմակայել լեռնականների, թուրքերի և տափաստաններից ամեն տարի գավառի տարածք թափանցող ցեղերի բազմաբնույթ ճնշումներին (հատկապես՝ գերեվարություն և թալան), բռնում են գաղթի ճամփան:

Ավելորդ չենք համարում մեջբերել հայերի համատարած արտագաղթի մասին ուշագրավ մի դրվագի պատմություն, որը գրի է առել բանահավաք, մանկավարժ Սարգիս Քամայանը 1892 թ. Հաթերք գյուղում ծերունագարդ Գյուքի ապոթից. «Է՛, վարժապետ, Խոթայ վանքը³⁴ շատ զարմանալի շէն ու հարուստ է եղել, բայց անիրաւ լեզգիքը թափուրդա արին: Դրանք աներեսի պէս՝ հէնց որ կամ աղն էր պակաս լինում կամ մաղը, վագում էին մեր պապերի մօտ, ու նստում ամիսներով ամեն ինչ պահանջում առօք փառօք վայելում: Վերջը՝ որ յուսահատում են, դրանց ձեռքից ազատուելու համար, խորհուրդ են անում հայ իշխաններն ու մեծերը, այդտեղ լինում է ամբողջ Ջրաբերդին յայտնի Սիպտակ երէցը, որ նրանց երկար խօսք ու զրոյցը կտրում է հետևեալով. «Ամենից լաւ հնարն է, վեր կացէք գիշեր ժամանակ ձեր տներում քնոտած շուն-լեզգիներին կոտորեցէք, որ միանգամ աչքները վախենայ, մեր երկիրը ոտք չկոխեն»: Այս պատուէրը իսկութեամբ կատարեց մեծ մասը, բացի մի քանի վախկոտներից: Լեզգիներին կոտորելու լուրը հասաւ Դաղստան, անթիւ անհամար լեզգիք թափուեցին Խոթայ վանքի մօտերը, ժողովուրդն իւր ընտանիքն առաջ խոր ծմակներն ապաւինեց, իսկ նրանց թողած տներն ու իրերը կրակի բոցերին մատնուեց: Երկար հարցնելուց

յետոյ լեզգիքը իմացան, որ այդ կոտորածը Սիպտակ երէցի (աղքեշիշ) խորհրդով է եղել: Վատասրտի մէկը կաշառում, ցոյց է տալիս Սիպտակ երէցի թագստատէղին, որ լինում է մի հնձան: Լեզգիքը հանում են սրան և կատաղաբար յարձակուելով ջախջախում են քարերով գլուխը և մահացնում: Այդ սոսկալի պատժի ձայնը, երբ լսում են ծմակում պահուածները, վերցնում են ու որդով, դստրով քոչում այս ու այն կողմը: Այն օրից շատ տարիք անցան ու մեր աշխարհը խաղաղ օր չտեսաւ: Խոթայ վանքում Ս. Նշան կար³⁵, մեռնին նրա գօրութեանը, չի երեսում, ո՞վ գիտէ որտեղ են տարել կամ ո՞ր կողմերէ»³⁶: Ամփոփելով Գյուքի ապոր պատմածը՝ Ս. Քամայանը հավելում է. «Անթիւ ժողովրդի հետ դէպի Գեղամայ ծովի կողմերը գաղթում են Ջալալեանց տոհմի անդամներից ոմանք..., իրենց հետ փախցնելով Խոթայ Ս. Նշանը և այլ մասունքներ: Հետզհետէ կրկնուող աւերումների ու սրածուրծների մէջ չեն կարողանում աչք բանալ և Խոթ վերադառնալ, այլ մի տեղից միւսը պանդխտելով այդ Ջալալեան շառաւիղները ս. մասունքները հասցրել են Բորչալու գաւառի Շուլաւէր աւանը: Այս բանը իմ լսածներիս համեմատ (ինձ ասողը Ջալալեանց ազգից էր, որ դեռ այժմ կենդանի է, 86-ամեայ Հեքիմ Խեչօ անունով) պատահել է ԺԹ դարու սկզբին...»³⁷:

Հայերի գաղթից հետո փաստորեն խաշնարած ցեղերի մուտքը դեպի ընդարձակ ողջ լեռնաշխարհ միանգամայն ազատ էր³⁸: ԺԸ դարի կեսերից սկսած՝ վրանաբնակ ցեղերը դեռ միայն ամառային ամիսներին սկսում են հաստատվել հայաթափ շրջանի տարածքում՝ մեծ մասամբ հայերից մնացած գյուղատեղիներում: Ի դեպ, խաշնարած ցեղերի՝ շրջանի արտոններին տիրանալու և այնտեղ հաստատվելու ձգտումը խրախուսում և հովանավորում էին Շուշիում ամրացած խաները: Հենց վերջիններիս ջանքերով էլ ԺԸ դարի 3-րդ քառորդի ընթացքում հայաթափ Ծար գավառում հաստատվում են մահմեդական խաշնարած զանազան ցեղեր. «...Սևանա լճի մոտ, լեզգիները պատահեցին քյուլանի անունով քուրդ թափառական ցեղին, որ գաղթում էր Արարատյան երկրից Ղարաբաղի հյուսիսային լեռնամասերը (1766 թ.-Ս.Կ.): Այս գաղթականությունը կատարվում էր Շուշու Իբրահիմ խանի ջանքերով: Ղարաբաղի նորահաստատ խանության համար կարևոր քաղաքական հարց էր մահմեդական ազգաբնակչություն կազմելը երկրի այն կողմերում, ուր չկար այնպիսի տարր, որը պիտի խանական իշխանության նեցուկը դառնար: Փանահ խանը դավաճանությամբ սողոսկելով զուտ հայաբնակ Խամսայի երկրի սիրտը, շուտ զգաց, որ Շուշու ժայռերը դեռ բավարար հիմք չեն տիրապետություն հաստատելու համար, և նա շտապեց թուրք թափառական ցեղեր գրավել դրսից՝ հարևան խանություններից, խոստանալով նրանց զանազան արտոնություններ: Այսպիսով, Վրաստանից և այլ տեղերից Ղարաբաղ փոխադրվեցին փյուսյան, կարաչարի, ջինլի, դամրչի-հասանլի, դըզըլ-հաջիլի, սաֆի-քյուրդ, բոյ-ահմեդլի, սահաթլի, քենգերլի և այլ շատ թափառական ցեղեր: Հոր օրինակին հետևելով՝ Իբրահիմ խանն էլ ամեն ջանք գործ էր դնում դրսից բերելու նոր մահմեդական տարրեր»³⁹:

35 Ըստ ամենայնի՝ խոսքը Մարդադոնյաց Սբ. Նշանի մասին է:
36 **Քամայանց Ս.**, Խոթայ վանքի Ս. Նշանը, «Արձագանք», 1892, № 111, 25 սեպտեմբերի, էջ 1:
37 Նշվ. հոդվ., էջ 1-2:
38 Ներկայիս Նոր Շահումյանի (Քարվաճառի) շրջանի տարածքից, բացի 1730-50-ական թթ. ընթացքում հայ բնակչությունից, պարպվել էին նաև ներկայիս Քաշաթաղի, Քարիստի և Խանլարի (վերջին երկուսի հարավային կես մասերը), Գետաբեկի և Թռուզի շրջանները, ինչպես նաև Սևանա լճի արևելյան ափը, Գետիկի հովիտը (Միափոր գավառ) և այլ տարածքներ:
39 **Լեռ**, նշվ. աշխ., հ. 3, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 303: Տե՛ս նաև **Джеваншир А.**, О политическом существовании Карабахского ханства с 1747 по 1805 год, Шуша, 1901, с. 11.

34 Իմա՝ Դաղի վանքը:

Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում ինչպես քոլանիները, այնպես էլ խաշնարած թուրք և քուրդ ուրիշ ցեղեր կարողանում են թափանցել հայաթափ երկրամաս, բայց ոչ իբրև նստակյաց մշտաբնակներ:

Ահա թե ինչպես է բնութագրում ժամանակակիցը քոլանի ցեղին. «Քօլանի, – սա մի թիրք տարր է, որ Ջիվանշիրում նույն է անում, ինչ որ աւազակ և թափառական քրդերը Տաճկահայաստանում: Կերպարանքները՝ դաժան, աչքերը՝ արեան ծարավի, ուսերին՝ հրացան, մէջքներին դաշոյն...», քոլանիները ճակատ առ ճակատ կռուողներ չեն...: Չը բաւականանալով գիւղացիներից արած յափշտակութիւններով, քոլանիները երբեմն յարձակվում են և վանքերի վերայ, սպանում վանահայրերին (Եղիշէ Առաքելի վանահօրը՝ օրինակ) և վանքը թալանում...»⁴⁰: Նրանց ձեռքի գործն էր նաև Ջանյաթաղ գյուղի մոտ գտնվող ձիաբուծարանի տնօրեն գերմանացի Վիլմանի սպանությունը:

Այդպիսով, տասնամյակներ շարունակ (մոտ 80-90 տարի) երկրամասը փաստորեն, ի դեմս նշյալ ցեղերի, չուներ նստակյաց, մշտական բնակչություն (ուստի և պատահական չէ, որ ողջ շրջանի տարածքում նրանցից արձանագրված ամենից հին գերեզմանական հուշարձանները, այն էլ եզակի, մի հնավայրում միայն 1790-ական թթ.-ից են. տե՛ս սույն աշխ., էջ 238):

1830-ական թթ. վերջերին, երբ Արցախի հոգևոր առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը մեծ ջանքերի գնով կարողանում է դատական կարգով հաստատել տալ Դաղի վանքի կալվածքների օրինականությունն ու սահմանները, այդ տիրույթներում արդեն հաստատվել էին թափառական շատ ցեղեր (դեռևս ոչ մշտաբնակ): Ի դեպ, ըստ շահած դատի արդյունքների՝ կալվածքների սահմաններում թեկուզ ժամանակավոր հաստատված ցեղերը որոշակի տուրք պիտի վճարեին վանքին: Մետրոպոլիտի՝ վանքից խլած կալվածքները ետ բերելու ուղղությամբ ներդրած ջանքերը ժամանակին համարվել են անհույս և իզուր, բայց հոգևոր առաջնորդը կարողանում է հասնել նպատակին, և Դաղի վանքը սկսում է ստանալ ամենամյա իր եկամուտները շուրջ 140000 դեյալատին հողատարածքի վրա հաստատված խաշնարածներից⁴¹: Յավոք, առաջնորդի մահից հետո (1854 թ.) նրա հետագա տեղապահները չեն կարողանում պահպանել ձեռք բերածը, և կալվածքների մի մասը հետգիտես կրկին անցնում է մահմեդական բեկերի ձեռքը (Մետիդուլի խանի Խուրշիդ դասերը, Դավութ աղա-Աղալարովին և այլոց):

Արդեն 1895 թ. «Թիրք դշլաղներ»-ի թիվն անցնում էր 22-ից, որ կազմում էր 150 տուն:

Ի դեպ, դեռևս 1870-ական թթ. սկզբներին ցարական կառավարությունը մտադրվել էր տարածքից հեռացնել ավազակաբարո վաչկատուն ցեղերին. «...դեռ նախկին փոխարքայի ժամանակից հրամայում է քոլանիներին Ռուսիոյ սահմաններիցը վտարել, բայց դա չէ յաջողվել և կարծես չը պիտի էլ յաջողուի, որովհետև իսկապես դժուար գործ է մի ամբողջ համայնք բռնութեամբ հեռուացնել... իւր ծնավայրից ու բնակավայրից»⁴²:

Այնուամենայնիվ, ստեղծված ծանր պայմաններում էլ մեծ ջանքերի գնով հնարավոր էր վիճակը բարեփոխել: Դա գոնե մասամբ կարողանում է անել վանքապատկան կալվածքների կառավարիչ նշանակված թիֆլիսաբնակ Լևոն Տեր-Ավետիքյանը: 1913 թ. հարցի առնչությամբ փաստաբանի կարծիքը ստանալուց հետո (ուր մասնավորապես նշված էր. «Կոնսիստորիան թույլ է

տուել այրումցիներին օգտուել կալուածից գիւղացիական իրատունքներով, այսինքն հողից եւ արօտատեղերից օգտուելու համար վճարելով որոշ տուրք... այրումցիների Խօտավանքի կալուածից օգտուիլը համարում է ժամանակավոր վարձակալութիւն: Վարձակալութեան ամենաերկար ժամանակը օրէնքով 12 տարուց աւելի չէ, եթէ հաշուենք, որ կոնսիստորիայի տուած վկայականը հաւասար է վարձակալութեան պայմանագրի, ուրեմն օրէնքով համաձայն ժամանակը լրացել է 1896 թուին, որովհետեւ օրէնքով անվերջ պայմանագիր չկայ և որովհետև այրումցիները յիշեալ թուականից յետոյ էլ շարունակել են օգտուիլ հողերից և միշտ էլ վճարել են այդ օգտուելու համար վարձը, ուրեմն պէտք է ընդունել, որ կոնսիստորիան իւր լռութեամբ ամեն անգամ նորոգել է մի-մի տարով յիշեալ պայմանը՝ մինչև այսօր: Այս հանգամանքներում կոնսիստորիան ամեն լոպէ կարող է դատ սկսել թուրքերի դեմ՝ կալուածից հեռացնելու համար...»⁴³ նա ձեռնամուխ է լինում կալվածքից թուրքերի վտարմանը: Արդեն 1914 թ. հուլիսին կառավարիչ Տեր-Ավետիքյանը գրում է. «Յայտարարում են Ս. Մինօղիդ, որ այս տարի շատ չարչարանքներից յետոյ և չափազանց դժուարութեամբ մեզ յաջողուեց խլել քիւրդերից և այրումներից Խօթավանքի հետևեալ եայլաղները. Դիւզիւրտ, Հաճի-դայլու, Գամու-իւրտ, Աղդաշ, Արփա-թալա, Բեհրութ-Ալի-իւրտ, Ահմատխան-իւրտ և կապալով տալ ուրիշներին, բայց այդ ի դիմաց ամբողջութեան մի փոքր մասն է կազմում...»⁴⁴: 1915 թ. մարտի 31-ին նույն կառավարիչ ջանքերով և փոխարքայի հրամանագրով ևս 11 ամառանոց քոչվորներից վերադարձվում է վանքին, որը կապալով 1 տարի ժամկետով տրվում է թուրքերին 2250 ռ. վարձով⁴⁵:

Վանքի եկամուտներն առհասարակ մինչև 1910-ական թվականներն անընդհատ կրճատվել են⁴⁶:

Բազմաթիվ վավերագրեր վկայում են, որ միայն 1850-ական թվականներից հետո շրջանի տարածքում երևան են գալիս առաջին մշտաբնակ ցեղերը, որոնք, իրենց համար բնակության վայրեր ընտրելով հին գյուղատեղիները, անցնում են նստակյաց կենցաղավարության: Հայտնի է, որ 1861 թ. շրջանի ամբողջ տարածքում ապրում էին շուրջ 100 տուն «ալիանյութի բարբարոս քոլանիներ» և կազմում էին 14 փոքրիկ գյուղ⁴⁷: Ավելի վստահելի ու ստույգ է թվում 1865 թ. կազմված մեկ այլ վիճակագրություն, ըստ որի՝ շրջանի տարածքում գոյություն ունեւր ընդամենը 9 նորաստեղծ գյուղ՝ 102 տուն բնակչությամբ⁴⁸:

Ի դեպ, «Սինչև... 84-87 թթ. նրանք (թուրք և քուրդ ցեղերը-Ս. Կ.) իրենց պապերից ժառանգած արհեստովն էին պարապում՝ աւազակութեամբ: Երբ վերջին ժամանակներս կառուարութիւնը ուշադրութիւն դարձրեց դրանց բարբարոսութիւնների վրայ ու զանազան միջոցներով ստիպեց թողնել աւազակութիւնը, սկսել են պարապել գիւղատնտեսութեամբ, բայց միայն Ալլաիը կարող է իմանալ այդ գիւղատնտեսութիւնը: Նրանք միայն պարապում

43 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 968, թ. 1:

44 Նշվ. գործը, թ. 9:

45 Նշվ. գործը, թ. 22: Ի դեպ, կառավարիչը, հանդիպելով քոչվորների բուռն դիմադրությանը, կալվածքները վերադարձնելու նպատակով կիրառում էր նաև այլ եղանակներ: Դրանցից ուշագրավ է, օրինակ, նրա մի մտահղացումը, ըստ որի՝ ծրագրված էր թուրքերից հենց թուրքերի միջոցով հողերը վերադարձնել (1914 թ. 1 տարով Դաղի վանքի «Բեյրութ-Ալի-Յուրտ» ամառանոցը կապալով տրվել էր Գամձակի գավառի Խամքարվենդ գյուղի 4 թուրք բնակիչների), ինչն ի վերջո արդյունք չէր տվել, քանի որ այրում թուրքերը ևս ընդդիմացել էին սրանց դեմ (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 1127, թ. 4): Տե՛ս նաև մեր «Քարվաճառի ազատագրումը սկսվել է 1913 թվականին» հոդվածը, «ՀՀ», 1995, № 52, 13 մարտի, էջ 2:

46 Տե՛ս սույն աշխատության Դաղի վանքի (պատմություն) բաժինը:


47 Վարանդեցի, Թորակցություն, «Նոր-Դար», 1885, № 104, 22 յունիսի, էջ 4:

48 «Արարատ», 1910, Դ, էջ 58:

40 Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», 1885, № 65, 22 օգոստոսի, էջ 3: Նույնի՝ Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010, էջ 39:

41 Տ. (Տիգրան Նազարյան), Տեղեկագիր Դարաբաղի հայոց հոգևոր թեական դպրանոցի LXXV-ամեայ գոյութեան, «Տարագ», 1913, № 7-8, էջ 91:

42 Հայկունի, նշվ. հոդվ., նույն տեղում: Նաև նույնի՝ նշվ. աշխ., նույն տեղում:



Ռադի վանքին պատկանող կալվածքների քարտեզը՝ կազմված 1913 թ. (բնօրինակը պահվում է ՀԱԴ-ում, ֆ. 57, ց. 1, գ. 400, թ. 1)

են անասնապահությամբ, թէև ոչ բառի բուն նշանակությամբ...»⁴⁹:

1905-06 թթ.՝ հայ-թուրքական ընդհարման ժամանակ, կալվածքները սնացել էին բարձիթողի վիճակում, և այդ ընթացքում որևէ կառավարիչ չէր համարձակվում մտնել թուրքերով ու քրդերով բնակեցված վանքապատկան տարածքները: Հասկանալի է, որ Ռադի վանքն այդ տարիներին ընդհանրապես զրկված էր որևէ եկամտուից, մինչև անգամ «ընդհարումների ժամանակ թիրաբերը և քրդերը ձեռնարկել էին հրդեհել անտառները, բայց չէր յաջողուել, միայն ջարդել են մօտ 50.000 ռուբլու ծառեր, որոնք մնում են անտառում քափուած...»⁵⁰: Ի դեպ, 1906 թ. քուլանի ավազակապետ Ասկարխանը, նոր տեսակի հրացաններով զինված 50 քուրդ ձիավորների գլուխ կանգնած, մինչև իսկ մտադրություն է ունեցել հարձակվել հայաբնակ մեծ գյուղերի՝ Հաթերքի և Վանքի վրա⁵¹:

Ամսխիթար վիճակում էր նույնիսկ կալվածքների յուրատեսակ «վարչական կենտրոն» Ռադի վանքը: Հայտնի է, որ 1890 թ. այստեղ ոչ միայն միաբաններ չկային, այլև նույնիսկ վանահայր, և վանքի բազմաթիվ շինություններին տիրացել էր քուլանի ոչխարապահ մի սեփող մոլլա⁵²:

Փաստորեն հայ-թուրքական ընդհարման հետևանքը՝ անիշխան ժամանակահատվածը, թափառական նորանոր ցեղերին բացառիկ հնարավորություն է ընձեռում մուտք գործելու տա-

րածք և նորանոր «ղլաղներ» հիմնելու: 1910 թ. դրանց թիվը հասնում էր 40-ի՝ շուրջ 1000 տուն բնակչությամբ⁵³:

1911 թ. կալվածքներին ծանոթանալու նպատակով շրջանում ճամփորդած Մեսրոպ արքեպիսկոպոսը նշում է, որ նորաբնակ ընտանիքների թիվը հասնում էր 200-ի. «Կալվածքի ընդարձակության մեջ բնակում էին ընդամենը մօտ երկու հարիւր ընտանիք «քուրդեր», փոքրաթիւ ընտանիքներով առանձնացած, իրենց խաշնարածական կեանքով»⁵⁴: Ուշագրավ են նաև արքեպիսկոպոսի այն հիշատակումները, որոնք վերաբերում են առանձին գյուղերի նորահաստատ բնակիչների թվին: Օրինակ՝ Չափնի գյուղի մասին Մեսրոպ արքեպիսկոպոսը վկայում է. «Լեզեի հոսանքով առաջ ընթանալով հասանք մի աւերակ գիւղատեղի, որի մերձակայքում 12 ջրաղացի աւերակներ՝ նախկին բազմաթիւ բնակիչների չափանիշն էր, իսկ այժմ նոյն ընդարձակ տեղերում ապրում է միայն մի բազմանդամ այրում ընտանիք, ամեն տեսակ անասունների մեծ հօտերով, որ օգտագործելով շրջապատի անմարդաբնակ դարձած տեղերը, միջնադարեան աստական իշխանի դիրք էր ստեղծել իր համար, աւելի օգտվելով կալվածքից, քան կալածատեր Ղարաբաղի հայոց հոգետոր իշխանութիւնը կամ Էջմիածնի վանքը»⁵⁵: Նույն 1911 թվականին մոտակա Քեշիշքյանդ գյուղատեղիում էր հաստատվել խաշնարած երեք ընտանիք⁵⁶:

49 Իզգրաշխանց Յ., Մի քանի խօսք Խոթա վանքի մասին, «Նոր-Ղար», 1892, № 15, 29 յունվարի, էջ 2:
50 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1851, թ. 2-3:
51 Չարաքրեկեան Մ., Թղթակցություն, «Մշակ», 1906, № 70, 31 մարտի, էջ 1:
52 «Նոր-Ղար», 1890, № 158, 17 հոկտեմբերի, էջ 1-2:

53 «Արարատ», 1910, Դ, էջ 58:
54 Տեր-Մովսիսեան Մ., նշվ. աշխ., էջ 84:
55 Նշվ. աշխ., էջ 93: Այս մասին որոշակի տվյալներ է պարունակում 1913 թ. մի վավերագիր, որտեղ նշված է Չափնի բնակիչ, տեղական ավագ, այրում Հասան Քերբալայ Ալի օղլին ուներ 2000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն (ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 968, թ. 13):
56 Տեր-Մովսիսեան Մ., նշվ. աշխ., էջ 93-94:

Թափառական ցեղերի մատակերցության անցնելու գործընթացն ավարտվում է միայն խորհրդային տարիներին (մինչև 1930-ական թվականները):

Կարմիր Քրդստանի կազմալուծումից (1930 թ.) անմիջապես հետո դեռևս սակավաբնակ Քարվաճառի շրջանը թուրք տարրով համալրելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները սկսում են իրականացնել մի շարք վերաբնակեցումներ, մասնավորապես այլ շրջաններից դեպի Քարվաճառի տարածք փոխադրել զգալի թվով թուրքերի: Ի դեպ, Ադրբեջանի իշխանությունները մտահոգ էին ոչ միայն շրջանի թուրք բնակչության թվաքանակն ավելացնելու, այլև տեղի քրդերին էլ թուրքացնելու խնդրով: Այդ նպատակով կազմակերպվում են տեղի քրդերի որոշ մասի տեղահանումներ և վերաբնակեցումներ քրդական միջավայրից հեռու՝ այլ շրջաններ: Ինչ վերաբերում է Քարվաճառում մնացած քրդերին, ապա նրանց համար ստեղծվում են այնպիսի պայմաններ, որ ամենակարճ ժամանակում նրանք կորցնեն ազգային նկարագիրն ու ինքնագիտակցությունը: Ի դեպ, զուտ քրդաբնակ էին *Չայիկ*, *Աղջաբյանդ*, *Շուրթան*, *Օրուջու*, *Խալանլի*, *Սոյուդ-բուլաղ* և այլ գյուղեր⁵⁷: Հարկ է նշել, որ տեղի քրդերի դեմ պայքարը սկսվել էր դեռևս 1918-20 թվականներին մուսավաթական կառավարության կողմից, որի քաղաքականությունը որդեգրում են և հետևողականորեն շարունակում «խորհրդային» դիմակիները թաքնված Ադրբեջանի թուրքական իշխանությունները: Սրանց նպատակամղված գործունեության արդյունքն էր, որ 1920-ական թվականների վերջերին Քարվաճառի շրջանում մնացել էր միայն 11 քրդաբնակ գյուղ⁵⁸:

Այնուամենայնիվ, 1918 թ.-ից մինչև 1960-ականների վերջերը հնարավոր չեղավ անել այն, ինչն արվեց 1970-90 թվականներին: Արդեն 1980 թ. շրջանի 1 կմ² վրա բնակչության միջին խտությունը հասնում էր 21 մարդու, իսկ ողջ շրջանն ուներ 122 գյուղական և 2 քաղաքային բնակավայր՝ 40,300 բնակչով⁵⁹, ընդ որում, այլևս միատարր «թուրք» բնակչությամբ, քանի որ բոլոր քրդերը գրեթե վերջնականապես կորցրել էին ցեղային նկարագիրն ու թուրքացել:

Մինչև 1988 թ. շրջանի բնակչությունը շարունակում էր աճել (առավելագույնը՝ շուրջ 42,000), սակայն մինչև 1993 թ.՝ փոքր-ինչ նվազել: Այսպիսով, թուրք և թուրքացած քուրդ բնակչությունը Քարվաճառի (Քյալբազարի) շրջանի տարածք մուտք էր գործել առավելագույնը 250 տարի առաջ և միայն վերջին 130-140 տարին էր վարել մատակյաց կյանք:

Ի վերջո հայտնի չէ, թե հայոց, բայց հայագուրկ այս երկրամասում դեռևս քանի թուրքի գյուղ կամ բնակիչ կավելանար, եթե Արցախյան ազատամարտի հզոր ալիքը 1993 թ. ապրիլին չհասներ այստեղ:

Բնակավայրեր. լեռնաշխարհի բնական պայմանների թելադրմամբ դեռևս միջնադարում գրեթե բոլոր բնակավայրերը հիմնվել են գլխավորապես գետերի կամ դրանց վտակների ափերին, հովիտներում, որպես կանոն՝ մեծագույն մասով ուղղակի կամ գոնե ինչ-որ չափով դեպի հարավ մայր լանջերին: Պաշտպանական նկատառումներով որոշ բնակավայրեր հիմնվել են բնականից դժվարամատչելի տեղերում՝ անշուշտ, հաշվի առնելով ջրի առկայության հանգամանքը:

Նման օրինակ է իշխանամիստ Ծար գյուղը, որը տարածված է ծովի մակերևույթից 2050 մ բարձրության սարահարթի վրա և

57 **Ասատրյան Գ., Գևորգյան Ն.**, Ադրբեջան. յուրացման սկզբունքը եւ իրանական աշխարհը, Երևան, 1990, էջ 19:

58 **Букинан А.**, Азербайджанские курды, Баку, 1932, с. 34-36, 61, 72: Տե՛ս նաև **Սեփրոնյան Ա.**, նշվ. հոդվ., «Հայրենիքի ծայր», 1993, № 12, էջ 6:

59 ԱՄՀ, հ. V, էջ 334:

ծորով հոսող Տրոտու գետի ափից (1730 մ) բարձր է ավելի քան 300 մ:

Քարվաճառի շրջանում գյուղերն իրենց կառուցապատման բնույթով խիստ տարբերվում են և հիմնականում բաժանվում են երկու խմբի: Այն գյուղերը, որոնք գոյացել են հայաթափ գյուղատեղիների վրա, տեղի են տվել արդեն առկա կառուցապատման առանձնահատկություններին՝ հարմարվելով եղածին: Դրանք աչքի են ընկնում ոչ մեծ տարածքի վրա խիտ կառուցապատմամբ, թեկուզ ոլոր-մոլոր, բայց շատ որոշակի փողոցների առկայությամբ, տների և գյուղական այլ շինությունների կառուցման տեղի ընտրությամբ (ոչ թե արգավանդ հողերի, այլ ապառաժների վրա): Հակառակ դրան՝ խորհրդային տարիներին հիմնված թուրքական գյուղերն ունեն անկանոն ու ցրված կառուցապատում: Երբեմն 20-25 տուն ունեցող գյուղը զբաղեցնում էր 1-1,5 քլմ մակերես, լրիվ բացակայում էին փողոցները, մինչև անգամ գյուղերն իրար հետ կապող ճանապարհները: Դրանց փոխարեն յուրաքանչյուր աղբյուրի մոտ առատորեն կառուցված էին ընդարձակ գոմեր, անասնաշենքեր: Այդ տարբերություններն այնքան ակնառու են, որ փոքր-ինչ փորձված յուրաքանչյուր ոք, մտնելով որևէ գյուղ, իսկույն կարող է նկատել՝ այն թուրքե՞րն էին հիմնել, թե՞ «ժառանգություն» էին ստացել արտագաղթած բնիկներից:

Քարվաճառի շրջանի երբեմնի հայկական բնակավայրերի բոլոր անվանումներն ու թվաքանակն ամբողջությամբ հայտնի չեն: Ցավոք, այս գավառի վերաբերյալ մեզ չի հասել այնպիսի համապարփակ մատենագրական աշխատություն, ինչպիսին է, օրինակ, Ս. Օրբելյանի երկը Մյունիքի գավառների մասին, որտեղ անուն առ անուն հիշված են բոլոր գյուղերը: Հետևաբար, որպեսզի գոնե մասամբ լրացրած լինենք այդ բացը, ի մի ենք բերել մատենագրական, վավերագրային և վիճակի բոլոր այն հիշատակումները, ուր տարբեր առիթներով հիշված են գավառի այս կամ այն գյուղը, ազարակը, հանդամասը և այլն: ԺԲ-ԺԸ դդ. թվագրվող այդ հիշատակումների համեմատական և ստուգաբանական ուսումնասիրության շնորհիվ բացահայտվել են որոշ բնակավայրերի պատմական անունները, դրանց հետագա անվանափոխումներն ու աղավաղումները: Սկսած ԺԸ դարի 30-ական թվականներից՝ հայաթափ շենների մեծագույն մասը պարբերաբար անվանափոխվել է: Այդ կերպ շատ հին տեղանուններ մոռացության են մատնվել և փոխարինվել օտարաշունչ տեղանուններով: Լավագույն դեպքում հին անունները մեզ են հասել թարգմանաբար կամ աղավաղումներով, միայն հազվադեպ՝ պահպանել իրենց նախնական, անաղարտ անվանաձևը (օր.՝ Լև, Մոս):

Բավականաչափ պատկառելի ցանկ են կազմում զանազան սկզբնաղբյուրներում վկայված պատմական այն գյուղանունները, որոնց ներկայիս տեղադրությունը դեռևս պարզված չէ: Ցարդ անորոշ են ԺԲ-ԺԸ դարերում հիշված Հավար, Գրիգորաթաղ, Բերդաթար, Ծաղիկանց⁶⁰, Կռապաշտոց, Սոխանանց, Ջաջոռանց, Պետրոսաբակ, Չուրեկյանց, Ողնով, Չագունյանց Ազարակ, Յրագետ, Գուներ, Կաժ, Անուխս, Ծումեն, Քարատակ, Խրանց, Մոթանց, Փոքր Դավաչխուր, Խոզենեկ և Խոզենակուց մեծ ալգի, Մանանաձոր և այլ տեղավայրեր:

Շրջանի ազատագրման նախօրյակին, ըստ պաշտոնական աղբյուրների, Քարվաճառի տարածքում կար 122 գյուղ: Բացառությամբ մի քանիսի (օր.՝ *Չառ*, *Ջըվիդարլի*, *Չայիկ*, *Դըլլի*, *Բաշլիբեկ*), որտեղ յուրաքանչյուրում մինչև 200 տուն բնակիչ

60 Ենթադրում ենք, որ Ծաղիկանցը ներկայիս Չիչակլի լեռան անվանումն է եղել (նկատի ունենք հայերենից թուրքերեն բառացի թարգմանված լինելու հավանականությունը):

կար, մնացած գյուղերի մեծ մասը բաղկացած էր 30-60 տնից: Քիչ չէին նաև այնպիսի «գյուղերը», որոնք կազմված էին մինչև 10 տնից (օր.՝ Ալշալի, Ղուշյուվասի, Օթախլար, Մարրգյունեյ, Օթղշլաղ, Ղազըխանլի, Ղալաֆալղը, Ղալաբոյուն և այլն): Փաստորեն բավականին ընդարձակ շրջանը պատված էր մանր գյուղերի խիտ ցանցով, որոնց՝ միմյանցից միջին հեռավորությունը կազմում էր 3,0-3,5 կմ: Ի դեպ, մի շարք գյուղակներ, որոնք, այնուամենայնիվ, ստացել էին գյուղի կարգավիճակ, իրականում ավելի շատ ունեին գոմեր, քան բնակելի շենքեր:

Ավելի քան երկու տասնյակ գյուղեր ծնունդ են առել 1960-ական թվականներից հետո: Նույն ժամանակամիջոցում էլ զգալի ընդարձակվել են եղածները, իսկ շրջկենտրոնն այդ ընթացքում պարզապես քառապատկվել է իր զբաղեցրած մակերեսով:

Պատմական հուշարձաններն ու նրանց ուսումնասիրությունը մինչև 1920 թ. բռնազավթված և ազատագրված համանուն երկու շրջաններն էլ չափազանց հարուստ են նյութական մշակույթի բազմադարյան և տարաբնույթ մեծաթիվ հուշարձաններով: Նրանց միջև միակ և էական տարբերությունն այն է, որ շրջանի ազատագրյալ հատվածի համեմատ, որտեղ հայ կյանքը լայն հաշվով մարել էր արդեն ԺԸ դարի 2-րդ կեսին, շրջանի բռնազավթված հատվածում նյութական մշակույթի հուշարձաններ կերտվել են նաև նշյալ ժամանակաշրջանից հետո՝ ընդհուպ մինչև 1992 թ. բռնազաղթը: Եթե ազատագրված հատվածում գերեզմանական կամ պաշտամունքային հուշարձանների վերջին մնուշները թվագրվում են ԺԸ դարով, ապա բռնազավթված բնակավայրերում այդպիսիք առատ են նաև ԺԹ-Ի դարերից:

Ինչ վերաբերում է պատմական հուշարձանների խտությանը, նրանց բազմազանությանը կամ ժամանակագրական ընդգրկմանը, ապա, ըստ էության, նրանք բացարձակապես չեն պարունակում որևէ բնորոշիչ այնպիսի մի առանձնահատկություն, որով կարելի էր ընդգծել թեկուզ փոքր, բայց ինչ-ինչ տարբերություններ, ուստի և հարկ է շեշտել, որ վարչական համանուն գույզ շրջաններում առկա նյութական մշակույթի ողջ ընդհանրությունը հայկական մշակութային բազմադարյան ժառանգության հույժ կարևոր և անքակտելի բաղադրիչն է:

Նոր Շահումյանի շրջանի տարածքում պահպանված պատմական հուշարձանների ուսումնասիրությունն առանձնապես հին պատմություն չունի:

Առաջին ուսումնասիրողը Եսայի Հասան-Ջալալյանն էր (1760-ական թթ.)⁶¹, ապա Հովհաննես եպիսկոպոսը, որը, 1830-ական թվականներին այցելելով Դաղի և Գետամիջո (Ծարա) վանքերը, գրի էր առել և հրատարակել մի քանի արձանագրություններ⁶²:

Գրեթե նույն տարիներին մի շարք հնավայրեր այցելելուց հետո բավականին երկար ընդմիջումով (16 տարի) լույս ընծայված երկհատորյակով իր ուսումնասիրություններն է հրատարակում նաև Մարգիս վարդապետ (հետագայում՝ արքեպիսկոպոս) Ջալալյանը⁶³:

1885 թ. գավառի մի քանի հնավայրերին վերաբերող տեղագրական բնույթի շարադրանքն է ներկայացնում Եղիշե ավագ քահանա Գեղամյանը⁶⁴, ապա 1891 թ. հատկապես Դաղի վան-

քում վիճագրական ուսումնասիրություններ է կատարում Խաչիկ վարդապետ Դաղյանը (այդ ժամանակ՝ Վահան սարկավագ), որի ձեռագրերն առ այսօր մնում են անտիպ⁶⁵:

1895 թ. բնագավառին վերաբերող աննախադեպ ծավալի նյութերի ընդգրկմամբ հրատարակվում է երախտաշատ Մակար եպիսկոպոսի մեծարժեք և հայանի աշխատությունը⁶⁶: Ծիշտ է, հանգամանքները թույլ չէին տվել եպիսկոպոսին շատ հնավայրեր այցելել, որի պատճառով նրա գրքի համապատասխան բաժինը սահմանափակված է նորահաստատ թուրք գյուղերի ցուցակի մեջբերումով, սակայն, դրանով հանդերձ, ի մեծ բարեբախտություն հայագիտության, եպիսկոպոսը կարողացել էր այցելել Ծար գյուղ, որով նրան էր վիճակվել լինել այդտեղ գտնված բազում վիճագրերի՝ փաստորեն միակ հրատարակիչը:

Հարկ է նշել 1911 թ. էջմիածնապատկան Դաղի վանքի կալվածքներն այցելած Մեսրոպ մագիստրոսի՝ ճանապարհին հանդիպած գյուղերի ու պատմական հուշարձանների հանգամանակից նկարագրությունները (մի շարք արձանագրությունների վերծանություններով հանդերձ)⁶⁷, որով էլ, ըստ էության, ավարտվում են նախախորհրդային տարիներին կատարված հիմնական ուսումնասիրությունները, եթե նկատի չունենանք նաև ավելի սեղմ մի շարք հրատարակումներ մամուլում⁶⁸:

Խորհրդային տարիներին կատարված ուսումնասիրությունները. 1924 թ. շրջանի տարածքի հուշարձաններն ուսումնասիրել է ռուս հետազոտող-հնագետ Ե. Պլյուխինան⁶⁹: Ավելորդ չէ թերևս մեջբերել նրա տպավորությունը շրջագայությունից. «Բազմաթիվ բնակելի քարայրեր, գյուղերի ավերակներ, բերդապարիսպներ, մատուռներ և եկեղեցիներ խոսում են երբեմնի կյանքի մասին ներկայիս համարյա մարդագուրկ հեռաստաններում: Ցավոք, գերակշռող մեծամասնությամբ այդ բոլոր հուշարձանները ոչ միայն չեն հետազոտվել, այլև անգամ չեն նշվել գրականության մեջ, թեկուզ և հաշվառման կարգով: Այստեղ հոծ զանգվածներով ամենուր սպրող հայերից մնացել են լայնատարած գերեզմանոցներ, որոնք սփռված են թե՛ կիսավեր եկեղեցիների շուրջ, թե՛ առանձին»⁷⁰:

1951 թ. Համազասպ Ոսկյանը նախ հողվածներով, ապա աշխատությամբ հրատարակում է Արցախի վանքերին, այդ թվում նաև Ծարի Գետամիջո և Դաղի վանքերին նվիրված ուսումնասիրություն⁷¹:

Վերջապես 1960-64 թթ. վիճագրագետ Սեդրակ Բարխուդարյանի գլխավորած գիտարշավի շնորհիվ տասնամյակների ընդհատումից հետո Քարվաճառի շրջանի պատմական հուշարձանները վերստին ուսումնասիրության են արժանանում:

Գիտարշավի մասնակիցները կարողանում են արդեն հավաքած և հրատարակած 72 միավոր արձանագրություններին հավելել ևս 35 միավոր նորահայտ արձանագրություն, որով ամբողջ շրջանից հայտնաբերված հավաքածուն կազմում է 107 միավոր: Այդ նյութերը հրատարակվում են գիտարշավը գլխա-

61 **Հարությունյան Ա.**, Եսայի Հասան-Ջալալյանի վիճագրագիտական վաստակը (ըստ ՄՄ հմբ. 7821 ձեռագրի), «Էջմիածին», 2015, Ժ:

62 **Յովհաննու եպիսկոպոսի Շահրիարցոյ** Ստորագրություն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Կ. Բ., Էջմիածին, 1842, էջ 356-365:

63 **Ջալալյանց Ս.**, Գնահատարարություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տիփսիս, 1842, էջ 199-227; մասն Բ, Տիփսիս, 1858, էջ 213-228:

64 **Հայկունի,** նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1885, № 65, 78, 80: Տե՛ս նաև նույնի նշվ. աշխ., էջ 39-40, 69-71, 74-76:

65 ՀԱԴ., ֆ. 319, ց. 1, գ. 5, ք. 23-28:

66 **Բարխուդարյանց Մ.**, Արցախ, Բագու, 1895:

67 **Տեր-Մովսիսեան Մ.**, նշվ. աշխ., էջ 83-99, 103-104:


68 **Ասպետ.** Հայոց վանքերը Ղարաբաղում, «Արձագանք», 1886, № 44, 30 նոյ., էջ 577-578: «Նոր-Դար», 1890, № 158, 17 հոկտ., էջ 3-4: **Ն. Մ. Թանգ.** (Ներսես Մելիք-Թանգյան), Գանձասար և Խոթայ վանքերը, 1891, № 123, 6 օգ., էջ 2-3, № 124, 8 օգ., էջ 2-3: **Իզրաշեանց Յ.**, նշվ. հոդվ., 1892, № 15, 29 յունուարի, էջ 2: **Խ. Վ.** (Խաչիկ վարդապետ Դաղյան), Համառոտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի, «Արարատ», 1896, Ա, էջ 42-43 և այլն:


69 **Пчелина Е.**, Армянские памятники на территории Азербайджанской ССР, Труды Отдела Востока Эрмитажа, Ленинград, 1940, том 30, с. 243-256.

70 Նշվ. աշխ., էջ 243:

71 **Ոսկյան Հ.**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 8-10, 95-112:

ՀԵՐԳ ԵՎ ՅԱՐ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԳՐԾՕՋԱՆՆԵՐԸ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
 Գրչօջախներ
 1417 Ձեռագրի ստեղծման տարեթիվ



վորած Ս. Քարխուդարյանի մահից (1970 թ.) 12 տարի անց՝ 1982 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հովանավորությամբ⁷²:

Ի դեպ, նույն գիտարշավին մասնակցում էր նաև Մեշեղի Նեյմատովան, որն իր հերթին հանդես է եկել առանձին հրատարակությամբ⁷³:

1970-ական թթ. սկզբին Ռաշիդ Գեյուշևը հրատարակում է Դաղի վանքին և նրա արձանագրություններին նվիրված հոդվածներ⁷⁴, ապա և գիրք⁷⁵:

1970-ական թթ. և 80-ականների սկզբներին լույս տեսան բացառապես Դաղի վանքին նվիրված մի քանի հոդվածներ⁷⁶:

72 Դիվան հայ վիճակագրության, սրակ V, կազմող Ս. Գ. Քարխուդարյան, Երևան, 1982, էջ 197-227:

73 Нейматова М., Мемориальные памятники Азербайджана (XII-XIX века), Баку, 1981, с. 31.

74 Геюшев Р., Армянская надпись о построении купольной базилики Хотаванского комплекса, Доклады АН Аз. ССР, 1971, № 2, с. 89-92; Խորվանքի և նրա արձանագրությունների մասին (աղբյուրներեն), Известия АН Аз. ССР, 1972, № 3, с. 65-72.

75 Геюшев Р., Христианство в Кавказской Албании, Баку, 1984.


76 Ուրարթյան Բ., Դաղի կամ Խուրթ վանքը, «Էջմիածին», 1971, Ձ-Է, էջ 62-72: Հասարթյան Մ., Դաղի վանքի համալիրը, «Գիտություն և տեխնիկա», 1981, № 9, էջ 21-25:

1970-ականներին Դաղի վանքի հետազոտողներից ճարտ. Մուրադ Հասարթյանն առաջինն է չափագրում հուշարձանախումբը: Այդ նյութերը հետագայում բազմիցս օգտագործվել են Շահեն Սկրտչյանի աշխատություններում⁷⁷:

Ուսումնասիրություններ 1978-1987 թթ. սկսած 1978 թ.-ից, երբ առաջին անգամ հնարավորություն ունեցանք այցելելու Քարվաճառի շրջան, շուրջ ինը տարվա ընթացքում՝ մինչև 1987 թ., մեր կողմից հետազոտվեցին (չափագրում, լուսանկարում, վիճակագրերի ընդօրինակում և քարտեզագրում) Հանդաբերդը, Չափնի գյուղի հուշարձանախումբը (որի կիսավեր եկեղեցին, ի դեպ, բնակարան էր ծառայում ոմն Ամիրալան Մամետովի համար), նախկին *Ղամշլի* գյուղի հարավային ծայրին՝ Լև գետի ձախ ափին մնացած միջնադարյան միաթռիչք մեծ կամրջի խելը (1980 թ.), որը գետի հետագա վարարումների զոհը դարձավ, Տրտուի աջ ափին գտնվող Սբ. Աստվածածնա վանքը, Երիցուշենի եկեղեցին և այլն:

77 Սկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 34: Նույնի՝ նշվ. աշխ. 2-րդ հրատարակությունը, Երևան, 1985, էջ 38-46: Մկրտչյան Ս., Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1989, стр. 34-39.

ԱՋԱՏԱԳՐԿԱԾ ՆՈՐ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ (ՔԱՐԿԱՃԱՌ) ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



Հարկ է նշել, որ 1980-ական թթ. սկզբներից իրենց «ուսումնասիրություններն» էին սկսել հրատարակել նաև Բաքվի «գիտնականները»՝ մեկը մյուսի հետևից աղվանական պիտակով ներկայացնելով մի շարք հուշարձաններ: Անցած տարիներին ավերել չհասցրածը նոր՝ յուրացման քաղաքականությամբ սեփականացնելու տենդով տառապող այդ «գիտնականները», ինչպես հայտնի է, փորձում էին հատկապես Դաղի և Սբ. Աստվածածնա վանքերը, նաև նախկին Քիլիսա գյուղի եկեղեցին և այլն ներկայացնել որպես իրենց «քրիստոնյա նախնիներից» ժառանգված հուշարձաններ: Խստիվ արգելված էր (անշուշտ, Բաքվի կարգադրությամբ) Հայաստանից այցելուների մուտքը Հանդաբերդ ու Դաղի վանք լուսանկարչական սարքերով: Այդտեղ կարգված պահակների հիմնական պարտականությունն էր հսկել, որ այդ հուշարձաններին հանկարծ որևէ հայ (մանավանդ լուսանկարչական սարքով) չմոտենա:

Այդ տարիներին դաշտային աշխատանքների՝ առանց այն էլ ոչ դյուրին ընթացքն էլ ավելի չբարդացնելու նկատառումով ժամանակին գիտակցաբար ձեռնպահ մնացինք նյութերի տպագրումից: Բայց դրությունը կտրուկ փոխվեց 1988 թ.-ից հետո:

Մոտավորապես նույն տարիներին միայն Դաղի վանքին նվիրված որոշ ուսումնասիրություններ են կատարել նաև օտար հեղինակները⁷⁸:

78 **Thierry J-M., Hasratyan M.**, Dadiavank en Arcax, Revue des Études Arméniennes, t. 15, Paris, 1982. **Cuneo P.**, Architettura Armena, t. 1, Roma, 1988: Gharabagh, Documents of Armenian architecture, t. 19, Milan, 1988. **Thierry J-M., Eglises et couvents du Karabagh, Antélias-Liban, 1991.**

1988 թ.-ից այլևս անհնար դարձավ դաշտային աշխատանքների շարունակումը: Մյուս կողմից վերջապես հասել էր Բաքվի «գիտնականներին» պատասխան տալու ժամանակը, մանավանդ Արցախյան ազատամարտի՝ օրըստօրե հզորացող պայքարի պայմաններում: Այդպես՝ Թոֆիկ Աբդուլլահի մի հոդվածի առիթով 1989 թ. լույս տեսավ մեր՝ համահեղինակային պատասխանը՝ «աղվանական» հայտարարված Սբ. Աստվածածնա վանքի մանրամասն ուսումնասիրությունը⁷⁹:

Այնուհետև լույս տեսան մեր ևս մի քանի հոդվածներ⁸⁰: Ցավոք, մինչև տարածքի ազատագրումը (1989-1992 թթ.) թուրքերը հասցրել էին հիմնահատակ ավերել ևս մի քանի եկեղեցու տասնյակ հայերեն վիմագիր արձանագրություններ (մասնավորապես Սբ. Աստվածածնա վանքում փշրել էին ԺԲ-ԺԳ դարերի՝ պատմական մեծ նշանակություն ունեցող շուրջ մեկ տասնյակ վիմագրեր և գեղաքանդակ արձանագիր խաչքարեր):

Ուսումնասիրություններ 1993-1996 թթ. 1993 թ. ապրիլի առաջին օրերին ազատագրվեց հայոց սրբազան Հայրենիքի կենսական անկյուններից մեկը՝ Ծար գավառը, որտեղ վերջին շուրջ երկու դարերի ընթացքում տարեցտարի սողոսկած օտար տարրն անվերջ և վանդալաբար փորձել էր անհետացնել և այդպիսով

79 **Арутюнян В., Карапетян С., Саркисян Н.**, Монастырский комплекс Сурб Аствацацин в гаваре Цар, «ԼՀԳ», 1989, № 7, էջ 82-92:
80 **Կարապետյան Ս.**, Դաղի (Խուրա) վանքի կալվածները, «Ազատամարտ», 1992, № 15, էջ 14: Նույնի՝ Քյարաջարի շրջանի հայկական պատմական հուշարձանները, «Ազատամարտ», 1992, № 22, էջ 14 (նաև ուսերնում «Առատարտ», 1992, № 7):

ձերբագատվել տանտիրոջ՝ թեկուզ երբեմնի ներկայությունը փաստող նյութական մշակույթի հուշարձաններից կամ յուրացնել հայկական քրիստոնեական ողջ մշակույթը՝ ցինիկաբար այդ ամենն «աղվանական» հռչակելով:

Արդեն մի քանի տարի ընդմիջված ուսումնասիրական աշխատանքների համար նոր և աննախադեպ հնարավորություն էր ընձեռվել, որը և զուգահեռաբար, սակայն միմյանցից անկախ իրականացվեց Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն հնագետ Հակոբ Միմոնյանի գլխավորած արշավախմբի⁸¹ և Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (այժմ՝ ՀՃՈՒ հիմնադրամ) նախաձեռնությամբ:

Հուշարձանների որոնողական և ուսումնասիրման աշխատանքները սկիզբ առան 1993 թ. հունիսին: Մինչև 1996 թ. նոյեմբեր ամիսը պարբերաբար ձեռնարկված բազմօրյա արշավների ընթացքում հետազոտվեցին լեռնաշխարհի գրեթե բոլոր գյուղերն ու գյուղատեղիները, հնավայրերը: Հայտնաբերվեցին նոր հնավայրեր, իսկ հայտնիները նորովի ուսումնասիրվեցին և ամբողջացվեցին եռալեզու աշխատությամբ⁸²:

Ի դեպ, հայկական պատմական հուշարձանների ուսումնասիրությանը զուգահեռ, հետազոտվեցին և հաշվառվեցին նաև շրջանի տարածքում պահպանված ԺԹ-Ի դարերին վերաբերող քրդական և թուրքական ծագմամբ «պատմական հուշարձանները»: Վերջիններս բացառապես դամբարաններ (քյումբազ) և գերեզմանաքարեր (այդ թվում՝ ձիակերպ և խոյաձև) էին: Սրանցից ամենահները, ինչպես նշել էր աղբյուրներից հետազոտողը, 1870-ական թթ.-ից էին⁸³, իսկ ինչ վերաբերում է

մահմեդական հոգևոր ժողովարաններին՝ մզկիթներին, ապա այդպիսիք Քարվաճառի շրջանի տարածքում փաստորեն գոյություն չունեին: Պատճառը շատ պարզ էր. մինչև խորհրդային կարգերը գյուղերն այնքան նստակյաց ծխեր չունեին, որ մզկիթ կառուցելու խնդիր առաջանար: Միակ մզկիթը, որ հիմնադրվել էր 1990 թ. (առավելապես քաղաքական նկատառումներով), այդպես էլ թերավարտ էր մնացել (գտնվում է Դուտխու գետի ձախ ափին՝ նախկին *Ջրվիրդարլը* գյուղից հարավ): Քյումբազ կոչված գմբեթաձև դամբարաններ (առավելագույնը 110-120 տարվա վաղեմության) պահպանվել են Մոս, *Աղյաթաղ*, *Դամրջիդամ*, *Ջամիլլու*, *Սուսրզլըղ* և այլ գյուղերի տարածքում, իսկ կենդանակերպ տապանաքարեր՝ Քարվաճառ քաղաքի, Ծար, *Թրքիշեննդ* և այլ գյուղերի գերեզմանատներում: Ի դեպ, քյումբազներ կառուցվել են նաև խորհրդային տարիներին:

Հարկ է նշել, որ մեր վերջին ուսումնասիրությունների ընթացքում բացահայտվեցին մահմեդական բնակիչներից ավանդված մինչև 1790-ական թթ. վաղեմության գերեզմանական հուշարձաններ (*Թրքիշեննդ*), մինչդեռ աղբյուրներից ուսումնասիրողը, անշուշտ, հակառակ մեծ ցանկության, ավելի հին, քան 1870-ական թթ. վերաբերողները չէր արձանագրել:

Ուսումնասիրություններ 2000-ական թթ. 1997 թ.-ից ի վեր Դադի վանքում սկիզբ առած և ցարդ շարունակվող վերականգնողական աշխատանքներին զուգահեռ իրականացված ուսումնասիրությունների և 2004-2005 թթ. Հանդաբերդում կատարված հնագիտական պեղումների արդյունքներն ամփոփվեցին երկու շահեկան աշխատություններում⁸⁴:

⁸¹ **Միմոնյան Հ., Սանամյան Հ., Գևորգի Ա.**, Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, «Պատմամշակութային ժառանգություն մատենաշար», № 2, Երևան, 2007: **Միմոնյան Հ., Քարվաճառի հուշարձանները**, «Բնօրրան», 1998, № 1-2: **Միմոնյան Հ., Սանամյան Հ.**, Հանդաբերդի վանական համալիրը, «ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան. զեկուցումների թեզեր», Երևան, 1996: **Սանամյան Հ.**, Դադի վանքի կառուցապատման փուլերն ըստ շինարարական շերտագրության, «Հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողով. զեկուցումների թեզեր», Երևան, 2005:


⁸² **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Աղբյուրների բռնակցված շրջաններում, Երևան, 1999: Նաև նույնի՝ Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха, Ереван, 2000. Armenian cultural monuments in the region of Karabakh, Yerevan, 2001.

⁸³ **Էֆենդիև Ա.**, Քարերն են խոսում (աղբյուրներ), Բաքու, 1980:

⁸⁴ **Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.**, Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Երևան, 2009: **Այվազյան Ս.**, Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ., Երևան, 2015:



ՀՈՒՏԽՈՒ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԸ



Դուտխու գետի կիրճը ստորին հոսանքի շրջանում՝ Տրտու (Թարթառ) գետի հետ միախառնվելու տեղից 700 մ վեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Դուտխու գետը սկիզբ է առնում Պել սարի (թուրք.՝ Դալիդաղ, 3617 մ) հյուսիսարևելահայաց լանջերից՝ ծովի մակերևույթից շուրջ 3300 մ բարձրություններից բխող աղբյուրներից: Այն Տրտու (Թարթառ) գետի առավել ջրառատ աջ վտակն է: Ունի մոտ 44 կմ երկարություն և ճանապարհին երկու կողմերից էլ ընդունում է բազմաթիվ մեծ ու փոքր վտակներ: Գետն ընդհանուր առմամբ հոսում է ոչ խորը ձորակով: Առանձին հատվածներում մինչև իսկ ձգվում է լայնահուն հովիտներով, սակայն հոսանքի ստորին հատվածում՝ Տրտուի հետ միախառնման տեղից հազիվ 0,7 կմ հեռու, մոտ 100 մ երկարությամբ և 8-9 մ լայնությամբ մի կտորը հոսում է երկու կողմերից սեղմված և գրեթե ուղղահայաց ժայռապար հրաշագեղ կիրճի միջով:

Գետահովտում սփռված բնակավայրերում կան նրանց յուրաքանչյուրին պատկան տարածքում պահպանված պատմական հուշարձանների ծանոթացումը սկսում ենք Դուտխուի՝ Տրտուի հետ միախառնման տեղից:

Հենց սկզբից մշենք, որ միջնադարյան Տպել գավառին համապատասխանող Դուտխուի ավազանում մինչև 1720-ական թվականները եղել է բացառապես, իսկ մինչև 1780-ական թթ. կեսերը՝ մասնակի հայաբնակ առնվազն 40 գյուղական բնակավայր: Արդեն ԺԹ դարի կեսերից հայաթափի հին գյուղատեղիներից մի քանիսում մշտական բնակություն են հաստատում քրդական ծագմամբ քուլանի ցեղի խաշնարածները:

Խորհրդային տարիներին բնակեցված գյուղերի թվաքանակը կտրուկ ավելանում է և հասնում 34-ի:

Գավառամասում մահմեդական տարրի թափանցման հենց սկզբից, բայց հատկապես խորհրդային տարիներին աղբյուրանական իշխանությունների ծածուկ խրախուսմամբ տևաբար ընթացել է խնդրո առարկա բնակավայրերում գոյություն ունեցող հայկական պատմական հուշարձանների շարունակական և ծրագրված ոչնչացում:

Իհարկե, ժամանակի ընթացքում թեկուզ բեկորների-փշրանքների տեսքով (առավելապես շինանյութի վերածված) ակներևաբար այստեղ ևս շատ հուշարձաններ ի հայտ կգան, բայց գոնե ներկա դրությամբ քանակապես դեռևս էապես զիջում են Լև կամ Տրտու գետերի հովիտներում պահպանված պատմական հուշարձաններին:

ՃՈՒՄԵՆ

Կիրճի նեղ հատվածից 2,5 կմ վեր՝ գետի ձախ կողմում է գտնվում ներկայումս ճումեն վերանվանված նախկին *Ջոմարդ* գյուղը:

Ճումենում պատմական հուշարձաններ չեն պահպանվել, կան նրա ներկայիս բնակիչները դեռևս այդպիսիք չեն հայտնաբերել: Ինչ վերաբերում է Արցախյան ազատամարտի ընթացքում հեռացված նախկին բնակիչներին, ապա վերջիններս



Տրոու և Դուտխու գետերի միջև վեր խոյացած ճումեն (Ձոմարո) լեռը, 1876 մ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

այստեղ մշտական բնակություն էին հաստատել միայն խորհրդային տարիներին:

Նույնն է կացությունը նրանից արևմուտք՝ Դուտխուի ձախ վտակի հովտում գտնվող երեք հին գյուղատեղիներում, որոնք եկվոր խաշնարածներից ստացել էին *Ղարագյունեյ, Նաջաֆալիար և Քիլսյալի* անվանումները: Վերջինիս անունն իսկ (թարգմանաբար նշանակում է եկեղեցուտ) ինքնին հուշում է, որ ինչ-որ ժամանակ այդտեղ եկեղեցի է եղել, սակայն ներկայումս ոչինչ չի պահպանվել:

Ինչ վերաբերում է ճումենից արևելք՝ Դուտխուի աջակողմյան վտակի հովտում գտնվող *Լաշին* գյուղատեղիին, ապա այստեղ էլ, բացի Նովի տափ հայանուն աղբյուրից, երբեմնի բնիկներից ավանդված նյութական մշակույթի հիշատակներ հայտնի չեն: Ի դեպ, Լաշինի՝ բազե թարգմանությունը թույլ է տալիս գյուղը նույնացնել Հավսաթաղի հետ, չնայած վերջինս կարող էր լինել նաև *Ղուշյուվասի* կոչված բնակավայրը:

Գետի հոսանքն ի վեր՝ ևս 4 կմ հեռու (աջ ափին), գտնվում է ներկայումս Հավսաթաղ վերանվանված նախկին Ալմալու գյուղը: Հարկ է նկատել, որ նախկին անվանման բառացի թարգմանությունն է Խնձորուտ: Դժվար չէ կռահել, որ իրականում մենք գործ ունենք գավառամասում ԺԷ-ԺԸ դարերում վկայված Խնձորեկ գյուղի հետ:

ՀԱՎՍԱԹԱՂ (ԽՆՁՈՐԵԿ)

Փոված է մրգավետ հովտում¹: Պատահական չէ, որ այնտեղ հաստատված խաշնարած ցեղերը գյուղանունը թարգմանաբար կոչել են *Ալմալու* (Խնձորուտ)²:

Գյուղի առաջին հիշատակությանը հանդիպում ենք գրիչ Մարտիրոս Խնձորեկցու ձեռագիր Ավետարանում (1653-54 թթ.)³:

Փաստորեն կամայաբար Հավսաթաղ դարձած Խնձորեկում բնիկներից ավանդված հուշարձաններ դեռևս չեն հայտնաբերվել, սակայն վերջին տարիներին բնակիչներից ոմանք, կարծելով, թե բարի գործ են կատարում, հովտի վերին հատվածում գտնվող գյուղատեղիներից մեկի հայոց ավերված գերեզմանոցից այստեղ են փոխադրել գեղաբանդակ մի խաչքար (165 x 80 x 18 սմ): Վերջինիս քիկունքին առկա է ԺԳ-ԺԴ դարերին բնորոշ

1 Տարիներ առաջ վաղուհասցի մի որսորդից լսել էինք, որ Ալմալու և Ղուշյուվասի գյուղերի շրջանում՝ խիտ անտառի մեջ, երկու տեղ պահպանվել են եկեղեցիներ: Դրանք գտնելու հույսով մեր ղեգերումները, սակայն, արդյունք չտվեցին:

2 Ստիպված ենք նկատել, որ պատմական անունը գյուղին վերադարձնելու փոխարեն տրվել է նրա հետ որևէ առնչություն չունեցող Հավսաթաղ անունը: Վերջինս ակներևաբար վերաբերել է խաշնարած ցեղերի կողմից Ղուշյուվասի կոչված հարևան գյուղակին, քանի որ այդ տեղանվան դուշ՝ աղավնի (հավք) հիմքն արտացոլված է հենց Հավսաթաղ տեղանվան մեջ:

3 Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 1056, ձեռ. 3647: Տե՛ս նաև **Մինասյան Թ.**, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 37, 90:



ԽՆՁՈՐԵԿ (ՀԱՎԱՍԱԹԱՂ). գյուղամիջում կանգնեցված խաչքար՝ փոխադրված Աբդուլլաուշաղը գյուղատեղիից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

գրչությանը բազմատող, սակայն խիստ վնասված մի արձանագրություն: Նշմարելի տառերից կամ տառահետքերից, ցավոք, մեզ չհաջողվեց որևէ միտք, անգամ բառ վերծանել⁴:

Բնակչություն. 2015 թ. զուտ հայաբնակ գյուղն ուներ 18 ընտանիք (111 բնակիչ):

Դպրոց. իրանահայ բարերար Շուշանիկ Սարգսյանի ժառանգների նվիրատվությամբ և նրա անունը կրող 2002 թ. բացված հիմնական դպրոցի շենքը կառուցվել է 2003 թ.:

2015/16 ուստարում դպրոցն ուներ 24 սան և 12 ուսուցիչ⁵:

Գյուղատեղիներ. Խնձորեկ-Հավսաթաղի մերձակայքում առկա են բնիկ հայկական անունները հիմնականում մոռացության մատնված և եկվորներից ժառանգված պատահական անուններով հայտնի մի քանի գյուղատեղիներ: Նրանցից *Քիլսյալին*, *Ալչալին* և *Ղուշյուվասին* գտնվում են Խնձորեկ-Հավսաթաղից արևմուտք, իսկ *Օթախլարն* արևելյան կողմում է:

Մահմեդական գերեզմանոց. Խնձորեկից 1,5 կմ հարավ-արևելք՝ Դուտխուի աջ ափով դեպի վեր ձգվող ճանապարհի երկու կողմերում, տարածված է մահմեդական մի գերեզմանոց, որտեղ, բացի մի քանի ռուսատառ քուրբերեն արձանագրություններից,



ԽՆՁՈՐԵԿ (ՀԱՎԱՍԱԹԱՂ). մահմեդական գերեզմանոց (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

առկա են նաև արաբերեն տապանագրեր, ընդ որում, ամենից հինը՝ 1880/81 թթ.: Սրանք կարևոր են այնքանով, որ իրենց գոյությամբ պարզում են խաչնարած թափառական ցեղերի՝ հին հայկական գյուղատեղիներում հաստատվելու և նստակեցության անցնելու, ըստ այդմ՝ նաև իրենց հանգուցյալների արդեն կանոնավոր գերեզմանոցներում ամփոփելու վաղ ժամանակաշրջանը:

4 Խաչքարի ծննդավայրն է պատմական անունը մոռացության մատնված և խաչնարած ցեղերից Աբդուլլաուշաղը անունը ստացած հին հայկական բնակավայրը (սրա մասին տե՛ս սույն աշխ., էջ 231-232):

5 **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.,** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգը (1991-2016 թթ.), հ. 3, Ստեփանակերտ, 2017, էջ 612:



ԽՆՉՈՐԵԿ (ՉԱՎԱՍԹԱՐ). մահմեդական գերեզմանոց (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Պահպանված տապանաքարերից երեքին ընթերցվել է.

1 . 1289 | رحلتو | جماعت من علی ...

Թարգմ. ... Ալի, Ռահաթլու խմբից: 1289 (1880-1881 թթ.):

2 . 1345 ...

Թարգմ.: 1345 (1926-1927 թթ.):

3 . 1357 ...

Թարգմ.: 1357 (1938-1939 թթ.):

Մահմեդական գերեզմանոցից Դուսխուտի հովտով հազիվ 2,5 կմ վեր՝ գետի զույգ ափերին, փոփած է ներկայումս Չվար անունը ստացած գյուղը:

ՉՎԱՐ

Դարեղար հայաբնակ, սակայն ԺԸ դարում ամայացած գավառի կարևոր գյուղերից էր: Նրա նախկին բնակիչները՝ նստակեցության անցած մահմեդական խաշնարած ցեղերը, այստեղ հաստատվել և բնակավայրը *Չլփղարլը* (Չիլփիղարլը) էին կոչել Ի դարի սկզբին և փաստորեն հեռացվել իրենց նստակյաց պատմության նույնիսկ մեկ դարը չբոլորած:

Բնակչություն. 2015 թ. զուտ հայաբնակ գյուղն ուներ 18 ընտանիք (103 շունչ):

Դպրոց. Շահեն Նազարյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1998 թ.: 45 աշակերտով: 2015/16 ուստարում ուներ 20 աշակերտ և 9 ուսուցիչ⁶:

Պատմական հուշարձաններ. Չվարում առկա են ինչպես բուն գյուղից և նրան հարակից տարածքից, այնպես էլ այլ վայրերից հայտնաբերված մի քանի խաչքարեր, որոնք բնակիչների ջանքերով փոխադրվել են դպրոցի բակ:



ՉՎԱՐ. Շահեն Նազարյանի անվան դպրոցի շենքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

⁶ Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 610:


Դրանցից մեկը գտնվել է հենց գյուղից: Այն 1304 թ. մի խաչքարի բեկոր է և պահվում է դասասենյակներից մեկում: Բեկորին առկա եռատող փորագիր արձանագրությունից ընթերցվում է հետևյալը.

S(t)ր ա(ստուա)ծ ողորմի Թոչխաբունին, | 289 (1304):

Հրատ. առաջին անգամ:

Դպրոցի բակում կանգնեցված մեկ այլ խաչքար (111 x 51 սմ) այստեղ է փոխադրվել Մոս գյուղի մերձակայքից: Ըստ ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների՝ այն կարելի է քվագրել Ժ-ԺԱ դարերով:

Թերևս ԺԷ կամ ԺԸ դարերին վերաբերող կանոնավոր ուղղանկյուն եզրագծով մի խաչքանդակ տապանաքար էլ (62 x 20 սմ) գյուղ է բերվել 700 մ հեռավորությունից:



ՉՎԱՐ. խաչքարի բեկոր, 1304 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Եվս մեկ խաչքար էլ բնակիչներն այստեղ են փոխադրել եկվորներից *Աբդուլլատուշարը* անվանված հին հայկական գյուղատեղիից, որը մահմեդական խաշնարածները մի գոմի առջև հարմարեցրել էին իբրև կենդանիներին աղ տալու սեղան: Ներկայումս կանգնեցվել է գյուղապետարանի հարևանությամբ: Ունի 90 x 63 x 23 սմ չափեր և 1240 թ. փորագիր յոթտողանի արձանագրություն.

Ի ք(վին) Չ/Չ/Թ (1240) | անուամբ ա(ստուծո)յ | ես՝ Գրիգոր, կան(գ)նեցի զխաչս մար իմոյ՝ Անիփի(ն), | յաղաթս յիշեց[եք]:

Հրատ. առաջին անգամ:



ԶՎԱՐ. ա) խաչքար. հայտնաբերվել է Մոս օյուղի մերձակայքից, բ) տապանաքար մի տան բակում. հայտնաբերվել է օյուղից 0,7 կմ վեր՝ ծորից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ԶՎԱՐ. խաչքար, 1240 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)




Ներկայիս Ջվար գյուղում պահպանվում է նաև նրա մախկին բնակիչներից մնացած գերեզմանոցը, որտեղ արաբերեն արձանագրություններով առավել հին տապանաքարերը հասնում են մինչ Ի դարի սկզբները (առկա են 1903, 1904 թթ. գերեզմանաքարեր և մեկ դամբարան՝ կառուցված 1957 թ.):

Ջվարից արևելք և հարավ-արևելք՝ աջից Դուտխուի հետ միախառնվող առանձին վտակների հովիտներում են գտնվում խաչնարածներից *Ղարագյունեյ* և *Քեչիլիդայա* (Իծաքար) անունները ստացած գյուղատեղիները, որտեղ բնիկներից ժառանգված հուշարձաններ դեռևս չեն հայտնաբերվել:



ՁՎԱՐ. գերեզմանական հուշարձաններ մահմեդական գերեզմանոցում՝ 1903, 1904 թթ. տապանաքարեր և 1957 թ. դամբարան (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2015 թ.)



0 5 10 15 20 սմ

ՁՎԱՐ. խաչքար, 1240 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Ջվարից Դուտխուի հովտով ևս 3,5 կմ վեր՝ հասնում ենք մի վայրի, որտեղ թե՛ աջից և թե՛ ձախից Դուտխուին են միախառնվում մի-մի վտակներ: Նրանցից աջակողմյան հովտում է գտնվում *Չորման*, իսկ ձախակողմյան ավելի ընդգրկուն և երկար վտակի հովտում՝ *Աբդուլլատուշաղը*, *Ղարաջանլը*, *Աղյաթաղ*, *Ֆաթալիլար* և *Մոս* (*Մոզ*) գյուղատեղիները: Առաջանալով դեպի Մոս բարձրացող ձորակով՝ առաջինը հանդիպում ենք հին և, ըստ երևույթին, զոնե միջնադարում բավականին հայաշատ մի գյուղատեղիի: Ցավոք, նրա պատմական անունը ևս մեզ չի հասել և ներկայումս ծանոթ է սոսկ եկվորներից ստացած օտար՝ *Աբդուլլատուշաղը* անվամբ: Ճիշտ է, արդեն տարիներ շարունակ բնա-



ԱՊԱԳԵՆ (Աբդուլաուշադը). խաչքար, ԺԳ-ԺԵ դդ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

կավայրը պաշտոնապես վերանվանվել է Ապահեն⁷, սակայն այդ նույնականացման համար, ըստ էության, պատմական բավարար հիմնավորումներ դեռևս առկա չեն:

Ինչևէ, առայժմ Ապահենի հետ նույնացվող Աբդուլաուշադը գյուղատեղիում եղել են առնվազն միջնադարից ծնունդ առած հայոց գերեզմանոց, անշուշտ, նաև եկեղեցի և այլ հուշարձաններ:

1993 թ. եկվորներին գյուղից հեռացնելուց հետո ցավալիորեն պարզվեց, որ անցած տասնամյակների ընթացքում վերջիններս արդեն հասցրել էին ոչնչացնել հայկական գրեթե բոլոր հուշարձանները: Համենայն դեպս, մեր օրերում այլևս նշմարելի չէ ոչ միայն եկեղեցու, այլև նույնիսկ գերեզմանոցի տեղը: Միայն գյուղական այս կամ այն շինության որմերում առկա են առանձին խաչքարեր և առավելապես գերեզմանական բնույթի այլ հուշարձաններ: Տների որմերից գտնված երկու խաչքար արդեն իսկ փոխադրվել է այլ վայրեր (տե՛ս Հավաթաղ և Չվար գյուղերի բաժինները): Եվս մեկը (119 x 72 x 22 սմ) մերձաբնակ հայերը դուրս էին բերել մի կառույցի որմից և կանգնեցրել նրա հարևանությամբ: Վերջինիս դիմային հատվածն արդեն բավականաչափ քայքայված է: Գրեթե նույնպիսին է նեղ կողին փորագրված եռաստղ արձանագրությունը:

Խաչքար. նեղ կողին՝ ուղղահայաց դիրքով, փորագիր 3 տող.
.../ս, որ է որդի Գ(հ)(ա)քի Յգակեցի, ս(ուր)ք խաչս յիշադակ Թարկիղերիչին:

Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. Յգակը, ամենայն հավանականությամբ, Գաք (Հկակու) գյուղն է ներկայիս Արցախի Հանրապետության Հադրութի շրջանում:

Ինչ վերաբերում է գյուղի մահմեդական գերեզմանոցին, ապա այստեղ 2015 թ., ռուսատառ արձանագրություններով մի քանի տապանաքարերից գատ, առկա էր նաև արաբերենով արձանագրված երեք տապանաքար: Բոլորն էլ 1900-ական թթ.-ից էին:

Աղյաթաղից 0,7 կմ հարավ-արևմուտք (N 40°04.35.70''; E 46°09.52.20''; ծ. մ. 1883 մ) հողագործական նպատակներով վաղուց հերկված հին գյուղատեղիից մնացել է նրա՝ նույնպես գրեթե ամբողջովին ոչնչացված գերեզմանոցատեղին: Տեղահան վիճակում առկա էր ոճական և զեղարվեստական առանձնահատկություններով թերևս խաչքարերի վաղ շրջանի նմուշներին աղերսվող պարզ գծային լուծումներով անարձանագիր մի խաչքար (121 x 54 x 30 սմ): Տեղում նշմարելի էին նաև անմշակ մի քանի տապանասալեր:

Գյուղի մահմեդականների գերեզմանոցում առկա են 1899/1900, 1903/1904, 1906/1907 և 1908 թթ. արաբերեն արձանագրություններով տապանաքարեր:

⁷ Ըստ որոշ տվյալների բնութային՝ Ապահենը նույնացրել ենք եկվորներից Բաշլիբեկ (Բաշախիլեկ) անվանված գյուղի հետ (տե՛ս սույն աշխ., էջ 240):




ԱՊԱՅԵՆ (Աբդուլլաուշադը). արաբերեն արձանագրություններով գերեզմանաքարեր գյուղի մահմեդական գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

1. Գերեզմանաքար.
 . ۱۳۱۷ / هذا / مرقد / مرسل / بن / ... / ... / ۱۳۱۷ /
 Թարգմ. 1317: Սա է գերեզման ... որդի Մուրապին: 1317 (1899-1900 թթ.):
2. Գերեզմանաքար.
 . ۱۳۲۱ / ... / كل نفس / ذ[ائقة] / الموت هذا مرقد / مرحوم ... / ... / ۱۳۲۱ /
 Թարգմ. Ամեն ոք համտեսելու է մահը: Սա է գերեզման հանգուցյալ ...: 1321 (1903-1904 թթ.):
3. Գերեզմանաքար.
 . ۱۳۲۱ / ... / عبد الله / سنة ۱۳۲۱ /
 Թարգմ. ... Աբդուլլահ, քվին 1321 (1903-1904 թթ.):
4. Գերեզմանաքար.
 . ۱۳۲۴ / ... / سنة ۱۳۲۴ /
 Թարգմ. ... քվին 1324 (1906-1907 թթ.):

Ավերված գերեզմանոցից նույն ուղղությամբ ևս 1,3 կմ հեռու (N 40°04.12.72''; E 46°09.04.14''; ծ. մ. 1736 մ) Մոս բարձրացող ճանապարհի եզրին, պահպանվել է անհետացված խաչքարի մի պատվանդան, որը, դատելով չափերից (106 x 74 x 47 սմ), ժամանակին իր մեջ էր առել մեծաչափ ու հզոր մի խաչքար:

Մոս վտակի հակադիր (աջ) ափին կամ խաչքարի սույն պատվանդանից ուղիղ գծով 670 մ հեռու՝ մի քմբի վրա, դեռևս



ՄՈՍ. խաչքարի պատվանդան (լուս.՝ Ս. Կարապետյանի, չափ.՝ Ր. Քորթոշյանի, 2015 թ.)

գոյատևում է Կարմիր վանք անվամբ հայտնի կիսավեր եկեղեցին (N 40°03.58.26''; E 46°09.25.50''; ծ. մ. 1736 մ):


Կառույցն ունի միանավ թաղածածկ բազիլիկ հորինվածք: Երեսապատված է կոփածո և կիսամշակ ոչ այնքան կանոնավոր քարաշարով: Արևմտյան ճակատից բացված միակ մուտքի բարավորը, որն ընկած է եկեղեցուց քիչ ներքև՝ թեք լանջին, անարձանագիր է: Որմերի հաստությունը 78-80 սմ է: Արտաքին չափերն են՝ 6,90 x 4,83 մ:



Կարմիր վանք անվամբ եկեղեցին հարավ-արևմուտքից և արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)



Կարմիր վանք անվանը եկեղեցու մերթին տեսքը դեպի արևելք և արևմուտք, եկեղեցու մերսում ընկած խաչքարի պատվանդանն ու բլրի արևմտյան լանջով վար սահած բարավորը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



0 3մ

Կարմիր վանք անվանը եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

Ներսում առկա է անհետացված մի խաչքարի տեղահանված պատվանդան: Եկեղեցու ճարտարապետական և կառուցողական առանձնահատկությունները բնորոշ են ԺԲ-ԺԳ դարերին:

Ի դեպ, 1911 թ. ռուսական ռազմական գլխավոր շտաբի կազմած քարտեզում այս եկեղեցին նշված է Կարմիր վանք անվանը (թուրքերեն՝ *Ղզըլվանք*)⁸:

⁸ Изд. Воен. Топ. Отдела Генерального Штаба, 1991 г.



ՄՈՍ. տեսարան գյուղից և գյուղամերձ մահմեդական տապանատուն (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

ՄՈՍ

Գտնվում է Դուտխու գետի ձախակողմյան ջրառատ վտակներից մեկի վերին հոսանքի շրջանում՝ ծովի մակերևույթից 1800 մ միջին բարձրության վրա՝ ալպիական մարգագետինների գոտում:

Մոսը գավառի հայաթափ այն գյուղերից մեկն է, որը ցայսօր հայտնի է իր պատմական անունով (եկվորները փոքր-ինչ աղավաղված կոչում էին Մոգբյանդ): Ապահեհի նման հայտնի է որպես գրչօջախ: Այստեղ 1653-54 թթ. գրիչ Մարտիրոս Խնձորեկցու և ծաղկող-կազմող Մովսես երեցի համատեղ աշխատանքով ստեղծվել է մի ձեռագիր Ավետարան (ստացող՝ Թադեոս Բախիշեցի)¹: Մոսը կրկին հիշվում է ԺԸ դարի կեսին Դաղի վանքի կալվածացուցակում²:

Գյուղի հատակագծային առանձնահատկությունները, հատկապես խիտ կառուցապատումն ու ակնհայտորեն հնամենի փողոցների առկայությունը վկայում են, որ այն հին բնակավայր է՝ ձևավորված միջնադարում: Երբեմնի բնիկներից, սակայն, ներկայումս մեզ է հասել միայն 4-5 հողմահար խաչքար՝ գետեղված գյուղի հարավարևմտյան կողմի անասնագոմերի հատակին և դռների առջև:

Մոսից հարավարևմտյան ուղղությամբ 1 կմ հեռու՝ քրդական փոքրիկ գերեզմանոցում, կանգուն է անմշակ քարով, բոլորաձև հատակագծով ԺԹ դարի վերջին կամ Ի դարի սկզբին կառուցված քրդական մի տապանատուն (քյումբազ): Նմանատիպ, բայց արդեն խորհրդային տարիներին կառուցված տապանատներ էլ առկա են գյուղի արևելյան եզրի գերեզմանոցում:

Այս հուշարձանները պատկանում էին միայն Ի դարասկզբին գյուղում մշտական բնակություն հաստատած (դրանից առաջ Մոսն ամառանոց էր) մահմեդական խաչնարած ցեղերին:

Դուտխուի վերոնշյալ գետային խաչմերուկից 1-1,5 կմ ավելի վեր՝ գետափից շուրջ 200 մ բարձր դիրքերում, գետեղված են երկու գյուղատեղիներ՝ աջակողմյանը՝ *Չոբանքերահմեզ*, իսկ ձախակողմյանը՝ Ասրիկ անուններով: Վերջինս աչքի է ընկնում խիտ և թուրքական կենցաղավարությանը բոլորովին խորթ կառուցապատմամբ, որից էլ բխում է միայն մի հետևություն. Ասրիկը ձորահովտի՝ դարերի ընթացքում կառուցապատված հայոց հին և ուրույն գյուղերից էր, որի հատակագծային առանձնահատկությունները ցայժմ մատնում են իրականությունը: Ի դեպ, ըստ թուրքական պատմագրության՝ այս գյուղն իբրև թե հիմնա-

դրել են Թովուզի շրջանի Էսրիկ Ջրդախան գյուղից եկած չորս եղբայրներ³:

Քիչ ավելի վեր՝ Դուտխուին ձախից միախառնվում է Սևջուր (թուրք.՝ Ղարասու) վտակը: Վերջինիս հովտում գտնվող երկու՝ *Աղջաքյանդ* և *Օրուջլու* գյուղատեղիների տարածքից դեռևս հայոց հիշատակներ չեն հայտնաբերվել:

Սևջրի միախառնման տեղից Դուտխուի հովտով ևս շուրջ 4 կմ վեր բարձրանալով (գետի ձախ կողմում՝ ետևում թողնելով մի սեղմված ձորակի մեջ գտնվող *Չարքուլու* գյուղատեղին)՝ հասնում ենք այն վայրին, որտեղ գետն արևելքից իր մեջ է առնում բավական ջրառատ մի վտակ: Վերջինիս հովտում միայն երկու գյուղատեղիներ են՝ հայտնի *Ղազրխանլը* և *Ղալաքոյուն* անուններով: Գետախառնուրդ այս վայրին կից, որը նշանավոր է նաև որպես ճանապարհային հանգույց, գտնվում է Թրքիչենդ գյուղատեղին:

ԹՐՔԻՇԵՎԵՆԴ

Չույզ վտակների միախառնման վայրին կից գտնվող գյուղատեղին վստահաբար նշանավոր բնակավայրի համարում է ունեցել նաև նախքան հայաթափվելը, սակայն արդեն ԺԸ դարի վերջերից այստեղ յուրաքանչյուր տարվա ամառային ամիսներին հանգրվանող քոչվոր մահմեդականները, ժամանակի ընթացքում անհետացնելով հայերից ժառանգված պատմական հիշատակները, փաստացի հեղինակել են ողջ շրջանի տարածքում նյութական մշակույթի իրենց առավել հին հուշարձանները: Համենայն դեպս, ի դեմս գյուղատեղիի գերեզմանոցի և մասնավորապես այնտեղ պահպանված արաբերեն արձանագրությամբ խոյաձև մի տապանաքարի, կարող ենք նշել, որ չնայած այս վայրում հանգրվանած խաչնարածները նստակեցության անցան միայն ԺԹ դարի վերջերին, այնուամենայնիվ, իրենց թափառական կյանքի օրոք իսկ արդեն այստեղ ունեցել են գերեզմանոց, որտեղ էլ ամփոփել են տարվա ամառային շրջանում վախճանված իրենց ցեղակիցներին:

Նշյալ գերեզմանոցում պահպանվել են մի քանի տասնյակ հուշարձաններ (այդ թվում՝ ԺԹ դարավերջին կամ Ի դարասկզբին կառուցված ուղղանկյուն հատակագծով կիսավեր մի տապանատուն): Վերջիններիս մեծ մասի արձանագրությունները ռուսատառ են և փաստորեն վերաբերում են խորհրդային ժամանակաշրջանին, սակայն առկա են նաև մի քանի արաբերեն տապանագրեր, ընդ որում, դրանցից մեկը՝ եզակիորեն հին

1 Յուզակ ձեռագրաց, հ. Ա, էջ 1056, ձեռ. 3647: Տե՛ս նաև Մինասյան Թ., նշվ. աշխ., էջ 37, 90:

2 Չամբռ, էջ 283:

3 İsmayilov P., Kəlbəcər Rayonunun Yer-Yurd Adları, Bakı, 2012, s. 62.



Թրքիշենդ. մահմեդական գերեզմանոցը, կիսավեր տապանատուն և ժՁ-ժԹ դդ. տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



Թրքիշենոյ. խոյածև տապանաքարեր, ԺԹ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Թրքիշենոյ. խոյածև տապանաքար, 1798/99 թթ., տապանաքարեր, 1889/90 և 1935/36 թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ., գրչ.՝ Ռ. Քորթոշյանի, 2018 թ.)



ԿՈՂՐԻ. համանուն բերդասարի հյուսիսարևմտյան հատվածը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

ողջ շրջանում առկա համանման հուշարձանների շարքում: Ահա դրանք.

1. Խոյատապան.

صاحب | اقاخان | ولد | قاركان | سنة ١٢١٣.

Թարգմ. Այս գերեզմանի տերը Գարթանի որդի Ագախանն է: Թվին 1213 (1798-1799 թթ.):

Ծանոթ. ընթերցումն ըստ Բ. Քորթոշյանի: Հրատ. առաջին անգամ:

2. Գերեզմանաքար.

مر | حوم | حسين ابن | حاجي رحمة | الهارح | سنة ١٣٠٧.

Թարգմ. Հանգուցյալ Հյուսեյն՝ որդի հաջի Ռահմե Ալիարեղ (°): 1307 (1889-1890 թթ.):

Ծանոթ. ընթերցումն ըստ Բ. Քորթոշյանի: Հրատ. առաջին անգամ:

3. Գերեզմանաքար.

كل | من | عليها فان | و...ردا | كريم | سنة ١٣٥٤.

Թարգմ. Ամեն ինչ անցողիկ է: Ու...րդա Քարիմ 1354 (1935-1936 թթ.):

Ծանոթ. ընթերցումն ըստ Բ. Քորթոշյանի: Հրատ. առաջին անգամ:

Թրքիչևենդ գյուղատեղիից դեպի հարավ-արևելք բացվող ձորակում, ինչպես արդեն նշվեց, երկու գյուղատեղի կա: Սրանցից նշանավորը եկվորներից Ղալաբոյուն հորջորջված պատմական Կողրի կամ Կողուր (նաև՝ Կոտոր) գյուղն էր:

ԿՈՂՐԻ


Գյուղի առաջին վկայությունը 1259 թ.-ից է: Վերջինս առնչվում է ծնունդով կողրեցի Հովհաննես երեցի՝ Դադի վանքին կատարած մի նվիրատվությանը¹:

Խաչնարածներից առավելապես Կոթուր կամ Ղոթուրլի անուններով հայտնի գյուղը, ի պատիվ հարևանությամբ գտնվող բերդի, կոչվել է նաև Ղալաբոյուն:

Գյուղից ընդամենը 700-800 մետր դեպի հյուսիս-արևելք՝ շրջապատի նկատմամբ առանձնացած լեռան գագաթին (ծ. մ. 2149 մ) է գտնվում Կողրի կամ Կոտոր բերդը², որը, սակայն, գյուղից մոտ 400 մ ավելի բարձր է: Բերդասարի գրեթե հարթ գագաթն արևելյան, հարավային և մասամբ նաև արևմտյան կողմերից շրջապատված է գահավեժ ժայռերով, սակայն ուղղանկյուն աշտարակներով հզորացված մինչև 280 մ երկարություն ունեցող պարսպապատը ձգվում է ոչ թե ժայռերի գլխով, այլ նրանից 80-100 մ ավելի հեռու, բայց և ավելի բարձր դիրքով:

1 Դիվան հայ վիմագրության, Արցախ, պրակ V, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 204 (այսուհետ՝ Դիվան, V, հմպ. էջերով): Տե՛ս նաև Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 112 (այսուհետ՝ ՀՄՀԽԱԲԸ, համապատասխան էջերով):

2 Մեզանից առաջ՝ 1996 թ., այս բերդում եղել է Հ. Սիմոնյանի գլխավորած արշավախումբը (Միմոնյան Հ., Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, «Պատմամշակութային ժառանգություն մատենաշար», № 2, Երևան, 2007, էջ 6-7): Սակայն, չգիտես ինչու, բերդը 1259 թ.-ից վկայված կից գյուղի անվամբ կոչելու փոխարեն Հ. Սիմոնյանն այն կնքել է ԺԷ դարի սկզբների դեպքերի առնչությամբ վկայված գավառամասի՝ Տպել անունով:



ԿՈՂՐԻ. դրվագներ համանուն բերդի դարպասին հարակից պարսպապատերից (լուս. և չափ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ., գրաֆիկական մշակումն ու հրատարակության պատրաստումը՝ Ա. Յակոբյանի)

Պահպանված հատվածներում պարսպապատերի առավելագույն բարձրությունը 1,5 մ է: Շարվածքն իրականացված է տարբեր չափերի կիսակուփ, բայց առավելապես ուղղանկյունաձև քարակտորներով: Ինչ վերաբերում է շաղախին, ապա կան այն ցածրորակ լինելու պատճառով ժամանակի ընթացքում քայքայվել ու լվացվել է, կան ի սկզբանե չի էլ եղել (համենայն դեպս, պարսպապատերի տեսանելի հատվածներում շաղախի հետքեր չենք նշմարել):

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ հուշարձանը կարելի է թվագրել վաղ միջնադարով կամ նույնիսկ անտիկ շրջանով:

Թրքիշենդից Դուտխուի հոսանքն ի վեր 2,5 կմ անց՝ գետի ձախ հարավահայաց ձորալանջին է խաշնարած ցեղերից *Ղարախանչալի* կոչված գյուղատեղին: Նրանից էլ 1,5 կմ հյուսիսարևմուտք՝ ավելի բարձրում, համանման մեկ այլ գյուղատեղի է՝ *Ալրգալար* անվամբ:

Ղարախանչալիից Դուտխուի հոսանքն ի վեր ևս 2,5 կմ՝ հասնում ենք գետի հերթական, բայց, ըստ էության, նաև վերջին ճյուղավորմանը, ընդ որում, հարավից կամ աջ կողմից Դուտխուն ընդունում է վերջին (իհարկե, ակունքի կողմից դիտարկելիս՝ առաջին) Եզնարածանց վտակը: Եթե զանց առնենք եկվորներից *Շահքյարամ* անունը ստացած աննշան գյուղատեղին, ապա այս ձորակի միակ և համեմատաբար ավելի կանոնավոր գյուղատեղին նույնպես եկվորներից ժառանգված անվամբ *Չովդարն* է: Ինչ վերաբերում է բուն Դուտխուին, ապա հիշատակված ջրախառնուրդից վեր՝ գետահովտում, առկա է միայն երկու գյուղա-

տեղի՝ *Խալանլի* (1763 թ. կալվածագրում վկայված է *Դավալ-խուր*³ անվամբ) և *Բաշլիբեկ* անուններով:

ԱՊԱՀԵՆ ԵՎ ԵԶՆԱՐԱԾԱՆՑ

Առաջին անգամ հիշատակվում են 1214 թ. Դաղի վանքի շինարարական արձանագրության մեջ՝ որպես վանքին հատկացված և այնուհետ նրա սեփականությունը համարվող գյուղեր. «...եւ սահմանք ժառանգութիւն սուրբ եկեղեցոյս գեօղս եւ ագարակս իւրեանց սահմանօքն՝ զԱպահեն և զԵզնարածանց...»¹:

Դարձյալ որպես վանքապատկան գյուղեր՝ Ապահենն ու Եզնարածանցը հիշվում են ԺԴ դարի մի փաստաթղթում²:

Հետագա դարերում, ի տարբերություն Եզնարածանցի, որի մասին աղբյուրներն այլևս լռում են, Ապահենը շարունակում է հիշատակվել: Մասնավորապես 1652 թ. այս գյուղի եկեղեցում գրիչ, ծաղկող և կազմող Մովսես Գորիսեցու ստեղծած ձեռագիր Ծարակնոցի հիշատակարանում նշվել է. «...ի յերկիրն Ծարայ, ի գեօղն որ կոչի Ապահեն»³:

1659 թ. մեկ այլ ձեռագրի հիշատակարանում էլ նշվել է. «...Յոհանէս իրիցուկս, որ եմ ի գեղջէն Ապահինու...»⁴:

Ապահենը միևնույն անփոփոխ անվամբ հիշատակվում է նաև Դաղի վանքի 1763 թ. կազմված կալվածքների հայտնի ցուցակում⁵: Հետագայում՝ հայությունից պարպվելուց հետո, Ապահենը մոռացության է մատնվել այն աստիճան, որ նույնիսկ հարցական է դարձել նրա տեղադրությունը⁶, և սա այն դեպքում, երբ դատելով հիշատակությունների առատությունից՝ Ապահենը, ըստ ամենայնի, եղել է գավառամասի առավել հայտնի և նշանավոր բնակավայրը:

Այստեղ հարկ է նկատել, որ գետի վերին հոսանքի շրջանում գտնվող *Բաշլիբեկ* (նաև *Բաշտիբեկ*)⁷ գյուղը, որն իր օտար անվան նախկին տարբերակում, ըստ էության, պահել է Դուտխուի ավազանն ընդգրկող ԺԷ դարում վկայված Տպել գավառի⁸ ան-

վանումը (թարգմանաբար մեծ կամ գլխավոր Տպել), իրապես այդ գետահովտի գլխավոր բնակավայրն էր⁹:

Կարծում ենք, որ Բաշլիբեկի Բաշտիբեկ անվանաձևը վկայություն է այն իրողության, որ Դուտխուի հովտի գլխավոր բնակավայր Ապահենն ու շրջանադարում զուգահեռաբար հանդես է եկել նաև Տպել անվամբ՝ որպես համանուն գավառակի վարչանիստ իր վրա տեղայնացնելով գավառանունը:

Ապահենը գտնվում է ծ. մ. 1900 մ միջին բարձրության վրա և փռված է (հատկապես հին թաղամասը) Դուտխու գետի ձախ՝ հարավահայաց ձորալանջին: Հակառակ գյուղի պատմական հարուստ անցյալին՝ այստեղ հայկական հետքեր գրեթե չեն պահպանվել:

Գյուղից 4,5 կմ հյուսիս-արևմուտք՝ մի նորոգված աղբյուրի պատի մեջ, ագուցված է ակնհայտորեն որևէ քանդված եկեղեցուց մնացած սրբատաշ երեսապատի անկյունաքար:

Մի վկայության համաձայն՝ այս գյուղի եկեղեցին իբրև թե կանգուն է եղել մինչև Ի դարի վերջերը¹⁰, սակայն 1993 թ. կառույցի նույնիսկ ավերակները գոյություն չունեին:

Ինչ վերաբերում է Եզնարածանց գյուղին, ապա Դաղի վանքի 1214 թ. արձանագրության հիշատակման ձևակերպումից կարելի է ենթադրել, որ վերջինս Ապահենին հարևան բնակավայրերից էր. համենայն դեպս, պետք է գտնվեր նրանից ոչ շատ հեռու: Այստեղ ուշագրավ է, որ Ապահենից 4 կմ հարավ-արևելք՝ Դուտխու գետի աջ ջրառատ վտակներից մեկի ձախ ավազանում, ուր վերջանում են նոսր անտառները, և սկսվում են ալպիական հարուստ արոտավայրերը, գտնվում է *Չովդար* անվամբ գյուղատեղին: Համոզված ենք, որ հենց սա է պատմական Եզնարածանցը, որի անունը տվյալ դեպքում պարզապես ենթարկվել է բառացի իմաստային թարգմանության (Եզնարածանց=եզներ արածեցնելու տեղ կամ արածեցնող, չովդար=անասնապահ, նաև՝ անասնավաճառ):

3 Ջամբո, էջ 283:

1 **Հարությունյան Ա.**, Եսայի Հասան-Ջալալյանի վիճագրագիտական վաստակը (ըստ ՄՄ հմր 7821 ձեռագրի), «Էջմիածին», 2015, Ժ, էջ 127 (այսուհետ՝ **Հասան-Ջալալյան Ե.**, համապատասխան էջերով): Տե՛ս նաև Դիվան, V, էջ 199:

2 **Հասան-Ջալալյան Ե.**, էջ 129: Տե՛ս նաև Դիվան, V, էջ 216:

3 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, Երևան, 1984, էջ 488-489 (այսուհետ՝ ԺԷԳ, համապատասխան էջերով): Տե՛ս նաև **Սիմայան Թ.**, նշվ. աշխ., էջ 37, 90:

4 ԺԷԳ, էջ 865: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, Երևան, 2012, էջ 769-772:

5 Ջամբո, էջ 283:

6 Ճիշտ է, արդեն տարիներ են, որ Դուտխուի միջին հոսանքի շրջանում գտնվող և խաշնարածներից Աբդուլլաուշադը հորոքոված գյուղատեղը պաշտոնապես ստացել է Ապահեն անունը, սակայն, ըստ ամենայնի, դա տեղի է ունեցել առանց այդ նույնականացումը հաստատող գիտական հիմնավորումների:

7 *Кавказский календарь на 1910 г.*, ч. 1, Тифлис, 1909, с. 200.


8 **Հակոբյան Ա., Սիմոնյան Հ.**, Դաղիվանքի նորահայտ արձանագրությունը և Տպելի տեղադրության հարցը, «ՊԲՀ», 1998, № 1-2, էջ 227-231:

9 Նախկինում անդրադառնալով բնակավայրի՝ միայն առաջին տարբերակի իմաստային բացատրության խնդրին՝ նշել էի հետևյալը. «Ապահենը՝ Բաշլիբեկ (բաշ=գլխավոր/հիմնական, բել=մեջք/հեն և ուրեմն՝ ապահով կամ ապաստած հենարան՝ Ապահեն)» (ՀՄՀԽԱԲԸ, էջ 13):

10 **İsmayilov P.**, նշվ. աշխ., էջ 45:



ԼԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԸ



Լև գետի կիրճը ստորին հոսանքի շրջանում՝ Տրտու (Թարթառ) գետի հետ միախառնվելու տեղից 4 կմ վեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1998 թ.)

Լև գետը սկիզբ է առնում Մռավի լեռնաշղթայի արևմտյան ծայրին գտնվող Մեծ Հինալ լեռան (3367,5 մ) հարավահայաց փեշերից՝ ծովի մակերևույթից ավելի քան 3000 մ բարձրություններից բխող աղբյուրներից: Տրտու (Թարթառ) գետի առավել ջրառատ ձախ վտակն է:

Ունի մոտ 33 կմ երկարություն և ճանապարհին երկու կողմերից էլ ընդունում է ևս մի քանի մեծ ու փոքր վտակներ: Գետն ընդհանուր առմամբ հոսում է ոչ խոր ձորակով: Առանձին հատվածներում մինչև իսկ ձգվում է լայնահուն հովիտներով, սակայն հոսանքի ստորին հատվածում՝ Տրտուի հետ միախառնման տեղից հագիվ 1,5 կմ հեռու, շուրջ 200 մ երկարությամբ մի կտորը հոսում է երկու կողմերից սեղմված և գրեթե ուղղահայաց ժայռապար հրաշագեղ մի կիրճի միջով (այս իմաստով Լևը մնանվում է Դուտխուլին):

Գետահովտում սփռված բնակավայրերում կան նրանց յուրաքանչյուրին պատկան տարածքում պահպանված պատմական հուշարձանների ծանոթացումը սկսում ենք Լևի՝ Տրտուի հետ միախառնման տեղից:

ԵՂԵԳՆՈՒՏ

Առաջին գյուղն է, որ կարելի է հանդիպել Տրտուի հետ միախառնման տեղից Լև գետի հոսանքն ի վեր՝ շուրջ 4 կմ բարձրանալիս:

Խորհրդային տարիներին պաշտոնապես կոչվում էր *Ղամշլի*, իսկ դրանից առաջ՝ ԺԹ դարի վերջերից ի վեր, ինչ հայաթափ պատմական գյուղատեղիում հանգրվանել էին նստակեցության անցած խաշնարածները, *Աղայար*:

Շրջանի ազատագրումից հետո կրկին բնիկներով շենացած գյուղի թաղամասերը տարածված են գետի գույզ ափերին: Ներկայումս վերանվանվել է Եղեգնուտ, որն ընդամենը նախկին անվան պարզ թարգմանությունն է:

Հարկ է նշել, որ ինչպես գյուղում, այնպես էլ նրա շուրջ պահպանված պատմական մեծաթիվ հուշարձաններն իրենց իսկ գոյությամբ հուշում են՝ Եղեգնուտը դարեր շարունակ գավառամասի կարևոր բնակավայրերից մեկն էր, սակայն իր բուն անունը մոռացվել է բնիկների հեռացման պատճառով: Որևէ ձևով հին անունը չի փոխանցվել նաև եկվորներին, որոնք էլ բոլորովին նոր՝ *Աղայար* անվամբ են կնքել գյուղը:

Դժվար է որոշել, թե, օրինակ, Դաղի վանքի վիճագիր կամ ձեռագիր նվիրատվական արձանագրություններում, կալվածագրերում հիշատակված տեղադրությունը ցայժմ չպարզված բազմաթիվ գյուղերից ո՞ր մեկն էր ներկայիս Եղեգնուտը, սակայն կասկածից վեր է, որ այն այդ ցուցակում էր: Այստեղ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հետևյալ հանգամանքի վրա: Բանն այն է, որ Դաղի վանքապատկան գյուղերի թվում առաջին անգամ 1267 թ., ապա ԺՉ դարում, իսկ վերջին անգամ էլ 1763 թ. հիշվում է Ծովատեղ բնակավայրը: Անունը դարից դար անփո-



Լև գետի կիրճը միջին հոսանքի շրջանում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

փոխ պահած սույն տեղանվան արդեն չորրորդ վկայությանն էլ հանդիպում ենք Եղեգնուտից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ լեռան գագաթին գտնվող Սք. Գևորգ մատուռի ներսում առկա արձանագրության մեջ: Այս վերջին հայտնագործությունը, կարծում ենք, բավականաչափ որոշակի է դարձնում Ծովատեղի տեղադրության խնդիրը, քանի որ հստակ է՝ գյուղը պետք է փնտրել նրա անունը պահած արձանագրության մերձակայքում: Առաջ անցնելով՝ նշենք, որ Եղեգնուտն ունի բնահողի խոնավության առանձնահատուկ բարձր ցուցանիշ (նույնիսկ ամռանը տների մեծ մասում որմերը հողից բարձրացող խոնավությունից գրեթե կիսաբաց վիճակում են): Այս տեսանկյունից գյուղի նախկին բնակիչներից տրված Ղամշլի անվանումն էլ ուղղակի արտացոլանքն է նույն իրողության, քանի որ եղեգն առատ աճում է հատկապես խոնավ վայրերում: Ելնելով վերը նշվածից՝ գտնում ենք, որ պատմական Ծովատեղը հենց ներկայիս Եղեգնուտն է, որն իր առանձնահատուկ խոնավ պայմանների պատճառով էլ դեռևս միջնադարից ստացել էր այդ անունը:

Բնակչություն. 2015 թ. գյուղն ուներ 48 տուն (249 շունչ):

Դպրոց. Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնվել է 1999 թ. (52 աշակերտ): Ունի նաև մանկապարտեզ (25 երեխա)¹:

¹ **Ղահրամանյան Հ.,** Տեղեկատու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական բնութագրերի, Երևան, 2015, էջ 291:

2015-2016 ուստարվա տվյալների համաձայն՝ դպրոցում սովորում էր 66 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ²:

Պատմական հուշարձաններ. հայոց հիշատակներով բավականաչափ հարուստ գյուղերից է: Դրանք, սակայն, մեծապես ավերվել և անհետացվել են Ի դարի սկզբներից այստեղ հանգրվանած խաշնարած մահմեդականների ձեռքով: Գյուղում իբրև շինանյութ յուրացված հայկական հուշարձանների բեկորների կարելի է հանդիպել բնակելի և տնտեսական շինությունների որմերում: Վերջիններիս թվում է նաև գյուղի երբեմնի եկեղեցու շինարարական արձանագրությամբ բարավորի կոտրատված քարը:

Բարավոր. կոտրատված մի քանի բեկորները յուրացվել էին որպես շինանյութ. պահպանված զույգ կտորներին ընթերցվում է.

[Ե]ս՝ Արգու խա[թումս, ա]մուսին Վախ[տանգա], եւ Մամա խա[թում քո]յր իմ, շինե[ցաք սուրբ եկեղեցի]ս, յա[ղաւթս յիշեցեք]:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 45:

Ծանոթ. բացի արդեն վաղուց ոչնչացված Եղեգնուտի եկեղեցուց՝ իշխանուհի Արգու խաթունի մեկենասությամբ են կառուցվել նաև Դ-ադի վանքի կաթողիկե (1214 թ.) և Օծկավանքի (Պարեցիք գյուղի մոտ) եկեղեցիները:

² **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.,** նշվ. աշխ., հ. 3, էջ 610:



ԵՂԵՂՆՈՒՏ. գյուղամիջուճ՝ մի տան պատից դուրս բերված եկեղեցու շինարարական արձանագրության զույգ բեկորները (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

Բարավորի մաս կազմող բեկորներից զատ՝ Եղեգնուտում հայտնաբերվել են նաև քերևա նույն եկեղեցուն պատկանած սրբատաշ երեսապատի խաչազարդ երկու քար, ինչպես նաև ակնհայտորեն ոչնչացված գերեզմանոցից մնացած խաչքարերի բեկորներ:



ԵՂԵՂՆՈՒՏ. եկեղեցու երեսապատի խաչազարդ քարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի)




ԵՂԵՂՆՈՒՏ. խաչքարի արձանագիր բեկոր (լուս.՝ Ս. Կարապետյանի, լուս.՝ 1998 թ.)

Խաչքար. բեկորված, ճակատին և կողմն առկա է քերի պահպանված փորագիր արձանագրություն.

Ես՝ Դաւիթ, կանգնեցի զխաչս մաւր իմոյ | ...յի- շ[ե]ց[ե]ք, թիւն...:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 45:
Ծանոթ. նախորդ ընթերցման համեմատ՝ վերձանության մեջ որոշ շտկումներ ենք կատարել:



Եղեգնուտին հարակից տարածքները նույնպես հարուստ են երկրամասի բնիկներից ժառանգված պատմական տարաբնույթ հուշարձաններով:



Գյուղից 1,5 կմ ԼԼ գետի հոսանքն ի վեր պահպանվում է բազմիցս նորոգված, բայց ակնհայտորեն հին՝ Շահի կոչված կամուրջը, իսկ Եղեգնուտի հարավային եզրի (գետի ձախ ավիին) հին ու մեծ կամրջի հսկա խելը գոյություն ունեն մինչև 1980-ա-



ԵՂԵՂՆՈՒՏ. խաչքարերի բեկորներ (լուս.՝ Ս. Կարապետյանի, լուս.՝ 1998 թ.)

կան թթ. սկզբները, որից հետո այն քանդվեց գետի սովորական վարարումներից:

Գյուղից ուղիղ գծով ընդամենը 0,7 կմ արևելք՝ մի թմբի վրա (N 40°12'08.28"; E 46°12'09.90"; ծ. մ. 1476 մ), միայն թաղը և որմերի վերնամասերը փլված վիճակում պահպանվում է միանավ հորինվածքով, անմշակ քարով և կրաշաղախով կառուցված փոքր մի եկեղեցի (արտաքին չափերն են՝ 5,68 x 4,22 մ): Խորանն ուղղանկյունաձև է (հար և նման հատկապես ԺԲ-ԺԴ դարերում և առանձնապես Արցախում լայն տարածում գտած համանման լուծում ունեցող եկեղեցիներին և մատուռներին), որմերը ներքուստ սվաղված են: Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Արտաքուստ արևմտյան ճակատին առկա են նվիրատվական բնույթի 14 խաչքանդակներ և խաչքարեր, որոնք բոլորն էլ, ըստ ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների, վերաբերում են ԺԳ-ԺԴ դդ, ինչպես նաև նույն ժամանակաշրջանից ավանդված նվիրատվական բնույթի երկու հակիրճ հիշատակագրություններ:




0 3մ

ԵՂԵՂՆՈՒՏ. գյուղից 0,7 կմ արևելք գտնվող եկեղեցու կտրվածքը դեպի հյուսիս և հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

Կառուցողական և գեղարվեստական առանձնահատկությունները հուշում են, որ եկեղեցին կառուցվել է ԺԳ-ԺԴ դարերում³:

3 Գտնում ենք, որ եկեղեցին ԺԳ-ԺԴ դարերով թվագրելը (Միմոնյան Հ., Քարվաճառի հուշարձանները, «Բնօրրան», 1998, № 1-2, էջ 36) հիմնագրվել է:

Հիշատակագրություն. արևմտյան ճակատին՝ փորագիր 3 տող.
Ա(ստուա)ծ աղ/որմի Գագ/ին:
 Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 46:
 Ծանոթ. նախորդ ընթերցման համեմատ՝ վերծանության մեջ որոշ շտկումներ ենք կատարել:



Հիշատակագրություն. հարավային ճակատին՝ փորագիր 3 տող.
Գր(ի)գորի ո/րդոյ աղո/րմի Ա(ստուա)ծ:
 Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 46:
 Ծանոթ. նախորդ ընթերցման համեմատ՝ վերծանության մեջ որոշ շտկումներ ենք կատարել:



ԵՂԵՂԵՑԻՍ. գյուղից 0,7 կմ արևելք գտնվող եկեղեցին հարավ-արևելքից և հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

ԵՂԵՂԵՑԻՍ. եկեղեցին արևմուտքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

Եկեղեցու ներսում առկա է տեղահան երկու խաչքար: Նրանցից մեկն արձանագիր է (125 x 60 x 25 սմ), ընդ որում, նաև թվակիր.

Ո եւ | ՉԱ (1232) |... | Ս(ուր)ք նշանս Գրիգոր երիցոյ, | որ յերկրպագէք զԳրիգոր զհայր եւ զմայր/ն իւր, յաղաթս յ/իշեսջիք, ամէն:

Հրատ. առաջին անգամ:





ԵՂԵԳՆՈՒՏ. խաչքար և մկիրատվական խաչաքանդակներից մեկը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

ԵՂԵԳՆՈՒՏ. եկեղեցու մերթին տեսքը դեպի արևմուտք, հյուսիս և հարավ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ԵՂԵՂԵՑԻ. խաչքարեր (1232 թ. և ԺԳ-ԺԴ դդ.) Եկեղեցու մերսում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

ԵՂԵՂԵՑԻ. Եկեղեցու արևելյան կողմում տարածված գերեզմանոցը, բեկորված խաչքար մույն տեղում և խաչքար Կաղնուտ տեղամասում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ԵՂԵԳՆՈՒՑ. Ծմակա (Ծմակեց) անապատը հարավից, ԺԳ դար (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Եկեղեցուց հյուսիս-արևմուտք՝ բլրալանջին, ընկած էին մի խաչքարի վերին կես հատվածին պատկանող մի քանի բեկորներ: Դրանց ամբողջացմամբ ի հայտ եկան խաչքարի վերին կեսի չափերը (92 x 74 x 16 սմ):

Գյուղից ուղիղ գծով 2,2 կմ արևելք (N 40°12'00.54"; E 46°13'11.46"; ծ. մ. 1724 մ) Կաղնուտ կոչված վայրում, պահպանվել է ԺԳ դարին վերաբերող տեղահան (ստորին մասից կտրոված) մի խաչքար (120 x 70 x 20 սմ):

ԾՄԱԿԱ (ԾՄԱԿԵՑ) ԱՆԱՊԱՏ

Գյուղից 2,4 կմ հյուսիս-արևմուտք՝ հոսքի հյուսիսարևելյան ուղղությամբ Լև գետին աջից միախառնվող վտակի թավ անտառածածկ և հիրավի ծմակ (խոնավ ու անարև) ձորում (N 40°12'41.94"; E 46°10'06.66"; ծ. մ. 1660 մ), պահպանվում են մինչև այս պահին անանուն համարված մի վանքի ավերակները⁴: Ինչո՞ւ մինչև այս պահը, որովհետև ստորև ներկայացվող հիմնավորումները որոշակիացնելու են սույն վանքի անունը:

Եվ, այսպես, Փիլիպպոս կաթողիկոսի՝ 1647 թ. հրապարակած կոնդակից հայտնի էր ցարդ անորոշ տեղադրությամբ Ծմակա անապատի անունը. «Ծմակայ հայերին և մասնավորապես պարոն Փարսադանին, Մելիք Գասպարին, տանուտէր Մալուկին, Բարաջանի և Սարգսին, որով յայտնում է նրանց, որ ձիթահան-

քը, ջրաղացը, Յայսմաուրքը և Ճաշու գիրքը Դանիել վարդապետինն է (որ Սևանից էր բերել...): Այդ ձիթահանքը աւերակ է եղել մի ժամանակ և շինել է խոջա Գրիգորը: Վեհապետը կոնդակովս այդ յատկացնում է Ծմակայ անապատին և Չաքարիա մահտեսուն վերակացու է կարգում...»⁵:

Կոնդակի սույն քաղվածքը, իհարկե, չի պարունակում անապատի տեղադրության որոշակիացմանը նպաստող տեղեկություններ, ավելին՝ փաստորեն անհայտության մեջ է մնում ոչ միայն, օրինակ, մերձակա գյուղի անունը, այլև նույնիսկ գավառանունը, որտեղ գտնվում էր հիշատակված Ծմակա անապատը (մի քանի անձնանունների ինքնությունն էլ, ցավոք, պարզել չհաջողվեց): Թերևս կարող ենք նշել միայն, որ դա մի խոնավ և սակավարև՝ ծմակ տեղում գտնվող անապատ էր, որից էլ, ըստ ամենայնի, առաջ էր եկել հատուկ անունը՝ Ծմակա անապատ: Տեղեկատվական նման աղբատիկ պաշարով, անշուշտ, հնարավոր չէր Ծմակա անապատը նույնացնել ոչ միայն Եղեգնուտի մոտ գտնվող խնդր առարկա վանքի, այլև ընդհանրապես որևէ այլ վանական հուշարձանի հետ, սակայն նորահայտ սույն վանքից ընդամենը 0,7 կմ հյուսիս-արևմուտք՝ լեռան գագաթին գտնվող Սբ. Գևորգ կիսավեր մատուռի ներսում պահպանված արձանագրության մեջ «Ծմակեց ա(նապատ)»-ը վստահություն է հաղորդում իրապես խոնավ ու անարև, այլ խոսքով՝ ծմակ վայրում գտնվող խնդր առարկա վանքը նույնացնել 1647 թ.

⁴ Մեր երախտագիտությունն ենք հայտնում եղեգնուտցի Գրիգոր Սարգսյանին, ում առաջնորդությամբ 2015 թ. առաջին անգամ հնարավորություն ունեցանք այցելելու այս վանքը:


⁵ Թօփճեան Յ., Յուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 3:



ԵՂԵՂՆՈՒՏ. Ծմակա անապատի եկեղեցին արևելքից և հյուսիսից, ներքին տեսքը դեպի արևելք, հյուսիս, հարավ և արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

կաթողիկոսական կոնդակում հիշատակված Ծմակա անապատի հետ:

Հուշարձանախումբը բաղկացած է գրեթե միայն հյուսիսային կեսով դեռևս կանգուն միանավ, քաղածածկ հորինվածքով մեկ եկեղեցուց (արտաքին չափերը՝ 6,1 x 5,7 մ) և նրան արևմուտքից կցված որմերի՝ մինչև 2,5 մ բարձրությամբ պահպանված քառանկյուն պարզ հատակագծով զավթից (արտաքին չափերը՝ 5,2 x 5,7 մ): Թե՛ եկեղեցին և թե՛ զավթին ունեն մեկական մուտք՝ բացված համապատասխանաբար արևմտյան և հարավային ճակատներից: Եկեղեցու կիսաբոլորակ եզրագծով խորանի երկու կողմերում առկա է ուղղանկյուն հատակագծով



0 1 2 3 4 5 մ

ԵՂԵՂՆՈՒՏ. Ծմակա անապատի հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ., հրատարակության պատրաստեց Ա. Հակոբյանը)



ԵՂԵՂՆՈՒՏ. Սբ. Գևորգ մատուռը (դիտակետ-աշտարակ) հարավից և հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

ԵՂԵՂՆՈՒՏ. Սբ. Գևորգ մատուռը (դիտակետ-աշտարակ) հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

մեկական ավանդատուն: Հյուսիսային կողմինը, ի հակադրություն մեծ մասով քանդված հարավայինի, միանգամայն ամբողջական է: Լուսավորությունն իրականացված է եղել արևելյան ճակատից բացված դեպի ներս լայնացող երեք լուսամուտներով (հարավային ավանդատնից բացվածը չի պահպանվել):


Միմյանց կից երկու կառույցներն էլ ունեն անմշակ քարով, կրաշաղախով համանման շինարվեստ: Երևում է, որ եկեղեցին ներքուստ նաև սվաղված է եղել, որի արևմտյան որմին պահպանված մի հատվածին նկատելի են դեղին ներկով արված ինչ-որ գծապատկերի (կամ ներկագիր արձանագրություն) հետքեր:

Վանական զույգ կառույցների՝ ցարդ կանգուն որմերին հար-


դարանքի որևէ տարր նկատելի չէ (ներառյալ՝ արձանագրություն կամ խաչաքանդակ):

ՍԲ. ԳԵՎՈՐԳ ՄԱՏՈՒՌ
(ԳԻՏԱԿԵՏ-ԱՇՏԱՐԱԿ)

Ծնակա անապատից 0,7 կմ հյուսիս-արևմուտք (գյուղից՝ 3 կմ)՝ խորհրդային ռազմական քարտեզներում Ղարավուլ (թարգմ.՝ Պահակ) անվամբ գրանցված և ծովի մակերևույթից 2018 մ բարձրությամբ լեռան գագաթին, առկա է պարզ ուղղանկյուն հատակագծով և նույնալի-



ԵՂԵՂՆՈՒՏ. Սբ. Գևորգ մատուռի (նաև՝ դիտակետ-աշտարակ) հատակագիծը (չափ.՝ Ա. Գալոբյանի, 2018 թ.)



ԵՂԵՂՆՈՒՏ. Սբ. Գևորգ մատուռի (նաև՝ դիտակետ-աշտարակ) ներսում պահպանված նվիրատվական արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

սի շինարվեստով (ինչպիսին էր Ծմակա անապատը) փոքրաչափ (4,30 x 3,30 մ, որմերի հաստությունը՝ 0,8 մ) մի կառույց (N 40°12'56.17"; E 46°09'48.99")⁶:

Արձանագիր քար (աջ եզրից՝ կտրված). միմյանց կից՝ 6 և 4 տող.

S(է)ր ա(ստուա)ծ ողորմի Մասին և | ու(ր) ծնողաց, էրեա Սուրբ Գե(ո)րգայ | Հասան՝ ի Ծովախտեղ, որ զամս յեա | խափանե 3ԺԸ (318) հա(յ)րապետ(ացն) | նզովե(ա)լ եղիցի և յա(ստուծո)յ... | ի թվ(ին) Ո...: | Երեա Ս(ուրբ) ... | Ծմակեց ա[նապատ]... | ...անիկ Սոսան... () | զխոց(ա)ղեղ իմ...:*

Հրատ... առաջին անգամ:

Ծանոթ. նվիրատվական բնույթի այս արձանագրությունից նախ պարզվում է դիտակետ-աշտարակի նմանությունը սույն մատուռն անունը՝ Սբ. Գևորգ, ապա բացահայտվում է գյուղի և վանքի մեկական անուն՝ Ծովախտեղ և Ծմակեց անապատ: Ընդ որում, երկուսն էլ, այլ աղբյուրներում վկայված լինելով հանդերձ, տեղադրությամբ ցարդ մնացել էին անհայտ:

Եղեգնուտից Լև գետի հոսանքն ի վեր՝ ձորակում գտնվող հաջորդ գյուղը Չափնին է, սակայն մինչ այդ գետը ձախ կողմից ընդունում է երկու վտակ: Առաջինը Եղեգնուտից 2,5 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող Բարսղիշենն է:

ԲԱՐՍՂԻՇԵՆ

Գտնվում է Յանշաղից 2 կմ հարավ-արևմուտք՝ Լև գետի ձախակողմյան մի փոքրիկ վտակի հարավահայաց ձորալանջին՝ ծովի մակերևույթից 1650-1740 մ բարձրության վրա:

6 Ի դեպ, 1994 թ.՝ առաջին այցելության ժամանակ, այս կառույցն անվարան դիտակետ-աշտարակ էինք համարել (թերևս տուրք տալով նաև լեռան՝ մեզ հասած անվան բացատրությանը. այստեղից երևում է Հանդաբերդի մի անկյունը): Սակայն 2018 թ. այցելության ժամանակ այնպիսի տպավորություն ստացանք, որ այն կարող էր նաև մատուռ լինել: Չենք բացառում նաև, որ կառույցը, հնարավոր է, երկու նշանակությանն էլ ծառայած լիներ:



ԲԱՐՍՂԻՇԵՆ. գյուղամերձ տեսարաններ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Գյուղի մասին միակ գրավոր հիշատակությանը հանդիպում ենք 1763 թ. կազմված Դադի վանքի կալվածացուցակում⁷:

ԺԹ դարի վերջերին այստեղ հաստատված քուլանի ցեղի քրդերը, ըստ էության, ընդամենն աղավաղելով պատմական տեղանունը, այն վերանվանել են Բարսաղ:

Խորհրդային տարիներին բավականաչափ ծավալված այս գյուղի տարածքում հայկական հուշարձաններ առայժմ չեն հայտնաբերվել:

Լևին ձախից միախառնվող հաջորդ վտակը հայտնի է Մեյդան անվամբ: Վերջինիս հովտում մինչև շրջանի ազատագրումն առկա էր 3 գյուղ (*Ղասմբինասը, Յանշաղբինա և Յանշաղ*): Տակավին ԺԹ դարավերջին ևս մեկ գյուղակ էլ գոյություն ուներ՝ *Մեյդան* անվամբ (ակներև է, որ վտակն իր անունը ստացել էր հենց այս վերջին բնակավայրից):

ԽՈՆԹԱԿԱՆ (ՅԱՆՇԱՂ)

Ներկայումս Խոնթական վերանվանված նախկին Յանշաղ գյուղն այս ձորակի կենտրոնական բնակավայրն է: Գտնվում է Մեյդան կոչվող վտակի ձախափնյա ձորալանջին՝ 1700-1750 մ բարձրության վրա:

1662 թ. գյուղը Յանշաղ անվամբ առաջին անգամ հիշատակվում է 1575 թ. ստեղծված մի գրչագիր Մաշտոցի հիշատակարանում. «Յիշատակ է բարեմիտ Յուրին, որ կողակից էի Ավագակին

7 Ջամբո, էջ 283:

ի երկրէն Ծարայ ի գեղջէն Եանշաղէն, յիշատակ է այս սուրբ Մաշտոցս հոգոյ իմոյ տվի իմ ձեռովս Դաւիթ քահանային, օվ որ կարդայ, աստուած ողորմի ասէ, ամէն»⁸:

Շուրջ 100 տարի անց (1763 թ.) գյուղը հիշվում է որպէս Դաղի վանքի կալվածքների մաս կազմող բնակավայր⁹:

ԺԹ դարի վերջերին այստեղ են հաստատվել քուանի ցեղի խանարած քրդերի սակավաթիվ ընտանիքներ¹⁰, որոնք անցնող տասնամյակների ընթացքում՝ հատկապէս խորհրդային տարիներին, իսպառ թուրքացան:

Ինչ վերաբերում է գյուղի բնիկներին, ապա նրանք, գավառի հայաբնակ շատ այլ գյուղերի պէս, հազարամյակների իրենց բնօրրանը քել էին ԺԸ դարի կեսերին: Բարեբախտաբար, հայտնի է յանշաղիների՝ որտեղ հաստատված լինելը: Պարզվում է, որ շատերի պէս նրանք էլ վերաբնակվել էին Վրաստանի տարածքում: Մայրաքաղաք Տփլիսից (Թբիլիսի) մի քանի կիլոմետր արևմուտք գտնվող Տաբախմեղա (Տաբախմելիք) գյուղում այժմ մեծ թիվ են կազմում ծագումով Յանշաղ գյուղից սերող, արդեն գրեթէ ամբողջությամբ վրացախոս Յանշաղյանց ազգանունը կրող հայերը (այժմ մեծ մասը կրում է Յանշաղով կամ Յանշաղիշվիլի ազգանունները)¹¹:

Յանշաղ գյուղի տարածքում պահպանվել են միայն մի քանի խաչքարեր, իսկ երբեմնի եկեղեցու (որը, անշուշտ, եղել է) հետքերն իսկ չեն մնացել: Այսպէս՝ գյուղից 4 կմ արևելք՝ դեպի Գորտագարակ լիճ (թուրք.՝ Ղանլի-գյոյ) տանող ճանապարհի եզրին՝ լճից 1,5 կմ արևմուտք, պահպանվում է խիստ հողմահար մի խաչքար՝ զգալի մասով եղծված հետևյալ արձանագրությամբ.

Խաչքար (160 x 120 սմ). ստորին հատվածում՝ 3 տող.

(կա)նգինե(ցի) ...ին հոգո[յ]... / ...ուղ[որմ](ի)....: Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 41:

Ճանր. ներկայացվում է վերծանության վերանայված տարբերակը:



8 Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 221: Ի դեպ, այս ձեռագիրը ԺԹ դարավերջին պահվում էր Մաղավուզի Հովհաննես քահանայի մոտ:

9 Ջամբո, էջ 283:

10 Տե՛ս Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 676:

11 1840-ական թվականներին Տաբախմեղայում կառուցված հայոց Սբ. Գևորգ եկեղեցու խորանի վեմ-քարին փորագրված արձանագրությունից պարզվում է, որ ինչպէս հիմնադրողները, այնպէս էլ 1877 թ. եկեղեցին նորոգողները միևնույն՝ Յանշաղյանց տոհմից էին. 1877 ամի, / այս Սբ. Գևորգայ եկեղեցին, որ հիմնարկած է / Եանշաղեանցի, կրկին / նորոգ(ե)ցին նորա որդիք՝ Դաւիթ, Կօնի, Պետրոս, Մարկիս, Գոգի, Յարութիւն, / Գևորգի, Գողայ Եանշաղեանցները: Յիշատակ է այս Սբ. Գևորգայ հին եկեղեցին կրկին անգամ նորոգեցին Եանշաղեանցի որդիքը:

Եկեղեցու շուրջ կան Յանշաղյանցներին պատկանող վրացագիր մի քանի տապանաքարեր: Ի դեպ, Տփլիսի և մանավանդ նրան մերձակա գյուղերի հայ բնակչության թվում զգալի մաս են կազմում ԺԸ դարի 2-րդ կեսին Արցախից գաղթածները: Օրինակ՝ Հավաբարում հաստատվել էին շամբրեցիք և գանձակեցիք, Լիս գյուղում՝ Բրաջրի և Ոսկանապատի հայերը, Տաբախմեղայում՝ յանշաղիները և այլն: Կարծում ենք, որ տփլիսեցի հայտնի Չիրքիյանցներն էլ (Չիրքիյանցներ) Քարվաճառի Չիրքից գյուղից գաղթածներ են:



ԽՈՆԹԱԿԱՆ (ՅԱՆՇԱԳ), խաչքար Գորտագարակ լճից 1 կմ արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

Յանշաղից 5 կմ հյուսիս-արևելք՝ Մեյդան գետակի ափին, պահպանվում են համանուն գյուղատեղիի հետքերը (N 40°14'57.61"; E 46°16'40.41", ծ. մ. 1962 մ): Ի դեպ, սա ևս հիշվում է 1763 թ. վանքապատկան գյուղերի ցուցակում¹²:

Այս գյուղատեղիից մինչև Օմարի հայտնի լեռնանցքը 4 կմ է (ուղիղ գծով): Հենց այս վայրում (թերևս երբեմնի գյուղի գերեզմանոցից մնացած) 1994 թ. սևանցի ազատամարտիկ Մանվել Ղազարյանն ու ընկերները հայտնաբերել էին երկու խաչքար. «Նրանցից մեկն ընկած է, մյուսը՝ կանգուն, խաչքարի կենտրոնում գտնվող մեծ խաչապատկերների կողքին քանդակված են փոքրերը, խաչերի վահանները զարդարված են ոճավորված լուսապատկերներով: Կանգուն խաչքարի վերևի մասը ջարդված է»¹³:

Ի դեպ, տակավին 1977 թ. Հայաստանի հուշարձանների պահպանության գլխավոր վարչությունը ստացել էր Յանշաղ գյուղից ուղակված մի նամակ-սահազանգ, որի հեղինակը (անունը վերապահել էր) տեղեկացրել էր, որ իրենց գյուղից 5 կմ հյուսիս՝ Մեյդանում վայրում գտնվող գյուղատեղիի գերեզմանոցն ավերվել էր:

Ահազանգի հետքերով հնավայր այցելած պատմաբան Սուրեն Մաղումյանն ակնատեսն է եղել բուրդգերների աշխատանքից հետո խաչքարերից և տապանաքարերից զոյացած մի բլրի, որտեղ սպիտակավուն մի բեկորին կարդացել էր.

Տապանաքարի բեկոր (160 x 120 սմ), արձանագրությունը՝ 3 տող.


Այս է հան(գ)խտ Եզան(ին), թվին Ռ-ՃԾԳ (1704) էր: Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 42:

ՉԱՓՆԻ

Մեյդան կոչված վտակի՝ Լև գետի հետ միախառնվելու տեղից շուրջ 1,7 կմ գետի հոսանքն ի վեր՝ նրա ձախ կողմում՝ հա-

12 Ջամբո, նույն տեղում:

13 «Երկիր», 1994, № 107, 8 հունիսի, էջ 6 (այս հնավայրը մեզ դեռևս չի հաջողվել այցելել):



ՉԱՓՆԻ. աջափնյա կամրջախելի հոսքընդդեմ ճակատը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.) և չափագրությունները. ճակատ և կտրվածք (չափ.՝ Ա. Դակոբյանի, 2009 թ.)

րավահայաց անտառածածկ լեռնալանջերի ստորոտին, գտնվում են Չափնի¹⁴ գյուղի ավերակները: Վերջինիս հյուսիսային բարձրադիր եզրին պահպանվում են Սք. Կարապետ վանքի ավերակները, իսկ ներքևում՝ Լև գետի վրա դեպի գյուղ բարձրացող հին ճանապարհի սկզբնամասում, միջնադարյան կամրջի մնացորդն է (N 40°13'41.46"; E 46°09'57.25"), որից պահպանվել է սոսկ նրա աջափնյա խելը (հեղեղումներն իսպառ անհետացրել են հակադիր ափի կամրջատորը)¹⁵:

Կամրջի պահպանված խելը կառուցված է ամնշակ (կամարը կապող քարերը փոքր-ինչ հղկված են) տեղական քարով և կրաշաղախով: Ջրի ներգործությանն առավել ենթակա հոսքընդդեմ ճակատում որմը հզորացված է կիսաբլուրակ աշտարակով: Կամուրջն ունի 4,1 մ անցուղու լայնություն, իսկ թռիչքի երկարությունը (համաձայն խելի պահպանված հատվածի կորության) եղել է 10,85 մ:

Վերջին տարիներին կամրջից հագիվ 50 մ հեռավորության վրա բնակիչները հայտնաբերել են մեծաչափ մի խաչքարի ստո-

¹⁴ Գյուղը վկայվել է նաև Ջանկի անվանաձևով. «...մտաք ի գիտն Ջանկի, որ կայ շինեալ առ ափն Տրստում գետոյ ի մէջ անառիկ ձորոյ՝ ի տափարակ տեղոջ հանդէպ Լոհաբերդին: Գիւղս այս լի է մրգաբեր ծառովք, առոք անուշահամ ջուրց իջեալ ի վերուստ անցեալ ընդ գիւղն խառնին ի գետն Տրստում: Չմերանոց է սա արդէն տաճկացն Ղարաբաղոս» (**Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիսի, 1858, էջ 214-215):

¹⁵ Կամրջի մասին տե՛ս նաև մեր՝ Արցախի կամուրջները, Երևան, 2009, էջ 36-37:



ՉԱՓՆԻ. աջափնյա կամրջախելի հոսքընդդեմ և հոսքընթաց ճակատները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)



ՉԱՓՆԻ. կամրջախելի հարևանությամբ հայտնաբերված խաչքարի ստորին կեսը և հյուսիսային նեղ կողմն առկա արձանագրության մնացորդը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

րին կեսը: Բացառելի չէ, որ այս մենավոր խաչքարը (տեղում գերեզմանոց չկա) ի սկզբանե կանգնեցված է եղել կամրջի կառուցման ավարտի կապակցությամբ: Ինչպես երևում է, հյուսիսային նեղ կողմն եղել է բազմատող ընդարձակ արձանագրություն: Ցավոք, պահպանված բեկորին առկա են նրա միայն վերջին տողերը.

...ք յա[ղա]լիքս յիշ/եցեք / ի Զ(րիստո)ս ա/ղաչելմ:
 Հրատ. առաջին անգամ:


ՉԱՓՆՈՒ ՄԲ. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ

Վերոնշյալ կամրջախելից ուղիղ գծով 770 մ հյուսիս-արևելք՝ Չափնի գյուղատեղիի հյուսիսային եզրին է գտնվում (N 40°14'03.36"; E 46°10'11.13", ծ. մ. 1455 մ) գավառի՝ թերևս առավել հայտնի վանքերից մեկը:

Երկու վտակների միջև տարածված փոքր թեքություն ունեցող հարավահայաց հարթակի վերին ծայրին ցայտօր պահպանվում են եկեղեցու (կից գավթով), մատուռի, մահարձան-զանգակատան և խաչքարերով ընդարձակ գերեզմանոցի մնացորդները:

Չափնիի հուշարձանախումբը մեկն է գավառի այն սակավաթիվ հնավայրերից, որը, ի դեմս Ս. Ջալալյանցի, դեռևս ԺԹ դարի կեսին ունեցել է իր ուսումնասիրող այցելուն. «Ողբալի աներակք սորա ցուցանեն զառաջին սխրալի վիճակ և վկայ մի միայն իրեանց նախանձելի փառաց»¹⁶: Համառոտ նկարագրելով հնավայրի կառույցները՝ Ջալալյանցը նաև ընդօրինակել է երկու վիմագիր, մեկը՝ մահարձանի պատին, մյուսը՝ նույն մահարձանի վրա կանգնեցված խաչքարի թիկունքին:

Հնավայրի հետագա հետազոտողները, ինչպես Մ. Տեր-Մովսիսյանը¹⁷ դարասկզբին, այնպես էլ Ս. Բարխուդարյանը¹⁸ 1960-ականներին, այդ ուղղությամբ գրեթե ոչինչ չեն ավելացրել: Ի դեպ, վերջինս, կարծում ենք, առանց այցելելու հնավայր, սույն ենթադրաբար գրել է. «Նախկինում հայաբնակ այս մեծ գյուղատեղիում այժմ գրեթե ոչինչ չի մնացել...»¹⁹: Իսկ թե ի՞նչ էր իրա-



ՉԱՓՆԻ. Մբ. Կարապետ վանական համալիրի հատակագիծը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ., լրացված՝ 2015 թ.)

16 Ջալալյանց Ս., նշվ. աշխ., Բ, էջ 215:
 17 Տեր-Մովսիսյան Մ., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դաղի եկեղեցիները եւ վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 93:
 18 Դիվան, V, էջ 225:
 19 Նույն տեղում:



ՉԱՓՆԻ. վանքի Սբ. Կարապետ եկեղեցին հարավից և արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ՉԱՓՆԻ. վանքի Սբ. Կարապետ եկեղեցին և գավիթը հարավ-արևմուտքից, գավիթը հյուսիսից և ներքին տեսքը դեպի արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

կանոն պահպանվել շրջանի ազատագրումից հետո, պետք է տեսնենք ստորև:

Նախ համալիրի հարավարևմտյան եզրին պահպանված կիսավեր եկեղեցու մասին: Այն արտաքուստ քառակուսի (արտաքին չափերն են՝ 5,50 մ), ուղղանկյուն խորանով, հյուսիսային կողմում արևելք-արևմուտք ուղղությամբ իրարահաջորդ գույգ ավանդատներով, անմշակ քարով և կրաշաղախով կառուցված թաղածածկ շինություն է, որից կանգուն կամ կիսավեր է միայն հյուսիսային կեսը, իսկ հարավային կեսը գրեթե հիմնահատակ է: Պատերի կանգուն մասերում արձանագրություններ կամ հարդարանքի տարրեր չեն պահպանվել: Որմերի հաստությունը 80

սմ է: Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից նույն կողմից կցված գավթի մեջ: Վերջինս էլ ավելի քայքայված ու ավեր վիճակում է: Հարավային ճակատից բացված միակ մուտքով գավթի որմերը պահպանվել են հազիվ 1 մ բարձրությամբ:

Ի դեպ, հատակագծով ճշտությամբ կրկնում է Օծկա վանքի եկեղեցու հորինվածքը (Պտրեցիք գյուղի մոտ)²⁰ և նմանապես ԺԳ դարի կառույց է:

²⁰ Տե՛ս **Կարապետյան Ս.**, Պտրեցիք գետահովտի պատմաճարտարապետական հուշարձանները՝ ըստ նորահայտ արձանագրությունների, «ԼՂԳ», 1984, № 8 (հատակագիծը տես էջ 84):



ՉԱՓՆԻ. վանքի Սբ. Կարապետ եկեղեցու ավանդատների մուտքերը, հյուսիսարևելյան ավանդատան ներքին տեսքը դեպի արևելք և առաստաղը (լուս.: Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Եկեղեցուց շուրջ 24 մ հյուսիս-արևելք դեռևս կանգուն խաչքարով զանգակատուն-մահարձանի քաղակապ շենքն է: Բարեբախտաբար, նախկին ուսումնասիրողները (Ս. Ջալալյանց և Մ. Տեր-Մովսիսյան) ժամանակին նկարագրել են այս հուշարձանը: Հայտնի է նաև 1960-ական թթ. կատարված մի լուսանկար²¹, որտեղ երևում է, որ այդ ժամանակ դեռևս կիսով չափ կանգուն էր կառույցի 2-րդ մակարդակը ներկայացնող ռոտոնդան: Դրանց շնորհիվ ներկայումս հնարավորություն ունենք բավական մեծ ճշգրտությամբ ներկայացնելու մահարձանի նախնական տեսքը. «...երկհարկանի մի դամբարան, միջում պահած խաչարձանը: Սրա ներքեի յարկը քառանկյունանի է, երկու ու կէս մետր

²¹ Ахундов Д., Архитектура древнего и ранне-средневекового Азербайджана, Баку, 1986, с. 227, рис. 263.



ՉԱՓՆԻ. մահարձանը (1275 թ.) հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

բարձրութեամբ, մի ճակատը բաց, իսկ երեք կողմերը կառուցւած մաքուր սրբատաշ քարերով: Երկրորդ յարկը կառուցւած է չորս միակտոր քարերի սիւներից, վրան փոքր գմբէթ հաստատած: Այս գմբէթի տակ, սիւների արանքում կանգնեցրած է գեղեցիկ քանդակներով զարդարւած խաչարձանը, կիսատ թողնւած արձանագրութեամբ»²²:

Ներկայումս, բացի քառասյուն զանգակատնից, որի ներքո կանգնեցված էր խաչքարը, մահարձանի մնացած մասերը թեև քայքայված, սակայն հիմնական մասով կանգուն են: Չարմանալի է, որ զանգակատունը փլվելիս խաչքարը չի վնասվել:


Հիմք ընդունելով խաչքարի կերտման տարեթիվը (թիկունքին ունի 1275 թ.-ից փորագիր յոթտողանի արձանագրություն) կարելի է ողջ կառույցը վերագրել նույն թվականին:

²² Տեր-Մովսիսեան Մ., նշվ. աշխ., էջ 93:

Մահարձանից 3-4 մ հյուսիս պահպանվել է արդեն մեծ մասով սեփական քանդվածքների ներքո հայտնված, բայց դեռևս որմերի ստորին շարվածքով ուրվագծվող թաղակապ փոքրիկ մի մատուռ: Ոչ միայն հորինվածքով (ունի ուղղանկյուն խորան, միակ մուտքը բացված է հարավային ճակատից), այլև շինարվեստով հարևան է համալիրի մնացած կառույցներին, ուստի մյուսների պես կարելի է թվագրել է ԺԳ դարով:

Բացի վերը նկարագրված կառույցներից՝ հնավայրի տարածքում առկա են նաև մի քանի այլ շինությունների մնացորդներն ու հետքերը:

Տարածքում ամբողջական կամ բեկորված (բոլորն էլ՝ տեղահան) պահպանվել են ավելի քան երկու տասնյակ գեղաքանդակ (մի քանիսը՝ նաև արձանագիր) խաչքարեր: Փլատակների մեջ են նաև թերևս Սբ. Կարապետ եկեղեցուն պատկանած երեսպատի արձանագիր սրբատաշ մի քանի քարեր:



ՉԱՓՆԻ. զանգակատուն-մահարձանը 1960-ական թթ. (լուս.՝ Գ. Ախունդովի), արևմտյան ծակատն ու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.), կառույցն արևմուտքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ՉԱՓՆԻ. զանգակատուն-մահարձանն արևմուտքից և 1275 թ. խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՉԱՓՆԻ. զանգակատուն-մահարձանի եռաչափ վերակազմությունը (հեղ.՝ Ա. Հակոբյան և Պ. Ֆրանկյան, 2018 թ.)

Երեսապատի մի սրբատաշ քարին (61 x 48 սմ) 9 տող.


Ես՝ Խոշ, Սերոբ, որդիք | Գր(ի)գորք ք(ա)հ(անային), միաբանեցաք Ս(ուր)ք Կարապետիս, | սպասաորք տրա խոխտացան :Բ: (2) պատարագ զս(ուր)ք | Գր(ի)գոր(ի)




տանին, որ աղուհացքին :Ա: (1) Գրիգորա :Ա: (1) Գրիգոր խաթուն, առաջնորդ [դ] ... կատարիչք արինին] .../ ...:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 39:

Երեսապատի մեկ այլ սրբատաշ քարին (63 x 47 x 12 սմ), որն ընկած էր մահարձանի հյուսիսարևմտյան անկյան մոտ, 5 տող.



.....



(Կամա)ն ա(ստուծոյ), իշխանութե(ամբ) | Պապաքին, ես՝ Վարդան տ.../ ...տերուն. ես՝ Կուտրակ... /պետին եւ միաբանքս խոս(տացան)... | Ս(ուր)ք Գրիգորին, ՈԼԶ (1187) թվ(ի)ն... | ...:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 39:

Ծանոթ. ներկայացվում է վերձանության վերանայված տարբերակը:

Երեսապատի անկանոն եզրագծով քարաբեկորին (55 x 30 x 22 սմ)՝ 4 տող.

Ա(ստուած) | ողորմ(ի) ս(ր)բակե(ա)ց | Խաչատուրին [եւ] | ն(ո)ր(ա)....:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 39:

Ծանոթ. ներկայացվում է վերձանության



վերանայված տարբերակը:

Արձանագրություն. Յուսովն աստուծոյ ես՝ Հասան, եւ Ջողրէգ եւ Ինանկ Խաթուն զինչ Արթուրայ որդույն կայր

Ժախեցաք Հասանայ հողով եւ մարզով սուրբ Կարապետին, ետուն ամենայն եկեղեցիք Հասանայ, կատարիչք արհնին յաստուծոյ:


Հրատ. Ջալալեանց Մ., նշվ. աշխ., հ. Բ., էջ 215: Տեր-Մովսիսեան Մ., նշվ. աշխ., էջ 93: ՀՄՀԽԱԲԸ, էջ 39:

Խաչքար (190 x 61 x 22 սմ). մահարձանից շուրջ 35 մ արևելք՝ բլրի վրա տա-րածված գերեզմանոցում, քիկունքի վրա ընկած, կողին՝ 19 տող.

Թվ(ին) ՈՉԶ (1237), ես՝ Ուն/ահ մվա/դկ(°) եւ Տ/ունայրկ/դեղ(°) կան(զն)/եցաք զխ/աչս հար | եւ մար ե/ւ եղբար | մերոյ մ/ռ.../...ին/...զգ/եց... աշխ/ռ...որեց/...որք ե/րկրպագ/էք յաղա/թս յիշե/ցէք:
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 39:

Խաչքար (100 x 65 սմ). գավթի հարավային կողմում, փորագիր 7 տող.

Ի թվ(ին) ՈՂԵ (1246), ես՝ Աղ[սաթ]յան, կան(ն)կնեցի ս(ուր)ք Նորսեւ՝ հար իմոյ Մնորայ և դստերաց իմ Գոհ/արիս | և Մալի | և Գո(հ)ար/նագիս | և ինձ Աղսաթ/անայ | յիշեցէ/ք ի Զ(ր)իստոս:
Հրատ. առաջին անգամ:



Խաչքար (143 x 66 x 17 սմ). մահարձանից 15 մ հարավ-արևելք՝ քիկունքի վրա ընկած. գույգ խաչաքանդակների ստորին թևերի միջանկյալ հատվածում և նեղ կողին՝ 27 տող.


Թվ(ին) | ՈՂԸ (1249), || յԱրուս | իսաթուն | զՊ(ե)տիկա հ/այ-րենի տ/ունն զԱղ/բինն, զՀ.../...ուն աղ/աչան ի հի/նով Թ/ա(յ)իկա ի Պ(ե)տիկա ս(ուր)ք Կ/արապետ/ս տուին | Սարգիս | ար Բ (2) ժա/մ Պ(ե)տիկա ու | կենաց իր | ...ով զայն | հողն յայս ե/կեղեցոյս | հանէ ՅԺ/Ը (318) հայրա/յետացն | անիծած | է:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 38 (միայն թվականը):




Խաչքար. նեղ կողին՝ 22 տող.

Ի թվ(ին) ՈՂԶ (1247), | յանուն | ս(ատուծո)յ, ես՝ Վարդա-պետ, | ու Հայրայ/յետ կան(զն)/եցաք զխ/աչս հար | եւ մար եւ եղբոր մերոյ՝ Մովսեսի, որ ի ձեռն | այլազգ/աց սրով խ/ոխողե-ցիս, որք ե/րկրպագ/էք յաղա/թս յիշե/ցէք ի Զ(ր)իստոս:
Հրատ. առաջին անգամ:



Խաչքար (200 x 90 սմ). Եկեղեցուց 50 մ հարավ, քիկունքի վրա ընկած, կողմից՝ 16 կարճ, իսկ ստորին հաստվածում՝ 1 ստող.

Մխիթար: | Ես՝ Սաղու/ն, ու Դու/դիկ կ/անգն/եցաք զ/խաչս / Սրահ/անգի/ն, յաղ/աթ/ս յիշ/եցէք, || թվ(ին) ՉԹ (1260):
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 39:



Խաչքար (190 x 90 x 18 սմ). Քիկունքին՝ 7 ստող.

Թիմո Չի՛՛ (1275) | կաման ա(ստուծո)յ | ես՝ Մուքման, եւ | Ուրան կանգնեց/աք զխաչս հար | մերոյ՝ Աշոտայ | եւ մար, յաղաթս:

Հրատ. Ջաղախանց Մ., Բ., էջ 215: Վիմական տարեգիր, էջ 136: Տէր-Մովսիսեան Մ., նշվ. հոդվ., «Ազգագրական հանդես», 1913, XXV, № 2, էջ 76: Նան՝ նույնի նշվ. աշխ., էջ 93: ՀՄՀԽԱԲԸ, էջ 38:



Խաչքար (135 x 74 x 27 սմ). Եկեղեցուց 5-6 մ հարավ՝ նախնական տեղում կանգնած, արձանագրությունը՝ վարդյակի երկու կողմերում, 4 ստող.

Հասան(ա) | մարն, | յաղաթ(ա) | յիշեցէ(ք):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 38:


Ծանոթ. ներկայացվում է վերընթացմամբ ճշտված տարբերակը:



Խաչքար (130 x 63 x 25 սմ). մահարձամից արևելք՝ բլրի գագաթին, կողմից՝ 11 ստող.

Ա(ստուա)ծ ա(ր)հ(նուած), | թվ(ին) ՉԼԸ (1289), | ա(ստուա)ծ ողոր/մի Գազ/իկա եւ ննջեց(ելոց) իս/րոց, ամ/էն: Ս(ուր)ք | Յո-վա/ննեսին, | ամէն:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 39:



Խաչքար (40 x 38 x 9 սմ). մահարձանի արևմտյան կողմում, կողին՝ 1 տող.

Ա(ստուա)ծ ողորմէ ...:

Հրատ. ՀՄՀԽԱԲՇ, էջ 39:

Խաչքար. գավթի հարավային կողմում, արձանագրությունը՝ փորագիր 8 տող.

*... (կան)զնեցի զխաչ(ա) ... | ...հոգո իմո եւ ծնողաց եւ (եղ)-
բարց եւ քերց (իմ)ոց, որք երկրպագէք յաղարթս | յիշեսցիք ի /
Ք(րիստո)ս:*

Հրատ. առաջին անգամ:



Վանքի ավերված գերեզմանոցում առկա են նաև ԺԲ-ԺԴ դարերին վերաբերող անարձանագիր խաչքարեր և տապանաքարեր, որոնք նույնպես անխտիր տեղահան են, մի մասը՝ նաև կոտրատված վիճակում: Դրանց մասին որոշակի պատկերացում կտան ներքո ներկայացվող պատկերները:





Քնարավան գյուղի ընդհանուր տեսքը (լուս.՝ 2018 թ.)

ՔՆԱՐԱՎԱՆ

Չափնիի միջնադարյան կամրջի ավերակից Լև գետի հունով 2 կմ վեր՝ գետի աջ ափին՝ ուղիղ դեպի հյուսիս նայող և անտառապատ սարերով շրջապատված նեղ ու սեղմված ձորակի մեջ, ծովի մակերևույթից 1420-1480 մ բարձրության վրա, դարից դար երբևէ չբնակեցված վայրում 2000-ական թթ. սկզբներին հիմնվել է ներկայիս Քնարավանը¹:

Բնակչություն. 2015 թ. գյուղն ուներ 15 տուն՝ 76 բնակիչ:

Դպրոց. Քնարավանի հիմնական դպրոցը կառուցվել է 2004 թ. ֆրանսահայ բարերար Կ. Հարությունյանի միջոցներով և կրում է կնոջ՝ Քնարիկ Հարությունյանի անունը: Սկսել է գործել 2005 թ.-ից 9 աշակերտով:

2015-2016 ուստարում ուներ 29 աշակերտ: Դասավանդում էր 12 ուսուցիչ²:

Խաչքար. գյուղում բեկորված վիճակում հայտնաբերվել է արձանագիր և գեղաքանդակ մեծաչափ մի խաչքար³:


1 Ոչ միայն պատահական չէ, այլև ուսանելի է, որ ո՛չ երկրի բնիկները (հազարամյակներ շարունակ), ո՛չ էլ ԺԹ դարի վերջերից նստակեցության անցած եկվորներն այս վայրում երբևէ բնակավայր չեն հիմնել: Պատճառն այն է, որ գավառի՝ ծովի մակերևույթից նույնիսկ ավելի ցածր վայրերում ուղիղ դեպի հյուսիս նայող լանջերը բավականաչափ խոնավ և սակավարև են: Տվյալ դեպքում սփյուռքահայ բարերարի միջոցներով հիմնված Քնարավանը, բացի վերոնշյալից, նաև խոր ձորի մեջ գտնվելու պատճառով օրվա մեջ ընդամենը մի քանի ժամ է արև տեսնում: Բիարկե, այս ամենը հուշում է, որ այս վայրում բնակավայր հիմնել չէր կարելի (նախքան գյուղի հիմնումն այս ամենի մասին զգուշացրել էինք գործը ձեռնարկած «Երկիր Միություն» կազմակերպության՝ խորհրդատվության համար մեր գրասենյակ այցելած աշխատակիցներին, սակայն, ինչպես հետագան ցույց տվեց, բոլորովին անօգուտ), բայց սխալն արդեն արված է, և հենց բնակությանն անհարիր տեղի բնակլիմայական պայմանների պատճառով ներկայիս քնարավանցիները պարզապես մաքառում են ցրտի և խոնավության դեմ՝ նույնիսկ օգոստոսին տաքամալու համար վառարան գործածելով:

2 Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 611-612:

3 Թվում է, թե այս խաչքարն ի սկզբանե գտնվելիս է եղել Հանդաբերդում և չարակամների ձեռքով գահավիժել է և փշրվել:



Քնարավանը Դանդաբերդի ստորոտում (լուս.՝ 2009 թ.)



ՔՆԱՐԱՎԱՆ. խաչքար, ԺԲ-ԺԳ դդ. (լուս.՝ Ս. Այվազյանի, 2003 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Խաչքար. արձանագրությունը՝ 8 տող.
 Ես՝ Աբաս, | որդի Ն/(ա^ո)նա/ունայ կանգնեցի գիս/աչս հոգոյ
 իմոյ {իմ}, [որ]ք երկիրպա/[գ.]անայք, յաղաւթս յիշեցէք:
 Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մախարյան Վ., Հանդարբերդի վանքը
 և նրա պեղումները, Երևան, 2009, էջ 76:
 Քնարավանին մերձ են Հանդարբերդը և այդ բերդի անվամբ
 ճանաչված վանական համալիրը: Բերդը գյուղից ուղիղ գծով
 հագիվ 0,3 կմ հարավ-արևմուտք է, սակայն 200 մ ավելի բարձր
 (ծ. մ. 1645 մ), իսկ համանուն վանքը՝ 0,5 կմ արևելք:

ՀԱՆՂԱԲԵՐԴ

Ոչ միայն Ծար գավառի, այլև ողջ Արցախի և ընդհանրապես
 Հայոց Արևելից Կողմանց պաշտպանական հզոր համակարգ ունե-
 ցող բերդերի շարքում Հանդարբերդն առանձնահատուկ տեղ է գրա-
 վում: Այն գտնվում է Լև գետի աջ կողմում՝ գետափից 0,6 կմ հարավ՝
 անտառածածկ և խիստ զառիթափերով առանձնացած լեռան գա-

զաթին (N 40°13'23.97", E 046°08'12.88", ծ. մ. 1645 մ): Չորսըրդից
 ուղղահայաց քարափներով առանձնացած բերդասարին մոտե-
 նալու հնարավոր միակ ուղին ձգվում է հարավարևմտյան կողմի
 պարսպապատի տակով և ժայռակերտ նեղ կածանով բերդի գլխա-
 վոր դարպասին է մոտենում հյուսիսային կողմից:
 Պատմական փառավոր անցյալ ունեցող Հանդարբերդը բազ-
 միցս հիշատակվում է հայ պատմիչների երկերում: Ինչպես վկայում
 է Մ. Կաղանկատվացին, Արցախի հյուսիսային գավառների տերը՝
 հայոց Առանշահիկ տոհմի իշխան Սահլ Սմբատյանի որդին՝
 Ատրներսեհը, Թ դարի երկրորդ քառորդին «շինե՛ գբերդն Հանդոս»⁴:
 Ի դեպ, հակաարաբական շարժումներին մասնակցելու
 պատճառով Բուղա գորապետը 854 թ. Ատրներսեհին գերել և
 աքսորել էր խալիֆի նստավայր Մամարա:

4 Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983,
 էջ 340:



ՔՆԱՐԱՎԱՆ. Հանդաբերդը հարավից, Ե-ԺԳ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

Դադլի վանքում պահպանված մի խաչքարի արձանագրության համաձայն՝ 1142-1182 թթ. Հանդաբերդը պատկանում էր Վերին Խաչենի իշխան Հասան Վախտանգյանին: Մոտավորապես 1250 թ. բերդը միևնույն անվամբ հիշվում է Գանձակեցու պատմության մեջ⁵:

1312 թ. Հանդաբերդը, որպես Դոփյանների իշխանության սահմաններում գտնվող ամրություններից մեկը, վկայվել է Խաչակապի Թարգմանչաց վանքի Ավետարանի հիշատակարանում⁶:

Տեղագիր հեղինակներից բերդն առաջինն արձանագրել է Ս. Ջալալյանը. «...տեսի զահագին ամրոցն կառուցեալ ի կատար միոյ վիմի միապաղաղ ի վեր բարձրացելոյ, ...ի լայնանիստ գագաթան շինեալ կայ հաստահիմն պարիսպ շրջապատեալ անա-

ռիկ պատնշաւ: Ի միջնավայր բերդիս է բնակարան կառուցանողի սորին Ատրներսեհ իշխանին Արցախու, յորում և է արգելանոցն կամ զընդան մահապարտից և ջրհոր մեծ և խոր...»⁷:

ԺԹ դարավերջին Հանդաբերդ է այցելել նաև Մ. Բարխուտարյանը. «Բերդս հիմնուած է մի միապաղաղ և ձուածն բարձրացած ապառաժի վերայ, որ առանձնացած է իւր չորս կողմերից...: Մի նեղ, զառիվեր և երկիւղալի կածան, որ փորուած է քարից, առաջնորդում է արևմտեան կողմից. անցնում հիւսիսային վիմափոր և քարուկիր, բայց կիսավեր դռնից, որի մօտ է դռնապանների վիմափոր այրն և ապա հիւսիս արևելեան կողմով մօտենում է բերդի դրան: Հարկ է յայտնել, որ կիսավեր դռմնս և պատս ծառայած են ինչպէս արտաքին պարիսպ և դռմն, որոց համանմանն կայ և բուն բերդի հարաւ արևելեան կողմում: Ներքին բերդն ունի ամուր շրջապարիսպ, շատ բուրգեր, 100 մետր



5 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 322:

6 Հայերեն ձեռագրերի ԺԴ դարի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 84 (այսուհետ՝ ԺԴ, համապատասխան էջերով):

7 Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 214:



ՔՆԱՐԱՎԱՆ. Հանդաբերդն արևմուտքից, արևելքից, միջնաբերդն արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994, 1997 թթ.)



ՔՆԱՐԱՎԱՆ. Գանդաբերդի հյուսիսակողմյան կիսաաշտարակը, պարսպապատի հյուսիսարևելյան անկյան մոտ գտնվող կեղծ դարպասը, դրվագ արևելյան պարսպապատի կիսաաշտարակներից, գլխավոր դարպասը ներքուստ (տ.ա.՝ և չափ.՝ Ս. Կարապետյանի, 1993-1994 թթ.)

երկարություն, 80 մետր լայնություն, 6 մետր 10 սանթիմ պարսպի բարձրությունն և միայն մի դռնն հիսսիսային կողմից: Ամբոցիս մակերևութային զգալի կերպով թեքում է դեպի արևելք, որի վերնամասն կազմում է առանձին ամբոց, որ ունի միայն մի դռն, նշանաւոր ամբոցիս և պալատանման ձև: Մակերևութի վերայ կայ ցորենի և ալրի ամբար, հաց թխելու փուռն և այլ շինութեանց հետքեր: ...կան եօթն վիմափոր, բոլորշի և խոր հորեր, որոց հինգն արևմտեան և երկուսն արևելեան կողմում: Նեղ են բոլոր հորերի բերաններն, լայն և բոլորակ մէջերքն և տակերն և մօտ 5 մետր խորությունն...»⁸:

Հարկ է նշել, որ բերդի պարսպապատերի շարվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկզբնապես Հանդաբերդը մի փոքրիկ ամբոցիս էր՝ անկանոն շրջապարսպով, արևելյան կողմից միակ մուտքով և 19 x 16 մ ներքին մակերեսով: Հետագայում միջնաբերդի վերածված բերդի այդ հատվածն ակնհայտորեն ավելի վաղ շրջանում էր կառուցվել՝ հավանաբար Ե-Է դարերում, իսկ իշխանն ավելի ընդարձակել, ամրացրել ու հզորացրել էր բերդը՝ այն համալրելով հուսալի ու երկարատև պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր միջոցներով (ջրի պաշարների կուտակման համար ժայռափոր հորեր, ռազմավարական նկատառումով՝ կեղծ դարպաս, շրջապարիսպը հզորացրած 8 կիսաբուրգեր և այլն):

Ատրնեբսեհի շինարարական համալրումներից հետո Հանդաբերդը (փոքրիկ միջնաբերդի հետ միասին) անհամեմատ ավելի ընդարձակ չափեր ընդունեց, քան մինչ այդ էր: Հատակագծում անկանոն ուղղանկյան տեսքով պարսպված արևելահայաց թեքությամբ բերդի ներքին մակերեսն արդեն զբաղեցնում էր 92 x 60 մ տարածություն: Պարսպապատերի միջին հաստությունը 1,30 մ է, իսկ պահպանված առավելագույն բարձրությունը՝ մինչև 8 մ: Բերդի տարածքում, բացի 5-6 վիմափոր հորերից (որոնց խորությունը, փվածքներով լցված լինելով հանդերձ, այսօր էլ մինչև 5 մ է), կիսավեր վիճակում պահպանվում են նաև ուղղանկյուն հատակագծով մի շինության մնացորդները: Ինչպես այդ փոքրիկ կառույցը, այնպես էլ բերդի ողջ համալիրը շարված են անմշակ տեղական քարերով, կրաշաղախով: Հյուսիսարևմտյան կողմի աշտարակի տակ՝ բերդ բարձրացող ժայռակերտ նեղ կածանի եզրին՝ ուղղահայաց և արևմտահայաց ժայռի մեջ, փորված է հարթ հատակով և կիսաշրջանաձև հատակագծով փոքրիկ մի «սենյակ», որը, թվում է՝ ծառայել է որպես պահակատուն: Չի բացառվում, որ այն նաև ադոբատեղի եղած լինել, քանի որ փորվածքը շատ նման է եկեղեցու խորանի:

Ի դարի սկզբին երկրաբան Գրիգոր Աղաբաբյանը բերդի ներսում՝ մատուռի և պարսպի միջև, մի խաչքար էր գտել («Խաչը փորագրած է վայելուչ եւ պարզ գծերով, առանց շատ բարդ նկարների»), որի 17 տողանի արձանագրությունը հրատարակել է Մեսրոպ արք. Մ. Տեր-Մովսիսյանը: Այն փորագրված է եղել խաչքարի թևերի տակ և հյուսիսային կողմին.

ԹՎ(ԻՆ) ՈՒՆԵ (1196), ես՝ Կ... | րագլիս ... | (կա)նգն(եց)ի | զխաչ(ս) | բարե|խաստութեն որ|դր իմ|ն՝ Խոստ|րովիկա, | որ վախշ|լանեցաւ | ի մէջ ա(յ)|լազ(գեաց), | որք կ(ար)դայ(ք)...

Հրատ. Տեր-Մովսիսյան Մ., նշվ. աշխ., էջ 93: Գիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 225: ՀՄՀԽԱԲՇ, էջ 27:

Ճանոթ. հնավայրում գտնված այս միակ խաչքարը հետագա ուսումնասիրողներից ոչ ոք այլևս չի տեսել:

ՀԱՆԴԱԲԵՐԴԻ ՎԱՆՔ

Քնարավանից 0,5 կմ, իսկ Հանդաբերդից՝ 0,8 կմ արևելք՝ Լև գետի աջ ափից 0,5 կմ հարավ՝ անտառածածկ սարերով շրջա-

8 **Քարխտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 409-410:


պատված գեղատեսիլ հովտի կենտրոնում (N 40°13'24.25", E 046°08'44.70", ծ. մ. 1557 մ), պահպանվում է, ըստ էության, պատմական անվանումը մոռացության մատնված և սոսկ պայմանականորեն մոտակա բերդի անվամբ կոչվող կիսավեր մի վանք: Դեռևս 1985 թ. այս հնավայրն առաջին անգամ այցելել և հուշարձանախումբը չափագրել է ճարտարապետ Մուրադ Հասրաբյանը: Նա ընդօրինակել է նաև տեղում գտնված արձանագրություններից երկուսը:

Այնուհետև 1994 թ. հնավայր է այցելել և առաջին անգամ նույնիսկ մասնակի պեղումներով և մաքրման աշխատանքներով ուղեկցված ուսումնասիրություններ կատարել Հակոբ Մինոնյանի ղեկավարած արշավախումբը⁹:

Նույն թվականին վանք այցելելու և հատկապես նրա վիմագրերն ընդօրինակելու հնարավորություն է ընձեռվում նաև տողեբիս հեղինակին¹⁰:

Արդեն 2004-2005 թթ. վանքը հնագիտական ընդգրկում պեղումներով լիարժեք ուսումնասիրում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը՝ Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ¹¹:

Համալիրը բաղկացած է ուղղանկյուն խորանով միջին չափի միանավ, թաղածածկ մեկ եկեղեցուց (արտաքին չափերը՝ 6,55 x



ՔՆԱՐՎԱՆ. Գանդաբերդի վանական համալիրի հատակագիծը (չափ.՝ Ա. Գալոբյանի, 2018 թ.)





9 Մինոնյան Հ., Արցախի և ազատագրված տարածքների..., էջ 9-11:
10 Նյութերը հրատարակվել են 1999 թ. (տե՛ս ՀՄՀԽԱԲՇ, էջ 27-31):
11 Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Երևան, 2009:



ՔՆԱՐԱՎԱՆ. Զանդաբերդի վանական համալիրն արևելքից, հյուսիսից, հարավից, հարավ-արևելքից և արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018, 2019 թթ.)



ՔՆԱՐԱՎԱՆ. Հանդաբերդի եկեղեցին՝ կից մատուռ-ավանդատներով արևմուտքից և գավթի մերթին տեսքը դեպի հյուսիս (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՔՆԱՐԱՎԱՆ. Հանդաբերդի վանական համալիրի հյուսիսարևմտյան մատուռն արևմտյան ճակատը, կտրվածքը դեպի հյուսիս և արևմտյան ճակատի վերակազմությունը, հուշահամալիրի կենտրոնական մասի արևմտյան ճակատի չափագրություններ և վերակազմություններ (արտատպված՝ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., «Հանդաբերդի վանքը և նրա պեղումները» գրքից)

5,10 մ, կառույցների մեջ թերևս առաջինն էր), նրան արևմտյան ճակատում համահավասար դիրքով հյուսիսից և հարավից կից համահորինվածք, սակայն չափերով ավելի փոքր մեկական մատուռ-ավանդատնից, բոլոր այս երեքին արևմտյան կողմից կցված անսյուն կենտրոնաերդիկ հորինվածքով գավթից, սրան էլ արևմուտքից կից կրկնահարկ զանգակատնից, նույնպես և հյուսիսից կցված մի երրորդ մատուռ-ավանդատնից: Միմյանց կից վերոնշյալ կառույցներից զատ՝ շուրջ 10 մ հյուսիս-արևմուտք առկա է ևս թաղածածկ հորինվածքով փոքրաչափ մի մատուռ կամ մատուռ-տապանատուն:

Բոլոր շինություններն էլ կառուցված են անմշակ քարով, կրաշաղախով, ներքուստ պատված են եղել սվաղի շերտով: Տանիքները կղմինդրածածկ էին: Գրեթե բոլոր շինությունների որմերում թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ ազուցված են բեկորված կամ ամբողջական բազմաթիվ խաչքարեր (պատկերաքանդակային լուծման եզակիությամբ մեծարժեք է հատկապես առանձին կանգնած մատուռն ներսում՝ հյուսիսային որմի մեջ ազուցված խաչքարը): Նրանցից մի քանիսը կրում են տարբեր չափով պահպանված արձանագրություններ:



ՔՆԱՐԱՎԱՆ. Հանդաբերդի եկեղեցու ներքին տեսքը դեպի արևմուտք և արևելք, զանգակատան պահպանված առաջին հարկն արևմուտքից, հատված մույն մասում ագուցված խաչքարերից, հարավից և հյուսիսից կից մատուռ-ավանդատների ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Հնավայրում պահպանվել են ինչպես շինարարական, այնպես էլ նվիրատվական բնույթի արձանագրություններ: Ընդ որում, ակնհայտ է, որ հակառակ գերեզմանական (թերևս նաև պաշտամունքային որևէ կառույցի) ավելի հին հուշարձանների առկայությանը՝ այստեղ շինարարական նշանակալի աշխատանքներ են ծավալվել հատկապես 1270-ական թթ.:

Սկրտության ավազան.

Ա(ստուա)ծ որո[րմեա] գԴ(աւի)թ
յ(ի)շէ զվ(ար)դ(ապետ), ՉԻԲ (1273):
Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ.,
Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 78 (գրչ. էջ 79):



Արձանագիր բարավոր (49 x 73 x 9,5 սմ)՝ ընկած ժամատան արևմտյան կողմում՝ մի քանի մետր հեռու, 7 տող.

ՉԻԵ (1276) թ., | ա(ստուծո)վ շինեցաւ ժամատունս եւ եկեղեցիքս Դ(աւի)թ վ(արդա)պ(ետ)ի | ձեռաք: Ազատեցին զս/ա հաթերքեցիքն յ(ամենայն) չարէ: | Ա(ստուա)ծ արինէ զնոսա, ով | խափանէ՝ դատի:



Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 27: Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 15, 70:

Կղմինդրի արձանագիր բեկորներ. հայտնաբերվել են պեղումների ժամանակ. նրանցից երկուսի վրա տարեթվի մնացորդներ են.

Թ(իմ) ... Դ
ՉԻ... (1271-1280 թթ.):

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 81:

Արձանագիր բարավորի բեկոր (168 x 76 x 16 սմ). ընկած ժամատան ներսում, փորագիր 6 տող.

Յանու[ն] ա(ստուծո)յ | ես՝ Սասնայ, յ[ոս]լաւ միաբան եղէ Դ[աղի վան]ք՞ ամէն եկեղեցիքս... [խոստ]լաց(ա)ն պատարագեն գ... [ետ] | մահու ինձ՝ ս(ուր)ք Գրիգորի տաւնին՞:



Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 27: Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 72-73:

Ծանոթ. 2004-2005 թթ. պեղումների ժամանակ հայտնաբերվել է սույն բարավորի նաև մյուս կեսը, ցավոք, գրեթե անհետացած արձանագրությամբ: Ի դեպ, հավանաբար մուլյն Սասնան է, որը 1261 թ. դարձել էր Դաղի վանքի միաբանության անդամ, որտեղ և այդ մասին վկայող արձանագրություն թողել:

Արձանագրություն՝ եկեղեցու մուտքից աջ, 7 տող.
[Ես] Աշոտ՝ Հարթ[ա ո]րդի, Գ (3) համա[ղ]կի հող իմ հոգոյ | [ե]կեղեցիս տվի, տ[ա]րումն Գ (3) ար ժամ, ով չառեայ՝ իմ խղճոյս տ(է)ր է:

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 71:



Արձանագրություն՝ եկեղեցու մուտքից աջ, 8 տող.

Ես՝ Վասակ՝ Կուտ որդի, | տվ(ե)ց(ի) եկեղեցիս հող եւ իրք, ի | տարումն Գ (3) ար ժամ զիս եւ զիմ ն(ն)ջե(ցեա)լք, յաղաւթք | [յի]շեցէք: Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 72:



Խաչքարի բեկոր (158 x 110 x 14 սմ)՝ ընկած ժամատան ներսում, ստորին հատվածում՝ 10 տող.

Ես՝ Վասակ՝ թոնն Հարթի, կա[[ն]զնեցի զխ[[ա]չս, ես եւ մայր | հ{ո}ւար իմոյ՝ | [[Աշո]տայ, | որք երկիրպա/զայք՝ յաղաւթս յիշեցէք, թվ(ին) [Ո]խԳ (1194):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 28: Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 74:

Ծանոթ. 2004-2005 թթ. պեղումների ժամանակ Հ. Պետրոսյանի արշավախումբը հայտնաբերել է նաև տարեթիվը կրող բեկորը:



Խաչքար (86 x 58 x 11,5 սմ). վանքի հյուսիսարևմտյան կողմում՝ շուրջ 20 մ հեռու, բեկորված խաչքարի ստորին կեսին՝ 7 տող.

Ես՝ Ջալաք, կա(ն)զնեցի զխաչս, փրկո(ւ)թի(ւ)ն հուգոյ աղբուր իմոյ՝ Խափլայ, որք (ե)րկիրպագէք՝ յաղաւթս յիշեցէք, թիւն ՈՒԳ (1194):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 28: Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 75:




Խաչքար. արձանագրությունը՝ 8 տող.

Ես՝ Արիա... / [զխաչս] ..., // որք / երկիրայա/զան/էք յա[ղաւթս] ..., / թվ(ին) ՈՒԶ (1197):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 28: Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 78:


Ծանոթ. արձանագրության սկզբնամասը փորագրված է նեղ կողին:



Խաչքար. հորինվածքի վերին (տարեթիվն է) և ստորին մասերում՝ փորագիր 5 տող.

Թ(վին) ՉԻ (1271), / ես՝ Մխիթար, եղբայր իմ Սաւրէ, կա/նկեցաք զխաչս մար մեր եւ հար:

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 76:



Խաչքար. արձանագրությունը՝ 4 տող.

Ես՝ Մամիկ, կազինեցի զխաչս / փրկութի(ւ)ն հոգո մոր իմն՝ Շ/ահինդիս {ո}տո, որք երկ {յ}րպա-գ(ա)յք՝ յաղութս (յ)հշեցէք:

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 75:

Խաչքար. հարավային նեղ կողին՝ 8 տող.

Ես՝ Աղբ[ա]յր, կա/[ն]զնեցի / [զ]խաչս [փր]կութի(ւ)ն հոգ[ն]յ հա/... ոյ[ք]:

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 77:

Խաչքար (106 x 62 x 14 սմ). ժամատան արևմտյան կողմում, վերնամասում՝ 2 տող.


[զ]խաս(ա)ն եւ [Մ]ամբան / յի-շեցէք ի Ք(րիստո)ս, Գրիգ[որ]:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 28: Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 77:

Խաչքար. հարավային նեղ կողին պահպանվել է 6 տող.

ՈԾԸ (1209) թ[վ]ականիս, / ես՝ ալ(ա)ր(ոն) .../ուլաք կանգն[եց]ի զ[խաչս] ...:

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 77:



Խաչքար. արձանագրությունը՝ 7 տող (ստորին թևի 2 կողմերում տարեթիվն է՝ մեկ տողով, կողին՝ 6 տող).

Թվ(ին) ՈԿԱ (1212): // ...կ/ ...դր /...կո/...ծ /...ատ/...սար /...ակ/...ն:

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 78:

Խաչքար. արձանագրությունը՝ 6 կիսաեղծ տող.

Ա(ստուա)ծ / [ող]որմի / ... Գա/ե/... ե(ւ) ... / ...թվ(ին) Ո..., ...ետա...:

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 78:

Խաչքար. ստորին բեկորն է, արձանագրությունը՝ 3 տող.

...արի / ... յիշատ/ակին:

Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 78:

Խաչասալ. ստորին բեկորն է, արձանագրությունը՝ 3 տող.

Թ[խ] / ՉԻԵ (1276), ... յաղութս (յ)հշ(եցէք) /...:


Հրատ. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 79:

Տապանքար. արձանագրությունը՝ 5 տող.

Այս է հանգի/ստ տ(է)ր Ստեփ/անուսի՝ Աղու/անից կաթող/իկոսի:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 28: Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 79:

Ծանոթ. Աղվանից կաթողիկոսության գավազանագիրը մեզ է ավանդել Ստեփանոս անվամբ 5 կաթողիկոսների (Ստեփանոս Ա. մինչև 1079 թ., Ստեփանոս Բ. 1129-1131 թթ., Ստեփանոս Գ. 1155-1195 թթ., Ստեփանոս Դ. 1262-1323 թթ., Ստեփանոս Ե. հիշ. 1476 թ.): Սույն անթվակիր տապանագիրը գրչագրական առումով կարող էր վերագրվել ԺԲ-ԺԴ դարերին, ուստի և կարող էր պատկանել Ստեփանոս Գ-ին կամ Դ-ին, սակայն հայտնի է, որ 1195 թ. վախճանված Ստեփանոս Գ-ն ամփոփվել է Հերզ գավառում (ըստ ամենայնի՝ Հերզա Արքայել անապատում, տե՛ս սույն աշխ., էջ 106), ուստի և սույն տապանքարը կարող է վերաբերել միմիայն Ստեփանոս Դ-ին, որից էլ հետևում է, որ այն 1323 թ.-ից է:



ՔԱՐԱՎԱՆ. Գանդաբեղի վանքի եկեղեցիների տեղահան (1276 թ.) և կոտրված (ԺԳ դար) բարավորներ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՔՆԱՐԱՎԱՆ. Հանդաբերդի վանքում պահպանված բացառիկ պատկերաշխարհով խաչքար, 1194 թ. (Լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ՔՆԱՐԱՎԱՆ. Հանդարերդի վանքում պահպանված 1194, 1197 և 1212 թթ. և ժԳ դարի մի խումբ այլ խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ՔՆԱՐԱՎԱՆ. Հանդաբերդի վանքի առանձին կանգնած մատուռն արևմուտքից, մերջին տեսքը դեպի հյուսիս և արևմուտք, մերսում՝ հյուսիսային որմի մեջ ագուցված խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Հանդարերից արևելք և հյուսիս-արևելք՝ Լև գետի հովտում կան ձորալանջերին, կան մի քանի հին գյուղատեղիներ, որտեղ ԺԹ դարի վերջերին կան Ի դարի սկզբներին հաստատվել են նստակեցության անցած մահմեդական ցեղերը: Դրանցից են ներկայիս *Ղանլիքյանը* (թարգ.՝ Արնագյուղ), *Էլյասալիար* կամ *Էլլա Ջալլար*, *Մարաղան*, *Բաբաշլար*, Փոքր Լև (նաև՝ *Թաքյադան* կամ *Թաքյադայա*) և *Բոզլու* գյուղատեղիները: Այս վայրերում ևս առկա են այդ գյուղերի բնիկներից ավանդված նյութական մշակույթի հետքերը:

Քնարավանից Լև գետի հունով հագիվ 2 կմ վեր այն վայրն է, որտեղ գետի երկու ջրառատ ճյուղերը միախառնվում են իրար: Նրանցից ձախակողմյանը բուն Լևն է, որն այս վայրից ևս 2 կմ վեր իր հերթին ձախից դարձյալ ընդունում է մի վտակ: Հենց այստեղ՝ գետակի զույգ ափերին է գտնվում Փոքր Լև գյուղատեղին:


ՓՈՔՐ ԼԵՎ

Գյուղատեղիի տարածքում՝ գետակի ձախ ափին վեր խոյացած ժայռազանգվածի արևելյան կողմում՝ նրանից մի քանի մետր հեռավորության վրա (N 40°15'49.56", E 046°07'52.30", ծ. մ. 1606 մ), կիսավեր պահպանվում է ԺԳ դարում կառուցված եկեղեցին, իսկ շուրջը նշմարվում են տակնուվրա արված միջնադարյան գերեզմանոցի մնացորդները:

Եկեղեցին ունի միանավ, թաղածածկ հորինվածք (արտաքին չափերն են՝ 7,46 x 5,58 մ)՝ ուղղանկյանը մոտ (քիչ սեղանաձև) խորանով: Դեպի ներս լայնացող զույգ լուսամուտների առկայությունն արևելյան ճակատում կարծել է տալիս, որ կառույցն ունեցել է երկխորան հորինվածք, սակայն ժամանակի ընթացքում խորանները միմյանցից բաժանող միջնորմի հեռացմամբ եկեղեցին կորցրել է իր՝ տիպային այդ առանձնահատկությունը:

Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Որմերը սովորականից ավելի հաստ են (արևմտյան ճակատում՝ 117 սմ): Շարվածքն իրականացված է տարբեր չափի անմշակ և կիսակոփ քարով, կրաշաղախով: Հարդարանքի առումով աչքի է ընկնում եկեղեցու արևմտյան ճակատը, որտեղ բարավորի հյուսկեն

եզրագոտու ներքո քանդակված գեղակերտ և մեծադիր խաչաքանդակից զատ՝ առկա են նաև նվիրատվական բնույթի զանազան չափերի բազմաթիվ այլ խաչաքանդակներ: Ի դեպ, նույնն է պատկերը նաև ներքուստ, որտեղ բացի խաչաքանդակներից՝ կան նաև որմերում ագուցված մի քանի խաչքարեր: Ընդ որում,




ՓՈՔՐ ԼԵՎ. Եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Գալոբյանի, 2018 թ.)

մանանտիպ խաչաքանդակներ տեսանելի են ոչ միայն կառույցի որմերին, այլև եկեղեցամերձ ժայռերի՝ բնականից ողորկ կամ արհեստականորեն հարթեցված մակերեսներին:

Գողտրիկ և իրավամբ բարձր ճաշակով կառուցված եկեղեցին կարելի է դիտարկել որպես գավառամասի ճարտարապետական և քանդակագործական մտքի առավել բնորոշ և հատկանշական մնուշներից մեկը:

Ըստ եկեղեցու հորինվածքային, կառուցողական և հատկապես հարդարանքի տարրերի գեղարվեստական առանձնահատկությունների ուսումնասիրության՝ կարելի է թվագրել ԺԳ դարով:

Եկեղեցուն հյուսիսից, հարավից և արևմուտքից հարող տարածքը հնամենի գերեզմանոցն է: Այստեղ պահպանվել են ուշագրավ զարդաքանդակներով 5-6 խաչքարեր, բոլորն էլ՝ տեղահան



ՓՈՔՐ ԼԵՎ. Եկեղեցու արևմտյան ճակատը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)



ՓՈՔՐ ԼԵՎ. Եկեղեցին հյուսիս-արևմուտքից, արևմուտքից, արևելքից, մերքին տեսքը դեպի հյուսիս, խաչքարեր եկեղեցամերձ ավերված գերեզմանոցում, ԺԳ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994, 2015 թթ.)





(որոշ մասը՝ նաև բեկորված): Դրանց թվում արձանագրություն է կրում միայն մեկը.

Խաչքար. երկատված (վերին կեսի չափերն են՝ 69 x 71 x 21 սմ), 12 տոն.

Կանկնե(ա)լ / կառո(ւ)ցաւ ս(ուր)ք նշ(ան ի քար)էխաւ(ս)ու-
թի(ւն) / Անայի՛ն, որք եր(կիրպագանէք յաղաթ)ս յիշե(ցէք, || ի
թուի(ն) / Չ... (1251-1350 թթ.):

Հրատ. ՀՄՀԽԱԲՇ, էջ 33:



ՓՈՔՐ ԼԵՎ. մկիրատվական ժայռախաչեր և խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 և 2015 թթ.)

ՓՈՔՐ ԼԵՎ. բեկորված խաչքար գերեզմանոցում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)




ՓՈՔՐԻ ԼԵՎ. ԵԿԵՂԵՂՈՒ ԲԱՐՔՎՈՐԸ (ԼՐԱՆ՝ Ս. ԿԱՐԱՎԵՏՅԱՆԻ, 1994 Ք.)

Գժվար է վստահաբար նույնացնել, սակայն թվում է, թե 1885 թ. *Քեշիշքենդ* անվամբ գյուղատեղիի եկեղեցու մասին (երևում է, որ հեղինակը տեղում չի եղել կամ միայն հեռվից է տեսել) ուղեգիր Հայկունու (Եղիշե ավազ քահանա Գեղամյանց) վկայությունը վերաբերում է հենց այս եկեղեցուն: Ահա խնդրո առթիվ հետաքրքրություն ներկայացնող նկարագրությունը. «Տեսանք նույնպես «Քեշիշքենդ» կոչումով գիտի պատմական աներակներն, որոց վերայ (ասացին) շատ արձանագրութիւնք կան...»¹:

Երկրորդ հեղինակը, որը նույնպես հնավայր չի այցելել և միայն հպանցիկ տեղեկություն է տալիս, Մ. Տեր-Մովսիսյանն է.

«Քեշիշքենդ. Այդ անուամբ յայտնի աներակ գիտը դարձեալ Լեւոնագետի ակինն է, որտեղ ի մի է խառնում գետակի ճիւղերից մեկը, մեծ թեքութեամբ ձորակի միջով փրփրալից ներքե գլորելով: Ընդամենը երեք տուն այրումներ են ապրում այդտեղում եւ տակաւին կանգուն է հին եկեղեցին: Շինութիւնը դիտեցի հեռվից, երեկոյացած ժամանակի պատճառով կանգ առնել եւ արձանագրութիւնը կարդալ չկարողացայ, մանաւանդ որ հասարակ քարերից աննշան շէնքը, անտանելի ճանապարհներից յոգնած, առանձին գրաւչութիւն չէր ներկայացնում: Գիտական հասարակ եկեղեցի էր, որ նմաններին յետոյ ուրիշ տեղերում պատահեցի»²:



ՓՈՔՐ ԼԵՎ. Ժայռախաչեր Բոզլու գյուղատեղիում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

ՓՈՔՐ ԼԵՎ. խաչքար գյուղատեղիից 1,5 կմ հյուսիս-արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

¹ Հայկունի (Եղիշե ավազ քահանա Գեղամյանց), Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», 1885, № 80, 13 հոկտեմբերի, էջ 3: Տե՛ս նաև նույնի՝ Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010, էջ 74:

² Տեր-Մովսիսյան Մ., նշվ. աշխ., էջ 93-94: Նաև նույնի՝ Հայկական արձանագրութիւններ, «Ազգագրական հանդես», 1913, XXV, № 2, էջ 76:

Հաստատապես դժվարանում ենք պնդել, բայց տեղանքի նկարագրությունը հաշվի առնելով՝ թվում է, թե խոսքն այս նույն Փոքր Լև (*Թաքյաղայա*) անվամբ հայտնի գյուղատեղիի և եկեղեցու մասին է:

Փոքր Լևի սույն եկեղեցուց շուրջ 1 կմ հյուսիս-արևելք՝ եկվորներից *Բողլու* անունը ստացած գյուղատեղիի կենտրոնում՝ հողի միջից փոքր-ինչ դուրս ցցված հարթ ու լերկ ժայռազանգվածի արևմտահայաց երեսին, քանդակված են գույգ խաչեր: Ըստ կատարման ձևի և ոճական առանձնահատկությունների՝ խաչաքանդակները ԺԲ-ԺԳ դարերի գործ են:

Նույն դարերին վերաբերող մենավոր մեկ այլ խաչքար (180 x 93 x 20 սմ) էլ պահպանվել է Փոքր Լևից 1,5 կմ հյուսիս-արևմուտք՝ 15 մ բարձրությամբ մի ժայռի հարևանությամբ (N 40°16'24.00", E 046°07'09.86", ծ. մ. 1844 մ):

Բողլուից 2 կմ հարավ-արևելք (ծովի մակերևույթից բարձր է 1950 մ) հարավահայաց լեռնալանջին, տարածված են եկվորներից *Բարաշլար* անունը ստացած, իսկ նրանից 1,5 կմ հարավ-արևմուտք՝ *Մարալթամ* (հավանաբար պատմական Եղջերուենիքն է) գյուղատեղիները: Այս երկուսի միջև՝ ձորի պռնկին, թիկունքի վրա ընկած վիճակում պահպանվել է ԺԱ-ԺԲ դարերին բնորոշ, զուսպ հարդարանքով, ամարձանագիր մենավոր մի խաչքար:

ԼԵՎ

Լև գետի ամենավերին՝ ալպիական գոտու շրջանում, ծովի մակերևույթից 1730-1840 մ բարձրության վրա է գտնվում համանուն գյուղը: Նույնանուն փոքր գյուղից զանազանելու համար այն երբեմն կոչվում էր նաև Մեծ Լև:

Գյուղատեղիի տարածքում պահպանված նյութական մշակույթի մնացորդները վկայում են, որ առնվազն զարգացած միջնադարից ի վեր այն գավառամասի հայտնի և բազմամարդ հայկական բնակավայրերից էր: Այստեղ հայ կյանքը շարունակվել է մինչև ԺԸ դարի առաջին տասնամյակները:

Գրավոր աղբյուրներում գյուղն իր նշանավոր վանքով առաջին անգամ հիշատակվում է 1328 թ. «...ես՝ աղախին Քրիստոսի Ռեզուքանս, ստացայ զաստուածափառ և զաշխարհալոյս զկենսունակ սուրբ Աւետարանս ի հալալ արդեանց [յիշ]ատակ ինձ և տե[ա]լուն ինոյ՝ Էաչոյ. և Թուղտիկին, և հանգուցեալ պարոնացն Վարհամայ, և Մինա խաթունին, և տուաք ի վանս Լևայ, զոր էր ընդ իշխանութեամբ մերով և էր մեր մար(՞) գերեզմանատեղ, ի ձեռն լուսափայլ եպիսկոպոսին Դաթի, որ էր առաջնորդ տեղացս»¹:

Ի թիվս գավառամասի մի շարք այլ գյուղերի՝ 1763 թ. Լևը հիշվում է Դադի վանքապատկան կալվածացուցակում²: Ի դեպ, գյուղը վանքապատկան կալվածք էր համարվում նաև 1913 թ.³ (հավանական է ընդհուպ խորհրդային կարգերի հաստատումը):

Ի դարի սկզբներից պատմական գյուղատեղիում հաստատվում են խաչնարած ցեղերը:

1908 թ. Լևն ուներ ընդամենը 46 քուրդ բնակիչ⁴, 1952 թ.՝ 45 տուն⁵, 1972 թ.՝ 65 տուն⁶, իսկ 1981թ.՝ 496 բնակիչ⁷: Ասել է թե



ԼԵՎ. ամենայն հավանականությամբ, ոչնչացված Լև վանքից հափշտակված և որպես շինանյութ յուրացված երեսապատի սրբատաշ քարերից մի քանիսը (լուս.՝ Ս. Չալումյանի, 2000-ական թթ.), հատվածներ գյուղի հայոց գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

1908-1981 թթ. ընթացքում գյուղի՝ ծագումով քուրդ բնակչության թվաքանակն ավելի քան տասնապատկվել է:

Գյուղի հայոց գերեզմանոցում (N 40°15'35.02", E 046°05'55.43", ծ. մ. 1768 մ) պահպանված 6 խաչքարերի (3-ը՝ արձանագիր), 2

1 ԺԴ, էջ 207:

2 Ջամբո, էջ 283:

3 ՀԱԴ, ֆ. 57, ց. 1, գ. 400, ք. 1: Տե՛ս նաև Ասպետ, Հայոց վանքերը Ղարաբաղում, «Արձագանք», 1886, № 44, 30 նոյեմբերի, էջ 577: «Ազատամարտ», 1992, № 15, էջ 14:

4 Кавказский календарь на 1910 г., ч. 1, с. 308.

5 «Հայրենիքի ծայն», 1993, № 20, էջ 5:

6 Նույն տեղում:


7 Աղբյուրագրական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ԱՍՀ, համապատասխան հատորներով), հ. 6, Բաքու, 1982, էջ 176:



ԼեՎ. խաչքարեր և տապանաքար գյուղի հայոց գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԼեՎ. խաչքար գյուղի գերեզմանոցում, Ժե-ԺՁ դդ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԼեՎ. մենավոր խաչքար (ԺԵ-ԺԶ դդ.) գերեզմանոցից 480 մ հարավ-արևմուտք, 1695 թ. տապանաքար գերեզմանոցում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

քանդակագարդ և մեծաթիվ անմշակ տապանաքարերի գոյության մասին վկայվել է դեռևս 1998 թ.⁸:

2018 թ. սահմանապահ զինվորների առաջնորդությամբ մեզ նույնպես հաջողվեց լինել Լևի հայոց գերեզմանոցում, ինչպես նաև գյուղամերձ մի քանի այլ հնավայրերում: Պարզվեց, որ համակ սրբատաշ քարով կառուցված և առնվազն 1328 թ.-ից գոյություն ունեցած Լևի վանքը, ըստ ամենայնի, ճարտարապետական մեծարվեստ մի կառույց է եղել (երեսապատի քարերը, որպես շինանյութ, գործածված էին թրքացած քրդերից մեկի

⁸ Միմոնյան Հ., Քարվաճառի հուշարձանները, «Բնօրրան», 1998, № 1-2, էջ 37:

բնակելի տան որմերում), իսկ գերեզմանոցում և գյուղամերձ հանդամասերում պահպանված խաչքարերից մի քանիսն էլ աչքի էին ընկնում գեղարվեստական և պատմական բարձր արժեքներով:

Արձանագիր հուշարձաններից գերեզմանոցում առկա էին միայն երկուսը (մեկը՝ խաչքար, մյուսը՝ տապանաքար)։

Խաչքար (165 (186) x 66 x 34 սմ). տեղահան, սակայն ամբողջական, հորինվածքի ստորին հատվածում քառատող արձանագրված է.

Ես՝ Բագում, կանկ(ն)ե/ցի խաչս ինձ և որ/դո իմ և աղբար / իմ, ա(ստուա)ծ ողորմի:

Հրատ. առաջին անգամ:



ԼԵՎ. գյուղատեղիի հարավակողմի գերեզմանոցում պահպանված անարձանագիր խաչքարերը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Ճանր. ըստ ոճական, գեղարվեստական և գրչագրական առանձնահատկությունների ուսումնասիրության՝ կարելի է թվագրել ԺԵ-ԺԶ դարերով:

Բազմաթիվ տապանասալերի թվում առկա է նախնական տեղում պահպանված ուղղանկյունաձև մի տապանաքար, որի արևմտյան նեղ կողմնի պարզ խաչաքանդակ է, իսկ հարավային երեսին՝ կիսաեղծ արձանագրություն:

Տապանաքար (130 (156) x 54 (80) x 60 (75) սմ). հարավային նիստին՝ 4 տող.
Այս է հանգի(ս)տ Ես... ..մինի նա... / ես՝ Ամիրի ..., / կա[զ]մել յորի...n(ս)տա Յովանէս, / թի(ւ)ն Ռ-ՃԻԴ (1695) էր:
 Հրատ. առաջին անգամ:

Գերեզմանոցից ուղիղ գծով 480 մ հարավ-արևելք (N 40°15'26.53", E 046°05'38.37", ծ. մ. 1838 մ) բնական ժայռակտորից ձևված հզոր մի պատվանդանից մի քանի մետր հեռավորությամբ, մեր զինվորականները հայտնաբերել և կանգնեցրել են ամբողջական պահպանված ևս մի խաչքար⁹:

Խաչքար (155 x 76 x 29 սմ). հյուսիսային նեղ կողմն՝ 22 տող.
ԹՎ(ին) ... / Դ, ես՝ Միխիթար, / իմ աղբ/երքս գն/եցաք զ/հողն մ/լլք մեր / որդոց/ն ան.../րայն պ/արոն ն.../եծելն ա/ւրինաժ / իրաւունք առնէ, / կանգնե/ցաք զի/ւաչս մե/ր մաւրն / յաղաւթս յի(շեցեք):
 Հրատ. առաջին անգամ:
Ճանր. թվականի հարյուրավորը բերև Չ է (քիչ հավանական է, որ այն Ջ եղած լիներ): Ամեն դեպքում կարծում ենք, որ հուշարձանը կարելի է թվագրել ԺԴ-դարի առաջին կեսով:

Երևում է, որ միջնադարում ԼԼ գյուղը բաղկացած է եղել մի քանի թաղերից, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր ոչ մեծ գերեզմանոցը: Համենայն դեպս, վերոնշյալ մենավոր խաչքարից զատ, որ կարող էր պարզապես տեղում գոյություն ունեցած գերեզմանոցից մնացած վերջին հիշատակը լինել, ևս մեկ գերեզմանոց էլ առկա է նրանից 510 մ հարավ-արևմուտք կամ գյուղի մեծ գերեզմանոցից 770 մ հարավ (N 40°15'11.23", E 046°05'45.87", ծ. մ. 1779 մ)՝ ճամփեզրին: Մեր զինվորականներն այստեղ ևս խաչքարերն ու նրանց բեկորները մեկտեղել են և կանգնեցրել, սակայն այս վերջինների մեջ արձանագիր միավորներ չկան:

Ինչ վերաբերում է Ռ-մբոստյան լեռնանցքի արևելյան լանջերից սկիզբ առնող և ԼԼ գետին աջից միախառնվող Ուռիջուր վտակին, ապա վերջինիս հովտում գտնվող նախկին մի քանի գյուղատեղիներից արդեն տարիներ են, որ վերստին հայաբնակ են դարձել երկուսը՝ Նոր Կարաչինար և Նոր Խարխափուտ գյուղերը¹⁰:

ՆՈՐ ԿԱՐԱՉԻՆԱՐ

Գտնվում է ԼԼ գյուղից ուղիղ գծով 3,5 կմ հարավ-արևմուտք: Գյուղից հեռացված եկվորներն այն անվանում էին *Ջամիլլու*: Պատմական բնակավայր է, և դա երևում է եկվորների ձեռքով ավերված հայոց գերեզմանոցի մնացորդներից:

2015 թ. դրությամբ գյուղն ուներ 24 տուն (123 շունչ) բնակչություն: 2002 թ.-ից գործում է Արամայիս Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցը, որտեղ 2015 թ. ուսանում էր 27 աշակերտ¹:

Անցած տարիներին այս գյուղի տարածքից հայտնաբերվել են գրեթե մեկ տասնյակի հասնող առավելապես բեկորված խաչքարեր: Պահպանության նպատակով բնակիչները դրանք մասամբ հավաքել են դպրոցամերձ տարածքում, որոշ մասն էլ պարզապես կանգնեցրել այնտեղ, որտեղից գտել են:


⁹ Երեսնիվայր ընկած այս խաչքարը գտել և միահամուռ ուժերով կանգնեցրել են զինվորականներ Աբգար Մանուկյանը (էրքեջից), Մամվել Հարությունյանը, Անդրանիկ Մանուկյանը, Անդրանիկ Ղանդիլյանը, Հակոբ Մուքիսայանը, Արամ Այվազյանը, Էդգար Մարգարյանը, Հայրիկ Գասպարյանն ու Գևորգ Մկրտչյանը: Մույնի մասին իմացանք դեպի խաչքար մեզ առաջնորդած ակամաբերողաբնակ վերիշենցի Միխիթար Մուսլանից: Բոլորին հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

¹⁰ Անվանակոչվելով ի պատիվ և ի հիշատակ բռնագավթված համանուն գյուղերի՝ առնվազն տարօրինակ ենք համարում, որ, օրինակ, Խրխափուր անվան փոխարեն նոր գյուղը պաշտոնապես կոչվում է թուրքի աղավաղված արտասանությամբ ժառանգված Խարխափուտ: Ինչ վերաբերում է Կարաչինար թուրքական ծագմամբ գյուղանվանը, ապա կարծում ենք՝ բնավ էլ հարկ չկար այն ռուսական Կարաչինար տարբերակով պաշտոնականացնելու, քանի որ, միևնույն է, այս տեղանունը մնում է հայաշխարհին օտար և անհարազատ:

¹ **Կարաբանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 285: Տե՛ս նաև **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.**, նշվ. աշխ., հ. 3, էջ 612:



ՆՈՐ ԿԱՐԱՉԻՆԱՐ. Խատված գյուղից, Արամայիս Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցը և Խաչքար, ԺԴ-ԺԵ դդ. (Լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՆՈՐ ԿԱՐԱՉԻՆԱՐ. վերջին տարիներին գյուղաբնակների կողմից հայտնաբերված խաչքարեր, ԺԳ-ԺԵ դդ. (լուս. և գրչ.՝Ս. Կարապետյանի, 2015, 2018 թթ.)



ՆՈՐ ԿԱՐԱՉԻՆԱՐ. խորհրդային տարիներին կառուցված տապանատուն գյուղի մահմեդական գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Ոճական և գեղարվեստական առումով ԺԳ-ԺԴ դարերին վերաբերող խաչքարերից մեկն արձանագիր է.

Խաչքար (55 x 118 սմ). ամբողջական է, սակայն տեղահան, հորինվածքի ստորին ծախս հատվածում՝ 7 տող.

Ա(ստուա)ծ / աղ/որմի / Վարթ/ան/այ, աման:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ուշագրավ են ողորմի բառի աղորմի և ամեն բառի՝ աման գրության ձևերը:

Նոր Կարաչինարի հյուսիսարևելյան եզրին է գյուղից հեռացված եկվորներից ժառանգված գերեզմանոցը: Այստեղ պահպանված մի քանի տապանաքարերի արձանագրությունները բացառապես ռուսատառ են և փաստորեն խորհրդային տարիներից են ավանդված: Վերջիններիս մեջ է նաև նույն ժամանակաշրջանին վերաբերող սրավուն գմբեթի տեսքով մի տապանատուն՝ կառուցված անմշակ քարով և ցածրորակ շաղախով:



ՏՐՏՈՒ (ԹԱՐԹԱՌ) ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԸ



Տրտու (Թարթառ) գետի կիրճը վերին հոսանքի շրջանում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

Տրտու գետը սկիզբ է առնում Նոր Շահումյանի (Քարվաճառի) շրջանը Վայոց ձորից բաժանող լեռնաշղթայի հյուսիսասիայաց լանջերի՝ ավելի քան 3000 մ բարձրություններից բխող աղբյուրներից։ Մինչև Չարեքտար գյուղի մատույցներում Մարտակերտի շրջանի սահմանը հատելը երկու կողմերից անհաշիվ մեծ ու փոքր վտակներ ընդունելով՝ Տրտուն ձգվում է շուրջ 70 կմ։ Հոսքի այդ ամբողջ ճանապարհին գետին առավել ջրառատ միայն երկու վտակ է խառնվում, սկզբում՝ Լևը (ձախից), ապա՝ Դուտխուն (աջից)։

Աշխատության նախընթաց բաժիններում արդեն իսկ ներկայացրել ենք վերոնշյալ 2 վտակների հովիտներում գտնվող բնակավայրերն ու պահպանված պատմական հուշարձանները, ուստի այժմ հերթն արդեն գլխավոր՝ Տրտու գետի ձորահովտինն է, որին պիտի ծանոթանանք այն նույն սկզբունքով, ինչը կիրառել ենք Լև և Դուտխու գետերի պարագայում, այսինքն՝ գետի հունով կամաց-կամաց պիտի վեր բարձրանանք։

Եվ, այսպես, շրջանի արևելյան ծայրից գետափն ի վեր առաջանալիս դեռ մինչև Դաղիվանք հասնելն առաջին բնակավայրը Տրտուի ձախ ավիին գտնվող, պատմական անունը մոռացության մատնված, ապա խաչմարած եկվորներից *Բաղրուփայա* հորջորջված, իսկ ներկայումս պաշտոնապես Նոր Էրբեջ վերանվանված գյուղն է։

ՆՈՐ ԷՐԲԵՋ

Շուրջբոլորն անտառապատ գյուղի պատմական անցյալը հիմնականում գտնվում է անհայտության մեջ։ Դատելով 1986 թ. այստեղ հայտնաբերված թերի պահպանված մի արձանագրության բովանդակությունից՝ գյուղն առնվազն ԺԱ դարի վերջերին զավառամասի կարևոր բնակավայրերից մեկն էր։ Ահա այն.


Արձանագիր քարաբեկոր. թերի պահպանված 9 տող.

ՇԽ... (1091-1100 թթ.) / հայոց կ... / անս ի վ... / այր տղա ... / եղել գա... / ակի է հասկ... / այլ ի միխ... / կ եւ մայր եւ ... / ք կանկնեցին... :
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 121:

Ծանոթ. խաչքարը 1986 թ. հայտնաբերել է ֆիզիկոս Վլադիմիր Հարությունյանը։ Թեև թվականի միավորը չի պահպանվել, այնուամենայնիվ, թվագրումը կարող է տատանվել ՇԽ (1091) - ՇԽԹ (1100) տարեթվերի միջև։



ՆՈՐ ԷՐԲԵՋ. արձանագիր քարաբեկոր (լուս.՝ Վ. Գարությունյանի, 1986 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԺԸ դարում գյուղը հայաթափ է եղել, որից հետո երկար ժամանակ մնացել է անբնակ։

Խորհրդային տարիներին գյուղատեղիում բնակություն են հաստատում քուլանի ցեղից սերող ուն Մեշեղի Մեմենդլիի սերունդները¹։

Յավոք, վերջիններս ընդամենը մի քանի տասնամյակների ընթացքում գրեթե ամբողջությամբ հասցրել են ոչնչացնել հայկական հուշարձանները, և դա այն աստիճան, որ 1990-ական թթ. վերջերից բնակավայրը վերստին շենանալուց հետո ցարդ հայոց ակնառու հիշատակներ չեն հայտնաբերվել (անհետացվել է նաև 1986 թ. տեղում փաստագրված արձանագիր քարաբեկորը)։

2015 թ. դրությամբ գյուղն ուներ 25 տուն (159 շունչ) բնակչություն²։

Դպրոցի շենքը կառուցվել է 2002 թ. իրանահայ բարերարների միջոցներով և կրում է Հայկուհի Ջառահյանի անունը³։


2003 թ. ութամյա դպրոցում ուսանում էր 23 աշակերտ։ 2004 թ.-ից միջնակարգի վերածված կրթօջախը 2015/16 ուստարում ուներ 16 ուսուցիչ և 46 աշակերտ⁴։

¹ İsmaylov P., նշվ. աշխ., էջ 44:

² Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 294:

³ Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 610-611:

⁴ Նույն տեղում:



ԳԱԴԻ ՎԱՆՔ. կամրջի մնացորդ Տրտու գետի վրա (չափ.՝ Ա. Գալոբյանի, լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)

ԳԱԴԻՎԱՆՔ

Նոր Էրքեջից Տրտու գետի հունով գրեթե 3 կմ վեր՝ գետի համադրական ափերին, պահպանվել են թերևս ԺԳ դարով թվագրելի, անցուղու՝ 3 մ լայնությամբ կամրջի զույգ խելերը՝ կառուցված անմշակ քարով, կրաշաղախով (N 40°08'53.40", E 046°17'14.07", ծ. մ. 1030 մ)¹:

Կամրջի մնացորդներից գետի հունով ևս 1,2 կմ վեր՝ դարձյալ գետի ձախ կողմի անտառապատ սարերի գրկում, գտնվում է պատմական Խուր կամ Խուրավան գյուղը, որը ներկայումս, ի պատիվ բնակավայրի հյուսիսային եզրի բարձրության վրա գտնվող վանական համալիրի, վերանվանվել է Դադիվանք:

Գյուղի վերաբերյալ առաջին վկայությունը ԺԳ դարից է (Խուր անվանաձևով)², ապա 1558 թ.-ից՝ Խուր³ ձևով (նույն կերպ ևս՝ ԺԶ դարում)⁴: Երկու անգամ գյուղը հիշվում է նաև ԺԸ դարում, ընդ որում, առաջին անգամ միևնույն՝ Խուր⁵, իսկ երկրորդ անգամ (1763 թ.) Խուրավանք ձևով⁶:

1 Կամրջի մասին տե՛ս նաև մեր՝ Արցախի կամուրջները, էջ 46-47:
 2 Գիվան, V, էջ 203: ՀՄՀԽԱԲԸ, էջ 110: Տե՛ս նաև սույն աշխ., էջ 321:
 3 Հասան-Ջալալյան Ե., էջ 126: Տե՛ս նաև սույն աշխ., էջ 354:
 4 Հասան-Ջալալյան Ե., էջ 129-130: Տե՛ս նաև սույն աշխ., էջ 300, 302:
 5 Գիվան, V, էջ 216: Տե՛ս նաև սույն աշխ., էջ 301:
 6 Ջանբո, էջ 283:

Գյուղն ամայացել է ԺԸ դարի երկրորդ կեսին, համենայն դեպս, ոչ ուշ, քան 1780-ական թթ.: Դրանից հետո, հակառակ բնակավայրին կից վանքում վանահոր ներկայության, այլևս շուրջ մեկուկես դար անբնակ էր: Միայն 1942-1943 թթ. հայաթափ գյուղատեղիում բնակություն են հաստատում թրքացած քուրդ քուրանի ցեղի մի քանի ընտանիքներ և գյուղը կոչում Վանք⁷, որոնք էլ ուղիղ կես դար անց հեռացվում են Արցախյան ազատամարտի օրերին (1993 թ. մարտի 31):

Պատմական Խուրը վերստին բնիկներով է բնակեցվում 1990-ական թթ. վերջերին: 1999 թ. հիմնվում է Ա. Արմենակյանի անվան 8-ամյա դպրոցը: Արդեն միջնակարգի վերածված կրթօջախը 2015 թ. ուներ 12 ուսուցիչ և 26 սան⁸:

Դադիվանք վերանվանված պատմական Խուրն ազատագրումից ի վեր բացառիկ ճանաչում է ձեռք բերել՝ շնորհիվ գյուղի հյուսիսային բարձրադիր հատվածում գտնվող համանուն վանքի:

ԴԱԴԻ ՎԱՆՔ

Տեղադրություն. գտնվում է Արցախի Վերին Խաչեն կամ Ծար գավառի (այժմ՝ Նոր Շահումյանի շրջան) արևելյան մասում՝ Տրտու (Թարթառ) գետի ձախ ափից 0,6 կմ հյուսիս՝ Մարտակերտի շրջանի սահմանին խիստ մոտ՝ հազիվ 200 մ հեռավորության վրա՝ անտառածածկ լեռան հարավահայաց փեշին (N 40°09'41.19", E 046°17'18.44", ծ. մ. 1106 մ): Վանքը Տրտուի ափից բարձր է 75 մ: Գետի և վանքի միջև՝ Տրտուի փոքրիկ վտակի հովտում, փռված են պատմական Խուր կամ Խուրավան գյուղի ավերակները. խորհրդային տարիներին այն բնակեցվել էր քրդերով և հայտնի էր Զյուլանլու կամ ուղղակի Վանք անուններով:

Դադի վանքի հիմնական հուշարձանախմբից գատ՝ ոչ շատ հեռու՝ շրջակա բլուրների վրա, գոյություն ունեն մի քանի մատուռներ ևս: Մասնավորապես վանքից 300 մ արևմուտք՝ մի ժայռոտ բլրի գագաթին կանգնած մատուռը բարձր է 133 մետրով (ծ. մ. 1239 մ), իսկ վանքից նույնքան հեռավորությամբ դեպի հարավ-արևելք՝ հրվանդանաձև ձգված անտառածածկ լեռնաճյուղի ծայրին գտնվող մատուռը հիմնական հուշարձանախմբից բարձր է 30 մետրով: Ինչ վերաբերում է գլխավոր կառույցներից հյուսիս և հյուսիս-արևելք գտնվող մատուռներին, ապա դրանք բարձր են միայն 5-10 մ: Այն բլրալանջը, որի վրա տարածված են վանական համալիրի կառույցները, արևելյան և արևմտյան կողմերից եզրափակված է փոքրիկ ձորակներով: Քիչ ներքև իրար միանալով՝ դրանք ավելի են ընդգծում համալիրի զբաղեցրած տարածքի ամֆիթատրոնաձև տեղադրությունը: Ժամանակի ընթացքում այդ հարթակը ծայրեծայր զբաղեցվել է ինչպես պաշտամունքային, այնպես էլ աշխարհիկ նշանակության զանազան կառույցներով:

Ուսումնասիրություններ. ԺԸ դարի կեսերից սկսած՝ Դադի վանքն իր վրա է բերել մի շարք հետազոտողների ուշադրությունը: Առաջին ուսումնասիրողները (Եսայի Հասան-Ջալալյան, Հովհ. Շահխաթունյանց, Մ. Ջալալյանց) զբաղվել են հնավայրում պահպանված վիմագրերի վերծանումներով: Ավելի ուշ քննության առարկա են դարձել նաև վանքի պատմությանն ու ճարտարապետությանն առնչվող հարցեր (Մ. Եպիս. Բարխուտարյանց, Խ. վրդ. Դադյան, Մ. արքեպիս. Տեր-Մովսիսյան, Հ. Ոսկյան):

1960-1964 թթ. վիմագրերի հետազոտությունները նորովի ի մի է բերել Մ. Բարխուտարյանը, առաջին չափագրումներն է

7 İsmayilov P., նշվ. աշխ., էջ 102:
 8 Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 610:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. վանական համալիրը հարավից (լուս.՝ Տարագրոսի, 1899 թ.)

կատարել ճարտ. Մ. Հասրաթյանը, որոշ սկզբնաղբյուրների հետազոտմամբ վանքի պատմությունն են շարադրել Բ. Ուլուբաթյանն ու Շ. Սկրտչյանը, իսկ պահպանված որմնանկարներն ուսումնասիրել է Լ. Դուռնովոն:

1980-ական թվականներին այդ ասպարեզում իրենց «ներդրումն» են ունենում նաև աղբյուրագրի «գիտնականները» (Ռ. Գեյուշև, Դ. Ախունդով):

Համակողմանի հետազոտական աշխատանքների նոր փուլը սկսվում է 1993 թ.-ից՝ այն պահից, երբ հենց Դադի վանքից սկսած (1993 թ. մարտի 31)՝ ազատագրվեց Քարվաճառի շրջանը:

1993-1994 թթ. տեղում զանազան ուսումնասիրություններ են կատարում Հ. Սիմոնյանի ղեկավարած արշավախումբը և տողերիս հեղինակը: Դրանց շնորհիվ պարզ է դառնում, որ մինչ այդ կատարված աշխատանքների բոլոր ոլորտներն էլ որոշ առումներով թերի էին: Մասնավորապես վիճաբերի վերծանությամբ զբաղվողների տեսադաշտից վրիպել էին շատ արձանագրություններ, վերծանությունների մեջ տեղ էին գտել բազմաթիվ սխալներ, անվերծանելի էին համարվել ու շրջանցվել տարբեր վիճաբեր կամ դրանց առանձին հատվածներ և այլն:

Վանքի պատմությունը շարադրողների աշխատություններում նույնպես առկա էին մի շարք սկզբնաղբյուրների, այդ թվում՝ հատկապես դիվանական վավերագրերի և նախախորհրդային պարբերական մամուլում առկա նյութերի անտեսման փաստեր:

Ինչ վերաբերում է ճարտարապետության բնագավառին, ապա Մ. Հասրաթյանի, Ռ. Գեյուշևի և Դ. Ախունդովի հեղինակած սխեմատիկ չափագրություններից զատ (հատակագիծ, գլխավոր հուշարձանախմբի հարավային ճակատ և գմբեթավոր 2-րդ եկեղեցու արևմտյան ճակատը)՝ այդ ուղղությամբ մինչև ազատագրումն այլևս ոչինչ չէր ձեռնարկվել:

Իհարկե, 1994 թ. աշնանը վանական համալիրում առաջին անգամ կատարվեցին չափագրական աննախադեպ ծավալի աշխատանքներ (դրանք հրատարակվեցին 1999 թ.), սակայն արդեն 1997 թ.-ից ի վեր հուշարձանների պեղման և վերականգնման աշխատանքների ընթացքում ճարտ. Ս. Այվազյանի ջանքերով ոչ միայն նոր չափագրություններով լրացվեց առկա նյութը, այլև ստեղծվեցին յուրաքանչյուր կառույցի վերականգնման նախագծերը:

2014-2015 թթ. Զ. Լամուրեի և Ա. Չարյանի ջանքերով մաքրվեցին և վերականգնվեցին Կաթողիկե եկեղեցու որմնանկարները:

Պատմություն. մատենագրական աղբյուրները վկայում են, որ Դադի վանքը հիմնադրվել է դեռևս առաջին դարում քրիստոնեական քարոզչություն ծավալելու համար նահատակված Դադի գերեզմանի տեղում⁹. «Թաղէոս, մի յեթնանամիցն, որ գնաց հրամանաւ Թաղէի ի Մեծն Հայք և ի կողմանս հիւսիսոյ և լուեալ զմահն Աբգարոս, դարձաւ և եմուտ ի Փոքր Սիւնիք, և կրօնաւորեալ անդէն ծածկաբար՝ վախճանեցաւ և տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ»¹⁰: Այս պատճառով է, որ աղբյուրնե-

9 Արդյո՞ք այս և Միջագետքում սրբացված Դադը նույն անձնավորությունն են եղել, դժվար է պնդել: Համեմայն դեպս, ըստ Մերովբե Կարնեցու, Բաղդադ քաղաքն էլ իր անունն առել է Դադ անձնանունից. «Այս հռչակավոր քաղաքը տեղավորված է Տիգրիսի արևելյան ափին, կառուցվել է մեր թվարկության 762 թվականին՝ Աբուլջաֆար Ալմասուր խալիֆի կողմից, այնպիսի մի վայրում, որտեղ ապրելիս է եղել ենթադրյալ մի սուրբ անձնավորություն՝ Դադ անունով, որից և առաջացել է «Այգեստան Դադի» կամ «Բաղդադ» հատուկ անունը» (Մերովբե Կարնեցի, Ուղեգրություն Բաղդադից Էջմիածին, Երևան, 1968, էջ 45):

10 Ժամանակագրություն տեսոն Սիսայեի Ասորաց պատրիարքի, Յերուսաղեմ, 1871, էջ 33 (հավելված): Տե՛ս նաև Ալիշան Ղ., Արցախ, «Բազմավեպ», 1988, № 1-4, էջ 261: Նույնի՝ Արցախ, Երևան, 1993, էջ 52:



ԴԱՂԻ ՎԱՆՔ. վանական համալիրը հարավից (լուս.՝ Մ. Տեր-Մովսիսյանի, 1911 թ.)

րում վանքը հաճախ Առաքելոց է կոչվում, իսկ Մխիթար Գոշն ուղղակի կոչում է «Առաքելադիր»¹¹:

Թերևս ներկա վանքի տեղում՝ նահատակ քարոզչի գերեզմանի վրա, արդեն Ա դարում կառուցվել է մի մատուռ (ըստ երևույթին՝ փայտաշեն), որտեղ էլ քրիստոնեության ընդունումից հետո՝ հավանաբար հենց Դ դարում՝ վանքի առաջին և հնագույն եկեղեցին:

Մատենագրական աղբյուրներում առաջին անգամ Դաղի վանք անվան մի թուուցիկ հիշատակությանը հանդիպում ենք միայն Թ դարի սկզբին Ներսես Փիլիպյանի կողմից Աղվանից գահերեց պալազատների սպանության տեղի նկարագրության կապակցությամբ. «...ի խորածորն, որ կոչի Դաղոյի վանք»¹²:

1145-46 թթ. պարսից Չոլի զորապետը, որը 1142 թ. նվաճել էր Գանձակ քաղաքը, ի թիվս Խաչենի իշխանության տարածքում գտնվող շատ բերդերի ու վանքերի, ավերում է նաև Դաղի վանքը: Պատմագրի վկայությամբ՝ նա «...այրեաց և գառաքելադիր ուխտ սրբութանն, որ կոչի Դաղուի վանք»¹³: Սակայն նույն դարի 70-ական թվականներից, ինչպես վկայում են տեղում պահպանված վիմագրերը, վանքում սկսում են նորոգվել հին և կառուցվել պաշտամունքային ու աշխարհիկ բնույթի նոր շենքեր: Դաղի վանքը շարունակում է հանդես գալ իբրև առաջնորդանիստ (եպիսկոպոսանիստ) կենտրոն: Առաջնորդներից հայտնի են, օրինակ, Վաղտանգի որդի տեր Գրիգորիսը (հիշ. 1182,

1190 թթ.), Վասակ նահատակի որդի տեր Գրիգորիսը (հիշ. 1224, 1233, 1241, 1253 թթ.), Հասանի որդի տեր Աբանասը (հիշ. 1263, 1265, 1283, 1291 թթ.), տեր Սարգիսը (հիշ. 1309, 1312, 1340 թթ.)¹⁴, Ջաքարիա արքեպիսկոպոսը (հիշ. 1402, 1411 թթ.)¹⁵, տեր Գրիգորիսը (հիշ. 1558 թ.)¹⁶, «մեծ եւ երանաշնորհ վարդապետ» Հովհաննեսը (հիշ. 1583 թ.), որ էր «...ի յերկրէն Ծարայ, Փոքր Սիւնիս կոչեցելոյ, ի վանիցն Դաղիու սուրբ յառաքելոյն...»¹⁷, արքեպիսկոպոս Ստեփանոսը (հիշ. 1652, 1653 թթ.)¹⁸, տեր Պետրոսը. «Պետրոս վարդապետ առաջնորդ Խօթավանից...» (հիշ. 1721 թ.)¹⁹ և այլք:

Հովհաննես Ծարեցու կողմից վանքի մասին հիշատակություն ունենք 1594 թ.-ից. «Չվերջին ստացող սուրբ գրոցս գՅոհանէս վարդապետ կոչեցեալս, ի յերկրէն Ծարայ, ի վանիցն Դաղիու Սր. Առաքելոյն...»²⁰:

1649 թ. վանքը ստանում է սեփական կալվածքներն այլոց ոտնձգություններից պաշտպանելու մասին պարսից շահ Աբաս Բ-ի (1642-1666 թթ.) հրովարտակը. «Որովհետև յայտնեցաւ մեզ, զի յառաջ քան զայս զյայտնի կալուածս (ագարակք և շինու-

11 Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 386 (Մխիթար Գոշ, Կաթողիկոսք եւ դէպք Աղվանից աշխարհին ի մէջ ԺԲ դարոյ):

12 Մովսէս Կաղանկատուացի, նշվ. աշխ., էջ 340:

13 Նշվ. աշխ., հավելված, էջ 353: Տե՛ս նաև Մամուէլ Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132: Ալիշան Ղ., Հայապատում, էջ 345: Նույնի՝ Արցախ, էջ 53: Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Երևան, 1952, էջ 101:

14 Վիմագրերը տե՛ս էջ 322, 326-327:

15 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1955, էջ 24, 122 (այսուհետ ԺԵԱ, համապատասխան էջերով): Յուցակ ձեռագրաց, հ. Ա, ձեռ. № 3578, էջ 1043:

16 Ալիշան Ղ., Արցախ, էջ 59:

17 Մանր ժամանակագրություններ, հ. Բ, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 244 (այսուհետ՝ ՄԺԲ, համապատասխան էջերով): Տե՛ս նաև Մինասյան Թ., նշվ. աշխ., էջ 39:

18 ԺԵԳ, էջ 489, 601:

19 Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. II, часть I, Ереван, 1964, с. 383.

20 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմ.՝ Նորայր եպս. Պողոսեան, հ. 7, Երուսաղեմ, 1974, էջ 282:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. վանական համալիրը հարավ-արևելքից (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 1983 թ.)

թիւնք) եղեալս յերկրին Ղարաբաղայ, ոմանք ի Հայոց տեղոյն նուիրելով (վախճ անելով) մեծի վանիցն Խօթայ, տուեալ են զայն յիշխողութեան վանիցս, և ի ժամանակէ անտի և ցայսօր յիշեալ կալուածքն իբրև վախճ եղեալ են ընդ տիրապետութեամբ վարդապետաց և պաշտօնէից վանիցն, այլ այժմ անձինք ոմանք առանց օրինաւոր պատճառաց հակառակ լուսաւորեալ օրինաց, վիշտս հասուցանեն հանգիստ կենցաղավարութեան նոցա, վասն որոյ հրամայեցաք՝ զի վսեմափայլ Ղաճար Մուրթուզայ-Ղուլի խանն Բէկլար-բէկին Ղարապաղայ առաջի լուսաւորեալ օրինացն վերահասու լիցի, և ...հրամայեսցէ ապա, զի մի ոք ի թուրքաց կամ ի հայոց օրինաւոր պատճառի վիշտս հասուցէ հանգիստ կենցաղավարութեան նոցա և զամենայն կանոնս և զկարգ մեծի օրինացն հաստատուն կալեալ պահեսցիք...»²¹:

Հիշատակման է արժանի, որ 1684 թ. այստեղ՝ «ի սուրբ և ի գերահռչակ Դադէի վանս» գրիչ Վառվառեի և ծաղկող տեր Բարսեղի ջանքերով (ստացող՝ Պետրոս վարդապետ) ստեղծվել է «Գրիգոր Տաթևացի. Քարոզգիրք» ձեռագիրը²²:

Հետագա հարյուրամյակների ընթացքում Դադի վանքը շարունակաբար տիրապետել է ընդարձակ կալվածքների: Նրա գոյության, եթե կարելի է այսպես ասել, ամենադժնդակ ժամանակաշրջանում անգամ կալվածքների սահմանները խիստ ընդարձակ էին և ընդգրկում էին ներկայիս Քարվաճառի, Վարդենիսի շրջանների մեծագույն մասը և Մարտակերտի շրջանի արևմտյան հատվածը (միջնադարում դրանք ավելի ընդարձակ էին,

արևմուտքում հասնում էին մինչև ներկայիս Գեղարքունիքի մարզի Երանոս, իսկ արևելքում՝ մինչև Ականա գյուղերը)²³:

Հայտնի է, որ ԺԸ դարի վերջին և ԺԹ դարի սկզբին վանքը միառժամանակ թափուր էր. այնտեղ չկային ոչ միայն միաբաններ, այլև անգամ որևէ աշխարհական սպասավոր²⁴:

1760-ական թվականներից մեծ մասամբ արդեն հայաթափ թեմական կալվածքին նոր դժբախտություններ են բաժին հասնում²⁵: Նույն դարի վերջին նախ Աղա Մահմադ խանի արշավանքների (1795 և 1797 թթ.), ապա սոսկալի ժանտախտի ու սովի (1798 թ.) հետևանքով վանքապատկան գյուղերը համարյա ամբողջովին ամայանում են: Շուշում հաստատված Իբրահիմ խանի հրավերով և հովանավորությամբ, 1760-ականներից սկսած, վանքապատկան հողերի վրա բնակություն են հաստատում Երևանի խանության տարածքից դուրս ելած քուլանի ցեղի քրդերը²⁶: Սի քանի տասնամյակների ընթացքում կալվածքի սահմաններ են թափանցում նաև քրդական և թյուրքական ծագմամբ այլ ցեղեր²⁷: Վերջիններիս թվում էին նաև այրումները (ծագումով նախ հունադավանություն, ապա մահմեդականություն ընդունած հայեր էին)²⁸:

21 ՀԱԳ, ֆ. 57, ց. 1, գ. 4, ք. 2 շրջ.-3:

22 **Լալայեան Ե.**, Օրդուբադի կամ Վերին Ազուլիսի ոստիկանական շրջան և կամ Գողթն, «Ազգագրական հանդես», գիրք ԺԲ, 1904, էջ 168: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 110, ծմբ. 7: Յուզակ ձեռագրաց, հ. Ա, էջ 712, ձեռ. № 2067:

23 ՀԱԳ, ֆ. 57, ց. 1, գ. 4, ք. 1, 4: Տե՛ս նաև Ջամբո, էջ 283-284 (կալվածագիրը տե՛ս էջ 301):

24 **Քամաղեանց Ս.**, Խօթայ վանքի Ս. Նշանը, «Արձագանք», 1892, № 111, 25 սեպտեմբերի, էջ 1-2:

25 **Կարապետյան Ս.**, Արդյո՞ք իսպառ հայաթափ էր Ծար գավառ խաշնարած ցեղերի ներթափանցման պահին, «Ար», 1995, № 9, 12 ապրիլի, էջ 5:

26 **Ս. Տ. Մ.**, Սի քանի օր Ղարաբաղի հանքային ջրերում, «Մշակ», 1888, № 122, 27 հոկտեմբերի, էջ 2: **Լեռ**, Հայոց պատմություն, հ. 3, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 303:

27 **Լեռ**, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, էջ 674-676:

28 **Վարդանեան Յ.**, Սի քանի խօսք այրումների մասին, «Մշակ», 1914, № 154, 17



ՊԱՂԻ ՎԱՆԷ. վանական համալիրը հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

1813 թ., երբ Գյուլիստանի դաշնագրով Ղարաբաղի խանության տարածքը միացվում է Ռուսաստանին, Դաղի վանքը փաստորեն ոչ միայն զրկված էր նախկին ընդարձակ կալվածքներից, այլև բուն աթոռանիստն էլ անբնակ էր և ամայի:

Ռուսաց տիրապետության սկզբնական շրջանում՝ մինչև 1820-ական թվականների վերջերը, երբ քաղաքական իրավիճակը դեռևս խիստ անկայուն էր (Աբաս Միրզայի արշավանքը 1826 թ. ամռանը), Արցախի հոգևոր առաջնորդներին հնարավորություն չէր ընձեռվում լրջորեն զբաղվելու ամայացած վանքերով, բայց արդեն 1830-ական թթ. այդ գործի գլուխ է կանգնում մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանը²⁹:

Ջանազան խաների կամ ցեղերի տնօրինության ներքո հայտնված նախկին վանքապատկան կալվածքները վերադարձնելու նպատակով մետրոպոլիտ Բաղդասարը սկսում է ոչ միայն խիստ բարդ և դժվարին, այլև վտանգավոր ու տևական պայքար: Չնայած իրենք՝ քուլանի քրդերն էլ չէին թաքցնում, որ իրենց հանգրվանները վանքապատկան էին (օրինակ՝ «1833-ին Ամիր Ասլան բեկը վկայում է, որ Քոլանեցոց տեղերը վանքինն է»)՝³⁰, բայց ժամանակակիցներից շատերն այդ ուղղությամբ մետրոպոլիտի ջանքերը համարում էին իզուր և անօգուտ. «...այս ձեռնարկութեան ելքը շատերուն անյուսալի էր երևում, բայց նորա բնական երկայնմտութիւնը և մանաւանդ անձանձիր աշխատութիւնը, ոչինչ արգելքներից ու դժուարութիւններից չյաղթուեցաւ»³¹:

յուլիսի, էջ 2-3: Տե՛ս նաև Կարապետյան Ս., Այրումներ, «Գարդմանք», 1996, № 3, էջ 5:

29 Տէր-Յովհաննիսեանց Գ. (Մուրացան), Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանցի համառոտ կենսագրութիւնը, «Փորձ», 1880, մայիս, էջ 131-164: 30 Թօփճեան Զ., նշվ. աշխ., էջ 25:

1837 թ. Շուշիում հաստատվելուց հետո Բաղդասար մետրոպոլիտը «...Այդ կալուածների պատճառով վարած դատերի և մրցմանց համար ծախսեց նա 24,000 ռուբլուց ատելի, մինչև որ վերջապէս իւր ազգօգուտ փափագին հասաւ, ձեռք բերելով այն ընդարձակ երկիրները, որք Արցախու չափ տեղ են բռնում: Այս կալուածները ընդհանուր անուամբ բոլորը միասին կոչվում են Դուղխու-Քեալբաջարի և տարածվում են մինչև 140,000 դեսետինի չափ, ձգուած Թառթառ գետի հիւսիսային և հարաւային ափերի երկարութեամբ: Բացի բազմաթիւ ընդարձակ վարելահողերն, մեծամեծ անտառներն և մանր ու աննշան բնակութիւններն, Դուղխու-Քեալբաջարի մէջ գտնվում են հետևեալ գիւղերը. Ծար, որ էր նախնի հայ իշխանաց բնակարան, Չախմախ, Չագլիկ, Ղարախաչ, Գեալինուշան, Դիռիդաշ, Մարալուշան, Բաղրբէյ, Գլըշու, Փարախկանլու, Հասանալու, Ալխասլու, Լև (որ է ընդարձակ տարածութիւն մեծամեծ երկիրների, որոց մէջ գտնվում են թուով 12 գիւղեր), Բաղլուփայեայ, Չարաքդար, Քեշիշքէնդ, Քիլիսսերի (որ է ամարանոց թափառականաց), Բաշլուբէլ, Սէյիտտար, երկրորդ Գլըշու, Դօթոռոռու, Դօշունալիար, Դօշտաջ, Աղիաթաղ, Վարդանագոմբ, Քիւպրուլաղ, Սուդայեան, Դամիշլու, Այրում, Չիլֆիդարլու, Խանանլու, Ղարաջանլու, Բագիղեան-Բուլաղ և այլն: Դուղխու-Քեալբաջարի և նորա սահմանակից զանազան լեռների վերայ և հովիտների մէջ գտնվում են նոյնպէս շատ վրանաբնակ թափառական ցեղեր, որոնք դարձեալ Խութայ-վանքի հպատակ են համարվում, որպիսիք են Քեանգեառլուեցիք, Վաղահասցիք, Դինլուներ, Ղարաղաղլու-

31 Տէր-Յովհաննիսեանց Գ., նշվ. հոդվ., «Փորձ», 1880, մայիս, էջ 159: Տե՛ս նաև Տ., Իշխան Բաղդասար մետրոպոլիտ մեծն Հասան-Ջալալ-Տօլայ (1775-1854), «Տարագ», 1913, № 7-8, էջ 90 (նույնությամբ արտատպված՝ «Մշակ», 1913, № 171, 6 օգոստոսի, էջ 3):



ՂԱԳԻ ՎԱՆՔ. վանական համալիրը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

ներ, Ամիրալիար, Ղարադոյիլար, Ղարադաղուեցիք, Գիւլկեազլու, Սահաթլու, Ղարվանդ, Շխավանդ, Սրբխ-ավանդ և Բաֆրավանդ Քեօիլանիք, Աթեմազլու, Ֆիրհասանլու և ուրիշ շատ պարսիկ ազգաբնակչություններ»³²:

Սակայն «...Բաղտասար մետրապոլիտից անմիջապես յետոյ կարգուած վիճակային առաջնորդների անհոգութիւնից և տեղական հոգևոր կառավարութեան թուլութիւնից այդ կալուածներից շատերը հետզհետէ անցան և անցնում են Մեհտի-Ղուլի-խանի Խուրշիդ դատեր, Դատութ-աղա Աղալարովի և ուրիշ բեգերի ձեռք: 1851 թուականից սկսած մինչև 1873 թ. վանքը այս կալուածներից ստացել է տարեկան անելի քան 1500 ռուբլի արդիւնք, այն ևս դեռ մեծամեծ զիջողութիւններով, իսկ 1874 թուից սկսած մինչև այժմ ստանում է 600 ռուբլի միայն, որովհետև կալուածների մեծ մասը այժմ վեճի մէջ է և արդիւնքը ստանում են ուրիշները»³³:

1877 թ. վանք այցելած Սուրաբանը նշում է, որ այն «...ունի շատ մեծամեծ կալուածներ Ջալալեան և ուրիշ հայազն իշխաններից ընծայաուծ»³⁴:

1878 թ. մարտի 20-ին Արցախի թեմի առաջնորդ Արիստակես վարդապետ Մեղրակյանը գրում է. «Վիճակիս Չարեքտար կոչուած վանքի նշանատր կալուածքի ներկայ դրութիւնը տեղոյս թեմական ազգային դպրոցից օտարանալու երկիւղը ինձ հարկադրում է այս մի քանի տողով Ձեր ուշադրութիւնը հրաւիրել: Չա-

րեքտար վանքը ամենաինն ժամանակներից սկսած և հաստատուն արտոնագրերով շարունակել է պահպանել իր ձեռքում մի կալուած, որ ունի 135-140 հազար դեսետալին հող: Արդէն երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսը հասկանալով այդ կալուածքի կարևորութիւնն և այն, որ երբևիցէ պիտի օտարները ուշադրութիւն դարձնեն նորա վերայ, իր բոլոր ճիգը թափում էր նորան՝ վանքի վերայ բոլորովին հսկելու, բայց դժբախտաբար, ինչպէս նորա, նոյնպէս և Բաղդասար մետրապոլիտի մահը արգելք եղաւ այդ բանի իրագործման ու յետագայից անհոգութիւնն այն արգասիքն ունեցաւ, որ կալուածի նշանատր մասը իբրև արքունի հող՝ տրուեցաւ ցմահ շահեցողութեան կենսագինեայ Ուցմիեվին»³⁵: Եւ որովհետև այդ բանը եղած է բարձրագոյն հրովարտակով, ուստի մի քանի անօգուտ փորձերից յետոյ, հարկ եղաւ ըստ խորհրդոյ հասկացող անձանց դիմել ամենահպատակ խնդիրքով նորին կայսերական մեծութեան: Այդ խնդիրքը Ղարաբաղի Վիճակային կոնսիստորիայն մատուցել է անցեալ տարի հոկտեմբերի 31-ին, մի առ մի յառաջ բերելով վանքի հաստատուն և մշտական իրաւունքները...: Այս կալուածի մասին մենք առիթ ենք ունեցել շատ երկարօրէն խօսել 1870 թ. Տփլիսիում պ. Սանասարեանցի և բժշկապետ Յովհաննիսեանցի հետ և մեր նպատակն էր վեհափառի ուշադրութիւնը գրաւել այդ ծանր հարցի վերայ: ...Ղարաբաղի դպրոցների գոյութիւնը կախումն ունի միայն և միմիայն կալուածներից: Եթէ չլինեն կալուածներ, չեն լինի և ազգային դպրոցներ Ղարաբաղում...»³⁶:

Ի վերջո, մետրոպոլիտի առաջարկութեամբ և կաթողիկոս Ներսէս Ե-ի միջնորդութեամբ Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովի կարգադրութեամբ նշանակվում է քննություն, և Դաղի վանքի պատկանելությանն է հանձնվում 196.438 դեսյատին մակերեսով մի ընդարձակ կալվածք³⁷: Սակայն մի բան էին կառավարության հրամանն ու որոշումը, մեկ այլ բան էր այդ լայնատարած կալվածքում հաստատված ցեղերին ստիպել վանքապատկան հողից օգտվելու համար տասանորդ վճարել: Ընդ որում, ստիպել այն ցեղերին, որոնք ամենուր հայտնի էին իրենց ավազակային և արյունարբու բարքերով: Անցնող տարիների հետ վանքապատկան կալվածքներում ավելի ու ավելի են բազմանում «յայլադներն ու դշլադները», որոնց գոյությունը զուգահեռաբար ծնունդ է տալիս կալվածքների «վիճելի» հատվածներին:

Արդեն 1895 թ. վանքապատկան կալվածքների կազմում մնացել էր միայն 98.438 դեսյատին, որից էլ միայն 50.000-ը անվեճ³⁸:

1909 թ. այդ թիվն ավելի էր կրճատվել և հասել 45.997 դեսյատինին³⁹: Ուշագրավ է, որ խաշնարածների թվաքանակի ավելացման համեմատ վանքին տրվող հարկերն ու եկամուտներն ավելանալու փոխարեն տարեցտարի նվազում էին: Փաստարկելու համար վերոնշյալը՝ ստորև ներկայացնում ենք Դաղի վանքի տարեկան եկամուտների չափը.

1851-1873 թթ.՝ տարեկան ավելի քան 1500 ռուբլի⁴⁰,
1874-1880 թթ.՝ տարեկան 600 ռ.⁴¹,

35 Իշխանուհի Ուցմիեան Իբրահիմ խանի թոռն է և Մեհտիդուլի խանի դուստրը՝ Խուրշիդբանուն (ծածկանունը՝ Նաթալվան):

36 ՀԱԴ, ֆ. 57, ց. 1, գ. 88, թ. 7-8:

37 **Առաքելեան Հ.**, Տեղեկագիր Շուշու կալուածական խնդրի եւ հոգաբարձութեան 27-ամեայ գործունեութեան, «Մշակ», 1888, № 94, 20 օգոստոսի, էջ 1:

38 **Խ. Վ.** (Խաչիկ վոյ. Դաղյան), Համառօտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի, «Արարատ», 1896, Ա, էջ 42: Այլ աղբյուրի համաձայն՝ վանքի անվեճ հողատարածքը միայն 42.000 դեսյատին էր (**Մայրամեանց Մ.**, Նամակ խմբագրութեան, «Մշակ», 1896, № 107, 14 սեպտեմբերի, էջ 3):

39 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1851, թ. 2:

40 **Տեր-Յովհաննիսեանց Գ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1880, մայիս, էջ 160:

41 Նույն տեղում:

32 **Տեր-Յովհաննիսեանց Գ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1880, մայիս, էջ 159-160:

33 Նշվ. հոդվ., էջ 160, ծնթ. 1:

34 Նշվ. հոդվ., «Փորձ», 1880, մայիս, էջ 159, ծնթ. 1:



ԴԱՐԻ ՎԱՆՔ. վանական համալիրը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

1891 թ.՝ 450 ռ.⁴²,
1892 թ.՝ 396 ռ.⁴³:

Հատկանշական մի փաստ. օգտվելով վանքում վանահոր ժամանակավոր բացակայությունից՝ 1890 թ. համալիրի շինությունները ոչխարներով էր լցրել մի քուլանցի սեխո մոլլա: Նրան վռնդել ու վանքն էլ մաքրել էր Ջրաբերդի Սեծշեն գյուղի տանուտեր Բախիշ բեկ Յուզբաշյանցը⁴⁴: Ի դեպ, «...քեմիս գերապատիւ առաջնորդը շնորհակալություն է յայտնում Բախիշ-բեկին և մի այրի քահանայ է ուղարկում այնտեղ վանահայր՝ պաշտօն կատարելու համար»⁴⁵:

Հոգևոր իշխանությունները 1891 թ. նոր վանահայր են նշանակում (տե՛ր Աստվածատուր քահանային)⁴⁶:

42 Ն. Մ. Թանգ., Գանձասար եւ Խօթայ վանքերը, «Նոր-Դար», 1891, № 123, 6 օգոստոսի, էջ 3:

43 Խ. Վ., նշվ. հոդվ., «Արարատ», 1896, Ա, էջ 45:

44 «Նոր-Դար», 1890, № 158, 17 հոկտեմբերի, էջ 1-2:

45 Նույն տեղում:

46 Ն. Մ. Թանգ., նշվ. հոդվ., նույն տեղում: Ի դեպ, երբ 1891 թ. ապրիլի 30-ին Վիճակային կոնսիստորիայի կարգադրությամբ Աստվածատուր վանահոր օգնականի պաշտոնով Դադի վանք էր մեկնել Վահան սարկավագ Դադյանցը (նույն ինքը՝ հետագայում Խաչիկ վրդ. Դադյանց), տիրող կացությունը նկարագրվել է այսպես. «...գտի զվանսն յամայացեալ դրութեան եւ վանահայր քահանայն ի վերջին յուսահատութեան, մատնեալ ի քաղց եւ ծարաւ, շրջապատեալ արհմարբու աւազակօք եւ որպէս բու աւերակի մին միայնակ կայր ի վանսն առանց ծառայի եւ ապրուստի, ունէր միայն սակաւ ալտուճ հաց վանսն քանի մի աուրց, յորմէ պատառ մի իբրեւ նմուշ մատուցանեն կոնսիստորեայիղ ի տես...» (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 165, թ. 9): Վանահայրն այսպես էր բնութագրել իր վիճակը. «...շրջապատեալ արհմարբու թուրք ազգաբնակութեան օրվա հացի կարոտ» (նշվ. գործը, թ. 7):

Նույն թվականի ապրիլի 30-ին Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի հրամանով Վահան սարկավագ Դադյանին հրամայվում է «...զնալ ի վանսն Խօթայ և մնալ անդ իբրև միաբանակից ընդ պաշտօնակատարի վանահոր այնր վանից՝ Աստուածատուր քահանայի և պահպանել զվանսն և զկալուածսն նորին օրինաւոր կարգաւ...»⁴⁷:

Արդեն 1892 թ. նշվել է. «Վանքն ունի 160 հազար դեսետի-նից արելի հող իւր անտառովը. այդ հողից 60 հազար դեսետի-նը վանքի սեպիականութիւնն է: Վերջին տարիներս կառավարութեան և վանքի միջև վեճ կար այդ հողի մասին: Երկարատև վեճից յետոյ վերջապէս հողը մնաց վանքին...: Վանքն ունի լաւ արօտատեղեր, մեծ անտառներ, վարելահողեր, առատ ջրեր... ունի 20-30 թուրք գիւղարայք, բայց ոչ մի հայաբնակ գիւղ: Ծիշտ է, ժամանակով հայ գիւղեր շատ են եղել, բայց նրանք վաղուց են գաղթել ուրիշ տեղեր, որ մի կերպով ազատեն թուրք հրոսակ բեգերի ճնշումից ու յարձակումից...: Վաղուց վանքի հողի վրայ ապրում էին երկու հարիւր թուրք գիւղարայք. դրանց թիւը հետզհետէ քչացել է՝ շատերը բարբարոսութեան, աւազակութեան համար աքսորուել են Սիբիրի խորքերը, շատերը ինչպէս աւազակներ հեռացել, ուրիշ տեղեր իրենց արհեստը գործադրելու, ոմանք էլ գաղթել են: Այսպէս քչանալով երկու հարիւր գիւղարայքից վանքի հողի վրայ այժմս ապրում են 20-30 գիւղարայք, որոնք տարեկան մի որոշ գումար փող են վճարում վանքին՝ Շուշու կոնսիստորիային»⁴⁸:

47 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 165, թ. 6:

48 Իւզբաշյանց Յ., Մի քանի խօսք Խոթայ վանքի մասին, «Նոր-Դար», 1892, № 15, 29 յունուարի, էջ 2:

Կացութունը հուսադրող չէր նաև 1895 թ. «Ներկայումս խղճալի դրութեան մէջ են գտնուում վանքիս կալուածները...: ամբողջ Գեղարքունեաց մեծատարած վիճակի ազգաբնակչութիւնը, իր բոլոր շինութեանց համար հարկաւոր փայտը տանում է Խօթայ կալուածների անտառներից, մեծաւ մասամբ գողունի և մասամբ էլ չորացած և անկեալ ծառերի անտառը: Այս մասին հաստիանալու համար բաւական է միայն Ռուսաստան լեռնաշղթայի անցքերում մի երեք օր կանգնել և տեսնել, թէ ինչպէս կարաւան կարաւանի ետևից շինութեանց համար գերաններ և այլ տեսակ փայտեր են անցկացնում: Բայց վանքի գիւղացիները այլ կերպ են վարում անտառների հետ. իրաքանչիւր «Ղլաղի» ժողովուրդ իր համար ազատ կոտորած է անում անտառում...: Ամենայն տարի արքունի և զանազան թուրք բեկերի պատկանող գիւղացիներ անարգել մտնում են վանքապատկան կալուածները և իրանց համար ազատ կերպով վրաններ ցցում՝ վանքական արօտատեղիներում...: Այժմ վանքական 150 տուն թուրք ազգաբնակչութիւնը ցրուած է ապրում վանքի կալուածներում. ամէն մի ձորամիջում երկու-երեք տուն մի-մի ղլաղ կազմելով՝ ձգտում են հողաբաժանութեան ժամանակ հազարաւոր դեսեստին կալուածներ հողաբաժին ստանալու»⁴⁹:

Նույն թվականին Խաչիկ վարդապետը գրում է. «Վանքիս ներկայ դրութիւնը խիստ աննախանձելի է՝ չորս կողմը աւեր և անայացած, կաթուղիկէի կտորը ճաքճքտած, շրջապատուած կիսաւեր գաւթով և ժամատնով, քայքայուած պարսպով, քարաշէն կամարակապ բնակարաններով ու շինութիւններով: Վանքը իր շրջակայ շինութիւններով նմանուում է մարդաշատ քաղաքի մի հարուստ թաղի, որտեղ միայն մարդկանց ներկայութիւնն է շունչ և կենդանութիւն տալիս: Թաղէի ուխտը, իբրև առաջնորդարան և բազմամարդ վանք, զանազան ժամանակներում ստացել է թէ այցելու և թէ իր հուանաւորող հոգևոր և մարմնաւոր իշխանաւորներից այլ և այլ ընծայաբերութիւններ և նուէր...: Սուրբ ուխտիս շարժական բոլոր անօթ-զգեստները ժամանակի աւերիչ ձեռքերից ցիր ու ցան է եղած, փչացած և անյայտութեան մատնուած: Միայն վանքիս նուիրած սուրբ Աւետարաններից մի քանիսը այժմ գտնուում են զանազան վանքերում և եկեղեցիներում: Ինչպէս, օրինակ, Վերին Խաչէնի իշխող Դօփեան Գրիգոր իշխանի նուիրած երկաթագիր Աւետարանը, որը նուիրած է վանքիս իր ամուսին, Միւնեաց Օրբելեան Տարսայիճ իշխանի դստեր՝ Ասփայ տիկնոջ յիշատակին ՉԿԱ (1361) թուականին, այժմ գտնուում է Գանձակի սուրբ Թարգմանչաց վանքում...: Նմանապէս Շուշի քաղաքի Ղազանչեցոց սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյ Աւետարանը և Չարաբերդի Մեծ Շէն գիւղի Աւետարանը ժամանակով վանքիս սեփականութիւնն է եղել»⁵⁰:

Վիճակը բարելավվում է միայն 1910-ական թթ. սկզբներին, երբ վանքապատկան կալվածքների կառավարիչ է կարգվում տփղիսաբնակ Լևոն Միքայելյան Տեր-Ավետիքյանցը (1911 թ. հուլիսին նշանակվում է Թիֆլիսի թեմի էջմիածնապատկան անտառների ու կալվածքների և Ղարաբաղի թեմի անտառների ընդհանուր կառավարիչ)⁵¹: Նրա ծավալած գործունեությունը ժամանակակիցները համարում էին անհույս եւ անիրագործելի, բայց նվիրվածությունն ու համառությունը տվեցին իրենց արդյունքը:

Խաղաղ միջոցներով Լ. Տեր-Ավետիքյանցը ձեռնամուխ է լինում այնպիսի գործերի իրականացմանը, որպիսիք առհասարակ լուծվում են ուժի միջոցով: Նախ վարձելով մի հմուտ փաստաբանի՝ Տեր-Ավետիքյանը պարզում է, որ գործող օրենքների

համեմատ կալվածատեր վանքը կամ հոգևոր իշխանությունը կարող է դատ բացել վանքապատկան հողերին տիրացած խաչնարածների դեմ: Դրանից հետո ամբողջացնում է անհրաժեշտ փաստաթղթերը և լծվում տևական ու նաև ոչ անվտանգ պայքարի (նմանօրինակ մի դատ բացելու համար 1895 թ. ապրիլի 24-ին թուրքերի ձեռքով սպանվել էր Մարալյան-Մարով գյուղի բնակիչ Շամիր Զլփիդարյանը)⁵²:

Ի դարակազմին վանքապատկան էին. «ա) անտառ 23311 դ. 400 ք. ս., բ) արօտատեղի 19446 դ. 600 ք. ս., գ) ձմերանոց 24 դ. 100 ք. ս., դ) խոտահարք 274 դ. 600 ք. ս., ե) ճանապարհ 121 դ. 600 ք. ս., զ) գետ 70 դ. 100 ք. ս., է) ժայռեր 2750 դ., ընդամենը 45997 դ., որ բերում է տարեկան մօտաւորապէս 4000 ռ. արդիւնք»⁵³:

Արդեն 1910 թ. նշվել է. «Խոթայ անտառներում բնակութիւն են հաստատել վաղ ժամանակներից այրումցի և այլ ցեղերից թուրքեր, որոնք 1865 թուին եղել են... 9 գիւղ 102 տուն ազգաբնակչութիւն, մինչդեռ այժմեան կառավարիչ Տեր-Աստուածատրեանի զեկուցումից երևում է, որ նոքա կազմում են 40 գիւղ և բաղկանում են մօտ 1000 տնից, որոնք և վաղ ժամանակից օգտուում են ընդարձակ արօտատեղից շատ չնչին վարձատրութեամբ. մինչդեռ նրանց հասցրած վնասն անտառին տասնապատիկ աւելի է»⁵⁴:

Ըստ վերոնշյալ փաստաթղթերի՝ 1912 թ. վանքն ուներ 459.97 դեսյատին հողատարածք⁵⁵:

Դատաստանական քննությունը հանգում է վանքի համար դրական որոշման, բայց գործնականում այն դժվար իրագործելի էր: Բանն այն է, որ խաչնարածները ոչ մի կերպ չէին ուզում հեռանալ կալվածքի սահմաններից և ամեն կերպ ընդդիմանում էին կառավարչի պահանջներին ու դատարանի որոշմանը:

Հեռատես կառավարիչն ազատագրված ամառանոցներն օգտագործելիս թուրքերի հնարավոր վրեժխնդրությունից խուսափելու նպատակով երբեմն դրանք կապալով տալիս էր հեռավոր վայրերի (օրինակ՝ Խանքարվեմո գյուղի) թուրք գյուղացիներին⁵⁶, քանի որ նման դեպքերում հայերի համար կալվածքից օգտվելը խիստ վտանգավոր էր⁵⁷:

Ի վերջո, մինչև 1917 թվականը կառավարիչ Տեր-Ավետիքյանցին հաջողվում է թուրքերից ու քրդերից ազատագրել բազմաթիվ ամառանոցներ (դրանք բոլորը գոյացել էին հայաթափ հին գյուղատեղիների տեղերում) և Դաղի վանքին ամրագրել վանքապատկան տարածքները:

Լևոն Տեր-Ավետիքյանցի այդ արգասաբեր գործունեությունն ըստ արժանվույն են գնահատել ժամանակակիցները: Մասնավորապէս «Մշակ»-ի թղթակիցը նրան բնութագրում է որպէս մի անձնավորություն, որը «...հեռու, հեռու անձնական շահերից, միտումներից, ինտրիգներից, խաղաղասէր մորմոքներով, կարեկցաբար ցաւում է և մտածում հայ ժողովրդի կամ վանքի շահերի

52 Գրիգ., Տարօրինակ եղեռնագործութիւն, «Նոր-Դար», 1895, № 77, 5 մայիսի, էջ 2-3:

53 Միքայել Վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906, էջ 10:

54 Նախահաշի Մայր Աթոռի և թեմական հաստատութիւնների 1910 թ., «Արարատ», 1910, Գ, էջ 58 (հավելված):

55 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 356 շրջ.-357:

56 Այդ մասին տես ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 1127, ք. 4:

57 Դրա վկայությունն է 1896 թ. մի խումբ հայերի հետ կալվածքի սահմաններում կատարված հետևյալ դեպքը. «Հին-Նախիջևանի կողմից 5 հայ գալիս են Ղարաբաղի Խօթա վանքի կալուածները ուսումնասիրելու եւ մի յարմար հող գտնելու, որտեղ կարելի լինի գիւղ ցցել եւ երկրագործութեամբ պարսպվել: Խօթավանքի արօտատեղիներում ապրող թուրք «քօլանի» կոչված թափառական ցեղերը վտանգ զգալով իրանց համար, ուղարկում են 10 աւազակ, որոնք բռնելով այդ հայերին մի անտառում, կտոր կտոր են անում, յետոյ նաւթ անելով դիակների վրա՝ այրում...» («Մշակ», 1896, № 86, 27 յուլիսի, էջ 3):

49 Խ. Վ., նշվ. հոդվ., «Արարատ», 1896, Ա, էջ 42-43:

50 Նշվ. հոդվ., էջ 42:

51 «Արարատ», 1911, Ը, էջ 624:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. վանական համալիրը հարավ-արևելքից (լուս.՝ Գ. Բազե-Խաչերյանի, 2007 թ.)

համար»⁵⁸: Հավանաբար հենց Լևոն Տեր-Ավետիքյանցի ձեռքով էլ 1913 թ. կազմվել է Դադի վանքի կալվածքների այն քարտեզը, որն այժմ էլ պահվում է Հայաստանի ազգային դիվանում⁵⁹:

Մտահոգ կալվածքի պահպանության խնդրով՝ 1913 թ. հուլիսի 5-ին Մայր Աթոռի կալվածքների կառավարիչ Լ. Տեր-Ավետիքյանցը Էջմիածնի սինոդին գրում է. «...այսօր ստացայ Կովկասի զինուորական պահեստներից 7 հրացան 100-ական փամփուշտներով, որոնք պիտի բաժանուեն Մարցայ անտառապահներին: Բայց ի նկատի ունենալով, որ Խօթավանքի, Չարեքավանքի և Գանձասարի կալուածների անտառապահներին զինելը արելի ու արելի անհրաժեշտ է, քան թե Մարցայ կալուածինը, այդ պատճառով, խոնարհաբար խնդրում եմ Ատենիի կրկին դիմել Կովկասի փոխարքայի դիւանատանը, բաց թողնել 27 հատ նոյն տեսակի հրացաններ 100-ական փամփուշտներով, որոնցից 12-ը՝ Խօթավանքի, 5-ը՝ Չարեքավանքի և 10-ը՝ Գանձասարի կալուածների համար»⁶⁰: Նույն թվականի դեկտեմբերի 25-ին սինոդը Լ. Տեր-Ավետիքյանցից խնդրում է «...ստանալ նահանգապետից թոյլտուութիւն անտառապահների համար հրացան կրելու մասին..., հակառակ դէպքում գործը կը կարճուի»⁶¹: Յա-

վոք, Լ. Տեր-Ավետիքյանցին չի հաջողվում ձեռք բերել այդ թույլտվութիւնը, ուստի և 1914 թ. մայիսին գործը կարճվում է⁶²:

Խորհրդային կարգերի հաստատմամբ Դադի վանքից խլվում են վանքապատկան տարածքները:

Ի հավելումն վերոնշյալի՝ ստորև ներկայացնում ենք նաև ներկայումս գոյություն չունեցող, սակայն ժամանակին բարեբախտաբար գրի առնված և հրապարակված կալվածագրերը (սիկեղները).

Ա

«Դուք բարեպաշտուի՛ դուստր Սարգսի իշխանաց իշխանին, սա ուներ ամուսին իւր զբարեպաշտ իշխանն գ՛րարա Գրիգորն և որդի սոցա քաջ և յաղթօղ զօրավարն և մեծ իշխանն Հասան՝ տէր Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շաղվաքու և այլ բազում գաւառաց և քան առաւել սիրէր զգեօղն Ծար, հայրենիք և պարզկք քաջութեան, որ են զինք արեան տուեալ աշխարհակալացն Հայոց: Սա ուներ զկին Մամբան՝ դուստր Քրտին և որդի սոցա զբարի Գրիգորն և ամուսին իւր Ասփայ՝ դուստր Կոմսի Տարսահիճին, իշխեցողի կողմանն Սիւնեաց և սա բազում ընչիւք և ծախիւք փարթամացոյց գտուրք ուխտն գ՛հատի վանս և գ՛հաթրի վանս, զի շինեաց զտաճարսն, ո է Դարպասներն և այլ բազում արդիւնս արար և միւս որդին՝ տէր Յոհաննէսն, որ շինեաց գտուրք

58 **Գիտող**, Նամակ խմբագրութեան, «Մշակ», 1914, № 39, 22 փետրվարի, էջ 3:

59 Տե՛ս սույն աշխատությունը, էջ 219:

60 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11709, թ. 1:

61 Նշվ. գործը, թ. 7:

62 Նշվ. գործը, թ. 9:



ԳԱԴԻ ՎԱՆՔ. վանական համալիրը հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ուխտն Գետամէջ, և որդի Գրիգորին Վահրամն, որդի սորա Սարգիսն, զոր բազում արդիւնս արարեալ և մի ի բազմացն այս է՝ զգեղեցիկ զանգակատնին ի Դատի վանս, ի Խաթրի վանս, ի Գետամէջ, ի գէօղաքաղաքն Ծար և է մինչև ցայսօր: Որդի սորա Հասանն և այս Հասանէս բաժանին Դօփա ցեղն, որք են այտքիկ: Շահանշէն՝ Ուլուբէկանց Պապ, Աղպուղէն՝ Այտինեցւոց պապ, Ծհանշէն՝ Ջհանշեցւոց պապ և որդի Հասանայ՝ Աղբուղէն և որդի սորա Տուրսունն և որդի սորա Այտինն և ի ժամանակի սորա ի զօրանալ իսմայէլացւոցն և ի նուազիլ տուն Հայոց ցիր ու ցան լինելն իշխանացն Հայոց, յարեան այլազգիքն և զմուլքն մեծ իշխանին Հասանայ պէթալմալ արարին: Գնաց պարոն Այտինն ի դիւան և երեք ամ աշխատեաց և բազում ինչ տուեալ ազատեաց ի ձեռաց այլազգացն վանորայքս և զշինարէնքն, զոր տէրն ամենայնի տացէ զվարձս վաստակոց իւրոց»⁶³:

Բ

«Կաման ամենակալին ա(ստուծոյ) և տ(եառ)ն մերոյ Յ(իսուս)ի, այս մեր գիր է իշխանական հրամանի: Ես՝ Տուրսունս, Մեյտիս, Պոռօս, Գրիգորս, Հասանս և եղբարքս և որդիքս մեր զայս հաստատ սիկիլս տուաք տ(է)ր Աւագ եպիսկոպոսին և իւր եղ-

63 Հասան-Ջալալյան Ե., էջ 127-128: Տե՛ս նաև **Շահխաթունեանց Յ.**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զատաացն Արարատայ, հ Ա, էջ միածին, 1842, էջ 452: **Ջալալեանց Մ.**, նշվ. աշխ., Ա, էջ 201-202: **Բարխուտարեանց Մ.**, էջ 267-268: **Ալիշան Ղ.**, Արցախ, «Քազմավէպ», 1988, № 1-4, էջ 264-265:

բայր Մանուէլ արեղային, որ մեր հայրենի աթոռն՝ զԳաղի վանս, զԽաթրի վանս, զԳետամէջն, որ մեր գերեզմանատուն է ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի վանորայքս մարդ չկայր, որ յառաջն կայր և շէն պահէր և զեկեղեցիքս լուսաւորէր, յայս պատճառէս երես դրաք և զայս ս(ուր)ք աթոռնին նոսա ապսպրեցաք, և զերկու իշխանութիւն, որ է եպիսկոպոսութիւն և զպարոնութիւն էլ հէնց ի նոսա յանձնեցաք, որպէս առաջին մեծ կաթողիկոսն մեծ տր. Ջաքարիային, տ(է)ր Աթանասին և տ(է)ր Սարգսին էր տուեալ ԳԴաթի վանս, զԽաթրի վանս, զՀաղբատ իւր վիճակովն, նույնպէս և այս հոգևոր տ(է)ր Գրիգոր կաթողիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ և շրջաբերական թղթի»⁶⁴:

Գ

«Կաման ամենակալին ա(ստուծոյ), ես՝ Մէյտիս, որդի պարոն Շանշին, թոռն պարոն Հասանայ, ես՝ Գրիգորս, Հասանս, Պէկիս, Ալթունս, որդիք պարոն Վահրամայ, թոռուք պարոն Հասանայ, ես՝ Այտինս, որդի պարոն Տուրսունին, թոռն պարոն Աղբուղին, ես՝ Շանշաս, որդի Հասանայ, թոռն պարոն Ջհանշին, մէք՝ չորս եղբարքս տուաք մեր վանորէիցս Ապահէն, զԽութ, զԽոզենեկս իւր չորս սահմանով. ի Չափարէն հանդէն Չազու-

64 Հասան-Ջալալյան Ե., էջ 129: Տե՛ս նաև **Շահխաթունեանց Յ.**, Ա, էջ 452-453: **Ջալալեանց Մ.**, նշվ. աշխ., Ա, էջ 202: **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 208: **Տէր-Մովսիսեան Մ.**, նշվ. աշխ., էջ 97: **Ալիշան Ղ.**, Արցախ, «Քազմավէպ», 1988, № 1-4, էջ 265: Դիվան, V, էջ 216:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. վանական համալիրը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

նանց ազարակ գեղով, Բռնչի աղբիւրովն, Թողանանց գետով, Պետրոսապակ, որ մեր պապերն տուեալ են, զՍոխանանց, զՇոխանանց, զՇրտնօտն, զՇիռնանանց, զԳրիգորաթաղս, զԴաթի վանս իւր Քօլատակերովն, զՀերանանց Հակառակաբերթովն, Նալի աղբիւրովն, Բերթաքարովն, Կռապաշտոցովն, Ողնովն, Խոզենակուց մեծ այգին՝ Մանանաձորովն, Ծաղիկանց, Եզնարածանց տուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր ճօճատր էր, քանի որ իւր պէտքն է՝ վարէ աստուծով ազատ է: Իսկ, թէ այլ մարդ վարէ տասանորդն առնու և տայ վանքին անպատճառ: Այս եղև մեր ուխտ առաջի աստուծոյ և սուրբ Դաթի առաքելոյս: Արդ՝ ով որ զկնի մեր այս վաղմիաքերս այլայլէ կամ խլէ, թէ յորդոց և թռռանց մերոց և յազգայնոց իցէ առաջի և (ստուծոյ) պարտական և սևերես լինի, ՅՄԸ (318) Հայրապետաց նգոված է. Կայենի և Յուդայի դասակից, իսկ թէ յայլազգեաց և թուրքաց իցէ՝ իւր հալալն հարամ լինի և իւր փէյղամբարէն ապիզար լիցի, ամէն»⁶⁵:

Դ

1763 թ. կազմված Դադի վանքի կալվածագիրը՝ («Խութավանից որպիսութիւնքն»).

65 Հասան-Չալայան Ե., էջ 129-130: Տե՛ս նաև Ծախաբունեանց Յ., նշվ. աշխ., Ա, էջ 453: Ջալալեանց Մ., նշվ. աշխ., Ա, էջ 202-203: Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 208: Տեր-Մովսիսեան Մ., նշվ. աշխ., էջ 97: Քամալեանց Մ., «Աղվանից աշխարհի» Թաղէ կամ Խոթա վանքի կալվածների վերաբերյալ մի դարալա-կալվածագիր, «Кавказ и Византия», 1980, № 2, էջ 153: Ալիշան Գ., Արցախ, «Քազմավեպ», 1988, № 1-4, էջ 265-266: Դիվան, V, էջ 216:

«Ունի վիճակս զբոլոր երկիրն Քեօլանու, որոյ հայերէն անունն Ծարայ երկիր կոչի, որ է սահմանակից Խամսայու, բայց Էջմիածնի է վիճակեալ և ընդ ձեռամբ Երևանու իշխողին: Որոյ գեօղորայքն են այսոքիկ. Էրք, Ծնիլանց, Կարմիրշէն, Սալամալիք, Քարթառանց, Ուռուցփոր, Ատարէնիս, Ծուղորուղաշէն, Հոսաբակ, Կեաւալու. սոքա յայսկոյս լերինն են, կից Արեգունոյն Գեղամայն: Իսկ յայնկոյս լերինն՝ Մեծ Ծար, Կաժ, Անուխս, Խօլօզանց, Դաշտակ, Հաճաւ⁶⁶, Ապահէն, Դումէն, Քարատակ, Ջուար, Մոս, Սևաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուճ, Մոթանց, երկու Դաւաշխուր՝ Մեծ և Փոքր, Լև, Եանշաղ, Բարսղիշէն, Մէյտանն, Երիցիշէն, Խութավանք, Չափար, Կեարաք, Նորշէն, Խնթրավանք:

Ունի և զանապատս ընդ ձեռամբ իւրով, զԽնդրավանից անապատն և զԾարայ անապատն»⁶⁷:

Ե

«Իմ ձեռ ընկած դաբալան-զլանաճև կողոված հին թուրքը Թաղէի կամ Խօթա վանքի կալվածներին ու սահմաններին վերաբերեալ երկար գրութիւն է, որի բովանդակութիւնից կարելի է եզրակացնել նրա կարևորութիւնը կամ ընդհակառակը:

Կալվածագրի կամ վախճագրի երկարութիւնն է 30 վերջուկ, թվում է թէ վերջից մի ծալ պոկված է: Գրած է կոշտ և ամուր թղթի վրա, որ մագաղաթի է նմանում:

66 Բնագրում տպագրական վրիպակով՝ Հաճար:
67 Ջանբո, էջ 283-284:

Խոնավ տեղ պահվելուց շատ բաներ եղծվել են, աչ կողմի ասի-ները բողբոջված քրքրված են, տեղ-տեղ դժար է լինում կարդալը, իմաստ հասկանալը: Ամբողջ գրութիւնը բաղկացած է չորս կտոր իրար յետնից կազմուած թղթերից, որոնք տարբերվում են թէ՛ մե-լանի գույնով, թէ՛ տառերի գրվածքով: Բոլոր գրութիւնը 133 տող է: Վրան կան 16 կնիքների տեղեր: 6-ը կարմիր մեկանով են խփված, մնացածները՝ սև: Կնիքներից 5-ը կաթուղիկոսական են, ստորագրութիւններն էլ մոտը, մնացեալ կնիքները պատկանում են եպիս-կոպոսների, վարդապետների, մելիքների, բէկերի, իշխանների:

Յիշածս կալվածագիրը սկսվում է նախ և առաջ նախաթոռ Գանձասարի Պետրոս կաթուղիկոսի ձեռքով, որ գրում է թէ վկայ եմ, որ *Հաթերքը վախմ է Թաղէ առաքելոյն*, աչ կողմից էլ կնիքը դրված. յետո Եսայի կաթուղիկոսի ձեռքը ու կնիքն են վկայ այս բա-նիս: Երբորդ տեղը Երեմիա կաթուղիկոսի ըստորագրութիւնը և կնի-քը-վրկայ եմ այս բանին: Չորրորդ տեղը Գանձասարի Գրիգոր կա-թուղիկոս, որդի Սելիք-բէկին, թոռն ...բէկին, այս հաստատ բանիս վկայ եմ, կնիքը աչ կողմից: Հինգերորդ տեղը՝ Փիլիպպոս կաթուղի-կոս հայոց-վկայ եմ, կնիքը մտալը: Վեցերորդ տեղը՝ ես Ակոբոս...:

Այս ստորագրութիւններից յետ սկսվում է մի գրութիւն, որի մէջ յայտնում է, թէ *Քրիստոսի խոնարհ աղախիւն Արգուխաթու-նը, որ էր իշխանաց իշխան Քրդի դուստրը և Հաթերքի տէր խա-չենցի Վախտանկ թագավորագնի ամուսինը, շինել է Սուրբ Կա-թողիկէն իրա Հասան և Գրիգոր որդոց յիշատակի համար, վեր-ջում դրած է հայոց ՈԿԳ թվականը (1214):*

Վերոյիշեալ Թաղէն և Խաթը եղել են Հայաստանի առաջին լուսավորիչների աշակերտներից. երկուսի անունով էլ առաջին դարերում մենաստաններ են շինվել, հետզհետէ ճոխացել և հա-րուստ վանքերի շարքն ընկել Սիւնեաց աշխարհում: Խաթի ա-նունով կառուցվածը կոչվում է Խաթրայ վանք:

Արգուխաթունի կառուցած եկեղեցու վրայի արձանագրութիւ-նը ավարտվելուց յետ թերթի վրա հանած է Խօթա վանքի նշա-նավոր խաչվեմի մի երեսի արձանագրութիւնը. «*Ի փառս աստու-ծոյ եւ ի նորոգութիւն ս(ուր)ք ուխտիս և սահմանեցաք ժառան-գութիւն եկեղեցոյս զիւղս եւ ազարակս իւրեանց սահմանաւքն զԱպահէն, զԽօթն, զԵզնարածանց, զԲճանց եւ զԿանաչաւորն, որ ի Վայոց ձոր. ...չորս վանքի երկոյ տուն յԱրփայ հաստա-տեցաք կամակցութեամբ եղբարցս զաւագ խորանի պատարագն յանուն վերայգրելոցս կատարի անխափան, եթ որ այսմ վճռի հաստատնոյ խափանումն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղոյս կամ որ և իցէ, խափանեցի յոյս նորս, որ առ Ք(րիս-տո)ս և դատապարտիսցի յա(ստուծոյ)»:*

Արգախաթունի այս գրութիւնից յետ կան հետևեալ ստորագրութիւնները. «*Ես՝ Արանէս եպկս., Գրիգոր եպկս. վկայ ենք, որ վանքին վերայ գրած հաստատը վախմ են*»: Կնիքները ևս կան իրանց, դրանից յետ գրած է. «*Ես՝ մելիք Ղասումս, որդի Ամիր բէ-կին վկայ եմ, որ վանքին արձանում գրած վախմ են անպատճառ*»:

Կնիքը դրած տաճկերէն տառերով: Դրանից աչ գրած է. «*Ես Աստուածապովս՝ որդի մելիք Քամայ բէկին Գեղամայ, վկայ եմ, որ էս վախմերս Դատէի առաքելոյն վրայ գիրած է հաստատ*»: Կնիքը տաճկերէն տառերով: Դրա ձախ կողմը. «*Ես Չաքարայ եպկս. որդի Մասում բէկին վկայ եմ, որ այս վախմս Սբ. Դատէի առաքելոյն վերայ գրած է հաստատ վախմ է*»: Կնիք: Դէպի աչ գրած է. «*Ես՝ Ղարայգոզա, որդի մելիք Եավրին Գեղամայ, վկայ եմ էս վախմերիս, որ Դատէի առաքելոյն վերայ գրած է հաս-տատ*»: Կնիքը տաճկերէն է: Դրա ձախ կողմ գտնվում է Դա-տևացի Միմաս վարդապետի ձեռքը և կնիքը:

Այս ստորագրութիւններից յետ նույն թղթի վրա ավելի հին ձեռքով և հին մեկանով հետևեալն է. «*Թվականն ՈԼԱ (1182) էր, գուղս և ազարակս վախմն տլի Դատէի վանքիս անխափան...:*

Հասան որդի Վախտանկա տէր Հաթերքոյ և ...այբերդու և Խաչենայ բերդն և Հաքախաղացին, կացի աւաքութեամբ ամս Խ (40) շատ պատերազմով յաղթեցի թշնամեաց իմոյ աւգնու-թեամբն աստուծոյ և եղին ինձ Զ (6) որդի, զբերդերս և զգաւառս ետու նոցայ և ես եկի ի վանս ...այր ի տէր Գրիգոր և ես եղէ կրոնատր բերի զխաչաքարս Աղուայ շատ աշխատութեամբ բա-զում հնարիւք կանկեցի սուրբ նշանիս և իմու յիշատակ: Արդ վասն ձեր հոգւոյդ որք ընթեռնոյք զիս յաղաթս յիշեցէք, ով խա-փանի վախմն, ՅԺԸ հայրապետաց նգոված է»:

Սրանից յետ գրութիւնը շարունակվելու համար կցվել է այլ թուղթ, կցվածքի վրա երկու տեղ կարմիր մեկանով կնիքներ են խփած հայոց տառերով, չեն կարդացվում հնութեան հետի:

Հետևեալ գրութիւնը նոտր տառերով է ու պարզ.

«*Ես՝ Սէտիս, որդի Գրիգորին, թոռն պարոն Հասանայ, ետու մեր վանդորէիցն զԱպահէն, զԽութ, զԽոզենակս իւր Դ սահմա-նովն զՊարանախաղէն ի Հենհացն, ի Չիչապերթէն, ի Վահէն, Շարինց քարէն, ի Հարցլաղայէն, ի Չափարին հանդէն Ծագու-նանց Ազարագետով, Բորնչի աղբիւրովն, Թողանանց գե-տովն, Պետրուպակ, որ մեր պապերըն են տուեր, զՈւխանանց, զԾովատեղն, զՉաչոռանց, զՉուլպէկանց, զՅրտնօտն, զԻրադ-մանանց, Գրիգորս բաղս, Դատի վանս իւր Բոլատակերովն, Հե-րանանց Հակառակաբերդովն, Նաի աղբիւրովն, Բերդաքա-րովն, Կռապաշտոցովն, Ողնովն, Խոզենակուց մեծ այգին, Մա-նանա ծորովն, Ծաղիկանց, զԵզնարածանց տվաք տէր Դիրաւագ եպիսկոպոսին, որ մեր հաւատարիմ էր, քանի իւր պէտք է, վարէ, ազատ է, թէ որ այլ մարդ վարէ, Ժ (1)անորդըն վանքին տայ անպատճառ»:*

Նոյն թղթի վրա նոյն ձեռքով գրած է հետևեալը.

«*Ես՝ Հասան, որդի Վախտանկա և եղբայր իմ՝ Գրիգոր, ա-ռաջնորդ ս(ուր)ք ուխտիս ըստ Դատէի վանիցս և սակս.. Սմբատ և եղբարքս մեր բաժանեալ տաք զմեծն Խաչէն ...Սակոա և երկիրս Ծար ի Վերին Խաչէն տվաւ Հասանայ և կանգնեցաք խաչ մի Մատաղիսոյ վերն, բոլոր բքին սահման Խաչենոյ և Ծա-րայ: Ես Հասան կացի աւաքութեան ամս քառասուն և եղ ինձ Զ (6) որդիս և շինեցի Դ (4) բերքս՝ Հաթերքաբերք, Չիչաբերք, Հա-ւաքաղացին և Դաշտաբերք: զԲերքերս և զգաւառս ետու որդոց իմոց և ես եկի ի վանքս՝ մօտ տէր Գրիգորի և տէր Աթանէսի և եղէ կրօնատր և երկրիս հողանիւթն այս է. Հաթերքոյ գետն ի վեր մինչև ի սարն Ապասայ, Մոսայ Շարագօլն, զա Պարանախաչն հին Հայոց եկեղեցին, Պախոռա եկեղեցին, բերթն Չիչայ, սարն Վահենոյ, Շարքարն, Հորագաքարն, Ըռեգա կաշկառն, բերթն Մագրոյ և գետն Հաթերքայ ամենայն ընչովն և ջորընթացաւն:*

Եւ մեր որդիքս և թոռուքս Հասանայ, եւ Գոնցէս տվին ինձ բերթն Չիչա, անցաւ ժամանակ, յետոյ եկի ուխտ ի վանքս, տվի իմ հայրենեացն Խոթասարն, Շարքարն, Հարագաքարն, եկեղեցին Մարչամանցու մուլքն իւր սահմանքովն, իւր խասովն, իւր ջուր-ընթացովն վախմ ի դռն ըստ Դատէի սուրբ առաքելոյն: Եւ միաբանքս սահմանեցին մեզ Դ (4) օր պատարագ, որ որ մեր տված վախմն խափանի նգովեալ եղիցի ՅԺԸ (318) հ(այ)ր(ա)-պ(ետ)ցն, ամէն, թվ(ի)ն ՈԼ (1181):

Ես՝ Թորէլ, թոռն Հասանայ, տվաւ ինձ ի հօրէ իմէ ի բերթն Հաւախաղացին երկրին Վերին Խաչէն, ես իմ կամաւ տվի Ժ հող վախմ վարել, ցանել ժողովրդեամբ, ամէն տարի պտուղն առնել ի դռն ըստ Թաղիի սուրբ առաքելոյն և սահմանեաց մեզ տէր Գրիգորն Զ (6) օր պատարագ, ոչ խափանեցի ամենայն ժամա-նակ, խափանողն խափանեցի»:

Այստեղ վերջանում է թերթը, բայց թվում է, թէ գրութիւնը շա-րունակվում է, ամենավերջ խփած կարմիր մեկանով կրնիքի միայն կէտը կա, միւս կէտը պոկված է:

Այժմ արտագրեմ դաբալայի լուսանցքում եղածը.

«Ես Դադաձագ՝ թոռն մեծին Հասանայ, տվալ ինձ ի հորե իմնե՛ բերդ Դաշտայ. ԺԱ շէն և ես եկի ուխտ սբ. վանքն ի դռնն սբ. առաքելոյն, ես իմ կամաւ տվի վախճման իմնե՛ գԱպահէն իւր մուրովն, իւր սահմանքովն ի գետն Բարձրակապն ի ջուրն Շարօտին ճանապարհաբաժան, Կարմիր բիթն, Վաթաջերայ եկեղեցին իւր սահմանովն, ո որ գայս խափանէ նգովեալ եղիցի 3ԺԸ հրպցն. թիվն ՈՒՆԵ»⁶⁸:

Մարդադոնյաց կամ Դադի վանքի Սբ. Նշանը

Մեծահամբավ Դադի վանքը ժամանակին տիրապետել է բազմաթիվ եկեղեցական իրերի, գրքերի և սուրբ մասունքների: Վերջիններիս թվում բացառիկ նշանակություն է ունեցել Մարդադոնյաց Սբ. Նշանը: Այս խաչի հեղինակությունը, նրա պահպանման գործընթացն այնքան ճանաչված էին և վստահելի, որ այն հիշվել է ոչ միայն գավառի տարբեր եկեղեցիներում ստեղծված ձեռագրերի հիշատակարաններում, այլև հայտնի էր որպես ողջ գավառը փորձանքներից զերծ պահող հովանի:

Ավանդաբար վկայվել է, թե խաչը Մարդադոնյաց դաշտից բերել էր Թադեոս առաքյալը: Հենց այս հանգամանքով պայմանավորված՝ խաչը բացառիկ համբավ և նշանակություն է ունեցել: Նրա մասին առկա հիշատակությունները հետևյալներն են:

Այսպես, Մարդադոնյաց Սբ. Նշանի առաջին հիշատակությանը հանդիպում ենք 1553 թ. տեղի ունեցած պատմական անցքերի կապակցությամբ. «...ընդ բազմացն մոլորական միաբանով գնացաք ի յամբոցն Ծարայ վանքն ամրացաք, և ի նախախնամողն ամենայնի և ի Սբ. կոյսն Մարիամ եւ ի Մարդեղունեաց խաչն ապաւինեցաք...»⁶⁹:

Այնուհետև Մարդադոնյաց խաչ-հովանին հիշվում է Ծարի Դաշտակ գյուղում 1673 թ. ստեղծված ձեռագրի հիշատակարանում. «...ի յերկիրս Ծարայ՝ ի գետաղս, որ կոչի Դաշտակ՝ ընդ հովանեալ Սբ. Աստուածածնին եւ Մարդադունեաց Սբ. Նշանին և Սբ. Յակոբին»⁷⁰:

Ապա առկա է երկու հիշատակություն միևնույն՝ 1684 թ.-ից: Նրանցից առաջինը քարհատցի Բարսեղ գրչի ծաղկած և կազմած Ավետարանի հիշատակարանում է. «...ի յերկիրս Ծար, որ կոչի Փոքր Միւնիս՝ ի գերահռչակ եւ ի հին հանդիսարանի Դադեի վանիցս ընդ հովանեալ Սբ. Առաքելոյն եւ Սբ. Աստուածածնիս եւ ամենագոր Սբ. Նշանիս Մարդադունեաց»⁷¹, իսկ երկրորդը մեկ այլ հիշատակարան է. «...ի յերկիրս Ծար Փոքր Միւնիս կոչեցելոյ, ի սուրբ վանս Կուսանաց, ընդ հովանեալ Դադեի սուրբ առաքելոյն և սուրբ Կաթողիկէին և սուրբ Աստուածածնին և զամենագոր սուրբ Նշանին Մարդադունեաց...»⁷²:

Այնուհետև Սբ. Նշանը վկայված ենք տեսնում Երեմիա Չելեբի Քյոնյուրճյանի՝ 1691 թ. կազմած քարտեզում. «Մարդադունեաց խաչ. Թաթեոս բերաւ ի տաշտէն ուր զՓրկիչն լուացին»⁷³:

ԺԸ դարում, երբ իրար հերթ չտալով Ծար գավառն ալեկոծում էին ավարառու լեզգիները, քուլանի քրդերն ու օսմանցիները, և

որի հետևանքով ծայր էր առել գավառաբնակ հայության աննախադեպ ծավալի արտագաղթ, խնդրո առարկա Սբ. Նշանը Դադի վանքից փոխադրվում է Շուլավեր: Այդ մասին վկայել է Ջալալյանց տոհմից սերող շուլավերցի Հեքիմ Խեչոն: Համաձայն վերջինիս ասության՝ ԺԹ դարի սկզբներին Խոթա վանքի Սբ. Նշանը Ջալալյանց տոհմի ներկայացուցիչները բերում են Շուլավեր և «...իրենց տան մի սենեակը յատկացրել էին ս. մասանց...: Ջալալեանց ընտանիքը Շուլաւերում լիապէս օգտուում էր Ս. Նշանի եկամտից մինչև 1884 ամառը, երբ սրբազան Մեղրակեանն այցելեց ի թիս այլ գիւղերի և Շուլաւերը: Մեծ դժուարութիւնից յետոյ կարելի եղաւ համոզել Ջալալեանց ժառանգներին... Ս. Նշանը իրենց տանից տեղափոխելու գիւղի եկեղեցիներից մինը: Տեղափոխուեցին մասունքները Դարամուրաթ թաղի Ս. Մեսրոպ եկեղեցին...: Սրբութիւնները երկու մասում կամ պահարանում են ամփոփուած: Առաջինը 4 վերշոկ մեծութեամբ արծաթապատ խաչ է, որ է իսկ պահարանը կենաց փայտի (Ս. Նշան): Չորս թերից իւրաքանչիւրի վրայ մի ակն կայ և մէջտեղը արծաթ խաչելութիւնը: Այս երեսին հետևեալ գրութիւնն ենք կարդում.

Ես՝ Ծատուրս, յ(ի)շ(ա)տ(ա)կ տվի Խոթա վանից, թվ(ին) ՌՄԵ (1756):

Միս երեսին կարդում ենք այս գրութիւնը, որից աւելի ոչինչ չկայ. *Շնորհօքն աստուծոյ ես՝ տէր Ներսէսս, կազմել տվի ի սուրբ Նշանս ի հալալ ընչից իմոց հայր իմ տէր Սկրտիչն, մայր իմ՝ Հռիփսիմէն, կողակից Աննան և որդի՝ Եղիազարին, ամէն, թվ(ին) ՌՄԵ (1696)*⁷⁴:

Վերը շարադրվածից հետևում է, որ Մարդադոնյաց Սբ. Նշանը մեծահամբավ մի խաչ էր, որի ծագումը վերագրվել է Թադեոս առաքյալին, այնուհետև դարեր շարունակ պահվել Ծար գավառի ամենից հռչակավոր հոգևոր կենտրոն Դադի վանքում, ապա գաղթականական հոսանքների հետ ընկել է Շուլավեր: Ասվածից հետևում է, որ Մարդադոնյաց Սբ. Նշանն ընդամենը խաչի անունն էր, որի անվամբ որևէ վանք կամ եկեղեցի Ծար գավառում չի եղել⁷⁵:

Ճարտարապետություն. Դադի վանքը միջնադարյան Հայաստանի վանական խոշորագույն համալիրներից մեկն է: Գրեթե երկու հազարամյակ այստեղ պարբերաբար կառուցապատվել է, կատարվել են նորոգություններ: Չնայած թշնամիների բազմաթիվ արշավանքներին ու ժամանակի ավերիչ ներգործությանը՝ ցայսօր հնավայրում պահպանվել է զանազան նշանակության շուրջ 30 կառույց՝ կանգուն, կիսավեր, վթարային կամ իսպառ ավերակ վիճակում:

Հուշարձանախումբը ճարտարապետական բարձր արժեքներով վաղուց ի վեր իր վրա է բեռնել մասնագետների ուշադրությունը: Արդեն անցյալ դարի վերջերին որոշ հետազոտողներ տվել են առանձին շենքերի ճարտարապետական նկարագրությունը⁷⁶:

68 ՍՄ, ֆ. 40, թղթ. 72, վավ. 8գ, թ. 139-148 (Քամալեան Ս., Աղվանից աշխարհի Թադե կամ Խոթա վանքի կալվածների վերաբերեալ մի դաբալա-կալվածագիր): Տե՛ս նաև Քամալեան Ս., «Աղվանից աշխարհի» Թադե կամ Խոթա վանքի կալվածների վերաբերյալ մի դաբալա-կալվածագիր, «Кавказ и Византия», 1980, № 2, с. 150-154.

69 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 5, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 374:

70 Միանայան Թ., նշվ. աշխ., էջ 38:

71 Նույն տեղում:

72 ՍՄ. ձեռագիր 2067, էջ 470-471: Հիշատակարանի հրատարակությունը տե՛ս Լեռ, Հայոց պատմություն, հ. 3, գիրք երկրորդ, էջ 28-29: Չորանյան Պ., Քարվաճառի էթնիկ դիմագծի շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XX, էջ 219:


73 Uluhogian G., Un' antica mappa della Armenia. Ravenna, 2000, p. 59.

74 Քամալեանց Ս., նշվ. հոդվ., «Արձագանք», 1892, № 111, 25 սեպտեմբերի, էջ 2:

75 Ինքնին հասկանալի է, որ սկզբնաղբյուրային որևէ հաստատում չունի հնագետ Հ. Միմոնյանի այն կարծիքը, թե իրենց բացահայտել են Մարդադոնյաց Սբ. Նշան վանքը. «Թարթառ գետի ճախափնյա անտառապատ բարձր սարի վրա հայտնաբերվեց Մարդադոնյաց Սբ. Նշանը...» (Միմոնյան Հ., նշվ. հոդվ., «Պատմամշակութային ժառանգություն մատենաշար», № 2, էջ 9):

76 Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», 1885, № 78, 6 հոկտեմբերի, էջ 2-3; նաև մույնի՝ նշվ. աշխ., էջ 70-71: Ն. Մ. Թանգ., նշվ. հոդվ., «Նոր-Դար», 1891, № 123, 6 օգոստոսի, էջ 2-3: Իզգաբեանց Յ., նշվ. հոդվ., «Նոր-Դար», 1892, № 15, 29 յունուարի, էջ 1-2 («Վանքն ունի չորս տաճար (տաճարներից մեկը ահագին շինություն ունի), ունի մի քանի ուրիշ աղօթատեղեր, խուցեր, մատուռներ, որոնց միայն աւերակներն են հիմա մնացել, ունի նաև ուրիշ քարե շինություններ միայրկանի, երկյարկանի բաւական բարձրութեամբ: Այդտեղ տեսանք մի հսկայական շինութիւն, որը վանքի գիմետունն է եղել. այնքան մեծ էր նա, որ երբ միջին կանգնեցինք, հազիւ էին մեր

Նմանօրինակ աշխատություններ են հրատարակվել նաև Ի դարի սկզբներին՝ նախախորհրդային տարիներին⁷⁷: Այնուհետև՝ մինչ 1960-ական թթ. վերջերն այդ ուղղությամբ միայն թուցիկ նյութեր են հրատարակվել⁷⁸: 1970-ականներին վանքն առավել հանգամանալից ուսումնասիրել է ճարտարապետ Մուրադ Հասրաթյանը⁷⁹: Համալիրի՝ նրա կատարած սխեմատիկ հատակագիծը և ուսումնասիրությունները հետագայում սկզբնաղբյուրի դեր կատարեցին այլ հետազոտողների համար ևս⁸⁰:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. վանական համալիրի հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

1980-ական թվականներին հրատարակ հանվեցին նաև Բարվի «գիտնականների» աշխատությունները⁸¹:

Վանքի ազատագրումից հետո (31.03.1993) աննախադեպ ազատ և անկաշկանդ պայմաններ ընձեռնվեցին տեղում մանրագին ու երկարատև չափագրական և հետազոտական աշխատանքների համար:

աչքերը տեսնում շինութեան պատերը, տեսանք և երկու շարք մի պատից մինչև միւսը կարգով փորած հորեր, որոնց ցոյց տուա մեզ վանահայրը՝ դրանց մեջ գինի էին պահելիս եղել: Այդ շինութեան կից գտնուում է հնձանը, որ էլի մի ահագին մեծութեան շինութիւն է. դեռ մինչև այժմս էլ մնում է ամբողջապէս մեծ առագանը, ուր նոր գինի, շիրան էին պահում: Հնձանի մի պատի վրայ կայ մի փոքրիկ խողովակ. դա ջրանցքի ծայրն է, որով ջուր էին բերում վանքից մի վերստ հեռաւորութեան վրայ գտնուած աղբիւրից, հնձանը մաքրելու համար»): **Մ. Մմբատ**, Համառոտ նկարագիր մի քանի վանքերի, «Նոր-Դար», 1893, № 17, 30 յունուարի, էջ 2-3: **Քարխտատարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 203-209:

⁷⁷ **Էփրիկեան Մ.**, նշվ. աշխ., էջ 572-573: **Տէր-Մովսիսեան Մ.**, նշվ. աշխ., էջ 83-91, 94-97 (ուսումնասիրությունները կատարվել են 1911 թվականին):

⁷⁸ **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1948, էջ 131: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 95-112:

⁷⁹ Տե՛ս **Ուլուրաթեան Բ., Հասրաթեան Մ.**, Դաղիվանք, «Հայկագեան Հայագիտական Հանդես», հ. Ը, Պէյրուք, 1980, էջ 7-54: **Ասրատյան Մ.**, Архитектура дворцового зала хаченских князей в Дадиванке, «IV республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов», Երևան, 1979: Նույնի՝ Դաղիվանքի համալիրը, «Գիտություն և տեխնիկա», 1981, № 9, էջ 21: **Thierry J. M., Hasratyan M.**, Dadivank en Arcax, «Revue des Études Arméniennes», t. 15, Paris, 1982, p. 259-287: **Ուլուրաթեան Բ.**, Դաղի կամ Խոթա վանք, «Էջմիածին», 1971, Զ-Է, էջ 62-72: Նույնի՝ Խաչենի իշխանական տոհմավանքերը, «ԲԵՀ», 1972, № 2:

⁸⁰ **Մկրտչյան Շ.**, Թարթուրի հովտի պատմական հուշարձանները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 3, էջ 136: Նույնի՝ Լեռնային Դարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 33-44: նշվ. աշխատության երկրորդ լրացված հրատարակությունը, Երևան, 1985, էջ 38-46: Նույնի՝ Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1988, с. 34-39. Նշվ. աշխատության երկրորդ հրատարակությունը, Երևան, 1989, էջ 34-39:

⁸¹ **Геюшев Р.**, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, с. 86, 174. **Ахундов Д.**, նշվ. աշխ., էջ 224-229:

տանքների համար: 1993-95 թթ. ընթացքում՝ մի քանի ամիս շարունակ, ՀՃՈԻ (Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող) կազմակերպության նախաձեռնությամբ առաջին անգամ կատարվեցին համալիրի բոլոր կառույցների ճարտարապետական չափագրումները⁸²:

Սկսած 1997 թ.-ից՝ ճարտ. Ա. Հախնազարյանի նախաձեռնությամբ և ճարտ. Ս. Այվազյանի հեղինակային վերահսկողությամբ, ի դեմս առավել վտանգված գմբեթավոր փոքր եկեղեցու, վանքում ծայր առան վերականգնողական աշխատանքներ: Գործընթացն ինքնաբերաբար ենթադրում էր վերականգնելիք յուրաքանչյուր հուշարձանի համար ստեղծել մանրամասն նախագծեր: Աշխատանքի այս փուլում ճարտ. Ս. Այվազյանը ոչ միայն կատարեց վանական առանձին կառույցների նոր և մանրագին չափագրական աշխատանքներ, այլև զուգահեռաբար իրականացված ուսումնասիրությունների արդյունքները կարողացավ ներկայացնել խիստ շահեկան մի աշխատությամբ⁸³:

Սր. Դաղի գերեզմանը. հայտնի է, որ քրիստոնեության առաջին գաղափարակիր-քարոզիչների նահատակության վայրերը սրբացվել են: Միայն Հայոց Արևելից կողմանքում հիշվում են քարոզիչների նահատակության մի շարք վայրեր: Հիշենք թեկուզ նահատակված Եղիշե առաքյալի գերեզմանը Հոմենը կամ Բոմեն (այժմ՝ Բում գյուղը Կուտկաշենի շրջանում) գյուղի մոտ, նրա աշակերտներ Քահալցիցի կի գերեզմանը Վարդաշենի մոտ, Գյումրատայից՝ Ծերիկ գյուղում, Վլասինը՝ Նիծում, իսկ Գրիգոր



Լուսավորչի թոռ Սր. Գրիգորիսինը՝ Վատնյան դաշտում (այժմ՝ Բիլիջի շրջան) և այլն: Բոլոր այս քարոզիչ-նահատակների գերեզմանների տեղում հետագայում կանգնեցվել են կոթող-հուշապույուններ, մատուռներ կամ ավելի ուշ՝ եկեղեցիներ: Հիշենք Կաղանկատվացու վկայությունն այն մասին, որ, օրինակ, Եղիշեի նահատակության վայրում է դարձում հուշապույուն է կանգնեցվել. «...յետ բազում ժամանակաց բարեպաշտն Վաչագան՝ Աղուանից արքայ, կանգնեաց սին ի գրի նահատակութեանն Եղիշայի...»⁸⁴:

Դաղի վանքի համալիրում՝ Կաթողիկե եկեղեցու հյուսիսարևմտյան կողմում, մինչև 2008 թ. հողաձածկ եկեղեցու խորանում՝ այնտեղ, որտեղ սովորաբար կանգնեցված է լինում սեղանի վեմ-քարը, առկա է մի կոթող, բայց ավելի ճիշտ՝ կոթողի պատվանդան (1,90 x 95 x 65 սմ): Եթե չլինեք քարոզիչ Դաղի՝ այստեղ նահատակված լինելու փաստը, այդպիսի մի կոթողի գոյությունը կարող էր վերագրվել երբեմնի հեթանոսական մեհյանից մնացած գոհասեղանի, բայց ներկա պարագայում, համոզված ենք, որ դա այն կոթողն է կամ կոթողի պատվանդանը, որը, ժամանակի սովորության համաձայն, կանգնեցվել է ի հիշատակ նահատակ քարոզչի: Ե՞րբ է այն կանգնեցվել՝ արդյո՞ք հենց Ա դարում, թե՞ քրիստոնեության ճանաչումից հետո: Սր. Եղիշեի դեպքում, ըստ Կաղանկատվացու վկայության, հուշապույուն կանգնեցվել է դարեր անց, պարզ է նաև, որ տեղում մինչև կոթողի կանգնեցումն էլ մի հիշատակ եղել է, այլապես տեղն էլ կարող էր կորչել և մոռացվել: Համենայն դեպս, տեղում Դաղի գերեզմանի առկայության մասին լավ գիտեին թեկուզ ԺԳ դարում (այն հիշվում է Կաթողիկե եկեղեցու՝ 1224 թ. նվիրատվական արձանագրության




⁸² Չափագրական տեղական աշխատանքներին իրենց մասնակցությամբ էապես աջակցել են Հայկ և Նաիրա Թորոսյանները:

⁸³ **Այվազյան Ս.**, Դաղի վանքի վերականգնումը 1997-2011 թթ., Երևան, 2015:

⁸⁴ **Մովսես Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 12:



ԴԱՂԻ ՎԱՆՔ. Սբ. Դաղի եկեղեցու խորանի հատվածը 1993 (լուս.՝ Ս. Կարապետյանի) և 2007 (լուս.՝ Ս. Այվազյանի) թթ., կոթողը, նրանից արևելք բացահայտված թաղումը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2007 թ.): Համալիրի կենտրոնական հատվածի շինությունների կտրվածքը դեպի արևելք և Կաթողիկե եկեղեցու, սյունասրահի և զանգակատան կտրվածքը դեպի հյուսիս (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)



ՂԱԴԻ ՎԱՆՔ. Սբ. Դաղի եկեղեցու խորանի հատվածի հատակագիծը, կոթողի, կոթողա-
մերձ ստորգետնյա և վերգետնյա թաղումների կտրվածքները (չափ.՝ Ս. Այվազյանի, 2008
թ.), կոթողի արևմտյան միստը (զրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

մեջ: Դաղի վանքի դեպքում մենք հակված ենք կարծելու, որ հու-
շապուունը քարոզչի գերեզմանին է կանգնեցվել Դ-է դարերում:

Ի դեպ, կոթողի արևմտահայաց երեսին առկա են ավելի ուշ
ժամանակներում արված խաչաքանդակներ և նրանց էլ ժամա-
նակակից տարեթիվ: Վերջինս կարելի է ընթերցել երկու տարբե-
րակով. Թ(Վին) ՊԺ (1361) կամ պարզապես ՊԺԹ (1370): Ամեն
դեպքում խոսքը վերաբերում է 1361-1370 թթ. միջակայքում կա-
տարված մի նվիրատվության, որի կապակցությամբ թույլա-
տրվել է քանդակել նաև նվիրատվական բնույթի 7 խաչ:

2007-2008 թթ. կոթողի շուրջ կատարված պեղումներն այս-
տեղ բացահայտեցին երկու թաղում, մեկը՝ կոթողի և խորանի կի-
սաբոլորակ որմի միջանկյալ հատվածում, իսկ մյուսը՝ նրա արև-
մտյան կողմում՝ դամբարանակերպ ստորգետնյա կառույցի ներ-
քո: Վերջինում մարդկային աճյունի մնացորդներից գատ, հայտ-
նաբերվեցին նաև գավազանի օճիքսե գլխիկ և փայտյա աթոռի
վերնամասի բաղադրիչներ:



Սբ. Դաղի եկեղեցի. դժվար է որո-
շել, թե կոթողն իր խորանի մեջ
կարծես վեմ-սեղան ներառած եկե-
ղեցին երբ է հիմնադրվել, սակայն
նրա հյուսիսային ավանդատան ա-
ռաստաղի սվաղի շերտին հենց սվա-

ՂԱԴԻ ՎԱՆՔ. Սբ. Դաղի եկեղեցու խորանի հատվածում գտնվող ստորգետնյա դամբարա-
նից հայտնաբերված գավազանի օճիքսե գլխիկը, փայտե աթոռի մնացորդները (լուս.՝ Ս.
Կարապետյանի, 2008 թ.) և նույն աթոռի վերակազմությունը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2008
թ.)



ԴԱՐԻ ՎԱՆՔ. Սբ. Դադի եկեղեցին արևելքից, հյուսիսային ավանդատան առաստաղի սվաղին տեր Աթանասի անվան հիշատակագրությունը, արևմտյան (բացված ժամատան մեջ) և հարավային (բացված բազիլիկ եկեղեցու գավթի մեջ) շքամուտքերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ղից դուրս բերված վանահայր տեր Աթանասի⁸⁵ հիշատակությունը (*տ(է)ր Աթանաս*), ապա նաև հարավային և արևմտյան ճակատներից բացված դռների արտաքին շքամուտքերը փաստում են, որ գոնե ներկայիս շինությունը ԺԳ դարի կառույց է:

Եկեղեցին ակնհայտորեն բազմիցս վերակառուցվել է, բայց դրանից հորինվածքն ու հատակագիծը էական փոփոխության

չեն ենթարկվել: Ներքին չափերն են՝ 20,70 x 9,40 մ: Պատի հաստությունը հարավում 1,16 մ է, իսկ արևմուտքում՝ ժամատանը հպված մասում՝ 0,55 մ: Երեք մուտքերից երկուսը՝



⁸⁵ Այս վանահայրը վանքի տարբեր արձանագրություններում բազմիցս հիշվում է 1263-1291 թթ. ընթացքում:

Սբ. Դադի եկեղեցու հյուսիսային ավանդատան առաստաղի սվաղին տեր Աթանասի անվան հիշատակագրությունը (գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. գմբեթավոր փոքր եկեղեցին հյուսիս-արևմուտքից, հյուսիս-արևելքից, գմբեթը ներքուստ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.) և լամբերի մաքրումից հետո ի հայտ եկած հնամենի կղմինդրածածկը (լուս.՝ Ս. Այվազյանի, 1998 թ.)



ժամատան և հարավից կից թաղակապ գավթի մեջ բացվածները, ունեն սրբատաշ, քանդակագարդ բավականին շքեղ լուծումներ: Պահպանված պատերի առավելագույն բարձրությունն է 5 մ:

Սբ. Դ-աղի եկեղեցին մասնակի նորոգվել է նաև ուշ միջնադարում: Պատերի մեջ բացված խորշերից մի քանիսը նորոգվել կամ

գոյացվել են ԺԶ-ԺԷ դարերում: Նախքան 2007-2008 թթ. պեղումները թաղի և պատերի վերնամասերի քայքայման հետևանքով այս եկեղեցու հատակի մակարդակը փլվածքների պատճառով բավական բարձր էր:

Գմբեթավոր փոքր եկեղեցի. ըստ տեղադրության՝ կարելի է ասել, համալիրի կենտրոնական կառույցն է: Ունի կենտրոնա-


գմբեթ հորինվածք: Արտաքուստ ուղղանկյուն մակերեսի ներքո՝ ներքուստ արևելյան կողմում կիսաբլուրակ եզրագծով խորանից աջ և ձախ, մեկական ավանդատունն է: Գմբեթը կազմված է դեպի վեր փոքր-ինչ նեղացող բոլորաձև թմբուկից և կղմինդրածածկ կորավուն վեղարից: Միակ մուտքն արևմտյան ճակատից է: Իրականացված է տարատեսակ շինանյութերով, ընդ որում,



ԴԱԴԻ ՎԱՆՔ. գմբեթավոր փոքր եկեղեցու հատակագիծը և վերականգնման նախագծերը. արևմտյան և հարավային ճակատներ, կտրվածքներ դեպի արևելք և հյուսիս (հեղ.՝ Ս. Այվազյան, 1997 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. գմբեթավոր փոքր եկեղեցին արևմուտքից և արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2019 թ.)



ՂԱՐԻ ՎԱՆՔ. գմբեթավոր փոքր եկեղեցու գմբեթը (լուս.՝ Ժ-Կ. և Շ. Դոբելյե ամուսինների, 2005 թ.), եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Պ. Կուսնեյի, 1979 թ.)

գերակշռում են անմշակ քարը, թրծած աղյուսը (հատկապես թմբուկի մեջ), սրբատաշ քարը (որպես անկյունաքար, թմբուկի հիմնաշար և քիվագոտի): Որմերում ագուցվել են նաև տասնյակից ավելի մեծ ու փոքր ամբողջական, առավելապես արձանագիր (թվակիրները՝ 1172, 1173, 1179, 1181, 1182, 1190) խաչքարեր, մինչև իսկ՝ մեկ ջաղացաքար: Ծածկերը (ինչպես լանջերը, այնպես էլ վեղարը) կղմինդրապատ են: Համեմատաբար ողորկ մակերևույթով երեսապատի գրեթե երկու տասնյակ քարերին առկա են մվիրատվական բնույթի խաչաքանդակներ՝ կից հակիրճ հիշատակագրություններով: Եկեղեցու արտաքին չափերն են՝ 7,90 x 6,48 մ, բարձրությունը՝ 10, 40 մ:

Ինչ վերաբերում է եկեղեցու կառուցման ժամանակին, ապա այն 1180-ականներով թվագրելն ու իշխան Հասան Վախտանգյանին վերագրելը⁸⁶ համոզիչ չէ, թեկուզ հենց այն պատճառով, որ եկեղեցու կառուցման ժամանակ նրա որմերում ագուցված թվակիր խաչքարերից մեկը 1190 թ. է, որից հետևում է, որ եկեղեցին կարող էր կառուցված լինել ամենավաղը՝ 1190-ական թվականներին: Մ. Հասրաթյանը եկեղեցին թվագրում է ԺԳ դարով⁸⁷, բայց այդ կարծիքը հիմնավորելու փաստարկներ չի բերում:

Տեղում կատարված չափագրումները հուշում են, որ մինչև 1211 թ., երբ կառուցվել է «Տաճարը» (տեղադրված է հիշյալ եկեղեցուց ընդամենը 1,5 մ հարավ, որի հատակի մակարդակը 4 մետրով ցած է եկեղեցու հատակից), տեղանքն ունեցել է բավական մեծ թեքություն, որը փաստորեն չեզոքացվել և դարավանդավորվել է՝ շնորհիվ «Տաճարի»:

Վերջինիս հյուսիսային պատն առ այսօր հենապատի նշանակություն ունի, և դրա շնորհիվ է արտաքուստ (նույն կողմից) գոյացել այն հարթ տեղանքը, որի կենտրոնում կանգնած է գմբեթավոր փոքր եկեղեցին:

Սրանից հետևում է, որ եկեղեցին կարող էր կառուցվել միայն 1211 թ.-ից հետո, երբ ավարտվել էին «Տաճարի» կառուցման առնչությամբ տեղանքի կրած փոփոխությունները: Նաև գտնում ենք, որ եկեղեցու պատերում գոյացած զգալի ճաքերը, պատերի առանձին հատվածների՝ միմյանցից մինչև 15-20 սմ հեռացումները (վերականգնման նախօրեին շենքը ծայրահեղ վթարային վիճակում էր) արդյունք էին ժամանակին մարդու միջամտությանը բնահողի կրած փոփոխության:

Արդեն նշվեց, որ եկեղեցու որմերում առկա են կառուցման ժամանակ ագուցված խաչքարեր և խաչաքանդակներ: Ստորև ներկայացնում ենք բոլոր նրանք, որոնք կրում են արձանագրություններ կամ հիշատակագրություններ:

Խաչքար (105 x 59 սմ). ագուցված է գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատում, ստորին հատվածում՝ 6 տող.

Թիւն ՈԻԱ (1172) է/ր, ես՝ Աղբայր, կանգնեցի զհաչս հար իմ / [Վախտանգա...], որք եր/[կրպագէք] աղարթ[ս] / յիշեցէք]:

Հրատ. ՀՄՀԽԱԲՇ, էջ 115:

Խաչքար (115 x 57 սմ). ագուցված է գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատում՝ մուտքի հարավային կողմում, ստորին հատվածում՝ 8 տող.



⁸⁶ Ուլուբաբեան Բ., Հասրաթեան Մ., նշվ. հոդվ., «Հայկազեան Հայագիտական Հանդես», էջ 11:

⁸⁷ Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, էջ էջ 52:

Թիւն ՈՒԲ (1173) էր, եւ՝ Հասալն՝ Ուրանանց բոռնս, | կանգնեցի գտու(ր)ք նշ/անս իմ կենացս բարէխ/աւս եւ իմ հարն հոգոյն յիշատակ, որք | երկրպագէք յաղաւթս յիշեսցէք:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:



Խաչքար (118 x 56 սմ). ագուցված է գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատում, արձանագրությունը՝ 4 տող.

Ի թ(վիմ) ՈՒԸ (1179), | եւ՝ Դաւիթ որ[դի]... կանգնեցի զխաչս իմ հար...

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:



Խաչքար (155 x 74 սմ). ագուցված է գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատում, ստորին հատվածում՝ 5 տող.

Թ(վիմ) ՈԼ (1181), | եւ՝ Գրիգոր քուերորդի կանգնեցի զխաչս եղբար իմն Գիորգա, որք երկրպագէք յաղաւթս | յիշեսցիք:

Հրատ. Դիվան, V, էջ 211: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:



Խաչքար (105 x 59 սմ). ագուցված է գմբեթավոր փոքր եկեղեցու հյուսիսային ճակատում, ստորին հատվածում՝ 7 տող.

Թիւ ՈԼ (1181), եւ՝ Սարգիս, որդի Աշոտա, կանգնեցի զխաչս ի փրկութի(ւն) հոգո | հանկան իմո, որք երկրպագէք | յաղաւթս յիշեսցիք եւ ա(ստուա)ծ զձ/եզ յիշեա, ամէն:

Հրատ. Տեր-Մովսիսեան Մ., էջ 96: Դիվան, V, էջ 215: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:

Ծանոթ. «Դիվան»-ի կազմողներն այն դրել են «Կորած, անվերծանելի...» բաժնում և վերահրատարակել Տեր-Մովսիսյանի ընթերցումը: Վերջինս հանկան բառն ընթերցել է հանկատեան ձևով:

Խաչքար (105 x 59 սմ). ագուցված է գմբեթավոր փոքր եկեղեցու հյուսիսային պատի դաստիգ մեջ՝ արևելյան ճակատից բացված լուսամուտի տակ, երեսով դեպի արևմուտք, ստորին հատվածում՝ զգալի չափով արդեն հողմահար 6 տող (լրացնում ենք՝ համաձայն Տեր-Մովսիսյանի հրատարակության).

Թ(վիմ) ՈԼԱ (1182), | եւ՝ Հասան, կանգնեցի զխաչ եղբար իմոյ | Վարհամա, յաղաւթս յիշեսցէք:

Հրատ. Տեր-Մովսիսեան Մ., էջ 96: Դիվան, V, էջ 215: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:

Խաչքար (չի պահպանվել).

Եւ՝ Մամայ քազուհի, ամուսին՝ Հասանայ, դուստր՝ Կուրիկայ քազաուրին, կացար յաւագութե(ան) յամս Լ (30), եւ և այրն իմ թողեալ զհայրենիքս որդւոց մերոց, եկաք ի վանքս՝ մօտ տէր Գրիգորիս, և որդին մեր համանուն նորին, և զգեցար զձև միանձանց և կանգնեցի զխաչս յիշատակ հոգոյ իմոյ, որք երկրպագէք յաղօթս յիշեսցէք, ՈԼԱ (1182) թուիս:

Հրատ. Հասան-Ջալալյան Ե., էջ 132: Ծահխաբունեանց Յ., Բ, էջ 362: Ջալալեանց Մ., Ա, էջ 205: Բարխուտարեանց Մ., էջ 204: Տեր-Մովսիսեան Մ., էջ 90: Վիմական տարեգիր, կազմ.՝ Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 34: Ալիշան Գ., Արցախ, «Բազմավայ», 1988, № 1-4, էջ 263: Դիվան, V, էջ 215: ՀՄՀԽԱԲԸ, էջ 120:



Խաչքար (155 x 74 սմ). ագուցված է գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատում՝ մուտքի հյուսիսային կողմում, ստորին հատվածում՝ 6 տող.

Թ(վիմ) ՈԼԹ (1190), եւ՝ տ(ե)ր Գրիգորէս, | առաջնորդ ս(ուր)ք ուխտիս, | կանգնեցի զխաչս եղբար իմո՝ Սմայատա, որդո | Վախտանգա, որք երկրպագէք, յաղաւթս յիշեսցէք:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:

Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատի ձախ եզրին՝ 7 կարճ տող.

Ա(ստուա)ծ | ողորմի | Վարհամա:


Հրատ. Դիվան, V, էջ 212: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դ.:

Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատին՝ կից 3 կարճ տող.

Ա(ստուա)ծ ողորմի Խոցա/դեղա:

Հրատ. Դիվան, էջ 211: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դ.:



Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատին՝ 5 կարճ տող.

Է կա(ն)գնեցաւ | ս(ուր)ք իսաչս Շ(ի)ք(ու)յանա:

Հրատ. Դիվան, V, էջ 212: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:


Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:

Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատին՝ 5 կարճ տող.

Է կա(ն)գնեցաւ | ս(ուր)ք իսաչս բարխ/աւ(ս) | Յոհաննիս:

Հրատ. Դիվան, V, էջ 212: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:



Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատին՝ 3 կարճ տող.
Ա(ստուա)ծ յիշեայ | զԼիպարիտ/(ին) ամէն:
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:

Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատին՝ 3 կարճ տող.
Սա/րգ/իս յաղ(աւթս):
Հրատ. Դիվան, V, էջ 212: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:

Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատին, ստորին մասում՝ 3 կարճ տող.
Ա(ստուա)ծ ողորմ/ի Շատրա/րոյ, ամ(էն):
Հրատ. Դիվան, V, էջ 211: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:

Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու հյուսիսային ճակատի արևմտյան անկյան մոտ (բեկոր է)՝ 2 տող.
Ա(ստուա)ծ ողորմի | Ար...
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:

Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատին, ստորին մասում՝ 4 կարճ տող.
Ա(ստուա)ծ ող/որմի Գ/ալյալայ/ին:
Հրատ. առաջին անգամ
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:

Խաչաքանդակ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան ճակատին, ստորին մասում՝ 2 կարճ տող.
Մալամին | խաչս:
Հրատ. առաջին անգամ
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան և հյուսիսային որմերին առկա նվիրատվական բնույթի այն խաչաքանդակները, որոնք կից ունեն մաս հիշատակագրություններ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993-2018 թթ.)



ՂԱՂԻ ՎԱՆՔ. գմբեթավոր փոքր եկեղեցու որմերում ագուցված 1172, 1173, 1179, 1181 (արևմտյան ճակատում), 1181 (հյուսիսային ճակատում), 1182 (ներսում՝ հյուսիսային ավանդատան մեջ), 1190 (արևմտյան ճակատում) թթ. խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993-2018 թթ.)

Տաճար. գտնվում է համալիրի հարավային եզրով ձգվող միմյանց կից շինությունների կենտրոնական մասում: Կառուցվել է 1211 թ. և իր իսկ շինարարական արձանագրության մեջ անվանվել «Տաճար»:



Արձանագրություն. կառույցի հարավային ճակատին՝ մուտքից արևմուտք, փորագիր 6 տող.
Թ(վին) ՈԿ (1211), ես՝ Գրիգոր/ես, որդի Հասան/ա, շինեցի զՏաճարս յիշատակ / հոգո իմո, յաղ/արս յիշեցեք:
 Հրատ. Տեր-Մովսեսյան Մ., էջ 90: Դիվան, V, էջ 212: ՀՄՀԽԱԲԸ, էջ 116:

ԹՎԻՆՍԻՆՆԻ
 ԵՍՄԴԻՆՍԱՍՆԻ
 ԱՆՇԻՆԵՑԻԶՐԱՃ
 ԱՐՍԵԻՆԱՍԼԿ
 ՏՈԳՈՒՄՈՅԱՂ
 ԱԻԹԱՅԻՆԵՑԵԿ

Տաճարն ունի գրեթե քառակուսի հատակագիծ (ներքին չափերը՝ 10,00 x 10,10 մ), «կեղծ գմբեթավոր» քառասյուն հորինվածք է՝ որմերի 1 մ հաստությամբ և 11,00 մ բարձրությամբ: Բացառությամբ սյուների, թաղակիր կամարների և գմբեթատակ ու թանիստ քիվագոտու՝ շինությունն ամբողջապես իրականացված է անմշակ քարով և կրաշաղախով (ներքուստ սվաղված է): Դեպի հարավ տեղանքի զգալի բնական թեքության պայմաններում Տաճարի հյուսիսային որմը միևնույն ժամանակ հենապատի նշանակություն ունի: Արևելքից և արևմուտքից Տաճարին հուպ



ՂԱՂԻ ՎԱՆՔ. Տաճարը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ.)



ՊԱՐԻ ՎԱՆՔ. Տաճարը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ.), շինարարական արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.), ներքին տեսքը դեպի արևմուտք և ութանիստ երդիկաձև զմբեքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.), հատակագիծն ու կտրվածքը դեպի արևելք (չափ.՝ Ս. Այվազյանի, 2010 թ.)

են այլ կառույցներ (սեղանատուն, այլ սենյակներ, թերևս գրատուն)։ Միակ մուտքը բացված է հարավային ճակատից։ Լուսամուտների բացակայության պայմաններում լուսավորության խնդիրը լուծվել է սուկ երդիկի միջոցով։





Կաթողիկե եկեղեցի. համալիրը պսակող գլխավոր եկեղեցին ճարտարապետական ուշագրավ և մեծարժեք կառույց է։ Այն ունի միջնադարյան հայ պաշտամունքային ճարտարապետության մեջ հատկապես ԺԳ դարում բավական մշակված և լայն տարածում գտած (բայց թերևս ոչ այնքան Արցախում) չորս անկյուններում ավանդատներով կենտրոնազմբեթ սրահի հորինվածք։ Արտաքին չափերն են՝ 12,30 x 10,60 մ, բարձրությունը՝

18,50 մ։ Երկրորդ հարկի ավանդատների մուտքերն արևելքում բացվում են կիսաբլուրակ եզրագծով խորանի մեջ և հաղորդակցվում դեպի ավանդատուն բարձրացող քարե աստիճաններով, իսկ արևմուտքում երկրորդ հարկի ավանդատներ են առաջնորդում արևմտյան որմին կցված աստիճանները (վերջինս սակավադեպ լուծում է, քանի որ ընդհանրապես այդ աստիճանները ձուլված են լինում միջնորմին, այլ ոչ հիմնապատին)։




Եկեղեցին ունեցել է երկու մուտք՝ բացված արևմտյան և հյուսիսային ճակատներից։ Վերջինս անհայտ պատճառով թերևս արդեն ԺԳ դարից ի վեր փակ է, ուստի սխալ չի լինի նկատել, որ եկեղեցին ունի միայն մեկ մուտք։



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցին հյուսիս-արևելքից, գմբեթը հյուսիս-արևմուտքից, հյուսիսային փակված մուտքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993-2005 թթ.), մերքին տեսքը դեպի հյուսիս-արևելք (լուս.՝ Ժ-Մ. Թիերրիի, 1979 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու արևմտյան, հարավային, արևելյան և հյուսիսային ճակատները (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)



ԴԱՐԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու թմբուկի հատակագիծն ու փռվածքը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.) և վերականգնման էքիզային մախագծերը (հեղ.՝ Ս. Այվազյան, 2001 թ.)

Այստեղ հարկ է նշել, որ 2015 թ. կատարված որմնանկարների մաքրման աշխատանքները բացահայտեցին, որ ո՛չ 1263 թ. ներկագիր արձանագրության ստեղծման և ո՛չ էլ նույն որմին, ըստ ամենայնի, 1297 թ. ստեղծված որմնանկարի ժամանակ մուտքը դեռևս փակված չէր:

Արտաքուստ յուրաքանչյուր ճակատում առկա է եռանկյուն հատակագծով երկուական խորշ: Որմնակամարներից գատ՝ ճակատների հարդարանքում աչքի են ընկնում մեկենասների (կտիտորների) պատկերաքանդակները (հարավային և արևելյան ճակատներում): Գ-մբերը կազմված է արտաքուստ 16 նիստանի, իսկ ներքուստ՝ բոլորածև թմբուկից, որի յուրաքանչյուր երկրորդ նիստում առկա է պարզ պսակի ներքո առնված և դեպի ներս լայնացող մեկ լուսամուտ (ընդհանուր՝ ութ): Մրաժայր վեղարի՝ նույնպես տասնվեց նիստերը միմյանցից գատված են կիսազրան բաժանարարներով: Լանջերի ծածկերն ի սկզբանե եղել են ուղղանկյուն ելուստածև տաշվածքով (մաքրման աշխատանքների ժամանակ դրանց նմուշները բացահայտվեցին եկե-

ղեցու՝ հատկապես հյուսիսարևմտյան լանջին), սակայն, ինչպես երևում է, հետագա նորոգությունների ընթացքում դրանք փոխարինվել են պարզ ծածկասալերով:

Եկեղեցին արտաքուստ ամբողջովին, իսկ ներքուստ մասնակի երեսապատված է սրբատաշ քարով: Ներսում որմերի հիմնական մակերեսները սվաղված են եղել: Նրանց քայքայված և թափված հատվածներում երևում է, որ ժամանակին սվաղվել են կառույցի անմշակ կամ կիսակոփ քարերով իրականացված հատվածները, որոնք ավելի ուշ պատվել են զանազան արձանագրություններով և որմնանկարներով:

Բացի հյուսիսային ճակատից՝ եկեղեցու մնացած կողմերում և ներսում որմերի զգալի հատվածները պատված են արձանագրություններով (ինչպես քարի՝ արտաքուստ, այնպես էլ սվաղի շերտի վրա՝ ներքուստ): Դրանց մեծ մասը փորագիր է, բայց կան նաև ներկագիր (կարմիր և սպիտակ գույնի ներկերով) արձանագրվածներ: Շինարարության մասին պատմող վիմագիրն ամենից ընդարձակն է: Այն գտնվում է հարավային ճակատին և




ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցին հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2003 թ.) և հյուսիսից, ներքին տեսքը դեպի արևելք և գմբեքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու հարավային և արևելյան ճակատի պատկերաքանդակները, ծածկասալերի պահպանված մախնական մմուշները եկեղեցու հյուսիսարևմտյան լանջին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային որմը մերքուստ. երևում են կարմիր մերկազիր արձանագրության և որմնանկարի սահմանները, մաև մերկազիր *Դ(ալի)թ* անմանունը հյուսիսային ավանդատուն տամոդ որմին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՊԱՐԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի արձանագրությունները (գրչ.Ս. Կարապետյանի, 1998 թ.)

կրում է 1214 թվականը: Նույն ճակատին առկա է մեծ ու փոքր ևս 13 արձանագրություն (թվակիրներն են՝ 1241, 1261, 1309, 1479, 1508, 1737): Ահա դրանք.

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատի կենտրոնական հատվածում՝ 19 սող.

Շնորհիս ամենակալին ա(ստուծո)յ հաւր եւ միածնի որդոյ նորա Յ(իստս)ի Զ(րիստոս)ի եւ պարգեւաք ամենաս(ուր)ք հոգո, / եւ՝ Արզու խաթունս, նուաստ աղախին Զ(րիստոս)ի, դուստր մեծի իշխանաց իշխանին՝ Զրդին եւ ամոխին Վախտանկա՝ թագաւորազն տ(եառ)ն Հաթերքո եւ ամենայն Վերին Խաչնոն, յուսով մեծաւ շինեցի զս(ուր)ք կաթողիկէս ի տեղոջ հանգստարանի առն իմն եւ զաւակաց իմոց Հասանա՝ անդրանիկիս իմն եւ Գրիքոր, որն ի տերն կիսարեա վախճանեղոց, զի վասն իմն մեղաց խրատեաց զիս ա(ստուա)ծ եւ երարձ / ի գլխո իմո գերկուսեան պտակսն վայելուչ, զի անդրանիկն իմ՝ Հասան սպանաւ ի թորքաց պատերազմին / վասն քրիստոնէական հաւատոյս եւ զկնի երկց ամսոց եւ կրտսեր որդին իմ՝ Գրիգոր տերն կոչեցեալ զպարտ բնութեանս հատուցանելով վճարեաց զկենցաղս եւ փոխեցան առ Զ(րիստո)ս, սուգ, անմխիթար / թողլով թշուառացելո մարս իրեանց, այլ զի ի կենդանութեան իրեանց յոյս իմ տեր

եղե]յալ նոցա շինել եկեղեցի յայսմ տեղոջ եւ ոչ ժամանեցին վասն արագահաս լինելո ի վերա նոցա մահուն, ինձ աւանդեցին անդարձի կատարել զփափագ սրտից նոցա եւ իմ յանձն առեալ մեծ / յուսով եւ աշխատութեամբ շինեցի զքաւարանս վասն փրկութե(ան) ոգոց նոցա եւ իմն եւ դստերաց իմոց եւ ամենայն զարմից, արդ աղերսիս հայցեմ, որք երկրպագէք սրբո խորանիս յիշել յաղաւթս զվերագրեալսն ի սմա կատարեցաւ ս(ուր)ք քաւարանս ի քականութե(ան)ս հայոց : Ո/ԿԳ: (1214) ի փառս ա(ստուծո)յ եւ ի նորոգութիւն ս(ուր)ք ուխտիս եւ սահմանեցաք ժառանկութիւն եկեղեցոյս գեղոս եի ազարակս իրեանց սահմանալքն՝ զԱպահէն եւ զԵզնարածանց եւ զԲճանց եւ զԿանաչատրն, որ ի Վայո ձոր / եւ երկու տուն յԱրփա եւ հաստատեցաք կամակոթ(եամ)ք եղբարցս զաւագ խորանի զպատարագն յանուն վերագրելոցս կախարել անխափան, եթե որ այսմ վճռի հաստատոն խափանումն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղոյս կամ ձո, որ եւ ի/ցէ խափանեցի յոյս նորա, որ առ Զ(րիստո)ս եւ դատապարտեցի յա(ստուծո)յ:

Հրատ. Հասան-Ջալալյան Ե., էջ 126-127: Ծախխաթունեանց Յ., Բ, էջ 356-358: Ջալալեանց Ս., Ա, էջ 199: Բարխուտարեանց Մ., 204-205, 207: Տեր-Մովսիսեան Մ., էջ 87-88: Ալիշան Ղ., Արցախ, «Բազմավեպ», 1988, № 1-4, էջ 262-263: Դիվան, V, էջ 198-199: ՀՄՀԽԱԲԸ, էջ 108-110:



ԴԱԴԻ ՎԱՍԲ. Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի արձանագրությունները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատին՝ շինարարական արձանագրության ներքո, 5 տող.

Կամաւն ա(ստուծոյ) ես՝ Վաղտանգ, որդի Սմայատա, ծառա Յ(իսուս)ի եւ ամուսին իմ Նանա՝ աղայսին Ք(րիստոս)ի, միաբանեցաք զԴ-ադէ վանաց եւ տուաք ի հայրենեաց մերոց զՇեչաչորեցն եւ այգի մի ի Խոզենեկս, զՄանանամարգ | եւ մեծածախ մասամբ խաչ մի մեծաւ յուսով եւ բնակիչքս տ(է)ր Գրիգորիս եւ միաբանքս սահմանեցին մեզ :Բ: (2) ար ժամ զամենայն եկեղեցիքս զտան Յովհաննու՝ Նանային եւ զտան Վարդանանց՝ Վաղտան/գա, ով խափանէ զժամս կամ խլէ զմեր տուածս մեր եւ մեր ազգի մեղաց տեր է: Թու(ին) ՈՂ (1241) էր:

Հրատ. **Հասան-Ջալալյան Ե.**, էջ 131: **Շահխաթունեանց Յ.**, Բ, էջ 161, 597: **Ջալալեանց Ս.**, Ա, էջ 204: **Տեր-Մովսիսեանց Մ.**, էջ 94: Վիմական տարեգիր, էջ 35: **Ալիշան Գ.**, Արցախ, «Բազմավեպ», 1988, № 1-4, էջ 263: Դիվան, V, էջ 202-203: ՀՄՀԽԱԲԸ, էջ 110:

Ծանոթ. Ալիշանի մոտ բացակա է տարեթիվը, իսկ 2-րդ տողում՝ «զՉիչխածորի բերդին»:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատին՝ 5 տող.

Կամաւն ա(ստուծոյ) ես՝ Սասնա, ձեռնատր միաբանեցա ս(ուր)ք ուխտիս | առաջնորդութ(եամ)ք տ(է)ր Աբանասի, ետու զՄարուտանց հողն :Դ: (4) | եզն եւ այլ արդիւնք ի ս(ուր)ք կաթողիկէս եւ սահմանեցին ինձ | :Բ: (2) ար ժամ զամեն եկեղեցիքս

(ի) տան Սահակա եւ կիրակէն, ով զհողն խլէ կամ զիմ ժամն խափանէ իմ մեղացս պարտական է, ՉԺ (1261):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, Բ, էջ 227: **Տեր-Մովսիսեանց Մ.**, էջ 94: Դիվան, V, էջ 204-205: ՀՄՀԽԱԲԸ, էջ 110:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատին՝ 5 տող.

Կամաւն ա(ստուծոյ) ես՝ Գոնգէս, ու որդիքս՝ Հասան ու Վարհամ, թոռն՝ Դաւիթանց, տվաք | ի Դադի վանս զմեր հայրենիքն զԽուդ՝ իւր սահմանովն, խասովն, Վերին Մարգով, վ(ա)ս(ն) սիրական հարսին եւ մեր Թաթունին, դստերն՝ Քրդին Անբերդեցի, ամուսնո | Հասանա եւ միաբանքս սահմանեցին :Ը: (8) արեցն :Ը: (8) պատարագ անխափան վ(ա)ս(ն) Լ/ունին, արդ՝ ով զԽուդի Դադի վանաց հանէ կամ զժամն խափանէ :ՅԺԸ: (318) հայր(ապետացն նզոված է):

Հրատ. Դիվան, V, էջ 203: ՀՄՀԽԱԲԸ, էջ 110: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկե եկեղեցի. 2-րդ շարքի քարերի աջ անկյունում՝ 4 տող.

Կամաւն ա(ստուծոյ) ես՝ Սերոբ Ջրվ/տկեցի, միաբանեցա ս(ուր)ք խաչի :Ը: (8) արալքն մի ար պատարագ սահմանեցին ի տ/արին, կատարիչքն արինին յա(ստուծոյ):

Հրատ. Դիվան, V, էջ 209: ՀՄՀԽԱԲԸ, էջ 110: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատի 2-րդ և 3-րդ շարքի քարերի ձախ կողմում՝ 5 տող.

Կաման ա(ստուծոյ) ես՝ Գրիգոր տնտես, հրամանաւ տ(եան)ն Աթանասի եւ կամակացութե(ամ)ք այլ եղբարցս գնեցի իմ ընչիւք զԱխտակալն եւ ետու յեկեղեցիս եւ խառնեցա ընդ եղբարյորսի(ւն) սոցա եւ սահմանեցին ինձ ի տաւնի երեսման ս(ր)քո խաչին :Գ: (3) ար պատարագ. ար/դ, եթե որ զայն հողն յայս եկեղեցոյս հանէ կամ զժամն խափանէ՝ խափանեցի յոյս նորա առ Ք(րիստոս)ս եւ մաս նորայ ընդ Ուղէի ու ընդ այլ խաչահա(ն)սն եղ(իցի):

Հրատ. Դիվան, V, էջ 203-204: ՀՄՀԽԱԲԸ, էջ 110:
Ծանոթ. ժամանակը որոշվում է Աթանաս առաջնորդի տարիներով՝ ԺԳ դարի վերջ:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատի արևմտյան որմնախորշի մեջ՝ որմնի 3-րդ և 4-րդ շարքի քարերի վրա, առկա են յոթտողանի կիսանդձ արձանագրության միայն սկզբնամասերը.

Ուր... / սին ց... / տէ... / արդ ս... / զմեր դվ(ած).../ն սոքա... (տ)արին :Բ: (2):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 111:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատին՝ 3 կիսանդձ տող.

Կաման (աստուծոյ) ես՝ Հասադինս (՞), յիջա հողն խրսահա/եան:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 111:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԳ դդ.:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատի արևմտյան որմնախորշի և որմնակամարի միջև՝ որմնի 1-ին և 2-րդ շարքի քարերին, 7 տող (վերջին տողը հողմահար է).

Ք(րիստոս)ս ա(ստուա)ծ ողորմի Սարկաւագ(ի)ն, որ ետ ընծա եկեղեցոյս տ(է)ր Ս(ար)գիս և միաբանքս ետուն :Բ: (2) պատար/ագ ի տարում ի տաւնի ս(ուր)ք Թէ/ողորոսի կատարիչքն / արինին յա(ստուծոյ), ՉԾԸ (1309):

Հրատ. Դիվան, V, էջ 205: ՀՄՀԽԱԲԸ, էջ 110:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատում՝ որմնակամարի և արևելյան որմնախորշի միջև, որմնի 6-րդ շարքի սկզբում՝ 8 տող.

Ա(ստուա)ծ ողորմի Կիրակոսին, / ամունին իր. ամէն, / թվ(ին) / ՋԻ/Ը (1479):

Հրատ. Դիվան, V, էջ 208: ՀՄՀԽԱԲԸ, էջ 111:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատի 4-րդ շարքի քարերի կենտրոնական մասում՝ մի խաչաքանդակի կողքին, 8 կարճ տող.

Ա(ստուա)ծ / ողորմի/ն տ(է)ր / Եղէ/ին հ/ոգոյն, / ՋԾԷ (1508):

Հրատ. Դիվան, V, էջ 208: ՀՄՀԽԱԲԸ, էջ 110:
Ծանոթ. «Դիվան»-ում տարեթիվը սխալմամբ՝ ՋԺ (1461):

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատի 3-րդ շարքի քարերի ձախ կողմում՝ 5 տող.

Ա(ստուծոյ)ս յայս է / մահին քիվ/վն ՌՃՁՁ (1737) էր, / ես՝ անարածան / Ասիս գրեցի:

Հրատ. Դիվան, V, էջ 209: ՀՄՀԽԱԲԸ, էջ 111:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատում՝ 4-րդ շարքում, 5 կարճ տող.

Ես՝ / Ներսէս, / գրէ(ցի) ի / թ...:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 111:
Ծանոթ. քվականը չի փորագրվել: Գրչագրական առանձնահատկությունները բնորոշ են ԺԷ-ԺԸ դարերին:

Կաթողիկե եկեղեցի. հարավային ճակատին՝ 1 տող.

Ես՝ Գորիս, տ(է)ր Սը(հ)աթ(ին):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 111:
Ծանոթ. Սիսի կամ Սիսիա երկիրը համապատասխանում է Սուրմալու գավառին: Ժամանակը ԺԷ-ԺԸ դդ.:

Վիմագրերի հարստությամբ եկեղեցու որմերից հաջորդն արևելյանն է: Այստեղ առկա է նույնպես տարբեր ծավալների, բայց բոլորն էլ նվիրատվական բնույթի 11 արձանագրություն (թվակիրներն են՝ 1241, 1253, 1259, 1605, 1655): Ահա դրանք.

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատի կենտրոնական մասում՝ 6-րդ և 7-րդ շարքի քարերին, 5 տող.

Կաման ա(ստուծոյ) ես՝ Սեւադա իշխան, որդի Սմայատա, եւ ամուսին իմ՝ Թաճերն, տուաք ի հայրենիք | մերոց ի Գաղի վանս զԿարմնջատափա այգենն, ի Խոզենեկոց, ի նշխարատունն. մեծ յուս/ով. տ(է)ր Գրիգորիս եւ միաբանքս ետուն մեզ :Բ: (2) ժամ զամեն եկեղեցիքս զտաւն(ին) տ(եան)ն ընդառաջ(ի)ն՝ ինձ, / զաւագ հինգշաբաթ արուն՝ Թաճերին: Ով զայն այգենն յայս վանացս հանէ ի փառաց որդոյն որ/ոշել եղիցի, :ՅԺԸ: (318) հայրապետացն անիծած է եւ Յուդաի մասնակից եղիցի, ամեն, թիւն ՈՂ (1241):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, Բ, էջ 225-226: **Տէր-Մովսիսեան Ս.**, էջ 95: Վիմական տարեգիր, էջ 83: Դիվան, V, էջ 202: ՀՄՀԽԱԲԸ, էջ 111:

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատի կենտրոնական մասում՝ շարվածքի 3-րդ և 4-րդ շարքի քարերին, 4 տող.

Կաման ամենակալին ա(ստուծոյ), ես՝ տ(է)ր Ներսէս եպիսկոպոս Չարաբերդոյ, միաբանեցա Գաղի վանացս, մին այգի (ետու) հիւրատանն, / տ(է)ր Գրիգորիս եւ միաբանքս սահմանեցին ինձ՝ ի տաւնի տ(եան)ն Բարսղի :Բ: (2) ար/ք պատարագ, ով խափանէ իմ մեղացս տէր է առաջի ա(ստուծոյ), թ(վին) ՉԸ (1253):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, Բ, էջ 226: **Տէր-Մովսիսեան Ս.**, էջ 95: Վիմական տարեգիր, էջ 98: Դիվան, V, էջ 204: ՀՄՀԽԱԲԸ, էջ 111-112:

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ շարվածքի 3-րդ շարքում, 3 տող.

Ես՝ Յովանէս երէց Կողբէցի, իմ հալալ արդեամբք միաբանեցա ս(ու)րք ուխտիս եւ սահմանեց(ին) ինձ ի յայտնութե(ան) ճրագալու/ցին :Ա: (1) պատարագ, ով խափանէ իմ մեղացս տէր (է) առաջի Ք(րիստոս)ի, ՉԸ (1259):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, Բ, էջ 226: **Տէր-Մովսիսեան Ս.**, էջ 95: Դիվան, V, էջ 204: ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ անհետացած խաչքարի կամ խաչաքանդակի շրջանակի ստորին մասում, 2 տող.

Ս(ուր)ք նշան փրկչ(ա)կան / ողորմեա քում:
Հրատ. առաջին անգամ:

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ շարվածքի 5-րդ շարքում, 1 տող.

Թվ(ին) ՌՃԳ (1605), Թուղոն որ փար. երեր:
Հրատ. Դիվան, V, էջ 209: ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ շարվածքի 3-րդ շարքում, 1 տող.

Թվ(ին) ՌՃԳ (1655), ա(ստուա)ծ աղոր(մի) Տար(ի)էլ(ին):
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ շարվածքի 5-րդ շարքի աջ կողմում, 3 տող.

Խոնդքար փաշէս՝ դուստր / պ(ա)ր(ոն) Աղպուղեն, երու կագմել / ս(ուր)ք նշաներս աղ(աութս) յիշեցէ)ք:

Հրատ. **Տէր-Մովսիսեան Ս.**, էջ 95: Դիվան, V, էջ 209: ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:


Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատի հյուսիսային որմնախորշից ձախ՝ 2 տող.

Տ(է)ր Ռհ {ն}ան / ի ս(ուր)ք նշ(անս):
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:


Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ 3 տող.

Ես՝ ըՍտ(ե)պ(ա)նոս Շարվ(ա)նէ/ցի:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:
Ծանոթ. Շարվանը Շամախի-Շիրվանն է:



ՊԱՊԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու արևելյան ճակատի արձանագրությունները (գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1998 թ., լուս.՝ 2018 թ.)



ՂԱՂԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի արձանագրությունները (զդջ.՝ Ս. Կարապետյանի, 1998 թ.)

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ փակագիր 1 տող.

Ովանէս:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ հարավակողմի որմնախորշից աջ, քերի փորագրված հիշատակագիր և փակագիր.

Յիշատակ / Վար(համին):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:

Կաթողիկե եկեղեցի. արևելյան ճակատին՝ երկմաս փակագիր 1 տող.

Թօմա վարդապետ:

Հրատ. **Սաղումյան Ս.**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, «ԼՀԳ», 1980, № 3, էջ 87: Գիվան, V, էջ 209: ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:

Ծանոթ. Ս. Սաղումյանը նշել է. «...գլխավոր եկեղեցու արևելյան ճակատի հարավային խորշից աջ. «Իր կոմպոզիցիայով բավականին նման է Դավիթ վարդապետի (Մուղնի) փակագրին և ժամանակով էլ պիտի մոտ լինի նրան»:

«Գիվան»-ում՝ **Թօմա վարդապետ:** Ժամանակը՝ ԺԷ դար:

12 վիմագիր նույնպես առկա է եկեղեցու արևմտյան ճակատին (թվակիրներն են՝ 1224, 1241, 1340, 1349): Ահա դրանք.

Կաթողիկե եկեղեցի. արևմտյան ճակատ. որմնասյան և որմնախորշի միջև՝ 13 տող.

Անուամբն ա(ստուծոյ), ես՝ Գրիգոր, որդի Հ/սասնա, որ մեծ յուսով տուի ի / Դադի գերեզմանս :Դ: (4) տուն շի/նական վ(աս)ն հոգո ինձ յառաջնորդութ(եա)ն տ(եառ)ն Գրիգորիսի, եւ սորա / տուին ինձ գտան սրբոյն Գրիգորի զամենայն եկեղեցիքս: / Արդ, ով խափանի յառաջնորդաց զիմ ժամն կամ յաւագաց յիմոց կամ յաւտարաց զշի/նական յետ առն(ե)յով իմ մեղ/ացս պարտական է եւ մասն նորա / ընդ Յուդայի եղիցի, ՈՀԳ (1224):

Հրատ. **Ջալալխանց Ս.**, Բ, էջ 227: Վիմական տարեգիր, էջ 68: **Տեր-Մովսիսեան Մ.**, էջ 95: Գիվան, V, էջ 201: ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:

Կաթողիկե եկեղեցի. արևմտյան ճակատից բացված մուտքի բարավորին՝ 6 տող.

Ես՝ Մամա, դուստր / Վաղտանկա, տ(եառ)ն Հաթերքոյ ետու զիմ հայրենի Պաշոյգարակ եւ սպասք եկեղեցոյս / յոսկո եւ յարժաթու ս(ուր)ք կաթողիկէս, յառաջնորդութ(ան) տ(եառ)ն Գրիգորիսի եւ ս(ուր)ք եղբարքս. սահմանեցին գտան(ին) ս(ուր)ք / Յակոբա եւ զկիրակեն զամեն եկեղեցիքս անխափան, ՈՂ (1241) քվ(ին):



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Խատվածներ Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի արձանագրություններից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2011 թ., Ս. Կարապետյանի, 1993 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Խատված Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի արձանագրություններից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Հրատ. **Ջալալեանց Մ.**, Բ, էջ 227: **Մ. Մմբատ.**, Համառոտ նկարագիր մի քանի վանքերի, «Նոր-Գար», 1893, № 17, 20 յունուարի, էջ 3: **Տեր-Մովսեսեան Մ.**, էջ 95: Վիճակաւ տարեգիր, էջ 84: Դիվան, V, էջ 199-200: ՀՄՀԽԱԲԸ, էջ 112:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատին՝ կիսաեղծ 9 տող.

Կամաւն ա(ստուծոյ), եւ՝ Հասան, որդի Գրիգորա, / ...ուսն իր սահմանովն / ... հարո հոգոյն եւ բնակիչք / ...դեցի պատարագ իմ հաւրն...ցին յետ ս(ուր)ք Գրիգորին / ... սահման / ... իմ հարո հոգ/...ացս...ուք / ... ա(ստուծոյ) եւ յ... / ... Գ:

Հրատ. Դիվան, V, էջ 201: ՀՄՀԽԱԲԸ, էջ 113: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատի որմնախորշի մեջ եղել է ներկայումս գոյություն չունեցող կիսաեղծ վիճագիր, 21 տող.

Կամ(մա)ն... / երգ... / տո... / ... / սր... / ս(ուր)ք... / ոյ... / ու... / նաս տաք ի ... / ենեց մեր տ... / ...նց հողն ու.../ին Կաշկառուս (սա)հ-մանեցին մեզ Ա (1) ար պատարագ ամ/են եկեղեցիքս ... / Մարգսի կի... / էրն: Արդ, ով գ... / հող կամ գ... / խափանեն ... / ած... / էի առագ...:

Հրատ. Դիվան, V, էջ 208: ՀՄՀԽԱԲԸ, էջ 120: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատին՝ նախորդից ցած, եղել է կիսաեղծ 11 տող (չի պահպանվել).

Կամաւն ա[ստուծոյ եւ՝ Յոյ]հան, միաբա[նեցա] / ս(ուր)ք ու[խտիս առաջ]/նորդութեան Աթա[նասի] [եւ խոստացան ին]/ծ Բ (2) պատ[արագ ի տ]աւնին իմ... փ[խռատորին .../այ, ով զծ[ամն խափա]յն... / ...պարտական է:

Հրատ. Դիվան, V, էջ 208: ՀՄՀԽԱԲԸ, էջ 120: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատ. մուտքի աջ եզրում՝ կիսաշրջան ելուստով որմնասյան վրա, 8 տող.

զՄիսիթարիա անցանաքն / թողու / աւագ հ(ին)զ(աք)թ(ի)ն Ա(1) ժամ՝ Մ[անքանին, ամ]ուսնո՞ / Ս(մ)պատա:

Հրատ. Դիվան, V, էջ 207: ՀՄՀԽԱԲԸ, էջ 113: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատ. բարավորի վերին աջ անկյունում՝ 5 կարճ տող.

Ա(ստուա)ծ ողորմի / Խորիշ/ահի/ի հոգ/ոյն:

Հրատ. Դիվան, V, էջ 201-202: ՀՄՀԽԱԲԸ, էջ 112: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատ. մուտքի աջ եզրում՝ կիսաշրջան ելուստով որմնասյան վրա, 21, 6 և 8 կարճ տողով հաջորդաբար փորագրված է 3 արձանագրություն: Առաջինը՝ 21 տող.

Չեչո... / յայս կ[աթող(ի)կ(ե)ու]մն Զ(րիստո)ս պատ[արագ]ի... մասնակց եղիցի / տ(է)ր Ս(ար)զ(իս), որ ետ / վ(ա)ս(ն) իր հոգ/ոյ փրկու[թե(ան) զՇ(ա)հան/ա որդի]քն իր հայր/ենաւքն յի/ր հաւարն / զշինեաց, / ով զյիշատակ {ե}ս խափանէ / դատի յա(ստուծոյ), / թվ(ին) Չ[ՁԹ (1340):

Հրատ. Դիվան, V, էջ 207: ՀՄՀԽԱԲԸ, էջ 113:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատ. մուտքի աջ եզրում՝ կիսաշրջան ելուստով որմնասյան վրա, 6 տող.

Ի տարու[մն] :Ա: (1) ժամ/ւ աւագ Ե / կատարի(°) / Ջրա(ր)հեց, / ա(ստու)ծ(ով), ՉՂԸ (1349):

Հրատ. Դիվան, V, էջ 207: ՀՄՀԽԱԲԸ, էջ 113:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատ. որմնասյան և որմնախորշի միջև՝ 20 տող.

Կամաւն ա(ստուծոյ), ե[ս՝ Մա]մբան, դուստր՝ ... / ...անց... / ...ա Դադէ... / ... [իւմ] հայրենիքն գ... / ... իմ եղբարքն ե[տոյ]ն ինձ [եւ ես] / կամաւք տուի ս(ուր)ք կաթողիկէս՝ :Ա: (1) / չորեցաց հող, :Ի: (20) շինական տուն, :Ա: (1) / ջաղաց ս... անագաւտի, արծաթի տ/ուփ եւ տառաշորջատ պատուական, / յառաջնորդութե(ն)ս

տ(է)ր Գրիգորիսի, որդի/տ՝ Վասակա եւ սոքա ետուն ինձ / Գ (3) ար զամենայն եկեղեցիքս զՆոր / կիրակէն եւ զհետ ...քսն կատարիչքն գրոյս արինեալ եղիցին յա(ստուծոյ) / եւ ով խափանէ յատարաց կամ ի ծանաւթից նգովեալ եղիցին / ՅԺԸ (318) հայրապետացն, մասն եւ բաժին ընդ Կայենի եւ ընդ Յուդայի եղիցի: / Ա(ստուա)ծ ողորմի Մարգսի:

Հրատ. **Տեր-Մովսեսեան Մ.**, էջ 95: Դիվան, V, էջ 200: ՀՄՀԽԱԲԸ, էջ 112: Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատ. մուտքից վեր՝ ձախ անկյունում, 3 տող.

Չուստա Վարդ(ա)նի որդի / Գրիգ(ո)ր կազմող ս(ուր)ք նշ/ա-նիս յ(ի)շել աղ(ա)չ(ե)մ ի Զ(րիստո)ս:

Հրատ. **Տեր-Մովսեսեան Մ.**, էջ 95: Դիվան, V, էջ 210: ՀՄՀԽԱԲԸ, էջ 113:

Կաթողիկէ եկեղեցի. արևմտյան ճակատ. մուտքի ձախ անկյունաքարին՝ 3 տող.

Նկ(ա)րող ս(ուր)ք / նշանացս / զՊող(ո)ս յ(ի)շ(եցէ)ք:

Հրատ. **Տեր-Մովսեսեան Մ.**, էջ 95: Դիվան, V, էջ 210: ՀՄՀԽԱԲԸ, էջ 113-114: Ծանոթ. անհետացվել է 1970-ական թթ. վերջերին:

Եկեղեցու ներսում նույնպես առկա է ներկագիր և փորագիր արձանագրություններ (թվակիրներն են՝ 1263, 1265, 1267, 1291, 1297, 1312): Ահա դրանք.

Կաթողիկէ եկեղեցի. ներքուստ, հյուսիսային որմին՝ սվաղի շերտի վրա, կարմիր ներկով 7 տող.

...ՉԺԲ (1263) / յանուն ա(ստուծոյ) եւ Ներս[էս] միայրանեցա ս(ուր)ք ուխտիս / տ(է)ր Աթանաս եւ միաբանքս հաս/տատեցան զտաւն ս(ուր)ք քահանայիցն. մի ար պատարագ Յովանիսի՝ յե-լից իմոց, ինձ, կատարիչքն ա(ւր)հնին յա(ստուծոյ):



ԴԱԴԻ ՎԱՆԷ. Կաթողիկէ եկեղեցու հյուսիսային որմին՝ 1263 թ. ներկագիր արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Հրատ. Դիվան, V, էջ 205: ՀՄՀԽԱԲԸ, էջ 114:

Ծանոթ. 1993-1994 թթ., երբ եկեղեցու ներսը պատված էր կեղտ ու մրով, թվացել էր, թե ներկագիր արձանագրությանը սվաղը շարունակվում էր նաև փակված մուտքի մակերեսին, սակայն ներկայումս հստակ երևում է՝ այն չի անցել մուտքը երկող սահմանը: Այստեղից էլ հետևում է, որ Կաթողիկէ եկեղեցու հյուսիսային մուտքը փակվել է 1263 թվականից հետո, այլ ոչ թե մինչ այդ:

Կաթողիկէ եկեղեցի. ներքուստ, հյուսիսարևմտյան ավանդատան արևմտա-հայաց երեսին՝ սվաղի շերտի վրա՝ 1291 թ. արձանագրության ներքո, 11 տող.

Կամաւն ա(ստուծոյ), եւ՝ Մմպատ իշխան / որդի մեծին՝ Լի-պարտի, միաբանեց/ա ս(ուր)ք ուխտիս՝ Դադու վանաց, առաջ-նորդութեամբ տ(է)ր Աթանասի եւ գնեցի զԽռնուաշանց այգին եւ յՇղեգիս զիմ գնած / ձիթահանքն եւ այլ արդիւնք ըստ կարի եւ զԿանանչաւոր գեղն, այլն որ հաստատեցի ամէն խարջովն ան-չար եւ ետ/ու ս(ուր)ք կաթողիկէս տ(է)ր Աթանաս եւ այլ միա-բանքս սահմանեցին մեզ զատկին Յարութեան / կիրակի արմ զամէն եկեղեցիքս: Արդ, ով իլ/է զմեր տուածն կամ զժամն խա-



ԳՂԻՒ ՎԱՆԷ. փորագիր, սակայն միևնույն ժամանակ կարծիք ներկրվ ընդգծված 1291 և 1265 թթ. արձանագրություններ կաթողիկե եկեղեցու հյուսիսարևելյան պլանդատների արևմտահայաց որմին (զրգ. և լուս.: Ս. Կարապետյանի, 2018 թ.)

փանէ՛ 3ԺԸ (318) | հայրապետացն նգոված եղիցի, թին ՉԺԳ (1265):

Հրատ. Հասան-Չալայան Ե., էջ 131: Ծահխաբունեանց Յ., Բ, էջ 361: Չալալեանց Ս., Ա, էջ 204: Բարխուտարեանց Մ., էջ 205: Տեր-Մովսիսեանց Մ., էջ 96: Վիմական տարեգիր, էջ 107: Ալիշան Ղ., Արցախ, «Բազմավեկ», 1988, № 1-4, էջ 263-264: Գիվան, V, էջ 206: ՀՄՀԽԱԲԸ, էջ 114:

Ծանոթ. վերջին տողը, բացի հայրապետացն բառից, ոչ թե փորագիր է, այլ ներկագիր՝ կարմիր գույնով: Ալիշանի մոտ՝ 3-րդ տողում՝ «տեր Աբանասի»-ի փոխարեն՝ «տեր Յովհաննէսին»:

Կաթողիկե եկեղեցի. ներքուստ, ավագ խորանի մեջ՝ սվաղի շերտի վրա, փորագիր 9 տող.

Աւգնութ(եամ)ք ա(ստուծոյ) ես՝ Մամբան, ամուսին՝ արիականիին Հասանա եւ որդի մեր Գր(ի)զ(ո)ր տէրք գորով տեղոյս հիւյրենաք եւ մեր պարոնէքն հաստատեցին ի ՉԺԶ (1267) քվին, | տվաք ի ս(ուր)ք ուխտիս զԾովատեղ, զՉաջուռանց, զՉորէկյանց եւ Գր(ի)զ(ո)ր տվի զՉազունանց հողերն զմեր բաժին իւր | չորե-

ցովն, որդի իմ տ(ե)ր Ս(ար)զ(իս) եւ միաբանք սահմանեցին ս(ուր)ք ըՍտ/եփանոսի տանին ժամն, որ լինի իմ մարն եւ ամուսն իմ՝ Ասի/ին, թէ որ զ{Ժ} ժամն խափանէ կամ զընծեսն ետ ունէ՛ դատի յա(ստուծոյ):

Հրատ. Հասան-Չալայան Ե., էջ 130-131: Ծահխաբունեանց Յ., Բ, էջ 360: Չալալեանց Ս., Ա, էջ 203-204: Բարխուտարեանց Մ., էջ 205: Տեր-Մովսիսեանց Մ., էջ 95-96: Գիվան, V, էջ 206-207: ՀՄՀԽԱԲԸ, էջ 114:

Ծանոթ. «Գիվան»-ում թվականը սխալմամբ՝ ՉԾԶ (1307): Ի դեպ, արձանագրության վերջին տողը հավելվել է 45 տարի անց՝ 1312 թ., ուստի հակառակ մատրոյ հրատարակությունների, որտեղ դրանք մեկտեղված են, այստեղ ներկայացնում ենք զատ-զատ:

Կաթողիկե եկեղեցի. ներքուստ, հյուսիսարևմտյան պլանդատան արևմտահայաց երեսին՝ սվաղի շերտի վրա, 12 տող.

Շնորհիւն ա(ստուծոյ) ես՝ Էաշի որդի Ամ/իր Հա[սանա] մեծ իշխանին Պռոշա եւ մալյոս իմ՝ Թաճե(ր)ն, միաբանեցաք ս(ուր)ք ուխտիս եւ տվաք զհ ար զն... հողն ի Խաչենագետի, զԼ/ճոց կա...



ՂԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու հարավային որմի որմնանկարներին կից ներկագիր (սպիտակ գույնի) արձանագրությունները (զրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ս(ուր)ք կաթողիկես ա(ե)ր Աթանաս եւ միաբանքս տվին :Բ: (2) ար պատարագ զամեն / եկեղեցիքս զտանին զարավարին եւ տղես իմ՝ Ամիր Հ/ասան եւ կողակցին՝ Թաճերին, արդ՝ ոք զմեր տվածն / խլէ կամ ժամն խախանէ ՅԺԸ (318) հայրապետացն նգոված է, մասն ընդ Յուդային եւ կամ յ...ընդ արիտսի եղիցի, ի քվ(ին) ՉԽ (1291):

Հրատ. Դիվան, V, էջ 214: ՀՄՀԽԱԲԸ, էջ 114:
 Ծանոթ. իհարկե, 1994 թ. տեղում կատարված ընթերցումը, որը հրատարակել էինք 1999 թ., «Դիվան»-ում ներկայացվածի համեմատ, առավել ամբողջական էր, սակայն նշմարելի տառափոխություններ կան, որոնք հնարավոր դարձրեց էլ ավելին բացահայտելուն (ինչպես ասում են, տարիների փորձառությունն իր նպաստն է բերում):

Կաթողիկե եկեղեցի. ներքուստ, հարավային ճակատից բացված լուսամուտի տակ՝ սվաղի շերտին, սպիտակ ներկով 3 տող.

Ես եմ՝ Մ(ի)քայէ, որ միշտ պահեմ / զքեզ եւ գործակից եմ քեզ / ի մանկութենէ, ի քվ(ին) ՉԽԶ (1297):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 114 (առաջին տողի՝ քերի): Մաքևոյան Կ., Ավետիսյան Ա., Ջաղյան Ա., Լամուրե Բ., Դաղիվանք: Վերածնված հրաշալիք, Երևան, 2018, էջ 39, 50 (այսուհետ՝ Դաղիվանք, համապատասխան էջերով):

Ծանոթ. դեռևս 1994 թ., երբ եկեղեցու սվաղապատ որմերին առկա որմնանկարներն ու նրանց կից արձանագրությունները ծածկված էին մրի և կեղտի փառով, առաջին անգամը լինելով՝ մեզ բախտ էր վիճակվել նկատել ներկագիր արձանագրությունն ու հիմնական մասով ճիշտ ընթերցմամբ հրատարակել 1999 թ.:

2014 թ. Բ. Լամուրեի և Ա. Ջաղյանի ջանքերով իրականացված որմնանկարների մաքրման աշխատանքներից հետո արդեն դյուրընթեռնելի դարձած արձա-

նագրությունն ամբողջացվեց, որն էլ ներկայացվեց վերոնշյալ աշխատության մեջ (էջ 39, 50):

Կաթողիկե եկեղեցի. ներքուստ, հարավային որմին՝ Նիկողայոս հրաշագործի գլխավերևում՝ սվաղի շերտին, սպիտակ ներկով 2 տող.

Մ(ուր)ք Նիկողայոս Հախապետն:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 114: Դաղիվանք, էջ 65:

Ծանոթ. դեռևս 1994 թ. տեղում կատարված միանգամայն անսխալ մեր ընթերցումն առաջին անգամ հրատարակել ենք 1999 թ., սակայն 2014 թ. Բ. Լամուրեի և Ա. Ջաղյանի ջանքերով կատարված որմնանկարների մաքրման աշխատանքներից հետո այն ներկայացվել է կոպիտ տառախախտված (Նիկողայոս-ը՝ Նիկոլայոս ձևով), ընդ որում, դա տեղի է ունեցել գիտությանն անհարիր կանխակալ մոտեցման հետևանքով (անվան յ տառի սկզբնամասնիկը չի մաքրվել մրից և կեղտից, որն աննկատ դարձնելով՝ նրանից ձևվել է լ տառը): Հակագիտական մոտեցումով Նիկողայոսը Նիկոլայոսի վերածելով և այդ մասին կեղծ թեզ զարգացնելուց զատ՝ Ա. Ջաղյանն անտեսել է դեռևս 19 տարի առաջ արձանագրության՝ մեր միանգամայն անսխալ հրատարակությունը և այն ներկայացրել է իբրև նորագյուտ միավոր:

Ինչ վերաբերում է արձանագրության թվագրմանը, ապա այն անվերապահորեն վերագրելի է 1297 թ., քանի որ համաժամանակյա ներկագիր արձանագրությունների մեջ այն միակ թվակիրն է:

Կաթողիկե եկեղեցի. հարավային որմին առկա են նաև.

ա Բ(րիստո)ս:

բ Մ(ուր)ք Ա(ստուա)ծածին / Մարիամ:

Հրատ. առաջին անգամ:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային որմնի որմնանկարները և ներկագիր (սպիտակ գույնի) արձանագրությունները (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2019 թ.)



Կաթողիկե եկեղեցի. ներքուստ, հյուսիսային որմնին՝ Ստեփանոսի քարկոծու-
մը ներկայացնող որմնանկարում առկա պատկերներին կից, դարձյալ սպիտակ
ներկով արված 4 արձանագրություն կա.

- ա Հրըշտակք:
 - բ Յ(իսու)ս:
 - գ Տեսէ՛ք զհող/եղէն բնութի(ւն վա)սն իմ չարչարե(ալ մար)մ-
նով:
 - դ Ս(ուր)բ Ստե[փանոս]:
- Հրատ. Դադիվանք, էջ 40, 48:

Կաթողիկե եկեղեցի. ներքուստ, ավագ խորանի մեջ՝ 1267 թ. արձանագրու-
թյան ավարտին՝ սվաղի շերտի վրա, փորագիր 1 տող.



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու խորանում սվաղի վրա առկա 1267 և 1312 թթ. փորա-
գիր արձանագրությունները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Մոխրաքաքս մեր բաժին տվաք ք(ին) ՉԿԱ (1312):
Հրատ. **Շահխաթունեանց Յ.**, Բ, էջ 361: **Բարխուտարեանց Մ.**, էջ 205: **Տէր-
Սովսիսեան Մ.**, նշվ. աշխ., էջ 96: **Ալիշան Ղ.**, Արցախ, «Բազմավեպ», 1988, № 1-
4, էջ 264: Դիվան, V, էջ 207: ՀՄՀԽԱԲՇ, էջ 114:

Կաթողիկե եկեղեցի. հարավարևմտակողմի առաջին հարկի ավանդատան
ներսում՝ հյուսիսային որմնի հարավահայաց սվաղապատ երեսին, առկա են ուշ-
միջնադարյան ներկագիր զանազան հիշատակագրություններ.

*Ես՝ Պ[ա]լիթս, | ես՝ անարժան | Պալիթս, զիրեցի, | ի քվ(ին)
Ռ-ՂԹ (1650):*

*Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի ծ(առա) | Պետր(ո)ս կ(ա)թ(ողի)կոս
հայոց և ամ(ենայն) Աղուանից պատրիա[րգ]:*

.../ զիրեցի, օվ որ կա[րդ]ա | ասէ ա(ստուա)ծ... | ջողա...:

... | էն..., | օվ որ կ[արդա]... | ...քվ.../ ...[ղ]առն ժա[մանակի]:

Քրի...սակս/ի, որ ... սարգ/եցին...:

Ես՝ նվաստ | տ(է)ր Մէլիքս:

Ես՝ դազալղալեցի | տ(է)ր Եսայիս զիրեցի, թիւն...:

Եար իմ:

Ես՝ տ(է)ր...:

*Կաման ամենահաս... | ես՝ Պետրոս ե[կի] ի սք. ու]խոս Դա/ղի
վանա...:*

*Ես՝ Քեամալս, Ղազար ... | ս(ուր)բ ... օր կացի, ով իս.../ ... | ... |
յիշեցէք մեզ, մե... ած | ... ես շառնե | աղաչեմ, աղաչեմ յիշեցէք ի
Ք(րիստո)ս, | քվ...:*

Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի նուաստ ծառ(այ)ե, քվ է ...:

*Ես՝ ...Սիրգայ, Իս... | տ(է)ր Շահ... | ... վուկան ... | ...ած իր
բա[զի]աջողայ ... որ | զիրվեց, որ կարայ կե.../...աց կիշ... այք... |
...էր կացել. | քվ Ռ-ՃՀԲ (1723):*

Հրատ. առաջին անգամ:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Գեղարքունիքի հիշատակագրություններ Կաթողիկե եկեղեցու հարավարևմտյան առաջին հարկի ավանդատան ներսում որմի սվաղապատ հարավահայաց երեսին (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2019 թ.)

Կաթողիկե եկեղեցի. 2004 թ. վերականգնման աշխատանքների ավարտի կապակցությամբ եկեղեցու արևմտյան ճակատին փակցված հուշաքարին՝ 7 տող.

Եկեղեցիս վերանորոգեցաւ 2004 թ. | հովանավորութեամբ Էդիլ Յովնանե/անի (ԱՄՆ), ի յիշատակ Ալբոն Արա | Յովնանե/անի (1987-2002), յառաջնորդութեան Պարզեսա արքեպիսկոպոսի եւ հայրապետութեան Գարեգնի Բ կաթողիկոսի:

Հրատ. Այվազյան Ս., նշվ. աշխ., էջ 37-38:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու նորոգության կապակցությամբ արևմտյան ճակատին փակցված հուշաքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Որմնանկարներ. Դադի վանքում որմնանկարներ պահպանվել են միայն Կաթողիկե եկեղեցու ներսում՝ նրա հարավային և հյուսիսային որմերին: Դրանց առաջին քիչ թե շատ որոշակի

նկարագրողը եղել է 1911 թ. վանք այցելած Մեսրոպ մագիստրոսը. «Նկարներից մի քանիսը մեր տեսած ժամանակ տանելի վիճակ ունեին, որոնցից մենք լուսանկարներ պատրաստեցինք, մինչդեռ Տաթևում միանգամայն եղծուել էին: Նկարներ պահուած էին հիսիսային եւ հարաւային պատերի վրայ, հիսիսայինի վրայ գգալի էր խոնաւութեան քայքայիչ ազդեցութիւնը: Երանի թէ ժամանակին գոյներով արտանկարուած լինէին հայկական արուեստի այդ սակաւաթիւ պահուած որմնանկարի բեկորները:

Հարաւային պատի տեսարանն էր. Աստուածածին, նկարուած երեք քառորդ հանդիպահայեաց դիրքով, հագին մոխրագոյն երկար շապիկ, գլուխը փաթաթած կարմիր ծածկոցով, ձեռների վրայ երկարած խաչագարդ ուրար: Նա հայեացքը յառած դէպի արևելք դիտում է կենտրոնում նստած մի անձի: Նրա առջև գտնուում է թևաւոր հրեշտակ, աւելի փոքր դիրքով նկարուած, որի հայեացքը նոյնպէս դարձած է դէպի նոյն կենտրոնական անձին պատկերը, իսկ այդ կենտրոնական անձնատրութիւնը թէ ով է, չկարողացանք որոշել, որովհետեւ շատ էր վնասուած և նկատելի էին միայն անորոշ գծագրութիւններ:

Հիսիսային պատի տեսարանն է. մի անձնատրութիւն քայլում է դէպի արևելք, աջ ձեռքում բռնած ոսկէ-կազմ աւետարան, ունի կարմրագոյն երկար միտք, ինչպէս որ նրա գլխի մագերի գոյնն է. հագել է կարմիր բաճկոն և գորշ գոյնի վերարկու: Նրա մօտ է մի երկրորդ անձնատրութիւն, երիտասարդ հասակում, անմիտք, աջ ձեռքը աղերսական եղանակով առաջ կարկառած. հագին ուներ միայն դեղնագոյն մի շապիկ, խաչերով զարդարուած, ուրիշ հագուստ չուներ: Նոյն պատի վրայ նկարուած էր

Յիսուսի ծնունդը: Աստուածածինը պառկած է, գլուխը բարձրացրած դիրքում, ինչ որ սովորական է աւետարանների մանրանկարներում: Նրա գլխի վերևը կանգնած է Յովսէփը, բայց դրա գլուխը թափած է, չկայ նկարում: Կոյսից աւելի ներքև չորս էին երեք մոզերը, հագներին գոյնզգոյն, արևելեան ճոխ հագուստներ, իսկ բարձրում սաւառնում էին խմբով հրեշտակները, «Փառք ի բարձունս» երգելով: Մանրամասնութիւնների նկարագրութիւնը թողել էին լուսանկարչական ընդօրինակութեան:

Կային նաեւ որմնանկարների այլ բեկորներ, միանգամայն անորոշելի: Նկարչական ու ոճական յատկութեամբ պէտք է ընդունել, որ նկարներն պատկանում էին եկեղեցաշինութեան ԺԳ դարին...»⁸⁸:

Այնուհետև դրանք ուսումնասիրել է Լ. Դուռնովոն և նշել. «Հարավային պատի վրա պատկերված են Սուրբ Նիկողայոս Հրաշագործին Քրիստոսի կողմից վեղարի և Մարիամ Աստվածածնի կողմից քիկնոցի հանձնման մեծամասշտաբ, իսկ հյուսիսայինի վրա՝ Ստեփանոս սարկավագի քարկոծման տեսարանները (վերջինս գտնվում է որմնանկարի աջ կողմում): Նիկողայոս Հրաշագործի պաշտամունքը տարածում չունենալով Հայաստանում՝ անգամ ուշ միջնադարում վերջինիս ի հայտ գալը ևս պէտք է որ առանձնահատուկ պատճառ ունենար»⁸⁹:

Նյութի առնչությամբ հետազայում (1980 թ.) Բ. Ուլուբաբյանն ու Մ. Հասարթյանն իրենց համատեղ հոդվածում նշել են. «Ըստ միջնադարեան արուեստի լուսագոյն գիտակներից մէկի՝ Լ. Դուռնովոյի մեկնաբանութեան՝ հարաւային ճակատում խոշոր որմնանկարը պատկերում է Քրիստոսի կողմից սուրբ Նիկողայոս Հրաշագործին վեղարի և Մարիամ Աստուածածնի կողմից քիկնոցի յանձնումը, իսկ հիւսիսային ճակատում պատկերում է Ստեփանոս վարդապետի քարկոծուելով նահատակութիւնը: Սակայն կասկածելի է Նիկողայոս Հրաշագործի պատկերումը Դաղի վանքում, որովհետև այս սրբի պաշտամունքը Հայաստանում ընդունուած չի եղել: Ենթադրվում է որ Դաղի վանքում որմնանկարների հեղինակը հենց ինքը՝ Արգու Խաթունն է եղել, իր դուստրերի հետ, որովհետև յայտնի է Կիրակոս Գանձակեցու վկայութիւնն այն մասին, որ նրանք օժտուած են եղել նկարչական բացառիկ տաղանդով»⁹⁰:

Դարձյալ առանց որմնանկարներին կից գրությունները նկատելու, սակայն մասնագիտական խոր իմացության շնորհիվ պատկերը ճշգրտիվ ճանաչել է նաև Ժ-Մ. Թիերրին⁹¹:

Հետազայում Մ. Հասարթյանը նույնպես կիսել է Լ. Դուռնովոյի և Ժ-Մ. Թիերրիի տեսակետը (մերժելով նախկինում Բ. Ուլուբաբյանի հետ համատեղ հայտնած այն կարծիքը, թե որմնանկարում պատկերվածը Նիկողայոս Հրաշագործը չէր⁹²):

Ի վերջո, այս տարակարծությանը վերջ դրեց 1994 թ.՝ եկեղեցու չափագրման աշխատանքների ժամանակ, պատկերի գլխավերևում առաջին անգամ մեր կողմից բացահայտված արձանագրությունը («Սբ Նիկողայոս Հայրապետն»), որի շնորհիվ վերջնականապես պարզ դարձավ, որ պատկերվածը, այո՛, հենց Նիկողայոս Հրաշագործն էր⁹³:

88 Տեր-Մովսիսեան Ա., նշվ. աշխ., էջ 87:

89 Дурново Л., Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 153-154.

90 Ուլուբաբյան Բ., Հասարթյան Մ., նշվ. հոդվ., «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ը, Պէյրոս, 1980, էջ 37-38:

91 Thierry J.-M., Eglises et couvents du Karabagh, Antélias, 1991, p. 69.

92 Հասարթյան Մ., նշվ. աշխ., էջ 49:

93 Ներկագիր արձանագրությունն առաջին անգամ հրատարակել ենք 1999 թ. «Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» աշխատության մեջ (էջ 114, 124):

Այստեղ հարկ է արժանին մատուցել այս արվեստի մեծագույն գիտակ Լ. Դուռնովոյին, որն առանց արձանագրությունը նկատելու զուտ պատկերագրության ուսումնասիրության հիմքով կարողացել էր ճիշտ եզրակացության հանգել⁹⁴:

Ինչ վերաբերում է որմնանկարների թվագրման խնդրին, ապա դա ճշտվում է եկեղեցու հարավային որմնի համաժամանակյա ներկագիր արձանագրություններից մեկի (1297 թ.) շնորհիվ:

Կաթողիկե եկեղեցում հայտնաբերված դրամներ. 2004 թ.՝ եկեղեցու խորանի վերականգնման ադոքսարահի սալապատման աշխատանքների ժամանակ, «...հյուսիսարևմտյան ավանդատան անկյունից մեկ մետր հեռու՝ հատակից 20 սմ խորությամբ, հայտնաբերվեց կավից փոքրիկ պուլիկ՝ արծաթե դրամներով, որոնք թողարկված էին Սեֆյան Իրանում Թահմասպ Ա (1524-1576) և Մուհամմեդ Խուդաբանդա (1578-1587) շահերի օրոք Թավրիզ, Սպահան, Խոյ, Բարֆրաշ, Նախիջևան, Երևան,



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Կաթողիկե եկեղեցու ներսում 2004 թ. հայտնաբերված պուլիկն ու արծաթե դրամները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2007 թ.)

Գյանջա, Շամախի, Օրդու քաղաքներում: Դրամներից մեկը հատվել է ակ-կոյունլուների տիրակալ Աբու-ալ-Մուզաֆարի (1501-?) օրոք: Կավե անոթը և դրամները, որոնք հետագոտել է Հայաստանի պատմության թանգարանի դրամագիտության բաժնի աշխատակից, դրամագետ, պ. գ. թեկնածու Արմինե Ջոհրաբյանը, այժմ գտնվում են Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում»⁹⁵:


Ժամատուն. Սբ. Դաղի եկեղեցուն արևմտյան կողմից կցված ուղղանկյուն հատակագծով (ներքին չափերն են՝ 14,00 x 9,50 մ), քառապյուն կենտրոնագմբեթ շինությունը զգալի նմանություն ունի 1211 թ. կառուցված «Տաճարի» հետ: Համաձայն իր իսկ շինարարական արձանագրության, որն առկա է շինության հարավային ճակատին, կառուցվել է 1224 թ.: Ունի գավիթների ճար-

94 Այս ամենից հետո առնվազն ժամանակավրեպ և նույնիսկ տարօրինակ է արդեն 2007 թ. հրապարակված Հ. Միմոնյանի հետևյալ դատողությունը. «Ուշագրավ էր նաև Դաղիվանքի նշանավոր որմնանկարի մասին Թիերրիի ամուսինների կարծիքի սրբագրումը: Ըստ ֆրանսիացի արվեստաբանների՝ այստեղ պատկերված է Նիկողայոս Սքանչելագործը: Իրականում որմնանկարը ներկայացնում է Գրիգոր Լուսավորչին, որին իշխանության խորհրդանշաններ են պարզևում Քրիստոսը և Աստվածամայրը: Որմնանկարի ստորին, ձախ կողմում, կարմիր քիկնոցի մեջ փաթաթված, ծնկաչոք դիրքով պատկերված կնոջ կերպարանքը դուրս է մնացել հետագոտողների ուշադրությունից: Մեր կարծիքով՝ այն պատկերում է վանքը կառուցող կոնտր իշխանուհի Արգու խաթունին՝ քրիստոնեության պատկերագրությանը բնորոշ ինքնանվաստացման և խոնարհման դրսևորումներով: Այս դիտարկումը կարևոր նշանակություն ունի որմնանկարի ճիշտ թվագրման համար, քանզի Արգու խաթունի ներկայությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ որմնանկարը կատարվել է ոչ թե հետագայում, ինչպես մինչ այժմ ընդունված էր գիտական շրջանակներում, այլ ժամանակակից է Կաթողիկե եկեղեցու կառուցմանը և կատարվել է 1214 թվականին» (Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, «Պատմամշակութային ժառանգության մատենաշար» № 2, Երևան, 2007, էջ 7-8):



95 Ավվազյան Ս., նշվ. աշխ., էջ 37:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Ժամատունը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.), արևելքից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2003 թ.), ներքին տեսքը դեպի հարավ, գմբեթատակ ծավալները և ութանիստ երդիկաձև գմբեթը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)




ԴԱԴԻ ՎԱՆՔ. Ժամատան ներքին ծավալները 1979 և 2015 թթ. (լուս.՝ Պ. Կունեոյի և Ս. Կարապետյանի)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Ժամատան եքիզային նախագծերը. հարավային և արևելյան ճակատները, կտրվածքները դեպի հյուսիս և արևմուտք (հեղ.՝ Ս. Այվազյան)

տարապետությանը բնորոշ հիմնական տարրեր. երկու մուտք՝ արևելքից՝ Սբ. Դատի եկեղեցու մեջ և հարավից՝ դեպի ներս լայնացող զույգ լուսամուտ⁹⁶: Բացառությամբ կառուցողական առավել պատասխանատու կամ պարզապես շեշտելի մասերի (սյուները, նրանց վրա հանգչող քաղակիր և գմբեթակիր կամարները, ութանիստ բմբուկի արտաքին երեսապատը)՝ կառույցն ամբողջապես իրականացվել է անմշակ քարով և բարձրորակ կրաշաղախով:

Ժամատան ներսում՝ արևելյան որմի ամբողջ երկարությամբ, տեղադրվել կամ ազուցվել են խաչքարեր: Վերջիններիս քվում կան ինչպես մինչ ժամատան կառուցումն արդեն իսկ գո-



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Ժամատան եքիզային հատակագիծը (հեղ.՝ Ս. Այվազյան)

⁹⁶ Ամհասկանալի է, թե ժամատանը վերաբերող իր նկարագրականում ճարտ. Մ. Հասրաթյանն ինչո՞ւ է անտեսել շենքի հարավային ճակատից բացված զույգ լուսամուտների առկայությունը. «Շենքը լուսամուտներ չունի, և լուսավորության միակ աղբյուրը գմբեթի երդիկն է: Կիսախավարը համապատասխանում է շենքի հիմնական նշանակությանը, այն եղել է Հաբերքի իշխանական տան տապանատունը» (նշվ. աշխ., էջ 52):

յություն ունեցող, այնպես էլ հետագայում կերտված խաչքարեր: Թվակիրները վերաբերում են ԺԲ-ԺԳ դարերին (1199, 1233, 1291 թթ.):

Թվակիր արձանագրություններ ունեն նաև ներսում պահպանված տապանաքարերից երեքը (1305, 1315, 1333 թթ.):

Ժամատան հարավային ճակատին՝ 11 տող.

Թ(վին) ՈՂԳ (1224), | ես՝ տ(է)ր Գրիգորիս, առաջնորդ ս(ուր)ք ուխտիս, որդի | նահատակին Վասակայ, շինեցի զ(ժա- մատունս յիշատակ հոգոյ | իմոյ, յաղաւ(թս):

Հրատ. Տեր-Մովսիսեան Մ., էջ 96: Դիվան, V, էջ 210: ՀՄՀԽԱԲԸ, էջ 116:



ՊԱՂԻ ՎԱՆԷ. Ժամատան 1224 թ. շինարարական արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Արձանագրություն. Ժամատան հարավային մուտքի բարավորի կամարի կրասվաղի շերտի վրա հայելային ելնդագիր դուրս է բերված մեկ տող.

Ձտ(է)ր Գրիգորես յ(ի)շ(եցեք):

Հրատ. Այվազյան Մ., նշվ. աշխ., էջ 42:




ՊԱՂԻ ՎԱՆԷ. Ժամատան բարավորի կամարի հայելային արձանագրությունը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2003 թ.)

Խաչքար. Ժամատան ներսում՝ կից արևելյան որմին՝ երեսով դեպի արևմուտք, 11 տող.

Թ(վին) ՈՒՆԸ (1199), | ես՝ Յովա/ննէս եզ/նար/ածորդի կա/նգ- մեցի | զխաչս փ/րկո(ւ)թի/ն հոգոյ իմո, յաղաւթ/ս յիշեցեք:

Հրատ. Դիվան, V, էջ 211: ՀՄՀԽԱԲԸ, էջ 116:

Ծանոթ. «Դիվան»-ը չունի եզնարածորդի բառը:




ՊԱՂԻ ՎԱՆԷ. 1199 թ. խաչքար Ժամատան ներսում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Խաչքար. Ժամատան ներսում՝ կից արևելյան որմին՝ երեսով դեպի արևմուտք, 10 տող.

Թի(վն) | ՈՁԲ (1233), | ես՝ տ(է)ր Գրիգորէս, որդի նա/հատա- կին Վասակայ, յա/ռաջնորդ ս(ուր)ք ուխտիս Դ-խորդի վանաց կա(ն)գնեցի/ի զխաչս Մահանին, որք | ընթեռնոյք յաղաւթս յ(ի)շե- ցեք | ի Ք(րիստո)ս:

Հրատ. Տեր-Մովսիսեան Մ., էջ 96: Դիվան, V, էջ 210: ՀՄՀԽԱԲԸ, էջ 116:

Ծանոթ. Հրատարակիչների մոտ բացակա են 1-2 և 10-րդ տողերը:




ՊԱՂԻ ՎԱՆԷ. 1233 թ. խաչքար Ժամատան ներսում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Խաչքար. Ժամատան ներսում կից արևելյան որմին երեսով դեպի արևմուտք, կիսանդժ 13 տող.

Չտ(է)ր Աբանա[ս]... / ...կա/նգ-նեցաք զս(ուր)ք / նշանս մար մ/երո ...ա/նին, յիշեցէք ի / Ք(րիստո)ս, / թվ(ին) / ՉԽ (1291):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 117 (լրացված):



ԴԱԴԻ ՎԱՆՔ. 1291 թ. խաչքար ժամատան ներսում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Տապանաքար. Ժամատան ներսում, ուղղանկյունաձև (210 x 67 x 17 սմ), աջ եզրը 1-2 տառի լայնությամբ ամբողջ երկարությամբ փշրված է, 15 տող.

Այս է հան(գիստ)՝ [երան]/եալն Հաղբատ/ա եւ Գաղէի եւ Խ/ա-դաի աթոռ[ա]/կալն տ(է)ր Յոհ[ա]/նէս, եղբայր ք/աջ զարա-կա/նին Հասանա՝ / արքաշնորհ [ի]/շխանին, հար[ն]՝ / զինվորին Գ-ր[ի]/գորո, աղաչե[ն] / յիշէք ի բար[ին], / թվ(ին) ՉԾԳ (1305):

Հրատ. Բարխուտարեանց Մ., էջ 206, ծմբ. 2: Տեր-Մովսիսեան Մ., էջ 96: Դիվան, V, էջ 214 (վերահրատարակություն է): ՀՄՀԽԱԲԸ, էջ 116:

Ծանոթ. հրատարակիչների մոտ բացակայում է Հաղբատա տեղանունը: «Դիվան»-ի կազմողներն այն դրել են «Կորած, անվերծանելի...» բաժնում և վերահրատարակել Տեր-Մովսիսյանի ընթերցումը:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. 1305 թ. տապանաքար ժամատան ներսում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2018 թթ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. 1306 և 1333 թթ. տապանաքարեր ժամատան ներսում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2018 թթ.)

Տապանաքար. Ժամատան ներսում, ուղղանկյունաձև (222 x 70 սմ), միջնա-հատվածից կիսված երկու մասի, 9 տող.

Այս է հանգիստ Մամքանի/ն, ամուսնո՝ Հ/ասանա, դստե/ր՝ Քրդին եւ Խոր/իշահի, մարն / Գ-ր(ի)գորո, աղաչեմ յիշեց(է)ք / առ թվ(ին) ՉԿԳ (1315):

Հրատ. Բարխուտարեանց Մ., էջ 206, ծմբ. 1: Տեր-Մովսիսեան Մ., էջ 96: Դիվան, V, էջ 214 (վերահրատարակություն է): ՀՄՀԽԱԲԸ, էջ 117:

Ծանոթ. Բարխուտարեանցի մոտ տարեթիվն է ՉԽԷ (1298), Մ. Տեր-Մովսիսյանի մոտ՝ Չ (1251):

Տապանաքար. Ժամատան ներսում, ուղղանկյունաձև (125 x 90 սմ), կիսանդժ 4 տող.

Չտ(է)ր Մարգիսն ընդ/այկիցն գ...աշատե / ...զկուսակիր Յո-հանէս գ... յիշեց/էք ի բարին, ի թվ(ին) ՉՉԲ (1333):

Հրատ. Բարխուտարեանց Մ., էջ 206 (ծմբ. 3): Տեր-Մովսիսեան Մ., էջ 97 (վրիտ.): Դիվան, V, էջ 215 (վերահրատարակություն է): ՀՄՀԽԱԲԸ, էջ 117:


2006 թ. իրանահայ բարերար պրն. Էդիկ Աբրահամյանի մեկենասությամբ իրականացված ժամատան նորոգության ավարտի կապակցությամբ կառույցի հարավային ճակատին արձանագիր հուշաքար է փակցվել.

Ի հայրապետութեան S.S. / Գարեգնի Բ կաթողիկոսի / ամենայն հայոց եւ / յառաջնորդութեան S. / Պարգեայ արքեպիսկոպոսին / Արցախայ նորոգեցաւ ժամատունս ի յիշատակ նահատակաց ազգիս ի պատերազմին Արցախայ, արդեամբք / Էդկայ յԱբրահամեանց / Էրմինեանց տոհմէ (Իրան), / յամին տեառն ՍԶ (2006):



Հրատ. Այվազյան Ս., նշվ. աշխ., էջ 46:

Ջանգակատուն. սրածայր վեղարի ներքո առնված բոլորածև կտրվածքով, քառասյուն ռոտոնդայով ավարտվող կրկնահարկ զանգակատունը գտնվում է զանազան շինություններով ամբողջացած համալիրի գրեթե կենտրոնում: Կառույցի առաջին հարկը դեպի արևմուտք բաց և բարձր կամարով մի խորշ է, որի ներսում միմյանց կից կանգնեցված են 1283 թ. միատեղ ստեղծված զեղաքանդակ գույգ խաչքարեր: Նկատելի է, որ զանգակատունը կառուցվել է սյունասրահից հետո, քանի որ արևելյան որմով պարզապես նստած է իրենից առաջ գոյություն ունեցած կառույցի մի հատվածի վրա:



ՊԱՊԻ ՎԱՆՔ. զանգակատունը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)



ՊԱՊԻ ՎԱՆՔ. զանգակատունը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

Ջանգակատունն ունի 14,6 մ բարձրություն, որից 6 մետրը երկրորդ հարկն է (ռոտոնդան): Կառուցված է սրբատաշ և անմշակ քարերի համադրմամբ, ընդ որում, սրբատաշով շեշտված են կառույցի արևմտյան ճակատում առկա կամարը՝ հարակից հատվածներով և ռոտոնդան ամբողջությամբ:

Ջանգակատան առաջին հարկում գտնվող գույգ խաչքարերը նրբագեղությամբ բացառիկ են ոչ միայն վանքում առկա մնացյալ խաչքարերի կամ նույնիսկ արցախյան խաչքարագործական արվեստի հայտնի նմուշների չափանիշներով, այլ թերևս հայկական ողջ խաչքարագործական մշակույթում:

Հենց այս պատճառով էլ անցյալում նույնիսկ փորձեր են արվել խաչքարերը Եվրոպա փոխադրելու, սակայն, բարեբախտաբար, այդ ծրագրերը կյանքի չեն կոչվել: Հայտնի է, որ 1880-ականների սկզբներին երկու անգլիացի Ղարաբաղի հոգևոր իշխանություններին 10.000 ռուբլի են առաջարկել խաչքարերի դիմաց, որը մերժվել է⁹⁷: 1887-90 թթ. էլ երկու ֆրանսիացի էր

⁹⁷ Հայկունի, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1885, № 78, 6 հոկտեմբերի, էջ 3; նաև նույնի՝ նշվ. աշխ., էջ 71: Ի դեպ, տարօրինակ կերպով այդ առթիվ Հայկունին հակառակ կարծիքն էր հայտնել՝ բարվոք համարելով վաճառված խաչքարերի գումարով վանքի վերանորոգումն իրականացնելը:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. զանգակատունը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ. և Ս. Այվազյանի, 2007 թ.)



դիմել առաջնորդին, «...որ վերջինս փողով ծախե քարերը. ասում են՝ նրանք մտադիր էին Ֆրանսիա ուղարկել, բայց սրբազանը մերժել է նրանց...»⁹⁸: Ավելի ուշ նորից մի ֆրանսիացի նույն փորձն է արել, և կրկին ապարդյուն⁹⁹:

Այստեղ հարկ է երախտիքի խոսք ասել եկեղեցու այն պատասխանատուների հիշատակին, ովքեր չեն գայթակղվել և նպաստել են, որ ազգային արժեքները շարունակեն մնալ իրենց ծննդավայրում:

Ի դեպ, զանգակատունն ունեցել է 1314 թ. նվիրաբերված մի զանգ, որը, սակայն, 1880-ական թթ. գողացել են. «Թուրքերը այնտեղ համարեա ոչինչ չեն թողել՝ բոլորը կտորատել են, գողացել են, չնչին գներով ծախել: Օրինակի համար՝ մի քանի տարի սրանից առաջ մի թուրք գալիս է վանքը գիշերելու. թուրքը փոխանակ շնորհակալութիւն յայտնելու, գիշերը գողանում է մի զանգակ, որը մտատորապէս կշռում էր 4-6 պուղ: Թուրքը զանգակը տանում է ու ծախում մի հայի վրայ 7 բուրլով: Իսկ հայը ծախում է Երևանեան նահանգի մի հայաբնակ գիւղում 55 բուր.: ..91 թ. վանքի վանահայրը, որը հենց նոր է եկել, իմանալով այդ գողութիւնը, սկսել է որոնել. վերջապէս զանգակը գտել է վերը յիշած գիւղում, գտել է և գողացող թուրքին և հային...»¹⁰⁰:

⁹⁸ Իզգրաշեանց Յ., նշվ. հոդվ., «Նոր-Գար», 1892, № 15, 29 յունուարի, էջ 2: ⁹⁹ «Բիւզանդիոն», 1901, № 1492:

¹⁰⁰ Իզգրաշեանց Յ., նշվ. հոդվ., նույն տեղում:

Մեկ այլ աղբյուրից պարզվում է, որ զանգը գնել էին Նոր Բայազետ զավառի Թյուսկյուլու գյուղի (այժմ՝ Գեղարքունիքի մարզ, Վարդենիսի ենթաշրջան, գ. Լուսակունք) հայերն իրենց եկեղեցու համար: Համաձայն զանգի վրա փորագրված արձանագրության՝ այն ՉԿԳ. (1314) թվականին վանքին էր նվիրել Դովյան Վահրամ իշխանի որդին՝ Սարգիսը¹⁰¹:

Չանգակատան ներսի գույգ խաչքարերից հարավակողմյանի եզրագոտու ողջ երկարությամբ.

Չտ(է)ր Աթանաս յիշեսջիք ի Ք(րիստո)ս: Էին ա(ստուծո)յ զարութ(եամ)քն ես՝ տ(է)ր Աթանաս, որդի Հասանա, առաջնորդ ս(ուր)ք ուխտիս կանգնեցի զս(ուր)ք նշանս յիշատակ հոգո իմ, թիվն հա(յ)ոց ՉԼԲ (1283):

Հրատ. **Չալալեանց Մ.**, Բ, էջ 224: **Մ. Սմբատ.**, նշվ. հոդվ., «Նոր-Գար», 1893, № 17, 20 յունուարի, էջ 3: **Քարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 208: **Տեր-Մովսիսեան Մ.**, էջ 89: Գիվան, V, էջ 213: ՀՄՀԽԱԲԸ, էջ 120:

Ծանոթ. Սմբատյանցի ընթերցումը թերի է:

Չանգակատան ներսի գույգ խաչքարերից հյուսիսակողմյանի քիվին.

Տ(է)ր Գրիգոր սնո(ւ)ցող տ(է)ր Աթանասի յիշ(եցէք):

Հրատ. **Չալալեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 224: **Մ. Սմբատ.**, նշվ. հոդվ., նույն տեղում: **Քարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 208: **Տեր-Մովսիսեան Մ.**, էջ 89: Գիվան, V, էջ 213: ՀՄՀԽԱԲԸ, էջ 120:

Ծանոթ. ժամանակը՝ 1283 թ.:



¹⁰¹ Խ. Վ., նշվ. հոդվ., «Արարատ», 1896, Ա, էջ 42: Ի դեպ, զանգի հետագա ճակատագիրը պարզելու ակնկալիքով մեր գրույցը (1997 թ.) լուսակունքցի տարեց մարդկանց հետ խնդրի վրա որևէ լույս չսփռեց:





ԴԱԴԻ ՎԱՆՔ. զանգակատան խաչքարերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)







ԴԱԴԻ ՎԱՆՔ. զանգակատան ներսում կանգնեցված 1283 թ. կերտված զույգ խաչքարերը (գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. զանգակատան ներսում՝ սվաղի շերտին առկա հիշատակագրությունները (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2019 թթ.)

Չանգակատան առաջին հարկաբաժնի որմերը պատված են եղել սվաղի շերտով: Ինչպես երևում է, ժամանակին դրանց վրա կային վանքի այցելուների հիշատակագրություններ: Իհարկե, արդեն 1993 թ. սվաղի երբեմնի մակերեսներից քիչ բան էր մնացել (ցավոք, այն ավելի էր վնասվել նաև անցած տարիներին): Այնուամենայնիվ, կառույցի ներսում՝ հարավային որմի հյուսիսահայաց հատվածում պահպանված սվաղի շերտին, դեռևս 1993 թ. մեր լուսանկարում նկատելի է ածխազիր երկու հիշատակագրություն: Ահա դրանք.

ա Թումայ անարժխն ծարացի, | թվ(ի)ն Ռ-ԼԸ (1589):
բ ...ու ով որ | էս խաչս կանգեց/էլայ, ա(ստուա)ծ ողորմէ իր |
հոգին կարդայք:
 Հրատ. առաջին անգամ:



Միանավ բազիլիկ եկեղեցի և գավիթ. ըստ ճարտ. Ս. Այվազյանի ուսումնասիրությունների, եթե զանց առնենք Սբ. Գաղի հետ առնչվող հուշարձանի իրողությունը, ապա բազիլիկ եկեղեցին համալիրի՝ նախքան ԺԲ դարը գոյություն ունեցած եզակի կառույցն է¹⁰²:

Եկեղեցին, հակառակ ոչ մեծ լայնությանը (3,75 մ), ունի զգալի բարձրություն (մինչև թաղի գագաթը 7,30 մ է): Արտաքին չափերն

102 Այվազյան Ս., նշվ. աշխ., էջ 13, 56-57:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. բազիլիկ եկեղեցին արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ.) և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2008 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. բազիլիկ եկեղեցու եսբիզային հատակագիծը և արևմտյան ճակատը (հեղ.՝ Ս. Այվազյան, 2006 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. բազիլիկ եկեղեցու թաղածածկը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. բազիլիկ եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)




ՊԱՐԻ ՎԱՆՔ. սյունասրահը հարավ-արևելքից, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

են՝ 9,7 x 5,9 մ: Կառուցված է անմշակ և կիսամշակ քարով, կրաշաղախով: Ներքուստ սվաղված է: Ունեցել է երեք մուտք՝ բացված արևմտյան, հարավային և հյուսիսային ճակատներից: Վերջինը վաղուց արդեն փակ է: Խորանն ուղղանկյունաձև է: Որմնասյուները հետագայի հավելում են:

Բազիլիկ եկեղեցուն արևմուտքից կցված է չափերով եկեղեցուն մոտ (ներքին չափերը՝ 8,23 x 3,68 մ) համահորինվածք միանավ գավիթը:

ԺԹ դարի կեսերին գավթի մեջ վկայվել է 1293 թ. մի տապալանաքար, որը, ցավոք, ներկայումս գոյություն չունի¹⁰³:

Սյունասրահ. արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված (18,7 x 5,7 մ) կառույցը, որը «...անարվեստ մի շինություն է, անհամաչափ լայն...»¹⁰⁴, իրենով լրացրել է բակի այն հատվածը, որ գոյացել էր Կաթողիկե եկեղեցու (1214 թ.), զանգակատան (1283 թ.) և ավելի վաղ կառուցված միանավ եկեղեցու և նրա գավթի միջև: Նշյալ բոլոր կառույցներն էլ, իրոք, ճարտարապետության և արվեստի տեսանկյունից ավելի բարձր են սյունասրահից, ուստի կարելի է կարծել, թե սյունասրահը կառուցվել է թերևս ավելի դժնդակ ժամանակներում՝ ԺԳ դարում¹⁰⁵: Արդեն նշյալ կառույցներին կցված լինելով՝ ըստ էության, բուն սյունասրահին են վերաբերում կամարակապով միմյանց միացած հաստահեղույս (D=1,5 մ) հինգ սյուները և սրավուն թաղը: Շինանյութն անմշակ քարն է և կրաշաղախը: Ներքուստ պատված է եղել սվաղի շերտով, որը ժամանակի ընթացքում քայքայվել և թափվել է:



ՊԱՐԻ ՎԱՆՔ. սյունասրահի արևմտյան որմի արևելահայաց երեսի սվաղի շերտին առկա հիշատակագրությունները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

103 Ջալալեանց Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 223:

104 Հասրաթյան Մ., նշվ. աշխ., էջ 49:

105 Ավետիսյանի նշել, որ սյունասրահը մինչև 1241 թ. կառուցված լինել չէր կարող: Նման կարծիք է հայտնվել իբր պատի մի քարի վրա ՈՂ ԹՎ փորագիրը եղած լինելու պատճառով, որը, անշուշտ, կա՛ն սխալ վերծանման, կա՛ն արձանագրի տեղը շփոթելու արդյունք է (Ուլաբաբյան Բ., նշվ. հոդվ., էջ 69):

Մյունսարահի արևմտյան եզրին՝ զանգակատանը հաված որմի արևելահայաց երեսի սվաղի շերտին պահպանված փոքրիկ կտորի վրա, առկա է ինչպես ներկագիր (կարմիր գույնի), այնպես էլ փորագիր 5 միավոր հիշատակագրություն: Դրանք են.

ա Մարգի[ս]:

բ Ես՝ Ոհ[անէ]ս, գիրս գիրեցի, / թվ(ին) ՌԿ (1611):

գ Ես՝ ...ըչակյանս / գիրեցի / ...:

դ ...ղոա գիրեցի, թվ[ՌԻԳ՞] (1575՞):

ե Գիրոգ:

Հրատ. առաջին անգամ:

«Մրահ և տներ» (գրատո՞ւն). 1211 թ. կառուցված Տաճարին արևելքից կից են 1 ընդարձակ և 3 փոքր սենյակներ: Վերջիններից երկուսը, որոնք կառույցների շարքը եզրափակում են արևելքից, կրկնահարկ են: Բոլոր շենքերն էլ իրականացված են գլխավորապես անմշակ քարով և կրաշաղախով, իսկ կամարները, գրատան միակ սյունը և անկյունաքարերի մի մասը՝ սրբատաշ քարով: Շինություններից գլխավորը համարվում է գրատուն, իսկ օժանդակ սենյակները՝ գրիչների աշխատասենյակներ կամ բնակարաններ:

Գլխավոր կամ մեծ սենյակի հարավային մուտքի բարավորի շինարարական արձանագրությունն ավանդում է, որ այդ շենքերի խումբը (հիշված են «...գտներես եւ գրահս...») անվամբ կա-



ԴԱԴԻ ՎԱՆՔ. «Մրահ և տներ»-ը հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 1983 թ.), 1990-ական թթ. փլուզված կառույցի նախասրահը, շինարարական արձանագրությունը և դրվագներ ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. դրվագներ «Սրահ և տներ»-ի ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

ռուցողներն են Հասան պարոնի որդիները՝ տեր Գրիգորեսն ու տեր Աթանասը:

Անշուշտ, այս արձանագրությունը բնավ չի հակասում արդեն եղած այն կարծիքին, թե կառույցն ունեցել է գրատան նշանակություն: Ինչ վերաբերում է «Սրահի և տների» կառուցման ժամանակին, ապա այն որոշակի է դառնում վանքում տեր Աթանասի անվան հիշատակմամբ (բազմաթիվ այլ վիճագրերում վանահայր Աթանասը հիշվում է 1263-1291 թթ.):

«Սրահ և տներ»-ի կամ «տաղավար»-ի մուտքի բարավորին՝ կամարած 5 տող. *Յուսովն ա(ստուծոյ) ես՝ տ(է)ր Գրիգորէս, եւ տ(է)ր Աթանաս եղբէր իմ, որդիք Հասան պարոնի, շինեցաք գտներ/ես եւ զսրահս եւ արդ՝ աղերսիս հայցեմ, որ զկնի մեր տաղաւար ի աստ յիշեսցէ զմեզ յողորմած/ն ա(ստուծոյ) ընդ նմին հարեղբայրն մեր տ(է)ր Գ(րիգո)ր, նաեւ զեղբարսն մեր եւ զժառանգորոք այսմ տա/նս՝ զՏպէլն եւ զՇալուայն եւ զԳրիգ(որն) պահեսցէ. Զ(րիստո)ս ընդ երկայն ատուր/ս եւ ով զմեզ յիշէ, ինքն լիցի յիշել առաջի Զ(րիստո)սի:*

Հրատ. Հակոբյան Ա., Միսնյան Հ., նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1998, № 1-2, էջ 227-231: ՀՄՀԽԱԲԸ, էջ 115:

Սեղանատուն և խոհանոց. 1211 թ. կառուցված Տաճարին արևմուտքից կից այս շինությունները, որոնք նույնպես վերաբերում են ԺԳ դարին (բնականաբար՝ 1211-ից հետո), գտնվում են կիսավեր վիճակում: Ի դեմս միմյանց կից թաղակապ միաբանական զույգ սենյակների՝ խոհանոցն ուներ նաև երկրորդ հարկ: Կառուցվել են միևնույն շինանյութով (անմշակ քար, կրաշաղախ, սվաղ): Սենյակները ներսում ունեն բազմաթիվ խորշեր և



ԴԱԴԻ ՎԱՆՔ. սեղանատան ավերակներն արևելքից (լուս.՝ Ա. Գալոբյանի, 2016 թ.)

բուխարի: Թեք տեղանքի պատճառով երկրորդ հարկում գտնվող սենյակների՝ դեպի հյուսիս բացված մուտքերը գետնին հավասար են:

Հյուրատուն, հնձան, մառան, իշխանական ապարանք և մատուռ. համալիրի հարավարևմտյան կողմում միմյանց կից, բայց հիմնական կառույցներից քիչ առանձնացած դիրքով պահպանվել է տարբեր նշանակության առնվազն 5 կառույց: Կրկնահարկ շինությունների առաջին հարկում հյուրանոցն է, հնձանն ու մառանը, իսկ երկրորդ հարկում՝ վանատունը կամ առաջնորդարանը (հյուրատան վրա) և իշխանական ապարանքը (հնձանի ու մառանի վրա). «...մի ահագին շինութիւն, որին անուանում են Վախթանգ իշխանի պալատ՝ բաղկացած երկու յարկանի մի քանի սենեակներից»¹⁰⁶: Ապարանքի հյուսիսային եզրին դռնա

106 Մ. Մնրատ., նշվ. հոդվ., «Նոր-Գար», 1893, № 17, 20 յունուարի, էջ 3:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. վանատուն-առաջնորդարանը հարավ-արևելքից 1979 (լուս.՝ Ժ.Մ. Թիերրի), 1993, 2008, 2019 թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)

կանգուն է նաև պարզ հորինվածքով մատուռը, որը փաստորեն իշխանի տան բաղկացուցիչ մասն է կազմել, ասել կուզի՝ իշխանի տունը, վանքի կազմում գտնվելով հանդերձ, իր բնակարանի ներսում էլ ուներ մասնավոր մի ադոքսատենյակ: Ցավոք, ներկայումս, բացի մատուռի հատվածից, իշխանի ապարանքից քիչ բան է պահպանվել: Հարավային ճակատի լայն և կամարակապ լուսամուտները պարզ երևում են միայն Մեսրոպ մագիստրոսի՝ 1911 թ. լուսանկարում:

Բոլոր այս շինությունները կառուցվել են ԺԳ դարի ընթացքում, սակայն նորոգվել՝ ԺԷ և ԺԹ դարերում:

Ի մասնավորի՝ 1696 թվականն է դրոշմած թաղածածկ միջանցքի սվաղապատ առաստաղին:

Միատող, ելնդագիր, սվաղի վրա.
Թ(վին) Ռ-ՃԽԵ (1696):

Հրատ. Աղվազյան Ս., նշվ. աշխ., էջ 78:

Ծանոթ. ի դեպ, ԺԷ դարի վերջերին կատարված նորոգության մասին է ակնարկվում նաև Կուսանաց Սբ. Աստվածածին վանքի ածխագիր արձանագրություններից մեկում, որտեղ մասնավորապես նշված է, թե Մանուչարի որդի Օհանեսը, որը ծնունդով Ծար գավառից էր, «...կառուցի վանս Դադոխ...» (ամբողջությամբ տե՛ս սույն աշխ., էջ 362): Սույն հիշատակագրությունն անթվակիր է, սակայն այն ստեղծվել է Եղիազար կաթողիկոսի գահակալության տարիներին, ուրեմն՝ 1681-1691 թթ. միջակայքում: Այն, որ ածխագիր արձանագրությունը ժամանակագրորեն ավելի վաղ է, քան սույն տարեթիվը, կարծել է տալիս, որ 1696 թ. վերաբերում է մի քանի տարի տևած նորոգությունների ավարտին:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. վանատուն-առաջնորդարանի բաց թաղը և թաղի թեքության վրա պահպանված տարեթիվը՝ 1696 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ՊԱՐԻ ՎԱՆՔ. հնձանն ու արտադրական կից շինությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018)

Այլ սենյակներ. համալիրի կազմում պահպանվել են մի քանի քաղակապ շենքեր ևս, որոնցից մեկը հուշարձանախմբի արևմտյան ծայրում է, իսկ երկուսը կից են ժամատան արևմտյան ճակատին: Կարծում ենք, սրանք էլ ԺԳ-ԺԴ դդ. սահմանագլխին կառուցված շենքեր են՝ բնակելի կամ տնտեսական նշանակությամբ:

Շրջապարիսպ և դարպասներ. գլխավոր կամ մեծ դարպասը գտնվում է վանքի միջնամասում (դա ցույց է տալիս, որ բոլոր կառույցները չեն, որոնք ի սկզբանե ամփոփված են եղել շրջապարսպի մեջ, կամ այլ շինություններ կառուցվել են ավելի ուշ): Կաթողիկե եկեղեցու արևելյան կողմում պահպանվել է երկրորդ կամ փոքր դարպասը, որտեղից դուրս ելնող կաձանը բարձրանում է դեպի հյուսիսարևելյան կողմում գտնվող մերձակա մատուռները: Դարպասների կառուցման ստույգ ժամանակն ան-

հայտ է, բայց շրջապարսպի մեջ ագուցված 1181 և 1200 թթ. արձանագրություններով խաչքարերի առկայությունը հուշում է, որ դրանք (հավանաբար մասնաշրջապարիսպը) պետք է կառուցված լինեին առնվազն 1200 թ.-ից հետո:

Խաչքար. ագուցված է շրջապարսպի արևելյան հատվածում՝ ներքուստ, կիսաեղծ 3 տող.

Թ(վին) ՈԼ (1181), | ա(ստուա)ծ ողորմի / ...մի:
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 117:

Խաչքար. ագուցված է շրջապարսպի արևելյան հատվածում՝ ներքուստ, կարճ 10 տող.

Թ(վին) | ՈԽԹ (1200), | ա(ստուա)ծ | ողորմի Գր(ի)գորիկա | ամ(էն):
Հրատ. Դիվան, V, էջ 213: ՀՄՀԽԱԲԸ, էջ 117:





ԴԱՂԻ ՎԱՆՔ. գլխավոր (արևմտյան) դարպասը հարավ-արևելքից նախքան վերականգնումը և վերականգնումից հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1983 և 2018 թթ.)

ԴԱՂԻ ՎԱՆՔ. վանքի արևելյան դարպասն արևելքից նախքան վերականգնումը և վերականգնումից հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1998 և 2018 թթ.)




ԴԱՂԻ ՎԱՆՔ. շրջապարսպի արևելյան հատվածում (ներքուստ) ազուցված 1181 և 1200 թթ. խաչքարերը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2018 թթ.)



ԴԱՂԻ ՎԱՆՔ. մատուռների նորոգությունն ազդարարող ցուցանակներից մեկը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Մատուռներ. Դաղի վանքի շուրջ գտնվում են գրեթե միանման, թաղակապ հինգ մատուռներ: Մինչև վերջին տարիները դրանցից կանգուն էին երկուսը (Կաթողիկե եկեղեցուց հյուսիս-արևելք), իսկ մյուս երեքը (մեկը՝ վանքից հյուսիս, մյուսը՝ արևմուտք՝ ժայռոտ բլրի գագաթին, երրորդը՝ վանքից հարավ-արևելք) կիսավեր վիճակում էին: 2017 թ. չորսն արդեն վերականգնվել էին պ. Ռաֆ Յիրիկյանի աջակցությամբ (այդ առթիվ մատուռներին հուշաքարեր են փակցվել):

Մատուռները միանման պարզ լուծումներով, երկթեք ծածկի տակ առնված թաղակապ հորինվածքներ են՝ կառուցված անմշակ քարով ու կրաշաղախով, ներքուստ սվաղված են: Ոչ մեկը շինարարական արձանագրություն չունի (կամ չի պահպանվել), սակայն մի քանիսի որմերում առկա են հենց կառուցման ժամանակ ազուցված խաչքարեր կամ հետագա նվիրատվությունների առիթով քանդակված պարզ խաչեր: Արևմտյան կողմի ժայռի գագաթին կանգնած մատուռի ներսում՝ սվաղի



ԴԱՂԻ ՎԱՆՔ. վանքամերձ հինգ մատուռների հատակագծերը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. վանքամերձ մատուռները. առաջին շարքում՝ պայմանական Ա մատուռը վերականգնումից առաջ (լուս.՝ Ս. Այվազյանի, 2003 թ.) և հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.), 2-րդ շարքում՝ Բ մատուռը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2016 թ., Ս. Կարապետյանի, 2018 թ.), 3-րդ շարքում՝ Գ մատուռը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2016, 2018 թթ. և Ս. Կարապետյանի, 1994 թ.), 4-րդ շարքում՝ Դ մատուռը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ. և Ս. Այվազյանի, 2016 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Ե մատուռը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2003 թ. և Ս. Դանիելյանի, 2017 թ.)

շերտի վրա, պահպանվել է նաև նվիրատվական բնույթի ներկագիր արձանագրություն: Ի դեպ, նույն մատուռի շուրջ կատարված հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են նաև երբեմնի գերեզմանոցից մնացած արձանագիր տապանաքար և բեկորված գեղաքանդակ խաչքար:

Արձանագրություններ առկա են պայմանականորեն Բ և Գ համարների ներքո ներկայացված մատուռներում:

Բ մատուռ. արևմտյան ճակատին ագուցված խաչքարին՝ 3 տող.

Ա(ստուա)ծ ողորմի Մարգիսա, Գերգ/ա, Մլքին:

Հրատ. Դիվան, V, էջ 214: ՀՄՀԽԱԲՇ, էջ 120:



Բ մատուռ. կառույցին որպես բնական անսասան հիմք հանդիսացող ժայռի հարավահայաց անհարթ մակերևույթին՝ առնվազն 6 տող.

Ես՝ Գրիգոր, | կանգնեց(ի) | զխաչս ի փրկութիւն հոգոյ | ...թի... | ...վ...:

Հրատ. առաջին անգամ:



Գ մատուռ. 2017 թ. մատուռի վերականգնման ժամանակ հայտնաբերված տապանաքարին՝ 3 տող.

Աղաչեմ զմեղ/ուցե(ա)լ Մարիան, յա/ղաթս յիշեցէք:



Հրատ. առաջին անգամ:



Գ մատուռ. ներսում՝ հյուսիսային որմի սվաղի շերտին, առնվազն 9 տող.

Կամաւն ա(ստուծոյ), ես՝ մեղաւոր | Մարկոս, որ ե... ետ ա(է)ր Մով... ...ամէն ու ... | ... | ... թվ[ից] ՋԾ (1501) | ...ութ(եամ)բ ... | ... ա(ստուծոյ)ն | ..., ով կարդ[ի]... ա(ստուա)ծ ձեզ...:

Հրատ. առաջին անգամ:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. Գ մատուռի մոտ 2017 թ. հայտնաբերված տապանաքարը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ. և Բ մատուռան ժայռե «պատվանդանի» նվիրատվական հիշատակագրությունը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2017 թ.), գրչանկարները՝ Ս. Կարապետյանի (2018-2019 թթ.)

Վանական համալիրի տարածքում առկա են կան մախկի-նուն եղել են ևս մի քանի արձանագիր հուշարձաններ.

Խաչքար. երկատված թերևս ԺԷ դարում հայ հոգևորականության ձեռքով, ընդ որում, վերին կես հատվածը հարմարեցվել է որպես սեղանի վան-քար, իսկ ստորին «անպետք» կեսը մնացել է Կաթողիկե եկեղեցուց հարավ՝ բակում (228 x 79 x 48 սմ): Այժմ երկու կտորները միացված և կանգնեցված են եկեղեցու հարավային կողմում: Արձանագրությունը ձգվում է դիմային և զույգ կողային հատվածներում, ընդամենը 38 տող, որից 1-ը՝ դիմային երեսին, 29-ը՝ հարավային, իսկ 8-ը՝ հյուսիսային կողմին:

Թ(վին) [Ո]ԼԱ (1182), // ես՝ Հասան, որդի Վախտանգա, տ(եառ)ն Հաթերքո / եւ Հանդաբերդո, Խաչինաբերդո եւ Հասախաղացին, կացի յաւագութեան ամս / Խ (40), շատ պատերազմաւ եւ յաղթեցի / թշնամեաց իմոց աւզնութեամբն ա(ստուծոյ) եւ / եղեն ինձ Ձ (6) որդի զթերդերս եւ զգաւաթս ետու նոցա եւ ես եկի ի վանքս, մատ յիմ եղբայրս ի տ(է)ր / Գրիգորէս եւ եղե / կրասնատր եւ քերի զխաչաքարիս յագուաշատ / աշխատութեամբ եւ քազում / հնարիւք եւ կանգնեցի ս(ուր)ք նշան / հոգո իմո յիշատակ. արդ / վասն ձեր հոգոյդ, որք ընթե/նոյդ զիս յաղաթս յիշեցէք: // Չեռնայգիր է իմ՝ Հասան/նայ. եղբայրք, զգաստ կացայք: Ես յաշխարհայս չե տխրա ոչինչ. հ/աւատացա՛յք դ(ւ)ք այլ չտ/անիք:

Հրատ. Հասան-Ջալայան Ե., էջ 132: Շահխաթունեանց Յ., Բ, էջ 361, 597: Ջալալեանց Մ., Ա, էջ 205: Բարխուստարեանց Մ., էջ 203-204: Տեր-Մովսիսեան Մ., էջ 97: Վիանական տարեգիր, էջ 34: Դիվան, V, էջ 198: Պետրոսյան Հ., Դաղի վանքի ծածկագիր արձանագրությունը, «Իրան-Նամե», 1998, № 1-3, էջ 38-40: ՀՄՀԽԱԲԸ, էջ 117:

Ծանոթ. ըստ Ռուբեն Թարունյանի՝ «...դաղիվանքյան այս արձանագրության բոլոր տառածները բնական ձևափոխությունների արդյունք են և ներկայացնում են փորագրողի անհատական ձեռագրային առանձնահատկությունները, որոնք մա, չլինելով մասնագետ, անցկացրել է քարին: Հետևապես արձանագրությունն այս ծածկագիր չէ...» (Հակոբյան (Թարունյան) Ռ., Դաղիվանքի մի արձանագրության մասին, <https://www.academia.edu/9056679/>):



ՂԱԴԻ ՎԱՆԷ. Հասան Վախտանգյանի խաչքարի արևմտյան երեսն ու հյուսիսային կողը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



Խաչքար. 1990-ական թթ. գտնվում էր Կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքի առջև կողքի վրա ընկած դիրքով, այժմ զետեղված է սյունասրահի որմնախորշերից մեկի մեջ, ստորին հատվածում՝ 4 տող.

Թ(վին) ՈԼԹ (1190), ես՝ տ(է)ր Գրիգորէս՝ որ(դի) / Վախտանգա, կան(գն)եցի զխաչս մար իմո՝ Շուշկան(ի)ն, որք / երկրպագէք, յաղաթս յիշեցէք:

Հրատ. Տեր-Մովսիսեան Մ., էջ 96: Դիվան, V, էջ 213 (վերահրատարակություն է): ՀՄՀԽԱԲԸ, էջ 117:

Արձանագիր քեկոր, 3 տող.
Արձան ամծեալ եւ ... / ...պետ գալլատեան ... / ... ի կա(ն)գն...:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 120:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԲ-ԺԳ դդ.:



ՂԱԴԻ ՎԱՆԷ. Հասան Վախտանգյանի խաչքարը (զրե՝ Ս. Կարապետյանի, 1998 թ., լրացված՝ 2018 թ.)



ՊԱՂԻ ՎԱՆՔ. 1190 թ. Շուշկան տիկնոջ հիշատակին կերտված խաչքարիչը և նույն թվականից մեկ այլ բեկորված խաչքար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Խաչքար. գեղաքանդակ բեկոր է, վարդյակի շուրջ.

Թիվս (Ո)ԼԹ (1190):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 117:

Խաչքար. շրջապարսպի արևելյան հատվածում՝ նեղ կողմի, 5 տող.

Ա(ստուս)ծ ողորմես / Սարգսի / եւ Գեորգա:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 117:

Ծանոթ. շրջապարսպի կառուցման ժամանակ ագուցվել է որմի մեջ, որ հետագայում վայր է ընկել (թերևս միտումնավոր է տեղահանվել): Ներկայումս գտնվում է սյունասրահի մեջ:

Սյունասրահ. արձանագրությունը՝ 2 տող (չի պահպանվել).

Կաման ա(ստուծո)յ ես՝ Սնպատ, որդի Վախտանկա, շինեցի զգալիքս եկեղեցոյս եւ ետու զՇինածոր իւր սահմանովն եւ զԳոփուն տակին յեկեղեցիս:

Հրատ. Տեր-Մովսիսեան Մ., էջ 88: Դիվան, V, էջ 214: ՀՄՀԽԱԲԸ, էջ 120:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Յանուն ա(ստուծո)յ, ես՝ տ(ե)ր Գրիգորէս, տղայութեանք եկի ի դուռն եկեղեցոյս, շատ աշխատանք արարի. իշխանութիւն շահ Թահմազին էր. զվանքս տուին տրիւու, ես դարուլ չարարի. զնացի Նորշէնն, շինեցի Գ (3) ջաղաց, Գ (3) պախջայ եւ եկի ի դուռն Ս(ուր)ք Առաքելոյս. շինեցի զհուր, որ եկեղեցոյս մալն քաշէ, զպաղորսախջէս եւ զջաղացներս եւ այլ ամենայն աշխատանքս եկեղեցոյս վախմ տուի: Արդ, ով որ այս գեղերանքերս եւ զիմ



ՊԱՂԻ ՎԱՆՔ. խաչքարի բեկոր, 1581 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2018 թթ.)

վախմերս հանել ջանայ ի սր. Առաքելոյս, ԳճԺԸ (318) հայրապետացն նգոված է. մասն եւ բաժին ընդ Յուդայի եւ Կայենի եւ խաչահանուացսն առցէ. եւ մեր մեղացս տէր է. եւ ով, որ շէն պահէ եւ զմեզ յիշէ՝ վարձս ի Քրիստոսէ առցէ, ամէն. թուին ՌԷ (1558):

Հրատ. Հասան-Ջալալյան Ե., էջ 126: Շահխաթունեանց Յ., Բ, էջ 357: Ջալալյանց Ս., Ա, էջ 200: Բարխուտարեանց Մ., էջ 209, ծմբ. 3: Ալիշան Ղ., Արցախ, «Բազմավէպ», 1988, № 1-4, էջ 266: Դիվան, V, էջ 215: ՀՄՀԽԱԲԸ, էջ 120:

Ծանոթ. Ե. Հասան-Ջալալյանի, Ս. Ջալալյանցի մոտ տարբերվող չկա:

Խաչքարի բեկոր. պահպանվել է վերին կեսը, քիվին, վերին խաչաքրի երկու կողմերում և ուղղահայաց եզրերին՝ 4 տող.

...ն կանգնեցի զխաչս փրկութե(ան) հ(ո)գոյ իմոյ / և հարն իմոյ..., / թվ(ին) ՋԼ (1581):

Հրատ. առաջին անգամ:



ՊԱՂԻ ՎԱՆՔ. խաչքարի բեկոր, 1581 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2018 թթ.)



Խաչքարի բեկոր. պահպանվել է վերին կեսը, քիվին, վերին խաչաթևի երկու կողմերում և ուղղահայաց եզրերին՝ 4 տող.

... / Գր(ի)զ(որ)իս / ք(ա)ր(ե)իս(աւ)իս / ս(ուր)ք / Ա(ստուա)ծա-
ծիւն / ...:

Հրատ. առաջին անգամ:
Նանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դարեր:

Վանքի տարածքում հատկապես 1990-ական թթ. վերջերից սկսած վերականգնողական աշխատանքների ժամանակ պարբերաբար հայտնաբերվել են շուրջ մեկ տասնյակի հասնող զանազան այլ արձանագրությունների մասեր, բեկորներ, որոնք իրենց հատվածային և թերի պահպանվածության պատճառով, բացի առանձին բառերից, ցավոք, այլ տեղեկություններ չեն պարունակում:



ԴԱԴԻ ՎԱՆՔ. զանազան արձանագրությունների մասեր, բեկորներ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2018 թթ.)



ՄՐՋՄԱՆՑ. գյուղական տեսարաններ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)



ՄՐՋՄԱՆՑ

Տեղադրություն. գտնվում է Դաղի վանքից 9,5 կմ հարավ-արևելք՝ աջից Տրտուլին միախառնվող Արագգետ վտակի միջնահովտում՝ ծովի մակերևույթից 1480-1570 մ բարձրությամբ հարավահայաց ձորալանջին. «Դիրքը լեռնային է եւ անտառաբուսութիւնը գիւղի սահմաններում կանգ է առնում: Նկատելի են աղբիւրների յաճախութիւնը. կայ մի փոքր լճակ և գեղեցիկ կանանչով ծածկւած մարգագետիններ»¹:

Պատմություն. գյուղում վկայված պատմական հուշարձանները փաստում են նրա գոյությունն առնվազն զարգացած միջնադարից, սակայն գրավոր աղբյուրներում հիշվում է նախ 1181 թ. Մարչամանց², ապա 1729 թ.՝ Մրչմանց անվանաձևով: Առաջին հիշատակությամբ գյուղը Դաղի հարկատու բնակավայրերից էր, իսկ երկրորդում մրջմանցի տեր Մելքիսեթի որդի Մարկոսը մի Մաշտոց էր նվիրել ոմն Դավիթ քահանային. «Յիշատակ է բարեմիտ Յուրին, որ կողակից էի Ավագակին ի երկրեն Ծարայ ի գեղջէն Եանշաղէն. յիշատակ է այս սուրբ... Մաշտոցս հոգոյ ի մոյ, տվի իմ ձեռովս Դաւիթ քահանային...: Ես՝ մրջմանցի տեր Մելքիսեթի որդի Մարկոսը... թվ(ի)ն Ռ-ՃՀԸ (1729) էր»³:

Բնակչություն. հայաբնակ է եղել մինչև ԺԸ դարը և ամայացել գավառի մնացյալ հայկական գյուղերի հետ միասին:

Ուշագրավ է, որ Ի դարի սկզբներին պատմական գյուղատեղիում հաստատված սակավաթիվ թուրք ընտանիքներին հայտնի էր գյուղի հին անունը, որը, իրենց արտասանության հնարավորությունների համեմատ որոշ չափով աղավաղելով, կոչել էին Մարջումակ. «Մարջումակ նոր հաստատւած սակաւաթիւ թուրք բնակիչներից տրւած անունն է հին աւերակ հայկական գիւղի...»⁴:

Եկեղեցիներ. տակավին 1911 թ. այս գյուղում և նրանից ոչ հեռու վկայվել է երկու եկեղեցի: Առաջինը, որ գտնվել է գյուղա-

միջում, եղել է բավականին ընդարձակ շինություն. «...հին մեծ եկեղեցին նախկին բնակիչների մեծ թւի չափանիշն է...: Ո՛չ եկեղեցու պատերի վրայ, որ բնակիչներից մարագի է վերածած, ո՛չ էլ բազմաթիւ տապանաքարերի վրայ արձանագրութիւն գտայ, երաճները ակնյայտնի կերպով քերւած էին, որեւէ մոլեռանդ անմիտի գործ»⁵:

Երկրորդ եկեղեցին գտնվում էր գյուղից 1 կմ հյուսիս: Նրա մասին 1911 թ. Մ. Տեր-Մովսիսյանը նշել է. «...կանգուն մնացել է բազիլիկ մի փոքր եկեղեցի, հասարակ քարերից շինւած, փոքրիկ դռով...»⁶:

Խորհրդային տարիներին աղբեջանցի վերանվանված գյուղաբնակ թուրքերը հիմնահատակ քանդել են ոչ միայն նշյալ երկու եկեղեցիները, այլև անհետացրել հայոց գերեզմանոցը (քարերը հափշտակվել և յուրացվել են որպես շինանյութ): Այս տեսանկյունից մեծ բարեբախտություն է, որ 1911 թ. նույն այցելում գյուղամերձ երկրորդ եկեղեցուց գրի է առել շինարարական արձանա-



ՄՐՋՄԱՆՑ. գյուղամերձ եկեղեցու մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

1 Տեր-Մովսիսյան Մ., նշվ. աշխ., էջ 99:

2 Տե՛ս սույն աշխատությունը, էջ 302:

3 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 221: Ի դեպ, այս ձեռագիրը ԺԹ դարավերջին պահվում էր Մաղավուզի Հովհաննես քահանայի մոտ:

4 Տեր-Մովսիսյան Մ., նույն տեղում:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում:



ՄՐՁՄԱՆՑ. որպես շինանյութ աղբբեջանական դպրոցի որմերում հայտնված արձանագիր քարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

գրությունը: Ի դեպ, ոչնչացված եկեղեցու այս արձանագրությանը մաս կազմող մի բեկոր 2003 թ. մեզ ցույց տվեցին գյուղում վերահաստատված հայերը՝ նշելով, որ քարը, ի թիվս այլ բեկորների, գտել և դուրս էին բերել գյուղի աղբբեջանական դպրոցի որմերից:

Արձանագրություն. պահպանվել է 2 բեկոր՝ կիսատ 6-ական տողերով.
Թվ(ին) 2ՃԳ (1304). / ա(ստուծո)վ իշխանութ(եամ)ք մեծ(ին) Գրիգորո, ազնականութ(եամ)ք Սե/աղի որդո Չատիկա, մեք՝ նվաստ քահանայքս՝ Գրիգոր, Մարոք եւ եղբայր իմ՝ Ովանէս, շինեցաք զեկեղեցի / յիշատակ մեզ և ծնողաց մերոց: / Ես՝ Սևադա, տվի զԲճին-պատառ նշխարիացու վ(աս)ն հոգո Թաճերին, ա(ստուա)ծ որդ(ոմ)ի:



Հրատ. Տեր-Մովսիսեան Մ., նշվ. հոդվ., «Ազգագրական հանդես», գիրք XXV, էջ 79: Նաև նույնի՝ նշվ. աշխ., էջ 99: Դիվան, V, էջ 226:
Ծանոթ. վերձանության մեջ ուղիղ տառատեսակով ցույց են տրված պահպանված բեկորի վրա առկա հատվածները:

Արձանագրություն. 6 տող.
Ես՝ Գրիգոր, միաբ/անեցա Ա(ստուա)ծածնիս / եւ սահմանեց իմ սն(ու)ցող/ն Ազատա ի տարին Բ (2) / ժամ ի տաւն ս(ուր)ք Սա/րգսին:



Արձանագրություն. 3 տող.
Ս(ուր)ք Յա/կորին Ա (1) / ժամ՝ Խաչիկա, Ա (1) / Թամբին:



Արձանագրություն. 3 տող.
...էք յ/աղա/թս յ/իշե/ք:

Տեղադրություն. Դաղի վանքից ուղիղ գծով 2,7 կմ հյուսիսարևմուտք՝ Տրտուի հունով վեր՝ գետի աջ ափի փոքրիկ հարթակում է գտնվում Կուսանաց Սբ. Աստվածածին անապատը (N 40°10'16.57", E 046°15'29.97", ծ. մ. 1088 մ):

Անվանում. անապատ-վանքի բուն անունը հայտնի է իր իսկ արձանագրություններից, ընդ որում, եթե ԺԲ դարում վկայված է պարզապես Սբ. Աստվածածին, ապա ԺԷ դարի հիշատակագրություններում՝ Կուսանաց Սբ. Աստվածածին անապատ անուններով: Հայտնի է նաև, որ ԺԸ դարում՝ գավառի հայաթափումից հետո, վերոնշյալ անուններն էլ մոռացության էին



ԿՈՒՍԱՆԱՑ ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. վանական համալիրի հին հատվածը հյուսիսից և նրա կենտրոնական՝ սյունասրահին հարող հատվածը հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 և 1994 թթ.)

- 1 Հայկունի, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1885, № 80, 13 հոկտեմբերի, էջ 3: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., էջ 74:
- 2 Կյուրիկե Գ-ն, հակառակ նախնիներից ժառանգած բարձրագույն՝ քազավոր տխրոսին, իշխում էր Մաճմաբերդ ամրոցին և հարակից գավառին:
- 3 Հայտնի է, որ Կյուրիկե Գ-ն ուներ երեք դուստր՝ Մարիամ, Բորինա և Ռուսուդան: Թվում է՝ վանքի վիճագրերում երկու անգամ վկայված Մամա քազուհին նույն Մարիամն է:

մատնվել: ԺԹ դարավերջին ժողովրդի շրջանում հայտնի էր եկվոր մահմեդականներից ստացած պատահական՝ Բալավանք անվամբ (թարգմանաբար նշանակում է փոքր վանք. ակներև է, որ բուրբերը վանքն այդպես էին կոչել՝ համեմատելով այն Դաղի վանքի հետ): Օտարոտի այդ անվամբ է հիշում վանքը Եղիշե ավագ քահանա Գեղամյանցը 1885 թ. «...Խօթայ վանքից բարձր՝ ճիշտ Թարթառի ափին, կայ մի այլ պատմական վանք՝ Բալավանք անունով»¹:

Պատմություն. վանքի առաջին կառույցներից մեզ հասած շինարարական արձանագրությունները վկայում են, որ նրա հիմնադիրն էր Կյուրիկե Գ քազավորի (1145-1170 թթ.)² դուստրերից մեկը՝ Մաման (թերևս նույն ինքը՝ Մարիամը)³:



Յայժմ վանքում փաստագրված արքայադստեր շինարարական գործունեությունը լուսաբանող արձանագրությունները երեքն են: Ահա դրանք.

Եկեղեցու (հին հատվածի հյուսիսարևմտյան եկեղեցին) արևմտյան ճակատին՝ 6 տող.

ՈՒԳ (1174) թուին, | ես՝ քազուհիս, դուստր | (Կ)յուրիկեի քազուորի, | (շինե)ցի զեկեղեցիս վասն իմ ե(ւ) | (ի)մ ծնողացն, յադարս | յիշեցէք:

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., Монастырский комплекс Сурб Аствацацин в гаваре Цар, «ԼՀԳ», 1989, № 7, էջ 86: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77:

Ծանոթ. թվում է, թե արձանագրության մեջ արքայադստրը զանց է առել իր անունը և բավարարվել է սուկ իր տխրոսը շեշտելով: Ափսոսանքով նշենք, որ մեր վերջին՝ 2018 թ. այցելության ժամանակ վիճագիրը մեծապես և միտումնավոր վնասված տեսանք, մինչդեռ ներկայացվող 2015 թ. լուսանկարում բոլորովին անվնաս էր:



ԿՈՒՍԱՆԱՑ ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. վանական համալիրի առաջին՝ ամենից հին եկեղեցու շինարարական արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 և 2018 թթ.)



Շինարարական բեկորված արձանագրություն. 1987 թ. սյունասրահի ներսում հաջողվեց գտնել արձանագրության միայն 4 բեկորը, 4 տող.

Ի թվ(ին) հ(այոց) ՈՒԷ (1178) ես՝ Մամա թագու(հ)ի, դուստր՝ Կիրիկեի, շինեցի / զեկեղեցիս եւ զսրահ]ս, / որք ընթեռն[ոյք, յի]շ(եցէք ի Քրիստոս):

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 87-88: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77:

Արձանագիր բեկոր. 5 տող.

Ես՝ Մամայ / թագուհի, նորոգեցի զեկ[եղեցիս խախտեալ[հաստ]ատ շին(ո)ածով, .../ն եղեւ, յիշեց(էք) ...:

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 88-89: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77:

Ծանոթ. ցավալիորեն մեզ չի հաջողվել շրջանի ազատագրումից հետո վերագտնել նաև արձանագրությունը:



ԿՈՒՍԱՆԱՑ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. արձանագրություն (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987 և 2018 թթ.)

Ներկայացված շինարարական բնույթի երեք արձանագրություններից պարզվում է, որ Մամնաբերդի տիրակալ Կյուրիկե Գ-ի դուստրերից Մարիամը (արձանագրություններում՝ Մամա) ոչ միայն կառուցել է համալիրի հնագույն երկու եկեղեցիները և սյունասրահը 1174 և 1178 թթ., այլև որոշ ժամանակ անց հոգ է տարել հարկավոր նորոգության մասին:

Ըստ ամենայնի, գոյության հենց սկզբից վանքը տիրապետել է թագուհու և այլոց կողմից նվիրաբերված որոշակի կալվածքներ-

րի: Այդ մասին են վկայում ներքո ներկայացվող արձանագրությունները.

Արձանագիր բեկոր. 3 տող.

Կաման աստուծոյ ես՝ Տիրաւագ քահ(անայ), / զնեցի զԻգա- ձորին ներքի բաժին եւ ետու ի ս(ուր)ք Ա(ստուա)ծածնիս, տէր Գր(իզ)որ:

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 89: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77:

Ծանոթ. այս արձանագրությունը նույնպես շրջանի ազատագրումից հետո վերագտնել չի հաջողվել:





Արձանագրություն. 3 տող.

Ես՝ Շատրարի :Դ: (4) համադ[իկի հող ի Հաւար ետու(ւ) Ա(ստուա)ծ/ածինս, տու(ին) ի տարում(ն)...

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 89: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77:

Ծանոթ. շրջանի ազատագրումից հետո արձանագրությունը գտանք վանդալարար վնասված վիճակում:



ԿՈՒՍԱՆԱՑ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. արձանագրություն (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 և 2015 թթ., գրչ.՝ 2018 թ.)

Արձանագրություն. 5 տող.

Չ (6) ար ժամ / ինձ կարգեցի(ն) / ով որ խափ/անէ իմ մեղ/ացս տեր է:

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 89: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77:


Ծանոթ. շրջանի ազատագրումից հետո արձանագրությունը վերագտնել չհաջողվեց:



Արձանագրություն. 5 տող.

Ես՝ Վարիամ, իմ / ...կարերդ... / ...երի, որ... / քար ետ Բ գր., յա/դարս յիշ(եցէ)ք:

Հրատ. առաջին անգամ:




Շինարարական և նվիրատվական արձանագրություններից զատ՝ վանական համալիրի տարածքում փաստագրվել են նաև ԺԲ-ԺԳ դդ. վերաբերող հիշատակագրեր: Վերջիններս կան խաչքարերի, կան էլ խաչաքանդակների վրա են: Ահա դրանք.

Խաչքար, ստորին հատվածում՝ 10 տող.

Ես՝ Գոր/անդուխ/տ՝ դայէկ թ/ագուռոյս, / կանգնե/խաչ/ցի գտորք նշան/ս հոգոյ իմոյ յիշա/տակ, որք ընթեռնայ/ք յադարս յիշէք, թիւն ՈԼԷ (1188):

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 86: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77:

Ծանոթ. նախքան Արցախյան ազատամարտը կանգնած էր համալիրի հին կառույցների շարքի արևելյան եկեղեցու արևմտյան ճակատի առջև՝ մուտքից հարավ՝ կից 1195 թ. կերտված խաչքարին: Շրջանի ազատագրումից հետո անհետացված էր: Ի դեպ, մեր նախորդ հրատարակություններում տարեթիվը սխալմամբ ներկայացրել էինք իբրև ՈՂԷ (1248):



ԿՈՒՍԱՆԱՑ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. 1188 և 1195 թթ. խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 թ.): 1993 թ. շրջանի ազատագրումից հետո պարզվեց, որ աղբրեջանական ելուզակները հասցրել էին բազմաթիվ արձանագրությունների հետ մեկտեղ անհետացնելու և այս խաչքարերը:

Խաչքար, կողին և ստորին հատվածում՝ 3 տող.

Թվին ՈհԳ (1195), || ես՝ Սափի, որդի Թ(ի)րքի, յադարքիս տուին ծառա թագուհուն, յադարս յիշեցէք:

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., էջ 86: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77:

Ծանոթ. շրջանի ազատագրումից հետո պարզվեց, որ խաչքարն այլևս գոյություն չուներ:

Աղաք, հաղաք՝ նախ, առաջ, առաջին, ճանապարհ:

Խաչքար. փորագիր 10 տող.

Թ(վ)ին | ՈհԳ (1174) | [է]ր. գՎա(հ)ր/ամ յադարս/ս յիշ/եցէ/ք:

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., էջ 90: ՀՄՀԽԱԲԸ, էջ 77-78:

Ծանոթ. շրջանի ազատագրումից հետո պարզվեց, որ խաչքարն այլևս կորսված էր:


Խաչքար. փորագիր 7 տող.



Ա(ստուա)ծ որդի/րմի Վար/դան/ա, որ | գխա/(չ)ս կան/(զ)նեց):

Հրատ. Арутюнян В., Карапетян С., Саркисян Н., նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 91: ՀՄՀԽԱԲԸ, էջ 78:

Ծանոթ. շրջանի ազատագրումից հետո խաչքարն այլևս կորսված էր:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:





ԿՈՒՄԱՆԱՑ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՍ. 1261 թ. բեկորված խաչքար (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987 և 2018 թթ.)

Եկեղեցու երեսապատի վայր ընկած խաչաքանդակ քար. փորագիր 3 տող.
Ա(ստուա)ծ ողորմի Սարգսի(ն):
 Հրատ. **Արություն В., Карапетян С., Саркисян Н.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 90: ՀՄՀԽԱԲՇ, էջ 77:
 Ծանոթ. Ժամանակը՝ ԺԳ դար:

Խաչքար. տեղահան և բեկորված. երկու նեղ կողերին՝ առնվազն 8-ական տող.

*Թու(ին) ՉԺ (1261), | ա(ստուա)ծ ողորմի | Թոմ/ա քա/հանա-
 //յին]...: Հարավային կողին. || Ա(ստուա)ծ | ողորմի | Վարդան/ա, որ |
 գխա/[չ]ս կան/[զնեց]...*

Հրատ. **Արություն В., Карапетян С., Саркисян Н.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 91: ՀՄՀԽԱԲՇ, էջ 78:

Ծանոթ. նախկին հրատարակություններում տրվել էր միայն հյուսիսային կողի արձանագրությունը:

Խաչքար. եռատված, 1987 թ. առկա էր միայն ստորին երկու բեկորը, արձանագրությունը՝ ստորին հատվածում, 4 տող.



Ա(ստուա)ծ ողոր(մ)ի Գր(ի)գորին, | Ակորա որդ/ոյ:
 Հրատ. **Արություն В., Карапетян С., Саркисян Н.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 90: ՀՄՀԽԱԲՇ, էջ 78:

Ծանոթ. Ժամանակը՝ ԺԳ դար:

Խաչքար. եռատված, 1987 թ. առկա էր միայն ստորին երկու բեկորը, արձանագրությունը՝ ստորին հատվածում, 4 տող.

Դեմետրի | որդ/ո գՎար/ամ, յ/աղ/աթ/ս յի/[չ]եցե/ք:
 Հրատ. **Արություն В., Карапетян С., Саркисян Н.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 90: ՀՄՀԽԱԲՇ, էջ 78:

Ծանոթ. Ժամանակը՝ ԺԳ դար:




ԿՈՒՄԱՆԱՑ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՍ. ԺԳ դարի խաչքարեր (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1987 և 2018 թթ.)

Ներկայացված արձանագրություններում գտնե երկու անգամ Սր. Աստվածածին անվամբ վանքի վկայություններում նրա՝ կուսանոց լինելու մասին որևէ ակնարկ իսկ չենք տեսնում: Սրանով, իհարկե, չի կարելի պնդել, թե վանքը միայն հետագայում է վերածվել կուսանոցի (մանավանդ, որ հենց հիմնադիրը թագուհի էր): Ինչևէ, միայն դարեր անց, այն է՝ ԺԷ դարի վերջերին ենք վկայություններում շեշտված տեսնում վանքի՝ կուսաստան կարգավիճակը: Ընդ որում, այդ շրջանում կույս միաբաններն այստեղ գրադվում էին մաս ձեռագրեր ստեղծելով, որով փաստորեն վանքը դարձել էր գրչօջախ:

Մասնավորապես 1684 թ. վանքի միաբաններից Վարվառե կույսն ընդօրինակել Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը և հիշատակարանում, որպես գրչության վայր, նշել «...ի սուրբ վանս Կուսանաց...»⁴:

Երևում է, որ ԺԲ-ԺԳ դարերից հետո վանքը ծաղկման երկրորդ, իրականում մաս վերջին շրջանն ապրել է ԺԷ դարի վերջին տասնամյակներում: Այդ ընթացքում հուշարձանախումբը ոչ միայն համարվել էր եռանավ հորինվածքով, ընդարձակ մի նոր եկեղեցով և հարակից այլ շինություններով, այլև բարձր հեղինակության և համբավի շնորհիվ դեպի իրեն էր ձգել բազմաթիվ ուխտավորների: Վերջիններս անհայտ, բայց հատուկ ընտրությամբ իրենց այցելությունների մասին պատմող զանազան

⁴ ՄՄ. ձեռագիր 2067, ք. 470-471: Հիշատակարանի հրատարակությունը տես **Լեռ**, Հայոց պատմություն, հ. 3, գիրք երկրորդ, էջ 28-29: **Չաքանյան Պ.**, նշվ. հոդվ., «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XX, Երևան, 2001, էջ 219:



ԿՈՒՄԱՆԱՑ ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. ածխագիր հիշատակագրություն, 1681-1691 թթ. (ուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

հիշատակագրություններ են թողել վանքի հնագույն եկեղեցիներից միայն մեկի (հին հուշարձանախմբի արևելյան եզրին գտնվող) ներսում՝ սվաղի շերտի վրա: Դրանցից առավել ընդարձակն ու համեմատաբար նաև ավելի լավ պահպանվածն առկա է նշյալ եկեղեցու խորանի մեջ՝ հյուսիսային դռմին.

Արձանագրություն. սվաղի շերտին անկանոն ձեռագրով՝ 16 տող.
 Կաման ա(ստուծոյ) եւ՝ Մանուչարի | տղայ Օհանէս, եկի ի ս(ուր)բ վ[անս] Ա(ստուա)ծածին | [առ] եկեղեցիս Ա(ստուա)ծածին ան[ա]յալտ Կուսանաց, էի գաւառի Ծարլուայ, | կառոյցի վանս Դաղոխ ...տկ...ն հ/աւաքեալ զս(ուր)բ նշխարոց ... առ | ...ս(ուր)բ ...Մարինոսի, որ ... | ...ամենայնի ի մէլ... ...իմիրգանի/կին(°), կաթ(ո)ղ(ի)կոսութե(ան) տ(եառ)ն Եղիազարի, ի ս(ուր)բ աթոռ Էջմեածինի հա...ց հասակին | ա... | ... մեղա..., ասացէք ա(ստուա)ծ | իւրն աջողի ...:

Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. հակառակ թերի պահպանվածությանը, այնուամենայնիվ, հիշատակագրությունը պարունակում է մի շարք ուշագրավ տեղեկություններ: Մասնավորապես. ա) վանքը հիշված է որպես Կուսանաց անապատ, բ) Ծար գավառը վկայված է բուրքական տեղանվանական վերջածանցով՝ Ծարլու, գ) հիշատակագրության հեղինակ Մանուչարի որդի Հովհաննեսը Դաղի վանքում նախքան սույն հիշատակագրության ստեղծումը շինարարական աշխատանքներ էր կատարել, դ) Կուսանաց անապատում ի մի էին բերվել զանազան սուրբ մատուց-

ներ և ե) հիշատակագրությունը ստեղծվել էր Եղիազար կաթողիկոսի գահակալության տարիներին, այն է՝ 1681-1691 թթ.:

Նույն եկեղեցու ներսում նույնալիսի գրով առկա են ևս մի քանի հիշատակագրություններ.

- ա Եպիս(կոպոս) Թաթևիս (փակագիր է).
- բ Ես մեղայոր Ալլահվերդիս գիրեցի սուրբ Ա(ստուա)ծածին վեր կայ օրորես:
- գ Կաման ա(ստուծոյ) եւ՝ Մանուչարի տղայ Օհանէս, եկի ի ս(ուր)բ ուխտս | եկեղեցիս Ա(ստուա)ծածին | Կուսանաց:
- դ Կամ(ա)ն ա(ստուծոյ) եւ՝ Մանուչարի տղայ Օհանէս, | եկայ ի ս(ուր)բ ուխտս ... Ա(ստուա)ծածին, որ անապ...:
- ե Ես՝ Թումա | եպս... | ...:
- զ Ես՝ Պարունի տղայ | Աստուած(ա)տորս, գիրեցի | էն տարին, ինչ որ Գիրակոս մահ/ալ(ար)տս արալին, թվ(ին) Ռ-ՃԽԴ (1695):

Հրատ. առաջին անգամ:
 1. Արձանագրություն.
 ۱۰۹۶ سنه ... | ... | ...
 Թարգմ. ... թվին 1096 (1684-1685 թթ.):
 Ծանոթ. ընթերցումը՝ Բ. Զորթոյանի:



ԿՈՒՍԱՆԱՑ ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. համալիրը հյուսիս-արևելքից, հին եկեղեցիներն արևելքից, արևելյան եկեղեցին հարավ-արևմուտքից, վանքի հարավ-արևմուտքում առանձին կանգնած ձառուղը հարավ-արևմուտքից և հին հատվածն արևմուտքից եզրափակող կառույցի ավերակների տեսքը դեպի արևմուտք (լուս.՝ Ս. Դանիելյանի 2017 թ., Կարապետյանի, 2015 և 2018 թթ.)




ԿՈՒՍԱՆԱՑ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. վանքի հարավ-արևմուտքում առանձին կանգնած մատուռը հյուսիս-արևելքից, հատված նրա ծածկասալերը կրող հյուսիսակողմյան հենակներից, 1174 թ. կառուցված եկեղեցու արևմտյան ճակատը, սյունասրահի ներքին տեսքը դեպի հարավ և սյունասրահի մուտքի կամարի ներքին սվաղե հարդարանքը (լուս.՝ Կարապետյանի, 2015 և 2018 թթ.)

Ճարտարապետություն. վանքը բաղկացած է ժամանակագրորեն շուրջ կես հազարամյակի տարբերությամբ կառուցված երկու խումբ շինություններից: Առաջին խմբի հուշարձանները ձգվում են հյուսիսային եզրով (ավելի մոտ Տրտուի ափին), որոնցից գլխավորները միմյանցից 4 տարվա տարբերությամբ (1174, 1178 թթ.) կառուցված միանման և գրեթե միաչափ զույգ եկեղեցիներն են (4,5 x 3,6 մ և 6,6 x 4,7), ապա երկրորդի հետ միատեղ կառուցված առաջնեկ եկեղեցուն կից սյունասրահն է (5,0 x 4,8 մ), որին էլ արևմուտքից կից է թաղածածկ կիսավեր ևս մեկ սրահ: Այս բոլորի համար շինանյութ են ծառայել անմշակ քարը, կրաշաղախը:

Ուշագրավ լուծումներ ունեն շինությունների ծածկերը, որոնց եզրերից կախ ընկած սալերը հենված են, ըստ էության, փայտյա ճարտարապետությունից փոխակերպված քարե ելուստավոր հենակներին: Բոլոր շինություններն էլ ներքուստ պատված են եղել սվաղի շերտով:

Վանքի հին շրջանից է ավանդվել նաև համալիրի հարավ-արևմտյան եզրին առանձին կանգնած մատուռը:

Համալիրի երկրորդ խումբը գտնվում է առաջիններից մոտ 10 մ հարավ և բաղկացած է եռանավ հորինվածքով մեկ եկեղեցուց (արտաքին չափերն են՝ 17,0 x 11,6 մ), նրան արևմուտքից կից կիսավեր գավթից (8,4 x 7,4 մ) և վերջինիս էլ հարավից կցված սենյակից:



ԿՈՒՍԱՆԱՑ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. վանքի հատակագիծը, հին հուշարձանախմբի հարավային ճակատը և կտրվածքը դեպի հյուսիս; վանքի նոր եկեղեցու կտրվածքը դեպի արևելք (չափ.՝ Կարապետյանի, 1994 թ.)



ԿՈՒՍԱՆԱՑ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. վանքի նոր եկեղեցու արևմտյան ճակատը, ներքին տեսքը դեպի արևելք և թաղակապ առաստաղը (ուս.՝ Կարապետյանի, 2015 թ.)

Ուշագրավ գուգադիպությամբ սույն վանական համալիրը, ի դեմս Հյուսիսային Արցախում գտնվող Փառիսոսի վանքի, կարծես իր նմանակն ունի: Համենայն դեպս, զույգ վանքերի՝ հին և նոր մասերից բաղկացած լինելը, հին բաժնում երկու դեպքում էլ սյունասարահների, նոր մասի՝ ԺԷ դարում կառուցված եռանավ մեկական բազիլիկ եկեղեցիների առկայությունը, անգամ վերջինիս հարդարանքի առանձին տարրերի նույնական լուծումները (օրինակ՝ արևելյան ճակատից բացված խաչաձև միանման լուսամուտները) մինչև իսկ կարծել են տալիս, որ գոնե եռանավ եկեղեցու մասով գործել են կառուցող վարպետների միևնույն խմբերը:



ԿՈՒՍԱՆԱՑ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. վանքի նոր եկեղեցու՝ խորանից բացված լուսամուտը և հյուսիսային ավանդատան ներքին ծավալները (լուս.՝ Կարապետյանի, 2015 թ.)

ԱՆՆՈՒՆ ԱՆԱՊԱՏ

Տեղադրություն. գտնվում է Կուսանաց Սր. Աստվածածին անապատին հյուսիսարևմտյան ուղղությամբ դեմ հանդիման՝ կից գետի ձախակողմյան գրեթե ուղղահայաց և բարձր ժայռերին:

Պատմություն. միմյանց կից՝ եկեղեցուց և գավթից բաղկացած փոքրիկ անապատի որմերին ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ որևէ արձանագրություն չկա, ուստի և անհայտության մեջ են մնում ոչ միայն վանքի կառուցմանն առնչվող մանրամասները, այլև նույնիսկ անունը¹:

Ամենայն հավանականությամբ, վերջինս ընդամենը Կուսանաց վանքի հարևանությամբ մի փոքրիկ Հարանց անապատ էր:



Վանքը մասնագիտորեն առաջինն ուսումնասիրել է ճարտ. Մանվել Մարգարյանը 1986 թ.: Նրա կազմած հատակագիծը, վանքի վերաբերյալ նախնական տեղեկություններով, առաջին անգամ հրատարակվել է 1989 թ.², ապա և ներկայացվել է 1999 թ. (հատակագիծ, լուսանկար)³:

Շրջանի ազատագրումից հետո անանուն այս վանքում նոր ուսումնասիրություններ է կատարում Հ. Միմոնյանի ղեկավարությամբ:

1 Հնագետ Հ. Միմոնյանն Անապատը կնքել է Մարդադոնյաց վանք անվամբ (**Միմոնյան Հ.**, նշվ. հոդվ., «Պատմամշակութային ժառանգություն մատենաշար», № 2, էջ 9), մինչդեռ բազմաթիվ աղբյուրներն այդ անվամբ ոչ թե վանք, այլ Սր. Նշան (Սր. Խաչ) են վկայում (այս մասին ավելի հանգամանալից տես սույն աշխատությունը, էջ 303): Այստեղ ցանկանում ենք ավելացնել միայն, որ Դաղի վանքում պահվող Մարդադոնյաց Սր. Նշանի համբավն այնքան մեծ էր, որ այն որպես հովանի վկայվել է նաև Ծար գավառի սահմաններից բավական հեռու գտնվող գրչօջախներում ստեղծված ձեռագրերի հիշատակարաններում: Այդպիսիներից է, օրինակ, 1678 թ. Տաթևի վանքում Հովսեփ վարդապետի ստեղծած Տոնացույցը. «...եղև դրա ի սուրբ մատենա ի թուին հայկազեան տօմարի Ռ.երորդի, Ճ.երորդի, Ի. եւ Է. յսեղուածի (1678), ի Սուրբ Արոս Սղաթէի առաքելոյ, ընդ հովանեաւ Սուրբ Խաչի Մարդադաւնեաց, եւ իշխեցօղ գաւառիս եւ տիրող սուրբ աթոռիս մեծագգի ի ցեղէ Դօփեանց եւ ի սեռէն արքայի Հասանի Մեծի Պետրոս կոչեցեալ վարդապետ[ի]» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, Երևան, 2013, էջ 116):

2 **Արությունյան Վ., Կարապետյան Ս., Տարկեսյան Ն.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1989, № 7, էջ 85-86:

3 ՀՄՀԽԱԲԸ, էջ 78:



րած արշավախումբը (իրականացվում են ավելի հանգամանալից չափագրություններ):



ԱՆԱՆՈՒՆ ԱՆԱՊԱՏ. համալիրը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Սարգսյանի, 1986 թ., չափ.՝ 7. Սիմոնյանի արշավախմբի. արտատպված «Պատմամշակութային ժառանգության մատենաշար», № 2, եր., 2007, էջ 10)

ԻԳԱՉՈՐ

Կուսանաց անապատից հագիվ 300 մ Տրտուի հունով վեր՝ ձախից բացվում է Իգաձորի հովիտը: Ներկայումս այս սեղմված կիրճով հոսող վտակի ափերով վեր բարձրացող երբեմնի հողե, առանց այն էլ դժվարամատչելի ճանապարհից գրեթե ոչինչ չի մնացել: Այն քայքայվել և խալառ անհետացել է երկար ժամանակ չգործածվելու պատճառով: Այնուամենայնիվ, գոնե հետիոտնի համար մատչելի ձորակով շուրջ 2,5 կմ վեր բարձրանալուց հետո կարելի է հասնել Իգաձորին աջից միացող ավելի սակավաջուր մի երկրորդ վտակի միախառնման տեղին: Հենց այս վայրից գրեթե 3 կմ հյուսիս-արևմուտք՝ վտակի աջակողմում, վաղուց արդեն թավ անտառի ներքո հայտնված միջնադարյան անանուն մի գյուղատեղի է, որից քիչ թե շատ պահպանվածը խաչքարերով գերեզմանոցն է (N 40°11'32.82", E 046°14'24.85", ծ. մ. 1603 մ)¹:

Տեղում պահպանվել են պարզ ոճավորմամբ և անարձանագիր մի քանի խաչքարեր և անմշակ տապանասալեր:

Գերեզմանոցից 40 մ արևելք առկա են թերևս նույն հնավայրի մաս կազմող մի խումբ խաչքարեր ևս (N 40°11'32.62", E 046°14'26.48", ծ. մ. 1600 մ): Այստեղ պահպանվածներն ունեն թե՛ ավելի խոշոր չափեր և թե՛ ավելի բարձր գեղարվեստական արժեքներ: Մեկն արձանագիր է, սակայն չափազանց հողմահար լինելու պատճառով մնաց չվերձանված:

Շարունակելով ճանապարհն ի վեր՝ կարելի է հասնել պատմական Իգաձոր գյուղատեղիին, որը խորհրդային տարիներին դարձել էր աղբբեջանաբնակ և իմաստային թարգմանությամբ վերանվանվել *Բաղրու*:

Իգաձորի մասին մատենագրական վկայություններ չեն պահպանվել, միայն Կուսանաց Սբ. Աստվածածին անապատի նվիրատվական արձանագրություններից մեկում երբեմնի ծաղկուն այս գյուղի մի թաղամասը հիշված է որպես վանքի սեփականություն: Ի դեպ, Իգաձորը մի քանի թաղամասերի է բաժանված եղել նաև միջնադարում, որի ապացույցն է նշյալ արձանա-



ԻԳԱՉՈՐ. խաչքարերի բեկորներ, ԺՔ-ԺԳ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

¹ Ներկայումս այս տեղամասը հայտնի է Չորրորդի անտառ պայմանական անվանումով: Օգտվելով առիթից՝ շնորհակալություն են հայտնում հնավայր առաջնորդած Գրիգոր Սարգսյանին:



ԻԳԱԶՈՐ. ԺԲ-ԺԴ դդ. խաչքարեր Զորրորդի անտառ կոչված տեղամասի գյուղատեղիի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

գրության մեջ վկայված «գիգաձորին ներքի բաժին» մասնավորեցումը²:

Ալնհայտորեն հայկական հին գյուղի տեղում գոյացած բնակավայրում, ցավոք, եկվորները հասցրել են գրեթե ամբողջությամբ անհետացնել բնիկներից ավանդված նյութական մշակույթի հետքերը: Միայն մի թուրքի տնամերձ հողամասում 1994 թ. մեզ հաջողվեց գտնել երբեմնի գերեզմանոցին պատկանած երկու տարբեր խաչքարերի բեկորներ, ընդ որում, նրանցից մեկը՝ արձանագրության մի հատվածով հանդերձ:

Խաչքարի բեկոր (46 x 58 x 11 սմ). արձանագրությունը՝ 3 տող.

Ես՝ Գրիգոր, եւ Այելյա եղբայր[[ն ի]մ Հոնան | ...կանգն[եցաք զխաչս]...:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 42:

Ծանոթ. ակներև է, որ սույն խաչքարի եզրագոտու զարդաքանդակը նույնական է Հանդարերդի վանքում գտնվող 1194 թ. խաչքարի եզրագոտիների հետ, ուստի և բացառելի չէ, որ գործ ունենք նույն քանդակագործ արվեստագետի ստեղծագործությունների հետ:



ԻԳԱԶՈՐ. Խաչքարի բեկոր, ԺԲ-ԺԳ դդ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1994, 2018 թթ.)

2 Արձանագրությունն ամբողջությամբ տե՛ս սույն աշխ., էջ 359-ում:

ԵՐԻՑՈՒՇԵՆ


Իգաձորից 2 կմ հյուսիս-արևելք՝ Գորտագարակ լճից սկիզբ առնող վտակի աջ կողմում է գտնվում ևս մեկ պատմական բնակավայր, որի մասին գրավոր աղբյուրներում միակ հիշատակությունը 1763 թ.-ից է¹:

ԺԹ դարի վերջերին կամ Ի դարասկզբին այստեղ հանգրվան են գտել խաչնարած մահմեդական այրումները, որոնք 1911 թ. կազմում էին միայն 3 տուն²: Վերջիններս թարգմանել էին մաս պատմական բնակավայրի անունը: Համենայն դեպս, այն այդպես է արձանագրել 1885 թ.³:

Ժամանակի ընթացքում, ճիշտ է, եկվորներն անհետացրել են հայոց գերեզմանոցը, սակայն կիսավեր դրությամբ դեռևս պահպանվում է գյուղամիջի (N 40°12'34.99", E 046°17'45.51", ծ. մ. 1565 մ) ԺԷ դարի կառույց միանավ եկեղեցին (արտաքին չափերն են՝ 14,2 x 7,6 մ)⁴:

Վերջինս երկթեք ծածկի տակ առնված թաղակապ տանիքով բազիլիկ է: Կառույցի երկայնական որմերը հզորացված են որմնակամարաշարերով, որոնց վրա են հանգչում տանիքը պահող սրբատաշ թաղակիր զույգ կամարները:

Խորանի երկու կողմերում առկա է չափերով տարբեր, ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Հյուսիսային որմում՝ իր ավանդական տեղում է մկրտարանի խորշը, սակայն այստեղ



ԵՐԻՑՈՒՇԵՆ. Եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

խորշերը երկուսն են: Ծինանյութի գերակշիռ մասն անմշակ քարն է, սակայն, կառուցողական առավել պատասխանատու դրվագները, ինչպես, օրինակ, թաղակիր կամարները, իրականացված են սրբատաշ քարով (մաս արևելյան ճակատից բացված լուսամուտի արտաքին շրջանակը): Որմերը ներքուստ պատված են եղել սվաղի շերտով (այժմ միայն առանձին հատվածներ են պահպանվել): Որմերում ազուցված են ինչպես բեկորված, այնպես էլ ամբողջական մի քանի խաչքարեր: Դրանցից երկուսը գեղաքանդակ, մեծաչափ և ոճական ընդհանրություններ ունեցող խաչքարեր են՝ տեղադրված ներսում՝ հորիզոնական դիրքով հյուսիսային և հարավային որմերի մեջ՝ ավանդատների մուտքերի մոտ: Հյուսիսային պատի մեջ, ինչպես մաս նրա մոտ՝ որմնասյան հարավահայաց երեսին ազուցված խաչքարերն արձանագիր են և, բարեբախտաբար, մաս թվագրված, իսկ հարավային որմում ազուցված գեղաքանդակ խաչքարը (չափերն են՝ 200 x 90 սմ) ուշագրավ է հատկապես հորինվածքի

1 Ջամբո, էջ 283:

2 Տեր-Մովսիսեան Մ., նշվ. հոդվ., «Ազգագրական հանդես», գիրք XXV, 1913, էջ 76: Նաև նույնի՝ նշվ. աշխ., էջ 93:


3 Հայկունի, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1885, № 80, 13 հոկտ., էջ 3: Տես նաև նույնի՝ նշվ. աշխ., էջ 74:

4 Երիցուշենի եկեղեցուն առաջին անգամ եղել են ֆիզիկոս Վլադիմիր Հարությունյանի առաջնորդությամբ 1987 թ.:



ԵՐԻՑՈՒՇԵՆ. Եկեղեցին հարավից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1987 և 1994 թթ.)

ԵՐԻՑՈՒՇԵՆ. Եկեղեցին հարավից և հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԵՐԻՑՈՒՇԵՆ. Եկեղեցու կտրվածքները դեպի հյուսիս և արևելք (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

ստորին մասում առկա զինավառ հեծյալի պատկերաքանդակով:

Ըստ ժամանակագրության՝ հինը որմնասյան մեջ ագուցված խաչքարն է (68 x 46 սմ): Այն ունի պարզ լուծումներ: Ոճավորված կենաց ծառից սկիզբ առնող խաչի վերին թևի երկու կողմե-

րում առկա է մեկական ողկույզ, իսկ ստորին թևի երկու կողմե-րում՝ հորիզոնական խաչաթևերի տակ, միատող փորագրված է.

Թի Ուե (1196):
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 44:





ԵՐԻՑՈՒՇԵՆ. Եկեղեցու մերթիմ տեսքը դեպի արևելք, արևմուտք, հարավ և հյուսիս, մերթիմ ծավալները դեպի հյուսիս-արևելք և թաղակապ տանիքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Երկրորդ արձանագիր խաչքարը (240 x 120 սմ), որը նույնպես ագուցված է եկեղեցու հյուսիսային որմնի մեջ՝ մկրտարանից ցած, ունի բավականին ուշագրավ լուծում: Նրա ստորին մասում առկա են հյուսածո երկրաչափական նախշերով իրար կողք քանդակված զույգ վարդյակներ, որոնցից սկիզբ են առնում զարդագոտիներով միմյանցից բաժանված գեղաքանդակ զույգ խաչերը: Վերջիններիս թևերի շուրջը խաղողի ողկույզներ և այլ խորհրդանշական քանդակներ են: Բազմատող արձանագրությունը փորագրված է խաչքարի վերնամասում (4 տող) և ստորին հատվածում (5 կարճ տող)։

Խաչքար. ագուցված է եկեղեցու հյուսիսային որմնի մեջ, 9 տող.
Թ(վին) Ո[ՀԱ] (1222) [եր], | ես՝ Առաստ, կանգնեցի | զխաչս

ինձ եւ մար իմոյ Ա... |միկա, ազնականութիւն Անունայ | եւ Յա/կան/այ, յխաղալթս իշեցեք զգործողս:
Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 44:

Հին գյուղատեղիի հետքեր են նշմարվում նաև Երիցուշենից շուրջ 5 կմ հյուսիս՝ Գորտագարակ լճի հարավային և արևմտյան ափերին: Ի դեպ, հավանական է, որ հենց այս է Գորտագարակ կամ Ուղտապան գյուղատեղին, որի մասին հիշատակել է Սարգիս Ջալալյանը. «Բարձրացեալ մեր անտի (իմա՝ Չանկի, Չափնի - Ս.Կ.) ելաք ի բազուկ մեծի լերինն Մռաայ ի տեղին, որ ի հնումն կոչիր Գորտագարակ, իսկ այժմ անուանի Ուղտապան: Աւերակս այս անկանի ի վերնակողմն Դաղի վանից ի մէջ անրապինդ լերանց Մռաայ, զոր տաճիկք անուանեն Գանլի-



ԵՐԻՅՈՒՆԵՆ. Եկեղեցու որմերում ազուցված խաչքարեր, ԺԲ-ԺԳ դդ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԵՐԻՑՈՒՇԵՆ. Եկեղեցու որմերում ագուցված խաչքարեր և խաչքարերի բեկորներ, ԺԲ-ԺԳ դդ. (լուս.:Ս. Կարապետյանի, 2018 թ.)

գեօլ, յաղագս սպանութեան իրիք եղելոյ մերձ նմին լճի և արկանելոյ դիտյն ի նոյն լիճ: Վայրս այս երբեմն ապաստարան էր բազմաց քրիստոնէից յերեսաց կատաղի կովկասականաց...»⁵:

40°10'57.87", E 046°09'32.25", ծ. մ. 1275 մ), որից նշմարվում են միայն մեկ որմի մնացորդը, վերջինիս պատկանած սրբատաշ քարերը, ինչպես նաև ոչնչացված գերեզմանոցից փրկված առանձին խաչքարեր:

ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ

Լև գետի՝ Տրտուի հետ միախառնման տեղից վերջինիս հովտով 3 կմ վեր՝ գտնվում է պատմական անունը մոռացության մատնված ևս հին հայոց մի գյուղ, որտեղ հաստատված եկվորներն այն կոչում էին *Նաղիրխանլը*:

Շրջանի ազատագրումից հետո գյուղը վերստին բնակեցվել է բնիկներով և ի պատիվ հյուսիսարցախյան փառապանծ Գետաշենի՝ վերանվանվել Նոր Գետաշեն:

2015 թ. գյուղի բնակչության թվաքանակը կազմում էր 49 տուն՝ 267 շունչ¹:

2001 թ.-ից գործում է Սպահանի հայոց թեմական խորհրդի միջոցներով կառուցված Վ. Նազարյանի անվան միջնակարգ դպրոցը, որը 2004/5 ուստարում ուներ 34 սան և 14 ուսուցիչ: Հիմնովին նորոգվել է 2015 թ.²:

Անցած մի քանի տարիների ընթացքում գյուղաբնակները պարբերաբար հայտնաբերում են բնակավայրի միջնադարյան պատմությանն առնչվող նյութական մշակույթի զանազան հիշատակներ: Մասնավորապես ի հայտ է եկել եկեղեցատեղին (N



ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ. Եկեղեցատեղիին հարող թաղամասը (լուս.:Ս. Կարապետյանի, 2015 թ.)

5 Ջալալեանց Մ., նշվ. աշխ., էջ 221:

1 Գանիրամյան Հ., նշվ. աշխ., էջ 283:

2 Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 609-610:



ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ. Եկեղեցուց մնացած կրաշաղախ որմն ու կառույցին պատկանած սրբատաշ և կոփածո քարերից մի քանիսը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Ինչպես երևում է, գյուղի երբեմնի հայոց գերեզմանոցը ժամանակին տարածված է եղել եկեղեցու անմիջական հարևանությամբ: Հնավայրն ավերվել, իսկ տարածքն էլ կառուցապատվել է խորհրդային տարիներին: Վերաբնակիչ հայերն այստեղ գտել են ամբողջական պահպանված գեղաքանդակ և արձանագիր մի խաչքար:

Խաչքար. Ավագ Սարգսյանի տնամերձ հողամասում, 6 տող.
*Թամարին | ա(ստուա)ծ ողորմի: | Ես՝ Սարգ/իս, ու իմ որ/դիքս
 կանգ(ն)եցաք զխաչս:*
 Հրատ. առաջին անգամ:
 Մանոթ. ժամանակը՝ ԺԾ-ԺԶ դդ.:



ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ. Խաչքար՝ գտնված Ավագ Սարգսյանի տնամերձ հողամասում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Հնավայրի տարածքից գտնված մեկ այլ խաչքար էլ պահպանության նպատակով փոխադրվել է գյուղամեջ: Վերջինս ոճական և գեղարվեստական լուծումներով բնորոշ է ԺԲ-ԺԳ դարերին:



ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ. Խաչքար, ԺԲ-ԺԳ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

ՆՈՐ ԲՐԱԶՈՒՐ

Նոր Գետաշենից Տրսուի հոսանքն ի վեր ևս 3,5 կմ հեռու՝ դարձյալ գետի ձախ (հարավահայաց) ափին է գտնվում գավառի հայոց առնվազն միջնադարից գոյություն ունեցած, սակայն հնամենի բուն անունը մոռացված պատմական բնակավայրերից ևս մեկը: Վերջինս խորհրդային տարիներին նստակեցության անցած խաչնարած եկվորներից ստացել էր պատահական *Գլըչլը* անունը: Ներկայումս, ի պատիվ հյուսիսարցախյան 1988 թ.-ից հայաթափ Բրաջուր գյուղի, պաշտոնապես վերանվանվել է Նոր Բրաջուր:


2015 թ. գյուղում բնակվում էր 51 տուն՝ 239 շունչ¹:

2000 թ.-ից գործող Սևակ-Սևանա Էրումյանի անվան միջնակարգ դպրոցը 2002/3 ուստարում ուներ 48, իսկ 2015/6 ուստարում՝ 54 սան և 24 ուսուցիչ²:

Խորհրդային տարիներին աղբբեջանցի անունը ստացած նախկին խաչնարած մահմեդական ցեղերը նախքան շրջանի ազատագրումն արդեն հասցրել էին անհետացնել բնիկներից ավանդված նյութական մշակույթի հուշարձանները, ի մասնավորի՝ հայոց գերեզմանոցն ու եկեղեցին: Սակայն, դրանով հանդերձ, գյուղի ներկայիս բնակիչները պարբերաբար հայտնաբերում և ակնաձայն վերաբերմունքով մեկտեղում են երբեմնի հայոց գերեզմանոցի մնացորդները: Վերջիններիս թվում խիստ հետաքրքրական և արժեքավոր է ամբողջական պահպանված գե-

1 *Վահրամանյան Հ.*, նշվ. աշխ, էջ 282:

2 *Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.*, նշվ. աշխ., հ. 3, էջ 610:



ԵՍԽՆ
 ԸԷԿՈՐԻ
 ԳԷԷ
 ՉԼԱՆ Է
 ՍԷԲՈՐ
 Է ԼՈՍՍԷՂ
 ԶՈՒՐԻՆՈ
 ԵՄՄԻՐՅԱ
 ԲՆՅՈՒՆՉՁՆ
 ԷՆԷԿՈՐԻ
 ԴՈՒՆԿԿԱ
 ԳՈՒՐԵՅԱ
 ԿԷՃՆԱՆ
 ԿՄՈՐ
 Ի ԲՈՍՄՈՂ
 ԵՄԿԷՂ
 ԷՄՄՈՐ
 ԼԾՍ:
 ԵՈՂՄ.
 ԿԱԶՈՂ
 ԻՍ



ՆՈՐ ԲՐԱՏՈՒՐ. խաչքար, 1197 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2015 թթ.)

դաքանդակ մի խաչքար (N 40°09'43.76", E 046°08'04.40", ծ. մ. 1260 մ): Այն ուշագրավ է ոչ միայն արձանագրության սակավադեպ բովանդակությամբ, այլև գրչության ձեռագրային առանձնահատկություններով:

Այստեղ տեղին է նշել, որ սույն խաչքարի կողին առկա արձանագրության գրչաձևը հարևան է նման է Գաղի վանքում գտնվող 1182 թ. կերտված Հասան Վախտանգյանի հանրահայտ խաչքարի հյուսիսային կողի պատգամ-արձանագրությանը: Մրանով կարելի է ասել՝ բացահայտվում է այն, որ, ի դեմս գրչագրության «ձեռագրային» խնդրո առարկա տեսակի, փաստորեն մենք գործ ունենք զարգացած միջնադարում առնվազն Արցախում տարածում գտած արձանագրությունների փորագրման ձեռագրային տարբերակի հետ: Այն, ի դեպ, կիրառվել է նաև ուշ միջնադարում (համեմատել Կուսանաց վանքի ածխագիր հիշատակագրությունների հետ):

Խաչքար. դիմալին մասում՝ ստորին խաչաթևի երկու կողմերում և հարավային նեղ կողին, ընդամենը 23 տող.

Ի թվիս ՈՒՆՁ (1197), || ես՝ Իւա/նէ, կան/գնե[ցի] | զխաչ/ս ի բար/եխոս եղ/բար իմոյ Վարհա/մայ, ով զմ/եզ կրոնա/վորեալ կա/տարեցա/վ ի ճանա/կաւիր | յԵրո(ւ)սաղ/եմի, յիշ/եցայք | ի Զ(ր)իստո/ս: | Ա(ստուա)ծ ողո(ր)մ[ի] | կազ(մ)ող[ի]ն:

Հրատ. առաջին անգամ:

Սույն խաչքարից 300 մ արևմուտք՝ ճամփեզրին, գյուղաբնակները ժողովել են ևս մի քանի խաչքարեր: Մրանց մեջ արձանագիր է միայն մեկը, սակայն բավականաչափ եղծված լինելու պատճառով չկարողացանք վերծանել:



ՆՈՐ ԲՐԱՏՈՒՐ. խաչքարեր, ԺԲ-ԺԳ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Եվս մեկ խաչքար էլ կանգնեցվել է խաչքարերի վերոնշյալ խմբից 0,5 կմ արևմուտք՝ դարձյալ ճամփեզրին:

Բազմաթիվ գեղաքանդակ և արձանագիր խաչքարեր առկա են նաև Նոր Բրաջուր և Նոր Վերիշեն գյուղերի միջանկյալ հատվածում գտնվող հին գյուղատեղիում (N 40°09'21.99", E 046°06'30.44", ծ. մ. 1353 մ), որի գերեզմանոցն ավերել էին այդ վայրում խորհրդային տարիներին հաստատված «աղբբեջանցիները» (հայտնի էր *Քենդերի* անունով), որոնք գերեզմանական բոլոր հուշարձանները մասնատել և յուրացրել էին որպես շինանյութ: Վերջին տարիներին նորվերիշենաբնակ բանանցեցի Մարտիրոս Չալոմյանի ջանքերով բեկորների մեծ մասը դուրս է բերվել զանազան շինությունների որմերից և խմբավորվել ըստ միավորների:



ՆՈՐ ԲՐԱՋՈՒՐ. շինանյութի վերանվան խաչքարեր Քենդերի հորջորջված գյուղատեղիում, ԺԳ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)



ՆՈՐ ԲՐԱՋՈՒՐ. շինանյութի վերածված խաչքարեր Քենդեի հորջորջված գյուղատեղիում, ԺԳ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)



ՆՈՐ ԲՐԱՋՈՒՐ. շինանյութի վերածված խաչքարերի արձանագիր հատվածները, ԺԳ դար (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2019 թթ.)

Նրանցից մի քանիսը հատկապես նեղ կողերին կրում էին հատվածական պահպանվածության պատճառով թերի բովանդակությամբ արձանագրություններ: Ահա դրանք.

- ա Միջանկյալ հատվածը բացակա երկու բեկորներին.
...[կ]/ակնե[ցաք զ]խաչ[ե]րս Թո[րոս][ի]ն ու | Վաս[ակին]... // ...[Գ]/րիգո[ր]ա... | ...:
 - բ ...[ք] երկիրպագե[ք, յաղ]աբս իշեցեք:
գ ՈՂԹ (1230), | ես՝ Շեր/անիկ, | կանգնեցի զխ[աչս] ...:
 - դ ...զխաչս Սարգիսսա [ե] | հոգ[ո ինո]...:
 - ե ... | ... | երկիրպագանեք յիշեցեք):
- Հրատ. առաջին անգամ:

ՆՈՐ ՎԵՐԻՇԵՆ

Անանուն պատմական գյուղատեղիի ավերված գերեզմանոցից Տրտուի հունն ի վեր ևս 2 կմ՝ գետի գույգ ափերին, տարածված է Նոր Վերիշեն գյուղը, որը խորհրդային տարիներին ստացել էր Չայքենդ անունը: Ակներևաբար սա ևս առնվազն միջնադարում գավառի ծաղկուն բնակավայրերից մեկն էր: Թե՛ գյուղում և թե՛ նրա մերձակայքում առկա են բազմաթիվ հնավայրեր, հատկապես՝ գերեզմանոցների մնացորդներ:

- 2015 թ. գյուղն ուներ 56 ընտանիք՝ 267 շունչ¹:
- 2002 թ. հիմնադրված միջնակարգ դպրոցը կառուցվել է վերիշենցի բարերարներ Շամիր և Գևորգ Ջլավյանների աջակցու-

թյամբ և կրում է նրանց հոր՝ Ջալալ Ջլավյանի անունը: 2015 թ. ուներ 60 սան և 17 ուսուցիչ²:



Նոր Վերիշենի առաջին վերաբնակիչ, բազմաշնորհ վարպետ-շինարար բանանցեցի Մարտիրոս Չալումյանը մեծ աշխատանք է կատարել գյուղի տարածքից պարբերաբար հայտնաբերվող հայոց հիշատակները կորստից փրկելու ուղղությամբ: Սկսած նրա տան բակից մինչև գյուղամերձ հնավայրերը՝ ամենուր կարելի է նկատել նախնյաց հիշատակների նկատմամբ ակնածալից վերաբերմունքով մաքրված, շտկված, կանգնեցված կամ էլ ավելի ապահով վայրեր փոխադրված բեկորներ, որոնք, որպես կանոն, շրջանի նախկին բնակիչների վայրերի կամքով վեր էին անվել շինանյութի:

Ի թիվս ճարտարապետական անհայտ շինություններին պատկանող բեկորների՝ Մ. Չալումյանի տան բակում առկա են հետևյալները.

- ա Խաչքարի բեկոր. թերի 3 սող.
... (Գր)իգոր եւ ... | [կանգնե]ցաք զխաչս ... | ...այ յիշեցեք ի ք(րիստո)ս:
 - բ Խաչքարի բեկոր. թերի 4 սող.
... | ...զխս զԳո... | ... եւ զՀ... | ...յաղաւ(թս) ...:
- Հրատ. առաջին անգամ:
- Դպրոցի բակում.
Խաչքարի բեկոր. թերի 2 սող.
Թո[ւ(ի)ն Ու]լ[Է (1198) էր]:
Հրատ. առաջին անգամ:

¹ Գաեիւրանյան Հ., նշվ. աշխ., էջ 280:

² Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 611:



ՆՈՐ ՎԵՐԻՇԵՆ. արձանագիր բեկորներ, ԺԲ-ԺԳ դդ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2019 թթ.)



ՆՈՐ ՎԵՐԻՇԵՆ. եռատված խաչքար, ԺԳ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Գյուղամիջույն որպես շինանյութ յուրացված տապանաքարին.

Տապանաքարի բեկոր. բերի 4 տող.

...n... / ...h... յ/[աղա]թս յիշ/եցեք:

Հրատ. առաջին անգամ:

Նոր Վերիշենից 0,7 կմ հյուսիս՝ դեպի Եղցի բարձրացող ձորակում, երկու տեղ առկա են հին գերեզմանոցների մնացորդներ³:

Առաջինում (N 40°09'42.56", E 046°05'10.49", ծ. մ. 1390 մ) առկա է եռատված մի խաչքար՝ հարդարված մեծ ու փոքր ութ խաչապատկերներով:

Այս վայրից ևս 1,1 կմ հյուսիս-արևմուտք՝ դարձյալ ձորակի աջ կողմում, մեկ այլ գերեզմանոցի հետքեր են (N 40°09'22.49", E 046°04'32.95", ծ. մ. 1486 մ): Տեղում պահպանված տեղահան և կտորատված երեք խաչքարերն էլ կարելի է թվագրել ԺԲ-ԺԳ



ՆՈՐ ՎԵՐԻՇԵՆ. խաչքարեր Եղցի տանող ճանապարհին, ԺԲ-ԺԳ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

դարերով: Խաչքարերի մոտ մատուռանման մի շինության մնացորդներ են:

Նոր Վերիշենից 1,4 կմ հյուսիս-արևմուտք՝ շրջապատի նկատմամբ փոքր-ինչ առանձնացած ժայռագագաթ բարձրության վրա (N 40°09'22.98", E 046°04'29.74", ծ. մ. 1665 մ, ըստ խորհրդային ռազմական քարտեզի՝ 1711 մ), կանգուն է ոճական

³ Հնավայրեր առաջնորդելու համար շնորհակալություն եմ հայտնում Մարտիրոս Չալումյանի որդուն՝ Մաթևոսին:



ՆՈՐ ՎԵՐԻՆՇԵՆ. մենավոր խաչքար, ԺԳ-ԺԴ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

և գեղարվեստական առանձնահատկություններով ԺԳ-ԺԴ դարերին բնորոշ, վերնամասից կտրված անարձանագիր մի խաչքար:

ԵՂՑԻ

Գտնվում է Նոր Վերիշենից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ ձորակի միջնահովտի ձախ կողմում:


Պատմական անունը մոռացության է մատնվել: ԺԹ դարավերջին կամ Ի դարասկզբին այստեղ հաստատված խաչնարածները, նկատի ունենալով կանգուն եկեղեցու գոյությունը, գյուղը պարզապես կոչել են *Քիլիսե*, որ քարգմանաբար նշանակում է եկեղեցի:

Շրջանի ազատագրումից հետո բնակավայրը հետ քարգմանությամբ ստացել է Եղցի անունը (եկեղեցի բառի բարբառային արտասանությունն է)¹:

Նյութական մշակույթի պահպանված հուշարձանները վկայում են, որ դարեդար հայաբնակ այս գյուղում կյանքն առանձնապես աշխույժ է եղել զարգացած և ուշ միջնադարում:


Ցարդ կանգուն եկեղեցին ԺԷ դարի կառույց է (N 40°10'11.97", E 046°04'12.70", ծ. մ. 1618 մ), սակայն նրա որմներում (սկսած մուտքից) առատապես ազուցված ԺԲ-ԺԳ դարերին վերաբերող խաչքարերն ինքնին վկայում են նշյալ ժամանակաշրջանում գյուղի մարդաշատության և խաչքարերով ընդարձակ գերեզմանոցի գոյության մասին, որի մի մասը ցավալիորեն ավերել է տզետ հայ կղերականությունը, իսկ մնացյալն էլ՝ ԺԹ դարավերջից այստեղ հաստատված խաչնարածները (երկու դեպքում էլ խաչքարերը յուրացվել են որպես շինանյութ):

Եկեղեցին միանավ թաղածածկ բազիլիկ է: Երկթեք ծածկի տակ առնված թաղը կիսաբոլորակ է: Այն հենված է երկու զույգ հաստ որմնասյուների վրա: Արևելյան մասում կիսաբոլորակ եզրագծով խորանի երկու կողմերում ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն է: Հյուսիսային որմի մեջ՝ իր ավանդական տեղում է մկրտության ավազանի խորշը: Միակ մուտքը բաց-




ԵՂՑԻ. եկեղեցին (ԺԷ դար) հարավից, հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.), հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

¹ Մեր կարծիքով սա մի պարզունակ, ավելին՝ անճարակ լուծում է, քանի որ ստեղծվել է թուրքի գնահատմամբ առավել աչքի ընկնող կառույցին տրված հասարակ անվան թարգմանությունից: Վերջապես շատ գյուղերում եկեղեցի կամ վանք է եղել, որոնք օտարներից հորջորջվել են *Քիլիսե* կամ *Վենք*, որը բոլորովին չի նշանակում, թե հին անունները մոռացված գյուղերը հարկ է կոչել Եկեղեցի կամ Վանք: Տվյալ դեպքում, ի դեմս այս գյուղում Գրիգոր դարբնի՝ 1246 թ. կանգնեցրած խաչքարի, հայտնի էր, որ այստեղ մաս դարբնոց է եղել, ուստի ի պատիվ և ի հիշատակ դարբնի Գրիգորի՝ կարելի էր գյուղը կոչել Դարբնոց, Դարբնատուն կամ Երկաթավորք (արցախյան բարբառով՝ Արկաթալի), ինչպես որ հաճախ կոչվել են արհեստի այդ բնագավառում աչքի ընկած մեր գյուղերը:



0 1 2 3 4 5 ս



0 1 2 3 ս

ԵՂՅԻ. Եկեղեցու մուտքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.), կտրվածքները դեպի հարավ և արևելք (չափ.՝ Ա. Քակոբյանի, 2018 թ.)



ԵՂՏԻ. Եկեղեցու (ժԷ դար) ներքին տեսքը դեպի արևելք, արևմուտք, հարավ և հյուսիս, հատվածներ արևմտյան որմից և քաղակապ առաստաղից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ված է հարավային ճակատի արևմտյան հատվածից: Լուսավորությունն իրականացվել է դեպի ներս լայնացող 6 լուսամուտներով (3-ը՝ արևելյան, 2-ը՝ հարավային և 1-ը՝ արևմտյան ճակատներում): Կառուցվել է անմշակ քարով, կրաշաղախով, ներքուստ սվաղված է: Արտաքին չափերն են՝ 14,15 x 7,80 մ:

Հարդարանքի տեսանկյունից ուշագրավ են մուտքին իբրև եզրաքարեր հարմարեցված երեք խաչքարերը (բարավոր դարձած խաչքարը կտրվածքներով ծառայեցվել է այդ նպատակին):

Կողային անկյունաքարերի դեր կատարած զույգ խաչքարերին պահպանվել են արձանագրություններ, ընդ որում, մեկի պատվանդանին՝ երկտող, իսկ մյուսի ստորին մասում՝ հիմնախաչի տակ՝ քառատող:

Խաչքար. ագուցված եկեղեցու մուտքի մեջ.

Ես՝ Հասան սակ(ր)ուոր, կան(զն)եցի ս(ուր)ք նշ)անս բարեխասս ի(ն)ձ ես իմ ն(ն)ջեցե(լոցն):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 48:

Ծանոթ. սակրավոր-ի մեզ հայտնի հնագույն հիշատակությունն է:

Խաչքար. ագուցված մույն մուտքի մեջ.

Ի քվիս հայոց ՈՂԵ (1246) էր, ես՝ Գրիգոր դարբոյն, կա(ն)գ-նեցի զխաչս | ինձ [եւ ա]մու[սնոյ ի]մոյ:

Հրատ. **Տեր-Մովսիսեան Մ.**, նշվ. հոդվ., «Ազգագրական հանդես», 1913, գիրք XXV, էջ 80: Նաև՝ մույնի նշվ. աշխ., էջ 99: **Սաղոմյան Մ.**, Համառոտագրությունը հայ վիճագրության մեջ, «ԼՀԳ», 1978, № 4, էջ 70: Դիվան, V, էջ 226: ՀՄՀԽԱԲԸ, էջ 48:



ԵՂՑԻ. շինանյութի վերածված խաչքարեր եկեղեցու որմերում, մերձակա տների որմերից դուրս բերված խաչքարերի բեկորներ (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Եկեղեցու² հարավային կողմում՝ աճած՝ ավերակ, երբեմնի գերեզմանոցի տարածքում, պահպանվել է մի տապանաքար՝ անկանոն եզրագծով, սալաձև, կիսամշակ՝ հարթեցված երեսին եղծված յոթտողանի արձանագրությամբ: Երբեմնի գերեզմանոցից են հափշտակվել և բեկորելով շինանյութի վերածել ԺԲ-ԺԴ

2 Ի դեպ, այս եկեղեցու և խաչքարերի նկարագրությամբ «Աղվանական եկեղեցի Քյարբաջարում» վերնագրով Բաքվում մի հոդված է տպագրել ուն Թոֆիկ Աբդուլլան («Էլմ վե հայաթ» /«Գիտություն և կյանք»/, 1987, № 3, էջ 20-21), որի միակ նպատակն է եղել ընթերցողին համոզել, որ եկեղեցին իբր կառուցել են ներկայիս ադրբեջանցիների քրիստոնյա նախնիները՝ ալբանները (աղվանները): Նույն կարծիքն է հայտնել նաև ուն Իսմայիլով (İsmayilov P., նշվ. աշխ., էջ 70-71):

դարերին վերաբերող ևս մի քանի խաչքարեր: Այստեղ առկա է նաև, ըստ ամենայնի, մեծաչափ մի խաչքարի պատվանդան:

ԵՂՑԻ. խաչքարի պատվանդան (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)





ԵՂՑԻ. Մախնյաց հիշատակներին Մախամձախնդի արվեստագետ-շինարար Սարտիրոս Զալումյանը մատուցույց է անում «աղբբեջանցիների» տների որմերից իր ջանքերով դուրս բերած շինանյութի վերածած խաչքարերի բեկորները և նվիրատվական խաչաքանդակներ եկեղեցամերձ ժայռերին (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

ՆՈՐ ՄԱՆԱՇԻԳ

Նոր Վերիշենից 3 կմ հարավ-արևելք գետեղված է, ի պատիվ բռնագավթված հայրենի Մանաշիդ գյուղի, Նոր Մանաշիդ վերանվանված պատմական բնակավայրը: Գյուղի նախկին *Մընրխքիլիսե* անունը, որ թարգմանաբար նշանակում է կտրած եկեղեցի, ինքնին հուշում է հին հայկական այս բնակավայրում եկեղեցու գոյության մասին, որից, սակայն, ներկայումս ոչինչ հայտնի չէ:

2015 թ. գյուղն ուներ 22 տուն՝ 97 շունչ¹:

Նոր Մանաշիդի Հ. Վարդանյանի անվան դպրոցը հիմնադրվել է 2004 թ.: 2015 թ. ուներ 32 աշակերտ և 14 ուսուցիչ²:

ՔԱՐՎԱՃԱՌ

Գտնվում է խոր ձորով հոսող Տրտու գետի ձախակողմյան բարձրադիր սարահարթին: Վերջինս գետափից բարձր է համարյա 180 մ (Քարվաճառի՝ ծ. մ. միջին բարձրությունը 1600 մ է):

Հայ մատենագրության մեջ (որպես գրչօջախ) առաջին անգամ հիշվում է 1402 թ.: Այստեղ Թումա Մյունեցին ստեղծել է «Մեկնութիւն Աւետարանին Մատթեոսի, Գրիգորի Տաթևացոյ» աշխատությունը. «...ի հռչակատր երկիրս Ծար, ի գեղս Քարվաճառ, ընդ հովանեաւ սրբոցս որ ի սմայ...»¹: Այդ ձեռագրում Քարվաճառը նշված է Քարվաճառ ձևով: Մինչդեռ 1661 թվականի մի վավերագրում, ի թիվս Հաճավ, Բորու, Գումեր և Չվար գյուղերի, Քարվաճառը հիշված է առանց *ա* հոդակապի²:

Քարվաճառ տեղանվան ստուգաբանությունն ուսումնասիրած Հ. Կարագոյանը միանգամայն տեղին նկատել է, որ Քարվաճառը քար վաճառելու տեղով բացատրելն ավելի նման է ժողովրդական ստուգաբանության: Գիտնականը տեղանվան հնարավոր ծագման մասին նշել է. «Հին Արևելքում տարածված քար («գաղութ», «ավան») բառից, որը հանդիպում է Միջագետքում և նրա շրջակայքում: Այսպես, օրինակ, Քար-Դունիաշ (Քաբելոնի քասիտերեն անվանումը), Քար-Բաշշի (քասիական բնակավայր Մեդիայում), Քար-Նինիլի (քաղաք Ասորեստանում), Քար-Թուքուրի-Նինուլթա (նույնպես Ասորեստանում), Քար-Շամաշնասիր (բնակավայր Ասորեստանում), Քար-Նուրի (նույնպես Ասորեստանում), Քար-Շուրմանուաշաբեդ (Թիլ-Բարսիլի քաղաքի վերանվանված ձևը ասորերենում), Քար-Ռեիգալի (Մեդիայի Քիշասա քաղաքի ասորերեն անվանումը), Քար-Միպուր (ամրոց և մարզ Մեծ Չար գետի ավազանում) և այլն»³:

Վերոնշյալով հանդերձ՝ կարծում ենք, որ Քարվաճառ տեղանվան ձևավորումն ունի միանգամայն այլ բովանդակություն: Մասնավորապես Հայկական լեռնաշխարհում հայտնի են բազմաթիվ բերդեր, որոնց անվան բաղկացուցիչ մասն է քար բաղադրիչը, իսկ վերջինս բոլոր այդ դեպքերում փոխարինում է (համարժեք է) բերդ բառին, ըստ որում, քար կամ բերդ (ամրոց) բառերը նույնիմաստ են: Իբրև օրինակ՝ կարող ենք նշել Քարիերձը (բերդ Չակամում), Քար Ամյուկ («Քար Ամկոյ») և Քար Մանակերտ բերդերը Վասպուրականում, Քարն Սարվանդին և Դեղնքարը (Կիլիկիայում) և այլն, ուստի Քարվաճառ տեղանվան (ի դեպ, նրա տեղանքն ունի միջնադարյան բերդերին բնո-



ՔԱՐՎԱՃԱՌ. բնակավայրն արևելքից երիզող ժայռապարը և տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

րոշ բոլոր ամենաէական հատկանիշները՝ դժվարամատչելիություն, ջրի առկայություն, կարևոր անցքի վրա՝ ձոր-ճանապարհ, հսկողություն) ծագումը, մեր համոզմամբ, պայմանավորված է եղել հատկապես նրա՝ բերդ լինելու հանգամանքով:

Ամենայն հավանականությամբ, Քարվաճառ գյուղը շարունակել է հայաբնակ մնալ մինչև 1730-ական թվականները և ամայացել գավառի շատ գյուղերի հետ միաժամանակ:

ԺԹ դարի կեսերին այստեղ են հաստատվում խաշնարած քրդերը, որոնք, փոքր-ինչ աղավաղելով կամ, ավելի ճիշտ, իրենց լեզվահնչյունական յուրահատկություններին հարմարեցնելով, Քարվաճառ անվանումը սկսում են կոչել Քյարվաջար կամ Քյալ-բաջար:

Ուշագրավ է, որ 1873 թ. մի գրության մեջ բնակավայրը դարձյալ հիշվում է իր անվան անաղարտ տարբերակով. «Վանքապատկան Թութխու և Քարվաճառ կալուածների մասին մենք հոգով չափ աշխատել ենք. որ ինչպես յառաջաց եղեալ է, էլ էնպես լինի, որ վանքն չի գրկվի իւրեան սեպիականութիւնիցն...»⁴:

1930 թ.-ից Քարվաճառ-Քյարբաջարը վերածվում է նորաստեղծ շրջանի կենտրոնի: 1960 թ. քաղաքական նպատակներ հետապնդող Ադրբեյջանի իշխանությունների կողմից անցնան գյուղակ Քյարբաջարը ստանում է քաղաքատիպ ավանի, իսկ 1980 թ.-ից՝ քաղաքի կարգավիճակ⁵: 1960-ականներից սկսած՝ զգալի ներդրումների շնորհիվ արհեստականորեն սկսվում է երբեմնի գյուղակի՝ աննախադեպ ծավալներով ընդարձակումը:

4 ՀԱԳ, ֆ. 468, ց. 2, գ. 73, թ. 1:
5 ԱՍՀ, հ. V, Բաքու, 1981, էջ 334:

1 Գահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 287:

2 Այվանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 611:

3 ԺԵԱ, էջ 24 (ձեռագիր № 3578):

4 ՀԱԳ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4:

5 Կարագոյան Հ., Հակահայկական սեպը և նրա չորս շրջկենտրոնները, «Երկիր», 1994, № 131, էջ 5:



ՔԱՐՎԱՃԱՌ. անհետացված գրչօջախ եկեղեցուց մնացած մկրտարանի ավազանը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Կառուցապատման բուռն աշխատանքներն արտառոց չափեր են ընդունում հատկապես 1980-1992 թթ. ընթացքում: Այդ ժամանակահատվածում Հայաստանը ԼՂԻՄ-ից բաժանող թուրքացված Քարվաճառի շրջանի կենտրոնն ամրացնելու և ընդարձակելու համար Ադրբեջանի կառավարությունը ոչինչ չի խնայել: Այդ ամենի հետևանքով շրջկենտրոնը վերջին 20-25 տարվա մեջ աճել էր 6-7 անգամ թե՛ տարածքով և թե՛ բնակչությամբ⁶:

Շրջանի ազատագրումից հետո Քարվաճառը վերստին բնակեցվեց հայերով: 2015 թ. նրանց թվաքանակը կազմում էր 171 տուն՝ 742 շունչ⁷:

Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1994 թ.: 2015/6 ուստարում ուներ 118 աշակերտ և 26 ուսուցիչ: 2011 թ.-ից դպրոցում գործում է նախադպրոցական խումբ⁸:

Ինչպես Քարվաճառի եկեղեցին, որը գտնվելիս է եղել այնտեղ, որտեղ ավելի ուշ կառուցվել է պատմության թանգարանի շենքը, այնպես էլ հայոց գերեզմանոցն ամբողջովին զոհ են դարձել ադրբեջանական իշխանությունների՝ հայկական յուրաքանչյուր հետքն ամենուր ջնջելու մոլուցքին: Այնուհանդերձ, քաղաքի պատմության թանգարանում մինչև 1993 թ. ապրիլը պահվում էին (անշուշտ, աղվանական պիտակված) մի քանի խաչքարեր, որոնցից մեկը՝ 916 թ.-ից⁹:

Վերջինս կերտված է ալիտակ կրաքարից (չափերն են՝ 28,5 x 19,0 x 4,5 սմ): Թիկունքին ունի վեցտողանոց թվակիր արձանագրություն: Խաչքարը թանգարան է փոխադրվել 1965 թ. նոյեմբերի 4-ին (ցավոք, հնարավոր չեղավ պարզել, թե շրջանի ո՞ր հնավայրից)՝ շուրջ 28 տարի այցելումներին ադրբեջաներեն և ռուսերեն նակագրությամբ ներկայացվելով իբրև «աղվանական խաչդաշ»:

6 **Կարապետյան Ս.**, Ինչպե՞ս էին իրացնում հայկական հողերը (Քարվաճառ քաղաքի օրինակով), «Ազատամարտ», 1994, № 40, հոկտեմբեր, էջ 13:

7 **Ղահրամանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 276:

8 **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.**, նշվ. աշխ., հ. 3, էջ 609:


9 **Կարապետյան Ս.**, Քարվաճառյան խաչքար՝ կանգնեցված 916 թվականին, «Ազգ», 1995, № 2, 11 յունուարի, էջ 6: Տե՛ս նաև նույնի՝ Հնագույն խաչքար Քարվաճառում, «Հայաստանի Հանրապետություն», 1995, № 216, 28 օգոստոսի, էջ 1: Պահպանության նպատակով այս խաչքարը փոխադրվել է Գանձասարի վանք:

Խաչքար. թիկունքին՝ 6 տող, ընդ որում, մինչև 4-րդ տողի կեսը՝ փորագիր, իսկ այնուհետև՝ խազագիր.

ՅԿԵ (916) թրականո/ւթեանս հա- (յոց, որ | եղև աստուած շնահատր, | արա(ս)ցե, յիշեցանէ, | լինէ, որ մին այլ խաչ մ/իւեայն(°) եմ, թէ աստուած կամի:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 53:

Ծանոթ. հարկ է հիշեցնել, որ առ այսօր հայտնի թվակիր ամենահին խաչքարը 866 թ.-ից է (տե՛ս «Հայաստան» պատկերագրող գիրք-ալբոմ, Երևան, 2014, էջ 435), ուստի քարվաճառյան այս խաչքարը նրանից կրտսեր է ընդամենը 50 տարով:



Արձանագրությամբ սալիկ (հրամանագիր). 14 տող.

Կամուի աստուծոյ, | ես՝ Չալալ Գալալս, գիրայ տ/վի Ովանայս իր/իցո զնրայ տու/նն արզան ազ/ատ արարի, վոր | զա(յ)ս խափի դա/տի յա(ստուծոյ) ի անուն աստուծոյ | ի այս տ(է)ր Գիա(ւ)րոց, ուր | սալտի արքիս պարոն/ին հրամանաւն ջեր/ացն արզան ազատ ա/րարաք, որ խափա(ն)է աստուծոյ (դատի):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. խոսքը Խաչենի և Առանի իշխան և Արցախի թագավոր Հասան-Չալալ Ա-ի մասին է (1214-1261): Նրա հրամանով Քարվաճառում ջրի «արզան» կոչվող հարկից ազատվել էր ոմն Հովհաննես երեցը:





ՔԱՐՎԱՃԱՌ. Գովհաննես երեցին ջրի «արզան» հարկից ազատելու մասին պատմող հրամանագիրը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Ադրբեջանի գուռ. գտնվել է Քարվաճառում, սակայն կամայաբար փոխադրվել Ստեփանակերտ.

Կաման աստուծոյ, ես՝ պարոն | Սարգիս, տվի զԽոզենի | կալոյ հողն, Սակո-վիս/տորնայ բակուց հող, | թվիս ՉԿ... (1310-ական թթ.):

Հրատ. առաջին անգամ:





ՔԱՐՎԱՃԱՌ. խաչքար, 916 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1996 թ.)

Խաչքար. իբրև աղվանական «խաչդաշ»՝ պահվում էր Քարվաճառի բանգարանում, ներկայումս փոխադրվել է Դաղի վանք (ցավոք, բուն հնավայրը, որտեղից խորհրդային տարիներին փոխադրվել է Քարվաճառի պատմության բանգարան, հայտնի չէ), արձանագրությունը՝ 6 տող.

Թ(վին) ՉԻԵ (1276), | ես՝ Բարսեղ, ես ամուսնի իմ՝ Գուլակ, կա/նզնեցաք զս(ուր)ք Գիրգորի հոգոյ մեր, որք ե/րկ[իրայ]ագանեք աղ(արքս յիշեցեք):

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր բեկոր (37 x 26 x 13 սմ), ի քիվս մի քանի այլ բեկորների գտնվում է բնակավայրի կենտրոնում՝ մի բնակելի շենքի բակում.

Ս(ուր)ք Պռա/կաւպիոս | [զմեծ տ(է)ր Յոհաննէս շինուող եկեղեցոյս, որդի Դաւիին, եղբայր մեծ իշխանին Հասանայ յաղարս յիշեցեք]:

Հրատ. Շահխաթունեանց Յ., էջ 362: Ջալալեանց Ս., Ա, էջ 206: Բարխուտարեանց Մ., էջ 195: Դիվան, V, էջ 128: ՀՄՀԽԱԲԸ, էջ 54:

Ծանոթ. պարզվում է, որ սույն արձանագրության ծննդավայրը Խաթրավանքն է. ե՛րբ և ո՛ւմ կողմից է սուկ այս բեկորը փոխադրվել՝ մնում է անհայտ:



ՔԱՐՎԱՃԱՌ. խաչքար, 1276 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1994, 2018 թթ.)



ՔԱՐՎԱՃԱՌ. արձանագիր բեկոր (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1996, 2018 թթ.)

Տապանաքար. ի քիվս նույն բակում հավաքված գերեզմանական հուշարձանների բեկորների առկա է անձնական հատվածը պահած արձանագիր և պատկերաքանդակ տապանաքարի բեկոր, 1 տող.

... Պայիճանին ...:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 54:

Քարվաճառի զանազան հատվածներում առկա են գերեզմանական բնույթի այլ հուշարձաններ: Մասնավորապես բնակավայրի արևմտյան բարձրադիր եզրին պահ-



ՔԱՐՎԱՃԱՌ. տապանաքար, ԺԵ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1996 թ.)



ՔԱՐՎԱՃԱՌ. ԺԳ դարի խաչքարեր ա) քաղաքի հյուսիսային ծայրում, բ) Եղիշե Մարկոսյանի տնամերձ հողամասում, գ) մայիկին բանգարանի բակում. հատկանշական է, որ խաչքարը բանգարանում ցուցադրվել է խաչը քերել-անհետացնելուց հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

պանվել են հայոց միջնադարյան գերեզմանոցի յուրացված տարածքից (N 40°06'18.44", E 046°01'54.60", ծ. մ. 1656 մ) բուլդոզերով մի կողմ հրած մի քանի տապանաքարեր:

ԺԳ-ԺԴ դարերին բնորոշ գեղաքանդակ մի խաչքար էլ հայտնաբերվել է Եղիշե Մարկոսյանի հողամասում (N 40°06'44.28", E 046°02'20.48", ծ. մ. 1555 մ):



ՔԱՐՎԱՃԱՌ. հայոց միջնադարյան ոչնչացված գերեզմանոցի փրկված եզակի տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2015 թթ.)



ՔԱՐՎԱՃԱՌ. 1952 թ. հայերեն արձանագրությամբ տապանաքար «աղբբեջանական» գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

Հետաքրքրական է նաև բնակավայրի թուրքական գերեզմանոցը (N 40°06'23.65", E 046°02'13.39", ծ. մ. 1604 մ), որտեղ առկա տապանաքարերը որոշակի ցուցանում են եկվորների նստակեցության անցնելու վաղագույն ժամանակները, որն է՝ ԺԹ դարի կեսերը: Արաբերեն արձանագրություն կրող հնագույն գերեզմանաքարն այստեղ մի ձիատապան էր՝ 1853/54 թթ.-ից:

Ի դեպ, ուշագրավ է, որ այս գերեզմանոցում առկա է նաև 1952 թ. վախճանված մի հայի տապանաքար:

Տապանաքար.

1880, Փաշալու գ. Սուլտանլեզ Հավեդյան Կարապետ Օվանեսի, | 19.4.1952 թ.:


Ծանոթ. Փաշալուն Վայոց ձորի մարզի Չառիբալի գյուղն է, իսկ Սուլտանլեզը՝ նույն մարզի Բարձրունին:

Չիատապան.

.۱۲۷. | مرحوم شاهین | ابن حسن.

Թարգմ. 1270 (1853-1854 թթ.):

Շահին որդի Հասանի:



ՔԱՐՎԱՃԱՌ. ձիատապան 1853/54 թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008, գրչ.՝ Բ. Քորթոյանի, 2018 թ.)


Խոյատապան.

هذا صاحب مرقد | مرحوم المغفور ... | ... | ۱۲۷۷.

Թարգմ. Այս գերեզմանի տերը ներված հանգուցյալ ...: 1277 (1860-1861 թթ.):



ՔԱՐՎԱՃԱՌ. խոյատապան (1860/61 թթ.) և ձիատապան (1869/70 թթ.) մահմեդական գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2015 թթ.)



ՔԱՐՎԱՃԱՌ. գերեզմանաքար (1877 թ.) և ձիատապան (1879/80 թթ.) մահմեդական գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2015 թթ. գրչ.՝ Բ. Քորթոշյանի)

Չիատապան.
 هذا صاحب مرقد مغفور مرحوم قره... | بن كمال... | ... | ۱۲۸۶.
 Թարգմ. Այս գերեզմանի տերը ներված հանգուցյալ Կարա...նն է՝ որդի Քամալի ... : 1286 (1869-1870 թթ.):

Տապանաքար.
 هذا | مرقد... | من | ولد احمد | ۱۲۹۴.
 Թարգմ. Մա է գերեզման Ահմեդի որդի ...նի: 1294 (1877 թ.):

Չիատապան.
 كربلاى الهوردى | بن مشهدي سليمان طا بمسى |
 من جماعت ممالکلو | برجوان بر حزمند بين بو مزار |
 کورنى خاکد یکسن ایلدى | روزگار | ۱۲۹۷.
 Թարգմ. Քարբալայի Ալահվերդի՝ որդի մաշհադի Սիլման Թարմ... Մամաքանլու ցեղից: Երիտասարդ ... այս գերեզման, տեսնողին ... քամին: 1297 (1879-1880 թթ.):

Տապանաքար.
 هذا مرقد... | ... | ۱۳۳۲.
 Թարգմ. Մա է գերեզման ...: 1332 (1913-1914 թթ.):

Դամբարան.
 هذا مرقد مرحوم بهرام بن كريم.
 Թարգմ. Մա է գերեզման ...: 1332 (1913-1914 թթ.):

Խոյտապան.
 على الله.
 Թարգմ. Ալի, Ալլահ (աստված):

Տապանաքար.
 هذا | مرقد مرحوم اسکندر | ولد | مرقلی | ۱۳۶۸.
 Թարգմ. Մա է գերեզման հանգուցյալ Իսքանդարի՝ որդի Մարակլի: 1368 (1948-1949 թթ.):

Դամբարան.
 ۱۳۷۳
 Թարգմ. 1373 (1953-1954 թթ.):
 Ծանոթ. արաբերենից ներկայացված քարզաննությունները՝ Բ. Քորթոշյանի:

Ի դեպ, «աղբրեջանցի» ուսումնասիրողներն այս գերեզմանոցում իբրև ամենից հին արաբերեն տապանագիր վկայել են 1869/1970 թթ.-ից մեկը¹⁰:

Օ՛հ, Ալի, սա Օրուջայի որդի Քերբալայի լուսավոր դամբարանն է ..., փարախկանլու ցեղից 1286 (1869-1870 թթ.):


Հրատ. Нейматова М., Мемориальные памятники Азербайджана (XII-XIX века), Баку, 1981, с. 31.

Մեր հավաքածուն փաստորեն ունի դրանից 16-17 տարի ավելի վաղ նմուշը:

Քարվաճառի արևելյան եզրով ձգվող վիմահերձի մեջ կան մի քանի բնական քարայրեր, որոնց թվում մեկը հնում ակնհայտորեն օգտագործվել է իբրև կացարան-բնակատեղի:

Շրջակայքում պահպանվել են մի քանի գյուղատեղիներ, որոնք ներկայումս հայտնի են անվանումների միայն թուրքական տարբերակներով: Դրանք են *Դարաղշաղ, Դլըչի, Ալուար,*

¹⁰ Nərimanoğlu M., Ağdaban Faciələri, Bakı, 2010, s. 18.



ՔԱՐՎԱՃԱՐ. Երբեմնի քանդարանի բակ փոխադրված ժայռապատկերներ և ձիթհանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2015 թթ., չափ.՝ Ռ. Քորթոշյանի, 2015 թ.)

Օթըշլաղ, Բորմախքինա (արդյո՞ք պատմական Բորուն է), Ելիջա, Թաքդամ, Արմուղլու, Բոյախլի, Ղարախանքինա, Շափլար, Մամեդուշաղի, Թաթլար, Իմամքինասի, Քեյշթաղ կամ Քեշդեկ (հավանաբար պատմական Դաշտակն է) և Ղարաշանլի (վերին, միջին և գլխավոր) գյուղատեղիները, որոնցում հայկական ուշագրավ հնություններ առայժմ չեն հայտնաբերվել:

ՀԱՃԱՎ

Քարվաճառ շրջկենտրոնից 3,5 կմ հյուսիս՝ խոր ձորով հոսող վտակի ձախակողմյան ամֆիթատրոնաձև տեղանքի վրա՝ ծովի մակերևույթից 1690-1820 մ բարձրությամբ անտառազուրկ ձորալանջին, փոված է գավառի պատմական նշանավոր գյուղերից մեկը՝ Հաճավը: 1950-ական թվականներից թրքացած քրդերի հանգրվան այս գյուղը հայտնի էր նախ *Մոլոտով*, ապա *Օկտյարբրյանդ* անուններով:

Հաճավը մեկն է գավառի այն հին բնակավայրերից, որ առ այսօր պահպանել են դեռևս միջնադարում կազմավորված իրենց հատակագծային առանձնահատկությունները (ինչպես, օրինակ, Ծար, Մոս, Ճրագ և այլ գյուղեր): Աչքի են զարնում լերկ ժայռազանգվածների վրա խիտ կառուցապատումը, փողոցների երկայնքով, հսկա քարերով շարված երկար հենապատերը և հայկական հին գյուղերին բնորոշ այլ հատկանիշներ:

Թեև գյուղի մասին մեզ հայտնի գրավոր առաջին հիշատակությունը ԺԳ դարից է¹, իսկ երկրորդը՝ միայն 1661 թ.-ից², այ-

նումենայնիվ, տեղում պահպանված ԺԲ-ԺԳ դարերի՝ շուրջ մեկ տասնյակ խաչքարերը վկայում են, որ գյուղն առնվազն միջնադարից եղել է գավառի առավել մարդաշատ ու ծաղկուն բնակավայրերից մեկը: Գյուղի հին եկեղեցին վաղուց է քանդվել: Նրա գույգ ճակատների լուսամուտների պսակները 1677 թ. օգտագործվել են գյուղամիջի (N 40°08'14.29", E 046°01'38.86", ծ. մ. 1718 մ) աղբյուրի շինության մեջ: Վերջինս քարե գուռի (չափերն են՝ 236 x 86 x 58 սմ) ճակատին ունի շինարարական արձանագրություն:

Աղբյուրի մերձակայքում առկա տեղահան (որոշ մասը՝ մաս բեկորված) ավելի քան մեկ տասնյակ խաչքարերը, տապանա-



ՀԱՃԱՎ. գյուղը հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

1 Ըստ մի խաչքարի արձանագրության:
2 ՀԱԳ, ֆ. 57, ց. 1, գ. 4, ք. 4:



ՀԱՃԱՎ. խաչքար գյուղանվան հիշատակությամբ, ԺԲ-ԺԳ դդ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

քարերն ու խաչքարերի պատվանդանները հուշում են գյուղի երբեմնի հայոց գերեզմանոցի՝ ի սկզբանե այդ վայրում գտնվելը:

Խաչքար. քիկունքին՝ 14 և նեղ կողին՝ առնվազն 8 տող (այժմ փոխադրված է Քարվաճառ քաղաք).

Յանու/ն ա(ստուծո)յ, ես՝ Քո/ան, ու Մամբ/ան տուաք զ/մի հին համադ/կո տեղն ի Հա/ճաւայ եկեղե/ցիս, ով որ լինի | զմեզ յա-դա/ւթս յիշե[ց]էք, ով խափ/անէ իմ մ/եղացն | տէր է: || [...ա յիշա-տ]յակ հոգ/ոյ եւ բա/րեխաւս | առ Ք(րիստո)ս, ար/դ, որք երկ/րպագեք | յադաւթ(ս յիշեցէք):

Հրատ. Դիվան, V, էջ 226: ՀՄՀԽԱԲՇ, էջ 49:

Ծանոթ. պարզվում է «Դիվան»-ում սույն արձանագրությունը ներկայացված է եղել անճանաչելիորեն աղավաղված (որը և մենք հիմք էինք ընդունել 1999 թ. մեր առաջին հրատարակության մեջ):



ՀԱՃԱՎ. աղբյուր (1677 թ.) և որպես սալահատակ գործածված խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)



ԳՆՃԱՎ. խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994, 2018 թթ.)

Աղբյուր. քարակերտ գուռի (նովի) ճակատին՝ 3 տող.
Յիշատակ է նովս Ամիրճանին, Ամիրխանին, Ախիճանին, |
Հ(ա)ճ(ա)՛ գ(ե)ղս, քվ(ին) Ռ-ՃԻՉ (1677):
 Հրատ. Դիվան, V, էջ 226: ՀՄՀԽԱԲՇ, էջ 49:

Հաճավ գյուղատեղիի շրջակայքում գտնվում են մի քանի հին գյուղատեղիներ, որոնք հայտնի են միայն հետազայում խաշնա-րած ցեղերից ստացած անվանումներով: Դրանցից են *Վերին* և *Ներքին Այրումները*, *Ալչալին*, *Ալլըքյանը*, *Սարըգյունեյը* և *Օթախլն*:

ԴԱՇՏԱԿ

Քարվաճառի հարավային մատույցներից շուրջ 3 կմ հեռու՝ Տրտուի ձախակողմյան վտակի հակառակ կողմում, երևում են մի գյուղի ավերակները, որը եկվորների կողմից ստացել էր *Քեշդեկ* (*Քեշքեք*) անունը: Հաշվի առնելով գյուղի բնական առանձնա-հատկությունը՝ հարևանությամբ հարթ տարածության՝ դաշտա-կի առկայությունը (եզակի մի պարզ լեռնաստան գավառի՝ չա-փազանց կտրտված աշխարհագրական միջավայրի համար), կարելի է նշել, որ սա համապատասխանում է պատմական Դաշտակ գյուղին:

Պատմական վկայագրերում Դաշտակը հիշվում է 1673 թ. որպես գրչօջախ: Նշյալ քվականին Եսայի երեցը «...ի յերկիրս Ծարայ՝ ի գեաղս, որ կոչի Դաշտակ՝ ընդ հովանեաւ Սր. Աստուածածնին եւ Սարդաղանեաց Սր. Նշանին և Սր. Յակոբին» ավարտում է տեր Բարսեղի պատվիրած Մաշտոցը¹: Ի դեպ, ամենայն հավանականությամբ, նույն Դաշտակում է ստեղծվել



ԴԱՇՏԱԿ. գյուղին հարող հարթակը հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

նաև նախորդից դեռևս 10 տարի առաջ՝ 1663 թ. նույն գրչի հեղի-նակած մի Ավետարան. «...ի յերկիրս Ծարայ, ի գեաղս//» (հի-շատակարանի վերջին թերթը մկրատված է, ուստի գրչօջախ գյուղանունն անհայտ է մնում)²:

Դաշտակում վկայվել են եկեղեցու ավերակներ և Խաչենի իշ-խան Հասանի անվան հիշատակմամբ յոթտողանի հայերեն ար-ձանագրություն³: Յավոք, մեզ չհաջողվեց վերագտնել այս հու-շարձանները:

1 Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, էջ 38: Տե՛ս նաև **Չոբանյան Պ.**, նշվ. հոդվ., «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XX, էջ 219:

2 Մինասյան Թ., նշվ. աշխ., նույն տեղում:

3 **Nərimanoğlu M.**, նշվ. աշխ., էջ 15-16:



ՅՐՏՆՈՏ. կամուրջ Տրտու գետի վրա (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

ԽՈՒՆՁԱՆՑ

Դաշտակից Տրտուի հունն ի վեր շուրջ 5 կմ հարավ՝ գետի աջ կողմում՝ նրա հետ միախառնվող վտակի հովտում է գտնվում գավառի հայկական հին բնակավայրերից ևս մեկը, որը Դադի վանքի 1763 թ. կալվածացուցակում վկայված է Խոլոզանց անվամբ¹, մինչդեռ եկվոր խաշնարածները քիչ աղավաղմամբ կոչում էին *Խոլազեյ-Ալխասար*:

Վերջին տարիներին ծարեցի Մասուն Միմոնյանն այս գյուղի բնակելի շենքերի որմներում և շենքերին նկատել է ոչնչացված գերեզմանոցից որպես շինանյութ յուրացված մի քանի խաչքարեր և խաչքարերի բեկորներ:

ՅՐՏՆՈՏ

Գտնվում է Խոլոզանցից 2,2 կմ հարավ նույնպիսի դիրքով (Տրտուին աջից միախառնվող հերթական վտակի հովտում) ծ. մ. 1950-2070 մ բարձրության վրա՝ անտառազուրկ տեղանքում:



Ժամանակի մեջ թրքացած քուրդ վերաբնակիչները գյուղն անվանել են *Սոյուղբուլաղ* (բառացի՝ սառը աղբյուր), որը, ըստ էության, հին Տրտուտի իմաստային թարգմանությունն է:

Տրտուտը հիշվում է ի թիվս Դադի վանքապատկան գյուղերի (հավանաբար ԺԴ դար)¹:

Տրտուտ և Խոլոզանց գյուղատեղիների միջև՝ Տրտուտ գյուղից 1,5 կմ հյուսիս-արևմուտք՝ Տրտու գետի վրա, կանգուն է գավառի միջնադարյան կամուրջներից մեկը: Միաթիչ է՝ կառուցված անմշակ քարով (գլխավորապես գետաքար) և կրաշաղախով: Կամրջի թիչքը 7,10 մ է, անցուղու լայնությունը՝ 2,05 մ, բարձրությունը ջրի մակարդակից՝ 4 մ²: Ըստ կառուցողական առանձնահատկությունների և համանման այլ կամուրջների հետ համեմատական ուսումնասիրության՝ այն կարելի է թվագրել ԺԳ-ԺԶ դարերով: Ի դեպ, 1980-ական թվականների կե-



ՅՐՏՆՈՏ. կամուրջ Տրտու գետի վրա (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)



ՅՐՏՆՈՏ. կամուրջ Տրտու գետի վրա (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

սերին սոյուղբուլաղիներն իրականացրել են իրենց և արտաքին աշխարհն իրար կապող հիմնական միջոցի՝ այս կամրջի «նորոգումը». բետոնի շերտով ծածկել են կամրջի անցուղու ամբողջ

¹ Չամբո, էջ 283:

¹ Դիվան, V, էջ 216:

² Կարապետյան Ս., Արցախի կամուրջները, էջ 50:

հատվածը՝ փաստորեն ավելացնելով թաղի ծանրությունը: Բարերախտաբար, ամրակուռ այս շինությունը դիմացել է «հոգածության» այսօրինակ դրսևորմանը:

ԾԱՐ

Տեղադրություն. «Յաստուածապահ յամուրն Ծար»՝ այսպես են բնորոշել միջնադարյան հեղինակները հարյուրամյակներ շարունակ իշխանանիստ կամ մելիքանիստ Ծար բերդավանը: Այն գտնվում է Տրտու գետի վերին հոսանքի շրջանում՝ վերջինիս ձախից նրան միախառնվող համանուն վտակի միջև գոյացած սուրանկյուն եռանկյան տեսքով հրվանդանաձև երկարած սարահարթի հարավարևմտյան առավել բարձրադիր մասում (ծ. մ. 2030-2050 մ): Սարահարթը համարյա բոլոր կողմերից բնականից առանձնացած է անդնդախոր ձորերով, ընդ որում, արևելյան և հարավարևելյան կողմերով հոսող Տրտու գետի համեմատ՝ այն բարձր է 300-310 մ, իսկ հյուսիսային կողմով հոսող Ծարագետի համեմատ՝ 120-130 մ: Միայն հարավարևմտյան անկյունում մի կարճ հատվածով սարահարթը նեղ պարանոցով միացած է մոտակա լեռնաճյուղին: Հենց այս մասն էլ, որն ունի մոտ 250 մ երկարություն, հնուց ի վեր պարսպված է եղել, որի շնորհիվ Ծար գյուղավանն ու նկարագրված հրվանդանը հարկ եղած դեպքում վերածվել են անառիկ ամրոցի. «Ծար ասան ընդարձակ..., ի հարաակողմն կայ վիճակին, ի միջի վտակաց, որ զմիջագետակն Թարթառայ յորդեն, ի բարեգուարճ եւ յարգաւանդ վայրի, այլ անշքացեալ եւ սակաւամարդ, եւ թուի հին գլխաւոր շէն կողմանցս»¹:

Բնակչություն. գավառի այլ բնակավայրերի նման Ծարում ևս հայ կյանքը գոյատևել է մինչև ԺԸ դարի երկրորդ քառորդի սկզբները:

Այնուհետև Ծարի տարածքում հայտնվում են փարախկանի (Ֆարիկյան) ցեղից սերող քրդեր², որոնք, սակայն, նստակեցությանը գյուղում վերջնականապես հաստատվում են շուրջ 100 տարի անց: Վերջիններս, իրենց լեզվական հնարավորությունների համեմատ, Ծարն աղավաղմամբ սկսում են կոչել *Չար*: Հետաքրքրական է, որ ինչպես հայաբնակ եղած ժամանակ, այնպես էլ քրդերով բնակեցվելուց հետո Ծարը դարձյալ գավառի ամենամարդաշատ բնակավայրն էր և, օրինակ, 1908 թ. խաչնարածների թիվը հասնում էր 383-ի³: Հետագա տարիներին, խորհրդային շրջանում նույնպես Ծարը շարունակում է պահպանել առաջնային դիրքերը (1979 թ. ուներ 1002 բնակիչ)⁴ և բնակչության քվաքանակով զիջում էր միայն շրջկենտրոն Զարվաճառին:

Շրջանի ազատագրումից հետո գյուղը վերստին դարձավ հայաբնակ: 2015 թ. Ծարն ուներ 14 տուն՝ 83 բնակիչ:

Դպրոց. 1999 թ. հիմնադրված Վ. Սարգսյանի անվան հիմնական դպրոցը 2015 թ. ուներ ընդամենը 6 աշակերտ⁵: 2002 թ. գյուղում կառուցվել է նոր դպրոց՝ նախատեսված 50 աշակերտի համար⁶:

Պատմություն. մատենագրության մեջ Ծարի մասին առաջին հիշատակություններից մեկը՝ «յԱղուանեանն աշխարհի ասանն կոչեցեալ Ծար», ԺԱ դարից է⁷:

1 Ալիշան Ղ., Արցախ, «Բազմավեպ», 1988, № 1-4, էջ 239: Նույնի՝ Արցախ, էջ 19:

2 Լեռ, նշվ. աշխ., էջ 677: Տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 409:

3 Кавказский календарь на 1910 г., ч. 1, с. 255.

4 ԱՄՀ, հ. 4, Բաքու, 1980, էջ 299:

5 Գահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 290:

6 Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 612:

7 Գրիգոր Մագիստրոս, Թրթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 221: Տե՛ս նաև Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, կազմ.՝ Յ. Թօփճեան, Վենետիկ, 1962, էջ 132: Հմնտ. Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մյսիթարեանց ի Վիեննա, կազմ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 151:



ԾԱՐ. Տրտուի կիրճով դեպի Ծար (լուս.՝ Ա. Կարապետյանի, 2018 թ.)



ԾԱՐ. Տրտուկ կիրճից դեպի Ծար գյուղ բարձրացող ճանապարհը, գյուղը հարավից և հատված գյուղի արևմտյան եզրով ձգվող պարսպապատերից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2015 թթ.)

Ճիշտ է, դրանցում ավելի հաճախ հիշվում է ոչ թե իշխանանիստ գյուղը, այլ համանուն գավառը (ինչպես, օրինակ, Ստեփանոս Օրբելյանի մոտ)⁸, սակայն կարծում ենք, գավառն իր անունն առած պետք է լինի իշխանանիստ Ծար գյուղից, ուստի կարելի է նշել, որ Ծար գավառի՝ առնվազն առաջին հիշատակումներին համաժամանակ՝ նույնանուն գյուղն էլ (թերևս՝ գյուղաքաղաք կամ ավան) արդեն գոյություն ուներ:

Գյուղանունը վկայված է նաև 1289 թվականին. «...գեղս, որ կոչի Ծար»⁹:

8 Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 263:
9 Դիվան, V, էջ 222:

Այնուհետև Ծարը հիշվում է 1386 թ. դեպքերի առնչությամբ. «Ի ՊԼԵ (1386) ամին քուրքն էառ զբերդն Ռոտտան եւ մեծ վարդապետն Կախիկն գնաց փախստական ի Ծարայ...»¹⁰:

1387 թ. Ծարը հիշատակվում է Սարգիս վարդապետի ձեռքով տեղում մի Ավետարանի ստեղծման առիթով¹¹:

1541 թ. հիշվում է Հովհաննես Ծարեցին (ավելի վաղ ստեղծված «Մեկնութիւն Եսայեայ» ձեռագրի հիշատակարանում)¹²,

10 Մամուլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրություն, Երևան, 2014, էջ 283:

11 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիզ, 1893, էջ 220: Տե՛ս նաև Մինասյան Թ., նշվ. աշխ., էջ 36-37:

12 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 2, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1967, էջ 271:

իսկ 1588 թ. Թումա Ծարեցին (հիշատակագրություն է թողել Գաղի վանքում)¹³:

Ժամանակի հայտնի վարդապետներից էր Հովհաննիսիկ Ծարեցին, որը հեղինակել է «Յոհաննիսիկ վարդապետի համառօտ պատմութիւն» խորագրով ժամանակագրությունը (1571-1600 թթ.)¹⁴:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» ձեռագրի 1594 թ. հիշատակարանում Հովհաննես Ծարեցին նշել է. «Ծարեցի Յոհաննեսին է գիրքս...»¹⁵:

1621 թ. կազմված կալվածագրերից մեկի ներքո ստորագրել է նաև «Յովհաննես վարդապետ Ծայրեցի»-ն¹⁶:

1691 թ., թերևս ի դեմս Գետամիջո վանքի կամ Մայր եկեղեցու, Ծարը եպիսկոպոսանիստ էր. «Եպիսկոպոսարան. Ծարայ վանք»¹⁷:

1696 թ. հիշվում է Աթանաս Ծարեցին (ԺԳ դարում ստեղծված Ճատրնախրի հետագայի հիշատակարանում). «Ի թուահաշաց հայկականի, հազարերորդ հարիւրեկի, քառ տասն և թէ հնգեակ է աւելի, գոր Աթանաս եմ Ծայրեցի՝ հանդերձ եղբարն իմ՝ Բասիլի, եկաք ի քաղաքս Կոստանդնի...»¹⁸:

Աթանաս Ծարեցին եղբոր՝ Բարսեղ վարդապետի հետ միասին վկայվել է նաև Գրիգոր Նյուսացու «Մատենագրութիւնք» ձեռագրի հետագայի՝ 1697 թ. հիշատակարանում. «Նուսատ պարտաւոր բանասիրի Աթանասի Ծայրեցոյ սկսեալ մատենիս սրբոյն Գրիգորի Նիսեայ ընթերցեալ յանկ յածի ՌճԽԶ (1697) ի թվի, յորժամ ես եւ եղբայր Բարսեղ վարդապետս...»¹⁹:

Ուշագրավ է, որ թեև գավառում Ծար անունով ուրիշ բնակավայր չկար, բայց 1763 թ. կալվածացուցակում այն հայտնի է Մեծ Ծար²⁰ ձևով:

Հիրավի, Ծարը «մեծ» էր անգամ ամայի վիճակով. գյուղատեղի, որտեղ գոյություն ուներ իշխանական ապարանք, չորս եկեղեցի և խաչքարերով գերեզմանոցներ, իսկ մոտակայքում՝ երկու վանք: Այն պահից սկսած, երբ հարյուրամյակներ շարունակ իշխանանիստ կամ մելիքանիստ Ծարը հայաթափ եղավ, այնտեղ գտնվող մշակույթի մեծարժեք հուշարձանները հայտնվեցին անտերուհի վիճակում: Դիշտ է, հայաթափ գյուղատեղիում հաստատված փարախկանլի ցեղի խաչնարածները սկզբնական շրջանում զբաղված էին բնիկներից մնացած կառույցների սուկ օգտագործմամբ (հարմարեցմամբ անասնազուկների և կացարանների), սակայն նստակեցության անցնելու պահից իսկ նրանք ջանադրաբար սկսեցին ոչնչացնել այն, ինչ «ժառանգված էր» քրիստոնյա բնիկներից: Ականատես Մակար եպիսկոպոսը նշել է, որ դեռևս 1880-ական թթ. վերջերին գյուղի հարավային եզրի գերեզմանոցում կային շատ խաչքարեր ու տապանաքարեր, սակայն «անիրաւ քրդերն որը կոտորած են և որի գրերը ջնջած»²¹:

Հայկական հուշարձանների ավերումը հրեշավոր ծավալներ ընդունեց խորհրդային կարգերի հաստատումից հետո և մանավանդ 1950-ական թվականներին: Այդ տարիներին հիմնահատակ ավերվեցին գյուղամիջի չորս եկեղեցիներից երկուսը և մո-

13 Տե՛ս սույն աշխ., էջ 343:

14 ՄԺԲ, էջ 235-236:

15 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 7, էջ 282:

16 ՄԺԲ, էջ 238:

17 **Ushogian G.**, նշվ. աշխ., էջ 59:

18 Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վեներտիկ, հ. 2, կազմ.՝ Բարսեղ վ. Սարգիսեան, Վեներտիկ, 1924, էջ 132:

19 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 2, էջ 315; նաև հ. 7, էջ 282:

20 Զամբո, էջ 283: Թերևս հարևան Սողք գավառի համանուն գյուղից տարբերակվելու համար:

21 **Բարխուստարեանց Մ.**, Արցախ, էջ 405:

տակայքում պահպանված երկու վանքերը, գերեզմանոցները: Դրանց քարերն իբրև պարզ շինանյութ օգտագործվել են Ծար և Չրաղ թրքացած քրդերի գյուղերում ինչպես պետական (օրինակ՝ դպրոցների), այնպես էլ մասնավոր շինությունների կառուցման ժամանակ:

ՄԱՅՐ (ԿԱԹՈՂԻԿԵ) ԵԿԵՂԵՑԻ

Մայր կամ Մեծ եկեղեցին²² գտնվում էր գյուղի կենտրոնում՝ գրեթե կից ցայտօր կանգուն Սբ. Սարգիս եկեղեցուն (հյուսիսային կողմից): Թերևս կառուցվել է 1236 թ. գմբեթավոր հորինվածքով (արտաքին չափերը՝ 26,10 x 11,55 մ): ԺԹ դարավերջին կանգուն էին միայն որմերի որոշ հատվածներ: Խորհրդային տարիներին այս եկեղեցին իսպառ անհետացվել է:

Խաչքար. նախկինում ազուցված է եղել Մայր եկեղեցու հարավային մուտքին, ներկայումս կանգնեցվել է գյուղամիջում, հյուսիսային նեղ կողմի՝ առնվազն 18 կարճ տող.

Ի թոիւն / Ո՛ՀԳ (1225), ես՝ Մլըք / հոգոյ / որդի իմ / Ակուտին / ու Մխիթար եղբեայր կ/անգնեցի զխաչս զի / փրկու/թ(ի)ն հո/գոյ իմ/ոյ, / ով կա/րդայ / իշեց/(էք) ...:

Հրատ. Բարխուստարեանց Մ., էջ 407: Գիվան, V, էջ 223: ՀՄՀԽԱԲԸ, էջ 57:

Ճանոթ. նախորդ հրատարակություններում բացակայում է զի / փրկու/թ(ի)ն հո/գոյ իմ/ոյ, / ով կա/րդայ / իշեց/(էք) ... հատվածը:



ԾՈՐ. խաչքար, 1225 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Խաչքար. տակավին 1960-ական թթ. սկզբներին կանգնած է եղել գյուղի արևմտյան կողմի միջնադարյան գերեզմանոցում, թիկունքին եղել է 10 տող.

Թվ(ին) ՈՁԵ (1236). այս արձան արծե(ալ) / Յ(խու)ս. ես՝ Չաքիոս նվա/ստ քահանայ, կանգ/նեցի զս(ուր)ք կաթողիկես ի ք/արեխասս հոգոց հարա/զատ եղբարց կաթողիկոսի եւ Պապիոսի եւ / ծնողի քահանայի ըն/տրելոյ Յուսիփայ, որ ի / Հանդայ-բեր(ո):

Հրատ. Գիվան, V, էջ 221:


ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Հաջորդը գյուղական կցակառույցների մեջ հայտնված Սբ. Գրիգոր եկեղեցին է, որը Ծարի՝ ցայտօր կանգուն գույգ եկեղեցիներ

22 Ծարի նյութական մշակույթի հուշարձանները ներկայացնում ենք ըստ դրանց ստեղծման ժամանակագրության:



ԾԱՐ. Սբ. Գրիգոր եկեղեցին արևելքից և արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2015 թթ.)



ԾԱՐ. Սբ. Գրիգոր եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.), արևմտյան ճակատը և կտրվածքը դեպի արևելք (չափ.՝ Ս. Հակոբյանի, 2018 թ.)



րից մեկն է: Միանավ, երկթեք ծածկի տակ առնված կիսաբլուրակ թաղով բազիլիկ է՝ կառուցված 1274 թ. սրբատաշ և անմշակ քարով, կրաշաղախով (արտաքին չափերն են 6,38 x 4,40 մ): Շինարարական հատկանշական առանձնահատկությունն այն է, որ ստորին շարվածքում առկա երկու շարք սրբատաշ քարերից վար և վեր որմերի մնացյալ հատվածներն իրականացվել են անմշակ քարով (բացառությամբ արևելյան ճակատից բացված լուսամտուտի անկյունաքարերի և պսակի, ինչպես նաև բարավորի):

Սբ. Գրիգոր եկեղեցու արևմտյան ճակատին առկա են նվիրատվական բնույթի խաչաքանդակներ, իսկ բարավորին և նույն ճակատի հյուսիսային կողմի ստորին հատվածում՝ նվիրատվական արձանագրություն:

Մինչև ազատագրումն այս եկեղեցին տեղի թրքացած քուրդ ընտանիքներից մեկի համար ծառայում էր որպես բնակելի տան օժանդակ հատված, որի հետևանքով կառույցի արևմտյան ու հարավային ճակատները մասնակիորեն ծածկվել էին սվաղով ու կցորդումներով:

Եկեղեցի Սբ. Գրիգոր. բարավորին՝ 5 տող.

Խորք տ(է)ր շինեցի / ս(ուր)բ Գր(ի)գոր իմ հալալ ա/րդեամբ ինձ, ամուս(ն)ոյ իմ, / որդո Մարգարէի, յիշեցէք / ի տ(է)ր, [թվին] ՉԻԳ (1274):

Հրատ. **Քարխտատարեանց Մ.**, էջ 407: Գիվան, V, էջ 223: ՀՄՀԽԱԲԸ, էջ 58:

Եկեղեցի Սբ. Գրիգոր. արևմտյան որմին՝ մուտքից հյուսիս, 6 տող.


Յանուն ա(ստուծոյ), Կուկս միա/բանեցա ս(ուր)բ Գր(ի)գորիսի իմ հողն Մոսթանիսի, / տվին Ա (1) յաւագ հ(ին)գշաբաթ ար ժամն, / ով խափանէ ի / նգովե(ա)լ եղեցի:

Հրատ. **Քարխտատարեանց Մ.**, էջ 407: Գիվան, V, էջ 220, 223 (№№ 778 և 795): ՀՄՀԽԱԲԸ, էջ 58:

Ծանոթ. մախորդ հրատարակությունները թերի են: Ժամանակը՝ ԺԳ դ.:



ԾԱՐ. խաչաքանդակներ Սբ. Գրիգոր եկեղեցու արևմտյան ճակատին, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք, թաղակապ առաստաղը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԾԱՐ. Սբ. Գրիգոր եկեղեցու բարավորի շինարարական արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)

Խաչքար. ագուցված է եղել Սբ. Գրիգոր եկեղեցու հարավային ճակատին, նրանից 5 տողի հատվածական մնացորդով մի բեկոր առկա է դպրոցի պատի մեջ.

[Գրիգոր, Ջաջուռ կանգնեցաք խաչս մեզ եւ ծն]ողալց մերլոց. ա(ստուա)ծ ո/[ղորմի Շ] (1051):

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 407: Դիվան, V, էջ 223: ՀՄՀԽԱԲԸ, էջ 59:

Ծանոթ. արձանագրության գրչագրական առանձնահատկությունները կարծել են տալիս, թե այն ԺԳ դարի գործ էր, ուստի տարեթվի Շ (1051) ընթերցումը թվում է սխալ ընթերցման արդյունք:



ԾԱՐ. արձանագրությունը սկզբնապես եղել է Սբ. Գրիգոր եկեղեցու հարավային ճակատին (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2019 թթ.)

Եկեղեցի Սբ. Գրիգոր. հարավային որմին եղել է.

Աստուծով մեք՝ Հարբբի որդիքս, տվաք զմեր Կապին հողն ի սուրբ Գրիգորիս, Սոսթանէս ետ Ղազարու տաւնին Ա (1) ժամ...:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 407: Դիվան, V, էջ 223: ՀՄՀԽԱԲԸ, էջ 58:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դ.: Բարխուտարեանցը Հարբբի-ի փոխարեն ունի Տարբբի:

ՍԲ. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ


Ծարի հարավային եզրին նույն՝ 1274 թ. կառուցվել է նաև մինչև 1950-ական թթ. կանգուն Սբ. Սարգիս եկեղեցին: Ըստ նկարագրության՝ սա ևս եղել է թաղակապ, միանավ շենք (արտաքին չափերը՝ 7,15 x 4,75 մ): Շուրջը տարածված էր պատմական բացառիկ արժեք ունեցող արձանագրություններ պարունակող խաչքարերով գերեզմանոց: Ի մեծ բարերախտություն՝ վիմագրերից մի քանիսը 1880-ական թթ. վերջերին ընդօրինակել է Ս. Բարխուտարեանցը:

Խաչքար. գտնվում էր 1950-ական թթ. իսպառ ավերված Սբ. Սարգիս եկեղեցու մուտքից վեր.

Սուրբ Սարգիս: Քրիստոս որդի Դարթի աւզնէ վասն Հասանայ անարժան ծառայիս յատուրն ատենի ...ամէն, թ(վին) ՉԻԳ (1274):



ԾԱՐ. Սբ. Գրիգոր եկեղեցու միաբան Կուկի ընծայագիրը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ԾԱՐ. Սբ. Սարգիս եկեղեցու մուտքից վեր վկայված խաչքարի արձանագիր բեկորը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2019 թթ.)

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 405: Դիվան, V, էջ 221: ՀՄՀԽԱԲԸ, էջ 59:

Ծանոթ. ի դեպ, որպես շինանյութ յուրացված այս արձանագրության մի բեկորը գտնվում է 1950-ական թթ. կառուցված Ծարի դպրոցի շենքի հյուսիսարևմտյան անկյան վերնամասում (50 x 25 սմ):

Խաչքար (չափերը՝ 260 x 110 սմ), գտնվում էր 1950-ական թթ. ոչնչացված Սբ. Սարգիս եկեղեցու մոտ տարածված գերեզմանոցում: Եղել է գեղաքանդակ, բազմաստիճան հզոր պատվանդանին կանգնած:

Թվիս հայոց ՉԼԸ (1289), աստուծով, ես՝ Գրիգոր որդի Հասանա, քաջ եւ յաղթող զարավարին եւ մեծի իշխանին Ականոյ, Հանդարերդոյ, Սոթից, Շողգահո եւ այլ բազում զաւառաց, կանգնեցի զխաչս ի գեղս, որ կոչի Ծար, սիրեցելոյն հարն իմոյ Հայրենիք եւ պարգէւ քաջութեան:



ԾԱՌ. 1289 թ. խաչքարի բեկորը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2018 թթ.)

Հրատ. **Քարխուտարեանց Մ.**, էջ 405: **Տեր-Մովսիսեան Մ.**, էջ 93: Վիմական տարեգիր, էջ 130: Դիվան, V, էջ 222: ՀՄՀԽԱԲԸ, էջ 60:

Ծանոթ. մեծարժեք արձանագրությանը ոչնչացված խաչքարից 1993 թ. վերոնշյալ դպրոցի լուսամուտներից մեկի մեջ միայն մի բեկոր (24 x 19 սմ) գտանք, որի վրա ընթերցվում էր ...*Շողգ...* բառահատվածը:

Արձանագրություն.

Շահանշահ կանգնեց խաչս որդոց...:

Հրատ. **Քարխուտարեանց Մ.**, էջ 406: Դիվան, V, էջ 221:

Խաչքար. գտնվում էր նույն գերեզմանոցում՝ նախորդի մոտ: Եղել է գեղաքանդակ և պատկերազարդ. «...խաչարձանի ճակատի վերին կողմում քանդակուած է սուրբ Աստուածածնայ պատկերն, որ գրկած է մանկացեալ Յիսուս Քրիստոսը: Տէրունական պատկերիս շուրջն պատած են քառակերպեան կենդանիք, սուրբ հոգին, արեգակն եւ մի թռչուն: Խաչարձանիս ստորոտում»:

Սուրբ Աստուածածին Քրիստոս աստուած... եւ՝ Մա[մ]քան | [ղ]ուստր Քրդին ու Խորիշահի, ամուսին Հասանայ, կանգնեցի զխաչս:

Հրատ. **Քարխուտարեանց Մ.**, էջ 405: Դիվան, V, էջ 222: ՀՄՀԽԱԲԸ, էջ 60:

Ծանոթ. այս խաչքարը նույնպես վերածվել է շինանյութի, քանի որ նրա երեք բեկորներն առկա են նույն դպրոցի լուսամուտներից մեկի և դասասենյակների միջնորմների մեջ: Կրանցից մեկը հատված է՝ փշրած պատկերաքանդակից, իսկ երկուսը՝ արձանագրությունից (չափերը՝ 50 x 31 և 41 x 18 սմ): Բեկորներին ընթերցվող հատվածներն են. ...*եւ՝ Մա[մ]քան [ղ]ուստր*..., ...*[Քր]դի[ն] ու Խ[որ]ի[շ]ահի*]...:

Խաչեմի տիրակալ Հասան Բ Ականեցու կողակից իշխանուհի Մամքանը վախճանվել է 1298 թ., ուստի խաչքարը կերտվել է նախքան նշյալ թվականը:

Պահպանված գույգ բեկորները հուշում են, որ երբեմնի արձանագրությունը եղել է բազմատող և հավանաբար փորագրված էր խաչքարի նեղ կողին՝ ամբողջ երկարությամբ:

Խաչքար. եղել է Սբ. Սարգիս եկեղեցու հարավարևելյան կողմում.

Յանուն աստուծոյ մեք՝ Խաչատուր, Չաքարէս, կանգնեցաք սուրբ խաչս բարեխաւս հարն իմոյ և եղբարց Վելին, Ովանէսին, Մարգարէին, Սիրաքին... թվ(ին) ՋԼԳ (1484):

Հրատ. **Քարխուտարեանց Մ.**, էջ 406: Դիվան, V, էջ 221-222:

Խաչքար. Սբ. Սարգիս եկեղեցու հյուսիսային կողմում մինչև 1950-ական թթ. կանգնած մի խաչքարին ընթերցվել է.

...միրզա Ճհան կանգնեցաք զխաչս բարեխաւս եղբարն իմ պարոն Ճհան բնոր (՞) Շահիճանին... թվ(ին) ՋԿ (1511):

Հրատ. **Քարխուտարեանց Մ.**, էջ 406: Դիվան, V, էջ 222: ՀՄՀԽԱԲԸ, էջ 65:

Ծանոթ. նշյալ դպրոցի որմերում առկա են շինանյութի վերածված խաչքարի գույգ բեկորները:



ԾԱՌ. Մամքան իշխանուհու կանգնեցրած խաչքարից մնացած երկու բեկորները, ԺԳ դար (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2018 թթ.)

Խաչքար. գտնվում էր Մամքան իշխանուհու կանգնեցրած խաչքարից մի քանի քայլ դեպի արևմուտք, կարճ և նեղ տողերով ընդարձակ արձանագրությունից մնացել է երկու բեկոր.

Քրիստոս աստուած նշանս բարեխաւս Դաւլաթին, աստուծով եւ՝ Դաւլաթս, ամուսին իմ մեծ իշխան Միրզաջան, Խիկար, որդիքս իմ՝ Տալիս թէկ, Մելիք պէկի զանգնեցին զխաչս փրկութիւն հոգոյ ի տանէն Գեղամայ, դուստր մէլիք Դուկասին, թվին ՋԴԼ (1549):

Հրատ. **Քարխուտարեանց Մ.**, էջ 406: Դիվան, V, էջ 222: ՀՄՀԽԱԲԸ, էջ 60:


Ծանոթ. ի դեպ, «Դիվան»-ի կազմողները ենթադրել են, որ Քարխուտարյանցը շփոթել է տողերի տեղադրությունը և վերադասավորելով հրատարակել են այսպես. *Քրիստոս աստուած. նշանս բարեխաւս Դաւլաթին. աստուծով եւ՝ Դաւլաթս, ի տանէն Գեղամայ, դուստր մելիք Դուկասին, ամուսին իմ մեծ իշխան Միրզաջան, որդիքս իմ Տալիս թէկ, Մելիք պէկի զանգնեցին(ք) զխաչս փրկութիւն հոգոյ, թվ(ին) ՋԴԼ (1549):* Մեր այցելության ժամանակ (1993 թ.) նշյալ դպրոցի որմերում սույն արձանագրությանը պատկանող միայն երեք բեկոր հայտնաբերվեց: Այդ բեկորներին առկա 12 կարճ տողերը հուշում են, որ, ըստ երևույթին, արձանագրությունը փորագրված է եղել խաչքարի նեղ կողին՝ ամբողջ երկարությամբ:



ԾԱՐ. 1549 թ. խաչքարի բեկորները (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015, 2018 թթ.)

ՍՐ. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ


Ծարի նույնանուն երկրորդ, իսկ ընդհանուր թվով 4-րդ եկեղեցին ցարդ կանգուն է (N 40°00'08.97", E 045°57'12.10", ծ. ս. 2051 մ): Հորինվածքային առումով գրեթե Սր. Գրիգոր եկեղեցու նմանակն է (միանավ թաղածածկ բազիլիկ, արտաքին չափերն են՝ 6,7 x 4,6 մ): Կառուցվել է սրբատաշ և անմշակ քարերի համակցմամբ, կրաշաղախով: Ըստ արևմտյան ճակատից բացված միակ մուտքի բարավորին 6 տողով փորագրված (թերի բովանդակությամբ) արձանագրության՝ կառուցվել է 1279 թ.:



ԾԱՐ. Սր. Սարգիս եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.), արևմտյան ճակատը և կտրվածքը դեպի արևելք (չափ.՝ Ա. Գալոբյանի, 2018 թ.)



ԾԱՐ. Սր. Սարգիս եկեղեցին արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք, եկեղեցին հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2018 թթ.)



ՃԱՐ. Սբ. Սարգիս եկեղեցու բարավորն ու արևմտյան ճակատի արձանագրությունները (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԾԱՐ. Սր. Սարգիս եկեղեցու արևելյան (1285 թ.) և հարավային (1311 թ.) ճակատների արձանագրությունները (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Ծարի Սր. Սարգիս անվամբ 2-րդ եկեղեցի. բարավորին ունի շինարարական վեցտողանի արձանագրություն.

Թ(վին) ՉԻԸ (1279): | Ի հայրապետութի(ւն) տ(է)ր Աթ(անասի), ի պարոնութի(ւն) Դուսիին որդ/ոյն: Ոհան երէց ու Ոհանէս շինեցաք զս(ուր)ք Սարգիսս, կենաց բարեխ/աւս հոգոց փրկութի(ւն), ով կարդ...:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 406: Դիվան, V, էջ 218: ՀՄՀԽԱԲԾ, էջ 65:

Ծարի Սր. Սարգիս անվամբ 2-րդ եկեղեցի. բարավորի վերնամասում՝ 2 տող. *Ալաքսիանոս յիշ(եցէք) ի տ(է)ր:*

Հրատ. Դիվան, V, էջ 219:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԴ դդ.:

Ծարի Սր. Սարգիս անվամբ 2-րդ եկեղեցի. մուտքից հարավ՝ 4 տող.

Ես՝ Կչիկ, տվի զ/իմ Ջերմաջրին ջեղացն Ս(ուր)ք Ս(ար)գ/ի-ս(ին):

Հրատ. Դիվան, V, էջ 219:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Ծարի Սր. Սարգիս անվամբ 2-րդ եկեղեցի. մուտքից հարավ՝ 2 տող.

Ես՝ Հայրատուն, տվի Ս(ուր)ք Ս(ար)գիս(ին) Ա (1) համադիկ/ի հող, ինձ Ա (1) ժամ տվին զԾառզարդ(արի)ն, ՅԺԸ] (318) ...:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 406: Դիվան, V, էջ 219:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար: Նախկին հրատարակություններում առկա են որոշ վրիպումներ:

Ծարի Սր. Սարգիս անվամբ 2-րդ եկեղեցի. մուտքից հարավ՝ 7 տող.

Ա(ստուա)ծ որդ/րմի Շ(ա)հան/այ, | Թ[ամ]յար/ին:

Հրատ. Դիվան, V, էջ 219:

Ծարի Սր. Սարգիս անվամբ 2-րդ եկեղեցի. մուտքից հարավ՝ 10 կիսաեղծ տող.

Ես՝ Կուկորս, տ/վի զիմ / կոպար/ով Ոհան / իրիցո.../ ...:

Հրատ. Դիվան, V, էջ 219:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դ.:

Ծարի Սր. Սարգիս անվամբ 2-րդ եկեղեցի. արևելյան ճակատին՝ 4 տող.

Ես՝ Կիպրան, տվի զԴաշտին հող / յեկեղեցիս եւ Կարապետ առնէ Ա (1) պատարագ զճրագ(ա)րոյցն, ով խափ/անէ դատի յա(ստուծո)յ, թ(վին) ՉԼԴ (1285):

Հրատ. Դիվան, V, էջ 218:

Ծարի Սր. Սարգիս անվամբ 2-րդ եկեղեցի. հարավային ճակատին՝ 7 տող.

Ես՝ Գրիգոր ու Ասիա ... [տվ]աք / ...ա Իրիցանոյս ...խա/...ան զտան ինձ՝ տ(է)ր Հ... ասելն խափանէ կապած է յա(ստուծո)յ ու մեր մ/եղացս տ(է)ր է ու Տ(է)րընդառաջին / [պա]տարագն Ասիին կատարի ամեն եկեղեցիքս, թ(վին) ՉԿ (1311):

Հրատ. Դիվան, V, էջ 218:

Խաչքար. քիկունքին՝ 12 տող.

Կամաւ լվին ա(ստուծո)յ, | Ես՝ Կարապետ քահանայ, կանգ(ն)եց/ի զխաչս եղբա/ւր իմոյ Գրիգորայ, որ է սնո(ւ)ցող / իմ եւ էր աղ(ո)թաւոր, որք կարդէք / ա-ղաթս յիշեցէք, թ(վին) ՉԳ (1254): | զԳրի(գ)որ, զԿարայ/պետն:

Հրատ. առաջին անգամ:






ՃԱՐ. 1254 թ. Կարապետ քահանայի կանգնեցրած խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ՃԱՐ. տապանաքարի բեկոր, ԺԳ-ԺԵ դդ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ՃԱՐ. տապանաքարի բեկոր, 1401 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)




Խաչքար. գտնվում է Սբ. Գրիգոր եկեղեցուց շուրջ 60 մ հյուսիս, 2 տող.

Ա(ստուա)ծ որորմի Հասանին եւ կենակցին իւրոյ՝ Ներկիզին, յիշե(ցեք):

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 59:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ-ԺԵ դդ.:

Գերեզմանոց. Սբ. Սարգիս եկեղեցու շրջակայքում տարածված երբեմնի գերեզմանոցին պատկանած խաչքարերի և տապանաքարերի հիմնական մասն արդեն 1950-ական թվականներին հասիշտակվել և յուրացվել է որպես շինանյութ: Գրանց բեկորներն այժմ էլ կարելի է տեսնել երբեմնի «աղբբեջանական» դպրոցի որմերում: Սակավաթիվ հուշարձաններ էլ նկատելի են երբեմնի գերեզմանոցին հարող հատվածում ծնունդ առած գյուղական շինությունների որմերում կամ պարզապես տեղահան՝ այս ու այն կողմ գլորված:

Տապանաքարի բեկոր. դպրոցի արևելյան ճակատի վերնամասում՝ թերի 6 տող.
...[Մ]եարոք սէ/ ...ի հայ/ ...[ե]կեղե/ ...ցս յ/[իշեց]եք ի | ... [թ]վ(ին) ՊԾ (1401):
Հրատ. Դիվան, V, էջ 221:



ԾԱՐ. տապանաքար, ԺԶ-ԺԷ դդ. (ուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1999, 2015 թթ.)

Տապանաքար (105 x 85 սմ). սկզբնապես եղել է գյուղամիջի Սբ. Սարգիս (ցարդ կանգուն) եկեղեցուն կից գերեզմանոցում, սակայն հետագայում յուրացվել է որպես շինանյութ.

Ա(ստուա)ծ որորմի Նիկարին, իւր որդոցն՝ ճհանկիրին, Գասպարին:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 65:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դդ.:

Տապանաքարի բեկոր. թերի պահպանված 2 տող (առաջին տողը՝ փորագիր, իսկ 2-րդը՝ ելնդագիր).

...Պայճանին որդի պ(ա)ր(ո)ն Պասպայխ[անին]..., | թվ(ա)կ(ան) Ռ-ՂԹ (1650):

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. որպես շինանյութ՝ գետեղված է դպրոցի շարվածքում:



ԾԱՐ. տապանաքարի բեկոր, 1650 թ. (ուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2018 թթ.)

Տապանաքար.

Այս է հանգիստ պարոն ճհանկիր բեկին, թվ. Ռ-ՃԻԵ (1676):

Հրատ. Բարխուտարեանց Մ., էջ 406: Դիվան, V, էջ 222: ՀՄՀԽԱԲԸ, էջ 63:
Ծանոթ. թվում է, թե այս տապանագրի մասն է դպրոցի մեջ ագուցված արձանագիր բեկորներից մեկը:

Տապանաքարի բեկոր. թերի 3 տող.

Այս է հանգիստ Շահ/...:


Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. որպես շինանյութ՝ գետեղված է դպրոցի շարվածքում: Ժամանակը՝ ԺԷ-ԺԸ դդ.: Ըստ ամենայնի՝ Բարխուտարեանցի հիշատակած Շահիարու տապանաքարն է (էջ 406):



Տապանաքարի բեկոր. թերի պահպանված 2 տող.

...մին, թվ(ին) [Ռ-ՃԽԹ (1700):

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. որպես շինանյութ՝ գետեղված է դպրոցի շարվածքում:



Տապանաքար. կից նախորդին.

Այս է հանգիստ Մելիքպեկին կողակից Շայամին, որ հանգուցաւ տապանս թվ(ին) Ռ-ՃԿԶ (1717):

Հրատ. Բարխուտարեանց Մ., էջ 406: Դիվան, V, էջ 222: ՀՄՀԽԱԲԸ, էջ 63:
Ծանոթ. նշյալ դպրոցի որմերում հայտնաբերվեց այս տապանաքարի մի բեկորը՝ քառատող արձանագրությամբ:



Ծարի «աղբբեջանական» դպրոցի որմերում, ըստ 1993 թ. կատարված հաշվառման արդյունքների, փշրված վիճակում առկա էր գերեզմանական կամ ճարտարապետական հուշարձաններին պատկանող 132 միավոր բեկոր: Դրանցից շատերը գեղարվեստական ուշագրավ, ոչ սակավ դեպքերում նաև բարձրարվեստ ստեղծագործությունների կտորտանքներ էին, որոնք պե-



ԾԱՐ. ոչնչացված հայոց գերեզմանոցներից հափշտակված և շինանյութի վերածված խաչքարեր և տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)



ԾԱՐ. ոչնչացված հայոց գերեզմանոցներից հափշտակված և շինանյութի վերածված խաչքարեր և տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)



ԾԱՐ. ոչնչացված գերեզմանոցից հրաշքով պահպանված խաչքարեր և տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2015 թթ.)

տական մակարդակի (քանի որ գործադրվել են դպրոցի շինարարության մեջ, որը հենց պետական շինություն էր) վանդալական գործունեության հետևանքով դեռ կես դար առաջ, երբ նույն կերպ կոչնչացվեց Ջուղայի աշխարհահռչակ գերեզմանոցը, փաստորեն արժանացել էր համանման վերաբերմունքի:

Ներկայացնում ենք որպես շինանյութ բեկորված և յուրացված մի խումբ հուշարձանների լուսանկարները:

Գլխատուն. Ծարում ուշագրավ և հազվագյուտ հուշարձան էր 1658 թ. ուն Ավանեսի կառուցած գլխատունը (N 39°59'58.93", E 045°57'06.93", ծ. մ. 2057 մ)²³:

23 Տան շինարարական արձանագրությունը, որ փորագրված է մի սյան խարսխին և մյուսի խոյակի վրա մտած սրբատաշ կամարին, առաջին անգամ ընդօրինակել և «Նոր-Դար» լրագրում հրատարակել Ջրաբերդի Մեծեն գյուղի տանուտեր Բախիշ բեկը, ինչը, սակայն, հաշվի չեն առել «Գիվան...»-ի հեղինակն ու կազմողները (տե՛ս «Նոր-Դար» 1890, № 158, 17 հոկտեմբերի, էջ 2) և վիճագրի իրենց վերծանությունը ներկայացրել են իբրև առաջին հրատարակություն:



ԾԱՐ. գլխատան մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2015 թ.)



ԾԱՐ. դրվագներ գլխատան ներքին ծավալներից (լուս.՝ Մ. Սարգսյանի, 1986 թ.)







ԾԱՐ. գլխատան եռաչափ վերակազմությունները (հեղ.՝ Պ. Ֆրանկյան, 2018 թ.)

Ի դեպ, դեռևս ԺԹ դարում այս տունը հայտնի էր Ջրաբերդ գավառի բնակիչներին, որոնց կարծիքով դա «արքայական պալատ էր»²⁴:

Ծարում, իբրև իշխանանիստ բնակավայր, անշուշտ, գոյություն են ունեցել ապարանքներ, իսկ ուշ միջնադարում՝ մելիքական տներ: Հանձին այս հազարաշեն տան՝ մենք հավանաբար գործ ունենք Ծարա մելիքների մի ինքնատիպ բնակարանի հետ: Տեղի խիստ բնակլիմայական պայմաններից ելնելով՝ այն չունի մելիքական հայտնի այլ տներին բնորոշ ճարտարապետական լուծումներ (թաղակապ, կրկնահարկ, հաճախ փայտաշեն պատգձամբներով) և սահմանափակվել է շրջանին հարազատ

²⁴ «Նոր-Ռար», նույն տեղում:



ԾԱՐ. գլխատան կտրվածքն ու հատակագիծը (չափ.՝ Մ. Սարգսյանի, 1986 թ., հրատարակության պատրաստեց Ա. Գալոբյանը, 2018 թ.) և շինարարական արձանագրությունները (գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

հագարաշեն տան համեստ հորինվածքով, միայն սովորականից ավելի ընդարձակ է, իսկ փայտյա սյուները փոխարինված են քարե սյուներով:

Ցավալիորեն 1993 թ.-ից հետո Ծարի մեղիքական այս բացառիկ տունը պատշաճ պահպանության արժանանալու փոխարեն ավերվեց տզես անձանց ոտնձգությունների հետևանքով:

Գլխատուն. այսն խարխիսներից մեկի և հանդիպակաց այսն խոյակին հաջորդաբար 1 և 3 տողերով փորագրված է եղել.

Ես՝ Ավա/մես, շի/նեցի: // ԹՎի(ն) Ռ-ՃԷ (1658) եր, տ(է)ր ...ս, շի-նող դանս:

Հրատ. «Նոր-Գար», 1890, № 158, 17 հոկտեմբերի, էջ 2: Գիվան, V, էջ 220-221: ՀՄՀԽԱԲՇ, էջ 65:



ԾԱՐ. Տրտու և Ջերմաջուր վտակների միջև հրվանդանաձև երկարած այն տեղանքը, որի վրա մինչև 1950-ական թթ. կանգուն էր Գետամիջո Սբ. Աստվածածնա վանքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

ԳԵՏԱՄԻՋՈՒ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆԷ

Գտնվում էր Ծարին հարավից եզրափակող խոր ձորում՝ Տրտու և նրա ձախ վտակ Ջերմաջրի միախառնման տեղում հրվանդանաձև երկարած լեռնաճյուղի թերակղզաձև ավարտին (N 39°59'54.52", E 045°57'47.31", ծ. մ. 1776 մ):

Հայտնի էր նաև Ծարավանք անվամբ (ի պատիվ հարևանությամբ գտնվող հռչակավոր գյուղավանի). «...Ծարայ-վանք՝ ի հարատյ աւանին, մեծաւ սաքաշէն եկեղեցեաւ, այլ յոյժ հնացելով...»¹:

Գետամիջո վանքի մասին տեղագրական առաջին վկայությունը վերաբերում է 1830-ական թթ. վերջերին. «Է աւերակ ընդարձակ գեղջ ի գաւառին Արցախու յընդարձակ դաշտավայրի, յորում է վանքն Ծարայ, որոյ եկեղեցին է սագաշէն և ընդարձակ, որ վասն ամայութեան օր քան գօր սկսեալ է մերձիլ յապականութեան. շուրջ գեկեղեցաւ են խաչագարդ գերեզմանք...»²:

Շուրջ կես դար անց նշվել է. «Սրբատաշ քարով շինուած տաճարս, որ կանգուն է նույնութեամբ, գտնուում է Ծարի հարաւային վիմահերձի տակ՝ երկու ջրախառնուրդի մօտ, որք են՝ Տաքջրի և Ջրիլ գիւղի վտակներն: Մենաստանս թէև փոքր է, բայց շատ գեղեցիկ է ամեն մասամբ»³:

Այնուհետև մինչև 1950-ական թթ., երբ վանական հուշարձանախումբն ամբողջովին հողին հավասարեցվեց, ցավոք, այլևս ոչ մի հետազոտող տեղում չի եղել, և փաստորեն գավառի պատմության համար այնքան արժեքավոր համալիրը երկրի երեսից ջնջվել է ոչ միայն առանց երբևէ չափագրվելու, այլև գոնե մեկ լուսանկարով անմահանալու:

Հիմնահատակ քանդած վանքի քարերը գլխավորապես փոխադրվել են մոտակա Չրաղ գյուղը, որտեղ, ինչպես Ծարում, դարձյալ օգտագործվել են գլխավորապես տեղի դպրոցի շինարարության համար: Ինչ վերաբերում է վանքանդած գերեզմանոցին, ապա սա ևս ավերվել է, իսկ առկա գերեզմանական բոլոր հուշարձանները մասնատվել և որպես շինանյութ ծառայեցվել

1 Ալիշան Ղ., Արցախ, «Բազմավեպ», 1988, № 1-4, էջ 240: Նաև նույնի՝ Արցախ, էջ 20: Ի դեպ, Ալիշանը սխալմամբ նույնացրել է վանեվանքում հիշատակված Գետամեջր խնորր առարկա Գետամիջո վանքի հետ. «Ի դրից իւրոց առեալ է եւ զանուն Գետամեջր, այլ շէն վաղեմի էր անդ յառաջ քան զվանսն, քանզի յարձանն Վանեվանայ վանից՝ որ ի Գեղաքունի (իբրեւ 20 մղոնաւ ի մտից Ծարայ) ասէ Ծապոն Բագրատունի, իշխող կողմանցն, տուեալ է ի վանսն յամին 903 ընդ այլոց չորից գիւղից եւ զԳետամեջն» (նույն տեղում, էջ 241):

2 Ջալալխանց Մ., նշվ. աշխ., մասն Ա, էջ 208:

3 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 407:



ՉՐԱՂ. գյուղը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.)

են արդեն վանքատեղիի շուրջ ծավալված *Վանք* (*Վենք*) գյուղի կառուցապատման մեջ:

Շրջանի ազատագրումից հետո պարզվեց, որ բուն վանքատեղիում, բացի մի բնակելի տան որմերում առկա մի քանի սրբատաշ քարերից, որևէ այլ հնություն գոյություն չունեն: Ավելի մեծ թվով երեսասպառի սրբատաշ քարեր և մասնատված գերեզմանական հուշարձաններ առկա էին վանքատեղիից ցած գտնվող գյուղական շինությունների որմերում: Ճարտարապետական մեծաթիվ բեկորներ և հատկապես երեսասպառի սրբատաշ քարեր բացահայտվեցին նաև հարևան Չրաղ գյուղի՝ 1950-ական թթ. կառուցված դպրոցի որմերում:

Այստեղ, բազմաթիվ խաչագարդ ու քանդակագարդ բեկորներից զատ, սվաղի շերտը մաքրելուց հետո ի հայտ եկան Գետամիջո վանքի շինարարական ընդարձակ արձանագրության տարբեր մասերը կազմող 22 բեկորներ, որոնց միջոցով հնարավոր եղավ նորովի վերծանել արձանագրության բնագիրը⁴: Ի դեպ, 2018 թ., երկրորդ անգամ այցելելով Չրաղի երբեմնի «աղբբեջանական» դպրոց, այստեղ շարունակաբար քայքայված ու թափված սվաղի շերտի տակից բացահայտվեցին 1994 թ. այցելության ժամանակ մեր աչքից վրիպած նոր բեկորներ, որով վանքի՝ 1301 թ. շինարարական արձանագրության իրական պատկերն ավելի ամբողջացավ:

Չրաղ գյուղի տարածքում և գյուղամիջում պահպանվել են նաև պարզ ու զուսպ ոճավորմամբ մի քանի խաչքարեր:

Գետամիջո վանք. շինարարական հնգատող արձանագրությունը.

Ի ժամանակին, յորում տիրեալ ազգն նետողաց բազում աշխարհաց եւ մինչեւ յՈվկկիանոս ծով եւ Ստանբաւլն, ի Պոնտոս եւ մինչեւ ցգետն Եփրատէս, տիրելով գոռոզաբար եւ ծանր հարկապահանջութեամբ ցաւեցուցանելով զամենեսեան՝ զմեծամեծս եւ զփոքունս ի մահ եւ ի գերութիւն մատնելով, յայսմ ժամանակի դառնութեան, որ էաք մեք տ(է)ր Յո(վ)հ(անն)էս Դուիեան՝ տրուսլ եւ նուստ եւ տկար հոգի, հասաւ մեզ հրաման ի նախահարցն մերոց զնալ ի մեր հայրապետացն առաջնո յաթոնն հոչակելին Հաղբատ, այլ դարձ արարեալ մեր հայրենական եւ բնիկ տունս հարազատ աւագ եղբար Հասանայ քաջ զարականին և հոչակատր արիացելոյն, որ եւ որդի իւր Գրիգոր սիրող եկեղեցո եւ ամուսին իւր բարեհամբաւ Ասիայ՝ դուստր մեծի կոմսի Տարսայիճին իշխեցողի կողմանցն Սիւնեաց՝ եւ մեր հայեցեալ ի ձորակս, զի հոսէին ջուրք յաջմէ եւ յահէկէ եւ ի միջի նոցա բլրակ մի գեղեցիկ, եւ հաճեցա ընդ սայ եւ մտայ յանապատս եւ սկսա

4 ՀՄՀԽԱԲԸ, էջ 67-68:




ՉՐԱՂ. 1950-ական թթ. ոչնչացված Գետամիջո Աբ. Աստվածածնա վանքի քարերով կառուցված «աղբբեջանական» դպրոցը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994, 2018 թթ.)



Ի ժամանակին յորում տիրեալ էր ազ **ՆԵՏՈՒ** ազ բազու **ԱՇՈՒ** լճի ազ եւ **ԲԵՂԵ** ՅՈՎԼ **ՄՍՍԵ** ու **ԵՍ** **ԱՆԲԱ** ւն, ի Պոնտ **ՄՍ**
 ի մահ եւ ի գերութիւն մատնելով յ **ԱՅՍՄ** ժամանակի դառն **ՈՒԹԵՈՒ** **ԵՍԲԻ** **ԵՔՏԻ** **ՅՈՒՆԵ** **ՄԿՈՓ** եան տը **ՈՒ**
 հայրենական եւ բնիկ տու **ՄՅԱՇ** ազատ աւագ ե **ԵԼԵԿ** **ԱՍԱ** **ԱԲԱ** **ՔՁՍ** **ԱԿԱ** ցին եւ հռ **Մ**
 իշխեցողի կողմանցն Սիւնեաց, եւ մեր հայեցեալ ի ձո **ՆԿՍ** զի **ՊՍԵ** **ՅԱՔԻ** **ԵՅԱ** **ԻԼԻ** **ՔԻՄՅ** ա բլրակ **Մ**
 մեր եւ իշխա **ԳԼԵ** ա **ՈՒՍԵ** այլ շատ կողմանց իշխեցող եւ կամեցաւ շի **ԵԼՁ** սը Ածածին **ՄԻՔ** արեխատ



ՉՐԱՂ. Գետամիջո Սբ. Աստվածածնա վանքի շինարարական (1301 թ.) և այլ արձանագրությունների 1950-ական թթ. կառուցված «աղբիքեջամակամ» դպրոցի որմերում, շինարարական արձանագրությունը՝ համաձայն դպրոցի որմերում նկատված արձանագիր բեկորների (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



եւ մինչեւ ՅԳ ետն Եփրա ՏԵՍՏԵՆԿԳԻ ԻՌՁԱԵԱԵ ԾԱՆՏՍ ըկապ ՅԱՆՔՈՒԹԻ Գ ա յ Ե Գ Ո Ւ Գ ա ն Ե լ յ ՎՁԱՍ ԵՍՍ Ա, գմե ՏԱԵԾ ա եւ զի ՈՒՌԵՆ
 պ եւ նուաստ եւ ՏԿ ար հոգի, հ ԱՄԵՆԵՉՏՆԸՆ ԼԻՆԱՄՏԱԸՑԻ յԵՌ Գ գնալ ի մեր ՊՆ ՑՅԱ թոռն հոչ ԱԵԼԻՅ ԼԵՍ տ ալ ՎԵՂ Ը արարե ԱԼՏԵՐ
 ակաւոր արիաց լՈ յն, որ եւ որ ՍԻՄՈՒՍՍՈՒՍՄԻՄԵԿԵՆ ՉՈՒ ԱՄՈՒՄԻՆԻ Ի ԲԱԸ համբաւ Աս ՔԱՅՈՒՍԱՏՈՂ եծի ԿՈՅՆ ի ՏարսայեՃ ԿԻ
 ի գեղեցի կԵ ս հաճե ՅԱԸՆԴԻՍԱ ՅԵՄՏԱՅԱՆ ԱՂԱ ՍԱԸՆԵԼՏՐ ա ՏՈՒ ԴԵՆ ի եւ յ ԼՅԱ մ խորհրդի եկն Գրիգոր եղբարորդի
 մ ԵՉԵԱՍ մենայն քրիստոնէից. ես տեր Յովհանն ԷՍ ԱԸԻ ԸՍԿ զքն ԸԻՆ րթան եկեղեցոյս ի թուին, ՉԾ (1301):



ՉՐԱՂ. Գետամիջո Սր. Աստվածածնա վանքի շինարարական (1301 թ.) և այլ արձանագրություններ 1950-ական թթ. կառուցված «աղբբեջանական» դպրոցի որմերում, շինարարական արձանագրությունը՝ համաձայն դպրոցի որմերում նկատված արձանագիր բեկորների (լուա՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԶՐԱՂ. 1950-ական թթ. ոչնչացված Գետամիջո Սբ. Աստվածածնա վանքի ճարտարապետական բեկորները «ադրբեջանական» դպրոցի որմերում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՉՐԱԳ. խաչքար գյուղամիջում (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

շինել մատուռն մի եւ յայսմ խորհրդի եկն Գրիգոր եղբարորդի մեր եւ իշխան գաւառիս եւ այլ շատ կողմանց իշխեցող եւ կամեցաւ շինել գտորբ Աստուածածինս ի բարեխաւս մեզ եւ ամենայն քրիստոնէից: Ես՝ տէր Յովհաննէս, արարի ըսկիզբն շինութեան եկեղեցոյս ի թուին ՉԾ (1301):

Հրատ. Հասան-Չալայան Ե., էջ 136-137: Շահխաթունեանց Յ., Բ, էջ 364-365: Բարխուտարեանց Մ., էջ 407-408:

Ծանոթ. վանքի կառուցման մասին վկայություն կա նաև Դ-ադի վանքի կալվածաթղթերից մեկում (տե՛ս սույն աշխ., էջ 299-300): Նախորդ հրատարակություններում յաջմէ եւ յահէկէ-ի փոխարեն՝ աստի եւ անտի:

Երեսապատի քար. Չրաղ գյուղի դպրոցի պատին՝ 4 տող.

Ա(ստուա)ծ ողորմի Մ[[խ]իթարայ, Ա (1) պ/ատարագ մնա կա-տարի Չատիկ, Դ (4) [շարաթ արն]:

Հրատ. Դիվան, V, էջ 224:

Երեսապատի սրբատաշ քար (51 x 34 x 13 սմ). 1993 թ. այն տեսել ենք ավելի վանքին կից գոյացած Վանք անունով գյուղի բնակելի տներից մեկի որմնում.

(ե) այլ մ(իարանքս)...

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 69:


Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Վանքամերձ նույնպես հիմնավեր գերեզմանոցից ժամանակին, ցավոք, միայն մեկ և հույժ կարևոր արձանագրություն է գրի առնվել: Այն փորագրված է եղել գեղաքանդակ և մեծադիր խաչքարի վրա, որը հոր՝ Շանշեի հիշատակին կանգնեցրել է իշխանագուն Սայտին 1430 թ.:

Սույն խաչքարից միայն մի փոքրիկ բեկոր գտնվում է վերջին տարիներին տեղում ստեղծված բացօթյա թանգարան-պուրակում:

Խաչքար.

Ա(ստուծո)վ ես՝ Սայտի, որդի պարոն Շանշին՝ քաջ և յաղթող գաւրավարին և մեծ իշխանաց յազգէն և ի թուին ՊՀԹ (1430), տեղեացս տէր և պարոն Փոքր Սինեաց, Ականայ, Հայթերթոյ և Հանդարերթոյ և ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաքայ՝ կանգնեցաք զխաչս հար մերոյ՝ Շանշին:



ՎԱՆՔ. Շանշեի որդու՝ Սայտիի կանգնեցրած խաչքարից մնացած բեկորը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Հրատ. Հասան-Չալայան Ե., էջ 137: Շահխաթունեանց Յ., էջ 365: Չալալեանց Մ., Ա, էջ 208-209: Բարխուտարեանց Մ., էջ 408:

Ծանոթ. Շահխաթունյանցի մոտ արձանագրությունն ավարտվում է այսպես՝ «որք երկրպագէք յադօքս յիշեցէք»:



Խաչքարի բեկոր (83 x 30 սմ). 1993 թ. այն տեսել ենք երկայնությամբ կիսված և որպես շինանյութ յուրացված Վանք գյուղի բնակելի տներից մեկի լուսամտի մեջ.

ՉԽԲ (1493) ... [կանգնե]ցի զխաչս յիշատակ հոգոյ...:

Հրատ. ՀՄՀԽԱԲԸ, էջ 69:



ՎԱՆՔ. բեկորված խաչքար (1493 թ.) գյուղում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 1993, 2018 թթ.)



ՎԱՆՔ. բեկորված խաչքար, ԺԵ-ԺԶ դդ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018, 2019 թթ.)



ՎԱՆՔ. Ի սկզբանե Գետամիջո վանքի գերեզմանոցին պատկանած, սակայն 1950-ական թթ. շինանյութի վերածված գերեզմանական հուշարձանների մնացորդները, որոնք հայտնաբերվել են վերջին տարիներին և ներկայումս ցուցադրված են հատուկ ստեղծված պուրակում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Խաչքարի բեկորներ (հայտնաբերվել են երկուսը). գտնվում են թանգարան-պուրակում.

Ա(ստուծո)վ, կանգ[նեցի զ]խաչս յ]իշատակ Ալեքսիանո[սին, որ փոխ[եցաւ] ... երիտասարդական | հասակի ... [աշ]խարհի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դդ.:

Խաչքարի բեկոր. գտնվում է թանգարան-պուրակում.

[Ա(ստուծո)վ, ես՝ պ(ա)ր(ոն) | [Գ]րիգոր, | [ո]րդի պ(արոն) Վար[ի]մայ | ...նվն...:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դդ.:



ՎԱՆՔ. պարոն Գրիգորի կանգնեցրած խաչքարի բեկորը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՎԱՆՔ. Միրաքի հիշատակին կերտված տապանաքարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018, 2019 թթ.)

Տապանաքար. գտնվում է թանգարան-պուրակում.

Այս է հա/նգիստ | Միրաքին:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:



ՎԱՆՔ. տապանաքար Մելիք բեկի հիշատակին, 1663 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018, 2019 թթ.)

Տապանաքար. քանդարան-պուրակում.
 Թ(վ)ին Ռ/ԺԲ (1663): // Այս է հա(ն)՝գիստ Մէլիք պէկին, / որ է
 որդի Տ/աւստի պէկին:
 Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. քանդարան-պուրակում.
 Ա(ստուծո)վ, մեք՝ Տաւստիս, որդի ... // հանգիստ ս(ուր)ք
 նշանս // ...կա(ն)՝գն[եց]աք խաչ[ս]... // ...աս // զՄանվէլ նկարողս
 / ...:
 Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:




ՎԱՆՔ. Մանվէլ նկարողի կերտած տապանաքարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018, 2019 թթ.)


1950-ական թվականներին հայ մշակույթի դեմ «աղբբեջանական» իշխանությունների գործած եղեռնը ներկայացնող սույն պուրակում առկա են նաև ինչպես գերեզմանական, այնպես էլ ճարտարապետական արձանագիր կամ անարձանագիր այլ հուշարձանների բեկորներ:

Պուրակից ոչ հեռու՝ երբեմնի Գետամիջո վանքի հարևանությամբ, նկատելի են մի ջրաղացի մնացորդներ (N 39°59'56.60", E 045°57'47.50", ծ. մ. 1796 մ): Սա թերևս Ծարի Մբ. Սարգիս եկեղեցուն Կչիկի ընծայած Ջերմաջրի ջրաղացն է:

Տեղահան, սակայն անվնաս վիճակում աղբյուրի մի գուռ էլ պահպանվել է Ծար գյուղում:



Ծար գյուղի մոտակայքում պահպանվել են պատմական անունները մոռացության մատնված և եկվորների կողմից Ձազիկ, Բեզիրխանա, Շեինլի, Խոփուրի, Կույուդայասի, Ջիվի, Մամադասափի, Խստիսու, Բաղրասղ, Վերին, Ներքին և Միջին Շորոթան անունները ստացած գյուղատեղիները:



ՎԱՆՔ. աղբյուրի գուռ (չափ.՝ Բ. Քորոշյանի, 2015 թ.)



ՎԱՆՔ. եղծված արձանագրությամբ խաչքարի բեկորներ նշյալ պուրակում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ԱՆԱՆՈՒՆ ՎԱՆՔ

Գտնվում էր Ծարագետի՝ Տրտուլի հետ միախառնման վայրում, որը նույնպես հիմնովին ոչնչացվել է 1950-ական թվականներին: Նրա մասին եզակի, սակայն ցավալիորեն խիստ կարճաժամ պլանության հեղինակն է երախտաշատ Մ. Բարխուտարյանցը. «Կայ և մի այլ փոքր վանք Ծարիս արևելեան ստորոտում՝ երկու ջրերի խառնուրդում»¹:

ՉՈՐՈ ՎԱՆՔ

Ծար գավառում էր գտնվում դեռևս տեղադրությունը չճշտված Չորո վանքը: 1471 թ. այստեղ ստեղծված Ավետարանի հիշատակարանում նշվել է. «Արդ գրեցաւ սուրբ արևտարանս ձեռամբ իմաստասէր, հանճարեղ, սրբասէր եւ հեզահոգի, մեծազգի եւ մեծաշուք զարդարեալ ամենայն առաքինութեամբ, տեսականաս եւ գործնականաս տէր Թումայի:

Ի թվականութեան Հայոց ՋԻ (1471) ի կաթողիկոսութեան Տ. Յոհանեսի և խանութեան Հասան պէկին, ի երկիրս Ծարայ, ի վանքս որ կոչի Չոր, ընդ հովանեաւ սուրբ Յակոբի, սուրբ Աստուածածնի եւ այլ ամենայն բազմութեան սրբոց:

Արդ մեծաւ փափաքանաւք ստացայ գուրբ արևտարանս ի հալալ արդեանց ինոց, ի յիշատակ հոգոյ ինոյ եւ ծնողաց ինոց եւ ամենայն արեան մերձաւորաց ինոց եւ ետու Յոհանէս քահանայի, որդոյ Ալեկասնին, Աստուած վայել տացէ ամեն»²:

ՅՐԱԳԵՏ ԱՆԱՊԱՏ

Թվում է՝ Ծար գավառում էր գտնվում նույնպես անորոշ տեղադրությամբ Յրագետ անապատը, որտեղ 1670 թ. Հովասափ Էղվերծացին ընդօրինակել է Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթողիկեայց» ձեռագիրը³:

1 Բարխուտարյանց Մ., նշվ. աշխ., էջ 408:
 2 Յուզակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, մաս Բ, Երուսաղեմ, 1967, էջ 124-125 (մինչև Մեծ եղեռնը գտնվում էր Բուլանըղ գավառի Շիրվանշեխ գյուղի բնակիչ Դվեի Հարդենի տանը):
 3 Չորանյան Պ., նշվ. հոդվ., «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XX, էջ 219:



ՎԱՆՔ. Գետամիջո վանքի գերեզմանոցից հափշտակված և շինանյութի վերածված գերեզմանական հուշարձաններ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ՀՈՒՇԵՐ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ԲՈՆԱԶԱՎԹՎԱԾ ԵՎ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ
ՇՐՋԱՆՆԵՐԻՑ
(1980-1994 թթ.)

**ԵՐԲԵԸ ՉԵՄ ՄՈՌԱՆԱ ՉԵՉ՝ ՄԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ
ՊԱՏՎԱԿԱՆ ԲՈՒՉԼՈՒԽՅԻՆՆԵՐ**

Երբևէ կատարած ճամփորդություններիցս ամենից երկարը՝ 51 օր տևողությամբ, իրականացավ 1980 թ.: Արշավս սկսեցի Իջևան քաղաքից ու Շամշադիի գյուղերն անցնելով՝ մտա Թուրքի շրջան, այնուհետև Գետաբեկի, Շամխորի, Գաշկեսանի, Խանլարի, Շահումյանի և ի վերջո հասա Հաղթուքի շրջանի հարավային գյուղերը:

Արշավիս 21-րդ օրն էր: Առավոտյան դուրս էի եկել Մարտունաշենից ու Մանաշիդն անցնելով՝ արդեն մտնեմուն էի Բուզլուխին, որտեղ եկեղեցին ու կարևոր մյուս հնությունները տեսնելուց հետո պետք է շարժվեի դեպի Վերիշեն:

Մանաշիդից Բուզլուխ տանող ճանապարհը, ընդհանուր առմամբ դեպի վեր ձգվելով, վերջին մի քանի հարյուր մետրը սկսում է իջնել և մտնում այն ձորակը, որից ձախ՝ հարավահայաց ձորակողին, փռված է Բուզլուխ գյուղը:

Ճանապարհի այն մասից, որտեղից սկսում ես իջնել, առջև բացվում է Բուզլուխի տեսարանը: Հասնելով ահա այդտեղ՝ գյուղից ընդամենը մի 300-400 մետր հեռու, ճանապարհեզրի մի քարին նստած, տեսա մոտ 10 տարեկան տղայի, որը հսկում էր քիչ հեռու արածող իրենց տնային կենդանիներին: Բարևս վրա երեխան խսկույն ոտքի կանգնեց ու չսպասելով որևէ պատասխանի՝ շատ քաղաքավարի իրար հետևից հարցրեց.

– Ո՞վ եք, մեր գյուղ եք գալիս, որտեղից եք գալիս, հայաստանցի ե՞ք, եկեք գնանք մեր տուն:

Ես դեռ մտածում էի, թե հարցերին պատասխանելը ո՞ր մեկից սկսեմ, ադան շարունակեց.

– Երևում է՝ երկար ճանապարհ եք կտրել, ի՞նչ կլինի, գնանք մեր տուն, մի փոքր կհանգստանաք, էլի ձեր գործին կգնաք:

Եթե ինձ հրավիրողը չափահաս մեկը լիներ, երևի մույնիսկ չէի էլ փորձի հրաժարվել հրավերից, բայց մտածելով, որ այդ երեխան անկոչ հյուր տուն առաջնորդելու իրավունքը դեռևս չունի, կտրականապես հրաժարվեցի:

– Չէ՛, շնորհակալ եմ,– ասացի,– գյուղում գործս արագ պիտի վերջացնեմ, որ դեռ Վերիշեն ու Ներքիշեն էլ այսօր հասնեմ:

– Լավ, բայց մի տեղ, մի քիչ, մեկ է, պիտի հանգստանաք, ի՞նչ կլինի, գնանք մեր տուն:

Մինչ ես հրաժարվում էի, երեխան էլ՝ համոզում, հասանք գյուղ:

– Հրես մեր տունը, դե՛, եկե՛ք, էլի,– այս ասելով՝ բաց դարպասից ձայնեց,– մա՛ն, հայաստանցի դո՞նախ ունե՞ք:

Մայրը՝ երիտասարդ մի կին, կարծես հյուրընկալ որդու արարքից փառավորված, մույնքան և ավելի ջերմությամբ ընդհանուր գալով ինձ, որ դեռ կանգնել էի դռան, ներս հրավիրեց:

Տանն ուրիշ ոչ ոք չկար, և մինչև այցելությանս նպատակի մասին մի քանի հարցումների կպատասխանեի, կինը հասցրեց սեղանին դնել «եղուծու», հաց-պանիր և գոմեշի մածուց:

Մտեցանք սեղանին: Մինչ ես վայելում էի ամեն բան չափազանց համեղ թվացող տնական սնունդը, նկատեցի, որ տղան քաղցած չէր, բայց քաղաքավարությամբ ընկերակցեց ինձ:

– Սրտալի հա՛ց կերեք,– ասաց իմ դիմաց նստած որդու կողքին կանգնած մայրը՝ մեղմ ու կարծես երախտագիտությամբ շոյելով տղայի գլուխը:

Հազիվ կես ժամ անց, երբ կյանքի դպրոցում ազգասիրության ու մարդկայնության հերթական դասը ստացած՝ շնորհակալությամբ հրաժեշտ տվեցի բուզլուխից ընտանիքին, նկատեցի, որ տղան վազքով բարձրացավ դեպի մեր հանդիպման վայրը, որտեղ արածում էին իրենց կենդանիները:

Արդյոք ո՞ր եք հիմա դուք, իմ բնավեր, պատվական ու թանկագին բուզլուխիցիներ...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՇԱՀԵՆ ՄԵՂՐՅԱՆԻ ՀԵՏ

1984 թ. Շահումյան մեկնեցի անսովոր բեռով: Բացի անբաժան ուսապարկիցս՝ Երևան-Շահումյան ավտոբուսի մեջ մի կերպ խցկեցի իրար լավ կապկապած 1,2 x 1,0 մ չափի 12 հատ հաստ սովաբաթուղթ, որոնցից յուրաքանչյուրը նվիրել էի Շահումյանի շրջանի մեկ բնակավայրի և նրանց վրա բացատրագրերով փակցրել տվյալ գյուղի պատմական հուշարձանների լուսանկարները: Մտադրվել էի այդ ցուցանակները նվիրել Շահումյան շրջկենտրոնում գործող պատմաերկրագիտական թանգարանին, որի տնօրենի՝ Մամիկոն Պետրոսյանի հետ ծանոթ էի նախորդ տարվանից և ոգևորված էի ստանձնած գործի նկատմամբ նրա բարեխիղճ ու հոգատար կեցվածքից:

Արդեն սովորական դարձած երթուղին շատ երկար էր, և տեղ հասա իրիկնադեմին, երբ թանգարանն արդեն ժամեր առաջ փակվել էր: Գործը հաջորդ օրվան թողնելով՝ տեղավորվեցի հյուրանոցում, որի գործավարն էլ արդեն ճանաչում էր ինձ:

Առավոտվա մի քանի ժամերը Շահումյանի հին գերեզմանոցում անցկացնելուց հետո վերադարձա հյուրանոց, վերցրի նվերս ու գնացի թանգարան: Ենթադրում էի, որ հարգարժան տնօրենին հաճելի պիտի լիներ պատրաստածս ցուցանակները, քանի որ թանգարանի ունեցածի համեմատ դրանք և՛ ավելի որակավորված ու մեծադիր էին, և՛ ընդգրկմամբ ու քանակապես ավելի հարուստ: Մեծ եղավ զարմանքս, երբ լուսանկարները դիտելուց հետո կարծես ավելի մտահոգվեց, քան ուրախացավ: Բոլորն աչքի անցկացնելուց հետո ասաց.

– Շա՛տ լավն են, բայց սրանք թանգարանում չենք կարող ցուցադրել:

Ապա քիչ մտորելուց հետո ավելացրեց.

– Ա՛յ եթե Միրզոկը թույլ տա, դժվարություն չենք ունենա: Եվ էլի մի փոքր դիտելուց հետո վճռաբար ասաց.

– Հավաքիր, հենց հիմա միասին գնանք ընկեր Միրզոկի մոտ ու ցույց տանք, գուցեև թույլ տա:

Գործի նման անակնկալ ընթացքից մի քիչ շվարած՝ հավաքեցի բոլորը: Միասին ուղղվեցինք դեպի շրջկոմի շենքը: Ընդամենը մի քանի րոպե սպասելուց հետո քարտուղարուհին մեզ ներս հրավիրեց: Շահումյանի շրջանի առաջին քարտուղար Միրզոկի մասին նախկինում էլ լսել էի, բայց անձամբ ծանոթանալու առիթ մինչ այդ չէի ունեցել:

Ընդարձակ սենյակում միայն երկու հոգի էին՝ նստած խորքում տեղադրված գրասեղանի մոտ: Մեր ներս մտնելու պահին Միրզոկը, որ մյուս ընկերոջ համեմատ թե՛ ավելի տարեց էր և թե՛ ավելի հաղթանդամ, աշխույժով մեզ ընդհանուր եկավ, ձեռքով բարևեց, և հենց ոտքի վրա սկսվեց բերածս ցուցանակներին վերաբերող խոսակցությունը: Այդ ընթացքում պատի երկայնքով շարեցի 12 գյուղերի անուններով պատրաստված նկարաշատ ցուցանակները: Նույն պահին վեր կացավ նաև Միրզոկի գրասեղանի առջև նստած անձը, որն առաջին հերթին մտեցավ Գյուլիստան գյուղի հուշարձանները ներկայացնող ցուցանակին և հետաքրքրությամբ սկսեց դիտել նաև մյուսները: Ապա ոգևորված ու դրվատանքի խոսքերով այնպես միացավ թանգարանում դրանք ցուցադրել-ցուցադրելու հարցի քննությանը, այնպիսի շնչով խրախուսեց ու արժևորեց աշխատանքը, որ ստեղծված մթնոլորտում Միրզոկին մնաց միայն իր բաժին ողջույնի խոսքն ասել:

Թույլտվությունը ստացված էր: Չկարևորվեց մույնիսկ հիմնական «թերությունը»՝ նկարատակերի բացատրականներում աղբրեջաներենի բացակայությունը:

Այնուհետև անձանոթն իր համար մի-երկու հարցումներով պարզեց, որ Խրիստափորի ձորակում դեռևս չէի տեսել Զինավորի խաչը, ու ինչպես կարգադրություն, ասաց.



Շահեն Մեղրյանի և շահումյանցիների հետ «Զինավորի խաչի» մոտ և Խրիստոփորի ձորում

– Վաղն առավոտյան ժամը տասին սպասի՛ր հյուրանոցում, միասին գնալու ենք Զինավորի խաչ, հետո էլ մի լավ քեփ կանենք...

Ցուցանակները ձեռքիս՝ հանելի տրամադրությամբ ես և Մամիկոն Պետրոսյանը դուրս եկանք շրջկոմի շենքից և կարծես հաղթանակած՝ կրկին ուղղվեցինք քանգարան:

– Ընկեր՝ Պետրոսյան, ո՞վ էր այդ համարձակ ու հայրենասեր մարդը, որի միջամտությունն այդպես որոշիչ եղավ,– հարցրի ես:

– Շահեն Մեղրյանը...

ԿԱՊԻՏԱՆ ՎԱՀԱԳՆ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Քարվաճառի շրջանի ազատագրումից և Բաշլիբեյ գյուղում թուրք հրոսակների վերջին հենակետի վնասագերծումից երկու շաբաթ անց պատմական հուշարձանների ուսումնասիրության նպատակով եղբորս՝ Վահագնի հետ արդեն շրջանում էինք: Հակառակ մերոնց աննախադեպ հաղթանակների առաջ բերած համընդհանուր ոգևորությանը՝ օդը լցված էր իշխանությունների՝ ամենաբարձր մակարդակներից հնչող վիատեցնող հայտարարություններով և առ այն, որ շատ շուտով ազատագրված շրջանը պետք է վերադարձվեր թշնամուն: Դժվար էր կանխորոշել, թե ի՞նչ էր լինելու օր կամ շաբաթ անց, ուստի զոնե ինձ մնում էր

անել հնարավոր ամեն ինչ՝ գտնել ավելի մեծ թվով հայկական հուշարձաններ, դրանք լուսանկարել-չափագրել: Չէ՞ որ շրջանը թուրքին վերադարձնելու պարագայում նախ և առաջ և հատկապես մշակույթով էինք հատուցելու. կատաղած թուրքն իր վրեժը մեր հիշատակներից պիտի առներ: Այս առումով բռնաձու գործը քիչ նմանվում էր Առաջին աշխարհամարտի ժամանակ Նիկոլայոս Մառի կազմակերպած արտահերթ արշավախմբի գործունեությանը. առաջացող գորքի հետևից հասավ Վան և այն ժամանակ, երբ գորքը ճակատում պատերազմում էր, նա Վանում հասցրեց շատ կարևոր ուսումնասիրություններ կատարել:

Ոչ ոք չէր կարող ասել, թե ի՞նչ էր մեզ սպասում, ուստի զոնե ինձ մնում էր առավելագույնս օգտվել ընձեռված բացառիկ հնարավորությունից: Հենց այս նպատակով և մտահոգությամբ առաջին երկշաբաթյա ճամփորդությանը հաշված օրեր անց հետևեց երկրորդը, սպա՛ երրորդը և այդպես շարունակ: Երրորդ ճամփորդությունն սկիզբ առավ 1993 թ. հուլիսի 31-ին: Այս անգամ ինձ ընկերակցում էր Հայկ եղբայրս:

Օգոստոսի 2-ին օրվա մեծ մասն անցկացրինք Հանդաբերում և գրեթե ավարտին հասցրինք բերդի հատակագծի և պարսպապատի մեկ ճակատի չափագրումը: Օրվա վերջին իջանք Չափնիի ուղղությամբ: Այստեղ մեր հրետանավորներն էին: Ծանոթացանք հրամանատար Վահագն Հակոբյանի հետ, որ հենց սկզբից տպավորվեց մարդկային որակներով՝ համեստ, բարեկիրթ, խիստ, սակայն նույն ժամանակ ցածրախոս: Ծանոթացանք նաև կոմբատ Մանվել Աղոյանի հետ: Մեզ առաջարկվեց գիշերն անցկացնել զորամասում՝ իրենց հետ: Ուրախությամբ համաձայնեցի, մանավանդ որ հաջորդ մեկ-երկու օրերը հենց Չափնիի մերձակայքում պիտի աշխատեինք:

Գիշերը տագնապ եղավ: Լուր ստացանք այն մասին, որ թուրքերը Մռավի կողմից գրոհում են: Քիչ անց մի լուր էլ հասավ, որ մարտերն ընթանում էին Յանշաղ գյուղի մատույցներում: Մեր հրետանավորները հասուքից թնդանոթից երեք արկ ուղարկեցին թշնամու դիրքերի ուղղությամբ: Եվս հինգն էլ լուսադեմին, երբ իմացանք, որ մարտերը շարունակվել էին ամբողջ գիշեր, և այդ ընթացքում մերոնք թուրքերին մինչև վերջ հետ էին շարտել:

Որոշվեց, որ կրկին զորամասում գիշերենք: Օգոստոսի երեքն ամբողջությամբ անցկացրինք Չափնիի վանական համալիրում և նրա շուրջը տարածված խաչքարաշատ գերեզմանոցում, իսկ հաջորդ օրը Վահագն ու Մանվելը մեզ առաջնորդեցին Փոքր Լև կամ Թաքյաղայա կոչված հին գյուղատեղիում պահպանված միջնադարյան եկեղեցի, որի մուտքի առջև եղբայրս մեզ երեքիս լուսանկարեց: Հրաժեշտին Վահագնը, թե՛ ես տանը ճիշտ քո ոտքերի չափով հարմար զինվորական մի գույգ կոշիկ ունեմ, մոտ մի ամսից կարճ արձակուրդով Երևանում եմ լինելու, ինձ հեռախոսիկ համարը տո՛ւր, հանդիպենք, փոխանցեմ:

Չէր մոռացել: Մեպտեմբերին զանգեց և մետրոյի «Բարեկամություն» կայարանի մոտ կոշիկներն ինձ փոխանցեց:

– Գործդ կարևոր է, իսկ սրանք քեզ բավականին երկար կծառայեն,– ասաց և զինվորական կոշիկներն ինձ նվիրեց: Անասիման զգացված էի Վահագնի ուշադրությունից, նրա հոգատարությունից և պարտաճանաչությունից, որ, իհարկե, նկատել էի դեռ զորամասում հրամանատարության ներքո գտնվող զինվորների հետ վերաբերմունքից:

Դա մեր երկրորդ և ընդամենը յոթներ տևած վերջին հանդիպումն էր: Միայն մի քանի նախադասություն փոխանակեցինք: Շնորհակալության անօրինակ զգացումով ստացա նվերս, նաև իմացա, որ Վահագնը մի մանկահասակ դուստր ուներ, կարոտից շատ էր նեղվում, սակայն ընդամենն օրեր անց ստիպված էր զորամաս վերադառնալ:



Կապիտան Վահագն Չակոբյանի (կենտրոնում) և Մանվել Աղոյանի (ծախից) հետ (լուս.՝ Դ. Թորոսյանի, 1993 թ. օգոստոսի 4)

Ես շարունակում էի դեպի ազատագրված շրջաններ իրարա-
հաջորդ արշավներս և այդ ընթացքում վայելում հարմարավետ
նվերս:

1993-ի դեկտեմբերի 31-ին թուրքերը շրջանը վերագրավելու
մի հուժկու փորձ ևս արեցին, և այս անգամ ճակատը ճեղքելով՝
նրանց հաջողվեց հասնել գրեթե մինչև Տրտուի (Թարթառ) ավիր:
Մեր զինված ուժերը, իհարկե, արդեն փետրվարին կարողացան
թուրքերին մի անգամ ևս հետ շարտել և վերատիրանալ Մոսվի
գազաքնամերձ բարձունքներին տեղակայված մեր դիրքերին,
սակայն դա իրականացվեց մեր լույս եղբայրներից և զավակնե-
րից շատերի կյանքի գնով: Նրանց մեջ էր և կապիտան Վահագն
Հակոբյանը...

Չինակից ընկերներն ավելի ուշ պատմեցին նրա անհետ կո-
րելու, բայց իրականում նահատակության մասին: Հունվարի 18-
ին Գորտագարակ (Ղանլըզյու) լճից մոտ 300-400 մետր հյուսիս
թեժ և անհավասար մարտի պահին Վահագնը զինվորներին նա-
հանջի հրաման է տվել, իսկ ինքը շարունակել է դիրքը պահել...

Ուտիսի դեմ ծառացած ու կյանքը սրբազան Հայրենիքին նվեր
մատուցած հայի ազնվագույն տեսակ Վահագն Հակոբյանն ար-
դեն 25 տարի անմահացել է:

Մենք, որ շատերի թվում նաև Վահագնի զոհաբերության
շնորհիվ ենք ապրում, պարտք ունենք՝ ձգտելու արժանի լինել
նրա և նրա նմանների հիշատակին: Յմահ խոնարհումս...

«ԳԵՐԻ»՝ ՄԻ ԿԵՍ ԺԱՄՈՎ

1993-1996 թթ. ընթացքում դեպի ազատագրված շրջաններ
իրականացրած ճամփորդություններիս ընթացքում արկածալից
դրվագները հաջորդում էին միմյանց: Նրանցից որոշ դրվագներ
վերհիշելիս, նույնիսկ այսքան տարի անց, կամքիցս անկախ հո-
գիս ծիծաղով է համակվում:

Ստորև պիտի փորձեմ ընթերցողներիս հրանցնել զավեշտա-
լի պատմություն այն մասին, թե ինչպես 1994 թ. մի կարճ ժամա-
նակով «գերու» կարգավիճակում հայտնվեցի:

Եվ այսպես, տանից դուրս գալով 1994 թ. օգոստոսի 31-ին՝
արշավիս 11-րդ օրը՝ կեսօրն անց, հասել էի Դադի վանք: Միտքս
այն էր, որ վանքից անընդհատ հյուսիս բարձրանալով՝ հասնեմ և
առաջին անգամ տեսնեմ խորհրդային քարտեզներում թուրքերե-
նով Ղանլըզյու (Արյան լիճ) արձանագրված լճակը, որ հետո
Սարգիս Ջալալյանցի մի տեղեկությունից օգտվելով՝ այն կնքեցի
Գորտագարակ անվամբ:

Դեպի լիճ ձգվող ճանապարհը բավական երկար էր, և արդեն
մութն ընկնելու պահին հագիվ հասա անտառներով շրջապատ-
ված և մի ընդարձակ բացատ ներկայացնող Բաղլուփայա հոր-
ջորջված գյուղատեղին: Դեռ ճանապարհին այնքան նապաս-
տակ ու աղվես էին հանդիպել, ինչպես նաև վարազի քանդոր-
տածներ ու արջի զուգարանային հետքեր (հիմնականում հոնի
կորիզների բաղադրությամբ), որ ինձ համար միանգամայն
պարզ էր՝ որևէ շինությունից զուրկ ամայի գյուղատեղիում գի-
շերն անցկացնելս որքա՛ն հետաքրքրական պիտի լիներ կեն-
դանական աշխարհի ներկայացուցիչների համար: Այս հանգա-
մանքը հաշվի առնելով՝ գիշերատեղս որոշելուց հետո, համե-
նայն դեպս, մի քիչ փայտ հավաքեցի ծայրահեղ իրավիճակի
համար: Ինչո՞ւ ծայրահեղ, որովհետև մտածում էի՝ գիշերվա
խարույկը շատ հեռվից էլ կնկատվի, որը հատկապես մեր զին-
վորականները կարող են վերագրել, օրինակ, թուրքական հե-
տախույզների թափանցման և, ով գիտե, ի՞նչ կլիներ դրա վերջը:
Չգիտեմ, գուցե և զգուշավորությանս մեջ չափն անցնում էի,
բայց կարծում էի, որ ավելի ապահով է գործ ունենալ գազաննե-
րի, քան թե քեզ թուրք կարծող հայ զինվորականության հետ,
ուստի, ինչպես արդեն նշեցի, փայտը հավաքեցի՝ մեծ հույսով,
որ ստիպված չեմ լինելու այն խարույկի վերածել: Մոմլաթի մի
կտորը քնապարկիս տակը փռեցի ու միակ երազանքով, որ գի-
շերն անանձրև անցնի, մտա պարկիս մեջ: Ավելորդ է ասել, որ
զուտ քաշի պատճառով (մանավանդ երբ միայնակ էի ճամփոր-
դում) հետս վրան չէի վերցրել: Աստղալից, բայց լավ մութ գիշեր
էր: Լուսինը, որ շատ փոքր էր, հագիվ մեկ ժամ երևաց ու անհե-
տացավ: Հագիվ էի հարմարվել, երբ սկսեցի ավելի պարզ լսել
մե՛րք հեռվից, մե՛րք շատ մոտ հնչող տարբեր կենդանիների ոռ-
նոցներն ու ճղղոցները: Կարծես անվերջ ոմանք ոմանց խժռելիս
լինեին:

Համարյա արդեն վարժվել ու համակերպվել էի այդ ձայնե-
րին, կամ հոգնությունս էր իր գործն անում, մեկ էլ վեր թռա մի
ահռելի թռչունի թևերի ճողվածից, որ սրընթաց դեպի ինձ իջավ,
բայց կարծես միայն վերջին պահին հասկանալով, որ ես իր
պատկերացրած որսը չեմ կարող լինել, և ինքն անգոր է ինձ վեր
բարձրացնելու, մթության մեջ սկիւն խփող լայն թևերի ծանր
աշխատանքով կրկին վեր բարձրացավ: Այս հսկա, բայց հիմար
թռչունը մի քանի անգամ նույնը կրկնեց: Ամեն անգամ այնքան
էր մոտենում, որ հետդարձի ժամանակ թևերի ուժգնորեն թափա-
հարման պահին արդեն մի քանի մետրից դեմքիս քամի էր
հասցնում: Որպեսզի հնարավորինս ավելի շուտ իրեն հասկաց-
նել տամ, թե ես իր բանը չեմ, մտքովս մի բան անցավ. մոտենալու
պահին սկսեցի ժրաջանորեն ոտքս ու ձեռքս թափահարել: Այս

գործողությունը կարծես մի օգուտ տվեց: Համեմայն դեպք, մի քանի փորձից հետո թռչունն ինձնից ձեռք քաշեց ու հեռացավ:

Նորից տեղավորվեցի քնապարկիս մեջ և հույս ունենալով, որ այլևս փորձություն չի լինի, տրամադրվեցի քնելու, չնայած, անկեղծ ասած, հակառակ հոգնությանս, լարվածությունից քունս փախել էր: Մյուս կողմից մի անօրինակ խոնավություն կար, և մի երկու-երեք ժամվա մեջ քնապարկս հասցրել էր բավականին թրջվել: Մի կողմից կենդանիների այդքան առատ ներկայությունը, մյուս կողմից անտանելի խոնավությունն արդեն ստիպում էին, որ խարույկի պատրաստություն տեսնեմ, բայց դեռ վերջնական որոշում տալ չէի կարողանում:

Որոշեցի, այնուամենայնիվ, փորձեմ գոնե մի քիչ քնել, բայց գիշերատեղս բառիս բուն իմաստով գազանանոց էր: Թռչունի գրոհներից հազիվ մի 20 րոպե էր անցել, երբ այնքան մոտ՝ գուցե միայն մի 8-10 մետրի վրա, փայտի կտորվելու բարձր ձայն լսեցի: Անմիջապես նստեցի, վայրկյան առաջ փորձում եմ եղյամով պատած ակնոցս չորացնել, որ ձայնի ուղղությամբ կարողանամ մի բան տեսնել, բայց ոչինչ չկար, կամ մինչ ես կարողացա մի բան տեսնել, այլևս ոչինչ չկար: Այդպիսի ձայնով փայտը կարող էր միայն բավական ծանրաքաշ կենդանու ոտքի տակ կտորվել, իսկ այդ կենդանին տվյալ պահին և տվյալ վայրում հենց միայն արջը կարող էր լինել: Ուրեմն հիմա էլ ինձնով արջն էր սկսել հետաքրքրվել: Ճիշտն ասած, սա արդեն մի քիչ շատ էր ինձ համար, և սարսափահար եղած, ներքին ձայնիս դրոմամբ՝ հապճեպ դուրս թաքնապարկիս միջից, մի 10 րոպե չարչարվելուց հետո մի կերպ խարույկ վառեցի: Փայտեր ավելացնելով՝ բորբոքեցի կրակը, և ինքս ինձ բռնացնելով նրանում, որ փաստորեն գազաններից ավելի եմ վախենում, քան ինձ թուրք կարծող հայ զինվորականության հետ հնարավոր հանդիպումից, տեղավորվեցի խարույկին հնարավորինս մոտ: Հետաքրքրականն այն էր, որ այդ պահից սկսած՝ բոլոր մոտիկ ձայներն ինձնից հեռացան, և միակ անախորժ պահը կիսաթաց քնապարկս էր, որ պարբերաբար տարբեր կողմերով դեպի խարույկն ուղղելով՝ ինչ-որ չափով կարողացա չորացնել:

Սկսեց լուսանալ, և համարյա անքուն անցկացրած գիշերն անցավ պատմության գիրկը:

Առանց ժամանակ կորցնելու հավաքեցի ուսապարկը և ճամփա ընկա: Մոտ երեք ժամ անվերջ բարձրանալուց հետո դուրս եկա անտառային գոտուց (ձեռքիս խորհրդային 50.000-անոց քարտեզն ունեի, ուստի ինձ համար դժվար չէր ճիշտ ուղին պահելը): Վերջապես կեսօրն անց բավական հեռվից նկատեցի մի լերկ լեռան ստորոտին գտնվող և որոշ իմաստով բնության միապաղաղ ու միանման տեսարանները կտորող Գորտագարակ լիճը: Ճանապարհի հենց այս հատվածով անցնելիս ինձնից աջ՝ բավական մոտ տարածության վրա, ակնհայտորեն թարմ փորվածքներ տեսա: Որոշեցի ճշտել, թե ի՞նչ են դրանք: Պարզվեց՝ հունվարին Օմարի կողմից շրջանի տարածք ներխուժած թուրքերի փորած խրամատներն էին: Այստեղ, ի թիվս զինվորական հանդերձանքի մնացորդների և զանազան պարագաների, տեսանալ մետաղական 3 տուփերով 7,62 միլիմետրանոց փամփուշտներ (յուրաքանչյուրի մեջ 440 հատ. մեկ տուփը կիսով՝ բաց, բայց լեցուն, մյուս երկուսը՝ բոլորովին փակ): Թուրքի այդ խրամատից ինձ համար իբրև հիշատակ վերցրի գոտուց կախելուն հարմար մի պայուսակ, որ իրականում նախատեսված էր կալաշնիկովի «մագազինների» համար: Ի դեպ, այդ ավարս շատ տարիներ ինձ ծառայեց որպես լուսանկարչական սարքերիցս մեկի պայուսակ (որ պահել եմ մինչև հիմա):

Լիճը շատ գեղեցիկ էր, և անկախ ինձնից՝ համարյա ամեն մի քանի հարյուր մետրը մոտենալիս լուսանկարում էի այն: Վերջապես

պես ափ հասա: Ի՞նչ գեղեցկություն, անաղարտություն: Ուզում էի գոնե մի կետից լճի ընդհանուր տեսարան վերցնել, ուստի մի որոշ չափով բարձրացա լճի հյուսիսակողմյան լեռնալանջն ու այդ բարձրությունից լուսանկարեցի: Ի դեպ, հակառակ նախնական պատկերացումիս, տեղում պարզվեց, որ լիճը փակ ավազան չէր: Նրա հարավային ծայրից մի փոքրիկ վտակ էր դուրս ելնում, որը քիչ անց մտնում էր Երիցուշենի ձորակը և իրեն միացող մի քանի վտակների շնորհիվ բավական հորդացած՝ ի վերջո ձախից միախառնվում էր Տրտու (Թարթառ) գետին:

Մոտ մեկ ժամ լճամերձ տարածքները չափափելուց հետո (թաքուն հույս պահելով մտածում էի, թե գուցե մերձակայքում մի վիշապաքար էլ կարող եմ հայտնաբերել) ի վերջո հրաժեշտ տվեցի բնության այս հրաշալիքին և սկսեցի իջնել: Երևի 1-2 կմ հազիվ էի անցել և արդեն կրկին մոտեցել էի անտառային գոտու սահմանին, երբ ինձանից բավական ցած երեք զինվորի նկատեցի: Եվս մի քանի րոպե, և արդեն մոտ տարածությունից ողջունում եմ մեր զինվորներին: Մակայն, տեսնում եմ, որ տղաները, ավտոմատները պատրաստ դիրքում պահած, ծայրահեղ կասկածոտ ու սառը հայացքներով զննում են ինձ և ակներև դժկամությամբ են արձագանքում բարևիս: Փորձում եմ հնարավորինս շատ խոսել՝ մտածելով, որ կարելի է լարվածությունը չեզոքացնել, բայց օգուտ չունի: Բացատրում եմ, թե ինչպես եմ եկել, ինչ տեղերով եմ անցել, օգուտ չունի: Պարզվում է, որ հյուսիսից կամ որ նույնն է, թե թուրքերի կողմից իմ մոտենալս մեր այս զինվորներին հիմք էր տվել կարծելու, թե ես թուրք հետահույժ եմ: Պահանջում են, որ իրենց հետևեմ, և իրենք ինձ պիտի ուղեկցեն մինչև գորամաս: Չեմ հակառակվում: Սկսում ենք քայլել դեպի Յանշաղ գյուղ: Ճանապարհին պատասխանում եմ տղաների տարբեր հարցերին, ու մեկ էլ նրանցից մեկը, թե.

– Հըլը մի հատ ասա՝ տրուբա:

Անմիջապես գլխի եմ ընկնում միտքը. չէ՞ որ թուրքերն իրենց լեզվական արտասանության սահմանափակ հնարավորությունների պատճառով ռուսերեն որոշ բառեր աղավաղված են արտասանում և մասնավորապես այդ մեկ բառի մեջ երկու տառ սխալ են արտաբերում: Չզիտեմ, թե ինչու, բայց հենց այդ պահին կատակ անելս բռնեց, և որոշեցի բառն արտասանել այնպես, ինչպես կարող էին արտաբերել թուրքերը, և ժպտալով պատասխանեցի՝ թրուբա:

Վա՛յ, տեսնելու բան էր, թե ինչ կատարվեց այդ պահին: Երեքը միատեղ մեկ ակնթարթում տարբեր ուղղություններով, յուրաքանչյուրը մի քանի մետր հեռացած, ավտոմատները պատրաստ դիրքում պահած անթարթ ինձ են նայում:

– Տղե՛րք,– ասում եմ,– կատակ արեցի, զիտեմ, որ թուրքերն այդ բառը չեն կարողանում արտասանել: Ահա, խնդրեմ, լսե՛ք, թե ինչպես պարզ հայավարի «տրուբա» եմ ասում:

Հետև էլ ավելացնում եմ, որ հայերեն դրան խողովակ են ասում: Չզիտեմ, որքան տևեց, բայց դաժան կատակիս պատճառով հարկ եղավ, որ հայ լինելս ապացուցող ջանքերս վերսկսեի գրոյից:

Վերջապես հասանք Յանշաղում գտնվող գորամասը, որտեղ ուղեկից զինվորներն ինձ ներկայացրին հրամանատարին՝ գնդապետ Թանգամյանին և թույլտվություն ստանալով՝ հեռացան: Բարեբախտաբար, այստեղ փոխըմբռնումը լիակատար էր, իսկ երեք տուփ փամփուշտների գտնված վայրը քարտեզի վրա մատնացույց անելս մի առանձին ուրախություն պատճառեց հրամանատարին: Հենց իմ ներկայությամբ նա անմիջապես կարգադրեց զինամթերքը գորամաս փոխադրելու խնդիրը լուծել:

Այդ գիշերն անցկացրի կարծախցի գնդապետի հրամանատարական մեծ վրանի մեջ, իսկ արդեն առավոտյան Հանդարեր-

դի կիսատ մնացած չափագրական աշխատանքներն ավարտին հասցնելու համար հրամանատարն ինձ օգնական կարգեց երկու զինվորի (հիշում եմ տղաների անունները՝ Վաղինակ և Մերոժ):

ԴԱԴԻ ՎԱՆՔԻ ԱՐՁԸ

1994 թ. սեպտեմբերի վերջն էր: Որոշել էի մանրամասնորեն չափագրել Դադի վանքը: Ինձ հետ էին Հայկ եղբայրս և կինը: Աշխատանքներն այնպես դասավորեցի, որ քանի դեռ օգնականներ ունեի, նախապատվությունը տվեցի չափագրությունների՝ մենակ գլուխ չբերելիք բաժիններին: Մի տասն օրվա մեջ ավարտելուց հետո հրաժեշտ տվեցի օգնականներին և գործը սկսեցի շարունակել արդեն միայնակ:

Հոկտեմբերի վերջերին չափագրական գործերս արդեն լիովին ավարտել և անցել էի ինձ ամենից հոգեհարազատ աշխատանքին՝ վիճագրերի ընդօրինակմանը: Աշխատանքային սեղանս և նույն ժամանակ Ա2 չափի վատմանների պահոցս էին ինքնաշեն թղթադարանս, որը պատրաստել էի եկեղեցամերձ ավերակված տանը մնացած կիսակործան զգեստապահարանի թիկունքի «ֆաներայից»: Ի դեպ, կաթողիկե եկեղեցուց հազիվ 30 մ հյուսիս-արևելք գտնվող մեկ սենյակից բաղկացած փոքրիկ տունն էլ կացարանս էր:

Վաղուց սպառված վերմիշելին լիուլի փոխարինում էր հոնի կաթուկը, որի մեկ-երկու բուռը ճաշի տեղ էր տալիս, դե իսկ մոտակա խնձորենիներն էլ ապահովում էին դեսերտի բաժինը: Վանքի հարավարևելյան կողմի փոքրիկ ձորակում առատ բերքով ծանրացած մի տանձենի կար: Սրա պտուղները վայելելու մտքով քանի օրը մեկ այցելում էի ծառին, բայց տանձերը քարի պես խակ էին ու այդպես էլ խակ մնացին: Հետո եմ իմացել, որ «էշի տանձ» կոչվող տեսակին մինչև ցուրտը չի խփում, չի հասունանում, մինչդեռ անզետս ակնկալում էի հոկտեմբերին համտեսել:

Ի դեպ, երբ ցերեկները մի կես ժամ հատկացնում էի ճաշին (նկատի ունեմ այցելությունս վանքամերձ մի որևէ հոնի ծառի տակ կուտակված բերքին), պատահում էի արջի գուգարանային հետքերի, որից հստակ էր՝ նրա սիրած սնունդն էլ հոնն էր, ինչպես նաև՝ վայրի տանձը, մոշն ու մասուրը: Մակայն սննդի խնդրում ճաշակակից կոլեգայիս այդպես էլ չհանդիպեցի:

Նոյեմբերի 2-ից եղանակները խառնվեցին, բայց մոտավորապես դեռ մեկ շաբաթվա գործ ունեի: Դեռ հույսով էի, որ կավարտեմ, բայց նոյեմբերի 3-ի առավոտը դիմավորեցի ողջ աշ-

խարհը ձյունի տակ անցած: Մինչև կեսօր փորձեցի չկտրվել գործից, բայց ցուրտն իր վճիռը կայացրեց, և ես որոշեցի վերջին մի քանի օրվա գործը թողնել հաջորդ տարվան: Հավաքեցի ուսապարկս և թղթադարանն ու չափագրական ձողերը ձեռքիս՝ սկսեցի վանքից իջնել: Անտեսանելի և աննկարագրելի թելերով կապվել էի այս վայրին: Երևի դրան նպաստել էր նաև այն, որ շուրջ մեկ ամիս վանքում մեն-միայնակ մնալու ընթացքում ոչ մի մարդ վանք չէր այցելել, և ոչ մեկը չէր վրդովել լիակատար մենությունս: Ինչևէ, իջնում եմ վանքից: Ճանապարհս մոտ 7 կմ ձգվում է մինչև Չարեքտարի պահակատունը: Մոտավորապես կեսն անցել եմ, արդեն մթնշաղ է: Հանկարծ առջևիցս մեքենայի ձայն եմ լսում: Ահա մոտենում է, հասան ինձ, ես ձեռքով, վարորդը կարճ ազդանշանով բարևում եմք միմյանց: Առանց կանգառի շարունակում եմ ընթացքը, բայց ինձնից հազիվ մի 10-15 մ անց կտրուկ արգելակում եմ: Ամմիջապես կրակահերթ եմ լսում, ապա կարճ դադարից հետո մեքենան կրկին շարժվում է, իսկ ձայնը՝ հեռանում:

Ամբողջ ճանապարհին մտածում էի, թե տեսնես ինչ պատահեց, որ կանգնեցին ու կրակեցին: Վերջապես հասա Չարեքտար: Գրեթե միաժամանակ Չարեքտարի պահակատուն հասավ նաև այն մեքենան, որին հանդիպել էի ճանապարհին: Պարզվեց՝ երկու ֆրանսահայեր շատ էին խնդրել, որ եթե նույնիսկ գիշերով էլ լինի, ուզում են անպայման տեսնել Դադի վանքը ու իրենց համար էր այդ «վիլլաը» ճանապարհ ընկել, իսկ հարցումիս, թե ի՞նչ պատահեց, որ ինձ անցնելուց հետո կանգնեցիք ու կրակ բաց արիք, պատասխանեցին.

– Բա թե գիտես, որ հետևիցդ արջ էր գալիս: Երբ մեզ տեսավ, թեքվեց գետի կողմը, դե մենք էլ արջի ուղղությամբ կրակեցինք:

Շատ տխրեցի, որ արջի վրա էին կրակել: Չէ՞ որ այդ արջը հաստատ ինձ վնասելու մտադրություն չէր ունեցել: Չէ՞ որ կիլոմետրեր գետի ափով ձգվող ճանապարհով իջնելուս ընթացքում (գետի խշռոցը, իհարկե, չէր թողնում, որ ես որևէ ձայն լսեի), արջն ընդամենն ուղեկցում էր ինձ: Նրա համար մի երկու ոստյունով ինձ հասնելն ի՞նչ էր, եթե մտքին վատ բան լիներ: Փաստորեն նա Դադի վանքի արջն էր, որ գուցե մեկ ամիս անվերջ տեսել էր ինձ, նկատել էր, որ իր ճաշակին մեկն եմ, նույն պտուղներով սնվող խաղաղ մեկը, և տեսնելով, որ հեռանում եմ, որոշել էր ճանապարհել ինձ, մինչդեռ մերոնք ամմիջապես կրակել էին նրա ուղղությամբ (երանի վրիպած լինեի):

Ահա այսպիսի պատմություն ինձ ճանապարհող Դադի վանքի արջի մասին:

ՀԱՇՎԱՌՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿՆԵՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ
(1992 թ.-ից ի վեր բռնագավթված)

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՑԱՆԿ

№	Հուշարձան	Հասցեն	Ժամանակը	Վիճակը	Ծանոթություն
1	Եկեղեցի Սբ. Մինաս	Բուզլուխ	ԺԹ դար	կանգուն	գյուղամիջում
2	Մատուռ Վարդանանց	Բուզլուխ	ԺԹ դար	կանգուն	գյուղամիջում
